ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Պրոֆ. դր. Ռ. Հովհաննիսյան (Լոս Անջելես), պրոֆ. դր. Ա. Մութաֆյան (Փարիզ), պրոֆ. դր. Հ. Հոֆրիխթեր (Քայզերսլաութերն), պրոֆ. դր. Ժ. Փիփլը (Աախեն), դր. Գ. Գևոնյան (Փարիզ), պրոֆ. դր. Հ. Սուրուզյան (Կահիրե), պրոֆ. դր. Լ. Զեքիյան (Վենետիկ), պրոֆ. դր. Մ. Հասրաթյան (Երևան)

Աշխատության վերահրատարակությունը նվիրվում է Վասպուրականի Հայոց անկախ
պետականության հռչակման (6 հունվար, 1918 թ.)
90-րդ տարելիցին

ՀՃՈՒԿ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք Ժ

ԿԵԱՆՔԻՍ ՅՈՒՇԵՐԻՑ

Սիրաք Սարհադեան

MY MEMOIRS

SIRAK SARHADIAN

МОИ МЕМУАРЫ

СИРАК САРАДЯН

ԵՐԵՎԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2007

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Ս 268

Սարհադեան Սիրաք

Ս 268 Կեանքիս Յուշերից.-Եր.: Գիտություն, 2007.-304 էջ:

Ծնունդով Այգեստանցի (Վան) Սիրաք Սարհադյանի «Կեանքիս յուշերից» աշխատությունն առաջին անգամ երկու հատորով լույս է տեսել Թեհրանում 1961 և 1962 թթ.: Իրապատում, վավերական և բացառիկ լայն ճանաչողություն ապահովող հուշագրությունը ներկայացնում է Վանի Ապրիլյան հերոսամարտը, վանեցիների՝ մարդկային ահռելի կորուստներով ուղեկցված 1915 և 1918 թթ. գաղթերը, արմատախիլ վերապրողների մաքառումներն ու առանձին հայտնի ու անհայտ դեմքերի ճակատագրերի մի շարք դրվագներ:

Ս $\frac{0503020913}{703(02)2007}$ 2007 թ. ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-5-8080-0694-2
© Արթուր Սարհադյան
© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հազմակերպություն (RAA)

Աշխատությունը վերահրատարակվում է հեղինակի կրտսեր որդու՝
Հարություն (Արթուր) Սիրաքի Սարհադյանի հովանավորությամբ

«Կեանքիս յուշերից» գրքի առաջին հրատարակութիւնը տեղի ունեցաւ Թեհրանում 1942 թւին հեղինակի կողմից: Ներկայ հրատարակութիւնը Հայաստանում կարելի դարձաւ Սամուէլ Կարապետեանի եւ «Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող» (RAA) կազմակերպութեան ԱՄՆ մասնաճիւղի աննման ջանքերի շնորհիւ: Գրքիս բոլոր քարտէզները եւ նկարները հայթայթուեցին, դասաւորուեցին եւ աւելացվեցին այս կազմակերպութեան անդամների ժրաջան եւ նուիրուած գործունէութամբ: Խօրին շնորհակալութիւններս եմ յայտնում պրն. Կարապետեանին եւ իր կազմին, որոնք իրականացրեցին հեղինակի երազը՝ Հայաստանում տպագրելու իր «Յուշերը»: Գրքի անգլերէն թարգմանութեան առաջին քայլերը նոյնպէս կատարուեցին կազմակերպութեան ԱՄՆ-ի մասնաճիւղի կողմից: Նաեւ շնորհակալութեան խօսքս եմ ուղղում ԱՄՆ-ի RAA միութեանը եւ յատկապէս պրն. Վանօ Յարութիւնեանին, որ կամուրջը դարձաւ այս գրքի աշխատանքի համար Հայաստանի և ԱՄՆ-ի մէջ:

Եւ վերջապէս սիրով եւ հարգանքով լի ոգեկոչում եմ հօրս՝ հեղինակ Սիրաք Սարհադեանի յիշատակը, որ այս անփոխարինելի գիրքը նուիրեց հայ ազգին եւ իր ընտանիքին:

Արթուր Սարհադեան
Լոս Անջելես, օգոստոս 2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հատոր Ա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 4
ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ 6
ԵՐԿՈՒ ԽՕՍՔ (ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ) 10

Մաս Ա
ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ. 11
Ո՞Վ ԷՐ ՄԱՐՕՆ 12
ԱՅԳԵՍՏԱՆՆ ՈՒ ՄԵՐ ՓՈՂՈՑԸ 13
ՄԵՐ ՏՈՒՆՆ ՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ 13
ՏՆՏԵՍՈՒՀԻ, ԹԷ՞ ՏԱՆՏԻԿԻՆ 16
ԿԵԱՆՔԸ ՏՆՈՒՄ ԵՒ ԱՅԳՈՒՄ 18
ԻՄ ԵՐԱՋՆ ՈՒ ՆՐԱ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ 19
ՊԱՏԺԻՑ ՅԵՏՈՅ 21
ԱՐՀԵՍՏԱՒՈՐ ԴԱՌՆԱԼՈՒ ՓՈՐՁԸ 22
ՍՐՏԱՑԱՒ ՄՕՐԱՔՈՅՐՍ 24

Մաս Բ
ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵԱՆՍ ՆԱԽԱՎԵՐՋՆ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆՍ ՍԿԶԲՆԱՇՐՋԱՆԸ 26
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄԵԱՆՆ ՈՒ ՆՐԱ ԴՊՐՈՑԸ 26
ԴՊՐՈՑՆԵՐ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ 28
ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔ 1908 ԹՒԻՆ 31
ԿԵԱՆՔԻ ԱՍՊԱՐԷԶՈՒՄ 32
ՄԱՐՕՅԻ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ 35
1915 ԹՒԻ ՍԿԶԲՈՒՄ 36
ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ՄԻՆՉԵՒ ԱՊՐԻԼԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ 37
ՀՐԱՒԷՐ 38
ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ 39
ԱԶՆԻՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՒ ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ 41
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԻՄ ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄԻՆ 42
ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ՎՃՌԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ 43
ԱՀԱԶԱՆԳՆ ՈՒ ՃԳՆԱԺԱՄԸ 45
ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԲԱՐԵԿԱՄԻՍ ՀԵՏ 48

Մաս Գ
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԱՊՐԻԼԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ 51
ԱՌԱՋԻՆ ՕՐԸ 51
ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ 53
ԵՐՐՈՐԴ ՕՐԸ 55
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՕՐԵՐՈՒՄ 57
ՄՏԵՐՄԻԿ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ 58
ՀԱՄՈՒԴ ԱՂԱՅԻ ԶՕՐԱՆՈՑԻ ՀՐԴԵՀՈՒՄԸ 61
ՓՐԿՈՒԹԵԱՆ ՅՈՅՍԻ ՆՇՈՅԼՆԵՐԸ 62
ԱՀԱԶԱՆԳ ԵՒ ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ 63
ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ 64
ԹԱՔՆՒԱԾ ՆԵՆԳՈՒԹԻՒՆ ԵՒՍՈՎԻ ՈՒՐՒԱԿԱՆԸ 65
ԸՆԿՐԿՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԸ 67
ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԵՄԻՆ 68
ՔԷՆՆ ՈՒ ՎՐԷԺԸ 71
ՏԱՃԻԿՆԵՐԻ ԲԱՆՏԵՐՈՒՄ 73
ՓՈԽՎՐԷԺԸ 75
ՔԱՂԱՔԱՄԻՋԻ ՀԵՐՈՄՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ 76
ԱԶԱՏԱՐԱՐՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ 77
ՎԱՆԻ ԵՐԿԱՄՄԵԱՅ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ 78
ԸՆՏԱՆԻՔԻՍ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՍ ՇՐՋԱՆՈՒՄ 80
ԹԱՆԿԱԳԻՆ ԶՈՀԵՐԻ ԹԱՂՈՒՄԸ 82
ԱԶԱՏԱԳՐՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ 83
ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՉՔԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ 83
ԽԱՂԱՂ, ԲԱՅՑ ՎԱՂԱՆՑՈՒԿ ՕՐԵՐ 84
ՄԻ ՕՐ ԿԷՍՕՐԻՑ ՅԵՏՈՅ 84

Մաս Դ
ԳԱՂԹ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 86
ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՍ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՑՍ ՄԷԿԻՆ 88
ՄԵՐՈՆՑ ՅԵՏԵՒԻՑ 89
ԸՆՏԱՆԻՔԻՍ ՀԵՏ 91
ՄԻՆՉԵՒ ԲԵՐԿՐԻ-ՂԱԼԷՆ 92
ՄԵՐ ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ԿՈՐՈՒՍՏԸ 92
ՔՐԴԵՐԻ ՅԱՐՁԱԿՄԱՆ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ 93
ԹԱՂՈՒՄԸ 94
ԲԵՐԿՐԻ-ՂԱԼԷԻ ՃԱՄԲԻՆ 94
ԲԵՐԿՐԻ-ՂԱԼԷԻՑ ՅԵՏՈՅ 94
ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻՑՍ ԱՄԵՆԱԴԺԲԱԽՏԸ 98
ԹԱՓԱՐԷԶ-ՂԸԶԸԼԴԻԶԷ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ 99
ԻՄ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԽԱՆՋԵԱՆԻ ՀԵՏ 101
ՄԻՆՉ ԱՅԴ ԱՆՇԱՆՕԹ ՄԻ ԶԳԱՑՈՒՄ 104
ԻԳԴԻՐՈՒՄ 104
ԹԱՓԱՌՈՒՄ ԵՒ ՓՆՏՐՏՈՒՔ 105
ԸՆՏԱՆԻՔԻՍ ՄՕՏ 107
ԴԷՊԻ ԷՋՄԻԱԾԻՆ 108
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ 111
ԽՈՅՍ ՏԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ 112
ՆՈՐԻՑ ՓՆՏՐՏՈՒՔ 114
ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ 116
ՂԱՐԱՔԻԼԻՍԷՈՒՄ 117
ՄԵՐ ԳԱՂԹԱՎԱՅՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ 118
ԳԻՒԼԻԶԱՐԴ ԳԻՒՂՈՒՄ 119
ԴԷՊԻ ԹԻՖԼԻՍ 120
ԿԱՅԱՐԱՆՈՒՄ ԵՒ ՎԱԳՈՆՈՒՄ 121
ԹԻՖԼԻՍՈՒՄ 122
ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՂԱՆԻՔՈՒՄ 125
ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՂԱՆԻՔՈՒՄ 126
ԳՈՐԾԻ ՓՆՏՐՏՈՒՔԸ 127
ՍՊԱՍՈՒՄ ԵՎ ՓՆՏՐՏՈՒՔ 129
ՔՆՆԻՉԻ ՊԱՇՏՕՆԻՍ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ 130
ԳՈՐԾԻ ՎՐԱՅ 132
ՆՈՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՌՆԱԼՈՒ ՏԵՆՉԸ 134
ԾԱՅՐԱՀԵՂ ՇՈՎԻՆԻԶՄ 135
ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԴԱՍԱՏՈՒ 136
ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ 137
ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁՈՒԹԻՒՆ 138
ՄԻՆՉԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՍ 139
ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ԱԼԻՍԻ ՄՕՏ 140
ՎԵՐՋԻ ՕՐԵՐԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ 141
ԴԷՊԻ ՂԱՐԱՔԻԼԻՍԷ 143
ՄԵՐՈՆՑ ՄՕՏ 144
ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ 145

Հատոր Բ

ՅԱՌԱՋԱԲԱՆ 147

Մաս Ա
ՎԵՐԱԴԱՐՁԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ 148
ՄԵՐ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ. ԱՌԱՋԻՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ 150
ՄԵՐ ՈՐԲԱՑԱԾ ՏՆԵՐՆ ՈՒ ԱՅԳԻՆԵՐԸ 151
ՄԱՐՕԻ ՏԱՆԸ 152
ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅՐԵՆԱՍԷՐՆԵՐ 153
ԱՒԵՏԻՍ ԹԷՐՋԻԲԱՇԵԱՆԻ ՄՕՏ 154

ՎԵՐԱՇԻՆՄԱՆ ՃԻԳԵՐ....156
ՏԱՏԱՆՈՒՄ ԵՒ ՍՐՏՄԱՇՈՒՔ....157
ՅՈՒՍԱԼՔՈՒՄ....158
ՎԱՐԱԳՈՒՄ, ՊԵՏՐՈՍԻ ՄՕՏ....159
ՆՈՐԻՑ ՄԱՐՕԻ ՄՕՏ....162
ՏԽՐԱՌԻԹ ԲԱԺԱՆՈՒՄ....164
ՁԱՐԹՈՆՔԻ ԵՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ....166
ՀՕՐՍ ՎԵՐԱԴԱՐՁԸ....167
ՄԵՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՂՏՈՒԿԸ....168
ԵՐԵՔ ՆԱՄԱԿՆԵՐ....168
ՆԱՄԱԿՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ....170
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՅԵՂԱՓԽՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԵՆՔ....171
ՅԱՒԱԼԻ ՍԽԱԼՄՈՒՆՔ....171
ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՍ ՏԱՆԸ....172

Մաս Բ

ՎԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԱՀԱՆՋԸ....174
ՃԱՆԻԿԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ....175
ԱՐՃԱԿ-ՍԱՐԱՅ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ....176
ԿՈԹՈՒՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ....178
ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ....179
ԿՈԹՈՒՐԻ ՁՈՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ....180
ՍԱԼՄԱՍՏԻ ԴԻԼԻՄԱՆ ՔԱՂԱՔԸ....182
ԴԻԼԻՄԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ....182
ՉԱՐԱՂԷՏ ՄԱՀԳՈՅԺ....183
ԱՆՈՒՇԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ....184
ՋՈՒԼՖԱ ԱՆՑՆԵԼՈՒ ՓՈՐՁԸ ԵՒ ՍԱԼՄԱՍՏԻ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ....188
ԱՆՁՕՐ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱԽՈՒՍ....189
ՎԻՐԱՒՈՐՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ....191
ՆՈՐԻՑ ՆԱՀԱՆՋ ՈՒ ՓԱԽՈՒՍ....192
ՈՒՐՄԻԱՅՈՒՄ....193
ՍՐՏԱԿԵՂԵՔ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ....193
ՄԱՐՕԻ ՆԱՄԱԿԸ....197
ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՍ ԲՈՒԼՂԱՐԱՑՈՒ ՀԵՏ....198
ԴԷՊԻ ՍԱՅԻՆ-ՂԱԼԷ ԵՒ ԲԻՋԱՐ....199
ՀՈՐՍ ՓՆՏՐՏՈՒՔԸ....200
ԻՄ ԶԻՆԱԹԱՓՈՒՄՆ ՈՒ ԳԵՐԵՎԱՐՈՒՄԸ....201
ՀԱՄԱԴԱՆՈՒՄ....205
ՄԱԼԱՅԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ....206
ԺԱՄԱՆՑ-ԹՂԹԱԽԱՂ....207
ՄԱԼԱՅԵՐԻՑ ԴԷՊԻ ՍՈՒԼԹԱՆԱԲԱԴ....208
ՄԱՀԱՄԵՐՁԻ ԱՆԿՈՂՆՈՒՄ....208
ԴԷՊԻ ԹԵՀՐԱՆ....209

Մաս Գ

ԹԵՀՐԱՆՈՒՄ ԵՒ ԹԵՀՐԱՆՑԻ....211
ԿԵԱՆՔԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ....212
ՍԱՐԷ ՂԱԲՐԱՂԱՅՈՒՄ....213
ԲԱԽՏԱՒՈՐ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ....215
ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ ԵՒ ՎԵՐԱԶԱՐԹՆՈՂ ՁԳՏՈՒՄՆԵՐ....216
ՈՒՍՈՒՑԻՉ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ....217
ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՔԱՀԱՆԱՅ....218
ԱԼԻՍՆ ՈՒ ԵՍ....218
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՎԱԾ ԵՒ ԻՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ....220
ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՆՀՈՒՍԱԼԻՈՒԹԻՒՆԸ....224
ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐ....225
ՓԱԽՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ....226
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՍՊԱՐԷԶՈՒՄ....228
ԳԱՂԹԱԿԱՆ ՀԻՒՐԵՐՍ....229
ՏՊԱՐԱՆԻ ՎԱՐՁԱԿԱԼ....230
ԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ....231
ՀՕԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ....232
ՀԱՐՒԱՇԻՑ ՅԵՏՈՅ ԻՆՔՆԱՍՓՈՓՈՒՄ....232
ՊԱՏԱՀԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ....233
ԽԱՐԴԱԽ ԳՈՐԾԱԿԻՑ....234
ՃԱՇԻ ՀՐԱՒԷՐ....234
ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔ....236
ՆՈՐ ԳՈՐԾԻ ՎՐԱՅ....236
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԾԱՐԱԻՆ ՈՒ ՆԵՐԳԱՂԹԻ ՓՈՐՁԵՐԸ....237
ԵՐԵՒԱՆՈՒՄ....237
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՀԱԿ ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ ՀԵՏ....242
ՎԵՐՋԻՆ ՕՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ....244
ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ....244
ԵՂԲՕՐՍ ՄԱՀԳՈՅԺԸ....247
ԹԻՖԼԻՍՈՒՄ....247
ՓՆՏՐՏՈՒՔ ԱԼԻՍԻ ՀԱՄԱՐ....248
ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԵՏ....250
ԱԼԻՍԻ ՆԱՄԱԿԸ....251
ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ....252
ԲԱԳՎՈՒՄ....254
ՄՈՍԿՒԱՅՈՒՄ....255
ԱՂԱՍԻ ԽԱՆՋԵԱՆԻ ՄՕՏ....256
ՎԵՐԱԴԱՐՁ....258
ԹԵՀՐԱՆՈՒՄ....258
ՆԵՐԳԱՂԹԻ ԱՐԳԵԼՔԸ....259
ԲԱՆԿԱՅԻՆ ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ....260
ՇԻՐԱԶՈՒՄ....261
ՎԵՐԱԲՆԱԿՈՒՄ ԹԵՀՐԱՆՈՒՄ. ԲԵՌՆԱՏԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՄ....262
ՀՕՐՍ ՄԱՀԸ....264
ԳՈՐԾԻ ՓՆՏՐՏՈՒՔԸ....265
ԴԷՊԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՏԵՂԻՆ....265
ԳԵԱՐՄԱԲԴԱՐ-ՂԱԼԷ-ՇԷՅԽՈՒՄ....266
ԹԱՆԳԷ-ԴՕՈՒՄ....267
ԲԻՇԷՈՒՄ....269
ԼՈՌԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ԲԺԺՇԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ....270
ՆՈՐԻՑ ԹԵՀՐԱՆՈՒՄ....271
ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ....273
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ....273
ԻՐԱՆԻ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԳՐԱՒՈՒՄԸ....274
ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՍԻՐԵԼԻ ԻՐԱՆԻ ՄԱՍԻՆ....276
ՄԻԼ-ՆԱԳԷՐԻՈՒՄ....277
ՕՏԱՐ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԸ....278
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ....279
ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔԵՐ ՄԻՆՉԵՒ 28 ՄՈՐԴԱԴ....280
ԱՆԳԼՕ-ԻՐԱՆԵԱՆ ՆԱՒԹԻ ԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՒ ՆՈՐ ԴԷՊՔԵՐ....281
ԴՈՔՏ. ՄՈՍԱԴԴԵՂԻ ԼԻԱԶՕՐՈՒԹԻՒՆԸ....282
ՕԳՈՍՏՈՍ 19 (ՄՈՐԴԱԴ 28)....283
ԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԴՈՐՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ....284
ԱՆԱՐԻՒՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ՝ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ....284
ԻՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ....286
ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ ԵՒ ՄԱՆԱՒԱՆԴ ԻՐԱՆԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Է ՊԷՏՔ....286
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ....287
ՎԵՐՋԱԲԱՆ....293
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ....292
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ....296

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Սիրաք Սարհադյանի «Կեանքիս յուշերից» մենագրությունը սոսկ Մեծ Եղեռնը հրաշքով վերապրած ականատեսի փաստալից հուշագրություն չէ:

Այս գիրքն Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի հերոսական և ողբերգական օրերի բովանդակ պատմությունն է: Հայրենի բնօրրանում հազարամյակներ գոյատևած, ուրույն և բարձրարվեստ մշակույթ արարած հնամենի ստեղծագործ մի ժողովրդի՝ պատերազմի ընթացքում գազանաբար հոշոտվելու, սպառվելու, հայրենազուրկ մազապուրծ փշրանքները տարագրության ենթարկվելու, անհայրենիք օտարվելու, անէանալու անդարմանելի և չսպիացող պատմությունն է: Նաև պատմությունն է Երկիր մոլորակի վրա անհիշելի ժամանակներից իրեն վերապահված տարածք-հայրենիքից անհավասար և անարդար գոյամարտում վտարված դժբախտ մի ժողովրդի:

Գիրքն ապահովում է բացառիկ լայն ճանաչողություն, իսկ պատմական անցքերի, դեպքերի, հարաբերությունների, հայացքների, գաղափարախոսությունների, անձերի, ճիգերի, մաքառումների, հուսալքումների և կյանքի բովով անցնող ցանկացած անհատի համար կենսափորձի կուտակման առումով շտեմարան-դասագիրք է՝ շարադրված անաչառ և անկողմնակալ, պարզ, գրավիչ և մեկ շնչով ընթերցվող լեզվով:

Մինչ վասպուրականցիների առաջին՝ 1915 թ. հուլիսյան գաղթն իր գաղափարական հակումներով Ընկերվար-ժողովրդավարական (սոցիալ-դեմոկրատ) կուսակցության համակիր 19-ամյա Սիրաք Սարհադյանն արդեն գաղթից անմիջապես հետո առիթն ուներ ինքն իրեն հեգնելու նախկին համոզմունքների համար. *«Մենք, ինչպէս նախօրոք յայտնել եմ, այդ օրերին՝ պատկանում էինք Սոցիալ-Դեմոկրատ ուսանողական կազմակերպութեան և տարուել էինք համաշխարհային վարդապետութեան երազանքներով: Ապրիլեան կռիւներն ու նրանց յաջորդող գաղթ-փախուստը մեզ սթափեցրել և իրական, կոպիտ իրականութեան աշխարհն էր վերադարձրել: ...իրաւացիօրէն մտահան էինք արել համամարդկային ձգտումները, քանի որ նրանց հասնելուց առաջ մեզ անխուսափելիօրէն անհրաժեշտ էր մեր ժողովրդի, մեր ազգային հաւաքականութեան և նրա հետ մեր սեփական գոյութիւնը փրկելու առաջին պայմանը լրացնել: Մենք այդ օրերին և այդ պայմաններում ինչպէ՞ս կարող էինք համաշխարհային յեղափոխութեան, համամարդկային երջանկութեան երազներով օրօրուել, երբ մեզ մօտ, մեր աչքերի ներքև, մեր ոտքերի տակի հողն էին խլում, մեր կեանքն ու արևն էին խամրում և մեզ մորթելու, բնաջնջելու սատանայական ծրագիրներն էին իրականացնում»* (էջ 102-103):

«Տարօրինակ, ինձ համար անհասկանալի, մի փոփոխութիւն էր կատարուել իմ ներքին հոգու աշխարհում: Վանի դժբախտ նահանջից յետոյ, ես զարմանալիօրէն ազգասէր, նոյնիսկ ազգամոլ էի դառել: Համամարդկային, համաշխարհային սոցիալ-դեմոկրատ ձգտումներ, որոնք իմ ուսանողական շրջանում, մինչև Ապրիլեան ինքնապաշտպանութեան կռիւները, ինձ կլանել էին, կարծես հեռացել ու անհետացել էին: Այդ ձգտումները իրենց տեղը զիջել էին նորածնունդ

ազգայնական զգացումների ու տենչերի: Մի խօսքով ես ազգայնամոլ հայասէր էի դառել:

Մեկուսացած, մենակ մնացած ժամանակ, շատ անգամ աշխատում էի վերլուծել այս փոփոխութեան պատճառները, բայց չէի կարող վերջնական եզրակացութիւններ հանել: Երբեմն մտածում էի, որ գուցէ այս իմ ազգայնամոլութիւնը հետևանք է մեզ վրայ գործադրուած բռնութիւնների, հալածանքների ու ամէն տեսակ անմարդկային վերաբերմունքների:

Եթէ տաճիկները, մղուած կուրացնող եսականութիւնից և շովէն ատելութիւնից, կարող են մեզ՝ հայերիս վայրագաբար ճղակոտոր և անգթօրէն արմատախիլ անել և մեզ մեր սեփական հողից ու ջրից անպատկառ լրբութեամբ վռնդել, ապա ինչու՞ մենք այդ մարդակերպ գազանների նկատմամբ մարդկայնութիւն, մարդկային համակրանք և գութ ունենանք: Ինչու՞ մենք միշտ մարդասէր, հեզ, զիջող մնանք:

–Պէտք է մեզ նման գաղթական և հայրենազուրկ լինել, իրական կեանքն ու նրա հարազատ թելադրանքները ըմբռնելու համար: Կեանքի ներկայ պայմաններում, երբ երկրագնդիս վրայ տաճիկ Ջէմալ, Թալէաթ, Էնվեր և Ջևդէտի նման մարդակեր գազաններ են ապրում, համամարդկային զգացումներն ու ձգտումները ձրի, անարժէք խօսքեր են» (էջ 138):

Սիրաք Սարհադյան հասարակական գործչի նկարագրի ամբողջացման համար, կարծում ենք, տեղին է մեջբերել իր իսկ հետևյալ խոսքերը. *«Ամբողջ կեանքումս ես դաշնակցական կամ նրանց համակիրը չեմ եղել: Ընդհակառակը, թէ՛ Վանում և թէ՛ Թեհրանում յաճախ պայքարողի դերումն եմ եղել, բայց չեմ կարող հաշտուել այն գաղափարին, որ մարդկանց, այն էլ մեր ժողովրդի և մեր ազգապահպանման համար տարիներով մարտնչողներին դաշնակցական լինելու մեղքով պէտք էր կամ կարելի էր կացնահարել և կոտորել...*

Ուրախ եմ յայտարարելու, որ իմ կեանքում կուսակցական մոլեռանդութեան բոլորովին ենթակայ չեմ եղել և նոյնիսկ զզւանք եմ զգացել բոլոր նրանց նկատմամբ, ովքեր կուսակցական մոլեռանդութեան ատելութեամբ և քինախնդրութեամբ են կուրացել» (էջ 226, 229):

Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակի առաջխաղացումներին պարբերաբար հաջորդող հապճեպ նահանջների ռազմավարական դրդապատճառներն ըստ ամենայնի քննելով՝ հեղինակը հանգել է միանգամայն տրամաբանական այն եզրակացության, որ ռուսների նահանջներն ըստ էության չէին բխում մարտական գործողությունների պարտադրանքից, այլ պատերազմական իրավիճակից օգտվելով՝ հետապնդում էին Ռուսաստանին միավորելիք հայկական մարզերը մինչ Ռուսաստանին կցելն արդեն հայաթափ վիճակում ունենալու, հետագայում այդ տարածքներում ռուս վերաբնակիչներին անարգել և զանգվածաբար հաստատելու հեռահար և դավադիր նպատակ:

Հիմնականում լռության մատնված այս իրողությունը որևէ կերպ հանգիստ չի տվել հայրենաբաղձ հեղինակին, որը մոտավորապես 1960 թ., երբ թղթին էր հանձնում իր հուշերը, անդրադառնալով վասպուրականցիների պարտադրված առաջին գաղթին, խոր կսկիծով նշել է. *«1915 թի այդ տնաքանդ և կործանիչ փախուստից մինչև մեր այս օրերը 45 երկար տարիներ են անցել: Միանգամայն իրաւացիօրէն տրամաբանողներ կան, որ այդ հապճեպ և անկազմակերպ նահանջը կեղծ ու սարքովի է եղել և նպատակ է ունեցել Վասպուրականի հայ կենսունակ և ժրաջան ազգաբնակութեանն իր հայրենի հողից ու ջրից հեռացնել և տարագրելով նրան ցանուցրիւ անել»* (էջ 94):

Խնդրով խորապես հուզված հեղինակն առիթը բաց չի թողել հարցի ծալքերը պարզաբանելու համար նյութն արծարծել իր զինվորական և քաղաքական գործընկերների հետ:

Օրինակ, Գրիգոր Բուլղարացին հեղինակի հարցումին այսպես է պատասխանել. *«Մեր ազա-*

տագրումը կարծես ռուսական ցարական կառավարութեանը հաճելի չթւեց: Այդ իշխանութիւնը մեզի ազատած ըլլալու համար կարծես զղջաց: ...ռուսական բանակները նահանջելու պարտադրող տաճկական զինուորական ոյժ ու կազմակերպութիւն գոյութիւն ունեցած չէ և մանաւանդ ներկայիս ալ չկայ: Եղած բոլոր նահանջները քաղաքական խաղերու և խաբէութեան հետևանք են» (էջ 163-164):

Հուլիսյան սրտակեղեք գաղթի ճանապարհին՝ Իգդիր չհասած գաղթողների քարավանի մեջ, հեղինակին հանդիպած այգեստանցի ընկերը՝ Աղասի Խանջյանն էլ նույն խնդրի առթիվ նշել էր. *«Տարօրինակ է ասել, որ կարծես անհերևոյթ և չարագործ ձեռքեր նենգօրէն շեշտում, թանձրացնում էին այս նահանջի սարսափելիութիւնը և նրա տագնապն ու խուճապը: Ճիշտ է, ստոր թշնամու՝ թալանի ծարաւի քրդերի յարձակման ու կոտորածի ահն ու սարսափը կար, բայց մի՞թէ այս նահանջը չէր կարելի այնպէս կազմակերպել, որ այսպիսի խուճապահար փախուստի չը վերածուէր»* (էջ 102):

Ընկերոջ կարծիքն իմանալուց հետո հեղինակի եզրահանգումն առավել քան տրամաբանական է. *«Մի ժողովուրդ, տուեալ պարագայում մեր վանեցի հայութիւնը, որ կարողացաւ ամբողջ մի ամիս հերոսաբար պաշտպանել և դիմադրել ամէն տեսակի զէնքով և զինուորական ուժերով օժտուած և ցերեկ ու գիշեր կատաղիօրէն յարձակւող թշնամուն, տոկալ նրա կարկտի նման թափւող համազարկներին և փլատակող, այրող ու ոչնչացնող ռմբակոծումներին, ինչպէ՞ս չէր կարող խաղաղ և ապահով պայմաններում գաղթեցնել և նահանջի հանգիստ ճանապարհ բացել իրեն, հէնց իրեն համար:*

...մութ, անհարազատ և նենգ ձեռներ կազմակերպել են այնպէս, որ այս նահանջ-փախուստով մաշւի, հիւծւի և տրորւի մեր Վասպուրականի հայ կենսունակ ազգաբնակչութիւնը:

Ես միանգամայն համոզուած եմ, որ այս հայակործան և դաւաճան ծրագրում էնթրիկանդ և պրովակատոր ձեռներ գոյութիւն ունեն և առանց չափազանցութեան, կարելի է ասել, որ իրենց կործանարար նպատակին հասան: Երկուսս էլ մտովին մեղադրում էինք մեր անզօր և անպաշտպան ազգի կեանքի ու գոյութեան հետ նենգօրէն խաղացող տեսանելի և քօղարկուած թշնամիներին: Այդ թշնամիներից մէկը բացարձակ, օր-ցերեկով, լոյս արևի տակ խելահեղօրէն ձգտում էր մեզ կոտորել, սրբել, անհետացնել մեր սեփական հողից և մեր պապերի հազարաւոր տարիների տունն ու օճախը խլել, բռնագրաւել, իսկ միւսը գաղտագողի, անաղմուկ և սատանայական նենգութեամբ ցանկանում էր տիրանալ մեր հողին ու ջրին, մեր արեւափայլ երկրին, մեր հարազատ ու ազիզ հայրենիքին, առանց մեզի և մեր նեղութեան ու գոյութեան ձանձրոյթին» (էջ 102):

Հեղինակի ամենամոտ ընկերներից վանեցի Հրանտ Դարբինյանն էլ հարցի առնչությամբ նշել է. *«...ցարական կառավարութեան նենգ ծրագրի պատահական հրապարակումը: Այո՛, ծրագրուած էր Ալաշկերտի, Սարիղամիշի, Աբաղայի և նոյնիսկ Կարսի շրջանները ռուս կոզակների բնակութեան յատկացնել: Կերենսկու այս նոր կառավարութեան հասցէին նման ցաւալի լուրեր են շրջան առել: Դեռ երէկ իշխանութեան ղեկը գրաւած այս նոր իշխանութիւնը կոզակներին սիրաշահելու նպատակով, նրանց խոստացել է հայկական հողամասերից և թիւրքերից գրաւած շրջաններից, նրանց բնակութեան համար, նահանգային ընդարձակ մասեր նւիրել»* (էջ 165):

Ի լրումն այս ամենին՝ տեղին է մեջբերել նաև 1921 թ. հուլիսի 18-ին Բաքվի հայերի ջարդերի կազմակերպիչ Բեյբութ խան Ջևանշիրին Կ.Պոլսում սպանած Միսաք Թորլաքյանի՝ դեռևս 1916 թ. հայտնած միտքը. *«Պէտք է ըսել, թէ քրիստոնեայ ռուսերը չարդարացուցին այն յոյսերը, զորս մենք դրած էինք անոնց վրայ, իբրև ազատարարներու: Անոնք գրաւելով Արևմտեան Հայաստանի մեծ մասը և հաստատ գիտնալով թէ թուրքերը ինչպիսի անլուր ոճրագործութիւններ*

կատարած էին հայերուն հանդէպ, նոյնիսկ նոյն այդ թուրքերուն համակրանքը շահելու համար, սկսան աւելի լաւ վերաբերմունք ցոյց տալ անոնց հանդէպ, քան այդ վերջիններու եաթաղանէն հրաշքով ազատած հայ բեկորներուն հանդէպ: Կարծես ռուսերուն թշնամին հայերն էին եղած և ոչ թէ թուրքերը, որոնցմէ եթէ մէկը սպաննուէր՝ խստօրէն կը պատժէին հայերը: Այդ օրերուն, ինծի համար պարզ եղաւ ռուսերու դիմագիծը և հասկցայ, թէ անոնք նպատակ ունէին Հայաստանին տիրելու առանց հայութեան» (**Մ. Թորլաքեան**, Օրերուս հետ, Պէյրութ, 2001, էջ 367-368):

Ինչևէ, 1915-1918 թթ. Կովկասյան ռազմական թատերաբեմում տեղի ունեցած ռազմական գործողությունների զարգացումները ի դերև հանեցին ցարական Ռուսաստանի քաղաքական ծրագրերը, որոնց համաձայն՝ Արևմտյան Հայաստանը փաստորեն նախատեսված էր Ռուսաստանին միավորել առանց երկրամասի բնիկների: Բնակչություն, որը, դարեր հեծելով թուրքական քայքայիչ և կործանարար տիրապետության ներքո, ճարահատյալ հայրենիքի ազատագրության հույսը կապել էր Ռուսաստանի՝ իր երևակայական ազատարարի հետ:

Նաև ցանկանում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել հեղինակի արծարծած մեկ նյութին ևս, երբ զուգահեռ է անցկացնում թուրք և պարսիկ պետությունների՝ հայերի նկատմամբ վարած հակապատկեր քաղաքանության միջև. *«...հրճւում էի, որ բախտ եմ ունեցել մեր դարաւոր հայատեաց տաճիկ իշխանութիւնից մազապուրծ ազատուած լինելով՝ վերաբնակւել մի երկրում, որտեղ մեզնից ոչ միայն չեն խորշում, այլև նոյնիսկ սիրալիրութեամբ մեր մտային և բարոյական օժանդակութիւնից և գործակցութիւնից անվերապահ օգտւում են: Մեզ ոչ միայն ոչ մի կերպ չեն ջլատում և խեղդում, այլև ամէն հնարաւորութիւն տալիս են մտային և շինարարական ուժերը դրսևորելու և ազատօրէն արդիւնաւորելու»* (էջ 271):

Կիսելով հեղինակի կարծիքը՝ միաժամանակ հարկ ենք համարում էական մեկ լրացումով ընդգծել, որ մարդու կամ մարդկանց խմբերի ազգային նկարագիրն էլ առավել է արժևորվում, ազգային արժեք և ըստ այդմ կշիռ և ուժ է ձեռք բերում հիմնականում այն դեպքում, երբ նա բնակվում է իր հայրենի հողի վրա, իսկ ազգերի պատմությունը ցույց է տվել, որ բնիկները բնական մղումով միշտ էլ ձգտել են անկախ պետականության: Չէ՞ որ նույն տաճիկ կառավարությունն էլ հանդուրժել և ցարդ հանդուրժում է տասնյակ հազարավոր հայերի գոյությունն իրենց գործող եկեղեցիներով, կրթական և մշակութային զանազան հաստատություններով հանդերձ, օրինակ՝ Կոստանդնուպոլսում (ներկայիս՝ Ստամբուլ), և հենց հեղինակն իր հուշերում էլ վկայում է, թե ինչպես 1920 թ. վրացիների ազգայնամոլական գործողություններից զզված՝ Թիֆլիսի տրամվայի հավաքակայանի տնօրեն Բարսեղյանը ընտանյոք փոխադրվում է իր ազգակիցներին իրենց հայրենիքում գերեզմանած պետության մայրաքաղաքը՝ Պոլիս՝ եղբոր մոտ՝ անվրդով և հանգիստ ապրելու... Հետևաբար թուրքերն էլ հայրենիքից օտարված և ըստ այդմ ոչ հայրենատեր հայերից *«ոչ միայն չեն խորշում, այլև նոյնիսկ սիրալիրութեամբ մեր մտային և բարոյական օժանդակութիւնից և գործակցութիւնից անվերապահ օգտւում են»:*

Սամվել Կարապետյան

Նուիրում եմ հօրս՝ Յարութիւն աւագ քահանայ Սարհադեանին եւ բոլոր մեր հայրենակիցներին, որոնք հայրենաբաղձութեան կիզիչ կարօտով, հայրենի հողից զրկուած, օտար հորիզոնների տակ մահացել են:

ՍԻՐԱՔ ՍԱՐՀԱԴԵԱՆ

Հատոր Ա

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ (ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ)

Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի 45-րդ տարեդարձն ինձ տարերօրէն և անընդհատ մղեց գրի առնել կեանքիս յիշողութիւնների այն մասը, որն անբաժանելիօրէն կապուած է հայ ժողովրդի մի հատուածի այն սքանչելի և հերոսական ընդվզումին, որն իրաւամբ կոչուել է Ապրիլեան հերոսամարտ և որն եղել է ու շարունակ կը մնայ հայ ազգի դիմադրական պայքարի պատմութեան և հերոսական ինքնապաշտպանութեան գեղեցկագոյն էջերից:

Բոլորովին հաւակնութիւն չեմ ունեցել Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի բովանդակից և լրիւ նկարագրութիւնը տալու, բայց դրա ամենահամառօտ վերյիշումն իսկ միանգամայն բաւական է ներկայացնելու մեր ներկայ ու ապագայ հայ հաւաքականութեանը և մանաւանդ նրա երիտասարդ սերունդներին, որ Վասպուրականի հայ ժողովուրդն իր ազգային գոյամարտի ամենադաժան ժամերում ի վիճակի է եղել առանց դասակարգային, աղանդական, թայֆայական և կուսակցական ամէն տեսակ խտրութիւնների միասնաբար և միահոգի, մի մարդու նման ծառանալ անարգ թշնամու հայասպան, կատաղի ու վայրագ յարձակումների դէմ:

Նա՝ Վասպուրականի այդ ժողովուրդը, իր անընկճելի կամքով ու հաւատքով փրկել է տասնեակ հազարաւորների կեանքն ու գոյութիւնը և այդպիսով ամբողջ աշխարհին ապացուցել է, որ նա ընդունակ է արեան գնով ապրելու:

Ապա փորձել եմ վեր հանել Վասպուրականի հայ ազգաբնակչութեան տանջանքն ու տառապանքները, նրա համար անպատկառօրէն ծրագրուած ճերմակ ջարդն ու բազմահազար մահացումները գաղթ-փախուստի ճանապարհին և գաղթական ապրուստի շրջանին: Վասպուրականի հայ ժողովուրդն իր կրած բոլոր մահառիթ ձախորդութիւններից, անտուն-անտէր և կիսաքաղց գաղթական վիճակից և հոգեկան նւաստացումներից գերմարդկային ջանքերով և վճռականութեամբ կարողացել է իր գլխին թափուած անհաշիւ կրակ ու մոխրից իրեն ազատել և շառաչուն ապտակով պատասխանել իր բազմաթիւ և բազմազան թշնամիներին՝ նրանց երեսն ի վեր պոռալով.

– Ձեր ամէն տեսակի դժոխային զէնքերը և քաղաքական, սատանայական դաւադրութիւններն ինձ սպանել և բնաջնջել երբէք չեն կարող:

Վասպուրականի հայը, ինչպէս հայ ազգն իր դարերի պատմութեան ընթացքին մի անգամ ևս իր վերածնունդով ապացուցել է, որ Թալեաթ-Էնվերների նման հազարաւոր ոճրագործ հայասպանների բոլոր դիւային ծրագիրները հերոսական կամքով ու անխախտ հաւատքով ոչնչացրել և չքացրել է և շարունակել է ապրել յաւիտենական ապրումի յաղթական կամքով ու վճռականութեամբ:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքին թաղել է իր ազգասպան թշնամիներին և պիտի շարունակի գերեզմանել իր գոյութիւնը բնաջնջելու ձեռնարկող բոլոր չարագործներին ու բռնակալներին:

Ցանկացել եմ նաև կատարեալ անկեղծութեամբ և անխտրականութեամբ յարգանքի ծունկի գալ բոլոր այն անմահ հերոսների անյայտ շիրիմների առաջ, որոնք Ապրիլեան գոյամարտի ընթացքին հայ հաւաքականութեան փրկութեան համար իրենց երիտասարդ կեանքն ու ազնիւ արիւնը զոհաբերեցին, ինչպէս նաև իմ ամենախորին յարգանքի խօսքի խոնարհ տուրքը տալ բոլոր նրանց, ովքեր աննման նւիրուածութեամբ և խիզախութեամբ հերոսական Ապրիլը կերտեցին և տասնեակ հազարաւոր հայութեան գոյութիւնը փրկեցին:

Եւ, վերջապէս, թող անհամեստութիւն չ'թի յարգելի ընթերցողներին, եթէ աշխատել եմ մոռացութեան չ'տալ ընտանիքիս ու իմ անհատական կենցաղն ու նրանց հետ անմիջականօրէն կապուած ապրումների ու մարտնչումների ճշգրիտ յուշերիս նկարագրութիւնը:

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Մաս Ա

Ինչպէս հեռաւոր երազ՝ յիշում եմ մօրս մահը: Ես շատ փոքր էի, գուցէ 5-6 տարեկան երեխայ: Բայց լաւ եմ յիշում, երբ մայրս իր մահամերձին էր մօտեցել, և նրա մահճակալը շրջապատուած էր իմ հօր և ինձնից աւելի մեծ երկու եղբայրներով ու մի քանի հարևան և ազգականներով, ես մեր այգում կլանուած էի իմ խաղով: Շատ էի սիրում նշան բռնել: Մի քանի մետր հեռաւորութեամբ գետնի վրայ քար էի դնում և ձեռքումս հաւաքած քարերով հեռուից աշխատում էի նրան խփել, նշան բռնել:

Այդպէս ինքնամփոփ խաղալիս յանկարծ մօրս պառկած սենեակից լաց ու կոծի ձայն լսեցի: Այգու վրայ բացուող լուսամուտին մօտենալով՝ տեսայ որ հայրս ու մեծ եղբայրներս դառնագին ողբում և երկու ձեռքով իրենց գլխին են տալիս:

Այգուց վազ տի մեր բակը: Սենեակը բակին միացնող կարճլիկ փայտաստիճանը բարձրանալով՝ հասայ մեռնող մօրս թախտին: Առանց ըմբռնել կարողանալու իմ կրած սոսկալի կորուստի խորութիւնը՝ սկսեցի բարձրաձայն լալ և մամա, մամա կանչել: Մեր հարևաններից մի աղջիկ՝ Մարօ անունով, որն ինձ չափազանց շատ էր սիրում, և որին ես էլ իմ հերթին անչափ սիրում էի, ինձ գրկելով՝ անմիջապէս սենեակից դուրս բերեց և իրենց տունը տարաւ:

Իմ սիրելի մօր մահուան մասին սրանից աւելին չիմացայ: Թէ դժբախտ մօրս իր պառկած մահուան սենեակից ե՞րբ դուրս տարան, ինչպէ՞ս տարան, ինչպէ՞ս թաղեցին, ո՞րտեղ ամփոփեցին նրա անշնչացած դիակը, ո՞վքեր նրա յուղարկաւորութեան մասնակցեցին և այլն, չկարողացայ իմանալ, և ոչ ոք էլ որևէ բացատրութիւն չուզեց տալ: Միայն այնքան եմ յիշում, որ ինձ համար պահապան հրեշտակ թուող Մարօն ինձ իրենց տնում մի քանի օր այնպէս պահեց ու պահպանեց և այնքան սիրալիրութեամբ զբաղեցրեց, որ ի վիճակի չեղայ զգալու աննման մօրս բացակայութիւնը:

Մի քանի օր յետոյ, երբ Մարօն ինձ մեր տունը առաջնորդեց, հայրս, ինձ գրկելով, իր կրծքին սեղմեց, և իր համբոյրների տեղատարափի մէջ հազիւ լսեցի, մորմոքով մրմնջաց՝ «Իմ սիրելի՛ բալիկս, ի՛մ որբուկս...»: Այդ ժամանակ նրա աչքերից ընկնող արցունքի կաթիլներից մի քանիսը այտերիս գլորուեցին:

Իմ հերթին, երբ սկսեցի լացել և հեկեկալ ու կանչել՝ մամիս եմ ուզում, մամիս եմ ուզում, որտե՞ղ է նա, Մարօն, ինձ հօրս գրկից խլելով, ասաց.

– Լաց մի լինի, իմ անուշիկ Սիրաք, ես հենց հիմա քեզ մամայիդ մօտ կը տանեմ... Նա ինձ նորից տարաւ, բայց էլի իրենց տունը:

Իրենց տանը Մարօն կաթոգին քրոջ նման իր անվերջ համբոյրներով հանգստացրեց ինձ և ասաց

– Սիրա՛ք ջան, ախր դու տղա ես, դու եթէ այդպէս լաց լինես, բա ի՞նչ կանի քո շատ սիրելի փոքրիկ քոյրը, Արաքսին: Ես լաւ գիտեմ, որ դու նրան շա՜տ, շա՜տ ես սիրում: Գիտես, որ նա քեզանից աւելի փոքր է և աւելի շատ է ուզում իր մօրը տեսնել: Դու պէտք է մի քիչ համբերես և լաց չը լինես, թէ չէ, երբ նա քեզ լացելիս տեսնի, նա էլ կսկսի, և ոչ ոք, բացի քեզնից, նրան հանգստացնել չի կարող: Չէ՞ որ դու նրա համար ամէն ինչ ես: Նա ոչ ոքի, նոյնիսկ պապիդ ու եղբայրներիդ այնպէս չի սիրում, ինչպէս քեզ: Դու սիրուն նախշուն թիթեռնիկներ շատ ես տեսել, որոնք անվերջ լոսավառ ճրագի շուրջն են պտտում և թևածում, նա էլ միշտ այդ թիթեռնիկների նման քո շուրջն է պտտուում և ինչ որ դու անում ես, նա էլ նոյնն է կրկնում: Եթէ չարութիւն ես անում, նա էլ նոյնն է կրկնում, եթէ խաղում ես, նա էլ նոյնն է անում, եթէ ուրախ ես, նա էլ է ուրախ... Իսկ եթէ դու լաց լինես, օ՜հ, չեմ իմանում, նա ինչքան շատ պիտի լացի: Ես իմանում եմ, որ դու ինձ էլ շատ ես սիրում, և եթէ ճիշտ է, որ ինձ սիրում ես, ուզում եմ ինձ խոստանաս այլևս չլացել: Դու պիտի իմանաս, որ եթէ խելօք լինես և չը լացես, բարի հրեշտակները քեզ կը սիրեն և քո անուշիկ մամայիդ նորից կը վերադարձնեն: Դու քո սիրելի փոքրիկ քրոջն էլ այդպէս պիտի ասես և համոզես: Ես գիտեմ, որ դու այդ կարող ես անել:

Դէ՛, իմ անգին Սիրաք, իմ անուշիկ փոքրիկս, նորից եմ կրկնում, որ եթէ ինձ իսկապէս սիրում ես, ինձ պէտք է խօսք տաս ասածներս լսելու և կատարելու: Այն ժամանակ ես քեզ աւելի շատ կը սիրեմ: Դէ՛, խոստացիր, իմ փոքրիկ հերոս:

Մարօն իր հմայիչ անուշութեամբ և դիւթող նկարագրով միշտ կարողացել էր ինձ իր ազդեցութեան և կամքին ենթարկել: Նրան մերժել չէի կարող: Խոստացայ և խոստումս լիովին կատարեցի:

Մօրս կորուստի համար այլևս լաց չեղայ, բայց երբէք չը կարողացայ նրան մոռանալ: Նրա սքանչելիօրէն սիրասուն պատկերը միշտ անջնջելի մնաց իմ ուղեղում:

Ո՞Վ ԷՐ ՄԱՐՕՆ

Մարօն մի շատ աղքատ մօր միակ զաւակն էր: Նրա իսկական անունը Մարիամ էր, բայց մեր ընտանիքում մենք նրան Մարօ կրճատ անունով էինք կանչում: Նրա հայրը տարիներ առաջ մեռել էր: Չեմ յիշում, արդեօ՞ք, երբևիցէ հետաքրքրուել եմ նրա հօր մասին, թէ ոչ: Ամէն պարագայում նրա հօր կեանքի, կենցաղի և մահուան վերաբերեալ ներկայիս ոչինչ չգիտեմ: Մայրը՝ Ոսկի անունով, սապատը դուրս եկած, ամբողջ դէմքը կնճիռներով ծածկուած, մօտ 45 տարեկան մի խեղճ կին էր: Սակայն նրա գունատ, դալուկ դէմքի վրայ կանացի շեշտուած վճռականութիւն կար, գուցէ այդ նկատելի վճռականութեան հիմքը նրա՝ իր միակ աղջիկ զաւակի գոյութիւնը պաշտպանելու և նրան անթերի մեծացնելու անդրդուելի որոշումն էր: Նա համարեայ ամէն օր, առնուազն տասը ժամ աշխատում էր: Թէ՛ հացթուխ և թէ՛ լուացարար էր:

Նրանց տնակը, աւելի ճիշտ, խրճիթը բաղկացած էր շուրջ 30 մետրանոց մի եռանկիւնից և ընկած էր ճիշտ մեր տան գլխաւոր մուտքի դիմաց մեր չորս մետրանոց փողոցի միւս կողմը: Տնակի ճակատի խարխլած պատը 4-5 քայլ էր, որի երկու կողմից երկու 8 մետրանոց պատերը, եռանկիւնաձև երկարելով, իրար էին միացել: Եռանկիւնի ձախ թևի վրայ մի փոքր բաց տեղ կար, մեջտեղը՝ մի ածու, որի մէջ Մարօյի աշխոյժ մայրը մի քանի տեսակ կանաչեղէն էր ցանում: Մարօն շաբաթական երկու անգամ փողոցի հոսող ջրով այս ածուն ջրում էր: Այս փոքրիկ ածուի աջ և ձախ կողմերում երկու հաստաբուն բարդի ծառերը բոյ էին քաշել:

Մարօն ինձ ասել էր, որ այս երկու բարդիներն իրա սիրելի հօր յիշատակն էին: Այս փոքր ածուի շարունակութեան վրայ ընկած էր Մարօենց խրճիթը՝ մէկ սենեակնոց տնակը: Այդ խրճիթը բնութեան քմահաճոյքներին, ձիւն-անձրևին և քամիներին դիմագրաւող տխրութեան տեսքն ունէր: Նրա խարխլած, համարեայ փտած դուռն ամէն անգամ երկար ճռռոցով բացւում և ներս էր ընդունում մօրն ու աղջկան և օրական մի երկու-երեք այցելուի, որոնցից մէկն ես էի և միւսները՝ Ոսկիին՝ Մարօյի մօրը գործի հրաւիրող կանայք կամ երեխաները:

Խրճիթի վերին անկիւնում կար մի մետրանոց լայնութեամբ թոնիր, որի վրայ ձմռան քուրսի էր դրւում և վրան ծածկւում էր բազմաթիւ կտորներից կարկտուած քուրսու վերմակով: Ես միշտ զարմանում էի, թէ ինչպէ՞ս այդքան բազմազան և բազմաթիւ կտորներից բաղկացած վերմակը միշտ կարկտուած և մանաւանդ մաքուր էր մնում: Խրճիթի գետնի վրայ կային զանազան գոյնի մաշուած ու միշտ մաքուր երեք կտոր փալասներ: Պատերի կէսից վերև ամբողջ խրճիթը թոնրի ծխից բոլորովին սևացել էր: Մանաւանդ առաստաղն ու գերաները մուգ սևից փայլատակում էին: Խրճիթի միակ լուսամուտը կտուրի երդիկն էր: Ձմռան ցուրտից պաշտպանելու համար երդիկի վրայ մի կտոր ապակի էին դնում և շուրջը ցեխով ամրացնում: Թոնիրը վառելիս խրճիթի դուռը բաց էին թողնում, որից ծուխը դանդաղօրէն դուրս էր գալիս: Երդիկի ապակին ամառուայ տաք ամիսներին շատ մեծ խնամքով վերցնում և պահում էին յաջորդ տարուայ համար, որ չը կոտրուի:

Մարօյի մայրը շատ հազուադէպ տանն էր մնում: Համարեայ ամէն օր հարուստների տներում հաց էր թխում կամ լուացք անում:

Մենք հարուստ չէինք, որ կարողանայինք նրան միշտ գործի դնել: Ամսական մէկ կամ երկու անգամ՝ այն էլ մօրս մահից յետոյ, հազիւ կարողանում էինք նրան մեզ մօտ աշխատեցնել:

Ոսկին միշտ գանգատւում էր ուսերի, թևերի և երբեմն ոտքերի ցաւերից: Ասում էր, որ յոգնած է, բայց երբէք չէր ուզում աշխատանքից բացակայել: Նա անխախտ որոշում ունէր՝, իրեն զոհելով՝ իր միակ աղջկան պահել, մեծացնել և ամուսնացնել:

– Մարիամիս մի լաւ ամուսնու ձեռքը յանձնելէ յետոյ,– յաճախ ասում և կրկնում էր նա,– ջահանանամ, որ կը մեռնեմ: Իմ միակ փափագս ազնիւ փէսա ունենալն է: Թո՛ղ Աստուած օգնական ըլլայ: Թո՛ղ որ իմ ամուսնուս ինձմէ առնելէ վերջ գթա ինձ և ողջ պահի, մինչև իմ ջգարիս կտորը բախտաւոր էլնի: Մեզ պէս կնիկարմատները ծնուած են անվերջ չարչարուելու համար: Եթէ արժանի ըլլայի, և Աստուած մեզ սիրէր, ուրիշ կնիկների պէս իմ մարդն էլ սարի նման մէջքիս կայնած կը լինէր: Աս ալ մեր բախտն է, մեռնեմ Աստծոյ ամենազօր, ողորմած կամքին: Հալբաթէ մէկ դուռ փակելէ վերջ մէկ ուրիշ դուռ, մէկ ուրիշ լուսոյ ճանապարհ կը բացի իմ ու որբուկիս համար:

Այդ հարազատ ու անձնուէր մօր, որ հայ կնոջ մաքրամաքուր նմուշն էր, ոչ մի ժամանակ մոռանալ չեմ կարող: Նա Մարօյին՝ իր միակ զաւակին, իր կեանքի լոյս ու ճրագին, գունագեղ վարդի նման պահում ու պաշտպանում էր և չէր յօժարի, որ նա, թէկուզ մի փոքր, թոշնի և թոռոմի:

Նա մարգարէացել էր, որովհետև նրա ցանկութիւնը լիովին կատարուեց: Անձնուէր, աննկուն զինուորի նման նա իր կեանքի պայքարը մղեց և իրա չարքաշ աշխատանքով իրականացրեց իր ցանկութիւնը: Նա իր կեանքի գնով Մարօյին բախտաւոր ամուսնութեան հասցրեց: Յետոյ կը տեսնենք, թէ ինչպէ՛ս:

Մարօն, իր տարիքի խոտոր համեմատութեամբ, (նրա մօր և հօրս ասութեամբ դեռ 15 տարին չէր լրացել) փարթամ կազմուածք ունէր: Նրա դէմքից կենսուրախ ժպիտը միշտ անբաժան էր: Ունէր լայն ճակատ: Բնութեան գեղանկարչական վրձինով քաշուած նուրբ յօնքերն և սև սաթի նմանող երկար արտևանունքներով աղեղուած՝ երկնային բաց կապոյտ խոշոր և հմայիչ աչքեր: Այտերն ու շրթունքը նմա-

նում էին այգելոյսի ցողի տակից կարմրին փայլատակող նորաբողբոջ վարդի: Ձայնի հնչիւնը նման էր հեռուներից հասնող հոգեպարար սրինգի մեղմանուշ թրթռումների: Զարմանալիրօեն համեստ էր և խելօք: Հագնւում էր պարզ, բայց միշտ մաքուր:

Մանկութեան շրջանում, բնականաբար, անկարող էի գնահատելու նրա այդ արտակարգ գեղեցկութիւնն ու բացառիկ առաւելութիւնները: Այսքան միայն լաւ եմ յիշում, որ նրան չափազանց սիրում էի: Դրա համար էլ համարեայ միշտ, առանց հակաճառութեան և կամակորութեան, նրա ցուցմունքներին ենթարկւում էի: Զգում էի, որ նա էլ ինձ էր սիրում: Թերևս այն պատճառով, որ նա անոք ու հայրազուրկ էր և բացի իր միանուճար մօրից, իրեն սիրող ոչ ոքի ունէր և գուցէ նրա համար, որ ես էլ անմայր էի մնացել և կարօտ էի նրա մայրաշունչ հարազատ սէրին:

ԱՅԳԵՍՏԱՆՆ ՈՒ ՄԵՐ ՓՈՂՈՑԸ

Մեր տունը գտնւում էր Այգեստանի Խերանի փողոցում: Այգեստան կոչւած մասը Վանի ամենագեղեցիկ շրջանն էր, որի մէջ կային բազմաթիւ թաղամասեր՝ փռւած հսկայական տարածութիւնների վրայ:

Այգեստանը այդ շրջանի բնորոշիչ անունն էր, որովհետև ծածկւած էր իրար յաջորդող անվերջանալի այգիներով: Այգեստանում գտնւող տների մեծամասնութիւնը իրա կից այգիններից անբաժան էր: Հարուստ ու միջակ դասակարգն ապրում էր այդպիսի տուն-այգիներում: Աղքատները միայն զրկւած էին բնութեան պարգևած այդ բարիքից: Կարելի է ասել, որ այդպիսիների տոկոսը շատ էլ մեծ չէր: Գուցէ շատերին անհաւատալի թւի, եթէ յայտնեմ, որ չեմ յիշում՝ Այգեստանում հայ մուրացկանի հանդիպած լինեմ: Աղքատներ կային, բայց մուրացիկ չկար: Ամէնքը աշխատում էին: Հարուստների և միջակ դասի մէկ մասը վաճառականութեամբ զբաղւած էր: Միջակ դասի խոշոր տոկոսը բաղկացած էր արհեստաւորներից և շրջիկ, փոքր առևտրականներից: Աղքատները հարուստ վաճառականների և արհեստաւորների մօտ զանազան ծառայութիւններ էին անում: Անգործութիւնը վանեցի հայերի մօտ ամօթալի արատ էր թւում: Գողութիւնն ու անբարոյականութիւնը գոյութիւն չունէին:

Ես դեռ պատանի էի, երբ լսեցի, որ մի կնոջ գլուխը նրա մարմնից կտրելով անջատել են անբարոյական արարքում բռնած լինելու համար:

Այգեստանի այդ անծայրածիր ծառաստաններում տարածւում էին հայկական թաղամասերը, որոնք անջատւած էին թիւրքական փոքրաթիւ թաղամասերից: Գուցէ զարմանալի թւի, եթէ յայտնեմ, որ իսկական հայկական փողոցներում և նոյնիսկ թաղամասերում թիւրքերի բնակարան գոյութիւն չունէր: Հայի և թիւրքերի խառն բնակութեան թաղերը շատ քիչ էին:

Մեր փողոցը գտնւում էր Յանկոյսներ կոչւած թաղամասում՝ միևնոյն անունը կրող եկեղեցով և տարրական դպրոցով: Այս նոյն թաղամասումն էին գտնւում մեր Վանի փառք ու պարծանքը կազմող հայերից երկուսի տները՝ Խրիմեան Հայրիկի և Աղասի Խանջեանի ծննդավայրերը:

Մեր փողոցը սկիզբ էր առնում Այգեստանը Քաղաքամէջին (բերդին) կապող գլխաւոր և յայտնի պողոտայից՝ Սըղգա անունով: Այդ պողոտայի մէջտեղում և մեր թաղի գլխին կային երկու յորդառատ աղբիւրներ, որոնցից մէկը կոչւում էր Սօֆի քեահրիզ, որն ունէր առատ, գետակի նմանող, սառնորակ ջուր: Փողոցի միւս ծայրին, որն իջնում էր Յանկոյսներ կոչւած ձորը, կար մի ուրիշ աղբիւր՝ Մոխրի քեահրիզ անունով:

Այս քեահրիզը, որն իր ջրի առատութեամբ, մի իսկական գետի էր նման, ունէր սքանչելիօրէն վճիտ, սառնորակ և մարսողական ջուր: Ես, փոքր քրոջս հետ հազարաւոր անգամներ այդ աղբիւրի աննման ջրից կուժերով խմելու ջուր եմ կրել մեր ընտանիքի համար: Ոչ մի անգամ, առանց սուր վշտի զգացման և անհուն ափսոսանքի, չեմ կարողացել վերյիշել իմ հրաշագեղ ծննդավայրի այդ աննման և սառնորակ ջուրը: Անէծք և դժոխային նզովք մեր սքանչելի ծննդավայրը բռնագրաւողներին:

ՄԵՐ ՏՈՒՆՆ ՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ

Մեր տունը, ինչպէս յիշեցի, գտնւում էր Խէրանի փողոցում: Այդ փողոցը ծուռումուռ և նեղլիկ էր: Մի կառք անցնելիս փողոցի կէսը գրաւում էր: Մեր ամբողջ փողոցում միայն երկու ընտանիք կար, որ հարուստ և բարեկեցիկ վիճակ ունէր: Մնացեալները նիւթապէս միջին դասակարգի մարդիկ կամ նրանցից աւելի աղքատ էին: Հարևանների յարաբերութիւնները գրեթէ միշտ բարեկամական էին: Չեմ յիշում, որ մեր թաղեցիներից որևէ մէկը միւսի հետ այնպիսի անհաշտութիւն կամ վիճաբանութիւն ունենար, որն ստիպւած լինէր թիւրքական դատարանին դիմելու: Տարեցները և յարգանք ու պատիւ վայելողները կարողանում էին տարաձայնութիւնները հարթել և գործն անուշի կապել:

Մեր տունը փողոցի համարեայ կենտրոնում էր գտնւում: Փողոցի մի գլխին գտնւող Սօֆի քեահրիզին (աղբիւրին) կամ միւս ծայրին գտնւող Մոխրի քեահրիզին հասնելու համար գրեթէ նոյն ժամանակամիջոցն էր պէտք: Բայց մենք նախընտրում էինք Մոխրի քեահրիզից խմելու ջուր կրել, չնայած որ նրան հասնելու համար 25-30 մետր զառիվայր պիտի իջնէինք և ջրով լիքը կուժերով զառիվեր բարձ-



Վան. Այգեստանի մոտավոր հատակագիծը

բանայինք: Այդ փոքրիկ տաժանակիր աշխատանքին գրեթէ սիրով ենթարկւում էինք, քանի որ Մոխրի քեահրիզն իր զուլալ և սառնորակ ջրով Այգեստանում մեծ հռչակ ունէր:

Պէտք է խոստովանեմ, որ մեր ընտանիքի տնտեսական վիճակը գոհացուցիչ լինելուց բաւական հեռու էր: Մօրս մահից յետոյ թաղականները վճռեցին հօրս քահանայ ձեռնադրել և մէկ տարին չը լրացած իրենց որոշումը գործադրեցին:

Արդար լինելու համար պէտք է ասել, ինչպէս համարեայ միշտ, մեր հայ լուսաւորչական քահանաները, առանց հաստատուն վարձատրութեան և առանց մնայուն ռոճիկի, օրինականացած հարկահաւաքներ կամ աւելի ճիշտ կը լինէր ասել, մի տեսակ «պատուաւոր» մուրացիկներ են:

Հայրս համէստ և պատուասէր բնաւորութիւն ունէր և համարեայ միշտ իր գործից դժգոհ էր, մանաւանդ որ ընկել էր մի չափազանց ագահ և եսասէր գործակցի ճանկը: Տէր Յուսիկ կոչեցեալ քահանան, որ հօրիցս աւելի շատ Ս. Յակոբ կոչւող եկեղեցում պաշտօնավարելիս էր եղել, խեղճ հօրս շահագործում, համարեայ կողոպտում էր: Շնորհիւ իր կողմնակից աղաների և ջոջերի՝ բոլոր հարուստ և ունևոր տնատէրերին իրա մենաշնորհն էր դարձրել կամ զանազան էնթրիքներով և յաճախ զօռով դարձնում էր: Հարուստների տնօրինէքը, մկրտութիւնը, պսակն ու թաղումը անկուշտ Տ. Յուսիկի մօնօբոլն էր:

Շատ լաւ եմ յիշում, երբ հայրս մենակ էր լինում մեր ընտանիքի անդամների մօտ, յաճախ գանգատւում էր իր բախտից, որ այդպիսի ագահ գործակցի հետ էր պաշտօնավարում:

– Երեխաներ,– ասում էր նա,– ինչպէս սխալւեցի, որ իմ համաձայնութիւնը տուի քահանայ ձեռնադրւելու համար: Երանի չէր լինի, որ ուսուցիչ մնացած լինէի և այս անարժան մարդուն հանդիպած չը լինէի: Այս անկուշտ անիրաւը (խօսքը Տ. Յուսիկի մասին էր) իր անգրագէտ տեղովն ինձ չի հաւանում: Աղաներին հանդիպելիս ինձ բամբասում և ամէն տեսակ զրպարտութիւն հիւսում է իմ մասին: Այս քահանայի սքեմի տակ թագնւած սատանան ամէն տեսակ խարդախ և ստոր ձևերով և քահանային անվայել շողոքորթութեամբ աղաների ոտքերի տակը համբուրելու պատրաստ է, միայն թէ երկու ղուրուշ (թիւրքական 2 ղռան) իրեն աւելի վարձատրեն:

Տարիներ յետոյ, երբ ես մեծացայ, նկատեցի, որ հայրս իր արժանավայել տեղը գրաւել է հաւատացեալների շրջանում և մեծ յարգանք է վայելում: Ուրիշներից յաճախ տեղեկացայ, որ նա իր եկամուտի կէսից աւելին տրամադրում էր խեղճերին, որբերին և հիւանդներին: Այդ իրողութիւնն իմ ինքնասիրութիւնը շոյում էր, և ես, դեռ պատանեկութեանս շրջանը չը բոլորած, երբ չափազանց դժգոհ էի հօրս քահանայագործութեան հանգամանքից և օր առաջ ցանկանում էի նրան ազատել և հեռացնել այդ

գործից, աստիճանաբար հաշտուեցի նրա քահանայ լինելու և հոգևորական մնալու մտքի հետ:

Մօտաւորապէս երկու տարի, մօրս մահուանից յետոյ, մեծ եղբօրս ամուսնացրին: Նա ամուսնացաւ մեր թաղի երկու հարուստներից մէկի ընտանիքի՝ Հայկանուշ անունով երիտասարդ և բարեկազմ աղջկան հետ: Եղբայրս՝ որպէս հայերէն լեզուի և երգի ուսուցիչ, սկսել էր պաշտօնավարել մեր Յանկոյսներ եկեղեցուն կից 6 ամեայ նախակրթարան դպրոցում: Լինելով բաւականաչափ ընդունակ, ուսուցչութիւնից զատ, սկսել է մուտք գործել Վանում վերջին տարիներին կեանք առնող թատրոնական անսամբլում: Գրեթէ երազի նման յիշում եմ եղբօրս մասնակցութեամբ այդ անսամբլի առաջին ներկայացման բեմադրութիւնը: Չեմ կարող յիշել, սակայն, թէ ներկայացման սիւժէն ի՞նչ էր: Եղբօրս յանձնած դերը նա կատարեց, այն ժամանակւայ հասկացողութեամբ, կատարելապէս յաջող: Նրա հնչեղ և դիւրեկան երգերը ներկայացման կատարման ժամանակ նրան փայլեցրին և խլեցին քանի անգամներ կրկնուող ծափահարութիւններ և խրախուսական «կեցցես»-ներ:

Ներկայացման յաջորդող առաւօտեան հայրս մեծ եղբօրս՝ Կարապետին, իր կրծքին սեղմելով և նրան ջերմօրէն համբուրելով, ասաց.

– Ծօ տղաս, այդ ի՞նչեր լսեցի քո մասին: Հալալ լինի քեզ մօրդ կաթը: Դու մեզ պատիւ բերիր այդ խաղով, դերասանութեամբ: Միայն չը կարողացայ հասկանալ այդ վարժութիւնների դասը քեզ ո՞վ տուեց: Ափսո՜ս, որ իմ քահանայ լինելու հանգամանքով չը կարողացայ ներկայացման գալ: Քեզ նորից և նորից յաջողութիւն կը մաղթեմ: Գուցէ դու մեզ պարզերես ընես այս մեր բարեկամ և չարակամ ծանօթների մօտ:

– Հայրի՛կ ջան,– պատասխանեց եղբայրս,– հիմա թէ՛ դու և թէ՛ այս կինս իմացաք, թէ ինչու՞ այս ամբողջ երկու ամիսը, գիշերներն ուշ էի տուն վերադառնում: Ես որ ասում էի փորձի էի գնացել, չէիք ուզում ինձ հաւատալ և միշտ տրտնջում էիք: Հիմա համոզւում էք, որ ներկայումս, այն էլ ինձ նման առաջին անգամ բեմ բարձրացողի համար առանց երկարատև փորձերի անհնար էր:

Միւս եղբայրս՝ Արմէնակ, որին մենք կրճատ անունով Արմէն էինք անւանում, մեր երեք եղբայրներիս միջնակն էր: Մեծ եղբօրս հակառակ, որ շատ համարձակ և միաժամանակ շատ անհոգ, յաղթանդամ, բարեկազմ էր, նա՝ միջնակ եղբայրս, երկարահասակ, նիհար և մի տեսակ անհաղորդ բնաւորութեան տէր էր: Այս երկու եղբայրներս համարեայ իրար հակապատկերներ էին: Արմէնը հէնց սկզբից, սովորել չէր սիրել: Հազիւ մի քանի տարի, այն էլ հօրս ստիպմամբ, նախակրթարանի 4 բաժանմունքներն աւարտել էր: Նա միշտ լուրջ, երբեմն նոյնիսկ մտախոհ ու տխուր էր: Մեր բոլորիս ջանքերը նրան տրամադրելու, զւարճացնելու նպատակով գրեթէ միշտ զուր էր անցնում: Դպրոցը շարունակելուց հրաժարւելով՝ նա մի քանի տարւայ ընթացքում երեք վարպետ փոխեց: Սկիզբը փորձեց ոսկերչի, ապա կօշկակարի և ի վերջոյ դերձակի աշակերտ լինել: Ի վերջոյ ոչ մի արհեստում յարատևել չը կարողանալով՝ Վասպուրականի դէպքերից 3 տարի առաջ Ռուսաստան մեկնեց: Ես չը կարողացայ իմանալ, թէ նա ինչպէ՞ս և ի՞նչ հրաշքով կարողացաւ Թիֆլիս հասնել, որովհետև հօրս և մեր ընտանեկան տնտեսական դրութիւնը այնքան էլ բարւոք չէր, որ կարողանայինք նրան իր ճանապարհածախսերում օգնել:

Մեր երեք եղբայրների միակ քոյրը՝ Արաքսին, ինձնից 3 տարով աւելի փոքր էր: Մեր ընտանիքում, եթէ հաշւի չառնեմ Մարօյին, որ մեր ընտանիքի անդամը չէր, իմ ամէնասիրելին իմ փոքրիկ Արաքսին էր: Մենք երկուքս իրար շատ էինք սիրում, և մեր մանուկ սրտերն իրար հետ անբաժանելիօրէն կապած էին:

Տնում մենք միշտ իրար հետ էինք լինում: Դրսում որևէ մի տեղ գնալուց քոյրս աշխատում էր ինձ հետ լինել, իսկ եթէ մերժում էի, նա կուչ էր գալիս և այնպիսի լաց ու աղաղակ էր բարձրացնում, որ նրան մեղքենում էի և յամաձայնւում էի հետս տանել: Նոյնիսկ աղբիւրից ջուր բերելիս, չնայած որ նրա համար շատ դժւար էր թէկուզ կուլիկով (փոքր փարչ) ջուր բերել, բայց ինձնից չը բաժանւելու համար դրան սիրայօժար համաձայնւում էր: Բոլորը շատ լաւ գիտեն, որ որևէ ընտանիքում, փոքր երեխաները յաճախ իրար հետ վիճաբանում, կռուտկում, խռովում և նոյնիսկ ծեծկւում են: Ես չեմ յիշում, որ Արաքսու հետ մենք որևէ ժամանակ կռուտկած կամ խռոված լինէինք:

Մեր նորեկ հարսը, հայ նահապետական ընտանիքներից մէկում մեծացած, իսկական հայ կնոջ տիպարն էր: Նա համեստ, զիջող, խելօք և աշխատասէր էր: Նրան երբէք անգործ, ձեռները ծալած ու նստած չեմ տեսել: Շատ հանգիստ բնաւորութիւն ունէր և, որն ամենից կարևորն էր, երևակայութեամբ չէր տարւում: Չէ՞ որ նրանց ընտանիքը մեր ընտանիքից անհամեմատ աւելի հարուստ էր: Ուրեմն նա կարող էր իր ներկայ վիճակից, իր հագուստներից, մեր նիստուկացից, ապրուստից և բազմաթիւ ուրիշ պարագաներից դժգոհ լինել: Անկասկած, որ նա համեստութեան և պարկեշտութեան կատարելատիպն էր և արժանի նախ իրա և ապա մեր ընտանիքին:

Մեր տունը մի յարկանի և նոր լինելուց շատ հեռու էր: Մեծ, երկփեղկանի մուտքի դռնից ներս մտնելիս անցնում էինք 4-5 մետր երկարութեամբ և 2 մետր լայնութեամբ միջանցք-բակից և իսկական բակն էինք անցնում: Մեր բակում՝ մուտքից աջ թևի վրայ, կային երկու ածուներ, որոնք համարեայ միշտ կոխկռտուած և կիսամշակ վիճակումն էին: Այս ածուներում հասակ էին քաշել երկու սև թութի բազմաճիւղ ծառեր, որոնք ամռանը միշտ հասած և կի-

սահաս թթերով ծածկված էին լինում: Միւս կողմում երկու հատ էլ բարդի բարձրաբերձ ծառեր կային: Մեր երկարակեաց կատուն, պատահական շներից հալածուած, իր ապաստանը միշտ նրանց կատարին էի գտնում: Հօրս բացակայութեան պահերին ես էլ, յաճախ մագլցելով, ինձ նրանց կատարն էի հասցնում: Այս վտանգաւոր մարզանքից բացառիկ բաւականութիւն էի ստանում: Այդպիսի պարագաներում քոյրս թախանձագին աղաչում էր, որ այդքան վերև չը բարձրանամ և երբ յամառում էի նրան լսել, սկսում էր լացել և իրա փոքրիկ ձեռքերով գլխին տալ:

Մեր տան շինութիւնը բաղկացած էր մի ընդարձակ թոնրատնից, որին կպած էր մեր սենեակ-ճաշարանը՝ առանց բաժանող պատի, և մի մառանից, որում տեղաւորուած էր անյիշելի ժամանակներից մնացած և ամուր տախտակից պատրաստուած ալիւրի ամբարը: Ունէինք նաև մի ընդարձակ ննջարան, որտեղ մահացաւ դժբախտ մայրս: Կար նաև մի փոքր հիւրասենեակ, որում գետնի վրայ նստած վիճակում հազիւ 8-10 մադու տեղ կարող էր լինել:

Ունէինք նաև մի գետնափոր ներքնայարկ, որում հայրս կողպէքի տակ աշնան եղանակին հաւաքում և պահում էր առաստաղից կախուած մեր այգու բերքն ու բարիքը՝ խնձորն ու տանձը, սերկևիլն ու կարմրաւուն խաղողի ողկույզները: Աղաջրում և կանաչի թթում դրուած կաղամբի և պոմիդորի կարասներն էլ իրար կողքին այս պահարանի պատի շուրջ շարուած էին: Դիմացի պատի կողքին՝ պահարանի գետնում կիսովին թաղուած կարասներում, մեր այգու խաղողից խնամքով քամուած և զտուած գինին էր լեցւում:

Եւ, վերջապէս, մենք մեր տնումն ունէինք երկու մարագներ, ուր ամբարում էին ձմեռայ պաշար վառելանիւթերը՝ մեր այգուց հաւաքած չոր ճիւղերը, ցախերն ու երբեմն դրսից հայթայթուած ոչխարի կտտորն ու կովի աթարը:

Վերջին ժամանակները լքուած վիճակումն էր գտնւում մեր ախոռաբաժինը, որ մօրս կենդանութեան ժամանակ մեր ընտանիքի կաթնատու կովի ապաստարանն ու մսուրն էր եղել: Մօրս մահուանից յետոյ հայրս ստիպուած եղաւ ծախէլ անտէր և անխնամ, մեր բոլորի սիրելին դառած խեղճ կովին, որը տարիների ընթացքին մեր ընտանիքի կաթնաբիւրն ու աչքի լոյսն էր եղել:

Մեր այգին հարուստ էր ամէն տեսակի պտղատու ծառերով: Ժամանակի մշակութեան ենթակայ ամէն տեսակի պտղատու և ի միջի այլոց անպտուղ ծառերով ծածկուած էր մեր ընդարձակ այգին: Մեր խոշոր այգեմասն էլ ծածկուած էր խաղողի որթերով: Տարուան մէջ շուրջ վեց ամիս մենք լիառատ վայելում էինք մեր այգու առատ պտուղն ու կանաչեղէնը և դրանով երջանիկ էինք: Ամռան երեք ամիսներում, երբեմն պատահում էր, որ ոռոգման ջրի պակասութեան էինք ենթարկւում: Այդպիսի տարիներին մենք և մեր նմանները, որոնք հարուստ չէին և փողի ու կաշառքի ուժով ժամանակին իրենց այգիներին ջուր հասցնել չէին կարողանում, իրենց անբախտ էին համարում և անիծում էին ագահ և կաշառակեր ջրատերերին, որոնք փողի ու կաշառքի ագահութեամբ կլանուած, ջրի անհաւասար և անարդար բաշխում էին կատարում և ջուրը նրանց էին հասցնում, որոնցից աւելի շատ փող կարող էին պոկել:

ՏՆՏԵՍՈՒՀԻ, ԹԷ՞ ՏԱՆՏԻԿԻՆ

1905 թի ամառայ սկզբին մեր թաղաշրջանի նախակրթարանի 3-րդ բաժանմունքն արդէն աւարտել և մի քանի ամսից յետոյ թևակոխելու էի կեանքիս 10-րդ տարեշրջանը: Հազիւհազ սկսում էի ինքս ինձ և շրջապատս ճանաչել և իմ՝ դեռ մանկական դատողութեամբ զատորոշել լաւն ու վատը, չարն ու բարին: Սկսել էի դպրոցական կեանքը սիրել: Դասերս լաւ էի սովորում և այդ կողմից հօրս դժգոհութեան առիթ չէի տալիս:

Հէնց այդ ժամանակներում մեր ընտանեկան կազմում մի փոփոխութիւն կատարուեց, որից ես, նոյնիսկ իմ երեխայ լինելու հանգամանքովն էլ, չէի ուզում սիրայօժար ենթարկուել: Մեր նորահարսը, մեծ եղբօրս կինը, իր ամուսնութիւնից դեռ միայն երկու տարի անց, հիւանդացաւ: Այդ օրերին մեր շրջապատում դժբախտաբար լաւ հմուտ և հիւանդութիւնը կարգին բնորոշող բժշկութիւն գոյութիւն չունէր: Կամ եթէ գոյութիւն ունէին իրենց ուսումն ու պրոֆեսիան կատարելագործած մի քանի բժիշկներ, նրանք մեզ՝ որպէս հասարակ մահկանացուների համար չէին: Մեր նմաններին նրանք համարեայ անմատչելի էին: Մենք և մեզ նման դժուար ապրուստ ունեցողներս ստիպուած էինք տարէց և ծերացած անգրագէտ կամ կիսագրագէտ կին ու մարդկանց ախտաճանաչութեան փորձառութիւնից օգտուել, և յաճախ մեր դժբախտ հիւանդները նրանց աւանդական և փորձառական դարմաններին զոհ էին դառնում:

Ահա այդպիսի զոհերից մէկն էլ մեր անբախտ հարսն էր: Ճիշտ է, նա հրաշքով ազատուեց մահից, բայց ինչպէս իմ ազնիւ բարեկամ Մարօն, իմ անվերջ կրկնուող թախանձանքներին զիջելով, ինձ բացատրեց, որ եղբօրս կինն իր հիւանդութեան սխալ բժշկութեան հետևանքով երեխայ ունենալու բախտաւորութիւնից զրկուել էր և թերևս ընդմիշտ զրկուած էլ պիտի մնար:

Նա՝ այդ նորաբողբոջ վարդի նման ծաղկող երիտասարդ, առույգ և աշխատասէր կինը, յաճախ գանգատւում էր իր հիւանդութիւնից և, հակառակ իր բուռն ցանկութեանը, չէր կարող մեր՝ համեմատաբար բազմանդամ ընտանիքի գործերը կարգի բերել:

Ահա այդ ժամանակներում էր, որ հօրս ու մեծ եղբօրս «բարիացակամ» ազգականներն ու բարեկամները, մեզ օգնելու սրտացաւութեամբ, մեր տան և մեր ընտանիքի համար մի կին-տնտեսուհի ճարեցին և մեր ընտանիքում խցկեցին:

Այդ կինը, մեր՝ տնտեսապէս անբաւարար պայմաններում ապրող ընտանիքին կարծես բաւական չէր, պոչիցն էլ մի վաղահաս և աննկարագիր տղայ ունէր:

Այդ կնոջը և նրա Եղիշե անունով տղայի մուտքը մեր ընտանիքում ես, հէնց առաջի օրերից սկսած, իմ երեխայական մտածելակերպով, կատարեալ չարիք էի համարել և սկզբից իսկ նրանց նկատմամբ կրաւորական ընդդիմութիւն էի ցոյց տալիս: Այս պարագան չէր կարող աննկատելի մնալ իրեն տանտիրուհի համարող անկոչ նորեկ կնոջ և նրա որդու կողմից, և նրանք էլ իրենց հերթին աշխատում էին մեծ եղբօրս և մանաւանդ դիւրահաւատ հօրս իմ դէմ լարել ու գրգռել:

Հետզհետէ սկսում էի ատել այդ կնոջը, որովհետև ես նրան մեր ընտանիքում խորթ և աւելորդ էի համարում, մանաւանդ նրա համար, որ նկատում էի՝ նա և իմ և մասնաւորապէս փոքր քրոջս նկատմամբ քինախնդրութեամբ և ատելութեամբ է լեցւած:

Մի օր՝ կէսօրից յետոյ, դպրոցից վերադարձիս քրոջս տնում չը ճարեցի: Տան և մեր այգու ամէն անկիւններում նրան փնտրեցի, բայց իզուր: Նա չկար, վազ տուի իմ սիրելի բարեկամ Մարօյի խրճիթը: Տնակը փակւած էր, և ոչ ոքի տեսայ: Շնչասպառ վազ տուի հօրաքրոջս մօտ, որի 3 սենեականոց տնակը մեր այգուց բաժանւած, բայց նրան կից այգեմասի սկզբումն էր: Քրոջս ես այնտեղ գտայ՝ բոլորովին գունատւած և լացի կաթիլների հետքերն երեսին չորացած:

Մինչ ես նրա արիւնոտած հագուստի վրայ էի նայում սարսափահար, հօրաքոյրս անհուն վիշտ արտացոլող տոնով ասաց.

– Այդ անիրաւ անաստւածը՝ թոկէն փախած Իսկուհին (խօսքը մեր տնտեսուհուն էր վերաբերում) սուր մկրատը թալած է երեխայիս վրայ: Աստւածն է փրկած որբուկիս: Մկրատը կարող էր մտնէր երեխայիս աչքն ու կուրացնէր անոր: Ա՜խ, քոռանար հօրքոյրդ, որ այս օրերը չը տեսներ և այս շան ցնդկած անհարազատին չը պատահէր... Յետոյ խօսքն ինձ ուղղելով՝ աւելացրեց.

– Սիրա՛ք ջան, բալէ՛ս, մի՛ վախենայ: Տէրը փրկած է քու սիրելի Արաքսուն: Վէրքը շատ խորը չէ: Ես եօդով այրեցի վէրքն ու մաքուր լաթով կապեցի: Տէ՛ս, բալէ՛ս, մի՛ վախենայ, մի՛ տխրի, մի քանի օրէ լաւ կը լինի: Հօրքոյրս, քրոջս վերնազգեստը բարձրացնելով, նրա ձախ ոտքի զիստի վրայ կապւած վէրքը ինձ ցոյց տւեց: Վէրքից դեռ արիւն էր ծորում:

Քրոջս հետ պատահած դժբախտութիւնը գրեթէ խելագարութեան մատնեց ինձ: Առանց մտածելու և մի վայրկեան իսկ սպասելու մեր տունը վազ տուի: Թոնրատնում միայնակ նստած էր չարագործը: Յարձակւեցի նրա վրայ և գլխին ոլորւած մազի հիւսկը քանդելով, աննկարագրելի համարձակութեամբ և խիզախութեամբ, որքան կարող էին ուժերս պատել, երկու ձեռքով նրա մազերից պինդ բռնած սկսեցի նրան գետնի վրայ քարշ տալ:

Մարմնի քաշով և ուժերով Իսկուհին, անկասկած, 3-4 անգամ ինձնից աւելի ուժեղ էր, բայց ես նրան խոցելի և դիւրազգաց տեղից՝ նրա մազերից էի քարշ տալիս: Այդ հպարտ և անընկճելի թուղ կինը սկսեց բարձրաձայն բղաւել և օգնութիւն կանչել: Նրա գոռգոռոցի և օգնութեան աղաղակների վրայ խուճապահար ներս վազեցին մեծ եղբայրս ու նրա տղան: Մեծ եղբայրս, իր ծանր ձեռներով մի քանի ուժեղ հարւածներ բռունցքներիս հասցնելով, իմ ինքնաղատաստանին ենթարկւած անպիտան կնոջը ձեռներիցս հազիւ կարողացաւ հանել և ազատել: Մինչ Եղիշէն իր չարագործ մօրը կատարւած գործի վերաբերեալ հարց ու փորձի էր ենթարկել, եղբայրս, իմ աջ ձեռքից բռնած, քաշկռտելով բակը դուրս բերեց և մինչ այդ ինձ անծանօթ բղաւոցով ասաց.

– Ա՜յ յիմար երեխայ, այդ ի՞նչ խենթութիւն և վայրենութիւն է արածդ, բա չե՞ս ամաչում և գետին չե՞ս մտնում: Չէ՞ որ նա քեզանից մեծ է և քեզ համար նեղութիւն է քաշում: Քեզ համար, մեր բոլորիս համար աշխատում և չարչարւում է: Մեծին այդպէ՞ս են յարգում և պատւում, ինչպէս դու ես անում:

– Չէ՛, չէ՛, ես չեմ ուզում, չեմ ուզում, որ նա մեզ համար չարչարւի, մեզ համար կերակուր եփի և շոր լւանայ: Թող մենք աւելի լաւ է քաղցած և մերկ մնանք, քան թէ նա ամէն անգամ խեղճ քրոջս հոգին հանի, անվերջ նրան ծեծի ու կճմթելով նրա մարմինը սնացնի և այսօր էլ սուր մկրատը խրի նրա՝ առանց այն էլ նիհար ու չորացած մարմինն և այդ անպաշտպան որբուկին արիւնաշաղախ անի: Ո՛չ դու և ո՛չ էլ մեր հայրը մեզնով բոլորովին չէք հետաքրքրւում: Այն օրւանից, որ այս օձը՝ այս երկերեսանի կեղծաւոր կինն ու նրա անպիտան տղան ոտք են դրել մեր տնում, կարծես ո՛չ ես և ո՛չ էլ իմ փոքր ու անտէր քոյրը ձեզ համար այլևս գոյութիւն չունենք:

Ես սաստիկ յուզմունքից և անզուսպ լացից խեղդւում էի և չեմ յիշում՝ դեռ ինչե՞ր ասի և ի՞նչ դժգոհութիւններ յայտնեցի հօրս ու եղբօրս մեր երկուսի նկատմամբ կիրառած անփոյթ վերաբերմունքի համար: Այսքան գիտեմ, որ իմ և ինձ հետ նաև քրոջս մէջ ամբողջ մէկ տարում կուտակւած դժգոհութիւնն ու ատելութիւնն էր ժայթքում իմ շրթունքներից:

Ես նկատեցի որ տխրութիւնը սև ամպի նման եղբօրս մշտուրախ դէմքը ծածկեց: Ինձ թւաց, որ եղբայրս էլ, եթէ իր տարիքից և դիրքից ամաչելիս չը լինէր, ինձ և իմ անբախտ քրոջ նման մեր անգին մօր կորուստի և մեր ներկայ անմխիթար վիճակի հա-

մար լաց կը լինէր: Նա մի քանի անգամ վերևի ատամների արանքում իր ցածի շրթունքը կծոտեց, որպէսզի իր լացը զսպել կարողանայ և, իր ձեռքերով գլխիս խառնիխուռն մազերը հարթելով, յուզած ձայնով մրմնջաց.

– Սիրա՛ք, սիրելի՛ս, այդ մասին հօրս հետ խօսելու եմ:

Ինձնից հեռանալուց յետոյ ես լսեցի նաև նրա հետևեալ խօսքը. «Իսկապէս մեր աչքերը կապուած են եղել այսքան ժամանակ»:

ԿԵԱՆՔԸ ՏՆՈՒՄ ԵՒ ԱՅԳՈՒՄ

1907 թւի ամառուայ սկզբին ես լաւ թաւանշաններով աւարտել էի մեր թաղային դպրոցի նախակրթարանի 5-րդ բաժանմունքը: Այն ժամանակ ինձ արդէն մի փոքր մարդ էի հաշւում:

Մեր տանտիկին Իսկուհին ինձ և քրոջս համար շարունակում էր ատելի մնալ: Մեր փոխյարաբերութիւններում ոչ մի բարելաւում չէր կատարւել: Թէ՛ քոյրս և թէ՛ ես այդ կնոջը տանել չէինք կարողանում: Երկուքս էլ սարսափում էինք այն մտքից, որ այդ չար և օձաբարոյ կինը կարող էր կամ իրաւունք ունէր մեր հարազատ մօր տեղը գրաւելու:

Քրոջս համար մօրս խամրած գոյութիւնը միանգամայն անրջային էր: Նրա իմացածն այնքան էր, որ նրան ասած էր, որ նա մի բարի, հրեշտականման մայր էր ունեցել, որ դէպի երկինքն է թռել... Ինչ վերաբերում էր ինձի, ես շատ դժուարութեամբ էի մտապատկերում նրա էութիւնը, քանի որ մօրս մահուանից առաջ փոքր լինելով՝ ի վիճակի չէի եղել նրա մայրական սէրն ու գորովը գնահատելու: Համոզած էի, սակայն, որ նա ինձ և քրոջս համար սիրելի և հարազատ է եղել, որ նրա սիրտը մեր հանգստութեան և երջանկութեան, մեր ուրախ և զարթ կանչերի և ծիծաղի, մէկ խօսքով, մեր ամէն ապրումների համար անընդհատ և տարերօրէն բաբախելիս է եղել:

Իմ սիրելի քրոջս մխիթարելու և նրա փոքրիկ սրտում յոյս ու ջերմութիւն նեշնչելու միտումով՝ միշտ նրան ասում էի.

– Քոյրի՛կ ջան, մի՛ մտածիր, չէ՞ որ արքայութեան հրեշտակը միշտ դժոխքի սատանային հետապնդում է: Դու համոզած եղի՛ր, որ մեր սիրելի մայրը, ինչպէս արքայութեան հրեշտակը, մի օր հրեղէն սուրով մեր տունը կը վերադառնայ և այս դժոխքի սատանային մեր տնից վռնդելով՝ նրան կը քշի իր նախկին բնակավայրը-սատանաների գեհէնը:

Վերջին ժամանակներում իմ սիրելի Մարօի հնարած և ինձ ժառանգութիւն թողած այս գիւտի նկատմամբ հաւատք չ'ունէի, բայց նկատում էի, որ այդ սփոփիչ գիւտով ես կարողանում էի թէկուզ ժամանակաւորապէս մխիթարելու իմ շատ սիրելի քրոջս, որի համար ես ամէն ինչ էի՝ թէ՛ մայր, թէ՛ հայր, թէ՛ եղբայր և թէ՛ բարեկամ:

Երբ ես նախակրթարանի 5-րդ դասարանն աւարտել էի, քոյրս էլ միևնոյն դպրոցի առաջին բաժանմունքն էր վերջացրել: Մենք իրարուց, հօրս ասելով, 42 ամսով մեծ ու փոքր էինք: Չնայեած դրան՝ կարծես երկուորեակներ ծնուած լինէինք, քանի որ դիմագծի, մարմնակերպի, մտածելակերպի, հակումների և մէկ խօսքով ընդհանուր նկարագրի զարմանալի նմանութիւններ ունէինք:

Տնում մենք համարեայ միշտ իրար մօտ էինք լինում: Եթէ ես խաղալու գնայի, քոյրս էլ անմիջապէս ինձ փնտրելու կը գար: Եթէ սկսէի դասերս պատրաստել, նա էլ անպայման ինձ կ'ընդօրինակէր: Եթէ Մարօյի կամ հօրաքրոջս մօտ գնայի, նա էլ յետևիցս կը վազէր և, վերջապէս, եթէ ես ուրախ կամ անտրամադիր լինէի, նա էլ ուրիշ վիճակ ունենալ չէր կարող: Չեմ կարծում՝ իսկական երկուորեակները մեզնից տարբեր վիճակ ներկայացնելիս լինէին:

Ինչպէս յայտնեցի, մեր այգին բաւական մեծ էր: Նրա մի ընդարձակ այգեմասը ծածկուած էր խաղողի թուփերով: Ամռան կէսերից անց մեզ մօտ խաղողը սկսում էր հասնել: Շան, աղուէսի, նապաստակի և նման վնասաւոր կենդանիներից, ինչպէս նաև ագռաւից, սարեակից, ճնճղուկից և այլ թռչուններից խաղողի հասնելու մօտ կամ հասած ողկոյզները պաշտպանելու համար զանազան հնարամտութիւններ էին գործադրում: Ահարկու տեսքով մարդակերպ հագնուած և երկար ցողերի գլխին նստոտած մարդուկներ, ծառերից կախուած ականջ խլացնող ուղտապանի ժանգոտած զանգեր, չանով ծառերի ճիւղերից ճօճուող և փայտէ մուրճերով թակոտուող տախտակներ և ուրիշ զանազան պաշտպանիչ միջոցներ գործի էին դրւում վնասաւոր կենդանիներն ու թռչունները սարսափահար անելով փախցնելու համար: Ի հարկէ, այս բոլորի փոխարէն որսի հասարակ հրացանի մի քանի պայթիւնը հազար անգամ աւելի կ'օգնէր նպատակին հասնելու համար, բայց տաճիկ կառավարութիւնը նման կատակներ փորձողների վերաբերեալ չափազանց խիստ կարգադրութիւններ էր արել:

Այգում մենք թառմա անունով՝ 4-5 մետր բարձրութեամբ, տախտակէ թախթ ունէինք: Դա մի տեսակ աւանդ-ժառանգութիւն մնացած դիտարան էր: Այդ տեղից ամբողջ այգին հեշտութեամբ կարելի էր հսկողութեան ներքև պահել և ամէն ինչ հետախուզել:

Ամռան գիշերները հօրս կարգադրութեամբ ես և Եղիշը, երբեմն էլ եղբայրներիցս մէկը այդ օդային, բարձրաբերձ թախթի վրայ էինք քնում: Թախթի տախտակները մեխուած էին ծառերի արանքում ամրապնդուած գերանների վրայ և ոչ մի վտանգի ենթակայ չէին:

Երբէք չ'եմ կարողանում մոռացութեան տալ ամառային այդ գիշերների կախարդական և զմայլիչ ու մի տեսակ բնական թովչութեամբ արբեցնող տեսարանը: Մեր պարտէզն եզերող բարդիները, հացի-

ները և նրանց մէջ առ մէջ ընկած թթենիները, ընկուզենիները, ամառային բաց-փիրուզէ, անամպ երկնքի ներքև իրենց թափած նախշուն շւաքներով զգլխիչ և զանազան պատկեր-տեսարաններ էին գոյացնում: Կիսալուսնի կամ լիալուսնի արծաթափայլն էր առատօրէն թափւում և խառնւում էր այդ գեղեցիկ բնութեան պարգևած գիշերային սքանչելի պատկերների հետ: Յաճախ այդ զմայլիչ տեսարաններին խառնւում ու զուգորդում էին հոգեպարար զեփիւռն ու տերևների անուշիկ սօսափիւնը: Մեր աննման Այգեստանի այդպիսի գիշերների դիւթական տեսիլներով այնքան էի հրճւում, որ ինքնամոռացութեան էի ենթարկւում և առօրեայ կեանքի ու դէպքերի յիշողութիւնը բոլորովին կորցնում էի:

Այդ դիւթական գիշերներին իմ տախտակեայ թառմայի վրայ շատ անվրդով քնում էի: Առաւօտները արևածագից առաջ, արթնանում և դէպի մեր տունն էի վազում, որպէսզի թարմ մտքով մի անգամ էլ կարդամ, սովորեմ դասերս: Մեր թաղային նախակրթարանի տեսուչը յայտնել էր ինձ.

– Սիրա՛ք, եթէ դու 6-րդ դասարանի դասերը սերտես և կարողանաս դպրոցի բացման ժամանակ յաջող քննութիւն տալ, որպէս բացառութիւն՝ կաշխատեմ քեզ մէկ դասարան թռցնել և նախակրթարանի 6-րդ դասարանի աւարտման վկայականը տալ: Քեզ տեսնեմ, աշխատի՛ր, ջանացի՛ր:

Տեսչի այդ խոստումն ինձ չափազանց ոգևորել էր: Ես միշտ ափսոսում էի, որ մի ամբողջ տարի, հիւանդութեանս պատճառով կորցրել էի և շատ էի ցանկանում այդ կորուստը դարմանել, և տեսչիս խոստումը մեծ շանս էր ինձ համար:

Օրւայ մէջ իրար վրայ հաշւած 5-6 ժամ սովորում, պատրաստւում էի: Ամբողջ ուժերս լարել էի իրականացնելու իմ ջերմ ցանկութիւնը՝ մէկ տարով դպրոցական թռիչք կատարել: Բացառիկ երջանկութիւն էր թւում ինձ մի 2-3 ամսից յետոյ 6-րդի աւարտական վկայականը ստանալը:

ԻՄ ԵՐԱԶՆ ՈՒ ՆՐԱ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Ինչպէս շատ յաճախ, մարդկային կեանքում ցանկութիւնները հանդիպում են արգելքների: Հակառակ իմ վճռական որոշումին՝ մի փոքր դժբախտութիւն իմ ամբողջ ծրագիրը ջուր գցեց, և կեանքիս մէջ, առաջին անգամ լինելով, անյաջողութեան հանդիպեցի:

Ամառայ արձակուրդը վեջանալու վրայ էր: Մի գիշեր, հակառակ բոլոր գիշերների, անհանգիստ քնեցի: Քնում երազ տեսայ և վեր թռչելով՝ այդ երազելի ազդեցիկ տպաւորութեան տակ դէպի տունը վազեցի և քարով թակոտել ու թրխկացնել սկսեցի այգու վրայ բացւող և ներսից կապւող բակի դուռը: Դուռը սովորականից ուշ բացւեց: Բաց անողը հայրս էր:

– Տօ՛, անշնո՛րհք, անպէ՛տք, ցերեկները մեզ հանգիստ չէք տայ, այդ ոչինչ: Գիշերւայ կէսից անց էլ չես թողնի, որ հանգստանանք: Ախը այս ժամանակ ի՞նչ կ'ուզես: Շուտ յե՛տ վերադարձիր ու տե՛ղդ մտիր,– այս ինձ համաւր անսովոր, ջղային ու կոպիտ խօսքը չ'աւարտած՝ հայրս, համարեայ ինձ դէպի այգին հրմշտկելով, դուռը փակեց երեսիս:

Հօրիցս, մինչ այդ, նման կոպիտ վիրաւորանք չէի լսել: Այդպիսի բացառիկ պարագայում ես ի վիճակի չեղայ ինձ հակակշռի ենթարկելու: Դեռ շատ երեխայ էի, չափազանց ըմբոստ ու տաքարիւն և միաժամանակ անընդունակ հօրիցս նման վերաբերմունք տեսնելու ու տանել կարողանալու համար: Խելագարւելու չափ ջղայնացել և նորից սկսել էի քարերով թակոտել դուռը: Ինձ մօտ ես վճռել էի այնքան քարկոծել դուռը, մինչև ջարդւելով բացւի: Այս անգամ, բաւական ուշացած, հայրս նորից դուռը բաց արեց և իր հերթին սաստիկ ջղայնացած ինձ մի քանի անգամ ապտակեց: Սկսեցի բարձրաձայն լացել և աղմկել: Քոյրս արթնանալով՝ ինձ մօտ վազեց և իր հերթին աղիողորմ ու սրտակեղէք լացել սկսեց:

Մեր այս աղմկալից և բարձրաձայն լացը գիշերային լռութեան մէջ որոտալից տարածում և հեռուներ էր հասնում: Շուտով իմ, Արաքսու շուրջը մեր ամբողջ ընտանիքը հաւաքւեց: Որտե՞ղից և ինչպէ՞ս կէսգիշերին մեր մօտ վազեցին հօրաքոյրս և իմ սիրելի պահապան հրեշտակը՝ Մարօն: Բացի օձատիպ և նենեգ Իսկուհուց, որ անպատկառօրէն մեզ նախատում էր, մնացեալ ներկաներն իմ և քրոջս պաշտպան դերումն էին:

Հորքոյրս սկսեց հօրս մեղադրել և ծանր խօսքեր ասել:

– Ա՜յ ախպէր, բա էդ կերպ վերաբերմունք քեզ համար, քու կարգի համար պատիւ կը բերի՞: Ախը լրսողն ի՞նչ կասի: Չի ասի, որ այսինչ քահանան, մէկ սադայէլ կնոջ խօսքերի ու խրատների վրայ գժւած, իր անուշիկ, որբ, անմայր երեխաները կը թակոտէ և կը ջարդէ: Հալա ասենք, քու երեխեքը քեզ օտար և անհարազատ դարձան, բա մարդկանց ու Աստծոյ պատասխանը ինչպէս կը տաս:

Այս մեղադական ծանր խօսքերն ասելով՝ հօրաքոյրս առանց երկար մտածելու Մարօյին ասաց.

– Մարօ՛ ջան, քեզ մատաղ, գրկիր էն իմ դժբախտ որբուկիս՝ Արաքսուն, մեր տունը երթանք:

Եւ ինձ դառնալով՝ աւելացրեց.

– Սիրա՛ք, բալէ՛ս, ի՛մ ջիգեար, արի՛, արի՛ մեր տունը էրթանք: Հօրքոյրդ դեռ չի մեռած: Մի կտոր հաց կը ճարւի ձեզ հետ մէկտեղ ուտելու և քաղցած չը մնալու համար:

Չը նայեած հօրս ու մեծ եղբօրս դիմադրութեանը՝ կատաղութիւնից առիւծ կտրած հօրաքոյրս, Մարօյի հետ միասին, մեզ համարեայ խլեցին մերոնց ձեռքից և կէս գիշերով առաջնորդեցին հօրաքրոջս տունը, որ մեր այգու միւս ծայրին էր ընկած:

***

Յաջորդ առաւօտ կանուխ մեծ եղբայրս՝ Կարապետը, հօրաքրոջս տունն եկաւ և նրա հետ առանձնանալով՝ փսփսուկներով երկար խօսեցին:

Ես զարթնած և անկողնուս մէջ նստած էի, բայց իմ կողքին Արաքսին դեռ մուշ-մուշ քնած էր: Պարզ էր, որ անցնող կէսգիշերային կոշմարները նրա վտիտ մարմինը չափազանց յոգնեցրել էին: Ականջներս լաւ սրեցի, որպէսզի կարողանամ եղբօրս ու հօրաքրոջս փսփսուկներից մի բան կորզել, բայց այդ ինձ չէր յաջողւում: Մտածեցի բոբիկ ոտներով և ոտնամանների ծայրերի վրայ կամացուկ քայլերով մօտենալ մառանի դռանը, որի յետևում նրանք իրար համար հազիւ լսելի ձայով խօսակցում էին, բայց հազիւ կարողացայ զսպել այդ ցանկութիւնը: Ինձ թւում էր, որ այդպիսի վարմունքը, մանաւանդ եթէ նրանք յանկարծ ինձ տեսնէին, իմ եսասիրութեան նւաստացումը կը լինէր: Այդ պատճառով էլ, շատ մեծ ճիգով, ինձ հազիւհազ զսպեցի: Նրանց շշուկային խօսակցութիւնը շատ երկար չտևեց կամ գուցէ ինձ համար եկար թւաց:

Երբ նրանք վերջացրին, հօրաքոյրս, կարծես մի ստիպողական հարկադրութեամբ և սրտի թելադրանքին հակառակ, ինձ մօտենալով և մի քանի անգամ ջերմօրէն համբուրելով՝ ասաց.

– Սիրա՛ք ջան, մատա՛ղ բօյիդ, վե՛ր կաց և քոյրիկիդ հետ ձեր տունը գնա: Հայրդ տանը նստած քեզ կսպասէ:

Նա նորից ուզում էր խօսել, շարունակել իր ասածները, բայց նրա ծայրահեղօրէն ուժեղ յուզմունքը, նրա ձայնը կոկորդում խեղդուեց, և ես նկատեցի նրա արցունքի շիթերը, որոնք գլորւում էին նրա աչքերից: Նա մեծ ճիգ գործ դրեց ինձնից ծածկելու իր խիստ յուզմունքը, բայց իզուր: Ես արդէն նրա բարի դէմքի վրայ կարդում էի նրա ներսում՝ ազնիւ սրտի խորքում, պոռթկացող փոթորիկը:

– Հօրքո՛ւր, ես չեմ գնա: Չէ՛, չէ՛, ես չեմ ուզում մեր տունը գնալ: Երէկ գիշերը շատ վատ երազ տեսած եմ: Երազումս իմ անուշիկ մօրս տեսայ: Նա ինձ ասաց.

– Սիրա՛ք, իմ աննմա՛ն, անգի՛ն բալէս, այդ անամօթ կինը ծրագրել է առաջ քու անբախտ, անտէր քրոջ, ապա քու գլխին փորձանք բերելու: Զգոյշ, շա՜տ զգոյշ եղիր: Մի՛ թող այդ դժոխքի ծնունդին, որ իր դիւային ծրագիրն իրականացնի: Վերցրո՛ւ քրոջդ ու հեռացի՛ր, փախի՛ր այդ անխիղճ կախարդից: Նրան սատանաներն են ուղարկել, որ իմ օջախը մարի ու քար ու քանդ անի...: Նա այդ նոյն կախարդն է, որ քու եղբօր, Կարապետի կնոջը՝ Հայկանուշին, դժբախտացրեց: Նրա ստոր գործակիցներից մէկն էր, որ նրա ցուցմունքով ջահէլ-ջիւան, նորաբաց վարդի նման շողշողացող եղբօրդ կնոջը կախարդական խոտերով կամաց կամաց թունաւորեց և նրանից, ամենաանխիղճ աւազակի նման խլեց նրա առողջութիւնն ու, դժբախտաբար, ամէն ինչ և խաւարումի ենթարկեց նրա երջանիկ կեանքի պայծառ արևը: Այդ կախարդը ցանկանում է եղբօրդ՝ Կարապետին իր վաւաշոտ, կեղտոտ կրքերին զոհել և նրան տիրել: Նրա դիւային ծրագրի մէջն էք նաև դուք երկուքդ, իմ անգի՛ն, բայց որբ մնացած բալիկներս...: Նորից եմ կրկնում, վերցրո՛ւ քրոջդ և հեռացի՛ր, փախի՛ր մինչև իմ բարի Աստուածը ձեզ օգնութեան հասնի...:

Հօրաքոյրս և եղբայրս իրենց ամբողջ էութեամբ ականջ էին դառել և ապշահար ու սփրթնած ինձ էին նայում՝ առանց մի բառ իսկ արտասանելու:

Ես ընդհատեցի երազիս նկարագրութիւնը: Եղբայրս ու հօրաքոյրս աճապարում էին լսել և անհամբերութեամբ հարցրին.

– Սիրա՛ք, վերջացրա՞ր: Էլի պատմելիք ունե՞ս:

– Այո՛, հօքու՛ր, հիմա էլ յիշում եմ աննման մօրս ու երէկ գիշերւայ երազում նրա ինձ արած յայտնութիւնները: Այո՛, հենց հիմի էլ նրա ասած խօսքերը զրնգում են ականջներումս: Երբ ես այդ իմ երազից վեր թռայ և վազեցի հօրս պատմելու, նա ինձ թոյլ չը տուեց մինչև իսկ մի բառ ասելու: Առանց որևէ պատճառի նա մի քանի անգամ ապտակեց ինձ: Ես իմ աչքերիս չէի ուզում հաւատալ: Չէի կարող ինձ համոզել, որ ինձ ապտակողը իմ հարազատ հայրն է, մեր միակ պաշտպան հայրը: Բայց նրա ձայնն ու բղաւոցը վճռականապէս իմ աչքերը բացին, և ես անսահման վշտով համոզուեցի, որ ինձ ապտակողն իմ հարազատ հայրն էր...: Մի գուցէ նա էլ կախարդուած էր այդ մարդատիպ սատանայից՝ մեր ընտանիքը քար ու քանդ անելու եկած այդ չարագործ կնոջից: Հօքու՛ր, ես հիմա կատարելապէս համոզուած եմ իմ անգին և անուշիկ մօրս երազի ճշգրտութեանը: Ես այլևս մեր տունը չեմ վերադառնայ: Արաքսուն էլ չեմ թողնի, որ գնայ: Չէ՞ որ նա էլ, ինչպէս մեր գոհար եղբօր կինը, պիտի դժբախտանայ: Ո՞վ գիտէ, գուցէ այդ էշն իր գործը սկսել է արդէն, և մենք ոչնչից տեղեակ չենք...:

– Սիրա՜ք,– ասաց եղբայրս՝ ինձ իրա մօտ քաշելով և իմ դէմուդէմը, մի փայտեայ եռոտանու ծայրին պպզելով: – Դու դեռ տարիքով մեծ չես, բայց ես արդէն վաղուց եմ նկատել, որ ուշիմ պատանի ես. ինչո՞վ կարող ես երդուել, որ իսկապէս դու ճիշտն ես խօսում և անցեալ գիշերւայ քու տեսած երազը ճիշտ ես պատմում... հա, ասա՛, ճիշտն ասա՛: Առաջ երդուիր, ինչպէս որ սիրում ես երդուել, և յետոյ ասա՛ ճշմարտութիւնը:

– Եղբայր, ես մօրս մահւան ժամանակ փոքր էի: Նրա մահից յետոյ միշտ աշխատում էի նրա դէմքը յիշել, բայց դա ինձ չէր յաջողւում: Երէկ գիշերը, երբ ես նրան երազումս տեսայ, վերջապէս վերյիշեցի նրա նիհար, դալուկ, բայց բարի դէմքը: Վազ տուի դէպի նա, անհուն ցանկութիւն ունէի փարւելու նրա ծնկներին, ուզում էի, որ նա ինձ գրկէր, իր սրտին

սեղմէր, ինձ համբուրէր, իմ գլուխս իր մայրական ձեռքով շոյէր, բայց նա միշտ ինձնից հեռանում էր և ես երբէք չ'կարողացայ նրան հասնել: Նրա դէմքը միշտ ինձ էր նայում և պայծառօրէն փայլատակում էր: Ինձ թւում էր՝ նրա դէմքի վրայ վշտախառն ժպիտ էի տեսնում:

– Բայց եղբա՛յր ջան, իմ սիրելի՛ Սիրաք, դու իմ հարցին չես պատասխանում: Երդւի՛ր, որ պատմածներդ քու տեսած երազն է և ոչ թէ քու մտքի հնարածը:

– Երդւում եմ իմ աննման մօր նւիրական յիշատակով, որ բոլոր իմ պատմածը երէկ գիշերւայ երազն է, և դեռ շատ բան չեմ կարող նրանից վերյիշել:

Ես նկատեցի, որ հօրաքոյրս և եղբայրս ծանր մտատանջման ենթարկւեցին: Նրանք երկար ժամանակ առանց մի խօսք իսկ փոխանակելու իրար երեսին էին նայում: Հօրաքոյրս եղբօրս կանչեց: Նրանք տնից դուրս եկան այգին: Ինձնից հեռանալով՝ մի քանի րոպէ իրար հետ խօսակցեցին, խորհրդակցեցին և եղբայրս, առանց ինձի դէպի տունը հրաւիրելու, հեռացաւ:

Հօրաքոյրս, կարծես վշտերի ծանր բեռան տակ կքած, ինձ մօտեցաւ և ասաց.

– Դու իմ խելո՛ք և արդար բալէս, իրաւունք ունես ձեր տունը չը վերադառնալու: Քրոջդ հետ ինձ մօտ կը մնաս, մինչև տեսնենք ի՞նչ կը լինի: Հիմա ես քեզ համար թէյ և հաց ու պանիր կը պատրաստեմ:

ՊԱՏԺԻՑ ՅԵՏՈՅ

Ամբողջ երկու շաբաթ շարունակ մերժում էի մեր տունը վերադառնալ: Ինչպէս յայտնեց ինձ իմ բարեկամ սիրելի Մարօն, հայրս ինձ անտեղի պատժած լինելու համար շատ զղջացել էր: Առաջի երկու օրերում նա Մարօի և մեր հարսի միջոցով շատ աշխատեց ինձ և քրոջս համոզել և տուն վերադարձնել: Երրորդ օրը հայրս անձամբ եկաւ: Նախ ինձ մօտեցաւ և ապա քրոջս և մեր երկուսիս էլ բազմաթիւ անգամներ ջերմագին համբուրեց և խօսքն ինձ ուղղելով՝ ասաց.

– Ամայ, Սիրա՛ք, բալէ՛ս, դու շատ կողավոր տղայ ես: Քեզ մինչև այժմ այսպէս լաւ չեմ հասկցած: Դու՛, բալէ՛ս, կարող է իրաւացի ըլլաս: Մի գուցէ ես քու վերաբերեալ խիստ և անարդար եմ եղած: Բայց չէ՞ որ ես ալ մարդ եմ: Ես ալ յոգնած ու ջղայնացած կարող է ըլլամ: Մի՞թէ դու չէիր կարող քու երազն ինձ յաջորդ օրը, առաւօտեան պատմել և ոչ թէ կէս գիշերւան աղմուկ-աղաղակ բարձրացնել:

– Հա՛յր, ես ինձ մեղաւոր չեմ հաշւում: Իմ տեսած երազն այնքան ազդեցիկ, և իմ ազնիւ մօր ինձ տրւած հրամանն այնքան վճռական և կտրուկ էր, որ ես մտածեցի րոպէ առաջ այն հաղորդել իմ հարազատ հօրս: Ես չէի կարծում, որ ինձ սիրող հայրը առանց ինձ մի հարցում իսկ տալու և կէս գիշերւան տունը գալու պատճառը իմանալու ինձ անտեղի պիտի ծեծէր: – Այս ամենից յետոյ համոզւած եմ, որ իսկական մեղաւորը այդ անպէտք ու անպիտան Իսկուհին է: Մեր գլխին եկած փորձանքների միակ պատճառը նա է: Նա իրաւունք չունի մեզ վրայ իշխանութիւն բանեցնելու: Նա իրաւունք չունի իմ անմայր մնացած քրոջը ծեծելու և նրա մարմինը մկրատով ծակծկելու: Նա իրաւունք չունի մեզ ամենքիս հայհոյելու: Ափսո՜ս, որ ես դեռ այնքան ուժեղ չեմ, որ իմ հերթին նրան ծեծի դաս տամ: Ափսո՜ս, շատ եմ ցաւում, որ նա՝ այդ անարժան կինը, մեր տան խէրն ու բարաքաթը, մեր տան խաղաղութիւնն ու մեր բոլորի երջանկութիւնը ոտնատակ է արել: Եթէ ես չ'լինէի, նա վաղուց իմ խեղճ քրոջը դժբախտ, վաղամեռ մօրս մօտ էր ուղարկել:

Ես այլևս չը կարողացայ շարունակել իմ մեղադրական խօսքը: Վշտերիս արցունքախառն յորձանքը, կոկորդումս հաւաքւած, ինձ խեղդում էր: Ես դեռ ուզում էի Իսկուհի կոչւած հրէշի կախարդական դեղերին զոհւած իմ տարաբախտ եղբօր կնոջ մասին պատմել, բայց այդ ինձ չը յաջողւեց:

Զուր անցան հօրս բոլոր ջանքերն ինձ համոզելու և ինձ մեր տունը վերադաձնելու համար: Հայրս ինձնից իհարկէ շատ աւելի ուժեղ էր և կարող էր ուժի դիմելով՝ իր կամքն ինձ պարտադրել, բայց երբէք չը փորձեց այդ անել: Ըստ երևոյթին, նա էլ համոզւած էր, որ իմ պատմածներն ու ասածները իրականութիւն էին և մանաւանդ այն, որ ես իրաւացի եմ: Երբ ինձնից յուսահատւեց, նա քրոջս դիմեց և նրա ձեռքից ամուր բռնած այնպիսի հրամայական եղանակով նրան հրաւիրեց իր հետ տունը վերադառնալ, որ նա չը համարձակւեց ըմբոստանալ: Հօրս հետ մէկտեղ հեռանալիս նա, դէպի ինձ դառնալով և լացելով, բացականչեց.

– Եղբա՛յր, եթէ դու տունը գալու չը լինես, ես այնտեղ չեմ մնալու: Ես մենակ այնտեղ մնալ չեմ կարող: Ես նրանից վախենում եմ: Նա նորից ինձ կը ծեծի:

Եւ իսկապէս քոյրս շատ էր վախենում այդ հրէշատիպ կնոջից: Նրան թւում էր, որ առանց ինձ մեր տնումը ապրելը նրա համար անկարելի էր: Նա իրաւացի էր, որովհետև Իսկուհին, իմ բացակայութեանը, համարեայ միշտ նրան որևէ պատրւակով նեղացնում և երբեմն էլ ծեծում էր: Ինքս էլ չը գիտեմ ի՞նչն էր պատճառը, որ նա ինձնից զգուշանում էր: Անկասկած վերջին անգամ ունեցած անախորժութիւնը բաւական մեծ դեր էր խաղացել: Ինձ թւում էր, որ նա այլևս վախենում էր հաւանական նոր սարքելիք աղմուկից և սկանդալից և մանաւանդ հօրս, եղբօրս ու հարևանների ուշադրութիւնը գրաւելու հանգամանքից:

***

Հօրս ապտակներն ինձ վրայ շատ վատ անդրադարձում ունեցան: Հօրս ինձ տուած պատիժը բոլորովին անարդար էի համարում: Չը նայած այն հանգամանքին, որ դեռ հազիւհազ երեխայութեանս տարիքից թեակոխում էի պատանեկութեան առաջին շրջանը, բայց արդէն մի տեսակ հասունացած նկարագիր ունէի: Երեխայական հետքերը գրեթէ բոլորովին անհետացել էին: Դիւրազգացութիւնն ու ինքնասիրութիւնը, հասակիս համեմատութեամբ, շատ աւելի տեղ էին նուաճել:

Հօրս հետ ունեցած անախորժ դէպքից յետոյ մի տեսակ լքւած վիճակ էի ապրում: Ինքս ինձ դժբախտ էի համարում: Կարծես նոր-նոր զգում էի մօրս բացակայութեան դատարկ վիհը, նրա մահւան դժբախտ հետևանքները: Ներկայիս ինքս ինձ մի տեսակ որբ էի հաշւում: «Չէ՞ որ մայր չունեմ,– տանջւելով մտածում էի ես: – Ճիշտ է, հայր ունեմ, բայց այդ հայրն էլ, երբ ինձ հասկանալ չի կարողացել, իմ ապրումներին հաղորդակից լինել և մօրս բացակայութեան պարապը գէթ մասամբ լեցնել և վերջապէս հայրական զգացումների ջերմութեամբ ինձ համակել, ոգևորել, քաջալերել, ուրեմն ես, անկասկած, անոք և որբ եմ մնացել»:

Իմ ընկերներին, որոնք հայր ու մայր, մանաւանդ մայր ունէին, բախտաւոր էի համարում և նրանց այդ երջանկութեանը նախանձում էի: Այն օրերին, երբ ես հօրաքրոջս անկոչ հիւրն էի, յաճախ նրան ասում էի.

– Ախը՛ր, հօքու՛ր, Արաքսն ու ես ինչ մեղք էինք գործել, որ այսքան շուտ Աստուած մեր սիրելի մօրը մեզնից խլեց ու տարաւ: Չէ՞ որ մենք դեռ շատ փոքր էինք և նրա խնամքին և մանաւանդ սէրին կարօտ...:

– Սիրա՛ք, անուշիկ՛ս, դու մի՛ գանգատւիր: Աշխարհիս գործն է էդպէս: Դու շատ ուրախ պէտք է ըլնես, որ հայր ունես: Բա ի՞նչ ընեն այն հազարաւորները, որ բոլորովին որբ են, որ նոյնիսկ բարեկամ-ազգական չունին, որ նոյնիսկ մէկ թոնրատուն, մէկ անկողին չունին և շատ անգամ իրենց մերկ մարմինը ծածկելու մէկ հագուստ ալ չունին:

Բարի հօրաքոյրս ինձ լաւ, շատ լաւ էր հասկանում: Նա իմ դրութեան մէջ մտնում և վիրաւորւած սրտիս խորքում գոռացող վշտիս համար կարեկցում էր ինձ:

Յուսալքումն այն աստիճանի էր հասել, որ այլևս չէի մտածում, որ մէկ ամսից յետոյ քննութիւններ պէտք է տամ վեցերորդի աւարտման վկայական առնելու համար: Մեր տնից խռոված հեռանալուց և հօրաքրոջս պաշտպանութեան ապաւինելուց յետոյ նոյնիսկ մի անգամ քննութիւնների մասին չէի մտածել և սովորելիք առարկաներից մի տող իսկ չէի կարդացել: Իմ դատողութեամբ այդ դասադուլն անաղմուկ, բայց ազդեցիկ ահազանգ էր հօրս համար, որի ուշադրութիւնից չէր էլ վրիպել և նրան լուրջ մտահոգութիւն էր պատճառել: Մի շաբաթ յետոյ Մարօն ինձ յայտնեց.

– Իմ սիրելի՛ Սիրաք, գիտե՞ս՝ հայրդ ի՞նչ է խոստացել ինձ, որ ասեմ, երևի չես հաւատայ, բայց նա երդւել է մամայիդ գերեզմանով, որ եթէ դու անմիջապէս տուն վերադառնաս և քննութիւններիդ համար պատրաստւես, նա անպատճառ Իսկուհուն արձակելու է:

Մարօի յայտնութիւնն ո՛չ այնքան անորոշ, որքան անհաւատալի թւաց ինձ: Ես նորից հարցրի. – ի՞նչ է նշանակում արձակել. ուզում ես ասել նրան մեր տնից բոլորովին և ընդմիշտ վռնդելու է:

– Իհարկէ, այո՛, սիրելի՛ս: Նա քո հայրն է: Նա քեզ երբէք նրան չի զոհի: Դու այդ մասին կարող ես միանգամայն համոզւած լինել: Նա ո՞վ է, որ նրան քեզնից աւելի պաշտպանի: Հայրդ քեզ շատ է սիրում: Եղածը մի թիւրիմացութիւն էր, և դու պէտք է իմանաս, որ նա իր արածի համար շատ է փոշմանել: Բայց դու էլ յամառութեան համար յանցաւոր ես: Չէ՞ որ նա քու հայրն է: Դու նրանից խռովելու իրաւունք չ'ունես: Ներողութիւն, ուզում եմ ասել, եթէ նոյնիսկ իրաւացի լինես, նրանից չ'պէտք է խռովես: Ինչքան տնից բացակայեցիր, բաւական է: Ժամանակն է, որ տուն վերադառնաս:

– Ո՛չ, իմ սիրելի՛ Մարօ,– պատասխանեցի ես, – դու գիտես, որ քեզ Արաքսուս նման սիրում եմ: Դու իմ անուշիկ, մեծ քոյրն ես: Եւ մինչև այժմ քեզ լսել և հնազանդւել եմ, բայց այս անգամ շատ եմ ցաւում, որ չեմ կարող: Վաղն ևեթ կը գնամ իմ մօրաքրոջ տղայի՝ Միհրանի մօտ: Նա մեր քաղաքի ամենայայտնի դերձակատներից մէկումն է աշխատում և նրա գլխաւոր վարպետի կողմից շատ է գնահատւած և սիրւած է: Նրան կը խնդրեմ, որ միջնորդի իր վարպետի մօտ ինձ յարմար մի աշխատանք տալու համար: Ես համոզւած եմ, որ Միհրանը ինձ չի մերժի և գործը կը յաջողացնի:

Մինչև Մարօն ուզում էր նորից պատշաճ խօսքեր գտնել ինձ համոզել կարենալու համար, ես վճռական հաստատակամութեամբ աւելացրի.

– Մարո՛, իմ սիրելի՛ քոյր, ես իմ անպաշտպան քրոջ՝ Արաքսուն քեզ, քու յոյսին եմ թողնում: Իմ միակ մտահոգութիւնը նա է: Նա է իմ ձեռքն ու ոտքը կապողը, այլապէս ես առաջի օրից իսկ գործի էի գնալու: Ես միայն նրա համար եմ անհանգստանում: Առանց ինձի, գիտեմ, նա այդ հրէշի ձեռքում հալումաշ կը լինի, կը ցամաքի, կը չորանայ և անտէր ու անտիրական կը մեռնի:

ԱՐՀԵՍՏԱՒՈՐ ԴԱՌՆԱԼՈՒ ՓՈՐՁԸ

Մարօն իրաւացի էր: Իմ ծայրահեղ եսասիրութիւնը, աւելի ճիշտ, տարիների ընթացքում անմայր ու անգորով մնալուս հետևանքով իմ մէջ սկիզբ առած և արագօրէն ուժեղացած դիւրազգացութիւնը

ինձ մղում էր ծայրահեղութիւնների և հապճեպ որոշումների:

Մտածում էի՝ եթէ կարողանայի աշխատել և թէկուզ մի փոքր վարձատրութիւն ստանալ, այլևս անկախ կը լինէի և ոչ մէկի, մինչև իսկ հօրս, մնաթի տակ չէի մնայ: Վերջերում դասաւորւող պայմաններում իմ ամենամեծ մտասեռումն այն էր, որ ինչքան հնարաւոր է շուտ, կարողանամ իմ աշխատանքով ապրել և եթէ կարելի լինի նաև ապրեցնել իմ երկւորեականման փոքր քրոջս:

Պատանի հասակը թևակոխելուս հետ միաժամանակ տարօրինակ ինքնավստահութիւն ունէի: Ենթադրում էի, որ կեանքի, ապրելու ձգտում ունեցողին, այսպէս թէ այնպէս, լաւ թէ վատ, կը յաջողուի մի կերպ եօլա գնալ, գլուխ պահել և մի կտոր հաց աշխատել:

Մօրաքրոջս ամուսինը մօտ մի տարի առաջ մահացել էր: Այդ կօրուստից մօրաքոյրս շատ էր ազդուել և ամբողջ ժամանակ լաց ու կոծի մէջ էր: Կրում էր սև շրջազգեստ, սև գլխաշոր և կօշիկ ու գուլպաներ: Իրենց տնից ամբողջ տարւայ ընթացքում միայն մի քանի անգամ էր դուրս եկել, այն էլ իր եղբօր ու քրոջ (մեզ մօտ) և երկու ուրիշ բարեկամների մօտ ստիպողաբար գնալու համար:

Երբ ես Միհրանի՝ նրա միակ տղայի օգնութեանը դիմեցի՝ ինձ իր վարպետի մօտ աշխատանքի համար ներկայացնելու, մօրաքոյրս, յանկարծակիի եկած, բացականչեց.

– Բալա՛ ջան, քու ի՞նչ ժամանակն է գործի, արհեստի գնալու: Ձեր տունն եկած ատեն, վերջին անգամ, Մարօն ինձ յայտնեց, որ դու դասարանի առաջինն ես եղած: Այդպէս ընդունակ տղան, ինչպէս դու ես, ափսոս չէ, որ իր ուսումը կիսատ թողնի:

– Մօրաքո՛յր, էլ ինչքան պիտի սովորեմ, կմկմացի ես շփոթած: – Հօ՛ պրոֆեսոր լինելու չեմ: Այսքան ինչքան սովորել եմ, ինձ բաւական է: Ո՞վ չի իմանում, դու հօ լաւ գիտես, հօրս գործերն էլ այնքան լաւ չեն: Կամաց-կամաց արհեստ կը սովորեմ, որպէսզի կարողանամ հօրս և մանաւանդ քրոջս օգտակար դառնալ:

– Դու ճիշտ չը խօսեցիր: Հաւատալս չի գայ: Մէկ երեխայ, եթէ ուսումնասէր չ'ըլլայ, անկարելի է, որ իր դպրոցի, իր տեսչի սիրելին դառնայ և մանաւանդ դասարանի առաջինը ըլլայ: Այստեղ, ինչպէս կ'ըսեն, շան գլուխ մը թաղուած կայ:

Ապա, մի քիչ լռելուց և մտածելուց յետոյ, աւելացրեց.

– Հա՜, հա՜, ես այդպէս ալ գիտէի: Այդ անպիտանը՝ Իսկուհին ,իմ անբախտ, բէմուրազ քրոջ ընտանիքը կը քայքայի և բոլորի վային կը նստի: Ես հիմա ընելիքս լաւ գիտեմ: Մօրեղբօրդ՝ Օհանէս աղին, հօրդ մօտ կ'ուղարկեմ: Ես անոր ամէն բան կը հասկացնեմ: Ան մեծ ազդեցութիւն ունի հօրդ վրայ և վստահ եմ, որ կարող կըլլայ ամէն բան կարգադրել: Իսկ դու, լաւ տղաս, բոլորովին պէտք չկայ որ արհեստի գնաս: Քու ի՞նչ արհեստի ժամանակն է: Դու պէտք է ուսումդ շարունակես և կարգին ուսումնական դառնալով՝ հանգուցեալ մօրդ մեռած անունը նորէն կենդանացնես: Իսկ եթէ պէտք եղաւ, ես անձամբ ալ հօրդ հետ կը զրուցեմ...

Յետոյ ինքն իրեն, քթի տակ ինչ-որ խօսքեր փնթփնթաց, որի բովանդակութիւնը իմանալ չ'կարողացայ:

Այն օրն ու գիշերը մօրաքոյրս ինձ չը թողեց հեռանալ իրենց տնից: Այդ օրը ինձ լաւ չէի զգում: Չափազանց թուլացել և ամբողջ մարմինս կարծես կոտրատւում էր, և գլուխս՝ ցաւում: Մօրաքոյրս ինձ փափուկ անկողնում պառկեցրեց: «Բարի գիշերը» ասելու ժամանակ նա կռացաւ և գորովալից ճակատս ու այտերս համբուրեց:

– Բայց, տղա՛ս, դու կարծես տաքցրած ըլլաս: Ա՜խ, քօռանար մօրքուրդ, որ քեզ այսպէս անտէրանտիրական չը տեսնար: Քանի՞ օր է, ինչ տունէն հեռացած ես: Անկասկած հօրաքրոջդ տանը մրսած ես:

Յետոյ Միհրանին, իր միակ զաւակին դառնալով, ասաց.

– Միհրա՛ն, հոգուդ մատաղ, քանի շատ ուշ չի, վազ տուր դեղատունը և Պետրոս դեղագործին ասա, որ քրտնողիք է պէտք: Ա՛ռ և, որքան կարող ես, շուտ վերադարձիր: Սիրաքը մրսած է և պէտք է քրտնացնել:

Մօրաքոյրս, կռանալով անկողնիս վրայ, նորից մի քանի անգամ ինձ համբուրեց և ասաց.

– Իմ անգին և տանջուա՛ծ բալաս, եթէ բախտ ունենայիր, քու անբախտ մայրն էսքան շուտ բէմուրազ չէր ըլնի: Մեղա Տէր, մեղա քեզ: Ես գործերէդ գլուխ հանել չեմ կարող: Չէ՞ որ ես քրոջմէս ամենաքիչ 10 տարով աւելի մեծ էի: Ինչու՞ նրա մահն իմ բաժինը չ'արար: Ա՜խ, երանի չէր, որ քրոջս ու մարդուս մահը տեսնելէ առաջ մեռած ըլլայի:

– Մօրաքոյր, այդ ինչեր ես ասում: Եթէ դու մեռած լինէիր, քու միակ տղան՝ Միհրանը, ի՞նչ կանէր: Փառք Աստուծոյ, դեռ ես հայր, եղբայրներ և քոյր ունեմ, իսկ նա քեզնից զատ ու՞մն ունի: Չէ՛, մօրաքո՛յր, Միհրանն արժանի է քեզ նման մայր ունենալու: Նա առանց քեզի դժբախտ կը լինէր:

Մօրաքոյրս կարծես մի րոպէ իւր միակ յոյսն ու ապաւէնը, իր աչքի լոյսն ու փայլը եղող զաւակին մոռացութեան էր տուել: Իմ փոքրիկ կշամբանքը նրան սթափեցրել էր: Գիտէի, որ նա իրա ամուսնուն չափազանց շատ սիրելիս էր եղել, և նրա կորուստ անսփոփելի վիշտ էր պատճառել տարեց մօրաքրոջս: Նա ինձ չը պատասխանեց, բայց ես լսեցի նրա մունջ և անհոյս հեկեկոցը: Նա իրա դէմքը շուռ էր տուել, որպէսզի նրա լացը չտեսնեմ:

Մի քիչ անց նա, կողքիցս վեր կենալով, ասաց, որ մինչև Միհրանի վերադարձը տաք թէյ կը պատրաստի, որպէսզի դեղահատը կուլ տալուց խմեմ և շուտ քրտնեմ:

***

Ճիշտ որ ես կարգին տաքցրել էի: Երբեմն ուժեղ ջերմի նոպաներում, մարդս աւելի լաւ է մտորում և դատում կեանքի իրողութիւնները:

Կարծես մտորումների ալեծուփ ծովումն էի ընկել: Երբեմն Աստծուն, երբեմն բնութեան, քիչ յետոյ ինձի և ապա քրոջս ու ընտանիքիս մեղադրում էի:

– Ո՜վ Աստուած, ամենուրէք հռչակուած է, որ դու բարեգործ ես: Ինչու՞, ուրեմն, իմ հարազատ մօրն այդքան շուտ մեզնից խլեցիր: Չէ՞ որ մենք, քոյրս և ես շատ փոքր և մայրական գորովի ու քնքշանքի կարօտ էինք: Չէ՞ որ մենք մեր մօր սիրոյ ջերմութեան կարիքն ունէինք: Ախը մենք ուրիշ երեխաների նման ցանկութիւն ունէինք մեր մօր ծնկներին չոքել, նրա կրծքին փարել, նրա հարազատ սրտի բաբախումը լսել, նրա քիթն ու բերանը, նրա երեսն ու ականջները, նրա ճակատն ու գլուխը, նրա մազերն ու պարանոցը քնքշօրէն շոյելով համբուրել, անկուշտ համբուրել և երբեմն էլ, նրա փէշերից կախուելով, նրանից խնդրել, որ մեզ էլ իրա հետ մեր հօրաքրոջ, մօրաքրոջ, մօրեղբօր և էլ ի՞նչ գիտեմ ու՞մ մօտ հիւր տանի...

Բայց կարող է պատահել, որ ես կամ քոյրս՝ Արաքսին, մեղաւոր ենք եղել: Գուցէ մենք մեր մօր համար լաւ երեխաներ չենք եղել: Մի գուցէ մենք նրան շատ ենք նեղացրել ու տանջել, և նա մեր հոգսից ու դարդից մաշուել և մահաւան է ապաւինել: Բայց երբէք վերյիշել չեմ կարող մեր երեխայութեան օրերը: Միայն այսքան կարող եմ ասել, որ մենք երկուսս այնպիսի լուրջ առիթներ չենք տուել, որ մեր մայրը վշտանար և մեր ձեռքից տանջուէր:

Ուրեմն ի՞նչ: Մեր հայրը, մեր եղբայրներն են մեղաւորը, որ նա այդքան շուտ կեանքից բէզարել և մեզ որբ թողնելով՝ այս աշխարհից հեռացել է: Թերևս մեր ընտանեկան տնտեսական ոչ-բաւարար պայմանների ծանրութեան տակ մէջքը ծալուել, նրա դիմադրական ուժերը սպառուել են, որի հետևանքով էլ վաղաժամ մահաւան ճանկն է ընկել:

Դժբախտաբար, դառն իրականութիւնը գոյութիւն ունի: Անգութ մահը մեր աննման, խօրօտիկ մօրը մեզնից խլել և տարել է: Նա չկայ և նրա հետ մեր գլխից չքացել են նրա անփոխարինելի փայփայանքն ու սիրազեղումները:

Մարդս իրա կեանքում կարող է ամեն տեսակ ձախորդութիւնների և դժբախտութիւնների հանդիպել և նրա դէմ պայքարել և յաճախ նոյնիսկ նրանց յաղթահարել: Սակայն մարդկային կեանքում ամենասոսկալին և ամենաանփոխարինելին, մանաւանդ երեխայական տարիներում, մօր, հարազատ մօր կորուստն է...: Դժբախտ, անհունօրէն ապերջանիկ է այն երեխան, որ իր հարազատ մօրը կորսնցրել է, որ նրան այլևս չունի...:

Որևէ մարդկային շունչ չի կարող փոխարինել այդ աննման, անգին գանձին՝ հարազատ, գորովագութ և պաշտելի մօրը...

ՍՐՏԱՑԱՒ ՄՕՐԱՔՈՅՐՍ

Մօրաքոյրս համարեայ ամբողջ գիշերն իմ պատճառով չէր քնել: Գիշերուայ ընթացքում մինչև առաւօտեան լուսաբացի մօտերքը տաքութեանս աստիճանը շարունակ բարձրացել էր: Ես սկսել էի զառանցել և միշտ յանգուցեալ մօրս կամ քրոջս օգնութեան կանչել: Խեղճ մօրաքոյրս, սրտապատառ եղած, իր տղային՝ Միհրանին, քնից արթնացրել էր և միասին ջանացել էին ամեն կերպ ինձ քրտնացնել տաքութիւնս ցած բերելու համար: Տաք ջրի քսակ, տաքացրած աղիս, մի քանի վերմակ, քացախով շփում, դեղահատեր և վերջապէս ինչ որ խելքներին եկել էր, արել էին: Լուսաբացին նրանց յաջողուել էր իմ ջերմը բաւականաչափ իջեցնել: Ես, թուլացած ու տանջուած, հանգստացել և քնել էի: Առաւօտեան շատ ուշ արթնացայ: Բարի մօրաքոյրս անկողնուս կողքին նստած էր: Մի քանի ջերմ համբոյրները ճակտիս դրոշմելով՝ բարի օր մաղթեց: Սրտիս խորքում ինձ երջանիկ զգացի՝ մտածելով, որ եթէ հարազատ մօրիցս զրկուել եմ, գոնէ ազնիւ և հարազատ հօրաքոյր և մօրաքոյր ունեմ, որոնք ինձ կարեկցում և անհրաժեշտ պարագաներում հնարաւորին չափ օգնութեան են հասնում:

– Կէսօրուան քիչ է մնացած, – ասաց մօրաքոյրս: – Ինձ խոստացիր որ անկողնուցդ դուրս չես գայ, մինչև ես վերադառնամ: Քեզ համար մէկ բաժակ տաք թէյ կը բերեմ: Շուտ կը խմես, որ չը սառի: Անցած գիշերուան մեծ ջերմ ունէիր: Առայժմ ոչինչ չ'պիտի ուտես: Կը խորհիմ քեզ մէկ լուծողական խմացնել: Այդ շատ անհրաժէշտ է քեզ համար: Քօռանայի ես, որ քեզի այս օրերին չը տեսնէի: Ախր ինչու՞ այս տարիքիդ դու քու տնից փախստական պէտք է դառնաս:

Նա պատասխանիս չսպասեց և նորից ինձ յանձնարարելով, որ անկողնից դուրս չ'գամ, իր սև գլխաշորը վերցրեց և տնից դուրս եկաւ: Բակից յետ վերադառնալով և գլուխը դռնից ներս բերելով՝ ասաց.

– Սիրա՛ք, չլինի պատուէրս մոռանաս: Եթէ անկողնուց դուրս գաս, նորէն կը մրսես և կրկին կը տաքցնես: Անկողնուդ միւս կողքին միզաման դրած եմ:

Ես չը հարցրի, նա ինքն էլ չ'ասաց, թէ որտեղ և ում մօտ է գնում: Նա, որ իր ամուսնու մահից յետոյ հազիւ մի քանի անգամ, այն էլ ստիպողաբար, տնից հեռացել էր, այս անգամ ինքնակամ և սիրայօժար փողոցն էր դուրս գալիս: Ենթադրեցի, որ նա իր եղբօր կամ իմ մօրեղբօր մօտն է գնում իմ պատճառով, իմ՝ մեր տնից փախստական լինելու պատճառով:

Կէսօրից շատ անց, ամբողջ 5 ժամից յետոյ, մօրաքոյրս վերադարձաւ: Նա զարմանալիօրէն ուրախ տրամադրուած էր և հպարտ ու յաղթական տեսք ունէր: Ինձ մօտ աճապարելով և նորից իմ ճա-

կատը համբուրելով՝ միաժամանակ ստուգեց իմ առողջական վիճակը: Աջ ձեռքս իր ափերի մէջ առնելով՝ մի քանի անգամ շփեց ու շոյեց և զարկերակն ստուգելով՝ բացականչեց.

– Փա՜ռք Աստուծոյ, բոլորովին տաքութիւն չունիս: Հիմա քեզ համար օջախի վրայ թանապուր կը պատրաստեմ: Ախորժակով մի լաւ կուտես և մի քիչ անկողնիդ մէջ նստելով՝ կը զրուցես ինձ հետ: Եթէ ցանկանաս, Միհրանի գրքերէն էլ կը վերցնես և կը կարդաս: Խեղճ Միհրանս շատ սրտացաւ տղայ է: Երէկ գիշերը քեզ համար շատ անհանգիստ էր: Մենք երկուքս ալ շատ կը վախենայինք, դու շատ վատ հալի էիր և շարունակ զառանցանքի մէջ էիր:

Նա վեր կացաւ և սկսեց իր խոստացած թանապուրը պատրաստել:

Ես նկատեցի, որ նա որոշում է մի յայտնութիւն անել, բայց միշտ զսպում է իրեն:

Վերջապէս նա չը կարողացաւ երկար պահել իր գաղտնիքը, ինձ մօտենալով մի կարևոր գաղտնիք հաղորդելու տոնով ասաց.

– Սիրա՛ք, ի՛մ սիրելիս, այսօր դու դեռ տկար ես և իրաւունք չունես անկողնիցդ վեր կենալ: Յոյս ունեմ՝ մինչև վաղը քիչ լաւանաս, պնդանաս: Կէսօրւայ մօտերքը քեզ հետ կերթանք ձեր տունը: Հայրդ քեզ անհամբեր կ'սպասէ: Ալ բոլորովին հանգիստ եղիր: Այդ անպիտան Իսկուհին այլևս չկայ: Հայրդ քու և քրոջդ խաթրին անոր ձեր տնէն վռնդած է:

***

Յաջորդ օրը կէսօրին մօրաքրոջս հետ մէկտեղ մեր տունը գնացինք: Մերոնք, Մարօն և հօրաքոյրս մեզ ծայրահեղ խանդաղատանքով ընդունեցին: Արաքսին, ինձ տեսնելուն պէս դէպի ինձ վազ տալով, գիրկս նետուեց և անվերջ ու անկշտում ինձ հետ համբուրուեց: Հայրս էլ իր հերթին ինձ հետ գրկախառնուեց: Մարօն և հօրաքոյրս էլ քանիցս ինձ համբուրեցին: Թւում էր այնպէս, որ նրանք իրենցից տարիներով հեռու և բացակայ հարազատին են դիմաւորում և ջերմագին ու կարօտակէզ ողջագուրւում են նրա հետ: Ի վերջոյ հայրս, ուրախութեան և հրճւանքի ժպիտով պայծառացած, ինձ մի անգամ էլ գրկեց և ասաց.

– Իմ սիրելի և թանկագի՛ն բալաս, իմացի՛ր, որ ես քեզ միշտ սիրում եմ և ասկէ յետոյ այնպէս կանեմ, որ դու քո պատւական մօր կորուստի համար այդքան շատ չը տխրես ու չը տանջւես: Մոռացի՛ր, որդի՛ս, հարազատ հօրդ հետ ունեցած տխուր թիւրիմացութեան ցաւատանջ վերյիշումը...

ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵԱՆՆ ՆԱԽԱՎԵՐՋՆ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆՆ ՍԿԶԲՆԱՇՐՋԱՆԸ

Մաս Բ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄԵԱՆՆ ՈՒ ՆՐԱ ԴՊՐՈՑԸ

Նախակրթարանի 6-րդ դասարանի աւարտման քննութիւններին պատրաստուած չը լինելով՝ վստահ չէի, որ կարող եմ յաջողել: Այդ իսկ պատճառով չը ցանկացայ քննութեան ենթարկուել: Երամեան միջնակարգ դպրոցի հռչակն ինձ հրապուրում էր, դրա համար էլ խնդրեցի հօրս ինձ Երամեան դպրոցը փոխադրել: Նա իսկոյն համաձայնութիւնը տուեց և ինձ առաջնորդեց ուղղակի Համբարձում Երամեանի[1] մօտ:

Երբ Երամեանը տեղեկացաւ, որ Յանկոյսներ դպրոցի 5-րդ դասարանի առաջին աշակերտի կոչումով աւարտել եմ, շատ ուրախացաւ և հօրս նիւթական պայմանների անբաւարար լինելու բացատրութիւնն էլ լսելով՝ ասաց.

– Վնաս չ'ունի, տէ՛ր հայր, ես ձեր տղային ամսական 50 տոկոս զեղչով կընդունեմ և համաձայնւում եմ նրա խնդիրքը կատարել, այսինքն՝ երկու ամիս փորձելու պայմանով նրան մեր դպրոցի 7-րդ բաժանմունքը նստեցնել: Յոյս ունեմ, որ նա կ'աշխատի յետ չընկնել իր դասակիցներից:

Կարծես աշխարհի բոլոր բարիքներն իմ գրպանը լցրին: Արտակարգ ուրախութիւնից բացականչեցի.

– Չափազանց շնորհակալ եմ ձեզնից, յարգելի՝ տեսուչ,– և վազեցի համբուրելու նրա ձեռքը: Նա գորովալից շոյեց գլուխս և ասաց.

– Շատ ուրախ կը լինեմ, եթէ յաջողես մեր դպրոցումն էլ առաջինը լինել քու դասարանում:

– Շատ կ'աշխատեմ ձեր բարի ցանկութիւնը իրականացնելու:

***

Վան քաղաքի Այգեստան կոչւող լայնատարած քաղաքամասի Սըղգա կոչուած գլխաւոր պողոտայի վրա՝ նոյն այդ մասի Խաչ-փողոց անուն կրող կենտրոնական շուկային չը հասած, 90-ական թւականներին հիմնուել էր Երամեան միջնակարգ դպրոցը:

Ամբողջ երեք տարիներ էին անցել այն օրուանից, երբ ես այդ դպրոցի սանն էի դառել: Բարեբախտաբար, ինձ յաջողուել էր կատարել այդ դպրոցի տեսչին առաջին օրում իմ տուած խոստումը, այսինքն՝ իմ դասարանի առաջին աշակերտ լինելը:

Դպրոցի հիմնադիրն էր Համբարձում Երամեանը: Ասում էին՝ ութը տարեկան հասակում ծաղիկ կոչւող հիւանդութեան հետևանքով նա իր զոյգ աչքերն էլ կորցրել էր:

Այդ մարդը, չնայած որ կոյր էր, բայց տարօրինակօրէն ուշիմ և զարգացած էր: Նա իր դպրոցի բարձրագոյն բաժանմունքներում ազգային և ընդհանուր պատմութեան դասաւանդումներ էր կատարում և զարմանալիօրէն թւականների ճշգրիտ յիշումներ էր անում: Ամենից տարօրինակն այն էր, որ նա լիովին տիրապետում էր ֆրանսերէն լեզուին:

Շատ լաւ յիշում եմ, երբ ես Երամեան դպրոցի աւարտման նախավերջին և վերջին դասարաններումն էի, նա դպրոցական պարապմունքներից վերջը կամ կէսօրւա դասամիջոցին ինձ կանչում էր պատմութեան, ֆրանսերէն դասագրքերից մի որևէ կտոր կարդալու: Նա համարեայ վազքի արագութեամբ, դպրոցի հիւսիսային մասում, ընդարձակ բակի մէկ ծայրից միւսը երթևեկում և իմ կարդացածները լսում էր: Երբ ես սխալւում էի, նա անմիջապէս կանգ էր առնում և ասում.

– Չեղաւ: Նորից կրկնի՛ր:

Մինչև վերջն էլ ինձ գաղտնիք մնաց, թէ այդ կոյր վիճակում ինչպէ՞ս էր յաջողել իմանալ այն բոլորը, որին նա անթերի տիրապետում էր:

Գուցէ զարմանալի թւի, եթէ ես յայտնեմ, որ նա իր դասաւանդած բաժանմունքներում, բոլոր ուսանողներին ճանաչում էր անուն-ազգանուններով և նրանցից ամէն մէկի դպրոցական ընդունակութիւնը և ընդհանրապէս նկարագիրը իմանում էր: Դասարաններում եղած ուսանողների պարապմունքների, նրանց արտադպրոց ժամանցների և մասնաւոր ու ընտանեկան պարագաների մասին նա աւելի տե-

1 **Համբարձում Երամյանը** ծնվել է Վանում 1857 թ.: 11 տարեկան հասակում կուրացել է ծաղիկ հիվանդությունից: 1874 թ-ից դասավանդել է Վանի երկու վարժարաններում, իսկ 1882 թ. հիմնել է Երամյան վարժարանը, որը գործել է մինչև 1915 թ.: 1914 թ. դպրոցի նյութականը բարելավելու ակնկալիքով մեկնել է Եգիպտոս և այլևս հայրենիք վերադառնալ չի կարողացել: Տեսուչի պաշտոն է վարել Պորտ-Սաիդումի «Սիսվան», ապա Ալեքսանդրիայի «Պողոսյան» վարժարաններում: Հեղինակել է բազմաթիվ հոդվածներ: Իր մահվան տարում՝ 1929 թ., Ալեքսանդրիայում լույս է տեսել Հ. Երամյանի «Հուշարձան Վասպուրականի» երկհատոր ծավալուն աշխատությունը:



Համբարձում Երամյան

ղեկութիւններ ունէր, քան նոյնիսկ նրանց դասարանակից ընկերները:

Հ. Երամեանի դասաւանդումները, չ'նայած նրանց պատմական չոր բնոյթին, այնքան հետաքրքրական էին, որ նրան ունկնդրող աշակերտները լաւած ուշադրութեամբ հետևում էին նրան, և եթէ մէկ-մէկ գտնւում էին այնպիսիներ, որոնց շատ չէր հետաքրքրում նրա դասաւանդումները, չէին համարձակւում ծպտուն հանել, որովհետև իսկոյն նեթ կռահում էր խանգարողի ով լինելն ու անվրդով նրան կարգի էր հրաւիրում:

Դասաւանդումներից յետոյ համարեայ միշտ հարցնում էր.

– Եթէ ձեզնից որևէ մէկի համար անհասկանալի կէտեր կան, կարող են հարցնել:

Հ. Երամեանն իսկական հայրենասէր էր: Հայոց պատմութեան դասաւանդումները կատարում էր բացառիկ եռանդով ու ոգևորութեամբ: Դէպքերի և իրողութիւնների նկարագրութիւնից յետոյ անալիզներ էր անում և եզրակացութիւն հանում: Նրա ազնիւ հոգին ալեկոծող ամենակարևոր պարագան հայ ժողովրդի անմիաբան և պառակտիչ թերութիւններն էին:

– Եթէ մեր ժողովուրդը, մեր ազգը, յաճախ կրկնում էր նա,– պառակտիչ և անմիաբան նկարագիր ունեցած չը լինէր, մենք ներկայիս աշխարհումս եղած առաջնակարգ ու մեծ ազգերից մէկը կը լինէինք: Ճիշտ է, մեր աշխարհագրական, քաղաքական և նոյնիսկ կրօնական պայմանները շատ աննպաստ են եղել և դժբախտութիւն ունեցել ենք մեծ ազգերի մրցակցութեան, ագահութեան և եսասիրութեան զոհը դառնալու, բայց մենք շատ աւելի բախտաւոր և ուժեղ կը լինէինք, եթէ ինքներս ծայրահեղ եսականութեան և քայքայիչ անմիաբանութեան հիւանդութեամբ հիւծուած չը լինէինք: Այդ հիմնական, բայց աւերիչ թերութիւնները մեր ժողովրդին արիւնաքամ են արել: Մեր ներկայ քաղաքական անմխիթար և դժբախտ վիճակի պատասխանատուութեան մի կարևոր բաժինը մեր ժողովուրդը ղեկավարող մարդկանց ուսերին է ծանրացած: Մեր ազգային եսականութիւնն ու անմխիթարութիւնը մեր հոգու աչքերը կուրացրել են, և մենք ի վիճակի չենք եղել և նոյնիսկ ներկայիս էլ անկարող ենք քաղաքական համաշխարհային իրողութիւնները ճշգրտօրէն հասկնալ և անաչառ գնահատել: Մեր ժողովրդի ճակատագիրը դարբնող քաղաքական կազմկերպութիւնները, իրենց վիպային, ռոմանտիկ եսականութեան և հասկացողութեան մոլուցքով բռնուած, դժբախտաբար, ի վիճակի չեն իրողութիւններն ու քաղաքական դրութիւնն ու դասաւորումները ճշգրտօրէն դատելու և իրենց ազգի համար հանրօգուտ մի ընդհանուր եզրակացութեան և դրական արդիւնքի հանգելու փրկարար ելքը որոշելու: Երանի չէր լինի, որ մենք մեր ազգի գերագոյն և ընդհանրական շահերը ճշգրտօրէն կարողանայինք գնահատել և մեր թայֆայական շահերին չը զոհաբերել:

***

Համբարձում Երամեանը ճիշտ ժամանակին մարգարէացող փիլիսոփայ էր: Ելնելով 95-96 թւականների յեղափոխական ելոյթների անյաջող և դժբախտ վերջաւորութիւնից՝ նախագուշակում էր մեր տաճկահայ ժողովրդի արիւնոտ ապագան և ամբողջ հոգով այրւում և մրրկւում էր գալիք փորձանքի սոսկումով:

Նա կատարելապէս ճիշտ էր գնահատում իրականութիւնը: Նա դառնագին ափսոսում էր, որ մեր յեղափոխական, քաղաքական կուսակցութիւնների չը համադրւող, իրարարամերժ, եսական, ինքնագոհ ու անհեռատես վարքագծի ու գործելակերպի անդարմանելի սխալների հետևանքով թիւրքական ոճրագործ սպանդանոցը պիտի քշւէր տաճկահայ մէկուկէս միլիոնոց անպաշտպան ժողովուրդը և նամարդ դահիճների սիններով, կացիններով ու գնդակներով խողխողման և ոչնչացման ենթարկւէր:

Իր դպրոցի յարատևման և բարգաւաճման յախուռն տենչանքով՝ Երամեանը նախքան Համաշխարհային առաջին պատերազմի սկսելն ու ինքնապաշտպանութեան ճակատագրական օրերին

հանդիպելը՝ Եգիպտոս մեկնեց՝ յոյս ունենալով արտասահմանեան հարուստների և մասնաւորապէս Հայկ. Ընդհ. Բարեգործական Միութեան օժանդակութիւնն ապահովել:

Իր գուրգուրած դպրոցից, նրանում հոգով ու մտքով սնուող հազարից աւելի աշակերտ-ուսանողներից, իր սիրած ուսուցչական կազմից և թանկագին բազմաթիւ հայրենակիցներից, այդպէս դասաւորուած նրա հեռացումը թերևս մի տեսակ բախտաւորութիւն էր, քանի որ նրան խնայեց այն արտակարգ վիշտն ու տանջանքը, որին ներկայ լինելով՝նա չ'պիտի կարողանար տոկալ և, անկասկած, կաթուածահար պիտի լինէր: Դա սարսափելի և կոշմարի այն սև օրերն էին, երբ իր արի հայրենակիցները մի հերոսական ինքնապաշտպանութիւնից յետոյ, ստիպուած էին թողնել իրենց դարաւոր, սիրելի ու աննման հայրենիքը, տունն ու օջախը, ծառն ու ծաղիկը, հողն ու ջուրը և վայրագօրէն պարտադրուած նահանջ-փախուստի դիմել...

ԴՊՐՈՑՆԵՐ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Վանի գլխաւոր թաղամասերն ունէին իրենց եկեղեցիներն ու նրանց կից վեցամեայ նախակրթարանները: Վանում Ազգային կենտրոնական միջնակարգ դպրոցը, ինչպէս նաև պատերազմից մի քանի տարի առաջ Հայկ. Ընդհ. Բարեգործական Ընկերութեան հիմնած Վարժապետանոց[2] կոչուած միջնակարգ դպրոցը, Երամեան դպրոցի հետ մրցակցութեան դերումն էին: Կենտրոնական և մասնաւորաբար Բարեգործական Ընկերութեան Վարժապետանոցը Երամեան դպրոցի համեմատութեամբ տնտեսական աւելի բարւոք և ապահովուած պայմաններում էին, բայց Երամեանը լայն ժողովրդականութիւն էր վայելում:

Կրթական ասպարեզում դպրոցը ամէն կողմից շաչող փոթորկալից քամիների դէմ առ դէմ անխորտակելի լեռան նման անսասան մնաց: Նա մինչև վերջը կարողացաւ պահել իր կրթական բարձր մակարդակը և իրեն քաշել ուսման ծարաւ երիտասարդութեան լաւագոյն մեծամասնութեանը:

Գոյութիւն ունէին նաև բողոքականների, կաթոլիկների և գերմանացիների միսիոնարական վեցամեայ դպրոցները: Վանեցի յառաջադէմ կանանց

Երամյան վարժարանը

անհատական և հաւաքական ջանքերով հիմնուած էին աղջկաց դպրոցներ և կանանց կուլտուրական և հասարակական միութիւններ: Հրատարակւում էին «Աշխատանք»[3] և «Վան-Տոսպ»[4] անուններով շաբաթաթերթերը: Խմորատիպով տպագրւում և տարածւում էին Վանի երիտասարդ ուսանողական միութիւնների թերթերը: 1906 թւին Դաւիթ Փափազեանի նախաձեռնութեամբ և խմբագրութեամբ հրատարակւեց նաև թիւրքերէն լեզուով ժելատինատիպ «Սապահ-օլ-խայր» («Բարի լոյս») թերթը, որ նոյնիսկ թիւրք զինուորականներից, որոնք հայատեաց պետական քաղաքականութեան հակառակ էին, գնահատւեց և աշխատակցւեց:

Վանեցի կանանց դաստիարակութեան և զարգացման ասպարէզում, յեղափոխական անձնուէր գործիչ Եղիշէ Գօտակչեանի[5] կինը՝ Եղիսաբէթ Գօտակչեանը[6], չափազանց գնահատելի դեր կատարեց: Նա իր երկու քոյրերի գործակցութեամբ հիմնեց Վանի (Այգեստանի) աղջիկների յայտնի դպրոցը: Այդ երեք քոյրերը վանեցի կանանց զարթօնքի և յառաջադիմութեան գործում ի յայտ բերին անձնուրաց և անմոռանալի գործունէութիւն:

---

2 Մ. Փորթուգալեանի ջանքերով Վանի «Վարժապետանոց»-ը հիմնվել է 1879 թ.: 1881-ին նույն հաստատությունը Փորթուգալյանի գլխավորությամբ ու գրեթե միանձնյա ջանքերով վերափոխվել է Ազգային կենտրոնական վարժարանի ու գործել մինչև 1885 թ.՝ Վանի Համիդ փաշայի կարգադրությամբ փակվելը: Երամյան վարժարանը հիմնադրել է վանեցի Համբարձում Երամյանը 1882 թ.: Հաստատությունը գործել է մինչև 1915 թ.:

3 **«Աշխատանք»** գրական, քաղաքական, տնտեսական շաբաթաթերթը (ապա եռօրյա) Իշխանի (Միքայելյան), ապա Արմենակ Մաքսապետյանի, Հմայակ Մանուկյանի տնօրենխմբագրությամբ լույս է տեսել 1910-1915 թթ. Բարսեղյանի տպարանում:

4 **«Վան-Տոսպ»** գրական, գիտական, կրոնական պարբերաթերթը (սկզբում կիսամյա, 1912-ից՝ շաբաթաթերթ) Հ. Ավագյանի, Ն. Հակոբյանի տնօրեն-խմբագրությամբ լույս է տեսել 1911-1914 թթ. Ժամկոչյանի, ապա Հովնանյանի տպարանում:

5 **Եղիշե Գոդակչյան**. ծնվել է 1852 թ.: 1880-ական թթ. կեսերին Հ. Կուլողլյանի հետ ուսուցչական գործունեություն է ծավալել Տարոնի և Բաղեշի շրջաններում: Վերադառնալով Վան՝ լծվել է հեղափոխական աշխատանքի արմենական դրոշի ներքո: Մ. Ավետիսյանի սպանությունից Գոդակչյանը ստանձնում է Վանի արմենականների ղեկավարությունը: Վախճանվել է 1897 թ. թոքախտից:

6 **Եղիսաբեթ Գոդակչյանը** (նաև՝ Գոնտակչյան, ծնվ. մոտ 1870 թ.) Վանեցի ազգային-քաղաքական հայտնի գործիչ Եղիշե Գոդակչյանի (վախճ. 1897 թ.) կինը, իր երկու քույրերի՝ Մարինայի և Անիկի աջակցությամբ Վանում հիմնել էր Աղջկանց մասնավոր դպրոց: 1930-ին տիկին Եղիսաբեթն ու քույրերը դեռևս ողջ էին:

Վարագայ վանքի Ժառանգաւորաց[7] դպրոցը, յեղափոխական հռչակաւոր գործիչ Փորթուգալեանի Վարժապետանոցը, Երամեան և Կենտրոնական միջնակարգ դպրոցները և բազմաթիւ ու զանազան տիպի դպրոցները մի քանի տասնեակ դարերի ընթացքին շարունակ Վասպուրականի հայ ազգաբնակչութեան ընծայել էին հայրենասէր և գիտակից ուսումնաւարտների մի փարոսանման հոյլ, մի փաղանք, որոնք անձնուիրաբար կերտեցին վասպուրականցիների պանծալի զարթօնքը:

***

Վասպուրականի զարթօնքի նախաշեփորը հնչեցնողն եղաւ Այգեստանի հայ ժողովրդի ծոցից ծնունդ առած նրա հարազատ և անզուգական մեծ հայրենասէր Խրիմեան Հայրիկը[8]: Հայ ժողովրդի սրտի ու մտքի նուիրական ուխտատեղին հանդիսացող՝ բնական գեղեցկութիւններով շքազարդուած, Վարագայ վանքի լեռնակատարին թառած՝ համայն հայ ժողովրդի Հայրիկը, իր Արծուաբերդից իր խմբագրած թերթի միջոցով հայ ժողովրդին, ի խնդիր այդ ազատագրական զարթօնքի, անխոնջ փողհարում էր:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա (Խրիմյան Հայրիկ)

Հայ ժողովրդի արեան ծարաւի Սուլթան Համիդը խելահեղօրէն գրգռում էր տաճիկ բաշիբոզուկ ընչաքաղց մասսաներին և մանաւանդ աւազակ ու թալանչի քրտերին սպանել, բռնաբարել և կողոպտել հայ աշխատասէր և խաղաղ ազգաբնակչութիւնը թէ՛ քաղաքներում և թէ՛ գիւղերում ու աւաններում: 1880-ական թւականներից սկսած՝ հայաբնակ կենտրոններում շարունակ հետապնդւում էր այդ անպատկառ և շնական քաղաքականութիւնը: Քիւրտ աւազակապետ Մուսա-Բէկի կողմից Մուշի շրջանում առևանգուած հայուհի Գիւլիզարի սկանդալը մէկ նմուշն էր ուրիշ բազմաթիւ նմանների:

Համիդեան այդ դիւային պրովակացիան Վասպուրականի հայութիւնը դրեց մահու և կենաց ճգնաժամային երկընտրանքի հարկադրութեան ներքև: Կա՛մ ապրել ստրկօրէն, հլու հնազանդ և աստիճանաբար արիւնաքամ լինել, կա՛մ քայլել պատուաւոր մահուան փոթորկալից ճանապարհով:

Չենգիզ Խանի և մօնղոլ բարբարոսների հարազատ ժառանգորդների՝ տաճիկների արիւնախում և անխիղճ իշխանութեան տակ տարիների ընթացքին ստրկացած հայութիւնը չկարողացաւ այլևս տոկալ, համբերել: Նա հերոսական ընդվզումով ձգտեց փշրել, կործանել ստրկութեան անտանելի դարձած շղթաները:

---

7 Ժառանգավորաց դպրոցը հիմնվել է 1857 թ. Վարագ վանքում, վանահայր Խրիմյան Հայրիկի և տիկ. Եղիսաբեթ Գոտակչյանի ջանքերով: 1862 թ. դպրոցը տվել է առաջին շրջանավարտները: Ավերվել և թալանվել է 1896 թ.: Հետագայում վերաբացվել է և գործել մինչև 1915 թ.:

8 **Խրիմյան Հայրիկը** ծնվել է 1820 թ.: Հասարակական, ազգային-քաղաքական, հոգևոր-մշակութային գործիչ, գրող: Սովորել է Վասպուրականի Լիմ և Կտուց անապատների դպրոցներում: 1842 թ. հաստատվել է Կ. Պոլսում: 1847 թ. ճանապարհորդել է Պարսկաստանում և Այսրկովկասում, այցելել է Երուսաղեմ: 1848-1850 թթ. դասավանդել է Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասի դպրոցում: 1851 թ. ուսումնասիրություններ է կատարել Կիլիկիայում: 1854 թ. ձեռնադրվել է վարդապետ: 1855 թ. Կ. Պոլսում հիմնադրել է «Արծվի Վասպուրական» պարբերականը (հրատարակվել է 1855-1856 թթ.): 1856-ին ստանձնել է Վարագ վանքի վանահայրության պաշտոնը: 1857 թ. հիմնադրել է տեղի Ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը, իսկ 1858 թ. Վարագ վանքում վերսկսել է «Արծուի Վասպուրականի» պարբերականի տպագրությունը (լույս է ընծայվել մինչև 1864 թ.): 1862 թ. ստանձնել է նաև Տարոնի հոգևոր առաջնորդի և Սբ. Կարապետի վանահայրության պաշտոնը և Գ. Սրվանձտյանցի տնօրինության ներքո հիմնադրել Ժառանգավորաց նոր վարժարան ու նաև «Արծուի Տարօնոյ» երկշաբաթաթերթը: 1868 թ. Էջմիածնում օծվել է եպիսկոպոս: 1869-1873 թթ. եղել է Կ. Պոլսի պատրիարք: 1878 թ. Բեռլինի կոնգրեսում ներկայացրել է հայկական պատվիրակությունը: 1879 թ. ընտրվել է Վանի հոգևոր առաջնորդ: 1880 թ. Վանում հիմնել է երկրագործական ուսումնարան: 1890-ին թուրքական կառավարությունը ուխտ ուղարկելու անվան տակ Խ. Հայրիկին աքսորել է Երուսաղեմ: 1892 թ. ընտրվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս: 1895 թ. մեկնել է Պետերբուրգ և Նիկոլայ Բ ցարից հայցել նրա պաշտպանությունը Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումների համար: Պայքարել է Հայ եկեղեցու կալվածների բռնագրավման ցարական կառավարության որոշման դեմ և թեմական հոգևոր իշխանություններին կոչ արել չենթարկվել այդ որոշմանը: Վախճանվել է 1907 թ. Վաղարշապատում:

70-80-ական թուերին վերազարթնող Վասպուրականի երիտասարդութեան երակներում իր հերոս նախնիքների ռազմական և զինուորական քաջագործութիւնների և խոյանքների արիւնն ու աւիւնը եռալ սկսեց:

Վասպուրականի սրտում՝ Այգեստանում, և լեռնային ու անառիկ շրջաններում, ինչպէս Շատախ, Փեսանդաշտ, Մոկս, Կարճկան, և նոյնիսկ դաշտային Թիմարում սկսում էր զինական դիմադրութիւնը թիւրք և քիւրտ ստրկացման ու բռնակալութեան դէմ:

Այդ դիմադրութեան զարթօնքի գիտակցական անխորտակելի ահազանգը հնչեցրել էր «Սև Խաչ»[9] անունով գործել սկսող ընդյատակեայ կազմակերպութիւնը: Ապա, իրար յետևից հրապարակ էին իջել Արմենական[10], Հնչակեան[11], Ռամկավար[12] և Դաշնակցական[13] քաղաքական կազմակերպութիւնները:

***

1895-96 թւականներին հայակեր Սուլթան Համիդը ծրագրեց հայ աշխատասէր, կենսունակ, շինարար, տնտեսապէս բարգաւաճ ժողովրդի կոտորածները: Թիւրք ընչաքաղց բաշիբոզուկ ամբոխին և քիւրտ թալանչի աւազակապետներին «անպաշտօն» և գաղտնի ձևով կարգադրեց կոտորել և թալանել բարեկեցիկ և քաղաքականօրէն «վտանգաւոր հայ բազմութիւններին»: Անատոլուի մէկ ծայրից մինչև միւսը, մանաւանդ հայ ազգաբնակչութեամբ բնակւած և նրա հնամեայ հայրենիք հանդիսացող և տաճիկ բարբարոսների կողմից բռնագրաւած հայկական նահանգներում, կոտորեցին քառորդ միլիոնից աւելի երիտասարդ, կենսունակ և ապագայի երջանկութեան սպասումներով և յոյսերով տոգորվող հայ լաւագոյն ընտրանուն և կրթական տաճարներում մտովին սնւած յառաջապահ մարտիկներին:

Վասպուրականում, Այգեստանում, սակայն, անմահ հերոսներ Մկրտիչ Աւետիսեանը, Մարտիկն ու Պետոն, քաջարի 800 երիտասարդների հետ, իրենց հայկական ազնիւ արիւնը թշնամուն թանկ ծախեցին: Ութնօրեայ կարճատև, բայց դիւցազնական ինքնապաշտպանութեամբ Ս. Համիդի կառավարութեան ցոյց տուին հայ ժողովրդի արդար ընդվզումի և բողոքող դիմադրութեան սքանչելի ոգին:

Տաճկահայ ժողովրդի, նրա հերոս և մարտնչող զանգւածների դժբախտութիւնն ամէն տեղ և ամէն ժամանակ կայացել է նրանում, որ նրանք իրենց դիմադրական արդարացի և ազնիւ պայքարում միշտ մենակ և անպաշտպան են մնացել: Բացի այդ՝ գոյութիւն է ունեցել ամենասոսկալին և ամենալրբենին: Ինչպէս 1915-1916-ի Թալէաթ-Էնվերական հայաջինջ ահռելի կոտորածները թելադրող ու հովանաւորողներն եղան գերմանացի հայատեացները, այնպէս էլ Վասպուրականի 1896 Համիդիեան հայասպան կոտորածների անպատկառ հրահանգիչներն ու հովանաւորողները եղան անգլիական «բարեգութ» կայսրութեան Վիլյամի նման թրքամոլ և հայատեաց ներկայացուցիչներն ու ագենտները: Այս անպատկառ Վիլյամը հայ քաջարի և անձնուրաց մարտիկների դիմադրական կռուի ճախողման ու պաշարման գործում իր դաւաճանական պլանն ու ծրագիրը համիդեան ջարդարարներին յանձնեց:

Իրենցից հազարաւոր անգամ աւելի ուժեղ թիւրք և քիւրտ ոհմակներին և նրանց միացած կառավարական կանոնաւոր զօրքին և թնդանօթներին հայ ժողովրդի ազատագրման համար մարտնչող Աւետիսեանը, Մարտիկն ու Պետոն իրենց քաջարի զինակիցների հետ, թով մօտաւորապէս 800 հոգի, դիմադրել չկարողանալով, ճարահատ լքեցին դիրքերն ու գիշերւայ մութից օգտուելով դուրս եկան դէպի Պարսկաստան գնալու և ժամանակաւորապէս այնտեղ ապաստանելու: Բայց կատաղի թշնամին նրանց կրնկակոխ հետապնդեց և համարեայ բոլորին Բազի-Դազի, Գարահիսարի լեռներում և Ս. Բարդուղիմէոսի վանքի շրջակայքում անխնայ կոտորեց:

Ս. Համիդի ջարդարար վայրագութիւնները բազմապատկուեցին: Արդարացման «անուրանալի և համոզիչ» փաստ էր հայ-գեաւուրների ըմբոստութիւնն ու դիմադրութիւնը: Վայրագ թշնամու սպանիչ թոյնը առատօրէն թափուեց Վանի Այգեստանի անզէն ու անպաշտպան ազգաբնակչութեան գլխին: Օրերով կոտորեցին, թալանեցին հազարաւորների և այրեցին ու մոխրի վերածեցին նրանց շէն տները: Սուգը համատարած ու անվերջ էր: Ամենուրեք լացում ու ողբում էին իրենց հարազատների՝ իրենց երիտասարդ զաւակների, հայրերի, մայրերի, քոյրերի, եղբայրների և բէմուրազ մնացած նշանածների համար:

---

9 **«Սև խաչ»** ազգային-ազատագրական գաղտնի կազմակերպությունը հիմնադրվել է 1880-ական թթ. Խրիմյան Հայրիկի գործուն մասնակցությամբ և ջանքերով:

10 **Արմենական** ազգային-ազատագրական կուսակցությունը հիմնադրվել է Վանում 1885 թ. Մ. Փորթուգալյանի և նրա «Արմենիա» (Մարսել) թերթի (այստեղից էլ կուսակցության անվանումը) գաղափարակիցների ջանքերով:

11 **Սոցիալ-դեմոկրատ հնչակյան** կուսակցությունը հիմնվել է Ժնևում 1887 թ.: Կուսակցության ծրագիրն էր թուրքական լծից ազատագրել Արևմտյան Հայաստանը և միավորելով հայկական հողերը՝ վերականգնել հայկական պետությունը:

12 **Ռամկավար ազատական** կուսակցությունը հիմնվել է 1921 թ. Կ. Պոլսում:

13 **Հայ հեղափոխական դաշնակցություն** կուսակցությունը հիմնվել է Թիֆլիսում 1890 թ.: Կուսակցության նպատակն էր զինյալ պայքարի ճանապարհով ազատագրել Արևմտյան Հայաստանը և ստեղծել Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան:

Երկար տարիներ էին պէտք այս անմարդկային խողխողումների թարմ և արիւնածոր վէրքերը գոնէ սպիացնելու և վանդալական հրկիզումների ու քարուքանդումների մոխիրն ու փոշին մաքրելու համար...:

Վրէժը կրծքի վանդակում բանտարկուած՝ վասպուրականցին այս սարսափելի աւերածութիւններից յետոյ նորից տոկալ, նորից ապրել էր ուզում...

ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔ 1908 ԹՒԻՆ

Վասպուրականի հայութեան 1895-96 թւականների կրած աղետալի կորուստների հարուածը չափազանց ծանր էր: Տասնեակ տարիներ էին պէտք այդ հարուածի չարաղէտ հետևանքներից սթափուելու և վերակենդանանալու համար: Արտակարգ նեռուժ, բացառիկ կենսունակութիւն և անվհատ կամք էր պէտք: Աշխատունակութեամբ և յամառ, չարքաշ ստեղծագործութեամբ հռչակ շահած վանեցուն այս անգամ էլ այդ արտակարգ և անխորտակելի կամքն ու վճռականութիւնը չը պակսեց: Արեան և մոխիրների միջից նոր կեանքի, նոր ստեղծագործութեան ծիլերն արագօրէն աճեցին, ուռճացան և հասակ նետեցին:

Ստեղծագործ և շինարար աշխատանքի հետ համընթաց՝ վասպուրականցի երիտասարդութիւնը նւիրուեց վերազարթնումի մշակութային ասպարէզին: Կուլտուրական կեանքը նոր, արտակարգ թափ ստացաւ: Բացուեցին մշակութային տներ, գրադարան-ընթերցարաններ, և կազմուեցին աշակերտ-ուսանողական միութիւններ: Հրատարակուեցին թերթեր և խմորատիպ թերթիկներ: Իրար յաջորդում էին ներկայացումներ, դասախօսութիւններ, հրապարակային միթինկներ, կուսակցական և կուլտուրական հաւաքոյթներ և ժողովներ:

Այս ընդհանուր ոգևորութեան և միասնական վերազարթման ընթացքին հայ յեղափոխական և քաղաքական կուսակցութիւններն էլ եռուն գործունէութեան և ընդյատակեայ պատրաստութիւններ էին ձեռնարկել:

Դժբախտաբար, ինչպէս դարեր շարունակ և ինչպէս միշտ, այս անգամ էլ նրանք վարում էին անհամաձայն, իրարամերժ և նոյնիսկ թշնամական գործունէութիւն:

Չէին ցանկանում համագործակցութեան մի ընդհանուր լեզու գտնել և նոյնիսկ իրար վարկաբեկելուց չէին խուսափում: Միջկուսակցական պայքարը յաճախ հասնում էր ծայրահեղութիւնների գագաթնակէտին:

Վշտի և դառնութեան զգացումով՝ ստիպուած եմ յայտնել, որ այդ իրարամերժ ուղեգիծը բացի այն, որ միջկուսակցական բնոյթ ունէր, այլև, դժբախտաբար, ներկուսակցական աղէտ էր դարձել:

Տաճատ Թերլեմեզյան

Առանձին, առանձին վերցրած, ամէն մէկ կուսակցութեան ներսումն էլ անմիաբանութեան, իրարամերժումի, անհատականութեան, թունաւոր եսականութեան սպանիչ որդը կրծում էր միևնոյն կուսակցութեան և աշխարհայացութեան պատկանող կուսակցականների սիրտը: Այլապէս ինչո՞վ բացատրել դաշնակցական նախկին նւիրուած զինուորի և հայդուկի դաւաճանութիւնը, որը, ընդհանրական շահը անհատական եսին ու կրքին զոհելով, անչափ և անսահման թանկ նստեց նախ կուսակցութեան և ապայ հայ ազգաբնակչութեանը:

Բացատրենք իրողութիւնը: 1908 թւի առաջին ամսում դաշնակցական ընդհատակեայ գործունէութեան նւիրուած կուսակցականների միջև ինչ որ աղջկայ սիրահարման խնդրում տարակարծութիւն և մրցակցութիւն է յառաջանում: Պարտուած կողմը, այս պարագայում, Դիէրցի Դաւօն, վրէժխնդրութեան թոյնով լցւում և սիրային իր զգացումները խոշտանգուած ու ոտնատակուած համարելով, սրտում կուտակուած թոյնը թափելու և վրիժառու լինելու համարը դաւաճանութեան է դիմում և թիւրք կառավարութեան մատնում է տարիների քրտնաջան և տաժանակիր աշխատանքով և հազարաւոր զոհաբերութեան գնով արտասահմանից փոխադրուած և թաքցուած զէնքերի պահեստների տեղերը:

Դաւաճան Դաւօն 1908 թւի մարտին իր դաւաճանութեան արժանի պատիժն ստացաւ: Տաճատ

Թէրլէմեզեանը[14], այդ 18 տարեկաննոց վանեցի աննման հերոսը, իր զոյգ ատրճանակներից արձակած մահացու գնդակներով թիւրք ոստիկանապետի և նրա զինուած պահակների աչքերի առաջ, գետին փռեց և շանսատակ արեց Դաւոյին:

Բայց, դժբախտաբար, հազարաւորների կեանքի փրկութեան համար աննկարագրելի նեղութիւններով ամբարուած զէնքերը թաքստոցներից հանել և գրաւել էին և Դաւոյի տէռօրից անմիջապէս յետոյ, նոյն օրն իսկ, Քաղաքամիջից Այգեստան վերադարձող շուրջ 150 հայերին ճանապարհի վրայ կացնահար և քարկոծ անելով սպանեցին[15]:

***

1908 թի յուլիսին, Օսմանեան Սահմանադրութիւնը հռչակուած էր: Հայակեր և արիւնաներկ Սուլթան Համիդը գահընկեց էր եղել: Տաճկաստանում ապրող և հայկական նահանգներում եղող հայ ժողովրդի հետ միասին Վասպուրականի հայութիւնն էլ ցնծում էր: Ամենուրեք ուրախութեան և հրճւանքի ելոյթներ, միթինկներ և ցոյցեր էին կատարւում և լիաթոք «կեցցէ»-ներ էին բղաւում:

Թուրք նոր կառավարութեան պետերն ամբողջ երկրի զանազան լեզի ու կրօնի պատկանող ազգութիւնների հաւասարութեան, եղբայրութեան և արդարադատութեան նշանաբաններ էին արձակել: Օսմանեան Կայսրութեան դարերի ընթացքին վարած խտրական և հայալած քաղաքականութեան վերջնակետն էր յայտարարուած: Վասպուրականցին յոյս էր սնուցանում և նոյնիսկ համոզուած էր, որ այլևս թիւրք անպատասխանատու բաշիբոզուքի, թալանչի քիւրտի և պաշտօնական օրգանների ու պետական հիմնարկների կողմից որևէ շնական արարք-թալան, բռնագրաւում, բռնի առևանգում և սպանութեան դէպք չ'պիտի լինէր:

Նա երջանիկ էր այդ յոյսերով և ցանկանում է խաղաղութեան մէջ ապրելով՝ իր բնածին ընդունակութիւնների ազատ օգտագործումով շինարար աշխատանք և կուլտուրական բարգաւաճում կատարել:

Բոլոր քաղաքական յանցաւորներին ներում էր շնորհել: Տաճիկ ահռելի բանտի դռները բացուել և տարիներով շղթայակապ եղած հայ յեղափոխականներին ազատութիւն էր տրուել: Պետական հիմնարկների հետ գործ ունեցող հայերի նկատմամբ վարւում էին փափկանկատութեամբ և նոյնիսկ սիրալիրութեամբ:

Ուրախ և երջանիկ հայ ժողովուրդը, թէ՛ Վանում և թէ՛ շրջաններում բռնապետական վարչաձևի և նրա հետևանք եղող քմահաճ և թշնամական վերաբերմունքի անհետացումը տեսնելով, յոյս ունէր սրանից յետոյ թիւրքի հետ բարեկամ և հարազատ մնալու և Օսմանեան նոր հայրենիքի համար հաւատարիմ և օրինապահ քաղաքացի դառնալու:

Շա՜տ, չափազանց շա՜տ ափսոս, որ այդ բոլոր յոյսերը գեղեցիկ ու քաղցր երազներ էին միայն: Հայասպան Սուլթան Համիդի պատմուճանը լիովին ժառանգութիւն էր հասել երկրի նոր տէրերին՝ Համիդեան հայահալած և հայաջինջ քաղաքականութեան հարազատ ժառանգորդներ հանդիսացող Թալէաթ-Էնվէրներին:

ԿԵԱՆՔԻ ԱՍՊԱՐԷԶՈՒՄ

1914 թի գարնանը Երամեան դպրոց աւարտելուս մի քանի ամիս էր մնում: Վանի թիւրք նահանգապետը՝ հայատեաց Ջնդէտը[16] երևոյթապէս Վանի հայերին սիրաշահելու համար մեր ընդհանուր տեսչին՝ Համբարձում Երամեանին, նախքան նրա Եգիպտոս մեկնելը խոստացել էր ուսումնական յառաջիկայ տարուայ համար այդ տարում Երամեան դպրոցն աւարտողներից երկու հոգու (առաջին և երկրորդին) պետութեան հաշւին մայրաքաղաք՝ Կ. Պոլիս ուղարկել՝ պետական համալսարանում բարձրագոյն ուսում ստանալու համար:

Հ. Երամեանը մեկնելուց առաջ իր տեղապահին՝ Մարտիրոս Նալբանդեանին, կարգադրել էր ինձի, որպէս տարիների ընթացքում առաջնութիւն շահող աշակերտի, ներկայացնել կուսակալին: Կարգադրութիւնը կատարուեց, բայց Ջնդէտը թրքական կեղծաւորութեամբ ցաւ յայտնեց, որ համաշխարհային պատերազմ սկսուած լինելու պատճառով մեր Պոլիս մեկնումը յետաձգուել է:

Մի ամիս յետոյ պարզուեց յետաձգման իսկական պատճառը: Կուսակալի մօտ ինձ ներկայացրել էին

14 **Տաճատ Թերլեմեզյանը** ծնվել է 1890 թ.: Ուսանել է Կենտրոնական դպրոցում: Անդամագրվել ՀՀԴ կուսակցությանը: 1908 թ. մարտի 10-ին ոստիկանապետ Մեհմետ բեյի տան առջև հեծյալ ոստիկանների աչքի առաջ արձակած մի քանի գնդակներով սպանում է դավաճան Դավոյին ու կարողանում անվնաս փախչել: Թուրքերը հենց նույն ժամին Դավոյի վրեժը լուծում են Վանի շուկայից Այգեստան վերադարձող շուրջ 120 անմեղ հայերի՝ կացիններով ու սառը զենքերով սպանելով: Նույն թվին Արամի խմբի հետ ձերբակալվում է նաև Տաճատ Թերլեմեզյանը, սակայն սահմանադրության հռչակումից հետո ազատվում է բանտից ու անցնում արտասահման: Մինչև 1914 թ. աշունը Տ. Թերլեմեզյանը մնում է Ամերիկայում և Կովկաս վերադառնում որպես կամավոր, ապա լծվում կուսակցական աշխատանքի: Վանեցիների 2-րդ գաղթի ժամանակ անցնում է Պարսկաստան, Միջագետք: Զինադադարից հետո գալիս է Հայաստան, 1920-ական թթ. կրկին անցնում Ամերիկա, ուր և բնակվում էր տակավին 1930 թ.:

15 Թուրքերը Դավոյի վրեժը լուծում են նույն օրը, կացիններով ու սառը զենքերով սպանելով Վանի շուկայից Այգեստան վերադարձող անմեղ հայերին (ըստ Հ. Աճեմյանի սպանվում է ոչ թե 150, այլ շուրջ 120 հայ. տե՛ս «Վասպուրական», Վենետիկ, 1930, էջ 281) :

16 Ջնդեթ բեյը Վանի վալիի պաշտոնում հաջորդել էր Թահսին բեյին:

որպէս անբարեյոյս և հակապետական տարր: Ինձ հետ տուժեց նաև իմ դասարանակից ընկերը՝ Կոնկեց Վահէն:

Մ. Նալբանդեանն իմ իրաւացի վրդովմունքը մեղմելու նպատակով և հաւանաբար Հ. Երամեանի կարգադրութիւնը կատարելու համար աւարտական քննութիւնից անմիջապէս յետոյ ինձ նշանակեց Երամեան դպրոցի ուսուցիչ:

Պաշտօնիս նշանակման նոյն օրն իսկ նա ինձ հետ առանձնացաւ տեսչարանում և ասաց.

– Սիրելի՛ս, կարիք չկայ քեզ յայտնելու, որ մեր բոլորիս համար յարգելի պ. Երամեանը քեզ շատ գնահատում և սիրում է: Յոյս ունեմ, որ քու համալսարանական թեկնածութեան վիժման խնդրում ինձ չես մեղադրելու: Թող անիծուի այն չար մարդու ծնունդը, որ թայֆայական ստոր թշնամանքից կուրացած, նահանգապետի մօտ քեզ որպէս անբարեյոյս անձնաւորութիւն է ներկայացրել: Միակ փոխհատուցում, որ կարող էի քեզ համար անել, քեզ քու աւարտած ու սիրած դպրոցում ուսուցիչ կարգելն է: Ես միանգամայն համոզուած եմ, որ Երամեանի վերադարձին նա ի վիճակի կը լինի նահանգապետին նորից համոզել և յառաջիկայ տարին քեզ Պոլսի պետական համալսարանն ուղարկել: Մինչ այդ քեզ բարեկամաբար խորհուրդ եմ տալիս մի քիչ աւելի զգոյշ լինել և կուսակցական հակառակորդներիդ հետ շատ գլուխգլխի չը դնել:

***

Սեպտեմբեր ամսի վերջին՝ իմ ուսուցչական պաշտօնավարութեան առաջին ամսի լրումին, իմ առաջին աշխատավարձը ստացայ: Ինձ վճարուեց, ինձ համար անսպասելի մի ռոճիկ՝ մէկ օսմանեան ոսկի և 30 ղուրուշ: Չնայած բախտիս անյաջող դասաւորութեանն ու համալսարանի թեկնածութեանս վիժումին՝ այդ օրը շատ ուրախ էի: Չէ՞ որ թեակոխել էի անկախ մարդու ասպարէզն և ստացել էի առաջին աշխատավարձս: Երբ մարդը պատանեկութեան շրջանից թեակոխում է իր երիտասարդական նախասեմը, մի տեսակ անմեղ հպարտութեամբ և երբեմն էլ ինքնահաւանութեամբ է վարակւում, որովհետև նրա հոգու խորքում անհատական ինքնասիրութիւնն ուժեղ թափ է վերցնում, մանաւանդ երբ նրան յաջողւում է իր համար անկախ կեանք և գործ ստեղծել: Վերջին ժամանակներում, երբ դեռ դպրոց չէի աւարտել և իմ հագուստի, գրենական պիտոյքների և դպրոցիս ամսավճարի համար հօրս նիւթական միջոցներից էի օգտւում, ամօթխածութեան և անհանգստութեան զգացում էի ունենում:

Իմ ստացած առաջին ռոճիկից մէկ ոսկին նոյն օրն իսկ հօրս յանձնեցի: Նա չէր համաձայնւում ստանալ, բայց ես նրան թախանձելով ստիպեցի:

– Տղա՛ս, այդ քու առաջին աշխատանքն է: Կարիք չկայ, որ ինձ վճարես: Աւելի լաւ է հագուստներիդ ու կարիքներիդ համար ծախսես: Ջան սաղութիւն էլնի, յետոյ մեզ կօգնես:

– Չէ՝, տէ՛ր հայր (վերջին ժամանակներում մեր հօրն աւելի յարգած լինելու համար քոյրս և ես մեր հօրն իր կարգի կոչումով էինք անւանում), ինձ մօտ վճռել էի առաջին ռոճիկը լրիւ ձեզ յանձնել: Լաւ գիտեմ՝ ինչքա՜ն մեծ զոհողութիւններ էք արել մեզ բոլորիս համար: Հիմա հերթը իմս է ձեզ օգնելու համար: Ինձ մօտ դեռ 30 ղուրուշ փող է մնում: Այդ էլ Արաքսու հետ կէս կանեմ: Թող ան էլ ուրախանայ իր եղբօր առաջին վաստակով:

Իմ երկրորդ ռոճիկը ստանալուց նրա գումարը մօտաւորապէս վեց հաւասար բաժինների վերածեցի: Երկու մասը նւիրեցի եղբօրս կնոջը, երկուսը նւիրեցի Մարօին և հօրաքրոջս, իսկ վերջին երկու մասն էլ պահեցի ինձ և քրոջս համար: Սկզբում մտածեցի մօրաքրոջս էլ բաժին հանել, բայց փոշմանեցի՝ տրամաբանելով, որ նա իմ նւէրի կարիքը չ'ունի:

Չմոռանամ յիշելու, որ հայրս, իմանալով իմ ստացած երկու ամսւայ ռոճիկը բաժանել եմ, և տակում ինձ համար մի չնչին գումար է մնացել, և դրա համար էլ ի վիճակի չեմ եղել ինձ համար կարգին մի հագուստ պատրաստելու, ինձնից ստացած մէկ ոսկիով շատ լաւ կտորից հագուստ և կօշիկ էր պատւիրել և ինձ նւիրել:

Իրար վրայ վերցրած՝ մեր ընտանիքի նիւթական պայմանները լաւացել էին: Մեր՝ հինգ հոգուց բաղկացած ընտանիքում երեքս աշխատող ձեռք էինք: Հայրս, տեսնելով իմ յամառ և ըմբոստ դիմադրութիւնն և մեր տունը չը վերադառնալու իմ հաստատ որոշումը, ստիպւած էր այդ կնոջը հեռացնել ինձ չկորսնցնելու համար: Իհարկէ, այդ գործում իմ կողմնակիցներն ու պաշտպանները (հօրաքոյրս, մօրաքոյրս, մօրեղբայրս, Մարօն և եղբօրս կինն ու ուրիշները) շատ էին եղել և ճնշող ու վճռական դեր էին խաղացել:

***

1914 թւի վերջին չորս և 1915 թւի առաջին երեք ամիսներում՝ ուսուցչական ասպարէզիս եօթնամսեայ սկզբնաշրջանում, մեր դպրոցի 2-րդ և 3-րդ բաժանմունքներում հայերէն լեզուի դասաւանդումներ էի կատարում: Այստեղ, ի միջի այլոց, ուզում եմ յիշել այն պարագան, որ դպրոց աւարտելուց առաջ 8, 9, 10-րդ դասարաններում մեր հայերէնի ուսուցիչ Արմենակ Փոխարեանի մասնաւոր ուշադրութեան և գուցէ համակրութեան էի արժանացել հայերէն լեզուի շարադրութիւններիս համար: Ինձ հետ մեր դասարանումն էր նաև իմ յարգելի հայրենակից Հայկ Աճեմեանը, որի հետ շարադրութեան դասե-

ռում ուժեղ մրցութեան մէջ էինք և իրար ձեռքից հայերէն շարադրութեան ամենաբարձր թանշանը խլում էինք:

Այդ շարադրութիւններում ունեցած իմ յաջողութիւնները պատճառ դարձան, որ մեր փոխտեսուչ Մ. Նալբանդեանն ինձ վստահէր հայերէն լեզուի դասաւանդումները:

Օգտուելով այդ հանգամանքից՝ մասնաւոր ճիգ գործ չէի դնում դասաւանդումներիս արտադպրոցային նախապատրաստման համար: Այդ պատճառով էլ դպրոցից դուրս բաւական շատ ժամանակ ունէի ուրիշ գործերով զբաղուելու համար:

Կեանքիս 19-րդ տարին նոր էի թեւակոխել: Գուցէ շատ տարօրինակ թւի, որ յայտնեմ՝ մինչև այդ ժամանակը՝ կեանքի այդ կենսուրախ շրջանում, դպրոցից դուրս, բացի կուսակցական-կազմակերպչական և հասարակական աշխատանքից, որևէ ուրիշ ապրում ինձ համար հետաքրքրական չէր:

Գրեթէ բոլորին յայտնի էր, որ վասպուրականցիները ընդհանրապէս, իսկ վանեցիները մասնաւորապէս գործնական մարդիկ են: Կարելի է համարձակ ասել, որ նրանց 97 տոկոսը իրական գործի, աշխատանքի և շօշափելի շահի մարդիկ են: Վերացական գաղափարներն ու նրանց ասութեամբ «ծակ փիլիսոփայութիւնները» նրանց բոլորովին չեն հետաքրքրում: Նոյնիսկ դպրոցական շրջանում նրանք իրենց ազատ ժամերը յատկացնում էին արհեստ կամ վաճառականութիւն սովորելուն և, եթէ հնարաւոր լինէր, փող աշխատելուն:

Վանեցիներն այնքան ճարպիկ առևտրականներ և այնքան ժուժկալ մարդիկ էին, որ հրեաներին ասպարէզից քշել էին: Իսկապէս չեմ յիշում, որ Վանում հրեայ վաճառական կամ նոյնիսկ առևտրական տեսած լինեմ: Պատճառը շատ պարզ է. վանեցիներն իրենց բացառիկ ճարպկութեամբ նրանց խեղդել կամ, ինչպէս ընդունուած է նման պարագաներում ասել, նրանց երեսից տարել էին:

Բայց պէտք է խոստովանել նաև, որ միւս ծայրահեղ հանդիպակացն էլ գոյութիւն ունէր: Վանեցի կուսակցական-քաղաքական, հասարակական-ազգային գործիչը ծայրահեղ անձնուրացութեամբ և ազգասիրութեամբ փայլում էր:

Ո՞վ չի իմանում մեծ ազգասէր և հռչակաւոր հասարակական գործիչ Խրիմեան Հայրիկի և ճշմարիտ հայասէր ու հանճարեղ քաղաքական գործիչ Աղասի Խանջեանի[17], Մ. Աւետիսեանի, Մարտիկի, Յովհ. Կուլօղլեանի[18], Եղիշէ Գօդակչեանի, Շիրին Եղիազարեանի[19], Մելքոն Կեմցեանի[20], Աբր. Բրուտեանի[21], Լևոն Շաղոյեանի[22], Տաճատ Թէրլէմէզեանի և հազարաւոր նման անձնուրաց և հերոս վանեցիների մասին:

***

Բարեբախտաբար, կամ միգուցէ դժբախտաբար, իմ երիտասարդական հասակի նախասեմին ես էլ, գաղափարական անզուսպ հովերով տարուած, հասարակական գործիչ էի դարձել կամ, աւելի ճիշտն ասած, ձգտում էի հասարակական ժողովրդական գործիչի համբաւին տիրանալ: Իմ շուրջս հաւաքել էի 60-ի չափ հասակակից, մի քիչ աւելի մեծ կամ փոքր երիտասարդների և, հակառակ մեր փոխտեսչի բարեկամական խորհրդին, կուսակցական-կազմակերպչական բուռն աշխատանքի էի լծուել: Չնայած այն հանգամանքին, որ ես դեռ ուսանողական միութեան շարքումն էի, բայց կազմակերպչական գործօն դեր էի խաղում և Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան գլխաւոր գործիչների ուշադրութեան և գնահատանքի էի արժանացել:

---

17 **Աղասի Խանջյանը** ծնվել է 1901 թ. հունվարի 30-ին Վանում: Վանեցիների առաջին գաղթից հետո Խանջյանների ընտանիքը հաստատվում է Երևանում: 1917 թ. ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը: 1921-ին գործուղվում է Մոսկվա, սովորում Սվերդլովի անվ. համալսարանում, մինչև 1928 թ. լինում է Լենինգրադում, ապա վերադառնում հայրենիք: Այստեղ Խանջյանը նախ ընտրվում է Հայաստանի կոմկուսի երկրորդ քարտուղար, իսկ 1930-ից՝ առաջին քարտուղար: Հայաստանից Խորհրդային Ադրբեջանին բռնակցված Արցախն ու Նախիջևանը վերադարձնելու խնդրին հետամուտ՝ ծավալում է ազգային-քաղաքական գործունեություն, որի համար էլ 1936 թ. կանչվում է Թբիլիսի և սպանվում Ստալինի կարգադրությամբ:

18 **Հովհաննես Կուլողլյանը** ծնվել է 1860 թ. Վանում: Հայտնի էր նաև իր գրական-հեղափոխական անվամբ՝ Դիվանա-Բահլյուլ: Սույն աշխատության հեղինակ Սիրաք Սարհադյանի հարազատ քեռին, Մ. Փորթուգալյանի հիմնադրած Ազգային-Կենտրոնական վարժարանի անդրանիկ շրջանավարտներից էր: Իր դասընկեր Եղիշե Գոդակչյանի հետ 1880-ական թթ. վերջերին ուսուցչի առաքելությամբ անցնում է Մուշ, հետո՝ Բաղեշ: Վերադառնալով Վան՝ Կուլողլյանը շարունակում է դասավանդել Հիսուսյան, Երամյան, Հանկուսների, Ազգային-Կենտրոնական, ինչպես նաև Վարագ վանքի Ժառանգավորաց դպրոցներում: Սնված Մ. Փորթուգալյանի և Խրիմյան Հայրիկի ազգային գաղափարներով՝ Կուլողլյանն ավելի քան 25 տարվա ուսուցչական աշխատանքի ընթացքում ազգային գաղափարներով կրթեց ամբողջ սերունդ: Դիրքեղիրք նրա ներկայությունը ոգևորիչ ու էական դեր է կատարել 1915 թ. Ապրիլյան հերոսամարտի օրերին: Վախճանվել է 1915 թ. վանեցիների առաջին գաղթի ժամանակ (ըստ Ս. Սարհադյանի՝ գաղթի ճանապարհին, իսկ ըստ Հ. Աճեմյանի՝ Էջմիածնում. «1915-ի նահանջին տառապալից ճամփորդութենէ մը յետոյ (ոտքով), հազիւ հասաւ Էջմիածին, ուր և չկրնալով տոկալ տօթին և կեանքի տառապանքներուն մեռաւ, 55 տարեկան հասակին մէջ, ու թաղուեցաւ Էջմիածնի անտառի ծայրին, Վասպուրականի Եղբայրական Գերեզմանոցին մէկ անկիւնը, ուր անհայտ ու անզարդ կը մնայ այսօր անոր շիրիմը», «Վասպուրական», Վենետիկ, 1930, էջ 281):

19 **Շիրին Եղիազարյանը** ծնվել է 1876 թ. Արճակ գավառի Խառակոնիս գյուղում: Կարողացել էր լավ հարաբերություններ ստեղծել քրդերի և ասորիների հետ և գաղտնաբար հաջողությամբ գլուխ էր բերում Պարսկաստանից Վան զենքի փոխադրության գործը: Եղեռնի օրերին կազմակերպել է խառակոնիսցիների պաշտպանությունն ու համագյուղացիներին ապահով հասցրել Վան: 1915-ի մայիսին Եղիազարյանին վիճակվեց վայր իջեցնել Վանի բերդից թուրքական դրոշն ու ծածանել հայկականը: Վասպուրականի անկախության օրերին նշանակվել է Արճակի գավառապետ: Վախճանվել է Ալեքսանդրապոլում, 1920 թ.:

Իմ նախաձեռնութեամբ, կուսակցական ակումբում ուսանողական հատուածի համար առանձին գրադարան-ընթերցարանի սենեակ էր յատկացուել: Շաբաթը մի անգամ՝ կիրակի օրը, դասախօսութիւններ էին կազմկերպւում: Շաբաթական մի անգամ ժելատինով երկու երեսնոց թերթ էր տպագրւում: Առնւազն շաբաթական մի անգամ ժողովներ էին գումարւում: Հերթով կուսակցական և ուսանող ընկերները դասախօսութիւններ էին կարդում: Մտքերի փոխանակութիւններ և վիճաբանութիւններ էին լինում, և հանւում էին եզրակացութիւններ:

Գրեթէ ամիսը մի անգամ շրջանային պտոյտ-պրոպագանդա էր կազմակերպւում: Ճշմարտութիւնը խոստովանելու համար պիտի ասել, որ շրջաններում մենք հանդիպում էինք լուրջ դժուարութիւնների: Պատճառը նախ մեր անմիտրութ խօխա լինելն էր և ապագա գլխաւորապէս հակառակորդ կուսակցականների ճիգ ու ջանքը մեր պրոպագանդը չեզոքացնելու համար:

ՄԱՐՕՅԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

1914-ի Յունիսի առաջին 15 օրեակում՝ իմ դպրոցի աւարտական վկայականը ստանալուց ճիշտ մէկ շաբաթ յետոյ, իմ անգին և սիրելի Մարօյի ամուսնութիւնը տեղի ունեցաւ: Զարմանալի, հետաքրքրական մի պատահական դիպուածքի հետևանք եղաւ այդ երջանիկ ամուսնութիւնը: Օրերից մէկում Մարօն իր հիւանդագին և թերի ու ուսերի ցաւից տառապող մօրն օգնութեան է գնում: Այդ օրը Մարօի մայրը, մի քանի օրից ի վեր հիւանդ պառկած իր անկողնից իր ոսկրացած մարմնում դեռ մնացած ուժն ու էներգիան լարելով և իր աղջկայ թախանձանքին ու խնդրանքին լսել չուզենալով, վեր է կենում:

– Աղջի՛կ, Մարօ՛, ըսածներիս ականջ ըրէ, ես Շատիկենց Զարուհի խաթունին խօսք եմ տուած: Նա ինձի կըսպասէ: Ես անպատճառ էրթալու եմ և նրանց լացքն անելու եմ: Ջահաննամ որ կը մեռնեմ և կազատւեմ էս փուչ աշխարքէն:

– Նանա ջան, դու ծանր հիւանդ ես: Դու չես կրնայ հարիւր կտոր սաւանները, բարձի երեսները, շորերն ու զգեստները լանայ: Թող մնայ վաղը կամ միւս օրը կը լանաս:

Բայց Մարօն, չկարողանալով մօր տուած խոսքը կոտրել, խնդրել էր մօրը նրա հետ գնալ և լացքի աշխատանքում նրան օգնել: Մայրը ընդդիմացել և չէր ուզել համոզւել, բայց զիջելով Մարօի խնդրանքներին, ի վերջոյ համոզւել էր:

Բախտի տարօրինակութեամբ այդ օրը Գրիգոր Բուլղարացին[23] Շատիկենց մօտ ճաշի հիւր էր եղել և Մարօին մօրն օգնելիս տեսել էր:

Ծնւած լինելով ոչհարուստ և նահապետական պարզ ընտանիքում և իր կեանքում բազմաթիւ նեղութիւնների և զրկանքների ենթարկւած լինելով՝ համեստ և ազնիւ յեղափոխական Բուլղարացին իր հիւրընկալի միջոցով Մարօին ամուսնութեան առաջարկ էր արել: Հիւրընկալը, Մարօն և մանաւանդ մայրը զարմացել և չէին կարողացել իրենց համոզել եղած առաջարկի լրջութեան և իսկութեան մասին, բայց համեստ յեղափոխականը համոզել էր նրանց՝ ասելով.

– Ես ինքս հայ ժողովրդի չարքաշ և պարզ մէկ ընտանիքի զաւակ մըն եմ: Ես շատոնց այսպէս մէկ չքաւոր ընտանիքի աղջիկը կը փնտրէի: Փառք Աստծոյ, որ ճակատագիրը մեզ այսպէս հանդիպեցրած է: Եթէ Մարօն և իր մայրը համաձայն են, իմ խօսքը խօսք է, և կը ցանկանամ օր առաջ ամուսնանալ:

---

20 **Մելքոն Կեմցյանը (Տեր-Մարուքյան)**. ծածկանունը՝ Ազատ Ոստանիկ. ծնվել է 1873 թ.: Հիրավի Վանի Հնչակյան կուսակցության առավել տանջված մարտիկներից մեկը: 1895 թ. Մելքոնը դառնում է Վան եկած հնչակյան Մարտիկի աջ ձեռքը: Որպես կուսակցական քարոզիչ՝ ուղարկվում է Հայոց-Ձոր, որտեղ և ձերբակալվում է և Վան բերվելով՝ դատապարտվում 101 տարվա ազատազրկման: 1896 թ. աշնանը պետական նեբռումով դուրս է ելնում բանտից ու անմիջապես լծվում հեղափոխական գործին: Երկու ընկերների հետ Մելքոնն ուղարկվում է Պարսկաստան, որտեղ միանալով Փարամազի 29 հոգուց բաղկացած խմբին՝ վերադառնում է Վան ու տեղի շատ հնչակյանների հետ միասին 1897 թ. աշնանը կրկին ձերբակալվում ու դարձյալ դատապարտվում 101 տարվա ազատազրկման, այս անգամ, սակայն, շղթայակապ: Ամբողջ 12 տարի տաժանակրության ենթարկվելով՝ Մելքոնն ազատ է արձակվում միայն 1908 թ. ամռանը: Ազատվելուց հետո Մելքոնն անցնում է Կոստանդնուպոլիս, ատամնաբուժություն սովորում ու վերադառնում Վան, լծվում խաղաղ աշխատանքի: Սակայն 1913 թ. ամառային մի գիշեր Այգեստանի փողոցներից մեկում թուրք ոստիկանները դավադրաբար սպանում են Մելքոն Կեմցյանին: Նրա սպանության լուրը թուրք կառավարության դեմ ուղղված նոր հուզումների և ցույցերի տեղիք է տալիս: Կեմցյանի թաղմանը ներկա են լինում 10.000-ից ավելի վանեցիներ:

21 **Արրահամ Բրուտյան**. ծնվել է 1882 թ.: 1905 թ. ավարտել է Կենտրոնական վարժարանը և անդամագրվել Հնչակյան կուսակցությանը: Ընդունակությունների և հոետորական ձիրքի շնորհիվ ստանձնում է կուսակցության ղեկավարությունը: Հայտնվում է Վանի բանտում, որտեղից ծանր հիվանդ լինելու պատճառով փոխադրվում է զինվորական հոսպիտալ: Նրա հոշոտված մարմինը գտնում են 1915 թ. մայիսի 19-ին և ամփոփում Վանի ՀՀԴ պանթեոնում (Արարուց Մայր եկեղեցու Խաչաբակ կոչվող գերեզմանոցի արևելյան անկյունում):

22 **Լևոն Շաղոյանը** ծնվել է Հայոց-Ձորի Խարականց գյուղում 1887 թ.: 1915 թ. ապրիլին՝ մինչև Դրոյի կամավորական գնդից խմբապետ Մարտիրոսի վաշտի օգնության հասնելը, ղեկավարել է Փեսանդաշտի ինքնապաշտպանական մարտերը: Վասպուրականի ազատագրումից հետո Շաղոյանը նշանակվել է Գյավաշի գավառապետ: 1918 թ. նահանջից հետո Շաղոյանն իր ժողովրդի հետ հաստատվում է Իրաքի հյուսիսում, Զախոյի մոտ հիմնում 3 գյուղեր (Հավրեզք, Վերին և Վարին Պասետկա): Վախճանվել է 1973 թ. Հավրեզք գյուղում:

23 **Գրիգոր Բուլղարացի** (Գրիգոր Կոզյան, Կյոզեյան, Գեզյան) ծնվել է Կարինում: 1915 թ. ընտրվել է Վանի Այգեստանի ինքնապաշտպանության զինվորական մարմնի անդամ: 1916-1918 թթ. վարել է Վանի զինվորական կոմիսարի պաշտոնը: 1918 թ. մարտի 21-ին ստորագրել է վասպուրականցիների վերջին գաղթի հրամանը: 1919 թ. նախագահել է Երևանում տեղի ունեցած Արևմտահայերի համագումարը: Վախճանվել է 1922 թ. Կոստանդնուպոլսում:

***

Մարօի հարսանիքը, թէև շատ համեստ և սեղմ շրջանակում և արտաքին բոլոր շքեղ ձևականութիւններից զուրկ կատարուեց, բայց ինձ և քրոջս համար շատ բերկրալի և երջանիկ էր: Մենք երկուսս էլ մեզ չափազանց ուրախ և բախտաւոր էինք համարում, քանի որ մեր ամենամօտ և ամենասիրուած բարեկամին յաջողւում էր մի ազգասէր և յարգած յեղափոխական գործիչի հետ ամուսնանալ: Մարօի հարսնաքոյրը Արաքսին, և հարսնեղբայրն ես էի: Այդ երջանիկ օրն երբէք չեմ կարող մոռանալ:

Անկարելի է նկարագրել Մարօյի բազմատանջ և կորաքամակ մօր անսահման ուրախութիւնը: Խեղճ, չարաչար աշխատող կինը վերջապէս հասել էր իր մուրազին: Նա ականատես էր եղել իր տառապալից կեանքի միակ և յուզիչ երազի կատարմանը: Չէ՞ որ նա իր Աստծոյ հետ պայման էր կնքել:

Տարիների ընթացքում գիշեր և ցերեկ նրան խնդրել, աղաչել և պաղատել էր իր աղջկայ բախտաւորութեան համար, այդ իր աչքի լոյսը, իր կեանքի յոյսը, իր օրն ու արևը հանդիսացող միակ զաւակի բախտաւոր ու երջանիկ ամուսնութեան համար:

Երբէք չեմ կարող մոռանալ նաև այն երջանիկ գիշերը, այն բախտաւոր րոպէն, երբ ես նրան իր աղջկայ ամուսնական արարողութեան վերջում շնորհաւորում էի, նա ինձ մայրական խանդաղատանքով իր կրծքին սեղմեց և բազմաթիւ անգամ համբուրելով, ուրախութիւնից ծայրահեղօրէն յուզուած՝ արտասուելով ասաց.

– Տեսար բալէս, որ ինձ նման մէկ ողորմելի, անտէր-անտիրական և զառամած կնոջ առ աստուած ուղարկած աղաչանքը զուր չանցաւ, և վեջապէս ես իմ մուրազին հասայ:

– Ոսկի՛ մամա,– շտապեցի պատասխանել նրան,– իհարկէ, քու աղօթքն իր գործն արաւ, բայց դու լաւ իմացիր, որ քո Մարօն սովորական մի աղջիկ չէ: Նա մի իսկական գոհար է: Նա հոգով այնպիսի մի գոհար է, որի նման գտնելն անհնարին է: Նա միանգամայն արժանի է քու փեսայի նման ազնիւ յեղափոխականի կինը լինելու:

1915 ԹՒԻ ՍԿԶԲՈՒՄ

Մի քանի օր յետոյ 1915 թւի նոր տարին սկսելու էր: Նոր տարւայ Ծննդեան տօների առթիւ, ինչպէս սովորութիւն էր դարձել, դպրոցները երկու շաբաթեայ արձակուրդ ունէին:

Մեր երիտասարդ անդրանիկ ընկերների հետ, որոնց թւում էին Հրանդ Դարբինեանը, Աղասի Խանջեանն ու Վահան Խէրանեանը, 6 հոգով վճռեցինք այդ երկու շաբաթայ արձակուրդն օգտագործել մեր բոլոր վասպուրականցիներիս ամենասիրելի վայրերը՝ Վարագայ և Աղթամարի վանքերն այցելելով:

Երբևիցէ չեմ կարող մոռանալ այդ երկու հռչակաւոր վանքերը, որոնցից մէկը հրաշատեսիլ և յաղթական արձի, միւսը՝ հպարտ և անյաղթելի առիւծի նման, թաթերը փռել էին Վանայ գեղատեսիլ և կապուտակ ծովակում:

Թէ՛ մենք և թէ՛ վանականները տարօրինակ նախազգացումով համակուած էինք. փոխադարձ արտասովոր սիրալիրութիւնն իր վերջակէտին էր հասել: Վանականների համար մեզ հետ վերցրել էինք ձմեռուայ այդ սեզոնին հազւագիւտ դարձող տանձ, խնձոր և սերկևիլ, ինչպէս նաև ծխախոտ, թէյ և շաքար, իսկ նրանք անխնայ մեզ հիւրասիրում էին թարմ կաթ, մածուն և կարագ, իսկ Աղթամարում՝ Վանայ ծովակի հռչակաւոր տառեխ ձուկի իւղատապակ խորոված:

Վանականները՝ օրերով ծարաւ անցկացրած մարդկանց նման, նոր լուրերի ծարաւն էին զգում: Մեզնից քաղաքական դրութեան և պատերազմի ծագման ու ընթացքի մասին տեղեկութիւններ էին ուզում: Մենք, իհարկէ, սիրալիրօրէն նրանց տեղեկացնում էինք այն բոլորի մասին, ինչ իմանում էինք: Եբեմն էլ նրանց մեր հասկացած ձևով բացատրում էինք իրերի դասաւորութիւնն ու ենթադրական եզրակացութիւններ էինք հանում:

Ինչպէս նրանք, այնպէս էլ մենք մօտալուտ մի ահռելի վտանգի սոսկումն էինք ապրում և դառնօրէն ափսոսում էինք մեր խաղաղ ու ստեղծագործ կեանքի մօտեցումը դէպի ամենակուլ հրաբուխ-պատերազմը:

Այդ չարաղէտ վտանգի նախազգացումը տարիների հին բարեկամների նման մեզ իրար մօտեցնում և սրտակից էր դարձնում:

***

1896 ի Վանի կոտորածների ահռելի յիշողութիւնը դեռ շատ թարմ էր: Վանեցի ընտանիքներից շատերի աչքերից իրենց սրախողող արւած սիրելիների, հարազատների, ամուսինների և զաւակների համար թափւած արցունքի կաթիլները դեռ չէին չորացել: Նրանք ահա նորից ապրում էին մօտալուտ աղէտի և նոր կոտորածների սարսափելի կոշմարը:

Ապրիլեան ինքնապաշտպանութեան նախօրեակին՝ մօտաւորապէս մի ամիս առաջ, տեղի ունեցան միջկուսակցական չափազանց գաղտնի շփումներ և խորհրդակցութիւններ: Ահռելի վիշապն իր ամենակուլ երախը բացել էր: Վասպուրականի կուսակցական հակառակորդները խոհեմութեան և զգաստութեան էին եկել և գիշեր-ցերեկ մտածում էին մի կերպ դիմագրաւել վերահաս վտանգը:

Թիւրք կառավարութիւնը դժբախտութիւն էր ունեցել գերմանացիների հետ դաշնակցել և համաշխարհային առաջին կործանիչ պատերազմի մէջ մտնել:

Պատերազմի հրդեհում ընկնելուց գրեթէ անմիջապէս յետոյ թիւրք պետութիւնն իր վաղեմի անպատկառ ծրագրի գործադրութիւնը ձեռնարկեց:

Պատճառ-պատրուակը, դժբախտաբար, նրան չէր պակսում: Չէ՞ որ իր երկրի հիւսիսարևելեան սահմանագլխում հայկական կամաւորական գնդեր էին կազմակերպւում և պատրաստւում էին ներխուժել Տաճկաստան և հայերին ազատութիւն տալ և նրանց պատկանող նահանգները խլելով՝ վերադարձնել նախկին, իսկական տէրերին՝ հայրենազրկւած հայերին:

Եթէ հայերը կարող են ցարական կառավարութեան օժանդակութեամբ կամաւորական գնդեր կազմել և թիւրքերի դէմ պատերազմի դուրս գալ, մի՞թէ թիւրքերը իրենց գերմանացի դաշնակիցների լիակատար համաձայնութեամբ և պաշտպանութեամբ չէի՞ն կարող փոխվրէժը լուծել, հայերի, նրանց ցանկացած ազատութեան և պահանջած հայրենի հողին տիրանալու ցանկութեան վրայ լեռանման մի սև խաչ դնել:

– Այո՛, կարող ես, իրաւունք ունես,– թելադրեցին գերմանացիներն արիւնատենչ բնական հակում ունեցող իրենց բարեկամ տաճիկներին, – կոտորի՛ր և բնաջինջ արա՛ այդ անպիտան հայերին, որպէսզի նրանց արտասահմանեան ազգակիցներին հնարաւորութիւն չը տաս քու հողի վրայ ապրող հայերին միանալու և քու տերիտորիան, քու երկիրը ձեռքիցդ խլելու:

Հայկական վեց վիլայէթների ներքին իշխանութեան, ամերիկացի երկու լիազօր վերատեսուչների նշանակման, կամաւորական գնդերի ներխուժման, ներքին ապստամբութիւնների բռնկման վտանգը խորտակող-գերեզմանող հակահարւածի ու փոխվրէժի դիւային ծրագիրը մշակւած ու թելադրւած էր: Տասնեակ տարիներից ի վեր հայերի արիւնի ծարաւի թիւրք ղեկավարող մասսան, իրենց գլխաւորող երրորդութեան՝ Թալէաթ-Էնվէր-Ջեմալի ցուցմունքներով իրենց աւազակաբարոյ գերմանացի ռազմախելառ դաշնակիցներից ստացած դժոխային ծրագիրը լրբենի ճշգրտութեամբ գործադրեցին:

Իրենց արիւնարբու նախնիների հարազատ արիւնը կրող թիւրք աւազակապետները՝ Թալէաթը, Էնվէրը և Ջէմալը, սկսեցին խորամանկօրէն գործադրել այդ կոտորածի և բնաջնջման ծրագիրը: Մայրաքաղաքից սկսած մինչև ծայրագաւառները նախ և առաջ զինուորացու անւան տակ հաւաքեցին 18-45 տարեկան հայ տղամարդկանց: Ապա զանազան անուններով հաւաքեցին և բանտարկեցին յեղափոխական և քաղաքական գործիչներին, յետոյ աչքի ընկնող բոլոր մտաւորականներին, գրողներին, փաստաբաններին ու տաղանդաւոր ընտրանին, մինչև անգամ չը խնայելով հանճարեղ Կոմիտասին, հռչակաւոր իրաւաբան Զոհրաբին և տաղանդաբանաստեղծ Սիամանթոյի նման հարիւրաւորների, որոնք նոյնիսկ հեռու էին յեղափոխական-կուսակցական գործունէութիւնից:

***

Տաճկական բանակը, ներշնչւած և սրտապնդւած իրենց «ամենազօր» դաշնակից գերմանացի պաշտպանութեան անսահման խոստումներով, Էնվէր փաշայի ղեկավարութեամբ՝ 1914-ի նոյեմբերի վերջերին յարձակւել էր Կովկասի և նրա նախադուռը կազմող Սարիղամիշ-Կարս-Արդահան-Արդվին գծի վրայ: Այդ յանդուգն, բայց անմիտ յարձակումը վերջացաւ պարծենկոտ և քամի-գլուխ Էնվէր փաշայի չարաչար պարտութեամբ և նրա բանակի՝ Սարիղամիշում ջարդ ու փշուր լինելով:

Այս խայտառակ պարտութեան և ամօթալի փախուստի քաւութեան նոխազը Վասպուրականի հիւսիսարևելեան գաւառների հայ և ասորի ազգաբնակչութիւնն եղաւ:

Կալանքի և բանտարկութեան ենթարկւած բոլոր քիւրտ ու տաճիկ աւազակներին բանտից արձակեցին և նրանց մինչև ատամները զինելով՝ հրահանգեցին կոտորել շրջանի անզէն ու անպաշտպան ազգաբնակչութեանը: Այդ վայրագ հրահանգի հետևանքով Բաշկալէի, Սարայի, Արճակի, Թիմարի գաւառների բազմաթիւ գիւղերում հազարաւոր հայեր կոտորեցին:

Ոճրագործութեան և բարբարոսութեան անարգել և անսահման իրաւունքներով կատաղած թիւրք գաւառապետները Էնվէրի համիարզ Զևդէտի թելադրած և քաջալերած «սրբազան պատերազմի հերոսութեան» տիտղոսին արժանանալու մարմանջով ամենուրեք ձեռնարկեցին հայ ազգաբնակչութեան բնաջնջման ծրագրի գործադրութիւնը: Իրար յետևից կոտորածի դժոխային ծրագիրներ մշակւեցին նաև Հայոց-Ձորի, Մոկսի, Կարճկանի և Գեավաշի հայ ժողովրդի բնաջնջման համար, բայց բարեբախտաբար, այդ նրանց լիովին չը յաջողւեց: Յետոյ կը տեսնենք թէ ինչպէս:

ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ՄԻՆՉԵՒ ԱՊՐԻԼԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

1915 թւի ապրիլ ամսի առաջին օրերն են: Ամենուրեք լարւած, ջղային և անորոշ դրութիւն է տիրում:

Վան նահանգի կուսակալ, ոճրագործ Զևդէտ բէյի կարգադրութեամբ շրջանային բազմաթիւ գաւառներում և գաւառակներում համատարած սարսափ էր սփռւել: Ամենուրեք քիւրտերի և տաճիկ-

ների, տականք-աւազակների, մարդասպանների և ցմահ բանտարկեալ ոճրագործների անմիջական մասնակցութեամբ կոտորածներ էին կազմակերպուել: Հայ տղամարդկանց, զինուորական ծառայութեան անունով նրանց գիւղերից, գործատեղից, դաշտերից և ամէն տեղից բռնոտել և բանակն էին ուղարկել այնտեղում կոտորելու համար:

Ամբողջ մարտ ամսում և ապրիլի սկզբի օրերում Վանի ազգաբնակչութեան սարսափահար անելու միտումով մի քանի զինուորական սողանցքներ էին կազմակերպել: Թնդանօթների, գնդացիրների և ռազմամթերքների ցուցադրութիւնները մասնաւոր խնամքով և խորամանկ տակտիկայով կազմակերպւել էին:

Վանի ազգաբնակչութիւնն իր ղեկավար գլխաւորներից զրկելու և նրան անպաշտպան թողնելու և յուսալքելու համար ամիսներ առաջ տարել և բանտարկել էին հնչակեան կուսակցութեան հինգ աչքառու շէֆերին, որոնց թւում էին Ա. Բրուտեան, Ասօն և Արտ. Սօլախեանը: Ապրիլի 3-ին Ջնդէտը ստոր նենգութեամբ իրեն մօտ հրաւիրեց Իշխանին և նրան յանձնարարեց Վանի ոստիկանապետի ուղեկցութեամբ Շատախ մեկնել և վերջ տալ այնտեղի հայ և թիւրք լարւած և ընդհարումների մերձեցող դրութեանը: Իշխանը, ինքնուրաց նուիրուածութեամբ, իր զինակից քաջերի հետ (Վահան Խէրանեան, Շատախցի Միհրան և Քօթոթ Պողոս) մեկնեց սպառնացող վտանգը կանխելու անկեղծ վճռականութեամբ, բայց ճանապարհին՝ հիրճ գիւղում, իր զինակից ընկերների հետ զոհուեց Ջնդէտի՝ լրբօրէն կազմակերպած ստոր դաւադրութեանը:

Ի տես այս և ուրիշ բազմաթիւ վայրագութիւնների ու անխորտակելի ոչնչացման և բնաջինջ անող կոտորածների՝ Վասպուրականի հայ ազգաբնակչութիւնը կանգնել էր մահու և կենաց երկընտրանքի առաջ, մեռնել ոչխարանման մորթոտուելով կամ էլի մեռնել պատուով և հերոսի մահով ու թերևս վերապրել մի անսպասելի, գերբնական հրաշքով:

ՀՐԱՒԷՐ

Ապրիլի 4-ին՝ կէսօրից յետոյ, մի փոքր միջադէպ տեղի ունեցաւ, որ եթէ այդ օրերում կատարւած չը լինէր, կատարեալ զաւէշտ կարելի էր համարել: Բայց այդ ճգնաժամային սպասման սև օրերում ամենահասարակ միջադէպն անգամ կոշմարային բնոյթ ունէր:

Ժամի 7-ի մօտերը մեր ուսանողական գրադարանը մտաւ մի երիտասարդ: Նախքան ներս մտնելը նա դռնապանի հետ մի փոքր վիճաբանութեան բռնուեց: Դռնապանը, մեր նախազգուշական կարգադրութեան համաձայն, չէր համաձայնւել նրան ներս թողնել:

– Ի՞նչ կայ, Մարկո՛ս,– դուրս նետուեց մեր ընկերներից մէկը:

– Ընկեր Վահան, այս պարոնը պնդում է, որ մեզանից հետ շտապ գործ ունի:

– Թող ներս գա՛յ, տեսնենք:

Երիտասարդը ներս մտաւ և մի քանի րոպէ շփոթւած, պիշ-պիշ մեզ ոտքից գլուխ չափելով՝ ասաց.

– Հէ՜յ, օրհնածնե՛ր, իսկապէս դուք տաքգլուխ երիտասարդ էք: Բա՛, տնաշէններ, այսպիսի խաթաբալա օրերում դու ինչպէ՞ս էս համարձակւում, այսքան շատ, 14-15 հոգով միասին և այն էլ այսպիսի կենտրոնական թաղամասում հաւաքւել: Ա՜յ, խելօքներ, գոնէ մի տեղ հաւաքւէիք, որ ձեր հաւաքոյթից թէկուզ սատանան գլուխ չը հանէր:

– Դու իսկապէս իրաւացի ես,– նրան պատասխանելով ասաց Հրանդը: – Ախը էս մեր տաքգլուխ ընկեր Սիրաքի գործն է, որ այսպիսի մի վտանգալից օր մենք այստեղ ենք հաւաքւել:

Յետոյ անմիջապէս իր խօսքն ուղղելու և ինձ վիրաւորած չը լինելու ցանկութեամբ, աւելացրեց.

– Ընկե՛ր, այստեղ գրադարան-ընթերցարան է: Մենք էլ այստեղ ենք եկել օրւայ նորութիւնները լսելու և վերջին լուրերը կարդալու համար:

– Դէ՛, այդ ձեր գործն է արդէն: Ներողամիտ եղէք դիտողութեանս համար, ես իրաւունք չունեմ նոյնիսկ մի րոպէ ուշանալու: Խնդրում եմ ինձ յայտնէք ձեզնից ո՞ր մէկն է Սիրաքը:

– Ի՞նչ կայ որ: Ձեզ ինչի՞ է պէտք այդ Սիրաքը, մի քիչ անհանգիստ,– հարցրի ես:

– Ես պ. Սիրաքի հետ առանձին գործ ունեմ, ինձի յանձնարարւած է նրան մի շտապ պատգամ տալ:

Խնդրեցի ընկերներից, որ մեզ մենակ թողնեն խորհրդաւոր պատգամաբերի հետ: Ոչ ոք չառարկեց: Երբ մենք երկուքս առանձին մնացինք, նա անմիջապէս յայտնեց.

– Բուլղարացի Գրիգորն ինձ կարգադրել է ձեզ անմիջապէս իրենց մօտ առաջնորդելու: Ժամի 8-ին միջկուսակցական գաղտնի ժողով կայ: Որովհետև ձեր բոլոր գլխաւոր ընկերներին տարել և անյայտացրել են, նպատակայարմար են դատել ձեզ հրաւիրելու: Դուք կարող էք ձեր հայեցողութեամբ, ձեր ընկերներից մէկին ձեզ հետ վերցնել: Կարծում եմ, որ ամէն ինչ հիմա ձեզ համար պարզ է: Չափազանց վատ օրեր ենք ապրում, և թշնամու սուրն ամէն րոպէ մեր գլխավերևումը ճօճում է: Ներկայումս մենք ստիպւած ենք չափազանց զգոյշ լինել, հակառակ պարագային մազապուրծ մնացած մեր մի քանի ղեկավար ընկերներն էլ միւս յափշտակւած և անհետացւած ընկերների դժբախտ ճակատագրին կարժանանան:

Անմիջապէս Աղասի Խանջեանին հետս վերցնելով՝ մեր ուղեցոյցի հետ ճանապարհ ընկանք:

Մեր ուղեցոյցը մեզ Նորաշէն թաղին կից երկրորդական փողոցներից մէկը առաջնորդեց և մի երկ-

յարկանի շէնքի առաջ կանգ առաւ: Փողոցի դրութիւնը զգուշութեամբ ուսումնասիրելուց և վտանգից զերծ լինելու պարագան հաստատելուց յետոյ դռան թակիչով կամացուկ երեք անգամ փոքր ընդհատումներով դուռը բախեց: Ըստ երևոյթին, նախապէս պայմանաւորուած թակոց էր այդ: Համարեայ անմիջապէս դռան յետևից հարցրին.

– Ո՞վ էք և ի՞նչ էք ուզում:

– Սաքօն եմ, շուտ արա, բացիր:

Երկյարկանի տունը, որի առաջ կանգ էինք առել և ներս մտնել էինք ուզում, դրսից, փողոցից համարեայ ամբողջութեամբ մութի մէջ էր կորել, և ոչ ոք չէր կարող ենթադրել, որ դրա ներսում արթուն բնակիչ կարող է լինել: Այդ մռայլ և արկածալից օրերում դա լաւագոյն նախազգուշութիւն էր, որ ձեռք էր առնուած: Մետաղի չոր շրխկոց լսուեց, և դուռը մեր երեսին կիսովին բացուեց: Տասնհարուածեան մաուզէրը, դռնապանի ձեռքում, մեզ դիմաւորեց: Մի անսպասելի սարսուռ անցաւ ինձ վրայ:

– Ա՜յ տղայ իսկական մաուզէրիստ ես եղել: Մի՞թէ անունս չը լսեցիր: Լաւ, բաւական է զէնքդ ցած պահիր: Այս երկու երիտասարդները մեր բարեկամ-գործակիցներն են և պատուի արժանի: Զէնքդ պահիր մի երկու օրից յետոյ թշնամու սիրտը ծակելու համար:

Դռնապան անմիջապէս իր կրակելու պատրաստ տասհարուածները աջից ձախը փոխադրելով և ամբողջ մարմնով ուղղելով, պատուի բարևի կանգնեց: Սաքոյի հետ մենք անմիջապէս ներս անցանք և նրա առաջնորդութեամբ շէնքի յետևի մասը հասանք: Երկրորդ յարկը բարձրանալով՝ մենք մեզի մի աղօտ լոյսով լուսաւորուած և բաւական ընդարձակ սենեակում գտանք:

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Միջկուսակցական խորհրդակցութեան ժողովն սկսուել էր, երբ մենք ներս մտանք: Մեր երկուքից բացի՝ ժողովին ներկայ էին 14 հոգի: Շատերին չէի ճանաչում: Մեր «բարև Ձեզ»-ին բոլոր ժողովականները լռելեան և գլխի շարժումով պատասխանեցին: Աջ թևի պատի կողքին դրուած երկար նստարանի վրայ տեղաւորուեցինք: Ճառախօսը Գրիգոր Բուլղարացին էր: Նա իր ոգևորուած, բայց անաղմուկ ճառը մի բոպէ ընդհատելով, մեզ ներկաներին ծանօթացրեց.

– Ինչպէս տեղեակ էք, դեռ ամիսներ առաջ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան գլխաւորները «հրաւիրուեցին» և բանտ ուղարկուեցին: Մնացածների մէջ մենք ընկ. Հր. Գալիկեանին կը ճանչնայինք, որի առաջարկութեամբ հրաւիրեցինք այս երկու երիտասարդները, որոնցմէ Սիրաքին ալ կը ճանչնամ, բայց միւսը ո՛չ:

Գրիգոր Բուլղարացի (Գրիգոր Կոզյան)

– Մեր երիտասարդ և գործունեայ ընկեր Աղասի Խանջեանին յարգելի ժողովականներին կը ներկայացնեմ, պատասխանեցի ճառախօսին:

– Շատ ուրախալի է, բարով էք եկած, լսեցին ամէն կողմից:

– Մեր կեղծ բարեկամները,– իր ճառը շարունակելով՝ ասաց Բուլղարացին,– թիւրք Էթթէհատ կուսակցութեան ոճրագործ և բարբարոս ղեկավար Թալէաթն ու Էնվէրը, Աղանայի ահռելի ջարդէն վերջ, վճռել են հայութիւնը, մանաւանդ անոր երիտասարդ արիներն անխնայ և վայրագօրէն կոտորել: Արդէն ամենքդ ալ գիտէք, որ այդ դիւային ծրագրի գործադրութիւնը սկսած է: Մեր ազգի բուն արմատը, նրա գոյութեան հիմքն եղող երիտասարդ, գործի եկող տղամարդկանց հաւաքած ու տարած են: Անոնց տարած են, իրենց ասութեամբ թշնամու դէմ կռուելու համար, բայց այդ սրիկաները, խաբեբաները սուտ կը խօսին, անոնց տարած են կոտորելու համար: Այդ անպատկառ, սև հոգի Թալէաթ-Էնվէրի հլու և հարազատ կամակատարը՝ Վասպուրականի նահանգային վալին՝ Ջևդէտ բէյն է: Նա, ինչպէս տեղեակ էք, այս վերջին 2-3 ամիսների ընթացքին, կոտորել ու կացնահար ընել է տուած մեր նահանգի, գաւառների, գաւառակների և գիւղերի հայ և ասորի ազգաբնակչութիւնը: Ինչպէս քիչ առաջ էլ՝ ժողովի բացման ժամանակ, յայտնեցի, երէկ մեզմէ խլած և տարած են մեր յայտնի կուսակցական-հասարակական գործիչ ընկեր Իշխանին և անոր հետ միասին մեր յեղափոխական և անձնուէր

Իշխան (Նիկոլ Պողոսյան)

երեք ընկերները: Այսօրուանից սկսած՝ ամենաուշը մինչև մէկ շաբաթ, հերթը մեզի կը հասնի: Այգեստանի և Քաղաքամիջի մեր ժողովրդի անխնայ կոտորածը ծրագրուած և վճռուած իրողութիւն է: Իմ ունեցած տեղեկութիւնները համառօտ և ամփոփ ձեզ հաղորդեցի: Վճռէք և ըրէք այն, ինչ անհրաժէշտ է, գոնէ Այգեստանի բազմահազար հայութիւնը փրկելու համար:

Ռամկավարների ներկայացուցիչը՝ Արմենակ Եկարեանը, ձայն խնդրելով, մօտաւորապէս հետեւեալը յաղորդեց.

– Յարգելի՛ ժողովականներ, ես ճառախօսելու ընդունակութիւն չ'ունեմ: Կը մտածեմ, որ նման պարագաների տակ պէտք ալ չէ ճառախօսութիւն ընել: Ժամանակը կարճ է և չափազանց սուղ: Խօսքից աւելին մեզի գործ է պէտք: Եթէ կը կամենաք ոչխարների նման մեր դահիճների դանակների տակ զոհուել, այդ տարբեր խնդիր է: Բայց մեր կողմէ կատարեալ դաւաճանութիւն կըլլայ մեր ազգակիցները, մեր քոյրերը, մեր եղբայրներն և վերջապէս մեր կանայքն ու երեխաները, մեր հայրերն ու մայրերը անպաշտպան ձգել այս աւազակ բարբարոսների խղճին ու գութին: Ամէն ինչ մեզ կը ցուցնէ, որ առանց ինքնապաշտպանութեանը լիովին կորած ու ոչնչացած պիտի ըլլանք: Կարճ ու համառօտ կըսեմ, մենք ինքնապաշտպանութեան պէտք է դիմենք: Աւելի երկարացնելն աւելորդ կը համարեմ:

Միջկուսակցական այս ժողովին, բացի կուսակցական ղեկավարներից, հրաւիրած էին նաև մէկ քահանայ՝ տ. Գէորգը՝ առաջնորդական տեղապահի հանգամանքով, և երեք յայտնի հարուստ վաճառականներ՝ Սէթ Գափամաջեանը, Թութունջեանն ու Բուռնուքեան Նազարէթը, որոնց անունները յաճախ լսած, բայց անձամբ մինչ այդ չէի ճանաչում: Նախագահը նրանցից մէկին՝ Սէթ Գափամաճեանին, հրաւիրեց իր կարծիքը յայտնելու:

– Ես ալ պ. Արմենակ Եկարեանի ըսածի նման ճառախօս չեմ: Բացի այդ լաւ գրագէտ ալ չեմ: Ըսելիքներիս վրայ ալ մեծ վստահութիւն չունիմ: Յարգելի պարոն ժողովականները արդեօ՞ք յարմար չէին նկատեր, որ մէկ անգամ ալ հոգևորական ազդեցիկ հայրերից մէկի գլխաւորութեամբ քանի մը վստահելի և անկուսակցական մարդիկ, որպէս հայ ժողովրդի պատգամաւորներ, ուղարկէին սա անպիտան և անկրօն վալու մօտ և անոր վստահեցնէին, որ եթէ ասկից աւելին մեզի նեղացնելու չըլլայ, մենք և մեր ժողովուրդը մեզ հանգիստ կը պահենք և նոյնիսկ նիւթապէս ալ անոր կառավարութեան կօգնենք: Նորէն կը կրկնեմ, որ ես ալ այդ մասին շատ վստահութիւն չ'ունեմ:

Դժգոհութեան փսփսուկներ ծայր տուին: Առաջնորդական տեղապահը ձայն խնդրեց և ասաց.

– Յարգելի պ. Գափամաճեանը մասամբ մը իրաւացի է, բայց կը խորհիմ, որ նա տեղեակ չէ այս վերջի օրերու մէջ կատարուած փորձերու մասին: Դեռ երեք օր առաջ, ես մեր առաջնորդ Եզնիկ վարդապետի քովն էի: Նա Ջնդէտի շատ մտերիմ երկու մարդկանց հետ անոր մօտ գնաց, որպէսզի անոր խնդրէ շրջաններու հայերու կոտորածներու առաջն առնելու համար: Այդ անբարտաւան շունը, առանց անոնց իր պաշտօնարանն ընդունելու նահանգապետական սրահին մէջ Եզնիկ վարդապետի երեսն ի վեր գոռգոռալով, ըսած էր.

«Հեռացի՛ր աչքէս, գնա՛, անհետացի՛ր դաւաճաններու և անհաւատներու պետ: Դուք ապերախտներդ, պատերազմի այս օրերին մեզ մեր թիկունքէն կը հարուածէք: Ձեր կամաւորական գնդերը մեր հայրենասէր զինուորներին աւելի շատ կը կոտորեն, քան ռուս գեավուրները, որոնք մեր դարաւոր թշնամիներն են: Մենք ձեզի շուտով կըցուցնենք, թէ ի՞նչ կը նշանակէ մեր թշնամիներու հետ միանալով՝ մեր անձնուէր զինուորները կոտորելը: Այս երկիրը, մեր Օսմանեան պանծալի կայսրութիւնը մեզ կը պատկանի և ո՛չ թէ ձեզ նման դաւաճան, անհայրենիք հայերուն: Մեր սուրբ պարտականութիւնն է ձեր կեղտոտ գոյութիւնը մեր նուիրական հայրենիքէն մաքրել և միանգամայն ազատել ձեզմէ ու ձեր պաշտպան-բարեկամ ռուս անհաւատ դաւաճաններու միջամտութիւններէն և տևական գլխացաւանքներէն»:

– Այսպէս ուրեմն, յարգելի՛ հայրենակից պ. Գափամաջեան, բոլորովին աւելորդ կըլլայ այս ամէնէն յետոյ անգութէն գութ, դահիճէն ողորմութիւն և արիւնածարաւ գազանէն ազատութիւն հայցել: Մեզ բոլորիս համար միայն մէկ ճանապարհ կը մնայ,

այդ էլ, ինչպէս յարգելի ճառախօսները յայտնեցին, ինքնապաշտպանութեան ճանապարհն է: Ես, ինչպէս այստեղ եղողները, շատ լաւ կ'ըմբռնեն գործի էութիւնն ու դժարութիւնը, բայց ի՞նչ կրնանք ընել: Սա մեր դժբախտ ժողովրդի ճակատագիրն է: Կասկած չ'ունիմ, որ այդ անգութ գազանները մեզմէ ոչ մէկին չեն խնայելու և ծրագրած են մեզի կոտորելու, այն էլ տմարդի և աւազակային ձևերով, ինչպէս մինչև այժմ կոտորած են այս նահանգի բազմաթիւ գաւառներու ու գաւառակներու և գիւղերու հազարաւոր հայերը: Ինչու՞ ուրեմն թողնենք, որ մեր անխիղճ թշնամին մեզ էլ անլեզու ու անպաշտպան ոչխարների նման կոտորէ: Մի՞թէ մեր երակներու մէջ նոյն հայ ազգի արիւնը գոյութիւն չ'ունի, ինչ կար ու կը հոսէր քսան տարի առաջ, 95-96-ի Վանի դէպքերու ժամանակ և դարեր առաջ, երբ այս նոյն հայ ժողովուրդը Մեծ Վարդան զօրավարի և Ղևոնդ երեցի առաջնորդութեան կը պայքարէր, կը ճակատամարտէր անկրօնների դէմ: Թող մենք ալ մեռնենք պատուաւոր մահով, հերոսի անմեռ մահով և նոյն այն մահով, որով մեռան մեր ազգի հերոսները, մեր ազգի ազատութեան համար զոհուող քաջերը:

Առաջնորդական տեղապահ տ. Գէորգի ճառը չափազանց ազդեցիկ էր: Ժողովականներն եկան այն եզրակացութեանը, որ բացի ինքնապաշտպանութեան ձեռնարկելը, ուրիշ ելք չէր մնում: Նախագահը, որն ժողովի առաջին ճառախօսը՝ Գրիգոր Բուլղարացին էր, աւելի շուտ էթիքէթի պահպանման տեսակէտից նախ ժողովականներից հարցրեց որևէ ասելիք կամ առաջարկ ունե՞ն, ապա իր խօսքը մեզ ուղղելով՝ հարցրեց.

– Հերթը ձերն է, երիտասա՛րդ ընկերներ. արդեօ՞ք որևէ ասելիք ունիք, թէ՞ ոչ: Մեր այսօրուայ ժողովի վճիռը չափազանց կենսական նշանակութիւն ունի: Մեր լինել չը լինելու, մեր գոյութեան յարատևման կամ ոչնչացման ծանրակշիռ հարցն է մէջտեղ դրուած, այնպէս որ մեզմէ ամէն մէկը լրիւ և կատարեալ իրաւունք ունի իր մտածմունքը, իր յարմար դատած եզրակացութիւնը յայտնելու:

– Ինչ որ պէտք էր ասուեց արդէն: Մեր կողմից աւելացնելիք ոչինչ ունենք,– պատասխանեցի ես: Մեր ցանկութիւնն ու նպատակը ձերինից տարբեր չէ: Մենք ամէնքս ալ ներկայ պայմանների մէջ մէկ նպատակ, մէկ ձգտում ունինք: Ինչով որ կարող ենք, պիտի պայքարենք մեր ժողովրդի փրկութեան համար, և եթէ մեզ վիճակուած է մեռնել, գոնէ պատուով մեռնենք:

Ժողովը փակուած յայտարարուեց: Նախագահը ժողովականներից խնդրեց յաջորդ օրը նոյն տեղում և ժամը 8-ին ներկայանալ՝ ընտրելու համար պատերազմական կենտրոնական կոմիտէն և միւս օժանդակ, գործի համար անհրաժէշտ սեկցիաները: Ժողովականներին յանձնարարուեց, նկատի ունենալով ծայրահեղ տագնապալից դրութիւնը, լինել չափազանց զգոյշ և մանաւանդ գաղտնապահ:

ԱՋՆԻՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՒ ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Ժողովասրահից դուրս գալու ժամանակ, երբ Աղասու հետ օրուայ տագնապի և վերահաս սարսափելի աղէտի մասին էինք խօսում, իմ աջ թևս գրկուեց: Նայեցի, Բուլղարացի Գրիգորն էր: Նա սկսեց մի շատ մտերմիկ մեղադրանք:

– Սիրա՜ք, ա՜յ օղուլ, այդ ինչպէս է, որ դու ամիսներից ի վեր, քու այնքան մօտ և մտերիմ բարեկամիդ այցելութեան չես գար: Նա շատ յաճախ քեզ կը յիշէ և կը կարօտի: Մարօն շատ անգամներ ձեր տունն է եկած, բայց քեզ տանը չէ գտած: Նա յաճախ կը կրկնէ, որ իր մօրմէ զատ՝ մէկ եղբայր և մէկ հատ ալ քոյր ունի, որ դու ես և քու քոյրը: Ինչպէ՞ս կարելի է այդպես խորթ ու անտարբեր ըլլալ նման հարազատ բարեկամի մը հանդէպ:

– Պ. Բուլղարացի, դուք շատ իրաւացի էք: Ես, իհարկէ, այդ խնդրի վերաբերեալ մեղաւոր եմ, բայց գիտէք ատոր պատճառը... յետոյ սկսեցի բառերս ծամծմել, որից, իհարկէ նա չէր կարող ոչինչ հասկանալ և անկեղծաբար ու շեշտակի հարցրեց.

– Օղո՛ւլ, ինչու՞ կամչնաս ու կը քաշուիս: Պարզն ասա, նայիմ՝ ի՞նչն է պատճառը:

– Ես կը մտածէի, քանի որ ձեր կուսակիցներից չեմ, կարող է պատահել, որ իմ ներկայութիւնը ձեր տանը, ձեզ համար այնքան էլ հաճելի չը թւի:

– Վա՜յ, բաբամ, վա՜յ, օղո՛ւլ, այդ կերպ մտքեր ընելը քեզ կը սազի: Բա՜ այդ խօսքերն ամօթ չէ ըսելը: Մարօն միշտ ըսած է ինձ, որ դու իր անկեղծ և սիրելի բարեկամն ես, որ դու նրա եղբայրն ես: Նորէն կը կրկնեմ, որ այդ խօսքերն ու մտքերը քեզ նման մէկ երիտասարդի չի սազեր: Ի՞նչ կուսակից և ո՜չ կուսակից կարող է ըլլալ հայ մարդկանց համար:

Ապա մի փոքր ընդմիջումից յետոյ, աւելացրեց.

– Սիրա՛ք, տղա՛ս, եթէ ինձ հարցնելու ըլլաս, սա դաշնակցական, հնչակեան չեմ գիտեր, արմենական և ռամկավար կոչուած անունները պարապ խօսքեր են: Մենք հալածուած և կեղեքուած փոքր ազգ մըն ենք: Մենք ամէնքս պէտք է մէկ սիրտ մէկ հոգի ըլլանք: Մենք բոլորս պէտք է միանանք, իրար հետ դաշնակցենք և միայն մէկ կուսակցութիւն ունենանք, այն էլ ազգի կուսակցութիւն, ազգի ազատութեան և հայրենիքի փրկութեան կուսակցութիւնը: Տեսնում ես, այսօր-վաղը կամ մէկ քանի օր յետոյ, կարող է պատահել, որ տաճիկ բարբարոսները մեզի մորթոտեն, մեր հայրերն ու մայրերը, մեր քոյրերն ու եղբայրները կոտորեն և մեր կինն ու երեխաները առևանգեն ու կրօնափոխ ընեն և այդպիսով մեր հարազատ օջախների կրակը իսպառ մարեն, իսկ մենք, մենք թշուառներս տասնեակ տարիներէ ի վեր կուսակցութիւններ կը սարքենք և իրարու կոկորդը պատռենք: Կը ցաւիմ և շատ կ'ափսոսամ, որ իմ այս խօսքերը ժամանակին չեն ցանկա-

ցած լսել... Վաղն աշխատիր մեզ մօտ գալ: Մարօն շատ կ'ուրախանայ, իսկ ես դեռ քեզ ասելիք շատ խօսքեր ունիմ: Ներողութիւն, այս գիշեր մեր ինքնապաշտպանութեան համար շտապ գործ ունիմ կարգադրելու:

Նրա շատ մտերմական մօտեցումը և անկեղծօրէն ու սրտի խորքից արտայայտած մտքերը մի քանի րոպէ ինձ շշմեցրին: Այս Բուլղարացի կոչուած Գրիգորը, բացի լաւ յեղափոխական լինելը, մաքրարիւն հայ և անկեղծ ու իսկական հայրենասէր է եղել: Իսկ մի՞թէ նրա մտքերն ու ապրումները միանգամայն իրաւացի և ճշգրիտ չեն: Իսկապէս, մեզ նման հալածուած, իրաւազրկուած բռնութիւնների և կոտորածների մշտական կոշմարի տակ սարսափահար շնչող մի փոքր ազգի համար ինչի՞ են պէտք այս բոլոր իրարամերժ կուսակցութիւնները: Մի՞թէ Բուլղարացին իրաւացի չէ, երբ ասում է. «Մեզ մէկ կուսակցութիւն է պէտք, այն էլ Ազգի կուսակցութիւն, հայրենիքի, հայ ժողովրդի փրկութեան և ազատագրման կուսակցութիւնը...»:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԻՄ ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Յաջորդ առաւօտեան՝ ժամի 9-ին, Բուլղարացի Գրիգորի սիրալիր հրաւէրից յետոյ, աճապարեցի իմ մանկութեան և պատանեկութեան ամենասիրելի և ամենալաւ բարեկամի՝ Մարօի մօտ այցելութեան գնալ: Դռան սեմին ինձ հանդիպելուն պէս նրա ուրախութիւնն այնքան մեծ եղաւ, որ տարերօրէն և անզուսպ գիրկս նետուելով, բազմաթիւ անգամ երեսս ու ճակատս համբուրեց:

– Ա՜խ, իմ սիրելի՛ Սիրաք, բա մեր տարիների հարազատութիւնն ու մտերմութիւնը պէտք էր այսպիսի վերջաւորութիւն ունենար, որ մենք ի վիճակի չը լինէինք երկար ամիսներից ի վեր իրարու հանդիպելու և մեր կարօտն առնելու: Մի՞թէ մոռացել ես, որ ինձ քու քոյրն էիր անուանում և քու ասելով ինձ Արաքսու նման սիրում էիր: Ուրեմն ինչպէ՞ս եղաւ, որ այսքան ժամանակ ինձ մոռացութեան ես տուել:

– Սիրելի՛ Մարօ, ես ինչպէ՞ս կարող եմ քեզ մոռացութեան տալ: Միթէ որևէ մէկը կարող է իր քրոջը, այն էլ քեզ նման աննման և անգին քրոջը մոռանալ: Դու ինձ համար ոչ միայն քոյր, այլ մայր, խնամակալ, դաստիարակչուհի, էլ ինչ իմանամ, ամէն ինչ ես եղել: Ես քեզ երբէք, երբէք մոռանալ չեմ կարող: Ես միշտ կը շարունակեմ քեզ հարազատ քրոջ նման սիրել:

Թեւս գրկած՝ ինձ առաջնորդեց իրենց ճաշարանը: Ապա յանկարծ հարցրեց.

– Իսկ Արաքսին քեզ ասե՞լ է, և դու իմացե՞լ ես, հիմա 3 ամսականնոց մի սիրունիկ մանչ երեխայ ունեմ,– և իմ պատասխանին չ'սպասելով՝ ինձ քաշ տուեց իրենց ննջարանը: Մարօի համեստ տնակի մաքրութիւնն ու կանոնաւորութիւնը ինձ շշմեցրել էր: Իսկապէս այդ աղջիկը մի կատարեալ բացառութիւն էր: Նա ծայրահեղօրէն մաքրասէր և կարգ ու կանոնի սիրահար էր: Ոչ ոք չէր կարող իմանալ, թէ այդ բացառիկ ընդունակութիւններին ինչպէս էր տիրացել իր թշուառ ընտանիքում, իր կորաքամակ, սմքած և ոսկրացած մօր մօտը:

Իր օրօրոցում մուշ-մուշ քնել էր Մարօի նորածին բալէն: Սիրուն էր, ինչպէս ինքը՝ Մարօն: Ուրախութիւնից և երջանկութիւնից Մարօն փայլփլում էր: Նրա անսահման ուրախութեանն ես էլ հաղորդակից էի եղել և ինձ մոռացութեան էի մատնել: Մտքումս ես կլանուած էի այն երջանիկ ժամերի վերապրումով, երբ ես և նա մեր պարտիզում խաղում, վազվզում էինք, և երբ ես յոգնում էի, նրանից խնդրում էի նստել և իմ գլուխն իր ծնկներին դնելով, ինձ շոյել, փայփայել, համբուրել... Չէ՞ որ այդ ժամանակներում ես մայրական, հարազատ, անխառն սիրոյ այրող կարօտն էի քաշում և այդ կարօտով ջերմում և մաշւում էի:

Չարաճճիօրէն ինձ հետ կատակելով, մի անգամ էլ ինձ համբուրելով՝ Մարօն նորից հարցրեց:

– Սիրաք, ասա՛ տեսնեմ, ինչի՞ համար, ի՞նչ պատճառով այսպէս ինձ միանգամայն մոռացար: Ի՞նչ եմ արել քեզ, կամ ի՞նչ է պատահել քեզ հետ: Սիրա՛ք, եթէ նոյնիսկ մի գեղեցիկ և հետաքրքիր աղջկայ ճարած լինես, նորից իրաւունք չունես ինձ մոռանալու, որովհետև դու իսկական հարազատի նման իմ սրտում տեղ ունես: Մի մոռանայ իմ քեզ հետ անցկացրած մանկութեան երջանիկ օրերը:

– Մարօ՛, սիրելի՛ս, դու ինձ ամաչեցնում և շփոթութեան ես մատնում: Ես քեզ երբէք չեմ մոռացել և նախկինի պէս, գուցէ աւելի շատ եմ քեզ սիրում: Մինչև հիմա ոչ մի աղջիկ ինձ չի պատահել և չի հետաքրքրել: Նախ որ մինչ այժմ ես ժամանակ իսկ չեմ ունեցել այդ առթիւ մտածելու: Քու ամուսնուց կը հետաքրքրուես և գլուխ քորելու հնարաւորութիւն իսկ չեմ ունեցել: Ամբողջ արթուն ժամերս կա՛մ դպրոցին, կա՛մ կազմակերպչական-հասարակական գործերիս եմ նուիրել:

Մի քիչ յետոյ անդրադառնալով Գրիգորի բացակայութիւնը՝ հարցրի.

– Մարօ՛ ու՜ր է ամուսինդ: Նա ինձ խոստացել էր այսօր ձեր տնում տեսակցել: Մի փոքր սպասելուց յետոյ աւելացրի.

– Մարօ, գիտե՛ս, դու քեզ շատ բախտաւոր պիտի համարես Բուլղարացու նման մի շատ ազնիւ ամուսին ունենալուդ համար:

– Միանգամայն իրաւացի ես, ես շատ երջանիկ եմ համարում ինձ Գրիգորիս նման ամուսին ունենալուս համար: Ինչ վերաբերում է նրա բացակայութեանը, երէկ գիշեր նա շատ ուշ վերադարձաւ: Չափազանց յոգնած էր զգում իրեն: Այս վերջերս շատ քիչ է քնում: Ամբողջ ժամանակ իր կուսակցա-

կան գործերովն է զբաղուած: Քնելիս էլ շատ անհանգիստ է քնում: Առաւօտեանը հազիւ մի քանի րոպէ նախաճաշի նստեց և ասաց, որ արտակարգ գործեր ունի:

– Այո՛, ճիշտ է ասում: Դրութիւնը չափազանց լուրջ է: Կարող է պատահել՝ այս երկու-երեք օրերում դրութիւնը աւելի ևս մթագնի: Մենք այս օրերում ամէն վայրկեան թիւրքերի յարձակման և կոտորածի վտանգի կոշմարն ենք ապրում:

– Իսկապէ՞ս, Սիրա՛ք, մենք ի՞նչ պիտի անենք: Հազիւհազ մեզ յաջողուեց մի տարի համեմատաբար հանգիստ շունչ քաշել: Ներկայիս ես երջանիկ եմ իմ ընտանիքով և մանաւանդ իմ 3 ամսական Կորիւնով: Ուրեմն մենք իրաւունք չունե՞նք գոնէ մի առժամանակ մի քիչ երջանիկ ապրելու և կեանքի քաղցրութիւնը զգալու: Ախը մենք ինչո՞վ ենք մեղաւոր: Ում ի՞նչ վատութիւն ենք արել: Ո՞վ է մեզ անիծել, որ չենք կարող մի հանգիստ օր ու արև վայելել:

Նկատեցի, որ Մարօն փոթորկալից ծովում խեղդուողի նման սարսափահար եղած չափազանց գունատուեց: Նրա համար իհարկէ շատ և շատ թանկ էր իր ներկայ կենցաղն ու մանաւանդ իր պաշտելի փոքրիկ երեխան: Ես անգիտակցաբար մթագնեցի նրա անսահման երջանկութիւնը՝ նրան վաղուայ սարսափելի աղէտի մասին տեղեկացնելով: Ըստ երևոյթին ամուսինը նրան փոթորկուող կատաստրոֆի մասին ոչինչ չէր ասել: Մի քանի րոպէ առաջ կատարեալ երջանկութեամբ շողշողացող Մարօն տխրել, մթագնել և արտասուալից էր դառել: Փորձեցի սխալս ուղղել և նրան յուսադրել.

– Մարո՛, իմ սիրելի՛ Մարո, զուր ես այդքան տխրում և յուսալքւում: Մեզ՝ Այգեստանի հայերիս համար փրկութեան մեծ յոյսեր կան: Տաճիկները չեն համարձակուի մեզ վրայ յարձակուելու: Մենք մեզ պաշտպանելու ամէն հնարաւորութիւն և միջոցներն ունենք: Մի քիչ առաջ ես կատակ արի: Ուզեցի քու քաջութեան աստիճանը փորձել: Ափսո՜ս, որ փոքր հասակիդ վախկոտութիւնը դեռ քեզնից ձեռք չի քաշել: Սրանից յետոյ կաշխատեմ շաբաթը մէկ-երկու անգամ քեզ մօտ գալ: Սրանից յետոյ իմ գործերն աւելի թեթև են լինելու:

Վերջին անգամ, մի անգամ ևս, ջերմագին ողջագուրուելով, իրարից բաժանուեցինք:

ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ՎՃՌԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլ 5-ի երեկոյեան ժամի 8-ին, նախկին գիշերուայ սրահում, տեղի ունեցաւ միջկուսակցականի, կամ, ինչպէս որոշուեց նրան անուանել, Այգեստանի Ինքնապաշտպանութեան Կենտրոնական Կոմիտէի երկրորդ և վճռական նիստը: Բոլոր ժողովականների կեցուածքը, դէմքը, արտայայտութիւնը

Հովհաննես Կուլոոլեան

ծանրօրէն տագնապալից էր: Ժողովասրահի ձախ անկիւնից մէկն առաջարկեց:

– Յովհաննէս Կուլօոլեանը թող նեղութիւն քաշի այսօրուայ նիստին նախագահելու:

Միւսները երկրորդեցին եղած առաջարկը:

Ոտքի կանգնեց հին յեղափոխական Արմենականը՝ 96 թի զուլումների և կոտորածների կենդանի վկայ և նրանց դիւցազներգող-ողբերգակ բանաստեղծ Յովհաննէս Կուլօոլեանը:

– Շնորհակալ եմ ձեր ամէնքի՝ իմ նկատմամբ տածած գնահատանքի և հաւատքի համար: Այս վերջին քանի օրերուն և մանաւանդ երէկ գիշերանէ սկսած եմ հաւատալ, որ մենք ամէնքս միևնոյն ցանկութեամբ և մտասևեռումով տոգորուած ենք: Ամէն ինչ, ամէն հնարաւորը պէտք է ընել իրականացնելու համար մեր ինքնապաշտպանութեան նուիրական և սրբազան պարտականութեան անթերի կատարումը:

– Ինչ խօսք, որ սոյն ինքնապաշտպանութեան գաղափարը, չնայած չափազանց նուիրական է, բայց իրականութեան մէջ, կամաւոր, գիտակցական ինքնազոհում է: Մենք կուելու ենք լաւ գիտակցելով, որ մեր պայքարը կենաց ու մահու կռիւ է: Չեմ չափազանցներ, եթէ ըսելու լինեմ, որ մեզմէ ամէն ոք կը գիտակցէ, որ կամովին և անձնուիրաբար մահն է գրկում: Ի՞նչ կարող ենք ընել: Մեզմէ ամէն մէկը կասկած անգամ չ'ունի, որ ազնիւ, արդար այս

պայքարի մէջ ինքնազոհման կը դիմէ, բայց միաժամանակ գիտէ և համոզուած է, որ ուրիշ ելք, ուրիշ փրկութիւն չ'ունի: Չնայած որ կատարեալ յօժարակամութեամբ և գիտակցութեամբ մահուան կը դիմենք, բայց մէկ անխախտ և վճռական համոզում ունենք, որ զոհուելու ենք քաջաբար, ինքնակամ և մեռնելու ենք մէկ ազնիւ գաղափարի համար, մեր ժողովրդի, մեր ազգի արդար դատի պաշտպանութեան և անոր ապագայ սերնդի ազատ և պատուաւոր գոյութեան համար: Այո՛, մենք կը զոհւինք ազնիւ և հերոս ժողովրդի մը քաջ զաւակներու մահով, բայց կ'ապացուցենք, որ մեր տմարդի և բարբարոս թշնամին ալ պիտի խեղդի մեր վրիժառու արեան հեղեղին մէջ: Մենք կը զոհուենք մեր ազգի գոյութեան պաշտպանութեան և մեր հայրենիքի, մեր բռնագրաւուած հողի ու օջախի ազատագրման համար: Կեցցէ՜ հայ ազգը: Կեցցէ՜ անոր լուսաւոր ապագան: Նկատի ունենալով, որ մեր ամէն մէկ վայրկեանը ինքնապաշտպանութեան գործի տեսակէտէն շատ թանկ է, կառաջարկեմ անմիջապէս ընտրել այս Կենտրոնական Կոմիտէի Պատերազմական մարմինն ու անհրաժէշտ օժանդակ մարմինները: Ստիպած եմ խոստովանելու, որ մենք շատ ուշացած ենք մեր ինքնապաշտպանութեան շտապ գործողութիւններու մէջ, մինչդեռ մեր բնաջնջման ծրագիրն ու նրա գործադրութեան եղանակներն արդէն ուսումնասիրած և պատրաստած են:

Մտքերի շտապ փոխանակումից յետոյ համարեա առանց վիճաբանութեան և առարկութեան նախ ընտրուեց Պատերազմական Մարմին կամ շտաբ, հետևեալ անձնաւորութիւններից՝ Գրիգոր Բուլղարացի, Արմենակ Եկարեան, Յովհաննէս Կուլօղլեան, Փանոս Թէրլէմէզեան[24] և պրոֆեսոր Միքայէլ Մինասեան: Փոխանդամների շարքումն

Փանոս Թերլեմեզյան

էին Հր. Գալիկեանը, Դաւիթ Փափազեանն և Լ. Շաղոյեանը, որը ստիպած եղաւ հէնց նոյն գիշերը մեկնել Փէսանդաշտ, այնտեղի ինքնապաշտպանութեան ղեկավարութիւնը ստանձնելու համար: Զինուորական շտաբը, անհրաժէշտ պարագաներում խորհրդակցելու էր Արամ Մանուկեանի հետ:

Ապա որոշուեցին հետևեալ օժանդակ մարմինները կամ սեկցիաները:

Հայթայթիչ սեկցիա, որի պարտականութիւնը պիտի լինէր կենսամթերքներ հայթայթել և առա-

24 **Փանոս Թերլեմեզյանը** ծնվել է Վանում 1867 թ. (այլ տեղեկության համաձայն՝ 1865 թ.): Տարրական կրթությունը Հանկուսներ թաղի ծխական դպրոցում ստանալուց հետո 1881-1886 թթ. ուսումը շարունակել է Վանի Կենտրոնական վարժարանում: 1880-ական թթ. վերջերին Փանոսն արդեն արմենական դրոշի ներքո գործող հեղափոխական էր: 1890-ին Սալմաստի վրայով զենք ու հեղափոխական գրականություն փոխադրելու ձեռնարկի մեջ բռնվում է ու բանտարկվում: Ազատվելով նորից լծվում է հեղափոխական աշխատանքի: 1892 թ. Շատախի Ծիծանց գյուղում մի քանի ընկերների հետ մասնակցում է գավառի հայության գլխին պատուհաս դարձած գրավ-ցի քուրդ Շաքիրի ահաբեկման գործողությանը. սպանվում են մի քանի քրդեր, բայց Շաքիրը հաջողում է մազապուրծ փախչել: Վան վերադարձի ճանապարհին խումբը ընդհարվում է նաև ոստիկանության հետ և սպանում երկու ոստիկանի: Դրանից հետո կառավարությունը մահվան դատավճիռ է կայացնում Փանոսի համար, որը ստիպված Պարսկաստանի վրայով հեռանում է Վանից ու Կովկասի վրայով հասնում Պետերբուրգ նկարչություն սովորելու նպատակով: Երկու տարի անց թուրքական կառավարության ցուցմունքով Պետերբուրգում Փանոսը ձերբակալվում է, սակայն իբրև պարսկահպատակ՝ Պարսկաստանի դեսպանի երաշխավորությամբ ազատվում է և աքսորվում Պարսկաստան: Թավրիզից Փանոսին հաջողվում է անցնել Փարիզ, որտեղ ընդունվում է նկարչական ակադեմիա: Այստեղ մասնակցում է նկարչական զանազան ցուցահանդեսների, շահում է բազմաթիվ մրցանակներ և կարճ ժամանակում ձեռք բերում հայտնի նկարչի համբավ: Նկարչական արվեստում կատարելագործվելու համար տաղանդաշատ վանեցուն դրամական նպաստ է հատկացնում Խրիմյան Հայրիկը: Վերադառնալով Կովկաս Թերլեմեզյանը միաժամանակ նկարչություն է դասավանդում Թիֆլիսի Ներսիսյան և Հովնանյան դպրոցներում: Այնուհետև կրկին անցնում է Փարիզ, իսկ Օսմանյան Սահմանադրության հաստատումից հետո՝ Կոստանդնուպոլիս և նվիրվում նկարչությանը: 1913 թ. Գերմանիայի Մյունխեն քաղաքում կայացած նկարչական ցուցահանդեսում Փանոսի նկարները շահում են ոսկե մեդալ: 1914 թ. վերադառնում է Վան՝ հայրենի տեսարաններ նկարելու մտադրությամբ: 1915-ի ապրիլյան հերոսամարտի օրերին Թերլեմեզյանը զենքը ձեռքին կարևոր դեր է կատարում Այգեստանի Զինվորական Մարմնում: Ցավոք, նրա նկարների մի կարևոր մասը կորչում է վանեցիների առաջին գաղթի ընթացքում: 1916-1918 թթ. Թերլեմեզյանն անց է կացնում Արևելյան Հայաստանում, 1919-ին անցնում Կ. Պոլիս, 1922-ին Փարիզ, ապա՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ և վերջապես 1928-ից վերջնականապես հաստատվում է Երևանում: Վախճանվել է 1941 թ. Երևանում:

ջին հերթին ուտելիք հասցնել դիրքերում կռուող զինուորներին, ապա ըստ հնարաւորութեան պարէնով օգնել Այգեստան փախչող շրջանների անտուն և անտէր հայ ազգաբնակչութեանը: Հայթայթիչ մարմինն իր տրամադրութեան տակ ունենալու էր փուռեր և խոհանոցներ, որոնց անհրաժէշտ ալիւրն ու մսացուն հայթայթելու էր զանազան միջոցներով:

Նպաստամատոյց սեկցիա. օժանդակելու էր հայթայթիչ մարմնին և Այգեստանի ունևոր և միջակ խաւերից հաւաքելու և ամբարելու էր անհրաժեշտ կենսամթերքները: Յայտնի վաճառականներից Ս. Գափամաջեանը սրա նախագահն էր:

Առողջապահական սեկցիա, որի տրամադրութեան տակն էր լինելու Հայկական Կարմիր Խաչը իր բոլոր դեղօրայքով, վիրաբուժական գործիքներով, փոխադրական միջոցներով, հիւանդանոցով և առաջին օգնութեան մի քանի կայաններով: Այս սեկցիան գործելու էր դոքտոր Սան-Ֆանի-ի (Խոսրով Չիթունի) ղեկավարութեամբ և դոքտ. Խաչիկի օգնականութեամբ:

Պլանային և ամրաշէն մարմինը. այս յանձնախումբը ինքնապաշտպանութեան օրերին, արտակարգօրէն կարևոր աշխատանքներ էր կատարելու: Շուրջ 400-500 որմնադիրներ, գետնափոր բանւորներ, կառուցող արհեստաւորներ իր տրամադրութեան ներքև ունենալով՝ անմիջապէս պիտի վերաշինէր քանդուած դիրքերը, կռուողների համար խրամներ պիտի փորէր և ընդյատակեայ թունէլ-անցքեր պիտի սարքէր դիրքերի հաղորդակցութեան և իրարամէջ-փոխադարձ օգնութեան համար: Այս կազմակերպութեան անձնուէր աշխատաւոր վարպետների և հայրենասէր բանւորների փորած ներքնուղիներով և ընդյատակեայ թունէլ-անցքերովն էր, որ հնարաւոր պիտի լինէր պայթեցնել և օդը հանել Այգեստանի կրծքին նստած և նրա ինքնապաշտպանութեան գործը վտանգող թշնամու զօրանոցները: Այս սեկցիայի, աւելի ճիշտ կը լինէր ասել, կազմակերպութեան եռանդուն և ամէն գնահատանքի արժանի գլխաւորներն էին Շաւարշ Հովիւեան, Ազատ Խորէնեան և Գր. Պանիրլեան:

Տեխնիկական և զինաբաշխական սեկցիաներ. ինքնապաշտպանութեան օրերում այս երկու յանձնախմբի գործունէութիւնը փրկարար դեր էր կատարելու: Առաջին յանձնախումբը պրոֆ. Միքայէլ Մինասեանի ղեկավարութեամբ մասնաւոր արհեստանոցում գլխաւորապէս զբաղուած էր լինելու վառօդի պատրաստութեամբ: Այս գործում պրոֆեսորին օգնելու էր Երամեան դպրոցի մաթեմաթիկայի և քիմիայի ուսուցիչ Մամբրէ Մկրեանը: Զինաբաշխման յանձնախումբ էլ իր հերթին, անգնահատելի աշխատանք կատարելու էր նրա տրամադրութեան տակ եղող զինագործարանում գործից ընկած և անպէտքացած բոլոր զէնքերը նորոգելով: Զինաբաշխական յանձնախմբի և զինագործարանի անդամներն էին Դաւիթ Փափազեանը, Մարգար Ղարիբջանեանը, Ա. Բոռոզանջեանը, Կար. Բէգլարեանն ու Գաբրիէլ Աճէմեանը:

Պրոպագանդի և տեղեկատու սեկցիան. բաղկացած էր Յովհ. Կուլօղլեանից, Ա. Խանջեանից, Օնիկ Մխիթարեանից, Արմ. Փոխարեանից:

Այս յանձնախմբի պարտականութիւնը պիտի լինէր հերթական կոչերով (խմորատիպ) և տեղեկութիւններով դիրքերում կռուող զինուորներին և ընդհանրապէս ժողովրդին տեղեակ պահել տարուող պայքարից, դիրքապահների դիմադրական քաջագործութիւններից, իրենց հայրենակիցների փրկութեան համար ծանր վիրաւորուած կամ մեռած անմահների հերոսութիւններից և մանաւանդ քաջալերել և խրախուսել մարտնչողներին և ինքնապաշտպանութեան ամէն մարզերում անձնուրացօրէն աշխատող բազմութիւններին:

Ի վերջոյ անհրաժէշտ համարուեց նշանակել նաև **դատական և քաղաքապետական մարմիններ**: Դատական մարմնում ընտրուեցին Հրանդ Գալիկեանն ու Ռուբէն Շատաւորեանը: Քաղաքապետական մարմնում նշանակուեցին Պետրոս Մօզեանը, Ղևոնդ Խանջեանն ու Խաչիկ Զինօեանը:

Գրիգոր Բուլղարացու առաջարկութեամբ և ժողովականների հաւանութեամբ **հայթայթիչ և նպաստամատոյց մարմինների տրամադրութեան ներքև կազմուելիք բոլոր պահեստների ու պարէնների բաշխման անմիջական հսկողութիւնը** յանձնուեց ինձի: Նորից Գրիգորի առաջարկութեամբ կարգադրուեց սեկցիաներին անմիջապէս ժողովի նստել և որոշել իւրաքանչիւր յանձնախմբի անյապաղ ձեռնարկելիք աշխատանքն ու նրա գործունեութեան ձևերը:

Պատերազմական շտաբն էլ իր հերթին անմիջապէս գործի անցաւ և մինչև ժամի 2-ը, կէսգիշերից անց, որոշեց Այգեստանի պաշտպանողական դիրքերը, դիրքապահ մարտիկներն ու ամէն մէկ դիրքի և պաշտպանութեան կենտրոնի դիրքապետներն ու օգնականները:

ԱՀԱՋԱՆԳՆ ՈՒ ՃԳՆԱԺԱՄԸ

Միջկուսակցական երկրորդ ժողովից անմիջապէս յետոյ՝ գիշերուայ ժամի տաս և կիսից սկսած, Ինքնապաշտպանութեան Կենտրոնական Կոմիտէն՝ իր զինուորական շտաբով և բոլոր սեկցիաներով, սկսել էր իր տենդագին աշխատանքը:

Զինուորական շտաբը զինաբաշխական սեկցիայի օգնութեամբ բազմաթիւ պրպտումներից և ստուգումներից յետոյ կազմեց զանազան տեղերում թաքցրուած տների ու այգիների նկուղներում և անկիւններում պահուած ամէն տեսակի զէնքերի ու ատրճանակների, բազմահարուածների ցուցակները, ինչպէս նաև վառօդի և փամփուշտների քանակը:

Ինքնապաշտպանութեան պլանային սեկցիայի համագործակցութեամբ շտաբը նոյն գիշերուայ ընթացքում գծագրել և վերջացրել էր ինքնապաշտպանութեան գծերն ու որոշել էր դիրքերի վայրերը:

Այգեստանի ինքնապաշտպանութեան և դիմադրութեան ծրագիրը ներառում էր հինգ գլխաւոր շրջաններ, որոնցից ամէն մէկն ունէր 12-20 դիրքեր, իրենց դիրքապահ խմբերով, դիրքապետներով և օգնականներով: Այս հինգ շրջաններն ենթարկւում էին իրենց շրջանապետներին, իսկ այս վերջինները կենտրոնական ինքնապաշտպանութեան շտաբին: Դիրքերի կարևորութեանը, կամ աւելի ճիշտ կը լինէր ասել, խոցելիութեան հաշւով որոշւել էր դիրքապահների քանակն ու որակը և նրանց տրուած զէնքերի քանակն ու տեսակը: Յաճախ վտանգած դիրքերին օգնութեան հասնելու էին մէկ կամ երկու օժանդակ խմբեր, որոնք կազմւել էին 14-18 տարեկան խիզախ և յանդուգն պատանիներից: Պաշտպանութեան սահմանային գծերն ու բոլոր դիրքերը որոշելիս կատարւել էր մանրակրկիտ և խիստ ուշադիր քննութիւն՝ նպատակ ունենալով, ըստ հնարաւորութեան, խոցելի և շատ վտանգաւոր կէտերը չը ներառել ինքնապաշտպանութեան գօտիում:

Բայց չափազանց արտակարգ հանգամանք էր ներկայացնում պետական ուժերի կենտրոնացման վայրերի (զօրանոցների, պահակատների և այլն) ներկայութիւնը պաշտպանութեան այդ գործի ներսում:

Թիւրք նահանգապետն ու նահանգային զինուորական հազարապետը, կասկածելով հայերի հաւանական ըմբոստութեանը և դիմադրական կռիւներին, վաղուց ի վեր զինուորներով և զինապաշարով հիմնովին ամրացրել էին այդ զօրանոցներն ու պահեստները: Նոյնիսկ նախապատրաստել էին կենսամթերքի և ջրի մեծ պաշարներ:

Միայն մի պարագայ, որ հայաջինջ տաճիկ կառավարութիւնը հաշւարկման չէր ենթարկած, դա հայ ժողովրդի ստրկութեան շղթաները ջարդ ու փշուր անելու պատրաստւող և իր արիւնը թանկ ծախելու վճռականութիւնն ունեցող Վասպուրականի հայ ազգաբնակչութեան անխորտակելի կամքն ու աննման խիզախութիւնն էր:

Ապրիլի 5-ի առաւօտեանից՝ վաղ լուսաբացից սկսած, Այգեստանի ազգաբնակչութիւնը ճգնաժամային տագնապի ենթարկւեց: Թիւրքական թաղամասերում ապրող հայերը, խուճապահար իրենց ամենաանհրաժեշտ կենսամթերքներն ու թանկագին հաշւած իրեղէնները էշերի և եզների ու սայլակների բեռցրած, հայկական թաղամասերն էին փոխադրւում: Նրանցից շատ շատերը մեծ ցանկութիւն ունէին իրենց գորգերը, պղնձեղէններն ու թանկարժէք իրերը փոխադրել կամ գետնափորերում և հորերում թաղել, բայց ժամանակն արդէն շատ քիչ էր, քանի որ ազդարարւած էր՝ ինչքան կարելի է շուտ, մինչև իսկ ժամ առաջ փոխադրւել: Բարեբախտաբար, Այգեստանի հայ ազգաբնակչութեան ամենախոշոր տոկոսը կենտրոնացած էր հայկական թաղամասերում: Թիւրքերն էլ իրենց հերթին ճնշող մեծամասնութեամբ առանձին թաղամասերում էին ապրում:

Երկու օր առաջ ես հօրս նախազգուշացրել էի:

– Տէ՛ր հայր, Ս. Յակոբայ եկեղեցին թիւրքերի թաղամասի սրտումն է գտնւում: Ժամկոչի միջոցով նախ յայտնի՛ր այդ թաղամասում գտնւող մի քանի ընտանիքներին տեղափոխւել հայկական թաղամասերը: Կարգադրի՛ր նաև եկեղեցու ոսկեղէն և արծաթեղէն սրբանօթներն ու թանկարժէք նկարներն ու իրերը վերցնել և յանձնել երեցփոխին կամ թաղային խորհրդի նախագահ Սարգիս աղային:

– Հայ ծխականներից, չը գիտեմ ինչպէ՞ս, քանի հոգի իմացած և ինձ մօտ էին եկած խորհուրդ հարցնելու: Ճիշտն ասած, ես չը կարողացայ անոնց խորհուրդ տալ, բայց քանի որ կըսես անհրաժէշտ է, անմիջապէս լուր կը հասցնեմ, որ այդ խեղճ մարդիկ չը մնան գերութեան մէջ: Ինչ կը վերաբերի սրբանօթներին և թանկարժէք իրեղէններին, մեր անկուշտ գործակից տ. Յուսիկը, չեմ գիտեր երեցփոխին, թէ Սարգիս աղին յայտնա՞ծ է թէ ոչ, արդէն բոլորը հաւաքած ու տարած է: Դէ, զարմանալի ալ չէ, նա այդպէս յարմար պարագայի կը սպասէր իր անկուշտ ախորժակը յագեցնելու համար:

Նահանգապետ Ջնդէտն ամիսներ առաջ հեռացրել էր ռուսական և անգլիական հիւպատոսարանների փոքրաթիւ պաշտօնէութեանը և փակել էր տուել հիւպատոսարանները: Մնացածներին, մասնաւորաբար ամերիկացի միսիոնարներին, առաջարկել էր նրանց պաշտպանութեան պատրւակով տաճիկ և լազ զինուորներ տալ: Բայց նրա նենգ դիտաւորութիւնը ժամանակին իմացւել, և խանգարւել էր նրա ծրագիրը:

Ամերիկացի դոքտ. Ըշըրից պաշտպանութեան կոմիտէի կողմից խնդրւեց, մարտնչող վիրաւորներին սանիտարական օգնութիւն ընծայել: Նա սիրայօժար համաձայնւեց հայերին տրամադրել իր բոլոր դեղօրայքն ու սանիտարական ու հիւանդանոցային սարքաւորումները:

Ինքնապաշտպանութեան սեկցիաների ամենամեծ դժւարութիւնը կայանում էր զէնքի, զինապաշարի և կենսամթերքների անբաւական լինելու մէջ:

Չնայած այն հանգամանքին, որ Այգեստանի ամբողջ հայութիւնը՝ հարուստից մինչև միջակը և երբեմն նոյնիսկ չունեորը, սիրայօժար տրամադրում էր իր բոլոր հնարաւոր միջոցները, բայց և այնպէս, այդ երկու հիմնական միջոցների՝ ինքնապաշտպանութեան և մթերքների անբաւականութեան վախը սարսափեցնում էր զինուորական մարմին և ղեկավար սեկցիաներին: Բայց կեանքի և մահւան ճակատագրական պայքարի ահազանգը հնչել էր արդէն:

***

Տագնապալից լարուածութիւնը ժամ առ ժամ նոյնիսկ րոպէ առ րոպէ ուժեղանում էր: Ապրիլ 5-ի լուսաբացից ի վեր, ամէն վայրկեան սպասում էր ընդհարման առաջին կրակոցը: Նահանգապետ Զնդէտն ու թիւրք հազարապետը կատարելապէս տեղեկացել էին հայերի ապստամբութեան նախապատրաստական աշխատանքների մասին: Նրանք փորձեցին այս անգամ պրովակացիոն թռուցիկներով հայ հասարակութեանը մոլորութեան մէջ գցել և նրանց հոգեկան ամրութիւնը խափանել:

«Գեավուր ֆէդայիները պատրաստում են մեր պետութեան զօրքի և զէնքի դէմ պատերազմի ելնելու»:

«Այդ խենթ, գլուխ կորցրածները՝ այն աստիճան անբարտաւանացել են, որ համարձակւում են մեր բանակի դէմ կռի դուրս գալու»:

«Ռուսական բանակները, մեր հերոս Էնվեր փաշայի բանակին դիմադրել չը կարողանալով, նահանջեցին ամբողջ արևելեան ճակատի վրայ՝ թողնելով բազմահազար սպանուածներ և գերիներ: Այս խելագար ֆէդայիներն ինչպէ՞ս են համարձակւում մեր պանծալի և յաղթական զօրքի դէմ դուրս գալու:

«Նրանց ըմբոստութիւնը մեզ համար բախտաւորութիւն է: Մենք նրանց անպէտք ճանճերի նման կը կոտորենք և նրանց պաշտպաններին և մանաւանդ բարեկամ ամերիկացիներին կը հաստատենք, որ մեղաւորը նրանց խենթութիւնից ամբարտաւանացած, յեղափոխական պարագլուխներն են, որ յանդգնութիւն ունեցան մեր պետութեան դէմ կռի ելնելու»:

«Ամերիկացի Վիլսոններն ու նրանց պատուելի միսիոնարները, մեր քաջ զինուորների սիինների ներքև յոշոտուած այդ ամբարտաւան և ըմբոստ ֆէդայիների փշրուած գանգերը հաւաքելով, եկեղեցիներ ու քարոզչական տներ պիտի սարքեն»:

«Հայ անբա՜խտ ժողովուրդ, ինչպէ՞ս մինչև հիմա չես կարողացել ճանչնալ քու բարեկամդ ու թշնամիդ: Ինչպէ՞ս չես կարողանում հասկնալ, որ քու իսկական թշնամին քու այդ խենթութեամբ գինովցած ֆէդայիներն են, իսկ քու իսկական բարեկամն ու պաշտպանը Օսմանեան պետութիւնն է»:

«Ըմբոստացէ՛ք այդ ֆէդայիների դէմ: Նրանց ձեռքից խլէք նրանց գողացած զէնքերն ու յանձնէք ձեր կառավարութեանը ու ապահով եղէք, որ նա միայն ձեր բարեկամ Օսմանեան կայսրութիւնն ի վիճակի է ձեզ պաշտպանելու»:

Ահա մօտաւորապէս վերոյիշեալ բովանդակութեամբ գրգռիչ թռուցիկները տարածւում և թափւում էին հայ հասարակութեան միջև՝ նպատակ ունենալով նրան յուսալքել և, եթէ հնարաւոր լինի, հայերին ոտքի հանել իրենց փրկարար ղեկավարների դէմ:

Ինքնապաշտպանութեան շտաբի կարգադրութեամբ՝ պրոպագանդի և տեղեկատուութեան սեկցիան ձեռնարկեց անմիջապէս հակահարուած հասցնել ոճրագործների լարած թակարդին և նրանց տարածած պրովակացիաներին: Իրար յետևից լոյս ընծայեցին ժելատինատիպ կարգախօսներ և հայ ազգաբնակչութեան հոգեկանն ամրապնդող ճառեր և կոչեր, մօտաւորապէս հետևեալ բովանդակութեամբ.

«Հա՛յ ժողովուրդ, քու միակ փրկութիւնը քու անխախտ միութեան և միաբանութեան մէջն է: Պրովակացիաների երբէք չ՚ենթարկւես»:

«Մի քանի ամիս առաջ խաբէութեամբ և ստորութեամբ կորցրեցին ու տարան յեղափոխական անման գործիչներին և իրենց դժոխային բանտերում տմարդօրէն կոտորեցին, իսկ մի քանի օր առաջ սրիկայաբար խաբելով և շրջանների ու Շատախի խռովութիւնները հանգստացնելու անունով մեզնից խլեցին ու տարան մեր յեղափոխական անձնուէր ղեկավարներին ու ընկերներին»:

«Օսմանեան կառավարութեան բարեխնամութիւնից և բարեգթութիւնից ճառող աւազակ Թալէաթ-Էնվէր-Զէմալ, Զնդէտն ու նմանները ձեզ չեն կարող խաբել, որովհետև նրանց սարքած Ադանայի և Կիլիկիոյ կոտորածների զոհերի արեան բողոքի աղաղակը դեռ մինչև հիմա ձեր և մեր ականջները խլացնում են»:

«Ձեզ քաղցր խոստումներով քնացնել փորձող Զնդէտը շրջաններում, ամէն տեղ ձեր հազարաւոր հայրենակիցներին գազանաբար մորթոտել է տուած և մի քանի օր առաջ այդ անպաշտպան թշուառների միջնորդութեան համար նրա մօտ խնդրատու գնացած ձեր հոգևոր պետին՝ Առաջնորդին՝ անպատկառօրէն և վայրենաբար վռնդած է»:

«Զնդէտն ու նրա գործակից արիւնարբու գործակիցները Վանի 1896-ի կոտորածները կազմակերպող աւազակախմբի պռոնկածին ժառանգորդներն են: Սպանելուց, մորթոտելուց և մարդակեր վայրենիների ճարակը լինելուց առաջ, դու՛, հա՛յ մարդ, պարտաւոր ես վրեժխնդիր լինելու»:

«Ի՞նչ արժէք ունի քու ողջ մնալը, երբ քու աչքերի առաջ և քու գրկում պիտի առևանգւեն քու հարազատները, քու մայրը, քոյրդ և կինդ: Այդ սարսափելի ստրկացումից առաջ աւելի պատուաբեր չէ՞ նման գազաններին շան-սատակ անել և պատւով, հայ հերոսի մահովը մեռնել»:

«Հա՛յ կին, հա՛յ աղջիկ և հա՛յ տղամարդ, թանկ ծախի՛ր քու կեանքն ու պատիւը և մեռնելուց առաջ վրէժխնդի՛ր եղիր քու ընտանիքի և քու ազգի դահիճներից»:

Այս և նման խրախուսիչ թռուցիկներն ու զարթօնքի կոչերը շատ անգնահատելի հետևանքներ ունեցան: Նախ, որ նրանք ուժեղ հակահարուած եղան պետական լրտես գործակալների տարածած յուսալքող գրգռումներին և ապա մահաւան պայքարի դիմագրաւման պատրաստւող մարտիկների վճռականութիւնը դարբնեցին: Այս առթիւ ինքնապաշտպանութեան կենտրոնական շտաբն իր խնդակցութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԲԱՐԵԿԱՄԻՍ ՀԵՏ

Յաջորդ օրը՝ կէսօրից առաջ, վճռեցի տեսակցել իմ մի քանի ազգականներիս, Մարօի և ընտանիքիս անդամների հետ: Առաւօտեան ժամի 7-ին, զինուորական շտաբի կենտրոնում հանդիպել էի Բուլղարացուն և Կուլօղլեանին: Նրանց չափազանց մտածկոտ և տագնապալից տրամադրութիւնն ինձ վրայ ծանր տպաւորութիւն էր թողել: Իրաւամբ մտածում էի, որ այդ յեղափոխական փոթորկալից անցեալ ունեցող մարդիկ անպայման ինձնից աւելի լաւ են չափում դրութեան լրջութիւնն ու սպառնացող վտանգը:

Չնայած իմ երիտասարդական եռանդին ու աւիւնին՝ մի անվանելի և կապարանման տխրութիւն ինձ ամբողջութեամբ համակել էր և, ինչքան փորձում էի ազատուել այդ ճնշող տպաւորութիւնից, չէր յաջողւում ինձ: Խորհում էի՝ գուցէ այլևս չը կարողանամ հարազատ և սիրելի ազգական-բարեկամներիս տեսնել: Կեանքի ու մահւան կռւի ենք դիմում: Միանգամայն անհաւասար ուժերի բախման պայքարի ենք գնում: Կարող է պատահել արիւնածարաւ թշնամու գնդակին կամ սուրին զոհւենք: Գոնէ մի վերջին անգամ էլ սիրելի դէմքերի տեսոյն արժանանամ:

Այս տխուր մտասևեռումով՝ Կլոր-Դարից բարձրանում էի իմ սիրելի մօրաքրոջս տունը գնալու որոշումով, երբ յետևիցս մէկը, հապճեպ վազ տալով, առաջ կտրեց և հարցրեց.

– Ու՞ր ես գնում այս ուղղութեամբ, ընկ. Սիրաք: Հարցնողը մեր սիրելի ընկերներից էր՝ Կարապետ Տանքէեան՝ Արարքի ծխական դպրոցի երիտասարդ, լաւ գրագէտ և մեծ ապագայ խոստացող ուսուցիչը:

– Բայց ի՞նչ կայ որ, ի՞նչ է պատահել, սիրելի՛ ընկ. Տանքէեան:

– Այս ուղղութեամբ որ գնում ես, վտանգաւոր և արգելւած շրջան է:

– Եթէ վտանգի մասին ես խօսում, ներկայիս մենք ընդհանրապէս վտանգւած ենք: Ես անպատճառ ուզում եմ մօրաքրոջս տեսնել:

– Բայց ես քեզ խորհուրդ չեմ տայ: Սխալ, վտանգաւոր գործ ես տեսնում:

– Ինքնապաշտպանութեան գծերի և դիրքերի դասաւորման պլանից մի համառօտ տեղեկութիւն ունիմ: Մեր այս կանգնած տեղից մինչև այս ուղղութեան վերջին դիրքը մօտաւորապէս 400 մետր տարածութիւն ունենք, իսկ մօրաքրոջս տունը հասնելու համար ինձ անհրաժեշտ է դրա կէս տարածութիւնը կտրել:

– Այդ քու գիտնալիքն է, բայց ես նորից քեզ զգուշացնում եմ. գուցէ շտաբի մի կէս ժամ առաջ արած յայտարարութիւնից տեղեկութիւն չ'ունիս:

– Չէ, չ'ունիմ: Ես նրանից մօտ 2 ժամ ու կէս և կամ գուցէ մի քիչ աւելի շատ առաջ շտաբումն էի, բայց արտակարգ նորութիւն չիմացայ: Մի՞թէ ընդհարումն արդէն սկսւել է:

– Չի սկսւել, բայց որպէ առ որպէ սպասւում է: Շտաբը յայտարարել և ազդարարել է ազգաբնակչութեան օր-ցերեկով փողոց դուրս չը գալ և ըստ կարելւոյն խուսափել գրգռութիւն յառաջացնող ամէն երևոյթից:

– Լաւ, էլ ի՞նչ նորութիւն ունիս, յարգելի ընկեր և սիրելի ուսուցիչ:

Այս փոքր կատակով ուզում էի ամէնից առաջ իմ ծանր տխրութիւնը գոնէ մի փոքր թեթևացնել: Յետոյ աւելացրի.

– Ինքնապաշտպանութեան գործում ի՞նչ է վիճակւել քեզ:

– Նախ նորութիւն: Երէկ կէսօրւանից սկսած մօտակայ գիւղերից և շրջաններից սոված, մերկ, ոտաբոբիկ կին ու երեխայ ներս են թափւում: Դրանց թիւը չափազանց մեծ է: Գիշերով նրանք գաղտագողի թողել են իրենց տունն ու տեղը, ունեցած ամէն ինչ և դէպի Այգեստանն են փախել՝ յոյս ունենալով մի կերպ ազատւել թիւրքերի վրէժխնդիր վայրագութիւններից: Նրանք պատմում են, որ իրենց ընտանիքների տղամարդկանցից օրերէ ինչ տեղեկութիւն չունին: Ասում են փախուստ են տւել թիւրքերի ճանկից:

– Ներողութիւն, ընկ. Տանքէեան, շատ ներողութիւն, ես ստիպւած եմ աճապարել: Երէկ ընկերներս ինձ յայտնեցին, որ շատ կարևոր և զգայուն դիրք են վստահել քեզ: Դարդանէլ կոչւած դիրքի գլխաւորի օգնականն են նշանակել: Հիմա ընկերաբար ես եմ քեզ նախազգուշացնում: Ինչպէս ասում են, ընդհարման ժամանակ ձեր դիրքն ամենախոցելին է: Միանգամայն պարզ է, որ թշնամին կուզենայ իր ամենաառաջին և ամենաճնշիչ յարձակումը ձեր դիրքի և նման դիրքերի վրայ ի գործ դնել: Չափազանց զգո՛յշ եղէք, որովհետև ձեր դիրքի նման մի քանի դիրքերի յամառ և անընկճելի դիմադրութիւնը միայն կարող է փրկել Այգեստանում ապաստանած բազմահազար հայութիւնը: Եթէ հնարաւոր լինի, մի երկու-երեք օրից յետոյ գոնէ մի անգամ ձեզ մօտ կը գամ: Ես տասնեակ յանձնախմբի հետ գործակցում եմ: Սրանից յետոյ ձեր աչքերը ժրաջանօրէն թշնամուն են հետախուզելու, բայց ձեր ստամոքսերը մեզի, մեր օգնութեան են սպասելու: Ցտեսութիւն, յարգելի՛ ընկեր: Ներողութիւն, որ մի քիչ յամառ եմ որոշումներիս մէջ և տւածդ խորհուրդն անտեսում եմ,– ասի ու ճանապարհ ընկայ:

Չը գիտեմ ինչպէս պատահեց, որ իմ փորձառու և անդրանիկ ընկերոջիցս ճշմարտութիւնը թաքցրի: Մօրաքրոջս տունը շատ աւելի հեռու էր, քան ես նրան յայտնեցի: Նա համարեայ կպած էր մեր ինքնապաշտպանութեան գծի ծայրագոյն դիրքերից մէկին:

Երբ ես մօրաքրոջս տունը մտայ, նա բոլորովին միանակ էր: Ինձ տեսնելով՝ ուրախութիւնից շշմեց:

Երբ ես հարցրի իր տղայի՝ Միհրանի մասին, նա սկսեց լաց լինել և ասաց.

– Երկու օր է, ինչ սա մեր հարևանութեան մէջ եղած դիրքն է մտել: Գիշեր-ցերեկ այդտեղ կը մնայ, նոյնիսկ մէկ պատառ հանգիստ հաց ուտելու չի գար: Չեմ գիտեր՝ ի՞նչ պէտք է ընեմ: Աստուած թող անոր պաշտպանն ու ապաւէնը ըլլայ: Խեղճ տղա՛ս, դեռ մեր սուգէն դուրս չեկած, այս անզգամ տաճիկները չը կամեցան մեզի հանգիստ ձգել: Իրեն ըսի, որդի՛ս, հայրդ այդպէս բէմուրազ մահացաւ, դու հիմա իմ միւնուճար զաւակն ես, Տէր մի արասցէ, բերանս լալանայ, լեզուս չորանայ, որ այս խօսքերը չը կրնամ ըսել, քեզ բան մի պատահի, այն ատեն ես դժբախտս կաթուածահար պիտի ըլլամ և անտէր ու անտիրական գերեզմանը մտնեմ: Ինձ համար ալ ուրիշ փրկութիւն գոյութիւն չունի:

– Մօրաքո՛յր ջան, նախ որ Աստուած մեծ է: Եթէ նա յօժարուեց, որ քու թանկագին ամուսինը մահանայ, վստահ եղիր, որ չի կամենայ, որ քու միւնուճար որդուն որևէ դժբախտութիւն պատահի: Մենք մեծ յոյս ունենք, որ փորձանքից կազատուենք և նորից ազատ ու երջանիկ օրեր կը տեսնենք: Այս մի փոթորիկ է, որ պիտի անցնի մեր գլխից: Մեր թշնամին անիրաւ և անարդար է: Մի՞թէ մեր Աստուածը պիտի յօժարի նւիրել այս բնութիւնը, նրա լոյսը, նրա պայծառ ու կենսատու արևը, միայն և միայն այդ բարբարոս տաճիկներին...: Չէ՛, մօրաքո՛յր ջան, չէ՛, այդ անկարելի է: Այդ կենսատու արևից մեզ պէս անպաշտպան և հալածուած ժողովուրդը շատ աւելին իրաւունք ունի օգտուելու, նրա ջերմութիւնից կեանք առնելու, քանի թէ անոնք, որոնք ցանկանում են մեզ խաւարի մէջ խեղդամահ անել, ոչնչացնել և կոտորել...: Մենք իրաւացի ու ապրելու իրաւունք ունինք:

Ինձ աննկատելի կերպով և ինքնաբերաբար ընկած տրամադրութիւնս բարձրացաւ, և իմ մէջ սկսող յուսալքումն անհետացաւ: Չնայած որ մօրաքրոջս հետ մի քիչ պատկերաւոր և բարդ լեզուով էի խօսել, բայց իմ քաջալերական տօնից նրա յուսալքումն էլ կարծես չքացաւ: Ինձ իր գրկում սեղմելով, նա ինձ ջերմագին համբուրել սկսեց:

– Լեզուիդ մեռնի մօրաքոյրդ, ի՜նչ լաւ, լաւ խօսքեր ըսիր: Ճիշտ կ'ըսես, որդի՛ս, մեր ողորմած Աստուածը, մեր բարեգութ Տէրը չի կամենայ երբէք իր անմեղ հօտին անպաշտպան, անտէր ձգել: Նա անպատճառ մեզ օգնութեան կը հասնի և մեզ կը փրկի սա անօրէն տաճիկների ձեռքէն: Մենակ, որդի՛ս, ես մէկ վախ ունիմ, որ անոնց դիմադրել չը կարողանաք: Չէ՞ որ անոնք կառավարութիւն են, զօրք ունին, անհաշիւ զէնք ու պաշար ունին: Գերմանների հետ ալ բարեկամ են եղեր, և ալ ի՞նչ ըսեմ, ամեն կողմէ մեզմէ ուժեղ են:

– Գիտեմ, մօրաքո՛յր, լաւ գիտեմ: Անոնք մեզմէ ամէն ինչով ուժեղ են, քանի որ պետութիւն են, բանակ, զէնք, անհաշիւ պաշար ունին: Բայց դժբախտաբար մէկ բան չ'ունին: Այդ այն է, որ բռնակալներէն և մարդասպաններէն և ո՛չ մէկը կարող է ունենալ: Այդ իրենց կատարած գործի և իրաւացի լինելու հաւատքի պակասն է: Բայց մենք համոզուած ենք մեր գործի ճշմարտութեան, արդարութեան և իրաւացիութեան համար: Այս համոզումը մեզի կամքի ուժ և քաջութիւն է տալիս:

Ի վերջոյ շատ ջանացի մօրաքրոջս համոզել, որ տեղափոխուի կամ մեզ կամ իրա եղբօր տունը, բայց դժբախտաբար չը կարողացայ համոզել նրան:

– Եթէ ճակատիս գրուած է, որ պիտի մեռնիմ, աւելի լաւ է իմ տանը, իմ միակ զաւակի պաշտպանած դիրքի կողքին և անոր մօտ մեռնիմ...: Չէ՞ որ ես իմ ընտանիքէն միայն մէկ զաւակն ունիմ, իսկ նա էլ իր ընտանիքէն միակ մէկ մայր ունի:

***

Մօրաքրոջս տնից դուրս գալուց անմիջապէս յետոյ ես աճապարեցի մերոնց հանդիպելու: Նախքան մեր տուն մտնելը որոշեցի հօրաքրոջս տեսնել: Չնայած նրանց տունը մեր այգու վերջաւորութեանն էր կպած, բայց ես հօրաքրոջս 15 օրից ի վեր չէի տեսել:

Նրան բոլորովին միայնակ գտայ: Նա, դժբախտաբար, զաւակ չունէր: Ամուսինը շրջիկ փերեզակ էր: Կոշտ ու անգրագէտ մի մարդ: Ամսից աւելի էր, ինչ տնից գնացել էր շրջանի մօտակայ գիւղերում իր հետը տարած թէյ, շաքար, լուցկի, համեմներ, կոճի թել, ասեղ և նման մանր-մանր ապրանքներ ծախելու, բայց դեռ չէր վերադարձել: Հօրաքոյրս ինձ տեսնելուն պէս սկսեց երեխայի նման արտասուել և գանգատուել:

– Սիրա՛ք ջան, հոգուդ մատաղ, բա ո՞րտեղ ես մնացած: Չես մտածեր, որ մէկ հօրքուր ունիս, միակ ուրախութիւնը իր Սիրաքն ու Արաքսին է: Տանս կողքին այսքան մօտիկ ըլլաս, բայց չը գաս և չը հարցնես, որ հօրքոյրդ ո՞ղջ է, թէ՞ մեռած:

– Հօրքուր ջան, աստուած ո՛չ անի, որ քեզի վատ բան պատահի, և յետոյ մի՞թէ Արաքսին քեզ չի ասած, որ այս վերջերս ես չափազանց զբաղուած եմ: Մինչև իսկ երկու գիշեր է, որ գիշերները մեր տունն էլ քնելու չեմ եկած, գործի վրայ ենք: Գործն էլ պատասխանատու գործ է: Մեր զինուորների և շրջաններից Այգեստան թափուած սոված կին-երեխաների հաց ու պարէն հաւաքելով ենք զբաղուած: Ի՜նչ արած, մեզնից ամէն մէկը պարտաւոր է իր ուժերի ներածին չափ օգտակար լինել, հակառակ պարագային, բոլորս էլ կորած կը լինենք:

Նա, ինձ իր չորացած կրծքին սեղմելով, ասաց.

– Ապրի՛ս, տղա՛ս, հալալ ըլլայ մօրդ կաթը: Եթէ բոլոր մեր երիտասարդները մէկ սիրտ և մէկ հոգի ըլլան, մենք թերևս փրկուենք: Կ'ըսեն վիճակնիս շատ դժուար և ծանր է: Դու պէտք է լաւ իմանաս և տեղեկութիւն ունենաս:

Մինչ ես պատրաստում էի մի քանի խօսքով նրա հարցուփորձին պատասխանել, նա չը համբերեց և ինքը շարունակեց:

– Եթէ ամէն տեղ մեր կողմերի պէս պաշտպանած ըլլայ, յոյս կայ որ կրնանք մի քանի ժամանակ դիմանալ, մինչև Աստծով մեր կամաւորները հասնին: Մեր Մոխրի քեահրիզի երկայնքին՝ Սողոմոնենց տունը դիրքի է վերածուած: Մեր փողոցի և Շան-փողոցի բերնին ալ դիրքեր են հաստատուած:

Այս բարձրադիր դիրքերի շնորհիւ Յանկոյսների ամբողջ գետաբերանը հսկողութեան տակ է, և ո՛չ մի ասքեար կամ բաշիբոզուկ չի համարձակի անոնց դէմ յարձակիլ, հակառակ պարագային դիրքերին չը հասած, գետնին կը հաւասարուի: Խեղճ մարդիկ, անոնք ալ մեղք չունին: Անոնք ալ հայր ու մայր, կին, երեխայ, քոյր ու եղբայր ունին: Բայց սա անօրէն վալու ու անոր մարդկանց հրամանով ճարահատ՝ ստիպուած են իրենց հայ անմեղ հայրենակիցները կոտորել:

Հօրաքրոջիցս ներողութիւն խնդրեցի՝ ասելով, որ շատ զբաղուած եմ և աճապարում եմ: Միաժամանակ նրան էլ խոստացայ մի քանի օրից նորէն այցելել:

Հօրաքրոջս այգուն կպած մեր այգուց անցայ և մեր տունն եկայ: Քոյրս՝ Արաքսին, միայն երկու օր ինձ չէր տեսած, բայց կարծես այդ երկու օրը նրա համար երկու ամիս էր թւել: Դեպի ինձ վազ տալով՝ մի ոստիւնով, իր նուրբ ձեռներն օղակած, վզիցս կախուեց:

– Ու՞ր ես մնացել ախպէ՛ր ջան: Այս քանի օր ու գիշեր ինչու՞ ես բացակայել: Ինչու՞ իմ մասին չ՚ես մտածում: Ա՜խ, ես էլ չգիտեմ, ինչու՞ այսքան շատ շուտ-շուտ քեզ կարօտում եմ:

– Արաքսի, մի՞թէ ես երկու օրից աւելի եմ բացակայել, որ այդքան շատ ինձ կարօտել ես: Դու արդէն մեծ աղջիկ ես, հիմի իրաւունք չ՚ունես մինակութիւնից այդքան նեղուելիք: Տնում կարգադրուելիք շատ գործեր ունիս: Սրանից յետոյ, հետզհետէ մեր տնում, մեր անմոռանալի մօր պարտականութիւնները պիտի կատարես... Ի դէպ, ասում ես, որ մեր խեղճ եղբօր կին Հայկանուշը նորից անկողի՞ն է մտել: Ափսո՜ս, այդ գոհար կինը, իր երիտասարդ ծաղիկ հասակում, աշխարհիս ամենամեծ բարիքից՝ առողջութիւնից միանգամայն զրկուեց: Ա՜խ, անիծած լինի նրա դժբախտութեան պատճառ եղող այդ անպատկառ Իսկուհին... Մերոնցից ո՞վ կայ տնում:

– Հայրս այգումն է: Գալուց նրան չը տեսա՞ր: Այս օրերում նա չափազանց անտրամադիր ու ջղային է դարձել: Եկեղեցին չի կարողանում գնալ: Թիւրքերի թաղամասումն ընկած Ս. Յակոբը գնալն անհնարին է, ասում է, Խաչ փողոցից 200 քայլի վրայ ճանապարհը փակուած է: Մերոնք այդտեղ դիրք են բռնել, և ոչ ոք չի համարձակւում այս կողմն կամ այն կողմը անց կենալ:

– Եղբայր Կարապետն ու՞ր է:

– Երէկ կէսօրից առաջ մեզ յայտնեց, որ մեր փողոցի գլխի դիրքում դիրքապահ է նշանակուած: Ասել է, որ իրեն չ՚սպասենք, որովհետև խիստ կարգադրուած է դիրքից չը հեռանալ:

– Դէ՛, սիրելի քոյրիկս, ինձ էլ կը ներես: Ես էլ ստիպուած եմ մեր տնից առայժմ հեռանալու: Ինձ վրայ էլ պատասխանատու պարտականութիւն է դրուած: Այսօր էլ իրաւունք չունէի պոստիցս հեռանալու, բայց մտածեցի մի անգամ ևս իմ հարազատներին այցելել: Ո՞վ գիտե, գուցէ մի քանի ժամանակ իրար տեսնելու բախտը չ՚ունենանք:

– Այդ ինչե՞ր ես ասում, եղբա՛յր, ինչպէս թէ մի քանի ժամանակ իրար տեսնել չենք կարողանայ: Ես առանց քեզի կը մեռնեմ: Ես քեզնից չեմ պահանջի, որ գործդ թողնես և օր-ցերեկով ինձ մօտ գնաս, բայց գիշերը խօ կարող ես:

– Հէնց խնդիրը դրանումն է: Կարծեմ չը կարողանամ: Բայց վստահ եղի՛ր, հէնց որ կարողացայ, քեզ մօտ կը վազեմ,– այս ասելով՝ քրոջս գիրկս առայ և մի քանի անգամ կարօտալից համբուրեցի:

Իմ հետևիցս վազելով՝ քոյրս լալագին կանչեց:

– Վաղն առաւօտեան անպատճառ կը գաս: Չը մոռանաս: Մարօն իր փոքրիկի և իր մօր հետ խոստացել է մեզ մօտ գալ:

Մի փոքր ընդմիջումից յետոյ՝ էլի ձայնեց.

– Եղբա՛յր, միւս օրն էլ անպատճառ կը գաս: Գիտես ինչու՞, միւս օրն էլ Ոսկին մեզ մօտ հաց թխելու է գալիս: Նա խոստացել է մի քանի տառեխ ձուկ բերել և հաց թխելու ժամանակ նրանց խորովել: Գիտեմ, որ դու տառեխը շատ ես սիրում: Կրկնում եմ, չը լինի մոռանաս: Թազա լաւաշով և տառեխի խորովածով քեզ մի լաւ կը հիւրասիրեմ:

– Լաւ, լաւ, Արաքսի՛ ջան, միամիտ եղի՛ր, կաշխատեմ գալ: Երկու րոպէ անց՝ դռնից դուրս գալուց այս անգամ ես կանչեցի.

– Արաքսի՛, եթէ չը կարողացայ գալ, իմ փոխարէն ինքդ կուտես և Հայկանուշին և մեր հօրն էլ բաժին կը հանես: Ինձ համար չը լինի տխրես: Տէրն հօրն ասա, որ մեր ազգի փրկութեան համար աղօթի, քանի որ չի կարող կռուել: Նա ջերմեռանդ հաւատացեալ է և մարդասպանութիւնն ատում է: Բայց մենք ինչո՞վ ենք մեղաւոր, որ մեր նամարդ թշնամին մեզ անտեղի և անխղճօրէն սպանում և կոտորում է, և մենք էլ մեր հերթին ստիպուած ենք մեր գոյութիւնը պաշտպանելու, մեր հօրն ու մօրը, քոյր ու եղբօրը, կին ու երեխաներին ազատելու համար նրանց դէմ կռուելու և նրանց դէմ կռուել և նրանց սպանել:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԱՊՐԻԼԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ
Մաս Գ

1915 թի ապրիլ ամսի սկզբից, ամէն ժամ, ամէն րոպէ Վանի Այգեստանի և Քաղաքամիջի հայ ազգաբնակչութեան համար տագնապալից և ճգնաժամային ժամեր և րոպէներ էին: Ապրիլի 3-ից մենք բոլորովին կտրուել էինք Քաղաքամիջի ազգաբնակչութիւնից, բայց հրաշքով իրենց՝ Այգեստան հասցրած սուրհանդակների ստոյգ տեղեկութիւնների համաձայն, գիտէինք որ քաղաքամիջումն էլ միևնոյն ճգնաժամային վիճակն է տիրում:

Ստացած հաստատ տեղեկութիւնների համաձայն՝ Քաղաքամիջի հայ ազգաբնակչութիւնն էլ իր ինքնապաշտպանութեան գործն էր կազմակերպել: Վանի առաջնորդ Եզնիկ վարդապետի և Աղթամարայ վանահայր Դանիէլի ներկայութիւնն առաջնորդարանում ժողովրդի համար շատ սրտապնդիչ հանգամանք էր:

Վերոյիշեալ կրօնական հայրերի և խիզախ երիտասարդ Հայկակ Կոսոյեանի[25] ղեկավարութեամբ կազմուել էր Քաղաքամիջի ինքնապաշտպանութեան կոմիտէն: Զինապաշարի և մանաւանդ կենսամթերքի հարցը Քաղաքամիջում աւելի հեշտ էր կարգադրել: Պաշտպանողական գծի տարածքը համեմատաբար աւելի սեղմ է, և կենսամթերքը՝ Այգեստանի համեմատութեամբ աւելի առատ: Վան քաղաքի վաճառականական և տնտեսական կարևոր և հարուստ հիմնարկներն իրենց խաներով և ամբարներով Քաղաքամիջումն էին կենտրոնացած: Բնակարանային մօտիկութեան, եթէ չ'ասենք խճողման հետևանքով դիրքորոշման գործն էլ աւելի հեշտ էր:

Քաղաքամիջումն էլ պաշտպանութեան մարմնին կամ զինուորական շտաբին գործակցում էին մի քանի սեկցիաներ: Նախապէս Քաղաքամիջի ազգաբնակչութիւնը ցանկացել էր Այգեստանի հետ յարաբերութեան գործակցութեան մէջ լինել, բայց երկու հատուածների միջև ընկած տարածութիւնը շուրջ 4 կիլոմետր էր և հետևաբար գործակցութեան ծրագիրը՝ անիրագործելի: Այս երկու հատուածներին մնում էր անջատօրէն և անկախօրէն ինքնապաշտպանութեան ձեռնարկել և պայքարել ու խոյանալ դէպի փրկութեան և ազատագրման լուսաշող ապագան:

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

Ապրիլի 7-ին՝ երեքշաբթի առաւօտեան, կոշմարային լռութիւնը խզուեց: Ծայրահեղօրէն լարուած սպասողական դրութիւնն իր վերջակէտին յանգեց: Լսուեցին անջատ կրակոցներ և անմիջապէս յետոյ նրանց հետևող համազարկեր: Կռի հրդեհը բորբոքուեց: Դժոխային համազարկերը բազմապատկուեցին: Թնդանօթների անընդհատ կրակոց-գոռգոռոցները դժոխային որոտ ու ժխոր ստեղծեցին:

Կենաց ու մահու կատաղի պայքարը սկսուել էր: Երկու ժամ չ'անցած՝ ամբողջ Այգեստանը կորել էր ծուխի, վառօդի, հրդեհի, քարուքանդումի փլատակման և ընդհանուր ցնցումի ու տակնուվրայութեան մէջ:

Ամբողջ Այգեստանը ռմբակոծում էր ամէն կողմից: Մահաբեր սարսափ ու սարսուռ էր տարածում տաճկական զօրանոցներից ու դիրքերից: Այս կատաղի ռմբակոծումների համընթաց՝ տաճիկ զինուորները զինուած բազմահարուածեան պուլիմեթրներով և ձեռնառումբերով ու խլացնող ուռաներ ռռնալով յարձակուեցին հայկական դիրքերի վրայ: Շուրջ 70 դիրքերում ամրացած հայ արիներն էլ մի վայրկեան իսկ չ'ուշացան նրանց մահացու կրակի կարկուտի տակ առնել: Նրանցից շատերը նոյնիսկ դիրքերից ցած գալով, բաց ճակատի վրայ նրանց դիմագրաւեցին: Ինքնապաշտպանութեան անձնուրաց զինուորները վճռել, երդուել էին իրենց յանձնուած պաշտպանութեան գծից մի քայլ իսկ յետ չը նստել և չը թողնել թշնամուն ներթափանցել այդ գծից:

***

Ջնդէտ փաշան՝ Վանի նահանգապետը, վճռել էր մի քանի ժամում փշրել յանդուգն յեղափոխականների և ժողովրդական ղեկավարների՝ «կործանիչ» խրատներին և հրահանգներին ենթարկուող

25 **Հայկակ Կոսոյանը** ծնվել է Վանում, 1882 թ.: Ուսանել է Գեորգյան ճեմարանում: Եղել է Հիսուսյան-Շուշանիկյան վարժարանի տեսուչ: 1915 թ. ապրիլյան հերոսամարտի օրերին ստանձնել և հաջողությամբ իրականացրել է ինքնապաշտպանության ղեկավարությունը: 1919 թ. Երևանում մասնակցել է Արևմտահայոց Բ համագումարին: Ընտրվել է Հայաստանի խորհրդարանի անդամ: 1925 թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում հրատարակել է «Վան քաղաքամեջի ապրիլյան կռիվները» հուշագրությունը, որը հետագայում բազմիցս վերահրատարակվել է: Վախճանվել է Պարսկաստանում 1968 թ.:

գեավուր (անհաւատ) խելացնորների «ըմբոստութիւնը»: Հրահանգել էր կայծակային թափով և անընդհատ ու անխնայ ռմբակոծել դիրքերն ու նրանց հողի հետ հաւասարացնելով, պաշտպանութեան շղթան փշրել և Այգեստան ներխուժել:

Ներխուժման ամենաառաջին փորձը սկսուեց Ակռփու ուղղութեամբ՝ Սև քռայից, որի բլուրների վրայ ծանր թնդանօթներ էին դրուել և կանոնաւոր զօրքի 3-4 հարիւրակներ էին կենտրոնացուել: Մի խումբ մինչև ատամները զինուած տաճիկ ասքեարներ խլացնող ուռաների բղաւոցներով փորձեցին պաշտպանութեան գիծը խորտակելով իրենց հասցնել գերման միսիոնարութեան կենտրոնը և այնտեղ ամրանալով բազմահարուածների գնդակների ու ձեռնառումբերի կապել անզէն ժողովուրդը և այդպիսով խուճապահար անել նրան:

Բարեբախտաբար, այդ պարագան նախատեսուած էր զինուորական շտաբի կողմից, և այդ միսիոնարութեանը չը հասած և նրան իր կոնտրոլի ներքև պահող մի շատ ամրացած դիրք էր հաստատուել: Ներխուժել փորձող զինուորները կրակի տարափի ենթարկուեցին մեր այդ դիրքերից և մերոնց օգնութեան հասնող օժանդակ շրջիկ խմբից շրջապատուելով՝ տեղն ու տեղ մի քանիսին սպանուեցին, իսկ մնացածները խուճապահար յետ փախան:

Այդ առաջին հերոսական պայքարում մեր խիզախ երիտասարդներից երկուսը՝ Եղիա Նախշունեանն և Յակոբ Դերզեանը, զոհուեցին, բայց գոռոզ ու ամբարտաւան թշնամուն պարտադրեցին մի փախուստ, որ չափազանց ճակատագրական բնոյթ և կշիռ ունեցաւ մեր յետագայ պաշտպանութեան պայքարում:

Ներխուժման առաջին փորձերի անյաջողութիւնը թշնամուն կատաղեցրեց: Սա խայտառակ ստորացում է թիւրք նահանգապետի և նահանգային զինուորական պետի համար: Դրա համար էլ հրահանգեց աւելի և աւելի ուժեղացնել համատարած ռմբակոծումները: Հրամայուած էր ամէն գնով ժամ առաջ փշրել մի խումբ յեղափոխական անհաւատների յանդգնութիւնն ու դիմադրական ըմբոստութիւնը:

Գիշերը վրայ էր հասել: Սարսափելի և մահաշունչ գիշեր: Թնդանօթների և ինքնաշխատ բազմահարուածների ահռելի պայթիւններն ու խլացուցիչ գոռգոռոցները անընդհատ ու անվերջ ուժեղանում էին: Կրակն ու բոցը, հրդեհն ու խեղդիչ ծուխը կլանել էին Այգեստանը: Տաճիկների բոլոր դիրքերից՝ Սև Քռայից, Սահակ-Բէյից, Թոփրաք-Կալէից, Հաջի-Բէքիրից, Համուդ աղից, Արարուց հրապարակից և ամէն կողմից, կրակ, հրդեհ, մահ ու սարսուռ էր սփռուում: Մեր գլխաւոր դիրքերը, մանաւանդ Դարդանէլ, Շահբանդար, Սահակ-Բէյ և Խաչ փողոցը, դժոխային կրակի մէջ այրուում և ճարճատելով քարուքանդ էին լինում և փլատակուելով խորտակուում:

Սովալլուկ գայլերի ոռնոցներով՝ տաճիկ և լազ զինուորներն իրենց ատելի գոռոցներով և ուռաներով նորից ներխուժման յարձակումների դիմեցին:

Կենաց ու մահու աննախընթաց, անխնայ, ահռելի, բախտորոշ և ճակատագրական պայքարի ամենավճռական րոպէներն էին: Փա՜ռք ու պատի՜ւ Վասպուրականի հերոսներին: Նրանք վճռել էին մնալ անսասան և հաւատարիմ իրենց երդումին: Այո՛, նրանք վճռել էին այդ և քաջօրէն իրականացրին իրենց երդումը: Բոլոր նրանք, միասին և միակամ վճռել էին մեռնել պատնէշի վրայ, բայց մեռնել հերոսի մահով և իրենց արիւնը թանկ, շատ թանկ արժեցնել թշնամուն:

Խորտակուած դիրքերի անվախ ու արի կռուողները փուլ եկած դիրքերի պատերի յետևից այրող և ծխացող գերանների արանքներից կուտակուած աղիւսների և փլատակների միջից անընկճելի և աներեր վճռականութեամբ շարունակեցին իրենց ճակատագրական դիմադրութիւնը: Շրջապատուած իրենց աչքի տակ, իրենց կողքում, իրենցից մի քանի քայլի վայ ընկած զոհերով և վիրաւորներով՝ նրանք չ'ընկրկեցին, չը յուսալքուեցին և ինքնամոռացութեան ենթարկուած, անձնազոհութեամբ հիպնոսացած՝ արիաբար շարունակեցին դիմադրել, կռուել և բոլոր ներխուժել փորձող ասքեարներին փուլ եկած իրենց դիրքերից մի քանի քայլի վրայ թաւալգոր զգետնել:

Դիւցազնական դիմադրութեան իսկական դժոխային գիշերը մեր աննման քաջերի յաղթանակով վերջացաւ: Դա մի բացառիկ հրաշք-քաջագործութիւն էր, որով հայ ազգը իրաւացիօրէն միշտ պիտի պարծենայ:

Հայի արիւնածարաւ Ջնդէտն ու նրա գործակիցները խուճապահար եղան և գլուխները կորցրին: Նրանք երբէք չէին ենթադրում, որ հայը՝ իրենց ընդմիշտ արհամարհուած գեավուրը, կարող է այսքան ինքնուրաց, այսքան հերոս, այսքան պատուախնդիր լինել և նման կատաղի դիմադրութիւն ի յայտ բերել: Նրանք այս առաջին օրից յետոյ ստիպուեցին համոզուել, որ ամէն հայի սպանութիւնն ու ոչնչացումը իրենց համար հարիւրաւոր զինուորների կոտորած է արժելու, իսկ մեռնելու վճռականութիւն ունեցող հայերի թիւը նրանք շատ լաւ գիտէին, որ չափազանց շատ է: Լաւ տեղեակ էին, որ Այգեստանում կենտրոնացած կռուող հայերի թիւը հազարների է հասնում: Նրանք սարսափում էին պատերազմի այդ վճռական օրերին իրենց զինուորներից հազարաւորների զոհել: Նրանք գիտէին, որ այդպիսի կորուստի համար նրանց գլխատելու են:

***

Այգեստանի խիզախների առաջին 24 ժամաան հերոսական դիմադրութիւնը նրա փրկութեան

Վանեցի մարտիկները դիրքերում

խարիսխը հանդիսացաւ, իսկ թշնամու ինքնավստահութիւնը, հիմքն ի վեր փշրուելով, կործանուեց:

Այդ առաջին օրն ու գիշերուայ հռչակաւոր պատմական ինքնապաշտպանութիւնը թէև 22 հերոսների ու անմման քաջերի կորուստով վերջացաւ, բայց այդ զոհերի արիւնն իրենց հազարաւոր հայրենակիցների փրկութեան անխափան յոյսի և անշէջ ու ազատարար լուսաշողի աղբիւրն ու ներշնչումը հանդիսացաւ:

Երբ ինքնապաշտպանութեան առաջին օրը մթնեց, և առաջին ճգնաժամային, մահասփիւռ գիշերը վերջացաւ, տեղեկատու և պրոպագանդի սեկցիան ժելատինատիպ բազմաթիւ թռուցիկներով և երկու տասնեակ պատանի սուրհանդակների միջոցով դիրքերում կռուողներին, ինքնապաշտպանութեան զանազան ճիւղերում աշխատողներին և ազգաբնակչութեան զանազան խաւերին տեղեկացրին հին յեղափոխական, բանաստեղծ և պրոպագանդիստ-հռետոր Յովհաննէս Կուլօղլեանի հետևեալ ոգեկոչող և խրախուսիչ ճառը՝ արտասանուած 2-րդ օրուայ ժամի 8-ին Դարդանէլի դիրքի փլատակներում:

«Կեցցե՜ն մեր քաջերը: Կեցցե՜ն մեր դիրքերում մեր առու-խրամատներում, մեր փուլ եկած տների և դիրքերի պատերի յետևում մեզ պաշտպանող հերոսները»:

«Թշնամին իր հազարաւոր զինուորներով, իր անհամար զէնքով, իր ռումբ ու կրակ թափող թնդանօթներով մեր քաջերի դիրքերից շատերը հիմնովին քանդեց, բայց չը կարողացաւ այդ արի արծիւներին յաղթել և ծունկի բերել»:

«Մեր դիրքերի պատերի ներքև, մեր պաշտպանութեան առուների և փոսերի եզերքին տաճիկ ասքեարների և նրանց բարեկամ քիւրտ ու լազ զինուորների դիակները չորացած ու թոշնած տերևների նման թափթփուած են»:

«Այգեստանի հայե՛ր, ինչ սեռի և հասակի որ էք, սրտապնդուեցէ՛ք և ինչով կարող էք, օգնէ՛ք ձեր անձնուրաց քաջերին»:

«Ձեր անձնուէր մարտիկների համար ոչինչ մի՛ խնայէք: Շտաբին և նրա օժանդակ սեկցիաներին հասցրէք ամէն տեսակի ուտելիք, հագնելիք, պղնձեղէն անօթներ և մինչև իսկ հաւաքեցէք թշնամու՝ ձեր գլխին թափած գնդակներն ու ռումբի կտորտանքները:

«Քա՛ջ եղէք, իմացէ՛ք, որ ձեր անզուգական մարտիկներից ամէն մէկը իր կեանքն ու արիւնը զուր չի տալիս, իսկ եթէ ստիպած լինի զոհուելու, նախքան այդ մեր թշնամու չարքերից հարիւրաւորների կ'ոչնչացնի»:

«Մեր թշնամու ռումբերի քարուքանդ արած դիրքերի մի մասը լուսաբացից առաջ նորոգել են, և նորոգման այդ դժուարին գործը շարունակւում է և շուտով կը վերջանայ: Անգութ թշնամուն եթէ յաջողւում է մեր հերոսներից մէկին խլել, նրա փոխարէն ուրիշներ, հինգ անգամով կ'աւելանան: Տաճիկը կարող է մեր քաջերին սպանել, բայց երբէք չի կարող մեռցնել նրանց անմեռ հոգիները: Այդ հոգիները թև են առնում և գնում նստում են ուրիշ հազարաւոր հայերի հոգիներում»:

«Հայրենակիցնե՛ր իմացէ՛ք, որ մեր դատը նիւրական է և սուրբ: Մեր փրկութեան միակ ճարը մեր աներեր միակամութիւնը, անկեղծ գործակցութիւնն ու անձնուէր քաջագործութիւնն է»:

«Վասպուրականցիներ՛, ձեզ համար մահաւան սարսափը գոյութիւն չի կարող ունենալ, քանի որ գիտէք քաջաբար դիմադրել և պաշտպանուել»:

Այս և նման սրտապնդիչ և ոգևորող կոչեր ինքնապաշտպանութեան գործին նոր թափ և նոր ուժ էին տալիս:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ

Ինքնապաշտպանութեան 2-րդ օրուայ առաւօտեանից թշնամին նորից սկսեց կատաղօրէն ռմբակոծել մեր դիրքերն ու պաշտպանութեան գծերը: Բայց առաջին օրուայ ներխուժման փորձերը չը կրկնուեցին: Ըստ երևոյթին, առաջին օրուայ մեր խիզախների տուած հակահարուածները թշնամուց բաւական շատ զոհեր էին խլել և նրանց հրահանգած

էր, ըստ հնարաւորութեան, նորանոր զոհերից խուսափել:

Փոխարէն, հաւանաբար, Ջնդէտի և զինուորական հրամանատարի կարգադրութեամբ 2-րդ օրը թշնամին հետապնդում էր նոր տակտիկա: Ըստ հնարաւորութեան ուժեղացնել ռմբակոծումները և հնարաւորին չափ շուտ քարուքանդ անել կուռղների դիրքերը, հնարաւորութիւն չը տալ նրանց նորոգելու և այդպիսով յոգնեցնել ու ջլատել հայերի դիմադրական կարողութիւնը: Մեր պաշտպանութեան գծի ներսում գոյութիւն ունէին թշնամու երկու զօրանոցներ և մէկ զինուորական ուժեղացած պահականոց: Զօրանոցները կոչւում էին Համուդ աղա և Պոչիկ-Ահմադ, իսկ պահականոցը տեղաւորուած էր անգլիական հիւպատոսարանում: Սրանք մարդակեր բորենիների նման իրենց կապարեայ խեղդիչ թաթերը դրել էին Այգեստանի՝ իր փրկութեան համար մարտնչող ազգաբնակչութեան սրտին և խեղդում էին նրա ազատ շնչառութիւնը: Այս հայակեր բորենիները հէնց առաջին օրւանից իրենց մահաստիւռ կատաղի կրակի տակն էին առել մեր կարևոր դիրքերից Շահբանդարը, Դարդանէլը, Յանկոյսների Դարի գլխի և մի քանի ուրիշ դիրքերը:

Ինքնապաշտպանւող հարևան դիրքերի համար մասնաւորապէս ստեղծուել էր տագնապալից դրութիւն, պաշտպանուել դրսի և ներսում մնացած թշնամուց:

Զօրանոցների մօտերքում եղած մեր դիրքերը երկու օրում քարուքանդ եղան: Բայց ինքնապաշտպանութեան օրհասական և ճակատագրական պայքարը կանգ առնել չէր կարող: Այգեստանցի հայերը շատ լաւ ըմբռնում և վեր էին լուծում ստեղծուած վիճակը: Մեր ամենափոքր ընկրկումն ու յուսալքումը մեր արիւնի ծարաւ թշնամու յաղթանակն էր լինելու: Այդ սև յաղթանակը մեր մահը, մեր միասնական, ընդհանուր, անխնայ և վերջնական մահն էր լինելու:

Մենք նահանջի ճար ու ճանապարհ չունէինք: Մենք պետք էր կռուէինք, դիմադրէինք և եթէ պիտի մեռնէինք, գոնէ հերոսի մահով մեռնէինք:

Փլատակուած դիրքերի արանքում խելագարօրէն պաշտպանւող և թշնամու ամէն յարձակում յետ շպրտող դիրքապահները երկու տասնեակ կորիւնսուրհանդակների միջոցով շտաբի հետ անընդհատ յարաբերութեան մէջ էին և ամէն 2-3 ժամը մի անգամ ցուցմունքներ և անհրաժեշտ պարագաներում օգնական ուժեր էին ստանում:

Այս ահռելի գօտեմարտում կեանքն իրա արժէքը կորցրել էր: Ոչ մէկը չէր էլ մտածում դասալքութեան, փախուստի կամ ապրելու և կենդանի մնալու մասին: Բոլորը գիտակցում էին՝ ապրել կարողանալու համար կռուել և զոհուել է պէտք:

***

Վան-Այգեստանի ինքնապաշտպանութիւնը հերոսական բազմաթիւ ծալքեր ունի: Սրանցից հաւանաբար մէկ կարևոր մասը ընդհանուր աղէտի և իրարանցման հետևանքով մինչև այժմ էլ գրի չի առնուել: Ես չգիտեմ այդպիսի հերոսական դէպքերից մէկը, որ տեղի ունեցաւ Յանկոյսների Դարի գլխին, որևէ տեղ յիշատակւա՞ծ է, թէ՞ ոչ: Դէպքը տեղի ունեցաւ հետևեալ պայմաններում:

Յանկոյսների եկեղեցի-դպրոցի ընդարձակ շէնքի գլխավերև՝ համանուն բլրալանջի վրայ, սև, մահագոյժ ագռաւի նման տաճիկների զօրանոցն էր թառել: Ինքնապաշտպանութեան 2-րդ օրւայ կէսօրից յետոյ՝ արևմուտի ժամանակ, թիւրք զինուորների մի ստւար խումբ, անջատ, անջատ որոշ հեռաւորութիւն պահելով և երկուական հոգով, մեծ զգուշութեամբ և փորսող սկսում էին մօտենալ Յանկոյսների զառիվերում (Դարի գլխին) գտնւող մեր՝ այդ ուղղութեամբ եղած ծայրամասի դիրքին: Զօրանոցի և մեր այդ դիրքի միջև եղող տարածութիւնը մօտ 2 կիլոմետր էր: Դիրքապահների զննող հայացքից այդ գաղտագողի յարձակումը հաւանաբար վրիպել չէր կարող:

Իր միակ մօր հետ դիրքի ներքնայարկ նկուղում ապրող 22 տարեկան աղջիկը՝ Կաղ Համաս ծանօթ անունով, որը Յանկոյսներ եկեղեցու տիրացուական դասին էր պատկանում և իր բնատուր քաղցրահնչիւն ձայնով այդ դասի պարծանքն էր համարւում, օգտւելով վիրաւորուած և հիւանդանոց փոխադրուած Վարդգէսի բացակայութիւնից և առանց դիրքապետի գիտութեան ու թոյլատւութեան՝ վերցնում է տասնհարւածեան մաուզէրն և գաղտագողի դիրքից դուրս է գալիս ու ինքզինքը թաքցնում է յառաջացող զինուորների ճանապարհի կողքին ընկած մեծ քարակոյտի յետևը:

Երբ տաճիկ ասքեարները մօտենում են, Համասը նրանց համազարկի է բռնում և անվրէպ գետին է գլորում նրանցից երկուսին: Յետևից մօտեցող ասքեարները նկատում են իրենց ընկերներին գետնահարող հերոս աղջկան և իրենց գնդակների տեղատարափով մաղանման ծակոտում են նրա մարմինը: Բարեբախտաբար, այդ խիզախ աղջկայ վրէժը մեր դիրքապահները անմիջապէս և ըստ արժանւոյն առնում են և յառաջացող թիւրք զինուորներից ուրիշ չորսին նորից սպանում են: Մնացեալ ասքեարները իրենց ընկերներից վեցի սպանումով սարսափահար եղած յետ են փախչում:

Համասը կաղ էր ծնւել: Գնահատւած էր եկեղեցական դասից և յարգւած հաւատացիալներից իր հնչիւն ձայնի և համեստ կեցւածքի համար: Հաւատացեալ դասից ստացած իր անբաւարար նւէրներով մի կերպ ապրում և ապրեցնում էր իր մօրը:

Ահա մի ուրիշ հերոսական անձնազոհում:

Դարդանէլի դիրքերը 2-րդ օրում կատաղի ուժգ-

նութեամբ ռմբակոծուում էին թշնամու կողմից: Արարքի հրապարակի կողքին՝ մեր պաշտպանութեան գծին համարեայ կպած, թիւրքերի դիրքերից մէկի կողմից և պաշտպանութեան ներսում եղած Համուդ աղայի զօրանոցից միւս կողմից, երկուստեք անխնայ և անընդհատ ռմբակոծուում էին Դարդանէլ անունով կոչուած մեր դիրքերը: Օգտուելով մօտեցող գիշերուայ մթնշաղից և կատաղի ռմբակոծութիւնից՝ Արարքի թշնամու դիրքերից մի տասնեակ ասքեարներ յարձակուեցին Դարդանէլի մեր գլխաւոր դիրքը գրաւելու մտադրութեամբ: Մեր դիրքապահները նրանց կրակի տարափի տակ առան, բայց ասքեարները, ձեռնառումբերով պաշտպանուելով, շարունակեցին իրենց յարձակումը: Շուտով նրանց օգնութեան հասան ուրիշ նոր յարձակող ասքեարներ: Դրութիւնը շատ կրիտիկական էր: Բացառիկ, արտաքոյ կարգի հերոսական մի ելոյթ, մի նախաձեռնութիւն էր պէտք յարձակող թշնամուն նահանջի պարտադրելու համար: Այդ հերոսական, անզուգական և անձնուրաց նախաձեռնութիւնը յանձնառու եղողը ճարուեց: Կարապետ Տանթէեանը՝ Արարքի դպրոցի 32 տարեկաննոց հայրենասէր, անձնուէր ուսուցիչը, իրենց կիսաքանդ դիրքի կտուրը բարձրանալով, համազարկի կապեց անհահանջ յարձակող ասքեարներին և նրանցից եօթին մի քանի րոպէում կոտորելով, մնացածներին փախուստի մատնեց: Բայց ափսո՜ս, հազար ափսո՜ս, Համուդ աղայի զօրանոցից իրա գլխին պայթած շարափնէլի (բեկորային) գնդակով տեղնուտեղը փշուր-փշուր եղաւ նրա՝ աննման հայրենասէրի գլուխն ու ուղեղը: Ցաւ ի սրտի պէտք է յիշեցնեմ, որ այս հերոսը հէնց նոյն երեց ընկերս էր, որ 3 օր առաջ ինձ զգուշութեան դաս էր տալիս, երբ ես մօրաքրոջս մօտն էի ուզում գնալ:

***

Գոյամարտի երկրորդ օրն էլ մթնեց: Հակառակ անվերջ ու կատաղի ռմբակոծումների և մի քանի անյաջող ներթափանցման փորձերի՝ թշնամուն այդ օրն էլ չը յաջողուեց փշրել ըմբոստ ժողովրդի դիմադրութիւնը: Մեր դիրքերից շատերը նորից քանդուելու ու խորտակուելու էին: Երկու օրուայ ընթացքում մեր հերոս մարտիկներից շուրջ 30 հոգի սպանուել և համարեայ դրա կրկինը ծանր վիրաւորուել էին: Ի հարկէ, սրանց ճշմարիտ թիւը, բացի զինուորական շտաբից, ոչ ոք չէր կարող իմանալ, քանի որ ազգաբնակչութեան հոգեկանը բարձր պահելու նպատակով պաշտօնական որևէ հաղորդում այս առթիւ չէր արւում: Բայց ինչպէս առաջին, երկրորդ օրուայ երեկոյեան ևս շտաբի թելադրանքով, պրոպագանդի և տեղեկատու և յանձնախմբի կողմից հետևեալ կոչ-յայտարարութիւնն արւեց.

«Հայրենակիցնե՛ր, կատաղի ու անգութ թշնամին այսօր էլ անկարող եղաւ մեր և մանաւանդ ձեր երկաթեայ կամքը փշրել: Հաւատացած եղէք, մինչև այն ժամանակ, երբ մեր հայրենասէր, անձնուրաց մարտիկները հերոսական վճռականութեամբ թշնամու յարձակումները դիմագրաւում են և մինչ այն ժամանակ, որ մենք մեկ սիրտ ու մէկ հոգու նման կը մտածէնք, կաշխատենք կը կռւենք, թշնամուն չի յաջողուի մեր շարքերը թափանցել»:

«Մենք կռւում ենք մեր գոյութեան, մեր կեանքի պաշտպանութեան համար: Մենք չենք ցանկանում մեր կանանց, քոյրերին, երեխաներին և մեր հարազատ ծնողներին յանձնել ապերախտ թշնամու ողորմածութեանը: Նրանք մեզնից խլեցին և խաբէութեամբ տարան մեր լաւագոյն զաւակներին: Նրանք մեր հայ զինուորներին տմարդի ու վայրագ ձևերով խողխողեցին»:

«Այսօր էլ նրանք դրսից և ներսից անվերջ ու անխնայ հարւածեցին, նրանք մեր դիրքերը քարուքանդ արին: Քանի անգամներ ներխուժել փորձեցին, որպէսզի մեզ իրենց սիւններով և տապարներով ջարդ ու փշուր անեն: Բայց այդ նրանց երբէք չի յաջողուելու, որովհետև մենք նրանց դիմադրում ենք միահամուռ, միահոգի և հերոսաբար: Նրանք այս երկու օրերում, մեր մի քանի զոհերի դիմաց, հարիւրաւոր սպանուածներ և վիրաւորներ են տուել»:

«Կեցցե՜ն մեր հերոսները, կեցցե՜ն մեր աննկուն դիրքապահներն ու նրանց մեղուաջան աշխատանքով օգնող թիկունքի աշխատաւորներն ու բանուորները»:

Գիշերուայ ժամի 7-ին ամրաշէն յանձնախմբի ցուցմունքներով և անմիջական մասնակցութեամբ սկսուեցին խորտակուած և փուլ եկած դիրքերի վերաշինութիւնը: Այգեստանում հաւաքուած ամբողջ ազգաբնակչութիւնը, բացի երեխաներից և շատ ծերերից, մի սքանչելի և աննման միասնականութեամբ տենդագին աշխատել սկսեցին: Ամէն մէկն անում էր այն, ինչի ընդունակ էր: Որմնադիրներին օգնում էին: Կանայք և աղջիկները ցեխ, քար և աղիւս էին կրում: Ուրիշները գետնափորներին էին օգնում՝ նրանց քանդած գետնուղիների աւելորդ հողերը փոխադրելով: Ուրիշները վազում էին վիրաւորներին օգնելու, նրանց համար սպիտակեղէն, շորեր կամ տաք կերակուր և ապուր տանելու: Շատերն էլ հաց, ուտելիք, հագուստ, գուլպա, կօշիկ, սպիտակեղէն և անհրաժէշտ իրեր էին հաւաքում: Թիկունքային օժանդակ աշխատանքները մեծ եռանդով նւիրուածութեամբ էին գլուխ գալիս:

ԵՐՐՈՐԴ ՕՐԸ

Վան-Այգեստանի ինքնապաշտպանութեան ամենաճգնաժամային օրերից մէկը կարելի է 3-րդ օրը հաշուել: Թշնամին ծանրօրէն վիրաւորուած գազանի նման սկսեց նորից յարձակուել ամէն կողմից: Դժոխային կրակ էր թափում ամենուրեք: Բայց Նորա-

Վանեցի մարտիկները դիրքերում

չէն կոչուած կենտրոնական թաղամասի վրայ թափուող կրակին չափ ու սահման չկար: Թնդանօթներից արձակուած և շարափնել կոչուած ռումբերն իրար յետևից թափուում էին թաղամասի տների գլխին և անմիջապէս պայթելով՝ հարիւրաւոր կտորների էին վերածուում և ընդհանրապէս հրդեհներ էին յառաջացնում:

Թշնամին ենթադրում էր և, դժբախտաբար, այդ ենթադրութիւնը ճիշտ էր, որ մեր ինքնապաշտպանութեան Կենտրոնն ու պահեստները այդ թաղամասումն էին կենտրոնացուած և դրա համար էլ այդ օրուայ ռմբակոծման նշանախէցը կենտրոնացել էր այդ թաղամասի վրայ:

***

Բարեբախտաբար, այդ դժոխային և ճակատագրական օրումն էլ Այգեստանի ազգաբնակչութիւնը կարողացաւ պահել իր կատարեալ սառնարիւնութիւնը և այդ շնորհիւ այն գիտակցութեան և խորը համոզման, որ, բացի մինչև վերջին շունչ դիմադրութիւնն ու ինքնապաշտպանութիւնը, ուրիշ ելք չկայ:

Դժբախտութիւններ կան, որոնց չափն ու սահմանը որոշուած չէ, և որոնք տարերօրէն ու համընթաց բախտի և բախտաւորութեան յոյս ու նշոյլ են առկայծում: Ճիշտ և ճիշտ այդպէս էր մեր ինքնապաշտպանութիւնը: Հայ ժողովուրդը զանգուածօրէն և խելայեղօրէն պայքարում էր և համոզուած էր, որ իր փրկութիւնը միայն և միայն այդ բոլորանուէր և անձնուրաց դիմադրութեան մէջն է:

Շտաբն իր ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացրել էր դիրքերի և պաշտպանութեան գծերի վրայ: Օժանդակ ուժեր և կռուողներ ուղարկւում էին փոխարինելու զոհուած կորուստին ու վիրաւորեալներին: Օգնական սեկցիաներից ամէն մէկն աշխատում էր ոգի ի բռին իրենց յանձնուած պարտականութիւնը ըստ հնարաւորութեան անթերի կատարելու համար: Զինագործարան, տեխնիկական մաս, պլանային և վերաշինարարական սեկցիան, պարենահայթայթիչը և այլն, բոլորն էլ անխնայ և սրտանց աշխատում և ջանանում էին իրենց պարտականութիւնները լրիւ կատարելու:

Իսկ անմիջականօրէն կռուի պաշտպանութեան հետ գործ չ'ունեցող կանայքն ու աղջիկները, երբեմն էլ նոյնիսկ ծերերն ու երեխաները, խիզախօրէն պայքարում էին հրդեհների դէմ: Տներում և թոնիրներում հող ու մոխիր չէին թողել, ինչ որ ճարում, բերում և թափում էին ռմբակոծումներից յառաջացած հրդեհները մարելու համար:

Ինչքա՜ն սքանչելի էր այդ օրերի հայ ժողովրդի միասնականութիւնն ու միակամութիւնը: Երանի չէր լինի, որ հայ ազգը միշտ ունենար և պահէր այդ դժբախտ օրերին յայտնաբերած իր՝ այդ գովելի միութիւնն ու անքակտելի միակամութիւնը...

Այդ ճգնաժամային և սարսափալից օրն էլ իր վերջաւորութեանը հասաւ:

Բարեբախտաբար, թշնամուն այդ օրն էլ չը յաջողուեց փշրել մեր դիմադրութիւնը:

Երրորդ օրը մեր Այգեստանի ինքնապաշտպանութեան պատմութեան մէջ եղաւ և պիտի մնայ

որպէս հայ ազգի հերոսական անմոռանալի դիմադրութեան, նրա ապրելու և շնչելու տենչացող կամքի նիւթական խորհրդանիշը:

Նոյն գիշերուայ ժամի 8 և կէսից Յովհաննէս Պուճիքեանի և Մարգար Փախչոյեանի ղեկավարութեամբ կազմակերպուած Վարժապետանոցի ուսանողների «ֆանֆառ» կոչուած նուագախումբը, արհամարհելով թշնամու ռմբակոծումների յառաջացրած սարսափը, նուագում էր մարտակոչ ու հայրենասիրական երգեր՝ մի կողմից Այգեստանի քաջերին ոգևորելով և մարտի հրաւիրելով, իսկ միւս կողմից անյաջողութեան ամօթի մատնուած թշնամուն աւելի ևս կատաղեցնելով:

Իսկ պատանի սուրհանդակները, ֆանֆառի նուագների ելևէջներով ոգևորուած և կայտառացած, վազվզում և թռչկոտում էին այս ու այն տեղ՝ ցրելու այդ գիշերուայ ժելատինատիպ հետևեալ կոչ-հաղորդագրութիւնը.

«Հայրենակիցնե՛ր, այսօր էլ մենք կարողացանք դիմագրաւել մեր թշնամու՝ անմոռանալիօրէն վայրագ և կատաղի յարձակումներին և ռմբակոծումներին: Մեր դիրքապահները կռուեցին և մեզ պաշտպանեցին անմման հերոսութեամբ: Դուք բոլորդ էլ բերիք ձեր օգնութեան փրկարար բաժինը: Համոզուած և վստահ եղէք, որ մենք չենք պարտուելու: Մեր պաշտպան Աստուածը չի յօժարելու երբևիցէ, որ մեր անիրաւ և անգութ թշնամին մեզ տրորի ու ոչնչացնի, մեր օրն ու արևը խաւարի և մեր հայրենի օջախներն ու հարազատ հողը մեզնից աւազակաբար խլի: Այս գեղատեսիլ Այգեստանը մեր պապերի, մեր նախահայրերի նիւթական հողն է, նրա սիրասուն հայրենիքն է: Վասպուրականը մեր այդ հայրերի և նախահայրերի քրտինքով շաղախուած, շէն ու բարգաւաճ դարձած և մեզ յանձնուած թանկագին ժառանգութիւնն է: Մեզ վրայ սրբազան պարտականութիւն է դրուած՝ մինչև մեր արեան վերջին կաթիլներով, պաշտպանել նրան: Եթէ մեզ վիճակուած է մեռնել, թող պատուով և անմահների մահով մեռնենք...»:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՕՐԵՐՈՒՄ

Չորրորդ օրուայ առաւօտեան՝ լուսաբացից առաջ, որոշեցի նախ մեր տունը հանդիպել և յետոյ վերադարձին յայտնել մեր ընկեր Խէրանեանին, որ ներկայ լինի նոյն օրուայ գիշերային խորհրդակցութեանը ինձ մօտ՝ պարենապահեստում:

Շատ սրտաճմլիկ և տխրալի էր մեր փողոցի իմ առաջին տպաւորութիւնը: Համիդ-աղա կամ Համուդ աղա կոչուած զօրանոցից փոքր հեռաւորութեան վրայ հարուստների երկյարկանի և եռյարկանի տները փուլ էին եկել և գրեթէ աւերակի կոյտերի էին վերածուել: Առանց այն էլ ծուռումուռ և նեղլիկ փողոցի անցքը շատ տեղերում փակուած էր: Այդ օրերին լոյս ցերեկով մեր փողոցից անց ու դարձ անելը հաւասար էր ինքնասպանութեան գնալու, բայց, բարեբախտաբար, դեռ կիսամութ էր, և մեծ դժուարութեամբ կարողացայ ինձ մեր տունը հասցընել:

Փողոցի մեր դուռը մի քանի անգամ թակեցի: Բաց անող չը կար: Մի տեսակ սարսուռ անցաւ ամբողջ մարմնովս: Մերոնք ի՞նչ են եղել: Ու՞ր են գնացել: Ստիպուած յառաջացայ մինչև մեր այգու պատը, որ փողոցի և մեր տան շարունակութեան վրայ էր գտնուում: Գիտէի պատի շարունակութեան վրայ եղած համեմատաբար ցած տեղը: Այդ տեղից պատի վրայ բարձրացայ և մեր այգին մտայ: Վիճակս տագնապալի էր դառել: Մի քանի րոպէներում չարագուշակ մտքեր անցան գլխովս:

Ի՞նչ են եղել մերոնք: Մի գուցէ ռմբակոծման զոհ են գնացել: Բայց մեր տունը արտաքնապէս վնասուած չէր: Այգեմուտի դուռը չուզեցի թակել: Նրանցից ոչ հեռու ցածլիկ մի պատ կար: Բարձրացայ պատով և մեր փայտամբարի կտուրն ելայ: Բակում եղած սև թութի ծառի վրայից իջայ մեր բակը: Բակում մի րոպէ կանգ առայ և նայեցի շուրջաշուրջս: Մեր միայարկանի շէնքի ոչ մի անկիւն վնասուած չէր: Համիդ աղայի զօրանոցի ռմբակոծութիւններից մեզ բաժին չէր հասած: Ենթադրեցի, որ մերոնք թոնրատնում քնած կը լինեն, քանի որ մեր տան ամենաապահով տեղն էր այդ: Ենթադրութիւնս ճիշտ էր:

Կամացուկ և անաղմուկ ներս մտայ: Մեր թոնրատունը բաժանուած էր երեք մասի, այսպէս ասած, նախաբաժինը, թոնրաբաժինը և քնատեղը: Այս վերջին բաժինը 2 և կէս մետր լայնութեամբ, 4 մետր երկարութեամբ և մօտ կէս մետր բարձրութեամբ մի տեղ էր:

Մեզ մօտ այնպէս էր դասաւորուած, որ այդ բաժնում սովորաբար միայն կանացի սեռն էր քնում, իսկ տղամարդիկս՝ սենեակում կամ ննջարանում: Երբ ես ներս մտայ, նկատեցի, որ մեր ընկալեալ կարգը խանգարուած էր: Ըստ երևոյթին, քոյրս և եղբօրս կինը իրենց վախից հօրս խնդրել էին այդ բաժնի վերի անկիւնում քնել:

Ներս մտայ և շատ ցած, հազիւ լսելի ձայնով կանչեցի՝ Արաքսի:

Քոյրս ընդոստ վեր թռաւ և իր երեխայութիւնից մնացած սովորութեան համաձայն, դէպ ինձ վազ տալով և իրա՝ դեռ շատ նուրբ բազուկներով ու ձեռներով վզիցս օղակուելով, սկսեց լաց լինել, որից հայրս ու եղբօրս կինը արթնացան:

– Բա ու՞ր ես մնացել, Սիրա՛ք: Մեզ ինչու՞ անտէր, անտիրական ես թողել:

– Արա՛քս ջան, սպասի՛ր, հանգստացի՛ր: Նախ և առաջ դու իրաւունք չ՚ունես լացելու, այդ քեզ չի սազի: Դու արդէն 15-16 տարեկան մեծ աղջիկ ես: Քու հասակակիցները մեր կռուողներին ամէն կերպ օգ-

նում են: Յետոյ ինչու՞ անտէր, անտիրական ես հաշւում քեզի: Փառք Աստծոյ հա՛յրդ, տէր հայրը կողքիդ է:

– Իսկ դու կարծես մոռացե՞ր ես, որ ես մեր հիւանդ եղբօր կնոջն եմ պահում: Առանց ինձի նա մէկ ժամ իսկ չի ապրի: Մենք այս գիշերը բոլորովին չենք կարողացել քնել: Հայկանուշը երբ իմացաւ, որ Կարապետը վիրաւորուել է...

– Ի՞նչ, Կարապետը վիրաւորուել է, ե՞րբ, ինչպէ՞ս,– քրոջս խօսքը կտրելով՝ շտապ հարցրի ես:

– Մի՞թէ չեն յայտնել: Ես սուրհանդակ Սուրիկի միջոցով երէկ երեկոյեան քեզ յայտնել եմ:

– Նա դեռ ինձ չի տեսել: Ասա տեսնեմ ինչպէ՞ս և ի՞նչ տեղից է վիրաւորուել:

– Թևից, ձախ թևից: Գիտես, որ նա դիրքապահ է: Երէկ առաւօտեան նրան տեղափոխել էին Շանփողոցի Քօռ Խէչոյենց դիրքը: Կէսօրից յետոյ նրանց դիրքը շատ ուժեղ ռմբակոծեցին: Թնդանօթի շարափն էլ գնդակը ցրիւ է եկել նրանց դիրքում: Խեղճ Աւոյին տեղն ու տեղը սպանել, և, բարեբախտաբար, եղբօրս միայն վիրաւորել է:

– Ասա՛ տեսնեմ, իսկ վէրքը ծա՞նր է: Հիւանդանոցը փոխադրե՞լ են, թէ ոչ:

– Ասում են՝ վէրքը թեթև է և շուտ կը լաւանայ: Տէր հայրը հիւանդանոցն էր գնացել: Հազիւ երկու ժամ է, ինչ վերադարձել է: Մենք բոլորովին մենակ ենք եղել: Սիրաք ջան, քեզնից չեմ կարող թաքցնել. այնպէս եմ վախեցել, այնքան շատ եմ վախեցել, որ ասել չեմ կարող: Իսկ խեղճ Հայկանուշը, առանց այն էլ գիտես, ինչպիսի գլխացաւեր ունի: Երբ Կարապետի վիրաւորուելու լուրն իմացաւ, սկսեց սիրտը թափել: Ախր ես մենակ ի՞նչ կարող եմ անել: Ասա՛, ի՞նչ կարող եմ անել:

Քոյրս նորից լաց լինել սկսեց:

– Արա՛քս ջան, եթէ նորից շարունակես լացել, ես անմիջապէս կը թողնեմ և կը հեռանամ, և լաւ գիտցիր, որ այլևս չեմ վերադառնայ: Քեզ ասում եմ, դու իրաւունք չունիս լաց լինելու, հասկանում ես, իրաւունք չունիս: Կրկնում եմ, քու հասակակիցներդ հերոսանման գործեր են կատարում: Քանդած դիրքերի համար ցեխ ու քար են կրում: Թշնամու՝ մեր գլխին թափած ռումբերի սառած կտորներն են հաւաքում: Կրակի ու հրդեհների վրայ հող ու մոխիր են թափում: Սուրհանդակ են լինում և դիրքապահներին հաց ու կերակուր են տանում, իսկ դու այստեղ քու ասելով միայն քու հիւանդ եղբօր կնոջն ես խնամում և դրա համար լաց ես լինում: Հիմա դու ինքդ ասա, բա՛, ամօթ չէ՞ քեզ այդպէս վախկոտ և փոքրասիրտ լինել:

– Ես քո ասած բոլոր գործերն աւելի ուրախութեամբ կը կատարեմ: Ինձ քեզ հետ տա՛ր: Ես այստեղ մենակ մնալ չեմ կարող:

Ասաց և նորից լացել սկսեց:

«Ես այստեղ մենակ մնալ չեմ կարող»,– քրոջս ասած վերջին խօսքերը մեքենայաբար կրկնեցի և մտովին անդրադարձայ նրա վշտին: Տարօրինակ և անբացատրելի մի կապ, մի հոգեկան կապ նրան ինձ հետ էր կապում և օղակում: Անբախտ մօրս մահից յետոյ նրա համար մեր տնում ինձնից զատ կարծես ոչ ոք գոյութիւն ունէր: Ես չկայի, բացակայում էի տնից, ուրեմն տունը նրա համար թափուր էր, անմխիթար և աննպատակ: Նա լացում է ոչ թէ վախից, մինակութիւնից, հիւանդին օգնելու դժւարութիւնից, այլ լացում էր, որովհետև մի քանի օր իրար վրայ տնից բացակայում էի:

Ես նրան պինդ սղմեցի գրկումս: Մի քանի անգամ ջերմօրէն համբուրեցի նրան և սրտապինդ մխիթարեցի.

– Արա՛քս ջան, եթէ դու ինձ սիրում ես, խնդրում եմ, որ այլևս չը լացես: Ես քու լացը տեսնել չեմ կարողանում: Երբ դու լացում ես, իմ սիրտը քաշքշւում և սեղմւում է, ու շունչս մի տեսակ կապ է գալիս: Կրկնում եմ, եթէ ինձ սիրում ես, չպիտի լաց լինես:

Յետոյ շուրջ կէս ժամ եղբօրս կնոջ և հօրս հետ խօսակցեցի: Եղբօրս կնոջը շատ ջանացի սիրտ տալ, քաջալերել: Նա շատ յուսահատ էր իր առողջութեան համար: Հիւանդների մեծ մասը յոյս ունի իր ապաքինման համար: Դժբախտաբար, մեր Հայկանուշը նրանց թւին էր պատկանում, որոնք թերահաւատ են իրենց ապագայ ապաքինման համար:

Իմ երիտասարդ օրերում ես բաւական շատ մոլեռանդ հաւատացեալ էի: Մարքսիստական վարդապետութեան ընթերցումն ու ուսումնասիրութիւնը դեռ չէր կարողացել իմ հաւատքի սիւները խախտել: Դրա համար հօրիցս խնդրեցի մեր բոլորի և ընդհանուր մարտնչողների ու ժողովրդի փրկութեան համար ջերմեռանդ աղօթել:

ՄՏԵՐՄԻԿ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինքնապաշտպանութեան 4-րդ օրւանից մեր պաշտպանւել կարողանալու հաւատքը սկսեց ուժեղանալ: Դրա գլխաւոր պատճառը նախ այն հանգամանքն էր, որ ընդհանրապէս մեր թշնամուն դիմագրաւել չը կարողանալու կասկածն ու վախը այս ճգնաժամային ահռելի օրերն անց կացնելուց յետոյ համեմատաբար պակսել էր և ապա թշնամու՝ մեզ մէկ օրում ընկճելու անբարտաւան որոշման անհետևանք մնալն էր: Այո՛, մեր թշնամին հաւատացած էր, որ ամենաուշը 24 ժամ մեր դիմադրութիւնն ու պաշտպանութիւնը փշրտելու և վերջացնելու էր:

Չորրորդ օրւանից թշնամու յարձակման և ռմբակոծումների մոլեգնութիւնը զգալիօրէն թուլացել էր: Գուցէ նա ոճրածին նոր ծրագիրներ էր մշակում և պաշտպանող հայութեանը յանկարծակիի բերելու էր պատրաստւում: Այդ պարագան, իհարկէ, մեզ յայտնի չէր:

Այդ երեկոյեան մեր երիտասարդ ընկերներից տասն հոգու տեսակցութեան էի կանչել: Մեր այդ օրերի պայմաններում մեծ թւով մարդկանց միատեղ հաւաքելը նախ դժւար և յետոյ վնասակար էր: Երկու տասնեակ սուրհանդակներից 6 հոգին մեր տղաներից էին: Նրանց միջոցով յաջողացրել էի այս հաւաքոյթը:

Հաւաքոյթին կարողացել էին ներկայ լինել Վ. և Ն. Խէրանեանները, Ա. Խանջեանը, Հր. Դարբինեանը, Կալճեանը, Միհրդատ Բրուտեանը, տիկ. Սօլախեանն և երկու ուրիշները (Միհ. Բրուտեանի եղբայրը՝ Աբ. Բրուտեանն ու տիկ. Յասմիկ Սօլախեանի ամուսինը՝ Արտ. Սօլախեանը՝[26] ինքնապաշտպանութեան կռիւներից դեռ ամիսներ առաջ բանտարկւեցին և վայրագ թիւրքերի բանտերում սրախողխող եղան): Խորհրդակցական ժողովը ես սկսեցի.

– Շատ եմ ցաւում,– ասացի, – որ մենք այսօր ձեզ ծանօթ պայմաններում ենք իրար հանդիպում: Ամէնքդ էլ գիտեք, որ մենք չափազանց անհաւասար կռւի ենք մտել մեզնից հազարաւոր անգամ աւելի ուժեղ թշնամու հետ: Գիտէք նաև, որ մենք կամովին, սիրայօժար այս կռւին չենք բռնւել մեր թշնամու հետ: Այս անհաւասար կռիւը թշնամին է մեզ՝ այգեստանցիներիս պարտադրել: Թշնամին խաբէութեամբ հրաւիրեց և բանտարկեց հայ յեղափոխական գործիչներին և լաւագոյն, հայրենասէր ընկերներին, որոնց թւում նաև Բրուտեանին, Սօլախեանին, Ասօյին և մի քանի ուրիշներին: Նրանց ճակատագրից որևէ տեղեկութիւն չ'ունենք: Նախքան այս ինքնապաշտպանութեան կռիւները՝ բազմաթիւ փորձեր արւեցին նրանց ազատման համար, բայց, դժբախտաբար, բոլորն էլ անարդիւնք մնացին: Տեղեակ էք նաև այն մասին, որ այս ապրիլի 3-ին, Զնդէտի կողմից խաբէութեամբ հրաւիրւեցին Իշխանն ու իր ընկերները Շատախ, որպէս միջնորդ ուղարկւելու և այնտեղի հայ և թուրք ընդհարումնե-

Արտաշես Խաչատուրի Սոլախյան

ին վերջ տալու պատրւակով, բայց Հայոց-Ձորում վայրագօրէն խողխողւեցին և վերջապէս լրիւ տեղեկութիւններ ունէք շրջանի գաւառների և գիւղերի մեր հայ ազգաբնակչութեան ահռելի և համատարած ջարդերի մասին:

Մեր այսօրւայ հաւաքոյթի նպատակն է նախ իրար հանդիպելու և ըստ հնարաւորութեան ընկերներին տեղեակ պահել այս քանի օրերի անցուդարձից: Ի դէպ, եթէ կան օգտակար առաջարկութիւններ, դրանց համառօտ նշումները յանձնել Զինւորական Կենտրոնական Մարմնին, որպէսզի եթէ նպատակայարմար համարւի, գործադրութեան դրւի: Բայց ամենից առաջ, կարծում եմ, մեզ բոլորիս համար հետաքրքիր է շատ հակիրճ ձևով յայտնել, թէ մեր ուսանողական կազմակերպութեան ընկերներն այս ինքնապաշտպանութեան կենաց մահու պայքարում ի՞նչ բաժին են բերել:

Առաջին խօսք վերցնողը եղաւ տիկ. Յասմիկ Սօլախեանը:

– Չնայած որ ես մէկ մանչ ունեմ՝ 7 և մի աղջիկ՝ 4 տարեկան, և այս փոքրերի համար մանաւանդ այս արկածալից օրերում մայրական մասնաւոր խնամք է պէտք, բայց ես ինքս ինձ չը կարողացայ համոզել տանը մնալու: Մօրս խնդրեցի նրանց հետևել և խնամել ու ինքնայօժար դիմեցի վիրաւոր դիրքապահներին յատկացւած Ամերիկեան միսիոնարութեան հիւանդանոցը: Այս օրերում գթութեան քրոջ պարտականութիւններն եմ կատարում: Հէնց հիմա, որ այստեղ եմ նստել, նրանց համար շատ

26 **Արտաշես Սոլախյանը** ծնվել է Վանում, 1884 թ.: Երամյան դպրոցն ավարտելուն պես նույն դպրոցում ուսուցիչ է կարգվել: Դասավանդել է հայոց լեզու և գրականություն, պատմություն, իսկ Վանի թուրքական դպրոցում՝ նկարչություն և գծագրություն: Բացի հմուտ մանկավարժ լինելուց՝ Արտաշեսը շնորհալի նկարիչ էր, թատերգու, երաժիշտ և երգիչ, տաղանդավոր դերասան և, վերջապես, ազգային քաղաքական գործիչ: Գերազանց տիրապետում էր ֆրանսերենին և հեռակա ուսանում էր Սորբոնի համալսարանում: Պատերազմի հենց սկզբում մի քանի ընկերների հետ ձերբակալվում է և մի քանի ամիս բանտային անասելի տառապանքները կրելուց հետո գազանաբար հոշոտվում. «Վանեցիները գտան այն տեղը, ուր կատարվել էր հրեշայինը... Արտաշեսի հարազատները այդ նեխած մսակույտերի մեջ հազիվ ճանաչել են նրա անդամահատված մի ոտքը՝ մոր հյուսած բրդյա նախշազարդ գուլպայով... Զնդանից «ազատվեցին» միայն Սոլախյանի բանտային հուշերը...», որոնց մեծ մասն էլ (7 տետրից պահպանվել են երկուսը) կորստյան դատապարտվեց: 2002 թ. «Վասպուրական» հայրենակցական միության ջանքերով հրատարակվել է փրկված երկու տետրերի պարունակությունը. «Արտաշես Սոլախյան, Բանտային հուշեր» վերնագրով:

անհանգիստ եմ, որովհետև նրանցից մի քանիսի վիճակը բաւական լուրջ է: Դժբախտաբար հիւանդանոցում դարմանումի ամենաանհրաժեշտ միջոցները չափազանց անբաւական են: Հմուտ վիրաբուժների, հականեխումի և նոյնիսկ անհրաժէշտ դեղօրայքի պակասը մեր ձեռքն ու ոտքը կապում և մեզ անել կացութեան է մատնում:

– Իմ և ընկերներիս կողմից ձեր պարտաճանաչութեան և անձնուրացութեան համար մեր շատ յարգելի ընկերոջ անզուգական ու անձնուէր կնոջը երախտապարտ շնորհակալութիւնն ենք յայտնում,– ասացի և ջերմօրէն սեղմեցի նրա ձեռքը:

– Իսկ ես Շահբանդարի դիրքապետի երկրորդ օգնականն եմ նշանակուել,– ասաց Դարբինեանը, – մեր արեան հետ հարսանիքի ենք բռնուել: Համուդ աղայի զօրանոցից հազիւ չորս-հինգ հարիւր քայլի վրայ է մեր դիրքը: Այս նզոված զօրանոցից արձակուած դժոխային կրակը մեզ վառել և մրրկել է: Մինչև հիմա երկու անգամ մեր դիրքերը քարուքանդ են եղել: Մեր առաջին գլխաւոր դիրքապահ Կարօն, որ աննման քաջ մարտիկ էր, սպանուեց: Կռուողներս գինովցած խենթի նման դիմադրում ենք թշնամուն և մեզ ինքնամոռացութեան ենք մատնել: Բայց պէտք է խոստովանեմ, որ առանց մեր հայրենակից որմնադիրների, որոնք ինքնաշխատ մեքենաների նման նորից ու նորից շարում ու վերաշինում են մեր փլատակուած դիրքերը, մեզ համար միանգամայն անկարելի կը լինէր դիմադրաւել կատաղած թշնամուն: Մենք մեծ դժուարութեամբ պաշտպանւում ենք այդ իժերի համազարկից ու դժոխային կրակից: Մեր յետևում 2-3 մետր հեռաւորութեամբ, նրանք անդադար ու անխոնջ բարձրացնում են նոր պատեր և պատնէշներ: Ամէնից յուզիչ և միանգամայն խրախուսիչ տեսարանը կերպարանաւորւում են նրանց քար, աղիւս և ցեխ հասցնող կիներն ու աղջիկները, որոնց շարքում կան նաև պառաւած կիներ և կորամէջք ծերունիներ: Սրանից աւելի յուզիչ և հայրենասէր հերոսամարտ մի՞թէ կարելի է երևակայել:

– Ընկերնե՛ր, տեսնում եմ, որ ձեր բոլորիդ հայեացքը դէպի ինձ է կենտրոնացել,– համեստօրէն արտայայտուեց Աղասի Խանջեանը: – Գիտեմ, որ ուզում էք հարցնել, ես ինչ գործի եմ: Ընկ. Սիրաքն արդէն տեղեկութիւն ունի իմ կատարած գործից: Կարծում եմ կարելի է և ձեզ յայտնել այդ: Պաշտպանութեան կոմիտէի վերջին խորհրդակցական ժողովում Յովհ. Կուլօղլեանի և Օննիկ Մխիթարեանի հետ ինձ ևս ընտրեցին պրոպագանդի և տեղեկատուութիւն սեկցիայում: Ինձ թւում է, որ այդ ընտրութեանը ես որոշ չափով կարողացայ արդարացնել և ուժերիս չափ օգտակար լինել գործին: Շտաբի անունով եղած բոլոր հայրենանուէր և խրախուսիչ կոչերը, ինչպէս նաև նրա հաղորդագրութիւններն ու կարգադրութիւնները, մեր այդ երեք հոգինոց յանձնախմբի միջոցով է կատարւում:

Թող ինքնագովութիւն չը թւի, եթէ յայտնեմ, որ բոլոր խմորատիպ հաղորդագրումներն և մանաւանդ ինքնապաշտպանւող ու ժողովրդի հոգեկանը բարձրացնելու ծառայող կոչերի ու խրախուսանքների խմբագրման գործից բաւական կարևոր բաժինը ինձ վրայ է ընկել:

– Իսկ ես,– յայտնեց Վ. Խէրանեանը,– գործակցում եմ տեխնիկական-պլանային յանձնախմբի հետ: Այս յանձնախմբի տարեց անդամներից պրոֆ. Մինասեանն ու Մամբրէ Մկրեանը տեսաբան-քիմիկոսներ են: Կան նաև տեխնիկ-քիմիկոսներ, որոնց գլխաւորը Գր. Բուլղարացին է: Մեր այս յանձնախմբի գործը չափազանց պատասխանատու և դժուարին գործ է: Յանձնախմբի տրամադրութեան ներքև կան բազմաթիւ հմուտ արհեստաւորներ, զինագործներ, ձուլողներ, կաղապարողներ: Նրա ցուցմունքների համաձայն՝ աշխատում են նոյնպէս փորձառու նկուղափորներ: Ամենադժուար և ամենաշտապ գործը այս վերջիններին է վիճակուած: Նրանցից ամէն մէկը 15-16 ժամ գետնափորի ձիգ և տաժանակիր աշխատանք է կատարում: Նպատակադրուած է (այստեղ Խէրանեանը կտրեց իր խօսքը և շուրջաշուրջ ներկաներին նայելով և ձեռքն օդում թափահարելով՝ շարունակեց) է՞հ, միևնոյն է մեր ամէնքի ձգտումը, նպատակը մէկ է և ընդհանրական: Մեզնից ո՛չ մէկը սրիկաների հետ կապ ունենալ չի կարող: Այո՛, ծրագրուած է ինչքան կարելի է շուտ օդ թռցնել, պայթեցնել և այրելով ոչնչացնել մեր կռուողների հոգէառ, այդ իժի ծնունդների երկու զօրանոցները: Դուք լսեցիք մեր ընկեր Դարբինեանի նկարագրութիւնը: Այդ երկու զօրանոցները օր առաջ, ժամ առաջ պէտք է ոչնչացնել, մոխրի վերածել, որպէսզի գոնէ մեր քաջարի դիրքապահները մի քիչ ազատ շունչ քաշեն և թշնամու երկու կողմանի կրակի մէջ չը խաչւին: Այդ ամէնից աւելի անհրաժէշտ ու շատ նշանակալից և մեզ համար անգին՝ վառօդի և թնդանօթի պատրաստութիւնն է: Մեր քիմիկոսները ցերեկն ու գիշերը իրար խառնած գլուխ են տրաքեցնում այդ երկու շատ անհրաժէշտ միջոցների պատրաստութեան համար:

Այս յայտնութիւնն այնքան ոգևորիչ էր, որ ժողովականները միանգամայն մոռացած դրութեան լրջութիւնը, սկսեցին ծափահարել ճառախօսին: Նա շարունակեց.

– Ինչպէս մեր տեսաբան և տեխնիկ-քիմիկոսները յայտնել են, յանձնախմբի բոլոր ծրագիրները շուտով, գուցէ մինչև մէկ-երկու օր, յաջողութեամբ կը պսակւեն, և մեր արի մարտիկների դիմադրական կորովը կը բազմապատկի:

Նորից ուրախութեան ծափերն ու կեցցէները դղրդացին:

– Սիրելի՛ ընկերներ, լրացրի ես, – տեսնում եմ, որ մենք բոլորս, ինքնապաշտպանութեան այս նուիրական գործում, բերում ենք մեր ուժերի չափով հնա-

ռաւոր մասնակցութիւնը: Ասենք մեզ համար չափազանց ամօթալի կը լինէր ուրիշներից յետ մնալ: Այս ճգնաժամային պայքարում մենք ամենքս մէկ, միայն մէկ նպատակ ունենք. թշնամուն չը թողնել, որ մեր և մերայինների ու հայրենակիցների դիակների վրայից, լրբօրէն քրքջալով, իր յաղթանակի ճանապարհը բաց անի: Հայ ժողովրդի պատմութիւնը մեզ ցոյց է տուել, որ լինել չը լինելու պայքարի դիւցազնական ելոյթներ շատ ենք ունեցել: Մենք երբէք ուրիշների տունն ու տեղը չենք քանդել: Մենք մեր հարևանների օջախն ու կրակը չենք խամրել: Մենք նրանց օրն ու արևը չենք սևացրել: Մենք նրանց տունն ու այգին մեր թնդանօթների ռումբերով հող ու փոշու չենք վերածել: Մենք միշտ աշխատել ենք շինել, շէնացնել և բարգաւաճել մեր սեփական հալալ աշխատանքով: Եւ խորապէս համոզուած եմ, որ բռնակալութիւնն ու բարբարոսութիւնը երկար թագաւորել չեն կարող: Բարի էք եկել և բարով գնաք, ընկերնե՛ր: Աճապարեցէ՛ք կատարելու ձեր հայրենակցական ազնիւ և անխարդախ պարտականութիւնը:

Մեր ընկերները, իրար հետ համբուրուելով, բաժանուեցին: Երբ մենակ մնացի, անխառն հպարտութեան քաղցր զգացումով ոգևորուեցի այդպիսի ազնիւ և անձնուէր ընկերներ ունենալուս համար:

ՀԱՄՈՒԴ ԱՂԱՅԻ ՁՕՐԱՆՈՑԻ ՀՐԴԵՀՈՒՄԸ

Ինքնապաշտպանութեան 5-րդ գիշերն էր: Զինուորական մարմնի կենտրոնում հաւաքուել էին շուրջ 15-ի չափ անձնաւորութիւններ: Սրանք զինուորական շտաբի կամ նրա հետ կապած սեկցիաների անդամներն էին: Այդ օրը ինձ էլ էր վիճակուել շտաբում ներկայ լինել: Ամէնքս անհամբեր Բուլղարացուն էինք սպասում:

Պլանային-տեխնիկական կոմիտէն ինքնապաշտպանութեան առաջին օրից իսկ Բուլղարացու անմիջական մասնակցութեամբ սկսել էր իր նկուղափորման ծանր և միանգամայն վտանգաւոր աշխատանքը:

Վճռած էր ամէն գնով հրդեհել և քարուքանդ անել Համուդ աղայի զօրանոցը, որ մեր ինքնապաշտպանութեան գործն անդամալուծում և ամէն օր, մանաւանդ մերձակայ դիրքերից, մեր կռուողներից նորանոր զոհեր էր խլում:

Զօրանոցը, որ մօտաւորապէս 18 տարի առաջ էր շինուել, ունէր ինքնապաշտպանութեան և յարձակման բոլոր յարմարութիւնները: Սարքած էր ամրակուռ և տաշած քարերից: Զօրանոցի երկրորդ յարկի վերևում եղած ընդարձակ թերասը շուրջաշուրջ պատնէշակալուած էր: Այդ պատնէշի խորշերում ամէն երկու մետրի վրայ տեղաւորուած էին գնդացիրներ և ծանր թնդանօթներ, որոնք անվերջ ռումբ ու կրակ էին թափում շուրջ բոլորը: Տեսել պայմաններում խենթութիւն կը լինէր յարձակուել այդ անառիկ բերդի վրայ: Միակ ճարը նրա հրդեհումն էր:

Զօրանոցի տակից հոսում էր քեահրիզի ջուրը: Նկուղափորները նախ օգտագործել էին այդ աղբիւրի ճանապարհը, յետոյ թեքուել էին դէպի ձախ և 25 մետրի վրայ փորել էին ներքնուղին դէպի զօրանոցը:

Նկուղափորման աշխատանքը վերջացել էր յաջողութեամբ, առանց կասկած յարուցելու զօրանոցում մնացած թշնամու շարքերում: Զօրանոցի ներքնայարկի տակում տեղաւորուած էր մերոնց սարքած վառօդը:

Այդ գիշեր՝ որոշուած ժամին, վառօդին միացած պատրոյգները վառուել էին: Վառօդը կրակուել և պայթել էր: Ներս մտաւ Բուլղարացին: Շտաբում եղողները նրան շրջապատեցին և տագնապալից սպասում էին նրա խօսքին:

– Շատ կը ցաւիմ,– սկսեց խօսել նա, նրա խօսակցութեան երանգում նկատելի էր ուժեղ յուսալքում,– ստիպուած եմ ձեզ յայտնելու, որ մեր սարքած դինամիտը պէտք եղած ուժը ունեցած չէ: Յետոյ կը մտածեմ, որ ջրի ճանապարհի մօտիկութիւնն ալ շատ խանգարած պիտի ըլլայ վառօդի պայթուցիկ կարողութեանը: Մեր գետնափորներու հինգ օրերու գիշեր-ցերեկուայ տքնաջան աշխատանքն իզուր անցաւ:

– Վա՜յ, ափսո՜ս, մեծ դժբախտութիւն է եղածը: Բա ի՞նչ ընելու է,– և նման յուսահատական բացականչութիւններ լսեցին ամէն կողմից:

– Ի՞նչ պէտք է ընել: Կարևորն աս է, մտացրիւ և կարծես մեքենայօրէն պատասխանեց Բուլղարացին: Մի քիչ յետոյ՝ իր ձեռքի երկու երկար մատներով իր ճակատը մի քանի անգամ հարուածելուց յետոյ, վճռական շեշտով աւելացրեց.

– Յուսահատելու իրաւունք չունինք, քանի որ դա ինքնայօժար մահի հաւասար է: Մեր տեսաբան մասնագէտների հետ նորից պէտք է խորհրդակցենք և աշխատենք մեր վառօդի որակն ուժեղացնել: Ուրիշ ճար չունինք: Այդ սրիկաներու զօրանոցը մեր հոգեառ սատանան է: Ամէն կերպ պիտի աշխատենք անոր գլուխը ջարդելու:

Բուլղարացին մտմտում էր: Նա պատրաստւում էր նորից շարունակելու, երբ մեր պատանի սուրհանդակներից երկուսը հևիհև ներս ընկան և ասին.

– Պ. Գրիգոր, զօրանոցը ծուխի մէջ կորած է: Հեռադիտակով նայեցէ՛ք:

– Ինչեր կը խօսաք, ա՜յ օղուլներ, չըլլայ թէ երազ կը տեսնէք: Ես ինքս անձամբ պայթիւնից երկու ժամ վերջ սպասեցի արդիւնքը տեսնելու: Բան մը չեղաւ... Բայց թող նայինք հեռադիտակով: Գուցէ...:

Տղա՛յք, գիշեր է ու մութ: Այս հեռադիտակով բան մը տեսնել չեմ կարող: Ձե՛զ մատաղ, նորից վազ

տուէք դէպի զօրանոցը և կրկին հաստատ լուր մը բերէք: Բայց զգոյշ եղէք, շատ զգո՛յշ: Եթէ զօրանոցը այրուած ըլլայ, թշնամին սաստիկ կատաղած կըլլայ... Ափսո՜ս, որ երիտասարդ չեմ...

Ինքս էլ առանց որևէ կարգադրութեան և հրաւէրի՝ դուրս թռայ և վազեցի դէպի զօրանոցը: Չէ՞ որ ես էլ այդ ժամանակ շատ երիտասարդ էի և ինչպէս ամէնքին, ինձ ևս չափազանց հետաքրքրում էր մեր դահիճների որջի հրդեհումն ու փլատակումը...

***

Կէսգիշերուանից մէկ ժամ անց ամէն ինչ պարզուել էր: Մեր բախտից վառօդի պայթիւնը, չնայած իր շատ թեթև ուժականութեան, փոքր ճեղք էր գոյացրել և հասել էր զօրանոցի ներքնայարկին, ուր զանազան բաժիններում ամբարուած էին ինչպէս դարմանը, այնպէս էլ զանազան պայթուցիկ ռումբերն ու պատրոնները:

Հրդեհը բռնկուել էր և զօրանոցում եղած ասքեարները, հակառակ բոլորի գործ դրած ջանքերի, ի վիճակի չէին եղել մարելու ոչ մի բորբոքող և տարածող կրակն ու հրդեհը:

Յուսահատուած զինուորները, ողջ-ողջ չ'այրուելու վախից, խուճապի եկած, իրենց ձեռքն ընկած ամեն տեսակի հրազէններով պաշտպանուած, սկսեցին զօրանոցից դուրս խուժել:

Մեր մօտակայ դիրքերից այդ չարագործ ասքեարներին և չէթէներին վրէժխնդիր համազարկերի էին կապել և նրանցից շուրջ 20 հոգու սպանել էին:

Հրդեհը գնալով հուրհուրում և տարածւում էր: 18 ամբողջ տարիների ընթացքին Այգեստանի հայութեան սրտի վրայ թառած գիշատիչների բոյնը հրաճարակ փլատակւում էր: Ինքնապաշտպանութեան ամբողջ հինգ ցերեկ-գիշերուայ ընթացքին այդ անգութ բարբարոսներն իրենց դժոխային համազարկերով և ռումբերով մեր արի դիրքապահներից և անպաշտպան կին, երեխայ, ծեր հայ ազգաբնակութիւնից շատ-շատերին արեան մէջ շաղախել և կոտորել էին ու հիմա ենթարկւել էին նրանց արդար ցասումին և վրէժխնդրութեանը:

Եթէ ընդհանուր խառնաշփոթը, գիշերուայ մութն ու Թօփրաք-Կալէի զօրանոցի մօտիկութիւնը չը լինէր, այդ չարագործ ասքեար-չէթէներից հազիւ թէ որևէ մէկը կարողանար մազապուրծ լինել մերոնց վրէժխնդիր գնդակներից:

Ժամի մէկից ուսանողների ֆանֆառը հրդեհի կրակից լափլփւող բռնութեան և ոճրագործութեան բերդի դիմաց կանգնած նւագում էր հայրենավառ և ազատաշունչ երգեր ու այգեստանցի հայերի վրէժխնդիր սրտերը հովացնում և անհուն բերկրանքով թռթռացնում էր:

Յաջորդ առաւօտեան կանուխ ինքնապաշտպանութեան տենդով բռնուած հայութիւնը, ամէն սեռի, հասակի, արհամարհելով դեռ ներսում մնացած, բայց վախից արդէն կուչ եկած Պոչիկ-Ահմադի տաճիկների զօրանոցի վախը, ինչպէս նաև գծից դուրս գտնուող թշնամու կրակոցները, փողոցն էր թափւել և շտապում էր գալու և տեսնելու Այգեստանի գլխաւոր պողոտայի գլխին հազարգլխանի վիշապի նման երկու տասնեակ տարիների ընթացքին իր ազատ շունչը խեղդող, ատելի զօրանոցի հիմնայատակ կործանումն ու թաղումը: Երբ իրենց աչքերով տեսնում և հաստատում էին, որ այլևս այդ իժերի բոյնը կործանւած և չքացած է, ուրախութիւնից յեղափոխական յուզիչ երգեր էին երգում, իսկ շատերը ծայրահեղ ոգևորութիւնից պարում էին...

Այդ օրը և յաջորդ երկու օրերի ընթացքին զօրանոցը դեռ կրակի և սև ու մահագոյժ ծուխերի մէջ իր կործանումն էր սգում...

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՅՈՅՍԻ ՆՇՈՅԼՆԵՐԸ

Այգեստանի ինքնապաշտպանութեան պայքարում կլանւած հայ ժողովրդի համար Համուդ աղի զօրանոցի հրկիզումն ու ոչնչացումը փրկութեան յոյսի մի սրտապնդիչ նշոյլ էր:

Մենք՝ այգեստանցի հայերս, նմանում էինք այն մարդուն, որ անտառի խորքում կամ նրա բացատում ձիւնախառն կատաղի փոթորիկի գալարումների մէջ է ընկնում: Այդ մարդը, թէկուզ ուժեղ ու հսկայ, իր բոլոր ճիգերի հակառակ, չի կարող խուսափել, փախչել և ազատւել իր գլխին անընդհատ պայթող շանթերից և նրան ձունակոյտերի մէջ մխրճող փոթորկալից քամիներից: Նա գլորւում, ցած է ընկնում և տապլտկւելով ու գերագոյն ճիգերով ոտքի է ելնում՝ նորից ու նորից սառնամանիքի մէջ խեղդւելու և շնչակոտոր թաղւելու համար: Նա գերմարդկային պայքար է մղում բնութեան սանձարձակ արհաւիրք-աղէտի դէմ մի կերպ նրա կլանող, ոչնչացնող երախից ազատւելու համար, բայց իզուր, հազար անգամ իզուր:

Պատկերացրէք բնութեան այդպիսի արհաւիրքի ենթարկւած մարդու հոգեկան վիճակը, երբ նա այդ մահաւան կլանող փորձանքում նշմարում է լուսատու ճրագի կամ առկայծող կրակի թէկուզ մի ամենափոքր նշոյլը:

Անմիջապէս նրա յուսահատ հոգում յոյսի, ապրելու տենչն է փայլատակում, և նա կրկնապատկում և բազմապատկում է իր դիմադրական պայքարը ազատւելու, փրկւելու համար:

Ճիշտ յար և նման բնութեան աղէտին ենթարկւած այդ մարդուն-անհատին, այգեստանցի հայը տոգորւեց այդ յոյսով, յաղթել կարողանալու յոյսով: Չէ՞ որ նա կարողացել էր դիմադրել ամբողջ 5 ցերեկ ու գիշեր և մանաւանդ Համուդ աղայի զօրանոցի հետ միասին թշնամու ջարդարար ծրագրին առայժմ վիժեցրել ու խորտակել էր:

Այդ դիմադրական պայքարում յատկապէս առաջին երեք օրերի հերոսական ինքնապաշտպանութիւնն ու Համուդ աղայի զօրանոցի հրդեհումը ճակատագրական և վճռահատող նշանակութիւն ունեցան: Առանց այդ էլ խիստ նշանակալից դէպքերի՝ Վանի հայ ազգաբնակչութիւնը հաւանաբար կոտորուած և սրախողխող արուած կը լինէր կատաղած և արիւնածարաւ Ջնդէտի ու նրա գործակից ոճրագործների կողմից:

Որոշուած էր Համուդ աղայի զօրանոցից անմիջապէս յետոյ՝ յաջորդ գիշերուայ լուսաբացից առաջ, հրդեհել նաև թշնամու երկրորդական նշանակութիւն ունեցող զօրապահակի կենտրոնը՝ Պոչիկ-Ահմադի դիրքը: Այս դիրքում ամրացած էին շուրջ երեք տասնեակ զինուորներ և արիւնարբու ենիչերներ:

Յաջորդ գիշերուայ կէս գիշերից 4 ժամ անց լափլիզող և հուրհրող հրդեհի և թանձր ծուխի ոլորապտոյտների մէջ փլատակում և կործանում էր այս երկրորդ իժաբոյնը, որից մինչև երէկ նոյնիսկ գնդակների տարափ էր թափւում դիրքապահների և մանաւանդ խաղաղ ժողովրդի գլխին:

Երբ տաճիկների յարձակման այդ վերջին ներգիծ ամրութիւնը հայերի վրէժխնդիր բոցերի մէջ ճարճատւում և խորտակւում էր, նրա շուրջ հաւաքւած վանեցիները շուրջպար էին բռնել և պարելով ու թռչկոտելով ու սրտի խորքից ծիծաղելով՝ իրար հարցնում էին.

– Տղա, բա էս դիրքի տաճիկները դրվորը (որտեղ) են ճղեր:

– Բա՛, յիմար ես, չես խասկնայ, հէնց որ կրակը տեսան, թռչունի թևեր խագան, թռան ու փախան:

– Դվոր փախան, որ ո՛չ մէկին չը տեսանք:

– Տօ՛ գիժ-տուտուց, դվոր պիտի փախչէին հրէս էս բոցերի ու ծխի ու մոխրի հետ մէկտեղ, դրանց «արդար խոգին թռաւ ու գնաց Թալաթ-Էնվար փաշաների մօտ:

– Վա՜յ տամ ձեր խելօք գլխին ու ձեր փչոցներին: Ա՜յ միամիտ յիմարներ, էտոնք էն ժամանակն են փախել ու ճղել, երբ Համուդ աղի խարաբ էլածն այրուեց: Ափսո՜ս էս մեր փէտերն ու նաւթը, որ էստեղ խարամ արանք:

– Հա՜յ, հա՜յ, տնավեր չէլած էդ դժոխքի դէվերին էրելու համար փէտերն էլ ափսոս կուգաս:

Եւ իսկապէս յետոյ պարզուեց, որ այս դիրքում ամրացած ասքեարները, հէնց որ տեսել էին Համուդ աղայի զօրանոցի այրումն ու կործանումը, մութից և ընդհանուր խառնաշփոթից օգտուելով և հաւանաբար իրենց զինուորական շորերը փոխելով և ծպտուելով, ծլկուել ու անհետացել էին:

Այսպէս թէ այնպէս, մեր բախտաւորութիւնը կայանում էր նրանում, որ մեր պաշտպանութեան գծի ներսում միանգամայն փրկւած էինք ներսից անհանգստացնող վտանգաւոր թշնամուց, և մեր դիրքապահներն ու կռուողները, թիկունքից հարւածելու վախից հանգստացած, իրենց ամբողջ ուշադրութիւնը դարձրին դիմագրաւելու դրսից սպառնացող վտանգը:

Բայց ամբարտաւան նահանգապետն ու հազարապետը հեշտութեամբ չէին կարող մարսել վանեցիների այս նոր յանդգնութիւնը: Զօրանոցների հրդեհումն ու քարուքանդումը և զինուորների կոտորածն ու գլխապատառ փախուստը նրանց չափազանց կատաղեցրել էր: Երկու օրւայ համեմատական մեղմացումից յետոյ նորից կատաղի յարձակումները սկսեցին: Համազարկերի և ռումբերի խլացնող պայթիւնն ու որոտը նորից կատաղի թափի հասան: Նորից դիրքերի ու տների հրդեհումն ու փլատակումները վերսկսեցին: Նորից տագնապ ու սարսափ: Արդեո՞ք այս անգամն էլ հերոս մարտիկները պիտի կարողանային դիմագրաւել կատաղած թշնամու փոթորկալից յարձակումներին: Վանեցիները որոշել էին մահւան գնով դիմադրութիւնը շարունակել:

ԱՀԱՁԱՆԳ ԵՒ ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ապրիլեան ինքնապաշտպանութեան մաքառումից մի քանի օրեր ևս առանց արտակարգ իրադարձութեան էին անցել: Ինքնապաշտպանութեան 13-րդ առաւօտեան մեր պատանի սուրհանդակները դիրքերում, խրամատներում, տներում և ամենուրեք ցրեցին պրոպագանդ-տեղեկատուութեան սեկցիայի թռուցիկները հետևեալ բովանդակութեամբ.

«Հայրենակիցնե՛ր, թշնամին նորից գազազած է: Երէկ ամբողջ օրն անընդհատ մեր դիրքերի և մեր պաշտպանութեան գծերի վրայ դժոխային կրակ էր թափում: Չնայած դրան՝ մեր քաջարի կռուողները նոյնիսկ մէկ քայլ իրենց դիրքերից յետ չեն նահանջել: Անցեալ գիշերը մեր անձնուէր որմնադիրներն ու նրանց գործակից կտրիճ ու անվախ աշխատաւորներն ու բանւորները քանդւած մեր դիրքերը նորից ու նորից շարել ու բարձրացրել են: Մենք հաւատացած ենք, որ մեր թշնամին մեզ ընկճել, մեր երկաթէ կամքը փշրել երբէք չպիտի կարողանայ: Մեր տեխնիկական-պլանային յանձնախմբի կազմը նորից ուժեղացւեց: Նրան հինգ նոր գործակիցներ տրւեցին: Ձեզնից խնդրում ենք այդ յանձնախմբին տրամադրել, ինչքան կարելի է շատ, կարմիր պղինձ, արճիճ և ուրիշ դիւրահալ մետաղներ:

Ո՛չ մի յուսալքում, ո՛չ մի թերացում, ո՛չ մի փոքրոգութիւն: Դրանք դաւաճանութեան հաւասարող և կործանիչ երևոյթներ են, որոնք խորթ և օտար են այս սքանչելի և անպարտելի հերոսամարտին ուղղակի և կողմնակի մասնակցողներին:

Վստա՛հ եղէք ձեր մարտիկների քաջագործութեան վրայ: Վերջնական յաղթանակը նրանց և ձեր բաժինն է լինելու: Կեցցէ՜ հայ ժողովուրդը, որ գիտէ հերոսանման պաշտպանւել և իր հայրենիքի ու ազգի համար զոհւել...»:

Կոչն իր անմիջական արձագանքն ունեցաւ: Յաջորդ մի քանի օրերի ընթացքին այգեստանցիները տեխնիկական սեկցիային յանձնեցին իրենց ունեցած ամէն տեսակի ու ձևի պղնձեղէն ամանները, կաթսաներն ու հեշտաեռները: Այդ մետաղները վարպետ մասնագէտների ձեռքում Բուլղարացու անմիջական գործակցութեամբ փոքրիկ թնդանօթների վերածուեցին:

Այդ փոքրիկ թնդանօթները գործել սկսեցին: Մեր կուռողների և մանաւանդ ժողովրդական զանգուածների տրամադրութիւնը զգալիօրէն բարձրացաւ:

Երկշաբաթեայ ինքնապաշտպանութեան օրերին զոհուածների յիշատակի յաւերժացման, մեր մարտնչող հերոսների բազուկներին ուժ ու կարողութիւն հայցելու և պաշարուած հայութեան փրկութեան համար կիրակի օր Նորաշէն թաղի եկեղեցում, որի գմբէթներից միայն մէկն էր կանգուն մնացել, կատարուեց հոգեհանգիստ և գոհաբանական մաղթանք:

Չնայած այն հանգամանքին, որ Վանի հայութիւնն այդ օրերին ամէն ժամ բնաջնջման աղէտի սարսափ էր ապրում, բայց մի հոծ բազմութիւն, արհամարհելով ամէն տեսակի փորձանքն ու աղէտը, շտապել էր գալու իր մայր եկեղեցին: Նրանք եկել էին քահանայական դասի հետ միասին ամենաողորմած աստծուն առաքելու իրենց հոգու խորքերից բխող աղաչանքը՝ սուրբ եղիցի անունը քո, եղիցի կամքը քո, որպէս երկնի ու երկրի, հաց տուր մեզ հանապազօր և փրկեայ մեզ չարէ, զի քո է արքայութիւնն ու զօրութիւնը...:

Այդ սարսափի օրերին ի՜նչ սքանչելի և փառահեղ պատարագ էր: Ինքս էլ բախտ ունեցայ այդ պատմական պատարագի վերջանալուց մի քիչ առաջ ներկայ լինելու: Ամբողջ բազմութիւնը միահամուռ աղօթում և ամենափրկչի բարեգթութիւնն էր հայցում: Անհունօրէն սրտառուչ էին այդ միահամուռ աղօթքի մրմունջները, որոնք խունկի կապտաւուն ծուխի հետ բարձրանում էին դէպի տաճարի կիսաքանդ կամարները՝ այնտեղից սլանալու դէպի անհունութիւնը, դէպի ամենակալի բարձունքները: Ի վերջոյ առաջնորդական տեղապահը հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց: Դրուատեց հայ ազգի փրկութեան և նրա փառքի ու պատուի բարձրացման համար անձնուիրաբար մարտնչած և հերոսի մահով մեռած քաջերի աննման արիութիւնը:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ

Երբ ես եկեղեցուց դուրս գալու վրայ էի, նկատեցի, որ եկեղեցի եկած հոծ բազմութիւնը բաղկացած էր առաւելապէս կիներից, 8-14 տարեկան երեխաներից և 50-ից անց հասակն առած տղամարդկանցից:

Եկեղեցու բակում՝ գլխաւոր մուտքից ոչ հեռու՝ գաւթի վերջին կամարի տակ, տարիքոտ մարդկանց մի խումբ հաւաքուած և զբաղուած էր օրուայ հարցերի զրոյցներով: Դրանցից մէկը, որին շրջապատել էին միւսներն և յարգալից վերաբերմունք էին ցոյց տալիս ամէն կողմից, հարցակոծում էին: Այդ մարդուն ես ճանաչեցի. շտաբի անդամ Յովհ. Կուլօղլեանն էր:

– Յովհաննէ՛ս աղայ, կը հաճի՞ք մեզ տեղեկացնել, թէ սա անամօթ Ջևդէտն ու իր պետութիւնը մեզմէ ի՞նչ կուզեն, և մեր վերջը ի՞նչ ըլլալու է, հարցնում էր մէկը:

– Դուք որ մեր հին փորձուած յեղափոխականներէն էք և ընդհանուր վիճակէն լաւ տեղեակ, ի՞նչ կը մտածէք, մեր կուռողները որքա՞ն ժամանակ կրնան դիմադրել մեր այս գազանի նման ուժեղ թշնամուն:

– Կուլօղլեա՛ն էֆէնտի, կաղաչեմ, եթէ լուր ունիք սա մեր կամաւորներէն, մեզ յայտնէք:

– Կըսեն կոր, ռուսների բանակը սահմանէն անցել և շուտով գալու է: Ի՞նչ լուր ունիք:

– Կըսեն... բայց մինչև առի ջուր գալը, գորտի աչքը կը քօռանայ:

Յովհաննէս Կուլօղլեանը, որ այդ օրերին իր հռետորական ճառախօսութեամբ դիրքէ-դիրք էր վազում և կուռողներին իր ոգևորիչ և հայրենանուէր ճառերով քաջալերում և խրախուսում էր, այս անգամ կարծես, համբերութիւնից դուրս եկած, գրեթէ ջղայնացած տօնով պատասխանեց.

– Աղանե՛ր, դուք ամէնքդ ալ հասակ առած, աշխարհը տեսած, լաւն ու վատը ճաշակած մարդիկ էք: Նախ և առաջ ձեզ ըսեմ, որ սա անիրաւ տաճիկներին ես ձեր ամէնիցդ աւելի լաւ կը ճանաչեմ, քանի որ 25 տարիներէ ի վեր անոնց հետ պայքարի մէջ եղած եմ: Անոնք Սուլթան Համիդի օրերից մինչև այս անզգամ Թալէաթ-Էնվէր կոչուած աւազակային փաշաները մեզի ատելով ատած են: Անոնք միշտ յայտարարած են, որ հայերն իրաւունք չ'ունին մեզի հողի և հայրենիքի պահանջներ դնել, ի՞նչ գիտեմ ազատութիւն պահանջել: Եթէ կուզեն մեր հողի վրայ մնալ և մէկ կտոր հաց աշխատել, պէտք է հլուհպատակ մնան, մեր գութին և ողորմածութեան ապաւինեն, պէտք է մեզի յանձնեն իրենց զէնքերն ու ըմբոստ ֆէդայիները: Պէտք է շնորհապարտ և աղօթարար ըլլան մեր Օսմանեան Կայսրութեանն ու նրա բարեխնամ կառավարութեանը: Հիմա կը կամենաք հասկնալ, թէ անոնք մեզմէ ի՞նչ կը պահանջեն: Գալով ձեր միւս հարցերուն, պիտի ըսեմ: Ինձ համար դժուար է անոնց պատասխանը ներկայիս տալ: Ինչ կը վերաբերի ռուսական և կամաւորական բանակների գալուն, ես ալ ձեզ նման այդ լուրերը լսած եմ, բայց ատոր ճշտութեան մասին ոչինչ կրնամ ըսել: Միայն կարևոր պարագայ մը կայ, որ պէտք չէ մոռանանք: Այդ հանգամանքը բոլորս գիտնալու ենք: Ռուսն ու Անգլիան և Ֆրանսիան մենք մեր բարեկամներն ու պաշտպանները կը համարենք: Մեզմէ շատերը այդպէս համոզուած են, բայց ես մէկ հոգիս քիչ մը

տարբեր գաղափար ունիմ և ուրիշ կերպ մտածեմ և ատոր համար ալ փաստեր ունիմ: Աղանե՛ր, դուք մի՞թէ այդքան շուտ մոռացաք մեր Վանի և ուրիշ տեղի 95-96-ի կոտորածները, մի՞թէ մոռացած էք Ադանայի մեր դժբախտ հայրենակիցների կոտորածն ու ջարդը: Այն ժամանակներ պատերազմ ալ չ'կար, որ մտածենք՝ անոնց գլուխը շաղախուած էր, մեր մասին մտածելու ժամանակ չ'ունէին, քանի որ իրենց ցաւն ու դարդը ունէին: Այն ժամանակները մեր այդ բարեկամ գիտցածներս հանգիստ էին և պատերազմի մէջ ալ չէին: Անոնք, եթէ ուզենային սա անօրէն տաճիկներուն խորոված շամփուրի կը քաշէին, բայց չ'ուզեցին, չը կամեցան, քանի որ անոնք իրենց սեփական, մասնաւոր հաշիւներն ունէին, և մեր դժբախտ հայերիս կոտորածներն անոնց անհանգստութիւն չէին պատճառեր: Անոնք հսկայ գերեզմանաքարեր իրենց խղճի վրայ դրին և Զաքարիայի պապանձումն առան: Ներեցէ՛ք, աղանե՛ր, որ իմ պատասխանն երկար կապեցի: Մէկ անհրաժեշտ ըսելիք ալ ունիմ, այն ալ ըսեմ, որ խիղճս ինձ հանգիստ ձգէ: Քսան, գուցէ աւելի տարիներից ի վեր մենք մեր, այսպէս ըսած, յարաբերութիւնները սրեցինք սա տաճիկ կառավարութեան հետ: Չեմ կրնար ըսել, որ այդ գործի մէջ միակ մեղաւորը մենք ենք եղած: Ամէն անհատ մարդ, ինչ ազգի ալ պատկացած ըլլայ, կը ցանկանայ մարդու մը նման, մարդավայել ապրիլ: Ան գիշեր-ցերեկ կը չարչարուի, կը տանջուի իր և իրեն ընտանիքին ըստ հնարաւորութեան, հանգիստ և ազատ ապրուստ և կեանք ստեղծելու համար: Այդ ամէնէն վերջ, եթէ ուրիշը գայ և ուզենայ զանազան անուան ու պատրուակի տակ անկէ խլելու անոր հարազատ և հալալ աշխատանքով ու քրտինքով շահած ինչքն ու ապրուստը, ո՞վ կը կարողանայ տանել նման անիրաւութիւնն ու բռնութիւնը: Բաւական չէ, որ այս անխիղճ օսմանները դարեր առաջ իրենց բարբարոս նախնիների դուրով ու սուրով եկան մեր ազգի ջահէլ ու ջիվան և նրա կեանքի ուղն ու ծուծը կազմող անհամար մարդկանց կոտորեցին, անոնց տունն ու օջախները հայկական սպանդանոցի վերածեցին, անոնց հողն ու հայրենիքը յափշտակեցին և ամէն տեսակ բռնութիւններ ու բռնաբարութիւններ կատարեցին, հիմակ ալ մեր կոկորդէն բռնած կը սղմեն, մեզի կը խեղդեն, մեր ինչքն ու հարստութիւնը կը թալանեն, մեր սրբավայրերը կը պղծեն և լրբօրէն կըսեն. «Դուք այս երկրի խորթ, անհարազատ զաւակներն էք, դուք մեր հլու հպատակներն էք և իրաւունք ալ չունիք ինչ որ «ազատութիւն և հաւասարութիւն» կոչուած յիմարութիւններու մասին խօսելու և մինչև իսկ մտածելու»:

– Պարոննե՛ր, մենք միևնոյն մէկ ճար ունինք՝ այդ մեր ազգի ամբողջ անհատ զաւակներու միութիւնն ու միակամութիւնն է և անոր ազատութեան համար մեր սկսած նուիրական գոյամարտն ու պայքարն է: Շատ ներողութիւն կը խնդրեմ ձեզմէ, հայրենակիցնե՛ր, որ ասկէ աւելի ըսելիք չ'ունիմ և ուրիշ կարևոր գործեր ունիմ կարգադրելու: Եթէ բախտ ունենալու լինենք, նորէն այդ խնդիրներու մասին կը խօսակցինք: Մնաք բարով:

ԹԱՔՆԻԱԾ ՆԵՆԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՈՎԻ ՈՒՐԻԱԿԱՆԸ

Զնդէտ բէյը, Այգեստանում պաշարուած հայերի դիմադրական վճռականութիւնից յուսահատուած, Քաղաքամիջի հայութեան քաջարի ինքնապաշտպանութիւնից կատաղած, Շատախի, Փէսանդաշտի և զանազան շրջանների ըմբոստութիւններից և կռիւներից խենթացած, որոշել էր մի թաքնուած նենգութեամբ, նոր գործելակերպ ի գործ դնել:

Նա կարգադրել էր բոլոր վերոյիշեալ կէտերի հայ ազգաբնակչութեան պաշարման շրջան ուժեղացնել և առանց զինուորական ուժերի նորանոր կորուստների և յարձակումների, շարունակել պաշարման դրութիւնը, մինչև որ պաշարման շրջայի օղակում գտնուողները, կենսամթերքի սպառման հետևանքով սովամահութեան ենթարկուելով, ինքնակամ յանձնուէին:

Այս նոր մտածուած նենգութիւնը, մանաւանդ Այգեստանի հայութեան համար մահացու էր: Մեր քաջարի կռուողների յանդուգն և բոլորանուէր դիմադրութեան շնորհիւ արդէն 20 օր էր, ինչ անկասկած և անխուսափելի բնաջնջումից ազատուել էինք, բայց մեր պարէնապահեստները համարեայ դատարկուել էին:

Ի՞նչ էինք անելու: Ինչպէ՞ս պիտի կերակրէինք գոնէ մեր ընդհանրութեան համար գիշեր-ցերեկ հսկող ու կռուող զինուորներին, տեխնիկական գործերը կատարողներին և հիւանդանոցում պառկած վիրաւորներին:

Դրութիւնը չափազանց ճգնաժամային էր:

Չնայած այդ հանգամանքին, որ կենսամթերքներ ունեցող հայերը չեն խնայել և ինքնակամ նուիրել են այնքան, որքան հնարաւոր է, բայց որոշուեց լիազօր իրաւունքներ տալ պարենաւորման յանձնախմբին, որպէսզի նա անհրաժեշտ քննութիւններ և փնտրտուքներ կատարի և գրաւման ենթարկուի եղած կենսամթերքները՝ նրանց տէրերին միայն 15 օրուայ պաշար թողնելով: Դժբախտաբար, այդ քննութիւնները շատ աննշան արդիւնքի յանգեցին, և սովամահ լինելու տագնապն օրից օր շեշտուեց:

Ինքնապաշտպանութեան 16-րդ օրից մինչև 20-ը՝ 5 օրուայ ընթացքին, երբ դեռ Այգեստանի մեր դիրքերը, փոքր ընդմիջումով, ռմբակոծուում էին, Քաղաքամիջի պաշարուած մեր կռուողներից ոչ մի տեղեկութիւն չունէինք: Յաճախ կասկածում էինք, որ մեր հայրենակիցների խիզախ դիմադրութիւնը փշրուած է, և նրանք ընդհանուր կոտորածի զոհ են եղել:

Երբ 20-րդ օրը ճերմակ դրօշակներ պարզած մի խումբ մօտեցաւ Քաղաքամիջի կողմից մեր Խաչփողոցի ծայրագոյն դիրքին և յանձնեց Ջնդէտ բէյի գրաւոր հրաւէրը Այգեստանի հայերի անձնատուութեան վերաբերեալ, այն ժամանակ մեզ պարզուեց թիւրք նահանգապետի թաքնուած նենգութեան լրիւ պատկերը: Անձնատուութեան հրաւէրը գրուած էր մեղմ տօնով և հետևեալ բովանդակութեամբ.

«Մեր հայ հայրենակիցներ, մեր բարեխնամ և անյիշաչար կառավարութիւնից հրահանգ ունենք ձեր նկատմամբ ներողամիտ լինել: Յանձնարարում ենք ձեզ անմիջապէս վերջ տալ աննպատակ արիւնահեղութեան և զէնքերը յանձնելով՝ վերսկսել ձեր նախկին խաղաղ և անվրդով կենցաղը: Մեզ յանձնարարուած է ձեզ տալ յարմար և պատշաճ երաշխիքը:

Առիթից օգտուելով՝ ձեզ յայտնում ենք, որ հայ հայրենակիցների դիմադրութիւնն ու խռովութիւնները Քաղաքամիջում, Շատախում, Փեսանդաշտում և ուրիշ տեղերում բոլորովին վերջացել են, և զէնքերը յանձնել են»:

Պատգամաւորներին յայտնուեց, որ «մեծահոգի» նահանգապետի պատգամի պատասխանը 24 ժամից կը յանձնուի նոյն պատգամաւորներին:

Նահանգապետի անձնատուութեան հրաւէրը նոյն օրն եթ, գիշերուայ ժամի 8-ին, պատերազմական մարմնի և բոլոր օժանդակ սեկցիաների միատեղ և լրիւ նիստում խորհրդակցութեան ենթարկուեց, և միայն երկու հոգու ձեռնպահութեամբ միաձայնութեամբ որոշուեց մերժել նահանգապետ Ջնդէտի խաբէութեան այս նոր ձևի առաջարկը:

Մեր բարեբախտութիւնը կայանում էր նրանում, որ նահանգապետի առաջարկի մերժման պատասխանի յանձնումից մի քանի ժամ առաջ շտաբն էին վերադարձել մեր քաջարի պատանի սուրհանդակներից Մկրօն և Սեօն, որոնք հինգ օր առաջ սիրայօժար յանձնառու էին եղել գիշերային մութից օգտուելով և թափառաշրջիկ մուրացկանների տարազով Քաղաքամէջը գնալ և այնտեղի մերոնց պաշտպանութիւնից հնարաւոր տեղեկութիւններ բերել: Նրանք շնորհիւ այն հանգամանքին, որ տարիներից ի վեր Քաղաքամիջի հայ վաճառականների մօտ գանձարարի պաշտօնն էին կատարել, այնտեղի բոլոր փողոցների անցքերին ու մուտքերին և նրբուղիներին իրենց հինգ մատների նման ճանաչում էին: Բազմաթիւ վտանգներից փախուստ տալով և հրաշքով ազատուելով՝ նրանք վերադարձան և յայտնեցին.

– Մեր Քաղաքամիջի հայ մարտնչողները հերոսաբար շարունակում են կռուել և դիմադրել, ինչպէս նաև այրել ու ոչնչացնել քաղաքամիջում եղած թիւրքերի համարեայ բոլոր պետական հիմնարկութիւններն ու հսկայական պահեստները: Նրանց բախտաւորութիւնը կայանում է նրանում, որ կենսամթերքի, վառօղի և փամփուշտի առատ պաշարներ ունեն:

Քաղաքամիջի պաշտպանութեան կոմիտէն զգուշացել էր այս անձնուրաց պատանիների միջոցով գրաւոր որևէ տեղեկագրութիւն կամ պատգամ ուղարկել և բաւականացել էր միայն պայմանական նշանախօսքերով, որոնք նախապէս որոշուել էին: Այս ուրախալի լուրերը պատճառ դարձան կուսակալի յանձնման առաջարկի կտրական և վճռական մերժմանը:

***

Նահանգապետի ծրագրած նենգութիւններից մէկն էլ կայանում էր նրանում, որ շրջակայ գիւղերի հայ կին, երեխայ, ծեր ազգաբնակչութեանը ստիպել էին թողնել իրենց գիւղերն ու գաղթել Այգեստանը: Նրանց խոստացել էին առանց վախի և ազատօրէն գնալ և խառնուել Վան՝ Այգեստանի ազգաբնակչութեանը և այնտեղ «հանգիստ» ապրել, քանի որ թիւրք կառավարութիւնը վճռել էր ներում շնորհել Վան-Այգեստանում գտնուող հայերին:

Սոված, մերկ, հալումաշ եղած անպաշտպան գիւղացին ի՞նչ կարող էր անել տրուած հրամանի հակառակ: Նա ստիպուած էր ենթարկուել:

«Ձեր կեանքի ապահովութիւնը,– ասած էր այդ թշուառ ու սոված գիւղացիներին,– ձեր ցանկութիւնից է կախուած: Կառավարութիւնը հնարաւորութիւն չ'ունի ձեզ պաշտպանելու թիւրք բաշը քասաններից (վիզ կտրողներից), բանտից փախած մարդասպանների և քիւրդ կողոպտիչ աւազակների դէմ, որովհետև իր բոլոր զինուորական ապահովիչ ուժերը պատերազմի է ուղարկել»:

Եւ ահա մի քանի օրուայ ընթացքում դէպի Վան, Այգեստան խուժեցին սովալլուկ, համարեայ մերկ, անտէր-անտիրական երեխաների, տարէց կիների և ծերերի բազմութիւնները: Երիտասարդ հայերին զինուորացու անուան տակ տարել և գրեթէ բոլորին կոտորել էին, իսկ ջահել հայ կանանց առնանգել ու տարել էին:

Ի՞նչ կարող էին անել պատերազմական ինքնապաշտպան մարմինները Ջնդէտի այս նենգ ու կործանարար որոգայթի դէմհանդիման: Առանց այն էլ պաշտպանութեան սահմանի ներսում գտնուող ազգաբնակչութիւնը և նոյնիսկ կռուողները սովի ուրուականի ճանկերում սովամահ լինելու էին պատրաստում, և ահա չարիքն աւելի շեշտում էր, շրջակայքից ներս էին թափում մերկ-քաղցածների նոր բազմութիւններ, որոնք քաղցածութիւնից կիսամեռ հազիւ շնչում էին:

Ամենասոսկալին այն էր, որ ներխուժելու ուղարկուած բազմաթիւ խմբերի շատ երեխաների ձեռքում հետևեալ նոյնանման վերջնագիր յայտարարութիւնները տրուած էին:

«Եթէ սրանց մերժէք ընդունել ձեզ մօտ, պետութիւնը նրանց կեանքի ապահովութեան համար ոչ մի կերպ երաշխաւորել չի կարող»:

Եւ, իսկապէս, եղած սպառնալիքը գործադրւում էր: Տաճիկ անխիղճ նահանգապետի կարգադրութեան համաձայն՝ համազարկերի նշանակէտը դարձան այդ բազմաթիւ խմբերի այն մասերը, որոնք ոչ ներս՝ Այգեստան ընդունուեցին և ոչ էլ կարողացան իրենց համար բնական պաշտպանութեան մի վայր, մի ապաստան-խրամատ կամ տուն ճարել:

Երբ մեր շտաբը համոզուեց և տեսաւ, որ արիւնարբու գազաններն իրենց դիւային ծրագրի գործադրման նպատակով նոյնիսկ այս անպաշտպան և թշուառ երեխաներին ու ծերերին չեն խնայում, ստիպւած հրահանգեց դիրքերում կռուողներին շատ մեծ զգուշութեամբ գիշերապահին ներս թողնել այդ անճար և անտիրական գիւղացի բազմութիւններին:

Սրանց պաշտպանութեան գծից ներս թողնելու ամենաառաջին պայմանը խիստ և ուշադիր ստուգումն էր: Շտաբը կասկածում էր, որ այս թշուառների շարքերի հետ միասին թշնամին հանգամանքից կարող էր օգտուել և մեր պաշտպանութեան թիկունքի ներսը իր զինուած ուժերը անցկացնել:

Այս թոյլատուութեան հետևանքով Այգեստան թափուեցին սովատանջ, չարչարուած, բէզարած կիսակենդան հազարաւոր կին, երեխաներ և ծերեր: Բարեբախտաբար, գարուն էր արդէն, և Այգեստանը սկսում էր պարգևատրուել բնութեան վերազարթման բարիքի կանաչութեամբ: Եթէ հաց չկար, գոնէ կանաչ խոտ, առոյտ անհունօրէն դժբախտ և սովահար մարդկանց Աստուածային ամենատուր վերջին պարգևը կար:

ԸՆԿՐԿՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԸ

Հերոսական ապրիլի վերջին օրերն էին: Մինչ այդ որևէ բացառիկ ուրախալի նորութիւն չկար: Ռուսական բանակի, կամաւորական գնդերի ժամանման և անհամբերութեամբ սպասւած օգնութեան որևէ լուր, որևէ տեղեկութիւնը չ'կար ու չ'կար: Բայց վանեցի ազգաբնակչութիւնը յամառօրէն և շարունակ սպասում էր, որ կգան ու կգան: Անկարելի էր, որ չ'գան, անպատճառ կը գան:

Տարօրինակ և զարմանալի է մարդ-անհատի՝ սրտի խորքերում ամրացած ու խտացած այդ զգացումը՝ վաղւայ, գալիք մօտ ապագայի յոյսը: Առանց այդ յոյսի, առանց այդ երջանկութեան սպասումի գուցէ հարիւր-հազարաւորներ յուսահատ իրենց իսկ ձեռքով իրենց կեանքը խամրէին, ինքնասպան լինէին: Բայց չէ, այդ յոյսը լաւագոյնի սպասումը, մօտալուտ երջանիկի սպասումը փրկում է շատ-շատերին: Նրանց ազատում է կործանիչ յուսահատութեան խեղդամահ անող ճիրաններից:

Ահա նման մի յոյս-երջանկութեան սպասումը տոգորել էր Վանի բոլոր հայերին: Այդ դժոխային օրերին թնդանօթների ռումբերի և գնդացիրների համազարկերի տարափի, նրանց խելացնոր կրակների ներքև վանեցի ռազմիկն ու բնակիչը, սկսած պատերազմական մարմնի անդամներից մինչև ազգաբնակչութեան ամենավերջին մարդը, տոգորուած էին այդ մեծ յոյսի, փրկութեան յոյսի կենսատու ջերմութեամբ:

Ամէն օր, ամէն տեղ, ամէն տարիքի ու սեռի մարդիկ, երբ իրար էին հանդիպում, նրանց սովորական խօսակցութիւնն ու մտքերի փոխանակութիւնը դառնում էր այդ ընդհանուր յոյս-առանցքի շուրջը:

– Տղա՛, իմացար, որ մեր իմաստուն Բուլղարացու թօփերի կրակոցի ձէնը կամաւորների ակնջին խասաւ և էնոնք իրենց ձիերին խէծած՝ քշում, հա քշում են մեզ օգնութեան խասնելու համար:

– Իսկ դու իմացար, որ մեր տէրտէրների կիրակւայ աղօթքի ձէնն Աստուած լսած է և էն անջիգեար Ջավդատ բէմուրազ էլածին քոռցրած է:

– Է՜յ, է՜յ, անխելք տխմարներ, դուք հալա խաբար չունիք, որ էս մեր Թարլամազեան Փանոսը մէկէլ գիշերը սուսուփուս իր մարալ ձիուն նստած քաղքից դուրս է պրծել և չւել է կամաւորներին դիմաւորելու:

– Ի՞նչ դարտակ-դարտակ դուս կտա՛ք: Բօլ է ձեր բօշբօղազութիւնը (անիմաստ խոսակցությունը), վազ տուէք պահեստը, եթէ էնտեղ չկայ, մի կտոր ուտելու հաց ճարէք Շահբանդարենց դիրքի մարդկանց համար: Երէկ գիշէրուանից այդ գեօզալ դիրքապահներն անօթի մնացած են:

Այս վերջին յայտնութիւնը գործերի ընթացքին ծանօթ մի պատանի սուրհանդակի կողմից կարծես սառն կարկտաջուր թափեց նրանց գլխին և նրանցից ամէն մէկը, շարած ու գլխիկոր, տարբեր ուղղութեամբ ցրիւ եկան:

***

Մայիս ամսւայ 2-ի երեկոն էր: Մութի ստւերները նոր, նոր տարածւում էին Այգեստանի ընդարձակ և լայն փռւած տների և այգիների վրայ: Վերջի օրերում հալածական եղած թռչունների մնացորդները դեռ նոր տեղաւորւած էին իրենց կիսաքանդ բներում: Այգեստանի կռուողներն ու կռւին զանազան գործով մաս բերողները, վերջի օրերի համեմատական խաղաղութեան երևոյթից մի քիչ սրտապընդւած, մի փոքր մրափի ենթարկւել էին, և ահա նորից սկսւեց փոքորկալից ու ահռելի թնդանօթաձգութիւնը թէ՛ Այգեստանի և թէ՛ Քաղաքամիջի գլխին: Այդ ռմբակոծման խառնւեցին ինքնաշխատ գնդացիրների համազարկերը: Քիչ յետոյ սկսւեց նաև կարկտանման հրացանաձգութիւններ: Այդ ամէնից յետոյ՝ սոված գայլերի ոռնոցների նման ուռաներ և ընդհանուր յարձակման աղմուկն ու բացականչութիւնները:

Շտաբն ու օժանդակ բոլոր մարմինները, դիրքապահները, խրամատները, հիւանդանոցը, Կարմիր-խաչը, Ամերիկեան և օտար միսիոնարութիւն-

ները, քաղաքում եղած կոնսուլատները, մէկ խօսքով, բոլոր հաւաքական կազմակերպութիւններն ու մնացեալ ոչ ակտիւ հասարակութիւնը աննկարագրելի տագնապի մատնուեցին:

Մի քանի օր առաջ օտար աղբիւրներից հատուկտուր տեղեկացուել էր, որ Վանի ապստամբութիւնը վճռականօրէն լիկվիդացիայի ենթարկելու նպատակով Խալիլ փաշայի բազմահազար բանակն է ժամանելու: Շտաբի և օժանդակ մարմինների կողմից գիշերով տրուեց «պատրաստ կաց»-ի ահազանգը: Անկարելի է նկարագրել յարձակման թափն ու ուժգնութիւնը: Թէ՛ Այգեստանի և թէ՛ Քաղաքամիջի գլխին պայթում, անվերջ պայթում և ժայթքում էր համատարած կրակը:

Երկու ժամ չ'անցած շտաբի կողմից տարածուեց հետևեալ բովանդակութեամբ հաղորդագրութիւնը:

«Մեր քաջարի՛ դիրքապահներ, խրամապահներ, օժանդակ և շրջո՛ւն խմբեր, պատանի՛ սուրհանդակներ և դո՛ւք, բոլոր անձնուէ՛ր արհեստաւորներ, որմնադիրնե՛ր և բոլոր, բոլո՛ր քաղաքացիներ: Մեզ հասած ստոյգ տեղեկութեան յամառայն՝ անյաջողութիւնների հանդիպած և ձեր երկաթէ կամքի առաջ ծունկի եկած թշնամին իր մաղձի ու կատաղութեան վերջին թոյնն է թափում մեր ամէնքի գլխին:

Դուք այսքան երկար փորձութիւնների և վայրագ յարձակումների խիզախօրէն դիմագրաւել էք: Ձեր ամբողջ կորովով և աննկուն վճռականութեամբ տոկացէք նաև այս մէկին: Մենք համոզուած ենք, որ թշնամու օրհասական վերջին կատաղի փորձն է այս, և մեր ազատութեան համար մեռնելու պատրաստ պողպատեայ կամքի և վճռականութեան առաջ մեր թշնամին խայտառակօրէն պարտութեան պիտի մատնի: Դիմադրեցէ՛ք անվեհեր հերոսների նման արժանի յաջորդներ լինելու ձեր ազատութեան համար զոհուածների»:

Իրար անվերջանալիօրէն յաջորդող գիշերային ռմբակոծման ուժգնութիւնն այնքան սարսափելի էր, որ կարծես ամբողջ Այգեստանը հրաբխային ցնցումների էր ենթարկուել: Օգնութեան և հաղորդակցութեան բոլոր հնարաւորութիւնները խանգարուել և խզուել էին:

Կռուողների, ինքնապաշտպանուողների, ամբողջ ժողովրդի՝ մինչև վերջին շունչը դիմադրելու վճռականութեան համընթաց՝ ամէնքը սրտատրոփ և տագնապահար րոպէ առ րոպէ սպասում էին թշնամու ընդհանուր յարձակմանը:

Ենթադրում էին՝ առաջինը յարձակուելու է հեծելազօրն իր գնդացիրային ու թնդանօթաձիգ կազմածներով: Նրանց յետևից ընդհուպ յարձակուելու էին կանոնաւոր զինուորների յետիոտն վաշտերը: Նրանց յաջորդելու էին քրդերի, բաշիբոզուկների և մարդասպան ոճրագործների ոհմակները՝ ամէն տեսակի զէնքերով, կացիններով և կեռծայր սուրերով: Թափուելու էին նրանք արիւնածարաւ, անխնայ ու անխտիր ջարդելու էին բոլորին և ամէնքին, ով որ հայ ծնուելու և հայ լինելու համարձակութիւն էր ունեցել: Չէ՞ որ նրանց կարգադրուած էր անխնայ կոտորել իրենց Ալլահի և մարգարէի կողմից անիծապարտ եղած անհաւատ-գեավուր հայերին:

«Գիշերով գուցէ չեն համարձակւում յարձակուելու:

Այո՛, իհարկէ, նրանք կսպասեն մինչև լուսաբացը, որպէսզի իմանան՝ ու՞ր են գնում և ի՞նչ են անում:

Նախօրօք ուզում են մեզ բոլորովին ուժասպառ և սարսափահար անել, մեր դիրքերն ու պաշտպանութեան խրամատները քարուքանդ անել և մեր դիմադրական կարողութիւնը կատարելապէս ընկճելուց յետոյ միանգամից և վստահօրէն յարձակուել՝ այս և նման ենթադրութիւններ էին անում մերոնք և ամէն րոպէ համբերութիւնից դուրս եկած, մոլեգնած և արիւնածարաւ թշնամուն սպասում էին:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆ

Սարսափելի գիշերը վերջանում էր: Մայիս 3-ի պայծառ, արծաթափայլ արշալոյսը բացւում էր: Այգի լուսածագը, մայիսեան ջինջ և անամպ երկնքի վրայ շողշողալ սկսեց: Կենսատու արևն արևելքում իր ոսկեհուռ, կարմրաւուն շողերն սկսեց սփռել: Բայց մեր ամէն րոպէ սպասած թշնամու սպառազէն ուժերը իրենց հեծելազօրքով և ծանր թնդանօթներով, դեռ իրենց յարձակումը չէին սկսել:

Թնդանօթների անվերջանալի ռմբակոծումն ու գնդացիրների համազարկերի կրակատարափը դեռ շարունակւում էր: Թանձր ծուխն ու խեղդիչ փոշին հաստ, անթափանցելի քողով պարուրել էին Այգեստանն ու Քաղաքամէջը:

Անցնող գիշերւայ կատաղի և անընդհատ ռմբակոծումները, դժբախտաբար, հնարաւորութիւն չէին տուել մերոնց վերանորոգելու քարուքանդ եղած մեր դիրքերից մի քանի կարևորները, որոնք գտնւում էին թշնամու ուղղագիծ և անշեղ կրակի տակ: Քանդուած դիրքերի յետևում փորուել էին ժամանակաւոր փոսեր և առուանման խրամներ, որոնց մէջ կուչ էին եկել մեր դիրքապահներն ու տագնապահար րոպէ առ րոպէ սպասում էին յարձակւող թշնամուն:

Թշնամին նոյն մոլեգնութեամբ շարունակում էր ռմբակոծել և մեզ իր դժոխային կրակի տակ պահել մինչև կէսօրից անց՝ ժամի 2-ը: Ամբողջ քսան ժամ շարունակ ու անվերջ ռմբակոծւում էր Այգեստանն ու Քաղաքամէջը: Մեր դիրքերն իրար յետևից փլատակւում, և սպանուածների ու մանաւանդ վիրաւորների թիւը շատանում էր:

Բարեբախտաբար ժամի 2-ից յետոյ ռմբակոծումները զգալիօրէն թուլացան: Կրակում էին միայն Թօփրաք-Կալէի և Հաճի-Բէքիրի զօրանոցներից և երբեմն էլ Զըմփ-զըմփ մաղարէի դիրքերից:



Վան. Այգեստանի տեսքը արևմուտքից (Քաղաքամեջի և բերդի կողմից), հեռվում՝ Վարագ լեռը

Այդ օրը, երբ արևը թեքւում էր անցնելու հորիզոնի յետևը, միանգամից և ամեն կողմից բարձրացան ուրախութեան և հրճւանքի աղաղակներ.

– Թշնամին փախչում է: Փախչում է թշնամին:

Թշնամու փախուստի երջանկաբեր լուրը կայծակի արագութեամբ տարածւեց դիրքից-դիրք, խրամատից-խրամատ, տնից-տուն, այգիից-այգի և ամենուրէք:

– Վերջապէս փախաւ, կորաւ մեր արնի ու ազգի թշնամի դահիճը:

– Փախաւ, բայց ինչպէս եղաւ, որ փախաւ:

– Անոնք մեզ համար, մեր անզէն ու անպաշտպան ժողովրդի համար իգիթ են: Ռուսական բանակն ու կամաւորները, դեռ իրենց դիրքերին չը հասած, վախից տակները կեղտոտելով, առանց մէկ փամփուշտ կրակելու, փախան:

– Ա՜յ տղա, չէլնի, որ էս էլ դրանց կողմից մէկ ֆրըլդաղ (ծուղակ) ըլնի մեզ խաբելու և մեր դիրքերից դուրս քաշելով մեզ կոտորելու համար սարքւած:

– Ծօ, անխելք տուտուց, բա չիմացար, որ մեր զինուորները շտաբի իրաւունքով վազ տաւն էրելու Թօփրաք-Կալէի և Հաճի-Բէքիրի զօրանոցներն ու Զըմփ-զըմփ մաղարէի տաճիկների դիրքերը:

– Զարմանալու բան է: Տօ, խէր օրխնած, մէ ականջներդ լաւ սրի, էն է Քաղաքամէջը դեռ կռիւ է: Թնդանօթի դէվի գոռգոռոցները կրնա՞ս լսել, թէ խլացած ես:

Մինչ նման խօսակցութիւններով և անսահման ուրախութեան բացականչութիւններով էին զբաղւած մարդիկ, շտաբի կողմից սկսեցին ցրել հետևեալ կոչ-հաղորդագրութիւնները:

«Սիրելի՛ հայրենակիցներ, շնորհաւորում ենք ձեզ: Ձեր ամէնքի անձնուրաց և աննման զոհաբերութեամբ դուք ամբողջ մի ամիս հերոսաբար դիմադրեցիք վայրագ թշնամու ամէն տեսակի յարձակումներին: Դուք ձեր և ձեր հայրենակիցների պաշտպանութեան համար արիաբար կռւեցիք և ձեր շարքերից, ձեր հարազատներից ու ազգակիցներից բաւական շատ զոհեր տւիք: Մենք անհուն երախտագիտութեամբ խոնարհւում ենք նրանց թարմ և դեռ կիսաթաղ դիերի առաջ և հերոսամարտի պատմութեան գրքերում ոսկի տառերով գրելու ենք նրանց գիտակցական և ազգանւէր զոհաբերումը: Շուտով նրանց, այդ բոլոր հայրենազոհ հերոսների անշունչ մարմինները կ'ամփոփւեն անմահների յատուկ ընդհանուր եղբայրական գերեզմանում: Փառք և պատիւ նրանց ծնող ընտանիքներին ու նրանց ազգին:

Սիրելի հայրենակիցներ, գուցէ մի քանի ժամից, թերևս մինչև էգուց, մեր կամաւորների վաշտերն ու մեր բարեկամ ռուսական բանակը հասնեն:

Մինչ այդ աչալուրջ և զգա՛ստ եղէք և մինչև նոր պայմանների դասաւորումը շարունակեցէ՛ք հսկել ձեր դիրքերում: Կարգադրւած է հրդեհել և քարուքանդ անել մեր սիրելի և անձնուրաց մարտիկներին մահւան գիրկը նետող թշնամու բոլոր զօրանոցները:

Կարգադրւած է նաև անմիջապէս Այգեստանի մեր պարէնապահեստները փոխադրել թիւրքերի թողած ցորենն ու ալիւրը, ինչպէս նաև, եթէ մնացել է, միւս պարէնները»:



Վան. Քաղաքամեջը (մինչև 1915 թ.)

Մինչև կէսգիշերից 2 ժամ անց Այգեստանի ազգաբնակչութիւնը ցնծութեան և խրախճանքի մէջ էր: Ուսանողների ֆանֆառը հայրենական և դիւցազնական եղանակներ էր նւագում և ազատութեան կարօտ սրտերը ցնծութեան ելևէջներով թնդացնում էր: Համարեայ ամէնքը պարում էին: Կարծես մի հսկայական, անծայրածիր հարսանիքի սեղանի շուրջ հաւաքւած կերուխում և քէֆ ու ուրախութիւն անելիս լինէին:

Այո՛, իսկական ցնծութեան և խրախճանքի տօն էր այդ: Նրանք իրենց իսկ ձեռքով այրում, ոչնչացնում և քամուն էին տալիս այն իժերի բոյները, որոնք ամբողջ մի ամիս շարունակ խայթել, թունաւորել և սպանել էին իրենց բազմաթիւ սիրասուն, աննման և անգին զաւակներին: Այդ զօրանոցները լափող և կուլ տուող կարմրաւուն բոցերը հրճւանքի արիւն և աւիւն էին ներարկում վանեցի հայերի սրտերում, այն սրտերը, որոնք օրեր շարունակ ստիպողաբար դատարկել և տուել էին իրենց հարազատ արիւնը իրենց լաւագոյն զաւակների արիւնն ու կեանքը:



ՔԷՆՆ ՈՒ ՎՐԷԺԸ

Խալիլ փաշայի բազմահազար բանակը չը կարողանալով դիմագրաւել ռուս բանակների և կամաւորական գնդերի ընդհանուր և միաժամանակ յարձակումը, որը տարածւում էր ռուս-թրքական հիւսիս-արևելեան ճակատից, երկարում էր մինչև պարսկա-տաճկական սահմաններ, հասնելով մինչև Շարաֆխանէ-Մակու-Դիլմանը, խուճապահար յետ էր նահանջել:

Այս նահանջի լուրը կատաղացրել էր Վասպուրականի և Վանի պետական և զինուորական կազմերին: Դրանով էլ պիտի բացատրել ապրիլի վերջի և մայիսի սկզբի մի քանի օրերի խելայեղ և կատաղի յարձակումները: Նրանք, մանաւանդ վանեցիների մոլեգնած դահիճ Ջնդէտը, վճռել էին իրենց սև սրտերում կուտակուած թունալից մաղձը թափել Քաղաքամիջի և Այգեստանի հայերի գլխին և նրանց անխտիր ջարդերով գոնէ մի քիչ հովացնել իրենց սև կրակ բռնած սգուր սրտերը:

Բարեբախտաբար, այդ նրանց չը յաջողուեց հէնց այն գլխաւոր պատճառով, որ Խալիլ փաշայի խուճապահար նահանջը նրանց ծայրայեղօրէն յուսալքել և անդամալուծել էր: Սրտի խորքերից վիրաւորուած ահռելի գազանն իր կատաղութեան մոլեգնութեան վերջին նոպային շշկլուել, շփոթուել և խուճապահար էր եղել:



Վան. Քաղաքամեջի արևմտյան հատվածը (մինչև 1915 թ.)

Զնդէտն ու իր գործընկերները, հարիւրաւոր կիլոմետր հեռաւորութեան վրայ յառաջ շարժուող իրենց ահարկու թշնամու՝ ռուսների և հայերի բանակներից սարսափահար և խելակորոյս եղած, վճռեցին փախուստ տալ և ազատել իրենց գարշապիղծ գոյութիւնը:

Նրանք լեղապատառ փախան և Վանի լճի հարաւ-արևելեան նաւահանգստներում կենտրոնացած առագաստանաւերով փախցրին իրենց թիւրք բնակչութիւնը դէպի Բիթլիս: Նրանք այնքան տրմարդի էին, որ իրենց փախցնող և ազատող թիւավար հայերին Բիթլիս հասնելիս անխնայ և լրբօրէն կոտորեցին:

***

Թնդանօթային ռմբակոծումների հետևանքով և մանաւանդ վերջին օրերի մոլեգնած հրդեհածին հարուածումներից յետոյ գեղատեսիլ և գարնանային զարթօնքով կանաչազարդուող Այգեստանը համարեայ լրիւ քարուքանդ էր եղել:

Թշնամու փախուստից յետոյ դեռ օրերով հրդեհն ու կրակը շարունակում էին լափել և ոչնչացնել Այգեստանի և Քաղաքամիջի տների՝ մեծ մասամբ փայտեղէն դռները, լուսամուտներն ու կտուրների գերանները:

Քաղաքամէջը տների մօտիկութեան և խտութեան ու հայ վաճառականների կտորեղէնէրի և զանազան դիւրավառ մթերքների պահեստների առատութեան պատճառով աւելի էր տուժել:

Ամբողջ շտեմարանները, խաները, մարգագետիններն ու արհեստանոցները և մեծ մասամբ բնակութեան տները համարեայ լրիւ այրուել և իրենց սևացած, ծխակուլ պատերը, որպէս յաւիտենական նզովքի մռայլ և լուռ վկաներ, տարածուել և ցցուել էին ամենուրեք:

Ոչ մի մարդկային լեզու և ոչ մի հանճարեղ գրիչ չի կարող պատմել և նկարագրել այն ահռելի տեսարանը, այն սոսկալի աւերը, այն սրտաճմլիկ տակնուվրայնութիւնն ու ոչնչացումը, որի հեղինակներն եղել են բարբարոս մոնղոլների դահիճ ու արնածարաւ ժառանգորդները՝ մեր դարաւոր քէնախնդիր և անգութ թշնամի տաճիկները:

Սրտակեղեք, մաշող և այրող վշտով վանեցին, փոթորկալից, ահարկու հարուածի շշմումից նոր արթնացած, նոր ուշքի եկած, ականատես եղաւ այն զարհուրելի աւերածութեանը և անճարօրէն ողբաց իր տասնեակ տարիների ջանքերի, չարքաշութեան և յամառ ու մեղուաջան աշխատանքի արդիւնքի, ստեղծագործ բարգաւաճումների հիմնայատակ կործանումն ու անհետացումը:

Վան. Քաղաքամեջի արևմտյան հատվածը (մինչև 1915 թ.)

Դժբախտաբար, այդ կիզիչ և մաշող վիշտը վերջինը չէր: Վասպուրականցի հայերին վիճակված էր տեսնել և իր ուսերին կրել աւելի կործանիչ, աւելի մահացու հարուածների և աւելի դժնդակ ու դժբախտ օրեր...

ՏԱՃԻԿՆԵՐԻ ԲԱՆՏԵՐՈՒՄ

Թշնամու փախուստից գրեթէ անմիջապէս յետոյ լուր տուի մեր ընկերներից Հրանդին, Աղասուն, Վահանին և Սօլախեանի ու Բրուտեանի կանանց Քաղաքամէջ գնալու:

Բրուտեանի կնոջ փոխարէն եկաւ առաջինի եղբայրը՝ Միհրդատը, և մենք վեց հոգով ճանապարհուեցինք Քաղաքամէջը: Այգեստանի և Քաղաքամէջի տարածութիւնը ոտքով կտրելը (այդ խառնաշփոթ ժամին մեզ անկարելի եղաւ մի ձիակառք ճարել) շուրջ մէկ ժամ էր տևում: Մենք վճռեցինք առանց մի որպէ ուշանալու ոտքով ճանապարհ ընկնել: Մեզ չափազանց հետաքրքրում էր մեր շատ սիրելի անդրանիկ ընկերների մասին, ինչքան կարելի է շուտ, որևէ տեղեկութիւն իմանալ: Լուր ունէինք, որ Բրուտեան, Սօլախեանն և Ասօն իրենց ուրիշ մի քանի ընկերների հետ թիւրքական կենտրոնական զինուորական բանտում ձերբակալուած են:

Գնում էինք շատ արագ, համարեա թէ վազում էինք: Չնայած գիշերուայ զովին՝ յաճախ ստիպուած էինք մեր ձեռքերով կամ թաշկինակով ճակատներիս կուտակուած քրտինքը մաքրել: Գիշերուայ ժամի 11-ի մօտերքը հասանք անիծապարտ բանտի դռներին: Մեզնից առաջ, հաւանաբար Քաղաքամիջի հայերից շատերը, հասել և այդ բանտի երկաթապատ դռները խորտակել էին:

Հետաքրքրուողների մեծ բազմութիւն կար ներսում: Նրանք իրենց հետ բերած նաւթի և ձէթի ճրագներով ընդարձակ, մռայլ և խոնաւ բանտը կիսովին լուսաւորած էին: Պատերից և մանաւանդ առաստաղից խոնաւութիւնից խտացած և թանձրացած սև, մրոտ ջրկաթիլներ էին թափւում:

Բանտի յատակի վրայ իրար կողքին թափուած էին խեղդուած, յօշոտուած, կացնահար ու նիզակահար եղած բանտարկեալների մարմիններն ու ընդհանրապէս այդ թշուառ մարմինների զանազան կտորներ՝ գլուխներ, թեներ, ձեռներ, սրունքներ և ոտներ:

Բանտում ահռելի տեսարան էր: Բոլորը լացում և իրենց գլխի մազերն էին բզկտում: Սօլախեանի կինը ուշագնաց եղաւ և ընկաւ ջարդահար եղած մարմինների արանքը: Մեծ դժուարութեամբ նրան ոտքի կանգնեցրինք և մի քանի հոգի թեների տակը մտած՝ բանտի բակը դուրս բերինք:

Վանի բերդը (լուս. 1913 թ.)

Չարաղէտ եզրակացութիւնը մեզ բոլորիս կսկիծի էր մատնել: Տեսանք և հասկացանք, որ ուրիշ բազմաթիւ զոհերի շարքում անպատճառ յօշոտուած պիտի լինէին նաև մեր տարէց ընկերները, քանի որ դժբախտ բանտարկեալներից և ոչ մէկին բարբարոս և վայրագ կոտորածը խնայած չէր: Մինչ մեր ընկերներից մի քանիսը զբաղուած էին Յասմիկ Սօլախեանին ուշքի և զգաստութեան բերելով, ես Միհրդատի և Հրանդի հետ նորից բանտը մտանք թիւրք վայրագութեան զոհերի ստուգումը կատարելու յոյսով:

Արեան ճապաղի սրտխառն հոտը, խառնուած խոնաւութեան մգլոտած և խեղդուած օդին, մեր շնչառութիւնը դժուարացնում էր:

– Միհրդա՛տ,– ասի Բրուտեանի եղբօրը,– ուշադրութեամբ աշխատիր գտնել եղբօրդ յօշոտուած մարմինը կամ, եթէ հնարաւոր չէ, ճարիր նրան իր կօշիկներով, գուլպայով և հագուստով:

Փնտրտուքը բաւական երկար տևեց, բայց ապարդիւն:

Երբ արդէն յոգնած ու յուսահատ Միհրդատի հետ մտածում էինք բանտից դուրս գալ, մեր ընկեր Հրանդը, որը մեզնից անխօս ջոկուել էր իր հերթին փնտրտուք կատարելու նպատակով, ձայն տուեց.

– Սիրա՛ք, եկէ՛ք այստեղ, այս զինուորական հիւանդանոցին կից խուցի մէջ կացնահար ընկած է մեր դժբախտ ընկեր Բրուտեանը:

Միհրդատի հետ, երբեմն ստիպուած, արնաշաղախ դիակները կոխոտելով, աճապարեցինք Հրանդի կանչած խուցը: Այդ զզուելի խուցի մէջն էր դժբախտ Բրուտեանի՝ գլխից կացնահար մարմինը: Երկաթավանդակը այնքան նեղ էր, որ նրա յատակը յօշոտուած մարմնին տեղ չէր տուել և գլխի մասը պատին յենուած էր: Միհրդատն անմիջապէս ճանաչեց եղբօրն ու ուշագնաց վրան ընկաւ: Շատ մեծ նեղութեամբ նրան կարողացանք ուշքի բերել: Լացում էր աղիողորմ և իր հարազատ մօրը կորցրած և անտէր մնացած երեխայի նման:

Ես վշտից, թէ անակնկալից շշմել էի: Ուզում էի խօսել, մի բան ասել, չէի կարողանում: Ցանկանում էի ճչալ, բղաւել, օգնութեան կանչել, բայց չէր յաջողւում: Վերջապէս կարողացայ և սկսեցի լացել, լացել և աղեկտուր արցունք թափել:

Քիչ վերջ, երբ միանգամայն պրկուած ջղերս մի քիչ հանգստացան, հազիւ կարողացայ ինձ հետ եղող ընկերոջս՝ Հրանդին, ասել.

– Իսկ ինչպէ՞ս ստուգել Սօլախեանի, Ասօյի և միւսների դիերը կամ նրանց հետքերը:

– Ապարդիւն և աննպատակ փնտրտուք կը լինի այդ: Ես համարեայ ամբողջ բանտը շրջեցի և նայեցի: Թիւրք բարբարոսներն այնքան վայրագօրէն ջարդել են իրենց անպաշտպան բանտարկեալ-զոհերին և այնպէս արիւնաշաղախ արել, որ նրանց դէմքով ճանաչելն անհնարին է, իսկ Յասմիկին

Վանի բերդը. հատված

նորից ներս բերելը հաւասար կը լինի նրան առանց այլևայլի յանկարծամահ անելուն:

Մինչ այդ բանտ վերադարձաւ Աղասին և մեզ դիմելով յայտնեց.

– Ինչ օգուտ ունի մեր ուշացումը: Պէտք է, ինչքան կարելի է շուտ, Յասմիկին Այգեստան տանել: Նա սրտի տագնապի է ենթարկւել: Նրան բժշկական անմիջական օգնութիւն է պէտք: Իսկ այստեղ՝ Քաղաքամիջում, կէս գիշերից անց, ես յոյս չունիմ դեղ ու բժիշկ ճարելու: Բացի այդ չգիտեմ մեզնից ո՞վ է Քաղաքամէջը ճանաչում:

– Ես Քաղաքամէջը բաւական լաւ ճանաչում եմ,– ասաց Հրանդը, – բայց այս վիճակում, երբ ամէն ինչ տակնուվրայ է եղել, վստահ չեմ, որ կարողանանք բժիշկ ճարել: Նոյնիսկ եթէ յաջողուի էլ, ժամերի խնդիր է: Ես կարծում եմ աւելի նպատակայարմար կը լինի անմիջապէս մի կառք ճարել և Յասմիկին հասցնել Այգեստանի Ամերիկեան հիւանդանոցը, որտեղ ինքը ծառայում է և բոլորը նրան ճանաչում են:

Ամենքս տւինք մեր համաձայնութիւնը: Հրանդը ինքնայօժար վազեց մի կառք ճարելու և մի տասը րոպէ յետոյ կառքը կանգնեց բանտի դռանը:

– Տղե՛րք, դժբախտութիւնը չի կարող անվերջ լինել: Մեր քօռ բախտը մի կիսաժպիտ ցոյց տւեց: Ես իմ հին բարեկամ կառապան Մկրոյին ճարեցի: Շուտ արէք:

Այգեստան մեկնելուց առաջ յանձնարարեցի Բրուտեանի եղբօրն սպասել մինչև Հրանդի անմիջական վերադարձը՝ իր բարեկամ կառապանի միջոցով Այգեստան փոխադրելու Բրուտեանի կացնահար եղած դիակը:

ՓՈԽՎՐԷԺԸ

Այգեստանի ու Քաղաքամիջի հայութեան հոգեառ տաճկական զօրանոցները դեռևս այրւում և ծուխի մուգ ու թանձր քուլաներ էին տարածում: Նրանց աւերակ ու սև հագած պատերը, սովորական պայմաններում մաղձ ու տխրութիւն պիտի բերէին, բայց ամբողջ մի ամիս մահւան ահն ու սարսափն ապրած հայերը հրճւում էին նրանց ահաւոր և սև հագած տեսքով:

– Ա՜խ, ինչպէս էս էրւած սիրտս խովցաւ էս սատանի բների աւերում-խաւարումով:

– Հըլա ու՞ր ես, մէ սպասի մեր կամաւորներն ու ռսները խասնեն, էսոնց եօթ խէրը կանիծեն: Էնպէս ջարդուփշուր անեն, որ էս անօրէնների արիւնը սրտերին չորանայ: Էնպէս փախչեն ու կորչեն, որ քանի աշխարհը կայ, խայի անունը լեզւի չը պիրեն ու ինոնց ունեցածին աչք չը տնկեն:

– Կասեն շուն ցնդկած Ջավդատն իրա վախից Արտամետին չը խասած իրեն ծովնի թալե: Ա՜խ,

ափսոս չի մեր Վանա ծովը, որ կեղտոտուի ինոր կեղտոտ-խոտած լաշից:

Եւ նման հազարաւոր վրէժխնդրական հրճւանքի բացականչութիւններ ու բախտաւոր ապագայի սպասումի խօսքեր ու ոգևորիչ յուսադրումների զեղումները բերնից բերան էին անցնում:

Իսկ վրէժխնդրութեան մոլեգին ծարաւով մրրկած ժողովրդական խաւը ձգտում էր հանել իր փոխվրէժը: Չնայած որ շտաբի կողմից նոր հրդեհումներ խստիւ արգիլուած էին, բայց զօրանոցներից յետոյ հերթը հասաւ թրքական թաղերի տներին:

Կուտակուած քէնի ու վրէժի ցասումնալից յորդումի առաջ կտրելը դժուար, եթէ չասենք անկարելի էր: Հրաբուխի լաւայի նման այդ վրէժխնդրութիւնը ժայթքում ու թափւում էր անտէր ու թափուր մնացած թիւրքերի տների վրայ: Մանաւանդ տզրուկանման հարուստների տները հանդիսանում էին այդ վրէժխնդրութեան առաջին նշանակէտ-ենթակաները:

Տասնեակ տարիների ընթացքին այդ ձրիակեր տաճիկ աղաներն ու բէկերը անխիղճօրէն կեղեքել և թալանել էին մշակ, աշխատաւոր և արհեստաւոր հայ մասսաներին: Ժամանակն է, մտածում էին նրանք, գոնէ մի անգամ լուծելու կուտակուած վրէժը:

– Ես էս անօրէնների եօթը պորտն անիծեմ: Էս է խարիր տարի մեր էրունը քամել ու ծծել են: Մեր խալալ աշխատանքը զօռով զավթիրեն: Մեր խօրոտիկ ջահէլ-ջիվաններին կոտորիրեն: Ինչքան շատ մեր գեօզալ աղջիկ-խարսները փախցուցած են: Բա մէկ անգամ դովրը (առիթը) մեզ խասած է, նորէն խնայենք: Բաս ասէք, որ մենք դրիստ էշի քուռակներ ենք:

– Էդ հալա ոչինչ: Բա չես ասի, որ էս մէկ ամիս մեր օրն ու արևը սևցուցած են: Մեր իգիթ դիրքապահներին սպանած, մեր խացն ու ջուրը խարամ արած են: Մեր տունն ու տեղը աւրած ու քանդած են: Մեր խօրոտիկ քաղաքը դժոխք են դարձուցեր: Էլի խնայենք...:

– Ա՜յ ախպէր, ամէնակարևորը մոռցար ասել: Էդ անաստուածները Յանկոյսների ու Սուրբ Յակոբա եկեղեցին ու դպրոցները հէնց էրեցին, հէնց քարուքանդ արան, որ քարը-քարի վրայ չթողան: Աստուած սիրողներ, ով ինչ կարող է, եթէ չանի նամարդից նամարդ ի:

– Տղե՛րք, բօլէ էդքան սաղմոս ու շարական ասելը: Շու՛տ արէք, մէ էս ցորէնն ու ալիրը, եղն ու պանիրը, խաւերն ու ճոտերը հաւաքոտեցէք, մաքրոտեցեք, սրբէք վերջացրէք: Քանի որ էս մեր շտաբներից վրայ չեն խասել էսոնց հաշիւը մաքրենք:

– Ա՛յ տղա, Գէվո՛, Սերո՛բ, Կարո՛, վռազէ՛ք: Էդ անօրէնների մարագից խոտ, սէզ, փայտ, նաւթ բերէք, որ կրակ տանք, վառենք ու լցնենք: Հրէս էս Հաջի Եունէսի տունը խեռու չի, ինչ որ ուզէք էդ սրիկայի տան մէջէն կը ճարէք: Շու՛տ արէք, էնոր խաշիւն էլ մաքրենք: Ձեզ ղուրբան, վռազէ՛ք: Եթէ ուշանաք, շատ կը փոշմանէք:

ՔԱՂԱՔԱՄԻՋԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՆԸ

Իմ համեստ և ազնիւ ընկեր Հրանդը շատ մեծ սիրալիրութեամբ կատարած էր իմ յանձնարարութիւնն և Միհրդատի օգնութեամբ ու իր վաղեմի ծանօթ բարեսիրտ կառապանի կառքով Այգեստանն էր փոխադրած եղերաբախտ հասարակական ու կուսակցական յայտնի գործիչ և հռետոր Աբրահամ Բրուտեանի խոշտանգուած դին: Այդ չափազանց յարգուած մարդու անշունչ մարմնի յայտնաբերումը նրա աղէտալի խողխողումից յետոյ մի տեսակ փոքր մխիթարութիւն էր մեր բոլոր ընկերներիս համար: Նրա դին պատշաճ դագաղի մէջ ամփոփուելով՝ ժամանակաւորապէս թաղուեց Նորաշէն եկեղեցու գերեզմանատանը:

Հրանդն առաջարկեց և ապա կարողացաւ համոզել, որ իր բարեկամի կառքով Քաղաքամէջը գնանք:

– Սիրա՛ք, չափազանց հետաքրքիր կը լինի մեր հայրենակից հերոս քաղաքացիների ինքնապաշտպանութեան ընթացքին ծանօթանալ և նրանց անման քաջագործութեան շնորհիւ ազատագրուած Քաղաքամէջն ու մանաւանդ նրա բերդը տեսնել: Ինձ ասացին, որ ժողովրդական գործիչ և շտաբի անդամ Փանոս Թէրլէմէզեանը մի խումբ այգեստանցի դիրքապահների հետ շուտով Քաղաքամէջն է գնալու: Մենք, եթէ անմիջապէս մեկնենք, շատ քիչ տարբերութեամբ, մի փոքր շուտ կամ ուշ, նրանց պիտի միանանք:

– Շատ աղէկ, գնանք: Ինձ համար էլ շատ հետաքրքրական կը լինի անձամբ տեսնել մեր քաղաքացի հայրենակիցների հերոսական դիմադրութեան թողած հետքերն ու Քաղաքամիջում ներկայ վիճակը և մանաւանդ ազատագրուած բերդը:

Կէս ժամից աւելի շուտ կառքը մեզի Քաղաքամէջը հասցրեց: Գիտէինք, որ Քաղաքամիջի մեր զինուորական շտաբը կենտրոնացուած էր հայկական առաջնորդարանում: Իջանք կառքից և անմիջապէս անցանք առաջնորդարանի կանաչագեղ պարտէզը: Մեր բախտից Այգեստանից եկողները՝ Փանոս Թէրլէմէզեանի գլխաւորութեամբ, նոր-նոր էին ժամանել և Քաղաքամիջի արի մարտիկների ու շտաբի անդամների հետ ջերմագին ողջագուրում էին: Մայիս 4-ի առաւօտն էր: Արևը նոր էր հորիզոն բարձրացել և իր շառաւիղները սկսել էր սփռել առաջնորդարանի պարտէզի գեղատեսիլ և դեռ աղամանդանման փայլող ցողոտ կանաչութեան վրայ: Պարտէզը լցուած էր Քաղաքամիջի հազարաւոր բազմութեամբ: Ուրախութեան և հրճւանքի ընդհանուր մի զգացում թրթռացնում էր բոլորի սրտերը:

Յայտնի նկարիչ Փանոս Թէրլէմէզեանը, խօսք առնելով, ասաց.

– Ողջո՜յն քաղաքացի հերոս ժողովրդին: Պարծանք բոլոր կռուողներին, որոնք խիզախօրէն կուրծք

տուին թշնամուն և յաղթանակեցին: Մենք ձեզ բերել ենք այգեստանցոց, ձեր զինակից ընկերներու համբոյրն ու հիացմունքը: Երկու տեղն ալ փառքով յաղթանակեցինք: Թշնամին անզօր և խայտառակած փախաւ: Կիմանանք, որ ռուսական բանակը՝ կամաւորներու առաջնորդութեամբ, Բերկրի է մտած: Մենք դեռ ծանր պարտականութեան առաջ կը գտնուինք: Չը խորհի, թէ զէնքը վար պիտի դնել: Ոչ, այժմ, աւելի քան առաջ, պատրաստ պիտի գտնուինք հաւանական բոլոր անակնկալներու հանդէպ: Փախչող թշնամին հեռու չէ: Կարող է վերադառնալ և նորէն յարձակման փորձեր ընել...:

Քիչ վերջ այգեստանցի զինակից մարտիկները հիւրասիրեցին թէյով և նոր թխած գաթաներով: Այդ թէյ ու գաթայից ինձ ու Հրանդին էլ բաժին հասաւ: Այնուհետև այգեստանցի հիւրերը Քաղաքամիջի գլխաւոր մարտիկների հետ միասին բարձրացան Վանի հնամեայ, հռչակաւոր բերդը՝ այն պատմական քարաժայռը, որ եղել էր Շամիրամեան շրջանի, Արծրունի իշխանների և թագաւորների փառաւոր յիշատակարանը, բայց որ դժբախտութիւն էր ունեցել տեսնելու Լէնկ-Թիմուրեան տխրահռչակ գլխակոյտերն ու մօնղոլական բարբարոս ժառանգորդների՝ թիւրքերի հինգ դարեայ վայրագ բռնակալութիւնը:

Այսօր այդ ազատագրուած բերդի բարձրաբերձ կատարին շողշողում էր Վասպուրականի փառահեղ ազատագրութեան յաղթական դրօշակը:

ԱԶԱՏԱՐԱՐՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ

Մայիսի սքանչելի և արևաշող օրերից մէկն էր: Անցեալ օրւանից հայ ազգաբնակչութիւնը սրտատրոփ և անհամբեր սպասում էր իր ազատարարներին:

Մայիս 5-ի կէսօրից յետոյ հայութեան սպասումն ու անհամբերութիւնը հասել էր իր գագաթնակէտին: Դեռ 3 ժամ առաջ մեր շտաբից ուղարկուած սուրհանդակները վերադարձել և յայտնել էին, որ մեր կամաւորական գնդերն ու ռուսական բանակը շուտով Այգեստան կը հասնեն:

Բազմահազար հայութիւնը՝ մեծ, փոքր, կին, աղջիկ, պատանի, երիտասարդ և ծեր ու պառաւ, թափուել և անկարագրելի անհամբերութեամբ սպասում, սպասում էին իրենց՝ օրերով երազած ազատարարներին:

Այգեստանի գլխաւոր Սըղգայի պողոտան, որ Քաղաքամիջից սկսում և փլատակած Համուդ աղայի զօրանոցից կէս կիլոմետր անցնում էր, ծածկուած էր դիմաւորողների բազմահազար բազմութեամբ: Այդ պողոտայում տեղը չը գտած երեխաներն ու պատանիները բարձրացել էին երկնասլաց բարդի ծառերի գագաթներին և թռչունների նման այնտեղ էին թառել:

Հայ կամավորական գնդերի մուտքը Վան

Ծերերն ու պառաւները ստիպւել էին մօտակայ կիսախարխուլ տների կտուրները բարձրանալ: Ժողովրդի բազմութեան մեծ մասը սեղմուել էր Սըղգայի պողոտայից ճիւղաւորուող կողմնակի փողոցների բերնում: Շատերն անսահման ուրախութիւնից պարում էին, ուրիշներն ոգևորուած և սրտաթունդ եղանակներ էին երգում: Միւսները դհոլ-զուռնա էին ածում: Մէկ խօսքով, ամէնքի դէմքին ուրախութիւն, ծիծաղ և երջանկութիւն էր փայլում:

Ուրախութիւնից և երջանկութիւնից ինչպէ՞ս կարող էր չը շողշողալ նրանց դէմքը, նրանց հոգին խորքից չը հրճւէր, երբ շուտով, շատ շուտով տեսնելու էին նրանց, որոնց ամբողջ մի ամիս սրտատրոփ սպասում էին:

Եկա՜ն, ահա եկա՜ն, հասան նրանք: Եկան անվերջանալի շարաններով: Գալիս և անցնում էին Այգեստանի կենտրոնական պողոտայով: Գալիս ու անցնում էին հետիոտն ու ձիաւոր, նորից ձիաւոր և հետիոտն: Կարծես նրանց թիւը վերջ չ'ունի, կամ գուցէ մեզ այդպէս է թւում: Ահա և կամաւորների գնդերն իրենց խմբապետ-գնդապետ-առաջնորդներով: Հեծելագունդեր են նրանք: Ահա թնդանօթների, ինքնաշխատ գնդացիրների, զէնքերի, զինուորական ֆուրգօնների, զինուորական ռազմամթերքների, պարենապահեստների զօրասիւնները: Ահա ձիաքարշ սարքաւորումների շարանները: Մէկ խօսքով, զինուորների և ռազմամթերքների անհաշիւ և անվերջանալի շարաններն ու շարանները:

Եթէ միայն սրտերն ու հոգիները իրար հաղորդակից լինէին և իրար հետ խօսէին իրենց հարազատ լեզուով, մարդկութիւնն անհունօրէն երջանիկ կը լինէր: Բայց ափսո՜ս, հազար ափսո՜ս, որ կեղծ, շահասէր, եսամոլ և ապերախտ դիւանագիտութիւնն ու քաղաքականութիւնը բաժանում և իրարից հեռացնում են այդ սրտերի նուիրական հարազատութիւնն ու հաղորդակցութիւնը:

Այդ նուիրական հարազատութիւնն ու հաղորդակցութիւնը անտեսանելի, բայց ամրակուռ կապերով միացնում էր եկողների և դիմաւորողների բազմահազար սրտերն ու հոգիները:

Եկան մեր փրկարարները ժամերով և ժամերով ու գնացին հանգստանալու և գիշերելու, բայց Վանի հայութեան սիրտը չէր կտրւում այն ճանապարհից, որով նրանք եկել ու անցել էին: Նա չէր ուզում բաժանուել և հեռանալ այդ ճանապարհից ու նրանց կտրած-անցած պողոտայից: Նրանք կարծես ափսոսում էին, որ այլևս չեն կարող տեսնել նրանց ոտքերի, նրանց ձիերի, ֆուրգօնների և շարասիւների պողոտայի վրայ թողած հետքերը:

***

Մի ամբողջ ամսից յետոյ այդ գիշերը վասպուրականցիների և մանաւանդ Վանի հայութեան համար ուրախութեան և խրախճանքի գիշեր էր: Կիսաքանդ գազինօների դռները լայնօրէն բացուել էին իրենց փախստական և թափառական դարձած յաճախորդների երեսին: Ամենուրեք սկսուել էր հայկական քէֆն ու գինարբուքը:

Շտաբի մուտքին ֆանֆառը, իր ղեկավար Յովհաննէս Պուճիքեանի և նրա օգնական Մարգար Փախչոյեանի բերկրալի ոստիւնների համընթաց, եռանդագին նւագում էր մարտի գոռ մարշեր և հայրենանուէր եղանակներ և բոլոր լսողների սրտերը թունդ էր հանում:

Նորաշէնի եկեղեցու հրապարակում մի հսկայ բազմութիւն, դիօլ-զուռնան մէջտեղն առած, շուրջպար էր բռնել: Ամենքը սրտի խորքից հրճւած, ուրախ երգեր էին երգում և վերուցած թռչկոտելով՝ իրենց ոտներով գետինը ծեծկում էին: Նոյն գիշերուան մեծահարուստ Գափամաճեանի հրաւէրով նրա տնում կազմակերպւեց շքեղ հիւրասիրութիւն, որին ներկայ էին ռուսական բանակի զօրահրամանատար Նիկոլայեվն ու նրա օգնականները: Կամաւորական խմբերի գլխաւորներից ներկայ էին միայն 3-ը: Անդրանիկը, այդ մեծ հայրենասէրն ու աննման հերոս հրամանատարը, Արամ Մանուկեանի՝ կամաւոր ղեկավարներին դիմաւորելու ուղարկւած մարդկանց կողմից արժանաւորապէս յարգւած չը լինելու պատճառով ներկայ չէր: Ասենք, նա իր վաշտով այդ օրւայ զինւորների և զինւորականների փառաւոր ժամանումին էլ անմասն մնաց և վշտաբեկ ու խռոված՝ իր վաշտով բանակեց Շուշանց գիւղի և Այգեստանի ծայրամասի միջև:

Ընթրիքին ներկայ էին Այգեստանի զինւորական մարմնի և սեկցիայի անդամներից ոմանք: Ընթրիքին մասնակցողների ընդհանուր թիւը 42 հոգու էր հասնում: Ընթրիքին ներկայ էին նաև Արամ Մանուկեանն ու Առաջնորդական տեղապահը, որ սեղանի բացման օրհնութիւնը կատարեց:

Ընթրիքի սեղանի շուրջ եղան ճառախօսութիւններ, ու զանազան կենացներ խմւեցին: Այդ բաժակաճառերից ամենաբովանդակալիցն ու ազդուն ասւեցին Գրիգոր Բուլղարացու, Յովհաննէս Կուլօղլեանի և Փանոս Թէրլէմէզեանի կողմից: Խմեցին ռուսական և նրա դաշնակից բանակների յաջողութեան և վերջնական յաղթութեան համար: Գովեցին կամաւորական գնդերի խիզախութիւնն ու խմեցին նրանց հրամանատարների կենացը:

Վերջում գեներալ Նիկոլայեվը շնորհակալութեան խօսքեր ասաց, դրւատեց վանեցիների՝ հիացմունքի արժանի քաջագործութիւնները և յոյս յայտնեց, որ ռուսական բանակների միջոցով և կամաւորական վաշտերի գործակցութեամբ շուտով հայկական նահանգները պիտի ազատագրւեն, և նրանց հայութիւնը վանեցիների նման իրենց երազած ազատութիւնը ձեռք պիտի բերեն:

ՎԱՆԻ ԵՐԿԱՄՍԵԱՅ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Անկասկած ընթերցողը հէնց սկզբից անդրադարձաւ այն հանգամանքին, որ Վան քաղաքը բաղկացած էր երկու քաղաքամասերից, որոնցից Քաղաքամէջ կոչւածը տարածութեան և ընդարձակութեան տեսակէտից Այգեստան կոչւած մասից 3-4 անգամ աւելի փոքր էր: Քաղաքամիջումն էին կենտրոնացած թիւրք պետական բոլոր հիմնարկները: Այնտեղ էին կենտրոնացած Վանի վաճառականական, առևտրական տներն ու պահեստները, ինչպէս նաև մեծ ու փոքր ամէն տեսակի արհեստանոցներն ու զանազան խանութները: Մէկ խօսքով Վանի ազգաբնակչութեան հարուստ և միջակ դասի գանձն ու հարստութիւնը 90 տոկոսով Քաղաքամիջումն էր կենտրոնացել:

Այգեստանի մասը, ինչպէս իր անունից էլ կարելի է եզրակացնել, հարուստ էր իր առատ մրգերով և շէն, ծաղկած ու ընդարձակ այգիներով: Այգեստանի տները, բացառութեամբ եռյարկանի փոքրաթիւ բարձր տներից, ծածկւած և անհետացած էին այդ այգիների բազմազան և բազմահազար պտղատու և անպտուղ ծառերի ու նրանց փարթամ սաղարթների և շւաքների արանքում: Փողոցներում՝ ծառաշարերի արանքներում, արծաթափայլ շողարձակումով վազում և խոխոջում էին բազմաթիւ աղբիւրների զրնգուն ջրերը: Հեռից դիտողը կարծում էր, որ մո-

տենում է մի ընդարձակ և անծայրածիր մշտադալար այգեստան-ծառաստանի ամառանոցի:

Այս երկու քաղաքամասերն իրար միացնողը Սըղգայի լայն ու երկարաձիգ պողոտան էր: Այս պողոտայի վրայ էր գտնուում Այգեստանի փոքր շուկան: Այս պողոտայի վրայ էին բացուում Այգեստանի գլխաւոր թաղամասերից երկարող փողոցները: Երամեան, Կենտրոնական և Վարժապետանոց միջնակարգ դպրոցները, ինչպէս նաև օտար միսիոնարութիւններն ու հիւպատոսարանները գտնուում էին կա՛մ գլխաւոր պողոտայի և կա՛մ նրան միացնող փողոցների վրայ:

***

Վանի ազատագրումից գրեթէ անմիջապէս յետոյ կազմուեց Վասպուրականի ինքնիշխանութեան ժամանակաւոր կառավարութիւնը: Ռուսական բանակի ընդհանուր հրամանատար Նիկոլայեվի 7 մայիս 1915-ի հրամանագրով՝ Արամ Մանուկեանը նշանակուեց Վանի և շրջանի կառավարիչ, որը և կազմակերպեց այսպէս ասած, քաղաքային և շրջանային գործերը: Կազմուեցին ոստիկանական, դատական, գիւղատնտեսական, գաղթականական, քաղաքապետական, առողջապահական և այլն վարչութիւնները, որոնք իրենց նոր նշանակուած վարիչներով նոր գործի ձեռնարկեցին:

Արամ Մանուկեանը[27] (մի կարգ մասնաւոր մարդիկ և երբեմն էլ ժողովրդական որոշ տարրերը նրան անուանում էին Արամ փաշա: Այս անուանում-տիտղոսն իր թրքական ծագումի պատճառով խորթ ու անհարազատ էր շատերի համար), անհատապէս վերցրած, կարող և ընդունակ վարիչ և կազմակերպիչ էր: Դժբախտաբար նրան, հէնց սկզբից, շրջապատեցին շահամոլ տարրեր և շփացած խմբապետներ, որոնք գործում էին նրա անունից, բայց իրապէս նրա դիրքին ու վարկին հակառակ:

Կողմնակի մարդիկ և նոյնիսկ դաշնակցական ազնիւ և անշահախնդիր տարրեր չէին կարողանում հասկանալ և բացատրել թէ ինչու՞ և ի՞նչ պատճառով Արամ Մանուկեանը չի ցանկանում իրեն ազատել այդ շփացած և շահամոլ տարրերի պատահական ազդեցութիւնից:

Արամ Մանուկյան (Մարգիս Հովհաննիսյան)

Արդար լինելու համար պիտի ասել, որ այդ միլիցիապետ-խմբապետ կոչուածների շարքում կային մի քանիսը, որոնք Վանի պաշտպանութեան օրերին նշանակալից ծառայութիւններ և նոյնիսկ հերոսական գործեր էին կատարել, բայց այդ պարագան նրանց իրաւունք չէր տալիս շահագործելու իրենց անցեալ փառքը:

Դաւիթ Փափազեանը, որն այն ժամանակ ընդհանուր միլիցիապետ էր և շատ ազնիւ ու անշահախնդիր գործիչներից մէկը, հակառակ իր ճիգերին և ցանկութեանը, ի վիճակի չէր այս նոր բաշիբոզուկ խմբապետներին կարգի բերել, որովհետև նրանք անմիջապէս «փաշայի» պաշտպանութեանն էին ապաւինում:

***

Տաճիկ կառավարութիւնը, մանաւանդ Վանի շրջանային գաւառներում և գիւղերում, բացի հայ երիտասարդների կոտորումն ու բնաջնջումը, մաքրել, սրբել և թալանել էր հայ ընտանիքների ալիւրը, հացահատիկն ու ամէն տեսակի կենսամթերքը, որոնք լափած և սպառած էին հազարաւոր թիւրք զինուորների և մանաւանդ ամբոխի ու նրանց գործակից դառած պատեհապաշտ քիւրդերի կողմից:

Թիւրքերի փախուստից յետոյ նրանց ստիպողաբար թողած աննշան քանակութեամբ հացահատիկն ու կենսամթերքը պէտք էր հաւաքուէին և կենտրոնացուէին Վանում՝ նախկին պահեստներում և աժան արժէքով բաժանուէին կիսաքաղց այգես-

27 **Արամ Մանուկյանը** ծնվել է 1879 թ. Կապանի Զեյվա (այժմ՝ Դավիթբեկ) գյուղում: 1901 թ. ավարտել է Երևանի թեմական դպրոցը: 1901-1905 թթ. կուսակցական-կազմակերպչական գործունեություն է ծավալել Բաքվում, Կարսում: 1905 թ. հաստատվել է Վանում: 1915 թ. Ապրիլյան հերոսամարտից հետո նշանակվել է Վանի նահանգապետ: 1915 թ. վանեցիների գաղթից հետո հաստատվել է Թիֆլիսում և աշխատել Ազգային բյուրոյում: 1916-1917 թ. վարել է նույն բյուրոյի լիազորներկայացուցչի պաշտոնը: 1917 թ. վերջին փոխադրվել է Երևան: Հայաստանի անկախացումից հետո ստանձնել է ներքին գործերի նախարարի պաշտոնը: Վախճանվել է բծավոր տիֆ վարակիչ հիվանդությունից 1919 թ. հունվարի 29-ին Երևանում:

տանցիներին և մանաւանդ ամէն կողմից այնտեղ եկած ու մնացած գիւղերի՝ բոլորովին քաղցած բազմութիւններին: Նման կարգադրութիւն եղել էր նաև մսացուի՝ մորթելիք ոչխարների, այծերի, կովերի և ուրիշ ընտանի կենդանիների վերաբերեալ:

Ահա մանաւանդ այս գործում, վերոյիշեալ խմբապետների կողմից կատարւում էին աններելի չարաշահութիւններ: Նրանք կենսամթերքների և մսացու կենդանիների մասնաւոր սև շուկայ էին ստեղծել և իրենց անյագ գրպանները լցնում էին կիսաքաղց բազմութիւններին յատկացուելիք պարենապաշարի ապօրինի կոնդրբանդ առևտրով:

Նման չարաշահութիւններին ականատես լինել չը կարողանալով՝ հրաժարուեցի պարենապահեստի վերահսկողութեան պաշտօնից: Գրիգոր Բուլղարացին, որի պարկեշտութեան և ազնւութեան մասին ես մեծ հաւատք ունէի, և որը շտաբի լուծարքից յետոյ ժամանակաւոր կառավարութեան գործակիցանդամ էր դարձել, ինձ իր մօտ կանչեց և իմ բողոքի միանգամայն իրաւացի լինելը հաստատելով՝ ասաց.

– Սիրաք, ես քո մէջ շատ կը գնահատեմ ուղղամտութիւնդ և գործիդ նուիրուածութիւնը: Այս անկարգապահութիւններու մասին մենք ալ տեղեկութիւն ունինք: Ընկ. Արամի հետ ես այդ առթիւ խօսած եմ: Նա խոստացած է վերջ տալ այդ խմբապետներու ապօրինի և վնասակար չարաշահութիւններուն: Մեր կառավարութիւնը դեռ բոլորովին մանուկ է և շատ հեռու ամուր հիմքերու վրայ ըլլալուց: Թերութիւններ շատ ունինք, բայց յոյս ալ ունինք, որ ամէն բան կարգի կընկնի: Ես յարմար կը դատեմ, որ հրաժարականդ յետ վերցնես:

– Չեմ կարող,– պատասխանեցի Գրիգորին, –հաւատացէ՛ք, որ չեմ կարող: Ես ձեզ շատ կը յարգեմ, բայց կը վախենամ, որ այդ գործի մէջ այդ պարոն խմբապետ-միլիցիոնէրները իմ անունն ալ խայտառակեն և ինձ ալ վարկաբեկեն: Քաղաքապետը ինձ առաջարկած է քաղաքապետարանի քարտուղարութեան պաշտօնի անցնել: Համաձայնուել եմ: Չեմ գիտեր՝ ուրկէ՞ իմացած է, որ ես մի քիչ ռուսերէն գիտեմ:

– Ռուսերէն գիտե՞ս,– զարմանքով հարցրեց Բուլղարացին:

– Դէ իմ այս ռուսերէն գիտնալը գիտնալուն նման չէ: Երամեան դպրոցի աւարտական բաժանմունքի շրջանին մի 200 կամ մի գուցէ մի քիչ աւելի բառեր և շատ սովորական խօսքեր սովորած կը լինեմ: Դէ՛ ինչ անենք, կարիք եղած տեղը պիտի սովորենք: Աս ալ մեր հայի բախտն է, որի ձեռքը ընկնենք, ստիպւած նրա լեզուն էլ պիտի սովորենք:

– Խելօք երիտասարդ ես եղած պարո՛ն, ներողութիւն, ընկե՛ր Սիրաք: Շատ ուրախ եմ պատերազմի նեղ օրերու գործակցութիւնէդ: Ամէն պարագային վարուիր այնպէս, ինչպէս կը ցանկանաս: Կարող ես միշտ իմ բարեկամութեանս, և, եթէ կարիք ըլլայ, և ի վիճակի ըլլամ իմ օգնութեանս վրայ յոյս դնել:

– Շնորհակալ եմ, չափազանց շնորհակալ ձեր բարեկամութեան համար,– ես ջերմագին սղմեցի Բուլղարացու ձեռքն և խնդրեցի իմ բարևներս հաղորդել Մարօին և նրան յայտնել, որ շուտով կաշխատեմ նրան այցելութեան գալ: Վանի նահանգապետարան կոչւող շէնքից դուրս գալուց՝ ինձ մօտ խորհում էի, որ իսկապէս այդ մարդը շատ պատուական, համեստ և անշահախնդիր գործիչ է: Երանի թէ սրա նմանները շատ լինէին:

ԸՆՏԱՆԻՔԻՍ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՍ ՇՐՋԱՆՈՒՄ

Քոյրս՝ Արաքսին, անչափ ուրախ էր, որ ապրիլեան գիշերների ստիպողական բացակայութիւններից յետոյ ինձ համարեայ միշտ տնումն էր գտնում:

– Ա՜խ, ի՜նչ անտանելի օրեր էին այդ օրերը և մանաւանդ նրա գիշերները, երբ մեր տնից բացակայում էիք դու և եղբայր Կարապետը,– յաճախ կրկնում էր նա:

– Փառք Աստծոյ, անցան այդ դժնդակ օրերը: Հիմա կարծում եմ, դժգոհելու առիթ չ՚ունես:

– Դժգոհելու պատճառ,– տատանման շեշտով կրկնեց նա: – Եթէ Հայկանուշի հիւանդութիւնը և այս մեր դրամական նեղութիւնը չը լինէր, դժգոհելու առիթ չպիտի ունենայի:

– Մի՛ տխրիր, սիրելի՛ քոյր, գիտեմ, որ քեզ համար դժւար է մեր ապրուստի հոգսը, բայց մի քանի օրից յոյս ունիմ իմ ռոճիկի հաշւին մի գումար ստանալու: Ինչ վերաբերում է Հայկանուշին, ես արդէն խօսել եմ Առողջապահական բաժնի գլխաւոր բժիշկի՝ դոքտոր Սան-Ֆանի-ի հետ: Բարեբախտաբար, նա հայ է և, որ ամենակարևորն է, ներքին հիւանդութիւնների մասնագէտ: Նա ինձ խոստացել է Հայկանուշին այս օրերում բժշկական մանրազնին քննութեան ենթարկելու և, եթէ անհրաժեշտ և հնարաւոր լինի, նրան հիւանդանոցում մի մահճակալ յատկացնելու, նրանց համար էլ շատ դժւարութիւններ կան: Այնքան շատ վիրաւորներ և սովածութիւնից և ջղերի ծայրահեղ պրկումից ու անասելի յոգնածութիւնից հիւանդներ կան, որ նրանց օգնելու ու դարմանելու և մանաւանդ հիւանդանոցում պառկեցնելու հնարաւորութիւն չկայ:

– Օ՜հ, ինչքա՜ն լաւ է քեզ պէս եղբայր ունենալը: Ես չը գիտեմ՝ առանց քեզի և քո այդ յուսադրիչ խօսքերի ի՞նչ պիտի անէի: Գիտես, որ եղբայրը իր բազուկի վէրքից բոլորովին չի ապաքինուել և երբեմն ուժեղ ցաւեր է ունենում: Օրամէջ հիւանդանոց բժիշկի է գնում և դեռ ի վիճակի չէ որևէ գործի ձեռնարկելու, իսկ մեր հօր պաշտօնակատարած Ս. Յակոբայ եկեղեցին անգութ տաճիկների ձեռքով քարուքանդ է արուած: Եկեղեցու հաւատացեալների մեծ մասը թալանուել ու աղքատացել է: Նրանց մնացել է միայն լացն ու աղօթքը: Իսկ դու լաւ գիտես մեր

հօր բնաւորութիւնը: Նա իր շնչին խաչհամբոյրի մեծ մասը կարիքաւորներին է բաժանում:

– Շատ լաւ է անում: Ինչպէս ես, այնպես էլ դու այդպիսի բարեխիղճ հայր-քահանայ ունենալու համար պիտի պարծենանք:

Քոյրս տխրութեամբ գլուխն օրօրեց և բաւականացաւ միայն ասելով.

– Այո՛, ես քեզ հետ համաձայն եմ, միայն թէ մենք էլ մեծ կարիքի մէջ ենք:

***

Այդ օրերից մէկում՝ կէսօրից յետոյ, քաղաքապետարանից դուրս գալուց յետոյ որոշեցի այցելել մեր ոչ անմիջական բարեկամներից մէկին՝ ռուսական հիւպատոսարանի գլխաւոր պահապան Սահակ աղին:

Այս հիւպատոսարանի գրաւած շէնքը նրա սեփականութիւնն էր:

Ապրիլեան կռիւներից առաջ, երբ թիւրք պետութիւնը, իր դաշնակից գերմանացիների հրահանգով, ռուսների հետ պատերազմի մտաւ, ստիպեց ռուսական կոնսուլատի հիւպատոսական պաշտօնէութեանը Վանից հեռանալ: Նրանց մեկնումի յաջորդ օրն իսկ մի զինուորական գնդապետի առաջնորդութեամբ հինգ զինուած ասքեարներ եկան և հիւպատոսարանի ռուսական դրօշը ցած բերելով՝ ցուցամոլօրէն զրիկ-զրիկ պատռտեցին և այրեցին ու գոյացած մոխիրը կոխկռտելով՝ ցրիւ տուին: Նրանք դրանով էլ չը բաւականացան և դրօշակի գերանն էլ տեղից քանդելով ու ցած բերելով և ջարդոտելով՝ նրա կտորներն էլ այրեցին: Ամէնից յետոյ Սահակ աղային, որ վախից թաքնուած էր, որտեղից-որտեղ ճարեցին և վայրագօրէն ծեծկռտելով և խեղճ անպաշտպան մարդուն ոտների տակ գցելով նորից տրօրեցին և մահամերձ վիճակի հասցրին, և եթէ Ղևոնդ Խանջեանի միջամտութիւնն ու թախանձագին խնդրանքները չը լինէին, անկասկած, կ'սպանէին:

Ինձ տեսնելուն պէս Սահակ աղան ուրախութիւնից բացականչեց.

– Ա՜յ բալամ, էս ի՞նչ խորթութիւն է, որ խարջ կը տաս: Ախըր չես ասի, որ մահէն հրաշքով պրծած բարեկամ մ'ունիս: Չեմ կրնար հասկնալ, ինչ եղաւ պատճառը, որ մէկ անգամէն բէզարեցիր: Մենք դէ՛, հալա ոչինչ, գոնէ մէկ անգամ այս մեր աղջկան՝ Անուշին, յիշած ըլլայիր: Նա քեզմէ բացի ուրիշ բարեկամ ոչինչ չ'ունի և քեզ համար շատ ալ անհանգիստ էր: Դէ հալա լաւ է, որ եկած ես, շատ ուրախ եմ, ներս մտիր, մերոնք տանն են, ես մէկ փոքր գործ ունիմ, կը վերջացնեմ, էս է կը գամ:

Նա իմ պատասխանին ու չքմեղանքին չ'սպասեց և իր առնական ձայնով կանչեց.

– Աղջի՛կ, Անու՛շ, ձեզ համար հիւր է եկած, նե՛րս հրաւիրէք:

Ճիշտն ասած, ես Սահակ աղայից նման դիմաւորում չէի կարող անկնկալել: Նրան ճանաչում էի՝ որպէս խստաբարոյ և պահպանողական մի հայր: Ամէնից աւելին ինձ զարմացնում էր այն պարագան, որ նա ինձ հաղորդում էր իր աղջկան՝ իմ վերաբերմամբ ունեցած անհանգստութիւնը: Չէ՞ որ այդ ժամանակներում վանեցի ընտանիքների մօտ շատ ուժեղ պահպանողականութիւն և պաշտօնականութիւն գոյութիւն ունէր: Ինձ անհասկանալի էր մանաւանդ այն պարագան, որ ինչպէ՞ս Սահակ աղայի մի ու միակ աղջիկը համարձակւել էր իր խստաբարոյ հօրը հաղորդել իմ նկատմամբ ունեցած անհանգըստութիւնն և յատկապէս այն, որ Սահակ աղան, հակառակ իր պահպանողականութեանը, ինչպէ՞ս էր պատահել, որ ինձ բացայայտեց այդ զգացումը:

Մինչ ես այդ իրար յաջորդող հարցերն էի տալիս ինձ և շարման վիճակումն էի, Անուշը՝ Սահակ աղայի մինուճար աղջիկը, իր մօրից առաջ ընկած, ուրախ բացականչութեամբ ինձ իրենց հիւրասենեակի սեմին դիմաւորեց:

– Ա՜յ, պարո՛ն Սիրաք, կեցցե՛ս, քո այդ ինձ հետ ունեցած բարեկամութեամբ: Սա արդէն երեք ամսից աւելի է, ինչ մեզ մօտ գալ չես բարեհաճում: Ուրեմն դու ինձ ճիշտ չես ասել, որ Մարօից յետոյ, ես քո ամենամօտիկ բարեկամն եմ եղել:

Դեռ իմ շարած ու շփոթած վիճակից չէի ձերբազատւել, երբ Անուշի կողմից երկրորդ հարուածն ստացայ: Մեծ դժուարութեամբ կարողացայ ինձ յանկարծակի բերող մտորումները գլխիցս վանել և պատասխանել:

– Օրիո՛րդ Անուշ, ճիշտն ասած, ես քեզ և քո յարգելի մօր մօտ չքմեղանալու և ինձ արդարացնել կարողանալու խօսք ու պատասխան չեմ ճարում: Դուք միանգամայն իրաւացի էք: Ես իմ բարեկամական պարտականութեան մէջ ճիշտ է, որ թերացել եմ: Բայց...

– Ինչ բայց,– խօսքը բերնիցս խլելով՝ հարցրեց Անուշը, – գիտեմ, առանց քու ասելուն գիտեմ, որ քեզ կարդարացնես ապրիլեան կռիւներով: Գիտեմ, բոլորը գիտեմ... Ի դէպ շնորհաւորում եմ քեզ, որ այդքան երիտասարդ տեղով պատասխանատու պարտականութիւններ ես կատարել: Բայց այդ բոլորով հանդերձ, եթէ իսկապէս կցանկանայիր, կարծում եմ, կարելի կը լինէր գոնէ մի կէս ժամ մեզ յատկացնել:

– Անօրէնները խեղճ Սահակին այնպէս վայրագութեամբ ծեծեցին, որ նա ամբողջ երկու ամիս անկողնից վեր կենալ չը կարողացաւ: Աստուած անոր խնայեց,– լրացրեց Անուշի մայրը:

– Իմացել եմ մայրիկ: Ի՞նչ արած: Փառք Աստծոյ, որ նա բախտ ունեցաւ ողջ մնալ և ազատւել այդ հրէշներից: Գիտէք, լուր ունիք անշուշտ, որ մեր ջահէլ ու ջիվան երիտասարդներից հարիւրներով զոհ են գնացել այդ նամարդ թշնամուն: Բացի

շրջաններում կատարած անհաշիւ սպանութիւններից՝ հէնց մեզ մօտ, մեր դիրքերում և խրամներում տասնեակներով սպանած և վիրաւորուածներ կան այդ նոյն հրէշների գնդակներից:

Մինչ ես շարունակում էի թշնամու համատարած վայրագութիւնների և աւերածութիւնների նկարագրութեամբ, ներս մտաւ Սահակ աղան ինձ դիմաւորելու պահի ուրախ տրամադրութեամբ, և մենք սկսեցինք մեզ հետաքրքրող օրուայ հարցերի շուրջ մտերմօրէն խօսակցել և երբեմն էլ խնդիրների շուրջ թեթևակի ու կարճառօտ քննադատութիւններ անել:

Սահակ աղան թունդ ռուսասէր էր: Նա ասում և պնդում էր.

– Եթէ աշխարհիս երեսին մենք բարեկամ և պաշտպան մը ունինք, այդ ռուս ժողովուրդն ու նրա կառավարութիւնն է: Նոյնպէս ալ մեր նեղութեան օրերին մեզ օգնութեան հասնող և փրկողը միայն և միայն անոնք են: Փաստն արդէն ունենք: Եթէ այդ ազնիւ և հայասէր կառավարութեան բանակն ու անոնց զինած կամաւորական գունդերը չըլլային, մեր աս քաղաքի, աս ամբողջ վիլայէթի մէջ մէկ կենդանի շունչ հայ չէին թողնի այս անօրէն և անամօթ տաճիկները:

Յետոյ իր խօսքը մասնաւորապէս ինձ ուղղելով՝ աւելացրեց.

– Պարո՛ն Սիրաք, հիմա մի գուցէ կը մտածես, որ իհարկէ, Սահակ աղան ռուսասէր կըլլայ, որովհետև անոնցմէ շահած և հարստացած է, բայց պատուվս կ'երդուեմ, որ եթէ անոնցմէ մէկ սև փող իսկ տեսած չըլլայի, կրկին անոնց կողմնակից կըլլայի և անոնց կը գովէի, քանի որ անոնք ալ մեզ նման քրիստոնեայ են, խաչ ու աւետարան ունին, Աստծոյ սէրն ու հաւատքն ունին, գութ և խիղճ ունին և աս անօրէններէն, երկնքէն մինչև երկիր, տարբերութիւն ունին: Եթէ մեր հայ ազգը ազատութիւն պիտի ունենայ, այդ ազատութիւնն ու փրկութիւնը միայն անոնց օգնութեամբ և պաշտպանութեամբ կըլլայ: Վերջացաւ գնաց: Ես այս կարծիքին եմ և մինչև մահս ալ այս գաղափարին կը մնամ:

Սահակ աղայի հետ տեսել պայմաններում վիճաբանութեան բռնուելն անօգուտ և աւելորդ համարելով՝ ես այդ երեք հոգինոց ընտանիքի սիրալիր ընդունելութիւնից ու թէյի հիւրասիրութիւնից շնորհակալութիւն յայտնեցի և մեկնեցի: Մինչև ելքի գլխաւոր դուռն ինձ ուղեկցող օր. Անուշի ձեռքը ջերմօրէն և մտերմաբար սղմելով՝ նրան հաստատ խօսք տուի սրանից յետոյ շուտ-շուտ այցելութեան գնալ՝ պայմանով, որ այդ ապագայ յաճախակի այցելութիւնները նրա պահպանողական հօրը ջղայնութիւն չը պատճառեն:

ԹԱՆԿԱԳԻՆ ԶՈՀԵՐԻ ԹԱՂՈՒՄԸ

Մայիսի պայծառ և արևաշող օրերից մէկն է: Մայիս 19-ը: Յայտարարուած է, որ առաւօտեան ժամի 10-ին տեղի կ'ունենայ մեր անփոխարինելի և թանկագին զոհերի պաշտօնական թաղման արարողութիւնը ազգային հերոսների պանթէոնին մէջ:

Զինուորական պատուոյ պահակներով շրջապատուած և ուսամբարձ փոխադրւում են հայ ժողովրդի ազատագրութեան դատի համար զոհուածների՝ բանտում վայրագօրէն խողխողուած Ա. Բրուտեանի, Հիրճում տմարդօրէն և դաւադրաբար գնդակահարուած Իշխանի և նրա 3 ընկերների, ինչպէս նաև Ապրիլեան հերոսամարտում նահատակուած 12 դիրքապետների ու նրանց օգնականների դիերը, որոնք ժամանակաւորապէս հողին էին յանձնուել և այսօր իրենց վերջնական հանգստարանում՝ Ա-բարքի Ս. Թարգմանչաց եկեղեցու գերեզմանատնում կառուցուած Ազգային պանթէոնում ամփոփուելու են:

Թաղում չէր այդ, այլ ազգային համատարած յարգալից սգահանդէս, համաժողովրդական ատելութեան և վրէժխնդրութեան հսկայական բողոքի ցոյց: Ժողովրդի՝ այդ սիրելի և անփոխարինելի զաւակների թաղմանը մասնակցում էր հազարաւորների ծովածաւալ բազմութիւնը:

Դագաղները ծածկուած էին վարդերի և դալար ճիւղերի պսակների խուրձերով: Շարքով իրար յետևից ուսամբարձ տարուող դագաղների յետևից գնում էր հայ ժողովուրդը, անվերջ ու անհատնում: Ընդարձակ գերեզմանատան տարածութիւնը չէր կարողացել բազմահազար յուղարկաւորներին տեղ տալ: Երեխաներ, պատանիներ և երիտասարդներ հանգստարանի և շրջակայքի ծառերին ու պատերին էին բարձրացել, իսկ հազարաւորներ շրջապատի փողոցներումն էին մնացել:

Շատ-շատեր սգաճառեր ասացին, որոնք ժամեր տևեցին: Անհուն վշտի ու կսկիծի դամբանականներ խօսեցին Գրիգոր Բուլղարացու, Փանոս Թէրլէմէզեանի, Արմենակ Եկարեանի և ի վերջոյ Յովհաննէս Կուլօղլեանի և Լևոն Շաղոյեանի կողմից: Կուլօղլեանի՝ այդ տարեց հին յեղափոխականի և հանճարեղ բանաստեղծի շրթունքներից կրակ ու անէծք էր թափւում հայ ժողովրդի դարաւոր թշնամու հասցէին: Երբէք չեմ կարողանում մոռանալ, ի միջի այլոց, նրա հետևեալ խօսքերը.

«Անխիղճ և նամարդ թիւրքը սպանեց մեր Մկրտիչ Աւետիսեանը Ս. Բարդուղիմէոսի վանքի բլուրներու և նրա ընկերները՝ Մարտիկն ու Պետոն Գարահիսարի լանջերու վրայ: Բրուտեանը խողխողեց իր սև ու մութ բանտին մէջ: Իշխանն ու անոր ընկերները դաւադրաբար գնդակահարեց Հայոց-Ձորի Հիրճ գիւղին մէջ: Մեր հերոսներէն Եղիա Նախշունեանը, Յակոբ Դերզեանն ու Կարապետ Տանթէեան իրենց պատնէշներուն վրայ սպանեց և

կոտորեց հարիւրաւոր քաջեր հերոսամարտի դիրքերուն մէջ, բայց արդեօ՞ք կարողացաւ բնաջինջ ընել անոնց ծնող հայ մայրերը...:

Չէ՞ որ այդ հայ մայրերը մէկ, երկու, տասն ու քսան չեն: Չէ՞ որ այդ մայրերը հայ ժողովրդի հերոսները ծնող մայրերն են: Իսկ հայ ազգն իր ծոցի մէջ ծնել ու սնուցել է այդպիսի հազարաւոր մայրերը: Քանի որ հայ ժողովորդը կայ, ուրեմն կան նաև հայ հերոսները ծնող աննման ու ազնիւ հազարաւոր մայրեր:

Մենք կը խոնարհուենք մեր այս քաջերու շիրիմին առաջ, անոնց սխրագործութիւնները ոսկէ տառերով կը գրենք մեր սրտի խորքի էջերուն մէջ, հպարտանում ենք անոնց անձնուրացութեամբ և փառաւորում ենք՝ ի տես այդ հերոսներու մայրերի անուաճելի կամքին: Անոնք ծնած են և կը ծնեն քաջերու անսպառ, անվերջանալի շարքեր, իրենց ժողովրդին նուիրելու համար: Մեր դարաւոր թշնամին կը կուրանայ, բայց մեր անընկճելի կամքի երերումը երբէք չի տեսնելու»:

Ամենից վերջը ճառախօսեց Լևոն Շաղոյեանը իր ինքնածին զինուորականի առնական և խրոխտ ոճով.

– Անհունօրէն տխուր եմ սքանչանքի արժանի մեր այս հերոսների ծանր կորուստին համար: Մեր սրտերը խորքէն կը մորմոքին այս սիրելի ու թանկագին զոհերի համար: Ես հազիւ մէկ քանի օր է, ինչ վերադարձել եմ հայկական հերոսապատում լեռնապարի՝ Շատախի, Փեսանդաշտի, Մոկսի, Գավաշի, Կարկառի և այլ վայրերու, քաջերու և անկուն ազատորդիներու աշխարհէն: Աննման ընկերներ, դուք ազնուօրէն կատարեցիք յեղափոխական և ազգանուէր ձեր պարտքը և անմահներու փառքի դափնիները խլեցիք: Հանգստացէ՛ք ընդմիշտ մեր խորին յարգանքի արժանի ազգային այս պանթէոնին մէջ: Դուք ձեր հարազատ հայորդու ազնիւ պարտականութիւնը կատարած էք: Վստահ եղէք, որ ձեր արժանի արի յաջորդները միշտ բարձր պիտի պահեն ձեր պարզած ազատութեան դրօշը և մեր ընդհանրական թշնամիէն ձեր վրէժը պիտի լուծեն:

Դամբանական ճառերը վաղուց վերջացել էին, բայց հազարաւոր յուղարկաւորները չէին ցանկանում իրենց փրկութեան համար զոհուած հերոսների հանգստավայրը թողնել: Նուագախմբի սգամարշերի վշտակոծ ելևէջների հետ միասին լացում էին նաև նրանց հոգիները:

ԱԶԱՏԱԳՐՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

Վանն ու Վասպուրականը սկսել էին ազատ շունչ քաշել: Տաճիկ կառավարութիւնն իր կողոպտիչ ու մարդասպան հիմնարկների ու նրանց գլխաւորող ապականած տարրերի հետ կորել, անհետացել էր:

Այդ պետական և վարչական տմարդի ու այլասերուած տարրերի անհետացումի հետ միատեղ փախել և անհետացել էին նրանց համագործակից դժոխատեսիլ և արիւնածարաւ ենիչերիները, ժանդարմներն ու ամէն տեսակ անկարգութիւններ ու տակնուվրայութիւններ սարքող անպատասխանատու տարրերն ու թալանչի աւազակապետ քրդերը: Վանի և շրջանների հայութեան միակ գլխացաւանքը մնացել էր միլիցիապետ-խմբապետների ոտնձգութիւնները և ապօրինի շահագործումները:

Համարեայ ամեն օր նահանգային ժամանակաւոր վարչութեան, ոստիկանութեան և ժամանակաւոր դատախազին հասնող գանգատների հետևանքով նշանակուեցին մի քանի շրջիկ-քննիչներ այդ միլիցիական խմբապետների ոտնձգութիւնների առաջն առնելու համար:

Դժուար, շատ դժուար պայմաններ էին ստեղծուած ազգաբնակչութեան համար: Ապրուստի հնարաւորութիւնները խոշոր չափով պակսել էին: Թշնամին և կողոպտիչ տարրերը մաքրել, սրբել ու տարել էին նրա ալիւրն ու ցորենը և ամէն տեսակի կենսամթերքները և մանաւանդ նրա ունեցած կաթնատու և մսացու կենդանիները:

Նախքան ապրիլեան կռիւները՝ նահանգի թրքական աւերածութիւններն ու կոտորածները, երիտասարդ և աշխատող ձեռքերի բացակայութիւնը ժամանակին վար ու ցանքս անելու միտքն իսկ անհետացրել էին:

Կեանքի գոյութեան և մի կերպ կենդանի մնալու ձգտումից բացի՝ ուրիշ միտք ու մտածմունք չէր կարող լինել:

Բարեբախտաբար, կիսաքաղց բնակչութեան յուսադրում էր ամառնամուտը: Եթէ նրանցից խլուած ու տարուած էր ամէն ինչ, բայց չէին կարողացել խլել նրանց Աստուածատուր ծառերն իրենց ամառնային պտուղներով: Թշնամին հնարաւորութիւն չէր ունեցել ծառերն արմատախիլ անել և պտուղները չորացնել ու չքացնել:

Իր կեանքի փրկութեան համար հերոսաբար մարտնչող վանեցին ու վասպուրականցին չէին կարող ընկրկել և յուսահատուել: Հետզհետէ և ամէն օր սկսում էին իրենց տունն ու օջախը մաքրել թշնամու պատճառած աւերածութիւններից: Նրանք աստիճանաբար սփոփւում և վերազարթնում էին: Նրանք արդէն սկսել էին իրենց մեղաւոր, շինարար աշխատանքը: Դժուար, չափազանց դժուար էր այդ, բայց հայ մարդու չարքաշութեամբ և տոկունութեամբ կոփուած և թրծուած վանեցու համար անկարելի չէր այդ:

ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՉՔԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ

Կէսօրից առաջ մի կիրակի, երբ ընդունուած սովորութեան համաձայն հանգստեան օր էր, մեր այ-

գումն էի: Ծիրանի ծառերից մէկը ծանրաբեռնուած էր, մեր հնարած անունով՝ «Կարմրաթուշ» ծիրաններով: Ես շատ էի սիրում այդ կարմրաթուշ կոչուած խոշոր և հիւթեղ ու շաքարահամ ծիրանի տեսակը: Ծառը հաստաբուն էր: Փոքր հասակից վարժուել էի կատուների նման թեթևօրէն մագլցելով՝ ծառերի կատարը բարձրանալ: Տարօրինակ սէր ունէի պտուղները ծառի ճիւղերից պոկելով տեղնուտեղ, թարմ-թարմ ուտելու: Այդ օրն էլ ծիրանուն բարձրանալով մեծ հաճոյքով կարմրաթուշերից ըմբոշխնում էի, երբ քոյրս վազելով յայտնեց որ մեր ընկերներից երկուքը եկել են ինձ տեսնելու: Քրոջս խնդրեցի նրանց ինձ մօտ՝ այգին առաջնորդել:

Ծիրանուց անմիջապէս ցած իջայ և յառաջացայ ինձ այցելող ընկերներիս դիմաւորելու. Հրանդ Դարբինեանն ու Վահան Խէրանեանն էին:

Սովորական բարևից և առողջական վիճակի հարցուփորձից յետոյ Հրանդը յայտնեց, որ բանտում յոշոտուած յայտնի գրող մեր ընկեր Ասօյի երկու երեխաներից մէկը՝ տղան, մահացել է և խեղճ մայրը նիւթական չափազանց նեղ վիճակում և անօգնական է: Ինձ մօտ եկող ընկերներից խնդրեցի, որ անմիջապէս մեր միւս գլխաւոր ընկերներին մի շտապ ժողովի հրաւիրէն, որպէսզի կարողանանք մի գումար հաւաքելով օգնել մեր ընկերոջ այրի դժբախտ կնոջը: Ինքս էլ նրանց խոստացայ մեր ընկերներից 2-3-ին անձամբ տեղեկացնել:

Հէնց նոյն օրը՝ երեկոյեան, Հրանդենց մօտ 12 հոգի հաւաքուել էինք: Յասմիկ Սօլախեանն էլ ներկայ էր: Հրանդը, հարևան լինելով, Ասօյի այրու դրութեանը լաւատեղեակ էր: Կարճառօտ բացատրեց այդ անբախտ կնոջ նիւթական ծանր վիճակը և խնդրեց անմիջական օգնութիւն հասցնել նրան:

Դժբախտութիւնը կայանում էր նրանում, որ Ապրիլեան գոյամարտը Վանի ազգաբնակչութեան շարքում և մեր ընկերների նիւթական պայմանները տակն ու վրայ էր արել: Համեմատաբար բարւոք վիճակ ունեցողներն էլ մեզ նման աղքատացել էին: Հրանդի, Վահանի և մեր ուրիշ մի քանի հարուստ ընկերների՝ համեմատաբար հարուստ ընկերներն էլ գործերի և առևտուրի խանգարումով և առկայումով ու իրենց ամբարներում ունեցած կտորեղէնների ու միւս ապրանքների հրդեհումով համարեայ չքաւորութեան էին հասել:

Մեծ դժուարութեամբ մեզ յաջողուեց մի գումար գոյացնել և յանձնել Հրանդին ու Յասմիկին և նրանցից խնդրել այդ գումարի յանձնումով և հնարաւոր օգնութիւն հասցնելով՝ թեթևացնել տարաբախտ Ասօյի աւելի դժբախտ կնոջ վիշտը:

ԽԱՂԱՂ, ԲԱՅՑ ՎԱՂԱՆՑՈՒԿ ՕՐԵՐ

Վան-Այգեստանը հազիւհազ սկսել էր ապրիլեան ռմբակոծումների, քարուքանդումների և համատարած աւերածութիւնների փոշին ու մոխիրը թափ տալ: Ժողովրդին յաջողուել էր իրար յաջորդող տակնուվրայութիւնից առաջացած աղէտի առաջը պահել և երջանիկ ապագայի յոյսերով ներշնչիլ: Արևառատ գարնան յաջորդում էր կանաչագեղ և պտղալից ամառը:

Ամիսներ կիսաքաղց վիճակում իրենց գոյութիւնը քարշ տուած բազմութիւնները բնութեան առատօրէն պարգևած կանաչեղէններով և պտուղներով կշտանալ սկսեցին: Մանր առևտրականներ ու արհեստաւորներ հետզհետէ գործի էին անցել:

Կեանքը յամառօրէն ձգտում էր իր նախկին սովորական հունի մէջ մտնել:

Առևտրի և արհեստի մարդիկ՝ պատանիներից սկսած մինչև հասակաւորները, իրար հանդիպելուց գործերի վերսկսման մասին էին խօսում.

– Բարիլուս, Գաբօ՛, լսեցի՝ կօշիկի խանութ բացած և գործի ես կպած:

– Ի՞նչ ընեմ, բարեկա՛մ: Ինչքան վախթ անգործ նստեմ ու բօշ-բօշ ման գամ: Թէ խավաս էր, հօ բաս էր: Իսկ դու ի՞նչ կընես, դարզու խանութ չե՞ս բացած:

– Դէ ես էլ ստիպած եմ գործիս պոչէն նորէն բռնել: Անգործ մնալուց ի՞նչ օգուտ կը գայ: Ախպէ՛ր Գաբօ, իմ գործը քուկէն շատ աւելի դժուար է: Օլուղչօճուխ շատ ունիմ: Հաց ուտող բերան էլ շատ ունիմ: Պարտաւոր եմ աշխատել, թէ չէ բանս բուրդ է:

Նման խօսակցութիւններ ամէնքի կողմից ամէն տեղ խօսում ու լսում էին: Ամէնքը լուրջ մտածում և ձեռնարկում էին խաղաղ և շինարար աշխատանքի:

ՄԻ ՕՐ ԿԷՍՕՐԻՑ ՅԵՏՈՅ

Յուլիս ամսի առաջին տասնևհինգ օրեակի վերջերն էր: Մի օր՝ կէսօրից յետոյ, ինձ մօտ եկաւ Աղասի Խանջեանը: Իրա սովորական ժպիտը դէմքին չը նկատեցի: Մի տեսակ տագնապալից և ջղային դէմք ունէր:

– Ի՞նչ կայ, Աղասի՛,– զարմացած հարցրի ես,– քեզ երբէք այսպէս անտրամադիր և մտահոգ չեմ տեսել: Նոյնիսկ ապրիլեան դաժան օրերին քո երեսիդ ժպիտը չէր պակսում:

– Ի՞նչ կայ,– խորհրդաւոր շեշտով կրկնեց նա: –Կայ այն, որին մեզնից որևէ մէկը ոչ թէ սպասել, այլ մինչև իսկ մտքովն անցկացնել չէր կարող: Նահանգապետարանում, յատկապէս Արամ Մանուկեանի շուրջ հաւաքուած մարմինների նեղ շրջանում, անհանգստութիւն և տագնապ է տիրում: Կէսօրից առաջ Բուլղարացին, Լևոնը, Թէրլէմէզեանն ու Եկարեանը շուրջ երկու ժամ Արամի սենեակումն էին փակուած: Առողջապահութեան վարչութեան մի քանի շտապ հրահանգներ վաւերացնել տալու նպատակով Արամի մօտ գնացի: Դուռը ներսից փակուած էր: Անձնական թիկնապահը յայտնեց, որ կարգադրուած է ոչ մէկին առանց բացառութեան ներս չը թողնել:

– Յետոյ, յետոյ, շտապ ցանկացայ վերջաւորութիւնը լսել:

– Յետո, գլխաւորը այդ յետոն է: Երբ խորհրդակցութիւնը վերջացաւ և ժողովական շէֆերը դուրս եկան, նրանց դէմքին անսովոր անհանգստութիւն և ջղայնութիւն նկատեցի: Ներս մտայ Մանուկեանի աշխատասենեակը: Նրան աւելի ևս անհանգիստ և շփոթ վիճակում գտայ: Նա ինձ կարճառօտ յայտնեց, որ ռուսական բանակը սկսել է նահանջել և տաճիկ զօրաբանակները սիրտ առած և քաջալերուած կրնկակոխ հետապնդում են ռուսներին:

– Եթէ ռուս զօրքի նահանջը կանգ չ'առնի- յայտնեց Մանուկեանը,– հաւանաբար մենք էլ ստիպուած կը լինենք նահանջի հրահանգ տալ մեր վասպուրականցի հայրենակիցներին:

– Օ՜հ, ինչ ահռելի նորութիւն է այդ Աղասի՛: Ի՞նչ պիտի անի առանց այն էլ յոգնաբեկ, ջլատուած և դեռ կիսաքաղց այս մեր թշուառ ազգաբնակչութիւնը:

– Աննկարագրելի դժբախտութեան և նոր կոտորածների պատճառ կը լինի այդպիսի տաժանալից և վտանգաւոր գաղթը,– վշտաբեկ պատասխանեց Աղասին:

ԳԱՂԹ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ
Մաս Դ

Աղասու՝ ինձ հաղորդած դժբախտ լուրն իրականութիւն էր: Յաջորդ օրը յուլիս 18-ին՝ կէսօրից յետոյ՝ ժամի 3-ին, Այգեստանի գլխաւոր փողոցների պատերին փակցրել էին հետևեալ կարճառօտ, բայց սարսռեցնող յայտարարութիւնը.

«Վասպուրականի ժամանակաւոր վարչութիւնը ստիպւած է խորը վշտով հայ ժողովրդին ազդարարել, որ ռուսական բանակի և հայ կամաւորական զինուորական ուժերի նահանջի պատճառով անհրաժեշտ է քաղաքը շուտափոյթ թողնել և գաղթել դէպի Իգդիր, ռուսական սահմանից ներս անցնել: Ամէն տեսակի ուշացումը կարող է աղէտաբեր լինել»:

Շանթահարիչ էր այս յայտարարութիւնը: Ինքնապաշտպանութեան առաջին ժամերին և առաջին օրերում, թշնամու վայրագ և փոթորկալից ռմբակոծումներն այնքան սարսափելի և աղէտալի ազդեցութիւն չը թողին, որքան այս մի քանի տողանի սահմռկեցնող ու սարսափազդու ազդարարութիւնը:

– Վա՜խ, վա՜յ, էս ինչ սև օրի ընկանք:

– Էս ի՜նչ պատուհաս է: Ի՜նչ զուլում: Ի՜նչ նզոված ճակատագիր:

– Սև ըլնէր մեր ծնունդը: Երնէկ աշխարհ եկած չըլնէինք:

– Երկնքի պատուհաս: Իսկական դժոխք: Աստծու կրակ ու բոցը:

– Բա էս մեր անաստուած աղաներն ու շէֆերը, այս անխիղճ պետերն ու գլխաւորները մեզի ինչի՞ էրկու օր առաջ խաբար չ՚արան, որ մեր անտէր գլխի ճարն անէինք:

Եւ այսպէս ամէն տեղ շփոթ, իրարանցում, անէծք ու հայհոյանք: Ողբ ու լաց:

***

Գաղթ, փախուստ... Խելացնոր և շփոթայոյզ աճապարանք... Խռնում, իրարանցում, կանչ, աղաղակ, նզովք ու անճար-անյոյս աղաչանք ու պաղատանք:

Պէտք է նահանջած, գաղթած լինել, կրնկակոխ հետապնդող անզգամ ու բարբարոս թշնամու սրածութեան սարսափն ապրած լինել իմանալու և հասկանալու համար, թէ ի՞նչ է այդ գաղթն ու սարսափահար փախուստը:

Ինչքան սքանչելի և նախամտածւած էր Վան-Այգեստանի, Շատախի, Փէսանդաշտի և ուրիշ շրջանների ինքնապաշտպանութիւնը, դժբախտաբար, այնքան շփոթ, հապճեպ և տագնապալից էր Վասպուրականի նահանջն ու գաղթը:

Փոթորկածեծ ծովի գոռալից ալիքների նման գաղթող բազմութիւնները փոթորկում, ալեկոծւում, մռնչում և իրար էին խառնշտկւում:

Համարեայ ոչ ոք չէր իմանում, չէր հասկանում թէ ի՞նչ է անում: Սարսափալից մի բնազդ նրանց բնաւեր էր անում և նրանց իրենց հայրենական տնից ու օջախից կռնչում և վռնդում էր դուրս՝ դէպի փողոցը, դէպի անյայտ և անյոյս ուղին, դէպի մշուշապատ և ահաբեկ օտարութեան ճամփան:

Նրանցից ոչ մէկը չէր կարող մտածել, որ հերոսական ապրիլից յետոյ՝ ռուսական և կամաւորական զինուորական ուժերի ժամանումից յետոյ՝ խանդավառ և լուսաշող ազատագրումից վերջ, կը հասնի մի օր, երբ ճիւաղային անտեսանելի բռունցքներ նրանց իրենց հարազատ ու սքանչելի հողից ու ջրից, իրենց ծառն ու ծաղկից, իրենց այնքան սիրելի քաղաքից ու հայրենի խօրօտիկ երկրից դուրս կը վռնդեն: Ի՜նչ սուգ ու կսկիծ, ի՜նչ մահացու վիշտ և ի՜նչ անպատմելի տառապանք:

***

Քաղաքի պատերին փակցւած չարաղէտ ազդարարութիւնից հազիւ մէկ ժամ էր անցել, երբ ես դէմ առայ ալեկոծւող սարսափահար բազմութիւնների: Ընդհանուր իրարանցումն ու տագնապը ինձ անել շփոթման մատնեց: Ինձ համար ամենասոսկալին եղբօրս կնոջ հիւանդութեան մտատանջութիւնն էր: Նա ի վիճակի չէր ոտքով քայլելու, ու՞ր մնաց օրերով քայլելու և եթէ ստիպւած լինէինք, վազելու, փախչելու: Ի՞նչ կարող էի անել: Մենք ո՛չ ձի, ո՛չ էշ և ո՛չ էլ նոյնիսկ կով ունէինք նրան անասունի մէջքին նստեցնելու կամ կապելու համար:

Մտածեցի վազել Գրիգորի կամ Լևոնի մօտ և նրանց իմ դժւարութիւնը բացատրելով՝ մի ձի խնդրել, բայց այս վերջին ժամին որտե՞ղ կարող էի նրանցից մէկն ու մէկին ճարել:

Բուլղարացոնց տունը շատ հեռու չէր: Վճռեցի նրանց մօտ գնալ և օգնութիւն խնդրել: Վստահ էի, որ հնարաւորութեան պարագայում նրանք ինձ չէին մերժելու: Գնացի համարեայ վազ տալով: Բայց ի՜նչ հիասթափութիւն: Դռան մուրճը թակեցի: Քանի, քանի անգամներ թակեցի: Անօգուտ: Առում ընկած խոշոր քարերից մէկը վերցրի: Նրանով նորից

պինդ, շատ ուժգին թակեցի, քիչ էր մնում դուռը կոտրէի, բայց էլի անպատասխան: Կասկած չկար, որ տունը թափուր էր: Մեկնել էին:

Յուսահատ և անզօր՝ կատաղութիւնը կոկորդս խեղդում էր: Տարօրինակ անփութութեանս համար ինքս ինձ մեղադրում էի: Չէ՞ որ ես աւելի շուտ, քան 24 ժամ առաջ տեղեկութիւն ունէի այս դժբախտ փախուստի մասին: Ինչու՞ մերոնց չէի նախապատրաստել, ինչու՞ մերոնց հետ չէի խորհրդակցել մեր հիւանդի փրկութեան համար: Հիմի ի՞նչ երեսով նրանց մօտ գնայի և ի՞նչ ասէի նրանց: Չէ՞ որ մեր ընտանիքում ինձ ամէնից ճարպիկն էին հաշւում:

Ինքս էլ չէի կարող որոշել անելիքս: Ճար չունէի: Դէպի մեր տունը վազել սկսեցի: Ամբողջ մարմինս քրտինքով ողողուած էր:

Երբ մէր տունը հասայ, մերոնց խառնաշփոթ և տագնապահար վիճակում գտայ: Քրոջս աչքերը լացից ուռած և կարմրել էին: Ինձ տեսնելուն պէս ուրախութիւնից աղաղակել ու թռչկոտել սկսեց:

– Ախպէրս, ախպէրս եկաւ,– և վազ տալով, իր սովորութեան համաձայն, ինձ իրա նիհար բազուկներում գրկեց:

– Շատ եմ ափսոսում, որ չը կարողացայ մի ձի ճարել մեր Հայկանուշի և մեզ անհրաժէշտ ուտելիքի համար,– ջանացի ինձ չքմեղացնել, ձի ճարելու պատճառով ուշացայ:

– Ի՞նչ արած: Ես էլ շատ աշխատեցի մի ձի գտնել, բայց ինձ էլ չը յաջողուեց,– ասաց եղբայրս:

– Դեռ մեր Աստծուց շատ շնորհակալ լինենք, որ այս իշուկն էլ Մարօյի մայրը հիւանդին նուիրեց,– բակում կանգնած մի փոքր էշ ցուցնելով, ասաց հայրս:– Մեր անգին բարեկամ Մարօյի մայրը տեսնելով մեր այս անել դրութիւնը, մեզի ստիպեց վերցնել այս իշուկը:

– Լաւ, իսկ ինքը, Ոսկին ի՞նչ եղաւ,– հարցրի ես:– Երևի այդ կենդանուն Մարօն իր մօր փոխադրութեան համար էր նրան տուել:

– Ոսկին, այդ իսկական ոսկի կինը, հակառակ մեր պնդումին, հրաժարուեց այդ կենդանուց:

– Վա՜յ, ցեխ գայ գլխիս,– ասաց նա, – թէ՞ որ ես ճամփին մնամ ու մեռնեմ, հէչ հոգս չէ: Ամա էս ջահէլ-ջիվան խարսին, թէ թողնէք, Աստծոյ խօշը չի գայ: Չէ՛, անոր էս անօրէն-անաստուածներու ճանկը թողուլ մեծ, շատ մեծ մեղք է:

– Լաւ, ի՞նչ էք մտածում անել,– հարցրի ես,– առանց այն էլ մենք շատ ուշացել ենք: Քաղաքը համարեայ դատարկուել է:

– Տէ՛ր հայր, Արաքսի՛, Սիրա՛ք, և դու՝ Կարապե՛տ: Դուք բոլորդ էլ գնացէ՛ք: Իմ մասին հոգալն աւելորդ է: Ինձ այստեղ թողէք, որ մեռնեմ,– վշտաբեկ և անհունօրէն յուսահատ ձայնով ասաց Հայկանուշը: Յետոյ, կսկիծից իրեն խեղդող արցունքներն իր դալկացած այտերի վրայից մաքրելով՝ ավելացրեց.

– Միևնոյն է, ձեր բոլոր ցանկութիւնները զուր կ'անցնեն, ես ճանապարհին կը մեռնեմ: Ես գիտեմ, հաստատ համոզուած եմ, որ այս իմ վիճակով ոչ մի տեղ չեմ հասնի:

Այս բառերը դժուարութեամբ արտասանելով նորից դառնագին հեկեկալ սկսեց մեր դժբախտ հիւանդը:

– Հայկանու՛շ ջան, զուր ես այդպէս անհանգստանում և լացում: Մենք առանց քեզի ոչ մի տեղ գնացող չենք: Եթէ նոյնիսկ այս իշուկը չը ճարուէր, մենք քեզի փոխնիփոխ շալակելով պիտի տանէինք: Դէ՛ սիրելի՛ս, լացելու փոխարէն մեզ միանգամայն երախտապարտ կը թողնես, եթէ քեզ սիրտ տաս և մեր հոգեկան վիճակն էլ ամրապնդես, – ասացի, ջանալով յուսադրել և մխիթարել մեր Հայկանուշին:

– Դէ՛, շու՛տ արա, եղբա՛յր Կարապետ,– ասաց քոյրս,– բերենք այդ էշին, մի երկու թեթև վերմակ դնենք և վրան Հայկանուշին հեծցնենք:

Հակառակ միանգամայն յուսահատած և իր հոգեկան ամրութիւնը բոլորովին կորցրած մեր հիւանդի պնդումին՝ իրեն թողնելու և հեռանալու վերաբերեալ, մենք ըստ կարելւոյն իշաբեռը յարմարեցրինք և Հայկանուշին վրան նստացրինք: Նրա հաւասարակշռութիւնը պահպանելու նպատակով ես ու եղբայրս, նրան իշուկի հետ միասին մէջտեղն առնելով, կողքից քայլել պատրաստեցինք:

Մեր միակ յոյսն ու ապաւէն հանդիսացող փոքրահասակ կենդանուն՝ իշուկին, ուժասպառ չ'անելու և ճանապարհին չը թողնելու վախից մենք, այսինքն մեր ընտանիքի բոլոր չորս առողջ անդամներս էլ, մեր ուսին և թևատակ, մեր ուժերի ներածին չափ, ուտելիք-պաշար և շատ թեթև ծածկոց-վերմակներ վերցրինք: Մեր մէջ համեմատաբար ամենաշատ ծանրաբեռնուածն ես եղայ, որովհետև մէջքիս մի բաւական ծանր պայուսակ էի վերցրել:

Մեզ բոլորիս մտատանջման գլխաւոր պատճառը մեր հիւանդի լուրջ դրութիւնն էր: Այդ վճռական պահին մեզնից ամէն մէկը, առանց համարձակուելու իր մտածմունքն ու անհանգստութիւնը իր հարազատներից մէկին յայտնելու, վստահ և համոզուած էր, որ փոխադրական այդ խղճուկ և անբաւարար միջոցով մեր հիւանդը մինչև վերջ տոկալ չէր կարող և կը խամրէր դժոխային գողգոթայի ճանապարհին:

Օրը մօտենում էր իրիկնամուտին: Երբ մեր հինգ հոգինոց ընտանիքը մեր տնից դուրս էր գալիս, հայրս չը կարողացաւ իր սրտում լեռնացած վիշտը խեղդել: Նա սկսեց աղեկտուր լացել այնպէս, ինչպէս մի երեխայ լաց կը լինէր՝ ի տես իր մօր անշնչացած մարմնի գերեզմանին: Նա, իր գլխարկը հանելով և իր երկու ձեռները դէպի երկինք բարձրացնելով, մրմնջաց.

– Ով ամենակալ Աստուած, գթա՛ մեզ, խնայի՛ր և առաջնորդի՛ր մեզ...

– Եւ փրկեա մեզ ի չարէ...,– աւելացրեց եղբայրս:

– Մի բոպէ սպասէ՛ք: Ես մեր այգուց իմ այսօրուայ հաւաքած կարմրաթուշ ծիրանները մոռացել եմ: Կացէք բերեմ: Գոնէ մի վերջին անգամ բերանները

քաղցրացրէք մեր այգու պտուղով,– ասաց քոյրս և ներս վազելով՝ անմիջապէս վերադարձաւ, գեղեցկատեսիլ և իսկապէս կարմրաթուշ ծիրաններով լեցուած պղնձէ թասը ձեռքին:

– Ամէն մէկդ մի քանի հատ կերէք: Դժուար կը լինի բոլորը տանել: Կը ճխլուեն, ափսոս է:

– Այո՛, սիրելի՛ Արաքսի,– պատասխանեցի ես,– այդ մի քանի ծիրանի համար ափսոսում ես, բայց մեր քարասիրտ և բարբարոս թշնամին մեզ չի մեղքենում, չի խնայում և մեզ կոտորելու, ջարդելու սպառնալիքով մեզ դուրս է քշում մեր տնից ու այգուց և վռնդում մեր հողից ու ջրից: Նա՝ այդ անարգ ու անխիղճ թշնամին, հալածում է մեզ և վտարում մեր պապերի ու նախահայրերի հողից ու հայրենիքից:

Ոսկեվառ արևը հորիզոնի յետևն էր փախչում, իսկ մենք՝ մեր սիրելի հայրենական տնից:

ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՆՍ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՑՍ ՄԷԿԻՆ

Երբ մեր սրտերը կիզիչ կարօտով այրող ափսոսանքով թողինք մեր հարազատ տարիների հայրերի և նախահայրերի տունն ու օջախը և հասանք մեր փողոցի գլխին եղող Վանի Այգեստանի գլխաւոր պողոտան, Սըղգայի լայն պողոտան համեմատաբար ամայացել էր: Երկու ժամ առաջ պողոտայի ամբողջ տարածութիւնը ծածկող գաղթողների շարքերը շատ նօսրացել էին:

Ես գլխաւորապէս քրոջս ուղղելով խօսքերս՝ յայտնեցի մերոնց.

– Արաքսի՛, մի քանի րոպէ եղբօրդ հետ օգնի՛ր Հայկանուշին և զգո՛յշ եղիր, որ նա էշիցը չընկնի, և դէպի նորատունկները յառաջացե՛ք, ես մի քիչ յետոյ ձեզ կը հասնեմ:

– Ու՞ր ես գնում: Ինչու՞ ես գնում: Ժամանակ գտար ուրիշ տեղ գնալու, նման հարցերին պատասխանելու փոխարէն ես վազքի քայլերով նրանցից հեռացայ:

Դեռ գաղթի ճանապարհ չ՚ընկած, ինձ մի ծանր մտասևեռում սկսել էր տանջել:

Անուշը իր հօրն ու մօրը հետ ի՞նչ են արել: Արդեօ՞ք գաղթի ճանապարհն ընկե՞լ են, թէ՞ ոչ:

Գնում էի Անուշենց: Գնում էի արագ, շատ արագ և երբեմն էլ վազում էի: Չանցած 15 րոպէ, ես ինձ Անուշենց տան մօտը գտայ:

Ռուսական հիւպատոսարանի գլխաւոր մուտքի կողքին էր նրանց տունը: Դուռը բախեցի: Մի րոպէ անց, ներսից մի ձայն պատասխանեց:

– Ո՞վ ես: Ի՞նչ կ՚ուզես:

Ես ճանաչեցի ձայնը: Սահակ աղայի ձայնն էր:

– Բա՛ց արէք: Սահա՛կ աղա, դուռը բացէ՛ք: Ես Սիրաքն եմ:

Դուռը բացուեց: Սահակ աղան զարմացած հարցրեց.

– Ինչպէ՞ս կըլլայ, որ տակաւին քաղաք կը մնաս: Ի՞նչ կուզես, տղա՛ս:

Ես շփոթուել էի: Հարցս ձևակերպել չէի կարողանում: Վերջապէս հարցրի կիսկտուր.

– Ներողութիւն կը խնդրեմ: Կուզէի գաղթելուց առաջ, որևէ ձևով ձեզ օգտակար ըլլալ: Մի քիչ յետոյ աւելացրի.

– Իսկ դուք, Սահա՛կ աղա, մի՞թէ գաղթելու մտադրութիւն չ՚ունիք:

Սահակ աղան պատասխանելու փոխարէն գրպանից մի ճմռթուած գունաւոր թաշկինակ հանեց և աչքերին տանելով՝ արցունքի գլորուող կաթիլները մաքրեց:

– Անուշին և մօրը ճանապարհեցի: Անոնք բոլորովին միևնակ են:

– Իսկ դուք, Սահա՛կ աղա, ինչու՞ անոնց հետ չը մեկնեցիք:

– Ես, ես... բա որի՞ն թողնեմ սա կոնսուլաթը:

– Իսկ եթէ մնալու ըլլաք, ի՞նչ պիտի ընէք այդ կոնսուլաթի հետ:

– Ի՞նչ պիտի ընեմ... ես այդ քու տուած հարցը քեզնից առաջ կրնամ ըսել հարիւր անգամ ինձ տուած եմ...:

Մի քանի վայրկեան սպասելուց յետոյ, վճռական շեշտով ասաց.

– Ես որոշած ու վճռած եմ այստեղ մնալ և մահուանս գնով պաշտպանել կոնսուլաթը:

– Ինչպէ՞ս, թէ պաշտպանել: Դուք մէն-միևնակ ինչո՞վ և ինչպէ՞ս կրնաք պաշտպանել: Մի՞թէ մոռացաք, որ մի քանի ամիս առաջ այս կոնսուլաթի ռուսական դրօշակը ցած բերելուց ձեզ այնքան ծեծկըռտեցին, որ հազիւ մահից ազատուեցիք: Այդ բարբարոսները հասնելուն պէս ձեզ կտոր-կտոր կընեն:

– Քու ըսածը ճիշտ է, տղա՛ս: Եթէ ինձ կարողանան գտնել, ինչպէս ըսիր, կտոր-կտոր կընեն: Բայց...

– Բայց, ի՞նչ բայց: Կ՚ուզենաք ըսել կը թաքնուիք, լաւ, բայց մինչև ե՞րբ կը կարողանաք թաքնուիլ: Ենթադրենք, որ կարողացաք թաքնուիլ, բայց ձեզ հաց ու ջուր է պէտք: Թշնամին հասնելուց կամ անմիջապէս կայրի աս շէնքը, կա՛մ զինուորական, կա՛մ կառավարական հիմնարկութեան կը վերածի:

– Ես գիտեմ, համոզուած եմ, որ այդ անօրէնները, եթէ նոյնիսկ գալու ըլլան, երկար կենալ չ՚պիտի կարողանան: Ռուսի համար սա նահանջը քաղաքական խաղ է: Ճիշտ և իսկական նահանջը անոնց համար անպատուաբեր պիտի ըլլար: Անոնք շուտով, շատ շուտով կը վերադառնան: Ես անոնց վերադարձը կը սպասեմ: Իսկ եթէ սա անօրէն տաճիկները մինչ այդ ինձ գտնեն և սպանեն, հոգ չէ...: Ես տարիներէ ի վեր անոնց պահակն ու պահապանը եղած եմ: Քանի կը յիշեմ անոնց աղն ու հացը կերած եմ: Իմ կողմից մեծ ապերախտութիւն կըլլար թողնել անոնց կոնսուլաթն ու փախչիլ:

Տեսնելով, որ այս ինքնակամ զինուորին, այս կամաւոր ախոյեանին համոզելու իմ ամէն փորձն ու

ջանքը անօգուտ պիտի անցնի, մտածեցի մնաք բարով ասել և անմիջապէս մեկնել: Վերջի րոպէին նա իմ ձեռքը շատ ամուր սղմեց և մի հարազատ հօր նման ճակատս ու երեսս համբուրելով՝ ասաց.

– Գնաս բարով, Աստուած քեզ հետ ըլլայ: Միակ մի խնդիրք ունիմ և յոյս ունիմ, որ եթէ կարողանաս, չես մերժեր կատարելու: Անուշին և իր մօրը, եթէ ճանապարհին հանդիպես, օգնի՛ր անոնց: Թիֆլիս՝ եղբօրս մօտ պիտի երթան: Յոյս ունիմ, որ շուտով յետ կը գան:

ՄԵՐՈՆՑ ՅԵՏԵՒԻՑ

Ճանապարհ ընկայ: Սիրտս տարօրինակօրէն ճմլուում էր: Ինչու՞ ես ժամանակին այսքան անճարակ եղայ, որ չկարողացայ այս տանջանքի ու խաչակրութեան դժոխային ճանապարհին ինձ հետ, իմ կողքին ունենալ Անուշին՝ այդ չքնաղ և համեստ աղջկան, որի շուրջ երկու տարիներից ի վեր դառնում էին իմ մաքրամաքուր անուրջներն ու մտային առինքնող թափառումները:

Արդեօ՞ք նորից բախտ կունենայի նրան տեսնել:

Գնում էի արագ: Կոնակիս ծանր պայուսակը դեռ տաժանալից ճանապարհի մէկ հազարերորդը չը կտրած, արդէն սկսել էր նեղել: Առանց ոչնչի ոտքերս ծալւում էին: Դրա պատճառը ճշտել չէի կարող, ինձ կլանող յուսահատութի՞ւնն էր, թէ՞ իսկապէս վաղահաս յոգնածութիւնը:

Մինչ Նորատունկներն ու Սըղգա գիւղը հասնելու համար շատ ճանապարհ ունէի: Հաշւեցի ճանապարհի տարածքը: Դեռ կէսը չէի կտրած: Չափազանց յոգնած էի: Ջուր խմելու մեծ ցանկութիւն ունէի, բայց դեռ իմ գիտցած ջրի տեղից հեռու էի: Որոշեցի պայուսակս ցած դնել և նստել, մի քիչ հանգստանալ: Անցած ճանապարհիս մտմտուքով կլանուած լինելու պատճառով առանձին ուշադրութիւն չէի դարձրել մերոնց գտնելու համար, բայց ենթադրում էի, որ նրանց չեմ հանդիպել: Մտածում էի՝ եթէ նոյնիսկ անցնելիս մտազբաղ եմ եղել և մերոնց չեմ նկատել, անկարելի էր, որ Արաքսին ինձ տեսած ու կանչած չը լինէր: Ինձ համար եզրակացութիւն հանեցի, որ նրանք արդէն կտրել ու անցել են իմ եկած ճանապարհը: Չկարողացայ որոշել, թէ ինչքան ժամանակ էի նստել և հանգստացել: Մեծ ցանկութիւն ունէի քնելու, բայց այդ մտքից սարսափած՝ ոտքի ելայ: Պայուսակս նորից մէջքիս կապելով՝ ճանապարհ ընկայ:

Ժամացոյցիս նայեցի, ժամի 9-նն էր: Բարեբախտաբար, լուսնի պայծառ, արծաթափայլ շողքը ճանապարհը լուսաւորել էր: Տարբեր պայմաններում, ինչպէս ամէն մարդ, ես էլ պիտի հիանայի յուլիսեան այդ առինքնող, դիւթական լուսնկայի շողարձակումով: Բայց ես կատարելապէս անհաղորդ էի դառել Վասպուրականի այդ սքանչելի գիշերւայ աննման գեղատեսիլից:

Ճանապարհը կտրում էի անգիտակից, ինքնաշխատ մեքենայի նման: Ինձ այդ անգիտակից, կիսաքուն վիճակից սթափեցնողը միայն գաղթողների ցանցառ շարքերի ձայնարկում-կանչերն էին: Նրանք երբեմն խնդրանքով, երբեմն ջղային կանչերով և երբեմն էլ հայհոյանքներով քշում, արագացնում էին իրենց բեռնատար կենդանիներին կամ իրենց հարազատներից ու ընտանիքի անդամներից յետ մնացողներին հրաւիրում էին արագացնել իրենց քայլերը:

Ինձ ծանօթ աղբիւրակին հասայ: Նրա զրզրուն, սառնորակ ջուրը թւեց բացառիկ, երջանկաբեր բարիք լինել: Բոլոր այգեստանցի հայերս, այդպիսի սառնորակ և զուլալ ջրի աղբիւրներով առատօրէն շրջապատուած և պարգևատրուած լինելով, այդ Աստուածային պարգևի պակասը երբէք զգացած չէինք և դրա համար էլ երբէք չէինք անդրադարձել նրա անգին լինելու իրողութեանը:

Ջրից մի քանի ընդհատումով խմելուց յետոյ ձեռներս, դէմքս ու յոգնաբեկ ոտներս կարգին լուացի: Պայուսակիցս հանեցի ջրի ղօմղօման և լեցնելով նորից ճանապարհ ընկայ: Ինձ մի քիչ աւելի կազդուրուած զգացի և ուրախացայ, որ յոգնածութիւնից չեմ ընկրկելու: Այժմ իմ միակ ցանկութիւնը մերոնց հասնելն ու Անուշին գտնելն էր:

***

Կէս գիշեր անց էր, երբ ես, Նորատունկներն անցնելով, Սըղգա գիւղը հասայ: Փախչողների առաջին հանգրւանն էր եղել այս գիւղը: Նրանք այս գիւղում թափոտել էին իրենց վերցրած անհրաժեշտ բեռների մի մասը: Նրանք արդէն յոգնաբեկ, յուսահատ ու սրտամռմուռ ստիպուած էին եղել թափելով թեթևացնել իրենց բեռները: Ամէն կողմ թափուած այս բրդեայ վերմակների, խալիչաների և պղնձեայ ամանների տէրերը ժամանակին նրանց ձեռք բերելու համար ամիսներ, գուցէ և տարիներ ջանացել և երազել էին, իսկ ներկայիս ստիպւել էին ձրիօրէն թափել և հեռանալ:

Բազմահազար գաղթողներից շատ քչերն էին դեռ գիւղում մնացել: Նրանցից մի մասը տագնապահար սպասում էին իրենց ուշացած և յետ մնացած հարազատներին, իսկ միւս մասն իրենց ընտանիքում եղած հիւանդներին կամ շատ ծերերին մի քիչ աւելի հանգստութիւն տալու համար ստիպւել էին քարաւանից յետ ընկնել:

Մերոնց փնտրելիս հանդիպեցի մեր փողոցում՝ մեզնից ոչ հեռու բնակւած Խաչիկենց Գէորգի ընտանիքին: Նրանց հարսը՝ հազիւ 7-8 ամիս առաջ ամուսնացած, արգանդում կեանք առած երեխայով ծանրաբեռնուած, ոտքով կտրած ճանապարհի յոգնածութեանը չը տոկալով, տաժանելի ցաւերի էր

ենթարկուել: Երիտասարդ դժբախտ կինը գալարուում, տանջուում, կծկուում էր վաղահաս երկունքի պատճառած ցաւերից: Ամուսինը, նրա փոքր եղբայրն և նրանց հայրն ու մայրը գժռտուել և չէին իմանում ի՞նչ անել: Ժամերով այս ու այն կողմն էին վազվզել և ոչ մի օգնութիւն չէին կարողացել հասցնել իրենց հարսին, որը, ցաւից սոսկալիօրէն ուժասպառ եղած, մաքառում էր մահւան ճանկերում գալարող անտանելի ու անդարման իր ցաւի դէմ:

Նրա՝ տանջալից և կարեկցութեան արժանի դրութիւնը տեսնելով՝ չէի համարձակւում նրանցից մեր ընտանիքի մասին տեղեկութիւն հարցնել, երբ փոքր Աշոտը ինձ յայտնեց.

– Պարո՛ն Սիրաք, երբ ես այս ու այն կողմ էի վազվզում մի բժիշկ կամ տատմէր գտնելու համար, ձերոնց տեսայ: Նրանք չափազանց անհանգիստ էին և ձեզ էին փնտրում: Նրանց իջևանած տեղը գիւղի մուտքին՝ աղբիւրակի մօտերքն էր:

– Աշո՛տ ջան, իսկ մեր հիւանդ Հայկանուշն ի՞նչ վիճակի էր: Կարողացա՞ր իմանալ, թէ՞ ոչ:

– Կարգին տեղեակ չեմ: Ձեր քոյրը նրա վիճակից գանգատւում էր:

Ներողութիւն և նրանց հիւանդի շուտափոյթ փրկութիւնը հայցելով՝ հեռացայ: Վազեցի Աշոտի ցուցմունքի համաձայն՝ մերոնց գտնելու:

Իմ բոլոր փնտրտուքները, դժբախտաբար, ապարդիւն անցան: Մերոնք չկային ու չկային: Երբ կատարելապէս համոզուեցի, որ մերոնք գիւղում չեն մնացել, ճանապարհ ընկայ:

Վասպուրականի քարտէզին բաւական լաւ ծանօթ էի, բայց նահանջի գիծն ընտրողների ծրագրից անտեղեակ: Ինձ մնում էր յառաջանալ այն ճանապարհով, որով մեկնել էր գաղթականութեան քարաւանը: Ինձ մօտ հաշուեցի, որ գաղթականների վերջամասն ամենաշատ մէկ ժամ առաջ մեկնած պէտք է լինի, հետևաբար մինչև նրանց հասնելը՝ արագացրած քայլերով երկու ժամւայ ճանապարհ եմ կտրելու: Գուցէ գաղթականութեան շարքում բախտ ունենամ մերոնց գտնելու:

Այս հաշուով և յոյսով ոգևորուած՝ սկսեցի քայլերս արագացնել: Թէև իմ պայուսակում քաղաքից մեկնելիս ուտելիք չունէի, բայց Սըղգա գիւղի տներից մէկում գտել էի գաղթականների թխած մի քանի կտոր կլոր հացերից: Նրանցից երկուսը մեծ ախորժակով կերել, իսկ մնացած չորսը հետս էի վերցրել:

ԸՆՏԱՆԻՔԻՍ ՀԵՏ

Չեմ կարող ճշտել, թէ ինչքան ժամանակ էի քայլում: Չափազանց յոգնած էի: Սրունքներումս և մանաւանդ ոտներումս ուժեղ ցաւ էի զգում, բայց մի ցանկութիւն, մի ձգտում տարերօրէն ինձ առաջ էր քշում: 16 ժամից աւելի ես ոտքի վրայ էի: Մի քիչ հանգստանալու և մանաւանդ քնելու սուր պահանջ էի զգում: Վախենում էի հանգստանալու համար մի քիչ նստել: Վստահ էի՝ նստելուն պէս քունն ինձ կը յաղթահարի, իսկ քնելու և յետ ընկնելու միտքն ինձ սարսափեցնում էր:

Լուսաբացը մօտենում էր: Կապտաւուն և անամպ երկնքում ուրիշ աստղերի շարքում յաղթականօրէն փայլել սկսեց արուսեակը:

Այգելոյսի հոգեպարար զովը փչել սկսեց: Վճռեցի գոնէ մի քանի րոպէ նստել և լիաթոք շնչել արշալոյսի այդ կենսաբեր զեփիւռը: Որպէսզի քնելու փորձանքին չենթարկուեմ, սկսեցի իրար ետևից երգել ռազմաշունչ և խրախուսիչ մի քանի երգերի առաջին քառեակները:

Արևելքում հորիզոնի վրայ ծագող արևի առաջին ոսկեհուռ ճառագայթները փայլատակել սկսեցին: Նրանց կենսատու փայլփլումներն առատօրէն ցրուեցին անծայրածիր հորիզոնի վրայ: Նրանք կարծես գալիս էին յուսակտուր, կիսակենդան, ահից ու սարսափից կուչ եկած և ճմլուած սրտերին նոր արիւն և փրկարար աւիւն սրսկելու:

Զմայլած և հմայած այդ կենսախինդ ճառագայթներով՝ անբացատրելի աւիւն ու թարմութիւն զգացի հոգուս ծալքերում: Վեր կացայ և վճռեցի քայլել, ճամփաս շարունակել, մինչև մերոնց հասնելը: Ես ինձ յուսադրում էի՝ մերոնց հասնելուց և միամտելուց յետոյ՝ կը կարողանամ գոնէ մի քանի ժամ հանգիստ սրտով քնել և սպառած ուժերս վերակազդուրել:

Առաւօտեան ժամի 6 և կէսին հասել էի Ճանիկ հայկական գիւղը: Փախչող գաղթականութեան խուռներամ բազմութիւնները կէսգիշերին այստեղ էին հասել: Այգեստանի Սըղգա պողոտայի ընդհանուր խառնաշփոթութեան և իրարանցումի պատկերը համարեայ նոյնութեամբ կրկնուում էր այստեղ: Թշնամու հետապնդման վախն ու սարսափը բոլորի սրտերը դող էր գցել: Նոյն աղմուկն ու աղաղակը, միևնոյն նզովքն ու հայհոյանքը և նոյն համատարած անհամբերութիւն, աճպարանքն ու ջղային վիճակը:

– Կարօ, շուտ արա՛ ջահընամ ըլնենք, կորենք էս տեղէն: Ամէնքը գնացին, հեռացան, իսկ մենք հալա էս անիծած գիւղն ենք մնացած:

– Ալմա՛ստ, քէլի՛, առա՛ջ ընկի: Ծծկերդ վերցրո՛ւ, մնացածը թող մնա, գէօռ ու ջահընամ էլնի:

– Քեա՛ մարդ Աստծու, ապա էսա ուտելու բաներ որ չտանենք, կէսօրին ի՞նչ պիտի ուտենք: Մի քիչ համբերի, ինքդ օգնի, ժողվի՛, վերցրո՛ւ, որ էրթանք:

– Վայն իկե գլխիս, բա էս շան լակոտ Արշակն ի՞նչ էլաւ, որտե՞ղ ջահընամ էլաւ: Ինչպէ՞ս ինոր թողնենք էրթանք:

– Ա՜յ հէր, չապուք քէլի: Էսա կասեն քրդերը կը խասնեն, մեզ կը պրտեն:

Ինքս էլ, շփոթած ու գլուխս կորցրած այս ընդհանուր թոհուբոհի մէջ, չէի կարող որոշել անելիքս:

Ո՞ր կողմ գնամ, ու՞մ հարցնեմ, ինչպէ՞ս գտնեմ մերոնց այս ալեկոծուող մարդկային բազմահազար խաժամուժի մէջ:

Ամէն մէկն իր դարդն ու ցաւն ունի: Իւրաքանչիւր մէկը տարուած է իր սեփական ճար ու ճարանքով: Ամէնքն էլ կլանուած են մէկ մղձաւանջով՝ վայրկեան առաջ փախչել, հեռանալ, որպէսզի աւազակ, արիւնարբու թշնամին չը հասնի և նրանց չը կոտորի, չը ջարդի:

Անճար ու անյոյս ճեղքում էի ծովածուփ բազմութեան շարքերն ու անվերջ բղաւում, կանչում էի.

– Արաքսի՜, Կարապե՜տ, տէ՜ր հայր, Հայկանո՛ւշ, ու՞ր էք, որտե՞ղ էք:

Բայց իմ բոլոր կանչն ու բղաւոցները բազմութեան համատարած աղմուկի և գոռգոռոցների մէջ խեղդւում, կլանւում էին և իմ գտնուած տեղից հինգ քայլ այն կողմ չէին լսւում:

Համոզւելով, որ այս անհամար բազմութեան փոթորկուող գոռոց-գոչոցների մէջ իմ բոլոր կանչերն պիտի խեղդւեն ու անօգուտ անցնեն, վճռեցի, ինչքան հնարաւոր է, շուտ ինձ հասցնել գիւղի միւս ծայրամասը: Իրաւացիօրէն մտածում էի, որ գիւղից դուրս տանող ճանապարհի սկզբում, դուրս հոսող գաղթականների շարքերում անպայման կը գտնեմ մերոնց:

Մտածածս գիւտի համար հրճւեցի և վազ տուի՝ նպատակադրուածս տեղում կանգնելով սպասել և գտնել մեր ընտանիքին կամ առնւազն մերոնց ճանաչող ծանօթ-բարեկամներին:

Մէկ ամբողջ ժամ կանգնեցի և սպասեցի: Սպասման այս տագնապն ու լարուածութիւնը նկարագրել անհնարին է: Միրտս դողի ալեկոծման մէջ էր: Մերոնց ճարել չը կարողանալու վախն իմ ամբողջ էութիւնը կլանել էր:

Սկսել էի յուսահատուել: Ինձ մեղադրում էի եսասիրական ձգտումիս համար: Եթէ վերջի ժամին Անուշին փնտրելու գնացած չը լինէի, մերոնցից չէր բաժանւի և նրանց չէի կորցնի: Ամենից շատ ինձ մտատանջում էր եղբօրս կնոջ հիւանդագին և անյոյս վիճակը:

Չը գիտեմ՝ ինչու՞, համոզւած էի, առանց իմ օգնութեան նա արդէն մեռած կը լինի: Մինչ այդպէս ինձ մեղադրում էի, յանկարծ ճանապարհի վրայ յորդող բազմութեան մէջ ճանաչեցի հօրս, որ իր քահանայական ֆարաջան ուսին գցած, քրոջս ու եղբօրս կողքին քայլում էր:

Մերոնց անուններն իրար յետևից կանչելով՝ վազեցի և նրանց հասնելով՝ ջերմ-ջերմ համբուրեցի նրանց փոշեկոլոլ երեսներն ու ճակատները: Մեծ զարմանքով ու հաճոյքով տեսայ մեր Հայկանուշին՝ փոքրիկ մի սայլակի վրայ կարգին յարմարեցուած անկողնի վրայ պառկած վիճակում: Սայլակն աշխուժօրէն քարշ էր տալիս Մարօի մօր՝ մեզ նւիրած իշուկը: Այս անսպասելի նորութիւնն ինձ շատ ուրախացրեց, որ ես հրճւանքից աղաղակեցի.

– Այս ի՜նչ հրաշալի գիւտ էք արել: Ինչքա՜ն ուրախ եմ այս սայլակի գիւտի համար:

Ապա Հայկանուշին մօտենալով՝ հարցրի.

– Սիրելի՛ Հայկանուշ, ինչպէ՞ս ես զգում քեզ: Սայլակի վրայ այսպէս պառկած վիճակում պէտք է որ աւելի հանգիստ լինես, այդպէս չէ՞:

– Շնորհակալ եմ, Սիրա՛ք եղբայր, բայց այնքան էլ լաւ չեմ: Գլուխս սաստիկ ցաւից տրաքում է: Միրտս միշտ խառնում է: Աղիքներս շարունակ գալարւում և կտոր-կտոր լինել են ուզում: Մէկ խօսքով ինձ իզուր ստիպեցիք ձեզ հետ գալ: Միևնոյն է, ես ողջ և կենդանի տեղը հասնող չեմ:

– Այդ ինչեր ես ասում, Հայկանո՛ւշ, իզուր այդպէս յուսահատ ես: Սկիզբն ու ամենադժւարն արդէն անցել է: Մեզ մնում է ամենաշատը երեք օրւայ ճանապարհ: Սահմանն անցնելուց յետոյ մի լաւ բժիշկ կը ճարենք և քեզ բոլորովին կը լաւացնենք: Քաջ եղի՛ր: Առողջանալու համար ամենաառաջին պայմանը յոյսն է, ինքնաներշնչումն ու ինքնայուսադրումը: Դու պիտի ջանաս քեզ համոզել, որ կառողջանաս, լաւ կը լինես: Մի՛ տխրիր, մի՛ վշտանայ: Անպատճառ կառողջանաս և նորից մեր նախկին կտրիճ Հայկանուշը կը լինես:

– Ո՛չ, եղբա՛յր, ես լաւ լինող պտուղ չեմ...

Հայկանուշը դեռ ուզում էր շարունակել և նորից մի բան ասել, բայց դժւարանում, նեղւում էր:

Ես նկատեցի, որ նա այս փախուստի անիծեալ ճանապարհին մէկ օրում բոլորովին կենսաքամ էր եղել: Առանց այն էլ ամիսների հիւանդութեան հետևանքով նա բոլորովին նիհարել, ուժաթափ էր: Նա, իսկապէս, ի վիճակի չէր այս վազէվազ փախուստի ճանապարհի տանջանքներին, ցնցումներին, սարսափելի աղմուկ-ժխորին և օդում առատօրէն տարածուած թանձր փոշուն դիմանալ: Բարւոք համարեցի նրան այլևս չը խօսեցնել և թողնել իր դժբախտ ճակատագրին:

Մերոնք գանգատեցին իմ ուշացման և նրանց պատճառած անհանգստութեան համար: Ես ամաչեցի ուշացմանս իսկ պատճառը յայտնելուց և բաւականացայ միայն ասելով, որ յետոյ կը բացատրեմ ուշացմանս պատճառը:

– Իմ ուշացումը բոլորովին անտեղի չէր, բայց ես երբէք չէի կարող մտածել, որ դուք մեր հիւանդի ընկերակցութեամբ այսքան արագ ու յաջող կերպով կարող էք կտրել մեր անցած այս տանջալից ճանապարհը:

– Բոլորովին ճիշտ ես մտածում,– ասաց եղբայրս,– մինչև Նորատունկները հասնելը՝ Արաքսին ու ես Հայկանուշին էշի վրայ պահելու համար մեծ նեղութիւն կրեցինք: Նորատունկներում մեր թէ Հայկանուշի բախտից, բարդի ծառերի արանքում այս սայլակը տեսանք: Չեմ կարող ասել, նախօրօք, թէ՝ նահանջողների կողմից լքած էր այդ մեզ համար երջանկաբեր սայլակը: Շատ հեշտութեամբ կապեցինք մեր իշուկին և նրա վրայ վեր-

մակ ու բարձ դնելով՝ Հայկանուշին վրան պառկեցրինք:

– Բայց, եղբա՛յր Կարապետ, այս սոսկալի դժբախտութեան մէջ, մենք բախտ ունեցանք: Եթէ Մարօի բարեսիրտ մայրը մեր հիւանդին չը նիրէր այս իշուկին, նախ Հայկանուշը, ապա և մենք կորած կը լինէինք:

ՄԻՆՉԵՒ ԲԵՐԿՐԻ-ՂԱԼԷՆ

Վասպուրականի բազմահազար գաղթողներին հրահանգած էր, ինչքան կարելի է, շուտ իրենց Բերկրի-Ղալէն հասցնել, որովհետև քրդական յարձակումների հաւանականութիւնը նախատեսնուել էր:

Այդ չարաբաստիկ աղէտալի լուրը կայծակի արագութեամբ տարածուել էր գաղթողների շարքերում և մրրկալից փոթորկի գոռոց շաչիւնի նման բերնից բերան էր թռչում:

Գաղթողները խուճապահար էին եղել: Պէտք էր գերմարդկային ճիգեր ի գործ դնել և ժամ առաջ փախչել ու ազատուել վերահաս չարիքից:

– Դժոխք էրթայինք, աւելի շուտ կը խասնէինք, էս ինչ զուլում է:

– Գրողը տանի էդ անիրաւ աւազակներին: Ես խօ մեռայ, վերջացայ: Ի՞նչ ընեմ: Տիգրանիկս մէկուկէս տարեկանի: Ծանրացերի: Խոգիս բերանս խասաւ, թէ որ ուժ ունես, մէ քիչ էլ դու շլկիր տղիդ, որ կրնանք աւելի արագ էրթալ:

– Բա էս էրկուսին ինչ կանես հազիւ իսոնց պոչիցս քաշ կուտամ:

– Տղա՛, Կիրակո՛ս, վզէտ պաց արա դէն թալ էտա անտէր եօրղանը: Քեզ թեթւցու, ոտ վէրցի: Չե՞ս տիսնա, որ հըմէն պաց արին ու թալեցին ինոնց էլած-չէլածը: Պիտի վռազել, շուտ էրթալ: Պիտի փախնել, թէ չէ հիչ ու փուչ, էշ-նահատակ պիտի էլենք:

– Էլ ուժ չունեմ, բալէ՛քս, տուք կնացէ՛ք, վռազէ՛ք, փախէ՛ք: Տուք ինձ համար իզուր տեղ անօրէնների սրին ու թրին տէմ չ՚առնէք: Ես իմ պաժին ապրիրեմ: Իսորից աւիլին իմ պաժին չի: Վազէ՛ք, փախէ՛ք, էլ իսորից աւիլի ձեր տատի խամար մի՛ ուշացէք: Գնացէ՛ք, հեռացե՛ք, ձեր բօյին մատաղ:

Այսպէս շփոթ ու անհանգիստ խօսակցում և սարսափահար էին եղած բոլոր գաղթականները: Նրանք ձգտում էին վազել, փախուստ տալ, բայց այդ միանգամայն անհնարին, անկարելի էր դառնում նրանց համար:

Գաղթողների 90 տոկոսը, գուցէ և աւելին, ստիպուած էր ոտքով քայլել կամ, աւելի ճիշտ, փախչել: Նրանք փոխադրական արագընթաց միջոցներից, այդ ժամանակւայ կառքերից, ֆուրգոններից և ձիերից զրկուած էին: Նրանցից մի մասին յաջողուել էր իրենց անհրաժեշտ ուտելիք, անկողին, ամանեղէն, կարպետ ու խալիչէն բարձել ընտանի անասուններին, եզներին, կովերին, էշերին, ջորիներին և նոյնիսկ այծերին:

Ճանիկ-Բերկրի-Ղալէի միջև ընկած ճանապարհի տարածութիւնը տուեալ պայմաններում չափազանց շատ շատ էր: Այս տարածութիւնը 30 ֆարսաղ, 180 կիլոմետր էին հաշւում:

Գաղթողների կէսից շատը Քաղաքամիջից և Այգեստանից էին: Նրանցից շատերը, ինչպէս մենք, գաղթի ճանապարհն ընկնելուց յետոյ 2-3 ժամ քնելու, հանգստանալու հնարաւորութիւն չէին ունեցել և հիմա իրենց առաջն ունէին մի անվերջանալի և տառապալից ճանապարհ:

Նրանց ասած, տեղեկացած էր, ըստ կարելւոյն փութացնել իրենց գաղթը: Վախն ու սարսափը, թշնամու կրնկակոխ հետապնդումն ու քիւրդերի յարձակման վտանգն այդ «ըստ կարելւոյն» մէջտեղից տարել, անհետացրել էր, և նրանք աճապարում էին և փորձում փախչել խուճապահար:

Յոգնատանջ գաղթականութեան՝ համեմատաբար դիմացկուն և արագաքայլ մասը գաղթի երկրորդ օրւայ երեկոյեան յաջողել էր հասնել Խառակոնիս գիւղը: Ենթադրում էի, որ այդ փախչող բազմութեան մէջտեղումը մենք ընկած կը լինենք, այն էլ շնորհիւ մեր տարօրինակօրէն ժրաջան իշուկի, իր յոգնածութեան բողոքը յայտնաբերում էր իր երբեմնի զիլ և քանիցս կրկնւող առ-առներով ու զոռոցներով:

Բայց այդ փոքրիկ կենդանին էլ կարծես բնազդաբար զգում էր մարդկային զանգւածների գլխին դամոկլեան սրի նման կախւած վտանգը և իր պարտականութեան մէջ թերանալ չէր ցանկանում: Նա ժրաջանօրէն շարունակում էր քաշել իրեն լծած սայլակն իր թանկագին բեռան հետ միասին:

ՄԵՐ ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ԿՈՐՈՒՍԸ

Չնայած մեր համեմատաբար արագընթացութեանը՝ մենք դեռ բաւականին հեռու էինք Խառակոնիս կոչւած գիւղից: Գաղթողների քարաւանի անվերջանալի շարքերը յորդում էին քարքարոտ և խորդուբորդ ճանապարհի վրայ: Խեղդող թանձր փոշին օդն էր բարձրանում մեր գլխին և մարմնի վրայ թափւելու համար: Չնայած իրիկնադէմի հովին՝ փոշեխառն օդը դժւարաշնչելի էր դառնում:

Քոյրս, որ մի քանի վայրկեան առաջ սայլակի վրայ էր բարձրացել Հայկանուշին ջուր խմեցնելու համար, յանկարծ այլայլւած և կերկերուն ձայնով կանչեց.

– Սիրա՛ք, Կարապե՛տ, շո՛ւտ արէք, իշուկի առաջը պահէ՛ք, Հայկանուշը մեռնում է:

Կարապետը և ես վազ տւինք և, կենդանու առաջը կտրելով, նրան կանգնեցրինք:

Եղբօրս ու հօրս յայտնեցի, որ մենք ստիպւած ենք սայլակը ճանապարհից հանել և Հայկանուշին ցած բերելով՝ մեր անելիքը որոշել: Այդպես էլ արինք:

Դժբախտ Հայկանուշին իր վերմակի ու բարձի հետ մի համեմատաբար հարթ գետնի վրայ պառկեցրինք: Նա իր հոգեվարքի վերջին ճգնաժամն էր ապրում:

Մենք ջանացինք նրան գոնէ մի վերջին անգամ խօսեցնել: Արաքսին վազեց կժից ջուր բերելու: Ես թաշկինակս թրջեցի ջրով և մեռնողի ճակատին, երեսին, և շուրթերին քսեցի: Բոլորս միանգամից արտասուել սկսեցինք: Լացում էինք աղեկտուր և աղիողորմ, աղաչագին կանչում էինք.

– Հայկանո՛ւշ, սիրելի՛ Հայկանուշ, անուշի՛կ Հայկանուշ, խօսի՛ր, խօսի՛ր, մեզնից այսպէս խռոված ու վշտացած մի՛ հեռանայ, մի՞թէ մեզ չը մեղքեցար, որ այդպէս անխօս ու անմըրմունջ մեզնից բաժանուեցիր:

Այս մեր լաց ու կոծին, թախանձանք-աղաչանքին կարծես մեղքենալով և վերջին անգամ մնաս բարով ասելու համար Հայկանուշը լայն բաց արեց իր խոշոր, սևաթոյր աչքերը և մի երկու վայրկեան իր շուրջը հաւաքուածներիս նայելուց յետոյ նորից փակեց: Այս անգամ փակեց իր աչքերը յաւիտենական խոր քունը մտնելու համար:

Մենք մեր հարազատ, ազնիւ և աննման Հայկանուշի համար լացում ու ողբում էինք: Յանկարծահաս կսկիծը մեզ անգիտակից և անորոշ վիճակի էր մատնել: Մենք սթափուեցինք միայն այն ժամանակ, երբ մեր ականջին հասան հրացանի իրար յաջորդող կրակոցները:

– Կարապե՛տ, Արաքսի՛, մեր այստեղ ուշանալը բոլորովին աննպատակ է: Վե՛ր կացէք, այս մեր դժբախտ Հայկանուշին նորից սայլի վրայ տեղաւորենք և, ինչքան կարելի է, շուտ Խառակոնիս հասնենք: Այնտեղ մի յարմար տեղ կը գտնենք և նրան հողին կը յանձնենք:

Մերոնցից և ոչ մէկն իմ առաջարկին առարկութիւն չ'արաւ:

Երբ մենք նորից ճանապարհ ընկանք, և իշուկը նորից սկսեց քաշել այս անգամ իր անշունչ բեռը, Արաքսուն խնդրեցի նստել սայլակի վրայ՝ իր մեռած հարազատի կողքին:

– Արաքսի՛, դու չափազանց ուժասպառ ես եղել: Քեզ համար ոտքով ճանապարհ շարունակելն անհնար է: Նստի՛ր սայլակին և վերջին անգամը լինելով՝ ուղեկցիր քո շատ սիրելի և անուշիկ հարսին: Արաքսին չէր համաձայնւում նախ այն պատճառով, որ էշի բեռը կը ծանրանար և ապա ցանկանում էր, որ իրենից աւելի ուժասպառ եղած հայրը նստի:

Վերջ ի վերջոյ ինձ յաջողուեց նրան մի կերպ համոզել և տեղաւորել սայլակի վրայ յանգուցեալի կողքին: Այսպիսով, ես ինձ մօտ ենթադրում էի ամոքել ինձնից գուցէ խռոված մեռնողի բարի հոգին և միւս կողմից Արաքսուն ազատել սաստիկ յոգնածութիւնից յառաջացող հաւանական հիւանդութեան վտանգից:

Երբ մենք նորից ճանապարհը շարունակեցինք, գաղթականների շարքերը բոլորովին նօսրացել էին: Ճանապարհի վրայ դժուարութեամբ շարժւում էին մեզ նման ուշացողները: Գուցէ նրանք էլ մեզ նման հարազատների կորուստներ էին ունեցել և զբաղուած էին եղել իրենց այդ հարազատներից յաւիտենական բաժանման տխուր պարտականութիւնը կատարելով:

ՔՐԴԵՐԻ ՅԱՐՁԱԿՄԱՆ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Կէսգիշերից անց, երբ մենք յոգնած, ջարդուած, վշտաբեկ Խառակոնիս գիւղը հասանք, նորից մեզ գտանք գաղթողների անհամար բազմութեան մէջ:

Մեր հարազատի կորուստի վիշտը, մեր անչափ յոգնածութիւնը մեզ մի տեսակ անտարբեր և անփոյթ էր դարձրել քրդերի յարձակման սարսափի հանդէպ:

Նախքան գիւղ հասնելը ամբողջ 2-3 ժամւայ ընթացքում մեր ականջները համարեայ խլացել էին հրացանաձգութեան համազարկերի գոռոց-սուլոցներից: Մենք անճարօրէն հաշտուել էինք վայրագ ու բարբարոս քրդերի գնդակներին զոհ գնալու վտանգի հաւանականութեան մտքի հետ: Կարող էր պատահել նոյնիսկ, որ մենք պաշտպանութեան շրջագծից դուրս մնացած լինէինք: Բայց ի՞նչ կարող էինք անել: Մեղքը մերն էր, որ ուշացել էինք:

Խառակոնիսում տիրող տագնապն ու շփոթը մեզ էլ ուրիշների նման շշմեցրեց: Ամէն մէկը, նոյնիսկ միևնոյն ընտանիքի անդամներն ու հարազատները, կոտորածի սարսափից ահաբեկուած, ամէն ինչ մոռացած, փոխադարձ օգնութեան պարտականութիւնը մտահան արած, իրարուց անջատուած և կորսուած փախչում էին ու հեռանում:

Մարդկային կեանքում ամենասոսկալին և ամենադաժանն այն ժամանակն է իր հրէշատեսիլ, դժոխային կերպարանքը ցոյց տալիս, երբ մարդկային գիտակցութիւնն ու դատողութիւնը դադարում է գործելուց և իր տեղը թողնում է կենդանական բնազդին՝ անխուսափելի վտանգի րոպէին միմիայն փախչելու և ազատուելու անզուսպ բնազդական ձգտումին:

Դժբախտաբար, Վասպուրականի հայ բազմութիւնների առաջին փախուստը Խառակոնիս-Բերկրի-Ղալէի ճանապարհին, գաղթի անղեկ ու անկազմակերպ լինելու պատճառով լիովին երևան հանեց այս չարաբաստիկ իրողութիւնը:

ԹԱՂՈՒՄԸ

Ես ինձ իրաւունք չեմ տալիս մտածելու, որ մեր չորս հոգու վերածուած ընտանիքը կարող էր և ընդունակ էր չ'ենթարկուելու այդ պարսաւելի ինքնափրկութեանը, միայն իր անձի ազատման կենդանական բնազդի փորձութեանը: Սակայն մեզնից

ամէն մէկն ամաչում էր իր համար շատ սիրելի և յարգելի Հայկանուշի դին թողնել, գցել այդ ամբոխային կերպարանք առած, եսական ու ինքնասէր դարձած բազմութեան ոտքերի տակ, որպէսզի կոխկռտուէր ու տրորուէր և մեր մնացորդ կեանքի համար անէծքի ու վրէժի հոգեսպան արձագանք դառնար:

– Գնանք, երեխէ՛ք, մի քիչ հեռանանք այս խաժամուժէն, այս անտանելի աղմուկ-աղաղակէն և եթէ չը յաջողենք գերեզմանատունը գտնել, գոնէ մի յարմար տեղ հողին յանձնենք էս մեր բէմուրազը,- աչքերից յորդող արցունքը սրբելով՝ դողդոջ ու խեղդուող ձայնով ասաց հայրս:

Ես անմռունչ կատարեցի հօրս կամքը: Էշի գլխին հագցուած չանից բռնելով, նրան մեծ նեղութեամբ, դուրս բերի լեռանման կուտակուած բազմութիւնից: Բռնեցինք գիւղին բոլորովին մօտիկ եղող բլրակի ճամփան: Դիպուածաբար գիւղի գերեզմանավայրն էլ այդ բլրակի կողքին էր:

Բլրակի մօտ մեզ յաջողուեց ճարել վաղուց քանդուած փոսանման մի տեղ: Ես ու եղբայրս չարաչար նեղութեամբ և քրտինքի մէջ կորած, սրածայր քարերով և մեր ճանկերով փորեցինք փոսը և հողին յանձնեցինք մեր տարաբախտ հարազատին:

Դիակի վրայ ջանացինք շատ հող լցնել նրան կարգին ծածկելու համար: Շատ քարեր բերինք և հողաթմբին կուտակեցինք: Մեր հայրը չափազանց համառօտ և յուզուած կատարեց թաղման ծիսակատարութիւնը:

Ջերմեռանդութեամբ աղօթեցինք և բուռ-բուռ հող շաղ տուինք գերեզմանի վրայ: Հազար աղաչանք-պաղատանքով հազիւ կարողացանք Արաքսուն իր սիրելի հարազատի գերեզմանից բաժանել և սրտամորմոք ու անսփոփ գիւղը վերադարձանք:

ԲԵՐԿՐԻ-ՂԱԼԷԻ ՃԱՄԲԻՆ

Համարեայ անպաշտպան գաղթականութեան վրայ յարձակում կատարողները քրդական Մամդուլի և Շամսէդդին աւազակային խմբերն էին: Նրանց բնակավայրը Ջիլանի ձորն էր և Ծաղկանց լեռները: Նրանց յարձակման գլխաւոր նպատակը կողոպուտն ու թալանն էր: Բայց սարսափի մատնուած գաղթող բազմութիւնները միանգամայն համոզուած էին, որ այդ յարձակումները յատկապէս կազմակերպուած էին իրենց արիւնի ծարաւ տաճիկ թշնամու ցուցմունքներով:

1915 թի այդ տնաքանդ և կործանիչ փախուստից մինչև մեր այս օրերը 45 երկար տարիներ են անցել: Միանգամայն իրաւացիօրէն տրամաբանողներ կան, որ այդ հապճեպ և անկազմակերպ նահանջը կեղծ ու սարքովի է եղել և նպատակ է ունեցել Վասպուրականի հայ կենսունակ և ժրաջան ազգաբնակութեանն իր հայրենի հողից ու ջրից հեռացնել և տարագրելով նրան ցանուցրիւ անել:

Այս ենթադրութեան թէկուզ նւազագոյն չափով ճշմարիտ լինելու պարագային ռուսական ցարական կառավարութիւնը լրացրած կը լինի տաճիկ հայակեր պետական ստոր քաղաքականութեան դաւաճանութիւնը:

Այս իրար յաջորդող դժբախտութիւնների ընթացքում գոյութիւն ունէր մի պարագայ, որ մեր խելայեղօրէն և խուճապահար փախուստ տուող բազմահազար գաղթականութեան համար ունեցաւ փրկարար և ազատագրող նշանակութիւն:

Այդ պարագան հետևեալն էր.

Ռուսական բանակի և նրա կցորդ կամաւորական խմբերի նահանջն ապահովելու համար այդ բանակի կազմը պարտաւոր էր որոշ քանակութեամբ ուժեր սպասեցնել նահանջող բանակի թիկունքում:

Այդպէս էլ եղաւ: Մինչ Վասպուրականի մրրկահալած, սարսափահար գաղթականութիւնը գլխակորոյս փախուստ էր տալիս, դեռ նրա յետևում, սկսած Արճակից, Տիրամօր վանքից մինչև Բերկրի-Ղալէն և Կոթուր, յետախուզական և պաշտպանողական պարտականութեամբ հսկում և պաշտպանում էին ռուսական զինուորական ուժերի թիկունքում եղած զինուորական ջոկատները:

Այս ջոկատները մի քանի ժամուայ զինական ընդհարումներ ունեցան քիւրդ զինուած աւազակախմբերի հետ և շատ հեշտութեամբ նրանց պարտութեան և փախուստի մատնեցին:

Ահա այս բարեսիրտ դասաւորութեան հետևանքով ազատուեց և փրկուեց տագնապահար փախուստ տուող մեր հայ գաղթականութիւնը: Մեր ուշացման հետևանքով մեր ընտանիքը գտնուում էր գլխապատառ փախուստ տուող գաղթականութեան ամենավերջին և յետ ընկած շարքերում:

Մեր հարազատի կորուստից յետոյ հայրս ու քոյրս և մեծ եղբայրս, որի վիրաւորուած թևը դեռ բոլորովին չէր լաւացել, փոխնիփոխ սայլակի վրայ նստելով, իրենց տանջուած ոտներին փոքր հանգստութիւն էին տալիս: Հօրս ու քրոջս թախանձալից ստիպումով ես էլ, երեք անգամ սայլակի վրայ նստելով և ննջելով, մի փոքր հանգստացայ: Մեզ բոլորիս ծայրայեղօրէն տանջահարողը մեր ստիպողական անքուն մնալն էր: Երբեմն քայլելիս քնում և գետին էինք ընկնում:

ԲԵՐԿՐԻ-ՂԱԼԷԻՑ ՅԵՏՈՅ

Սայլակի վրայ ննջելիս մենք անցել էինք Գործոթը: Անսահման յոգնածութիւնն իմ ամբողջ ֆիզիկականը ծեծկռտել և տանջել էր: Այդ իսկ պատճառով վերջին անգամ ես սայլակի վրայ շուրջ երեք ժամ քնել էի: Երբ արթնացայ, ինքս աւելի շուտ ինձ մօտ, քան մերոնց նկատմամբ ամօթխած զգացի, որովհետև նրանց իմ քնով պարտադրել էի շատ երկար ոտքով քայլելու:

Վասպուրականցի գաղթականները դեպի Իգդիր ձգվող ճանապարհին

Աչքերս ճմռոտելով՝ սայլից ցած իջայ և մերոնց ներողամտութիւնը խնդրեցի այսքան երկար ժամանակ նրանց ոտքով քայլելու պարտադրելուս համար:

Նահանջի չորրորդ օրուայ իրիկնապահին մենք վերջապէս Բերկրի-Ղալէն հասանք:

Գաղթականների շարասիւնները ճնշող մեծամասնութեամբ արդէն հասել էին: Այստեղ՝ Բերկրի-Ղալէում, չնայած քրդերի՝ Բանդի-Մահուր գետի վրայ կատարած վերջի յարձակմանը, զգալիօրէն նկատելի էր, որ գաղթող-փախչողների շփոթն ու խուճապը նուազել էր: Գուցէ այն պատճառով, որ նրանք մտածում էին, որ սպառնացող անմիջական վտանգից ազատուել են և կամ գուցէ նրա համար, որ իրենց գողգոթայի ճանապարհը ամենաշատը երկու կամ երկու և կէս օրից յետոյ իր վերջաւորութեանը կը հասնի: Բայց, ամենաճիշտը, սրտապնդողը այն հանգամանքն էր, որ ռուսական բանակի վաշտերից բաւական շատ դեռ բանակել էին Բերկրի-Ղալէում և նրանց ներկայութիւնը անկասկած սրտապնդիչ իրողութիւն էր:

Ամէն պարագայում փաստն այն էր, որ գաղթականութիւնը սոսկումի և ահաբեկման սպանիչ վիճակից ազատուել էր և մի փոքր շունչ էր քաշում և տարերօրէն ու անպայման ցանկանում էր մի քանի ժամ քնել և հանգստանալ:

Երբ մենք Բերկրի-Ղալէ հասանք, բոլորս էլ այնքան յոգնած ու չարչրկուած էինք, որ նոյնիսկ մի պատառ հաց ուտելու համբերութիւնը չ'ունեցանք: Մենք չորս հոգիներս էլ առանց մեր անելիքն իմանալու և որևէ որոշում կայացնելու, յոգնաբեկ, քնի ենթարկուեցինք: Մեզնից քոյրս ու հայրս մի կերպ սայլի վրայ, իսկ ես ու եղբայրս նրա կողքին գետնին ընկած, քնեցինք:

Լուսաբացին մեզնից ամենաշուտը մեր հայրն էր զարթնել: Տագնապալից և այլայլուած կանչով նա մեզ ստիպեց արթնանալ:

– Ա՜յ, բալէքս, վեր կացէ՛ք: Շո՛ւտ արէք: Մեր իշուկը չկայ:

Սայլակէն բացած ու տարած են մեր անլեզու կենդանուն: Ես, քոյրս և եղբայրս համարեայ միաժամանակ վեր թռանք: Սկզբում՝ դեռ կիսաքուն և կիսարթուն վիճակում, չէի հասկանում մեզ հետ պատահած մեծ չարիքը:

Իրար յետևից աչքերս բացուխուփ անելով և ճմռթոտելով՝ վերջապէս իմացայ կատարուած չարագործութիւնը:

– Հէնց այստեղ մնացէ՛ք, սպասեցէք ինձի, ես վազ կը տամ ճարելու մեր իշուկը:

Այլևս չ'սպասելով մերոնց կարծիքին ու պատասխանին՝ ես գժուածի նման վազ տի ընդարձակ գիւղաքաղաքի լայն և ուղիղ փողոցով՝ մտածելով հասնել հեռացող քարաւանին և գտնել յափշտակուած իշուկը:

Այս չը կշռադատուած արարքը միանգամայն անմիտ էր: Երբէք չէի կարող հասնել 8-10 ժամ առաջ գողացուած և արագօրէն քշուած կենդանուն:

Ամբողջ երկու ժամ թանձր փոշիների մէջ թաղուած ճանապարհով վազվզելուց յետոյ, ջարդ ու փշուր եղած՝ այդ անիծուած ճանապարհի եզերքին ուժասպառ և կիսաշունչ ընկայ: Ծայրահեղ յոգնածութիւնից յառաջացած ջղայնութիւնը և մեր փոխադրական միակ միջոցի կորստի յուսահատութիւնն ինձ այնպէս էր գետնին մեխել, որ նորից ոտքի կենալու և մերոնց մօտ վերադառնալու ամենափոքր ցանկութիւնը չ'ունէի: Իմ մէջ կորովի ու կամքի բոլոր հետքերը կարծես միանգամայն կորել, անհետացել էին:

Անճար ու անճարակ անիծում էի մեր անբախտութիւնը: Նզովում էի մեր ճակատագրի ձախորդութիւնը և լուտանք ու հայհոյանք էի ուղարկում այն չարագործին, որ տմարդօրէն մեզնից խլել և տարել էր մեր դժբախտ օրերի միակ յոյսն ու ապաւէնը հանդիսացող կենդանուն:

Մանաւանդ հօրս ու քրոջս յոգնատանջ վիճակը, նրանց բոլորովին ուժասպառ ոտքով քայլելու տխուր պատկերացումը ճնշում և ճմլում էր ինձ:

Մեզ հետ պատահած ձախորդութիւնների և տանջանքների դժնդակ լրացուցիչն էր այս:

***

Իմ ծայրայեղ յոգնածութեան և անմխիթար յուսահատութեան հետևանքով գոյացած թմրածութիւնը բաւական երկար ժամանակ էր խլել ինձնից:

Կենսատու արևը հորիզոնի վրայ անխնայ և առատօրէն փռել և տարածել էր իր ոսկեփայլ ճառագայթները: Օդում ճախրող թռչունները գաղթականների բարձրացրած ամպանման փոշուց սուր ճիչերով փախչում էին: Իսկ ինձնից ոչ շատ հեռուն ճանապարհի երկայնքին, իրար յաջորդող գաղթականների աղմկալից և անվերջանալի շարաններն էին անցնում:

Ոտքի ելայ: Ջանացի ինձնից վանել անօգուտ յուսահատութեան յառաջացրած թմրածութիւնը: Նոյնիսկ սկսեցի ինձնից ամաչել նրա համար, որ այդքան հեշտօրէն այդպիսի յուսալքման եմ ենթարկուել: Եթէ կեանքում պատահած ամէն մէկ ձախորդութեան համար ես այդքան շուտ ինձ յուսահատութեան ալիքների յանձնելու լինեմ, ինչպէ՞ս պիտի կարողանամ տոկալ, դիմանալ և դիմագրաւել նրանց:

«Ամօթ քեզ, Սիրաք, իսկապէս շատ ամօթ»,– ինձ մեղադրում էր մի ներքին կանչ:

«Բայց ես ինձ համար չէ, որ մտածում և անհանգստանում եմ: Ես իմ հօր և քրոջս խղճալի յոգնատանջ վիճակի համար է, որ տանջւում եմ»,– աշխատում էի ինձ արդարեցնել այդ մեղադրական կանչին ի պատասխան:

«Բայց դու քո ընտանիքում քեզ համարում ես ամենակորովին: Դու բոլորովին իրաւունք չ'ունես այդքան շուտ յուսալքուելու: Դու պարտաւոր ես նրանց, մանաւանդ քո փոքր և դողդոջուն քրոջն ու քո յոգնաբեկ հօրդ խրախուսելու և առաջնորդելու այդ դժոխային ճանապարհին»,– կանչում էր նոյն ձայնը:

Այդ ձայնը, այդ ներքին կանչը միանգամայն իրաւացի էր: Այդ մեղադրական կանչը հարազատ էր, քանի որ իմ սեփական սրտից էր բարձրանում: Այդ կանչը իմ հոգու, իմ սրտի ազնիւ թելադրանքն էր և ես պարտաւոր էի ենթարկուել նրան:

***

Երկար տատանումից յետոյ վճռեցի կտրած ճանապարհիցս յետ վերադառնալ մերոնց գտնելու համար: Երբ ես նրանց թողել էի և նրանցից բաժանուել, պատուիրել էի ինձ սպասել Բերկրի-Ղալէում, բայց իմ՝ նրանցից բաժանուելուց ի վեր առնուազն չորս ժամ էր անցել: Ես բոլորովին վստահ չէի, որ նրանք այդքան երկար ժամանակ ինձ սպասելիս կը լինեն, մանաւանդ որ նրանք էլ իրենց հերթին չէին կարող բոլորովին վստահ լինել, որ ես անպատճառ յետ կը վերադառնամ:

Սարսափահար փախուստ տուող գաղթականը չի կարող սառնարիւն մնալ: Նա իր դատողութեան և տրամաբանութեան ղեկը հէնց այն սկզբնական րոպէից ձեռքից տուած է լինում, երբ փախուստի առաջին քայլն է վերցնում: Հէնց այդ առաջին քայլից նա իրեն յանձնում է բախտին և պատեհութեան քմահաճոյքի յարափոփոխ խաղերին:

Ուշադրութիւնս, ըստ հնարաւորութեան լարած, սկսեցի յառաջանալ գաղթականութեան բռնած ճանապարհի հակառակ ուղղութեամբ: Գաղթականների շարքերի կողքից անբաժան վերադառնում էի Բերկրի-Ղալէն: Աշխատում էի նրանց միջև հանդիպելու ծանօթ դէմքերի, բայց իզուր:

Կէսօր էր, երբ ես ինձ նորից Բերկրի-Ղալէում գտայ: Ճանապարհին ինձ չէր յաջողուել հանդիպել ո՛չ մերոնց և ո՛չ էլ որևէ ծանօթ-բարեկամի: Դժուարութեամբ կարողացայ կողմնորոշել անցած գիշերուայ մեր իջևանած տեղը: Մերոնք չկային: Մտածելով, որ կարող է սխալուած լինեմ, իմ փնտռտուքի շրջանակը լայնացրի: Մերոնք չկային ու չկային: Մեծ աւանը գրեթէ դատարկուել էր անցեալ գիշերուայ ծովածաւալ գաղթականներից: Գիւղում տեղ-տեղ մնացել էին փոքրաթիւ խմբակներ: Քարաւանից յետ էին մնացել հիւանդութեան, ծերութեան և երկունքի ցաւերի պատճառով յառաջ շարժուելու հնարաւորութիւն չունեցող անճարներ և թշուառներ...:

***

Յոգնածութեանս չափն ու սահմանը նկարագրելու համար բառեր չեմ կարող ճարել: Չնայած որ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՇԻՆԵՐԻ ԳԱՂԹԻ ՈՒՂԻՆ
1915 Թ. ՀՈՒԼԻՍԻՆ
Թիֆլիս
Կուր գետ
ՌՈՒՍԱԿԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
Ղարաքիլիսա
Գանձակ
Երեւան
Կաղզվան
Էջմիածին
Իգդիր
Օրգով
Շուշի
Բայազետ
Թափարեզ
Նակու
Արաքս գետ
Նախիջեւան
Բերկրիղալա
Գորշոթ
Ջանիկ
Խառակոնիս
Խոյ
Վան
Սղգա
Կոթուրի ձոր
Սալմաստ
Թավրիզ
ԻՐԱՆ
Ուրմիա
ՕՍՄԱՆՅԱՆ
ԹՈՒՐՔԻԱ

ես, իմ էութեանս խորքից ժայթքող կանչին ի պատասխան, ինձ խօսք էի տուել չը յուսահատուել և չընկրկել, բայց այդ անկարելի եղաւ:

Բերկրի-Ղալէում մերոնց գտնելու յոյսը վերջնականապէս կորցրած՝ պէտք էր իմ գնացած ու վերադարձած ճանապարհով նորից վերադառնայի: Բայց ինչպէ՞ս գնալ: Յոգնաբեկ և ջարդուփշուր էի եղած: Անչափ լարուած ջղերս ու անվերջ քայլելու, երբեմն նոյնիսկ վազելու դատապարտուած ոտքերիս չափազանց յոգնածութիւնն ինձ մաշել և սպառել էին: Ամենասոսկալին այն էր, որ ինձ վերակազդուրելու հնարաւորութիւնից էլ զրկւել էի: Սոված էի և պայուսակումս գէթ մի կտոր հաց էլ չունէի:

Ի՞նչ կարող էի անել: Ո՞րտեղից գոնէ մի կտոր հաց կարողանայի ճարել: Գնալ այս ուշացած և յետ մնացած թշւառների մօտ և նրանցից մի կտոր հաց խնդրել, այդ անկարելի և ամօթալի էր թւում ինձ: Յետոյ նրանք որտեղի՞ց պաշար, ուտելիք, կունենային: Եթէ նոյնիսկ ունենային, ինչպէ՞ս կը համաձայնուէին իրենց այդ անորոշ և անմխիթար պայմաններում ուրիշի բաժին հանել: Չէ՛, ես աւելի շուտ քաղցած կը մեռնեմ, քան թէ հացի խնդիրքմուրացկանութիւն կանեմ: Հացի մուրացկանութիւն, այն էլ այս թշւառ, անճար, հիւանդ և մահւան ճիւաղի դէմ յուսաբեկ պայքարող այս գաղթական մարդստուերներից:

Այս յուսահատ մտորումներին ենթակայ՝ յանկարծ լուսաշող մի ենթադրութեան յանգայ: Լաւ թէկուզ հաց ուտելիք չ'կայ, բայց չէ որ այս մեծ աւանում տներ, պտղատու այգիներ կան: Մի՞թէ չի կարող պատահել, որ այդ տներում և այգիներում մի ուտելիք, մի քանի պտուղ ճարւի, և ես կարողանամ, թէկուզ կիսափոր, քաղցածութեանս պահանջը մի քիչ մեղմել:

Մտայ բազմաթիւ տներ և այգիներ: Բազմահազար սոված կամ կիսաքաղց գաղթականութիւնը սոված ծութեան մարմաջով բռնուած մորեխների նման մաքրել, սրբել և վերջացրել էր ամէն ինչ:

ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻՑՍ ԱՄԵՆԱԴԺԲԱԽՏԸ

Երբ ես բոլորովին յուսահատ վճռեցի թողնել գիւղը, երրորդ անգամ լինելով կտրելու գաղթականութեան անցած ճանապարհը, որով արդէն մի անգամ գնացել և մի անգամ էլ վերադարձել էի, գիւղեզրի վերջին տներից մէկում ձու ածող մի հաւի բազմիցս կրկնւող յաղթական կչկչոցը լսեցի:

Յանկարծակի ուրախութեան մի զգացում ամբողջ մարմինս պատեց: Հաւը հաւանաբար իր ձուն ածել է, որ այսպէս ուրախ և յաղթական կչկչում է: Մտայ կիսաբաց դռնից և բռնեցի ձայնի ուղղութիւնը: Անցայ առաջին բակից և մտայ երկրորդը, որտեղ գտնւում էր մարագը: Իմ ոտնաձայնը ցախատան-մարագի մօտ փախստական և դասալիք դարձած հաւին հաճելի չը թւաց, և նա, սաստիկ վախեցած, կչկչալով փախուստ տուեց:

Ինչքան մեծ ու անսպասելի հրճւանք էր ինձ համար: Մէկի փոխարէն, խոտի մի փոքր դէզի վրայ երեք ճեփ-ճերմակ ձուեր: Ինքս էլ չկարողացայ ինձ բացատրել, թէ ինչպէ՞ս է պատահել, որ փախստական տնատէրը չի նկատել այդ երեքից նախկին երկու օրերի ձուերը: Թերևս մոռացման կամ աճապարանքի հետևանքով, ամէն պարագայում, դա ինձ համար բացառիկ բախտաւորութիւն էր: Անմիջապէս վերցրի և իրար յետևից վարկենապէս կոտրելով՝ կուլ տուի երեք թարմ ձուերը: Այդ րոպէին ինձ այնպէս էր թւում, որ եթէ անմիջապէս կուլ տալու չը լինեմ այդ ձուերը, կարող է պատահել՝ գետնի տակից մէկը բուսնի և ձեռքիցս խլի:

Խնջոյքի փառաւոր սեղանից բաժանւողի տպաւորութեան տակ ես թողի մարագի բակն և վերադարձայ առաջին աւելի ընդարձակ բակը փողոց դուրս գալու մտադրութեամբ: Բակի մէջտեղով անցնելիս մղկտացող նւոցի և խուլ հռինդների նմանող ձայներ լսել սկսեցի: Սկզբում ցանկութիւն ունեցայ անմիջապէս դուրս փախչել այդ մահագոյժ հռինդն այլևս չը լսելու համար, բայց դժւարութեամբ կարողայ ինձ զսպել՝ իմանալու, թէ ինչ է կատարւում:

Աղիողորմ նւոցները նորից կրկնւեցին: Անկասկած գաղթողներից մէկը լքած, անտէր, անտիրական և անօգնական մաքառում էր հոգեվարքի կոշմարի հետ:

Ջանացի ինձ սրտապնդել և մօտեցայ անօգնական մեռնողին գտնելու և տեսնելու:

Մի տարօրինակ և անսովոր վախ ու դողով թոնրատունը մտայ: Այնտեղից էր հասնում մեռնողի նւոցն ու հռինդը:

Մօտեցայ, բոլորովին մօտեցայ: Մահւան հոգեվարքի մէջ՝ խեղդւող և շնչահեղձ անող մահւան կօշմարի հետ մաքառողի ինքնութիւնը ճանաչելու համար:

Շանթահար եղածի նման արիւնս երակներիս մէջ կարծես լերդացաւ, կանգ առաւ:

Օհաննէս աղա Կուլօղլեանն էր այդ մարդը՝ իմ հարազատ մօրեղբայրը:

Բայց ի՞նչ զարմանալի, ի՞նչ անլուծելի հանելուկ էր այս: Չէր կարող պատահել, որ այս մարդը մէնմենակ ճանապարհ ընկած լինէր: Ու՞ր են սրա կինն ու աղջիկը, ու՞ր են սրա երկու հասած, երիտասարդ տղաները: Մօտենում եմ մեռնողին: Կեղտոտուած և ապականուած ներքնակից ու վերմակից արիւնալից լուծմունքի ահռելի գարշահոտը խեղդում է ինձ: Ազգականիս ծայրահեղ թշւառութեան ողբերգութիւնը պարզւում է ինձ համար: Գաղթականի բնազդական եսասիրութեան, փախչողի մի վայրկեան աւելի շուտ խոյս տալու և իրեն ազատելու անասնական բնազդի պատկերն իր ստոր և խայտառակ մերկութեամբ առաջս է ցցւում: Նրա հարազատ կինը, աղջիկը և տղաները, յուսահատուած նրա ապաքինու-

մից, նրան մէն-մենակ թողել են մաքառելու իր մահաւան կոշմարին հետ և նրան անօգնական ու անտէր լքելով, իրենք փախել ու անհետացել էին...:

Ի՜նչ խայտառակ էգոիզմ, ի՜նչ պարսաւելի անգթութիւն և ի՜նչ իրական դաւաճանութիւն:

Ես դժուարանում էի ինձ համոզել, որ իմ տեսածը ճիշտ է, իրականութիւն է: Բայց դա գռեհիկ և անսիրտ իրականութիւն էր: Հարազատ ընտանիքը չէր յօժարուել, չէր սպասել թաղելու երեսուն կամ գուցէ աւելի տարիների ընթացքին, այդ միևնոյն ընտանիքի բարօրութեան և երջանկութեան համար չարաչար և քրտնաթոր աշխատող և ներկայումս այսպէս անմխիթար և անտէր մեռնող մարդուն:

Գաղթ, փախուստ, մահաւան սարսափից ազատուելու, փախուստ տալու ձգտումը...:

Վա՜յ, ինչքա՜ն սարսափելի, ինչքա՜ն ահռելի և միաժամանակ ինչքա՜ն անգութ է այս գաղթ-փախուստը:

Քիչ յետոյ, սակայն սկսեցի ինձ մեղադրել իմ ծայրահեղ յոռետես մտորումներիս համար: Մի գուցէ այս անկազմակերպ, տագնապալից և խուճապահար փախուստի ժամանակ կամ քրդերի Բանդէ-Մահուրի յարձակման ընթացքին Օհաննէս աղան՝ այս անսահմանօրէն թշւառ մարդը կորել, յետ է ընկել իր ընտանիքից և չի յաջողել նորից նրանց հասնել և գտնել ու այս դժբախտ ճակատագրին է հանդիպել:

Ես բազմաթիւ անգամներ կանչեցի, բղաւեցի նրա անունը: Անչափ անսահման ցանկութիւն ունէի գոնէ մի անգամ մի երկու խօսք կորզել մեռնողից, իմանալ իրականութիւնը, բայց, դժբախտաբար, այդ չը յաջողուեց ինձ: Մի քանի վայրկեան ևս նա տապլտկուեց մահաւան իր ճգնաժամում և փչեց իր կարօտակէզ վերջին շունչը:

ԹԱՓԱՐԷԶ-ՂԸԶԸԼԴԻԶԷ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մի ամբողջ օր ու գիշեր մօրեղբօրս եղերական մահաւան ճնշիչ և յուսալքող տպաւորութեան ենթակայ էի: Ֆիզիկական տանջակոծ վիճակս նոյնիսկ չէր կարողացել մտքիցս վանել նրա սոսկալիօրէն անմխիթար և անտրտունջ մահաւան վերջին ճգնաժամը: Անցնում էի այդ նզոված գողգոթայի անվերջանալի ճանապարհով անհաղորդ, ինքնամփոփ և անգիտակից շարժուող շւաքի նման: Երբեմն միայն անդրադառնում էի այն դառն իրողութեանը, որ կարող է պատահել ես էլ, այս ծայրահեղ յոգնածութեան հետևանքով, ցած գլորւեմ այլևս ոտքի չը կենալու տխրալի վերջաւորութեամբ:

Այդ անգիտակից, համարեայ անզգայ և կիսաշունչ վիճակում ամէն րոպէ ցրիւ գալու և բազմաթիւ կտորների վերածուելու ինքնաշխատ, յոգնաբեկ մեքենայի նման ես քայլել, ճանապարհ էի կտրել: Այդպիսի տաժանակիր և պարտադրուած ճանապարհանցումը, իրար յաջորդող ամբողջ 30 ժամերում, միանգամայն անհաւատալի էր թւում ոչ թէ ամէն մարդու, այլ նոյնիսկ ինձ համար: Գողգոթայի այդ անտանելի ճանապարհը՝ սկսած Բայազէտ-Աղից մինչև Թափարէզ և մինչև Ղըզըլդիզէ, հարիւր կիլոմետրից աւելի էր: Ես կտրել անցել էի այդ ճանապարհը, բայց հենց ինձ համար այդ իրողութիւնը միանգամայն առասպելական հրաշք էր թւում, որին ես ինքս հաւատալ չէի կարողանում:

Այս անկարագրելի նեղութիւններից ու անպատմելի չարչարանքներից յետոյ ես ինձ վերջապէս Ղըզըլդիզէ էի հասցրել: Չը գիտեմ՝ ե՞րբ, ո՞ր ժամին այդտեղ էի հասել: Միայն այսքանը գիտեմ, որ այդ Ղըզըլդիզէ կոչւած աւանը հասնելուց յետոյ՝ ես, անգիտակ և անզգայ, ինչ որ մի տեղ ցած էի գլորւել և փրկարար մրափի էի ենթարկւել:

***

Չ'գիտեմ՝ քանի ժամ այդ ծանր մրափին էի ենթարկւել: Քնի մէջ զգացի, որ մէկն ինձ ամբողջ մարմնովս շարժում է: Թւում էր, որ ինձ օրօրում են, բայց այդ օրօրի թափը գնալով ուժեղանում էր: Լսեցի նաև որ ինձ իմ անունով կանչում են.

– Սիրա՜ք, Սիրա՜ք:

Մեծ ճիգ ի գործ դրի աչքերս բացելու և ինձ կանչողին նայելու համար:

– Սիրաք, այս ի՞նչ վիճակում ես: Ու՞ր ես այստեղ, այս արևի տակ պառկել: Ինչու՞ այդպէս ծանր ու անհանգիստ ես շնչում: Վեր կաց տեսնենք:

Կողքիս ծունկի եկած՝ իմ ամենասիրելի ընկերներից մէկն էր՝ Հրանդ Դարբինեանը, որ դեռ շարունակում էր հարցակոծել ինձ:

– Ինչու՞ համար այս խաժամուժի մէջ ես ընտրել քնելուդ վայրը: Մի՞թէ աւելի յարմար ու հանգիստ տեղ չէիր կարող ընտրել: Վե՛ր կաց, տեսնենք:

– Հրա՛նդ, սիրելիս, ես էլ չգիտեմ՝ ինչու այստեղ եմ ընկել: Միայն գիտեմ, որ անտանելիօրէն յոգնած ու չարչարկւած եմ: Գուցէ և կատարեալ հիւանդ եմ: Խնդրում եմ ինձ մի քիչ ջուր տալ: Սաստիկ ծարաւ եմ զգում, բացի այդ, ես համարեայ երկու օր է, ինչ ոչինչ չեմ կերել, այսինքն ոչինչ չեմ ունեցել ուտելու:

Մէկ րոպէ յետոյ Հրանդը մի կաւէ ամանով ջուր բերեց: Ես անկշտում խմում էի: Հրանդը դժուարութեամբ փարչը հեռացրեց շրթունքներիցս՝ ասելով.

– Առայժմ բաւական է, յետոյ էլի կը խմես:

– Սիրելի՛ Հրանդ, շնորհակալ եմ, չափազանց շնորհակալ եմ քեզնից: Եթէ այսպիսի հրաշքի դասաւորութեամբ ինձ պատահած չը լինէիր, անկասկած, ես հէնց այստեղ մեռած կը մնայի: Այդ ջուրն կարծես ինձ նորից կեանք տւեց: Անհունօրէն շնորհակալ եմ:

– Շնորհակալ լինելու ժամանակ շատ ունես, առայժմ վե՛ր կաց, մեզ մօտ գնանք, մի կտոր բա-

ղարջ կեր և մի քիչ շունչ առ: Գուցէ մօրս յաջողուի մի բաժակ էլ թէյ տալ քեզ:

Հրանդի օգնութեամբ ես իմ ընկած տեղից բարձրացայ, ոտքի ելայ: Դժուարութեամբ քայլել սկսեցի: Առաւօտ էր: Թարմ օդն ինձ կազդուրել սկսեց: Չափազանց ուրախացայ՝ զգալով, որ եթէ չափազանց յոգնած եմ, բայց գոնէ հիւանդ չեմ:

Մենք սկսեցինք իրարու պատմել 5 օրում կրած տագնապներից և տանջանքներից: Ինչպէս իմ, այնպէս էլ Հրանդի ընտանիքը միևնոյն շփոթանքների-ցնցումներին էին ենթարկւել:

Հրանդի մայրն ու քոյրն էլ, ճանապարհի խուճապներին չը տոկալով, հիւանդացել էին: Նրանք մեզնից մի քիչ աւելի բախտաւոր էին եղել նրանով, որ փախուստից առաջ իրենց տնում մի առոյգ և կտրիճ ջորի էին ունեցել: Հրանդի հայրը կտորեղէնի վաճառական էր և Այգեստանից-Քաղաքամէջ գնալ-վերադառնալու համար, երկու տարի առաջ, գնել էր այդ ջորին:

Հրանդը պատմեց, որ իրենք էլ քիչ էր մնացել ձեռքից տային փրկարար այդ կենդանուն: Երկու գիշեր առաջ փորձել էին գողանալ և փախցնել այդ ջորուն, բայց նրա հեռատես հայրը կիսաքուն հսկելիս էր եղել և կէս գիշերին աղմուկ-աղաղակ բաձրացնելով, չէր թողել՝ կենդանուն գողանան:

Երբ ես Հրանդին պատմեցի մեր իշուկի գողութեան տխրալի պատմութիւնը, նա սկսեց իր սովորական քահ-քահ ծիծաղն և ուսիս խփելով ասաց.

– Սիրա՛ք, մենք այնքան մեր գլխին եկած նեղութեան փորձանքներից պատմեցինք, որ մոռացայ քեզ համար չափազանց ուրախալի լուրը հաղորդելու: Քեզնից յետոյ եղբայրդ՝ Կարապետը, ճանապարհ է ընկել փնտրելու և գտնելու գողացած իշուկը, որի կորուստը քեզ այնքան տանջել ու ալեկոծել է, և ի՞նչ բախտաւորութիւն:

– Ի՞նչ բախտաւորութիւն,– կտրեցի Հրանդի խօսքը,– ուզում ես ասել իշուկը գտել է:

– Այո՛, այո՛, նրան յաջողուել է գտնել գողացած կենդանուն, բայց մինչև յետ վերցնելը հոգին բերնին է հասել: Գողացող մաուզէրիստը պնդել էր, որ կենդանին վաղուց ի վեր իրեն պատկանելիս է եղել և նոյնիսկ հայհոյել ու սպառնացել է եղբօրդ: Բայց եղբօրդ բախտից, որտեղից որտեղ, նրան օգնութեան են հասել իրա դիրքում միասին կռուողներն ու գող մաուզէրիստին զորս դու պատւիրեսցիր ծեծկըռտել և տասհարւածեան ատրճանակը, որով նա այնքան երևակայում էր, ձեռքից խլելով, իշուկն էլ եղբօրդ են յանձնել:

– Հրա՛նդ, սիրելի՛ս, չես կարող երևակայել, որ այդ լուրով ինչքա՜ն ուրախ ու երջանիկ եմ: Հիմի ես հանգիստ եմ, որ քոյրս ու հայրս կը կարողանան Իգդիր հասնել:

Ինձ համար շատ կարևոր հանգամանք ունեցող այդ լուրից այնքան շատ ուրախացայ և ոգևորուեցի, որ Հրանդին գրկելով, մի քանի անգամ պինդ-պինդ համբուրեցի:

– Ձերոնք մի քանի ժամով առաջ անցած կը լինեն,– ասաց Հրանդը, ինձ բոլորովին միամիտցնելու և հանգստացնելու ցանկութեամբ: Յետոյ աւելացրեց.

– Մենք, մօրս ու քրոջս հիւանդ և սաստիկ ուժասպառ լինելու պատճառով ստիպւած եղանք յետ մնալ և մի քանի ժամով նրանց հանգստանալու հնարաւորութիւն տալ:

– Իսկ հիմա նրանք ի՞նչ վիճակի են: Ի դէպ, ձերոնք այստեղից շատ հեռու են:

– Ո՛չ, էս է մի երկու րոպէի ճամփայ է մնացել: Գիտեմ, որ չափազանց յոգնած ու սոված ես: Վստահ եմ, որ քեզ տեսնելուց շատ կուրախանան:

– Ինքս էլ մեծ բաւականութիւն կստանամ նրանց հանդիպելով,– պատասխանեցի նրան:

***

Հրանդի ազնւահոգի մայրն ու նրա անմեղսունակ և միշտ ամօթխած փոքր քոյրն ինձ տեսնելուն շատ ուրախացան: Մայրը, որն ընդհանրապէս նիհարակազմ ու վտիտ էր, ճանապարհի նեղութիւններից և մանաւանդ ցամաքեցնող փոշուց կծկւել և կմախքացել էր: Հրանդը կարճառօտ պատմեց իմ գլխին եկած փորձանքը և քրոջը խնդրեց հնարաւորին չափ շուտ մի բաժակ թէյ տալ ինձ նոր թխւած բաղարջով:

Հրանդից բաժանւելու ժամանակ նա ինձ ստիպեց վերցնել իր մօր՝ մաքուր ալիւրից, անարատ իւղից և ձւերից պատրաստած 4 կլորակ բաղարջը:

Ես հրաժարւում և չէի կամենում վերցնել՝ պատճառաբանելով, որ նրանց ընտանիքի պարէնի բաժնից պիտի կտրեմ: Բարի մայրը, մեր երկու ընկերների այո-ոչին միջամտելով, սիրալիրօրէն ասաց.

– Սիրա՛ք, բալէ՛ս, դուն ալ մեր երեխան ես, զուր տեղը կը մերժես վերցնել այս չորս կտոր բաղարջները: Մենք մինչև Իգդիր հասնելու չափ, 3 օրւայ պաշար ունենք: Անկէ վերջն ալ Տէրը մեծ է: Անհաց և անօգնական չի թողնելու մեզի: Վերցրո՛ւ, վերցրո՛ւ, բալէ՛ս: Բարեկամն ու ընկերը լէն ու բոլ օրւայ համար չեն: Ասանկ նեղ օրերու համար բարեկամ ըլլալու է:

Մօր ու որդու ստիպման տեղի տալով՝ վերցրի ինձ մագնիսօրէն քաշող և հրապուրող բաղարջները:

Մի քանի անգամ մօրից և Հրանդից շնորհակալութիւն յայտնելուց յետոյ անգին ընկերոջս հետ ջերմօրէն ողջագուրւեցի և նորից շարունակել սկսեցի տաժանելի ճանապարհս: Չափազանց ուրախ էի այս հանդիպումիս համար, քանի որ առանց Հրանդի, հաւանօրէն, ես իմ ընկած տեղից ոտքի կեցողը չէի և, ամենակարևորը, նրա համար, որ եթէ բախտի բերմամբ արթնացած և ոտքի էլ կանգնած լինէի, անտանելի դարձած սովածութիւնս նորից

ինձ գետին կը տապալէր, և ես իմ՝ յոյսերով ու անուրջներով լի երիտասարդ կեանքիս վերջնական մնաս բարովը պիտի մրմնջայի: Իմ ազնիւ ընկերը ո՛չ միայն կեանքս էր փրկել, այլև մնացած կտրելիք ճանապարհիս համար ինձ բաղարջների ուտելիքով էր ապահովել:

Իրաւամբ մտածում էի, որ ամենամեծ դժբախտութիւնն էլ յաճախ իր վերջն ունի: Ջուր չէր ուրեմն իմ ներքին ձայնի կանչը, որն ինձ մեղադրում էր յուսահատ լինելուս համար: Կայ, գոյութիւն ունի մի փրկարար տիեզերական ձեռք, որ ամենադժնդակ տարաբախտութեան և անյոյս կործանման վերջին րոպէին մեզ օգնութեան է հասնում և մեզ փրկում, ազատում է վճռական և վերջնական գահավիժումկործանումից...:

Ստացած բաղարջներս բացառիկ հոգածութեամբ տեղաւորեցի միշտ մէջքիս կրածս պայուսակում և մի քանի անգամ թերահաւատութեամբ ստուգեցի պայուսակի բերնի կարգին կապած լինելու պարագան: Վախենում էի, որ յանկարծ պայուսակիցս փախուստ տան այդ պայմաններում ինձ համար անփոխարինելի գանձ համարուող բաղարջները: Օ՜հ, մարդկային կեանքում ինչքա՜ն սարսափելի է առաջին հերթին՝ կեանքի կորուստի ահը և յետոյ՝ ապրող և շնչող մարդու համար քաղցած մնալու վախը:

ԻՄ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԽԱՆՋԵԱՆԻ ՀԵՏ

Իգդիրը՝ ռուսական ծովածաւալ երկրի սահմանամերձ գիւղաքաղաքը, ամենաուշը մէկ օրից հասնելու և տաճիկների ու քրդերի ջարդի ահաբեկումից ազատուելու յոյսը սկսել էր շողշողալ յոգնատանջ ու հալածական բազմահազար գաղթականների դէմքին: Սարսափահար եղած մարդկանց սրտերից աստիճանաբար չքանում էր նամարդ թշնամու ահաբեկման ու կոտորածի կոշմարը:

Ընդամենը մեկ-երկու օր առաջ գեհենի անիծապարտ մրրկող կրակից և նրա խեղդամահ անող ծուխ ու մուխից, գաղթ-փախուստից փրկուած գաղթական բազմութիւնները, անցնող 5 ու կէս օրերի մրրկահալած փախուստից յոգնած, ջարդուփշուր եղած, վերջապէս կարող էին մի քիչ ազատ շունչ քաշել, մի փոքր մտովին խաղաղուած հանգստանալ:

Մրրկահալած փախուստ տուող գաղթականներից մէկն էլ ես էի: Իմ հերթին ինքս էլ տենչում էի մի քիչ շունչ քաշել և հանգստանալ:

Հրանդի՝ ընկերոջս, իմ ընտանիքի մասին հաղորդած ուրախալի տեղեկութիւնը ինձ բաւական շատ հանգստացրել էր: Ես համոզուած էի, որ եթէ մինչև Իգդիր մերոնց չը հասնեմ, նրանց անպատճառ այնտեղ կը գտնեմ:

Այս ենթադրութիւնը խղճիս թեթևացում և պրկուած ջղերիս հանգստութիւն էր տալիս: Ինքս ինձ մխիթարելով մերոնց շուտով գտնելու բախտաւորութեամբ՝ Իգդիրի վերջին կայանում՝ Օրգոֆում, փնտրեցի և չուշացայ գտնելու մի համեմատաբար յարմար անկիւն քնելու և անվրդով քնով հանգստանալու համար:

Որպէսզի ապահովուած լինեմ հաւանական յափշտակում-գողութիւնից՝ փորձեցի փորիս վրայ ընկած քնել: Կուրծքիս և թևերիս տակ թաքցրի իմ ամբողջ հարստութիւնը համարուող պայուսակս և նրա մէջ տեղաւորեցի իմ եօթհարուածեան փոքր ատրճանակը:

Չեմ կարող պատկերացնել կեանքիս այդ օրերի վայրիվերումների ընթացքին այդպիսի քաղցր, անխռով և կազդուրիչ քուն: Երբ վաղ առաւօտեան մեկնող գաղթականութեան սոսկալի աղմուկ-աղաղակից արթնացայ, ինձ համար անճանաչելի էի դառել: Կարծես միանգամայն ուրիշ մարդ էի: Մանաւանդ ուրախալի էր, որ իմ փոքրիկ ունեցուածքից ոչինչ չէր անհետացել:

Օրգոֆից՝ Իգդիր հասնելուց առաջ եղած այդ կայանից, շատ լաւ տրամադրութեամբ մեկնելու էի պատրաստւում, երբ յետևիցս լսեցի ինձ կանչող մի շատ ծանօթ ձայն:

– Սպասի՛ր Սիրա՛ք,– կանչեց իմ երիտասարդութեան ամենասիրելի ընկերն ու ամենալաւ գործակիցը՝ Աղասին՝ դէպի ինձ վազելով: Իմ հերթին, շուռ գալով, նրա մօտ վազեցի:

Մենք՝ իրար շատ սիրող և շատ մտերիմ, երկու ընկերներս, գրկախառնուեցինք և մի քանի անգամ ողջագուրուեցինք:

– Ինչքա՜ն ուրախ եմ քեզ հանդիպելուս համար,– ասաց Խանջեանը:

– Կարող ես միանգամայն համոզուած լինել, որ ես էլ չափազանց երջանիկ եմ քեզ տեսնելուս համար: Իսկ ու՞ր են ձերոնք,– հարցրի նրանից:

– Հեռու չեն նրանք,– պատասխանեց Աղասին: –Հէնց հիմա մեզ կը հասնեն: Ես նրանց հետ էի: Հեռից քեզ ճանաչեցի և վազ տալով՝ եկայ: Կարող եմ ասել, որ մենք, այսինքն ինձ հետ հաշուած, մեր չորս հոգինոց ընտանիքը մեծ բախտ ունեցանք այս տանջալից անիծեալ ճանապարհին արտակարգ նեղութեան չենթարկուելու: Հայրս Վանում իր ունեցած ընդարձակ ծանօթութեան և տարբեր խաւերից յարգուած լինելու հանգամանքի շնորհիւ կարողացաւ վերջի ժամին մի լաւ ձի ձեռք բերել: Այս գործում, կարծեմ, Շաղոյեանը և Դաւիթ Փափազեանն էլ նրան օգնել են: Առանց այդ ձիուն՝ հայրս մանաւանդ մայրս ճանապարհին մնացած կը կլինէին: Ինչպէս տեղեակ ես, մայրս ոտների ռօմաթիզմով տառապում է և իրար յետևից 20-30 քայլ անելու անկարող: Առանց հօրս բարեկամների օժանդակութեանը՝ մեր, մասնաւորապէս մօրս համար անհնարին էր մինչև այստեղ հասնելը: Ասենք հօրս առող-

ջական վիճակն էլ առանձնապէս բաւարար չէ: Ինչնէ, ինչ որ պատահեց, անցաւ:

Յետոյ նոր միայն անդրադառնալով իմ մեն-մենակ լինելուն՝ հարցրեց.

– Իսկ ձերոնք ու՞ր են:

– Մերոնք...: Մենք, աւելի ճիշտ, ես այս ճանապարհին մի կատարեալ ողիսական եմ ունեցել: Ես մերոնց մի երկու անգամ կորցրել և ճարել եմ: Ներկայիս նրանց նորից կորցրել եմ:

Ընկերոջս մանրամասն պատմեցի ինձ և մերոնց հետ պատահած իրադարձութիւններից և յայտնեցի ճանապարհին մեր թաղած հարազատի մասին:

Նա խորապէս ազդուեց և անկեղծ ցաւ զգաց մեր չարչարանքների և մանաւանդ կորստի համար:

– Սիրա՛ք, սիրելի՛ս, չեմ իմանում ինչպէ՞ս արտայայտել իմ վշտակցութիւնը, ասաց նա և շարունակեց, – ի հետևանք այն սոսկալի խուճապի ու տագնապի, որին ես, դու և ամէն որոնող աչքը տեսել ենք, նման կորուստներն անսպասելի չէին կարող լինել: Տարօրինակ է ասել, որ կարծես աներևոյթ և չարագործ ձեռքեր նենգօրէն շեշտում, թանձրացնում էին այս նահանջի սարսափելիութիւնը և նրա տագնապն ու խուճապը: Ճիշտ է, ստոր թշնամու՝ թալանի ծարաւի քրդերի յարձակման ու կոտորածի ահն ու սարսափը կար, բայց մի՞թէ այս նահանջը չէր կարելի այնպէս կազմակերպել, որ այսպիսի խուճապահար փախուստի չը վերածուէր:

– Ճիշտ է, Աղասի՛,– պատասխանեցի ես, –միանգամայն ճիշտ և իրաւացի է այդ մտածելակերպը: Մի ժողովուրդ, տեսալ պարագայում մեր վանեցի հայութիւնը, որ կարողացաւ ամբողջ մի ամիս հերոսաբար պաշտպանել և դիմադրել ամէն տեսակի զէնքով և զինուորական ուժերով օժտուած և ցերեկ ու գիշեր կատաղիօրէն յարձակւող թշնամուն, տոկալ նրա կարկտի նման թափուող համազարկներին և փլատակող, այրող ու ոչնչացնող ռմբակոծումներին, ինչպէ՞ս չէր կարող խաղաղ և ապահով պայմաններում գաղթեցնել և նահանջի հանգիստ ճանապարհ բացել իրեն, հէնց իրեն համար:

– Այո՛, դժբախտաբար պիտի խոստովանել և հաստատել այն իրողութիւնը, որ մութ, անհարազատ և նենգ ձեռներ կազմակերպել են այնպէս, որ այս նահանջ-փախուստով մաշւի, հիւծւի և տրորւի մեր՝ Վասպուրականի հայ կենսունակ ազգաբնակչութիւնը: Իսկ այս ոճրագործ ծրագրում մերոնց, մեր առաջնորդ-ղեկավարներին մեղադրել, իմ կարծիքով, իրաւացի չէր լինի: Ես միանգամայն համոզուած եմ, որ այս հայակործան և դաւաճան ծրագրում էնթրիկանդ և պրովակատոր ձեռներ գոյութիւն ունեն և, առանց չափազանցութեան կարելի է ասել, որ իրենց կործանարար նպատակին հասան:

Մի քանի րոպէներ անխօս, ես և Աղասին, իրար կողքին քայլում էինք: Մեզնից իւրաքանչիւր մէկը լռելեան յանձնւել էր իր մտորումներին, որոնք իրար մօտենում ու նոյնանում էին: Երկուսս էլ մտովին մեղադրում էինք մեր անզօր և անպաշտպան ազգի կեանքի ու գոյութեան հետ նենգօրէն խաղացող տեսանելի և քօղարկուած թշնամիներին: Այդ թշնամիներից մէկը բացարձակ, օր-ցերեկով, լոյս արևի տակ խելահեղօրէն ձգտում էր մեզ կոտորել, սրբել, անհետացնել մեր սեփական հողից և մեր պապերի հազարաւոր տարիների տունն ու օջախը խլել, բռնագրաւել, իսկ միւսը գաղտագողի, անաղմուկ և սատանայական նենգութեամբ ցանկանում էր տիրանալ մեր հողին ու ջրին, մեր արևափայլ երկրին, մեր հարազատ ու ազիզ հայրենիքին, առանց մեզի և մեր նեղութեան ու գոյութեան ձանձրոյթին:

Այս տխուր և հոգեմաշ մտորումներից առաջին սթափւողը եղաւ Աղասին: Նա դրսևորեց իր մտայայտացումների շարքը.

-Վասպուրականի ինքնապաշտպանութիւնը՝ իր հերոսական, սքանչելի կերպարանքով ու բովանդակութեամբ, մեզ անգին, աննման դասեր տուեց: Դրանցից ամենաառաջինն ու ամենաթանկագինը այն էր, որ մենք՝ հայերս, ճակատագրական, վճռական պարագային կարող ենք առանց կուսակցական և թայֆայական եսի ու մարմաջի միանալ, գործակցել մեր ընդհանուր շահը միասնաբար և նւիրաձօրէն պաշտպանելու համար: Ես հիմա եկել եմ այն եզրակացութեանը, ինչպէս նախկին Արմենականների, նոյնպէս և ներկայի Դաշնակցականների շարքում Կուլօղլեանների, Եկարեանների, Թէրլէմէզեանների, Բուլղարացիների, Շաղոյեանների և բազմաթիւ ուրիշների նման հայրենասէրներ կան և շատ կան: Նախքան ապրիլեան կռիւները՝ մենք կարծում էինք, որ մերոնցից զատ, բոլոր մնացեալները թայֆայամոլ, եսական, ինքնահաւան ու անհեռատես մարդիկ են, բայց իրականութիւնն ու իսկական գործը ցոյց տւին, որ նրանք նոյնքան ջերմ, ազնիւ, հաւատաւոր հայրենասէրներ են, որքան մենք մեզի էինք հաշւում: Եթէ ճգնաժամի, տագնապի, օրհասական ազգակուլ պահին մենք և մեզ նման հայեր կարող են նրանց հետ գործակցել և նրանք էլ իրենց հերթին մեզ հետ միանալ, ի՞նչ պատճառ կայ, որ մենք ամէնքս էլ ընդմիշտ չը գործակցենք և չը ջանանք մեզ ազգովին փրկելու և ազատւելու մեր բնաջնջման տենչացող ընդհանրական թշնամիներից:

Ես սքանչանում և միանգամայն զարմանում էի Աղասու արտայայտած ողջախոհութեան և առողջ տրամաբանութեան համար: Գիտեի, որ նա այդ դժնդակ օրերին դեռ շատ երիտասարդ է՝ հազիւ 19 տարեկան: Հիանում էինք նրա համար, որ երիտասարդներս մինչ այդ կեանքին նայում էինք մեր սովորած, մեր իմացած համաշխարհային, համամարդկային մօտեցումով ու ըմբռնումով: Մենք, ինչպէս նախօրոք յայտնել եմ, այդ օրերին պատկանում էինք Սոցիալ-Դեմոկրատ ուսանողական կազմակերպութեան և տարւել էինք համաշխարհա-

յին վարդապետութեան երազանքներով: Ապրիլեան կռիւներն ու նրանց յաջորդող գաղթ-փախուստը մեզ սթափեցրել և իրական, կոպիտ իրականութեան աշխարհն էր վերադարձրել:

Ինչպէս նա, նոյնպէս և ես իրաւացիօրէն մտահան էինք արել համամարդկային ձգտումները, քանի որ նրանց հասնելուց առաջ մեզ անխուսափելիօրէն անհրաժեշտ էր մեր ժողովրդի, մեր ազգային հաւաքականութեան և նրա հետ մեր սեփական գոյութիւնը փրկելու առաջին պայմանը լրացնել: Մենք այդ օրերին և այդ պայմաններում ինչպէ՞ս կարող էինք համաշխարհային յեղափոխութեան, համամարդկային երջանկութեան երազներով օրօրուել, երբ մեզ մօտ, մեր աչքերի ներքև, մեր ոտքերի տակի հողն էին խլում, մեր կեանքն ու արևն էին խամրում և մեզ մորթելու, բնաջնջելու սատանայական ծրագիրներն էին իրականացնում:

– Այո՛, սիրելի՛ ընկեր,– ասացի՝ իմ հերթին ուղեղումս փոթորկուած մտորումներիցս սթափուած,– դու միանգամայն իրաւացի ես: Մենք պարտաւոր ենք, ներկայ պայմաններում հրաժարուել մեր երազած համաշխարհային, համամարդկային ձգտումներից և վերադառնալ այրող իրականութեանը: Մենք ստիպուած ենք ամենաառաջին հերթին մտածել մեր հաւաքական ընդհանուր ուժերի միացման մասին և ապա ձգտել ձեռք բերելու մեր ազգային գոյութիւնը փրկող անհրաժէշտ հնարաւորութիւնները:

– Իսկ այդ անհրաժէշտ հնարաւորութիւնների և պայմանների ապահովումը մի միայն մեր ընդհանուր ազգային, կուսակցական ուժերի միացումով և մեր ընդհանուր, հաւաքական ձգտումների միատեղումով միայն հնարաւոր կը լինի:

Էլի մի քանի րոպէ լռելեայն քայլելուց յետոյ ես նորից խզեցի լռութիւնը և հարցրի Աղասուց.

– Իսկ ի՞նչ ես մտածում սահմանն անցնելուց յետոյ:

– Իգդիրը, սահմանը հասնելուց յետոյ ի՞նչ պիտի անեմ: Սիրելի՛ Սիրաք, սա մի ընդհանուր հարց է, որ մեզ բոլոր գաղթականներիս հետաքրքրելու է: Այս բազմահազար հայութեան շարքերում հազարաւորներ իրենց նոյն հարցն են տալիս: Ինձ թւում է, որ Իգդիր հասնելուց, այսինքն ռուսական կայսրութեան սահմանից ներս մտնելուց յետոյ էլ մեր անբախտութեանը վերջ չի տրուելու: Կասկած չկայ, որ մեր գաղթականութեան համար նոր ողբերգութեան նոր շրջան է սկսուելու: Փախուստի այս դժոխային ճանապարհից ազատուողները նորանոր փորձանքների ու աներևակայելի դժուարութիւնների պիտի մատնուեն: Անոքութիւն, կարիք, սով, հիւանդութիւններ և վերջապէս անգործ լինելը, այս ամէնը, իրար միացած, պիտի շարունակեն հնձել ու կոտորել մազապուրծ եղած բազմութիւններից շատ-շատերին:

– Այո՛, մեր բոլորիս իսկական ողբերգութիւնը սահմանից ներս մտնելուց յետոյ է սկսուելու:

– Ինձ թւում է, մեր այս թշուառ գաղթականութեան միակ փրկութիւնը կը լինի այն, որ նրա համար ստեղծուեն այնպիսի ապահով պայմաններ, որ նա նորից կարողանայ իր հայրենիքը վերադառնալ: Իհարկէ, սա մի գեղեցիկ երազ է, և ես մեծ յոյս չ'ունեմ այդ երազի հրաշակերպ իրականացմանը: Ժողովրդական առածն ասում է «Ծովն ընկնողը շիւղին կը փաթաթի»: Այո՛, միանգամայն ճիշտ է, ծովում խեղդուողը իր փրկութեան համար նոյնիսկ փայտի տաշեղին է ապաւինում: Մենք՝ հայերս, մանաւանդ վերջին տասնամեակներում, սովորել ենք մտածել, որ մեր փրկութիւնը օտարների օգնութիւնից է կախուած:

– Եթէ, բախտի բերմամբ,– հարցրի ես,– Ռուսաստանն իր դաշնակիցների հետ այս կործանարար պատերազմից յաղթական դուրս գայ, չե՞ս կարծում, որ մեզ՝ հայերիս համար փրկութեան մի դուռ կարող է բացուել:

– Սիրելի՛ Սիրաք, ինձ անյարմար է նման խնդիրների շուրջ քեզ բացատրութիւններ տալ և ուսուցումներ կատարել, քանի որ գիտեմ՝ քո ընդհանուր զարգացման հորիզոնը ընդարձակ է: Բայց թւում է, որ այդ առթիւ, իմ կարծիքն էլ ուզում ես իմանալ: Ահա այն ինչ ես եմ մտածում. մեր դարերի թշնամին՝ թիւրքը, իր պետական կառուցուածքով հիւանդ է: Ռուսաստանն իր դաշնակիցների հետ շատ մեծ ցանկութիւնն ունեն այս «հիւանդ մարդ» կոչուած պետութեանը անդամահատութեան ենթարկել: Ճիշտ մեզ նման, Բալքանեան բազմաթիւ ազգութիւններ, տնքում և հիւծուում են այդ եսասէր ամբարտաւան և բռնակալ հիւանդի սպանիչ տիրապետութեան ներքև: Կասկած չկայ, որ այդ ստրկացած և իրաւազրկուած ազգութիւններն էլ մեզ՝ հայերիս նման օգնութեան թախանձանքի կանչ ու աղաղակով տասնեակ տարիների ընթացքին խլացրել են Անգլիային, Ամերիկային և մանաւանդ Ռուսաստանին: Եթէ այս յիշածս երեք պետութիւնները հաւանական յաղթանակից յետոյ հրաշքով համաձայնութեան գան և իրենց մասնաւոր, եսական հաշիւներով տարուած՝ իրենց քաղաքական խիղճը վաճառքի չը հանեն, անկասկած, այդ հիւանդ բռնակալը անդամահատութեան պիտի ենթարկուի, և նրա լծից, ինչպէս Բալքանեան ազգերը, այնպէս էլ մեր տանջուած հայութիւնը, պիտի ազատագրուեն:

– Այս ամէնից յետոյ, սիրելի՛ Սիրաք, ինչպէս քիչ առաջ յայտնեցի, ես ներկայիս եկել եմ այն անխախտ եզրակացութեանը, որ մեր՝ հայերիս փրկութեան և ազատագրման ամենաառաջին պայմանը կայանում է մեր ազգային բոլոր ուժերի և կուսակցական կազմակերպութիւնների համագործակցութեան մէջ: Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի՝ մեզ թողած ամենաթանկագին և անփոխարինելի կտակն է այդ:

– Ինձ համար չափազանց ցանկալի էր մտքերի այսպիսի հաղորդմամբ գոնէ մինչև Իգդիր հասնելը:

Սա սքանչելի սփոփանք կը լինէր մեզ երկուսիս համար, բայց ես ստիպուած եմ բաժանուել քեզնից, այսինքն՝ այն թանկագին ընկերոջից, որին ես միշտ երախտապարտ կը մնամ նրա տարիների ընթացքին ինձ տուած առաջնորդող ցուցմունքների համար: Ես պիտի սպասեմ և, եթէ ստիպուած լինեմ, մի քիչ յետ վերադառնամ ծնողներիս գտնելու համար: Կասկածում եմ, որ մօրս ռոմաթիզմի ցաւերի կրիզիս նորից սկսած լինի:

Մենք համբուրուեցինք, մի քանի անգամ համբուրուեցինք: Կարծես երկուսս էլ բնազդօրէն նախորդում և ափսոսում էինք, որ այլև իրար հանդիպելու բախտաւորութիւնը չենք ունենալու:

ՄԻՆՉ ԱՅԴ ԱՆԾԱՆՕԹ ՄԻ ԶԳԱՑՈՒՄ

Խանջեանից անհուն ափսոսանքով բաժանուելուց յետոյ երկու ցանկութիւն ունէի՝ մերոնց գտնել և հանդիպել Անուշին: Պիտի խոստովանեմ, որ նոյնիսկ փախուստի տանջալից րոպէներին ես Անուշին մտահան չէի արել: Ես այն ժամանակ ինձ չէի կարող համոզել, թէ ինձ մագնիսական զօրութեամբ դէպի Անուշը քաշող հակումին ի՞նչ անուն կարելի էր տալ:

Մարօին ես սիրում էի, շատ էի սիրում, բայց այդ սէրը հարազատի անխառն ու անարատ սէր էր, յար և նման իմ քոյր Արաքսու նկատմամբ տածած սէրին: Բայց Անուշի նկատմամբ իմ տածած սէրը, կարծես մի քիչ տարբերւում էր առաջին երկուքի նկատմամբ ունեցած սիրուց: Անուշի սէրն աւելի ոգևորող, աւելի կենդանի և աւելի առինքնող էր:

Նահանջի այդ դժբախտ օրերին ես մօտենում էի իմ տարիքիս 20-րդի լրացմանը: Միայն երկու ամիս էր մնում ինձ թեակոխելու ծննդեանս 20-րդ տարին:

Ապրիլեան կռիւներից առաջ՝ բնութեան ինձ շնորհած երիտասարդական գիտակցական ժամանակաշրջանում, իմ արտադպրոցական բոլոր ազատ ժամերը նուիրել էի կարդալու, գրելու և մանաւանդ մեր ուսանողական կազմակերպութեան դասախօսութիւնները, ժողովներն ու կազմակերպչական գործերը կարգադրելու համար:

Անուշենց փոքրաթիւ ընտանիքի հետ մերոնք հեռաւոր ազգականութիւն ունէին, գուցէ տարին մի անգամ միայն մեր այս երկու ընտանիքների հանդիպումը յաջողւում էր: Փախուստից առաջ՝ վերջի տարում, երբ ես Երամեան դպրոցն աւարտելուց յետոյ նոյն դպրոցում ուսուցիչ դարձայ, մի քանի անգամ ես ինձ համարձակութիւն ներշնչեցի առանց մերոնց ընկերակցութեան մէն-մենակ Անուշենց տուն գնալու: Սկզբում շատ էի զգուշանում, նոյնիսկ վախենում էի նրանց մօտ՝ Սահակ աղային հանդիպելու: Չգիտեմ ինչու՞, նա ինձ վրայ պահպանողական, նոյնիսկ բռնակալ հօր տպաւորութիւն էր թողել: Բայց հետզհետէ այդ տպաւորութիւնը մեղմացաւ և ես վերջի 2-3 անգամ, նրանց մօտ գնալու համար, համարձակ և անվախ էի դարձել:

Ես շատ էի ցաւում, որ փախուստից առաջ չէի կարողացել հանդիպել և նրանց մեր ընտանիքին միացնել, մանաւանդ որ Սահակ աղան, ռուսների շուտափոյթ վերադարձի վրայ յոյս դնելով, կտրականապէս մերժել էր կնոջն ու աղջկայ հետ միասին գաղթելու:

Ամէն րոպէ և ամէն տեղ ես շարունակ տենչում էի Անուշին իր մօր հետ գաղթի ճանապարհին հանդիպելու: Այդ ցանկութիւնը, անյաջողութեան փոխուած, ինձ չափազանց մտատանջում և միտքս չարչարկում էր:

Ես շատ էի տխրում իմ անյաջողութեան համար: Չէ՞ որ ես բազմաթիւ անդամներ յետ ու առաջ ընկայ և ուշադրութեամբ ու անվերջ փնտրեցի և՛ մերոնց, և՛ նրանց: Ի՞նչ ձախորդութիւն, բախտի ինչպիսի՞ դասաւորում էր, որ ինձ չէր յաջողւում նրանց գտնել:

Մտորումներիս մէջ կլանուած, գաղթող բազմութիւնների աղմուկ-աղաղակներին անհաղորդ, անպայման թանձր քուլաներով բարձրացող փոշու մէջ կորած՝ շարունակում էի քայլել, առաջ ընկնել: Երբեմն աճապարեցնում և երբեմն էլ դանդաղեցնում էի քայլերս: Յոգնածութիւն չէի զգում, թէև իրականում անչափ յոգնած և չարչարկուած էի: Ի՜նչ նոր, աներևոյթ մի ուժ մեքենայաբար քշում, առաջ էր գլորում ինձ: Մէկ ժամ, կէս ժամ, 10 րոպէ, մէկ խօսքով, ինչքան կարելի էր շուտ, ուզում էի Իգդիր հասնել: Տարօրինակ, մինչև հիմա անծանօթ մի զգացում, թաքուն մնացած մի տենչանք ամբողջ էութիւնս համակել էր: Այդ տենչանքը, այդ փոթորկող կարօտը հոգիս մաշում, կրծում էր:

Քայլերս արագացնում էի: Զարմանում էի իմ մէջ այդքան արագընթաց կատարւող փոփոխութեան վրայ: Գիտէի, որ չափազանց յոգնած, բէզարած պէտք է լինեմ, բայց հետզհետէ շտապեցնում էի քայլերս: Մի՞թէ իմ երկօրեայ բաժանումը ընտանիքիցս կարող էր այդքան մեծ տագնապ առաջացնել իմ ներքին աշխարհում: Այդ բաժանու՞մն էր պատճառը, թէ՞ ուրիշ կարօտակէզ զգացում: Ինձ մօտ ես ամաչում էի ճշմարտութիւնը խոստովանելու:

ԻԳԴԻՐՈՒՄ

Ֆիզիկապէս բոլորովին ջարդ ու փշուր և հոգեպէս չափազանց ընկճուած՝ նահանջի 7-րդ առաւօտեան ես Իգդիր էի հասել: Իմ միակ ցանկութիւնն այն էր, որ կարողանայի մի տեղ, մի խաղաղ անկիւն ճարել իմ յոգնաբեկ մարմնիս և յուսահատ հոգուս գոնէ մի քիչ հանգստութիւն և անդորրութիւն տալու համար:

Մինչև Իգդիր հասնելը՝ գերագոյն ճիգ էի ի գործ դրել, լարել ամբողջ ուժերս, որպէսզի, ինչքան կարելի է շուտ, այդ ցանկալի հանգրւանը հասնեմ:

Աճապարում, տնքում, տագնապում էի այդտեղ հասնելու համար: Բայց ափսո՜ս, շատ ափսո՜ս, ես կատարելապէս ուժասպառ էի եղել և միմիայն մտածում էի հանգստանալու և քնելու համար:

Փախուստ-գաղթի ոտքով կտրած ճանապարհի անթիւ ցնցումներն այնպէս տանջել էին ինձ, որ հակառակ ինձ այրող փափագին, ի վիճակի չէի նոյնիսկ մի քայլ անել, ուր մնաց ծրագրածս փնտռտուքը կատարել:

Գաղթականների անթիւ, անհաշիւ բազմութիւնները լցրել էին Իգդիր կոչուած այդ գիւղաքաղաքի տները, կտուրները, փողոցներն ու այգիները, հասարակաց հիմնարկները, բուլվարն ու թէյատները, մէկ խօսքով, ամէն տեղ և ամէն անկիւն: Ես անկոչ հիւրի նման խցկուեցի և կուչ եկայ առաջին հանդիպածս մարդկանց խմբաւորման կողքին:

– Աղջի՛ Աշխէն, էդ պարոնին ասա՛՝ իրա համար մէկ ուրիշ տեղ փնտրի: Առանց ինոր մենք էստեղ, բանտի մէջ ինկածի պէս, խեղդուած ու շնչակտուր ենք էլել:

– Հայրի՛կ, աղաչում եմ, իրաւունք տուէք մի փոքր շունչ քաշեմ,– պատասխանեցի բողոքող գաղթականին:

– Ես բոլորովին հիւանդ ու բէզարած եմ: Մի քիչ յետոյ, վեր կը կենամ և կը հեռանամ:

– Չես տիսնա ա՜յ մարդ, էսա խեղճի ջանին նֆաս չի մնացե: Իրիսի կոյն էլ հեռ իրնից, մեռելի կոյնի: Թող մէ քիչ նաֆաս առնի, էլնի էրթայ իր պանին, կուշտեց կինն իր մարդուն:

Սրտապնդուած ամուսնուն կշտամբող բարի կնոջ պաշտպանութիւնից՝ կուչ եկայ նստած տեղումս և ապա վախվխելով՝ գետին պարզուեցի: Մարդը շարունակում էր մրթմրթալ, բայց ես, դեռ նրա երկու խօսքը չը լսած, մրափի էի մտել:

Այդ արտակարգ աղմուկ-աղաղակի ժխորի մէջ ես վստահաբար շատ աւելի երկար կը քնէի, եթէ հովանաւորող բարի կինը, իմ անտէրութեան վիճակին կարեկցելով, ինձ ուժով չ'արթնացնէր:

– Վե՛ր կաց ա՜յ բալամ, վեր կա՛ց: Մի՞թէ դու տէր ու տիրական, հէր ու մէր, ընտանիք չունե՞ս: Վե՛ր, վե՛ր, առտանից մինչև կէսօրւա էս ժամին, քաղցած, ծարաւ վեր ես ինկած: Վե՛ր էս մէկ բաժակ չայը խմի, մէկ նաֆաս քաշի: Մէկ պատառ էլ հաց-պանիր չայիդ կողքին դրած եմ, էն էլ հետը կեր:

Ես մեծ ճիգ գործ դնելով, զարթնեցի: Աչքերս տրորեցի: Ճակտիս վրայ խառնիխուռն թափուած և փոշեկոլոլ եղած մազերս ձեռքովս յետ տուի: Նստեցի և աշխատեցի միտքս կենտրոնացնել՝ որոշելու համար ներկայ վիճակի սկիզբն ու պատճառը: Վերջապէս յիշեցի, որ Իգդիրումն եմ, որ անասելի նեղութիւններով վերջապէս ինձ այստեղ եմ հասցրել և որ երբ յոգնաբեկ, հանգստանալու համար այստեղ նստել էի ուզում, նախատական խօսքեր լսեցի, բայց բոլորովին ուժաթափ լինելուս պատճառով չկարողացայ հեռանալ և անմիջապէս մրափի մատնուեցի: Փա՜ռք բարեգութ Աստծուն: Ամենադժբախտ և ամենալքած մարդուն միշտ օգնութեան է հասնում և փրկութեան ճանապարհին է առաջնորդում: Նոյն այդ գերբնական էակն էր՝ այդ գթառատ կնոջն իմ ճանապարհին հանդիպացրեց ինձ օգնելու և վշտերս մի փոքր ամոքելու համար: Փա՜ռք այդ ամենազօրին:

Անհուն երախտագիտութեան զգացումով սեղմեցի բարեսիրտ կնոջ ձեռքը և շնորհակալութիւն յայտնելով՝ հեռացայ և իմ հարազատների փնտրտուքը սկսեցի:

***

Փնտրտուքս երկար, շատ երկար տևեց: Ենթադրում էի Իգդիրի հայոց եկեղեցում, դպրոցում, հաւաքական ընդհանուր վայրերում հանդիպել մերոնց: Մութն ընկել էր, դեռ շարունակում էի մերոնց յետևից ման գալ: Ժամեր տևեց այդ սրտամաշ փնտրտուքը: Մերոնք չկային: Անուշն ու իրա մայրն էլ չկային: Իմ անբախտութիւնից բարեկամի, ծանօթի, մեր թաղեցիներից և ոչ մէկի հանդիպեցի: Նորից եկեղեցին վերադարձայ՝ յոյս ունենալով այդ տեղում մի լուր ձեռք բերել: Չէ՞ որ հայրս քահանայ էր և անկարելի էր, որ այստեղ հասնելուց յետոյ, եթէ ոչ մի բանի կարիք ունեցած էլ չը լինէր, գոնէ աղօթքի եկած կը լինէր:

Եկեղեցում, ինչպէս ասում են, ասեղ գցելու տեղ չկար: Գաղթական ընտանիքներ կողք-կողքի, առանց նոյնիսկ մի մատ միջանցք թողնելու, ամէն տեղ բռնել էին, և որովհետև գիշերուայ ժամի 10-ից անց էր, համարեայ բոլորը յոգնած և բէզարած քնել էին:

Փնտրտուքս նորից շարունակելը զուր համարեցի: Մանաւանդ նորից ինձ յոգնեցնելու հաւանականութիւնից սարսափում էի: Բարւոք համարեցի մի յարմար անկիւն գտնել և մինչև առաւօտ քնելով՝ ինձ ըստ հնարաւորին կազդուրել: Հրանդի մօր՝ ինձ տուած բաղարջներից միայն մէկն էր մնացել: Պայուսակիցս հանեցի այդ իմ վերջին յոյսն ու ապաւէնը եղող պարէնը, ճիշտ երկու հաւասար կէսի բաժանելով՝ մէկը կերայ: Խորոված գառնուկի մսի նման այդ բաղարջի կէսն ինձ համեղ թւաց: Այնչափ ախորժակ ունէի մնացեալ կէսն էլ կուլ տալու, բայց արտակարգ ճիգ ի գործ դրի փորձութեան չենթարկուելու ո՞վ գիտէ, դեռ ի՞նչ քաշելիքներ ունիմ: Ի՜նչ նեղութիւնների և կարիքների պիտի հանդիպեմ: Գուցէ յաջորդ օրն էլ ինձ չը յաջողի մերոնց գտնել: Նոյնիսկ եթէ բախտս ժպտալու լինէր, և մերոնց հանդիպէի, ի՜նչ գիտեմ, ո՞վ է իմանում, գուցէ նրանք էլ ուտելիք չունենան: Եւ շատ հաւանական է՝ չունենան: Մեզ նման գաղթականները ո՞րտեղից ուտելու պաշար պիտի ունենան:

ԹԱՓԱՌՈՒՄ ԵՒ ՓՆՏՐՏՈՒՔ

Հաջորդ առաւօտ՝ շատ կանուխ, դեռ արևածագից առաջ, արթնացայ: Ֆիզիկական ուժերիս լրիւ քայքայման վախը սարսափեցնում էր ինձ: Ընդհանուր յոգնածութիւն, տեղիցս չը բարձրանալու և ոտքի կանգնելու ցանկութիւն բացակայութիւնը՝ ահա իմ վիճակը:

«Սիրա՛ք, դու կորած կը լինես, նախ քեզ, յետոյ նրա համար, որին դու այդքան ջերմօրէն ձգտում ես, եթէ չ'ապաւինես կամքիդ ուժին: Ամենափոքր յուսալքում վերջնականապէս կը տապալի քեզ և վերջ կ'տայ քո երիտասարդ ծաղկող գոյութեանը և նրա հետ կապած ապագայ երջանկութեան երազանքին»,– նորից լսում էի նոյն ներքին փրկարար կանչը, նորից ինձ կեանքի, մարտնչող կեանքի հրաւիրող կոչը:

Աներեր վճռականութեամբ ընկած տեղիցս բարձրացայ և պատասխանեցի ինձ կեանքի կռւի հրաւիրող կանչին՝ այո՛, ես ապրել եմ ուզում:

Արևածագը մօտենում էր. Ամառային կապուտակ անամպ երկինքը՝ ծագող արևի ոսկեհուռ ճառագայթումներով, շողշողում էր: Օդը մաքուր և կենսատու էր: Վերջապէս փրկւել ենք գաղթի ճանապարհի անտանելի թանձր ու կեղտոտ փոշուց:

Թափառում և փնտրում էի մերոնց: Մի տեղում հարիւրաւոր կանանց ու աղջիկների հաւաքած տեսայ: Մօտեցայ: Նրանք իրարու հրմշտկում էին: Փայտեայ կիսակլոր ճօռօթանից ջուր էր թափւում: Ըստ երևոյթին, խմելու ջուր էր այդ: Թափւող ջուրը խղճալիօրէն քիչ էր: Այդ իսկ պատճառով ջրի շուրջ հաւաքած կանանցից և աղջիկներից իւրաքանչիւրն աշխատում էր հերթը խլել միւսներից:

– Ամա՜ն Աստուած, էլ էս ի՜նչ դժբախտութիւն է,– բարձրաձայն բողոքում և գանգատւում էր մի տարէց կին, – էս մէկ պուտ ջրի համար քիչ կը մնայ՝ իրար սպանեն: Բա, ափսոս չէր մեր Վան քաղաքի գետի պէս վազող զուլալ աղբիւրները: Վա՜յ, վա՜յ մեզի, ի՜նչ օրի ընկանք: Անիծւես դու, տաճի՛կ, որ մեր գլխէն էդ աստծու բերքն ու բարիքը չը կտրէր ու մէզ էս բախտին չը գցէր:

– Մի՛ յուսահատւիր, մայրի՛կ ջան,– փորձեցի սրտապնդել ցաւատանջ կնոջը, շուտով շատ շուտով նորից կը վերադառնանք մեր խօրոտիկ Վանն ու նորից բոլբոլ կը խմենք անոր անուշահամ ու զնգան աղբիւրների ջրերէն:

– Վա՜յ, մայրիկը մեռնի քո բերնին: Բերան չի, աւետարան ի: Ճի՞շտ կըսես, եարաբ կէլնի էդ երջանիկ օրը:

– Կէլնի, մայրի՛կ, անպատճառ կը գայ այդ երջանիկ օրը:

Մի քիչ յետոյ յուսահատ հարցրի.

– Մայրի՛կ ջան, ներողութիւն, եթէ կարելի է, ասա՛, ե՞րբ էք այստեղ հասած:

– Էսօրուայ խետ հաշւած երեք օր ի: Ի՞նչ կայ բալէ՛ս: Բալքի կորցրա՞ծ ունես:

-Ճիշտ այդպէս, երեք օր է, որ մեր ընտանիքը կորցրած եմ: Կը փնտրեմ, կը փնտրեմ, բայց չեմ կարող անոնց ճարել: Հայրս քահանայ է: Ս. Յակոբայ եկեղեցու քահանան էր:

– Վա՜յ նանէդ չը քօռանա: Ս. Յակոբայ կարմրամիրուս տէրտէրը քո խէ՞րն ի:

– Այո՛, մայրի՛կ: Մի՞թէ դու կը ճանչնա՞ս այդ տէրտէրը, որտե՞ղէն կը ճանչնաս:

– Բա՛, ինչպէ՞ս չեմ ճանչնայ: Մենք Ս. Յակոբայ եկեղեցու ծուխն ենք: Կարմրամիրուս տէր Յարութիւնը մեր տէրտէրն էր:

Առանց անդրադառնալու իմ ներսում եռացող անհանգստութեանը, նա սկսեց պատմել, շաղակրատել և ի միջի այլոց գովել հօրս բարեմասնութիւնները:

– Բայց, մայրի՛կ, ինձ հետաքրքիր է իմանալ այս քանի օրերը տեսած կամ հանդիպա՞ծ ես անոնց, թէ՞ ոչ:

Խօսակիցս չ'ուզեց անմիջապէս պատասխանել: Նա ուզում էր մի բան ասել, բայց երևում էր, որ տատանւում է: Մինչ այդ իմ արեան շրջանառութիւնը յանկարծակի արագացաւ, և սիրտս արագօրէն բախել սկսեց: Մի՞թէ հօրս մի դժբախտութիւն է պատահել: Սպասումի ամէն վայրկեան ինձ համար անտանելի էր:

– Ես հօրդ էրկու օր առաջ տէսա: Խեղճ մարդը խիւանդ էր: Կասէր փորլուծ ունի: Մի՛ վախէնայ, բալէս: Էսա մեր գաղթականների կէսից աւիլին էտա անիծած փորլուծն են պռնե: Կնա՛յ էտա ծառաստան, էն էրկէն ղալամստանը, էնտեղ խիւանդանոց են շինե: Բժիշկ ու ճար կայ, ինոնց կը նայեն կը խնամեն: Մի՛ վախէնայ, աստուած ողորմած ի:

Այլևս չ'սպասեցի: Ամէն ինչ պարզ էր: Խեղճ հայրս չէր կարողացել տոկալ գաղթի ճանապարհի կեղտախառն փոշիներին և անտանելի յոգնածութեանը, լուծմունքի, դիզենտերի էր ընկել: Իմ կանգնած տեղից մինչև սանիտարական վրանները քիչ-քիչ մէկուկէս կիլոմետր էր: Իմ յոգնատանջ վիճակում հազիւ կէս ժամից կը հասնէի: Մինչ վրանների ճանապարհը բռնած՝ ուզում էի ինչքան կարելի է շուտ հասնել, սկսեցի մտածել և մտատանջւել քրոջս ու եղբօրս համար: Եթէ հօրիցս զատ նրանք էլ լուծմունքով վարակւած լինեն, ի՞նչ պիտի անեմ: Այն ժամանակ մեզ կորած կարելի է համարել:

Վերջապէս հասայ սանիտարական վրանները: Ամբողջ մարմնովս արտասվոր սարսուռ անցաւ: Այսքան շատ վրաններ: Նրանց շարքը համարեայ մի կիլոմետր էր: Մի՞թէ այսքան շատ հիւանդներ կան պառկած այս վրանների ներքևը: Սա ի՞նչ պատուհաս է:

Առաջին պատահած սանիտարուհուն դիմելով՝ հարցրի.

– Էսօրուայ խետ հաշւած երեք օր ի: Ի՞նչ կայ բալէ՛ս: Բալքի կորցրա՞ծ ունես:

– Ներողութիւն, օրիո՛րդ, ումնի՞ց կարելի է տեղեկանալ պառկած հիւանդների մասին: Կարծում եմ, որ հայրս էլ այս վրաններից մէկի տակը հիւանդ պառկած պիտի լինի:

– Այս կողմից գնացէ՛ք այն երեք առանձնացած վրանները: Ամէն օր առաւօտեան հիւանդներից ողջ մնացածների ցուցակը հերթապահ հիւանդապահի մօտ է լինում:

– Մի՞թէ հիւանդներից մեռնողները շատ կան,– հարցրի տագնապահար և վախեցած:

Հիւանդապահը, ակնապիշ և զարմացած իմ հարցումից, ինձ ոտքից մինչև գլուխը չափելով, իր աջ ձեռքը թափ տուեց և առանց պատասխանելու՝ շարունակեց իր ճամփան:

Խեղճ, թշուառ վանեցիներ, ամբողջ մի ամիս բարբարոս ու վայրագ թշնամուն կարողացաք դիմադրել և ձեզ ողջ-առողջ ազատել, որպէսզի անպատմելի տանջանքներով փախուստի ճամփան կտրելուց յետոյ գայիք այս օտար և անհարազատ հորիզոնի ներքև մեռնելու համար:

Անկարող եմ նկարագրել այն սոսկալի տագնապը, որ սկսեց փոթորկել հոգիս:

Դէպի հիւանդապահի ցոյց տուած երեք վրաններն էի ուզում գնալ, բայց ծունկերս ծալծլուում էին, ինձ հազիւ ոտքերիս վրայ էի պահում: Մի քանի քայլ առաջ էի գնում, բայց գետինը չընկնելու համար, ստիպւում էի կանգ առնել: Նորից մի քանի քայլ, և նորից պարտադիր սպասում: Վերջապէս մի կերպ ինձ հասցրի ցոյց տուած վրաններին: Ներս էի ուզում մտնել, բայց կարծես վախենում էի: Սիրտս նորից բաբախել էր սկսել:

Իսկ եթէ յանկարծ հերթապահն ինձ յայտնէր, որ այդպիսի անունով պառկած հիւանդ չկայ, ի՞նչ պիտի անէի: Արդեօ՞ք պիտի կարողանայի դիմանալ, հարւածի ուժգնութեանը զսպել: Մտայ առաջին վրանը և դիմելով խարխլած և օրօրւող մի հին սեղանի մօտ նստած, համեմատաբար տարիքոտ մի կնոջ, ըստ երևոյթին, հերթապահին, հարցրի.

– Ներողութիւն, կարելի է իմանալ՝ ո՞ր վրանի տակն է պառկած հայրս՝ Յարութիւն քահանայ Սարհադեանը:

Հերթապահը, իր սեղանի վրայ անկարգօրէն թափթփւած բազմաթիւ թերթերը կարգի բերելով և նրանցից մի քանիսի վրայ գրւած անունները կարդալով, թղթերը դէն շպրտեց և ասաց.

– Մի՞թէ այդքան հեշտութեամբ կարելի է գտնել ձեր հօր անունը: Պէտք է մի քանի հարիւր անուններ կարդալ՝ ձեր հօր անունը ճարելու համար: Ժամանակ էլ չունենք նրանց այբբենական ցուցակը պատրաստելու համար: Ասում էք՝ ձեր հայրը դիզենտերիա ունի՞, հապա ինչպէ՞ս էք իմանում այդ մանրամասնութիւնը, բայց նրա տեղը չէք իմանում:

Եւ առանց իմ բացատրութեանը սպասելու՝ ասաց.

– Դիզենտերիայով պառկած հիւանդները գտնւում են 26-րդ վրանից մինչև 50-րդը: Եթէ ձեր հայրը ողջ է մնացել, նրանցից մէկն ու մէկի մէջն է:

– Շնորհակալութիւն,– ասացի՝ խեղդելու համար դժգոհութեանս արտայայտութիւնը և առանց հարցումի և սպասումի վրանից դուրս գալով, ուղղուեցի դէպի ցոյց տրւած և համարակալւած վրանները:

ԸՆՏԱՆԻՔԻՍ ՄՕՏ

Չնայած ծայրահեղ յոգնածութեանս, առանց ամենափոքր սպասումի և հանգստի, դիմեցի ցոյց տրւած վրանները: Ոչ խիտ ծառաշարքի կողքին՝ դաշտանման մի վայրում, մի շարքով, իրար կողքին, ամրացւած էին հիւանդների վրանները:

Կէսօրը մօտենում էր: Ամառային արևը կիզում էր, մրրկում էր: Քայլում և յառաջանում էի մեծ դժւարութեամբ: Մի երկու անգամ, ոտներիս ցրիւ եկած կօշիկներիս պատճառով, գետնի վրայ կուտակւած հող ու փոշիների մէջ մխրճւելով, ցած ընկայ: Նորից բախտս անիծելով և տնքալով՝ շարունակեցի քայլել:

«Արդեօք այս մեր տանջանքն ու չարչարանքը երբևիցե վերջ կունենա՞յ, թէ՞ ո՜չ»,– հարցնում էի ինքս ինձի: Վրաններից քիչ հեռաւորութեան վրայ գաղթական խմբակներ կային: Անկասկած հիւանդ ունեցողների դժբախտ ընտանիքներն էին: Ողբալի էր նրանց վիճակը. ամէն տեսակի փալասներով, շորերով, սաւաններով, կիզիչ արևից պաշտպանւելու նպատակով իրենց համար ծածկոց-ապաստարան էին սարքել:

Վերջապէս մօտեցայ այն վրաններին, որոնց ներքև արիւնահոս լուծմունքով վարակւած հիւանդներն էին պառկած: Չնայած բացօթեայ լինելուն՝ նրանցից փչում և տարածւում էր սիրտ խառնող գարշահոտութիւն: Ի՜նչ ահռելի, անտանելի վիճակ էր: Այս պայմաններում մի՞թէ հիւանդ կարող է ապաքինւել և համատարած աղէտ-մահից ազատւել:

Մահւան սպառնալիքից փախուստ տւող խեղճ վասպուրականցիները իրական մահւան աղէտի անգութ ճանկերում գալարւում են: Ի՜նչ սոսկալի և անխուսափելի վախճան է այս: Ի՜նչ անիծապարտ ճակատագիր: Երբ ես յոգնածութիւնս, անճարակութիւնս և ամէն ինչ մոռացած՝ այս տխուր մտորումներին էի յանձնւել, յանկարծական մի ճիչ-կանչից սթափւեցի: Այդ ճչոցով կանչողն իմ քոյրն էր՝ Ադաքսին:

Նա բաւական հեռից ինձ ճանաչել էր և շնչակտուր վազում էր դիմաւորելու:

– Եղբա՛յր ջան, անուշի՛կ եղբայրս, որտե՞ղ ես մնացել: Մենք քեզ սպասելով մեռանք,– ասաց ու ինձի փաթաթւելով՝ ամուր գրկեց և փոշեկալած երեսներս տասնեակ անգամներով համբուրեց: Փո-

խաղարձաբար նրան կրծքիս սեղմելով՝ իմ հերթին անկուշտ ու կարօտակէզ համբուրեցի:

Երբ մի քանի րոպէ յետոյ մեր մի քանի օրուայ բաժանման կարօտին մի կերպ յագուրդ տուինք, հարցրի.

– Արաքսի՛ ջան, ինչու՞ համար այս դժոխքն էք ընկել:

– Ի՞նչ դժոխքի մասին ես խօսում, ախպէ՛ր ջան: Մի քիչ սպասելուց և ինձ ոտքից գլուխ նայելուց յետոյ՝ աւելացրեց.

– Լաւ, մենք ենք դժոխք եկել, բայց դու հօ դժոխքից չես եկած: Այս ի՞նչ հալի ես ընկել: Ի՞նչ օրի են ընկել քո այս կօշիկներն ու հագուստները: Ինչու՞ այսքան նիհարել ու բեզարել ես:

Մինչ ես պատրաստւում էի մի յարմար պատասխան ճարելու, քոյրս սկսեց դառնագին լացել: Նրա արցունքի կաթիլները թափւում էին առատօրէն իր՝ բոլորովին դժգունած այտերի և հագուստի վրայ:

– Մենք հէնց այն օրւանից,– շարունակեց նա լացակումած,– երբ մեր տնից ու այգուց դուրս եկանք, դժոխքը մտանք: Սև էլնէր էն օրը, որ մենք ստիպւած եղանք թողնել մեր հօրն ու մօր ազիզ, անման օջախը:

Նա լացում էր երեխայի նման: Լացում էր աղիողորմ ու ողբագին: Լացում էր սրտամորմոք ու սրտամաշ:

Ես նորից գրկեցի նրան, սղմեցի գիրկս, համբուրեցի և ջանացի կիսակտուր խօսքերով, որոնց ճշմարտութեան ինքս էլ համոզւած չէի, մխիթարել և գուրգուրել նրան:

Երբ մի քիչ հանգստացրի քրոջս, հարցրի հօրս առողջութեան մասին:

– Այսօր մի քիչ աւելի լաւ է: Աղիքների գալարումն ու ցաւերը մեղմացել են: Եթէ չը լինէր նրան դարմանող ազնիւ բժիշկը, հայրս, հեռու իրանից, անկասկած մեռած կը լինէր: Բայց այս հայ բժիշկը շատ բարեխիղճ ու պատւական մարդ է: Հօրս ու նրա նման հիւանդների համար նա կարծես երկնքից ուղարկւած մի փրկարար հրեշտակ լինի:

Մի քիչ յետոյ, քրոջս հետ մտանք հօրս պառկած վրանը: Աստւած իմ, ի՜նչ ողբալի, ի՜նչ թշւառ էր իրար կողքին թափւած այդ հիւանդների վիճակը: Համարեայ բոլորը պառկած էին կեղտոտ փալասների վրայ: Շատ քչերին էր վիճակւել պառկելու մի կեղտոտ ներքնակի վրայ: Ճերմակ սաւան կոչւող առարկան գոյութիւն չունէր: Լուծմունքի գարշահոտը տարածւել էր ամենուրեք: Քոյրս կամացուկ ականջիս փսփսաց, որ 2-3 օրում այս վրաններից տասնեակներով մահացողներին դուրս են տարել և մի ընդհանուր գերեզմանափոսում թափելով՝ թաղել են:

Մօտեցանք հօրս պառկած տեղին: Նրան պատւել էին մի ներքնակով և մի բարձով: Անչափ գունատ և նւազած տեսք ունէր: Ինձ տեսնելուն պէս աչքերը լայն բացեց և խռովկան ու հազիւ լսելի ձայնով գանգատւեց.

– Սիրա՛ք, տղա՛ս, ինձ էլ անտէր թողիր, որ մեր դժբախտ Հայկանուշի նման բէմուրազ մեռնեմ: Որտե՞ղ ես մնացած: Ա՜խ, ինչքան շատ տանջւեցինք այս անիծեալ ճանապարհին: Այս բոլորից յետոյ կարծես մեր չարչարանքը քիչ էր, այս հիւանդութիւնն ալ վրան հասաւ, որ մեզի սպանի ու հանգստացնի:

– Այդ հիւանդութիւնը քեզ չի սպանելու, վստահ եղի՛ր, սիրելի՛ հայր: Ես չեմ թողնելու, որ դու այս անտէրութեան մէջ մնաս: Հէնց հիմա բժշկից կը խընդրեմ, որ թոյլատրի քեզ այստեղից անմիջապէս հեռացնելու: Այստեղ մնալ բոլորովին անօգուտ և նոյնիսկ վտանգաւոր է:

– Ես այլևս չեմ կարող այս դրութեան մէջ շարունակել ոտքով ճանապարհ գնալ: Ես կատարելապէս ուժաթափ եմ և նոյնիսկ տեղիցս շարժւելու անկարող:

– Այդ մասին անհոգ եղի՛ր, սիրելի՛ հայր: Ոտքով ճանապարհ շարունակելու վախը թող քեզ չը սարսափեցնի: Մի կերպ կ'անենք, եթէ ֆուրգօնը չը յաջողւի, սայլով կը փոխադրենք քեզ:

Ով ուզում է ապրել, ինչքան կարելի է շուտ, այստեղից պէտք է փախուստ տայ:

ԴԷՊԻ ԷՋՄԻԱԾԻՆ

Վճռել էի հօրս, ինչքան հնարաւոր է, շուտ հեռացնել արիւնոտ լուծմունքի, աղիքային տիֆի և ջերմասպան մալարիայի կենտրոն-դժոխք դարձած Իգդիրից:

Մահամերձ հօրս, կմախքացած քրոջս և տենդատանջ եղբօրս վիճակն ինձ ստիպեց յանդուգն եզրակացութիւն հանելու: Տրամաբանօրէն այն եզրակացութեան եկայ, որ եթէ իմ բախտահալած ընտանիքի մնացորդ այս երեք անդամները մի քանի օր էլ մնան և ապրեն այս սպանիչ պայմաններում, անկասկած, մահւան երախում կուլ պիտի գնան և ինձ անտէր ու որբ պիտի թողնեն:

Հօրս վրանից դուրս գալուց ես քրոջս հարցրի այդ ազնիւ բժշկին ե՞րբ կարելի է հանդիպել: Նա յայտնեց, որ կէսօրից յետոյ՝ ժամի 5-7-ը, նա հիւանդներին այցելութեան է գալու:

Եւ իսկապէս ուղիղ ժամի 5-ին նա իր այցելութիւնները սկսեց: Կէս ժամ անց նա հօրս վրանն էր գալիս: Գզգզւած և պատառոտւած իմ հագուստներով ու կօշիկներով ինձ համարձակութիւն ներշնչեցի, նրան մօտենալով, խնդրել որ հօրս վրանից հանելու և փոխադրելու իրաւունք տայ մեզ:

– Բայց այս դրութեան մէջ,– ասաց նա, – ձեր հօր տեղափոխումն ու հեռացումը հաւասար է նրան մահւան դատապարտելուն: Խելօք գործ չէ այդ:

– Յարգելի դոքտոր, շատ և շատ ներողութիւն եմ խնդրում, որ համարձակւում եմ ձեզ հետ համաձայն չը լինել: Չը գիտեմ ինչու՞, ինձ թւում է, որ եթէ

հայրս մի երկու-երեք օր էլ մնայ այս վրանում, անկասկած պիտի մահանայ: Քոյրս ինձ պատմեց ձեր հոգածութեան և անձնուիրութեան մասին, բայց ես համոզուած եմ, որ եթէ չ'արտօնէք հօրս հեռացումը, նա այս կեղտի, գարշահոտութեան, այս մշտահաղորդ վարակման միկրոբների կուտակման մէջ պիտի մեռնի:

Դեռ երիտասարդ բժիշկը իր վճիռը տալու տատանման մէջ ընկաւ: Յետոյ իր սեռեռուն հայացքը քրոջս և ինձ վրայ գամելով՝ ասաց.

– Ձեր հայրը ձեզ համար շատ աւելի սիրելի ու անփոխարինելի է, քան ինձ համար: Եթէ դուք անպայման ցանկանում էք նրան այստեղից հեռացնել, ես չեմ ընդդիմանայ: Նրա համար երեք օրւայ անհրաժէշտ օշարակ և մի քանի դեղահատ կը տամ: Աստուած ձեզ հետ:

Անչափ ուրախացած բարեսիրտ բժշկի կարեկցական համաձայնութիւնից, և չնայած իմ անսահման յոգնածութեանը, քրոջս խնդրեցի եղբօրս օգնութեամբ հօրս վրանից դուրս բերելով՝ նրան իր հագուստները հագցնել, մինչև իմ վերադարձը:

– Արաքսի՛ ջան, ես գնում և ամենաուշը մինչև մէկ ժամ կը վերադառնամ: Ես կաշխատեմ մի ֆուրգօն, եթէ չը յաջողուի, մի սայլ վարձել և այստեղ գալով ձեզ փոխադրել Իգդիր և այնտեղից էլ Էջմիածին: Ափսոս, որ իմ ունեցած դրամը շատ քիչ է:

– Սիրա՛ք, բոյիդ մատաղ, չը լինի որ նորից օրերով անհետանաս: Վստահ եղիր, եթէ այս անգամ ուշանալու լինես, վերադարձիդ քրոջդ մեռած կը գտնես:

– Արաքսի՛, էլի սկսեցիր երեխայական խօսքեր ասել: Քեզ խօստացայ մէկ ժամից վերադառնալ և անպատճառ խոստումս կը կատարեմ: Վստահ եղիր, քոյրի՛կս:

Իգդիրում ֆուրգոն գտնելն անկարելի եղաւ: Ասենք ֆուրգօն շատ կար, բայց նրանց վարձը միանգամայն առասպելական էր ինձ համար: Ամբողջ իմ ունեցածը թրքական մէկ ոսկի և մէկ մէջիդիէ էր, մինչդեռ ֆուրգօնի վարձը մինչև Էջմիածին, երկու ոսկի էր:

Ի վերջոյ ես ստիպւած եղայ մի սայլ վարձել՝ տիրոջը խոստանալով, Էջմիածին հասնելուց, կէս ոսկի և մէկ մէջիդիէ վճարելու:

Սայլապանը, ինձ ոտից գլուխ չափչափելուց և իմ կօշիկների ու հագուստի անմխիթար վիճակը տեսնելուց յետոյ, պահանջեց ամբողջ վարձը էս գլխից կանխիկ ստանալ: Ես ստիպւած նրան իմ ունեցած մէկ ոսկին ցոյց տուի և համոզեցի, որպէս կանխավճար, վարձքի կէսը ստանալու:

Իգդիրցի սայլապանին բացատրեցի, որ հայրս լուրջ հիւանդ է, և մեզ անհրաժեշտ է անմիջապէս մէկնել Էջմիածին՝ յոյս ունենալով այնտեղ հօրս դարմանելու: Սայլապանը, 50 տարեկանոց, հանգիստ բնաւորութեան տէր մի մարդ էր թւում: Նա, նորից շատ խորհրդաւոր հայացքով ինձ զննելով, ասաց.

– Տղա՛ս, մեր ամէնուս ճակատագրի տէրն ու տիրականը Աստուած ինքն է: Ինչպէս կամենայ, այնպէս էլ կը տնօրինի: Եթէ հօրդ ճակատին գրւած մահւան օրը հասած չլինի, չի մեռնի, անհոգ կաց: Իսկ եթէ...

Նա ըստ երևոյթին ինձ վշտացնել չ'ուզեց և խօսքը կիսատ թողնելով, համարեայ հրամայաբար ինձ կարգադրեց.

– Նստի՛ր կողքիս, քանի որ վռազում ես, գնանք ձերոնց նստեցնելու: Ասում ես, քեզ հետ, ձերոնք 4 հոգի՞ են: Եթէ աւելի շատ լինեն, մեր պայմանը բօզմիշ կեղնի: Տւածդ փողն էլ մէջտեղից կերթայ:

– Վստա՛հ եղիր, բարեկա՛մ, ինչ որ ասել եմ, ճիշտ եմ ասել:

Վրանների մօտ հասնելուց անմիջապէս յետոյ հօրս սայլի վրայ տեղաւորեցինք, և մենք երեք հոգիս էլ մի կերպ տեղաւորւեցինք: Բարեբախտաբար, սայլի վրայ կողքերը պատսպարող և երեք քառորդ մետր բարձրութեամբ փայտից շրջանակ կար: Սայլին կապւած ձին առոյգ և արագավազ էր: Մեր գաղթի ճանապարհին առաջին անգամ լինելով՝ ինձ հանգիստ և միամիտ էի զգում: Նախ այն պատճառով, որ ինձ յաջողւել էր հօրս ստոյգ մահից ազատելու և երկրորդ, որ պատահմամբ մեզ վիճակւել էր ժիր և արագավազ ձիով քաշւող սայլ վարձել:

***

Իգդիրից Էջմիածին ճանապարհւելուց առաջ սայլապանը գնաց իր ձիու համար գարի առնելու, իսկ մեզ էլ խորհուրդ տւեց հօրս լուծմունքի առաջը կապելու համար թարմ ու քաղցր մածուն հայթայթել և ջրային մասը քսակով քամելուց յետոյ նրան կերցնել, իսկ ջրի փոխարէն թունդ թէյ խմեցնել: Նրա այս խորհուրդը բաւական օգնեց հօրս, բայց ես միշտ համոզւած էի, որ նրան վրանի տակից այդ անտանելիօրէն կեղտոտ մթնոլորտից ազատելն ու օդափոխութեան ենթարկւելը նրա ապաքինման գլխաւոր երաշխիքն էին:

Այսպէս թէ այնպէս, քրոջս ասելով, հօրս առողջական վիճակը դէպի լաւն էր գնում: Չնայած սայլի անվերջ ցնցումներին՝ հօրս աղիքային գալարումներն ու փորլուծի ճնշումը մեղմացել էին, և դիմադրական կարողութիւնը համեմատաբար ուժեղացել էր: Սայլապանը, երբ իմացաւ, որ հայրս քահանայ է, աշխատեց աւելի զգոյշ անցնելով՝ սայլի ուժեղ ցնցումների առաջն առնել:

Մենք շուրջ 16 ժամից յետոյ յաջողեցինք Էջմիածին հասնել: Առաւօտ էր, և մենք ուրախ էինք, որ լոյս աչքով ի վիճակի կը լինենք մեզ համար մի յարմար տեղ ճարել:

Սայլապանը մեզ տարաւ դէպի Էջմիածնի Մայր Տաճարի շրջապատը: Մենք ապշահար եղանք՝



Սուրբ Էջմիածնի վանքը

գաղթականութեան անհաշիւ բազմութիւնների խճողումը տեսնելով: Այդ մոլոր ու շփոթ բազմութիւնները ալեկոծ ծովի իրար յետևից կուտակւող և գահավիժող ալիքների նման ծփում և տարուբերւում էին: Մարդկային կատարեալ քաոս էր: Մեծ ու փոքր, այր ու կին, երեխա ու ծեր և յաճախ տնային կենդանիներ, բոլորը խառնւած և իրար գլխին լցւած էին: Կանչն ու աղաղակը, լացն ու հայհոյանքը, կովերի բառաչն ու էշերի զռոցն իրար էին խառնշտկւած, և տեսնողը ենթադրում էր, որ այս բազմութիւնները նոր նահանջ-փախուստի են պատրաստւում:

Սայլապանին մնացորդ վարձքը վճարելով և շնորհակալութիւն յայտնելով՝ ճանապարհեցի:

Մայր Աթոռի վանքապատկան շրջաններն ու ծառաստանները ծովածաւալ գաղթականութեամբ լցւած էին: Մեծ նեղութեամբ մեզ յաջողւեց վանքից բաւական շատ հեռու մի տեղ ճարել և մեր ընտանիքի՝ դեռ ձեռքից չը տւած երկու մետրանոց փալասանման կտորը գետնին փռելով նստել: Փալասից զատ, Արաքսին մեծ նեղութեամբ իր մէջքին կրել էր գունաւոր չթից երկու կտոր սփռոցներ:

Մենք զգուշութեամբ մեր հօրը պառկեցրինք փալասի վրայ և նրա յոգնատանջ ու կմախքացած մարմինը ծածկեցինք սաւաններից մէկով:

Մեր ապրած տանջալից և դժբախտ օրերից յետոյ մենք վերջապէս բախտ ունեցանք, թէկուզ մի քանի ժամով, հանգիստ շունչ քաշելու: Անկասկած, այլևս նամարդ թշնամու կրնկակոխ հետապնդումից և ընչաքաղց քիւրդ աւազակների յարձակումների վտանգից ազատւել էինք:

Ամէն տեսակի բախտաւոր յոյսերից ամայացած մեր սրտերը մշուշապատ ապագայի ենթադրական սպասումներով սկսել էին բաբախել: Մանաւանդ մեր հօր կեանքին սպառնացող վտանգի նւազումը մեզ մի տեսակ անուշ սփոփանք էր տալիս:

Գիշերը վրայ էր հասել, և մենք որևէ հնարաւորութիւն չունէինք գաղթականներին բաշխւող նպաստից օգտւելու: Դժբախտաբար, մեզ մօտ ուտելիք էլ չէր մնացել: Բացի մեր հիւանդից, միւս երեքս էլ բոլորովին քաղցած էինք: Բարեբախտաբար, ինձ շնորհւած բաղարջների ամենավերջին կէս կտորը դեռ մնացել էր պայուսակումս: Բացառիկ գոհունակութեամբ և յաղթական պարծանքով այդ գոհարանման կտորը դուրս բերի և քրոջս տալով՝ ասացի.

– Արաքսի՛, երեք մասի բաժանի՛ր: Քաղցից չը մեռնելու համար կարծեմ սքանչելի դեղահատ կը լինի այս կէս բաղարջը մեզ համար: Իսկ քամած մածնի վերջին կտորն էլ հօրս տուր:

Յաջորդ առաւօտը՝ շատ կանուխ, մենք բոլորս էլ զարթնել էինք: Եթէ մեր ծայրահեղ յոգնածութիւնը չը լինէր, քաղցած լինելու պատճառով քնել չէինք կարողանայ:

Մեր ընտանիքի ունեցած հարստութիւնը ենթադրում էի, որ ինձ մօտ մնացած կէս ոսկին էր: Եթէ մենք ուզենայինք այդ գումարով շաբար, թէյ, հաց ու

պանիր առնել, շատ-շատ երկու օրուայ ուտելիք կարող էինք ապահովել: Իսկ յետո՞յ...

Հօրս համար մի բաժակ թէյ և մի քիչ էլ մածուն էր պէտք: Բարեբախտաբար, օդափոխութիւնը, ազատ և համեմատաբար մաքուր օդը և անցնող գիշերուայ փոքր հանգստութիւնը նրան մի քիչ կազդուրել էին: Ներկայիս նրա համար գոնէ մի բաժակ թէյ շատ անհրաժէշտ էր:

Մեզնից ոչ հեռու և մեզ նման գետնի վրայ օթևանող գաղթական մի ընտանիք, որը մեզնից աւելի շուտ հասած և տեղաւորուած էր, պրիմուս ճրագի վրայ թէյ էր եռացնում: Մենք անհամարձակ և գաղտագողի նրանց կողմն էինք նայում և մեր մտքում նրանց երանի տալիս, որ շաքար ու թէյ և հաւանաբար հաց էլ ունեն:

– Արաքսի՛, փորձի՛ր նրանցից մի բաժակ թէյ խնդրել մեր հիւանդ հօր համար,– թելադրեցի քրոջս:

– Ամօթից կը մեռնեմ: Երեսիցս չի գալիս խնդրել և յետոյ ամենից անյարմարն այն կը լինի, որ կարող են մերժել:

– Իրաւացի ես: Այս արտակարգ պայմանները մարդկանց եսասէր և քարսիրտ են դարձրել:

Յետոյ եղբօրս դիմելով՝ ասի.

– Վե՛ր կաց, եղբա՛յր, Վանքը գնանք: Այնտեղ հաւանաբար մեզ կը յաջողուի գտնել մի գաղթականական մարմին, որ պարտականութիւն կունենայ օգնելու մեր նմաններին: Վե՛ր կաց, շուտ գնանք: Եթէ մինչև կէսօրը չը կարողանանք պարէն ստանալ, բոլորս էլ քաղցից կը կոտորուենք:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Կէս ժամից յետոյ մեզ յաջողուեց գտնել Էջմիածնի գաղթականական նպաստամատոյց մարմնի կենտրոնատեղին: Անկարելի է նկարագրել ծովածաւալ գաղթականների խճողումն ու իրարանցումը: Ոչ ոք չէր մտածում միւսներին, իր նման թշուառներին ամենափոքր զիջում անելու: Քաղցած մնալու սարսափը բոլորին զրկել էր մարդկային ամենատարրական զգացումներից: Հրում, հրմշտկում, ցած էին գլորում, կոխկռտում էին իրարու:

Նպաստամատոյցի պաշտօնեաների և նրանց օգնող մարդկանց ազդարարութիւնները, սպառնալիքները, գոռոց-բղաւոցները, հերթի կանգնելու և հերթով յառաջանալու վերաբերեալ անօգուտ էին անցնում: Ամէն մէկը ճգնում, աճապարում էր մի ոռպէ շուտ «նպաստամատոյց»-ի դռնից ներս սահել և իր պարէնը ստանալ:

Ամբողջ չորս ժամ հրում-հրմշտկումների, ճզմում ճխլտոցների ենթարկուելով, վերջապէս ինձ ու եղբօրս յաջողուեց նպաստամատոյցի արքայութեան դռնից ներս ընկնել: Մեզ ամէն մէկին մի կտրոն (կուպոն) տրուեց: Մեր բոլոր խնդիր թախանձանքները հաստատելու համար, որ մեզնից զատ, մեր ընտանիքում, երկու ուրիշ շունչ ևս ունենք, որոնք մեզ նման պարէնի կարիք ունեն, միանգամայն անօգուտ անցան: Մեզ պատասխանեցին՝ այս քանի օրերում տեղի վերայ քննութիւններ են կատարուելու, և ամէն հոգուն մէկ կուպոն է տրուելու:

Մեր չորս ժամեայ քրտնաթոր մաքառումներից յետոյ մեզ յաջողուել էր ստանալ 2 քիլոյանոց կլոր հացեր, 100 գրամ շաքար, և 20 գրամ թէյ: Կէսօրուան մօտերը ճակատամարտից վերադարձող հերոսների նման ես ու եղբայրս, հացով և շաքար ու թէյով զինուած, մերոնց մօտ վերադարձանք:

Քոյրս, որին յաջողուել էր մի քանի անգամ կարմրկտելուց և գունատուելուց յետոյ իրեն համոզել, որ հարևան գաղթականներից հիւանդ հօրս համար մի բաժակ թէյ խնդրի և ստանայ, մեզ՝ երկու եղբայրներիս, հացի ու շաքարի թանկարժէք պարէնով «զինուած» տեսնելով, ուրախութիւնից վեր-վեր ցատկոտել սկսեց:

Թէյ սարքել կարողանալու համար պրիմուս և նաւթ էր պէտք, որ չունէինք: Ասենք՝ մենք ապրուստի անհրաժեշտ միջոցներից բոլորովին զրկուած էինք: Վանից, մեր տնից վերցրած թեթև իրեղեններ, ճանապարհի անհամար դժուարութիւնների և խուճապի հետևանքով թափել և ձեռքից տուել էինք: Էջմիածին հասնելիս մեր ամբողջ ունեցած իրեղենները բաղկացած էին երկու կտոր գունաւոր չիթ սփռոցից, մէկ կտոր 2 մետրանոց փալասից, մէկ փոքր փարչիկից, ջուր խմելու համար պահուած, և պղնձեայ փոքր թէյնիկից ու երկու բաժակներից: Մենք բառի բուն նշանակութեամբ տկլոր գաղթականներ էինք:

Արաքսին, իր երկու եղբայրների յոգնածութիւնը նկատի առնելով, սկսեց դէսից-դէնից ծառերի չորացած կեղև ու ճիւղեր հաւաքել նրանցով ջուր եռացնելու և թէյ պատրաստելու համար: Ժամի մէկին քոյրս մեզի հիւրասիրեց մեր ստացած պարենի կէսով:

– Ստիպուած ենք կէս փոր կշտանալ,– ասաց: –Մնացածը գիշերուայ համար եմ պահելու: Վաղն առաւօտեանը ինքս էլ ստիպուած եմ ձեզ հետ պարենը ստանալու համար գալու:

– Եթէ էգուց էլ այսօրուայ նման ժամերով ճզմելով, ճխռտուելով հերթի պիտի կանգնենք միայն մի օրուայ պարենի այդ ողորմելի քանակն ստանալու համար,– մրթմրթացի ես և ապա հոգուս խորքից վիրաւորուած տոնով աւելացրի.

– Դժբախտաբար այսօր նկատեցի, որ պարենաւորման գործածումն էլ չորի ու թացի պատմութիւնը գոյութիւն ունի: Մինչ մենք, ժամերով հրմշտկուելով ու ճխրտուելով հերթի սպասելով, մեզ պարենաբաշխի «արքայութեան դռնից» ներս խցկեցինք, ուրիշները, առանձնաշնորհեալ և հովանաւորուած դասակարգին պատկանող «գաղթական» կոչեցեալները, միւս կողմի մենաշնորհեալ մուտքից շատ հանգիստ և առանց ամենափոքր

Վասպուրականցի գաղթականությունը Էջմիածնի մատույցներում

խուճապի, իրենց ձեռքում ունեցած խորհրդաւոր տոմս-կարտերով ներս էին գալիս և իրենց առատօրէն տրուած կամ բաշխուած պարէնով բեռնաւորուած՝ դուրս էին գնում: Այսպիսի պարենաբաշխումը ստորութիւն և խաբեբայութիւն է:

– Շատ մի՛ վշտանայ որդի՛ս,– նւաղած ձայնով ասաց հայրս,– այդպիսի անարգ խտրականութիւն ու անխիղճ վերաբերմունք պիտի լինի: Մենք ամեն տեղ պարծենում ենք, որ կուլտուրական, յառաջադէմ և գովելի առաւելութիւններով օժտուած ազգ ենք: Ինչու՞ ուրեմն այսպիսի ճակատագրական օրերին մենք մեր հաւաքականութեան արժանիքը ոտնակոխենք և մեր իրաւունքների փոխադարձ յարգանքը չունենանք:

– Յոյս ունեմ,– նոյն նւաղած տօնով շարունակեց հայրս, որ այս սև օրերը շուտով կանցնին, տէր մի արասցէ, որ մեր ազգը մուրացկանութեան վարժուի: Հայ ժողովրդի համար նպաստով ապրելն անպատուութիւն է: Մեր ազգը մուրացիկ ըլլալու համար ծնուած չէ: Հայ ժողովուրդը չարքաշ, ժրաջան, աշխատասէր և ստեղծագործ է: Այո՛, այս սրտաճմլիկ օրերը շուտով կանցնին, և մեր ժողովուրդը նորէն կապացուցէ իր արժանապատուութիւնը և ցոյց կըտայ իր ստեղծագործ կարողութիւնը. նա նորէն պատուով իր հացը կաշխատի: Ես այդ մասին ոչ մի կասկած ունիմ:

– Ամէն պարագայում մենք այս անորոշ և մուրացիկ դրութեան մէջ մնալ չենք կարող,– ասացի մերոնց: – Ես գնում եմ հնարաւոր տեղեկութիւններ ձեռք բերելու, որպէսզի խորհենք մեր անելիքի մասին: Ես կաշխատեմ շուտ վերադառնալ:

ԽՈՅՍ ՏԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Մերոնց մօտ վերադառնալով նրանց աշխատեցի համոզել ժամ առաջ Էջմիածնից խոյս տալու մասին: Համառօտ պատմեցի մի քանի ժամում տեսածներիցս ու լսածներիցս:

– Մեր տարաբախտ գաղթականութիւնը նոր ահռելի փորձանքի է ենթարկւել: Խուճապահար նահանջը յանգել էր իր աղետալի, կործանիչ հետևանքներին: Յոգնաբեկ եղած բազմութիւնները մահացու հիւանդութիւնների ճանկերում գալարւում են և ոչնչանում: Ճահճալից կեղտոտ ջրերը, որոնցից նրանք ստիպւած են եղել խմել, նրանց մալարիայով, դիզենտերեայով և աղիքային տիֆով վարակւել են: Խճողում, անմաքրութիւն, կեղտ փոշի, ոջիլ, ուտելիքների կեղտոտութիւնն ու հնութիւնը, սնուցման անբաւական և աննպաստ պարագան, մէկ խօսքով այս բոլոր չարիքները միացած, անգթօրէն և անխնայ հիւծել և առատօրէն հնձում են թշնամու՝ կրակից ու սրից գլխապատառ փախուստ տուած մեր դժբախտ գաղթականութիւնը: Մանաւանդ աղիքային արիւնալից տիֆը սարսափելի աւերածութիւն է կատարում: Անխտիր մեռնում են

Վասպուրականցի գաղթականությունը Էջմիածնի մատույցներում

ծծկեր մանուկները, երեխաները, պատանիներն ու երիտասարդները և տարեցները: Ճիւաղային գերանդին աննկարագրելի հապճեպով հնձում և թաւագլոր է անում հարիւրաւոր դժբախտների: Մեռնողների հարազատները լաց ու կոծով ու խենթանման իրենց գլուխները ծեծկելով՝ մեռելաքաշ սայլերին ու ֆուրգոններին են յանձնում իրենց անզուգական ազիզ բալաներին, իրենց տխրութեան և ուրախութեան օրերի անփոխարինելի ամուսիններին, իրենց ջիգար հօր ու մօրերին: Մեռնողների թիւն այնքան շատ է, որ չեն հասցնում նոյնիսկ նրանց հողի տակ թաղելու: Ասում են, նրանց դիակները ժողովրդի տեսողութիւնից հեռացնելով, փոսերի և առուների մէջ են թափում:

Վերջապէս մեր կենսունակ, ստեղծագործող ժողովրդին ողջ-ողջ թաղելու, ողջ-ողջ խեղդամահ անելու, կործանելու և անհետացնելու սատանայական և լրբենի ծրագիրն որոճացող ամէն տեսակի թշնամիները սրիկայաբար յաջողեցին իրագործել իրենց բնաջնջման ծրագիրը և նրանից խլել նրա հարազատ երկիրը, նրա հերոսների արիւնով ներկուած հայրենիքը:

Չգիտեմ իմ նկարագրութեան տխուր տպաւորութեա՞ն, թէ՞ իմ յուզմունքի ազդեցութեան տակ մերոնք սկսել էին լռելեայն արտասուել: Քոյրս, որ մեր մէջ ամենից զգայուն ու բարակասիրտն էր, սկսեց հեկեկալ: Զգացի, որ իմ աչքերիցս էլ արցունքի կաթիլներ են թափւում:

Երբ մենք մեր արցունքով կարողացանք մեր այրուած սրտերը մի քիչ հովացնել և հանդարտուել, եղբայրս ընկճուած տօնով հարցրեց.

– Իսկ ի՞նչ ենք անելու մենք:

– Մենք ի՞նչ ենք անելու: Վերջի վերջոյ մենք ամենքս էլ այդ հարցին ենք գալու, պատասխանեցի և մի փոքր տատանումից յետոյ աւելացրի.

– Իգդիրից սկսած մինչև Էջմիածին, ամբողջ շրջանները, գիւղերը, մինչև Սարդարաբադ, մինչև Արարատեան դաշտն ու բարձրաւանդակները, սրանց մէջ հաշուած Երևանն ու Ղամարլուն և մէկ խօսքով այս շրջաններում ամենուրեք տարածուել են գաղթականական բազմութիւնները: Եթէ չասենք անկարելի, անկասկած, չափազանց դժուար է նրանց գոյութեան սպառնացող վարակիչ հիւանդութիւնների բուժումը և մանաւանդ նրանց պարենաւորումը: Ես մտածում եմ օր առաջ, նոյնիսկ ժամ առաջ թողնել Էջմիածինն ու հեռանալ դէպի Թիֆլիս:

– Ինչ լաւ է ասում Սիրաքը, չէ՞ որ մեր եղբայր Արմէնն էլ այնտեղ է: Մենք նրա մօտ կիջևանենք և մի քանի օր նրա մօտ մնալով՝ հանգստութեամբ և առանց վռազելու, մեր անելիքը կորոշենք: Բռաւо, եղբա՛յր Սիրաք, ի՞նչքան լաւ ես մտածել,– ոգևորուած բացականչեց քոյրս:

– Ես էլ համաձայն եմ,– մեզի համախորհուրդ եղաւ եղբայրս:

– Ես ալ չեմ առարկեր,– ասաց հայրս,– բայց ես սրտանց կը ցանկանայի տեսնել մեր այս պատմա-



Հարազարների դիակներով շրջապատված Վասպուրականցի կին Էջմիածնում

կան Էջմիածնի Մայր Տաճարն ու Վանքը: Ես կուզենայի անոր տաճարի կամարներու տակ ծնկաչոք աղօթել երկա՜ր, շատ երկար: Աղօթել այս թշուառ տարագիրներու և մեզ համար: Բայց այս անիծեալ հիւանդութիւնն ինձ մաշած ու չորացրած է: Ոտքով երկու քայլ ճանապարհ երթալու հնարաւորութիւն չունեմ:

Մի քիչ յետոյ մտորելով աւելացրեց.

– Զաւակնե՛րս, եթէ բախտի դասաւորութեամբ մեր ազգակիցներից մէկին՝ քրոջս կամ ձեր մօրաքրոջը հանդիպէի, ես կը մնայի, իսկ դուք կերթայիք Թիֆլիս...

– Այդ բոլորովին անկարելի է,– ասաց քոյրս: –Այս հիւանդ ու հիւծուած վիճակում մենք չենք կարող քեզ որևէ մէկին վստահել: Մեր սիրելի հարսի ցաւն ու մրմուռը մեզ հերիք է: Լեզուս պապանձուի, եթէ որևէ նոր դժբախտութեան հանդիպելու լինենք, ես ոտքերիս վրայ կը չորանամ: Ինչ տեղ, որտեղ էլ գնալու լինենք, պէտք է միասին լինենք:

– Արաքսին միանգամայն իրաւացի է,– լրացրի ես: – Բացի այդ պարագան, որ մեր հօրից բաժանուելը մեզ համար անկարելի է, քեզ այստեղ, այս ընդհանուր վարակումների շրջանում թողնելն էլ մեր կողմից յիմարութիւն կը լինի: Դեռ չը լաւացած հիւանդութիւնը նորից կը կրկնուի և անխուսափելի վտանգի կենթարկի քեզ:

Հայրս այնքան գունատուել և կմախքացել էր, որ ես դժուարութեամբ կարողացայ նկատել նրա դժգոյն դէմքի վրայ ուրուագծուող դառն և վշտաբեկ ժպիտի հետքերը: Նա, ցաւատանջ տխրութեամբ գլուխը շարժելով, ասաց.

– Ուրեմն մենք այնքան անբախտ ենք, որ այս տանջանքների ու Գողգոթայի երկար ճանապարհը ոտքով կտրելուց յետոյ էլ չենք կարողանալու մեր ամբողջ կեանքի մէջ երազներով ցանկացած Ս. Էջմիածնի Մայր Տաճարը գոնէ մէկ անգամ տեսնել և մեր մուրազն առնելուց առաջ անմխիթար մեռնել:

– Մեզնից շատ աւելի հաւատացեալը մեր հայրն է,– խօսեց եղբայրս,– նա կրօնաւոր է և իրաւունք ունի այս բոլոր նեղութիւններին ենթարկուելուց և այստեղ՝ Էջմիածնի սրբավանքի գմբէթների մօտ հասնելուց յետոյ գոնէ մի անգամ այցելել Մայր Աթոռի Տաճարը և ջերմեռանդ աղօթելով՝ իր երկար տարիների փափագն առնել: Այդ պարագային մենք ստիպուած ենք մէկ-երկու օր էլ մնալ այստեղ, մինչև մեր հայրը կարողանայ իր կարօտն առնել:

ՆՈՐԻՑ ՓՆՏՐՏՈՒՔ

Ես էլ եղբօրս առաջարկին համաձայնեցի մերոնց՝ Մայր Աթոռից կէս կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող ծառաստանում և երկնասլաց բարդիների տակին մի երկու օր ևս մնալուն:

Ինձ տանջում էր գլխաւորապէս այն միտքը, որ այս ընդհանուր թոհուբոհին մէջ անկարելի կը լինէր գոնէ մի անգամ հանդիպել իմ և յարգած և շատ սիրած անձնաւորութիւններին:

Հիվանդություններից և սովից մահացած վասպուրականցիներ «փրկության ափ» Էջմիածնում

Էջմիածին հասնելուց անմիջապէս յետոյ մենք հազիւ յաջողել էինք գտնել մի պատահական անկիւն մեզ մի կերպ ծարելու համար: Երկու գիշեր մենք այդ տեղում անտուն ու կիսավայրենի գնչուների նման իրար կողքին սեղմուած, քնոտել էինք: Մեր բարեբախտութիւնը կայանում էր նրանում, որ այդ անտուն և անտերունջ օրերն զուգադիպել էին ամառային տաք գիշերներին, այլապէս, առանց նոյնիսկ մի վերմակի և ներքնակի, միանգամայն կորած կը լինէինք: Ճիշտ է, ցերեկւան մրրկող արևը մեզ չափազանց անհանգստացնում էր, բայց գիշերների անապատան վիճակը մեզ չէր սարսափեցնում:

Քոյրս ինձ յայտնեց, որ Իգդիր հասնելով՝ նրանք առաջին հանդիպող իգդիրցիներից մէկին մեր «փրկարար» իշուկին 25 մանէթով ծախել էին և այդ խղճուկ գումարն անձեռնմխելիօրէն իր մօտ էր մնացել: Ինձ յանձնելով այդ փողը՝ խնդրեց, եթէ հնարաւոր է վանքին աւելի մօտիկ մի տեղ ճարել և մի սայլ վարձելով՝ հօրս փոխադրել: Այդպիսով, մենք մեր հիւանդ հօր ցանկութիւնը կատարած և նրան հնարաւորութիւն տուած կը լինէինք Մայր Տաճարը տեսնելու: Ապա յանձնարարեց մեզ՝ քաղցածներիս համար մի քիչ ուտելիք գնել, քանի որ եթէ նոյնիսկ մեզ պարեն տալու լինէին, նախկին անգամայ նման անբաւական պիտի լինէր, և նորից կիսաքաղց մնայինք:

Քրոջս յանձնարարութիւններն և հօրս ցանկութիւնը կատարելու վճռականութեամբ մեծ եղբօրս հետ ուղևորուեցինք դէպի վանքը: Մեծ յոյս ունէի, որ գաղթականների խճողումը թեթևացած կը լինի, բայց ցաւասիրտ նկատեցի, որ դրութիւնը մնում է նոյնը:

Բազմութեան շարքերը վանքի շուրջ կարծես աւելի խտացել էին: Իրար խառնուած և իրարու գլխին թափոտած էին մարդիկ: Գիւղացի գաղթականներն էլ խառնուած էին իրենց հետ բերած կովերի, ոչխարների, այծերի և էշերի հետ: Նոյնիսկ բաց երկնքի տակ հիմնական աղբի գարշահոտութիւնը սրրտխառնուք էր պատճառում:

Էջմիածնի և շրջակայքի տեղական ազգաբնակչութիւնից փոքր առևտրականներ և չարչիներ, գաղթականների շարքում թափառելով, առուծախս էին անում և յաճախ չէին խուսափում այդ թշուառների օրհասական և անօգնական վիճակից չարաչար օգտուել: Նրանց շատ թանկ արժէքներով հաց, շաքար, թէյ, մածուն, պանիր էին ծախում և նրանցից չափազանց էժան արժէքով նրանց ունեցած վերջին անասուններն ու իրերն էին գնում: Գաղթականները յաճախ նրանց հետ վէճի ու կռի էին բռնուում և նրանց անխղճութեան համար հայհոյանքներ և անէծքներ էին տալիս:

Այդ շրջիկ-փերեզակներից մէկից մեզ յաջողուեց 5 մանէթով 5 հատ լաւաշ հաց, մի քիչ մածուն և մի փոքր կտոր պանիր առնել: Մեր՝ երկու եղբայրներիս կարծիքով մեզ ուտելիք ծախողը համեմատաբար բարեխիղճ էր, և մենք շատ ուրախ էինք մեր յաջող գնումի համար:

– Կարապե՛տ եղբայր, մեր առած պաշարով մենք մէկ օր եօլա կը գնանք: Բարի՛ եղիր այդ ուտելիքի պաշարով մերոնց մօտ վերադառնալ, իսկ ես, մի քիչ ման գալով, կաշխատեմ վանքի մօտիկ շրջանում մի յարմար տեղ գտնել: Ո՞վ գիտէ, պատահաբար մեր ծանօթ-բարեկամներից մէկին էլ հանդիպեմ:

Եղբօրից բաժանուելուց յետոյ մտածեցի հնարաւորին չափ շատ ման գալ, շրջել ամէն տեղ և փնտրել նրանց, որոնց գտնելու և տեսնելու անսահման ցանկութիւն ունէի: Մինչև մութ ընկնելը մօտ երկու ժամ էր մնում: Փնտրտուքիցս իմ ցանկացած արդիւնքի մասին մեծ յոյս չունէի: Միւս կողմից չէի ուզում ինձ ներել, որ խիղճս միշտ ինձ պիտի տանջի, եթէ ամէն ճիգ ու ջանք ի գործ չը դնեմ նրանց գտնելու համար:

Իմ փնտրած անձնաւորութիւններին երկու բոլորովին տարբեր դասի էի բաժանում: Այդ երկուսից մէկն ու մէկին չէի ցանկանում նախապատուութիւն տալ: Դրա համար էլ բախտի բերման էի թողել:

Չգիտեմ ինչպէս բացատրել: Մի նախազգացո՞ւմ, թէ՞ մի ենթադրութիւն ինձ ասում էր՝ Սիրաք, եթէ այս տեղերում քեզ չյաջողի գտնել նրանց, ապա նրանք քեզ համար միանգամայն կորած և անհետացած լինելու են:

Ինչքան ծանր և անտանելի էր կորուստը բոլոր նրանց, որոնց նկատմամբ մարդս իր հոգում, իր սրտում յարգանքի ու սիրոյ զգացումներ է սնուցել օրերի, ամիսների և տարիների ընթացքին:

Բաժանում, կորուստ, անհետացում... ինչքան անգութ ու անսիրտ բառեր են: Ուրեմն ինձ համար կորած և անհետացած պիտի լինեն տարիների իմ սիրելի ու մտերիմ ընկերները: Ուրեմն այլևս բախտ ու երջանկութիւն չը պիտի ունենամ տեսնելու իմ պաշտելի մօր նման սիրող ու գուրգուրող Մարօին: Մի՞թէ այլևս սրտի քաղցրանուշ բաբախում չը պիտի ունենամ իմ անհունօրէն սիրած անուշիկ և դիւթական Անուշին հանդիպելու: Մինչև կէս գիշերը քայլում, մտորում և տանջւում էի մի անսահման, անհուն կարօտով և յոյսի ու սփոփման նշոյլից զուրկ փոշոտած ուղիներով...:

ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

Բոլոր իմ թափառումներն ու փնտրտուքները զուր անցան: Ինձ համար անչափ սիրելի դէմքերից ոչ մէկին գտնելու և տեսնելու բախտաւորութիւնը չունեցայ: Հօրս ուխտագնացութեան և աղօթքի կարօտալից ցանկութեան բաւարարութիւն տալու նպատակով մենք զոհեցինք մեր մօտ մնացած 20 ռուբլու կէսը: Վերջապէս մի աստուածավախ և բարեխիղճ սայլապան համաձայնուեց կէս օրով մեզ վարձու տալ իր ձիաքարշ սայլը: Հայրս ու քոյրս սայլի վրայ նստեցին, իսկ մենք՝ երկու եղբայրներս, նրանց կողքին քայլելով, Էջմիածնի Մայր Տաճարն եկանք: Մինչդեռ հայրս այդ սրբաշունչ գմբեթների ներքև ամբողջ երկու ժամ աղօթում ու պաղատում էր, մենք վանքում կուտակուած գաղթականների արանքներից մեծ դժուարութեամբ կարողացանք շրջել և մեծ հետաքրքրութեամբ դիտել նրա զանազան բաժանմունքները: Ցաւ ի սիրտ մեզ նման կէս-տկար գաղթականների՝ վանքի որոշ մասերն անմատչելի մնացին:

Երբ մենք իր ուխտագնացութեան կարօտն առած հօրս հետ վանքը թողինք, ես մերոնց խորհուրդ տուի այլևս մեր անփառունակ դաշտակայանը չը վերադառնալ:

Բարեխիղճ սայլապանը, մեր անմխիթար վիճակին կարեկցելով, համաձայնուեց մեզ մօտ մնացած վերջին 10 ռուբլուց եօթը վերցնելով՝ մեզ մինչև երկաթուղակայան հասցնել: Մենք բոլորս էլ շատ շնորհակալ եղանք բարի սայլապանի զիջողութեան համար: Հայրս «Պահպանիչով» օրհնեց նրան, երբ մեզ կայարանը հասցրեց:

***

Կայարանում, ինչպէս ընդունուած է, շունը տիրոջ չէր ճանաչում: Նորից արտակարգ խառնուածութիւն: Իսկական դժբախտութիւնը կայանում էր նրանում, որ այստեղ արդէն գաղթականներին աւելորդ և խորշելի գլխացաւանք էին համարում և նրանց հետ վարւում էին այնպէս, ինչպէս սովորութիւն է վարուել կեղտի մէջ կորած, տկլոր և վտանգաւոր հիւանդութիւնների միկրոբները տարածող աղքատ մուրացիկների հետ: Ամենուրեք նրանց կոպտում, արհամարհում և երբեմն նոյնիսկ հայհոյում էին:

Եթէ այդ գաղթականների թշուառ և աղէտալի տեսքը ճակատից դժգոհ, յոգնաբեկ և կիսավայրենի վիճակում վերադարձող զինուորներին չը խղճահարէր, հաւանաբար նրանց գնդացիրային կրակի կապելով՝ միանգամայն կը մաքրէին և կ'ոչնչացնէին:

Բարեբախտաբար, այդ անտերունջ և անճարակ վիճակում նրանց օգնութեան էին հասել Գաղթական Կոմիտէի ներկայացուցիչները, որոնք, զգուշաւոր քաղաքականութեամբ և յաճախ խնդրելով ու աղաչելով, կայարանապետին և նրա օգնականներին համոզում էին կարեկցել և օգնել քաղցած և զանազան հիւանդութիւնների ճանկերում գալարուող և իրենց հայրենիքից վայրագօրէն վտարուած գաղթականական բազմութիւններին:

Ջուլֆայից և Իգդիրից Էջմիածնի կայարան էին թափուել ռուսական բանակների զինուորներ, որոնք անհանգիստ և անհամբեր հրմշտկոցներով, լցում էին Ալէքսանդրապոլ մեկնող մարդատար և բեռնատար վագոնների մէջ և աճապարում էին ժամ առաջ մեկնել ու հեռանալ: Ու՞ր էին գնում և ինչու՞ համար այդպիսի արտակարգ շփոթ ու աճապարանօք էին գնում, մեզ անյայտ էր:

Ամէն 30-ից մինչև 45 վագոններից բաղկացած կառաշարում մէկ կամ ամենաշատ երկու վագոն հատկացուում էր աւելորդ համարուած բեռներին, ուրիշ խօսքով՝ «գաղթական» կոչուած և դեռ շնչող թշուառներին:

Երկու անտանելի գիշեր-ցերեկ կայարանում մնալուց յետոյ վերջապէս մեզ էլ յաջողուեց խցկուել «փրկարար» բեռնատար վագոնում, որում մենք ստիպուած էինք ոտքի վրայ ցցած կանգնել, որպէսզի մի կերպ մեր հիւանդ հօրը հնարաւորութիւն տայինք վագոնի յատակի վրայ պառկելու:

***

Կառաշարը քաշող շոգեկաթսան շւում, շփփացնում և մեծ դժուարութեամբ էր տանում պոչից օղակուած բազմաթիւ վագոնները: Չնայած կառաշարի երթի դանդաղութեանը՝ նրա վերջնամասում կապուած մեր վագոնը խլացնող աղմուկով թրխկացնում և թափահարում էր մեզ՝ իրար գլխի թափած և արհամարհուած գաղթականներիս:

Ամառայ հեղձուցիչ տօթին մեր վագոնի դուռը դրսից փակել էին: Նեղլիկ չորս լուսանցքներից օդը կարծես մերժում էր ներս մտնել: Մենք շնչասպառ և շնչակտուր էինք լինում: Կեղտի ու քրտինքի գարշահոտը, բանտարկուած և թանձրացած օդի հետ խառնուած, խեղդում էր մեզ: Այսպիսի անտանելի վիճակում, անկասկած, մենք շնչասպառ կը մեռնէինք, եթէ, բարեբախտաբար, շոգեկաթսան ջուր վերցնելու համար կանգ չ'առնէր:

Կառաշարը շուրջ կէս ժամ արդէն կանգ էր առել, բայց մեր դժոխքի-վագոնի դուռը բացող չը կար: Գաղթական-բանտարկեալներս ստիպուած եղանք լուսամուտներից օգնութեան կանչ ու աղաղակ բարձրացնել և մեր ձեռքն անցած կարծր իրերով վագոնի դուռն ու պատերը թակոտել: Վերջապէս կայարանի գործաւոր մշակները մեզ օգնութեան հասան, և գնացքի հերթապահ կոնդուկտորի դժուարահաճ «ողորմութեան» շնորհիւ մեր բանտի դուռը բացուեց:

Չնայած այն հանգամանքին, որ գաղթականներին ազդարարուեց, որ տասը րոպէից յետոյ կառաշարը կը շարժուի, բայց վագոնում ժամերով բանտարկուած և շնչահեղձութեան հասած գաղթականները, բացի հօրիցս և քրոջիցս, բոլորը միանգամից ցած թափուեցին և վազեցին ջուր խմելու, ուտելիք հայթայթելու և իրենց բնական կարիքները հոգալու և եթէ հնարաւոր լինէր, մի քիչ թարմ օդ շնչելու համար:

Կառաշարը շարժուելուց առաջ բոլորը վերադարձել էին: Երբ նորից վագոնի դուռը փակել փորձեցին, համբերութիւնից դուրս եկած գաղթականները, միահամուռ աղմուկ-աղաղակ բարձրացնելով, բողոքեցին և չը թողին փակել:

Группа бѣженцевъ турецкихъ армянъ въ Караклисѣ (Эрив. губ.).

«Թրքահայ» գաղթականների խումբ Ղարաքիլիսեյում

ՂԱՐԱՔԻԼԻՍԷՈՒՄ

Մեր կառաշարը եօթը ժամ Ալեքսանդրապօլում կանգ առնելուց յետոյ իր ճանապարհը շարունակեց: Բեռնատար վագոններից կէսից աւելին իրենց փոխադրած զինուորներից ազատուեցին: Էջմիածնի կայարանից մեկնած զինուորների մեծ մասը Ալեքսանդրապօլում ցած եկաւ:

Օգոստոսի ամառային արևածիծաղ և զմայլիչ մի առաւօտ էր, երբ մեր գնացքը Ղարաքիլիսէ հասաւ: Մեզ կայարանում յայտնեցին, որ պէտք է ցած իջնենք և սպասենք Ալեքսանդրապօլից մեկնող և Թիֆլիս գնացող մի ուրիշ կառաշարի:

Թէև մեզ շատ ցանկալի էր առանց կառաշարը փոխելու մեր ճանապարհը մինչև Թիֆլիս շարունակել, բայց այդ դիպուածական պարագան մեր ընտանիքի և մանաւանդ հօրս համար բարեբախտութիւն եղաւ:

Բեռնատար վագոնի ուժեղ ցնցումներից հօրս առողջական վիճակը նորից վատացել էր: Աղիքային գալարումները նորից սկսել էին, և որ ամենից սոսկալին էր, այդ գալարումների վրայ աւելացել էին փսխումներ: Վագոնի տօթն ու գարշահոտը նախ՝ սրտխառնուք և ապա փսխումներ էին պատճառել: Այդ պատճառով էլ մենք ստիպուած էինք մի քանի օրով Ղարաքիլիսէ մնալ:

Բարեբախտաբար, մեզնից առաջ այստեղ հասնող և մնացող գաղթականների թիւը շատ աննշան էր, և տեղական ազգային մարմինները մեզ նմանների պատճառած ծանձրոյթից դեռ չէին յոգնել: Այդ իսկ պատճառով մեզ ուշադիր և սրտցաւ վերաբերմունք ցոյց տրուեց:

Մեզ առաջնորդեցին եկեղեցին, իսկ հօրս քաղաքային հիւանդանոց փոխադրեցին: Մեր հայրենի տունն ու օջախից ճողոպրելուց յետոյ առաջին

անգամ էր, որ մենք հանդիպում էինք սրտցաւ և կարեկցոտ վերաբերմունքի: Հենց առաջին օրը մեզ հնարաւորութիւն տրուեց փախուստի-նահանջի՝ շուրջ քսան օրերի ընթացքում թանձրացած ու կպրանման մեր մարմնին կպած կեղտերից և քրտնաշաղախ փոշեխաւից ազատուել և մեր պատառոտուած հագուստներն ազատել նրանց վրայ բոյն դրած ոջիլ-պարազիտներից: Անճար, անօգնական, մահու կրնկակոխ սարսափից փախչող գաղթական մարդը միայն կարող է հասկանալ և պատկերացնել այդ դժոխային ահռելի վիճակը, որին մենք ենթակայ եղած էինք այդ նահանջ-փախուստի սև օրերին:

Մեզ տաք ջրով լողանալու, մաքուր ճերմակեղէն հագնելու և տաք կերակուրով քսան օրից ծոմ-ապաշխարանքից ազատուելու հնարաւորութիւն տուող Ղարաքիլիսէի մեր հայ ազգակիցները, բնականաբար, իսկական բարեգործներ էին մեզ համար:

Երբ այդպիսի եղբայրական հարազատութեան և օգնութեան շնորհիւ մեզ յաջողուեց դժոխային օր ու գիշերներից յետոյ, առաջին անգամ լինելով, մաքուր մարմնով մաքուր անկողին մտնել, համոզուեցի, որ առաջին օրն է, ինչ իսկական մարդկանց նոր աշխարհումն եմ ոտք դրել, և որ այդ բարեսիրտ մարդիկ հայեր են, և այդ նոր, սքանչելի աշխարհը հայերի՝ մեր համազգայինների հողն ու երկիրն է: Այդ օրն ինձ համար անմոռանալի օր էր, և իմ սիրտը հպարտութեամբ բաբախում, և հոգիս երջանկութեամբ ուռչում և բերկրում էր:

Իմ երջանկութիւնը տարածւում և ծաւալւում էր իմ ամբողջ էութեանս մէջ, մինչև նրա ամենավերջին բջիջները և խրոխտ ու յաղթական շեփորում.

– Ինչքան էլ գազան, արիւնարբու ոճրագործ լինի քու ազգի թշնամին և թէկուզ հազարակերպ դժոխային նենգութիւններով և դաւադրութիւններով ձեռնարկի քու ազգի ջարդն ու խողխողումը, կործանումն ու բնաջնջումը, այդ նրան երբէք չի յաջողի, որովհետև քու հայ ժողովուրդն ապրելու, ապրել շարունակելու և տաճիկ-ոճրագործների սարքած դժոխքը քանդելով՝ կործանելու ուժն ու ընդունակութիւնն ունի: Նա ապրելու տիեզերական ու անխորտակելի կամք, անսպառ էներգիա և անընկճելի փիւնիկային ներուժն ունի»:

***

Հանգստաւէտ ու կազդուրիչ և անխռով քնից յետոյ յաջորդ առաւօտեան բաւական ուշ արթնացայ: Քոյրս և եղբայրս ինձնից աւելի շուտ անկողնից բարձրացել էին: Քոյրս, երջանիկ ժպիտը երեսին, ինձ լացուելու առաջնորդեց:

– Եղբա՛յր ջան,– ասաց նա, – այստեղի հայերը շատ պատուական մարդիկ են: Կարծես Իգդիրում և Էջմիածնում մեր տեսած հայերին բոլորովին նման չեն: Սրանք բացառօրէն բարեսիրտ ու կարեկից վերաբերմունք են ցոյց տալիս: Այսօր առաւօտեան կանուխ Գաղթականական և Բարեգործական կոմիտէների անունից երկու կանայք մեզ համար առատ կենսամթերք բերին: Միաժամանակ յայտնեցին, որ մեր հօր համար էլ անհրաժէշտ յանձնարարութիւն են արել և ինձ վստահացրին, որ հաւանաբար մինչև մի քանի օր նրա առողջութիւնը վերականգնուած կը լինի:

– Իսկապէս, այս տեղի մարդիկ ինձ թւում է, որ շատ ազնիւ հայեր պիտի լինեն: Նրանց հոգածութիւնը ամէն գովեստի արժանի է: Բայց գիտես, Արաքսի՛, սիրելի՛ս, եթէ մենք Իգդիրում և Էջմիածնում կատարեալ անուշադրութեան մատնուեցինք, դրանում այդ տեղերի մեր ազգակիցներին շատ էլ մեղադրել չի կարելի: Նրանք, եթէ հրաշք էլ գործադրէն, չպիտի կարողանային իրենց մօտ ալեկոծ ծովի անթիւ ալիքների նման թափուած բազմահազար գաղթականների կարիքները հոգալ: Այս բացառիկ պարագան նկատի ունենալով՝ մենք չպէտք է նրանց շատ մեղադրենք: Այս ամենից յետոյ, սիրելի՛ քոյր, ես ինձ չափազանց երջանիկ կզգամ, եթէ մեր հայրը շուտով մի քիչ կազդուրուի, և մենք հնարաւորութիւն ունենանք մեր եղբօր մօտ Թիֆլիս գնալու:

Երբ մենք գնում էինք նախաճաշելու, քրոջս անձնասիրութիւնը չը վիրաւորելու զգուշութեամբ նրան ասացի.

– Արաքսի՛, մենք պէտք է աշխատենք օր առաջ, նոյնիսկ ժամ առաջ այս գաղթական-մուրացիկ վիճակից ազատուել: Ուրիշներից պարեն առնելով ապրելը շատ ծանր և անդուրեկան է ինձ համար:

ՄԵՐ ԳԱՂԹԱՎԱՅՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ղարաքիլիսէ հասնելուց 5 օր յետոյ հօրս յայտնեցին, որ ի վիճակի է հիւանդանոցը թողնել: Մի քանի օրուայ գործածութեան համար նրան անհրաժէշտ դեղօրայքը տին և յանձնարարեցին Ղարաքիլիսէում մնալու դէպքում 3 օրից յետոյ վերջնական քննութեան համար հիւանդանոց գնալ:

Երբ հայրս մեզ մօտ՝ եկեղեցւոյ բակում մեզ յատկացուած սենեակն եկաւ, մենք ուրախութեան կանչերով նրան դիմաւորեցինք: Նա բաւական շատ կազդուրուած էր թւում, և որ գլխաւորն էր, ինքն էլ գոհ ու յուսադրուած էր:

Ղարաքիլիսէի ազգային վարչութիւնների կողմից հօրս ու եղբօրս համար քաղաքից 7 կիլոմետրի վրայ գտնուող Գիւլիզարդ գիւղում քահանայութեան և ուսուցչութեան պաշտօններ էին առաջարկուած: Ընտանեկան կարճ խորհրդակցութիւնից յետոյ նրանք համաձայնուեցին մնալ, ժամանակաւորապէս հաստատուել յիշեալ գիւղում:

– Այս տեղի օդն ու ջուրը,– յայտնեց հայրս, – մեր Այգեստանի օդի ու ջրի հետ բաւականին նմանու-

թիւն ունին: Մինչև Աստծոյ յաջողութեամբ մեր հայրենիքը վերադառնալը կարծեմ յարմար կըլլայ մեզ առաջարկուած պաշտօնով այս տեղերը մնալ:

– Ես բոլորովին համաձայն եմ,– աւելացրեց մեծ եղբայրս: Ո՞վ կարող է իմանալ՝ Թիֆլիսում մեզ կը յաջողի՞ գործ ճարել, թէ՞ ոչ: Չեմ էլ ենթադրում, որ մեր եղբայր Արմենակը, որ նոյնպէս 3-4 տարուայ գաղթական է, ի վիճակի կը լինի մեր չորս հոգուս, մինչև մեր գործի անցնելը, բնակարան և ապրուստ հայթայթելու:

– Ձեր որոշումը,– իմ հերթին արտայայտուեցի ես,– տրամաբանական է: Մի քանի տարի առաջ մեզնից հեռացած եղբայրը հաւանաբար չը կարողանայ մեր չորսի ապրուստի հնարաւորութիւններ հայթայթել: Գնանք հաստատուելու մեզ առաջարկուած գիւղը, իսկ ես անձամբ մի քանի օրից յետոյ Թիֆլիս կը մեկնեմ, եղբօրս վիճակն ու գործը կստուգեմ և ձեզ կը տեղեկացնեմ:

– Իսկ ես ի՞նչ եմ անելու,– լացակումած և յուսահատ հարցրեց քոյրս: – Դուք երեքդ էլ ձեզ համար տեղ և զբաղմունք որոշեցիք, իսկ իմ դրութիւնը ի՞նչ պիտի լինի: Ամէն պարագայում ես Սիրաքից բաժանուելուն համաձայն չեմ: Մի քանի օր, երբ նրան կորցրել էինք, ինձ համար կարօտի ու տառապանքի օրեր էին: Չէ՛, ես չեմ կարող նրանից բաժանուել: Տարիներով, մանկութիւնից ի վեր ես նրա հետ այնպէս հարազատօրէն եմ կապուել, որ նրանից թէկուզ մէկ ամսով բաժանուելը ինձ համար անհնարին կը լինի:

– Լսի՛ր, Արաքսի՛ ջան,– աշխատեցի քրոջս սփոփել,– դու բոլորովին զուր ես յուսահատւում: Վստահ եղի՛ր, որ ես էլ չափազանց շատ եմ սիրում քեզ և առանց քեզի ապրելն ինձ համար դժուար է: Ստեղծուած դրութիւնը մեզ ստիպում է ժամանակաւորապէս իրարուց հեռանալ: Թիֆլիս՝ եղբօրս մօտ հասնելուն պէս նամակով մանրամասն քեզ կը տեղեկացնեմ ամէն ինչ, և, եթէ այնտեղ մնալու և մի գործ գտնելու լինեմ, եթէ ո՛չ բոլորիդ, քեզ անպայման ինձ մօտ կը փոխադրեմ: Խնդրում եմ քեզնից համաձայնուել հօրդ ու մեծ եղբօրդ մօտ մնալ, մինչև ես հնարաւորութիւն կ'ստեղծեմ և խոստումս կը կատարեմ:

– Սև լինէր էն օրը, որ մենք ստիպուած չը լինէինք մեր հարազատ երկիրը, մեր սիրելի տունն ու օջախը թողնել: Անխիղճ, անօրէն թշնամին մեզ մեր պապենական սիրելի տնից և մեր դրախտ այգուց քշեց և հիմա էլ այս գաղթականի անտուն-անտիրական բախտը մեզ իրարուց պիտի բաժանի և զանազան օտար ու անծանօթ քաղաքներում և գիւղերում ցրիւ տայ: Ես գիտեմ, համոզուած եմ, որ ցրիւ գալուց յետոյ նորից մեր մէկտեղ, միասին հաւաքուելը դժուար, գուցէ և անկարելի լինի:

Այս սրտակոտոր բողոքից յետոյ քոյրս, անճարութիւնից յուսահատ և անմխիթար, նորից լացել ու հեկեկալ սկսեց:

ԳԻՒԼԻԶԱՐԴ ԳԻՒՂՈՒՄ

Մերոնց որոշման համաձայն՝ մեզ 5 օրերի ժամանակամիջոցում այնքան սիրալիրօրէն հիւրընկալող գաղթականական կոմիտէի անդամներից անկեղծ շնորհակալութիւն յայտնելուց յետոյ մեկնեցինք Գիւլիզարդ կոչւող հայկական գիւղը: Այս գիւղը Ղարաքիլիսէից 7 քիլօմետր հեռաւորութիւն ունէր և գտնւում էր բլրակային հարթ ու կանաչազարդ բարձրաւանդակի վրայ: Գիւղում շուրջ 70 հայ ընտանիք-տնուորներ էին ապրում:

Բացի մի քանի երկյարկանի տներից՝ մնացածները միյարկանի էին: Տները շինուած էին հիմքից մինչև մէկ մետր բարձրութեամբ քարերով և մնացեալը ցեխէ որմերով: Կտուրները ծածկուած էին գերաններով, հասիրներով և ցեխի ծածկոցով:

Տները սարքուած էին իրար կողքին և ուղիղ գծերի երկայնքին: Գլխաւոր փողոցն եզերուած էր զանազան կանաչախիտ բարդիներով, ուռենիներով, հացենիներով: Տներից մեծ մասն իրենց պարտիզակ-բանջարանոցներն ունէին: Իրար վրայ վերցրուած, տներում մաքրութիւնն աչքի էր ընկնում: Ոչ մի տնում կենդանիներին յատկացուած ախոռը բնակութեան մասերին խառնուած չէր: Այդ երկու մասերն առանձին մուտքեր ունէին: Կարելի է ասել, որ գիւղի շինութիւնները նորագոյն տիպի էին:

Քաղաքում մեզ տրամադրուած ճիաքաշ սայլով գիւղը հասանք: Ըստ երևոյթին, գիւղապետին նախօրօք տեղեկացուած էր մեր ժամանման մասին: Նա շատ քաղաքավարի և սիրալիր մեզ ընդառաջեց և բարի գալուստ մաղթեց:

Երկու ուրիշ գիւղացիների ընկերակցութեամբ գիւղապետը մեզ առաջնորդեց, ըստ երևոյթին, մեզ համար նախապատրաստուած սենեակը, որը բաւական մեծ, մաքուր և օդառատ սենեակ էր: Սենեակի յատակը ծածկուած էր հասիրով և վրան կարպետով: Սենեակի երկու պատերի մօտ դէմ առ դէմ դրուած էին 4 փայտեայ թախտեր:

– Տէ՛ր հայր,– խօսքը հօրս ուղղելով ասաց գիւղապետը, – այս սենեակում մի կերպ կը տեղաւորուէք: Շուտով ձեզ համար անհրաժեշտ յարմարութիւններ կը ստեղծենք: Վստահ եղէ՛ք, որ մեզ մօտ ձեզ համար վատ չի անցնելու: Եթէ անխիղճ թուրքերի համար օտար և ատելի էք, մեզ համար հարազատ և սիրելի էք:

Մի քիչ ընդհատումից յետոյ աւելացրեց.

– Մի քանի օր կը հանգստանաք: Մենք ձեր ապրուստը կապահովենք: Վաղուց մենք մեզ համար առանձին քահանայ էինք պահանջել: Գիւղի կրօնական ծիսակատարումների համար մենք ամէն անգամ ստիպուած էին քաղաքից քահանաներ բերել: Ձիւն-ձմեռ ժամանակ է լինում, ժամանակ-անժամանակ քահանայ ենք ուզում, չկայ: Հիմի ուրախ ենք, որ դուք մեր գիւղումն էք մնալու: Անցեալ տարի վարժապետ ունէինք: Այս տարուայ դպրոցական

շրջանի համար չուզեց վերադառնալ: Մեր տուած ամսականով չը համաձայնուեց գալ: Է՜հ, գուցէ բարին այս էր: Դուք և՛ ձեր կամքով, և՛ ձեր ոտքով մեզ մօտ եկաք:

Հայրս ու եղբայրս գիւղապետին և նրան ընկերակցող գիւղացիներին սրտագին շնորհակալութիւն յայտնեցին և ասացին, որ իրենք էլ այս դասաւորութեան համար սրտանց ուրախ են:

– Մեր ընտանիքի անդամներից մէկը,– ինձ ցոյց տալով ասաց հայրս,– մի քանի օրէն Թիֆլիս՝ իր եղբօր մօտն է մեկնելու: Մենք երեք հոգի կը մնանք: Իսկ երեք հոգու գործը դժուար չէ: Մի տեսակ եօլա կերթանք ու կապրենք:

– Է՜հ, տէ՛ր հայր,– ձայնեց գիւղապետին ընկերակցող գիւղացիներից մէկը, – իհարկէ, կ'ապրէք: Մեր խեղճ ու հալածական հայերիս համար Աստուածը մեծ է: Նա չի թողնի, որ մարդկանց յոյսերի բոլոր դռները փակ մնան:

Յետոյ կատակի տալով՝ իր խօսքը լրացրեց.

– Տէ՛ր հայր, դու, իսկապէս, աստուածապաշտ քահանայ, կարգիդ կատարումը սկսի՛ր հէնց քու ընտանիքից: Անիրաւ և անիծուած տաճիկները մեր հայերին անխղճօրէն կոտորում են, իսկ մենք մեր սուրբ վրէժը պէտք է առնենք Սուրբ գրքի «Աճեցէք և բազմացարուք»-ը գործի դնելով: Ա՜յ, օրինակ, մաշալլա, դու երկու լաւ երիտասարդ տղաներ և մէկ սիրուն-ղալամի աղջիկ ունես: Առաջ նրանց պսակի՛ր և յետոյ մերոնց: Մի՛ վախենայ, թէ՛ երկու հարսնացուդ և թէ՛ մէկ փեսացուդ մենք կը ճարենք: Հարսանիքի դիօլ ու զուռնան էլ մենք կը չալենք, գինին ու խորոված էլ մենք կը բերենք: Էլ ուրիշ ի՞նչ ես ուզում...

***

Ուղիղ մի շաբաթ ես մերոնց մօտ մնացի: Գիլիզարդ գիւղի օդն ու կլիման սքանչելի էր: Չնայած ամառը մօտենում էր իր վերջաւորութեանը, բայց գիւղն իր արօտավայրերով, ծառաստաններով և կանաչութեամբ դեռ թարմութիւն էր բուրում: Ես հիացած էի նրա բնական գեղեցկութիւններով և մանաւանդ սառնորակ ջրով:

Չնայած գիւղի երիտասարդութիւնը, զինակոչի ենթարկուած լինելով, գիւղից բացակայում էր, բայց նրանց հայրերն ու մայրերը, քոյրերն ու հարսները, պատանի տղաներն ու աղջիկները հայու մեղուաջան աշխատասիրութեամբ ու յամառութեամբ կպել ու լծուել էին գործի և օրն ի բուն կատարում էին բերքահաւաքման ու ամբարման ուրախ և կենսատու աշխատանքները:

Յաճախ ես ու Արաքսին, առաւօտները կանուխ՝ արևածագից էլ առաջ, գնում էինք դաշտերը, բարձրանում էինք շրջակայ բլուրները և դեռ թարմ մնացած դաշտային գոյնզգոյն ծաղիկներ էինք հաւաքում: Կարծես աշխարհակործան չարաղէտ պատերազմը խնայել էր իր անիծապարտ սպանիչ օղակներում խեղդելու այս փոքրիկ գիւղն ու նրա կենսախինդ շրջակայքը:

Գիւղը դեռ հարուստ և անաղարտ էր մնացել իր ընտանի կենդանիներով: Գիւղը շրջապատող բլրակները լցած էին կովերի, ոչխարների, այծերի, հասակ քաշած մսակոլոլ գառների և փոքրաթիւ ձիերի խմբաւորումներով:

Ամէն տեղ մարդուս հոգին լցուում էր նրանց բառաչներով, մռունչներով և խրխինջներով գոյացած աղմուկի հրճւանքով:

Ես ներքուստ ափսոսում էի, որ շուտով ստիպւած եմ թողնելու բնութեան այս գիւղին շնորհած սքանչելի տեսարաններն ու կենսարար թարմութիւնները, նրա ծառն ու ծաղիկը, նրա ջուրն ու կանաչը:

Եղբայրս գիւղի կողմից մէկ տարի ժամանակամիջոցով ուսուցիչ էր վարձուած, իսկ հայրս հաստատուած էր իր հոգևոր պարտականութիւնների կատարման պաշտօնում:

ԴԷՊԻ ԹԻՖԼԻՍ

1915-ի սեպտեմբեր 2-ին՝ առաւօտեան, Թիֆլիս մեկնելու համար ինձ նախապատրաստեցի մերոնց հետ մնաք բարով ասելու: Առաջին անգամն էր, ինչ ես իմ սիրելի ընտանիքից անորոշ ժամանակով հեռանում էի: Այս բաժանումը մեզ բոլորիս համար դժուար ու ծանր էր: Նահանջի տառապանքներն ու զրկանքները մեր ընտանիքի մնացած չորս անդամներիս կարծես աւելի մտերմացրել ու հարազատացրել էին:

Մասնաւորապէս իմ և քրոջս բաժանումը մի լրիւ ողբերգութեան փոխուեց: Արաքսին ինձ պինդ գրկել և հոնգուր-հոնգուր լացում և չէր ուզում ոչ մի գնով ինձնից անջատուել:

Ես կատարելապէս հասկանում էի նրան և ըմբռնում նրա վշտի խորութիւնը: Երբ մենք երկուսս մեր անանման ու ազիզ մօրը դեռ բոլորովին մանուկ հասակում կորցրել էինք, կարծես նրա կարօտն ու գուրգուրանքը իրարուց առնելու էինք ձգտել: Անմայր ու որբ մնացած, իրար հետ լռելեայն ու անխօս դաշինք էինք կապել միշտ իրար պաշտպանելու ու իրարու մեր անարատ սրտի խորքից սիրելու: Այդ բիւրեղանման սէրը խտացած նւիրաբերման ու պաշտամունքի էր հասել:

Այս աննկարագրելիօրէն տխուր և սրտամորմոք բաժանումը հօրս ու եղբօրս միջամտութեամբ և իմ մխիթարական ու համոզիչ խօսքերով, լացի ու բազմիցս կրկնւող համբոյրների մէջ մի կերպ վերջացաւ:

Գիւղական տնտեսութեան կենսամթերքները՝ կաթ, մածուն, պանիր, կարագ, ձաւար և այլն, Ղարաքիլիսէ ծախելու տանող մի գիւղացու հետ նրա սայլին, կողք կողքի նստած, քաղաք մեկնեցի:

Գիւղացին իմ տխրութիւնն ու վիշտը թեթևացնելու համար մի ինչ-որ հնարովի պատմութիւն ասաց: Ամէն կողմից յուսալքման ու զրկանքների ենթարկուած մի դժբախտ գիւղացու պատմութիւնն էր այդ, որ վերջացաւ նրա համար անսպասելի բախտաւորութեամբ: Ես եզրակացրի, որ ազնիւ գիւղացին այդ պատմութեամբ ցանկացաւ իմ հոգեկան ալեկոծումը մեղմել և ապագայի լաւագոյն սպասումներով ինձ յուսադրել:

Ղարաքիլիսէ հասնելուց յետոյ ես ինձ ուղեկցող բարեացակամ գիւղացուն խնդրեցի ինձ երկաթուղակայարանն առաջնորդել: Նա սիրայօժար համաձայնեց և անկեղծօրէն բարի ճանապարհ ու յաջողութիւն մաղթելով՝ ինձ մտերմիկ մօտեցումով ասաց.

– Տղա՛ս, գիտեմ, որ ձեր նման փախստական դառած մարդիկ իրենց ունեցած, չ՚ունեցածը ձեռքից տուել են: Վերցրո՛ւ այս հինգ մանէթը: Ո՞վ գիտէ՝ ինչ կարող է պատահել: Օտարութեան մէջ մարդուս ամենաշատ օգնութեան հասնողը էս անտէր փողն է: Տոմսակ վերցնելու կամ ուրիշ ծախսերի համար պէտք կը գայ:

– Եղբա՛յր Աւետ,– ասացի նրան, – ես ձեզնից անչափ, անչափ շնորհակալ եմ ձեր ազնուութեան և ուշադրութեան համար, բայց ես ինձ մօտ մի փոքր գումար ունեմ և ձեր բարեացակամ օգնութեան կարիքը չեմ զգում:

– Լաւ, լաւ այդպիսի ամաչկոտութեան կարիք չկայ: Շատ էլ ասենք փող ունես, էս փողն էլ նրա կշտին դիր, թող մնայ: Եթէ կարիքը չունեցար, յետոյ իր տիրոջը կը վերադարձնես: Վերցրո՛ւ ու պահի՛ր: Այնպէս հաշւիր, որ փոխ եմ տալիս քեզ, էլի՜...

Ես այլևս չկարողացայ մերժել այդ սրտաբաց գիւղացու՝ այդքան անկեղծ ու ազնիւ ձևով ինձ պարտադրած նւէրն ու նորից նրա հալալ աշխատանքից կոշտացած ձեռքը ջերմօրէն սեղմելով՝ շնորհակալութիւն յայտնեցի: Մտքումս որոշեցի Թիֆլիսից նրան մի յարմար նւէր ուղարկել:

Օտար հորիզոնի տակ կեանքի պայքարը մտնելու էի գնում: Օ՜հ, ինչքան դժուար է անփորձ երիտասարդ մարդու համար անծանօթ օտարութեան մէջ կեանքի կռւի մտնել ու մաքառել ամէն տեսակի դժուարութիւնների և պատահականութիւնների դէմ:

***

Կայարանում ինձ յայտնեցին, որ Թիֆլիս մեկնող մարդատար գնացքը գիշերուայ ժամի 11-ին է հասնելու: Բարեսիրտ գիւղացու՝ ինձ տուած 5 ռուբլու հետ հաշւած՝ երրորդ կարգի տոմսակի արժէքը վճարելուց յետոյ ինձ մօտ 16 ռուբլի ևս մնում էր:

Էջմիածնի կայարանում մեծ դժուարութեամբ կարողացել էի ինձ մօտ մնացած տաճկական մաջիդիէն ռուբլով փոխանակելու: Ինձ թւում է, որ իմ ունեցած այդ 16 ռուբլով Թիֆլիս մեկնելուց յետոյ մի 2-3 օրով ապահովւած եմ:

Ղարաքիլիսէի կայարանի մուտքի կողքին ճերմակ երկաթէ խողովակից ջուր էր թափւում: Այդ ջուրն այնքան սառնորակ և ջինջ էր, որ մի պահ ինձ թւաց, որ մեր Վան-Այգեստանի զզզոնն ու կաթնահամ ջրերիցն է իր սկիզբն առել:

Երկար, շատ երկար այդ քաղցրահնչիւն կլկլացող ու դանդաղօրէն վէտվէտող ջրի կողքին նստած մնացի: Մի քանի անգամ ձեռներս ու երեսս նրանով լւացի և անհուն հրճւանք զգացի: Մտածում էի՝ չէ՞ որ այս Ղարաքիլիսէ կոչւած փոքր քաղաքի հողն էլ մեր մայրենի հողամասն է, և նրա վրայ ապրող ու ստեղծագործող ժողովուրդն էլ մերոնք են, մեր հայրենակիցներն են: Ինչու՞ պիտի զարմանալ, եթէ մեր դիւթական, սքանչելի հայրենիքի այս հողամասն էլ իր ծոցում, իր հողային արգանդում, մեր Այգեստանի նման զնգզնգան ու արծաթափայլ աղբիւրներ և ջրեր կարող է ունենալ:

ԿԱՅԱՐԱՆՈՒՄ ԵՒ ՎԱԳՈՆՈՒՄ

Մինչև գիշերուայ ժամը 11-ի գնացքի ժամանումը պէտք է ամբողջ վեց ժամ սպասէի: Ուրախ էի, որ, կեանքումս առաջին անգամը լինելով, մարդատար գնացքով պիտի ճամփորդէի: Հոգ չէ, թէ երրորդ կարգի վագոն պիտի նստէի: Ինձ ասել էին, որ պատերազմի այդ ժամանակներում զինուորների ու զինուորականների անվերջ փոխադրութիւնների պատճառով մարդատար գնացքի տոմսակ ճարելը չափազանց դժւար է: Զարմանում էի, որ բախտ էի ունեցել առանց գլխացաւանքի տոմս գնելու: Մի քանի անգամ գնած տոմսը գրպանից հանելով՝ նայեցի և ստուգեցի: Երբեմն սրտումս կասկած էր առաջանում այդ տոմսակի իսկական լինելու մասին: Մի քանի անգամ մտածեցի կայարան եկող-գնացող մարդկանց իմ տոմսակը ցոյց տալով հարցնել նրա կեղծ չը լինելու վերաբերեալ, բայց ծիծաղի ենթարկւելու մտավախութեամբ ինձ զսպում էի:

Այդ վեց ժամերի սպասումը սիրտս կրծում էր: Անհամբերութեամբ սպասող մարդու համար ամէն մի ժամը տասնապատկւում և երկարում է: Իսկապէս, ի՜նչ անտանելի դանդաղկոտութեամբ էին շարժւում այդ կայարանի՝ պատից կախւած խոշոր ժամացոյցի երկար սլաքները: Երբեմն մտածում էի՝ չ՚լինի թէ անբախտ գաղթականներիս հիւանդութիւններից մէկն ու մէկով այս ժամացոյցն էլ վարակւած լինի, որ նրա սլաքները այդքան ծուլօրէն են առաջ գնում:

Ստամոքսիս դատարկութիւնն իրեն զգացնել տուեց: Նոր միայն յիշեցի, որ առաւօտեանից ոչինչ չեմ կերել: Նոյնպէս նոր անդրադարձայ, որ մեր բաժանման ողբերգութիւնը մերոնց և ինձ մոռացնել էր տուել գիւղից ինձ հետ ուտելու թէկուզ մի փոքր պա-

տառ վերցնել: Այդ մոռացման համար շատ ափսոսացի: Մտածեցի կայարանի բիւֆէյում մի բան ուտել: Դէպի բիւֆէն յառաջացայ, բայց նրան չը հասած կանգ առայ: Ո՛չ, խելօք գործ չէ անելիքս, կասկած չ'կայ, որ այս բիւֆէում ծախուող ամէն ինչ մի քանի անգամ աւելի թանկ կը լինի և ինձ կը զրկի գրպանումս ունեցած խղճուկ գումարի զգալի մասից:

«Դեռ շատ ժամանակ է մնում գնացքի ժամանելուն,– ասացի ինքս ինձ,– աւելի լաւ է գնամ կայարանից ոչ հեռու թաղամասը և այնտեղից առնեմ ուտելիքս ու մի փոքր էլ պաշար վագոնում քաղցած չը մնալու համար»:

***

Իմ սրտամաշ սպասումը վերջ գտաւ: Ժամի 11-ից քառորդ անց դէպի կայարանը սուրացող գնացքը բարձրագոչ սուլոցով և հևիհև տնքոցով կանգ առաւ:

Տոմսակը ձեռքումս պինդ պահած՝ բարձրացայ 3-րդ կարգի վագոններից մէկի աստիճանի վրայ: Վագոնի դռան կանգնած կոնդուկտորը, թէ նրա օգնականը, դէմս կտրելով, ռուսերէն լեզուով ու կոպիտ տոնով ձայնեց՝ տոմսդ ցո՛յց տուր:

Իմ տոմսակիս իսկական լինելուն ժամերից ի վեր մտահոգ՝ անհամարձակ նրան պարզեցի տոմսակս: Մինչ նա, իր խոշոր և ուռած քթի վրայ ակնոցները յետ ու առաջ անելով, տոմսակս քննում ու զննում էր, ես անձկութեան սրտաղող էի բռնել: Կարծես իմ տոմսակից գլուխ չը հանելով և ինձ ոտքից գլուխ զննելուց յետոյ զսպած կատաղութեամբ հրամայեց.

– Նե՛րս անցիր:

Ինձ յետ տրուած տոմսակը ծակոտուած էր:

Վագոնից ներս մտնելուց յետոյ էլ՝ դեռ մի քանի րոպէ, սրտիս բաբախումը շարունակւում էր: Գնացքի այս պաշտօնեայի անտեղի կոպտութիւն ինձ թէ՛ զարմացրել և թէ՛ ջղայնացրել էր: Եթէ իմ տոմսակը կեղծ էր, ինչպէ՞ս պատահեց, որ նա համաձայնուեց ինձ ներս թողնելու, իսկ եթէ ճիշտ էր ու կարգին, ապա նրա վայրենութիւնն ինչո՞վ բացատրել: Մի՞թէ այնտեղ՝ Ռուսաստանում, նոյնիսկ հայ ազգաբնակչութեամբ բնակւած երկրամասումն էլ պետական պաշտօնեաները մեզ՝ հայերիս հետ վարւում են այնպէս, ինչպէս վարւում էին մեր հարիւրաւոր տարիների թշնամի տաճիկները: Ինչու՞մն է ուրեմն տարբերութիւնը:

Բայց չէ որ վաղուց, շատ վաղուց մենք ռուսներին մեր հարազատ բարեկամներն ենք հաշուել և միշտ նրանց մեր հօրեղբայրներն ենք անուանել:

Ուրեմն ինչպէ՞ս բացատրել նման վերաբերմունքը: Գուցէ նրանով, որ մենք փոքր ազգ ենք և ամենուրեք անպաշտպան մի ազգ ենք:

Իմ տեղաւորուած և մարդատար կոչուած վագոնումն էլ խռնում և խճողում էր տիրապետում: Տարբերութիւնը սրա և բեռնատարի մէջ այն էր, որ այստեղ տախտակից երկար նստարաններն ամրացուած էին կուպէ կոչուած խցիկների մէջ: Ճամբորդներից շուտ ներս մտնողները նստարանները գրաւել էին, իսկ յետոյ եկողները ոտքի վրայ էին կոթնում՝ իրենց թմրած ոտներին օգնութիւն հասցնելով, իրենց ձեռներով ու բազուկներով տախտակներին կառչելով:

Անկասկած, ես էլ ոտքի վրայ մնալու դատապարտուածների շարքին էի աւելացել: Երբ հաշուեցի, որ այս դրութեան մէջ 8-9 ժամ պիտի մնամ, չափազանց տհաճ զգացում ունեցայ: Ինչ է, մի՞թէ մեր նահանջը դեռ չէ վերջացած: Մինչև ե՞րբ այս գաղթականի անբախտ ճակատագիրը մեզնից ձեռք չի քաշելու:

Դժբախտաբար ինձ հետ որևէ իր կամ կապոց չունէի, որի վրայ մի կերպ նստել կարողանայի: Ճարն ինչ, սկսեցի ինձ մխիթարել այն ենթադրութեամբ, որ ես իմ նահանջի ճանապարհի վերջակէտին դեռ չեմ հասել: Հայրենիքից վայրագօրէն վռնդուած հայ մարդը կա՞րող է այսպէս հեշտութեամբ իր հանգիստը վերագտնել:

Վագոնում ոտքի վրայ թափառելով՝ յաճախ հանդիպում էի ճամփորդների, որոնց թէև չէի ճանաչում, բայց, անկասկած, եզրակացնում էի, որ գաղթականներ են և գնում են դէպի Թիֆլիս, Բաքու ու Հիւսիսային Կովկաս: Նրանց խօսակցութեան բարբառից ճշտում էի Վասպուրականից լինելն ու շրջանին ու գիւղին պատկանելը: Երբեմն նոյնիսկ փորձում էի նրանց հետ խօսակցութեան բռնուել և նրանց ապագայ անելիքների մասին հնարաւոր տեղեկութիւններ ձեռք բերել:

Բայց ինչպէս ես, նրանք էլ գնում էին նետուելու անորոշութեան և ալեկոծուող բախտի քմահաճոյքին:

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաւօտեան կանուխ՝ արևածագից առաջ, մեր գնացքը սուլելով և ֆշշացնելով Թիֆլիսի կայարանում կանգ առաւ: Իմ ուրախութեանը սահման չկար: Երկար տարիներից յետոյ, թէև գաղթական վիճակում, ինձ յաջողւում էր մօտաւորապէս չորս տարիով մեծ եղբօրս՝ Արմենակին հանդիպելու: Ղարաքիլիսէից մէկնելուց ճիշտ մի օր առաջ նրանից իր վերջին հասցէն ստացել էի:

Գիտէի, որ նրա ապրած թաղամասը՝ Հալաբար անունով կոչուած, կայարանից հեռու չէր: Մեծ հաճոյքով վագոնից ցած եկայ: Ամբողջ ութը ժամ ոտքի վրայ մնալու և սեղմուած ու ճխլուած լինելուս յոգնածութիւնը միանգամայն անհետացաւ: Իրեր չ'ունէի: Ունեցած չունեցածս մէկ զոյգ ճերմակեղէն և երկու զոյգ գուլպա էր:



Տփղիս. Մեյդան (լուսանկարի առաջնային հատվածում) և Հավլաբար (Կուրի ձախափնյա ձորապռնկի հարթության վրա տարածված) թաղամասերը

Ծագող արևի առաջին ճառագայթները շողշողալ սկսեցին: Օդը զովասուն և հոգեպարար էր: Սկսեցի ոտքով քայլել Հալլաբարի թաղամասը հասնելու համար: Կայարանում ինձ հասկացրել էին ճանապարհիս ուղղութիւնը: Ահա և Հալլաբարը: Մի յարկանի և երկյարկանի տներ իրար քիթն էին կոխուել: Փողոցները նեղլիկ և անմաքուր էին: Նախօրօք գիտէի, որ այս թաղամասը բանւորների և կինտո կոչւող հասարակ դասակարգին պատկանող մարդկանց բնակավայրն է:

Առաջին անգամը լինելով՝ փողոցներում երթևեկող մարդկանցից լսում էի ինձ անծանօթ լեզւով խօսակցութիւններ: Ենթադրեցի, որ նրանք պէտք է վրացերէն խօսելիս լինեն: Վերջապէս հանդիպեցի հայերէնով խօսող մի խումբ բանւորների, որոնք գործահագուստ էին հագել: Պարզ էր, որ աշխատանքի էին գնում: Ձեռքումս եղած հասցէն տալով՝ խնդրեցի ցոյց տալ իմ փնտրած փողոցը: Բարեբախտաբար, հեռու չէի իմ ուզած փողոցից: Ինձ յայտնեցին երկրորդ քառուղուն հասնելուց յետոյ դառնալ դէպի աջը: Իմ փնտրածը այդ փողոցումն էր լինելու:

Ինձ ցոյց տրուած փողոցը մտայ: Տների համարները ստուգելով՝ յառաջանում էի: Փնտրածս համարը հեռու չ'պէտք է լինէր: Մօտեցող հանդիպումիս հրճւանքիցս սիրտս ուժգնօրէն սկսել էր բաբախել, երբ տեսայ անունս կանչող և դէպի ինձ վազելով մօտեցող եղբօրս:

Նա մի փոքր հեռաւորութեան վրայ նկատել էր տների համարները ստուգելով յառաջացող երիտասարդին և ինձ բոլորովին մօտենալուց առաջ ճանաչել էր իր եղբօրը՝ ինձ:

– Սիրա՛ք, իմ անուշի՛կ եղբայր, վերջապէս եկար: Ինչքա՜ն ուրախ եմ քեզ տեսնելուս համար,– ասելով՝ գրկեց և բազմաթիւ անգամներ համբուրեց ինձ: Իմ հերթին, ես էլ, ուրախութեան բացականչութիւններ արձակելով, նրան իմ կրծքին սղմեցի և փոխադարձաբար բազմաթիւ համբոյրներ շռայլեցի:

Երբ մեր գրկախառնումը վերջացաւ և մեր առաջին սիրազեղումից դուրս եկանք, սկսեցինք իրար ոտքից գլուխ զննել: Մենք, իրար նայելով, կարծես չէինք ուզում կշտանալ: Մեզնից ամէն մէկը իր մօտ և իր մտքում շտապ խորհրդակցութիւն էր անում և միւսի վիճակի մասին եզրակացութիւն էր հանում: Ես նրան տեսնում էի բաւական շնորհքին և հարդուկուած հագուստով, իսկ նա ինձ գտնում էր իմ գաղթականի խղճուկ, տեղ-տեղ կարկատուած և հագուստի նմանող զգեստով:

– Դէ՛ լաւ, ինչու՞ ենք փողոցում սպասում: Տուն գնանք:

– Գնանք,– պատասխանեցի մեքենայաբար:

Երբ մենք եղբօրս տունը մտանք, նա ինձ իր սենեակն առաջնորդեց: Եղբօրս սենեակը միջակ մեծութեամբ, տախտակեայ յատակով և համեստ կահաւորութեամբ մի սենեակ էր: Սենեակի մուտքից ձախ, ձախ թևի վրայ, պատի մօտ դրուած էր տախ-

տակեայ մի թախտ, վերմակով ու ներքնակով, իսկ կողքին մի հագուստի պահարան: Առաջին իսկ հայացքից նկատեցի, որ սենեակում տիրում էր կարգ և ուշադիր մաքրութիւն:

Սենեակում մի բազկաթոռ և երկու նստարան կային: Եղբայրս ինձ հրաւիրեց բազկաթոռին նըստել, իսկ ինքն էլ, նստարան մօտեցնելով, կողքիս նստեց:

– Դէ՛, պատմի՛ր, տեսնենք այդ ի՞նչ սոսկալի փորձանքներ են անցել ձեր գլխից: Այստեղի հայկական թերթերում կիսատ-պռատ տեղեկութիւններ արուեցին Վանի նահանջի վերաբերեալ, բայց, ըստ երևոյթին, Վասպուրականի հայ ժողովրդի գլխին եկած փորձանքը հազար անգամ աւելի սարսափելի է եղել, քան այն, ինչ գրուել և նկարագրուել է այս թերթերում: Ես այդ եզրակացրի նրանից, որ վերջին 12-15 օրերում բոլոր թերթերում իրար յետևից օգնութեան կոչեր են հրատարակւում: Այստեղ էլ մի Գաղթականութեան կոմիտէ է կազմուել և սկսել է Թիֆլիս հասնող գաղթականների համար փող հաւաքել:

– Փող և նպաստ հաւաքել,– կրկնեցի՝ սրտիս խորքում մի անսահման ցաւի ու վշտի հարուած զգալով:

– Իսկ տեղս հասնող գաղթականների թիւը մե՞ծ է, և նրանց ու՞ր են տեղաւորել: Ե՞րբ են ժամանել այդ դժբախտները,– հարցրի եղբօրս:

Մինչ եղբայրս պատրաստւում էր իրար ետևից հասնող հարցերիս պատասխանել, սենեակի դուռը մատների կրկնւող հարուածներով բախեցին, և առանց պատասխանի սպասելու՝ սենեակի սեմին յայտնուեց մի դեռատի օրիորդ:

– Կարելի՞ է,– ռուսերէնով հարցրեց սենեակի սեմին կանգնած և կարծես հրաւէրի սպասելու մտադրութիւն չունեցող օրիորդը, թէ տիկինը:

– Հրամեցէք,– պատասխանեց մի քիչ շփոթի ենթարկուած եղբայրս:

Ներս մտնողը եղբօրս հետ սկսեց վրացերէնով խօսել: Եղբայրս, առաջւանից աւելի շփոթած, նրան հայերէնով պատասխանեց և ինձ հետ ծանօթացրեց:

– Օրիո՛րդ Թամարա, խնդրեմ ծանօթանալ եղբօրս հետ: Ես նրան մեր փողոցում իմ բնակարանը փնտրելիս հանդիպեցի: Մեր երկրից փախուստ տուած գաղթականների և մեր ընտանիքի հետ Ռուսաստան եկողներից է:

– Շատ ուրախ եմ,– կոտրտուած հայերէնով պատասխանեց վրացի օրիորդը և ինձ մեկնեց իր նիհար, ոսկրոտ ձեռքը: Գուցէ տասներորդ անգամը լինելով, այս անգամ էլ ենթարկուեցի այս վրացի օրիորդի ուշադիր զննումին: Նա իր երկար թերթևանուքով աղեղուած սևաթոյր աչքերով և մի տեսակ կարեկցական հայեացքով յամառօրէն ինձ էր նայում: Նրա նուրբ իրանն ու փոքրիկ կուրծքը խնամքով պարուրող գեղեցիկ շրջազգեստի հետ իմ՝ գաղթականի ցնցոտիանման հագուստի շտապ համեմատութիւնն ինձ մինչև ականջներիս բլթակները կարմրացրեց:

Աղջիկը կարծես իսկոյն նկատեց իմ շփոթմունքը: Ներողութիւն խնդրելով՝ սենեակից դուրս եկաւ, բայց անմիջապէս յետոյ նորից սենեակի դռան մօտենալով՝ եղբօրս վրացերէնով մի քանի բառ ասաց ու գնաց:

Եղբայրս էլ իր հերթին մի քիչ շփոթ ու անհանգիստ էր: Այն, ինչ ես էի մտածում, հաւանաբար նա զգում էր: Մենք երկուսս էլ ուզում էինք խօսել, բացատրուել, բայց և այնպէս խուսափում էինք մեր միտքը յուզող խնդրին ուղղակիօրէն մօտենալուց:

Վերջապէս եղբայրս առաջինը խզելով մեր այս լռութիւնը, ասաց.

– Սիրելի՛ եղբայր, ես մօտաւորապէս կռահում եմ քո մտմտուքը: Կարծում եմ, որ չեմ սխալւում: Դու գուցէ ինձ մեղադրում ես այն բանի համար, որ ես ինչու՞ հայ ընտանիքը թողած, մի վրացի ընտանիքի տնումն եմ ապրում: Նախ, որ Թիֆլիսում հայ և վրացի ընտանիքներն այնպէս են խառնուած և յաճախ այնպէս են բարեկամացած, որ նրանց մէջ խտրութիւն դնելը անհարմար և նոյնիսկ ամօթալի է համարւում: Յետոյ պէտք է ասեմ, որ իմ՝ Թիֆլիս հասնելուց յետոյ երկու տարի մի հայ ընտանիքի մօտ ապրեցի: Այնպէս դասաւորուեց, որ ես դժգոհ մնացի այդ ընտանիքից: Նրանք հինգ հոգուց բաղկացած մի ընտանիք էին: Հայր, մայր, որդի, հարս և մի փոքրիկ նորածին երեխայ: Երեխայի ծնուելուց յետոյ ընտանիքի մայրը գանգատւում էր իրենց սենեակների անբաւականութիւնից: Տղան՝ նորածինի հայրը, ջղային էր դառել և մօրն ու կնոջ հետ յաճախակի սկանդալներ էր ունենում: Ես բարւոք համարեցի թողնել այդ հայ ընտանիքի մօտ իմ հաստատած բնակութիւնը: Իսկ ինչպէ՞ս պատահեց, որ այս վրացի ընտանիքի մէջ ընկայ, անպայման այդ պարագան էլ կարող է քեզ հետաքրքրել: Կարծեմ մի երկու անգամ ձեզ գրել եմ իմ զբաղմունքի, գործի մասին: Երբ ես Թիֆլիս հասայ, ես էլ, ինչպէս ներկայումս դու, գաղթական և օտարական էի: Տարբերութիւնը մեր մեջ այն է, որ ես իմ ցանկութեամբ և առանց խուճապի եկայ ու այստեղ հասայ, իսկ ձեզ բռնութեամբ և մահւան սպառնալիքով այս կողմերը քշեցին: Այո՛, երբ Թիֆլիս եկայ, որևէ մէկից, ազգային և հասարակական կազմակերպութիւններից օգնութեան յոյս չունէի: Ասենք, երբէք էլ այդ ուղղութեամբ չը մտածեցի ու չը փորձեցի: Միջնակարգ և յետոյ բարձր կրթութիւն ստանալու միջոց և հնարաւորութիւն չունէի: Այդ ուղղութեամբ որևէ փորձ անել իսկ միտք չունէի: Ինձ մնում էր կա՛մ մի արհեստ սովորել՝ վարպետ դառնալու համար և կա՛մ մի ուրիշ գործ անել: Փորձեցի մի քանի ուղղութեամբ, բայց յաջողութիւն չ'ունեցայ: Այստեղ և ընդհանրապէս այս ծովածաւալ երկիրը գաղթող հայեր շատ կան: Նրանք եկել են մեծ մասամբ Պարսկաստանից, մի մասն էլ՝ Արևմտեան Տաճկահայաստանից: Նրանցից շատերը

դատարկ ձեռներով եկել և զարմանալիօրէն կարճատև ժամանակամիջոցում հարստացել են: Հարստանալու համար էլ ընդունակութիւններ են պէտք: Բայց հարստանալու տենչով, տագնապով և մարմանջով բռնուողները, գրեթէ միշտ, միջոցների մէջ խտրութիւն չեն դնում: Նրանք համաձայնւում են ամեն ինչ անել, ամէն միջոցի դիմել, նոյն իսկ ստորութիւններ գործել, միայն թէ հասնեն իրենց նպատակին, այսինքն՝ հարստանալ կարողանան: Մեր հայրը վարժապետ ու ապա քահանա է եղել և գործնական, իրական կեանքի շփումից հեռու է մնացել: Նա առևտուրով, շահ և վնասի գործառնութիւններով չի զբաղել, հարստանալու միջոցներ չի փնտրել և մեզ՝ իրա երեխաներին, գործնական կեանքի հետ չի ծանօթացրել: Դրա հետևանքն եղել է այն, որ ես, բարեբախտաբար, թէ դժբախտաբար, առևտուրից, վաճառականութիւնից և ամէն տեսակի գործնական կոմպինացիաներից բոլորովին անտեղեակ և անընդունակ եմ մնացել և հետևաբար հարստանալու վերոյիշեալ ստոր և խաբեբայ ընդունակութիւններից զուրկ եմ եղել և չեմ էլ ափսոսում, որ զուրկ եմ եղել:

Այստեղ եղբայրս իր պատմութեան թելը յանկարծակի կտրեց: Ես լարած ուշադրութեամբ նրան լսում էի և չնայած անցեալ օրւայ սրտատրոփ և անհանգիստ սպասման ու ամբողջ գիշերւայ ընթացքին վագոնում ոտքի վրայ մնալու պատճառով յառաջացած յոգնածութեանը՝ շատ կը ցանկանայի եղբօրիցս լսել մեզնից բաժանուելուց յետոյ նրա առանձին անցկացրած տարիների պատմութիւնը:

– Շատ ներողութիւն, սիրելի՛ եղբայր,– յարեց նա,– ես բոլորովին մոռացայ, որ ճանապարհից նոր հասած յոգնած ու քաղցած կը լինես: Նախաճաշելուց մի քիչ յետոյ քեզ բաղանիք կառաջնորդեմ: Մի կարգին կը լողանաս և մարմնիդ կեղտ ու փոշուց կ'ազատուես: Յետոյ կը քնես, կը հանգստանաս, և ապա մեր խօսակցութիւնը կը շարունակենք: Ինչպէս քեզ, այնպէս էլ ինձ շատ հետաքրքիր է իմանալ ձեր փախուստի պատմութիւնն ու քեզ նման ականատեսի նկարագրութիւնը: Գիտեմ, որ շատ տխուր և ողբերգական է այդ, բայց մեզ՝ հայերիս համար՝ շատ հետաքրքիր: Դա նոյնիսկ մեր պանդուխտ կեանքի ուղեցոյցն ու անմոռանալի ուսուցմունք կը լինի: Հա՛, չմոռանամ ասելու, որ Թիֆլիսի բաղանիքները, իրենց քսակ քաշող բանուորներով, աշխարհահռչակ համբաւ ունեն:

Ես եղբօրս ոչինչ ասել չը կարողացայ, որովհետև նորից յանձնուել էի իմ ներաշխարհի մտքերի խառնաշփոթ ալեկոծումին: Մի քանի րոպէ անց եղբայրս սենեակում եղած կլոր սեղանի վրայ արծաթանման փայլող մի ափսէ դրեց, որի մէջ կար մի խոշոր ճերմակ ու կլոր հաց, պանիր, կարագ ու մեղր:

– Եթէ կը ցանկանաս ձեռներդ լուանալ, լուացարանը հեռու չէ: Հէնց մեր այս սենեակի կողքին է:

– Հաճոյքով լուացել կուզենայի: Գոնէ դէմքս ու ձեռներս մի քիչ այս կեղտ ու փոշուց կազատեմ:

ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՂԱՆԻՔՈՒՄ

Եղբօրս ուղեկցութեամբ մենք գնացինք վրացական մի բաղանիք: Ինձ համար բոլորովին նորութիւն էր այս բաղանիքը: Մեր մերկութիւնը ծածկելու համար մեզ ամէն մէկիս տւին երկու մետրանոց երկարութեամբ և մօտ կէս մետր լայնութեամբ գունաւոր բամբակաթել մի կտոր: Տարիներից յետոյ պարսկական բաղանիքներում նորից հանդիպեցի այսպիսի գունաւոր կտորների: Նրանք «լոնգ» են կոչւում:

Վրացական բաղանիքը մի մեծ սրահաձև շինութիւն էր:

Շուրջաշուրջ պատերի կողքին դրուած էին տաք ու պաղ ջրի ցնցուղ-դուշեր: Ցնցուղների տակին դրուած էին տախտակեայ երկար նստարաններ, որոնց վրայ նստած կամ պառկած լողանում էին բաղանիք եկողները: Հաշւեցի երկու երկար պատերի շարքին 12-ական, իսկ կարճ պատերի կողքին՝ 8-ական ցնցուղներ, ուրեմն 40 ցնցուղ և 40 նստարաններ կային, նրանցից կէսից աւելին բռնուած էր:

Եղբայրս ինձ յայտնեց, որ կէսօրից յետոյ՝ ժամի 5-ից սկսած, բոլոր այս ցնցուղները լողացողների կողմից բռնուած են լինում, իսկ դրսում մարդիկ ստիպւած են լինում հերթի սպասելու: Ցնցուղները ընդհանրական էին և ոչ մի պատ կամ շիրմա նրանց իրարից չէր բաժանում:

Եղբօրս կարգադրութեամբ մեզ մօտ եկան երկու վրացի լողացնող բանուորներ: Երբ նրանցից մէկը, ինձ մօտենալով, լողացնել ուզեց, ես կամքիցս անկախ և ակամայ սրտաղողի ընկայ: Իմ նիհարակազմ մարմնի մօտ նա աժդահա էր թւում իր հուժկու թիկունք-բազուկներով: Վրացերէն ինչ որ բառեր արտասանեց, որից ես ենթադրաբար ոչինչ կարող էի հասկանալ:

Եղբայրս ինձ օգնութեան հասաւ և լողացնողին բացատրեց, որ ես նորեկ եմ և տաճիկների ձեռքից ճողոպրած գաղթական:

Վրացին սկսեց բարձրաձայն քահ-քահով ծիծաղել: Զարմացայ նրա յանկարծահաս ուրախութեան և ծիծաղի համար:

Նա նորից եղբօրս մի քանի խօսքեր ասաց և ինձ համարեայ ուժով երկարացած՝ պառկեցրեց երկար նստարանի վրայ և սկսեց իր լողացնելու գործն ու ծիսակատարութիւնը:

Չնայած նրա հուժկու բազուկներին և կոշտ ու կոպիտ ձեռներին՝ նա մեծ խնամքով և զգուշութեամբ ինձ լողացրեց և մարմինս քսակով տրորելով՝ մաքրեց ու մաքրոտեց:

Երբ եղբօրս հետ բաղանիքից դուրս եկանք, ինձ համար ես անճանաչելի էի դառել: Կարծես մի ժամ առաջւայ հոգնատանջ, բէզարած գաղթականը չէի այլևս: Մարմնով վերածնւած մի նոր մարդ էի կարծես: Զգում էի, որ արիւնս թեթևօրէն շրջագայում է երակներումս, և ազատ ու անկաշկանդ շնչում եմ:

Եղբօրս այս շուտափոյթ սիրալիրութեան համար շնորհակալութիւն յայտնելով՝ հարցրի.

– Ինչու՞ համար ինձ լողացնող վրացին այդքան լաւ տրամադրելով ծիծաղել սկսեց և ի՞նչ ասաց: Եղբայրս իր հերթին, ուրախալից քրքիջով յայտնեց ինձ:

– Նա ասում էր, որ իհարկէ տաճիկները քու եղբօր նման նիհարակազմ ու սովատանջ մարդկանց հետ կռուելիս իրենց հերոսներ կը հաշուեն: Եթէ նրանք իսկապէս տղամարդ հերոս են, թող մեզ հետ կռուելու ելնեն, մինչև նրանց նանը լացացնենք:

– Ապահով և տաք տեղ են ընկել այս վրացիները,– դառն ու կսկծոտ տխրութեամբ պատասխանեցի եղբօրս: Բաղանիքում այդպէս յոխորտացող այս պարոնները, եթէ մեր տեղն եղած լինէին և միայն մէկ ժամ ենթարկւած լինէին մեզ վրայ յարձակւող բարբարոս տաճիկների՝ մեր գլխին կարկտի նման թափած և ամէն ինչ ջարդ ու փշուր անող և կրակ ու մոխրի վերածող ռմբակոծումներին ու համազարկերին, նրանք՝ այդ ինքնահաւան վրացիները, այլևս նոյնիսկ իրենց երազում չէին տեսնի ոչ միայն այս տաքուկ բաղանիքները, այլև նրանց՝ այս դրախտանման Թիֆլիս կոչւող քաղաքը:

Տուն վերադառնալիս եղբօրս սենեակում դրւած գտայ մի երկրորդ փայտեայ թախտ՝ մի մաքուր ներքնակով և ճերմակ ու օսլայած սաւանով հագցւած վերմակով: Եղբայրս, ինձ այդ մահճակալը ցուցնելով, ասաց.

– Մինչև ժամի 2-ը, երբ մենք սովորաբար ճաշի սեղանին ենք նստում, 3 և կէս ժամ է մնում: Պառկի՛ր, քնի՛ր և մի լաւ հանգստացի՛ր մինչև իմ վերադարձը: Ես հիմա գնում եմ գործերս կարգադրելու:

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կեսօրից յետոյ ժամի 2 և կէսն էր: Եղբայրս, իմ թախտի մօտ կանգնած, ճակատս շոյելով, կամաց և մեղմ ձայնով ինձ քնից արթնացնել էր ուզում:

– Սիրա՛ք, սիրելի՛ս, չե՞ս ուզում ճաշելու համար վեր կենալ:

– Հէնց այս ոոպէիս, եղբա՛յր,– պատասխանեցի և անկողնումս նստեցի:

– Գուցէ քեզ քնած թողնէի, բայց ենթադրեցի, որ քաղցած կը լինես, և ամենից կարևորն է, մեր հիւրընկալ հարևանները չը համաձայնեցին առանց քեզի ճաշի սեղանին նստել: Եթէ ցանկացար, ճաշից յետոյ նորից կը քնես:

– Բայց մի՞թէ մենք հարևանների հետ միասին ենք ճաշելու,– հարցրի՝ աշխատելով անհանգստութիւնս թաքցնել:

– Քանի որ այսօր քու ժամանման առաջին օրն է, նրանք խնդրեցին իրենց հետ միասին ճաշել: Եթէ քեզ հաճելի չը լինի, մենք կարող ենք այնպէս դասաւորել, որ էգուցւանից առանձին ճաշենք:

Եղբայրս, պատասխանիս չսպասելով, թախտիս մօտ դրաւ մի նստարան, որի վրայ կար մի բոլորովին նոր կոստում, մի ճերմակ շապիկ և մի զոյգ կօշիկ:

– Սրանք քեզ համար են առնւած: Յոյս ունեմ, որ վրադ կը նստի: Հապա մի անգամ փորձի՛ր, տեսնենք:

– Նշանակում է գաղթականին վերանորոգե՞լ ես ուզում, սիրելի՛ Արմեն: Չափազանց շնորհակալ եմ քեզնից: Իսկապէս իմ այս կօշիկներով ու հագուստներով պիտի ամաչէի փողոց դուրս գալու: Այս բոլորից յետոյ ուրեմն իմ ներկայութեամբ քեզ նորանոր գլխացաւանքի մէջ գցեցի:

– Գլխացաւա՞նք, մի՞թէ իմ հարազատ եղբօր համար այսպիսի հասարակ օգնութիւնը գլխացաւանք պիտի համարուէր ինձ համար:

Ես հագայ եղբօրս՝ ինձ համար գնած շապիկն ու կոստումը և կօշիկները: Նրանք ինձ վրայ լաւ նստեցին: Պիջակը մի քիչ լայնկեկ էր վրաս, բայց ոչինչ, ինձ սազում էր: Իբր երախտագիտութեան արտայայտութիւն՝ մի քանի անգամ եղբօրս համբուրեցի: Նա, իր հերթին փոխադարձելով, ինձ սրտապնդելու համար յայտնեց:

– Հիմի քիչ ջէնդլմէնի տեսք ունես: Մնում է միայն մազերդ խուզել և կարգի բերել:

Ապա, իր թևի ժամացոյցին նայելով, ասաց.

– Մինչև ժամի 5 և կէսը, այսինքն՝ երեկոյեան թերթերի հրատարակումը, ամբողջ 3 ժամ է մնում: Մենք ճաշից յետոյ քեզ հետ սափրիչի կգնանք և մի քիչ էլ Թիֆլիսի գլխաւոր պողոտաները ման գալով՝ կը տեսնենք:

– Ներողութիւն եմ խնդրում, եղբա՛յր: Ես տարօրինակօրէն անհամբեր բնաւորութիւն ունիմ և միշտ հնարաւորին չափ շուտ ցանկանում եմ հետաքրքրութեանս պահանջը բաւարարել: Ի՞նչ գործ ունիս թերթերի հրատարակման հետ:

Մի քիչ սպասելով՝ աւելացրի.

– Քու գործերիդ վերաբերեալ դու մինչև վերջն էլ մեզ ոչինչ չես գրել: Այս իսկ պատճառով էլ ինձ այդ հարցը շատ է հետաքրքրում: Եթէ որևէ անպատեհութիւն չկայ...

Մինչ ես ուզում էի նախադասութիւնս վերջացնել, եղբայրս պատասխանեց.

– Դրա պատմութիւնը երկար է: Իմ Թիֆլիս հասնելուց յետոյ ես քեզ արդէն պատմեցի իմ փնտրտուքների ու վարանումների մասին: Մնացորդ պատմելու ժամանակը կը ճարենք: Ներկայիս ես այս Հալաբար կոչւող թաղամասի զառիվայրում՝ Սօլօլակ տանող կամրջագլխի այս մասում, մի փոքրիկ գրախանութ ունիմ, որ այստեղի բարբառով կիոսկ է կոչւում: Այդ կիոսկում ծախում եմ օրւայ նորագոյն գրականութիւնն ու հրատարակւող նոր թերթերը: Ահա այս է ներկայի իմ զբաղմունքը: Այս գործը շօշափելի շահ չի բերում, բայց իմ ապրուստն ապահովում է:

***

Հալաբար թաղամասը գտնուում էր բարձրադիր հարթատարածքի վրայ: Թիֆլիսի իսկական քաղաքամասը նրա ցածումն էր տարածուած: Եղբօրս հետ իջանք Հալաբարից ցած թեքուող ճանապարհով և նրա վերջաւորութեան վրայ՝ երկաթեայ բաւական լայն ու երկար կամրջագլխին, եղբայրս ցոյց տուեց իր՝ տախտակեայ շարժական փոքր գրախանութը, որին նրանք կիոսկ էին անուանում:

Այդ կիոսկը, որն աչքի չափով գրաւում էր 2 մետր երկարութեամբ և մէկուկէս լայնութեամբ մի տարածութիւն, խճողուած էր գրքերով, բրոշիւրներով, ժուռնալներով և օրաթերթերով: Կիոսկի մուտքին կանգնած էր եղբօրս ապրած տան հարևան վրացի ընտանիքի երիտասարդը, որը մեզ ժպտադէմ և վրացերէն լեզուով բարևեց:

Եղբայրս ինձ բացատրեց, որ երկու ու կէս տարի է, ինչ այս երիտասարդի հետ բարեկամացել և նրա հետ ընկերանալով՝ ձեռնարկել է այս գործին: Նա ասաց, որ այս երիտասարդի առաջարկով էլ նրա երեք հոգինոց ընտանիքի մօտ ապրելու է գնացել և հացաբաժնորդ (նախլեբնիկ) է դառել:

Ինձ համար արդէն պարզուեց եղբօրս՝ այդ վրացի ընտանիքի մօտ բնակուելու ու նրանց հետ սեղանակից լինելու պատմութիւնը: Այդ վրացի երիտասարդի հետ գործի ընկեր դառնալով և նրանց ընտանիքի, այսինքն, նրա մօր ու քրոջ, սեղանակից և մըշտական շփման մէջ լինելով՝ եղբայրս վրացերէն սովորել և, ինչպէս նկատեցի, այդ լեզուով ազատ ու սահուն խօսում էր:

Եղբօրս հետ մենք էլեկտրաքարշ տրամվայը նստեցինք և ինձ խոստացած երկու ժամւայ փոխարէն ամբողջ չորս ժամ շրջագայեցինք Թիֆլիսի գլխաւոր պողոտաներում:

ԳՈՐԾԻ ՓՆՏՐՏՈՒՔԸ

Վրացի երեք հոգինոց ընտանիքը, որոնց հետ եղբայրս ապրում էր, շատ սիրալիր վերաբերմունք էին ցոյց տալիս եղբօրս և, ի միջի այլոց, իմ նկատմամբ: Երեք տարի առաջ այդ ընտանիքի հայրը թոքերի ուժեղ բորբոքման հետևանքով մահացել էր: Տունը, որում ապրում էին, իրենց սեփականութիւնն էր: Տունը փոքր էր և ներփակում էր մի փոքր բակ, որի մէջտեղում գոյութիւն ունէին ուտելու կանաչեղէն, ցանուած երեք փոքրիկ ածուներ և չորս փոքր սենեակներ ու երկու ներքնասենեակներ: Սենեակներից երեքը արևահայեաց էին, որոնցից մէկը յատկացուած էր եղբօրս, երկրորդը՝ իրենց բնակութեան և երրորդը ծառայում էր որպես ճաշարան: Երիտասարդ վրացին այդ ճաշարանում դրուած թախտի վրայ էր քնում գիշերները:

Ընտանիքի ապրուստի միջոցները շատ սահմանափակ ու համեստ էին: Ինչպէս հէնց առաջին օրում նկատեցի, նրանք ապրում էին դժուարութեամբ, ծայրը ծայրի հասցնելով: Մայրն ու աղջիկը գուլպա էին գործում և ձեռագործ անում ու այդպիսով իրենց ընտանիքի ապրուստի կարիքները լրացնում էին:

Ընդհանրապէս նրանք վրացերէն էին խօսում, բայց երբեմն էլ, մանաւանդ ինձ հետ, հայերէն: Նրանց գիտցած հայերէնը կիսատ-պռատ ու անկատար էր: Ինչպէս կարողացայ իմանալ, նիւթական բաւարար միջոցներից զրկուած լինելու հետևանքով աղջիկը նախակրթարանն աւարտելուց յետոյ հնարաւորութիւն չէր ունեցել իր միջնակարգ կրթութիւնը շարունակելու:

Մայրն ու աղջիկը համեստ ու կիրթ էին: Ապրում էին չափազանց համերաշխ ու փոխադարձ սիրով ու յարգանքով: Եղբօրս ու իմ նկատմամբ շատ փափկանկատ և ուշադիր էին:

***

Թիֆլիս հասնելուց յետոյ՝ չորրորդ օրւայ առաւօտւանից սկսեցի ինձ համար մի գործ փնտրել: Ենթադրում էի, որ Թիֆլիսում աւելի հեշտութեամբ կը յաջողուի մի գործ ճարել, քան մերոնց մօտ՝ Ղարաքիլիսէում:

Վճռեցի գնալ Թիֆլիսի Գաղթականական կոմիտէի մօտ և նրանցից ինձ համար որևէ գործ խնդրել: Այդ կոմիտէի ժողովատեղին Խօջեվանքումն էր: Նրանք շաբաթական երկու անգամ ժողով էին գումարում և աշխատում էին Թիֆլիս հասնող գաղթականութեան պարենով, հագուստով և գործ հայթայթելով օգնել:

Առաջին անգամը, երբ ներկայացայ այդ կոմիտէին, նրանք ինձ մանրամասն հարց ու փորձի ենթարկեցին: Նրանց հայտնեցի, որ ապրիլեան կռիւներից շուրջ մի տարի առաջ՝ Երամեան միջնակարգ դպրոցն աւարտելուց յետոյ, նոյն դպրոցում՝ որպէս ուսուցիչ, պաշտօնավարում էի: Պատմեցի նաև, որ ապրիլեան կռիւների շրջանում, պարենապահեստի գործերով և նրանից յետոյ քաղաքապետարանի քարտուղարն եմ եղել:

Ինձ ուշադրութեամբ լսելուց յետոյ կոմիտէի անդամներից մէկը, որի ազգանունը յետոյ իմացայ՝ Բարսեղով էր, ինձ ասաց.

– Էգուց մի խնդիր կը գրես էլեկտրաքարշ տրամվայի վարչութեան անունով և ինձ մօտ կենտրոնական կայարանը կը բերես: Գուցէ կարողանամ մի թեթև գործ յաջողացնել քեզ համար:

Չափազանց ուրախացած՝ շնորհակալութիւն յայտնեցի ինձ գործ խոստացող մարդուց և տուն վերադարձայ թեթևացած սրտով:

Ես նւազագոյն ցանկութիւն չունէի եղբօրս նիւթական համեստ բիւջէի հաշւին ապրելու և ձգտում

էի օր առաջ գործ գտնելով՝ գոնէ իմ բաժինն ընկնող ծախսերը ծածկելու: Ինձ մօտ հաշւում էի, որ եթէ ինձ յաջողուելիք գործի վարձատրութիւնը բաւարար լինի, ի վիճակի կը լինեմ եղբօրս օգնելու, որպէսզի նա կարողանայ գործը ընդարձակել և աւելի շահաւէտ դարձնել: Մտածում էի նաև, որ իմ աշխատանքից իմ սիրելի քրոջ հագուստի և ուրիշ ծախսերի համար, անպատճառ, ամսական մի բաժին պիտի յատկացնեմ:

***

Ընթրիքի սեղանին նստելիս յայտնեցի եղբօրս ու սեղանակից վրացի ընտանիքին, որ էլեկտրաքարշի հիմնարկութիւնից մի անձնաւորութիւն ինձ խոստացել է մի գործ յաջողացնել: Վրացի երիտասարդը քննական ոճով ու ակնարկով ինձնից հարցրեց.

– Գործը խոստացողի ազգանունը կարո՞ղ էք յիշել:

Ես անմիջապէս պատասխանեցի՝ Բարսեղեան:

Երիտասարդն անմիջապէս ճանաչեց ինձ գործ խոստացողին:

– Նա Բարսեղեան չէ, Բարսեղով է ճանաչւած: Եթէ խոստացողը նա է, անպատճառ կը յաջողացնի:

Մինչ այդ ես չէի իմանում, որ ինձ գործ խոստացողն այդքան կարևոր պաշտոն ունի: Ներքուստ ուրախացայ, բայց աշխատեցի ինձ սառնարիւն ցոյց տալ:

Եղբայրս էլ շատ ուրախացաւ, որ ինձ յաջողւում է Թիֆլիսում գործ ճարել: Նա շատ էր ցանկանում, որ գոնէ մի առ ժամանակ իրա մօտ մնամ: Համոզւած էր, որ եթէ գործ գտնելու չը լինեմ, երբէք չեմ համաձայնւի նրա բեռը լինել:

Յաջորդ օրն իսկ, առանց յետաձգելու, գրեցի իմ դիմումը: Իմ գիտցած ռուսերէնը չափազանց թոյլ էր և յաճախ անհասկանալի: Մտածեցի ուրիշի գրել տալ իմ դիմումը, բայց յետոյ փոշմանեցի: Մտածեցի իմ գիտցածով բաւականանալ, որովհետև, եթէ ինձ քննութեան ենթարկէին, և իմ գիտցածի չափը յայտնուէր, ինձ համար վատ դրութիւն կստեղծուէր, և շատ հաւանաբար գործը բոլորովին կը վիժէր:

Երբ ես էլեկտրաքարշի կենտրոնական կայարանը գնացի և ուզեցի Բարսեղովին ներկայանալ, դռնապանը ներս չթողեց: Անքաղաքավարի և կոշտ տոնով և ռուսերէնով ասաց.

– Նա զբաղւած է, նստի՛ր և սպասի՛ր, մինչև կարգադրութիւն ստանամ:

Նստեցի, ուրիշ ճար չ'ունէի: Անցաւ մի ժամ, երկու ժամ, բայց դռնապանը, որի խօսակցութեան ոճից եզրակացրի, որ վրացի պէտք է լինի, չը համաձայնեց ինձ ներս թողնել: Ինձնից զատ՝ ուրիշ այցելուներ եկան, ներս մտան ու դուրս եկան, բայց ես անվերջ ու անճար սպասողի դերումն էի: Ամէն անգամ, երբ այդ անտաշ ու կոպիտ դռնապանից խնդրում էի ինձ կառավարչի մօտ ներս թողնել, նա իր աղաւաղւած ռուսերէնով և վրացական շեշտով միևնոյն պատասխանն էր տալիս.

– Ի՜նչ է, չե՞ս տեսնում, որ նա զբաղւած է:

Ուղիղ երկու ու կէս ժամից յետոյ, տեսնելով իմ յամառութիւնն և մտածելով, որ ձեռք քաշողը չեմ, և մի գուցէ իր համար անյարմար վիճակ ստեղծի, երբ կէսօրին կառավարիչը, դուրս գալով, ինձ սպասելիս տեսնի, ձեռքիցս խլելու ձևով ջղայնացած դիմումս վերցրեց և քթի տակով վրացերէն փնթփնթալով և հաւանաբար ինձ հայհոյելով՝ ներս տարաւ: Մի քիչ յետոյ դուրս գալով նորից կրկնեց՝ սպասիր՛:

– Սպասի՛ր, սպասի՛ր, հէրդ եմ անիծել, անպատկառ և անամօթ մարդ, ինչքա՞ն պէտք է սպասեմ,– փնթփնթացի՝ այս անգամ իմ հերթին ջղայնացած և շատ դժգոհ մնացած այդ դռնապան կոչեցեալ արարածից:

Նորից անցաւ մի ամբողջ ժամ: Յուսահատւել էի արդէն: Ենթադրում էի, որ իմ դիմումը կառավարչին չի ներկայացրել այդ անպիտանը:

Բայց ահա, վերջապէս զանգահարութեամբ ներս կանչւած դռնապանը, դուրս գալով, այս անգամ բոլորովին փոխւած տոնով ինձ ասաց.

– Խնդրեմ, նե՛րս համեցէք:

Մի փոքր յուզւած և անհանգիստ ներս մտայ: Կառավարիչը՝ հէնց նոյն իմ տեսած Բարսեղովը, սենեակում բոլորովին մենակ, նստած էր բազմաթիւ թղթածրարներով ու թղթերով ծանրաբեռնւած մի մեծ և գեղեցիկ գրասեղանի յետև: Ինձ իր սեղանի կողքին դրւած նստարանին նստելու հրաւիրեց:

– Այս խնդրագիրն ինքնե՞րդ էք գրել,– հարցրեց ինձ:

– Ինքս եմ գրել, այո՛:

– Շատ աղէկ: Դուք, դժբախտաբար, ռուսերէն չը գիտէք: Ասենք բոլորովին զարմանալի չէ: Էլի հրաշք է, որ մի վանեցի գաղթական կարող է ռուսերէն այնքան գիտնալ, ինչքան դուք գիտէք: Ես ձեզ մի հարցարան կը տամ: Լցրէ՛ք և վերադարձրէք էգուց կամ միւս օրը: Չեմ կարծում՝ անհրաժեշտ լինի, որ հարցարանում յիշատակէք ձեր փախստական-գաղթական լինելու հանգամանքը: Դրա կարիքը չկայ: Գրէ՛ք, որ Ղարաքիլիսէիցն էք եկել: Եթէ ուրիշ լեզուներ գիտէք, պայմանով, որ ռուսերէնի գիտցածիդ պէս չը լինի, յիշատակէ՛ք:

Մի քիչ սպասելուց և ինձ վրայ քննական ուշադիր հայեացք գցելուց յետոյ՝ աւելացրեց.

– Ամէն պարագայում, քանի որ ռուսերէն չը գիտէք, գրասենեակային գործի վրայ յոյս մի՛ դրէք: Այսօրւանից աշխատեցէք, ինչքան հնարաւոր է շուտ և լաւ ռուսերէն լեզուն սովորել: Այս երկիրը վերջ ի վերջոյ ռուսներինն է, և նրանց պաշտօնական լեզուն էլ ռուսերէն է: Բոլոր պետական և կիսապետական, ինչպէս մեր հիմնարկութիւնն է, շրջանակներում ծառայելու առաջին պայմանը ռուսերէն

լեզուն գիտնալն է: Իմ հայրն ու մայրն էլ Երզնկա-Էրզրումից գաղթած հայերիցն են եղել: Նրանք դրութիւնը լաւ ըմբռնած են եղել և ինձ ռուսական կրթութիւն են տուել: Եթէ կարողանաք մինչև մէկ տարի ռուսերէն բաւական լաւ սովորել, և ես իմ ներկայ պաշտօնիս լինեմ, գուցէ ինձ յաջողուի ձեզ գրասենեակային պաշտօնի դնել:

– Չափազանց շատ շնորհակալ եմ ձեր բարեացակամութեան և խորհուրդի համար: Վաղն եթ այս հարցարանը կը լցնեմ և ձեզ կը բերեմ: Միայն թէ..., մտածում էի նախադասութիւնս յարմար ձևով լրացնել, երբ կառավարիչը հարցրեց.

– Միայն թէ ի՞նչ: Ասէ՛ք, ինչ որ կուզենայիք ասել:

– Իմ ֆիզիկական ուժերն այնքան քայքայուած են, որ հաւանաբար բանտրի ծանր գործ անելու ի վիճակի չեմ լինելու: Մի գուցէ էլեկտրաքարշ վագոններում կարելի լինէր ինձ մի գործ տալ: Յետոյ բարի եղէք կարգադրելու, որ այս դռնապանն էգուց ինձ թոյլատրի ձեզ մօտ ներս մտնելու: Այսօր ինձ լրիւ երեք ժամ դռանը պահել է:

– Շատ լաւ, ես նորից ձեր անելիք գործի մասին կը մտածեմ:

Ապա զանգահարելով՝ ներս մտնող դռնապանին կարգադրեց:

– Էգուց կամ յետոյ այս պարոնին առանց ուշացնելու ներս առաջնորդէ՛ք:

ՍՊԱՍՈՒՄ ԵՎ ՓՆՏՐՏՈՒՔ

Յաջորդ օրը հարցարան լցրած՝ էլեկտրաքարշի հայազգի կառավարչին տարայ: Դռնապանը իմ բարևիս մարդավարի պատասխանեց:

– Կառավարչի՞ն էք ուզում, այս րոպէիս,- ասաց ու ներս մտաւ կառավարչի սենեակը: Մի րոպէից յետոյ դուրս գալով՝ յայտնեց.

– Նրանք ժողովի են նստած: Ձեր թուղթը տուէ՛ք կառավարչին յանձնեմ, յետոյ կը գաք պատասխանը ստանալու:

Ճակատս անմիջապէս սառն քրտինքով ծածկուեց: Ինձ վարկենապէս վատ զգացի: Ինձ թւաց, որ գործս վիժուած է: Հաւասարակշռութիւնս պահելու համար նստեցի սպասողների համար դրուած նստարաններից մէկի վրայ: Ակամայ ձեռքս ծոցիս գրպանը տանելով՝ հանեցի ինձ տրուած և պատասխանները լցուած հարցարանն ու դռնապանին պարզելով՝ ասացի.

– Խնդրում եմ հարցրէք՝ ե՞րբ գամ պատասխանը ստանալու:

Հակառակ ենթադրութեանս՝ դռնապանն այս անգամ չը կոպտեց և քաղաքավարութեամբ խնդիրս կատարեց: Սենեակը՝ կառավարչի մօտ մտնելով և մի պահ յետոյ դուս գալով՝ յայտնեց.

– Երկուշաբթի՝ առաւօտեան ժամի 8-ին, կառավարչի մօտ եկէք:

Մի քիչ սրտապնդուեցի և նոյնիսկ ինձ մեղադրեցի այդքան շուտափոյթ յոսահատելուս համար: Օտարականի, այն էլ գաղթական մարդու գործ տալը մի՞թէ այդքան հեշտ է: Ինչու՞ համար և ի՞նչ իրաւունքով ես այդքան խստապահանջ պիտի լինեմ: Մի՞թէ այս օտար երկրում օգնութիւնն ու աջակցութիւնը շուտափոյթ և պարտադիր պիտի լինի, թէկուզ էլ այդ աջակցութիւնը խոստացողն էլ հայ լինի:

Դռնապանին շնորհակալութիւն յայտնելով և ինձ յուսադրել ջանալով՝ էլեկտրաքարշի կենտրոնական կայարանից դուրս եկայ:

Չորեքշաբթի էր այդ օրը: Կայարանից դուրս գալուց ստուգեցի ժամանակը: Դեռ երկու ժամ կէսօրին մնում էր: Բացի այդ օրը՝ ամբողջ չորս օր էլ մնում էր վճռական այո՛ կամ ոչը լսելու համար: Օ՜հ, ի՜նչ տանջալի է սպասումը, մանաւանդ երբ այդ սպասումը կապւում է կեանքի և գոյութեան պայքարին, որևէ կարևոր պահի բախտորոշման հետ: Չգիտեմ ինչի՞ համար՝ ինձ շատ էր շահագրգռում գոնէ ժամանակաւորապէս Թիֆլիսում մի գործ գտնելու հանգամանքը: Մի գուցէ նրա համար, որ ես ձգտում էի, ինչքան կարելի է շուտ, ազատուելու թափառական-գաղթական լինելու տիտղոսից կամ գուցէ նրա համար, որ ես նւազագոյն ցանկութիւն չ՚ունէի, նոյնիսկ մի օր աւելի, եղբօրս համեստ բիւջէի վրայ ծանրաբեռնուելու և կամ աւելի շուտ նրա համար, որ ես ինձ յոյս էի ներշնչում, Թիֆլիս մնալով, հնարաւորութիւն ունենալ փնտրտուք կատարելու և գտնելու այն անձնաւորութիւնը, որին ես կորցել էի, բայց որին մոռանալ երբէք չէի կարող:

***

Նահանջ-փախուստի հէնց առաջին ժամից սկսել էի փնտրել նրան, և, սակայն, իմ բոլոր փնտրտուքները զուր և ապարդիւն էին անցել: Ճանապարհի՝ իրար յաջորդող բազմաթիւ տանջանքները, զրկանքները, անտանելի յոգնածութիւնը, տանջալի անքնութիւնը, հարազատների անփոխարինելի կորուստը կարողացել էին ջլատել, քայքայել իմ ֆիզիկականը, բայց երբէք, նոյնիսկ մի ժամ չէին կարողացել նրա անմեղ, համեստ, կակաչանման դէմքը պարուրել, ծածկել, հեռացնել և անհետացնել իմ սրտի ու հոգու մշտարթուն տեսողութիւնից:

Հազիւ կեանքի 17 տարիներ բոլորած այդ աղջիկը՝ Անուշը, դիւթական, քաղցրանուշ երազի նման իմ սրտի խորքում լուսաշող և արևածիլ հետքեր թողնելով, անցել-գնացել և անհետացել էր, բայց ես յամառում էի ենթադրելու, որ նա պիտի վերադառնայ և նորից պիտի լուսաւորի, լուսաշողի սիրակարօտ սրտիս տենչատագնապ խորքերը:

Ես նրան փնտրում էի ամէն տեղ, ամէն ժամ, անդադար ու անվերջ: Բայց, ափսո՜ս, նրանից և ոչ մի հետք գտնել չէի կարող:

Նրա հայրը՝ Սահակ աղան, վերջին ոռպէին ինձ յայտնեց, որ Անուշն իր մօր հետ հեռացել է: Նրանք Վանից մեկնելիս ձի են ունեցել: Հետևաբար, յոգնածութեան պատճառով ճանապարհին մնալ չէին կարող:

«Յոգնածութեան հետևանքով ճանապարհին մնալ չէին կարող»,– կրկնում և նորից կրկնում էի ինձ համար, բայց յետոյ ինքս ինձնից հարցնում էի:

«Չէ՞ որ նրանք՝ մի մայր և մի աղջիկ, միայնակ և անպաշտպան էին: Փախուստի այդ տակնուվրայութեան, խուճապի և առաւ-փախաւի այդ անիծեալ ճանապարհին մի՞թէ չէր կարող պատահել, որ նրանցից խլած կամ գողացած լինեն այդ ձին, և նրանք յոգնաբեկ, յուսահատ և անօգնական ճանապարհի մի անկիւն մնացած կամ բարբարոս թշնամու ճանկը ընկած լինէին»:

Այս վերջին կոշմարային ենթադրութիւնն ինձ կատաղութեան կրակով այրում և մրրկում էր: Այդ անվերջանալիօրէն մաշող մտատանջութեան ընթացքում առաջին հերթին ինքս ինձ էի մեղադրում իմ անփութութեան համար: Չէ՞ որ ես լրիւ մի օր առաջ նահանջի լուրն իմացել էի: Ինչու՞ վերջին օրը գործի գնալու և մինչև վերջին ժամը գործի մնալու փոխարէն իմ ամենասիրելի հարազատների ազատման համար ոչինչ չէի արել:

Անուշից և նրա մօրից բաժանուած մնալու և նրանց հաւանական կորուստն ու կործանումը պատճառելու պատասխանատուն ես, միայն ես ինքս եմ եղել: Եթէ մի երկու-երեք ժամ առաջ նրանց տունը գնացած լինէի, նրանցից բաժանուած չէի լինի և նրանց հաւանական կորուստի համար այդքան հոգեկան տանջանք ու տագնապ չէի ունենայ:

ՔՆՆԻՉԻ ՊԱՇՏՕՆԻՍ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Երկուշաբթի առաւօտեան՝ որոշուած ժամից մի քիչ էլ աւելի շուտ, Թիֆլիսի էլեկտրաքարշ տրամվայի կառավարչի մօտ գնացի՝ գործիս պատասխանը ստանալու համար: Մինչ այդ օրերի ընթացքին ինձ չափազանց անհանգիստ էի զգում: Շատ մեծ ցանկութիւն ունէի, որ չը մերժեմ:

Չ'գիտեմ ինչու՞, ինձ այնպէս էր թւում, որ եթէ այս առաջին անգամ պատեհութեամբ անյաջողութեան մատնուեմ, նրանցից յետոյ կեանքումս ուրիշ ձախորդութիւնների պիտի ենթարկուեմ: Որոշուած ժամի 8-ին միայն 15 ոռպէ էր մնում: Չ'ուզեցի նախքան ժամի 8-ը կառավարչի մօտ գնալ: Այդ քառորդ ժամը շատ աւելի անտանելի թւաց, քան մինչ այդ սպասումիս 4-5 օրերը: Տագնապում էի, և սիրտս ուժեղ բաբախում էր:

Վերջապէս կենտրոնական կայարանի խոշոր ժամացոյցը դանդաղ, բայց ուժգին զարկերով, անհամբերութեամբ սպասուած վճռական ժամը ազդարարեց:

Այդ օրն աշխատել էի հնարաւորութեան սահմաններում ներկայանալի տեսք ունենալ: Լաւ ածիլուած դէմքով և խնամքով հարդուկուած կոստումով և նոր ներկուած կօշիկներով, պ. Բարսեղովին ներկայացայ:

Նա այս անգամ ինձ աւելի սիրալիր ընդունեց և բարևի համար ձեռքը ինձ աւելի երկարեց: Նոյնիսկ կարողացայ նրա՝ միշտ ծանրախոհ և լուրջ դէմքին ժպիտի հետքեր նկատել:

– Պ. Սիրա՛ք, սկսեց նա, – անցեալ անգամ ձեզ ասացի և հիմա նորից կրկնում եմ, որ եթէ ցանկանում էք այս երկրում պաշտօնեայ լինել և ապագային ձեզ համար դիրքը շահել, դուք ստիպուած էք ռուսերէն սովորել և այն էլ լաւ սովորել:

Կարծես սառցաջրի ցնցուղը յանկարծ բացուեց գլխիս, և ամբողջ մարմինս տենդալից դողի գցեց: «Ուրեմն,– մտածեցի ես,– յաջողութեան ամէն յոյսը կորած է»: Անհամարձակ և սրտառուչ սպասում էի չարաբաստիկ եզրակացութիւնը լսելու:

– Այդ բոլորից յետոյ,– լրացրեց նա, – ինձ յաջողուեց առայժմ ձեզ էլեկտրաքարշ տրամվայի գծերից մէկի վայ ստուգիչ-քննիչ նշանակել: Ձեր ամսական ռոճիկը 75 ռուբլի կը լինի: Յոյս ունեմ, որ այս նշանակումից դժգոհ չէք մնալու:

– Չափազանց շնորհակալ եմ, պ. կառավարի՛չ, դուք ինձ անսահմանօրէն երախտապարտ էք թողնում ձեր այդ աջակցութեամբ:

Եւ, իսկապէս, սրտանց ես այնքան շատ ուրախացայ, որ ինձ թւաց՝ այդ հայազգի կառավարիչն ամբողջ Թիֆլիս քաղաքն է ինձ նւիրում: Ես ճշգրիտ գաղափար չ'ունէի այդ ամսական 75 ռուբլի կոչուած գումարի մասին, բայց անմիջապէս եզրակացրի, որ ինձ նման նորեկ և անպաշտպան գաղթականի համար դա շատ լաւ ռոճիկ էր:

– Հիմի ուշադրութեամբ լսէք, ինչ որ ձեզ ասում եմ: Դուք, անկասկած, ըմբռնեցիք ձեր գործի էութիւնը: Դուք պէտք է, տոմսավաճառի մօտ եղած ցուցակի համաձայն, ստուգէք տրամվայի վագոններում ճամփորդող մարդկանց ձեռքում եղած տոմսակ-բիլէթների համարները, որպէսզի իմանաք՝ նրանց ծախած տոմսերը ցուցակի վրայ նշանակուած տոմսերի շարքում (սերիում) կա՞ն, թէ՞ ոչ: Այդ գործը մեծ ուշադրութիւն և միաժամանակ պատասխանատուութիւն ունի: Նշանակուած շարքում գոյութիւն չ'ունեցող տոմսերը կեղծուած պէտք է լինեն: Սկզբնական շրջանում մի քիչ դժուար կը լինի, բայց յոյս ունիմ, որ շատ շուտով կը վարժուէք և գործի էութիւնը կ'ըմբռնէք:

– Յոյս ունեմ, որ կը յաջողեմ անթերի կատարել ինձ վստահուած գործը:

Նորից յայտնեցի իմ խորին շնորհակալութիւններս: Ես պատրաստւում էի մեկնելու, երբ կառավարիչը ձայն տուեց.

– Սպասէ՛ք, պ. Սիրա՛ք,– նա ցանկանում էր մի ինչ որ բան ասել, բայց նկատեցի, որ տատանւում է և դժուարանում է արտայայտուել:

Վերջապէս նա վճռեց իր ասելիքը: Հայեացքը ճշգրտօրէն իմ աչքերին ուղղեց:

– Ինչ որ ներկայիս ձեզ յայտնում եմ, պէտք է մինչև վերջը, ուզում եմ ասել ընդմիշտ, ձեզ մօտ որպէս գաղտնիք մնայ: Վստահ եմ, այլ կերպ չի լինելու:

Նա հանդարտ ու համրուած բառերով ասաց.

– Էլեկտրաքարշ տրամվայի հիմնարկութեան ճնշող մեծամասնութիւնը վրացիներ են: Նրանցից շատերը, մանաւանդ այս տոմսավաճառները, թէ՛ անվստահելի և թէ՛ մանաւանդ բիրտ ու պրովակատոր մարդիկ են: Դժբախտաբար շատ էլ շովէն և օտարատեաց են: Նրանք նեղն ընկած ժամանակ նոյնիսկ ընդունակ են ստորութիւնների դիմելու: Իրար պաշտպանելու համար չեն վարանի ամէն ինչ անելու: Աշխատեցէ՛ք, մանաւանդ սկզբնական շրջանում, նրանց չը գրգռել ձեր դէմ: Մի քիչ զգուշութիւն և դիւանագիտութիւն գործ դնելու էք: Կարծեմ կարողացայ միտքս հասկացնել: Հիմա գնացէ՛ք երթևեկի բաժանմունքի կառավարչի մօտ: Ես նրան կը զանգահարեմ: Ձեր երթևեկի գիծը նա է որոշելու:

Մի քիչ շփոթած վիճակում, նորից շնորհակալութիւն յայտնեցի և դուրս եկայ գնալու երթևեկի բաժնի կառավարչի մօտ: Սովորական պայմաններում ես քայլերս պիտի արագացնէի՛ հնարաւորին չափ աւելի շուտ գծիս նշանակումը ստանալու, բայց պատահեց դրա բոլորովին հակառակը: Ես աշխատեցի դանդաղեցնել քայլերս, որպէսզի մտքումս վերլուծման ենթարկեմ անպայմանօրէն ինձի օգնել ուզող բարեացակամ կառավարչի վերջին խորհուրդն ու ցուցմունքը:

Անել վիճակ էր ստեղծուած ինձ համար: Եթէ ուզենայի զգոյշ լինել և դիւանագիտութիւն բանեցնել, ուրեմն պարտաւոր էի աչք փակել տոմսակավաճառների հաւանական գողութիւնների վրայ: Իսկ եթէ չ'ուզենայի, պիտի ենթարկէի նրանց պրովակացիային և նրանց կողմից ինձ սպառնացող վտանգին:

***

Նախքան երթևեկի բաժնի սենեակը մտնելը՝ աշխատեցի իմանալ, թէ ո՞վ է այդ կարևոր բաժնի կառավարիչը: Ընդհանուր կառավարչի սենեակից դուրս էի եկել մի քիչ շփոթ և մի քիչ էլ դժգոհ տրամադրութեամբ: Դժգոհութեանս պատճառն այն էր, որ ես գործ էի ունենալու, ընդհանուր կառավարչի ասութեամբ, մի շարք բիրտ ու պրովակատոր մարդկանց հետ: Մտածում էի, երանի չէր լինի, եթէ այդ տոմսավաճառ վրացիների փոխարէն հայեր լինէին: Ինձ յուսահատեցնող պարագան այն էր, որ դժբախտաբար վրացերէն լեզուից մի բառ անգամ չէի իմանում: Մարդկանց հետ իրենց լեզուով խօսելը ինքնըստինքեան մի տեսակ մտերմութիւն է առաջացնում:

Կար և մի ուրիշ անպատեհութիւն, որն առաջինի նման և նրանից աւելի լուրջ ու յուսալքիչ էր: Դա ռուսերէն լեզուն չը գիտնալն էր: Վանում՝ Երամեան դպրոցի վերջին դասարանում, ինձ յաջողուել էր շաբաթական երկու ժամ դասաւանդող ռուսերէն լեզուին հետևել: Հազիւ կարողացել էի շատ սովորական նախադասութիւնների շարքում մօտաւորապէս մի 200 բառեր անգիր անել: Նրանից յետոյ՝ Վանի երկամսեայ կարճատև ինքնավարութեան ժամանակամիջոցում և քաղաքապետարանի քարտուղարութեան պաշտօնում, բառարանի օգնութեամբ դժուարութեամբ կարողացել էի մի քանի սովորական նախադասութիւններ թխել:

Նախքան երթևեկի բաժանմունքը մտնելը՝ ինձ յայտնեցին, որ բաժանմունքի կառավարչի ազգանունը Մուրադով է: Կարծես աշխարհն ինձ տուին, քանի որ ենթադրեցի, որ այստեղ էլ, բարեբախտաբար, մի հայի հետ գործ եմ ունենալու: Մտածում էի՝ նեղն ընկած տեղը հայերէնի շուռ կը տամ և իմ մայրենի լեզուով կը բացատրեմ:

Հոգեկան խռովայոյզ վիճակում ես անհամարձակ ներս մտայ: Այս բաժանմունքում շուրջ քսան հոգի ծառայողների հանդիպեցի: Մօտեցայ գրասեղաններից առաջինին և յայտնեցի, որ Մուրադովի հետ գործ ունեմ:

Ծառայողը ցուցամատով ընդարձակ սրահի վերջամասում՝ աջ թևի վրայ նստած պաշտօնեային մատնանշեց: Մօտեցայ բաժանմունքի վարիչի գրասեղանին և նրան յայտնեցի, որ Բարսեղովն ինձ նրա մօտ է ուղարկել: Կեղծ քաղաքավարութիւնը բացայայտող շինծու ժպիտով՝ իր աթոռից հինգ սանտիմետրաչափ բարձրանալով ու ռուսերէնով «համեցէք» ասելով անմիջապէս հարց տուեց.

– Անշուշտ ռուսերէն գիտէ՞ք:

– Այո՛, մի քիչ:

– Վրացերէն ինչպէ՞ս:

– Բոլորովին ո՛չ:

Իմ հարցերի տեղատարափից կարծես դիւային հաճոյք զգալով՝ շարունակեց.

– Իսկ հայերէ՞նը:

– Ամէն հայը հայերէն կիմանայ:

Ճիգ էի գործ դնում, որպէսզի իմ պատասխանները չափազանց կարճ ու համառօտ լինեն, որպէսզի ռուսերէն չիմանալս բոլորովին չը բացայայտուի:

– Լաւ կը լինէր, որ գոնէ վրացերէն իմանայիք: Այստեղ համարեայ ամէնքը վրացերէն են իմանում: Զարմանալի է, որ դուք վրացերէն չը գիտէք: Ձեր գործում դուք մեծ մասամբ վրացիների հետ գործ կունենաք: Ձեզ անպատճառ անհրաժեշտ է վրացերէն իմանալ: Այս հիմնարկութեան մէջ գործող հասարակ ծառայողները մեծ մասամբ վրացիներ են, և ցաւն այն է, որ նրանք ռուսերէն չեն իմանում:

Յետոյ մի տեսակ չարախինդ քրքիջով աւելացրեց.

– Ի՞նչ արած, այդ մարդիկ չեն ուզում, չեն սիրում ռուսերէնը սովորել...:

Ձեռքում եղած մատիտով իր գրասեղանին բազմաթիւ անգամներ թակթակելով՝ ի վերջոյ բռնազբօսիկ և դժուարահաճ տոնով ասաց.

– Շատ լաւ, քանի որ Բարսեղովը՝ ընդհանուր կառավարիչն է ձեզ յանձնարարում, ես ձեր ծառայութեանը համաձայնւում եմ: Երեք օրից յետոյ՝ այս ամսի 15ի առաւօտեան ժամի ուղիղ 5 և կէսին, կը գաք այս սենեակն ու հերթապահից կստանաք ձեր գծի տոմսակների ցուցակը: Տրամվայի երթևեկն սկսում է ժամի 5 անց 45 րոպէին:

Մուրադով կոչուած այս մարդու վերջին նախադասութիւնից շատ բան գլուխ հանել չկարողացայ: Բայց ամսի 15-ն ու առաւօտեան ժամի 5 և կէսը լաւ հասկացայ:

Երթևեկի կառավարչի սենեակից դուրս գալու ժամանակ միջանցքում հանդիպեցի հայերէն խօսող երկու բանւորների: Առիթից օգտուելով՝ հարցրի.

– Շատ ներողութիւն եմ խնդրում ձեր խօսակցութիւնը ընդմիջելու համար: Կարո՞ղ էք ինձ ասել, թէ այս բաժնի վարիչը, որին Մուրադով են անւանում, հա՞յ է, թէ՞...

– Հայ չէ, բարեկա՛մ, վրացի է և այն էլ էն թունդ և շովէն վրացիներիցը:

– Շնորհակալութիւն, ինձ հետաքրքրողը հէնց այդ էր,– ասի և նորից ներողութիւն խնդրելով՝ հեռացայ:

Մի տարօրինակ տխրութիւն ինձ կլանեց: Ի՞նչ անբախտ մարդիկ ենք մենք, որ այսպիսի կծու և շովէն հարևաններ ունենք: Եղբայրս առաջին օրն իսկ և առաջին պատեհութեամբ ինձ յայտնեց, որ Թիֆլիսում հայն ու վրացին խառնուած են և իրար նկատմամբ շատ սիրալիր ու բարեկամ են: Շատ լաւ, եթէ բարեկամ են, դա շատ ուրախալի է: Համարեայ միևնոյն ճակատագիրն ունեցող երկու հարևան ազգերը պէտք է, որ իրար հետ մտերիմ և բարեկամ լինեն: Բայց այդ ինչու՞ անպայման ուզում են և նոյնիսկ մեզի՝ հայերիս պարտադրում են, որ վրացերէն իմանանք և, որն ամէնից աւելի տարօրինակն է, իրենց հետ վրացերէն խօսենք:

Մի՞թէ նրանք ենթադրում են, որ իրենք՝ իրենց կուլտուրայով, գրականութեամբ և վերջապէս լեզուով, մեզանից աւելի բարձր են և դրա համար էլ ձգտում են մեզ իրենց առաւելութիւններից բաժին հանել և շնորհի արժանացնել:

Ես դժուարանում էի որևէ եզրակացութիւն հանել այս բոլորից: Միայն մի հանգամանք պարզ էր ինձ համար, որ այս թերուս պաշտօնեաները և մանաւանդ այս կիսակիրթ կամ անկիրթ փոքր ծառայողներն իրենց մասին մեծ կարծիք ունեն և ձգտում են իրենց մեզնից գերադաս ու մի տեսակ առանձնաշնորհեալ հաշուել:

ԳՈՐԾԻ ՎՐԱՅ

Մենք՝ եղբայրս և ես, շարունակում էինք մեր վրացի հարևան ընտանիքի հետ միասին, մէկ սեղանի շուրջ նստած ճաշել: Սովորութեան կարգն էր անցել ժամի 2-ին ճաշելը: Առաւօտեան նախաճաշն ես ու եղբայրս միասին մեզ յատկացուած սենեակումն էինք անում: Գիշերները եղբայրս իր գործի բերմամբ ժամի 11-ից շուտ տուն չէր վերադառնում: Այդ պատճառով էլ երեկոները միայնակ մնացած մի թեթև, յաճախ հաց-պանիր-կանաչեղէնով, ընթրում էի: Շաբաթ մէկ-երկու անգամ էլ ընթրիքիս վրայ կարագ էի աւելացնում:

Թիֆլիս հասնելուս և եղբօրս հետ միևնոյն սենեակում բնակւելուս 12-րդ օրն էր: Այդ օրը կեանքիս բախտաւոր օրերից մէկը պիտի հաշուեմ, քանի որ այդ օրն էր, Թիֆլիսում պաշտօնիս նշանակման առաջին օրը, թէև, քիչ առաջ բացատրածս պատճառներով, այդ նշանակումով առանձնապէս ոգևորուած չէի: Դեռ բոլորովին վստահ չէի, որ տեսել պայմաններում ինձ կը յաջողուի արդեօ՞ք ինձ յանձնուած գործը կատարել, թէ՞ մի քանի օրից ստիպուած պիտի լինեմ հրաժարուել դրանից: Ամէն պարագայում, երկու օրից յետոյ, երբ կսկսէի աշխատանքս, ամէն ինչ ինձ համար կը պարզուէր: Էլեկտրաքարշի երթևեկի վարիչի գրասենեակը թողնելուց յետոյ չորս ու կէս ժամ էր մնում մինչև ճաշի 2-ը: Որոշեցի այդ ժամերում քննական շրջագայութիւններ կատարել: Ղարաքիլիսէից իմ ունեցած ռուբլիներից դեռ մի քանիսը չէի ծախսել: Այդ գումարի կէսով կարող էի 3-4 երթևեկի գծերը թեթևակի ուսումնասիրել և գոնէ մի տարրական գաղափար կազմել էլեկտրաքարշ տրամվայի վագոններում կատարւող աշխատանքի մասին: Երեք ժամւայ ընթացքին ես կարողացայ տրամվայի շրջագայութեան երեք գծերը ծայրէծայր տեսնել: Տրամվայով պտտած երեք գծերից երկուսի համար տւին մէկական, իսկ երրորդին ինձ երկու տոմսակ ծախեցին: Շրջագայութեանս ժամանակ ես աշխատում էի, առանց ուշադրութիւն գրաւելու, աչքի տակով զննել և ուսումնասիրել մասնաւորապէս տոմսավաճառների կատարած գործը:

Շրջագայութեանս ընթացքում նկատեցի, որ տոմսավաճառներից երկուքը վագոնի կանգառում շատ մեծ ճարպկութեամբ և զգուշաւորութեամբ ցած իջնող ճամփորդների վար գցած տոմսերը հաւաքում և միևնոյն զգուշաւորութեամբ իրենց տաբատի գրպաններումն էին տեղաւորում՝ նորից ծախելու նպատակով:

Թեթևացած մի շունչ քաշեցի՝ ինձ մօտ եզրակացնելով, որ եթէ տոմսերն ստուգող քննիչը սատանայի ճուտ էլ լինի, չի կարող սրանց գողութիւնը բռնել և հաստատել, քանի որ յաճախորդի գցած և գետնից վերցուած տոմսերի համարները ցուցակում նշանակուած տոմսաշարքի համարներն ունեն: Ինձ սրտապնդեցի և յուսադրեցի այն մտքով, որ որևէ քննիչ չի կարող ճշտել և հաստատել այդ տոմսերի՝ երկու անգամ ծախուած լինելու պարագան և հետևաբար նախ խղճի անհանգստութիւն և վարչական պատասխանատուութիւն ունենալ չի կարող:

Ամբողջ երեք ժամուայ շրջագայութեանս տևողութեան ընթացքին երկու քննիչի հանդիպեցի: Նրանք տրամվայի կայարաններում յաճախորդ-ճամփորդների հետ վագոն էին բարձրանում և նրանց ձեռքում եղած տոմսերը մէջտեղից կտրելով՝ կէսը վերցնում և միւս կէսը տիրոջն էին վերադարձնում:

Բաւական զարմացած նկատեցի, որ այդ ստուգող-քննիչները տոմսավաճառների հետ ռուսերէնով ո՛չ մի բառ չը փոխանակեցին և նրանց հետ անվերջ վրացերէնով էին խօսում: Միաժամանակ տեսայ, որ նրանց փոխյարաբերութիւնները շատ սիրալիր և նոյնիսկ մտերմական էին: Հետզհետէ այդ իմ զարմանքը փոխուեց մի տեսակ նախանձի: Մտածում էի, արդեո՞ք սրանք՝ այս վրացիներն իրապէս այսքան շատ իրաւասէր և ազգասէրներ են, որ իրար հանդիպելիս այնքան են հրճւում, որ նոյնիսկ մոռանում են իրենց փոխյարաբերութիւնն ու կատարելիք պարտականութիւնը... Կամ գուցէ, սրանք իրար հետ որոշ կոմբինացիների վրայ են: Բայց այս միտքը ես աշխատեցի անմիջապէս վտարել գլխից՝ ինձ մեղադրելով իմ՝ այսքան շատ կասկածամտութեան համար:

***

Այդ օրը ճաշի ընթացքին ես յայտնեցի իմ գործի նշանակման մասին: Եղբայրս ուրախութիւնից նըստած տեղում պարել սկսեց և քիչ էր մնացել՝ իր նըստարանից ցած ընկնէր: Վրացի երեք հոգինոց ընտանիքից մայրն ու աղջիկն էլ ուրախութեան բացականչութիւններ արձակեցին, բայց երիտասարդը չը ոգևորուեց, և նոյնիսկ նրա դէմքի վրայ մի նախանձի և ատելութեան քմծիծաղ նկատեցի: Ակամայ եզրակացրի, որ նա մտածում է, որ ես պատճառ եմ եղել խլելու մի վրացի երիտասարդի հասանելիք գործը:

Եղբայրս տանտիրուհուց խնդրեց իմ հաղորդած ուրախալի լուրի առթիւ մի շիշ Կախէթի գինի սեղանին դնել: Նա սիրալիր և շտապ կատարեց եղբօրս խնդիրը:

Երբ Կախէթի գինու շիշը բացուեց, եղբայրս բաժակները լցրեց և առաջի հերթին իր բաժակը վերցնելով՝ ասաց.

– Ես, դժբախտաբար, ճառախօսել չեմ իմանում, բայց գիտեմ, որ եղբայրս՝ ինձ ցոյց տալով, լաւ է ճառախօսում: Աստուած առողջութիւն տայ Թամարային,– այս անգամ նա վրացի օրիորդին մատնանշեց, – հարսանիքին եղբայրս մի լաւ ճառ կը խօսի և մի փառաւոր քէֆ կանենք: Իսկ հիմա առաջարկում եմ խմել եղբօրս յաջողութեան և նրա բախտաւորութեան ու նրա երիտասարդ կենացը:

Գինու բաժակները չըրխկացրին իմիս հետ և դատարկեցին: Վրացի երիտասարդը նոյնպէս ստիպւած եղաւ իմ կենացը խմել:

Ես յետ չը մնալու և տանտիկնոջ՝ այդքան օրերի սիրալիր խնամքն ու նեղութիւնները գնահատելու համար մի կարճ ճառ խօսեցի և առաջարկեցի խմել մեզ հիւրընկալող մօր և նրա երկու զաւակների կենացը: Կախեթի գինին աւելի համեմեց և համեղացրեց առանց այն էլ միշտ յաջող պատրաստուող ճաշը, և մենք չափազանց ուրախ տրամադրութեամբ ճաշասեղանից բաժանուեցինք:

***

Սեպտեմբերի 15-ի առաւօտեան ժամի 6-ից սկսեցի գործել: Ինձ տրուել էր թիւ 11-րդ երթևեկի տոմսերի ստուգման ցուցակները: Այդ գծի վրայ երթևեկում էին տրամուայի 8 էլեկտրաքարշ վագոն-օթօբուսներ: Նրանք երկկողմանի նստարաններով, բաւական լայն ու երկար լուսաւոր ու շարժուն սենեակների էին նմանում:

Առաջին մի քանի օրերում ես աշխատում էի տոմսավաճառ գործաւարների հետ խօսակցութեան չը բռնուել: Վագոն բարձրանալիս էթիկէտը պահպանելու և համակրութիւն գրաւելու միտումով տոմսավաճառներին ռուսերէն լեզուով բարևում էի: Յաճախորդ-ճամփորդների ձեռքում եղած տոմսերը ստուգելով՝ անմիջապէս, առանց թէկուզ մի րոպէ ուշանալու, տրամվայից ցած գալու աստիճանին կանգնում էի: Կոնդուկտորները, գրեթէ միշտ, մի վայրկեանում վագոնը արգելակում էին, և ես ցած էի իջնում: Առաջին մի քանի օրերում վախենում էի տրամվայի երթի ժամանակ ցած թռչել, բայց հետզհետէ կարողացայ վարժուել և նոյնիսկ էլեկտրաքարշի՝ համեմատաբար արագ երթի ժամանակ կարողանում էի, առանց ոտքն ու սրունք կոտրելու վախն ունենալու, վագոնից ցած թռչել:

Էլեկտրաքարշի ամենօրեայ երթևեկը 18 ժամ էր տևում: Սկսում էր առաւօտեան ժամի 6-ից և վերջանում կէս գիշերուայ ժամի 12-ին: Այս ժամանակամիջոցը բաժանուած էր երկու 9 ժամերի և նրանց վրայ աշխատող կոնդուկտորն ու տոմսավաճառը, ինչպէս նաև քննիչը 9 ժամ էին գործում: Աշխատանքի գնալու և վերադառնալու համար մէկուկէս ժամ էի կորսնցնում: Գործաժամս և երթևեկս, իրար վրայ հաշւած, համարեայ օրական 11 ժամ էր լինում: Քնից և հանգստից յետոյ՝ օրական 3-4 ժամ ազատ ժամանակ ունէի: Որպէսզի ինձ համար շատ դժւար չը լինի անլեզու և անխօս աշխատել, վճռեցի սովորել, կարճառօտ խօսակցութեան համար ամենաանհրաժեշտ վրացերէն բառերը: Այդ բառապաշարը կազմելով մեր հարևան վրացուհուց՝ խնդրեցի թարգմանել դրանք: Բառապաշարը կազմւած էր շուրջ 200 բառերից, որոնք գրեցի հայերէնով և ջանացի շուտափոյթ սովորել: Հետևելով էլեկտրաքարշ տրամվայի ընդհանուր կառավարչի խորհրդին՝ ամբողջ ազատ ժամերս յատկացրի ռուսերէն

լեզուն սովորելուն: Իմ կարծիքով, արդիւնքը բաւական գոհացուցիչ էր, քանի որ ես երեք ամսից յետոյ կարողացայ մի քիչ ռուսերէն խօսել սովորել:

ՆՈՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՌՆԱԼՈՒ ՏԵՆՉԸ

Գործ սկսելուց յետոյ հաճոյքով հաշւում էի անցնող օրերը: Ուրախութեամբ ենթադրում էի գործիս տեսական լինելու հանգամանքը: Առաջին օրերում ինձ թւում էր, որ չպիտի կարողանամ յաջողել բախտի բերմամբ և յաջող դասաւորութեամբ ինձ յանձնուած գործում յարատեւել: Ես, իհարկէ, միանգամայն իրաւացի էի այդպէս մտածելուս համար, քանի որ չը գիտէի ռուսերէն և մանաւանդ նոյնիսկ մէկ բառ վրացերէն:

Երբ անցնում էին օրեր, և ես բախտաւորութիւն էի ունենում առանց որևէ միջադէպի և սկանդալի հանդիպելու տոմսավաճառների հետ, որոնց համարեայ 90 տոկոսը վրացի տաքագլուխ և Բարսեղովի ասութեամբ՝ կոպիտ ու անտաշ մարդիկ էին, այդ օրերին ես ինձ երջանիկ էի համարում: Բայց պիտի խոստովանեմ, որ ծայրահեղ զգուշութիւն ի գործ էի դնում այդ մարդկանց ատելութիւնն ու նախանձը չը գրգռելու համար:

Նրանք բոլորն էլ արդէն իմացել էին, որ ես հայ եմ և մանաւանդ թիֆլիսեցի էլ չեմ: Շատ պարզ ու որոշ նկատում էի, որ նրանք ինձ տանել չեն կարողանում և ինձ ատելով ատում էին առաւելապէս նրա համար, որ ես նրանց հետ իրենց լեզուով չէի խօսում կամ չէի կարող խօսել:

– Այստեղ ապրողն ու գործողը պարտաւոր է վրացերէն խօսել,– չարանենգօրէն բողոքում էին նրանք:

Ընդհանրապէս ինձ շատ անախորժ ու անտանելի էր թւում այդ վրացիների՝ ծայրահեղ և չափազանցուած շովէն և փոքրոգի ազգասիրութիւնը: Նրանք այդ օրերում կատարելապէս նմանում էին այս օրերի Թուրքիայում ապրող եսամոլ ու շովէն թուրքերին, որոնք բացարձակ հայհոյում են Տաճկաստանում ապրող հայերին, եթէ նրանք համարձակւում են թուրքերէն չը խօսելու:

Տրամվայի այն գործում, որ աշխատում էի, կային մատի վրա հաշւող հայ կոնդուկտորներ և տոմսավաճառներ: Մի օր նրանցից մէկն ինձ յայտնեց.

– Պարո՛ն Սիրաք, այս վրացիները ձեզ տանել չեն կարողանում: Նրանք ձեր դէմ էնթրիքներ են լարում: Շատ զգո՛յշ եղէք: Նրանք նոյնիսկ մի քանի անգամ համախօսականներ են սարքել, դիմումներ են կատարել երթևեկի կառավարչին՝ ձեզ ուրիշով փոխարինելու համար, բայց կարծեմ նրանց ասել են գլուխ գալիք բան չէ այդ, քանի որ ձեր նշանակման կարգադրութիւնը վերից է եղել: Ամէն պարագայում նրանց էնթրիքներից շատ և շատ զգուշացէ՛ք:

– Շնորհակալ եմ ձեր այդ տեղեկութեան և բարի խորհուրդի համար: Ես այդ մասին մի փոքր տեղեկութիւն ունեմ: Ամէն օր տեսնում եմ նրանց անբարեացակամ վերաբերմունքը դէպի ինձ: Բայց ի՞նչ կարող եմ անել: Նրանց խելքի բերելն անկարելի է:

Ինձ լրջօրէն անհանգստացնող պարագան այն էր, որ նրանք կարող էին ստորութիւնների դիմել և ինձ զրպարտել: Օրինակ, կաշառակերութեան կամ իրենցից ապօրինի վճարումներ պահանջելուս ամբաստանութեամբ: Ամէն պարագայում նրանք կարող էին ինձ համար ստոր էնթրիքներ սարքել և ինձ ամբաստանել:

Մեծ անհամբերութեամբ սպասում էի աշխատանքիս առաջին ամսի լրումին նախ նրա համար, որ ես մի ամիս ու կէս ծանրաբեռնուած էի եղբօրս համեստ և հազիւ ծայրը ծայրին հասնող բիւջէին և յետոյ, մեծ ցանկութիւն ունէի իմ օտարութեան մէջ ձեռք բերած առաջին աշխատավարձից մի գումար քրոջս ուղարկել:

Իմ սիրելի քրոջիցս մեր բաժանումը շուտով 45 օր կը լինէր: Այս ժամանակամիջոցում նա ինձ 6-7 նամակներ էր գրել և իր կարօտակէզ սէրն էր ամփոփել այդ նամակների տողերում: Վերջին անգամ նա ինձ գրել էր.

– Եղբա՛յր ջան, առանց քեզ չեմ կարող ապրել: Եթէ իսկապէս ինձ սիրում ես, և գիտեմ, որ անչափ սիրում ես, ինձ մօտդ տա՛ր կամ ինքդ մեզ մօտ վերադարձի՛ր: Առանց քեզի այս օտար երկիրն ինձ համար բանտ ու դժոխք է:

***

Վերջապէս իմ գործը սկսելու առաջին ամիսը լրացաւ: Ինձ վճարեցին խոստացուած 75 ռուբլին: Այդ օրերին այդ գումարը մի նորեկ, այն էլ ինձ նման գաղթական մարդու համար փոքր գումար չէր: Դրանից 30 ռուբլին եղբօրս տուի: Նա մերժում էր ստանալ, բայց նրան ես խնդրեցի և ապա ստիպեցի ստանալ, քանի որ իմանում էի, որ նա իր ամենօրեայ, համարեա 14 ժամեայ յոգնեցուցիչ աշխատանքով, ամսական հազիւ 50-60 ռուբլի կարող էր աշխատել: 30 ռուբլին քրոջս ուղարկեցի: Մնացած գումարից ինձ համար մի հագուստ գնեցի, այդ բոլորից յետոյ մի քանի ռուբլի էլ յառաջիկայ ամսւայ մանր ծախսերի համար պահեցի: Թէև ես որևէ ծախս չունէի, քանի որ իմ երթևեկը, տրամվայի ծառայողի վկայականի համաձայն, անվճար էր:

Կեանքս սկսել էր նորմալ հունի մէջ մտնել: Վիճակիցս ոչ միայն դժգոհ չէի, այլև ինքնագոհ ու նիւթապէս ապահով: Բայց իմ ուրախութեան գլխաւոր պատճառը ոչ թէ նրա համար էր, որ ես տնտեսական ճնշումից ազատուել էի, այլ նրա համար, որ ես գաղթականի վիճակից դուրս էի եկել:

Այդ օրերին գաղթական բառը շատերի համար կարեկցութիւն և ստորացում էր թւում: Բաւական չէր, որ անարգ բռնութեամբ մեզ մեր սիրելի տնից ու այգուց, մեր ազիզ երկրից, մեր անգին հայրենիքից վտարել էին, մեր ճակատին էլ անպատկառօրէն գաղթական կոչումն էին դրոշմել: Գաղթական այդ օրերում, այսինքն՝ անտուն, անտէր, թափառական և, մէկ խօսքով, կարեկցութեան և ողորմութեան արժանի արարած: Օ՜հ, ատելի և զզւելի էր թւում այդ գաղթական կոչումը:

Բայց մենք ինչո՞վ էինք մեղաւոր, որ գաղթական էինք դառել: Մի՞թէ լրբօրէն կատարւած բռնութիւնների, տեղահանումների, վայրագ սպանութիւնների հեղինակները մենք ենք եղել: Մի՞թէ մեզ ցանկալի էր անտուն, անտէր և շւար ու մոլոր գաղթական դառնալ:

Այդ իսկ պատճառով, երբ ես անցնում էի ծառայութեանս երկրորդ ամսաշրջանը, սկսել էի հոգեկան մի թեթևութիւն զգալ: Գաղթական լինելուց ազատւել էի: Այլևս այդ ատելի տիտղոսը ճակատիս այդքան հեշտութեամբ չէին կարող կպցնել:

Եւ իսկապէս օրից օր իմ մէջ ինքնավստահութեան զգացումն աւելի ու աւելի էր ուժեղանում: Գործը սկսելուց առաջ ինձ ճնշող կասկածամտութիւնն ու վախը հետզհետէ անհետանում էր: Ես գաղթական լինելուց դադարում և նորից սովորական քաղաքացի էի դառնում: Իմ աշխատանքով ցանկանում էի քաղաքացի-անհատ դառնալ:

Հոգեկան տեսակէտից ինձ համար դա շատ կարևոր էր թւում: Նոր միջավայրում ինձ նման հաստատւած գաղթականները պէտք էր ապացուցէին, որ մեզ հայրենազուրկ, անտուն ու անտէր անելով՝ մեր անարգ ու ստոր թշնամիները չէին կարողացել մեր մէջ սպանել մեր դիմադրական ուժն ու էնէրգիան: Մեզ ազգովին դժոխային սպանդանոց ուղարկողները պէտք էր, որ կուրանային մեր շշմեցնող վերածնունդը տեսնելով:

Ես ուզում էի, ձգտում էի հաստատել այն իրողութիւնը, որ վասպուրականցին, լինի նա քաղաքացի թէ գիւղացի, պիտի վերապրի, իրա համար անկախ ու պատւաբեր գոյութիւն, ապրուստի նոր պայմաններ պիտի ստեղծի և հակառակ ամեն տեսակի ճնշում ու հալածանքի՝ պիտի շարունակի յարատևել և ապրել որպէս հարազատ և ազնիւ հայ:

Եւ երբ նրան՝ այդ վասպուրականցուն, չը յաջողւի նորից իր հայրենի հողին ու ջրին վերադառնալ, նա իր սրտում, իր հոգու խորքում պիտի կառուցի «հայու անւան նւիրական տունը»:

Այդ տունը քանդել ու խորտակել և կրակի ու մոխրափոշուն տալ ոչ ոք չի կարողանալու, թէկուզ հայասպան տաճիկի նման գազան ու բարբարոս լինի:

Այսպիսի մի քաղցր ու յաղթական զգացումով էի ապրում այդ օրերին:

ԾԱՅՐԱՀԵՂ ՇՈՎԻՆԻԶՄ

Մի ամբողջ տարի արդէն անցել էր այն օրւանից, ինչ Թիֆլիսի էլեկտրաքարշ տրամվայի վրայ էի աշխատում: Տրամվայի վրա ծառայող տոմսավաճառներն ու կոնդուկտորները այլևս մի տեսակ հաշտւել էին իմ ստուգիչի հանգամանքով նրանց համար ստեղծւած դրութեան հետ: Յուսահատւած իրենց սարքած էնթրիքների ձախորդումից՝ փորձում էին բարեկամական յարաբերութիւն ստեղծել ինձ հետ:

Մի քանի անգամ տոմսավաճառներին խարդախութեան և փոքր գողութեան մէջ բռնեցի: Բայց նրանց և մանաւանդ նրանց օգնութեան և պաշտպանութեան համար միջնորդողների խնդրի և աղաչանքի վրայ ստիպւեցի զիջել և պատկան վարչութեան չը տեղեկացնել:

Մի անգամ, սակայն, վճռեցի վրացի մի տոմսավաճառի գողութեան պարագան յայտնել երթևեկի վարիչ Մուրադովին: Տեղեկագիրը կարդալուց և գողութեամբ ծախւած տոմսերի համարները ստուգելուց յետոյ իմ աչալրջութեան համար շնորհակալութիւն յայտնեց, բայց երկու օր յետոյ ինձ խնդրեց գանգատս յետ վերցնել, շատ սիրալիրութեամբ ասելով.

– Ես ստուգեցի ձեր տեղեկագրի պարագան ու իրողութիւնը: Գուգուշվիլին (այդպէս էր կոչւում տոմսավաճառը) նախ փորձեց ուրանալ, բայց յետոյ ստիպւեց խոստովանել: Դուք միանգամայն ճիշտ և իրաւացի էք: Բայց ձեր տեղեկագիրը նրա դժբախտութեան պատճառ կը դառնայ: Նրան գործից կը վռնդեն: Այդ առաւօտեան նրա մայրն էլ ինձ մօտ եկաւ: Նա լացելով խնդրեց, աղաչեց ներել իր որդուն՝ ասելով, որ այս վերջինի հօր մահից յետոյ նա իր ընտանիքի միակ աշխատող ձեռքն է և մեծ դժւարութեամբ է ապրեցնում իր երեք փոքր քոյրերին և աշխատանքի անընդունակ մօրը:

Ես դժւար և անել դրութեան էի մատնւած, միւս կողմից էլ տրամվայի բարեացակամ ընդհանուր կառավարչի ինձ տւած խորհուրդը միշտ մտաբերում էի:

– Ստիպւած էի տեղեկագրել,– պատասխանեցի Մուրադովին կատարեալ սառնարիւնութեամբ,– որովհետև ուրիշ ելք չունէի: Այդ մարդու բացայայտ գողութիւնը կարող է ինձ էլ խայտառակել:

– Ձեզ յայտնեցի արդէն, որ դուք միանգամայն իրաւացի էք: Բացատրեցի, որ այդ մարդն իր ընտանիքի հետ պիտի դժբախտանայ: Ես նրան բոլորովին չեմ խղճում, նրա երեք փոքր երեխաներին և խեղճ մօրն եմ մեղքում:

– Պ. Մուրադո՛վ, եթէ համոզւած էք, որ նա նորից իր խարդախութիւնը չի կրկնելու, ես ձեր ներկայութեանը տեղեկագիրը կը պատռեմ:

– Շնորհակալ եմ, որ խնդիրս չէք մերժում: Ես նրան շատ խիստ կը պատւիրեմ, որ սրանից յետոյ չը համարձակւի նման խարդախութիւնների դիմելու:

Զսպած ջղայնութեամբ, որ կարծես աննկատելի չը մնաց Մուրադովին, տեղեկագիրս պատռեցի և կտորները նրա սեղանի կողքին թափելով՝ պատրաստուեցի սենեակից դուրս գալ: Տեղեկագրի պատռտուելու ընթացքին Մուրադովի աչքերում ծայրահեղ ուրախութեան և յաղթանակի փայլատակում նկատեցի:

Երկար ժամանակ ես խորհում էի այդ մասին և զարմանում էի, որ այս վրացիները նոյնիսկ աչք են փակում իրենց հայրենակիցների խարդախութիւնների վրայ, որովհետև ինչ գնով էլ լինի, ցանկանում են պաշտպանել նրանց: Մի՞թէ տարօրինակ չէ այդպիսի ծայրահեղութեան հասած շովինիզմը:

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԴԱՍԱՏՈՒ

1916-ի սեպտեմբեր ամսի վերջերումն էր: Իմ ծառայութեան մէկ տարին լրացել էր արդէն: Մի օր երթևեկի գրասենեակումն ինձ յայտնեցին ներկայանալ ընդհանուր կառավարչին: Մի տարուան ընթացքում առիթ էի ունեցել մի քանի անգամ Բարսեղովին հանդիպել նրա գրասենեակում և Գաղթականական կոմիտէում:

Նրա հետ իմ առաջին հանդիպումը գործս սկսելուց երկու ամիս յետոյ էր: Գիտէի, որ շաբաթ մի անգամ՝ հինգշաբթի օրերը՝ կէսօրից յետոյ, ժողովի համար Գաղթականական կոմիտէն է գալիս: Առաջին հանդիպման նա ինձ շատ ոգևորուած ուրախութեամբ ընդունեց և մտերմօրէն ու միադէմ դիմումով ասաց.

– Բռաւո՜, տղա՛ս, ճիշտն ասած, ես մեծ յոյս չունէի, որ դու կարող կը լինես այդպիսի տոկունութեամբ, առանց ռուսերէն և մանաւանդ վրացերէն իմանալու տանել և շարունակել գործդ: Հիմա, իսկապէս համոզուած եմ, որ դո՛ւք վանեցիներդ, գործի մարդիկ էք և մանաւանդ ընդունակ նոր միջավայրի պայմաններին յարմարուելու:

– Չափազանց շնորհակալ եմ ձեր սիրալիր պաշտպանութեան և դեռ արդարացնել չ'կարողացած գովեստի համար: Եթէ կարողացել եմ մինչև հիմա այս ինձ համար շատ ծանր պայմաններում տոկալ, այդ ձեր անխնայ հոգածութեան և պաշտպանութեան շնորհիւ է:

– Համեստութիւնդ գովելի է: Ճիշտ է, քո անմիջական կառավարիչը, որ մի թունդ վրացի է, գուցէ առանց իմ մասնաւոր յանձնարարութեանը չը ցանկանար նոյնիսկ մի շաբաթ գործի վրայ պահելու, բայց եթէ նա և նրա շրջապատը կարողանային քեզ մի փոքր թերութեան կամ անխոհեմութեան մէջ բռնել և ապացուցել, ես անկարող կը լինէի, հակառակ նոյնիսկ իմ ցանկութեանը, քո պաշտպանութեան խնդրում յամառել: Ամէն պարագայում ես շատ ուրախ եմ և սրտանց քեզ շնորհաւորում եմ:

Նորից և նորից շնորհակալութիւն յայտնելով՝ բաժանուել էի նրանից:

Այն օրը, երբ ինձ յայտնեցին կառավարիչ Բարսեղովին ներկայանալ, ես մի թեթև յուզում ունեցայ: Մտածում էի միգուցէ նորանոր էնթրիքներ են սարքել ինձ համար: Կէսօրից յետոյ ժամի 2-ին, ստուգումներիս աշխատանքը մի ժամով աւելի շուտ վերջացրած, նրա գրասենեակը ներկայացայ:

Բարսեղովը, իր խոշոր գրասեղանի յետևից ոտքի ելներով, ուրախութեամբ բացականչեց.

– Բարի եկար, պ. Սիրա՛ք, աթոռ կամ նստարան վերցրո՛ւ և նստի՛ր:

Նրա ուրախալից և սիրալիր ընդունումը միանգամայն սրտապնդեց ինձ:

– Ռուսերէն սովորու՞մ ես, թէ՞ ոչ: Առանց ուսուցչի լեզու սովորելը բաւական դժուար գործ է:

Մի փոքր սպասելուց և կարծես իր ասելիքն աւելի յարմար դասաւորելու ձևով շարունակեց.

– Սրանից մի քանի օր առաջ աղջիկս քեզ Խօջիվանքում տեսել է: Ֆրանսերէն խօսելիս է տեսել և խօսելուդ կերպը հաւանելով՝ հետաքրքրուել է քո ինքնութեանդ մասին: Վերջապէս իմացել է, որ Վասպուրականից գաղթողներիցն ես և մեր գործերում ես աշխատում: Մէկ խօսքով, առանց քեզ հետ ծանօթանալու, լաւ տպաւորութիւն է ստացել: Այս քանի օր է, ինչ ինձ հանգիստ չի տալիս: Ոգում է քեզ մօտ ֆրանսերէն դասեր վերցնել: Կարծում եմ, եթէ համաձայն լինես, լաւ կը լինի թէ՛ քեզ և թէ՛ նրա համար: Նա ռուսերէն բաւական լաւ է իմանում: Կարող էք իրար հետ դասեր փոխանակել: Լաւ չի՞ լինի:

Ընդհանուր կառավարչի առաջարկն այնքան անսպասելի նորութիւն էր ինձ համար, որ անմիջական շփոթանքի ենթարկուեցի, բայց ջանացի մտքերս ամփոփելով՝ կցկտուր պատասխանել:

– Եթէ իմ կառավարչի աղջիկը ինձ այդպիսի բացառիկ պատիւ և շնորհք է անում, ես բոլորովին իրաւունք չունեմ մերժելու: Միայն թէ չը գիտեմ, ինչպէ՞ս կարելի է դասաւորել դասաւանդութեան ժամերը:

– Այդ դժուար չի լինի: Ահաւասիկ մեր տան հասցէն: Մենք ապրում ենք Սօլօլակում՝ թիւ 142 տան երկրորդ յարկում: Այս երկու օրւայ ընթացքում, ժամի 5-ից 7-ը, մեզ մօտ անցիր և օրիորդի հետ պայմանաւորուի՛ր: Ես այդ մասին նրան կը տեղեկացնեմ:

Եւ կառավարիչն ինձ տուեց իր այցետոմսը, որի վրայ նրանց տան հասցէն նշանակուած էր ռուսերէն լեզուով:

***

Յաջորդ օրը՝ ժամի 5ին, զանգահարեցի մեր ընդհանուր կառավարիչ պարոն Բարսեղովի մուտքի զանգը: Դուռը գրեթէ անմիջապէս բացուեց, և շեմքին ինձ դիմաւորեց շատ երիտասարդ, բարեկազմ, համակրելի և տպաւորիչ դիմագծերով բնորոշող մի աղջիկ:

– Հրամեցէ՛ք, պարոն Սիրա՛ք, ես ձեզ հեռից հեռու արդէն ճանաչում եմ և քեզ էի սպասում,– ասաց նա հնչուն ձայնով և քաղցրաբարո ժպիտով,– հայրիկս ինձ յայտնել է, որ հաւանաբար այսօր մեր մօտ էք գալու:

– Չափազանց ուրախ եմ, յարգելի՛ օրիորդ, ձեզ հետ անձամբ ծանօթանալուս համար: Ինձ համար պատիւ և մեծ բախտաւորութիւն է այս ծանօթութիւնը:

– Հրամեցէ՛ք, հրամեցէ՛ք, առանց այլևայլի, դուք արդէն ձեր համեստութեան յարձակումն սկսեցիք:

Օրիորդի ուղեկցութեամբ մտանք նրանց հիւրասենեակը: Ես անմիջապէս վերյիշեցի Վանի՝ մեր հարուստ Գափամաջեանի ընդունարանի ընտիր և թանկարժէք կահ-կարասին և մանաւանդ մուգ-կարմիր թաւշեայ վարագոյրները:

Մտքումս անմիջապէս համեմատութեան դնելով այս երկու ընդունարան-հիւրասենեակները՝ շուտ եզրակացութիւն հանեցի, որ, ըստ երևոյթին, ամէն տեղ հարուստները ընդհանրապէս իրար են նմանում և նրանցից մեծ մասը բախտի՝ իրենց պարգևած բարիքներից չեն զրկւում:

– Ես Ձեր անունը գիտեմ արդէն: Հերթը իմս է ինձի ձեզ հետ ծանօթացնելու:

Նա ինձ պարզելով իր քնքուշ ձեռքը՝ ասաց.

– Ալիս Բարսեղեան, Թիֆլիսի գիմնազիայի ուսանող: Հիմա դուք ձեզ մօտ կը մտածէք և իրաւունք էլ ունէք, որ այս ի՞նչ համարձակ և անսանձ օրիորդ է, որ ինձ հանդիպել և այսպէս վռազ-վռազ ինքն իրեն է ծանօթացնում:

Օրիորդի անվերապահ անկեղծութիւնն ու պարզութիւնն ինձ էլ սկսեց վարակել և ինքս էլ, սիրտ առած, ջանացի նրանից յետ չ'մնալ:

– Սիրաք Սարհադեան, 13 ամիս սրանից առաջ Թիֆլիս ժամանած վանեցի գաղթական: Այս վերջի երկու բառերը ժպտախառն դառնութեամբ արտասանեցի:

– Վնաս չ'ունի, պարո՛ն Սիրաք, ձեզ գաղթական ներկայացնելով՝ դուք ինձ սարսափահար անել չէք կարող: Ես արդէն իմ առաջին լաւ տպաւորութիւնը ձեզնից ստացել եմ Խօջիվանքում, այն ժամանակ, երբ եւրոպացի այցելուի շուրջ հաւաքած բազմութեան մէջ մէկը չը ճարուեց, որ նրա հետ ֆրանսերէն կարողանար խօսել, և դուք նրանց փրկութեան հասաք ու այցելու օտարականի բոլոր հարցերին պատասխանեցիք:

– Ամբողջ երկու տարի է, ինչ առիթ չեմ ունեցել ֆրանսերէն խօսելու, այնպէս որ ֆրանսերէնի իմ ծանօթութեամբ պարծենալ չեմ կարող:

– Ոչինչ, ինձ կը սովորեցնէք և կը վերյիշէք: Յոյս ունեմ, որ ինձ նման կամաւոր սովորել ուզող օրիորդին մերժել չպիտի կարողանաք:

– Ինչպէ՞ս կարող եմ մերժել: Նախ որ դուք այնքան սիրալիր և համակրելի էք, որ ես չեմ համարձակւում ձեզ մերժել, և յետոյ չէ՞ որ ձեր հայրը ինձ անչափ երախտապարտ է թողել իր բացառիկ և անվերապահ օժանդակութեամբ: Եթէ ես ձեր հօրը հանդիպած չը լինէի, ո՞վ գիտէ, ո՞ր գործարանի ի՞նչ անկիւնում շպրտուած պիտի լինէի:

– Ինչքան ուրախ եմ, որ ձեր ասութեամբ, հայրս չի թողել, որ ձեզ որևէ գործարանի անկիւնը շպրտեն: Բայց նա այնքան տարօրինակ և իւրայատուկ բնաւորութիւն ունի, որ ձեր մասին մինչև հիմի մի խօսք իսկ ասած չկայ: Այդ բախտի դասաւորութիւնն է, որ Խօջիվանքում ինձ՝ ձեզ հետ հանդիպեցրել է, և եթէ անհամեստութիւն չը լինի, իմ ճարպիկութիւնն է ձեր ով լինելու և ինչ տեղ աշխատելու պարագան յայտնաբերել:

– Ուրեմն ես կրկնակի երախտապարտ պէտք է լինեմ թէ՛ ձեր հօր բարեսրտութեան, և թէ՛ անձամբ ձեր ուշադրութեան համար: Իրապէս, ես ինձ չափազանց բախտաւոր եմ համարում այս՝ ինձ համար օտար հորիզոնի տակ ձեզ նման ազնիւ և համեստ ընտանիքի հանդիպելուս համար:

Օրիորդ Ալիսն ինձ հիւրասիրեց թէյով և կարկանդակով ու գրեթէ երկու ժամ զբաղեցրեց իր հետաքրքիր և բովանդակալից խօսակցութեամբ: Նա ինձ յայտնեց, որ իր հայրն ու մայրը իրենց բարեկամներից մէկի մօտ յետ-կէսօրեայ թէյի էին հրաւիրած: Ի վերջոյ, ինձնից խօսք առաւ յաջորդ օրը՝ ժամի 5-ին, դասի համար իր մօտ գնալու:

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Մենք՝ Ալիսն ու ես, շատ լաւ բարեկամներ դարձանք: Փոխադարձ դասատուութեան օրերը շաբաթական չորս անգամ էին, բայց մի ամիս յետոյ Ալիսի խնդրանօք 5-ի վերածուեց: Նրա հայրը՝ երթևեկի վարիչ Մուրադովին կարգադրել էր, որ իմ ծառայութեան հերթը միշտ առաւօտեան ժամի 6-ից մինչև կէսօրից յետոյ 3-ին դասաւորի:

Այդպէս էլ եղաւ: Ամէն օր ժամի 3-ից մինչև կէս գիշերուայ 12-ը բոլորովին ազատ էի: Կէսօրից յետոյ ճաշում, մի քիչ հանգստանում և երբեմն էլ ննջում և ուղիղ ժամի 4-ին Ալիսի մօտ էի:

Մեր պայմանի համաձայն՝ նախ ես էի դասաւանդում և նրան սովորեցնում, ապա նա էր ինձ հետ ռուսերէն պարապում: Երկու փոխադարձ դասաւանդումները պէտք է երկու ժամում վերջանային, բայց յաճախ մենք գիտակցաբար մոռացութեան էինք տալիս մեր որոշ ժամանակամիջոցը: Մենք բաւականութիւն և հաճոյք էինք ստանում իրար մօտ լինելուց: Կարդում, խօսում և զանազան նիւթերի շուրջ մտքերի փոխանակումներ էինք ունենում: Երբեն էլ վիճաբանութեան էինք բռնւում իրար հետ:

Տարօրինակ, ինձ համար անհասկանալի, մի փոփոխութիւն էր կատարւել իմ ներքին հոգու աշխարհում: Վանի դժբախտ նահանջից յետոյ ես զարմանալիօրէն ազգասէր, նոյնիսկ ազգամոլ էի

դառել: Համամարդկային, համաշխարհային սոցիալ-դեմոկրատ ձգտումներ, որոնք իմ ուսանողական շրջանում՝ մինչև ապրիլեան ինքնապաշտպանութեան կռիւները, ինձ կլանել էին, կարծես հեռացել ու անհետացել էին: Այդ ձգտումները իրենց տեղը զիջել էին նորածնունդ ազգայնական զգացումների ու տենչերի: Մի խօսքով, ես ազգայնամոլ հայասէր էի դառել:

Մեկուսացած, մենակ մնացած ժամանակ շատ անգամ աշխատում էի վերլուծել այս փոփոխութեան պատճառները, բայց չէի կարող վերջնական եզրակացութիւններ հանել: Երբեմն մտածում էի, որ գուցէ այս իմ ազգայնամոլութիւնը հետևանք է մեզ վրայ գործադրուած բռնութիւնների, հալածանքների ու ամէն տեսակ անմարդկային վերաբերմունքների:

Եթէ տաճիկները, մղուած կուրացնող եսականութիւնից և շովէն ատելութիւնից կարող են մեզ՝ հայերիս վայրագաբար ճղակոտոր և անգթօրէն արմատախիլ անել և մեզ մեր սեփական հողից ու ջրից անպատկառ լրբութեամբ վռնդել, ապա ինչու՞ մենք այդ մարդակերպ գազանների նկատմամբ մարդկայնութիւն, մարդկային համակրանք և գութ ունենանք: Ինչու՞ մենք միշտ մարդասէր, հեզ, զիջող մնանք:

Նորածնունդ այդ ազգայնամոլ զգացումներիս և ձգտումներիս ճիշտ հակառակ ուղղութեան վրայ էր գտնւում իմ նոր բարեկամը՝ օրիորդ Ալիսը: Նա տոգորուել էր ճիշտ այն համամարդկային և համակենցաղային ձգտումներով, որոնք ինչպէս թւեցի, իմ հիացմունքի և պաշտամունքի առարկան էին մինչև գաղթը, մինչև մեր հայրենազրկութիւնը:

Նա ինձ ասում էր, և գիտեմ, որ խորը համոզմունքով և հաւատքով էր ասում.

– Եթէ ազգերը կարողանան իրենց մէջ սնուցանել այդ համամարդկային զգացումներն ու գաղափարները, բոլոր այս ատելութիւններն ու թշնամանքները վերջ պիտի գտնեն, և համայնքներն ու ազգերը պիտի ապրեն, որպէս հաշտ բարեկամներ և սիրալիր հարևաններ:

Երբեմն, երբ ինձ անկարելի էր լինում նրան շեղել իր վարդագոյն գաղափարներից, մեղմ չարախնդութեամբ նրան ասում էի.

– Պէտք է մեզ նման գաղթական և հայրենազուրկ լինել իրական կեանքն ու նրա հարազատ թելադրանքները ըմբռնելու համար: Կեանքի ներկայ պայմաններում, երբ երկրագնդիս վրայ տաճիկ Ջէմալ, Թալէաթ, Էնվեր և Ջեդէտի նման մարդակեր գազաններ են ապրում, համամարդկային զգացումներն ու ձգտումները ձրի, անարժէք խօսքեր են:

ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁՈՒԹԻՒՆ

1917 թւի յունուարի երկրորդ կէսին իմ մէջ Վան վերադառնալու ձգտումը չափազանց շեշտուել էր: Սկսել էի տանջուել այն անհուն և անզուսպ կարօտով, որին հայրենաբաղձութիւն անունն են տալիս:

Մօտ երեք ամիս էր, ինչ ես ուշի ուշով հետևում էի Թիֆլիսի հայ թերթերին և մեծ հաճոյքով կլանում էի Տաճկահայաստանի նահանգների և մանաւանդ Վասպուրականի ազատագրման լուրերով: Ռուսական զօրաբանակներն ու նրանց հայ կամաւորական գնդերը Թիւրքիայից իրար յետևից գրաւել էին և նրանց ճիւաղային ճանկերից ազատագրել էին հայկական արևելեան նահանգներն ու գաւառները: Նրանք հասել էին մինչև Էրզրում: Անասելի ուրախութեամբ հրճւում էի՝ կարդալով և տեղեկանալով, որ ազատագրուած Վասպուրականում նորից հաստատուել է հայկական ինքնավար կառավարութիւն:

Տեղեկացել էի, որ Գր. Բուլղարացին, Թէրզիբաշեանն ու Շաղոյեանը և ուրիշ բարեկամներս Վանում են գտնւում: Վերոյիշեալ երկուսին էլ նամակ էի գրել և խնդրել էի տիրող դրութիւնից ինձ մի համառօտ տեղեկութիւն տալ: Մեծ յոյս չունէի, որ նամակներս տեղ կը հասնեն, բայց բոլորովին անսպասելիօրէն յունուարի վերջերին 40 օրուայ ուշացմամբ Բուլղարացուց և Թէրզիբաշեանից պատասխան ստացայ: Թէրզիբաշեանը ինձ հրաւիրում էր քաղաքապետարանի ռուսական բաժնի քարտուղարութեան համար:

Ուրախութեանս չափ ու սահման չկար: Կարճառօտ նամակները տոգորուած էին լաւատեսութեամբ և ինձ հայրենիք էին կանչում:

Ա. Թէրզիբաշեանի նամակն առանձնապէս շատ տպաւորիչ էր: Նա այդ նամակը վերջացրել էր հետևեալ տողերով. «Անյապաղ սպասում եմ ձեզ: Ձեր նման երիտասարդները իրենց շուտափոյթ վերադարձով պիտի ապացուցեն, որ անկեղծ հայրենասէրներ են և իրենց աւերուած ու քարուքանդ եղած հայրենիքի վերաշինման համար նոյնիսկ իրենց կեանքը չեն խնայելու»:

Նամակների ստացումից յետոյ իմ հայրենաբաղձութեան կարօտը, որ վերջի ամիսներին առկայծում էր, թէժ կրակի նման բորբոքուել և հուրհրալ սկսեց: Թիֆլիսում հանգստաւէտ կեանք ստեղծելու մտորումներս ու տատանումներս թաւալագլուր խորտակուեցին:

Չնայած այն հանգամանքին, որ իմ գործով արդէն ապահովուած էի և նոր դասաւորումների հետևանքով ինձ համար հաւանաբար աւելի նպաստաւոր դիրք ու ապագայ կարող էի ապահովել, բայց Թիֆլիսն ու նրա հետ կապուած հաւանական նպաստաւոր պարագաներն այլևս չէին կարող ինձ հրապուրել:

Վճռեցի իմ հայրենիքը, իմ սիրելի ծննդավայրը՝ անուշիկ և չքնաղ Այգեստանը վերադառնալ:

Սառնորակ ու զզզուն աղբիւրների, մշտադալար ծառերի ու ծաղիկների, քաղցրահամ պտուղներով լի այգիների, երկնակապոյտ և սքանչատեսիլ ծովակի, լեռան գլխին արծւանման թառած Վարա-

գի հայրենիքը՝ Վանը, հրապուրում, դիւթում և մագնիսական քաշում էր ինձ: Այդ հրապուրիչ, քաշող ձգտումից ինձ բաժանել և հեռացնել չէի կարող այլևս:

ՄԻՆՉԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՍ

Որոշել էի այնպէս դասաւորել, որ մինչև փետրուարի 15-ը Թիֆլիսը թողնեմ: Նախքան հայրենիք ուղևորուելը՝ ինձ անհրաժեշտ էր մի վերջին անգամ մերոնց Ղարաքիլիսէի Գիւլիզարդ գիւղում այցելել:

Թիֆլիսում բարեկամ-ծանօթների մի փոքրիկ շրջան էի ստեղծել: Ինձ համար այդ նոր միջավայրից հեռանալը մեծ դժուարութիւնների հետ կապած չէր: Միայն երկու անձնաւորութիւններից իմ բաժանումը շատ դժուար էր թւում ինձ: Նրանցից առաջինը կամ գուցէ երկրորդը իմ հարազատ եղբայրն էր, իսկ միւսը՝ մտերիմ և սիրելի դարձած Ալիսը:

Մէկ ու կէս տարուց մի քիչ պակաս էր, ինչ Թիֆլիս էի եկել և եղբօրս մօտ իջևանելով՝ նրա հետ միևնոյն սենեակում ապրել էի: Իմ ներկայութեամբ եղբօրս ուրախացրել և կեանքի նկատմամբ բաւականաչափ լաւատես էի դարձրել:

Վերջերս նա ինձ պատմել էր իր սիրային ողբերգութիւնը: Շատ տխուր էր նրա սիրային բեկումը: Նախքան ներկայ վրացի ընտանիքի մօտ տեղափոխուելը՝ նա մի հայ ընտանիքի մօտ ապրելիս էր եղել: Այդ ընտանիքին յաճախակի այցելութեան էր եկել նրանց ազգականներից մի օրիորդ:

Եղբայրս այդ աղջկայ հետ ծանօթացել և մտերմացել էր: Աղջիկը նրան շատ էր դուր եկել և փոխադարձաբար: Նոյնիսկ նրանք իրար հետ ամուսնանալու համաձայնութեան էին եկել:

Դժբախտաբար, պատահել էր սիրային այն ողբերգութիւնը, որպիսին պատահում է շատ-շատերին: Այդ շատերի շարքումն էր ընկել նաև իմ անբախտ եղբայրը:

Երբ խնդիրը մօտեցել էր իր վերջնական փուլին, աղջկան տարհամոզել, փոշմանցրել էին: Նրան հասկացրել և համոզել էին, որ եղբայրս գաղթական, լուր ու անփող է: Իրողութիւնն էլ այդպէս է եղել: Եղբայրս իր ապրած տան հայ ընտանիքի գլխաւորի՝ Սարգիս կոչւող դերձակի մօտ փոքր ռոճիկով գործելիս է եղել:

Դերձակ Սարգիսն իր ոչ անմիջական ազգական ազգակցական կապ ունեցող աղջկան խրատել էր եղբօրս հետ չ'ամուսնանալ:

– Ինչի՞դ է պէտք այդ լուր ու տկլոր օտարականը: Նրանից վազ անցիր: Ես քեզ համար հարուստ և ապահոված փեսացու կը ճարեմ,– ասել էր նա:

Եւ իսկապէս Սարգիս դերձակին յաջողել էր աղջկայ համար հարուստ փեսացու ճարել՝ նրան իր իսկ տղայի հետ ամուսնացնելով:

Իր առաջին սիրոյ մէջ չարաչար պարտուած եղբայրս ստիպուած էր եղել դերձակ Սարգսի տղայի ամուսնութիւնից մի քիչ յետոյ նրանց տնից և վարպետից հեռանալ ու հրաժարուել արհեստը շարունակելուց:

Կեանքում իր կրած անյաջողութիւններից եղբայրս յուսահատուել էր և ընդհանրապէս յոռետես էր դարձել: Նա յաճախ կրկնում էր.

– Սիրա՛ք, առանց փողի և հարստութեան՝ երջանկութիւնը, յաջողութիւնը, դիրքի, պատուի ու համբաւի ստեղծումը նմանում է ոսկեփետուր երջանկաբեր թռչնակի, որն անվերջ խուսափում է մեզ նման սովորական մահկանացուների ձեռքից: Զուր ենք վազում, որովհետև նրան հասնել չենք կարող:

Շատ էի աշխատում եղբօրս դեռ շատ երիտասարդ կեանքը փրկել, նրա սիրտը անգթօրէն կրծող մղձաւանջից, բայց ստիպած եմ խոստովանելու, որ այդ չէր յաջողւում ինձ:

Սոսկալի է, երբ մարդս իր ծաղիկ հասակում, իր յոյսերի բողբոջման նախաշրջանում բեկման, անյաջողութեան և յուսախաբման է ենթարկւում: Չափազանց դժուար և յաճախ անկարելի է լինում խափանել անյաջողութիւնից և բեկումից յառաջացած յուսալքումը:

Յաճախ եղբօրս հանգստեան և ազատ ժամերին, որոնք շատ քիչ էին լինում, նրան մտածկոտ, ինքնամփոփ և մելամաղձոտ էի տեսնում և ջանանում էի խրատել:

– Արմէ՛ն, քո այդ անվերջանալի տխրութիւնը, քո առողջութիւնն ու էներգիան կը քայքայի: Դու քո այդ հասակում իրաւունք չ'ունես այդքան հոգեպէս տանջւելու: Դու պարտաւոր ես կամքի ուժ ունենալու ձախորդութեան դիմանալու: Հազարաւորներ քեզ պէս իրենց կեանքում անյաջողութիւնների են հանդիպում, բայց չեն ընկրկում, քեզ նման կեանքից չեն բէզարում և իրենց յուսալքման չեն յանձնում:

– Մեղքը իմս չէ, սիրելի՛ եղբայր, վա՜յ նրան, որ ինձ նման զգայուն և թոյլ ջղեր ունի: Հաւատա՛, որ այս յարատև տխրութիւնից ազատուելու փորձեր շատ եմ արել, բայց ի՜նչ արած, չի յաջողուել: Հիմա եկել եմ այն եզրակացութեան, որ անյաջողութիւնից յետոյ կենսուրախ և երջանիկ լինելու համար երկաթէ ջիղեր են պէտք, որից, դժբախտաբար, զուրկ եմ...

Անհուն տխրութեամբ և կարեկցութեամբ նկատել էի, որ եղբօրս ֆիզիկականն էլ քայքայուել է: Նրա դիմագծերում շատ նկատելի էր ընդհանուր յոգնածութեան հետքեր: Նրա աշխատանքը ջղայնացուցիչ, երկարատև ու անշահ էր: Օրական 13-14 ժամ անընդհատ աշխատում էր: Հանգստանալու ժամանակ քիչ ունէր: Երբեմն սարսափահար նկատում էի, որ հազում է: Կասկածում էի, որ կարող է թոքերի թուլութիւն ունենալ: Բայց այդ մտքի հետ հաշտուելուց սոսկում էի և նոյնիսկ վախենում էի նրան առաջարկել, որ իրեն բժշկական քննութեան ենթարկի՝ մտածելով որ մի գուցէ այդ իմ առաջարկը նրա հոգեկան վիճակը ճգնաժամի ենթարկի:

ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ԱԼԻՍԻ ՄՕՏ

Չորս ամսից մի քիչ աւելի էր, ինչ մենք Ալիսի հետ դասաւանդութեան փոխանակութիւն էինք կատարում: Մեր փոխադարձ դասաւանդութիւնները զգալի արդիւնքի էին հասել: Մէկը միւսին տրուած դասերը սովորելիս մի տեսակ մրցակցութիւն էր գոյացել: Երկուսս էլ աշխատում էինք անթերի բարեխղճութեամբ կատարել մեր դասերի հետ կապող պարտականութիւնները:

Երբեմն շատ հազւադէպ պարագաներում, երբ մեր երկուսից մէկն ու մէկը չէր կարողանում իրեն տրուած դասի գրաւոր մասը կատարել, իրեն շատ անյարմար դրութեան մէջ էր գտնում և կարմրելու աստիճան ամաչում էր:

Սակայն մեր դասերին կապող պարտականութիւնները չէին խանգարում, որ մենք մեզ հետաքրքրող օրւայ նիւթերի և նորութիւնների շուրջ մտքերի փոխանակութիւններ կատարէինք և երբեմն էլ անմեղ կատակներ անէինք:

Ալիսի մէջ ես մասնաւորապէս գնահատում էի նրա պարզութիւնն ու համեստութիւնը: Չնայած Թիֆլիսի հայ բարեկեցիկ ընտանիքներից մէկի միակ զաւակն էր, բայց երբէք իրեն թոյլ չէր տալիս որևէ կերպով այս պարագան զգացնել տալ:

Մեր փոխյարաբերութիւնների մէջ արտակարգ մտերմութիւն էր ստեղծուել: Շաբաթական հինգ անգամ մենք որոշուած ժամին իրար մօտ էինք լինում: Չորս ամիս և մի քանի օրերի ընթացքում միայն երեք անգամ մենք ի վիճակի չեղանք որոշուած ժամադրութիւնը յարգելու: Մեր դասաւանդութիւնները ոչ միայն բռնազբօսիկ հանգամանք չ'ունէին, այլ նոյնիսկ սիրելի ու ցանկալի էին: Կարծես փոխադարձ ձգտումի և անհրաժէշտ պարտաւորութեան էին վերածուել մեր հանդիպումներն ու պարապմունքները: Մեզնից ամէն մէկը հրապուրող պահանջ էր զգում միւսի կողքին նստած սովորել, իր լեզուական ծանօթութեան պաշարն աւելացնել և զրուցել, կատակել և զարճանալ: Շաբաթ մի անգամ էլ, պարապմունքներից յետոյ, միասին ներկայացման կամ բալէտի էինք գնում:

***

Փետրուարի 8-ին՝ կէսօրից յետոյ էր: Վճռել էի Ալիսին յայտնել հայրենիքս վերադառնալու իմ որոշումը: Արտակարգ վիճակ էր ստեղծուել ինձ համար: Խոստովանում եմ, որ իմ ներաշխարհում հոգեկան արտակարգօրէն ուժեղ ալեկոծում էր գոյացել: Չէի կարողանում իմ որոշման յայտնաբերման ձևն որոշել: Չափազանց յուզուած էի:

Մեր սովորական դասաւանդութեան ժամանակը լրացաւ: Ալիսի ուշադիր հայեացքից իմ արտակարգ շփոթն ու յուզմունքը չէր վրիպել: Վերջապէս աւելին համբերել չ'կարողանալով՝ ասաց.

– Սիրա՛ք, այսօր անսովոր վիճակ ունես: Անհանգիստ ու մտազբաղ ես: Թոյլ կը տա՞ս պատճառն իմանալու:

– Ճիշտ ես նկատել, Ալի՛ս, այսօր ես արտակարգօրէն յուզուած եմ, և դրա պատճառը մեր մօտակայ և անյետաձգելի բաժանումն է:

– Չեմ հաւատում, Սիրա՛ք, աւելի պարզ խօսի՛ր: Ի՞նչ է նշանակում բաժանում: Ի՞նչ բաժանում: Մի՞թէ ես որևէ առիթ եմ տուել դրան: Չեմ կարողանում հասկանալ: Գուցէ... չեմ յիշում: Արդեօ՞ք դժգոհութեան որևէ առի՞թ եմ տուել: Բայց...

– Ո՛չ, Ալի՛ս, ո՛չ հազար անգամ ո՛չ: Մեր բաժանման պատճառը դու չես: Եթէ ուզում ես իմանալ դրա պատճառն ու մեղաւորը ես եմ: Խնդրում եմ հանգստանալ և լսել ինձ:

– Թիֆլիս գալուց յետոյ իմ ամենամեծ ու ամենաերջանիկ բախտաւորութիւնն այն է եղել, որ քեզ նման մի սքանչելի, յարգելի և, եթէ թոյլ կտաս ասելու, չափազանց սիրելի մի օրիորդի եմ հանդիպել: Քո ինձ մեջ նկատած այսօրւայ յուզմունքի և ալեկոծման պատճառը իմ այն որոշումն է, որ ամիսների երկար տատանումներից յետոյ կայացրել եմ: Հայենիքիս սէրն ու կարօտը, մանաւանդ, այս վերջին մի քանի ամիսներում, հոգիս մաշում է: Ես վճռել եմ իմ հայրենիքը վերադառնալ և մասնակցել ու լծուել նրա վերաշինման ու բարգաւաճման գործին: Իմ երկիրն ու նրա հողն ու ջուրը, նրա ծառն ու ծաղիկը, նրա կապուտակ ծովի զմրուխտանման ջրերն ու նրա բարձր ու վէս լեռները, նրա աննման յաղթական Վարագն ու հպարտ Աղթամարը, իրար միացած, ինձ հանգիստ չեն տալիս: Նրանք ինձ կանչում են թէ՛ երազներումս և թէ՛ արթուն ժամերումս...:

Ալիսը լսում էր ինձ: Իմ հերթին ես նրա դէմքին նկատեցի իրար յաջորդող արագ գունափոխումներ՝ գունաթափում, շառագունում և կարմրկտում: Նա շնչում, բայց շնչակապւում էր: Ուզում էր խօսել, բայց բորբոքուած կոկորդը կարծես խեղդում էր նրա ձայնն ու բարբառը:

Յայտնութեանս անսպասելի հարուածին դիմանալ չը կարողանալով՝ նա փղձկաց և երեխայի հեկեկոցով լացել սկսեց:

Ինձ համար Ալիսի զգացումների նման ժայթքումը անսպասելի չէր: Կարճատև ժամանակամիջոցում ես կարողացել էի ճշտել այն անկեղծութիւնն ու մտերմութիւնը, այն լռելեայն ու անխօս համակրանքն ու սէրը, որոնք սկսել էին բոյն դնել մեր երկուսի սրտերի անարատ և անաղարտ խորքերում: Առանց մի խօսք, նոյնիսկ մի բառ արտայայտելու բիւրեղանման սիրոյ մագնիսը մեզ քաշել և իրար էր մօտեցրել:

Ալիսի լացը մաշում, կրծում էր հոգիս: Ջուր էի փորձում նրան համոզել, հանգստացնել:

– Սիրելի՛ Ալիս, բաւական է: Բաժանումից առաջ այդպիսի լացը կարող է չարաղէտ հետևանքներ

ունենալ: Հանգստացի՛ր: Խօսի՛ր: Ինձ երջանիկ կը համարեմ, եթէ դու փոխանակ լալու, ինձ քո խելօք խորհուրդները և ցուցմունքները տալու լինես: Էգուց առաւօտեանը գործիս հրաժարականը հօրդ եմ յանձնելու և նրան իմ սրտագին շնորհակալութիւններս եմ յայտնելու: Մինչև Թիֆլիսից մեկնելս դեռ 5-6 օր ժամանակ ունեմ: Նորից կը հանդիպենք:

– Սիրա՛ք,– աղեկտուր լացն ու դիւթական ժպիտն իրար խառնած ասաց Ալիսը,– ես ինձ իրաւունք չեմ տալիս քո ճանապարհիդ խոչընդոտ լինելու: Ես ափսոսում, չափազանց ափսոսում եմ, որ քեզնից բաժանւում եմ: Չնայած ինձ նման մի աղջկայ համար անյարմար և անհամեստ կը լինի, բայց ես ստիպւած եմ խոստովանելու, որ ես ամբողջ հոգով ու սրտով ինձ քեզ հետ կապւած եմ զգում... Քո մէջ ես փնտրում էի իմ ապագայ յոյսն ու երջանկութիւնը...:

– Ալի՛ս, սիրելի՛ս, միանգամայն համոզւած եղի՛ր, որ ես էլ միևնոյն շէնշող և բիւեղանման զգացումներով ինձ քեզ հետ կապւած եմ զգում և մեծ յոյս ունեմ իրականացնելու քո և իմ երազած երջանկութիւնը:

***

Ալիսի հետ մեր վերջին մնաս բարովը շատ զգայացունց և տխուր եղաւ: Մենք երկուքս էլ, առանց մինչ այդ զսպւած կարգապահութեան սահմանը նկատի ունենալու, գրկախառնւեցինք, և մեր շրթունքները ջերմագին կարօտով իրար հանդիպեցին:

Ալիսը դեռ շարունակում էր իր երեխայանման հեկեկոցը: Իմ կրկնւող թախանձագին խնդրանքի վրայ վերջապէս նա կարողացաւ իրեն զսպել: Նրան իր ամենօրեայ պարապմունքի աթոռին նստեցնելով՝ ասացի.

– Ալի՛ս, երբէք չէի կարող մտածել, որ մենք այսպէս ինքնաբերաբար ու անխօս իրար հետ մտերմացել և սրտանց կապւել ենք: Մեր երկուսից և ոչ մէկին դրանում մեղադրել չենք կարող: Անկասկած, մենք կարողացել ենք իրար մէջ գնահատելու այնպիսի փոխադարձ յարգանք, որ այսօրւայ մեր այս բիւրեղանման սիրոյն է յանգել: Շատ, չափազանց շատ եմ ափսոսում, որ այս սէրը մեր բաժանման վերջին պահին յորդահոս և աղամանդանման աղբիւրի նման ժայթքել և փրփրել է սկսել:

– Սիրա՛ք, մեղաւորն ես եմ: Քո արած յանկարծակի բաժանման անսպասելի յայտնութիւնը ինձ համարեայ շանթահարեց: Ես չ'կարողացայ իմ զգացումները հակակշռի ենթարկել և քեզնից թաքցնել իմ հոգու խորքում յանկարծակի հրդեհւել սկսող սէրն ու կարօտը: Ների՛ր իմ այս աստիճան դիւրազգաց ու անկեղծ լինելու համար:

Մի քանի վայրկեան ճնշիչ լռութիւնից յետոյ՝ Ալիսն իր ասելիքը վերջացրեց.

– Ափսո՜ս, հազար ափսո՜ս, որ ես իմ հօրն ու մօր միակ զաւակն եմ: Ես ենթադրում եմ, որ իրաւունք չ'ունեմ նրանց մինակ թողնելու: Չէ՞ որ նրանց միակ մխիթարութիւնը և ուրախութիւնը, սիրոյ և գգւանքի առարկան եմ: Եթէ այդպէս չը լինէր, գուցէ ուրիշ ելք փնտրել կարողանայի:

– Միանգամայն իրաւացի ես, Ալի՛ս, ես հասկանում և գնահատում եմ քո զոհաբերութիւնը: Եթէ ուրիշ քոյր կամ եղբայր ունենայիր, ինքս կը խնդրէի, կ'աղաչէի, որ համաձայնւես ինձ հետևելու և գնալու այն հայրենիքը, որ ինչպէս ինձ, այնպէս էլ քեզ համար կը լինի հարազատ ու սիրելի: Այդ հայրենիքը մերն է եղել և անպատճառ մերը պիտի լինի:

ՎԵՐՋԻ ՕՐԵՐԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ամէն մի երիտասարդ, իր կեանքի այդ շրջանին իր առօրեայ աշխատանքների համընթաց, ենթակայ է տարւելու և բնականօրէն կապ ունի անհատի սրտի և հոգու հետ:

Այդ սրտի ու հոգու ապրումը մարդկային կեանքի ամենաթանկագին և ամենասիրելի շրջանն է, որ պարուրւած է սրտի հարազատ և անուշ թրթռումներով և որի ընդհանրական ու համառօտւած անունն սէր՝ սիրոյ զգացումն ու ապրումն է:

Բնականաբար, ես էլ չէի կարող զերծ մնալ այդ սրտի ու հոգու ազնւագոյն ապրումից: Ծնւած լինելով 1896 թւի հոկտեմբեր ամսի 7-ին՝ ես այդ ժամանակներում արդէն 20րդ տարին լրացած և 21-րդում թևակոխած էի: Վանի Ապրիլեան հերոսամարտից առաջ մխրճւած լինելով ուսանողական-կուսակցական եռուն աշխատանքներում, համարեայ ազատ ժամանակ չէի ունեցել անդրադառնալու իմ ներքին, հոգեկան կեանքի ապրումներին և նրանցից սկիզբ առնող ձգտումներին:

Գուցէ տարօրինակ և զարմանալի թւայ, եթէ յայտնեմ, որ իմ ներքին հոգեկան կեանքի ապրումներին միայն այն ժամանակ անդրադարձայ, երբ եկայ այն եզրակացութեանը, որ առայժմ կուսակցական և հասարակական անելիք չունեմ:

Մի երիտասարդի համար շատ ցաւալի և տխուր է տեսնել և հաստատել այն հանգամանքը, որ իր կեանքի շէնշող, բողբոջող և խոստումնալից շրջանին բեկման, գահավիժման և խորտակման է ենթարկւում իր փայփայած գործն ու ցանկացած նպատակը, փշրւում և ոչնչանում է: Այս մեր գուրգուրած գործի և նպատակի փլուզումն ու խորտակումը սկսւեց այն ժամանակ, երբ մենք, այսինքն ես և իմ նման հազարաւորները, ստիպւած եղանք թողնել մեր հայրենիքը, մեր սիրելի տունն ու օջախը, մեր արգաւանդ հողն ու զնգան, անուշահամ աղբիւրները:

Մեր նորաբողբոջ, շողշողացող երիտասարդ կեանքն ու նրա հետ կապւած վարդագոյն յոյսերն

ու երջանկաբեր ապագան անգթօրէն խորտակում և մահաբեր մրրիկի էին տալիս, մահւան ահ ու սարսափի սպառնալիքով մեզ քշում, վռնդում էին մեր երկրից:

Եւ, իսկապէս, ինչ անելիքի յոյս կարող է ունենալ անհայրենիք, փախստական, անտուն և անտէրունչ մի գաղթական, այո՛, ինձ նման մի գաղթական:

Ուրեմն բոլորովին տարօրինակ և զարմանալի չէր, եթէ վերոյիշեալ անմխիթար և յուսաբեկ պայմաններում անդրադառնայի փնտրելու և գտնելու մի ուրիշին, որն ինձ նման գաղթական, փախստական և անտուն-անտէր էր:

Բազմաթիւ անգամներ եմ փորձել վերլուծելու այն շարժառիթը, որն ինձ ստիպեց փախուստի վերջի րոպէներին միայն անդրադառնալու Անուշի գոյութեան մասին: Եթէ նրան իսկապէս սիրում էի, ուրեմն ինչու՞ վտանգի ամենավերջին ու ամենածանր պահին նրան փնտրելու գնացի: Գուցէ մտածում էի նրան օգնել, պաշտպանել: Բայց ինչու՞ ամենավերջին ժամին: Թերևս այդ փորձն անում էի իմ յոյսերի ու ձգտումների խորտակման վիշտն ամոքելու, մեղմացնելու նպատակով կամ գուցէ նրա համար, որ ափսոսում էի նրան: Բայց ամենից շատ սարսափում էի այն մտքից, որ Անուշի նման անմեղ և չքնաղ հայ աղջիկը բարբարոս տաճկի կամ աւազակաբարոյ քիւրտի առևանգման և բռնաբարման ենթակայ կարող էր լինել: Այս վերջին դժբախտ և սոսկալի ենթադրութիւնը, ամէն անգամ նրան վերյիշելիս, սիրտս ճանկռտում և արիւնոտում էր:

***

Թիֆլիսում եղած ժամանակը, մէկուկէս տարուայ ընթացքին, քանի-քանի անգամներ հարց ու փորձ արի և Անուշին գտնելու համար փնտրտուքներ կատարեցի: Վանում նրա հայրը ինձ յայտնեց, որ կնոջն ու աղջկանը պատուիրել էր Թիֆլիս գնալ և իջևանել իր հարազատ եղբօր մօտ՝ Սօլօլակ պողոտայում: Դժբախտաբար, իմ շփոթմունքի ու աճապարանքի հետևանքով չէի անդրադարձել լրիւ ու ճշգրիտ հասցէն ստանալու:

Անուշին վերագտնելու յոյսը գրեթէ չքացել էր, բայց այդ բոլորից յետոյ չէի կարողանում հաշտուել նրա վերջնական կորուստի մտքի հետ:

Նրան յիշելիս անհուն կարօտով այրւում էի: Շատ յաճախ միայնակ լինելիս խորասուզւում էի մօտիկ անցեալի վերայիշումներում և ամէն անգամ նրա չքնաղ դէմքը պատկերացնում էի իմ հոգու հայելիում:

Ինձ թւում էր, որ նա ներկայանում է վշտաբեկ, անօգնական ու արցունքոտ տեսքով, որ նրա ազատութիւնը՝ կապտաած, և երջանկութիւնը խլւած է, որ նա անխօս, բայց նախատական հայեացքով մեղադրում է ինձ իմ անփութութեան ու եսականութեան համար... Եւ այս բոլորն ինձ հետ կատարւում էր ոչ միայն երազում, այլև արթուն և զգաստ վիճակում:

Անճարակ ցաւատանջութեամբ և սրտամաշ յուսահատութեամբ գալիս էի այն եզրակացութեան, որ բարբարոս տաճիկը կամ վայրագ քիւրդը նրան առևանգել, բռնաբարել և ծաղիկ, ջահէլ ու ջիւան հասակում ողջ-ողջ թաղել է...:

***

Տաժանելի էին մեկնումից առաջ Թիֆլիսում իմ անցկացրած վերջին մի քանի օրերը: Գործիս հրաժարականը տւել էի և ուզում էի օր առաջ մեկնել:

Հաւանաբար երիտասարդ հասակում եղած մարդկանց զգալի տոկոսը ենթարկւած լինի հոգեկան այն ծանր տագնապին, որպիսին ես եմ ունեցել:

Ամէն կերպ աշխատում էի մոռացութեան տալ Անուշի դժբախտ կորուստը, բայց այդ չէր յաջողւում ինձ: Երբ իմ հոգեկան ապրումի ողբերգութեան առաջին վարագոյրն իջնում էր, բարձրանում էր երկրորդը: Մտքիս տեսողութեան առաջ կանգնում էր երկրորդ Անուշը՝ Ալիսը: Առաջինն ինձ տանջում էր իր կորուստով, բացակայութեամբ, իսկ երկրորդը՝ իր անմիջական ներկայութեամբ:

Եթէ առաջինը անխօս ու անօգնական հայեացքով ինձ մեղադրում էր, այս երկրորդը պերճախօս և ամենազօր ուժգնութեամբ ինձ քաշում և հրապուրում էր: Ալիսի հնչուն և լիաթոք կանչը անվերջ ու անընդհատ ինձ հրաւիրում էր վերադառնալ իր մօտը, նորից ժամերով պարապել իր հետ և լսել նրա արծաթահնչիւն ծիծաղը: Ինձ թւում էր՝ միշտ լսում էի նրա այն առինքնող ու դիւթական կանչը.

– Սիրա՛ք, մի՛ գնա, մի՛ հեռացիր ինձնից: Լսի՛ր և հետևի՛ր սրտիդ թելադրանքին: Մի՛ լքիր քո աննման ու անկեղծ բարեկամին ու մի՛ ոտնահարիր նրա բիւրեղափայլ սէրը:

***

Սրտի ու հոգու վիշտը շատ աւելի լուրջ և ծանր է, քան ֆիզիկականը: Ես, որ ի վիճակի էի եղել տոկալու և տանելու մի քանի տասնեակ օրերի ֆիզիկական տանջանքները, գաղթի ճանապարհի անընդհատ յոգնածութիւնը, այդ ճանապարհի կեղտն ու փոշիները և փախուստի ընթացքին թշնամու ամենաժամ վտանգները, չը կարողացայ դիմադրել ինձ տանջող հոգեկան մտորումներին ու բեկմանը: Հիւանդացայ և անկողին ընկայ: Ջերմում և այրւում էի հետզհետէ բարձրացող տաքութեան մէջ: Եղբօրս հասցրած բժշկական օգնութիւնն ու յանձնարար-

ւած դեղերն անօգուտ մնացին: Ուտելու և սնելու ոչ մի ցանկութիւն չ'ունէի:

Եղբայրս և մեր ապրած տան վրացի տանտիկինն ու նրա աղջիկը շատ անհանգիստ էին: Նրանք ամէն հնարաւոր միջոց գործ դրին ինձ այրող ջերմը մեղմելու համար, բայց բոլոր փորձերն անօգուտ անցան:

Առողջական վիճակս սկսել էր լրջօրէն մտահոգել մանաւանդ եղբօրս: Օրէցօր մաշւում և հիւծւում էի: Յաճախ, գիտակցութիւնս կորցրած, զառանցում էի:

Հիւանդութեանս 8-րդ օրը՝ առաւօտեան շատ կանուխ, եղբօրս քնից արթնացրի: Խեղճ եղբայրս, առանց այն էլ իր ծանր աշխատանքից յոգնած ու բէզարած, յաճախ ստիպւած էր լինում գիշերներն անքուն անցկացնելու: Նրա հազի նոպաները սկսել էին աւելի ուժեղանալ:

– Եղբա՜յր,– ասացի նրան,– այստեղ եթէ մնալու լինեմ և այս պայմաններում շարունակեմ մնալ, անհնարին է, որ լաւանամ: Օրից օր աւելի և աւելի մաշւում եմ ու քայքայւում: Եթէ դու ինձ սիրում ես, և կասկած չունեմ, որ շատ էլ ես սիրում, այսօր ևեթ գիշերւայ գնացքի տոմսակ վերցրու, որ ես Ղարաքիլիսէ՝ մերոնց մօտ գնամ: Վստահ եմ, օդափոխութեան ենթարկւելով, առանց բժշկի ու ճարի անմիջապէս և անպայման պիտի առողջանամ:

– Սիրելի՛ եղբայր, ինչե՞ր ես ասում: Մի՞թէ քո այս առողջական վիճակում հնարաւոր է քեզ անկողնից հանել և երկաթուղին տանել: Քո առաջարկիդ համաձայնւել և նրան գործադրելը աղէտալի արդիւնքի կը յանգի: Մի քանի օր էլ մնայ, Աստծով կը լաւանաս և յետոյ կը մեկնես:

– Արմէ՛ն եղբայր, խնդրում եմ իմ ասածը չը մերժես: Ես միանգամայն համոզւած եմ, որ իմ փրկութիւնը կախւած է իմ մեկնումից և կատարւելիք օդափոխութիւնից: Ես այդ հօրս վրայ եղած փորձից գիտեմ: Եթէ չես ցանկանում, որ այստեղ, էս օտար երկրում, իմ հարազատներից հեռու մահանամ, կատարի՛ր խնդիրս և կը տեսնես, որ ես միանգամայն իրաւացի եմ:

Եղբայրս այլևս իմ թախանձանքը մերժել չը կարողացաւ: Նա ինքն էլ վստահ չէր, որ եթէ մնալու լինեմ, շուտով կառողջանամ: Ստիպւած համաձայնւեց և անմիջապէս գնաց կայարանը նոյն գիշերւայ Ղարաքիլիսէ մեկնող գնացքի տոմսը գնելու համար:

Մի ճիգ ի գործ դրի անկողնուս մէջ նստելով՝ մի քանի տող գրել Ալիսին: Նրան գրեցի դողդողացող ձեռքով և նրան յայտնեցի հիւանդացած լինելուս պարագան: Նամակումս նրան խոստացայ նորից գրել և շուտով իմ նոր հասցէն տալ՝ յոյս յայտնելով, որ նորից իրար կը հանդիպենք, և մեր թանկագին ու անփոխարինելի բարեկամութիւնը կը շարունակենք:

ԴԷՊԻ ՂԱՐԱՔԻԼԻՍԷ

Երեկոյեան ժամը 7-ին՝ եղբօրս հետ երկաթուղակայարանը մեկնեցինք: Եղբօրս օգնութեամբ և բացառիկ ճիգերով, մի շարք դժւարութիւններից յետոյ, վերջապէս մի կերպ կարողացայ գնացքի 2-րդ կարգի տոմսակիս համապատասխան կուպէում տեղաւորւել: Այս բացառիկ ճիգերի գործադրումն ինձ առատ քրտինքով ծածկեց, որն ինձ համար անշուշտ բարերար ազդեցութիւն ունեցաւ:

Եղբայրս ինձ համար չափազանց անհանգիստ էր: Նա շատ պնդեց ինձ հետ Ղարաքիլիսէ գալ, բայց համոզւած էի, որ նախապէս չը ծրագրւած նրա մեկնումը հնարաւոր չէր: Նրան խնդրեցի ինձ համար բոլորովին անհանգիստ չը լինել և իր մեկնումը յետաձգել աւելի յարմար առիթի: Նրան բացատրեցի, որ Ղարաքիլիսէից նրա վերադարձը ժամանակի խառնաշփոթութեան և երթևեկի արտակարգ խճողման պատճառով կարող է մեծ դժւարութիւնների հանդիպել:

Մէկ շաբաթւայ անընդհատ ջերմն ինձ կատարելապէս ուժասպառ էր արել: Ամբողջ մարմինս կարծես ծեծկւել էր: Սաստիկ նիհարել և գունատւել էի: Նստած մնալ չէի կարողանում: Առածն ասում է, չկայ չարիք, առանց բարիքի: Բարեբախտաբար կուպէիս հարևանը մի հայ մարդ դուրս եկաւ: Նա իր 8 տարեկան տղայի հետ Երևան էր գնում: Մէկ ու կէս տարի առաջ չարաղէտ փախուստ-նահանջի ժամանակ կորցրած և հազիւ 15 օր առաջ վերագտած իր կնոջն ու միւս երեխային միանալու համար Երևան էր գնում: Չափազանց լաւ տրամադրւած և, իր ասութեամբ, անսահման երջանիկ էր զգում իրեն, քանի որ շատ երկար փնտրտուքներից յետոյ վերջապէս բախտաւորութիւն էր ունեցել գտնելու իր կորած համարած կնոջն ու երեխային:

Անսահման վիշտն ու կապարանման մթին տխրութիւնը սիրտս սեղմել ու ճնշել սկսեցին: Իմ կորցրած և երբէք չը գտած աննման ու անմեղ Անուշին վերյիշեցի: Նա նորից իր սքանչագեղ տեսքով ու ուռենու նման մշտադալար ու ճկուն բոյով աչքերիս առաջ պատկերացաւ: Սրտամորմոք և դառնագին մի յառաչանք արձակեցի: Հարևանս կարեկցութեամբ հարցրեց.

– Ի՞նչ է, պարո՛ն, մի՞թէ դուք էլ կորցրած հարազատ ունիք...:

– Այո՛... բայց ո՛չ: Ես շատ յոգնած ու հիւանդ եմ: Եթէ թոյլ կը տաք մի ժամ կը պառկեմ: Նստելու ուժ չ'ունիմ: Մի ամբողջ շաբաթ է, որ ջերմում եմ և քնել էլ չեմ կարողանում: Ղարաքիլիսէ՝ իմ ընտանիքի մօտն եմ գնում: Եթէ այնպէս պատահեց, որ երկար քնեմ, ձեզ անհանգիստ արած չը լինելու համար աղաչում եմ ինձ արթնացնել:

***

Օ՜հ, ի՜նչ մեծ բարիք և Աստուածային պարգև է յոյսն ու ինքնաներշնչումը: Առանց այդ յոյս-սպասումի մարդ արարածը գուցէ երկրագնդիս ամենադժբախտը լինէր: Երբ Թիֆլիսում վերջին օրերում հիւանդացայ, համոզուած էի, որ իմ հիւանդութիւնը ֆիզիկական չէր, այլ հոգու, սրտի և մտքի հիւանդութիւն էր:

Հոգեկան վիշտն ու տառապանքը յաճախ և գրեթէ միշտ շատ աւելի քայքայիչ և մաշեցնող է: Ես ենթարկւել էի այդ մաշեցման ու հիւծման և հետևաբար գիտէի դրա պատճառը: Ինձ մնում էր միայն մի ելք ու մի ընտրութիւն: Համոզուած էի, եթէ շարունակեմ ենթակայ մնալ այդ հոգեկան հիւծմանը, շուտով հրաժեշտ պիտի տամ լոյսին, արևին, իմ կեանքին և նրա հետ անբաժան կապուած բոլոր իմ յոյս ու տենչերին:

Իհարկէ, անմտութիւն և յիմարութիւն կը լինէր այդ:

Անկողնումս պառկած, հիւանդութեանս ջերմում ուժասպառ՝ վճռեցի դիմագրաւել, ինձ կլանել, իսպառ խորտակել սպառնացող անյուսութեանն ու լքմանը: Եւ որպէսզի կարողանամ ինձնից վանել ու հեռացնել իմ հոգեկան բեկումը, որոշեցի օր առաջ, ժամ առաջ թողնել հեռանալ ստեղծուած յուսալքիչ միջավայրից:

Օդափոխութիւնը, աւելի ճիշտ, տեղի, միջավայրի ապրումներիս սևեռումի փոփոխութիւնը այս որոշման անմիջական գործադրութիւնն ինձ փրկեց և վերադարձրեց կեանքիս յոյսը, յոյսերի երջանկութիւնը:

Գնացքի ցնցումները, ջղերիս լարուածութիւնը թուլացրել և մի քիչ հանգստացրել էին: Ութը ժամ տևող քնով խաղաղւել և կազդուրւել էի: Իմ բարեսիրտ հարևանը խղճացել, կարեկցել էր ինձ և չէր ցանկացել իր հանգստութեան համար ինձ նման անօգնական հիւանդին անհանգստացնել: Եթէ նրան ասած չը լինէի իմ՝ Ղարաքիլիսէի իջնելու մասին, անկասկած, նա դեռ քնած կը թողնէր ինձ:

– Հայրենակի՛ց, վե՛ր կացէք: Արդէն Ղարաքիլիսէի կայարանումն ենք:

Ընդոստ վեր թռայ: Իսկապէս գնացքը Ղարաքիլիսէի կայարանումն էր կանգ առել:

– Շնորհակալ եմ ձեր բացառիկ զիջողութեան և ազնուութեան համար: Ձեր տեղը գրաւելով՝ ձեզ անհանգիստ արի: Ներողութիւն եմ խնդրում և ձեր ջենդլմէն վերաբերմունքն երբէք չպիտի մոռանամ:

ՄԵՐՈՆՑ ՄՕՏ

Գնացքից ցած գալով՝ անմիջապէս մօտեցայ Ղարաքիլիսէի կայարանի առաջամասում գտնուող մշտահոս ջրի ծորակին: Անմահական ազդեցութիւն թողեց այդ հայրենի հողամասի սառնորակ և զնգան ջուրը: Առատօրէն թափւող ջրին բերանս մօտեցնելով՝ խմեցի այդ կենարար ջրից: Խմեցի, ինչքան կարող էի: Մի պահ ինձ թւաց, որ մեր Այգեստանի, մեր թաղամասի Մոխրի քեահրիզի անմահական ջրիցն եմ խմում: Նստեցի քաղցրահնչուն գլգլոցով թափւող ջրի մօտ: Գարնանային առաւօտեան անուշաբոյր զեփիւռը կարծես նոր կեանք տւեց ինձ: Այլևս ջերմ չ'ունէի, և ինձ հիւծող ցաւն ու հիւանդութիւնը կարծես մի սքանչելի հրաշքով անհետացել էր: Օրերից յետոյ առաջին անգամ լինելով՝ զգացի որ քաղցած եմ: Ա՜խ, ինչ լաւ կը լինէր, եթէ ժամ առաջ մերոնց մօտ՝ Գիւլիզարդ հասնէի և մեր տոհմական կազդուրիչ թանապուրն ուտէի:

Միայն 24 ժամ առաջ մտքումս ծնունդ առած յոյսի և հաւատքի ուժը կատարել էր փրկարար գործը: Ղարաքիլիսէ գալով՝ անխուսափելի կորուստից փրկւած էի:

Մարդկային կեանքը տարօրինակ և զարմանալի զուգադիպումներ ունի: Մինչ ես սպասում էի մի բախտաւոր և շուտափոյթ հանդիպում ունենալ Ղարաքիլիսէ եկող և իրենց կաթնատնտեսական կենսամթերքները ծախելուց յետոյ գիւղը վերադարձող գիւլիզարդցի սայլապաններից մէկին, ահա կարծես հրաշքով դէմու դէմ եղայ Թիֆլիս մեկնելու համար ինձ կայարանը բերող գիւլիզարդցի բարեհամբոյր սայլապան Աւետին, որն ինձնից առաջ, ինձ նկատելով և ճանաչելով, բարձրաձայն կանչեց.

– Էհէ՜յ, մեր տղայ, վերջապէս կարծես կարօտել ես մեր գիւղին ու ընտանիքիդ: Բարով ես եկել: Համեցէ՛ք: Բախտաւոր էլնես, բախտի ես հանդիպել՝ ինձ հանդիպելով: Ասենք ես ինքս եմ ուրախ, որ քեզ հանդիպեցի: Մենակ ճանձրալի է: Կը գնանք զրուցելով: Էյ վա՜յ, մօռացայ ասելու, էդ ի՞նչ զահմաթ ես քաշել և ինձ ամօթապարտ ես արել քո՝ ինձ ուղարկած ծխատուփի նւէրով: Քոյրդ ինձ յանձնեց ասելով.

– Եղբայրս քեզ նւէր է ուղարկել այս տուփը: Վանեցի արծաթագործերի սարքածն է:

– Եւ իսկապէս, ի՜նչ սիրուն և անթիկա գործ է: Դրա շինողի մատները միշտ դալար ճիւղի պէս թարմ ու դալար մնան: Թաղումս ցուցադրութեան եմ դրել:

– Քեզ հալալ է, ախպէ՛ր Աւետ, ափսո՜ս, որ դրանից աւելի լաւը չը կարողացայ քեզ ուղարկել:

Այդ րոպէին կարծես աշխարհի ամենամեծ նւէրն էին ինձ տւել: Ուրախութիւնից լեզուս կակազի էր ընկել: Բախտ էի բերել, որ առանց երկար սպասելու՝ այդ ազնւահոգի գիւղացուն էի հանդիպել և կէս ժամից մերոնց մօտ էի լինելու:

***

Երեք քառորդ ժամ չ'անցած՝ բարեսիրտ Աւետի հետ մենք Գիւլիզարդը հասանք: Սայլի ձին, իր տիրոջ նման ուրախ և զարթ, քառատրոփ վազ էր տւել՝ իր հերթին ինչքան կարելի էր շուտ իրեն հարազատ տունը հասնելու համար:

Մենք ուղիղ կանգ առանք մերոնց բնակած տան դռանը:

Ախպէր Աւետը, նորից քրքջալից ու երջանկախինդ, կոկորդի իր ամենազիլ կանչով բղաւեց.

– Ահա՜յ, ահա՜յ, տէ՛ր հայր, Արաքսի՛, վարժապե՛տ, դո՛ւրս եկէք, շո՛ւտ արէք, տեսէ՛ք՝ ձեզ համար ինչքա՜ն թանկագին հիւր եմ բերել:

Մերոնք, բոլորն էլ համարեայ միաժամանակ, դուրս վազեցին:

Նրանք այսքան շուտ ինձ չէին սպասում տեսնել, թէև իմ գալու վերաբերեալ նրանց տեղեկացրել էի:

Չ'նայած կարճատև, բայց արտակարգօրէն ինձ ուժասպառ անող իմ հիւանդութիւնից կուչ էի եկել և քամուել էի, բայց կարողացայ սայլից ցած թռչել և առաջ փարուել արդէն իմ գիրկը նետող քրոջս: Հազիւ նրա գրկախառնումից ու համբոյրներից ազատուած՝ հօրս ու եղբօրս գիրկն ընկայ:

Տեսարանը շատ յուզիչ էր: Կարծես երկար տարիների կարօտը մեզ բոլորիս ծարաւատապ արած լինէր:

Ամենից առաջ քոյրս, նկատելով իմ ֆիզիկական ակնբախ մաշեցումն ու դէմքիս շեշտուած գունաթափումը, կանչեց.

– Այս ի՞նչ օրի ես ընկել, ախպէ՛ր, ինչու՞ ես այսքան նիհարել և գունատուել, մի՞թէ հիւանդ ես:

– Ոչինչ, սիրելի՛ս, հիւանդ էի, բայց արդէն անցել է: Մի՛ տխրիր:

Երբ մեր հանդիպման սիրազեղումներն անցան, մենք ներս մտանք: Ես անմիջապէս նկատեցի, որ Գիւլիզարդի գիւղացիներն իրենց հնարաւորն արել են մերոնց բնակարանային հանգստաւէտութեան համար: Նրանք մերոնց տրամադրել էին մի շատ կոկիկ և մաքուր միյարկանի շէնք՝ բաղկացած երեք բաւական մեծ սենեակներից, խոհանոցից և ուրիշ յարմարութիւններից:

– Արաքսի՛ ջան,– առաջին հանդիպած նստարանին գինովցածի նման գլորուելով-նստելով՝ ասի քրոջս,– ութ օր է, ինչ քաղցած եմ մնացել: Հիւանդ էի և ախորժակ չունէի: Շատ շնորհակալ կը լինէի, եթէ ինձ համար մեր Վանի թանապուրը պատրաստես: Նոր եմ զգում, որ չափազանց քաղցած եմ:

***

Գիւլիզարդ գիւղում՝ մերոնց մօտ, ես շատ արագ կազդուրուեցի: Գիւղի գարնանային սքանչելի տեսարանը, վերազարթնող բնութեան նոր-նոր կեանք առնող կանաչ ծիլերն ու ձեան տակից գլուխ բարձրացնող դաշտային ձնծաղիկն ու կանաչը, լեռնային կենսատու օդը, քրոջս ուշադիր և սիրալիր խնամքները, բոլորը միացած, ինձ վերադարձրին իմ նախկին առողջութիւնն ու կենսուրախութիւնը:

Իմ հոգեկան վրդովմունքն ու վիշտը հետզհետէ զիջել էին իմ նոր մտասևեռումին, օր առաջ մեկնել իմ հարազատ և անչափ սիրելի հայրենիքը: Քոյրս, ինձ յիշեցնելով մեր նահանջ-փախուստի ընթացքում մեր կրած անթիւ տանջանքներն ու սարսափալից տագնապները, միշտ աշխատում էր ինձ համոզել հրաժարուել Վան վերադառնալու որոշումից:

– Սիրելի՛ եղբայր, ու՞ր ես աճապարում,– կրկնում էր նա,– տեսնում ես, այսքան կարդում և տեղեկանում ես, որ դրութիւնը դեռ բոլորովին խառնաշփոթ է: Պատերազմը չի վերջացած: Մեր երկիրը դեռ տաճիկներով շրջապատուած է: Ինչու՞ կամովին, առանց բոլորովին ստիպուած լինելու, քեզ նորից կրակի մեջ ես գցում: Դեռ այդ բոլորը կարծես հերիք չէին, անցեալ օրուայ թերթերը, ինչպէս ինքդ կարդացիր, Ռուսաստանի նոր յեղափոխութեան մասին են գրում: Ո՞վ գիտէ, էգուց ի՞նչ է պատահելու: Գոնէ մի քանի օր էլ սպասի՛ր, տեսնենք ի՞նչ է լինելու:

– Արաքսի՛, սիրելի՛ս, այդ լաւ է, որ դու յիշեցիր: Եթէ մինչև հիմա մենք կասկածում էինք ցարական կառավարութեան նենգ քաղաքականութեան համար, ներկայիս այդ կասկածն ու վախը փարատուել է: Ցարական կառավարութիւնը, որ մեզ՝ հայերիս սրտանց ատում էր, այլևս գոյութիւն չ'ունի: Նա տապալուել է և նրան փոխարինել է մի ժողովրդական իշխանութիւն: Այդ կառավարութիւնը խոստացել է ճանաչել Կովկասի ժողովուրդների և նրանց շարքին մեր՝ հայերիս ինքնավարութիւնը: Երբէք մի՛ մտածիր, որ այս կառավարութիւնը կը համաձայնուի ձեռքից տալ իր երկրի բազմահազար երիտասարդների՝ արեան գնով նուաճած մեր հայրենի վիլայէթները, մանաւանդ մեր Վասպուրականը, որ իր սահմանների նախադուռն է և ծովածաւալ Ռուսաստանի ապահովութեան կարևոր պատնէշներից ամենակարևորը: Ինչպէս խոստացած է, Վասպուրականն անպայման հայերին կը տրուի:

Սակայն, իմ այս բոլոր ճառախօսութիւնները չէին կարողանում քրոջս համոզել: Երբ նա տեսնում էր ինձ՝ իմ աներեր որոշումիցս յետ պահել չի կարողանում, ճարահատուած բացականչում էր.

– Լաւ, եթէ այդքան համոզուած ես, որ Վանի գլխին նոր փորձանք չի գալու, այն ժամանակ ինձ էլ քեզ հետ տար: Ես էլ ցանկանում եմ իմ հայրենիքը վերադառնալ: Ես էլ կարօտել եմ նրան: Գիշեր չի լինում, որ մեր տունն ու այգին, մեր ծառն ու ծաղիկը, մեր քաղցրահամ պտուղները, մեր կչկչան աղբիւրի աննման ջուրը երազումս չը տեսնեմ:

– Հօրս խոստացել եմ, հասնելուցս անմիջապէս յետոյ, տեղեկանալ դրութեան ու գոյութիւն ունեցող պայմաններին: Հայրս էլ հայրենաբաղձութիւնից շատ է տանջւում: Նա էլ օր առաջ վերադառնալ է ուզում: Ինձնից նամակ ստանալուց յետոյ նա անպատճառ կը վերադառնայ: Դու էլ նրա հետ կը գաս:

– Շատ լաւ, այն ժամանակ թէ՛ քեզնից և թէ՛ հօրիցս պատուոյ խօսք եմ առնելու:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ

1917 թի փետրուարի 26-ի առաւօտեանը, ես Գիւլիզարդից ուղևորուեցի Ղարաքիլիսէի կայարանը,

որպէսզի կարողանամ այդ գիշերուայ Էջմիածին-Ջուլֆա մէկնող գնացքով և Պարսկաստանի վրայով հայրենիքս՝ Վան վերադառնալ:

Մեր բաժանումը թէ՛ տպաւորիչ և թէ՛ յուզիչ էր: Բացի հայրս, քոյրս, ու եղբայրս, ինձ ճանապարհելու էին եկել գիւղապետն ու գիւղում աչքի ընկնող անձնաւորութիւններ: Բոլորն էլ սրտանց ինձ բարի ճանապարհ մաղթեցին և աստուածային օգնութիւն հայցեցին ինձ համար:

Իմ բարեկամ ախպէր Աւետը կամաւոր զինուորի նման իրենց և իր սայլն իմ տրամադրութեան տակն էր դրել:

Քոյրս այնքան շատ էր լացել, որ այլևս նրա լացի ակնաղբիւրը ցամաքել էր: Նա ինձնից, ինչպէս միշտ, բաժանուել չէր ուզում և խնդրում էր գոնէ մինչև կայարանը գալ: Բայց չգիտեմ ինչու՞, մենք բարոյ չը համարեցինք նրա այդ անմեղունակ խնդիրը կատարել: Չ'գիտեմ ինչու՞ նրա սիրտը յամառօրէն նախազգում էր, որ մենք այլևս չենք կարողանալու իրար տեսնել և, դժբախտաբար, նրա այդ նախատեսութիւնը ճիշտ էր:

***

Մեր բաժանումից գրեթէ մէկուկէս ամիս յետոյ ես և հայրս Վանում իրար միացանք: Այգեստանցի հաւատացեալ համայնքի մեր թաղամասի ծխականները մի պատշաճ համախօսականով հօրս խնդրել էին Յանկոյսների եկեղեցում պաշտօնավարելու համար վերադառնալ, և նա սիրով համաձայնուել և եկել էր: Մեծ եղբօրս հանդիպեցի հէնց Ղարաքիլիսէում՝ ամբողջ 11 տարիներից յետոյ, երբ ես պատշաճ յանձնարարութեամբ պարսկահայ հատուածից հայրենիք վերադառնալու կարօտով այրող մարդկանց ներգաղթի շուրջ բանակցելու համար Թիֆլիս եկայ: Եղբայրս ամուսնացել և մէկ սիրունիկ աղջիկ և մէկ չարաճճի տղայ ունէր և մեր, հօրս և իմ նիւթական օժանդակութեամբ Ղարաքիլիսէում տնատէր էր եղել: Դժբախտաբար, ժամանակի և պայմանների անյաջող դասաւորութեան հետևանքով ինձ չը յաջողուեց Գանձակում ապրող իմ մանկութեան, պատանեկութեան և երիտասարդութեան շրջանների ամենասիրելի և միակ քրոջս՝ Արաքսուն տեսնել, որ նոյնպէս ամուսնացել և մէկ տղայ ու երկու աղջիկ էր ունեցել: Այդ ժամանակ իմ դժբախտ եղբայր Արմէնը մեռել էր արդէն, իր կեանքի 35 ամեակը հազիւ լրացած:

Վան վերադառնալուս այդ օրը մենք բոլորովին անտեղի ու անիրաւացի մերժեցինք քրոջս՝ մինչև Ղարաքիլիսէի կայարանը ինձ ուղեկցելու գալը: Այդ պարագան շատ երկար ժամանակ սրտիս դարդ ու ցաւ եղաւ: Հայրս ու եղբայրս եկան ինձ ուղեկցելու և ժամերով սպասելուց յետոյ Էջմիածին-Ջուլֆա մեկնող գնացքում ինձ հետ ջերմագին ողջագուրուելով՝ Գիւլիզարդ վերադարձան սայլապան Աւետ ախպօր հետ, որն անսահման սիրալիրութեամբ, գեղեցիկ ձեռագործով նկարազարդուած մի փորք բարձ ինձ նուիրելով՝ ասաց.

– Երբ բէզարած կը լինես, հանգստանալու համար, գլխատակդ կը դնես և ինձ կը յիշես:

Ղարաքիլիսէից երկաթուղային գնացքը դէպի Էջմիածին-Ջուլֆա ճանապարհ ընկնելուց յետոյ ուզեցի ստուգել գրպանումս մնացած հարստութիւնս: Միայն 45 ռուբլի էր մնացել:

Մեկնելուցս առաջ Արաքսուն 50 ռուբլի էի տուել, որ մերժում էր ստանալ՝ ասելով՝ երկար ճանապարհ ես գնում և քեզ պէտք կը գայ: Բայց նախօրօք՝ Թիֆլիսից մեկնելուց առաջ, ես իմ ամբողջ մէկուկէս տարուայ ընթացքում խնայածս ռոճիկի մնացորդի 90 տոկոսը հիւանդ եղբօրս էի թողել՝ համոզուած լինելով, որ նա այդ դրամին ինձանից աւելի կարիք ունի:

***

Գնացքում, բոլոր ուղևորներից անյաղորդ և կամովին մեկուսացած, վերլուծման և քննութեան ենթարկեցի իմ վերադարձի պատճառները: Նուազագոյն կասկածը չ'ունէի, որ այդ պատճառների ամենահիմնականը իմ հայրենասիրութիւնն էր, որ հայրենակարօտի ծայրահեղ աստիճանին էր հասել: Նրանից յետոյ իմ, այսինքն՝ մի երիտասարդ հայի յառաջադիմութեան ձգտումի ծարաւը և ի վերջոյ այն համոզումը, որ ես կամաւոր զինուորի նման խոստացել և վճռել եմ հայրենիքիս ազատագրման, վերածնունդի և անկախ կեանքի համեստ ախոռեաններից մէկը դառնալ:

Իմ վերադարձը հանդիպում էր Կերենսկու փետրուարեան յեղաշրջմանը: Ինչպէս բոլոր իրաւազրկուած և տառապած հայերը, ես էլ մտածում էի, որ ցարական իշխանութեան տապալումով հրապարակ է եկել մի կառավարութիւն, որը խոստացել է ճանաչել Հայ ժողովրդի ազատութեան իրաւունքը և նրան կը պաշտպանի տաճիկ հայակեր կառավարութեան վանդալիզմի դէմ: Օրօրւում և ոգևորւում էի, ինչպէս ուրիշ շատ-շատերը, այնպիսի յոյսերով, որոնք, դժբախտաբար, նորից յանգեցին նախկին ցարական խաբէութեանն ու նենգութեանը: Այս վերջին պարագան, ինչպէս բոլոր հայ բազմութիւնները, այնպէս էլ ես նախատեսել չէի կարող:

Այդ բոլոր խառնիխուռն մտորումներից ամենաճիշտն ու ամենահիրականը այն էր, որ ես վճռականօրէն գնում էի Վան-Այգեստանը՝ այդ իմ գեղեցիկ և նուիրական հայրենիքը, որն ինձ տանում ու քաշում էր, և գնում էի մի ուրիշ, շատ աղօտ յոյսով, որ թերևս կը գտնեմ գուցէ հրաշքով ազատուած իր հօր մօտ, նրա՝ ինձ համար դիւթական երազ դարձած և ինձ անվերջ ու անդադար առինքնող և հմայող Անուշ աղջկանը:

Գրքիս այս երկրորդ հատորը նուիրում եմ իմ երկու մանչ զաւակների՝ Լևոն և Յարութիւն Սարհադեանների երեք, և միակ աղջկաս՝ Մէդիկ Յարութիւնեանի չորս երեխաներին՝ իմ եօթը թոռներին:

Միաժամանակ, մասնակից լինելով հռչակաւոր բանաստեղծի օրհնութեան, նրա հետ միասին բացականչում եմ.

«Ապրէ՛ք, երեխէ՛ք, բայց մեզ պէս չապրէք»:

ՀԵՂԻՆԱԿ

Հատոր Բ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Կեանքիս յուշերից» գրքիս առաջին հատորի հրատարակութիւնից անմիջապէս յետոյ թեհրանահայ ընթերցողներից և մանաւանդ բարեկամ-ծանօթներից ջերմագին շնորհաւորանքներ և քաջալերանքներ ստացայ: Մի քանի ամիսներ յետոյ Սփիւռքի տարբեր շրջանների հայրենակիցներից և մասնաւորապէս գրագէտներից ու մտաւորականներից բազմաթիւ շնորհաւորանքներ ու քաջալերական նամակներ ստացայ: Նրանք ինձ շնորհաւորում էին գրքումս արտայայտուած պարզ, հարազատ և մանաւանդ անկողմնակալ յուշերիս և նկարագրութիւններիս համար:

Այս առիթով խորին շնորհակալութիւններս եմ յայտնում բանաստեղծ Դևին (պր. Մարգար Ղարաբէգեան)՝ գիրքս արտասահմանում տարածելու գործին բերած իր թանկագին աջակցութեան համար:

Մենք՝ հայ ժողովրդի զաւակներս, մանաւանդ առաջին պատերազմի ընթացքին և դրանից յետոյ, բազմաթիւ առիթներով ենթարկւել ենք կոտորածների, տառապանքների և այլ զրկանքների ու ստորացումների: Ինչպէս ես, ինձ հետ նաև ուրիշ հարիւր հազարաւոր հայեր, ցանկութիւն և ձգտում ունեն հասնելու այն երջանիկ օրւան, երբ մեր շինարար և ստեղծագործ ազգին պարտադրուած իրաւազրկումները սրբագրութեան կենթարկւեն, և մեզնից ամէն տեսակ բռնութեամբ կորզուած հողամասերը նորից մեզ կը վերադարձւեն:

Մեր այս նուիրական և երջանիկ նպատակին հասնելու միակ միջոցը մեր ազգային ճիգերի և ձգտումների միաւորումն ու միատեղումն է: Մեր ազգային միութիւնն ու միասնականութիւնը մեր փրկութեան միակ ճանապարհն է: Մենք՝ հայերս, մեր բոլոր մասնաւոր, հատուածական, նոյնիսկ կուսակցական շահերը պիտի զոհենք մեր ազգային շահերին՝ յանուն մեր նախահայրերի ամբողջական և լրիւ հայրենիքի: Հարիւր հազարաւոր սրտացաւ հայրենակիցների նման ես էլ, գրքիս վերջաբանով, բոլոր հայերին պիտի հրաւիրեմ աներեր կամքով և ազնիւ մարդու պատուոյ խօսքով իրականացնել հայ ժողովրդի օրւայ նշանաբանը.

«Հա՛յ ժողովուրդ, քո փրկութիւնը քո միութեան մէջ է»:

ՍԻՐԱՔ ՍԱՐՀԱԴԵԱՆ

Մաս Ա

ՎԵՐԱԴԱՐՁԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

1917 թի փետրուարի 27-ին՝ առաւօտեան, մեր գնացքը Էջմիածնի կայարանում կանգ առաւ: Մտածում էի մինչև Ջուլֆա գնալ: Ճամբորդներին յայտնել էին, որ երեք ժամից յետոյ կառաշարը մեկնելու է Ջուլֆա: Ժամանակ ունէի: Իջայ կայարանը՝ յոյս ունենալով ծանօթ հայրենակիցների հանդիպելու և խորհրդակցելու վերադարձի ճանապարհի ընտրութեան համար:

Ինձ ասել էին, որ ներգաղթողները Վան-Վասպուրական վերադառնալու համար ընտրում են կա՛մ Ջուլֆա-Խոյ-Արճակ-Ճանիկ և կա՛մ Էջմիածին-Իգդիր-Բերկրի-Թիմար ճանապարհը:

Էջմիածնի կայանը լեփ-լեցուն էր: Զարմանալու ոչինչ չկար: Պատերազմի տարիներին իմ տեսած բոլոր կայարանները՝ զանազան տիպի ճամփորդների բազմութեամբ խճողուած էին: Մի ժամից աւելի մտամոլոր և հրմշտկելով ճամփայ էի բացում ինձ համար և առաջ ու յետ էի շարժւում: Յանկարծ ինձ իմ անունով մի քանի անգամ կանչող ձայն լսեցի: Մինչ շփոթած ու սրտատրոփ ինձ կանչողին էի որոնում, բազմութիւնը ճեղքելով՝ կարողացայ մօտենալ և ինձ հետ գրկախառնուել իմ ամենասիրելի ընկերներից մէկը՝ Հրանդ Դարբինեանը:

– Սա ի՞նչ հրաշք է,– համարեա միաժամանակ դուրս թռաւ մեր երկուսիս բերաններից:

Հակառակ խռնուած բազմութեան ճնշումներին՝ մենք ցանկութիւն չունէինք մեր գրկախառնումից անմիջապէս հրաժարուել:

– Հրա՛նդ, իմ սիրելի՛ Հրանդ, իսկապէս որ սա հրաշք է,– ասացի:

– Հրաշքների հրաշքն է սա, իմ աննմա՛ն ընկեր,– պատասխանեց Հրանդը:

– Ի՞նչ գործի վրայ ես այստեղ, Սիրա՛ք:

– Իսկ դու ինչու՞ համար ես այստեղ եկել,– հարցրի ես:

– Եթէ ասեմ, որ երկուսս էլ միևնոյն նպատակով ենք այստեղ եկել, կարծեմ սխալուած չեմ լինի,– պատասխանեց Հրանդը:

– Իսկապէս, սիրելի՛ Հրանդ, ուզո՞ւմ ես Վան վերադառնալ:

– Իսկ դու՞, մի՞թէ Վան վերադառնալու համար չես եկել այստեղ:

Մենք՝ երկու չափազանց մտերիմ և սիրելի ընկերներս, աճապարեցինք մի րոպէ առաջ կայարանի հրող և հրմշտկող խաժամուժից դուրս պրծնել, մի աւելի հանգիստ անկիւն ճարելու համար: Առաջին նահանջից յետոյ 20 ամիս էր, որ մենք իրարմէ բաժանուել և իրար մասին ամենափոքր տեղեկութիւն չէինք ունեցել:

Կայարանից դուրս և նրան կից ծառուղու եզերքին փայտեայ հին ու խարխլած մի երկար նստարան ճարելով՝ նստեցինք: Արևոտ օր էր, և օդն էլ՝ հաճելի: Գարնանային թարմ խոտի բուրմունքը տարածուել էր ամենուրեք:

Տարիների ընթացքին Վանում Հրանդն ու ես եղել էինք շատ մտերիմ և գաղափարի անշահախնդիր ընկերներ: Նիւթական փոխադարձ ակնկալութիւն էլ չէինք ունեցել: Ասենք Հրանդը դրա կարիքն էլ չունէր, քանի որ նրա ընտանեկան ու տնտեսական պայմանները բաւական բարւոք վիճակում էին: Իսկ ես չափազանց ամաչկոտ էի նոյնիսկ նման ակնկալութեան միտքն ունենալու համար:

– Սիրա՛ք, ի՞նչն է քեզ ստիպում Վան վերադառնալու,– հարցրեց ընկերս:

– Ի՞նչն է ստիպում ինձ, բաւական դժուար է դրա պատասխանը: Եթէ մի ուրիշը լինէր հարցնողը, հաւանաբար ես տատանուէի դրա ճիշտ պատասխանը տալու, բայց, սիրելի՛ Հրանդ, պէտք է, որ քեզ հետ, ինչպէս միշտ, ներկայիս էլ անկեղծ լինեմ և ճիշտ պատասխանը տամ: Գուցէ դու էլ մինչև հիմի նկատած լինես, որ ես միապաղաղ կեանքը չեմ սիրել: Թերևս այնքան էլ համեստութիւն չի լինի ասել և խոստովանել, որ ինձ ճանաչելուց և գիտակցութեան շրջանը մտնելուց ի վեր, միշտ ցանկացել եմ յառաջ նետուել, մարդ դառնալ, սովորական անհատից թէկուզ մի աստիճան բարձր լինել: Գիտեմ, որ սա մի տեսակ եսասիրութիւն է, բայց ի՞նչ կարող եմ անել: Մարդիկ նոյն բնաւորութեան և միևնոյն հասկացողութեան տէրը չեն: Մի գուցէ այս բնաւորութիւնը կամ ձգտումը մի օր ինձ վատ օրի գցի կամ նոյնիսկ բոլորովին խորտակի, քանի որ ընդհանրապէս ընդունուած է այն գաղափարը, որ շատ վազողը շուտ կը յոգնի: Բայց կարծում եմ և աւելի շատ համոզւում եմ, որ ձգտում, յառաջադիմութեան ձգտում չունեցող մարդը պէտքական չէ, անպէտքութիւն է: Աւելի լաւ է չլինել, քան սովորական, հասարակ մարդ լինել: Սիրելի՛ ընկեր, եթէ սովորական կեանքով և ապրուստով բաւարարուել ուզէի, բոլորովին կարիք չկար նորից կեանքս փորձանքի և արկածների ենթարկելու,

քանի որ Թիֆլիսում սովորական մարդու կեանքն ինձ համար արդէն ստեղծել էի, և հաւանաբար ինձ կը յաջողուէր սովորականից մի աստիճան աւելին դառնալ, բայց այն սպասումն ու ակնկալութիւնը, որն ինձ համար ենթադրում եմ ունենալ իմ հայրենի երկրում, իմ հարազատ հայրենիքի հորիզոնի տակ, շատ աւելի հաւանական է թւում, քան օտար և խորթ միջավայրում: Այո՛, սիրելի՛ս, մի տարի աւելի ժամանակամիջոցում դառնութեամբ կարողացայ ճշտել օտար միջավայրի խորթութիւնը: Թիֆլիսում՝ Վրաստանի այդ չքնաղագեղ մայրաքաղաքում, կաշւիս վրայ սպանող ճնշումով զգացի այդ խորթութեան դառնութիւնը: Եղբայրս և ուրիշ շատեր ինձ ասում էին, որ Թիֆլիսում վրացին ու հայը միևնոյն են, զանազանութիւն և խտրութիւն գոյութիւն չունի: Նոյնիսկ այդպիսի խտրութիւն փնտրողին մեղադրում և այպանում են: Բայց դա բոլորովին ճիշտ չէ: Կեղծ ինքնախաբէութիւն է:

Շուրջ մի տարի, մի ազնիւ հայի բացառիկ պաշտպանութեան շնորհիւ, ինձ յաջողուեց Թիֆլիսի էլեկտրաքարշի վրայ տոմսավաճառների ստուգիչի պաշտօնն ունենալ: Տոմսավաճառներն ինձ ատելով ատում էին, որովհետև վրացի չէի և մանաւանդ որ իրենց հետ վրացերէն չէի խօսում, քանի որ չգիտէի: Յաճախ զգուշանում էի հայերէն կամ ռուսերէն խօսելու: Քանի անգամներ այդ վրացի տոմսավաճառներից և կոնդուկտորներից կծու դիտողութիւն եմ ստացել վրացերէն չխօսելու համար:

Անկեղծ լինելու համար ստիպած եմ խոստովանելու, որ եթէ վրացիների այդ կծու շովինիզմն ու խորթութիւնը հոգիս չը չարչրկէին, գուցէ չը վճռէի հայրենիք վերադառնալ:

Թիֆլիսում հրատարակւող հայերէն թերթերից տեղեկացել էի անցեալ 1916 թւի յունիսի և նոյեմբերի երկրորդ և երրորդ նահանջների մասին: Առաջին աղէտալից նահանջի դառնութիւններն ու տառապանքները ճաշակած հայը, որից երկուսը մենք երկուսս ենք, հեշտութեամբ չէր կարող համաձայնւել նորից Վան վերադառնալ:

Մենք հրաշէկ ու այրող լաւաներ ժայթքող Վանհրաբուխի ստորոտն ենք վերադառնում, որովհետև նրան գերագնահատում ենք օտար երկրների խորթութիւններով լի հանգստաւէտ կեանքից:

Մի պահ ընդհատեցի խօսակցութեանս ընթացքը: Ասելիքներ շատ ունէի, բայց յուզումնալից ապրումներս ժայթքում և կոկորդս խցկում էին: Հրանդն ըմբռնեց յուզումներիս ալեկոծումը և շտապեց ինձ հանգստացնել: Նա շատ հանդարտ սկսեց ինձ պատասխանել.

– Սիրելի՛ Սիրաք, դեռ Վանում, մեր ուսանողական միութեան շարքում ճանաչել և կարողացել եմ գնահատել քո յառաջադիմական ձգտումները: Յիշում եմ մանաւանդ տագնապալից և խուճապահար մեծ նահանջից առաջ՝ վերջին մէկ տարւայ ընթացքում, ի գործ դրած քո բոլոր ջանքերը մեր երիտասարդ ընկերների մտային և մշակութային ընդհանուր զարգացման գործում:

Միանգամայն իրաւացի ես, եթէ համոզուած ես, որ մարդս, մանաւանդ իր երիտասարդ հասակում, պիտի ձգտի սովորականից աւելի բարձրանալու, ուրիշ խօսքով հնարաւորութեան սահմաններում կատարեալ մարդ դառնալու:

Եթէ բախտի բերմամբ և մեզ շրջապատող արտաքին պայմանների յաջող դասաւորութեամբ մեր ժողովրդին՝ Վասպուրականի մեղւաջան և ստեղծագործ հայ զանգւածին, դիւրութիւն և հնարաւորութիւն տրւի նորից իր հայրենիքում ազատ ապրելու, համոզուած եմ, որ մի քանի տարւայ մէջ վասպուրականցին հայ ժողովրդի փառքն ու պարծանքն է դառնալու, և քեզ նման յառաջադիմութեան ծարաւի երիտասարդները, իրենց տոկուն և չարքաշ աշխատանքով, այդ պարծանքի սիւներն են կազմելու:

***

Երկու ընկերներս որոշեցինք, նախքան մեր վերադարձի ճանապարհի ընտրութիւնը, իսկոյն ևեթ ձեռնարկել երկու ճանապարհներից մէկի հեշտութիւնն ու առաւելութիւնը ստուգելու: Այդ նպատակով կայարանում ջանացինք գտնել ներգաղթել ցանկացող հայրենակիցներից մէկն ու մէկին: Կայարանի խճողումն ու խառնաշփոթը հնարաւորութիւն չտւեց նպատակին հասնելու համար:

Կայարանից դուրս գալով՝ սկսեցինք շրջել մերձակայքը: Շուրջ մէկուկէս ժամւայ թափառումից և ստուգումից յետոյ, երբ արդէն յոգնած ուզում էինք Էջմիածին վերադառնալ, մի մարդու հանդիպեցինք: Նրան ընկերակցում էին երկու երեխաներ և գլխին լաչակ գցած մի կին: Հրանդը, մի քանի քայլ ինձանից առաջ ընկնելով, դիմաւորեց և անվարան սկսեց հայերէն խօսել.

– Բարով ձեզ հանդիպելուս համար, ինձ թւում է, որ դուք մեր հայրենակիցներից էք: Յառաջ բարի:

– Բարով էլնէք: Մենք վանեցի ենք: Ալիւր գեղից: Երևանէն Էջմիածին իգանք Վան էրթալու: Գաղթական կոմիտէն մեզ մէ քիչ փող ու պարէն տւեց և խրատաւ, ինչքան կարող ենք շուտ, մեր գեղը վերադառնալ: Մեր հարևաններէն մէկ քանիսը երկու շաբաթ առաջ Իգդիրի ճամփով մեր գեղն են գնացած: Անպատճառ խասած կէլնեն: Մեզ խոստացած են գեղը հասնելուն պէս խոփ, գութան, լծկան եզներ, սերմացու ցորեն, ալիւր, էլ ինչ գիտնամ ամէն ինչ տալ և օգնել մինչև խունձքը:

Մարդը, մի բոպէ շունչ առնելով, շարունակեց.

– Դէ մենք էլ էս քանի ժամանակ անգործ ենք մնացած: Օլուղ-չօճուղով շատ դժւարի օտար տեղեր եօլա էրթալ, ապրել: Մենք էլ յոյսն Աստծոյ՝ ասանք մեր երկիր էրթանք: Եթէ մեռնելու ենք, մեր խօրենական տան մէջ, մեր օջախի կշտին մեռնենք:

Է՜հ, պարո՛ն, չես խասկնալ, թէ մեր գեղցիների համար ինչքան դժուար ու անտանելի է էսպէս օտարութեան մէջ ապրուել: Էսքան մեր օրից անցածի, քառասունէն աւելի տարիք ունեմ: Էսպես նեղութիւն ու տառապանք, որ մենք էս մէկուկէս տարուայ մէջ տեսանք, Աստուած մեր դուշմանին ղսմաթ չանի:

Մարդը, իմ ներկայութեանն էլ անդրադառնալով և գլուխն օրօրելով, վշտալից շարունակեց.

– Բայց զուր եմ գլխներդ ցաւցնում, պարոննե՛ր, դուք գաղթական չէք և մեզ նման անբախտ գաղթականների վիճակն երբեք չէք կարող իմանալ և անոնց դարդն ու ցաւը խասկնալ:

– Զուր էք կարծում, որ մենք գաղթական չենք,– իմ հերթին խօսակցութեանը միջամտելով՝ աշխատեցի մեր տառապակոծ գիւղացի հայրենակցին սփոփել:

– Մենք էլ ձեզ նման վասպուրականցի և գաղթական ենք: Տարբերութիւնը միայն նրանումն է, որ մենք ձեզնից մի քիչ աւելի երիտասարդ ենք և ձեզ նման ընտանիքով ծանրաբեռնուած չենք:

– Մեզ համար բոլորովին հասկանալի է, որ օտարութեան մէջ ձեզ նման ընտանիքների համար չափազանց անտանելի են եղել կեանքի և ապրուստի պայմանները: Դուք որ ձեր ամբողջ կեանքում օտարի օգնութեան կարիք չէք ունեցել և ձեր քրտինքի ու հալալ աշխատանքի շնորհիւ ձեր գիւղում, մեր երկրում, ամէն ինչ ունեցել էք, շատ պարզ ու հասկանալի է, որ օտարութեան և անգործութեան մէջ դժբախտ ապրուստ և սև օրեր էք ունեցել: Դեռ հրաշք է, որ կարողացել էք տոկալ այդ թշուառ պայմաններում և գոնէ ողջ մնալ:

Դիպուածաբար մեզ հանդիպած ընտանիքը թշուառութեան և անսահման զրկանքի մարմնացումն էր: Ընտանիքի անդամները ցնցոտիներով ծածկուած էին: Ամուսինները նիհար և կմախքացած դէմք ունէին, երեխաները՝ մէկն աղջիկ, իսկ փոքրը՝ մանչ, 7-10 տարեկան հասակում, նոյնպէս դժգոյն և թառամած դէմք ունէին: Նրանց երկուսի հայեացքներն էլ թախանձագին օգնութիւն աղաչող և սարսռեցնող տպաւորութիւն էին ներգործում: Մեր խօսակիցը՝ այդ թշուառ ընտանիքի հայրը, իմ խօսքերի վերջաբանից կարծես չափազանց ազդուած, աջ ձեռքի ափով իր երեսն ի վար գլորուող արցունքի կաթիլները սրբելով, պատասխանեց.

– Է՜հ, պարո՛ն, ի՞նչ ողջ մնալ... Եթէ ողջ մնալը էսպէս պիտի էլնի, շատ աւելի լաւ կէլնի, որ բոլորովին չէլնի: Երնէկ չէր էլնի, որ ես ու իմ օլուղ չօլուղը, հօրս ու մօրս հետ մէկտեղ, կամ էնոնցից մէ քիչ յետոյ, մեռած ու ազատուած էլնէինք էս անիրաւ ու բէմուրազ աշխրքից:

Հրանդն ու ես, խորապէս ազդուած այս իրապէս թշուառ, յուզող և արտասուաբեր հանդիպումից, աշխատեցինք մի կերպ հանգստացնել մեր դժբախտ հայրենակցին, նրան խոստացանք հնարաւոր օգնութիւն անել, եթէ կամենայ իր ընտանիքով, մեզ հետ վերադարձի ճամփորդակից լինել:

Մեր առաջարկած օգնութեան համար շնորհակալ լինելով՝ մեծ ափսոսանքով յայտնեց, որ նա ստիպուած է մէկ-երկու օր սպասել իր և կնոջ ազգականներին, որպէսզի բոլորը միասին իրենց հայրենի գիւղը վերադառնան:

Վան վերադառնալու մտադրութեամբ մեր երկու խիստ մտերիմ ընկերներիս հանդիպումը բացառիկ բարեբախտութիւն համարելով՝ կայարանից Էջմիածին վերադարձանք և այդ օրը հանգստանալու յատկացրինք:

Էջմիածնի ներգաղթի մարմնի քարտուղարի հետ խորհրդակցելուց յետոյ վճռեցինք յաջորդ օրը՝ առաւօտեան շատ կանուխ, Իգդիրի գծով Վան մեկնել:

ՄԵՐ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ. ԱՌԱՋԻՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ

1917 թի մարտի 5-ին՝ կէսօրից յետոյ ժամը 4-ին, Հրանդի հետ միասին ժամանեցինք մեր սիրելի Այգեստանը: Բախտի բերմամբ մեզ յաջողուեց Իգդիրից մինչև Բերկրի զինուորական մի ֆուրգունով ճամփորդել: Բերկրիից մինչև Արճակ ստիպուած եղանք փոխնիփոխ և գիւղից գիւղ, երբեմն էշով, ձիով, սայլով և երբեմն էլ ոտքով ճամփորդել: Արճակից Վան եկանք Հայկական գիւղատնտեսական միութեան ֆուրգոնով, որ պարապ էր վերադառնում գիւղացիներին յատկացուած և նրանց համար շատ թանկագին բեռը՝ գութան, արօր և սերմացու ցորենն ու գարին, դատարկելուց յետոյ:

Շուրջ երկու տարի առաջ մեր թողած աննման Այգեստանը մեր սրտերը լցրել էր անսահման հրճւանքով, բայց չափազանց տխուր և անմխիթար եղաւ մեր առաջին տպաւորութիւնը:

Ոճրագործ դիւային ձեռքերը բաւական չէր, որ մեզ մեր ազիզ հայրենի քաղաքից երկու տարի առաջ բռնութեամբ վտարել էին, մեզնից յետոյ իրենց սատանայական հրճւանքին յագուրդ տալու համար այրել և քարուքանդ էին արել Այգեստանի գլխաւոր փողոցի՝ Սըղգայ պողոտայի և հարևան կարևոր փողոցների բոլոր շէնքերն ու տները, ըստ երևոյթին իրենց ապագայ վերադարձից բոլորովին յուսահատ:

Հռչակաւոր և գեղատեսիլ մեր Այգեստանը նմանում էր իր հարազատ զաւակները թաղելուց յետոյ սև շորերը պատառոտուած, մազերը գզգզուած, դէմքը ճանկռոտուած և լաց ու ողբից կմախքացած, կիսակենդան ու շւաքանման, հազիւհազ շարժուող մի սգուորի: Մշտադալար և երկնասլաց ծառերից շատերը չորացած, իսկ մնացածը թառամած էին: Զնգան աղբիւրների սրընթաց վազքը՝ դանդաղած, և նրանց առուների եզերքները տղմակալած և մամռոտած էին:

***

Անտէր ու անտէրունչ էր եղել մեր դրախտանման Այգեստանը: Օդում ցցած, այրուած և քարուքանդ եղած տների սևացած պատերի գլխին թառել էին սև ագռաւներ և իրենց ողբալից ղառ-ղառներով մեր սրտերը ճնշում ու ճմլում էին: Փողոցներում թափառող կմախքացած շներն իրենց կատաղի մռռոցներով և արիւնալից ընդհարումներով իրար ճանկերից մի մգլոտած ոսկորի կտոր էին խլում: Անտէր և սովալլուկ կատուներն այս կիսափուլ տնից մի ուրիշ աւերակ էին թափառում: Կենսարար զեփիւռն ու կանաչների հոտաւէտ բուրմունքն անհետացել էին...:

Ի տես այս ողբալի վիճակափոխման և սրտաճմլիկ համայնապատկերի՝ սիրտս ու հոգիս այրուել, կիզուել սկսեցին: Վրիժալից անէծքը կատաղի ջրվէժի շառաչուն ալիքներով յորդել սկսեց.

– Անիծուած լինե՛ս և միշտ թշուառ ու դժբախտ մնա՛ս դու՝ մեր ազգի նամարդ թշնամի, դու՛, որ քո արիւնարբու նախահայրերից բացի սրածութիւն, քանդում, վայրագութիւն և վանդալիզմ, ուրիշ ժառանգութիւն չես ունեցել և չես էլ կարող ունենալ: Դու արեան ճապաղի մէջ խեղդեցիր մեր խիզախ և անվեհեր քաջերին իրենց հազարաւոր տարիների հայրենիքում, իր դարերի շէնշող օջախներում: Դու կոտորեցիր մեր հերոս զաւակներին Ս. Բարդուղիմէոս վանքի, Բազի-Դաղի ու Գարահիսարի լեռներում, Շաբին-Գարահիսարում, Մուշի և Սասնոյ բարձրաւանդակներում, Ուրֆայի և Մուսա լեռան կատարներում, դու նրանց խեղդամահ արիր Ադանայում և Պոլսում, դու նրանց բանտերում և աքսորի մէջ հազարներով կոտորեցիր, բայց քեզ չյաջողուեց և երբեք էլ չի յաջողուելու խեղդամահ անել և բնաջնջել հայ ժողովրդին, այն ազգին, որ ունեցել է իր նախահայր Հայկի, Մեծն Տիգրանի, Վարդան զօրավարի, Սասունցի Դաւթի, Անդրանիկի և նրանց նման հազարաւոր հերոսներ:

Հայ ժողովուրդը հազարաւոր տարիներ շարունակ պայքարել է քեզ նման թշնամիների դէմ և կարողացել է տոկալ, դիմադրել և ի վերջոյ յաղթահարել նրանց և իր գոյութիւնը պահել ու պաշտպանել: Ոչ մի կասկած, որ նա կը շարունակի ապրել, գոյատևել և ի վերջոյ տիրանալ իրենից յափշտակուած, բռնագրաւուած հողին ու ջրին, իր պապերի արիւնով յագեցած և ուռճացած հայրենիքին:

Հայ ժողովուրդը կը շարունակի ապրել, թէկուզ միլիոն անգամ կոտորածի, սրածութեան և խողխողման ենթարկի: Գոյատևելու ընդունակութիւնը նրա մէջ անկապտելի ու գերբնական մի պարգև է, որ փիւնիկեան թռչունի նման մոխիրների կոյտերի ներքնից վերածնւում և երկնային թռիչքներ է կատարում:

ՄԵՐ ՈՐԲԱՑԱԾ ՏՆԵՐՆ ՈՒ ԱՅԳԻՆԵՐԸ

Երկու տարիների անտէր-անտիրական վիճակը լրացրել էր թշնամու կատարած աւերածութիւնը: Այգեստանի երկրորդ և երրորդ կարգի տներն ու շինութիւնները Վանի երկամեայ խստաշունչ ձմեռների ձիւն ու անձրևի և անտէրութեան հետևանքով մեծ մասամբ խարխլած կամ քանդած էին:

Այդ կարգի տներից էին նաև մեր և Հրանդենց տները: Սրտի կսկիծով տեսայ մեր տան կիսաւեր վիճակը: Մեր մեծ և կանաչագեղ այգին իր բազմաթիւ և բազմատեսակ պտղատու ծառերով համարեա չորացել էր:

Եթէ Հրանդից չամաչէի, կը նստէի իմ ամենասիրած ծիրանու ներքև և երկար կարտասուէի մեր ընտանիքի ուրախութեան ու երջանկութեան օջախն այսպէս քարուքանդ անելու, չորացնելու և ամայացնելու համար:

Չէ՞ որ, ինչպէս մեր պապերի ու մամերի և նրանց երեխաների, այնպէս նաև մեր ընտանիքի, մանաւանդ իմ ու քրոջս ամենամեծ բաւականութիւնն ու հրճւանքը մեր կանաչազարդ ու պտղառատ այգին և մեր ընդարձակ խաղողի թուփերն էին եղել: Չէ՞ որ մեր զբօսանքի, հանգստեան և ինքնամոռացման ամենասիրելի վայրը մեր գեղեցիկ և հարազատ այգին էր:

Սրտի անհուն կսկիծով տեսնում էի, որ մեր մանկութեան գուրգուրանքի և հրճւանքի օջախը քանդուել, չորացել և ողբալի վիճակի է մատնուել:

Քիչ տարբերութեամբ, համարեա միևնոյն վիճակումն էր նաև Հրանդենց տունն ու այգին, քանի որ Հրանդենց տունն ու այգին աւելի հիմնաւոր և ամուր էր շինուած, աւելի քիչ էր տուժել անտէրութիւնից և բնութեան աւերմունքից:

Նկատի ունենալով, որ Հրանդենց տունը Նորաշեն կոչուած փողոցի շարունակութեան վրայ էր ընկել և Այգեստանը (Վանը) վերակազմող վարչութեան հիմնարկութիւններին աւելի մօտ էր, երկու ընկերներով համաձայնեցինք ժամանակաւորապէս այնտեղ ապրել: Ասենք, ուրիշ կերպ էլ չէինք կարող վարուել: Ամայացած, կիսաքանդ և տխրատեսիլ մեր օջախներից որևէ մէկում երկու ընկերներիս անջատ ապրելը հոգեմաշ պիտի անէր մեզ:

Հրանդն ինձ բացատրեց իր՝ Վան վերադարձի պատճառն ու գործադրելիք ծրագիրը: Նա ինձ նման օդային և երազային ծրագիր չունէր: Մինչդեռ ես վերադարձել էի ինձ համար յառաջադիմութեան ասպարէզ փնտրելու և դիրք ապահովելու նպատակով, նա եկել էր տեղի իրական դրութիւնը ճշտելու և ազատ ասպարէզի ու գործի հնարաւորութիւններն ուսումնասիրելու համար:

– Սիրելի՛ ընկեր,– մեր Վան հասնելու հէնց առաջին գիշերը Հրանդն ինձ ասաց, – աւելորդ է քեզ նման ընկերից գաղտնի պահել իմ ծրագիրը: Հօրս թելադրութեամբ այստեղ վերադարձայ իրական վի-

ճակն ստուգելու համար: Գիտես, որ հայրս կերպասեղէնի առևտրական է և գործի մարդ: Նա իմ մօր, քրոջ և գուցէ ինձ նման հայրենաբաղձութեան ուժեղ զգացման ենթակայ մարդ չէ: Նա ապահով վայր և պայմաններ է փնտրում իր գործը շարունակելու համար: Եթէ կատարելապէս չհամոզի մեր ծննդավայր Այգեստանի ապահով վիճակի և շուկայի կայունացման մասին, այլևս Վան չի վերադառնայ և ինձնից էլ խոստում է առել նորից Երևան վերադառնալու համար:

ՄԱՐՕԻ ՏԱՆԸ

Ընկերոջս դժուարութեամբ համոզեցի ինձ հետ միասին տեսակցութեան գնալու Գրիգոր Բուլղարացուն և Աւետիս Թէրզիբաշեանին: Երկուսն էլ այդ օրերի հասարակական կեանքի գործոն և գլխաւոր անձնաւորութիւններից էին:

Նպատակայարմար համարեցի Բուլղարացուն իր տնում, իսկ Թէրզիբաշեանին իր հիմնարկութեան մէջ այցելելու: Մեծ յոյս ունէի Գրիգորի տանը հանդիպելու նաև Մարօին՝ մանկութեան իմ ամենասիրելի և թանկագին բարեկամին:

Տեղեկացայ և հեշտութեամբ ճարեցի Բուլղարացու բնակարանը: Իմ մտքում հաշուեցի, որ ամենայն հաւանականութեամբ նրան աւելի հեշտ է առաւօտեան կանուխ տանը հանդիպել:

Տասհարւածեան մառզերը գօտուց կախած զինուորական թաւցող երիտասարդին յայտնեցի իմ ինքնութիւնն ու ցանկութիւնը՝ տիկնոջն ու պարոնին տեսնելու նպատակով:

Շատախցի զինուորականը մի տեսակ արհամարհանքով և դժուարահաճութեամբ համաձայնեց իմ ցանկութիւնը յայտնել իր գլխաւորին՝ և անմիջապէս վերադառնալով՝ այս անգամ բացառիկ սիրալիրութեամբ մեզ ներս հրաւիրեց:

Հազիւ թէ մի երկու քայլ Հրանդից առաջ ընկած՝ դռնից ներս էի անցել, երբ վազէվազ ինձ դիմաւորելու եկաւ իմ անուշիկ քուրացուն՝ իմ անչափ սիրելի Մարօն, որին ես այդ պայմաններում վերագտնելու յոյս չունէի:

Նա շտապ և անվարան ինձ իր բազուկներում օղակեց և մի քանի անգամ այտերիցս ու ճակատիցս համբուրեց: Թէև մի քիչ շփոթած, բայց ես էլ փոխադարձեցի մի քանի համբոյրներով նրա չքնաղ այտերից:

– Իմ անգի՛ն եղբայր, այս ի՞նչ հրաշք է, որ քեզ մեզ մօտ է վերադարձրել: Քեզնից լուրեր ունէի վերջին անգամ Թիֆլիսից և ի՞նչ լաւ լուրեր...:

– Իմ շատ սիրելի և ազիզ քո՛յր, շատ ներողութիւն եմ խնդրում: Նախ թո՛յլ տուր քեզ ներկայացնել իմ մտերիմ ընկերոջը՝ Հրանդ Դարբինեանին, և ապա քեզ յայտնել, որ հայրենիքիս կարօտն ու նրանում ապրող քեզ նման սիրելի և թանկագին բարեկամների առինքնող, հրապուրող ձգտումն է ինձ նորից Այգեստան վերադարձրել:

Մինչ Մարօն իր հարցերի տեղատարափն էր թափում և Արաքսու, հօրս, եղբայրներիս և ուրիշ բարեկամ-ծանօթների մասին տեղեկութիւններ ուզում, նրա անուշիկ բալէն, որի մասին չէի մոռացել և գիտէի, որ շուրջ 2 և կէս տարեկան պիտի լինի, «մամա ջան, մամա ջան» կանչելով՝ մեզ մօտ վազեց և իր մօր փէշերից կախ ընկաւ:

– Երեխայիս՝ Կորիւնիս, հօ չե՞ս մոռացել: Տեսնու՞մ ես, մաշալլահ մեծացել և քաղցր ու անուշ խօսում է:

– Ինչպէ՞ս կարող եմ մոռանալ նրան՝ քո այս իսկապէս անուշիկ ճագին: Նա ներկայիս երկուս ու կէս տարեկան պիտի լինի: Ինչ վերաբերում է քաղցր խօսելուն, կասկած իսկ չէի կարող ունենալ, որ բլբուլի ճագը միշտ բլբուլ է լինում: Կորիւնից բացի ուրիշ երեխայ չունե՞ս:

– Շատ լաւ կը լինէր, եթէ մի ուրիշ երեխայ էլ ունեցած լինէի, բայց մեր այս պայմաններում, ուր անվերջ նահանջ ու վերադարձ և նրա հետ միասին վախ ու սարսափ և տանջալից ապրումներ կան, մի՞թէ հնարաւոր է ուրիշ երեխայի մասին մտածել:

– Միանգամայն իրաւացի ես, սիրելի՛ Մարօ, բայց յոյս ունենք, որ մեր տանջանքների վերջակէտի ժամանակն արդէն հասած պիտի լինի: Չէ՞ որ վերջապէս մեր բախտն էլ մեզ պիտի ժպտայ: Չէ՞ որ մենք էլ իրաւունք ունենք այս մեծ աշխարհում մի կտոր հողամաս, մի փոքրիկ հայրենիք ունենալու: Մի՞թէ այս արևից, լուսնից, աստղերից, այս գեղեցիկ բնութիւնից մենք՝ հայերս, մի բաժին, մի կենսատու շող, մի աստղի լոյս, մի սոխակի հոգեպարար ճռուողիւն ունենալու իրաւունք չունենք: Մինչև ե՞րբ բարբարոս թշնամին մեզ մեր գոյութեան այդ անկապտելի և նիւրական իրաւունքից պիտի զրկի: Մինչև ե՞րբ աշխարհի «քաղաքակիրթ» և «հաւատացեալ» ազգերը պիտի շարունակեն իրենց խղճի և մարդկային զգացումների վրայ գերեզմանաքար դնել:

– Յոյս Աստծոյ,– իմ զգացումների զեղմանը վերջակէտ դնելու միտումով շարունակեց Մարօն,– իսկապէս, մեր փոխարէն եթէ հսկայ լեռ էլ լինէր, այս անվերջ զարհուրանքներին ու տանջանքներին ենթարկուելով, պիտի ճաքէր և հազարաւոր կտորների վերածուէր:

– Ի դէպ, Մարօ՛, մայրդ ո՞ղջ է, թէ՞...

– Ինչպէ՞ս կարող էր իր տանջալից կեանքից յետոյ գաղթի նորանոր տանջանքներին դիմանալ: Հազիւ Իգդիր հասած՝ դժբախտ մայրս, դեզենթրիի վարակման ենթարկուելով, մի քանի օրից մահացաւ: Ախ, ափսո՜ս, հազար ափսո՜ս: Նա իրեն ինձ զոհեց: Ինձ բախտաւոր դարձնելու համար նա, իրեն անվերջ և անընդհատ ծանր աշխատանքի ենթարկելով, ուժասպառ եղաւ: Նրա օրն ու արևն ես էի, բայց ինձ համար էլ նա չարաչար նահատակուեց...:

– Ազնիւ, հազուագիւտ, բարեսիրտ կին էր քո անգին մայրը: Մարօ՛, դու շատ իրաւացի ես պարծենալու այդպիսի համեստ, բայց աննման մայր ունեցած լինելու համար: Ես երբեք չեմ կարող մոռանալ նրա ինքնուրաց զոհողութիւնները: Նահանջի վերջին ժամին, երբ ես դեռ մեր տնից բացակայում էի, նա իրեն յատկացուած իշուկը ստիպելով և նոյնիսկ թախանձագին խնդրանքով նիրել էր մեր հիւանդ հարսի, եղբօրս կնոջ՝ Հայկանուշի փոխադրութեան համար:

Մարօն մեզ առաջնորդեց իրենց համեստօրէն կահաւորուած, բայց մաքրութիւնից փայլող հիւրասենեակը: Նա մեզ յայտնեց, որ իր ամուսինը՝ Բուլղարացի Գրիգորը, անցեալ օրը կէս գիշերից անց է տուն վերադարձել: Նա մի որպէով մեզնից ներողութիւն խնդրեց, որ անցնի միւս սենեակը իր ամուսնուն արթնացնելու համար: Երբ վերադարձաւ, ինչպէս անցեալ ժամանակներում, այս անգամ էլ նորից գանգատուեց իր ամուսնու ծանր աշխատանքից և շարունակական յոգնածութիւնից:

***

Քառորդ ժամից մեզ մօտ եկաւ Գրիգոր Բուլղարացին:

Նա մեզ դիմաւորեց շատ մեծ սիրալիրութեամբ և արտակարգօրէն ուրախ տրամադրութեամբ:

– Ինչքա՜ն ուրախ եմ ինքնապաշտպանութեան օրերի և կնոջս մանկութեան բարեկամին նորէն հանդիպելուս համար,– անկեղծ շեշտով ասաց նա:

– Անչափ զգացած եմ ձեր ազնիւ համակրութեան համար: Ուրախ եմ ձեզ ներկայացնելու իմ մտերիմ ընկերներից Հրանդ Դարբինեանին:

– Շատ և շատ ուրախ եմ: Իսկ քու միւս ընկերն ու բարեկամը՝ Աղասին, ի՞նչ եղաւ, ու՞ր գնաց: Նա վերադառնալու ցանկութիւն չունեցա՞ւ:

– Պարո՛ն Բուլղարացի, նահանջի վերջին օրերից յետոյ բախտ չեմ ունեցել ձեր յիշած իմ սիրելի ընկերոջը՝ Խանջեանին, հանդիպելու:

– Դէ՛, համեցէ՛ք, նստէ՛ք, մի քիչ խօսինք: Առաջին հերթին պետք է ասեմ, որ Վասպուրականը չափազանց շատ կարիք ունի ձեզ նման երիտասարդների աշխատանքին ու եռանդին: Գործերը կարգի բերելու համար մեծ եռանդ և շատ նուիրածութիւն պէտք է: Մեր երկրի հետ նրա տնտեսութիւնն ալ բոլորովին քայքայուած է: Թիֆլիսում կազմուած մի քանի ընկերութիւնները՝ Քաղաքների միութիւնը, Վերաշինականը, Գաղթականական ընկերութիւնը, ալ ի՞նչ գիտնամ ուրիշ շատեր, մեզ, այսինքն մեր գիւղացիութեանն օգնելու ամէն տեսակ խոստումներ տուած են: Ուրախ եմ, որ անոնց խօսքը գործի է անցած արդէն: Հիմա մեզ պէտք են հայրենասէր, եռանդուն, նուիրուած աշխատակիցներ և պաշտօնեաներ: Չը մոռնամ ըսելու, որ իմ համոզումն ալ այն է, որ օժանդակութիւններու գործադրութիւնն ալ բոլորովին անաչառ պէտք է ըլլայ: Մենք միայն այն ժամանակ կը յաջողենք, երբ համախորհուրդ, անաչառ և արդարադատ ըլլանք...:

– Ձեր նուիրուածութեան և անաչառութեան մասին, յարգելի՛ պր. Բուլղարացի, իմ բոլոր ընկերներին և բարեկամներին պատմել եմ: Հայ ժողովուրդը, այս պարագային մեր Վասպուրականի տառապած ժողովուրդը, շատ երջանիկ պիտի լինէր, եթէ բախտ ունենար ձեզ նման մի երկու տասնեակ ազգասէր և նուիրուած գործիչներ ունենալու: Համոզուած եմ, որ դուք հայ ժողովրդի երդուեալ, անկաշառ և հարազատ զաւակն էք և նուիրուած էք ձեր բոլոր ազգակիցներին անխտրօրէն: Գիտեմ, որ ձեզ համար գաղափարական խտրութիւն գոյութիւն չունի, և ձեր անհատական երջանկութիւնը հայ ժողովրդի երջանկութեան մէջ էք փնտրում:

– Այսքան մեծ գովասանքի ինձի արժանի համարած չեմ,– համեստօրէն պատասխանեց Բուլղարացին և շարունակեց. – բազմաթիւ առիթներով արտայայտուած եմ, որ հայ ազգի, հայ հաւաքականութեան շահը՝ բոլոր կուսակցական, մասնաւոր, բարեկամական և ինչ անունով կուզէք անուանեցէք, շահերէ աւելի բարձր կը գնահատեմ: Անհատապէս ալ համոզուած եմ, որ մեր ներկայ պայմաններու մէջ, երբ մեր ազգի ապրելու և ապրել չկարողանալու հարցը տրուած է, մենք բոլոր հայերս ալ մեր ապրիլեան հերոսական պաշտպանութեան օրերու նման, առանց կուսակցական խտրութիւններու, մէկ շունչ և մէկ հոգի պիտի ըլլանք և մեր ընդհանուր ժողովրդական շահերը, հայ ազգի գոյութեան և յարատևման շահերը պաշտպանենք:

– Ձեր արտայայտած գաղափարները, պր. Բուլղարացի, – ասաց Հրանդը,– միանգամայն գովելի են, և մենք ու մեզ նմանները չափազանց ուրախ ենք, որ մեր ներկայ պայմաններու մէջ քեզ պէս մէկ հայրենասէր, անաչառ և նուիրուած ղեկավար գործիչ ունենք:

Մենք չափազանց լաւ տպաւորութեան տակ բաժանուեցինք Բուլղարացուց: Մարօին խօսք տուի շաբաթուայ ընթացքում գոնէ մի անգամ իրենց այցելել:

ԾՇՄԱՐԻՏ ՀԱՅՐԵՆԱՍԷՐՆԵՐ

Վասպուրականի ապրիլեան ինքնապաշտպանութեան օրերին ընկերոջս՝ Հրանդին, չէր յաջողուել Բուլղարացու հետ անմիջական շփման մէջ լինելու և նրա առողջ և համոզիչ գաղափարական հայեացքներին ծանօթանալու:

Երբ մենք, նրանից բաժանուելով, դուրս եկանք փողոցը, Հրանդն ինձ ասաց.

– Բոլորովին չէի ենթադրում, որ այս Բուլղարացին, չնայած իր շահած համբաւին և հեղինակու-

թեանը, այսքան պարզ և համեստ կարող է լինել: Նրա խօսակցութեան մէջ ճշմարիտ և իրական հայրենասէրի շունչը կայ: Ասենք, եթէ այդ անկեղծ հայրենասիրութեան ոգին նրանում տիրապետող բնոյթ չունենար, նա կարիք չունէր մեզ հետ այդքան բաց սրտով խօսելու: Չէ՞ որ նա մեզնից որևէ ակնկալութիւն ունենալ չէր կարող:

– Միանգամայն իրաւացի ես, սիրելի՛ Հրանդ: Նա իսկական հայ և անկեղծ հայրենասէր է: Ես նրա իսկական ծննդավայրը չգիտեմ: Ազգանունից ենթադրում եմ, որ բուլղարահայ պէտք է լինի: Միշտ ցանկացել եմ Մարօյից հարցնել, բայց մոռացութեան եմ տուել: Նրա որտեղացի լինելն առանձնապէս հետաքրքրական չէ, բայց որ նա մաքուր հայ և անթերի, ճշմարիտ հայրենասէր է, այդ մասին ամենափոքր կասկած չունեմ:

– Կարո՞ղ ես մտածել, որ մեր սիրելի ընկեր Աղասի Խանջեանն էլ հենց իր առաջին հանդիպումից յետոյ այս Բուլղարացու մասին իմ և քո համոզմանը յանգեց: Ինքնապաշտպանութեան օրերին թէ՛ նա և թէ՛ ես բաւական շատ առիթներ ունեցանք այս համեստ և անխոնջ հայրենասէրին հանդիպելու և նրա հաւատաւոր ու կենսաշունչ խօսքերը լսելու:

– Ուրեմն անտեղի չէր,– շարունակեց Հրանդը, որ մեր վերադարձին գիշերային մեր օթևանտնակում ճանիկցի գիւղացիներն այնքան մեծ գովեստով էին խօսում այս մարդու և սրան համարեա միշտ ընկերակցող Լևոն Շաղոյեանի մասին: Անշուշտ, յիշում ես, որ այդ գիւղացիներն այս երկուսի մասին որքան գովեստով էին արտայայտւում: Նրանցից մէկի ասածները չեմ մոռացել: Նա ասում էր. «Յեղափոխականների և ազգասէրների մասին մեզ շատ են խօսել և պատմել: Մենք նրանց տեսել, բայց չենք կարողացել ճանաչել: Գրիգորին և Լևոնին թէ՛ տեսել և թէ՛, ինչպէս պէտք է, ճանաչել ենք: Պարտաւոր ենք ասել, որ նրանք ո՛չ թէ խօսքով, այլ գործով, ճշմարիտ յեղափոխականներ և հայրենասէրներ են: Առաջին մեծ նահանջից յետոյ նրանք երկրից՝ Վասպուրականից շատ քիչ բացակայեցին: Գրեթէ անմիջապէս վերադարձան և շրջանից շրջան, գիւղից գիւղ երթևեկելով, միշտ ջանացին խրախուսել գիւղացիներին՝ չյուսահատելու և չհեռանալու իրենց հողից, տնից ու օջախից: Նրանք չէին յօժարւում թշնամու՝ մշտական յարձակման վտանգից փրկուելու համար երկրից հեռանալ»:

ԱՒԵՏԻՍ ԹԷՐԶԻԲԱՇԵԱՆԻ ՄՕՏ

Նոյն օրը՝ կէսօրից առաջ, նորից համարեա ստիպմամբ, Հրանդին հետս տարայ Վանի և իր շրջանի քաղաքապետարանը: Ճիշտն ասած, առաջին օրերին չէի կարող պատկերացնել այն դերն ու պարտականութիւնը, որ քաղաքապետարանը պէտք է կամ կարող էր կատարել: Բայց մի կարճ ժամանակից յետոյ ինձ համար պարզուեց, որ Վանի քաղաքապետարանը, շնորհիւ իր ժրաջան քաղաքագլուխ Աւետիս Թէրզիբաշեանի՝[28] ձգտում է քաղաքի և շրջակայքի վերաշինման համար հսկայական գործեր կատարել:

Քաղաքապետարանի շէնքը մուտք գործելով՝ բարձրացանք երկրորդ յարկը: Ինձ շատ զարմանալի թւաց, որ այս շէնքը, որը գտնւում էր մեր Երամեան դպրոցի փողոցում և կաթոլիկ միսիոնարութեան նախկին կենտրոնն էր, թշնամու կողմից իրենց հիմնարկութիւններից մէկի համար օգտագործուել և վերջին ժամին բախտ էր ունեցել հրդեհումից զերծ մնալու:

Քաղաքապետարանի դռնապանին յայտնեցի ինքնութիւնս: Ծառայողը, սենեակից դուրս գնալով, յայտնեց, որ քաղաքապետը խնդրում է մի քանի րոպէ սպասել: Բարեբախտաբար, սպասումը շատ չտևեց: Բարձրահասակ և թիկնեղ Թէրզիբաշեանը շատ մեծ յարգանքով ճանապարհեց իր այցելուին, որ օտարազգի էր թւում, և ձեռքը ինձ մեկնելով՝ ասաց.

– Շատ ուրախ եմ, պր. Սարհադեա՛ն, ձեզ ինձ մօտ տեսնելուս համար: Ես քեզ աւելի շուտ կսպասէի:

– Չափազանց շնորհակալ եմ ձեր սիրալիրութեան համար: Թոյլ տուէք ներկայացնելու իմ լաւ ընկերներից մէկին՝ Հրանդ Դարբինեանին:

– Կրկնակի ուրախ եմ, նե՛րս համեցէք:

Երբ սենեակ մտանք ու բազկաթոռների վրայ տեղ գրաւեցինք, Թէրզիբաշեանը շարունակեց.

– Երկա՞ր ժամանակ է, ինչ Երևանէն մեկնած էք: Ո՞ր գծով և փոխադրական ի՞նչ միջոցով վերադարձաք:

– Կարո՞ղ էք երևակայել, պր. Թէրզիբաշեա՛ն,– պատասխանեցի,– թէ՛ նահանջի ժամանակ և թէ՛ այս անգամ չեմ կարողացել Երևանը տեսնել: Այո՛, ես դեռ բախտ չեմ ունեցել Երևան գնալու և տեսնելու, բայց ընկերս ամբողջ ժամանակ եղել է Երևան և Էջմիածին:

---

28 **Աւետիս Թերզիբաշյանը** ծնվել է Վանում 1873 թ.: Հասարակական, կուսակցական գործիչ (ՌԱԿ-ի), գրող: Սովորել է Վանի Հիսուսյան և Երամյան վարժարաններում: Գրել է պիեսներ, որոնցից «Ճշմարիտը» (անտիպ) 1900 թ. բեմադրվել է Վանում: Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո (1908) ընտրվել է Վանի քաղաքագլուխ: 1915-ի բռնագաղթին անցել է Կովկաս, ապա վերադարձել և, ինչպես նշում է Ս. Սարհադյանը, 1917 թ. կրկին ստանձնել Վանի քաղաքագլխի պաշտոնը: 1921 թ. սկզբին Կ. Պոլսում մասնակցել է Ռամկավարական և Ազատական (վերակազմյալ՝ Հնչակյան) կուսակցությունների բանակցություններին: 1924-1926 թթ. խմբագրել է «Ապագա» (Փարիզ) թերթը: Հրատարակել է Խրիմյան Մկրտիչ կաթողիկոսին («Արծիվը իր բույնի մեջ», 1938), Պողոս Նուբար փաշային («Նուպար», 1939, Անդրանիկ Օզանյան զորավարին («Անդրանիկ», 1942) նվիրված հուշագրությունները, «Աթոսի հարյուր և մեկ պատմվածքներ»-ը (1945), «Երկու տարի Ատիս Ապեպայի մեջ» վեպը: Վախճանվել է 1943 թ. Փարիզում:

– Ճիշտ այդպէս է,– հաստատեց Հրանդը:– Ես ալ Երևանէն և Իգդիրէն զատ, ուրիշ տեղեր տեսած չունիմ: Գալով մեր վերադարձին՝ մենք ընտրեցինք Իգդիր-Բերկրի և Արճակ գիծը: Մի փոքր ալ դժուարութիւններու հանդիպեցանք: Ըստ երևոյթին, Ջուլֆա-Խոյ-Սարայ գիծը վերադարձող հայրենակիցների համար աւելի յարմարութիւններ ունի:

– Այդպես է, Խոյ-Սարայ ճանապարհովն է, որ մեր գիւղատնտեսութեան համար անհրաժեշտ բոլոր միջոցները կը փոխադրուին: Վերաշինութեան գործերով զբաղուած մեր խոշոր կազմակերպութիւնները իրենց գնումների մի կարևոր մասը՝ արօր, խոփ, մանգաղ և մետաղեայ անհրաժեշտ իրերը, Թիֆլիսի և մերձակայ շրջանների մէջ կը կատարեն, իսկ մնացեալ մեծ մասը, ինչպիսիք են լծկան եզներ, կաթնատու կենդանիներ, էշ ու ձի և վերջապէս հացահատիկներն ու սննդանիւթը, մանաւանդ սերմացու ցորենի և գարու մեծ մասը, Խոյէն և շրջաններէն կը գնեն: Այդ բոլորի փոխադրութիւնը կընեն լծկան կենդանիներն ու ֆուրգոնները և հետևաբար ներգաղթողներու համար մեծ հնարաւորութիւններ կընծայեն:

Այստեղ Թէրզիբաշեանը կանգ առաւ: Նրա դէմքին նկատելի անհանգստութեան և հոգեկան խռովքի արտայայտութիւն նշմարեցի: Նրա խօսակցութեան ընդհատումն երկար չտևեց: Նա շարունակեց.

– Ինչպէս ռուս կառավարութիւնը, այնպէս ալ մեր գաղթականական, տնտեսական, շինարարական և գիւղատնտեսական կազմակերպութիւնները կը ցանկանան օգնել Վասպուրականի վերաշինման գործին: Սակայն, շատ ափսոս, որ կարծես այդ օգնութեան գործերի մէջ համադրութիւն, համագործակցութիւն գոյութիւն չունի: Այդ իսկ պատճառով ալ մեր հայրենիքի վերաշինման գործը կը տուժէ և կը դանդաղի: Ներեցէք ինձի: Ես ձեզմէ տարիքով շատ աւելի մեծ եմ: Տաքարիւնութիւնն և դիւրաբորբոքումը երիտասարդներու առանձնայատկութիւնն է: Մեզ նման մարդիկ քաղաքական հարցերու մէջ աւելի համբերատար և զուսպ ըլլալու են: Ինչ կարող եմ ընել, խառնուածքի և բնաւորութեան խնդիր է: Իմ կարծիքով, ամէն մարդ, որ յանձնառու է եղած որևէ հասարակական, հաւաքական, ժողովրդական գործ կատարելու, պէտք է անթերի կատարէ: Եթէ կարող և ընդունակ չէ, իրաւունք ալ չունի ստանձնելու այդ գործը: Անխիղճ է այն մարդը, որ ուրիշներու ակնկալութիւնն ու վստահութիւնը չարաչար կը շահագործէ: Ինչևէ, թողնենք այս խնդիրը ապագայի պարզաբանմանը: Մարդս միշտ լավ յոյսերով կը ներշնչի և կապրի: Եթէ մեր հայրենիքը, մանաւանդ անոր բաբախող սիրտը կազմող մեր Վասպուրականը, բախտ ունենայ, այս անիծեալ պատերազմը շուտով կը վերջանայ և մեր ազգի դարերու իղձը՝ սեփական ազատ հայրենիք ունենալու քաղցր երազը, կիրականանայ:



Ավետիս Թերզիբաշյան

Մեր խօսակցութիւնը բաւական երկար տևեց: Վասպուրականի ինքնավարութեան երկրորդ և եռուն շրջանի գործունեայ քաղաքագլուխ Աւետիս Թէրզիբաշեանից մենք բաժանուեցինք ոչ շատ ոգևորուած տրամադրութեամբ:

Մեր բաժանման պահին նա, խօսքն ինձ ուղղելով, ասաց.

– Վաղը՝ առաւօտեան՝ հնարաւորին չափ կանուխ, ինձ մօտ եկէ՛ք, ձեր պաշտօնի որոշման առթիւ խօսելու համար:

***

Հետևեալ առաւօտեան՝ ժամը 9.30-ին, Թէրզիբաշեանի գրասենեակը գնացի: Նա արտակարգօրէն յոգնած տեսք ունէր: Ինձ ընդունեց յարգալից և ժպտադէմ:

– Պր. Սարհադեա՛ն,– սկսեց նա,– մօտաւորապէս երկու ամիս է, ինչ մենք պր. Կոստի Համբարձումեանի և նրա կուսակիցներու հետ կը բանակցենք Վասպուրականի ժամանակաւոր ինքնիշխան վարչութեան անդամներու ընտրութեան առթիւ: Չափազանց զարմանալի է մեր հայերուս եսասիրութիւնը: Մենք, որ կարողացանք Այգեստանի, Քա-

ղաքամիջի, Հայոց-Ձորի, Շատախի և Թիմարի ինքնապաշտպանութեան կռիւներու ժամանակ միանալ և միաձուլուել մէկ մարդու նման, ներկայիս, երբ դեռ թշնամու գիշատիչ ճանկերը մեր կոկորդէն այնքան ալ հեռացած չեն, և անոր բարբարոս սուրը մեր գլխին կը ճօճի, երբ մենք հազարաւոր ցաւեր ու վէրքեր ունինք դարմանելու, ահաւասիկ, այս պայմաններու մէջ, մենք կը դժուարանանք իրար լեզու հասկնալու և մի ժամանակաւոր կառավարութիւն, աւելի ճիշտ կըլլայ ըսել՝ գործերու մէկ վարիչ մարմին կազմել:

– Շատ ներողութիւն եմ խնդրում, պր. Թէրզիբաշեան, բայց ինձ այնպէս է թւում, որ Համբարձումեանի ընկերների շարքին կան նաև շատ համեստ, զիջող և իսկական հայրենասէր անձնաւորութիւններ: Նրանց շարքում անձնապէս ճանաչում եմ Բուլղարացուն և Շաղոյեանին, որոնք Վասպուրականի հերոսամարտի ժամանակ անգնահատելի ծառայութիւն և նուիրուածութիւն ի յայտ բերին: Մի՞թէ ներկայիս նրանք գործօն դեր չեն կատարում և մի՞թէ ինքնահաւան և այլամերժ են դարձել:

– Այդ ձեր ակնարկած երկու անձնաւորութիւններու վերաբերեալ ես ալ մեծ հաւատք և նոյնիսկ յարգանք ունիմ: Ես՝ Ընդհ. բարեգործականի, իսկ պր. Համբարձումեանը՝ Քաղաքներու միութեան կողմէ լիազօրուած ներկայացուցիչներ ենք: Մեր ներկայ պայմաններն արտակարգօրէն բարդ և խճողուած են: Քաղաքական դրութիւնն ալ շատ փափուկ է: Վասպուրականի այս ժամանակաւոր Վարիչ մարմնի ղեկավարը շատ քաղաքագէտ և հեռատես ըլլալու է, որպեսզի մեր ներգաղթող ժողովրդի գլխին մի երկրորդ փոթորիկ ալ չը պայթէ:

– Պր. Թէրզիբաշեա՛ն, ես դեռ բաւական երիտասարդ և մանաւանդ քաղաքական գործերի և ասպարէզի մէջ բոլորովին տհաս և խակ եմ: Իմ կողմից ամբարտաւանութիւն կը լինի, եթէ ուզենամ այս առթիւ կարծիք յայտնել: Յամենայն դէպս, ինձ թւում է, ինչպէս ասացիք, նկատի ունենալով ներկայ քաղաքական անկայուն և փափուկ դրութիւնը, անհրաժեշտ է փոխադարձ զիջումների ճանապարհը գտնել, և եթէ լարուածութիւն կայ, ամէն հնարաւոր միջոցներով մեղմել: Հակառակ պարագային, անկասկած, մեր այս բազմատանջ և առանց այն էլ հալ ու մաշ եղած մի բուռ գաղթականութիւնը միանգամայն կը կործանուի: Այդպիսի դժբախտութեան պարագային Վասպուրականը համայն հայութեան համար միանգամայն կորած և թաղուած կը լինի:

Մենք Թէրզիբաշեանի հետ բաւական երկար խօսեցինք քաղաքապետարանում կատարելիք իմ պարտականութեան և գործի մասին: Նա ինձ առաջարկեց թարգման-քատուղարի պաշտօն կատարել: Խոստացաւ հնարաւորութեան սահմաններում գոհացուցիչ ռոճիկ նշանակել: Նրանից խնդրեցի մի երկու օր ժամանակ տալ ինձ՝ առաջարկուած գործի մասին մտածելու և որոշում կայացնելու համար:

Երբ քաղաքապետարանը թողի, ճնշող տպաւորութեան ներքև էի. ի՜նչ գեղեցիկ յոյսերով և ի՜նչ ոգևորիչ ձգտումներով էի հայրենիք վերադարձել: Սովորական մարդու մակարդակից բարձրանալու և հայրենիքիս վերաշինման գործին նուիրուելու ջերմ ձգտումով էի եկել...

Ափսո՜ս, շատ ափսո՜ս... Հայրենիքիս վերակառուցման անսահման վստահութեան և հաւատքիս սիւներն ենթարկուել էին անցանկալի ցնցումների: Մեր ազգային միութիւնը կրծոտող ցեցը՝ նախանձն ու ատելութիւնը, իր սպանիչ թոյնը թափել էր սկսում: Թէրզիբաշեանի խօսքերից ինձ համար տիրող դրութեան աննախանձելիութիւնը բոլորովին հասկանալի եղաւ: Վասպուրականի Վարիչ մարմնի ղեկավարութեան խնդրում Համբարձումեանի և Թէրզիբաշեանի միջև ներքին խուլ և խիստ վտանգաւոր պայքար էր սկսուել:

ՎԵՐԱՇԻՆՄԱՆ ՃԻԳԵՐ

Այդ օրերին Այգեստան ու Քաղաքամեջ վերադարձած մեր հայրենակիցների թիւը համեմատաբար շատ քիչ էր: Ներգաղթողների թւական տուեալները ցոյց էին տալիս, որ Վասպուրականի հիւսիսարևելեան գաւառներում և գիւղերում վերադարձողների թիւն օրէցօր բարձրանում է: Խոյի ճանապարհով վերադարձողների ճնշող մասը բնակւում էր Սարայում, Արճակում և նրանց մերձակայ գիւղերում:

Հայոց-Ձոր, Շատախ, Ոստան, Արտամետ և հարևան շրջանները վերադարձողների թիւը նոյնպէս շատ քիչ էր: Իրար վրայ վերցրած՝ մինչև 1917 թւի գարնանը Վան-Վասպուրական ներգաղթողների թիւը հասնում էր 20-25 հազարի:

Վասպուրականի հայկական ինքնավարութեան ժամանակաւոր Վարչական մարմինը կազմուել էր Կոստի Համբարձումեանի[29] գլխաւորութեամբ: Սկզբում այդ մարմինը 7 հոգուց էր կազմուած, բայց մի երկու-երեք ամիս յետոյ, ինչքան յիշում եմ, բարձրացաւ 10-ի: Այդ մարմնի մէջ Գրիգոր Բուլղարացին նշանակուել էր զինուորական գործերի, բժ. Տէր-Թովմասեանը՝ առողջապահական և Արմենակ

29 **Կոստի Համբարձումյանը** ծնվել է Շուշիում, 1882 թ.: Ուսանել է գյուղատնտեսություն (Բելգիայում): Կուսակցական (ՀՀԴ) հանձնարարություններ է կատարել Բուլղարիայում, Իզմիրում, Սալմաստում, Խոյում: Նախքան առաջին աշխարհամարտը վարել է Կապանի շրջանի դպրոցական ընդհանուր տնօրենի պաշտոնը: 1915-ին Արարատյան զորամասի հետ մեկնել է Վան և սատարել գաղթականների վերահաստատման գործին, ապա Վասպուրականի հայկական ինքնավարության ժամանակավոր վարչական մարմնի ղեկավար պաշտոնում փոխարինել է Արամ Մանուկյանին: Վանեցիների 2-րդ գաղթի ժամանակ տասնյակ հազարավոր վասպուրականցիների հետ անցնում է Պարսկաստան, որտեղ Սային-Ղալեյի մոտ թուրքական հակահետախուզությանը (ծպտված իբրև անգլիացի) հաջողվում է սպանել 36-ամյա Կ. Համբարձումյանին:

Կոստի Համբարձումյան (Ուխտավոր)

Մաքսապետեանը՝ գիւղատնտեսական գործերի վարիչներ:

Վարչական մարմնի գործունէութիւնը այդ ժամանակներում ենթակայ էր Վանում գոյութիւն ունեցող կուսակցութիւնների (Դաշնակցական և Ռամկավար) լիազօր երկու ներկայացուցիչների վերահսկողութեան, որոնք մասնակցում էին վարչական մարմնի ժողովներին և խորհուրդներ ու թելադրանքներ տալիս:

Ինքնավար ժամանակաւոր Վարիչ մարմնի կենտրոնը գտնւում էր Փոքր-Քեանդրչի պողոտայում՝ կաթոլիկ ասորիների շէնքում և համանուն սառնորակ աղբիւրի մօտերքում:

Վերաշինական, գիւղատնտեսական, առողջապահական, կրթական և ուրիշ հիմնարկութիւնները հաստատւած էին Այգեստանի կենտրոնական և հարաւարևմտեան մասերում:

Վերաշինական և վերակառուցման ձեռնարկները հետզհետէ նոր հունի մէջ էին դրւում և ամենուրեք նոր թափ ստանում: Մօտիկ ապագայի յաջողութեան և երջանկութեան յոյսերը հետզհետէ մարդկանց տոգորում էին հաւատքով և նրանց սրտերը լեցնում էին ուրախութեան ցոլքերով:

***

Երկու տարիների անտէրութեան հետևանքով մշտադալար և չքնաղ Այգեստանը կորցրել էր իր գեղեցկութեան տեսքն ու հմայքը: Աղբիւրների զրնգան ջրերից ոմանք վերածւել էին կէսի, իսկ միւսները ենթարկւել էին ցամաքելու վտանգին: Շամիրամայ յորդահոս գետի ջրերն էլ կարծես խռովել և ծուլանում էին մինչև Այգեստան հասնել: Քաղաքապետարանն իր ամենաառաջին գործը համարեց Այգեստանն անջրդիութիւնից փրկելը: Քանքան գետնափորներ և մեծ թւով բանւորներ գործի լծւեցին: Անհրաժեշտ էր օր առաջ աղբիւրների ընդգետնեայ ճանապարհները մաքրել և ջրի ճանապարհները կուտակւած հողից, ցեխերից և նեխած ու մամռած կանաչներից ազատել:

Վարչական մարմինը մասնաւոր հրահանգով Այգեստան և շրջակայք վերադարձող քաղաքացիներին և գիւղացիներին արտօնեց մշակել և օգտւել լքւած և անտիրական մնացած բազմաթիւ այգիներից: Այս օգտագործման համար նշանակւում էին պայմանական ժամկէտներ, որպէսզի ապագայում վերադարձող իսկական կալւածատէրերի հետ թիւրիմացութիւն և անախորժութիւն տեղի չունենար:

Իշխանութեան կողմից կապալառու-վարձկալների հետ Վանի ծովակի ձկնորսութեան, աղի, բորակի և առագաստանաւերի շինութեան վերաբերեալ պայմաններ կնքւեցին: Նախաձեռնութիւնների և ճիգ ու ջանքերի ձեռնարկներն օրէցօր բազմանում էին:

Գերմանական հիւպատոսարանի ընդարձակ շէնքը նորոգութեան ենթարկւեց և կենտրոնական հիւանդանոցի վերածւեց: Արհեստաւորների և պարենապահեստի խանութները բացւել և աշխատել սկսեցին:

Գարուն էր: Բնութիւնը վերազարթնում էր: Ներգաղթողները նւիրւած էին ստեղծագործական եռանդուն աշխատանքների: Վերաշինութեան գործին լծւած մարդիկ աշխատում, ճգնում էին օգտակար ու շինարար գործեր կատարելու:

Քաղաքացի, գիւղացի, գործիչ, պաշտօնեայ, ամէնքն էլ սրտանց ցանկանում էին վերակառուցել, վերակենդանացնել կիսաւեր դարձած և քարուքանդ եղած Այգեստանն ու իրենց անչափ սիրելի Վասպուրականը:

ՏԱՏԱՆՈՒՄ ԵՒ ՍՐՏՍԱՇՈՒՔ

Երեք տեղերից պաշտօնավարելու առաջարկ էր եղել: Եղած առաջարկները հետևեալներն էին՝ քաղաքապետարանի թարգման-քարտուղարութիւնը, գիւղատնտեսական քննիչի պաշտօնը Վան-Ալիւր գծի վրայ և զինուորական պարէնի պահեստապետութիւնը:

Վան վերադարձիս հինգերորդ օրը՝ երրորդ անգամ լինելով՝ Մարօին և Գրիգորին տեսնելու համար գնացի նրանց մօտ: Մարօի հետ մանկութիւնից ի վեր ունեցած հարազատութիւնն ու մտերմու-

թիւնը պատճառ էր դարձել, որ պր. Բուլղարացու հետ էլ շատ մտերմանամ: Նրանք երկուսն էլ իրենց ընտանիքում ինձ ընդունում էին հարազատի նման և իմ նկատմամբ ուշադիր ու գորովալից վերաբերմունք ունէին: Վերջին անգամ Բուլղարացին խօսակցութեան ընթացքում ի միջի այլոց հարցրեց.

– Սիրա՛ք, օղուլ, գործիդ մասին ի՞նչ կը մտածես: Որտե՞ղ կուզենաս գործել:

– Պարո՛ն Գրիգոր...

Խօսքս կտրելով ասաց.

– Օղուլ, սա պարոն-մարոնը դէն ձգիր: Ինչպէս ես քեզ անունով կը կանչեմ, այնպէս ալ դու կարճ ու համառօտ ինձ Գրիգոր ասա՛:

– Եթէ պարոն կոչելու իրաւունք չտաք, ձեր թոյլտուութեամբ ընկեր կանանեմ:

– Լա՛վ, այդպէս անանի՛ր:

– Ընկե՛ր Գրիգոր, անցած անգամն էլ դուք ինձ առաջարկեցիք զինուորական պարէնի պահեստապետութեան գործին անցնել: Ձեր՝ իմ նկատմամբ ունեցած վստահութեան համար շատ շնորհակալ եմ, բայց այդ գործը միօրինակ և տաղտկալի է:

– Մի գուցէ, բայց դա մեր վերակազմող տնտեսութեան և մանաւանդ զինուորական ուժերու և կազմի համար չափազանց կարևոր գործ մըն է: Ներկայիս մեր զինուրական պահեստներում միլիոններու հասնող կենսամթերք կայ: Այդպիսի մեծ հարստութիւնը, որ մանաւանդ նեղ օրերու յոյսն ու ապաւէնն է, ամէն պատահական մարդու յանձնել հնարաւոր չէ: Եթէ համաձայն ես այդ գործն ընդունելու, իմացի՛ր, որ մեծ ծառայութիւն կատարած կըլլաս հայրենիքիդ հանդէպ: Նախքան մերժելը կը ցանկանայի, որ լաւ վերահասու ըլլաս և գործի օգտակարութիւնն ու կարևորութիւնը գնահատես:

– Մենք ներկայիս մի երիտասարդ ունենք այդ գործի վրայ: Նա մեր հռչակաւոր բանաստեղծ Թումանեանի տղան է՝ Արտաւազդը: Բայց կը ցաւեմ ըսելու, որ աս գործը անոր գործը չէ: Խօսք չունեմ, նա շատ լաւ և վստահելի երիտասարդ է, բայց աս գործի կարևորութիւնն ու պատասխանատուութիւնն ըմբռնել չի ցանկանար: Յաճախ անտեղի և երկարատև կը բացակայի: Կըսեն, ինչ որ երիտասարդ սանիտարուհու հետ ժամանցներով կը զբաղի: Սիրաբանութեան և ժամանցներու պատճառով գործը զոհել աններելի յանցանք է: Ամէն ինչ իր առանձին ժամանակը պէտք է ունենայ: Գործը քէֆին զոհելը մեծ մեղք է և անթոյլատրելի:

– Իսկ եթէ ես էլ այդ յանցանքով վարակուած լինեմ,– կատակի տալով պատասխանեցի, – ի՞նչ կասէք:

– Ինքնապաշտպանութեան ժամանակէն քեզ կը ճանչնամ: Չեմ հաւատար, որ անոր նման այդպէս անփոյթ ըլլաս: Հակառակ պարագային այդ մասին յետոյ կը մտածենք: Յամենայն դէպս, շատ կը ցանկանայի, որ այդ պարտականութիւնը գոնէ ժամանակաւորապէս ընդունէիր:

– Շատ աղէկ, թոյլ տուէք մէկ-երկու օրուայ մէջ այդ առթիւ մտածելու և որոշելու պատասխանս,– ասի Գրիգորին:

ՅՈՒՍԱԼՔՈՒՄ

Վասպուրականի ինքնապաշտպանութիւնից առաջ, այդ ժամանակ և դրան յաջորդող շրջանին միշտ եղել էի բազմազբաղ: Ունէի գաղափարակից ընկերական մտերիմ շրջան: Պայմանները խանդավառող և ոգևորիչ էին: Գործի և մտքի թափուրը գոյութիւն չունէր ինձ համար:

Վերադարձիցս յետոյ բոլոր նախկին պարագաներն ու շրջապատը չքացել էին: Իմ մօտ անցեալի ընկերներից ու բարեկամներից միայն Մարօն և Հրանդն էին մնացել: Ինձ համար գոյացել էր մտաւոր ու հոգեկան բաւականութեան բացակայութեան անդնդանման մի պարիսպ:

Երկու օր առաջ գնացի Սահակ աղայի տան վիճակը տեսնելու: Մի աննկարագրելի սարսուռ անցաւ ամբողջ մարմնովս: Սահակ աղայի տունը, ռուսական նախկին հիւպատոսարանի շէնքն էր այրուել և մասնաւոր ուշադրութեամբ քարուքանդ եղել: Թիւրքերն իրենց ատելութիւնն ու կատաղի վրէժը կարծես ցանկացել էին թափել անշունչ ու անպաշտպան շէնքի վրայ:

Մարօն ի վիճակի չեղաւ Սահակի, նրա ընտանիքի և մանաւանդ նրա աղջկայ՝ Անուշի մասին որևէ տեղեկութիւն տալու ինձ:

Մանաւանդ այս անյայտ ու տխուր դասաւորութիւնը հոգեկան վիճակիս վրայ չափազանց ծանր անդրադարձում ունեցաւ: Իմ անչափ սիրելի ծննդավայրը՝ սքանչելի Այգեստանն ինձ համար օտարոտի, անհարազատ և անհրապոյր էր թւում:

Հոգեկան ի՜նչ մեծ կսկիծ, ի՜նչ դառն բեկում, ի՜նչ անսահման ամայութիւն...:

Ինձ մխիթարելու, ոգևորելու, սրտապնդելու միջոցները կարծես միանգամայն չքացել էին: Սիրտս անաղմուկ, բայց դառնագին հեծկլտում էր... Իմ աննման Անուշին գտնելու ամէն ենթադրելի յոյսերը միանգամայն խորտակուել էին...:

Հոգեկան այս թափուրն ու ամայութիւնը մտքիս գործելու հնարաւորութիւն չէին տալիս:

Չէի կարող մի եզրակացութեան յանգել. ցանկանում էի մի գործի ընտրութիւն կատարել, որոշում էի կայացնում, բայց անմիջապէս զղջում էի: Անվճռականութեան և կամքիս անկայունութեան համար ինքս ինձ մեղադրում էի:

Մտածում էի երկու բարեկամներիս օգնութեանը դիմել: Իմ հոգեկան ալեկոծումները նրանց բացատրել, բայց տարօրինակ ինքնասիրութեան և անհասկանալի հպարտութեան զգացումն արգելք էր դառնում:

Անցել էին ութ օրեր: Վերադարձիցս յետոյ շարունակում էի Հրանդի հետ միասին նրանց տանն

– Շատ աղէկ, թոյլ տուէք մէկ-երկու օրուայ մէջ այդ առթիւ մտածելու և որոշելու պատասխանս,– ասի Գրիգորին:

ապրել: Նրան յայտնել էի արդէն, որ Թիֆլիսից և Գիւլիզարդից մեկնելու ժամանակ աշխատանքիցս խնայած չնչին գումարները հիւանդ եղբօրս և մի աննշան մնացորդը թողել եմ քրոջս:

Առանց ինձ զգացնել տալու իմ դրամ չունենալս՝ Հրանդն ազնուօրէն ինձ արգելում էր առօրեայ ապրուստի ծախսերին մասնակցել: Մի օր, նկատելով իմ ծայրայեղ անտրամադիր և տխուր վիճակը, ասաց.

– Սիրա՛ք, սիրելի՛ս, դու իրաւունք չունես իմ նկատմամբ անկեղծ չլինել: Նկատում եմ, ինչ-որ անծանօթ պարագայ քեզ չափազանց անհանգըստացնում է: Ինչ-որ գաղտնիք կարծես սիրտդ կրծում է: Դու ներքնապէս տանջւում ես: Քո սովորական կենսուրախութիւնից և եռանդուն տրամադրութիւնից օրէցօր աւելի և աւելի ես զրկւում: Տխուր և մտածկոտ ես դարձել:

– Խնդրում եմ, որպէս մտերիմ և լաւ ընկեր, առանց քաշւելու՝ ինձ յայտնես քեզ այդքան շատ տանջող և մաշող պարագան:

– Հրա՛նդ, դու միանգամայն իրաւացի ես: Վերադարձիցս յետոյ ես բոլորովին այն մարդը չեմ, ինչ կայի: Հոգեկան անսահման մի տխրութիւն կլանել է իմ ամբողջ էութիւնը: Կարծես սրտումս մի ամայի, դառնաշունչ վիհ է բացւել: Կամքիս ու սրտիս միջև մի փոթորկալից պայքար է ստեղծւել: Կամքիս ուժով ցանկանում եմ սրտումս բացւած խոր վէրքը դարմանել, բայց դժբախտաբար առայժմ այդ չի յաջողւում ինձ:

Քեզ նման մտերիմ և հարազատ ընկերոջը ստիպւած եմ ինձ մրրկող ցաւը բացայայտել: Մեր առաջին նահանջի օրերից ի վեր՝ մինչև հիմի, սրտումս մի անդարմանալի կսկիծ, տանջանք է գոյացել: Ինձ մեղադրում եմ, որ իմ անփութութեան հետևանքով մի սքանչելի աղջկայ՝ իմ սիրած աղջկայ կորստեան պատճառն եմ եղել: Թէ՛ միտքս և թէ՛ խիղճս՝ իմ պատճառով եղած այդ կորստի համար ինձ անդադար տանջում են: Ճիշտ է, վերադարձել եմ հայրենիք իմ հայրենաբաղձութեան կարօտի ճնշմամբ բայց դրանից անբաժանելի մի պարտաւորութիւն էլ ինձ համար գոյութիւն ունէր:

Անվերջ և ապարդիւն փնտրտուքներից յետոյ ինձ համար մնում էր յոյսի մի վերջին նշոյլ: Դա Վանում մնացած և իրեն թաքցրած Անուշի հօրը՝ Սահակ աղային վերագտնելու սպասումն էր: Եթէ նա ողջ մնացած լինէր, գուցէ կարողանար իր աղջկայ մասին ինձ որևէ տեղեկութիւն տալ, բայց ափսո՜ս, որ ոչ միայն նա, այլև նրա տան հետքն էլ չկայ: Վայրագ թշնամին նրա տունը հողին է հաւասարեցրել, քանի որ այդ շէնքը վարձած էր ռուսական հիւպատոսարանի կողմից:

– Հիմի լիովին քեզ հասկանում եմ,– ասաց Հրանդը:– Գու՞ցէ դրա մասնակի ճարը ես կարողանամ անել: Իհարկէ, դրանով չեմ ուզում ասել, որ քո կորցրած սիրելի աղջկան՝ Անուշին, որին ես էլ ճանաչում էի, հրաշքով կարող եմ ճարել, բայց սրտումդ խորացած վէրքը պէտք է մեղմել:

Վաղը չէ միւս օրը կիրակի է: Մի քանի օրով Վարագի վանքն ու նրա հովասուն լեռները կը գնանք: Լեռնագնացութիւնն ու օդափոխութիւնը նախ քեզ և յետոյ ինձ համար կարող են շատ օգտակար լինել:

ՎԱՐԱԳՈՒՄ, ՊԵՏՐՈՍԻ ՄՕՏ

Կիրակի օրը՝ առաւօտեան շատ կանուխ, Հրանդն իր խոստումը կատարեց: Նա համարեա ստիպմամբ ինձ Վարագ տարաւ, ճանապարհին հանդիպեցինք մեզ նման մի քանի ուխտաւորների: Երբ Այգեստանի ոսկեվառ արևն իր շողշողուն և վառվռուն շողերն էր սփռում, մենք հասել էինք Վարագայ լանջերը:

Ահա և ինքը՝ Վարագայ վանքը: Նա կիսաքանդ էր եղել, բայց մեզ՝ ուխտաւորներիս համար, պահել էր իր նիւրական շունչն ու եզական խորհուրդը: Ինչպէս միշտ, ներկայիս էլ նա վեհապանծ արծւի նման թառել էր Վարագայ խորախորհուրդ լեռան կրծքին:

Վանքը շրջապատող շինութիւնից մնացել էին հազիւ մի քանի սենեակներ: Պետրոս աղան՝[30] Վարագայ անպարտելի վերակացուն, մեզ դիմաւորելու աճապարեց: Նրա հոգում բոյն էին դրել տխրութիւնն ու ընկրկումը, բայց նա աշխատում էր այդ զգացումները թաքցնել, խեղդել, և ինչպէս եղել էր ամբողջ կէս դար, այդ օրն ևս մեզ և մեզ հետ եղողներին դիմաւորեց ժպտադէմ և բարեհամբոյր:

Մեր բարևին նա ժպտալից պատասխանեց.

– Բարով, հազար բարով էք եկած: Ինձ համար անչափ ուրախութիւն է, երբ իրար յաջորդող 3 նահանջներէն վերջ նորէն բախտաւորութիւն կունենամ ձեզ նման հայրենակից-ուխտաւորներ դիմաւորելու և իմ վշտաբեկ սիրտը մխիթարելու:

– Մեզ համար ևս,– պատասխանեց Հրանդը,– շատ աւելի մեծ ուրախութիւն է ձեզ նման աննկուն և աննահանջ վերակացուի նորէն հանդիպելու: Ձեզմէ զատ, ուրիշ մէկը հազիւ թէ ցանկանար վերադառնալ այստեղ և անասելի ջանքերով իր դժւար, վտանգաւոր և մեղաւորաց աշխատանքը վերսկսէր:

– Իրաւացի էք, պարո՛ն,– պատասխանեց Պետրոս աղան,– թշնամին կարողացածին չափով վանքը քարուքանդ ըրած է, իսկ բնութիւնը, ձմեռների խստութիւնը մեր ամենուս պաշտելի այս վանքի աւերակումը լրացած են: Նահանջներու ժամանակ ոտքերս ինձ կը դաւաճանէին, անոնք իմ մարմինն

30 Պետրոս աղան իրաւացիօրէն գուշակել էր, որ Վարագայ վանքից զրկւելուց յետոյ իր կեանքը խաւարելու էր: Վանի վերջին՝ 1918 թւի նահանջից յետոյ՝ 4-5 տարի խելագարի նման դէս ու դէն թափառելուց յետոյ, ի վերջոյ, յուսահատւած՝ իրեն Միջերկրական ծովի կատաղի ալիքներին յանձնելով՝ ինքնասպան եղաւ (ծանոթ. հեղինակի):

Վարագա պարոն Պետրոս

իրենց վրայ քաշ տալու ցանկութիւն չունէին: Առաջին երկու նահանջներու ընթացքին կամաւոր գերու նման գաղթողներու շարքերու մէջ խառնուեցի: Իգդիր չը հասած՝ նորէն վերադարձայ: Ասկէ 4 ամիս առաջ եղած նահանջին չուզեցի մասնակցել: Որոշեցի մնալ և այս սրբավայրի լեռներու և ծերպերու մէջ թաքնուել: Է՜հ, միևնոյն է, ըսի ինքս ինձի, առանց այս նուիրական ու պաշտելի վանքի՝ ես ապրել չեմ կարենալու: Փոխանակ գաղթի ճանապարհին տանջանքի ու տառապանքի մէջ մեռնելու՝ աւելի լաւ է իմ աննման հոգևոր հօր՝ Խրիմեան Հայրիկի՝ ինձ ժառանգութիւն թողած այս արծուեբոյնի կամ անոր յաղթապանծ լեռներու խորշերէն մէկի մէջ մեռնեմ կամ սպանուեմ: Ներկայիս 70-ի շուրջ տարիք ունեմ: Գուցէ մի քանի տարի ալ կարողանամ ապրել: Ընտանիք, երեխայ չունեմ: Իմ ունեցած գանձն ու հարստութիւնը իմ երջանկութիւնն ու պարծանքը աս վանքն է: Տասնևհինգ տարեկան պատանի էի, երբ այստեղ եկայ: Այն ժամանակուընէ սկսած՝ կեանքս նուիրած եմ այս փառապանծ արծուեբոյնին: Մեզ ամենուս և մասնաւորապէս իմ հայր Խրիմեան Հայրիկը կրթեց, դաստիարակեց և հայրենասիրութեան շունչ ու ոգի ներշնչեց: Առանց Վարագի՝ իմ կեանքը խաւար է ու անիմաստ: Առանց որևէ կուսակցութեան պատկանելու՝ եղեր եմ հայ ժողովրդի պարծանքի ու պաշտամունքի առարկայ այս նուիրական վանքի երդուեալ և հաւատաւոր ծառան և կը ջանամ մնալ, քանի դեռ շունչ ունեմ:

***

Պետրոս աղան մեզ հրաւիրեց իր սենեակը հանգստանալու: Նա մեզ հիւրասիրեց թարմ ու տաք կաթով և նոր թխած գաթայով:

Այս, ըստ երևոյթին, նախկինի նման բնականոն վիճակն ինձ զարմանալի թւաց: Հարցրի:

– Պետրո՛ս աղա, այս ինչպէ՞ս է, որ նախկին սովորույթը կը կարողանաք գործադրել: Թարմ կաթն ու գաթան ինչ միջոցով կը հայթայթէք:

– Հէ՜յ, հէ՜յ, քանի որ ձեր ծերուկ Պետրոս ողջ է, ամէն միջոցի կը դիմէ այս ամէնուն սիրելի ու պաշտելի ուխտավայրի գոնէ վերջին կրակն ու ճրագը վառ պահելու: Երկրորդ նահանջէն վերջ, երբ վերադարձայ, Բարեգործականի մօտ գնացի: Բացատրեցի վանքի անմխիթար վիճակը: Ասացի, եթէ չէք ցանկանայ ինձ ողջ-ողջ թաղել, կաղաչեմ խնդիրս չմերժէք: Մի՛ յօժարիք, որ մեր Հայոց Հայրիկի նուիրական օջախն առանց ճրագ ու կրակի մնայ: Ինձ մի զոյգ կով և երկու ոչխար տուէք: Մեր նախկին մշակներէն մէկ-երկուքը կը ճարեմ և կը ջանամ Լուսաւորչի կանթեղը վառ պահել:

Շատ շնորհակալ եմ: Խնդիրս չմերժեցին և ուզածներս տուին: Ներկայիս երկու մշակների օգնութեամբ գործերս կը կատարեմ: Մշակների թեթև ոռճիկն ալ ես վանքի չնչին եկամուտէն կը վճարեմ: Ձեզ նման հայրենակից ուխտաւորներ բաւական շատ կայցելեն իրենց սիրելի սրբավայրը: Չէք կրնար երևակայել, թէ ինձ ի՜նչ մեծ ուրախութիւն կը պատճառէ անոնց մէկ պատառ հացով և մէկ բաժակ կաթով հիւրասիրելը:

Նա կորցրեց իր խօսակցութեան թելը: Նրա աչքերն արցունքով լեցուեցին: Նրա խորշոմած այտերի վրայով արտասուքի մի քանի կաթիլներ գլորուեցին, և ապա սրտամաշ հառաչանքով շարունակեց.

– Այս վանքը իսկապէս արծուաբոյն է եղած: Ամենախիզախն ու անվեհերը մեր Հայրիկն էր: Անոր ժամանակ և անկէ յետոյ հայրենիքի ազատութեան համար պայքարող քաջերը, շարան-շարան եկած, օթևանած և անոր հողին մէջ հանգստացած են: Անոնց՝ հայրենիքի այդ խիզախ զաւակների հիւրընկալութեան, հանգստութեան համար, ոչինչ խնայած եմ: Այս պատճառով ալ շատ անգամ թիւրք ժանդարմների գանակոծման ենթարկուած եմ: Մէկ անգամ ալ մահուէ ազատուեցայ: Սպանել կուզէին: Ամենաողորմած Աստուած այս սրբավայրի հրեշտա-



Վարագ վանքը (լուսանկար՝ Բախման, 1913 թ.)

կին ինձ օգնութեան փութացուց: Երբ ինձ կալանաւորուած սպանելու կը տանէին, յանկարծ երկինքը մթնեց, կայծակ, որոտ և հեղեղանման անձրև թափուել սկսեց: Կատաղի քամին կը սուրար և ահռելի որոտով ամբողջ լեռները կը դղրդացնէր: Ժանդարմները խուճապի մատնուեցան: Անոնց գլխաւորը կատաղած, սեղմած ատամների արանքից հայհոյանքով մռթմռթաց. «Գեավուրուն Ալլահի ըազի դայէլ: Բրախընը ջըհաննամ օլսուն (անհաւատի Աստուածը դժգոհ է, թողէք կորչի):

Պետրոս աղան ապա շարունակեց.

– Կատարուեց հրաշքը, որ քանի դեռ կենդանի եմ, մոռնալ չպիտի կարողանամ: Գիտեմ, համոզած եմ, որ այս սրբավայրի պահապան հրեշտակի շնորհքն ու զօրութիւնն էր, որ իրեն նուիրուած ծառային փրկել կամեցաւ:

– Պետրո՛ս աղա,– հարցրի նորից,– գիտեմ, որ Խրիմեան Հայրիկի այս վանքի մէջ ապրած ժամանակ դուք անոր անբաժան օգնականն ու նոյնիսկ մտերիմ բարեկամն էք եղել, ինձ մի խնդիր չափազանց շատ է հետաքրքրում: Ասում են, որ Մուշ-Տարօնի հերոսական ընդվզումն ու տաճկական անթիւ զօրքի դիմաց նրա խիզախ դիմադրութիւնը՝ Հայրիկի թելադրութեան և քաջալերանքի հետևանքն է եղել: Այդ մասին ի՞նչ կարող էք ինձ յայտնել:

– Որդիս, Խրիմեանին զուր տեղը Հայոց Հայրիկ անունը տրուած չէ: Նա իրապէս հայոց հայրն է եղած: Անոր աննման գթառատ սիրտը հայրենիքի, իր իրաւազրկուած ժողովրդի սիրովն ու կարօտով էր տոգորուած: Նա հայ ժողովրդի ցաւովն ու վշտովը կը տառապէր: Անիրաւութեան, կողոպուտի, բռնութեան ամէն մէկ լուրը անոր հայրական աչքերից արիւն-արցունք կը խլէր: Դրա փոխարէն հայ ժողովրդի, անոր քաջարի զաւակներու ամէն հերոսական ընդվզումը, անոր հայրական սիրտը պարծանքով և ուրախութեամբ կը լեցնէր: Արդեօք ի՞նչ զարմանալու պարագայ կարող է ըլլալ, եթէ նա խրախուսած և քաջալերած ըլլար Տարօնի հերոսական դիմադրութիւնը: Թիւրքերու և քիւրդերու կողոպուտն ու բռնութիւնները ամէն չափ ու սահման կտրած, անցած էին, կեղեքուող ժողովրդի համբերութիւնը հատած էր: Ամէն օր նորանոր բռնութիւններու և առևանգումներու լուրեր կը հասնէին և մեծ հայրենասէրի սիրտը կը ճանկռոտէին, կարիւնէին: Ով ապրել կուզէ, ստիպուած է պայքարել, դիմադրել: Հայ ժողովուրդը կուզէ, ստիպուած է պայքարել, դիմադրել և վրէժխնդիր ըլլալ իրեն խեղդամահ ընել փորձող բարբարոսներէն:

Երեք օր Վարագ մնացինք: Հրանդն ինձ ստիպում էր իր հետ միասին լեռները բարձրանալ և նրանց կատարներին հասնելով՝ այնտեղից դիտել Այգեստանն ու զմայլուել նրա բնատուր գեղեցկութիւններով: Նա միշտ կրկնում էր.

– Մեր գեղատեսիլ Այգեստանի փառքն ու պարծանքը և գեղեցկութիւնների գեղեցկութիւնը Վարագն է՝ իր սեգ և վեհապանծ լեռներով, և Աղթամա-

ը՝ իրեն շրջապատող կապտաւուն և շողշողացող ջրերով:

Մեզ հետ տարած ծխախոտի, թէյի և շաքարի փոքր պաշարը թողնելով մեզ սիրալիրօրէն և հայրաբար հիւրասիրող Պետրոս աղային և սրտանց շնորհակալ լինելով նրա՝ անսահման ազնիւ վերաբերմունքից՝ վերադարձանք Վան: Հրանդը շատ ճիշտ էր մտածել: Ես աշխուժացել և բաւական շատ կազդուրուել էի: Միտքս էլ մի տեսակ խաղաղուել էր: Աշխատելու, գործելու տրամադրութիւնս սկսում էր երևան գալ:

ՆՈՐԻՑ ՄԱՐՕԻ ՄՕՏ

Վարագից Վան վերադառնալուց յետոյ ինքս ինձ բաւական փոխուած գտայ: Մելամաղձոտ և շաւրած վիճակս անհետանալու վրայ էր: Նորից Մարօենց գնացի՝ թէ՛ նրան և թէ՛ Գրիգորին այցելելու համար: Ընտրեցի յարմար ժամանակ ճաշին նրանց մօտ լինելու, քանի որ Մարօն քանիցս խնդրել էր գոնէ շաբաթը մէկ անգամ իրենց հետ ճաշելու:

Ճաշին իրենց մօտ գնալու համար Մարօն շատ ուրախացաւ: Չարաճճի և կենսուրախ Կորիւնին գիրկս դնելով՝ հեռախօսի մօտ աճապարեց՝ իր ամուսնուն իմ ներկայութեան մասին տեղեկացնելու և նրան խնդրելու, որ ճաշին շատ չուշանայ: Ուրախութիւնից երեխայի պէս թռչկոտելով՝ ինձ մօտ վերադարձաւ և վերսկսեց իր անմեղ հարցաքննութիւնը.

– Պատմի՛ր, եղբա՛յր ջան, ինչպէս հարազատ քրոջդ, ինձ ասա՛, քեզ ի՞նչ է պատահել: Դու քո վերադարձից յետոյ կարծես նախկին Սիրաքը չլինես: Ինձ թւում է, ինչ-որ մի բան քեզ անհանգստացնում է: Մի՞թէ քեզ վատառողջ ես զգում, թէ ինչ որ ինձ անծանօթ վիշտ քեզ տանջում է:

– Մարօ՛, իմ հարազա՛տ, իմ սիրելի՛ Մարօ, չես կարող որևէ մարդու հանդիպել, որ կատարելապէս երջանիկ լինի: Ամէն մարդ մի տեսակ անհանգստութիւն, դժգոհութիւն և նոյնիսկ վիշտ կարող է ունենալ: Իմ ամենամեծ դժգոհութիւնն այն է, որ ներկայիս զրկուած եմ իմ այն բազմաթիւ ընկերներից, մտերիմներից, հարազատներից, քրոջիցս, հօրիցս և մէկ խօսքով այն եռուն, կենսունակ շրջանից և միջավայրից, որով ես ոգևորւում և հրճւում էի նախքան մեր տնաքանդ նահանջը, որ մեզնից ամէն ինչ խլեց ու կողոպտեց: Վերադարձիցս յետոյ քեզնից և իմ ընկեր Հրանդից բացի ոչ ոքի ունեմ: Ես ինձ բոլորովին մենակ, զրկուած և անհաղորդ եմ զգում: Ինձ ոգևորող, ներշնչող, խրախուսող, նախկին պայմաններն ու շրջապատը չը կան: Ինձ զգում եմ մի թմրեցնող, յոգնեցնող, անհարազատ պարապութեան և ամայութեան մէջ: Երբեք չէի ենթադրում, որ կարող էի նման վիճակի ենթարկուել... Չես կարող երևակայել, սիրելի՛ Մարօ, հոգու, սրտի պարապն ու ամայութիւնն ինչքա՜ն սոսկալի և անտանելի է...

– Եթէ չեմ սխալւում, եղբա՛յր Սիրաք, քո նկարագրած դրութիւնը սիրային հարուածի ենթարկուողներին է վիճակւում: Մի՞թէ կորցրած սիրոյ վիշտն է քեզ հարուածում:

Մի րոպէ լռելյայն սպասումից յետոյ վշտալից շարունակեց.

– Օ՜հ, այո՛, անչա՜փ տխուր եմ: Շատ ինքնամփոփ, եսական եմ դարձել: Իմ երեխայի ու ամուսնու նկատմամբ ունեցած անսահման ուշադրութիւնն ու խնամքը ինձ օտարացրել, նոյնիսկ իմ հետաքրքրքրութեան շրջանից իմ հարազատներին ու մտերիմներին հեռացրել ու դուրս է վտարել: Քո վիշտն ու տառապանքը հիմի հասկանում, շա՛տ լաւ եմ զգում: Դու ուրեմն ձեռքից տուել կամ գուցէ կորցրել ես սիրածդ աղջկան՝ Անուշին, որին ես մի ժամանակ անիրաւացիօրէն մեղադրում էի...

– Ինչու՞մն էիր մեղադրում,– անմիջապէս կտրեցի Մարօի չվերջացրած խօսքը:

– Ներողութիւն, գուցէ սխալ արտայայտուեցի: Ուզում էի ասել, որ նրա պատճառով՝ ինձ, ինչպէս ասում ես, քո քրոջը ամիսներով մոռացութեան էիր մատնել:

– Սխալւում ես, ազնի՛ւ Մարօ, միանգամայն սխալւում ես: Նրա պատճառով չէր, որ քեզ մոռացութեան էի տուել: Ո՛չ, իմ սխալի ու անփութութեան հետևանքն էր այդ: Ընդհանուր, հասարակական, կուսակցական և այլ զբաղմունքներիս համար թէ՛ քեզ և թէ՛ նրան մոռացութեան էի տուել: Տարբերութիւնը նրանումն է, որ դու տէր և տիրական, պաշտպան ունէիր, որ քեզ վտանգից և կորստից ազատեց, իսկ նրան այդ սոսկալի և մինչև հիմի ինձ անհասկանալի մնացած կորուստից ազատողը չեղաւ: Նրան հովանաւորողն ու ազատողը ես պիտի լինէի, բայց, դժբախտաբար, չեղայ և այդ իսկ պատճառով էլ տանջւում, անդադար ու անվերջ խղճահարւում եմ և ինձ արդարացնելու ոչ մի միջոց չեմ գտնում: Նահանջի վերջին րոպէին միայն նրան փնտրելու գնացի: Չը կարողացայ գտնել: Նրան կորցրի, և այդ թանկագին և անփոխարինելի կորստի համար սիրտս այրւում է, և խիղճս տանջում է ինձ:

– Եղբա՛յր, ասում ես, նրան կորցրի, իսկ նորից նրան փնտրելու և գտնելու համար ջանացի՞ր, թէ՞ ոչ: Իգդիրում, Էջմիածնում, Երևանում, Ղարաքիլիսէում և վերջապէս Թիֆլիսում, բոլոր մեր գաղթական հայրենակիցների վերաբնակւած վայրերում մի՞թէ քեզ չյաջողուեց նրան վերագտնել: Մի՞թէ մեր և նրանց ծանօթ-բարեկամների օգնութեամբ կարելի չեղաւ նրա մասին որևէ տեղեկութիւն ձեռք բերել:

– Ո՛չ, ո՛չ, Մարօ՛, հնարաւորին չափ ստուգումներ կատարեցի, փնտրեցի, նոյնիսկ մի քանի բարեկամներիս և ընկերներիս օգնութեանը դիմեցի: Թիֆլիսում հրատարակւող և շատ սպառւող երկու հայե-

րէն թերթերում մի քանի անգամ յայտարարութիւն տուի: Չեղաւ, չյաջողուեց: Իմ բոլոր ճիգ ու ջանքերն ապարդիւն անցան:

Մարօի մշտաժպիտ դէմքը մռայլուեց: Նա, որ իմ մանկութեան օրերին ինձ համար աննման և անզուգական հարազատ քոյր էր եղել և մի տեսակ պահապան հրեշտակի նման ինձ զուգորդել և պաշտպանել էր, սրտի խորքից հառաչեց և տառապալից վշտից գունատուեց: Ապա գթառատ մօր նման ինձ իր բազուկներով գրկելով՝ գուրգուրաց և մազերս շոյելով՝ իր դիւթիչ ձայնով ասաց.

– Մի՛ յուսահատիր, իմ անուշիկ և անգի՛ն եղբայր: Այդ քեզ չի սազում: Ճակատագրի դէմ պայքարել միանգամայն անօգուտ է: Ջանացի՛ր ազնիւ սիրտդ մաշող այդ վիշտը մոռացութեան տալ:

Մարօենց տնից դուրս գալուց յետոյ քանի անգամներ, մտքումս կրկնեցի ինձ մխիթարելու, սիրտ տալու համար նրա ասած խօսքերը. «Այդ քեզ չի սազում, ճակատագրի դէմ պայքարելը միանգամայն անօգուտ է»: Եթէ այդ խօսքերը մի ուրիշ անձնաւորութեան բերնով ասած լինէին, գուցէ սովորականի պէս ոչ մի ազդեցութիւն չգործէին: Բայց դրանք արտասանուած էին Մարօի կողմից: Տասնեակ տարիներից յետոյ նրա ասած խօսքերի զարմանալի ազդեցութիւնը մէկ անգամ ևս զգացի:

Մանուկ հասակից սկսած մինչև պատանեկութեանս նախաշրջանը՝ Մարօն ինձ համար եղել էր ամեն ինչ: Նրա կարգադրութիւններին, ցուցմունքներին և նոյնիսկ ցանկութիւններին ենթարկուելը մի տարօրինակ հաճոյք էր պատճառում ինձ: Համոզուած էի, որ նա իմ բարեացակամ և ամենահարազատ բարեկամն է: Շատ անգամ ենթադրում էի, որ նա իմ բարեհամբոյր մօր տեղապահն է: Մտածում էի՝ գուցէ բէմուրազ և վաղաժամ մեռած մօրս հոգին է նրան ուղարկել իմ պաշտպանութեան և պահպանման համար...

«Այս քեզ չի սազում...». նրա այս խօսքերն ականջներումս անդադար զնգում էին: Տարօրինակ էր: Մարօի խօսքերն իմ այս հասակում դեռ շարունակում էին իրենց դիւթական, հրապուրող, առինքնող բնոյթն ու իմաստը պահել: Նորից զգում էի, որ կամայ, թէ դեռևս ակամայ ենթակայ էի նրա խօսքին ու ազդեցութեանը:

Նրա հարազատութեան, անկեղծութեան և բարեացակամութեան մասին կասկածել չէի համարձակւում:

Այո՛, այս անգամ էլ նա միանգամայն իրաւացի էր, երբ ինձ ասում էր. «Այդ քեզ չի սազում»: Երիտասարդութեան սեմին դեռ նոր ոտք դրած՝ իրաւունք չունեմ բախտի առաջին հարուածից ընկրկելու և տառապելու: Պետք է, որ կարողանամ կեանքի պայքարում դիմագրաւելու և չխորտակւելու համար ինձ ուժ և կենսունակութիւն ներշնչելու:

***

Մարօենց մօտ՝ ճաշի ժամանակ, Բուլղարացու հետ ունեցել էինք մտերմական խօսակցութիւն: Ինձ համար առանձնապէս հետաքրքրական էր նրա կարծիքը ռուսական բանակի հայկական կամաւորական գնդերի կողմից ազատագրուած հայկական հողամասերի վերաբերմամբ: Նրա կարծիքը տիրող վիճակի մասին միանգամայն աննպաստ էր:

– Դժբախտաբար, թաքցնել չեմ կարող,– ի միջի այլոց ասաց նա,– իմ կասկածները ռուսական ներկայ պետական քաղաքականութեան անշահախնդրութեան և անկեղծութեան վերաբերմամբ: Կերենսկու կառավարութեան ուղեգիծը մեր՝ հայերիս նկատմամբ կարծես նախկին ցարական իշխանութեան քաղաքականութեան շարունակութիւնն ըլլայ:

Շատ զարմանալի է, որ ռուսական թէ՛ նախկին և թէ՛ ներկայ կառավարութիւնները մեզ քաղցր և հաճելի խոստումներ տուած են և կը շարունակեն շռայլել, բայց իրականութիւնը կարծես բոլորովին հակառակն է:

Երկու տարի առաջ Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի ճգնաժամային օրերին ռուսական բանակը իր կոզակների հեծելագնդերու արտակարգ խիզախութեան շնորհիւ վաղուց ի վեր Խալիլ փաշայի ղեկավարած թրքական բանակը կատարեալ պարտութեան ենթարկած էր, բայց չնայած քաջարի Անդրանիկի խնդրանքներուն և հայազգի զօրավար Նազարբէգեանի միջնորդութեան՝ չէր ցանկանար կամ աւելի ճշմարիտ կըլլայ ըսել, ցուցմունք չունէր Ջուլֆա-Խոյ-Սալմաստ գիծէն այս կողմը հառաջանալու և մեզ՝ օրհասական ճգնաժամի մէջ ապրող և ամէն րոպէ մահաւան սարսափը հերոսական ճիգերով դիմագրաւող Վասպուրականի հայերուս օգնութեան հասնելու: Վերջապէս եկան: Չափազանց շնորհակալ և երախտապարտ ենք: Անոնք մեր կամաւոր գնդերու անձնուէր գործակցութեամբ մեզի արիւնարբու թշնամու ճանկերէն ազատեցին, բայց ափսո՜ս, հազար ափսո՜ս, որ այդ ազատագրութեան շրջանը կարճատև եղաւ: Մեր ազատագրումը կարծես ռուսական ցարական կառավարութեանը հաճելի չթւեց: Այդ իշխանութիւնը մեզի ազատած ըլլալու համար կարծես զղջաց:

– Ուրեմն ինչ կարծիքի էք, – անհամբերութեամբ կտրեցի Գրիգորի խօսքերի շարունակութիւնը,– ռուսական բանակի նահանջն անտեղի, միտումնաւո՞ր է եղած...:

– Անկասկա՛ծ, այո՛: Թիւրքերը այդ օրերուն սարսափահար եղած էին: Անոնք ռուսներու կողմէ պարպւած իրենց հողամասերն անմիջապէս վերադառնալ չհամարձակւեցին: Անոնք կը բաւականանային միայն ռուս զինուորներու լքած հողամասերու վրայ գրգռութիւններ կատարելով:

Թիւրքերը գերմանացիներու իրենց նւիրած անթիւ և անհաշիւ զէնքերով, քիւրդերը, չէրքէզներն ու

տեղական բաշիբոզուկ աւազակները կը զինէին և անոնց ախորժակները կը գրգռէին անպաշտպան մնացած հայերը կողոպտելու և անոնց կինն ու աղջիկներն առնանգելու կը դրդէին և ամէն կերպ կը քաջալերէին:

Դրութիւնն ինձ բոլորովին պարզ ու հասկանալի էր: Ատոր համար ալ Լևոնի հետ միասին վերջին երկու, ըսենք երկրորդ և երրորդ նահանջներու ժամանակ աշխատեցի գաղթականութեան բաւական մեծ մասը Բերկրիի հովիտներու մէջ և Աբաղայի դաշտավայրերու վրայ պահելու: Այդ նենգութիւններու պատմութիւնն ալ երկար տևել չկարողացաւ: Վճռական, վերջնական նահանջի ստիպողական անհրաժեշտութեան պարագան մինչև յիմա ալ գոյութիւն ունեցած չէ: Կարճ ըսած՝ ռուսական բանակները նահանջելու պարտադրող տաճկական զինուորական ոյժ ու կազմակերպութիւն գոյութիւն ունեցած չէ և մանաւանդ ներկայիս ալ չկայ: Եղած բոլոր նահանջները քաղաքական խաղերու և խաբէութեան հետևանք են:

Մեր խոսակցութիւնը բաւական երկար տևեց: Բուլղարացու դպրոցական ուսման աստիճանն անծանօթ էր: Ամէն պարագայում նա քաղաքական հմտութեան տէր և մանաւանդ փորձած ու հեռատես զինուորական էր:

Մեր բաժանուելուց առաջ մի տեսակ բարոյական ճնշմամբ նա ինձնից խօսք առեց իր զինուորական վարչութեան մասը կազմող զինուորական կենտրոնական պահեստի պահեստապետութեան գործը ստանձնելու:

– Քաղաքապետարանն ու Գիւղատնտեսական վարչութիւնն իրենց համար ուրիշ ծառայողներ ճարել կարող են: Մեր գործի պատասխանատուութիւնն աւելի շատ է,– եզրափակեց իր խօսքը:

ՏԽՐԱՌԻԹ ԲԱԺԱՆՈՒՄ

Մենք Հրանդի հետ միասին շարունակում էինք նրանց տունն ապրել: Վերադարձից յետոյ իմ կրած հոգեկան բեկման և յուսալքման մեղմացման ընթացքում իմ ընկերն անփոխարինելի աջակցութիւն ցոյց տուեց ինձ: Իմ յուսալքման համար ինձ մեղադրելուց յետոյ ինձ շարունակ կամքի ոյժ և տոկունութիւն ու եռանդ էր ներշնչում: Զարմանալի զուգադիպութեամբ՝ Մարօի՝ ինձ ասած խօսքերն էր կրկնում.

– Սիրա՛ք, այդպիսի կամազրկութիւն և ընկրկում քեզ բոլորովին պատշաճ չէ: Երկու տարի առաջւայ քո եռանդն ու ղեկավարող դերը վերյիշի՛ր: Երկու շաբաթ առաջ՝ Էջմիածնում եղած ժամանակ, քո ասած ոգևորիչ ու ներշնչող խօսքերը յիշի՛ր: Եթէ ցանկանում էիր մեղկութեան մէջ ապրող սովորական մարդ լինել, էլ ինչու՞ Թիֆլիսից վերադարձար Վան: Մի՞թէ ինքդ չէիր, որ ասում էիր. «Հայրենիքիս վերաշինման գործին նուիրելով՝ նրա բարգաւաճման և վերելքի ճամփով յառաջադիմելու բուռն ցանկութիւն ունեմ...»: Այդպիսի ձգտումով տոգորուող քեզ նման երիտասարդը յուսահատելու իրաւունք չունի:

– Հրա՛նդ, իմ սիրելի և մտերի՛մ ընկեր, աւելորդ է ասել և կրկնել, որ ինչպէս գիտես, այս պայմաններում, ինձ յուսալքող պարագաներ շատ կան: Հէնց առաջինն այն է, որ ներկայիս նախկին իմ երեք տասնեակ ընկերների շրջանից զրկուած եմ: Նրանցից միայն դու ես մնացել, և դժբախտաբար, ինչպէս որոշել ես, դու էլ շուտով ինձնից հեռանալու ես: Յետոյ էլ... Իմ յոյսի և երջանկութեան վերջին աստղն էլ խամրել և խաւարել է:

Ընկերս ինձ լիովին հասկանում և կարեկցում էր: Տխրութեան ստուերը սքօղել էր նրա ուրախ և մտապայծառ նայուածքը: Ցանկանում էր խօսել, մխիթարել, բայց դժուարանում էր: Ի վերջոյ ասաց.

– Եթէ ենթադրում ես, որ ի վիճակի չես յաղթահարելու և քեզնից վանելու քեզ յուսալքող առիթները, այդ պարագային բարուք և նպատակայարմար կը համարեմ, որ ինձ հետ վերադառնաս Երևան: Մի քանի օր ինձ մօտ մնալով կը հանգստանաս և ապա կը մեկնես ձերոնց մօտ՝ Ղարաքիլիսէ կամ Թիֆլիս:

Հրանդն անհամբեր սպասում էր պատասխանիս:

– Մի գուցէ,– պատասխանեցի ընկերոջս,– հոգեկան ժամանակաւոր անդորրութեան համար առաջարկդ նպատակայարմար լինի: Սակայն նման պարագայում ես ինձ փոքրացած, նաստացրած պիտի լինեմ: Ինձ պիտի համարեմ մի դասալիք զինուոր, որն իր պարտականութեան կատարումից հրաժարւում և փախչում է թուլամորթութեան հետևանքով: Չէ՛, Հրա՛նդ, ես այդ անել չեմ կարող: Հէնց առաջին հերթին ես ինքս իմ անձնաւորութիւնը նաստացրած և արգահատելի պիտի դարձնեմ: Աւելի շուտ կը փշրեմ, կը խորտակեմ իմ սիրտը, նրա սիրոյ և գուրգուրանքի պարիսպները, քան թէ հայրենազուրկ դասալիք կը դառնամ:

Ուրախութեան և հրճւանքի կրակը Հրանդի աչքերում փայլփլեց: Նա՝ որպէս սրտակից ընկեր, նաազագոյն ցանկութիւն չունէր իմ ընկրկումը տեսնելու: Ինձ քաջալերող շեշտով ասաց.

– Գիտէի, համոզուած էի, որ այդպէս հեշտութեամբ քո սիրած հայրենի հողն ու օջախը կամովին լքողը չես, վստահ եմ նոյնպէս, որ նուիրուած և եռանդուն աշխատանքիդ հետևանքով քո հոգեկան տանջանքն ու տառապանքը պիտի նաազի և գուցէ անհետանայ:

Իսկ ինչ վերաբերում է ինձ, գիտես, որ իմ պարագան բոլորովին տարբեր է: Հայրս արդէն ծերացել է: Մօրս ու քրոջս միակ յոյսն ու ապաւէնը ես եմ: Պատերազմի վերջաւորութիւնն ու նրանից յառաջացող դասաւորութիւններն ու հանգամանքները

մեզ անյայտ են: Սրանից յետոյ արդեօք մեզ կը թողնե՞ն մեր հայրենի օջախում վերապրել, թէ՞ նորից վայրագ խժդժութիւններով և կոտորածի ու բնաջնջման սարսափով մեզ էլի կը հալածեն, կը քշեն և մեր նախահայրերի հայրենի երկրից մեզ կը վռնդեն: Ամէն պարագայում այս կործանարար ահռելի պատերազմը դեռ շարունակւում է, և նորանոր հաւանական նահանջների սարսռալից վտանգը կարող է ամէն օր և ամէն ժամ մեր գլխին պայթել:

Այս բոլորից յետոյ մի չափազանց ցաւալի հաւանականութիւն էլ կայ: Կարծում եմ, որ չես մոռացել ցարական կառավարութեան նենգ ծրագրի պատահական հրապարակումը: Այո՛, ծրագրած էր Ալաշկերտի, Սարիղամիշի, Աբաղայի և նոյնիսկ Կարսի շրջանները ռուս կոզակների բնակութեան յատկացնել: Կերենսկու այս նոր կառավարութեան հասցէին նման ցաւալի լուրեր են շրջան առել: Դեռ երէկ իշխանութեան ղեկը գրաւած այս նոր իշխանութիւնը կոզակներին սիրաշահելու նպատակով նրանց խոստացել է հայկական հողամասերից և թիւրքերից գրաւած շրջաններից նրանց բնակութեան համար նահանգային ընդարձակ մասեր նւիրել:

– Լաւ, քո մտածելակերպին հակաճառելու մտադրութիւն չունեմ,– պատասխանեցի ընկերոջս:– Արտայայտած մտքերդ և ենթադրութիւնները, դժբախտաբար, կարող են ճիշտ լինել: Նման պարագայում ինչու՞ համար նորից այստեղ վերադարձար: Մի՞թէ մինչ այդ այլ կերպ էիր մտածում և տրամաբանում:

– Հարցումդ տեղին է: Ինձ նման մի դեռ չփորձուած երիտասարդ չի կարող ճշտօրէն իրատես և հեռատես լինել: Ասենք, ինձ թւում է, որ ինձնից շատ աւելի փորձառու քաղաքագէտներն էլ ներկայ պայմաններում ի վիճակի չեն ապագան որոշելու և մանաւանդ մեր ժողովրդի բախտի ու ճակատագրի դասաւորման հաւանականութիւնը ճշտելու: Այսքան միայն կարող եմ ասել,– եզրափակեց Հրանդը,– որ ներկայիս ես մի քիչ աւելի պայծառատես եմ, ուզում եմ ասել, տիրող դրութիւնն աւելի լաւ եմ տեսնում և հասկանում, քան այն ժամանակ, երբ մենք Երևանումն էինք և հեռու Վասպուրականից:

– Ների՛ր ինձ, սիրելի՛ ընկեր, ես քեզ հասկանալ դժւարանում եմ: Մեր իրարուց բաժանւելուց յետոյ՝ երկու տարւայ ընթացքում, դու միանգամայն փոխւել ես: Մտքերիդ ու դատողութեանդ հորիզոնն ընդարձակւել է: Խնդրեմ, մի՛ պատրաստիր բողոքելու: Ինչ որ ասում եմ, մի՛ կարծիր, որ կատակ կամ գովասանք է, քո նկատմամբ միշտ անկեղծ և յարգալից եմ եղել:

– Ինչքան կարողացայ քո ասածներից եզրակացնել, դա այն է, որ մեր Վասպուրականի ապագայի ապահովութեան մասին կասկածոտ և թերահաւատ ես: Արդեո՞ք հանած եզրակացութիւնս ճիշտ չէ:

– Ցաւ ի սիրտ պիտի յայտնեմ, որ եզրակացութիւնդ միանգամայն ճիշտ է,– պատասխանեց Հրանդը:

***

Հրանդն արդէն վճռել էր Երևան վերադառնալ: Նա ինձ յայտնեց, որ իրեն յաջողւել էր իրենց տանը ինքնապաշտպանութեան օրերին թաքցրած մեծ քանակութեամբ բրդեղէն և կերպասեղէն կտորները ծախել Քաղաքամիջի վաճառականներից մէկին, իր կարծիքով, լաւ արժէքով: Նա չափազանց ուրախ էր, որ իր ձեռքը բերած գումարով Երևանում հօր հետ միասին կարող են նոր գործի հիմք դնել և իրենց ընտանիքի տնտեսական վիճակն ապահովել: Ի վերջոյ, նա ինձ ստիպեց որ չհրաժարւեմ ինձ նւիրած մի զգեստի կտորը վերցնելուց: Այդ բացառիկ նւէրի համար ընկերոջիցս չափազանց շնորհակալ եղայ:

Հրանդի մեկնումի որոշումն իմ տխրութիւնների վրայ մի նոր տխրութիւն ևս աւելացրեց: Վանի իմ նախկին բոլոր ընկերներից միայն այս մէկն էր մնացել: Նա էլ շուտով ինձնից հեռանալու էր: Տխրալից և դաժան բաժանում...: Միայնակ մնալու միտքը ինձ սարսափեցնում էր:

Բարեբախտաբար, այդ օրերին հօրիցս մի նամակ ստացայ, որով նա իր վերադարձի որոշումն էր յայտնել ինձ: Այգեստան վերադարձիցս անմիջապէս յետոյ Ս. Յակոբայ և Յանկոյսներ եկեղեցիների նախկին ծխականների խնդրանօք հօրս նրանց՝ քահանայ ունենալու մասին գրել էի:

Այգեստանի Ս. Յակոբ և Յանկոյսներ թաղամասերի վերադարձող և վերաբնակող հայրենակիցները ցանկանում էին եկեղեցի և քահանայ ունենալ: Ստիպւել էի նրանց առաջարկ պահանջին ընդառաջել և այդ առթիւ գրել հօրս:

Ինձ շատ զարմացնող պարագան հօրս անվարան և անմիջական համաձայնութիւնն էր: Առաջին նահանջին՝ ճանապարհին, նա աննկարագրելի տանջանքների էր ենթարկւել և մահւան ճանկերից հրաշքով էր փրկւել: Մի՞թէ այդ բոլորը նա այդքան շուտ մոռացել էր: Չէ՛, անկարելի էր, որ այդ անիծեալ Գողգոթայի ճանապարհի բոլոր սոսկալի չարչարանքները մոռացած լինէր: Գիտէի նաև, որ Ղարաքիլիսէի Գիւլիզար գիւղում նրան գնահատում և յարգում են: Նրա կեանքն այդ խաղաղ վայրում անվրդով և հանգիստ էր: Ուրեմն ի՞նչն էր նրան ստիպել այդպէս հապճեպ համաձայնութիւն տալու:

Բացի հայրենաբաղձութեան, հայրենի հողի ու օջախի անչափ կարօտից՝ մեր Այգեստանի ծառ ու ծաղիկի, զնգան աղբիւրների և աղամանդանման ջրերի այրող և հոգեմաշ կարօտը, ուրիշ ի՞նչ կարող էր պատճառ լինել...:

ՁԱՐԹՈՆՔԻ ԵՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

1917 թւի ապրիլ ամիսն էր: Ճիշտ երկու տարի առաջ՝ այդ օրերին, Վասպուրականի ժողովուրդը կենաց և մահու անմման և հերոսական պայքար էր մղել իր նւիրական հայրենի հողը բռնագրաւողների և իրեն մորթոտել և խեղդամահ անել ցանկացող անգութ թշնամու դէմ: Հայ բնակչութիւնը, իր խիզախ և անվեհեր զաւակների կամաւոր և հերոսական անձնազոհութեան շնորհիւ, յաջողել էր հրաշք կատարել և տասնեակ հազարաւոր հայրենակիցների կեանքը փրկել:

Ցարական վարչակարգը տապալւած էր: Նրան փոխարինել էր Կերենսկու կառավարութիւնը: Տաճկահայաստանի գրաւած հողամասերի համար զօրավար Աւետիանովի գլխաւորութեամբ մի առանձին կոմիսարութիւն էր նշանակւած: Աւետիանովի քաղաքացիական օգնական էր նշանակւած հայազգի բժիշկ Զաւրեանը:

1917 թւի մայիսին կատարած մօտաւոր ստուգումը պարզեց, որ մինչ այդ թւականը Վասպուրական ներգաղթած հայերի թիւը հասնում էր 25 հազարի:

Վանում գործող հայկական ընկերութիւնների և քաղաքական, հասարակական ու կուլտուրական զանազան կազմակերպութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ Այգեստանի Խաչ-փոդոցի վրայ գտնւող Հայկ. բարեգործական ընկերութեան Վանի կենտրոնատեղում մի համաժողով գումարւեց: Խրախուսիչ գեղեցիկ ճառեր խօսւեցին: Զարթօնքի և վերաշինման յուսալից ծրագիրների մասին մանրամասն բացատրութիւններ տրւեցին:

Այս համագումարի իսկական նպատակը Վանի ժամանակաւոր Վարիչ մարմնի վաւերացումն էր, որ և բաց քւէարկութեամբ կատարւեց: Այս ժամանակաւոր մարմնի մէջ տեղ էին տւել կուսակցութիւնների ներկայացուցիչներին: Ի վերջոյ, որպէս եզրափակում, նորից ճառեր խօսեցին, և երջանիկ, ազատ ու ինքնավար կեանքի ոգևորիչ շատ խոստումներ տրւեցին:

***

Կեանքը ձգտում էր իր բնականոն հունի մէջ մտնել: Ամենուրեք նկատւում էր եռ ու զեռ: Գործի էին անցել խանութպաններ, արհեստաւորներ, մեծ ու փոքր առևտրականներ, սրճարաններ և գազինօներ: Նորոգւում էին քանդւած ու այրւած տները, և Այգեստանի՝ փառքն ու պարծանքը կազմող այգիները վերամշակւում և կանաչում էին:

Հիւանդանոցների, բուժարանների և ճանապարհների առողջապահական կայանների գործերը կանոնաւորւում էին: Վերաբացւել էին շուրջ քսան տարրական դպրոցներ: Բացւում էին գրատուն-ընթերցասրահներ: Մաքրւում էին աղբիւրների ընդգետնեայ և բացօթեայ ճանապարհները: Այգեստանը ձգտում էր իր նախկին սքանչելի և թովիչ տեսքը վերստանալ:

Ներգաղթող հայրենակիցների վերադարձը դիւրացնելու նպատակով Երևանի առաջնորդարանի և հայկական ընկերութիւնների կողմից նրանց վկայականներ էին տրւում: Ներգաղթողների կենսամթերքի, առողջապահական օգնութեան և անձի ապահովութեան համար Իգդիր-Վան գծի վրայ Գէօլու, Ճանիկ, Բերկրի, Սօուկ-Սու և Սավալի գիւղերում, իսկ Խոյ-Վան գծի վրայ Արճակում, Սարայում, Կոթուրում (Կոտոլ) և Խոյում հիմնւել էին սննդակայան-պահականոցներ: Վերոյիշեալ կէտերում ներգաղթողները գիշերում, հանգստանում և անձնագլխի հաշւով ստանում էին որոշւած անհրաժեշտ պարենաբաժինը: Այդ կէտերում զինւորական պահականոցներ էլ գոյութիւն ունէին: Սրանք ներգաղթողների ֆիզիկական անվտանգութիւնն ապահովելու պարտականութիւնն ունէին:

Մեծ բախտաւորութիւն էր նաև այն պարագան, որ պատերազմի վտանգալից այդ օրերին, բոլոր այդ պահականոց-սննդակայանները հեռախօսով կապւած էին Վանի վարչական կենտրոնի հետ:

Գիւղացիութեանը քաջալերելու նպատակով գործ էր դրւում անխնայ ճիգ ու ջանք: Բարեգործական ու Քաղաքների միութիւնը գիւղացիների անհրաժեշտ գործիքները Թիֆլիսից, իսկ լծկան և կաթնատու անասուններն ու սերմացու ցորենն ու գարին Խոյից շարունակ փոխադրում էին Վասպուրական: Աշնան և մանաւանդ գարնան ցանւած արտերը կանաչում և ծփում էին: Գիւղացիները հրճւում էին և ոգևորւում, որ ի վիճակի են եղել բազմաթիւ և բազմատեսակ զրկանքներից և տառապալից ու սովատանջ օրերից յետոյ ականատես լինել իրենց մշակած արտերի բեղուն արգասաւորման:

Գիւղացիութիւնն իր հայրենի հողին ու օջախին սրտապինդ կապելու ուղղութեամբ ոչ մի ջանք չէր խնայւում: Բոլոր գիւղական կենտրոնների համար հիւսներ, երկաթագործներ, հիւանդապահներ և նոյնիսկ ուսուցիչներ ուղարկեցին:

Հայ գիւղացիութեան կողքին ապրող և նրա վիճակն ու ճակատագրին ենթարկւած ասորի և եզիդի փոքրամասնութիւնները հայկական կազմակերպութիւնների օժանդակութիւններից անմասն չմնացին: Նրանց էլ անխտիր օգնութիւններ ընծայւեցին:

Դժբախտաբար, մեր դարաւոր թշնամու մշտատև գրգռութիւններին ենթարկւած քիւրդ լեռնաբնակ ցեղերը մեզնից մի տեսակ խորշում էին և մեզ հետ հաշտ ու եղբայրաբար ապրելու անկեղծ ցանկութիւն չէին յայտնաբերում:

Նրանց հետ բարեկամական կապեր հաստատելու փորձեր էլ կատարւեցին, բայց ափսո՜ս, որ

սպասուած արդիւնքը չստացուեց: Նրանք մեր Վասպուրականը համարեա առել էին օղակի մէջ: Ապրում էին Մոկսի, Շատախի, Գեաւաշի և Խօշաբի շրջաններում, ինչպէս նաև Սիփանի ստորոտներում և Զիլանի ձորերում: Նրանց գլխաւոր բնակաւայրը Պարսկաստանի սահմանագլխին երկարող լեռնաշղթան էր:

1918 թի մարտի վերջին նահանջին այս լեռնաշղթայում ապրող Սմկօն, յարձակուելով մեր նահանջի ճանապարհի վրայ, մեր դժբախտ գաղթականներից հարիւրաւորների գազանաբար կոտորեց:

ՀՕՐՍ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Իմ շատ սիրելի ընկեր Հրանդը ապրիլի վերջին վերադարձաւ իր ընտանիքի մօտ՝ Երևան: Մեր բաժանումը չափազանց սրտաբեկ էր: Երկար ողջագուրումներից յետոյ արցունքոտ աչքերով իրարից բաժանուեցինք: Երեք նամակներ, մէկը՝ քրոջս, միւսը եղբօրս՝ Արմենակին և երրորդը՝ Ալիսին գրուած, յանձնելով Հրանդին, խնդրեցի Երևան հասնելուն պէս ուղարկել իրենց հասցէատէրերին:

Մի շաբաթ յետոյ անսպասելիօրէն և աննկարագրելի հրճւանքով հօրս դիմաւորեցի: Ծայրայեղ ուրախութիւնից և հարազատ զգացման զեղումից՝ նրա արցունքի՝ առատօրէն թափւող կաթիլները, այտերից գլորուելով, անհետանում էին իր թաւ, երկար և շէկ մօրուքի մէջ: Ինձ առնելով իր գիրկը և բազմաթիւ անգամներ համբուրելով՝ ասաց.

– Վերջապէս, մեռնելուց առաջ Աստուծոյ կամօք մէկ անգամ ալ հայրենիքս՝ իմ հարազատ և սիրելի Այգեստանը տեսնելու արժանի եղայ: Թէ՛ արքուն և թէ՛ քնած վիճակում կերազէի անոր քաղցր տեսարանները: Ամէն անգամ ջուր խմելիս մեր Մոխրի քեահրիզը կը վերյիշէի և անոր կարօտը կը քաշէի: Երազներուս առանցքի շուրջը անվերջ մեր տունն ու այգին կը պատէին: Տարօրինակ, յամառ և անվերջ ցանկութիւն ունէի գոնէ անգամ մը ալ իմ թողած տները, բաղերն ու մանաւանդ Ս. Յակոբայ եկեղեցին տեսնելու: Չեմ գիտեր՝ աս ի՞նչ տարօրինակ սէր ու կարօտ է:

– Սիրելի՛ հայր, զարմանալու ոչինչ չկայ: Այդպիսի կարօտի ենթարկւում են բոլոր հայրենասէրները: Այդ հայրենակարօտի զգացումը երբեմն այնքան ուժեղ է լինում, որ կարող է իր ենթակային մաշեցնել և չորացնել: Չեմ կարող ասել՝ ուրիշների մէջ որքան ուժեղ է այդ զգացումը, բայց, հաւանաբար, մեզ՝ վանեցիներիս համար համարեա ընդհանրական է: Լա՛ւ, շատ ժամանակ ունենք նորէն այս խնդրին անդրադառնալու: Ամենաառաջին հերթին ինձ հետաքրքրում է մերոնց վիճակը: Ինչպէ՞ս են Արաքսին ու Կարապետը: Արմէնից ի՞նչ լուր:

– Իմ մեկնումից մի քանի օր առաջ Արմենակից նամակ ստացայ: Իր առողջական վիճակէն դժգոհ է: Նիւթական վիճակն ալ այնքան գոհացուցիչ չէ: Գանգատուած էր, որ կարգին բժշկելու հնարաւորութիւն չունի: Քո՝ նրան թողած գումարն ալ ծախսած, վերջացուցած է: Դժբախտաբար, ո՛չ ես, ո՛չ ալ Կարապետ եղբայրդ չկարողացանք անոր օգնել: Մեր վաստակով մեր ծախսերը դժուարութեամբ կը հոգայինք: Այս պարագան ինձ համար շատ մեծ մտահոգութիւն է դարձած: Աստուած թող անոր երիտասարդ կեանքը խնայէ: Ինչ կը վերաբերի քրոջդ, առողջութեամբ լաւ է, բայց քո կարօտը շատ կը քաշէ: Գիշեր-ցերեկ քեզ կը յիշէ ու քո կարօտով կայրուէ: Շատ խնդրեց իրեն այստեղ բերել: Հազիւ կարողացայ համոզել, որ մինչև իմ Վան հասնելը համբերի: Խոստացայ անոր վերադարձի հնարաւորութեան մասին անմիջապէս գրել իրեն: Վերցրո՛ւ այս նամակը և կարդա՛: Ամբողջ երկու օր շարունակ անոր գրութեամբ զբաղուած էր: Մի քանի անգամ գրեց և պատռելով կրկին և կրկին գրեց: Այսքան միայն կարող եմ ըսել, որ քեզնից բաժանուած ըլլալու համար շատ դժգոհ և անչափ տխուր է: Երբեմն ալ առանձնանալով, թաքուն կը լացէ:

– Նա միանգամայն իրաւացի է: Նրա վերաբերմամբ ես եղել եմ անարդար և եսական: Իմ գործերիս դասաւորման մէջ նրա մասին բոլորովին չեմ անդրադարձել: Փոքր հասակից սկսած, մայրազուրկ և անօգնական՝ նա իր բոլոր յոյսերն ինձ հետ է կապել և միշտ իմ օգնութեանն է ապաւինել: Անմայր և կէս որբ, մի անչափահաս երեխայի և մանաւանդ աղջիկ երեխայի համար մեր ապրած պայմաններում չափազանց դժուար է: Խե՜ղճ քոյր, սիրելի Արաքսիս ես իրաւունք չունէի նրան այսպէս մենակ, իր ճակատագրին թողնելու: Ա՜խ, այս անիծեալ պատերազմն էլ վերջանալիք չունի, որպէսզի կարողանանք մեր բախտի դասաւորութիւնն ստուգել:

– Իսկ մեր տունն ու այգին ի՞նչ վիճակի մէջ են, առանձնայատուկ հետաքրքրութեամբ հարցրեց հայրս: Վերադարձէն յետոյ մեր տա՞նը, թէ՞ ուրիշ տեղ կը բնակուիս:

– Կը ցաւիմ յայտնելու, հա՛յր, որ մեր տունը՝ կիսափուլ, իսկ այգին համարեա չորացած է: Ես բնակւում եմ ընկերոջս՝ Հրանդենց տանը: Հրանդը վերադարձել էր Վան, բայց ափսոս մի քանի օր առաջ ստիպւած վերադարձաւ Երևան: Նա իր ընտանիքին խոստացել էր անմիջապէս վերադառնալ:

– Մեր տան և մանաւանդ այգու մասին հաղորդած լուրը չափազանց ցավալի է: Ուրեմն մեր ամբողջ ընտանիքի գուրգուրանքի և ուրախութեան աղբիւրը, մեր սիրելի և շէն այգին ու որթատունկերը չորացած են...

– Ափսո՜ս, հազար ափսո՜ս...:

Հօրս առաջնորդեցի ընկերոջս տունը: Նրան յայտնեցի, որ եթէ ցանկանայ Յանկոյսներ թաղամասին և այդ շրջակայքի իր ծխական-հաւատացեալներին աւելի մօտ լինել, մի քանի օրից կարող ենք մեր թաղամասը փոխադրուել: Հօրս յայտնեցի

նաև, որ եղբօրս՝ Կարապետի աներեղբայրը՝ Գաբրիէլ աղան ինձնից շատ է խնդրել իրենց մօտ տեղափոխուել, և ես նրան խոստացել եմ այդպէս անել:

ՄԵՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՂՏՈՒԿԸ

Մենք վերաբնակուեցինք Գաբրիէլ աղենց տանը, մեր նախկին փողոցում: Հայրս սկսել էր իր քահանայական պաշտօնը կատարել և ամէն օր առաւօտեան ու երեկոյեան Յանկոյսների եկեղեցին գնալ և վերադառնալ: Քահանայ լինելուց բացի՝ նա ջերմեռանդ հաւատացեալ էր: Յանկոյսների ծխականների թւին աւելացել էին նաև նախկին Ս. Յակոբայ, Խաչ-փողոցի, Մեծ ու Փոքր Քեանդրիչների հայ լուսաւորչական հաւատացեալները: Ինչքան կարող եմ յիշել, թէ՛ հայրս և թէ՛ նրա հետ գործ ունեցող հաւատացեալները փոխադարձաբար իրարից միշտ գոհ էին:

Ես էլ գործի էի Վանի զինուորական պահեստապետի պաշտօնով: Գործի բնոյթից շատ էլ գոհ չէի: Համարեա միշտ զբաղած էի: Չգիտեմ ինչու, համոզուած էի, որ այդ գործի շարունակումն ինձ համար որևէ յառաջադիմութիւն ապահովել չի կարող:

Շատ էի ափսոսում, որ այս տաղտկալի և միապաղաղ գործին քաղաքապետարանում ինձ առաջարկուած քարտուղարութեան պաշտօնը զոհել էի: Յաճախ մտածում էի հրաժարուել, բայց ամաչում էի: Բուլղարացին իմ նկատմամբ մեծ վստահութիւն և յարգանք էր տածում: Նրա բարոյական ազդեցութիւնն ինձ մի տեսակ կաշկանդել էր:

Տարօրինակօրէն մենակ և լքած էի զգում ինձ: Նախկին ընկերներից և ոչ մէկը կար: Բարեկամների շրջան, բացի Մարօենց ընտանիքից, չունէի, և զարմանալին այն էր, որ չէի էլ փորձում ունենալ: Իմ կորցրած սիրելիների ափսոսանքը հոգիս ճնշում էր մղձաւանջի պէս: Նախկին իմ կենսունակութիւնից և ոգևորութիւնից կարծես ոչինչ էր մնացել:

Ամբողջ ազատ ժամերս ընթերցանութեան էի յատկացրել: Կարդում էի, ինչ որ ձեռքս էր ընկնում: Գրքեր քիչ էին ճարւում: Նախկին գրատներն ու գրապահեստները ցրիւ էին եկել: Վերջին ժամանակները Մեծ-Քեանդրչու վրայ շատ աղքատ գրապահեստով և Ազատութեան Լոյս անունով մի գրադարան էր բացուել: Ընթերցանութեան գիրք ունենալու համար յաճախ դիմում էի օր. Աննա Քոչարեանին: Այդ ժամանակ նա տարրական դպրոցների վարիչն էր և համարեա միշտ և մասնաւոր սիրալիրութեամբ իր ունեցած գրքերից տրամադրում էր ինձ:

ԵՐԵՔ ՆԱՄԱԿՆԵՐ

Արաքսու նամակը, որ ստացել էի հօրս միջոցով, բաւական երկար և բովանդակալից էր: Նա գրում էր.

«Սիրելի և թանկագի՛ն եղբայր, քո մեկնումից ի վեր քեզնից որևէ տեղեկութիւն չունեմ: Կարծում էի Վան հասնելուց անմիջապէս յետոյ հնարաւորութիւն կունենաս գոնէ մի քանի տող գրելու: Բայց բոլոր իմ սպասումներն իզուր անցան: Մէկ ու կէս ամսից, դեռ մի քիչ էլ աւելի ժամանակ է, ինչ Գիւլիզարից մեկնել ես: Իմ նկատմամբ դաժան այս անտարբերութիւնը շատ զարմանալի և տարօրինակ է:

Մեկնելու ժամանակ ինձ վստահեցրիր, որ Այգեստան հասնելուց անմիջապէս յետոյ կը գրես և տիրող դրութեան ու պայմանների մասին ինձ կը տեղեկացնես, և եթէ հնարաւոր լինի, հօրս նման ինձի էլ վերադառնալու իրաւունք կը տաս: Ճիշտն ասած, եղբա՛յր, քեզնից շատ վշտացած եմ: Ո՛չ վիճակովս ես հետաքրքրուած և ո՛չ էլ վերադարձիս համար գոնէ մի տող իսկ գրած ունես:

Ինձ թւում է, որ միակ քրոջդ նկատմամբ քո նախկին ջերմ ու բիւրեղանման սէրը կորցրել է իր ուժն ու թափը: Պատճառը բացատրել անկարող եմ: Յաճախ պատահում է, որ անտանելի սրտնեղութիւնից լաց եմ լինում:

Հօրս շատ թախանձեցի ինձ էլ իր հետ Վան վերադարձնել: Բայց նրան համոզել չկարողացայ: Նա ինձ միշտ միևնոյն պատասխանն էր տալիս. «Եթէ նպատակայարմար լինէր քո վերադարձը, եղբայրդ անպատճառ կը գրէր: Նշանակում է գոյութիւն ունեցող պայմանները նպաստաւոր չեն: Ինչու՞ ուրեմն զուր տեղը քեզ փորձանքի մատնենք»:

Հօրս մեկնելուց երկու շաբաթ առաջ մեր Աւանց նաւահանգստի երիտասարդներից մէկը, որ մի քանի անգամ եկել էր մեզ մօտ՝ Գիւլիզարդ, ինձ հետ ամուսնանալու առաջարկ արեց: Նրան պատասխանեցի, որ ցանկութիւն ունեմ եղբօրս մօտ մեր երկիրը վերադառնալ: Ամուսնանալու համար դեռ շատ ժամանակ ունեմ: Մէկ խօսքով, մերժեցի: Մնացեալը հաւանաբար հայրս քեզ կը պատմի:

Նորից խնդրում եմ ինձ անմիջապէս գրել: Անհամբեր սպասում եմ քո թոյլատուութեանը իմ սիրելի ու հարազատ հայրենիքը վերադառնալու համար: Մեր տունն ու այգին, այդ կանաչազարդ ու պտղալից այգին, մեր Մոխրի քեահրիզի աննման ջուրը և վերջապէս իմ անգին քրոջ՝ Մարօին ոչ մի կերպ չեմ կարող մոռանալ: Ջերմագին և կարօտալից համբոյրներով՝ քեզ միշտ և անչափ սիրող և քո սիրոյն ընդմիշտ կարօտող քոյրդ՝ Արաքսի»:

***

Հրանդի Երևան գնալուց յետոյ, մի ամիս չանցած, միաժամանակ երկու նամակ ստացայ: Թիֆլիսից էր: Մէկն Ալիսից, իսկ միւսը՝ իմ եղբայր Արմենակից:

Նկատի ունենալով այն պարագան, որ սովորական նամակներին այդ ժամանակներում առանձին ուշադրութիւն չէր ընծայւում և շատ յաճախ հաս-

ցէատիրոջ ձեռքը չէր հասնում, յարմար էի համարել Բուլղարացու հասցէն տալ, ներքևում աւելացրած լինելով յանձնել Սարհադեանին: Այս միջոցը նպատակայարմար էր: Ցանկութիւնս իրականացել էր, և գրածս երկու նամակների պատասխանն էլ տրուած հասցէով ստացուել էր:

Սրտատրոփ և դողդոջուն ձեռքերովս իրար յետևից բացի նամակները: Եղբօրս գրածը շատ աւելի համառօտ էր Ալիսի նամակից: Այդ իսկ պատճառով նախընտրեցի առաջ եղբօրս նամակը կարդալ: Նա գրում էր.

«Շատ սիրելի՛ եղբայր, նամակդ կարդացի անհուն երջանկութեան զգացումով: Ուրախութեանս չափը նկարագրել չեմ կարող: Պիտի խոստովանեմ, որ նամակիդ ստացումը ինձ համար միանգամայն անսպասելի էր: Գիտեմ, որ պատերազմի այս դժոխային օրերին թշնամու ճակատի մօտիկ տեղերից՝ այն էլ գրաւեալ հողամասերից, նամակները հասնում են դժուարութեամբ և ուշացմամբ: Զինուորական նամակներից բացի՝ բոլոր միւս նամակներն ու գրութիւնները գրաքննութեան բովից անցնելուց յետոյ յաճախ այրւում կամ էլ անհետանում են:

Իմ առողջական վիճակը քեզ շատ է հետաքրքրքրում: Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել: Հարազատ և ազնի՛ւ եղբայր, քո մասնաւոր ուշադրութեանդ համար չափազանց շնորհակալ եմ: Քո՝ ինձ նուիրած գումարով, եթէ չկարողացայ կատարելապէս բուժուել, բայց ինձ յաջողուեց հիւանդութեանս թափը կոտրել: Գոնէ այս կարծիքն ունի ինձ հերթականօրէն քննող և բուժող բժիշկը:

Նա մի քանի օր առաջ ինձ վստահեցրեց, որ հիւանդութիւնս վտանգաւոր շրջանի հասած չէ, և մեծ հաւանականութեամբ վերջնականապէս կը բուժւեմ, եթէ միայն կարողանամ ինձ աւելի հանգիստ պահել, լաւ սնունդ ստանալ և մանաւանդ առայժմ ամուսնանալու համար չմտածել: Ի՞նչ ես կարծում, սիրելի՛ եղբայր, ես մի կատարեալ դժբախտ մարդ չե՞մ... Գիտե՞ս, որ աշխատանքս երկարատև և ծանր է: Խնայած դրամ չունեմ, որ կարողանամ թէկուզ ժամանակաւոր հանգիստ առնել և մանաւանդ յանձնարարած լաւ սնունդը ստանալ: Իմ հարևան վրացի աղջիկն ու մայրը կարեկցում և հնարաւորութեան սահմաններում ինձ օգնում են իմ տնտեսութեան և մաքրութեան վերաբերեալ գործերում:

Երկուսն էլ քեզ ջերմագին բարևում են և շատ են ափսոսում, որ դու հեռացել ես Թիֆլիսից: Նորից իմ սրտագին շնորհակալութիւններս եմ յայտնում քո հարազատ վերաբերմունքի և ուշադրութեան համար և մնում եմ սրտագին քեզ սիրող եղբայրդ՝ Արմէն»:

***

Տագնապալից և բաբախուն սրտով սկսեցի կարդալ Ալիսի՝ ինձ գրած նամակը: Բովանդակութիւնը հետևեալն էր.

«Իմ շատ սիրելի՛ Սիրաք, մի՛ զարմանայ, եթէ ես նամակս այսպէս սկսեցի: Չեմ կարող նկարագրել ուրախութեանս չափն ու սահմանը, երբ իմացայ, որ ինձ հասցէագրուած նամակը ստացել եմ քեզնից, այսինքն՝ այն երիտասարդից, որին կեանքումս առաջին անգամ լինելով՝ սիրտս անյատակ խորքերից անսահմանօրէն թէ՛ սիրել և թէ՛ յարգել եմ:

Քո՝ բոլորովին անսպասելի և հապճեպ բաժանումն ու մեկնումը շատ մեծ հարուած եղաւ ինձ համար: Երկու ամիս շարունակ անկողնում ընկած ջերմում և յաճախ զառանցում էի: Հայրս ու մայրս իրենց մի հատիկ զաւակը կորցնելու սարսափով խենթանալու վրայ էին: Անվերջ բժիշկ ու ճար և բժշկական խորհրդակցութիւն:

Տեսնելով՝ թէ՛ հայրս ու մայրս և թէ՛ բժիշկները ինձնից ձեռք քաշողը չեն, ստիպուեցի մօրս խոստովանել հիւանդութեանս պատճառը: Մօրս խնդրեցի, որ հօրս յայտնի այդ մասին, և եթէ յարմար դատեն, ինձ մեր ապրած տնից հեռացնեն, այն տնից ու սենեակներից, որում ես թէև ոչ շատ երկար, բայց և այնպէս ապրել էի իմ առաջին երջանկութեան, առաջին բիւրեղանման սիրոյ անրջային վաղանցուկ ժամերը:

Խնդիրս անմիջապէս կատարուեց: Ինձ փոխադրելով Սօչիի ամառանոցը՝ մի ամիս այնտեղ պահեցին: Մայրս, հրեշտականման մայրս, զգաց ու ըմբռնեց իմ սրտին հասած հարուածի ուժգնութիւնն և ամէն կերպ ջանաց իր մայրական բարի խորհուրդներով ինձ մխիթարել ու հանգստացնել:

Մօրս ջերմագին խնդրանքներն ու հարազատ, սրտառուչ խօսքերը բոլորովին անհետանք չմնացին: Փորձեցի վերաքննութեան ենթարկել իմ հապճեպ և համանուէր սիրոյ կարելիութիւնը: Քեզ մեղադրեցի և ապա ինձ քննադատեցի իմ կամքի անզօրութեան համար:

Վերջ ի վերջոյ եկա այն եզրակացութեան, որ մեր լռելեայն և դիւթական սիրոյ յանցանքը ծանրանում է մեր՝ երկուսիս վրայ: Փորձում եմ մտածել, բայց չեմ համարձակւում այդ բիւրեղանման սիրոյ բեկման կամ մի գուցէ ժամանակաւոր առկախման պատասխանատուն քեզ համարել:

Ներկայիս, եթէ ոչ լրիւ, բայց և այնպէս ապաքինած եմ: Սրտիս խորքերում բոյն դրած սէրը շարունակում է առկայծել: Այս տողերը գրելիս ստիպւում եմ իմ ինքնասիրութեան բողոքը խեղդել և անկեղծօրէն ու անվերապահ յայտնել, որ շարունակում եմ քեզ սիրել: Սիրելը մի յանցանք և ամօթ չէ, որ ինձ համար մի պարզ աղջիկ աշխատի թաքցնել և կեղծել ու ստել...

Նոյնիսկ մայրս, որն ինձ նման անենգ ու անխառն սիրտ ունի, ինձ սրտանց կարեկցելով, համաձայնել է իմ երջանկութեան սիրոյն իր մայրական երջանկութիւնը զոհել: Նա նոյնիսկ մինչև ինքնազոհումն է գնում. համաձայնւում է իմ բացակայութեանը, եթէ երբևէ ես ցանկանամ այդ անել:

Մայրս, իմ այդ պաշտելի մայրը, նոյնիսկ յանձնառու է եղել հօրս համոզել, որ ինձ ազատ թողնի, որպէսզի ես գամ քեզ գտնելու և քեզ հետ միասնաբար մեր ճակատագիրը տնօրինելու:

Սրտատրոփ և անհամբեր սպասում եմ պատասխանիդ, որից կախուած կը լինի իմ երջանկութիւնը կամ դժբախտութիւնը:

Ջերմագին և կարօտակէզ անթիւ համբոյրներով, քեզ միշտ սիրող՝ Ալիս»:

Նամակի ընթերցումից յետոյ հոգուս խորքում փոթորկալից յուզում պայթեց: Հապճեպ մի որոշման հետևանքով խորտակել էի մաքրամաքուր և անխառն սիրով տոգորուող մի հրաշալի աղջկայ երջանկութիւնը: Իսկ ինչի՞ համար այդ բոլորը... Եսական ձգտումների հետապնդման նպատակով ինձ յանձնել էի անորոշ ապագայի յորձանուտներին, որոնց մէջ փնտրում էի հասարակական դիրք ու փառք:

Ալիսի նամակը տասնեակ անգամներ կարդացել էի և շարունակում էի նորից կարդալ, բայց չէի կարողանում նրա պատասխանի ձևն ու անելիքիս բնոյթը որոշել:

ՆԱՄԱԿՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հօրս հետ խորհրդակցելուց յետոյ քրոջս՝ Արաքսու նամակին անմիջապէս պատասխանեցի: Նրան գրեցի հետևեալը.

«Իմ չափազանց սիրելի քո՛յր Արաքսի, շատ տեղին և նպատակայարմար է եղել, որ հայրս քո վերադարձի ցանկութիւնը չի կատարել և քեզ Վան չի բերել:

Մեր դրութիւնն այստեղ դեռ բոլորովին չի պարզուել և չի էլ կարող որոշուել, քանի դեռ պատերազմը շարունակւում է: Ճիշտ է, որ ներկայիս մենք ենթակայ չենք թշնամու անմիջական սպառնալիքին, բայց, դժբախտաբար, նա մեզնից շատ էլ հեռու չէ: Նա գտնուում է մեր Վանայ ծովակի հիւսիսում, հարաւ-արևմուտքում և արևմուտքում: Մեր՝ վասպուրականցիներիս գոյութեան ապահովութիւնը մասնաւորապէս վտանգւած է քիւրդերի կողմից, որոնք, ինչպէս գրեցի, ամէն կողմից մեզ շրջապատել են: Քիւրդերը լաւ զինուած են և ենթարկւած թիւրքերի յարատև գրգռութիւններին:

Ներկայիս մեր ինքնավար իշխանութեան կողմից այդ քիւրդերի մօտ մարդիկ են ուղարկւած, որպէսզի փորձեն նրանց հասկացնելու, որ հայերս իրենց հետ թշնամութեան որևէ պատճառ չունենք և նրանց հետ միշտ հաշտ ու բարեկամ կը լինենք, եթէ նրանց կողմից էլ նոյն ցանկութիւնն ապացուցի:

Քիւրդ ցեղապետների մօտ ուղարկւած մեր ներկայացուցիչների ամենամեծ պարտականութիւնն այն է եղել, որ նրանց հասկացնեն և համոզեն, որ հայ և քիւրդ ազգաբնակչութիւնները պէտք է անկեղծօրէն աշխատեն բարեկամանալ, որովհետև նրանք երկուսն էլ թիւրք իշխանութիւնների համար օտար և վտանգաւոր են նկատւում: Եթէ թիւրքերին այսօր յաջողւի կոտորել և բնաջնջել հայերին, վաղը հերթը կը հասնի քիւրդերին և նրանք էլ բնաջնջւելու նոյն դժբախտ ճակատագրին կենթարկւեն:

Սիրելի՛ Արաքսի, այսպէս մանրամասն գրեցի մեր ապրած վիճակի լրիւ պատկերը քեզ տալու համար: Միանգամայն համոզւած եմ, որ նամակս կարդալուց յետոյ այլևս ինձ ու հօրս մեղադրել չես փորձի: Եթէ ես ու հայրս անկարող ենք եղել Վան վերադարձնելու քո ցանկութիւնը կատարել, այդ նրա համար է եղել, որ զգուշացել ենք քեզ նորանոր վտանգների և նրա հետ կապւած ապագայ տանջանքներին ենթարկելուց:

Ինչ վերաբերւում է քո անհատական կեանքի ապագայ դասաւորմանը, այդ խնդրում ամենաառաջին հերթին վճիռ կայացնողը դու ինքդ պիտի լինես: Լաւ մտածի՛ր, առանց աճապարելու և յետոյ անելիքդ վճռի՛ր:

Քո ապագայ երջանկութիւնը քեզնից, քո եզրակացութիւնից և վճռից է կախւած: Ամուսին ընտրելու խնդիրը մարդկային կեանքի ամենաբարդ և ամենազգայուն խնդիրներից է, և իմ կարծիքով, այդ առթիւ վճիռ տուողը հէնց ինքդ պէտք է լինես: Ամուսնութեան թեկնածուիդ չեմ ճանաչում և որևէ խորհուրդ տալու անկարող եմ: Հայրս էլ ասում է, որ այդ երիտասարդին նախօրօք չի հանդիպել ու չի ճանաչում և իր հերթին որևէ կարծիք յայտնել չի կարող:

Եղբայր Կարապետը քեզ մօտ է: Այդ ընտրութեան խնդրում նա ի վիճակի է քեզ օգնելու և անհրաժեշտ տեղեկութիւններ հաւաքելուց յետոյ՝ քեզ խորհուրդ տալու: Իմ հերթին, թանկագի՛ն քոյր, նորից քեզ խորհուրդ եմ տալիս վճիռ կայացնելուց առաջ լաւ և լուրջ մտածել և մանաւանդ չաճապարել:

Միշտ քեզ անկեղծօրէն սիրող եղբայրդ՝ Սիրաք»:

Արմէն եղբօրս նամակի պատասխանն էլ անմիջապէս գրեցի: Կարեկցական արտայայտութիւններից յետոյ եղբօրս յորդորեցի ամէն պարագայում չյուսահատւել, որովհետև մարդուս հոգեկանի և մանաւանդ առողջութեան ամենամեծ թշնամին յուսահատութիւնն ու ինքնալքումն է: Խոստացայ ամենաառաջին հնարաւորութեան պարագային նիւթապէս օգնել: Խնդրեցի իր վրացի հարևան աղջկան ու մօրը շնորհակալութիւնս և մասնաւոր յարգանքս հաղորդել:

Մի քանի օրերի տատանումներից և հոգեմաշ ապրումներից յետոյ վերջապէս վճռեցի Ալիսի նամակին պատասխանել: Ջանացի անկեղծօրէն նրան հաղորդել այն բոլոր տանջալից և սրտամաշ ապրումները, որ ես նրանից բաժանւելուց յետոյ ունեցել էի: Ալիսին գրածս նամակի պատճէնը, ինչպէս նաև նրա նամակը, որպէս նիւթական մասունք,

պահել եմ մեծ գուրգուրանքով: Երևի մի օր էլ ինձ կը յաջողի, սիրելի՛ ընթերցող, քեզ հետ միասին, այդ անմման աղջկան գրածս նամակ-պատասխանը կարդալ:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԵՆՔ

Անծայրածիր Ռուսաստանում պայթել էր Հոկտեմբերեան յեղափոխութիւնը: Պատերազմը ռազմաճակատներից փոխադրուել էր ծովածաւալ երկրի ներսը:

Մեծամասնական կուսակցութիւնը հետզհետէ երկրի ղեկն առնում էր իր ձեռքը: Հրաման-հրահանգ էր տրուել ռուս զինուորներին ու նրանց հրամանատարներին անմիջապէս թողնել ռազմաճակատները և վերադառնալ տուն՝ Ռուսաստան:

Տրուած հրահանգ-հրամանը տարիների ընթացքում յոգնաբեկ ու տանջուած և ամէն որպէ սպանուելու սարսռալից վտանգն ապրած զինուորների և զինուորականների սրտիցն էր խօսում: Արտակարգ գոհունակութեամբ և հրճուանքով նրանք լքում էին ռազմաճակատները՝ իրենց տունը, իրենց ընտանիքի մօտ վերադառնալու համար: Տարբեր վերաբերմունք չէին կարող ունենալ նաև Թիւրքիայից գրաւած հողամասերի վրայ գտնուած ռուս զինուորներն ու զինուորականները: Նրանք աճապարանօք լքում էին գրաւած շրջանները և վերադառնում էին Ռուսաստան:

Ի՞նչ էր մեր վիճակը: Մեր ղեկավար մարմինները ի՞նչ կարող էին անել:

Ազգային անմման և անվեհեր հերոս Անդրանիկի ներկայութիւնը Կարնոյ շրջանում մեզ համար անսահման բախտաւորութիւն էր: Լինելով ռուսական կամաւորական գնդի հրամանատար՝ նա պիտի ենթարկուէր տրուած հրահանգին: Բայց պատասխանատուութեան բոլոր հետևանքներն իր վրայ վերցնելով՝ վճռեց չենթարկուել և մնալ գրաւած վայրերում: Հայութեան պարծանքը հանդիսացող հերոսը, մնալով Կարնոյ շրջանում, իր հայրենակիցների, բազմահազար հայերի կեանքը փրկեց:

Կար և մի ուրիշ բախտաւոր հանգամանք: Դա բնութեան անգնահատելի պարգևն էր: Ցմեռը վրայ էր հասել: Ցիւնն ու սառնամանիքը թշնամուն հնարաւորութիւն չէր տալիս զինուրական անմիջական գործողութիւններ սկսելու: Վասպուրականում վերաբնակուած ազգաբնակչութեան ֆիզիկական գոյութեան ապահովութեան և անմիջական վտանգի մասին առայժմ խօսք լինել չէր կարող: Մեր ինքնավար իշխանութեան Վարիչ մարմինը ձգտում էր հնարաւորութիւններ ստեղծել Վասպուրականի պաշտպանութեան գլխաւոր սահմաններն ապահովելու համար:

***

Ինքնապաշտպանութեան տեսակէտից մեծ կարևորութիւն ներկայացնող Ոստանի պաշտպանութիւնը յանձնուեց Լևոն Շաղոյեանին: Ոստանումն էր գտնուում նաև հայկական կամաւորական 5-րդ գունդը: Դժբախտաբար, գարնան սկզբին, գունդը ռազմական խիստ մեծ կարևորութիւն ներկայացնող այդ շրջանը թողեց:

Այդ բազմամարդ գնդից միայն երեք սպաներ՝ Համբարձում Մելքոնեան, Ռուբէն Ժամհարեան և Մ. Գասպարեան, չվերադարձան և մնացին Վասպուրականի ազգաբնակչութեանն օգնելու: Համբարձում Մելքոնեանը վերջին նահանջին ամբողջ ճանապարհին, մանաւանդ Կոթուրում և Սալմաստում, անգնահատելի նուիրածութիւն ի յայտ բերեց:

Սիարկա-Գեալիի ինքնապաշտպանութիւնը՝ Տիգրան Բաղդասարեանին, իսկ Արճէշ-Առնիս ճակատի պաշտպանութիւնը Միշա Գասպարեանին յանձնուեց:

Գրիգոր Բուլղարացու ջանքերով զինուրական ծառայութեան նախագիծը կազմուեց: Վասպուրականի երիտասարդ տղամարդիկ՝ 18-40 տարեկան, զինուրական կրթութեան և ծառայութեան կանչուեցին: Երեք ամսում շուրջ 2500 զինուրներ պատրաստուեցին և հիւսիսային ու հարաւարևմտեան ճակատներն ուղարկուեցին: Իսկ Բերկրի-Սավալի գծի պաշտպանութեան համար մի 200-նոց նորակազմ վաշտ ուղարկուեց:

Հիմնուեց նաև սպայ պատրաստելու մի դպրոց, որը երկու երեք ամսուայ կարճ ժամանակամիջոցում, դժբախտաբար, ի վիճակի չեղաւ սպասած արդիւնքը տալու: Ամէն պարագայում պարծենում էինք, որ սպաներ պատրաստելու համար դպրոց ունենք:

ՑԱՒԱԼԻ ՍԽԱԼՄՈՒՆՔ

Վասպուրականի չորրորդ և ամենավերջին նահանջը տեղի ունեցաւ 1918 թի մարտի 28-ին (հին տոմարով): Այս նահանջը, դժբախտաբար, մի ցաւալի սխալ հաշուի հետևանքով առնուազն 15 օր ուշացաւ և շուրջ եօթը հազար վասպուրականցիների կեանքի կորուստով վերջացաւ: Ամենացաւալին այն էր, որ այդ վերջին նահանջի ուշացման պատճառով երեսուն հազարից աւելի հայ ազգաբնակչութիւն, Իգդիր-Երևան վերադառնալու հնարաւորութիւնից զրկուած լինելով, չկարողացաւ իր հայրենակիցների մօտ վերադառնալ: Այդ բազմութիւնը զուր և անտեղի օտար երկրներ քշուեց:

Թէ ինչպէ՞ս կատարուեց այդ, յետոյ կը տեսնենք:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ, երբ թրքական ճակատը ռուսների կողմից լքուած էր, ջարդ

ու փշուր եղած թիւրք բանակների հրամանատարփաշաները, նոր շունչ ու կեանք առած, խանդավառուելով հերոսացան: Նրանք, իրենց յուսալքւած և ցանուցրիւ եկած ուժերը հաւաքելով, կատաղի մոլեգնութեամբ վերսկսեցին իրենց յարձակողականները:

Կարինում մենակ մնացած Անդրանիկն ըմբըռնում և նախատեսում էր մօտալուտ ահարկու վտանգը: Նա հերոսական ճիգեր է թափում վրէժխնդիր և կատաղած թշնամուն գոնէ ժամանակաւորապէս դիմագրաւելու համար: Այսպիսով, նա մտածում էր հնարաւորութիւն տալ Վասպուրականի ազգաբնակչութեանը հանգիստ ու անփորձ թողնելու Վան-Վասպուրականը և նորից Երևան ու Արևելեան Հայաստան ապաւինելու: Փետրուար ամսին նա Վանի Վարիչ մարմնի մօտ ուղարկեց Համօ Օհանջէսեանին և առաջարկեց Վանի ու Վասպուրականի ամբողջ ազգաբնակչութիւնը փոխադրել Երևան: Փետրուարի վերջին օրերին մեծ և սրտացաւ հայրենասէրը շտապ հեռագրով Վասպուրականի դատարկման իր առաջարկը կրկնեց: Բացի այդ՝ մի ուրիշ հեռագիր էլ, նոյնիմաստ բովանդակութեամբ, ստացուեց զօրավար Յովսէփեանից: Բայց իզուր:

Հետագայում պարզուեց, որ Վանի վերջին նահանջի ուշացումն եղել էր Երևանից ստացած կարգադրութեան հետևանքով: Երևանում մտածում էին ըստ կարելւոյն ուշացնել Վասպուրականի հայ ազգաբնակչութեան նահանջը՝ յոյս ունենալով այդպիսով պահել և Վասպուրականը փրկել անվերադարձ կորուստից:

Բայց, դժբախտաբար, Վասպուրականի կորուստը փրկելու համար նպատակադրւած միջոցների գործադրումն ուշացաւ: Երևանում որոշել էին Վասպուրականը պաշտպանելու համար նիւթական օժանդակութիւններ անել և վասպուրականցիներից մի բանակ կազմել: Այդ բանակի կազմութիւնը ուշացել էր: Ուշացած բանակը, երբ Իգդիր հասաւ և այնտեղից էլ Ղըզըլ-Դիզէ ճանապարհւեց, արդէն տեղի էր ունեցել Վանի նահանջի ողբերգութիւնը:

ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՍ ՏԱՆԸ

Վերջին նահանջի հրահանգից մի քանի օր առաջ Մարօին այցելելու գնացի: Վերադարձիցս յետոյ շաբաթը մի անգամ աշխատում էի նրանց մօտ լինել: Մարօն նախ խնդրում և իմ չհամաձայնելու պարագային պահանջում էր, որ այսինչ օրը, սովորաբար կիրակի օրերին, ճաշին իրենց մօտ գնամ:

Ճիշտն ասած, սրտի խորքից ցանկանում էի շաբաթը գոնէ մի անգամ նրանց մօտ լինել, բայց ինչպէս միշտ և ամէն տեղ, նրանց էլ անհանգստացնելուց քաշւում էի, չնայած այն հանգամանքին, որ Մարօի և թէ Գրիգորի վերաբերմունքն իմ նկատմամբ չափազանց մտերմական և հարազատ էր:

Վերջին այցելութեան օրը նորից կիրակի էր և ճաշի ժամանակ: Շատ զարմացայ, երբ տեսայ, որ Մարօն տանը չէր: Երբեք չէր պատահել, որ Մարօն այդ ժամանակ բացակայ լինէր: Նախ քան ճաշարան մտնելը՝ ծառայողին հարցրի Մարօի մասին: Նա ինձ յայտնեց, որ Մարօն 3 օր առաջ Վանից մեկնել է:

Գրիգորը, ինչպէս միշտ, այս անգամ էլ ինձ մեծ սիրալիրութեամբ ընդունեց և բացականչեց.

– Ա՜յ օղուլ, ու՞ր ես մնացած: Ինչու՞ Մարօին ճանապարհելու չեկար: Ըսենք մեղաւոր ալ չես, քանի որ անոր գնալու մասին լուր ունեցած չես: Այս անցած ուրբաթ՝ առաւօտ կանուխ, Մարօին իր երեխայի հետ ուղարկեցի Բերկրի, Նա մի քանի օր, մինչև իմ նկարագրութիւնը, այնտեղ կը մնայ: Հաւանաբար նա ստիպւած կըլլայ Երևան գնալ և մի քանի ժամանակ այնտեղ մնալ:

Այս անսպասելի նորութիւնից յանկարծակիի եկած հարցրի.

– Շատ ներողամիտ կը լինէք, եթէ ինձ թոյլ տամ դրա պատճառը հարցնելու. կուզենայի ասել, եթէ հնարաւո՞ր է իմանալ նրա այդպէս յանկարծակի մեկնելու պատճառը: Մի՞թէ մեր վիճակը վտանգւած է: Չլինի՞ նորէն փախչելու, նահանջելու վախ կայ:

Բուլղարացին տատանւում էր իմ շեշտակի հարցումին ուղղակի պատասխանելու: Կարծես մի ռոպէական ուժեղ պայքար ծնունդ առեց նրա մտքում: Ըստ երևոյթին նա չէր ցանկանում իրականութիւնը խոստովանել, բայց չէր էլ ուզում ինձ խաբած լինել: Նա չափազանց ուղղամիտ և բարեկամի հանդէպ միանգամայն անկեղծ մարդ էր: Նա յայտնեց.

– Ներկայիս մեր վիճակն այնքան էլ լաւ և ապահով չէ: Գիտես, որ ռուսական բանակը և նոյնիսկ կամաւորական գնդերը հեռացած են: Մենք ամէն կողմէն թշնամիէն պաշարւած և անոր նոր յարձակումներուն ենթակայ ենք: Մեր հայրենասէր և խիզախ Անդրանիկը մեն-մինակ դժւար թէ կարողանայ իր փոքրաթիւ զինուորական ուժերով և պահեստով լրբացած և խրոխտացած թշնամու նոր յարձակումներուն երկար ժամանակ դիմագրաւել:

Կովկասէն ալ սրտապնդիչ լուրեր չեն հասներ: Ռուսական բանակներու սարսափէն ազատւած Կովկասի և մանաւանդ Բաքւի թիւրք-թաթարներն ալ խլրտումներու մէջ են: Մեր դարաւոր թշնամիները հիւսիսէն, հարաւէն և արևմուտքէն մէզի իրենց արիւնաթաթախ օղակի մէջ առած են:

Ներկայիս մենք որևէ տեղէ օգնութեան յոյս չունենք: Ապրիլեան հերոսամարտին մենք կը կռւէինք, կը պաշտպանւէինք և վստահ էինք, որ ի վերջոյ մեզ օգնութեան կը հասնեն: Դժբախտաբար, ներկայ պայմաններու մէջ մենք որևէ տեղէ օգնութեան յոյս չունենք: Կովկասի թիւրք-թաթարներն ալ մեր Կովկասի հայ ազգաբնակչութեանը նեղել սկսած են: Անոնք իրենց սպառնական ռռնոցներն ու ատամկրճտուքը չեն կարող թաքցնել: Մեր հայրենակից-

ներու նկատմամբ նրանց վերաբերմունքը միանգամայն թշնամական է:

– Եթէ մեր դրութիւնը այդքան լուրջ է,– վարանմունքով պատասխանեցի ես,– ինչպէ՞ս կարող ենք մեր այս փոքրաթիւ ուժերով մեզ սպառնացող վտանգը դիմագրաւել: Այդ մասին ի՞նչ էք մտածում: Եթէ յամառենք մնալ, մեր այս յոգնաբեկ, հալ ու մաշ եղած գոյութիւնը արկածի ու դժբախտութեան ենթարկած չենք լինի՞:

– Միանգամայն իրաւացի ես, սիրելի՛ բարեկամ: Այդ մասին մեր Վարիչ մարմինը երկու կարծիքի է: Առանց մանրամասնութեան մէջ մտնելու ըսեմ, որ ոմանք այն կարծիքին են, որ մենք ստիպուած ենք Վանէն և ամբողջ Վասպուրականէն մեր անզէն ու անպաշտպան ժողովուրդն անմիջապէս հեռացնել և Իգդիրի մօտակայ շրջանները բնակեցնել, իսկ ուրիշները կը պնդեն անոնց ուղղակի Երևան դրկել ու անոնց օգնութեամբ Երևանի ապագայ դիմադրութիւնն ապահովեր: Վերջապէս, մի մասն ալ այն կարծիքին է, որ Վասպուրականը պարպելով և ազգաբնակչութիւնը հեռացնելով՝ մենք վերջնականապէս կորցրած կըլլանք մեր նախկին և ապագայ հայրենիքը, որու ազատագրութեան համար հազարաւոր հայեր իրենց ջահէլ ու ջիւան կեանքն են զոհաբերած:

Ի միջի այլոց ըսեմ նաև, որ Վասպուրականի անզէն ժողովուրդը Վանէն հեռացնելու պահանջը մեզ ամէն կողմէ հասած է: Անդրանիկը Կարնէն, մեր հայկական բանակներու հրամանատար զօրավար Սիլիկեան Էջմիածնէն, Ապահովութեան խորհուրդը Երևանէն, մէկ ամսանէ ի վեր քանիցս պահանջած են, հնարաւորին չափ շուտ և օր առաջ, մեր անզէն ազգաբնակչութիւնը Կովկաս վերադարձնել:

Անհատապէս ես այս վերջին տեսակէտին հակառակ չեմ, Վարիչ մարմնի անդամներէն երկու ուրիշներ ալ ինձ հետ համակարծիք են:

Բուլղարացին այդ երկուսի անունը յիշատակել չուզեց, բայց ես կասկած չունէի, որ այդ երկուսից մէկը Վանի քաղաքագլուխ Թէրզիբաշեանն էր:

ՎԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԱՀԱՆՋԸ
Մաս Բ

1918 թի մարտ ամսի 28-ին (հին տոմարով)՝ երեկոյեան ժամի 6-ին, երբ արդէն մութը սկսել էր պարուրել, հազիւհազ վերաշնչել և վերաշինել սկսող չքնաղատեսիլ մեր Այգեստանի ազգաբնակչութիւնը քաղաքի գլխաւոր փողոցների պատերին փակցուած հետևեալ աղէտաբեր հրահանգը կարդաց.

«Հայրենակիցնե՛ր, Վարիչ մարմնի այս կէսօրից յետոյ կայացած վճռի համաձայն՝ հրահանգւում է անմիջապէս թողնել քաղաքը և շուտափոյթ նահանջել դէպի Ճանիկ: Ամէն կերպ ջանացէ՛ք մինչև վաղ առաւօտեան Ճանիկ հասնել: Հետագայ կարգադրութեան մասին կը տեղեկացուի Ճանիկում»:

Առաջին մեծ նահանջի ողբերգութիւնը կրկնւում էր:

Տրուած հրամանի շտապողական բնոյթն ազգաբնակչութեանը շփոթեցրել և շշմեցրել էր: Նորից աղմուկ, աղաղակ, թոհ ու բոհ, նզովք ու հայհոյանք: Առաջին նահանջի անկարագրելի ահն ու սարսափը ժողովրդի գիտակցութիւնը մթագնել էր:

Աճապարանքն ու խուճապը կարծես խենթացրել էր մարդկանց: Հեռանալ, փախչել ու ազատուել տեսած ու ճաշակած նախկին աղէտ-չարիքից:

Ամենքն անխտիր ենթարկւել էին սուգ ու շիւանի խելակորոյս և շնչասպառ վազքին: Այս անգամ կարծես ոչ մէկը ուրիշին ճանաչել չէր ուզում, թէկուզ այդ ուրիշն իր հարազատը լինէր:

Եւ ինչու՞, ինչպէ՞ս կարող էր մի ուրիշի մասին մտածել, քանի որ մտահոգւելու այդ հնարաւորութիւնը նրանից խլուած էր: Չէ՞ որ հրահանգւած էր 10-12 ժամւայ ընթացքում մօտ 52 կիլոմետր ճամփայ կտրել և Թիմարի գաւառը՝ Ճանիկ գիւղը հասնել: Վայը եկել էր այն թշւառին, որ այդ կարճ ժամանակամիջոցում չյաջողէր իրեն Ճանիկ հասցնել: Նա կորած կը լինէր: Գիշատիչ գայլի անճար ու անպաշտպան որսն էր դառնալու:

***

Նահանջի հրահանգը պատերին փակցւելուց միայն մէկ ժամ առաջ պարենապահեստի դռանը մեծ աղմուկ աղաղակով զինուորական տասը ֆուրգոններ կանգ առան: Դրանցից մէկը լեցուած էր զինուորներով: Նրանց գլխաւորը, արտակարգ հապճեպով ինձ մօտենալով և զինուորական բարևի կանգնելով, յանձնեց կնքուած մի ծրար և ասաց՝ պր. Բուլղարացու կողմից է:

Ֆուրգոնների և զինուորների այդպիսի հապճեպ ժամանումն ինձ բոլորովին տարօրինակ թւաց: Նախօրօք այդ մասին որևէ տեղեկութիւն տրուած չէր: Շփոթ ու անհանգիստ, ծրարը շտապ պատռեցի: Նամակի բովանդակութիւնը երկու կտորի վերածւեց: Իրար մօտեցնելով՝ կարդացի հետևեալը.

«Ընկե՛ր Սիրաք, անմիջապէս կարգադրիր ըստ կարելւոյն անհրաժեշտ և կարևոր պարենամթերքները՝ ինչպէս բրինձ, ալիւր, շաքար, իւղ և մսեղէն պահեստները ֆուրգոններին բեռցնել: Մնացածն այրել տու՛ր: Շուտով նահանջի հրամանը կը յայտարարւի: Գիտեմ, մի փոքր կուշանաս: Քեզ մօտ ուղարկած զինուորների գլխաւորին կարգադրած եմ ինքնապաշտպանութեան համար քեզ յանձնել երեքհարւածեան մի հրացան: Քո ռոճիկներու հաշւին հազար երկու հարիւր ռուբլի դրամ ուղարկած եմ, կստանաս: Կը յանձնարարեմ կենսամթերքներու վրայ խիստ հսկողութիւն կատարես: Հօրդ նստեցրո՛ւ ֆուրգոններէն մէկի վրայ: Ճանիկ հասնելէն յետոյ կը տեսնւինք: Գրիգոր»:

Ինձ յանձնւած պարենապահեստում մեծ քանակութեամբ կենսամթերք կար: Հազիւ կարելի եղաւ այդ մթերքների մօտաւորապէս մէկ երրորդ մասը ֆուրգոնների մէջ տեղաւորել: Երբ մենք գործը վերջացրինք, մեր սիրելի Այգեստանը գրեթէ դատարկւել և իր նորադարձ հարազատ զաւակներից ամայացել էր: Եղած կարգադրութեան համաձայն՝ անհուն ափսոսանքով, պարենապահեստն իր թանկագին պարունակութեամբ այրել տւի:

Մինչև ֆուրգոնները բեռցնելու գործի աւարտումը ինձ մօտ ուղարկւած ծանօթ զինուորներից մէկի աջակցութեամբ հօրս տնից բերել էի տւել ինձ մօտ: Հայրս չափազանց յուզւած և յուսահատ էր: Նրա անընդհատ ախն ու հառաչանքը սիրտս բզկտում էր: Այս անգամ նրա տանջանքների և յուսակտուր ապրումների պատճառն ես էի եղել: Ծխականների առաջարկին զիջելով՝ Վան վերադառնալու հրաւէրն ես էի ուղարկել հօրս:

***

Գիշերւայ ժամը 10-ին հօրս հետ միասին, պարենապաշարով բեռնաւորւած ֆուրգոններից մէկի վրա նստած, ճանապարհւեցինք դէպի Ճանիկ:

Ֆուրգոնավարներն իրար հետ մրցակցութեան էին մտել և իրենց յանձնուած ֆուրգոնները գլխապտոյտ արագութեամբ քշում էին: Ֆուրգոններից ամէն մէկին լծուած էին երկու զոյգ ձիեր: Ցած չգլորուելու համար իմ ֆուրգոնավարին մի քանի անգամ խնդրեցի այդ կատաղի վազքը մի քիչ դանդաղեցնել:

– Կարո՛ (այդպէս էր կոչւում մեր ֆուրգոնավարը), բարեկա՛մ, մի քիչ հանգիստ քշի՛ր: Այդպէս աճապարելու կարիք չկայ: Տեսնում ես, գաղթականների մեծ մասը մեզնից շատ յետ է ընկել: Միևնոյն է, Ճանիկ հասնելիս մենք ստիպուած ենք նրանց սպասել:

– Տո՛, խէր օրխնած, բա չե՞ս տրսնի որ խրմէն ընկերներս ինձմէ առաջ ին ընկի: Ինձ ամօթ է ընոնցմէ յետ ընկնել. էս է Ճանիկ կը խասնենք, մէ լաւ կը խանգստանանք: Մէկ էլ դէ մենք ստիպուած ենք դիսցիպլինով վարուել: Մեզ էլ 4 ամիս զինուորական դասեր տուած են: Մեզ սովորցուցած են գլխաւորին ենթարկուել, խնազանդուել: Էնոր կարգադրութիւններին էկանջ կախել: Էն է մեր խրամանատարը մէկ ֆարսաղ ընձնից էռաջ ընկածի:

– Բայց չեմ կարծում, որ քո հրամանատարը քեզ պատուիրած լինի ֆուրգոնդ այնքան արագ քշես, որ մեզ ցած գլորես կամ օդը թռցնես: Ձիերիդ սանձերի օգնութեամբ քեզ հեշտ է տեղիդ վրայ պինդ պահել, բայց մեզ համար շատ դժուար է ամբողջ ժամանակ այս ֆուրգոնի երկաթներին փաթաթած և կառչած մնալ:

Ի վերջոյ Կարօն համոզուեց մի քանի րոպէով ֆուրգոնը կանգնեցնել և իր հնարամտութիւնը գործադրել: Նա իմ օգնութեամբ ֆուրգոնի վրայ բեռցուած քսակների արանքում ինձ ու հօրս համար մի փոքր տեղ բացեց և ասաց.

– Տնաշէ՛ն, դէ մի քիչ շուտ ասած էլնիր: Դու էլի երիտասարդ ես, քեզ պահել կարող ես, բայց էս մեր խեղճ տէրհայրը դէ էնքան էլ ջահել չի, ջան էլ չունի: Էնոր խմար ճիշտ որ դժուարի գլուխ պահել: Հիմա թող էս մէշոկների արանքը նստի, պառկի, ինչպէս քէֆը կուզենայ՝ վարի: Քու գործն էլ կը խեշտացնեմ: Ձիերէն էրկուսի սանձը քեզ կը տամ, որ չասես ինձ խմար խանգիստ, իսկ քեզ դժուարի:

Ֆուրգոնի մէջտեղում բացուած արանքում հօրս պառկեցնելուց յետոյ մի քիչ հանգստացայ: Կարօի հետ էլ մի կերպ կարողացայ բարեկամանալ: Նրան համոզեցի, որ գաղթողների կարաւանի ստուար մասը յետ է մնացել, և առայժմ մեզ սպառնացող վտանգ գոյութիւն չունի, մանաւանդ, որ ինչպէս երկու ժամ առաջ ճանապարհին տեսանք, ձիաւոր զինուորների մի ստուար խումբ նահանջողների թիկունքը պահելու համար մեր յետևիցն են գալիս և մեզնից դեռ շատ հեռու են:

Առաւօտեան լուսաբացին մեր պարենապահեստի ֆուրգոններով հասել էինք Ճանիկ: Նահանջող ժողովրդի միայն մէկ մասն էլ հասել: Նրանք կազմում էին գաղթականների այն բախտաւոր մասը, որ ձիեր և ձիաքաշ սայլեր ունէր: Թիմարի և մերձակայ շրջաններից էլ բազմահազար գաղթողներ եկել էին Ճանիկ: Թէև նահանջող ազգաբնակչութեան եռապատիկ բազմութիւնը դեռ չէր հասել, բայց արդէն Ճանիկը վերածուել էր լաւայից ժայթքող մի խառնարանի: Ամէն տեղ շփոթ, իրարանցում, աղմուկ, աղաղակ, կանչ, փնտրտանք, լաց ու կոծ: Սպասողական ջղային լարուածութիւն և կոշմարային անորոշութիւն: Ոչ մէկն իր անելիքը չգիտէր:

ՃԱՆԻԿԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Այդ օրը մօտենում էր կէսօրուան: Ցարդ ու փշուր եղած նահանջող գաղթականների շարաններն իրար յետևից հասնում էին Ճանիկ, բայց նահանջողների մի ստուար մասին դեռ չէր յաջողուել տեղ հասնել: Ինչպէ՞ս կարող էին հասնել, քանի որ այդ յետ մնացողները՝ իրենց կին ու երեխաներով, 15 ժամուայ ընթացքում 50 կիլոմետրից աւելի ճանապարհ պիտի կտրէին:

Աննկարագրելի շփոթն ու աճապարանքը մարդկանց գժուեցրել, խենթացրել էր: Առաւօտեան լուսաբացին ժամանած գաղթականութեան մի մասը, որ փոխադրական միջոցներ ունէր, աճապարել էր ճանապարհ ընկնել Բերկրիի ուղղութեամբ:

Կէսօրից շուրջ երեք ժամ անց, գաղթականութիւնը իրազեկ դարձաւ չափազանց դժբախտ մի ողբերգութեան: Լուր էր ստացուել, որ քիւրդերը, Բերկրին գրաւելով, նահանջող ժողովրդի ճանապարհը փակել են:

Սուգն ու շիւանը հասաւ ծայրայեղ աստիճանի, երբ Բերկրի ուղարկուած յառաջապահ ձիաւորները վերադառնալով հաստատեցին կատարուած դժբախտութիւնը:

Գանգատի, բողոքի, հայհոյանքի, սպառնալիքների և անէծք-նզովքների հեղեղը նահանջողների բազմահազար զանգուածներն ալեկոծեց: Անսանձ փոթորկից գալարուող ծովի ալիքների նման բազմութիւնը մռնչում և գոռգոռում էր, բայց ի՞նչ օգուտ: Անսպասելի, սարսափելի ողբերգութիւնն իրականացել էր և իր մահաբեր շնչով խեղդում էր փրկուելու ազատուելու տենչացող այդ դժբախտ ժողովրդին:

***

Կարծես մեր ճակատագրի դժբախտութիւնը կատարեալ դարձնելու համար բնութեան աղետն էլ իր չարիքը սկսեց: Բարձրացաւ փոթորկախառն սոսկալի մի քամի, որից անմիջապէս յետոյ տեղատարափ անձրև սկսուեց: Բարեբախտաբար, շատ երկար չտևեց այդ աղէտը: Կատաղի փոթորկին միացած անձրևային հեղեղը մարդկանց մինչև ոսկորները թափանցելուց յետոյ կանգ առաւ:

Կարգադրուեց նահանջի ճանապարհի ուղղութիւնը փոխել և Դարաբէգ-Արճակ-Սարայի ճանապարհը բռնել: Ահռելիօրէն դժուարանցանելի էր այդ ճանապարհը: Մի քանի օր առաջ տեղացած ձիւնի հաստ շերտերը ճանապարհը լցրել և փակել էին:

Վասպուրականի դժբախտ ժողովուրդը, որն այնքան մեծ ոգևորութեամբ, հրճւանքով և ապագայ շողշողուն յոյսերով իր հարազատ երկիրն ու սիրելի տուն ու օջախն էր վերադարձել և կարճ ժամանակամիջոցում քրտնաջան աշխատանքով ու բոլորանուէր ջանքերով սկսել էր իր քանդուած բոյնը վերաշինել, ահաւասիկ անգութ բախտի բերմամբ և նամարդ թշնամու ահաբեկման սարսափով նորից թողնում էր իր հարազատ հայրենիքն ու հեռանում:

Թողնում և հեռանում էր... Նրա լեզուն պապանձւում էր այդ մտագոյժ բառերից, և նրա միտքը և ուղեղը խանձւում ու չորանում էր այդ սրտամաշ և սպանիչ իրողութիւնից: Նա՝ Վասպուրականի հալածական դարձած ժողովուրդը, չէր ուզում, չէր ցանկանում կտրուել իր հարազատ երկրից, իր պապերի դարաւոր հայրենիքից և այն էլ այնպէս, որ չկարողանայ գոնէ ապաւինել իր մերձակայ հայրենակիցների օգնութեանը, իր ազգակիցների խնամքին ու գուրգուրանքին:

Ներկայիս նա ստիպւած էր փոխել իր ճանապարհը և ապաւինել ուրիշ երկրի ասպնջականութեան, նրա գութին ու ողորմածութեանը:

Ճանիկում մեր ֆուրգոններին բեռցրած կենսամթերքների կէսից աւելին նախ զինուորներին և ապա կարիքաւոր գաղթականներին բաժանւեց: Բայց այդ հազարաւոր բազմութեան մէջ քանի՞ հոգի կարելի էր ճարել, որ իսկապէս կարիքաւոր չը լինէր: Վաղուայ անստոյգ վիճակից յուսահատ՝ այդ բազմութիւնը խելագարւել և կատաղել էր: Նա, դատողութիւնը կորցրած, չէր իմանում ի՞նչ անել: Հաշւի չառնելով ֆուրգոնների պարենապահեստը պաշտպանելու պարտականութիւն ունեցող զինուորների ներկայութիւնը՝ նրանք հազարաւորներով թափւեցին և կողոպտեցին մնացեալ կենսամթերքները: Նրանք այնքան չարացել և կատաղել էին, որ նոյնիսկ ուզում էին ջարդել պարապ ֆուրգոնները և նրանց լծած ձիերը քաշել ու տանել, բայց նրանց այդ չյաջողուեց, քանի որ զինուորները նրանց հեռացնելու և ցրելու համար ստիպւած եղան կրակել օդում:

Մարդկային գիտակցութիւնը կորցրած և կատաղութեան նոպայով բռնւած զանգւածները շատ նման են ծովի ամենօրէն մռնչացող ալիքներին, որոնք, ամէն րոպէ գահավիժելով, ճխլրտում և փշրտում են իրենց ճանապարհին հանդիպած ամէն ինչը: Նրանք մաշում և անհետացնում են նոյնիսկ լեռնաժայռերը:

Համբերութիւնից դուրս եկած այդ նահանջող զանգւածները ձգտում էին ո՛չ միայն խլել ու կողոպտել, այլև նաև ջարդել ու փշրել, խորտակել բոլոր նրանց, որոնք ի վիճակի չէին եղել իրենց անվտանգութեան և ապահովութեան մասին ժամանակին մտածել և անցեալ բազմաթիւ փորձանքներից խրատւած՝ իրենց փրկութեան համար պէտք եղածը կարգադրել:

Ամէն կողմից դժգոհութեան, գանգատի, բողոքի և հայհոյանքի պոռչտուք-աղաղակներ էին լսւում:

– Ընչի՞ խամար մեզ մինչև էսօր խաբար չարաք: Ընչի՞ մեզ Իգդիր չէք տանի: Տաճկից կուզէք ազատել մէ ուրիշի ձեռքը տալու խամար: Վայն իկէ մեր գլխին, որ ձեզ պէս առաջնորդ-գլխաւորներ ունենք:

Անկասկած, նման դժբախտութիւն և աննախանձելի դասաւորութիւն որևէ ղեկավար և գործիչ իր հայրենակիցների համար չէր ենթադրում և չէր նախատեսում, բայց տառապանքների շարանի տակ կքած, մաշւած, հիւծւած և դիմադրական ուժն ու կորովը կորցրած ժողովուրդը ի վիճակի չէր սառնարիւն դատելու և չարաղէտ նոր հարւածին դիմանալու:

Այո՛, նա անճարութիւնից և յուսահատութիւնից խենթացել և ամենքին անբարեացակամ և նոյնիսկ իր հայրենակից բարեկամին թշնամի էր համարում: Այո՛, այսպէս է խուճապի և թշնամու անմիջական վտանգին ենթարկւած նահանջող փախստականի աղէտալի վիճակն ու լքւած հոգեբանութիւնը...

ԱՐՃԱԿ-ՍԱՐԱՅ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ձիւնածածկ ճանապարհը գաղթական բազմութեան առաջ բացելու համար ֆուրգոններին, սայլերին և ձիաւոր զինուորներին կարգադրուեց անմիջապէս ճանապարհւել: Ոտքով նահանջող բազմահազար բազմութիւնը ստիպւած էր, իր ցանկութեան հակառակ, ընտրւած ճանապարհի ուղղութեամբ նահանջել: Հասած հարւածը սոսկալիօրէն անգութ էր: Բայց ուրիշ ելք չկար: Եզրակացութիւնը ճակատագրական էր: «Ով չի ցանկանում թշնամու վայրագ կոտորածին ենթարկւել, պիտի փախչի, հեռանայ, առանց մի վայրկեան իսկ կորցնելու: Վա՛յ նրան, ով չկարողանայ իրեն փրկել...»:

Ճանապարհը չափազանց անտանելի էր: Ձիւնհալքի օրեր էին: Անձրևային տեղատարափը ձիւնի շերտերը փափկացրել և խառնշկտել էր ցեխի կոյտերի հետ:

Բազմաթիւ կիլոմետրեր հապճեպով կտրած նահանջողները, յոգնած ու ջարդւած, փորձում էին իրենց անկարելին էլի մի քանի հարիւր քայլ կտրելու համար:

Մէկ կողմից յուսահատական, աղերսալից օգնութեան կանչ, միւս կողմից ուժասպառ ընկրկում, նորից ոտքի կանգնելու գերագոյն ճիգ ու ջանք: Մի ուրիշ տեղ նորից կորովի և դիմադրութեան յուսակտուր փորձ և այս ամէնի հետ խառնւած կանչ, աղաղակ, հայհոյանք, նզովք և ամենից վերջ՝ հոգևարքի սարսռալից հռնդիւն:

Արճակ-Սարայ ճանապարհի նահանջը սարսափելի էր նաև այն պատճառով, որ հետիոտն նահանջողներից ոչ մէկն ի վիճակի չէր նոյնիսկ իր հարազատին օգնելու: Փոխադրական որևէ միջոց ունեցողները խելայեղ աճապարանքով վաղուց հեռացել և առաջ էին ընկել: Ոտքով նահանջող դժբախտները կեանքի և մահւան կռի ճանկերում գալարուում և անճարօրէն տապլտկելով՝ գետին էին փռուում, նորից վեր չկենալու համար:

***

Նահանջող ազգաբնակչութեան այն մասը, որ փոխադրական միջոցներ ապահովելու բախտաւորութիւն ունէր, հասել էր Սարայ: Գաղթականների ստւար բազմութիւնը դեռ ճանապարհին էր:

Վասպուրական ներգաղթած ազգաբնակչութեան մի խոշոր տոկոսը՝ եօթը հազար շունչ, կատարուող նահանջից նոյնիսկ անտեղեակ էր մնացել: Նրանք անտէր ու անտիրական ու ցրիւ, մնացել էին Ալիւրի, Թիմարի, Բերկրիի և ուրիշ շրջաններում:

Նախ Արճակից և յետոյ Սարայից, Բերկրիի հետ հեռախօսային հաղորդակցութեան մտնելու նպատակով բազմաթիւ փորձեր կատարուեցին: Անկարելի եղաւ: Դրութիւնը րոպէ առ րոպէ ծանրանում էր: Այդ մեզ համար չափազանց դժբախտ ժամանակամիջոցին՝ 2-3 տարուայ ընթացքին, թիւրքերի հետ միշտ բարեկամ և գործակից դարձած քիւրդ ցեղախմբերի պետերը լրացնում էին տաճիկների թերի թողած չարիքն ու կոտորածը:

Շարունակ աղետալի լուրեր էին ստացուում: Աւազակապետ Սմկօն իր գլխաւոր կենտրոնավայր եղող Խօշաբից, զինուած բազմաթիւ ցեղակիցներով, դէպի Կոթուրի լեռներն էր շարժուում: Փախուստի մեր վերջին ճանապարհը կտրել և խափանել էին ուզում, ճար չկար: Ամենամեծ դժբախտութիւնը կայանում էր նրանում, որ բազմահազար նահանջողներ դեռ չէին յաջողել հասնել Սարայ:

Երկու օր Սարայում սպասելուց յետոյ կարգադրուեց դէպի Կոթուր ճանապարհուել: Նահանջողների թիւն այդ երկու օրում, Սարայի և շրջանների ասորի ազգաբնակչութեան հետ հաշուած, հասել էր երեսուն հազարի: Ասորիներն էլ մասնակից էին մեր դժբախտ ճակատագրին: Սարայից մեկնելու ամենավերջին րոպէներին, հրաշքի դասաւորութեամբ, Լևոն Շաղոյեանը և գնդապետ Մելքոն Գասպարեանը իրենց զինակից մի խումբ ձիաւորների հետ հասան Սարայ և միացան մեզ: Լևոնը վիրաւորուած էր, և նրան փոխադրելը շատ մեծ դժուարութեամբ էր գլուխ եկել:

Շաղոյեանը, Մելքոնեանը և Գասպարեանը իրենց զինուորների հետ, որոնց մեծ մասը հայոց-ձորցի և շատախցի էին, Վասպուրականի հարաւ-արևմըտեան ճակատում՝ Ոստանում, հերոսական դիմադրութեամբ կարողացել էին թշնամու յարձակման անմիջական վտանգը յետաձգել: Այդ քաջարի գործողութեամբ նրանք նահանջող ազգաբնակչութեան թիկունքի ապահովման տեսակէտից կատարել էին մեծ և գովելի ծառայութիւն:

Համբարձում Մելքոնեանը փորձուած և իսկական հայրենասէր սպայ էր: Նրա տուած ցուցմունքները յաճախ շատ օգտակար էին լինում: Նրա հայրենասիրութեան և անձնազոհ նուիրուածութեան ապացոյցն հէնց այն էր, որ նա չյօժարեց կամաւորական գնդերի՝ իր հայ գործակից զինուորականների հետ մէկտեղ Վասպուրականի հայութիւն իր դժբախտ ճակատագրին թողնել: Նա մնաց և գիտակցաբար ու անձնուրացօրէն իրեն ենթարկեց իր հայրենակիցների գլխին պայթող փորձանքներին: Փառք ու պատիւ այդ անկեղծ հայրենասէրին, որ, ինչպէս Ոստանում, նոյնպէս և Կոթուրում ու Սալմաստում և յետոյ ամբողջ նահանջի ճամփաներում տեղի ունեցած պաշտպանողական կռիւներում աննման արիութիւն և անձնուիրութիւն ի յայտ բերեց: Մենք նորից առիթ կունենանք նրա խիզախութիւններին ականատես լինելու:

Պարսկական սահմանամերձ Խոյ քաղաքում մեր տնտեսական և ազգային կազմակերպութիւնները, բարեգործական և վերաշինական ընկերութիւնները ներկայացուցիչներ ունէին, բայց, դժբախտաբար, հաղորդակցութիւնը կտրուել էր: Անհրաժեշտ նկատուեց մի քանի ձիաւոր սուրհանդակներ ուղարկել թէ՛ Խոյ և թէ՛ Սալմաստ քաղաքական և պատերազմական դրութիւնն ուսումնասիրելու և պէտք եղած տեղեկութիւնները հայթայթելու համար:

***

Երեսուն հազարի հասնող Վասպուրականի հայ և ասորի գաղթականութիւնը մի քանի օրից ի վեր Կոթուրի ձորի արևմտեան ծայրամասում փռուող դաշտավայրում սպասողական վիճակում էր: Ուղարկուած սուրհանդակները չէին վերադարձել, և որևէ տեղեկութիւն թիւրք բանակի տեղորոշման և պարսիկ կառավարութեան թոյլտուութեան մասին չկար:

Այգեստանից մեր վերցրած պարենապահեստը շատ վաղուց վերջացել էր: Գաղթականութիւնը Սարայից սկսած ենթարկուել էր սովահարութեան: Դրութիւնը միանգամայն ողբերգական էր: Մեծ դժուարութեամբ գարու մի փոքր քանակութիւն հայթայթուեց: Կարծես երկնքից իջած մանանայ լինէր: Մարդ-գլուխ բաժանուում էր մի ափ: Գարին խաշելով ուտում, աւելի շուտ լափում էին: Սովամահ չլինելու համար մարդիկ ստիպուած էին բոյսերի արմատներն ու նորածիլ խոտերը հաւաքելով՝ խաշել և ուտել:

Ինչքան հերոսական և սքանչելի եղաւ վասպուրականցիների դիմադրական պայքարը իրենցից հազարաւոր անգամ աւելի ուժեղ ու զինական կատարեալ միջոցներով օժտուած թշնամու դէմ, այնքան խղճուկ և անկազմակերպ եղան մեր՝ թէ՛ առաջին և թէ՛ ամենավերջին նահանջները:

Առաջին նահանջի անկազմակերպութեան և խուճապի պատասխանատուն մերոնք չէին: Այդ նահանջը մեզ համար նենգօրէն և քաղաքական ստոր ծրագիրներով պարտադրուած յանկարծակի նահանջ էր: Բայց վերջին նահանջի ուշացման և խուճապային բնոյթի պատասխանատուն մենք էինք:

Եթէ մենք, ժամանակին ենթարկուած լինէինք Անդրանիկի և նրա գործակից զինուորականների ցուցմունքներին և Երևանի Ապահովութեան խորհրդի ու ընդհ. զօրահրամանատար Սիլիկեանի հրահանգներին, վասպուրականցիները վերջին նահանջին այդքան չէին տուժի և մանաւանդ իրենց Կովկասի հայրենակիցներից զրկուած և հեռաւոր հորիզոնների ներքև շպրտուած չէին լինի:

Կոթուրի ձորի մուտքի մօտ այդ քանի օրերի սպասումն էլ իզուր և աննպատակ էր: Պատերազմի այդ խառնակ, անստոյգ և թշնամի ուժերի յարափոփոխ վիճակը Թաւրիզի և մանաւանդ Խոյի տեղական իշխանութիւններից խլել էին ինքնուրոյն կարգադրութիւն անելու իրաւունքը: Պարսկական իշխանութիւնները թէկուզ էլ բարի ցանկութեամբ օժտուած լինէին և կամենային մեր ներգաղթը դէպի Պարսկաստան արտօնել, գուցէ չկարողանային այդ անել: Ի վերջոյ, այդ աննպատակ սպասումը մեզ համար աղէտաբեր եղաւ և Կոթուրի ձորի ողբերգութեամբ վերջացաւ:

ԿՈԹՈՒՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Վերջապէս վճռուեց բազմահազար գաղթականութիւնը՝ զինուած ուժերի պաշտպանութեամբ, Կոթուրի ձորից անց կացնելով տանել դէպի Սալմաստ: Այդ քանի օրերի սպասումն էլ նպատակին չհասաւ: Խոյի և Թաւրիզի պարսկական իշխանութիւններից էլ իրաւունք ստանալ կարելի չեղաւ:

Նախ քան տեղաշարժ կատարելը՝ Համբարձում Մելքոնեանը մի հայրենաշունչ ճառ խօսեց և զինուած հայ և ասորի երիտասարդութեանը հրաւիրեց մի անգամ ևս իրենց հարազատների՝ մայրերի, հայրերի, քոյրերի, երեխաների և բոլոր անզէն ու անպաշտպան ազգակիցների պաշտպանութեան ու փրկութեան համար կուել, և, եթէ պէտք լինի, հերոսաբար զոհուել: Բազմահազար նահանջողների աղմուկ-աղաղակի մէջ ինձ հազիւ յաջողուեց լսել նրա կարճառօտ ճառի թնդացող գոչիւնով վերջացող մարտահրաւէրը.

«Քաջարի և հայրենասէր երիտասա՛րդ հայրենակիցներ, եթէ ձեզնից որևէ մէկը իր հարազատների պաշտպանութեան այս կռուում թերանայ, դաւաճանած կը լինի իր սիրելի և հարազատ ժողովրդին և նրա ազատագրական արդար պայքարին:

Վասպուրականցի քաջարի՛ զաւակներ, դուք որ կարողացել էք ամբողջ երկու տարի հերոսաբար մարտնչել մինչև ատամները զինուած թուրք բանակների հսկայական ուժերի դէմ, ամօթ և նախատինք կը լինի ձեզ համար պարտուել և զոհուել աւազակապետ Սմկօից և նրա խառնիճաղանջ ու թալանչի զինուորներից»:

Մելքոնեանի հայրենաշունչ ճառը ինձ էլ ոգևորեց և հայկական արիւնս եռանդի հանեց: Չէ՞ որ ես էլ հայ էի, երիտասարդ էի և բախտի տարօրինակ դասաւորութեամբ զինուած էի Բուլղարացու նիւրած զէնքով: Ուրեմն, ինքս ինձ եզրակացրի՝ ես էլ պարտականութիւն ունեմ կռուելու և պաշտպանելու իմ դժբախտ հայրենակիցներին, որոնց թում և հօրս:

Անմիջական զօրահաւաքը սկսուեց: Վճռեցի կամաւոր զոհաբերութիւն կատարել: Գործ ու պաշտօն չունէի: Անելիք չունէի: Վճռեցի նիւրուել ժողովրդիս պաշտպանութեանը:

Հօրս հետ գրկախառնուելուց և ջերմագին համբոյրներ փոխանակելուց յետոյ ֆուրգոնից ցած իջայ: Սմկօի ուժերի դէմ կռուելու նպատակով գնում էի Կոթուրի լեռները բարձրանալու պատրաստող մեր ուժերին միանալու: Հէնց այդ ժամանակ հայրս աղերսագին ձայնով ինձ կանչում էր: Յետ դարձայ նրան լսելու: Նա իր թախանձագին կանչով շարունակեց.

– Ու՞ր կերթաս, բալէ՛ս, դու կեանքիդ մէջ մինչև հիմա զինուորութիւն չես ըրած և ոչ մէկ կռուի չես մասնակցած, որ կարողանաս գոնէ քեզ պաշտպանել...:

– Սիրելի՛ հայր, ինչու՞ համար այդքան շատ վրդովուեցիր: Մինչև հիմի առիթ եկած չէր զինուորութիւն անելու... Կռիւների ժամանակ՝ ամէն անգամ, ինձ ուրիշ գործ յանձնած էին, և ես պարտաւոր էի ինձ վրայ դրուած պարտականութիւնները կատարելու, իսկ ներկայիս անելիք չունեմ և պէտք է որ կարողացածիս չափով աշխատեմ ժողովրդիս օգտակար լինել, մանաւանդ այս պարագային, երբ մեր գոյութիւնը պաշտպանելու հարցն է դրուած:

Այլևս չկամեցայ հօրս թախանձանքին ուշադրութիւն դարձնել, չնայած ինքս էլ համոզուած էի, որ պաշտպանութեան գործին իմ մասնակցութեամբ որևէ աջակցութիւն չէի կարող տալ: Մինչ այդ, հակառակ տաքարիւն բնաւորութեանս, չէի համոզուել նոյնիսկ մի հաւի կոկորդը կտրելու, ու՞ր մնաց մարդասպանութիւն կատարելու: Ինքս իմ մէջ այս զզուելի պատերազմն ու վայրագ կոտորածները սարքողներին հազարաւոր անգամներ անիծել էի:

Թիւրքին և քիւրդին ատում էի, որովհետև նրանք մեր ժողովրդին բոլորովին անտեղի, անխիղճ ու անխնայ կոտորում էին և բնաջնջում, բայց առիթ չէի ունեցել նրանցից նոյնիսկ մէկին սպանելու:

ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հազիւ մի հարիւր քայլ հօրիցս հեռացել էի, ինքնապաշտպանութեան համար Կոթուրի լեռները բարձրանալու գնացող զինուորներին միանալու, երբ մի ուրիշ աղերսական կանչ լսեցի.

– Աղաչում եմ, սպասի՛ր... Միայն մի րոպէ...

Կարծեցի, որ լսածս թիւրիմացութիւն է: Ենթադրեցի, որ սխալմամբ ինձ մի ուրիշի հետ են շփոթել: Ուզում էի ճանապարհս աճապարանօք շարունակել, բայց այս անգամ թախանձագին խնդրողը ինձ իմ անունով կանչեց.

– Սիրա՛ք, պր. Սիրա՛ք, խնդրում եմ, աղաչում եմ, մի քիչ սպասի՛ր: Միայն երկու խօսք ասելիք ունեմ:

Յետ դարձայ: Արտակարգ, գերբնական ճիգ ի գործ դնելով, մէկը, դժուարութեամբ յառաջ նետուելով, աշխատում էր ինձ հասնել: Կարծեցի երազ եմ տեսնում: Ձեռքերիս ափերով աչքերս տրորեցի, տեսածս աւելի լաւ տեսնելու համար: Անսպասելի, անհաւատալի հրաշք էր տեսածս:

– Այդ դու՞ ես, օր. Անուշ,– կակազելով հազիւ կարողացայ արտասանել և իմ հերթին վազ տուի նրան դիմաւորելու և նրա ֆիզիկական և հոգեկան տանջանքը կարճելու համար:

– Այո՛, դժբախտաբար, այդ ես եմ...

Նա գիրկս նետուեց և ոտքի վրայ մնալու ոյժ ու հնարաւորութիւն չունենալու պատճառով գետնի վրայ ցած գլորուեց: Նրան գրկելով բարձրացրի և հարցրի.

– Այս ի՞նչ վիճակի ես: Հիւա՞նդ ես, թէ քաղցածութիւնից ուշաթափ ես լինում...

– Մի՛ հարցնի... Թէ՛ քաղցած, թէ՛ հիւանդ և թէ՛ մանաւանդ անտէր ու անօգնական եմ:

Անուշն ուզում էր խօսքը շարունակել, բայց չկարողացաւ: Նա սկսեց լացել: Լացում էր աղէկտուր և ողբագին: Նրա այդ լացը արտակարգօրէն սրտաճմլիկ էր:

Ես էլ սկսեցի նրա հետ լացել: Չեմ յիշում, որ կեանքումս այդքան հոգեմաշ և կսկծալից արցունք թափած լինեմ: Կարծես նրա և իմ լացը մեր երկու դժբախտների լացը չլինէր: Այդ լացն ու արցունքը մի ամբողջ ժողովրդի, տառապակոծ, չարչարուած, հալածուած, խոշտանգուած, ջարդ ու փշուր եղած հայ ժողովրդի արցունքն էր, որ խտացել էր մեր երկուսի աչքերում:

Չէ՞ որ մենք երկուսս էլ այդ տառապած ժողովրդին վիճակուած տանջանքով և զրկանքներով տառապել էինք և շարունակում էինք տանջուել...:

Անօգուտ և անտեղի համարեցի Անուշին նորանոր հարցումների ենթարկել: Նա այնքան շատ յոգնած ու հիւծուած էր, որ խօսել իսկ չէր կարող: Բարեբախտաբար, մինչև այդ ժամանակ անզէն ժողովրդին նահանջի ճանապարհը շարունակելու իրաւունք տրուած չէր: Նրանց պաշտպանութեան համար սպասում էին մեր զինուորների լեռները բարձրանալուն: Մերոնք պէտք է բարձրանային Սմկօի և նրա զինակիցների եղած լեռների դիմացի կողմը և նրանց հանդիպակած լեռներում դիրքեր գրաւէին:

Անուշին օգնեցի, նրան շալակելով մեր ֆուրգոնին հասցրի: Չափազանց զարմանում էի, որ այդ յոգնատանջ, հիւանդ, ուժասպառ վիճակում նրան ինչպէ՞ս էր յաջողուել մինչև այստեղ հասնել: Բազմաթիւ հարցումներ ունէի, բայց դրա ո՛չ ժամանակն էր և ո՛չ էլ կարելի էր նրանից պատասխանը ստանալ: Նրան անյապաղ օգնութիւն էր պէտք:

Անուշի ֆիզիկական տանջանքները նրա դիմագիծն այլակերպել և երիտասարդական սքանչելի թարմութիւնը խորտակել էին: Նրա մարմնակազմը քայքայուել և հիւծուել էր: Մեր ֆուրգոնավար Կարօին, որի հետ ճանապարհին երևութապէս բարեկամացել էի, խնդրեցի Անուշին ֆուրգոնի վրայ բարձրացնելու համար ինձ օգնել: Հայրս դժուարանում էր նրան վերհիշել, և երբ յայտնեցի նրա ով լինելը, նա ցաւագին եղանակով և կարծես թերահաւատութեամբ հարցրեց.

– Միթէ՞ սա մեր բարեկամ Անուշն է: Ինչու՞ այս օրին է ընկել: Ու՞ր են նրա հայրն ու մայրը...:

– Տէ՛ր հայր,– Անուշի վիշտն ու տառապանքը չբորբոքելու ճիգով աճապարեցի հօրս պատասխանել,– հիմի դրա ժամանակը չէ: Նա քաղցած, հիւանդ և ուժաթափ է: Նրան գոնէ մի քիչ կազդուրելու համար պէտք է հնարաւորն անել:

Կարօն հեռատես և խորամանկ մարդ էր: Համոզուած լինելով, որ իր ֆուրգոնի վրայ բեռցուած պարենապահեստը, շուտով ցրիւ գալով, վերջանալու է, իր նստատեղի տակում՝ մի փայտեայ տուփի մէջ, թաքցրել էր մի քանի կտոր հաց, շաքար և նոյնիսկ 5 տուփ մսի պահածոյ: Չկարողացայ իմանալ կարեկցութիւնի՞ց, թէ՞ կնամեծարութեան զգացումից թելադրուած, իր թաքցրած կենսամթերքի գոյութիւնը խոստովանեց և ինձ վստահեցրեց, որ Անուշին ինչպէս հարկն է կը կերակրի և կը խնամի: Նա ինձ ասաց.

– Եթէ, ինչպէս որոշած ես սարը բարձրանալ, այդ հայրենասէր տղամարդու գործ է: Միամիտ գնա: Տէրը քեզ հետ թող էլնի: Աս բարեկամիդ մասին անհոգ եղի՛ր: Մինչև վերադարձդ, կաշխատեմ անոր խնամք տանել: Խօրդ համար ալ կարող ես հանգիստ մնալ, անոր հոգսն ալ ինձ վրայ կը վերցնեմ:

Վայրկենական կատաղութիւնը ամբողջ էութիւնս փոթորկեց: Կուզենայի բռունցքներիս հարւածների տակ նրա քիթն ու բերանը ջարդ ու փշուր անել: Ամբողջ երկուս ու կէս տարի շարունակ տանջուել, մաշուել եմ այս աղջկան կորցրած լինելու համար և հիմի, որ մի քանի րոպէ է, ինչ նրան վերագտել և անրջային երջանկութիւն եմ զգում, անտաշ և անասունի նման տգէտ մի սայլապան խորամանկօրէն ուզում է ինձ պատերազմի, մարդասպանու-

թեան դաշտ ուղարկել: Այդ մարդատիպ վայրենի և անխիղճ սայլապանը, իմ հայրենասիրական զգացումների վրայ խաղալով, ուզում էր ինձ և իմ անհունօրէն սիրած ու պաշտած աղջկան նորից բաժանել, հեռացնել: Օ՜հ, ինչքան անբախտ մարդ եմ եղել: Ինչի՞ համար, ո՞ր մեղքիս համար եմ ենթարկւել բախտի լիրբ ծաղրանքին: Երանի չէ՞ր լինի, որ կէս ժամ առաջ, կամաւոր զինւոր դառնալուս համար վճիռ կայացրած և յայտարարած չլինէի...:

Բայց ներկայ վիճակի այսպիսի դասաւորութիւնն ինչքա՜ն շատ տարօրինակ և զարմանալի էր: Արդեօք պէտք է իմ անհատական երջանկութեան համար իմ ազգակիցների, իմ ժողովրդի պաշտպանութեան պարտականութիւնը զոհաբերե՞մ, ոտնատակ անե՞մ: Չէ՞ որ իմ ժողովրդի պաշտպանութեամբ ես միաժամանակ հօրս և այս իմ անուրջներիս առանցքը կազմող աղջկայ երջանկութիւնը, պատիւն ու գոյութիւնը պաշտպանած կը լինեմ:

Եթէ ես և ինձ նմանները չկռւեն, չպաշտպանւեն, ո՞վ պէտք է մեզ պաշտպանի:

***

Ինձ համար ստեղծւել էր արտակարգօրէն ճգնաժամային մի վիճակ: Հոգուս խորքում սկսւել էր կատաղի և փոթորկալից մի պայքար: Այդ փոթորկալից պայքարը կատարւում էր սրտիս և ուղեղիս միջև: Սիրտս ինձ թելադրում էր մնալ, չբաժանւել աներևակայելի հրաշքով գտածս անրջային էակից, որին դժբախտ դիպւածով կորցրել և անսպասելի, երջանիկ հանդիպումով գտել էի: Բայց ուղեղս, անողորմ և անգութ դատողութիւնս ինձ թելադրում, հրամայում էր պարտականութիւնս կատարել, այն պարտականութիւնը, որ ինձ համար որոշել էի ինքնակամ:

Այս ինձ համար որոշածս պարտականութիւնից կարող էի հրաժարւել, բայց նախ և առաջ ինքս ինձ մօտ ծիծաղելի, արհամարհելի պիտի լինէի և յետոյ արգահատելի դասալիք բոլոր նրանց մօտ, որոնց իմ կամաւոր զինւոր դառնալու որոշումս էի յայտնել: Այո՛, փոքրոգի, ողորմելի դասալիք այս անտաշ սայլապան Կարօից սկսած մինչև բոլոր նրանց մօտ, որոնք ինձ ճանաչում էին:

Իմ անձնասիրութեան, պատւասիրութեան զգացումն ու մտքիս հրամայող դատողութիւնը յաղթական հանդիսացան: Վճռեցի դժգոհ ու բողոքող սրտիս թելադրանքը զոհաբերել: Անհուն կսկիծով ծունկի եկայ ֆուրգոնում ուշագնաց ընկած Անուշի կողքին և նրա ջերմող ճակատից ցեխակալած մազերը յետ տալով թօշնած այտերը կարօտակէզ համբուրեցի:

Հակառակ իր անսահման յոգնած և ուժաթափ վիճակին՝ նա ջանաց գլուխը բարձրացնել իր դէմքը ճակատիս մօտեցնելու համար, բայց այդ անելու անզօր եղաւ: Նա, ջանալով իր խոշոր աչքերը լայն բացել, մի վայրկեան կարօտակէզ նայեց ինձ, իմ աչքերին: Հազիւ կարողացայ լսել նրա մահագոյժ մեղմութեամբ և կցկտուր արտասանած հետեւեալ բառերը.

– Ես մի դժբախտ աղջիկ եմ եղել... Ափսո՜ս, շա՜տ ափսոս, որ անմուրազ և կարօտակէզ, երջանկութեան երազիս չհասած կը մեռնեմ...:

– Չէ՛, սիրելի, աննմա՛ն Անուշ, դու չես մեռնելու, չպէտք է մեռնես: Դու ապրելու ես, պէ՛տք է ապրես: Հաւատացած եմ, որ քո բոլոր տանջանքն ու տառապանքները շուտով վերջացած կը լինեն: Մօտիկ, շատ մօտիկ ապագայով ներշնչի՛ր, ոգևորի՛ր քեզ: Աստուծոյ օգնութեամբ մի քանի ժամից յետոյ ես քեզ մօտ կը վերադառնամ: Ազնիւ մարդու պատւոյ խօսք եմ տալիս սրանից յետոյ միշտ քեզ մօտ մնալ, քեզ հետ լինել...

Չկարողացայ իմանալ, արդեօք Անուշն ի վիճակի եղա՞ւ իմ սրտագին անկեղծութեամբ արտայայտած խօսքերը լսելու, թէ ոչ: Նա բոլորովին ուժասպառ և ուշաթափ էր: Արտակարգ դժւարութեամբ, անսահման դժկամութեամբ նրանից բաժանւեցի: Նախքան ֆուրգոնից հեռանալը՝ հօրս և Կարօին աղերսանօք խնդրեցի.

– Տէ՛ր հայր, վարպե՛տ Կարօ, աղաչում եմ ձեզ, մինչև իմ վերադարձը նրան օգնել և խնամել: Կը ջանամ, ինչքան հնարաւոր է շուտ վերադառնալ:

Անհուն կսկիծը սրտումս և կարօտակէզ արցունքները աչքերումս՝ Անուշից հեռացայ...

ԿՈԹՈՒՐԻ ՁՈՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Բուլղարացին իր կնոջ և երեխայի ճակատագրի անյայտութիւնից ծայրայեղօրէն լքւած և յուսահատ էր: Բայց այդ անչափ յուսահատութիւնը նրան չէր արգելել իր ժողովրդանւէր պարտականութիւնը կատարելու: Մելքոնեանի գործակցութեամբ նա կազմել էր Կոթուրի ձորի ինքնապաշտպանութեան ծրագիրը:

Մեր զինւած ուժերը իրար յետևից խումբ-խումբ, ձիաւոր հետախոյզների առաջնորդութեամբ, պիտի բարձրանային Սմկօի և նրա զինակիցների գրաւած հանդիպակաց լեռները: Մերոնց իսկական պարտականութիւնն էր մեր բազմահազար գաղթականութեան նահանջի ճանապարհը ապահովել և քիւրդերին թալանի ու կոտորածի նպատակով ձորն իջնելը խանգարել:

Չափազանց դժւար էր ծրագրի գործադրումը, քանի որ մերոնք տեղին և քիւրդերի դիրքերի դասաւորութեանը միանգամայն անծանօթ էին: Ճար չկար, պէտք էր հնարաւորութեան սահմաններում հալածական և վտանգւած նահանջողներին մի կերպ օգնել:

Կէս գիշերից երկու ժամ անց էր, երբ մեր զինուած խմբերը Կոթուր լեռնագագաթի աջ կողմի վրայ հաւաքուեցին: Կիսալուսնի շողքը լուսաւորում և մեր զօրաշարքը լիովին նկատելի էր դարձնում:

– Տղե՛ք, ձեր հոգուն մատաղ,– ասաց մէկը, որին ես չէի ճանաչում և որին, ըստ երևոյթին, յանձնարարուած էր այս պաշտպանութեան գործը ղեկավարել,– տասնական հոգինոց խմբերի բաժանուեցէ՛ք և առանց աղմուկի, զգուշութեամբ դէպի աջ առաջացէ՛ք: Ինձ ասել են, որ ձորի երկարութիւնը մօտ քսան կիլոմետր է: Այստեղ հաւաքուած մեր անձնուէր զինուորների թիւը, լեռ բարձրանալիս հաշուեցի, 300 հոգուց աւելի են: Այս հաշուով, եթէ ամէն տասն հոգինոց խումբը իրարից 600 քայլ հեռաւորութեան վրայ տեղաւորուի, ձորի ամբողջ երկարութիւնը մեր պաշտպանութեան տակ կառնուի: Խմբերի միջև կապ պահպանելու և անհրաժեշտ ցուցմունքներ տալու համար ձիաւորների երեք տասնեակ զինուորներ ունենք: Աւելորդ է ձեզ յիշեցնել, որ ձորի միջով նահանջող երեսուն հազար ձեր հարազատների ու հայրենակիցների փրկութիւնը միայն ձեզնից է կախուած: Եթէ թերանաք ձեր ազնիւ հայրենասիրութեան և խիզախ պաշտպանութեան գործում, անկասկած, նրանց դաւաճանած և աւազակ Սմկօին ու նրա թալանի ծարաւ զինակիցներին զոհած կը լինէք: Մի անգամ ևս ձեր նուիրուածութեամբ ապացուցէ՛ք, որ վասպուրականցիներ էք և Ապրիլեան հերոսամարտի կռուողների խիզախ ներկայացուցիչները:

Կեցցէ՜ վասպուրականցին, որ հայ ժողովրդի հարազատ զաւակն է: Փառք ու պատիւ բոլոր նրանց, որոնք յօժարակամ, իրենց ազնիւ արեան գնով իրենց հայրերին, մայրերին, քոյրերին, կիներեխաներին և հայրենակիցներին պաշտպանել և փրկել գիտեն:

Տեղաշարն ու դիրքորոշումները լուսաբացից առաջ վերջացել էին: Ուրիշների շարքին՝ ես էլ զինուորի, պաշտպանողի դերում դիրք էի մտել:

***

Յաջորդ օրուայ լուսաբացին գաղթականութեան արտօնուեց ձորից անցնել: Այդ քանի օրերում Սարայից Կոթուրի ձորի մուտքին իրենց հասցրած բազմահազար հայ և ասորի գաղթականները ճանապարհ ընկան: Ամբողջ հինգ ժամուայ ընթացքում նահանջող բազմութիւնը ձորն էր մտնում: Փոխադրական միջոցներ՝ սայլ, ձի, էշ, եզ, կով ունեցողների գործը շատ աւելի հեշտ էր: Նրանք իրենց ունեցած իրերը բեռցրել էին անասուններին: Յաճախ այդ փոխադրական միջոցներից օգտւում էին իրենք էլ: Ոտքով նահանջողների վիճակն անտանելի էր: Նրանք յառաջանում էին խուճապով ու սարսափով:

Անվերջ աղմուկ, աղաղակ, կանչ ու կռիւ: Հարազատներ, միևնոյն ընտանիքի անդամներն էլ յաճախ իրենց մէջ վէճի ու կռի էին բռնւում: Իրար աճապարեցնում, խռիկ էին տալիս և տքնում էին հնարաւորին չափ շուտ այդ դժոխային ձորից անցնելով՝ իրենց փրկել: Նրանք գիտէին և համոզած էին, որ դարանակալած թշնամին կոտորելու և կողոպտելու համար սպասում է իրենց: Նրանք մահաւան սարսուռով ահաբեկուած մտածում էին միայն և միայն մազապուրծ լինելու մասին: Միանգամայն իրաւացի էին նրանք, քանի որ սարսափելին իրականացաւ:

Երբ նահանջող բոլոր գաղթականները մտել էին ձորի մէջ, Սմկօի քրդերն այդ անզէն ժողովրդին իրենց դժոխային կրակի տակն առան: Գնդակների հեղեղ էր թափւում ամէն տեղ և ամէն ուղղութեամբ: Դժբախտ գաղթականութիւնը խուճապի էր մատնուել և գլխապատառ վազվզում էր ամէն ուղղութեամբ: Հայրերն ու մայրերը իրենց երեխաներին քաշկռտում էին այս ու այն կողմ և քարակոյտերի յետև ու ժայռախոռոչների մէջ ապաստարան որոնում: Խուճապն ու իրարանցումը սարսափելի էր:

Հանդիպակաց լեռներից մերոնք սկսեցին կրակել: Քիւրդերը յանկարծակիի եկան և սկսեցին դէպի մեզ կրակել:

Սմկօի քրդերն երբ իմացան, որ նահանջող բնակչութիւնը բոլորովին անզէն ու անպաշտպան չէ, և իրենք էլ վտանգից միանգամայն զերծ չեն, իրենց մոլեգնած յարձակումը կրկնապատկեցին, բայց նրանց ուշադրութեան և յարձակման թիրախը մենք՝ ժողովրդին պաշտպանող զինուորներս դարձանք: Այս աւազակների զինապահեստը, մանաւանդ հրացանների փամփուշտները կարծես վերջանալիք չունէին: Կրակում էին անդադար ու անվերջ: Յայտնի չէր, գուցէ և կրակում էին բազմահարուածեան զէնքերով ու գնդացիրներով:

Այդ կատաղի կռիւը երկար տևեց: Կէսօրուանից մէկ ժամ անց քիւրդերը նոր ծուղակի մէջ ընկան: Երկու տասնեակ ձիաւոր զինուորներ անձնուրացօրէն համաձայնուել էին Սմկօի քիւրդերին թիկունքից հարուածել: Նրանք, քիւրդերի գրաւած լեռնաշղթայից բարձրանալով, նրանց իրենց բազմահարուածեան զէնքերի կրակի տակն էին առել: Քիւրդերից սպանուել էին բաւական շատ: Մտածելով, որ իրենց զոհերի թիւը կարող է բազմապատկուել, Սմկօի քիւրդերը. վրայ հասնող երեկոյեան մթնշաղից օգտուելով, սկսել էին նահանջել: Մինչ այդ նահանջող բազմութեան ժխորը պակասել էր:

Մութն ընկնելու պահին մեր զինուորական խմբերին կարգադրուեց դէպի ձորի վերջաւորութիւնը յառաջանալ: Այս կարգադրութիւնը բաւական շատ տարօրինակ թւաց, բայց պատճառը յետոյ պարզուեց: Մերոնք ենթադրում էին, որ քիւրդերը, տեղական պայմաններին կատարելապէս ծանօթ լինելով, գիշերուայ մութից կարող էին օգտուել և մեր զինուորական ուժերին իրենց օղակում պաշարելով՝ լրիւ կոտորել:

Սալմաստ հասնելուց առաջ տեղեկացանք, որ Կոթուրի ձորի ողբերգութիւնը բաւական ցնցիչ է եղել: Նահանջող ժողովուրդը, մանաւանդ հետիոտն եղողները, դժբախտութիւն են ունեցել ձորում թողնելու քայլել չկարողացող երեխաներին և մանաւանդ ծերացած հայրերին, մայրերին և հարազատներին:

Իզուր ուշացումների հետևանքներից մէկն էլ Կոթուրի ձորի՝ շուրջ 400 հոգու կոտորածն ու նրա կրկնապատիկ թւով գերի թողնելն եղաւ: Բարեբախտաբար, հայ գերիները Սմկօի կողմից ներման արժանացան և ուղարկեցին մեզ մօտ՝ Սալմաստ:

ՍԱԼՄԱՍՏԻ ԴԻԼԻՄԱՆ ՔԱՂԱՔԸ

1918 թւի ապրիլի առաջին 15 օրերին մեր յոգնատանջ գաղթականները, Պարսկաստանի սահմանն անցնելով, իր ժամանակաւոր բնակութիւնը Սալմաստի շրջանի մի քանի գիւղերում, մանաւանդ Հաֆթվան, Ղալասար և Փայաջուկ գիւղերում հաստատեց: Ասորիները կենտրոնացել էին իրենց տեղացի ազգակիցների մօտ՝ Խոսրովա գիւղում: Մեր՝ Սալմաստ ժամանումի օրերին գաւառի կենտրոնական քաղաքը համարւող Դիլիմանը պաշարուած էր ասորիների և նրանց ջէլօ կոչուած ցեղախմբի զինուորական անկանոն ուժերի կողմից: Նրանց այդ պաշարումին օգնում էր «տուն վերադառնալ» չյաջողած ռուսական բանակից մի խումբ, թւով շուրջ հարիւր հոգի: Սրանք ունէին երեք դաշտային թնդանօթներ:

Զինուած և կռւող ջէլօների թիւն անցնում էր երկուս ու կէս հազարից: Նրանք իրենց գործակցող ռուս զինուորներին համոզել էին, որ Դիլիման քաղաքում կենտրոնացել են իրենց ընդհանուր թշնամիները՝ թիւրքերն ու քիւրդերը, և եթէ օր առաջ նրանց դիմադրութիւնը չփշրւի, թիւրք բանակը նրանց օգնութեան կը հասնի: Նման պարագայում թէ՛ «տուն վերադարձող» ռուս զինուորները և թէ՛ իրենք՝ ասորիներն ու ջէլօները, կորած կը լինեն:

Ամէնից տարօրինակն այն էր, որ նրանց ղեկավարները մեր զինուած ուժերից մի քանի տասնեակ մարդկանց էլ յաջողեցին իրենց կողմը գրաւել և գործակից դարձնել: «Ձեր անզէն հայրերին, մայրերին, քոյրերին և երեխաներին կոտորող քիւրդերի արիւնարբու և աւազակ պետերը Դիլիմանումն են կենտրոնացել,– յայտարարել էին նրանք:– Եթէ անմիջապէս այդ աւազակների չարագործ այս բոյնը չքանդւի, մեզ հետ միասին ձեր մազապուրծ եղած բազմահազար գաղթականներին էլ մինչև վերջին մարդը կը կոտորեն»:

Այդ ժամանակներում դեռ մեզ անյայտ մնացած իրականութիւնը ջէլօների վերոյիշեալ յայտարարութեան բնոյթից բաւական շատ տարբեր էր: Յետոյ պարզւեց, որ Սմկօն և իր զինակիցները ասորիջէլօների հետ արեան ոխերիմ թշնամիներ էին: Սմկօի ցեղախմբի ասորի-ջէլօների հետ ունեցած թշնամութիւնը տաճիկների մեր՝ հայերիս հետ ունեցած թշնամութիւնից գուցէ մի քանի անգամ աւելի ոխերիմ բնոյթ ունէր:

Համաշխարհային առաջին պատերազմի այդ տարիներին պարսկական կենտրոնական կառավարութեան ազդեցութիւնը, մասնաւորաբար Արևմտեան Ատրպատականի շրջաններում, ինչպէս Սալմաստում և Ուրմիայում, շատ թոյլ էր, որովհետև վերոյիշեալ երկու գաւառները, ինչպէս նաև պարսկական Ջուլֆան, Խոյն ու մերձակայ շրջանները, ռուսական և թրքական բանակների ռազմաբեմն էին դարձել և նրանց կողմից ոտնակոխւում էին և ձեռքից ձեռք խլւում:

Սմկօն, բարեկամական դաշինք կնքելու անունով, բայց իր նենգ և խաբեբայ ծրագիրն իրականացնելու նպատակով ջէլօ-ասորիների կաթողիկոս Մարշիմոնին իր մօտ է հրաւիրում և փառաւոր հիւրասիրութիւնից յետոյ՝ ճանապարհելու միջոցին իր դարանակալ գործակիցների միջոցով նրան սպանել է տալիս:

Ահա այստեղից էլ սկսւել էր Սմկօի և նրա գործակիցների և ասորի-ջէլօների միջև արեան թշնամութիւնը: Ջէլօների մարտական ղեկավարութիւնը՝ Մարշիմոնի քոյրը՝ Սըրմա խանումը, ու նրանց պետը՝ Աղա Պետրոսն էին յանձն առել: Նրանք երդւել էին կռւել և մինչև վերջին մարդը զոհւել իրենց սպանուած կաթողիկոսի՝ Մարշիմոնի արեան վրէժը Սմկօից և սրա զինակից ցեղակիցներից լուծելու համար:

ԴԻԼԻՄԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Մեր՝ Սալմաստ հասնելուց յետոյ՝ մի ամբողջ շաբաթւայ ընթացքում, պաշարուած Դիլիմանը դեռ դիմադրում էր: Ռուսների թողած թնդանօթներն անվերջ որոտում էին և քաղաքի պարիսպների մեծ մասը քար ու քանդ էին արել: Իրար յետևից բռնկւող հրդեհները քաղաքը մուխ ու ծուխի մէջ մթագնում և անտեսանելի էին դարձնում:

Ի՜նչ սոսկալի և ահռելի գազազած մարդու անգթութիւնը: Վրէժխնդրութեան կատաղի բնազդը նրան ստորացնում և արիւնածարաւ գիշատիչներին է հաւասարեցնում: Խիղճն ու բանականութիւնը միանգամայն կորում և անհետանում են:

Ոչ մի կասկած, որ պաշարուած այդ բնակչութեան 98 տոկոսը մեր Այգեստանի ապրիլեան դիմադրութեան օրերի նման անզէն ու թշւառ կին-երեխաներից և ծերերից էր բաղկացած: Սրանց պաշարողները գիտէին, որ այդ անզէն բնակչութիւնը որևէ յանցանք չունի, որ նրանք էլ մեզ պէս դժբախտ ու թշւառ են, որ նրանք էլ մեզ պէս ապրել ու գոյատևել են ուզում, որ նրանք էլ իրաւունք ունեն իրենց

երկրի, հողի վրայ մնալ, իրենց տան ու օջախի մօտ, իրենց հարազատների կողքին ապրել և աստուածային պարգև եղող կեաքն ու արևը վայելել...: Բայց վրէժխնդրութեան կիրքը նրանց կորցրել էր:

Ա՜խ, ինչքա՜ն ահռելի և նզովեալ է այս պատերազմը: Նրան շղթայազերծող մարդանման գայլերն ու բորենիներն ինչքա՜ն հրէշատիպ ու անիծապարտ են...:

Այս արիւնահոս հեղեղի արհաւիրքից ու դժոխքից երո՞ք պիտի ազատենք...:

***

Տեղեկութիւն է հասնում, որ թիւրք բանակը Դիլիմանում պաշարուածներին շուտով օգնութեան է հասնելու: Դրութիւնը չափազանց լրջանում է: Կէսից աւելի քարուքանդ եղած փլատակների տակ կքած քաղաքը դեռ շարունակում է մահամերձի յուսահատ կատաղութեամբ դիմադրել: Նախ քան նրանց օգնութեան փութացող թիւրք բանակի հասնելը՝ անհրաժեշտ է մի ելք գտնել: Ելքը ճարւում է: Որոշւում է քաղաքի ժողովրդին և նրանց պաշտպանողներին պատւիրակների միջոցով պատգամառաջարկ ուղարկել:

«Ձեզ 24 ժամ ժամանակ է տրւում կա՛մ զէնքերը յանձնելով անձնատուր լինել և կա՛մ քաղաքը թողնելով՝ հեռանալ: Պատւոյ խօսք ենք տալիս և երդւում ենք մեր սրբութիւններով, քաղաքից հեռանալու պարագային ձեզ չհետապնդել և ոչ մէկին չվնասել: Կարող էք հեռանալ Քեօհնա-Շահրի կամ Թաւրիզի ուղղութեամբ»:

Ինքնապաշտպանութեան ամէն յոյս ու հաւանականութիւն կորցրած բնակչութիւնը քաղաքից հեռանալու իր համաձայնութիւնը անմիջապէս տալիս է: Ջէլօների ղեկավար Աղա Պետրոսը իր զինակիցներին խիստ հրահանգ է տալիս քաղաքից հեռացողներին չհետապնդել և չկոտորել: Գիշերւայ մութի մէջ քաղաքն իր պաշտպանող-դիմադրողներից պարպւում է: Յաջորդ օրը՝ վաղ առաւօտեան, Դիլման քաղաքը լքած ու անպաշտպան է մնում:

Թալանի արտակարգ ծարաւ ունեցողները, առաւելապէս ջէլօները, խուժում են քաղաք:

ՉԱՐԱՂԷՏ ՄԱՀԳՈՅԺ

Հօրիցս բաժանւելուց երկու շաբաթ յետոյ, վերջապէս ինձ յաջողւեց նրան գտնել: Նա աղէտալի վիճակում էր, իսկ նրա պատմութիւնը սրտակեղեք և ողբերգական: Հայրս պատմեց.

– Երբ մեզ պաշարող թիւրքերու գնդակները աջէն ու ձախէն կը սուրային և մեր կողքերէն ու ականջներու տակէն կանցնէին, սայլապան Կարօն՝ այդ անազնիւ և գռեհիկ մարդը, գլուխը կորցրած, ֆուրգոնին լծած ձիերը կատաղօրէն մտրակել սկսեց: Խեղճ ձիերէն մէկը զիստէն գնդակով վիրաւորւեց և կաղալ սկսաւ: Երբ Կարօն տեսաւ՝ վիրաւորւած ձին այլևս վազել չէ կարող, ցած իջաւ և ֆուրգոնին միացած անոր կապերը կտրատելով՝ ազատ արձակեց և ճանապարհը շարունակեց: Կէս ժամ չանցած՝ դժբախտաբար մէկ ուրիշ ձին ալ, գլխէն վիրաւորւելով, տեղն ու տեղը գլորւեց: Այս անգամ Կարօն կատաղեց, փրփրեց և գլխիս գոռգոռալ սկսաւ. -«Տէրտէ՛ր, եթէ ուզենամ քեզ հետ այս դժոխքի ճանապարհը շարունակել, շատ չանցած ինձ էլ կսպանեն: Ես չեմ ցանկանայ քու պատճառով էշ նահատակ էլնել: Զուր չեն ասած, որտեղ քահանայ, այնտեղ էլ սատանայ: Չէ՛, ախպէ՛ր, խօսքի դուզն ասած, մէկ քայլ էլ առաջ չեմ էրթալու: Ցած իջի՛ր, էս քարերի յետև մի տեղ քեզ թաքցրու, էս է մութը կը կոխի և կամաց-կամաց, հանգիստ, առանց վախ ու դողի, ոտքով կը գաս և մեզ կը հասնես: Տե՛ս, էտ է, մեր յետևէն հազարաւորներ մնացած են և ոտքով ճամփայ կը գան: Շնորհակալ եղի՛ր, որ էսքան տեղ էլ քեզ բերած եմ»:

– Յետո՞յ, յետո՞յ,– անհամբերութեամբ հարցրի ես:

– Յետոյ, ալ ի՞նչ յետոյ: Տեսայ որ այս կոպիտ և վայրենի մարդը, առանց այլ և այլի ինձ սայլից ցած կը գլորի: Մտածեցի՝ անօգուտ է այս գռեհիկ մարդու հետ գլուխ գլխի դնել և ստիպւած ֆուրգոնից ցած իջայ: Նա սատանայական քրքիջով ծիծաղեց և ճանապարհ ընկնելուց առաջ իր գողացած հացերէն երկուսն ինձ շպրտելով՝ ասաց.

– Ա՛ռ, էս էլ քու ճանապարհի բաժինը, որ քաղցած չմնաս:

Յետոյ անպատկառօրէն աւելցուց.

– Տէրտէ՛ր, ինձ չանիծես... Ասենք քու ներկայութեամբ արդէն ինձ անիծած էիր, որ մարալ ձիերէս երկուքը զոհւեցին: Մնաս խաղաղութեամբ: Տէրը թող քեզ հետ ըլլայ:

– Յետո՞յ, յետո՞յ...,– մեքենայաբար և առանց անդրադառնալու իսկական նպատակիս՝ շփոթ ու մոլոր հօրիցս հարցրի:

– Յետո՞յ...

Ա՜խ, ինչքան տանջալից է այդ յետոն...

– Պատմիր, Տէ՛ր հայր, խնդրում եմ շարունակես մնացեալը:

– Մնացեալը շատ երկար և տխուր է..., որդի՛ս:

Այլևս չկարողանալով թաքցնել ինձ այրող հարցականը՝ ասի.

– Իսկ ու՞ր է մնացած Անուշը, մեր Անուշը...:

Հայրս, գլուխն օրօրելով երկու ձեռներով իր ծունկերը ծեծեց, բայց դժւարացաւ անմիջապէս պատասխանել:

– Ուրեմն նա մեռա՞ւ... Անուշը մեռա՞ւ ուրեմն,– լացակումած պոռթկացի ես:

– Որդի՛ս, նա ճիշտ նոյն րոպէին մեռաւ, երբ դու մեզմէ անկէ հեռացար, ուժով կարողացայ անոր բե-

բանը բացելով՝ երկու կաթիլ ջուր կոկորդը լցնել: Նա չափազանց տանջված, մաշված, հիւծած էր, և անկարելի էր, որ կարողանար դիմանալ այդ գազանաբարոյ սայլապանի վարած ֆուրգոնի ցնցումներուն: Անոր հոգեվարքը տանջալից և ողբերգական էր, և հաւատացած եմ, որ ան խորտակած սիրային մի պատմութեան զոհ դարձած էր:

Հայրս սրտի խորքից տխրալից հառաչեց և ինձ պարզեց մի քանի թերթերից բաղկացած ծալծլած, ճմռթած մի փոքր տետրակ:

– Այս տետրակը մի քանի մանէթ փողի հետ անոր վերնաշապիկի գրպանէն հանեցի:

ԱՆՈՒՇԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Հօրս՝ ինձ յայտնած աղէտալի մահագոյժից յետոյ առանձնացայ: Հեռացայ Հաֆթվան գիւղի (որտեղ մեր ժամանակաւոր բնակութիւն էինք հաստատել) շրջապատող այգիների ուղղութեամբ և նրանցից մէկի ցանկապատից անցնելով՝ հնամեայ մի հաստաբուն ծառի կոճղին նստեցի:

Մեծ ցանկութիւն ունէի հեռու, որքան կարելի է հեռու լինել ոչ մէկի չհանդիպելու համար: Եթէ հնարաւոր լինէր, կը նախընտրէի ճգնաւորական մի ժայռախոռոչի ապաւինել: Սիրտս փղձկել և կարծես իր խոռոչից դուրս պոկուել էր ոզում: Ամբողջ 30 տանջալից ամիսներից յետոյ երազային դիպուածքով և բախտի քմահաճ ու անգութ խաղով հանդիպել էի այդ դիւթական, աննման աղջկան նրան անմիջապէս և անվերադարձ կորցնելու համար:

Ուզում էի լացել, հեղեղանման արցունք թափել: Հոգիս այրւում և մրրկւում էր: Աչքերիս ակունքում հաւաքած արցունքի հեղեղը պատնէշած էր. կարծես դէմ էր առել ժայռի և դուրս չէր գալիս, ցած չէր գալիս, որ կարողանար թրջել, հովացնել, ամոքել կիզւող սիրտս ու հոգիս:

Հոգեկան ապրումների ընթացքում ամենամեծ դժբախտութիւնն այն է, երբ մարդս իրեն այրող, մրրկող ցաւն ու տանջանքն ամոքելու համար լացելու, արցունքի կարիքն ունի, բայց չի կարողանում լացել... արցունք թափել...:

Այդ անտանելի տառապագին վիճակս չգիտեմ՝ ինչքա՞ն երկար տևեց, երբ երանգանման թանկագին մօրս մահն ու նրան հետևող որբացած մանկութեան օրերը վերյիշեցի: Սիրտս փխրեց, և լացել սկսեցի: Լաց եղայ, հեղեղանման արցունք թափեցի:

Մրրկած հոգիս հովացաւ, խաղաղեց, և ծայրայեղօրէն պրկւած ջղերս մի փոքր հանգստացան:

***

Անուշի յուշատետրը բացի և ջանացի ուշադրութեամբ կարդալ: Ձեռագիրը պարզ ու ընթեռնելի էր, բայց տեղ-տեղ գրած ու գծած և երբեմն բոլորովին սևացրած էր: Մէկ մասը թանաքով, բայց մնացածը մատիտով էր գրած: Յուշատետրը ծալծլած ու ճխլտուած էր, և նրա բովանդակութեան ընթերցումը դժուարացնում էր: Ենթադրեցի, որ յուշատետրը թաքցրած պահելու համար մասնաւոր ճիգ է գործադրած: Յուշատետրի բովանդակութիւնը երկար չէր, բայց տողերի հանդիպեցի, որոնց ընթերցումը, հակառակ կրկնւող փորձերիս, անկարելի եղաւ: Սկսեցի կարդալ:

«Ծնած եմ Վան, Այգեստանի Յանկոյսներ կոչւող թաղամասում 1900 թի 30 յունուարին: Հօրս ու մօրս միակ աղջիկ զաւակն եմ եղել: Մայրս չափազանց բարեհամբոյր և հանգիստ բնաւորութեան տէր էր: Հայրս, որին մերոնք անուանում էին Սահակ աղա, իսկ ուրիշները՝ Կազակ Սահակ, ի ծնէ ազնիւ և բարեսիրտ, իսկ արտաքուստ խիստ ու բռնակալ էր թւում: Իր կարգադրութիւններից ամենափոքր շեղում բոլորովին չէր սիրում. ջղային և աղմկարար էր:

Խեղճ մայրս և ես մինչև 15 տարեկան հասակ թևակոխելս նրան հակաճառել չէինք համարձակւում:

Ազգականներ և բարեկամներ ունէինք, 3-4-ի բացառութեամբ՝ հայրս ընդհանրապէս չէր սիրում նրանց հետ շփումներ և այցելութիւններ ունենալ և մեզ էլ յաճախ արգելում էր նրանց հետ բարեկամական կապեր պահպանել և փոխայցելութիւններ կատարել:

Այգեստանում աղջիկների հայոց դպրոցներ կային, բայց հայրս ինձ ստիպեց կաթոլիկ միսիոնարների դպրոցում սովորել, թէև նրանց էլ բոլորովին չէր սիրում: Ենթադրում եմ, որ եթէ Վանում ռուսները դպրոց ունենային, կը նախընտրէր ինձ նրանց մօտ ուղարկել:

Հայրս ծայրայեղօրէն ռուսասէր էր և միայն նրանց վրայ հաւատք ու վստահութիւն ունէր: Այդ արտակարգ ռուսասիրութիւնը մեր դժբախտութեան պատճառն եղաւ, քանի որ նա կտրականօրէն վճռեց ռուսական հիւպատոսարանի պահպանութեան համար Վան մնալ և նահանջի ճանապարհին մեզ չընկերանալ:

Մեր կեանքի տարիները անցնում էին միապաղաղ: Ես մեծանում էի: Իմ շրջապատը շատ սահմանափակ էր: Պատերազմին նախորդող վերջին տարիներում հայրս ինձ թոյլատրեց իմ դպրոցական մի քանի ընկերուհիների հետ բարեկամական շփումներ ունենալ, այն էլ դասերի պատրաստութեամբ զբաղուելու պայմանով: Հայ երիտասարդների մասին, բացի մէկից, նպաստաւոր կարծիք չունէր: Այդ մէկը մեր հեռաւոր ազգականներից էր: Նրա նկատմամբ հօրս ունեցած արտակարգ համակրանքը ինձ զարմանալի էր թւում: Տարօրինակ զուգադիպութեամբ՝ ես էլ այդ երիտասարդի հանդէպ համակրանք ու հաւատք ունէի:

1915-ին նախապատերազմեան օրերին ես ներկայանալի և, ուրիշների ասութեամբ, գեղեցիկ

աղջիկ էի դարձել: Հայրս ցանկանում էր՝ բացի հայերէն և ֆրանսերէն լեզուները, որոնք մեր դպրոցում սովորում էի, ռուսերէն էլ սովորեմ: Իր ցանկութիւնն իրականացնելու համար ռուսական հիւպատոսարանի (այս հիւպատոսարանը մեր շէնքումն էր տեղաւորուած) քարտուղարին խնդրել էր շաբաթական երեք անգամ՝ մէկական ժամով, ինձ հետ պարապել: Քարտուղարը գրեթէ երիտասարդ, բայց անհամ և լպիրշ էր: Այդ իսկ պատճառով յաճախ խուսափում էի այդ դասերից, որի համար էլ ամէն անգամ հօրս դժգոհանքին և խիստ նկատողութեանն էի ենթարկւում:

Ենթադրում էի, որ 1915 թւականն ինձ համար բախտաւորութեան և երջանկութեան տարի պիտի լինէր, քանի որ հօրս հաւանած և իմ համակրած երիտասարդն էլ իմ նկատմամբ համակրական և սիրալիր հակում էր ցոյց տալիս: Այդ երիտասարդի կողմից մեր ոչ յաճախ հանդիպումների ընթացքին սպասում էի սիրային բացատրութիւն և ամուսնութեան առաջարկ լսել: Սիրտս վկայում էր, որ անպատճառ և շուտով տեղի կունենայ այդ բախտաւոր և երջանիկ բացատրութիւն-առաջարկը, որին ես անհամբեր և սրտատրոփ սպասում էի, և եթէ իմ կանացի ամօթխածութիւնը չլինէր, գուցէ այդ բացատրութիւնը ես սկսէի...:

Բայց, դժբախտաբար, շատ քչերն են, որ կարողանում են իրենց սպասած և ակնկալած բախտաւորութեան հասնել: Ցաւօք սրտի, այդ քիչ թւով երջանիկներից մէկը լինելը ինձ վիճակւած չէր: Իմ դժբախտ ճակատիս երջանկութեան մէկ լինելը ինձ վիճակւած չէր: Իմ դժբախտ ճակատիս երջանկութեան և բախտաւորութեան փոխարէն, դժբախտութիւն և կործանում էր գրւած: Զու՜ր, շա՜տ իզուր ինքս ինձի բախտաւորութեան անուրջներով էի տոգորում, ոգևորում...:

Պատերազմը, անիծեալ պատերազմը մեր անբախտ գլխին պայթեց: Մենք՝ վանեցի հայերս, կործանման, բնաջնջման անդունդի եզերքը հասանք: Երանի, հազար երանի կը լինէր, եթէ այդ անդունդի յատակը գլորւած և անհետացած լինէի: Գոնէ ինձ հետ հետագայում պատահած տանջանք-տառապանքներից փրկւած կը լինէի:

Իմ հայրենակիցները մի ամբողջ ամիս աննման հերոսութեամբ կռուեցին և մեր գոյութիւնը բնաջնջել ցանկացող նամարդ թշնամու գրոհներին դիմագրաւեցին: Մենք ազատուեցինք մի ուրիշ աւելի սարսափելի փորձանքի ենթարկուելու համար:

Սկսուեց աղէտաբեր նահանջը: Այդ նահանջը մեր ընտանիքի համար դժոխքի ճամփայ եղաւ: Այդ ճանապարհին մենք կործանուեցինք: Հայրս՝ իր եսական, յամառ բնաւորութեամբ, նախ իրեն, ապա մօրս և ինձ կործանեց:

Հայրս վճռականապէս հրաժարուեց մեզ հետ նահանջի ճանապարհն ընկնել: Նա մեզ ստիպեց առանց իրեն նահանջել: Համաձայնուեցինք: Երանի թէ չհամաձայնուէինք: Մեր իսկական դժբախտութիւնը կայանում էր նրանում, որ ես ու մայրս մենակ ու անօգնական էինք: Մինչև վերջին ժամը սպասում էինք Ս.-ի օգնութեանը: Բայց ի՞նչ եմ ասում: Նահանջը, այն էլ մեր հապճեպ, խառնաշփոթ նահանջը չարիքների չարիքն ու դժբախտութիւնների դժբախտութիւնն էր: Ոչ մէկն ի վիճակի չէր ուրիշի օգնութեան մասին մտածելու: Բոլորը տարերօրէն, խելագարօրէն ձգտում էին ճողոպրելու, փախուստ տալու և իրենց գլուխն ազատելու...»:

***

Այստեղ Անուշի յուշերն ընդհատւում էին: Յուշատետրում, երկու իրար նայող երեսները գրւած, բայց յետոյ մասնաւոր խնամքով ջնջւած և սևացրած էին: Ջանացի սևացրած տողերը կարդալ, բայց անկարելի եղաւ: Հաւանաբար այդ երկու հանդիպակաց երեսները հանւած և պատռւած կը լինէին, եթէ դրանց նախորդող և յաջորդող երեսները գրւած չլինէին:

Ինձ թւաց, որ այդ երեսների վրայ իմ հասցէին ուղղւած մեղադրանքներ էին գրւած ու ջնջւած: Նորից տանջալից վերյիշումներ հոգիս փոթորկեցին: Իմ անփոյթ և անկարեկից լինելու համար նորից ինձ մեղադրել սկսեցի: Այո՛, ես մեղաւոր էի, քանի որ մի ամբողջ օր աւելի շուտ էի տեղեկացել նահանջի մասին և պարտաւոր էի օգնել նրան, որին ես համարում էի իմ ապագայ կեանքն ու երջանկութիւնը:

Կասկած չկար, որ Ս. տառի ակնարկութիւնն իմ վերաբերեալ էր: Խեղճ, դժբախտ աղջիկ: Նա սպասում էր ինձ, իմ օգնութեանը, բայց ես նրան միայն այն ժամանակ էի մտաբերել, երբ նրա լիահաւատ սպասումն իզուր էր անցել, երբ նա յուսահատ, յուսախաբ և ճարահատ կորստեան ճանապարհն էր ընկել: Ջանացի տխուր մտասևեռումներիցս սթափւել և յուշերի ընթերցումը շարունակել: Տարօրինակ հոգեվիճակ էր ստեղծւել: Կարդում էի, բայց չէի կարող հասկանալ, թէ ի՞նչ եմ կարդում: Չարաղէտ նահանջի վերջին րոպէների վերյիշումը խուժում էր ուղեղս և ինձ մեղադրում, նախատեսում էր.

«Դու՛ մեղաւոր ես... Դու՛ ես եղել այդ անզուգական, չքնաղ աղջկայ կորստեան և կործանման պատճառը»:

Փշրւած, խորտակւած սիրոյ միակ զէնքը արցունքն է... Սկսեցի նորից լացել: Աչքերիցս չէր, այլ սրտիցս էր մաղւում այդ արտասուքը:

Երեկոյ էր: Շուտով ամենուրեք գիշերուայ մութը տարածւելու էր: Լսում էի ընդհատող և յաճախակի կրկնւող հրացանաձգութիւններ: Մշտատև վտանգ սպառնացող այդ կրակոցներին ուշադրութիւն չէի դարձնում: Ծայրայեղ ցանկութիւն ունէի Անուշի յուշերի ընթերցումը շարունակել: Յուշերի մնացեալ մասը խառնիխուռն էր: Գրւած և ջնջւած տեղեր շատ ունէր: Ջանացի կարդալ, ինչքան հնարաւոր

էր. «Երբ մօրս ու իմ բոլոր խնդրանքներս հօրս համոզելու և մեզ հետ նահանջելու վերաբերեալ անօգուտ անցան, ի վերջոյ նրա թախանձագին ստիպմամբ մօրս հետ միայնակ, ճանապարհ ընկանք: Մենք ամենաուշ ճանապարհորդներից էինք:

Յոյս ունէինք ճանապարհին հանդիպելու մեր ծանօթ-բարեկամներից մէկի, մանաւանդ Ս.-ի ընտանիքին, բայց մեր անբախտութիւնից այդ անկարելի եղաւ:

Դժբախտութիւնը կայանում էր նրանում, որ նահանջողների բազմութիւնը ծովածաւալ էր: Ամենամեծ չարիքն այն էր, որ այն ամէն տեղ խճողում և խուճապ էր տիրում: Շատ յաճախ նոյնիսկ միևնոյն ընտանիքին պատկանող հարազատներն իրար կորցնում էին: Այդ պայմաններում բոլորովին զարմանալի չէր, եթէ մեզ չյաջողուեց գտնել մեր բարեկամ-ազգականներից մէկնումէկին:

Չնայած այն հանգամանքին, որ ես ու մայրս միասին մէկ ձի ունէինք, որ հեշտացնում էր մեր նահանջը, բայց ես ստիպւած էի յաճախ ոտքով քայլելու: Մայրս, տարիքն առած, իր առողջութիւնը կորցրած էր: Նա ի վիճակի չէր այդ դժոխային ճանապարհը ոտքով կտրելու: Երբ շատ էի յոգնում, մօրս հետ միասին մեր միակ յոյսն ու փրկութիւնը հանդիսացող ձին էինք հեծնում: Բայց ես սոսկում էի այն մտքից, որ մեր ձին կարող է յոգնել և մեզ ճանապարհին թողնել:

Ինչպէս բոլոր նահանջները, մենք էլ արտակարգօրէն խուճապահար կարողացանք մեզ Բերկրիի մօտերը հասցնել: Յանկարծ, աննկարագրելի, սոսկալի մի խուճապ սկսւեց: Լուր տարածւեց, որ քիւրդերը Բերկրիում ճանապարհը կտրել և մինչև երկու ժամ նահանջող բազմութեանը իրենց պաշարման օղակում առնելով՝ բոլորին պիտի կոտորեն:

Ընդհանուր խուճապ, առաւ-փախաւից օգտւելով՝ չորս զինւած մարդիկ իրենց ատրճանակների սպառնալիքի տակ օրը ցերեկով մեր ձեռքից մեր փրկութեան միակ յոյսն ու ապաւէնը հանդիսացող ձին խլեցին: Ես ու մայրս աղաչեցինք, պաղատեցինք, լացեցինք, որ մեզնից մեր փախուստի միակ միջոցը հանդիսացող ձին չխլեն և չտանեն, բայց անօգուտ...

– Ձեզ ի՞նչի է պէտք այս ձին, երբ կէս ժամ չանցած քիւրդերը յարձակւելու և մեզ բոլորիս կոտորելու են: Այս ձին մեզ է պէտք՝ ձեզ պաշտպանել կարողանալու համար: Քիւրդերի դէմ կռւելու ենք գնում: Թշնամու պաշարման օղակը կոտրելու համար սարերն ենք բարձրանալու և նրանց վրայ ենք յարձակելու:

Եթէ մեզ յաջողւի նրանց քշել ու հեռացնել, դուք ողջ կը մնաք և կը փրկւէք, այլապէս ձեզ էլ, մեզ էլ կը կոտորեն և մեր ունեցածն էլ կողոպտելով՝ կը տանեն...:

Այստեղից մեր իսկական դժբախտութիւնն սկսւեց: Այդ սոսկալի խուճապի և տակնուվրայութեան մէջ ոչ ոք ցանկութիւն ունէր և ի վիճակի էր մեզ օգնութեան հասնելու: Մեր լացն ու կոծն էլ մեզ փրկել չէր կարող:

Յարձակւող թշնամու սարսափը, կոտորածի արհաւիրքը մեզ ստիպեց քայլել, ոտքով փախչել: Փախչել՝ չկոտորւելու համար: Փախչել՝ մեր խղճալի, ողբալի գոյութիւնը փրկելու համար: Փախչելով հեռանալ՝ արիւնածարաւ թշնամու անգութ ու անողորմ ճանկը չընկնելու համար:

Տարերային, բնազդական փախուստ... չկոտորւելու, և ապրել կարողանալու համար...»:

****

Անուշի և մօր հետ կատարւած այս անսիրտ ու վայրագ բռնութիւնը հոգիս ալեկոծեց: Ներսումս անզօր կատաղութիւնը փրփրում էր: Անուշի և իր մօր ձեռքից նրանց փրկութեան միակ ապաւէնն եղող ձին խլող «զինւոր» կոչւածները իրենց անգթութեամբ և վայրագութեամբ շատ զանազանութիւն չունէին անօգնական և թշւառ աղջիկներին բռնաբարող թշնամիներից:

Ա՜խ, ինչքա՞ն սարսափելի է այս զազրելի, անիծեալ պատերազմը, որ մարդկանց դարձնում է անխիղճ, վայրագ, սրիկայ և արիւնարբու: Շատ շատերից մարդկային բանականութիւնը, կարեկցութիւնը, խիղճն ու ազնւութիւնը խլում է և նրանց վերածում է արիւնածարաւ և կատաղի գազանների:

Ծայրայեղ յոգնածութիւն զգացի: Կարծես երկաթաթել մտրակների հազարաւոր հարւածների տակ մարմինս ջարդ ու փշուր էին արել: Յուշագրի ընթերցումը շարունակել չէի կարող: Գուցէ նրա համար, որ սոսկում էի այդ տողերի շարունակութեան մէջ իսկական ողբերգութիւնը լսել:

Համոզւած էի, որ այդ ողբերգութիւնը հոգեմաշ է լինելու և ողջ ներաշխարհս խորտակելու է: Գուցէ ցանկանում էի ուժերս հաւաքել, որպէսզի կարողանամ այդ ողբերգութեան հոգեկան ցնցումներին դիմադրել:

Յուշատետրը փակեցի և խնամքով ծոցի գրպանումս տեղաւորեցի: Ուզեցի շարժւել, տեղիցս բարձրանալ: Չկարողացայ: Ընդհանուր յուսալքումը վերածւել էր թմրածութեան մրափի: Երբ արթնացայ, կէս գիշերւայ մօտ էր: Նորից քնելու ցանկութիւն ունէի, բայց միշտ իմ վերադարձին անհամբեր սպասող հօրս անհանգիստ չանելու համար Հաֆթվան գիւղի մեր ժամանակաւոր բնակարանը վերադարձայ: Անքուն, վերադարձիս սպասող խեղճ հայրս, տեղեակ իմ հոգեկան ներաշխարհի ցնցումներին, մեղմօրէն, բայց մեղադրական տոնով ասաց.

– Բալէ՛ս, գիտե՞ս, որ քո ուշացումներու համար միշտ անհանգիստ կըլլամ: Եթէ քեզ չես խնայեր, գոնէ ինձ խնայէ...:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՇԻՆԵՐԻ ԳԱՂԹԻ ՈՒՂԻՆ
1918 Թ. ՄԱՐՏԻՆ
Թիֆլիս
ՌՈՒՍԱԿԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
Ղարաքիլիսա
Գանձակ
Երեւան
Կաղզվան
Էջմիածին
Իգդիր
Օրգով
Շուշի
Բայազետ
Թափարեզ
Մակու
Արաքս գետ
Նախիջեւան
Արճեշ
Բերկրիոզա
Գոռնոթ
Ջանիկ
Խառակոնիս
Սարայ
Արճակ
Վան
Սոգա
Խոյ
Կոթուրի ձոր
Դիլման
Սալմաստ
Թավրիզ
ԻՐԱՆ
Ուրմիա
ՕՍՄԱՆՅԱՆ
ԹՈՒՐՔԻԱ

ՋՈՒԼՖԱ ԱՆՑՆԵԼՈՒ ՓՈՐՁԸ ԵՒ ՍԱԼՄԱՍՏԻ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Երբ դեռ մենք Սալմաստում էինք, մեր ազգային աննման հերոս Անդրանիկը փութացել էր մեզ օգնելու: Նա մինչև Խոյ էր առաջացել մեծ դժուարութեամբ: Դժբախտաբար, մեզնից որեւէ լուր առնել չկարողանալով՝ այն եզրակացութեան էր եկել, որ մենք Սալմաստից մեկնել ենք դէպի Ուրմիա: Մեր ամենամեծ դժբախտութիւններից մէկն էլ այն էր, որ մինչ այդ որևէ միջոցով չէինք կարողացել մեր ներկայութեան մասին Ջուլֆա կամ Երևան լուր ուղարկել: Թշնամին մեզ օղակել էր:

Ռուսական զինուորական ուժերի բացակայութիւնից օգտուելով՝ թիւրքերն իրենց ջարդ ու փշուր եղած բանակը վերակազմել և սկսել էին Պարսկաստանի արևմտեան շրջանները ասպատակել: Թիւրք Ալի-Էհսանի բանակը, Ջուլֆա-Խոյից սկսած, պարսկական Ատրպատականի մեծ մասը գրաւել և վճռել էր մեզ էլ իր պաշարման օղակում առնելով՝ զինաթափել և մեր հաշուեյարդարը կատարել:

Յունիսի վերջերին տաճիկ զօրավար Ալի-Էհսան փաշան մերոնց լուր ուղարկեց և առաջարկեց զինաթափ լինելով՝ յանձնուել: Զինաթափ լինելու պարագային խոստացաւ Երևան անցնելու համար՝ դէպի Ջուլֆա մեզ ազատ ճանապարհ տալ: Մեր զինուորական ղեկավարութիւնն այդ խոստմանը չվստահացաւ: Իրաւունք էլ ունէր թիւրք փաշայի խօսքին ու խոստմանը չը հաւատալու: Փաշան նորից պատուիրակներ ուղարկեց և յայտնեց, որ էլի համաձայն է մերոնց ազատ ճանապարհ տալ: Գաղթականութիւնը կարող է 50-ից 100-ական շունչ խմբերի բաժանուելով իրար յետևից Ջուլֆա մեկնել՝ Երևան գնալու համար: Մերոնք այս անգամ էլ իրենց համաձայնութիւնը չտուին:

Յուլիսի սկզբի օրերին Ալի-Էհսան փաշան նոր առաջարկ դրեց: Քանի որ մերոնք իր տաւած խօսքին ու խոստման չեն հաւատում և դէպի Ջուլֆա-Երևան մեկնել չեն ուզում, երկու օրուայ ընթացքում Սալմաստը պիտի պարպեն և դէպի Ուրմիա հեռանան, իսկ այնտեղից էլ Պարսկաստանի ներքին նահանգներն անցնեն: Հակառակ պարագային ստիպւած կը լինի զէնքի ուժի դիմելու:

Մերոնք այս անգամ էլ չցանկացան համաձայնուել: Կատաղած փաշան իր բանակայիններին յարձակման հրաման տուեց: Մենք մի անգամ էլ մեր նախկին ոխակալ թշնամու հետ կռի բռնուեցինք:

***

Յուլիսի 2-ի առաւօտեան մեր հետախոյզները տեղեկացրել էին, որ թշնամու զինուած ուժերը Սալմաստի ուղղութեամբ յառաջանում են: «Պատրաստ կաց»-ի ահազանգը տրուեց: Մեր զինուած ուժերին հրահանգուեց թշնամուն դիմագրաւելու համար դիրքեր գրաւել: Ի՞նչ դիրքերի գրաւման մասին կարող էր խօսք լինել, երբ մերոնք ջարդ ու փշուր, յոգնատանջ և համարեա անպատրաստ վիճակումն էին:

Ճար չկար, նորից լինել-չլինելու, կռի բռնուելու կամ թշնամու գութին ապաւինելու խնդիր էր դրուած: Տարտամ և շփոթ վիճակ էր ստեղծուել: Մեր բախտը տնօրինելու կոչուած զինուորական պարագլուխները, ասորիների զինուած ուժերի ընդհանուր հրամանատար Աղա Պետրոսի հետ խորհրդակցելով, վճռեցին դիմադրել և կռուել:

Դիմադրել, կռուել...: Որոշումը տրուած էր, բայց գործադրումը չափազանց դժուար էր: Մեր կռուող ուժերի մի կարևոր մասը Բերկրի Կալէից անցել էր Իգդիր: Մի ուրիշ կարևոր մասը Ոստանի ինքնապաշտպանութեան կռիւներում կորուստներ էր տուած և ուժասպառ էր: Նահանջող գաղթականութեան շարքերում մնացած փոքրաթիւ զինուած ուժերն էլ յոգնած և յուսահատ էին: Մէկ խօսքով, վասպուրականցիների նախկին կորովը, հաւատքն ու ոգևորութիւնը տկարացել էր:

«Օտարութեան մէջ ու՞մ համար զոհուելու, արիւնս թափելու եմ»,– մտածում էր փախուստի ճանապարհը բռնած իւրաքանչիւր անտուն և անտէր գաղթական:

Մեր այս ընդհանուր յուսալքումից ու թմրածութիւնից սթափուելու գործում, պիտի խոստովանել, ասորիների Սալմաստի զինուած ուժերի պետը՝ Աղա Պետրոսը, մեծ և նշանակալից դեր կատարեց: Նա յանձնառու եղաւ իր մարդկանց միջոցով Դիլիմանի ճակատը պաշտպանել: Սրա ձախ թևի վրայ ընկնում էր Հաֆթվանի ճակատը, որի պաշտպանութիւնը գնդապետ Մելքոնեանին յանձնուեց: Այս փորձուած և հայրենասէր զինուորականը Սալմաստի այս վերջին վճռական կռւում գնահատելի ծառայութիւն մատուցեց: Նրա տրամադրութեան ներքև դրուած էր ռուս բանակի թողած (չեմ յիշում, երկու՞, թէ՞ երեք) դաշտային թնդանօթներից միայն մէկը: Դժբախտաբար, նրա հրամանատարութեան տակ գտնուած մի 100-120-ի չափ զինուորները բոլորովին անփորձ էին: Այս կռւից յետոյ հարիւրաւոր անգամներ ինքս ինձ հարց եմ տուել. «Հապա ի՞նչ էին եղել, ու՞ր էին մնացել մեր նախկին, փորձառու և անւանի զինուորները»:

Երբ գնդապետ Մելքոնեանը մի կարճ, բայց ազդու ճառի ընթացքում դրութեան լրջութիւնը բացատրելուց յետոյ իր շուրջ հաւաքւած զինուած մարդկանց առաջարկեց ինքնայօժար կամքով յիսուն հոգինոց մի խումբ կազմել՝ Հաֆթվանի բանակատեղից կէս կիլոմետր հեռաւորութեան վրայ ընկնող աջ թևի պաշտպանութեան համար գնալու, ամէնի վրայ կարծես Զաքարիայի պապանձումն ընկաւ:

Մելքոնեանը յուսահատ և ճարահատ բղաւեց.

– Մի՞թէ այս բազմութեան մէջ հայրենասէր հայ կոչուելու պատիւն ունեցող մէկ գոյութիւն չունի: Ու՞ր

են մնացել մեր հերոսամարտերին մասնակցող զինուորներն ու նրանց արժանաւոր հայրենակիցները:

Առանց ինձ հաշիւ տալու և մտածելու արածիս լրջութեան մասին, առաջ նետուելով՝ բացականչեցի.

– Պարո՛ն գնդապետ, ես վանեցի եմ և պատրաստ եմ ձեր հրահանգին ենթարկուելու:

– Կեցցե՛ս, տղա՛ս, առաջ ե՛կ:

Իր հերթին Մելքոնեանը, ինձ ընդառաջելով, ինձ իր բազուկներում առաւ և ճակատիցս համբուրեց: Մի քանի րոպէում իմ շուրջ հաւաքուեցին 30-40 հոգի զանազան տարիքի զինուած մարդիկ, որոնցից հազիւ մի քանիսին էի ճանաչում:

– Այս երիտասարդին,– ինձ մատնանշելով՝ ասաց Մելքոնեանը,– նշանակում եմ ձեր գլխաւորը: Ժամանակը չափազանց կարճ է, և մենք խրամ փորելու ի վիճակի չենք: Դուք պէտք է տեղաւորուէք այստեղից 500 քայլ հեռաւորութիւն ունեցող և ճիշտ այս ուղղութեան վրայ գտնուող գետակի հունի փոսերում: Երբ թշնամին կրակել սկսեց, դուք էլ կրակել սկսէք և ինչքան հնարաւոր է, արագաշարժ եղէք, որպէսզի թշնամին ենթադրի կռուող և պաշտպանողների հետ գործ ունի:

– Բայց, պարո՛ն գնդապետ,– բողոքելով առարկեցի,– ես բոլորովին անփորձ եմ և մի քանի օր է, ինչ զինուոր եմ դարձել: Լաւ կը լինի խմբի ղեկավարութիւնը մի ուրիշ աւելի, փորձած զինուորի յանձնէք:

– Ես միանգամայն համոզուած եմ, որ ձեր այս խումբը մի ազդեցիկ գործ կատարել չի կարող: Ամենակարևորն այն է, որ թշնամին ենթադրի, թէ մեր պաշտպանութեան ճակատն ընդարձակ է: Յետոյ կռուի մէջ փորձառութիւնից աւելի համարձակութիւն և քաջութիւն է անհրաժեշտ: Եթէ թշնամին ձեզ շատ նեղելու լինի, մենք նրան մեր թնդանօթի և ինքնաշխատների կրակի տակ առնենք: Գնացէ՛ք, Տէրը ձեզ հետ թող լինի:

Նորից պատրաստւում էի բողոքելու այդ աննախամտածուած նշանակման դէմ, երբ զինակից ընկերս՝ Սեդրակենց Մկրտիչը, իրեն շտապ հասցնելով ինձ և կողքս բոթելով՝ ասաց.

– Ա՜յ տղայ, մի՛ երկարացնիր, համաձայնի՛ր, հրէս կը տեսնես, որ էստեղ մի տղամարդ էլ չկայ ու չի ճարուի, որ էս նեղ դրութեան մէջ մեր դարդին դարման էլնի: Կասես հըմէն էլ գետնի տակ են մտած: Մի՛ մտածի, ես միշտ քու կշտին կէլնեմ: Աստուած մեծ ի: Բալքի էս մէկ շառիցն էլ մեզ ազատի...

Այս խօսքերից յետոյ մեր շուրջ հաւաքուած մարդկանց թելադրեց կանչել. «Կեցցէ՛ մեր երիտասարդ խմբապետը: Կեցցէ՛ մեր «հերոս» խմբապետը...»:

Այս աղմուկ-աղաղակով և բղաւոց-կեցցէներով շուրջբոլորս հաւաքուած մարդիկ, որոնք թէև զինուած էին, բայց որոնց կռել և դիմադրել կարողանալու մասին այնքան շատ, ինչքան իմ մասին կասկածում էի, ինձ իրենց մէջտեղ առնելով, առաջ քշեցին: Մեկնեցինք մեզ ցոյց տրուած պաշտպանութեան վայրը:

Այդ պաշտպանութեան՝ այսպէս կոչուած դիրքը ոչ այլ ինչ էր, քան մի անջուր գետընթաց առու: Այդ առուի խորութիւնը այնքան էր, որ չոքած վիճակում հազիւ կարող էր մեզ թշնամու տեսողութիւնից թաքցնել:

Մեր տրուած պաշարը հազիւ մէկ օրուայ համար կը բաւականանար և բաղկացած էր մէկ կլոր հացից, կէս կիլոնոց պահածոյ մսից և մի զինուորական ամանի ջրից: Մեկնելուց առաջ վերջին րոպէին, Մելքոնեանն ինձ յանձնարարեց ամէն 25 քայլի վրայ առուի մէջ մէկ հոգի դնել: Եթէ մեր խումբը 40 հոգուց բաղկացած լինէր, մեր բռնած տարածութիւնը մէկ կիլոմետր կը լինէր: Մեզ համար որոշուած առուն հասնելուց յետոյ ինձ հետ եկած զինուորների թիւն ստուգեցի: Ինձ հետ միասին հաշուած՝ միայն 34 հոգի էին:

ԱՆՉՕՐ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱԽՈՒՍՏ

Մեր դիրքերը գրաւելուց յետոյ մութն ընկաւ: Մեր վիճակը կատարելապէս արգահատելի էր: Առուն, որում պատսպարուել էինք, խոնաւ և ցուրտ էր: Գուցէ կարելի լինէր ցախ ու չորացած խոտեր հաւաքելով՝ կրակ վառել և մի քիչ տաքանալ, բայց վախենում էինք: Մինչդեռ մի քանի կիլոմետրի վրայ մեր դէմն ու դէմը բանակած թշնամին բազմաթիւ տեղերում խարոյկներ էր վառել: Գիշերուան լռութեան մէջ թեթև զեփիւռի ալիքները վառուած խարոյկներից բարձրացող և տարածուող լոյսերն ու խուլ աղմուկները մինչև մեզ էին հասցնում:

Թշնամու ինքնավստահ համարձակութիւնը նրանց ոյժի անհամեմատ շատութիւնն և գերազանցութիւնն էր ապացուցում: Մեր անկազմակերպ, պատահական, ուժով հաւաքած և պաշտպանութեան ամէն միջոցներից զրկուած մի խումբ մարդկանց դիմաց կանգնած էր զինուորական ամէն միջոցներով սպառազինուած, պաշտպանութեան ամէն հնարաւորութիւններով օժտուած և երկարատև ու կատաղի կռիւներում մարզուած ու թրծուած մի զինուորական ոյժ, առնուազն մէկից ոչ պակաս մի վաշտ:

Ինձ մօտ, իմ շուրջ հաւաքած զինուոր կոչուածներս հասկանում էինք այս բոլորը, բայց մէկս միւսին բոլորովին չը յուսահատեցնելու և կորովազուրկ անելու մտավախութեամբ չէինք համարձակւում ասել, խոստովանել այն սոսկալին, ինչ հասկանում, ըմբռնում և զգում էինք:

Վերջապէս Մկրտիչը, որն ինձ խրախուսել էր յանձնառու լինել այս անսահմանօրէն դժուար պարտականութիւնը, լեզուի եկաւ և ասաց.

– Սիրա՛ք, ես յիմարութիւն գործեցի, որ քեզ քաջալերեցի այսպէս ծանր ու վտանգաւոր բեռան տակ մտնել: Կասկած չկայ, որ անոնց յարձակման

առաջին հարուածին ալ դիմադրել չենք կարենալու: Անոնք մեզի մժեղների պէս կը ճխլտեն:

– Սիրելի՛ հայրենակից,– պատասխանեցի Մկրտչին,– հիմի արդէն շատ ուշ է այդ մասին մտածելու: Այս յանդուգն քայլի առաջին պատասխանատուն ես եմ, որ առանց ինձ հաշիւ տալու, ամենաշուտը մէջտեղ ընկայ, և յետոյ դու՛, որ ինձ ստիպեցիր այս ծանր պատասխանատուութիւնն ստանձնել: Ամէն պարագայում, ինձ թւում է, որ մեր բախտը հէնց այն ժամանակւանից դէպի վատը շուռ եկաւ, երբ այդ բախտը տնօրինողները մեր նահանջի ժամկէտը յետաձգեցին: Այդ ուշացումը եղաւ մեր այս կրած բոլոր դժբախտութիւնների իսկական պատճառը: Եթէ գոնէ մի քանի օր շուտ նահանջած լինէինք, Բերկրիի ճանապարհը մեր առաջ փակւած չէր լինի, և մենք մեր բազմահազար հայրենակիցների հետ այս անծանօթ միջավայրը շպրտւած չէինք լինի: Մենք ներկայիս մեր հայրենակիցների մօտ՝ Իգդիր, Էջմիածին, Երևան, Ղարաքիլիսա և մեր հայրենիքի զանազան տեղերում կը լինէինք և մեր բախտը նրանց ճակատագրի հետ կապած կը լինէինք: Փոխանակ տասնեակ հազարներով վասպուրականցիների՝ զանազան անկիւններում և օտար երկրներում թշնամու սուրին, կոտորածին, քաղցածութեան, հիւանդութեան և զրկանքների ենթարկուելու՝ մեր ազգակիցների հետ միասին և միատեղ, առանց մեր կեանքն ու արիւնը խնայելու, մեր վերջնական փրկութեան և ազատութեան համար կը կռուէինք, կը ճակատէինք...:

– Միանգամայն ճշմարիտ է խմբապետի գաղափարը,– իմ հասցէին ակնարկելով՝ ասաց մէկը, որին ես չէի ճանաչում, և որի արտասանած խմբապետ բառն ինձ անհանգստութիւն պատճառեց: Երևակայեցէք, մի՞թէ արժէ, որ մենք այստեղ էշ նահատակ էլնինք, էն էլ ու՞մ համար:

– Հայրենակիցներ,– ընդմիջեցի ես՝ ցանկանալով կարճել ընկերներիս արտայայտած դժգոհութիւնները,– ներկայիս մեզ անհրաժեշտ է էգուց առաւօտեան լուսաբացի մասին մտածել: Ինչպէս նկատեցի, մեր այս առուն, որը կոչւած է մեզ համար դիրք ծառայելու, շատ անյարմար է: Կարծում եմ՝ լաւ կը լինի մեզ որոշ չափով պաշտպանելու համար ամէն մէկս աշխատենք գոնէ մեր կանգնած տեղերը հնարաւորին չափով խորացնելու: Գետնի հողը փուխր է, և ենթադրում եմ, որ դժւար չի լինի փորել և մի քիչ խորացնել: Այս գործը մեզ կը զբաղեցնի և մեր սառչել սկսող մարմինը կը տաքացնի: Ինչպէ՞ս էք կարծում, առաջարկս նպատակայարմա՞ր չէ:

– Այո, շատ անհրաժէշտ է,– ձայնեցին ամէն կողմից,– բայց ինչո՞վ պիտի փորենք: Բահ ու բրիչ չունենք:

– Ճար չկայ: Մեր սուինների օգնութեամբ,– պատասխանեցի և որպէսզի բարոյապէս պարտադրած լինէի, քանի որ իրականութեան մէջ շուրջս հաւաքւածներն իմ հանդէպ զինուորական որևէ պարտաւորութեան ենթակայ չէին, առաջին հերթին ես սկսեցի փորել իմ կանգնած տեղը: Միւսները դժկամութեամբ ինձ հետևեցին:

***

Գիշերը շատ անհանգիստ և սրտատրոփ լուսացրի: Իմ հայրենակից Սեդրակենց Մկրտիչը, որ ինձ մէկ-երկու շաբաթ առաջ Դիլիմանում փրկել էր մի անվրէպ գնդակից, ինձ թէ՛ խօսակցութեամբ և թէ՛ գործով զբաղեցրել էր: Բոլորովին դիպւածաբար ինձ հանդիպած այդ մարդը, որն ինձնից մի 6-7 տարիների տարբերութեամբ աւելի մեծ էր, իմ անկեղծ և սրտացաւ զինակիցը դարձաւ: Չքնելու և չսառչելու մտավախութեամբ մենք միասին մինչև լուսաբաց երեք անգամ և 2-3 ժամւայ ընդմիջումներով մեզ հետ պաշտպանութեան համար «դիրքեր» եկած զինակիցներին այցելութեան գնացինք: Այդ դիրք կոչւած և մեր գրաւած առուն մօտ մէկ կիլոմետր տարածութիւն ունէր, և ամէն զինուոր իր ոտքերի տակ տարբեր խորութեամբ փոսեր էր քանդել: Մենք երկուսս էլ մեր հերթին մեր ոտների տակի գետինը կէս մետրով խորացրել և վերածել էինք մեզ համար պատսպարման դիրքի: Մկրտչին յայտնեցի, որ ինքնապաշտպանութեան օրերին և նրանից յետոյ ես թիկունքային աշխատանք էի կատարել և բոլորովին դիպւածաբար և ինքնակամ զինուոր և կռուող էի դարձել: Նա ինձ պատուոյ խօսք տւեց իմ՝ այս պատասխանատու պարտականութեան մէջ ամէն կերպ օգնել, որպէսզի ամօթալի չմնամ:

– Այստեղ հասնելէն վերջ,– ասաց նա,– և մեր դէմ բանւակած թշնամու՝ շատ մեծ հաւանականութեամբ անհամեմատ շատութիւնը նկատելէ յետոյ, մեր գործած սխալը հասկացայ: Հիմի նոր կըմբռնեմ, թէ ինչու՞ ոչ ոք այստեղ գալու համաձայնութիւն չտւեց: Կարծես մեզանից զատ՝ ամենքը չափազանց վտանգաւոր լինելու պարագային ծանօթ էին:

– Այո՛, բարեկա՛մ,– հաստատեցի ընկերոջս ենթադրութիւնը,– հաւանաբար ճիշտ է եզրակացութիւնդ: Եթէ գնդապետ Մելքոնեանի թախանձագին պնդումին ոչ մէկը չցանկացաւ ընդառաջել, անկասկած, առանց պատճառի չէր. նրա հպճեպ նշանակումը ինձ հնարաւորութիւն չտւեց խնդրի լրջութիւնն ըմբռնելու:

***

Արևածագից առաջ հորիզոնը շառագունել սկսեց: Երկնակամարի արևելքում կարմրաւուն շողեր ցրիւ գալ սկսեցին: Մկրտչին խնդրեցի մեր կանգնած տեղից դէպի աջ կողմ եղած զինուորների թիւը հաշւել, իսկ ես յառաջացայ դէպի ձախ՝ մեր զինակիցների թիւը ստուգելու համար. պարզւեց, որ

գիշերուան մեզ հետ եկած կռուողներից չորսը փախել և դասալիք են եղել: Ի՞նչ կարող էի անել:

Հանդիպակաց կողմից թշնամու հրացանային հատ ու կենտ կրակոցների ձայներ լսեցին: Դիլիմանում ամրացած ասորի և հայ զինուորները նրանց կրակոցներին պատասխանեցին: Քառորդ ժամից հրացանաձգութիւնները հետզհետէ ուժեղացան:

Թշնամին յարձակում ձեռնարկեց: Կատաղի էր այդ յարձակումը: Ինչպէս միշտ, այս անգամ էլ թիւրքերը յարձակուեցին «Եա՜-Ալլահ-Ալլահ, ուռա, գեաուրլարը էօլդուր... դինսիզլարը մահվէյլա» (թարգմ. «Ո՜վ աստված, աստված, ուռա՜, անհավատների սպանիր... կրոն չունեցողներին ոչնչացրու») և ուրիշ այլազան ճիչ ու բղաւոցներով: Նրանք յառաջանում էին շղթայանման իրար հետևող շարքերով: Նրանց բազմահարուածեաններից կարկտանման գնդակներ էին թափւում: Նրանց յարձակմանն օժանդակելու և խուճապ ստեղծելու նպատակով նրանց թնդանօթները դժոխային կրակ բացին: Այս թնդանօթներից պայթելով ցրիւ եկող գնդակներ էին տեղում: Մէկ խօսքով, մեր և մեր դիրքերի ուղղութեամբ հեղեղանման կրակներ էին թափւում:

Ըստ երևոյթին թշնամին նկատել էր մեր՝ առի ուղղութեամբ ցոյց տրուած դիմադրութեան անզօրութիւնը, նրանք անյապաղ որոշել էին մեր գտնուած ուղղութեամբ ներթափանցում կատարել և մերոնց պաշտպանութեան գիծը ճեղքելով և թիկունք անցնելով՝ Դիլիմանում կենտրոնացած և Հաֆթվանի ճակատում եղած մեր դիմադրական երկու գլխաւոր դիրքերը իրենց պաշարման օղակում առնել:

Դիմադրական և պաշտպանողական ամէն հնարաւորութիւնից զուրկ մեր առու-դիրքի վիճակը սարսափելիօրէն ճգնաժամային էր: Մէկ ժամ չանցած՝ մեր խմբից 4 հոգի սպանուել, իսկ 5-ը ծանրօրէն վիրաւորուած, փռուել էին առի երկարութեամբ: Ես էլ ձախ ծունկից էի վիրաւորուած: Մի քանի րոպէում ծունկս, սրունքս ու ոտքս արիւնաթաթախ էին դառել: Մկրտիչը, ինձ օգնութեան հասնելով, թէ՛ իր և թէ՛ իմ թաշկինակներով ծունկս ամրօրէն կապոտեց: Անօգուտ էր, արիւնը շարունակում էր ծորալ:

Բարեբախտաբար, հէնց այդ ժամանակ մի հազուադէպ հրաշք կատարուեց: Այն բացառիկ հրաշքների հրաշքը, որպիսին մարդիկ իրենց կեանքում կա՛մ երբեք և կա՛մ մի անգամ հանդիպելու և տեսնելու բախտն են ունենում:

Մելքոնեանի՝ ամէն գովեստի արժանի ղեկավարութեան ներքև եղած փոքրաթիւ զինուորական ուժերը ձեռնարկել էին խիստ յարձակման: Դաշտային թնդանօթ ու գնդացիրները սկսել էին խելայեղօրէն յարձակող թշնամու գլխին կատաղի կրակ թափել: Մելքոնեանի հակայարձակմանը ըստ ամենայնի և անձնուիրաբար օժանդակելու շտապել էին Դիլիմանում կենտրոնացած մեր ուժերը: Փայաջուկում և Ղալասարում եղած հայ-ասորական ուժերն էլ մասնակցել էին հակայարձակման:

Բաց դաշտում խելագարօրէն յարձակուող թիւրքերը չորացած խոտերի նման մերոնց թափած կարկուտանման կրակներից հնձւում և տապալւում էին: Նրանց հեղեղանման վայրագ յարձակման թափը կոտրուեց: Նրանք, ի տես սպանուած և գետնահար եղած իրենց բազմաթիւ զինակիցների, սարսափահար եղած, դէպի իրենց նախկին դիրքերը յետ փախան: Մենք հրաշքով, անսպասելի, աներևակայելի հրաշքով փրկուած էինք:

– Մեր էստեղ մնալը միանգամայն աննպատակ է: Եթէ մինչև կէս ժամ քեզ մերոնց մօտ չկարողանամ հասցնել, բոլորովին արնաքամ կը լինես,– ասաց Մկրտիչը և առանց իմ պատասխանին սպասելու՝ թևիս տակ մտնելով, քաշէքաշ և անսահման նեղութեամբ ինձ մեր կենտրոնական դիրքը՝ Մելքոնեանի մօտ առաջնորդեց:

– Իսկ այս չարաղէտ առի մէջ ընկած մեր զինակիցներից գուցէ դեռ վերապրող վիրաւորներ կան: Նրանց հետ ի՞նչ պիտի անել,– մրթմրթացի ես:

– Ինչքան շուտ կարողանանք տեղ հասնել, շուտ կը կարողանանք նրանց օգնութեան համար գնդապետին տեղեկացնել,– պատասխանեց ինձ փրկելու ջանացող ընկերս:

ՎԻՐԱՒՈՐՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ

Սպասումիս միանգամայն հակառակ՝ գնդապետ Մելքոնեանը ինձ գրկաբաց ընդունեց և առաջին անգամուան նման ճակատիցս համբուրելով՝ ասաց.

– Կեցցե՛ս, տղա՛ս, քո յանդգնութիւնն ու քաջութիւնը ամէն գովեստի արժանի է:

– Բայց, պարո՛ն գնդապետ, ես ինձ յանձնուած տղաների հետ միասին ոչինչ կարողացայ անել և մեր անճարակութեան համար մեղաւոր ու ամօթահար եմ...

– Ո՛չ, տղա՛ս, ո՛չ: Սխալւում ես: Կրկնում եմ, քո անձնուէր յանձնառութիւնը միանգամայն արժանի է գովեստի: Ես զինուորական եմ և պատերազմական յարձակողական և դիմադրական գործերից բաւական տեղեակ: Երբեմն տակտիկական ամենափոքր ցուցադրումը կարող է նշանակալից արդիւնքի հասնել: Թիւրքերը խաբկանքի ենթարկուեցին՝ ձեր պաշտպանած առի ուղղութեամբ յարձակում գործելով: Նրանք ենթադրում էին՝ այնտեղ հաւաքուած անպատնէշ կռուողներին, որոնց թիւն իսկականից շատ աւելին էին կարծում, առաջին հերթին կոտորելով, մեր շարքերում յուսալքում կառաջացնեն և մեր թիկունքն անցնելով՝ մեզ պաշարման կենթարկեն: Մինչ նրանք ձեր ուղղութեամբ իրենց յարձակումն սկսեցին, մենք կարողացանք, առիթից լաւապէս օգտուելով, նրանց ճակատից և թիկունքից հարուածել և նրանց՝ չնախամտածուած և համարձակ խոյանք կատարող զինուորներին կոտորել: Մեր, Դի-

լիմանի և յետոյ Փայաջուկի և Ղալասարի հակահարուածն ու կոտորածը նրանց սարսափահար արին և ստիպեցին փախուստի դիմել:

Բայց ես իրաւունք չունեմ սրանից աւելի քեզ ուշացնելու: Անհրաժեշտ է անմիջապէս վէրքդ խնամել: Գուցէ անհրաժէշտ լինի ծունկիդ վրայ վիրաբուժական մի փոքր գործողութիւն կատարելու: Ինչպէս մինչև հիմա, սրանից յետոյ էլ, վստահ եմ, որ խիզախ կը լինես:

Բաժանուելուց առաջ Մելքոնեանին խնդրեցի.

– Պարո՛ն գնդապետ, աղաչում եմ որևէ միջոցով մեր պաշտպանած առի մէջ ընկածներին անմիջապէս այստեղ փոխադրել տաք: Գուցէ նրանց մէջ վիրաւորներ լինեն, որոնց կարելի կը լինի փրկել:

– Այդ մասին միանգամայն միամիտ կարող ես լինել: Անմիջապէս նրանց փոխադրութեան համար անհրաժեշտ կարգադրութիւնը կանեմ:

***

Նորից իմ անձնուէր ընկերոջ ընկերակցութեամբ և աջակցութեամբ զինուորական մի փոքր վանեթ ամբուլանսով, Դիլիման ճանապարհուեցինք: Գնդապետ Մելքոնեանը Դիլիմանի հիւանդանոցի վիրաբոյժի հասցէով մի լաւ յանձնարարական էր գրել: Մինչև հիւանդանոց հասնելը՝ ես արնաքամ և ծայրայեղօրէն ուժասպառ էի եղել: Վիրաբուժական սեղանի վրայ դրուելս իմացայ: Նրանից յետոյ ամբողջ երկու օր ուշաթափ էի և գիտակցութիւնից զուրկ:

Երրորդ օրը, երբ աչքերս բացի, հօրս ու Մկրտչին անկողնուս կողքին նստած տեսայ: Հայրս անսահման ուրախութեամբ բացականչեց.

– Փա՛ռք քեզ, ամենազօ՛ր Աստուած: Հազար անգամ փառք քեզ: Դու ինձ խղճացիր և կրկին ինձ նուիրեցիր իմ ներկայի միակ յոյսն ու նեցուկը՝ իմ սիրելի զաւակը:

– Տէ՛ր հայր, քո և մեր Աստուածը շատ բարեգութ և ողորմած է,– ձայնեց Մկրտիչը,– նա մեր պաղատանքը լսեց և մեր սիրելի Սիրաքին նորից կեանք բաշխեց:

– Ի՞նչ է պատահել: Ինչու՞ այդքան յուզուած ու յուսահատ էք: Ես չափազանց յոգնած և արիւնաքամ էի եղել. դրա համար էլ քնելով հանգստացայ:

– Բայց քո՝ այդ քնելով հանգստանալը մեզ վրայ շատ թանկ նստեց: Մենք ամբողջ երեք ցերեկ-գիշեր քեզ համար անքնութեան և անհանգստութեան ենթարկուած էինք,– ասաց Մկրտիչը:

Ինձ պատմեցին, որ վիրաբուժական գործողութիւնը բաւական լուրջ էր եղել և երկար տևել: Վիրաբոյժն ու իր օգնականը շարափնել պայթած գնդակի երկաթի մի մեծ և մի քանի փոքր կտորտանքը ծնկիցս հանելու համար կէս ժամից աւելի չարչարուել էին: Բարեբախտաբար, ծնկիս ոսկորներից ջարդուած չէր եղել: Իմ ուշագնացութեան պատճառը երկարատև արիւնահոսութիւնն էր եղել:

ՆՈՐԻՑ ՆԱՀԱՆՋ ՈՒ ՓԱԽՈՒՍՏ

Չորրորդ օրն էր, ինչ հիւանդանոցումն էի: Գթութեան քոյրը, քաղցրաբարոյ և ուշադիր, օրական երկու անգամ ծունկիս վէրքը մաքրում և վիրակապում էր: Նրա ասութեամբ՝ վէրքը արագընթաց լաւանում էր և մինչև 7-8 օր բոլորովին կը լաւանար և կը փակուէր: Հայրս մահճակալիցս չէր հեռանում:

Կէսօրուան մօտերքը բարեկամս՝ Մկրտիչը, որ վերջին գիշերը միայն բացակայել էր, շնչասպառ ներս ընկաւ և շփոթ ու խուճապահար յայտնեց.

– Նորէն նահանջելու և փախուստ տալու չարաղէտ լուրեր են տարածուած: Տեղեկութիւն է ստացուած, որ տաճիկները նորէն յարձակուելու են, և այս անգամ, դժբախտաբար, աւելի մեծ ուժերով և պատրաստութիւններով: Լսեցի նաև, որ ասորի կռուող մարդկանց պետը՝ Աղա Պետրոսը, որ մինչև հիմա նահանջ կատարելու հակառակ էր, այս անգամ իր համաձայնութիւնը տուած է: Մերոնք յայտնած են, եթէ նա չհամաձայնի, առանց նրա մասնակցութեան Սալմաստը թողնելու և գաղթելու են Ուրմիա:

Նահանջ, փախուստ, ինչպէս մեր բոլոր հայրենակիցների, ինձ համար էլ ատելի և զզուելի էին դարձել: Ինձ համար այս անգամ այդ փախուստի պատկերացումը սարսափելի էր: Չէ՞ որ ներկայ վիճակում ոչ միայն փախուստ տալ, այլ նոյնիսկ ոտքի վրայ կանգնելն էլ ինձ համար հնարաւոր չէր: Ուրեմն ես, անտէր ու անպաշտպան, թշնամու ձեռքն էի ընկնելու: Անսահման տխրութեան և յուսալքման թախիծը ցնցեց ինձ և ամբողջ մարմինս սարսուռի մատնեց:

– Ուրեմն ես մեր անգութ և վայրագ թշնամու ճանկն եմ ընկնելու,– անյուսալի մրմնջացի:

– Զուր տեղը մի՛ մտատանջուիր: Էս է, Մելքոնեանի մօտ կը վազեմ, համոզած եմ՝ նա քեզ համար փոխադրութեան միջոց կը տրամադրի: Սեղրակեանն առանց իմ կարծիքին ու պատասխանին սպասելու դուրս վազեց:

***

Թիւրք վերակազմուած բանակը, թիկունքից և ամէն կողմից ապահովուած էր: Ռուսական բանակն ու նրանց սարսափազդու կոզակների հեծեալ գնդերը վերադարձել էին իրենց հայրենիքը: Տաճիկների հոգէառ Անդրանիկն էլ, մեր գոյութիւնից և տեղավայրից անտեղեակ, հեռացել էր Պարսկաստանի սահմաններից: Անգլիացիների շաքն էլ այս շրջաններից անհետացել էր: Թիւրք զինուորականութեան և բանակի համար անկաշկանդ գործողութեան լայն և անվտանգ ասպարէզ էր բացուել: Ժամանակն էր վերջապէս մի քանի հազար մինչ այդ անփորձ մնացած հայերի և նրանց հետ գործակցութեան մտած

ասորիների հաշիւը մաքրել՝ կոտորել, սրբել և այդպիսով կուտակւած հին վրէժը միանգամայն լուծել:

1918 թւի յուլիսի 6-ի գիշերւան ուշ ժամերին նահանջի հրահանգը տրւեց: Նորից բազմիցս կրկնւած թշւառութեան նոր շրջան: Նոյն աղէտն ու ողբերգութիւնը, նահանջ-փախուստ: Այս անգամ դէպի Ուրմիա:

Գիշերւայ ժամը տասն ու կէսն էր, երբ Սեղրակեանը, գոհ ու յաղթական, ներս ընկաւ:

– Տեսա՛ր, բարեկամ, որ պ. Մելքոնեանն իսկական տղամարդ, իգիթ մարդ է: Նա նոյնիսկ շնորհակալ եղաւ, որ քու մասին իրենց յիշեցնելու գնացի: Անմիջապէս կարգադրեց մի լաւ ֆուրգոն, կուզէի ասել լաւ ձիերով լծւած ֆուրգոն տրամադրել քեզ և հիւանդանոցի ծանր վիրաւորների համար: Ֆուրգոնը կանգնած է դռանը, իսկ այս թղթով անոր կարգադրութիւնը հիւանդանոցի գլխաւորի համար: Մի քիչ յետոյ աւելացրեց.

– Տէր Բաբայի և ինձ համար ալ մէկ լաւ իշուկ ճարեցի: Տէր Բաբան ինչպէս քու, այնպէս ալ իմ հայրն է: Էշի վրայ նստելու համար իրար հետ կռիւ ընելու չենք: Մի կերպ եօլա կերթանք:

ՈՒՐՄԻԱՅՈՒՄ

Երկու օրւայ տանջալից ճամփորդութիւնից յետոյ հասանք Ուրմիա քաղաքը: Երկու օրւայ ընթացքում ֆուրգոնի ճանապարհի անընդհատ ցնցումների հետևանքով ծունկիս վէրքից նորից արիւն էր հոսում: Ծակծկող ցաւերն ինձ բոլորովին կուչ էին բերել:

Բարեբախտաբար, նախքան բոլորովին արիւնաքամ լինելս, հասանք Ուրմիա: Այդտեղի ամերիկեան հիւանդանոցը, ինձ և ինձ հետ եղած վիրաւորներին ընդունելով, շտապ կարգով վէրքերը մաքրեցին, խնամեցին և բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առան: Հիւանդանոցն աւելի և կազմակերպւած, մաքուր, իսկ վիրաբուժական բաժնի սենեակները մեծ և լուսաւոր էին:

Վիրաբոյժն ամերիկացի՞, թէ՞ անգլիացի էր և տարիներից ի վեր եղել էր Ուրմիայում: Թիւրքերէն լեզւով բաւական սահուն խօսում էր: Շատ ուշադիր և սրտացաւ էր թւում: Ինձ յուսադրելով ասաց.

– Երիտասա՛րդ, բոլորովին անհոգ եղի՛ր: Մի քանի օրից կատարելապէս կառողջանաս և առաջւայ նման ազատ քայլել կկարես: Բարեբախտաբար, վէրքդ վտանգաւոր չէ, և, որ ուրախալին է, չի թարախակալել, և արեան վարակում չես ստացել:

Վիրաբոյժի հաւաստիացումն ինձ յուսադրեց և չափազանց ուրախացայ՝ մտածելով, որ ոտքի թերութիւն չեմ ունենալու: Մարմնիս ստացած վէրքն ինձ այնքան չէր յուսալքել, որչափ Անուշի դժբախտութեան սրտիս հասցրած անբուժելի վէրքը:

Այդ անբուժելի վէրքի անգութ և անտանելի հարւածից հոգիս ընկճւած ու ամայացած էր: Վիրաբոյժն ինձ հաւաստիացրել էր, որ մի քանի օրից ոտքիս հասած վէրքը լաւանալու էր, իսկ սրտիս հասած վէրքի սպիացման համար որևէ խոստում և երաշխիք գոյութիւն ունենալ չէր կարող: Այդ օրերում կեանքն ինձ համար իր արժէքը գրեթէ կորցրել էր...

***

Ուրմիա քաղաքը (ներկայիս այդ քաղաքը կոչւում է Ռզայիէ)՝ իր շրջակայ գիւղերով, սքանչելիօրէն գեղեցիկ էր: Եթէ ես Այգեստանում ծնւած և մեծացած չլինէի, պիտի ենթադրէի, որ իմ տեսած քաղաքներից և գիւղերից ամենագեղեցիկ ու կենսախինդը Ուրմիան և նրան շրջապատող գիւղերն են: Սքանչելի թարմութիւն, ճոխ բուսականութիւն, գեղեցկատեսիլ և մշտադալար ծառեր և մանաւանդ որթաթուփեր, կենսաբեր կանաչութիւն, զզզոնն ջրեր, կեանք ու կորով յորդող անվերջ ու անհատնում այգիներ և ծառաստաններ: Մէկ խօսքով, դրախտանման մի անհուն տարածութիւն, որի խտացած ու հասկ նետած կանաչութեան արանքներում մարդ ու կենդանին և անշունչ տուն ու տեղերը ծածկւում, կորում և անհետանում էին: Իսկապէս, լեզուն ու գրիչը անկարող են այդ եղեմական վայրի անթւելի և անհատնում գեղեցկութիւնները նկարագրել:

Շատ բնական էր, որ բնութեան այդպիսի արտակարգ գեղեցկութիւններով ճոխացած վայրում ապրող ազգաբնակչութիւնը, մանաւանդ Ռահվա, Գեարդաբադ գիւղերում և զանազան շրջաններում ոչ մեծ թւով ապրող հայութիւնը, այդ հողաշերտերի բարեմասնութիւններով օժտւած պիտի լինէր:

Ուրմիայի հայերը բարեսիրտ, առատաձեռն և հիւրասէր էին: Մեզ՝ տանջակոծ, յոգնաբեկ, տնից-տեղից, հայրենի օջախից վտարւած ու սոված, կիսամերկ գաղթականներիս, նրանք գրկաբաց և ժպտադէմ ընդունեցին: Կարծես դիմաւորում էին իրենց՝ տարիներից ի վեր օտարութեան մէջ մաշւած և հայրենի օջախը վերադարձած հարազատ ծնողներին, որդիներին, քոյրերին ու եղբայրներին: Նրանք իրենց ունեցած հացն ու կենսամթերքը, իրենց շաքարահամ խաղողն ու խնձորը անխնայ մեզ էին տալիս: Տալիս, ընծայում էին իրենց ունեցած ամէն ինչը՝ առանց մտահոգւելու, որ իրենք էլ մի քանի օրերից յետոյ մեզ նման քաղցած կարող են մնալ: Գրեթէ նոյն վերաբերմունքն ունէին տեղացի ասորիներն իրենց եկւոր գաղթական ասորի հայրենակիցների նկատմամբ:

Պատիւ այդ եղեմավայրի հոգեփայլ ազգաբնակչութեանը:

ՍՐՏԱԿԵՂԵՔ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Ուրմիայի բնութեան այդ արտակարգ թարմութիւնը՝ իր կենսատու օդովն ու ջրով, իմ վէրքիս ա-

ռագ սպիացման շատ օժանդակեց: Այդտեղ հասնելուց երկու շաբաթ յետոյ հիւանդանոցից դուրս եկայ: Մի քանի օրերի ընթացքին ձեռնափայտի օգնութեամբ քայլում էի, յետոյ դրա կարիքը չզգացի: Քայլում էի մի քիչ կաղալով: Ծնկումս ցաւեր էի զգում, մանաւանդ երբ օդը խոնաւ էր լինում: Խոնաւութեան պատճառած այդ ցաւերը տասնեակ տարիների ընթացքում և մինչև հիմի էլ, որպէս անբաժանելի և անցանկանալի ժառանգութիւն, մնացին: Բախտի բերմամբ մահից մազապուրծ ազատուած լինելուս համար պէտք էր չափազանց շնորհակալ և ուրախ լինէի բայց ցաւ ի սիրտ, այդպէս չէր: Մի անվտարելի տխրութիւն և դժգոհութիւն կլանել էր ամբողջ էութիւնս:

Անուշի սրտակեղեք յուշատետրի ընթերցումն ու նրա տանջանքների և դժբախտութեան նկարագրութեան անդադար վերյիշումը սիրտս մաշում և այրում էր: Քանի՜- քանի՜ անգամներ այդ սրտակեղեք յուշերի ընթերցմամբ տխրութեան և յուսալքման մտորումներում թաղուած եմ եղել և նոյնիսկ, երբեմն էլ, ափսոսացել եմ կռիւներում սպանուած չլինելուս համար: Գիտեմ, որ գրքիս ընթերցողն էլ այդ յուշատետրի բովանդակութեան և մանաւանդ նրա վերջաւորութեան մասին տեղեկանալ կը ցանկանայ, այդ իսկ պատճառով ինձ թոյլ եմ տալիս մի անգամ էլ նրա հետ կարդալու այդ յուշերի կարևոր մասերը:

«...Մեր՝ միակ յոյսն ու ապաւէնը եղող ձին մեր անզօր և անպաշտպան ձեռքերից բռնութեամբ խլուելուց յետոյ, մահաւան սարսափից մղուած, ճարահատ մօրս հետ նահանջի ճամփան շարունակեցի: Բայց ինչքա՞ն կարող էինք շարունակել այդ սոսկալիօրէն տանջալից ճամփորդութիւնը: Մայրս հիւանդ և անզօր էր: Նա ոտքով քայլելու հնարաւորութիւնից զրկուած էր: Դժբախտաբար, այդ խուճապ-փախուստի ընթացքին մեզ օգնող էլ չճարուեց: Մայրս քանի-քանի անգամներ ինձ խնդրեց, աղաչեց թողնել իրեն և հեռանալ, առանց իրեն շարունակել նահանջի ճանապարհը, բայց ես ինչպէս կարող էի այդ անել:

Անասելի չարչարանքով մենք հազիւ կարողացանք Բերկրիից անցնելով հասնել Աբաղայի դաշտի սկիզբը: Մօրս վիճակը հետզհետէ ծանրանում էր: Եթէ ուզենայի նրան ստիպել ճանապարհը շարունակելու, իմ ձեռքով նրան կենսազրկած, սպանած պիտի լինէի: Ստիպուած կանգ առանք: Աբաղայի դաշտում մնացինք:

Շատ յաճախ մարդ-արարածը տարօրինակօրէն եսական և չարակամ է դառնում: Երբ ինքը թշուառ ու անբախտ է, սրտի խորքից ցանկանում է, որ ուրիշներն էլ իր նման անբախտ ու անօգնական լինեն: Մեր դժբախտութեան մէջ ես, գուցէ մայրս էլ ուրախ էինք, որ մեր ճակատագրին ուրիշներն էլ ենթակայ են: Ուրիշներ էլ մեզ նման հիւանդ և անզօր էին և այդ նզովեալ նահանջի ճանապարհը շարունակել չէին կարող:

Ամենասոսկալին այն էր, որ այդ թշուառ մարդիկ, որոնց թիւը հասնում էր մի քանի հարիւրի, բացի թշնամու յարձակման ու կոտորածի մշտական մղձաւանջից, ուրիշ աւելի անտանելի մղձաւանջ ունէին: Սովամահ լինելու մտավախութիւնը ամենքին սարսռեցնում էր: Խոտեր ու նրանց արմատներն ուտելով՝ ինչքա՞ն ժամանակ հնարաւոր կը լինէր ապրել:

Բայց թշուառութիւնն էլ երբեմն իր ժպիտն ունի:

Մօտ երկու շաբաթ յետոյ լուր տարածուեց, որ ռուսական զօրքը վերադառնալու է իր լքած հողամասերը, որոնց մէջ ամենաառաջին հերթին Վանն ու Վասպուրականը նորից գրաւելու է: Մեր անօգնական մնացած թշուառներիս ուրախութիւնն անկարագրելի էր...

Իսկապէս, հրաշքը կատարուեց: Ռուսական ձիաւոր կոզակների մի քանի խմբեր տեսանք, որոնք անցան դէպի Բերկրի, բայց նրանց հետևող զօրքը չը տեսանք: Ասում էին, իբր թէ նրանք Իգդիր-Ալաշկերտի գծովն են անցել:

Լքած դժբախտներիս համար անմոռանալի էր այն օրը, երբ մենք Գրիգոր Բուլղարացուն՝ իր հաւատարիմ զինակից Լևոնի հետ մեզ մօտ՝ Աբաղայի դաշտում տեսանք: Նրանց ընկերակցում էին մի երկու տասնեակ զինուորներ: Նրանց գալուց անմիջապէս յետոյ ալիւրով, գետնախնձորով և շաքարով բեռնաւորուած ֆուրգոններ հասան: Մեզ՝ սովածութիւնից քամուած, մաշուած գաղթականներիս կենսամթերք բաժանեցին: Սովամահութեան գերեզմանի եզրից յետ վերադարձանք:

...Դժբախտաբար, մայրս իրեն հասած հոգեկան և ֆիզիկական տառապանքներին դիմանալ չկարողացաւ: Ամբողջ մի ամիս գաղթականի իր բարակ ներքնակի վրայ ընկած տեղից շարժուել չկարողացաւ: Կեանքի կարօտը սրտում և հօրս ու իմ բաժանման վիշտն ու թախիծը աչքերում՝ մահացաւ:

Ինձ համար սկսուեց իսկական ողբերգութիւնը: Միայնակ, անօգնական, հարազատից զուրկ և ամենից սոսկալին՝ երիտասարդ ու անփորձ: Ի՞նչ պիտի անէի, ու՞մ պիտի ապաւինէի... Իմ այդ անօգնական և ողբալի դրութեան մէջ ընկնողը միայն կարող էր հասկանալ, ըմբռնել վիճակիս անճարութիւնն ու թշվառութիւնը:

Այդ օրերին, այդ պայմաններում, ինձ նման անտէր, անօգնական և որբ աղջիկը շատ նման էր օրը ցերեկով, մարդկանց աչքի առաջ բազմամարդ մի հրապարակում շպրտուած մի թանկարժէք գանձի, մի շողարձակ ադամանդի: Ամէն մարդ վազում, յարձակւում էր վերցնելու, խլելու և փախցնելու այդ շպրտուած անտէր-անտիրական գանձը:

Ա՜հ, ի՜նչ անտանելի, ի՜նչ սոսկալի, ի՜նչ ողբալի էր իմ այդ վիճակը...:

Ես երիտասարդ, և ինչպէս ուրիշները և անբախտ մայրս ասում և կրկնում էին, գեղեցիկ և գրաւիչ աղջիկ էի: Երանի, հազար երանի կը լինէր, եթէ

գեղեցիկ չլինէի: Այդ գեղեցկութեան համար շատ-շատերը ցանկանում էին ինձ գրաւել, յափշտակել և նոյնիսկ բռնի տիրանալ:

Մօրս մահից յետոյ, մի քանի ամիսների ընթացքում, ինձ համար թափառական կեանք էր ստեղծուել: Աբաղայից Բերկրի և այնտեղից էլ Թիմար եկայ: 1916-ի գարնանը և նրանից յետոյ վերադարձող գաղթականների մի կարևոր մասը, մանաւանդ գիւղացիութիւնը, Թիմարի զանազան գիւղերում էր տարածւում:

Բէմուրազ մեռած անբախտ մայրս, երբ նախազգաց իր մօտալուտ վախճանը, իր մարմնի վրայ թաքցրած 25 ոսկեդրամը վախվխելով և խիստ գաղտնօրէն, ինձ յանձնելով՝ ասաց.

– Անո՛ւշ, իմ միակ և անգի՛ն բալաս, այս դրամը 25 ոսկի է, սև օրերու համար խնայած էի: Վերցրո՛ւ և շատ զգուշօրէն մօտդ թաքցրո՛ւ: Եթէ Վան վերադառնաս և հօրդ գտնելու բախտ ունենաս, խնամի՛ր անոր, քանի որ քեզնէ զատ ուրիշ հարազատ մը չունի: Որդիական պարտականութիւնդ ազնւօրէն կատարի՛ր: Հայրդ, թէև խիստ և յամառ բնաւորութեան տէր մէկն էր, բայց սրտանց չար չէր: Աշխատի՛ր նամուսով ապրել և չխաբուել: Ա՜խ, ի՞նչ էինք և ի՜նչ դժբախտ ու սև օրերի հասանք...: Ափսո՜ս, շա՜տ ափսոս, որ բէմուրազ և թշառ կը մեռնեմ: Ինչքա՜ն անբախտ մայր եմ եղած... գոնէ չմեռնէի, մինչև քեզ մէկ ազնիւ ամուսնու ձեռք յանձնած ըլլայի...:

Չափազանց վախկոտ բնաւորութիւն էի ստացել: Ամենքից կասկածում և նոյնիսկ վախենում էի: Անվերջ մտածում և մտահոգւում էի այն մասին, թէ ես է ինձ գողանալու, փախցնելու և առևանգելու են: Ուղեղս շարունակ մի ուղղութեամբ էր գործում: Անընդհատ մի պաշտպան, մի ապաստան փնտրելու և մի հովանաւորութիւն գտնելու մասին էի մտածում: Այդ իսկ պատճառով մի տարօրինակ և անբացատրելի վիճակ էր ստեղծուել, ջղային, անտանելի վիճակ:

Երբեմն նոյնիսկ խորհում էի ինքնասպանութեան մասին:

Ինչի՞ համար այսքան տառապել և սարսափների մղձաւանջի ծանրութեան տակ ճխլտուել ու տրորուել, երբ կարելի է միանգամից, մի բոպէում վերջ տալ այդ բոլորին ինքնասպանութեան կտրուկ մի վճռականութեամբ և որոշումով...

Այդպիսի անբնականոն և արտակարգ դրութեան մէջ էի, երբ առիթ ունեցայ բոլորովին պատահաբար հանդիպելու և ծանօթանալու վեց հոգինոց մի խումբ երիտասարդների: Նրանք յայտնեցին, որ իրենցից երկուսը գիւղատնտեսներ, մէկը օգնական բժիշկ, մէկն ուսուցիչ և երկուսն էլ զինուորական են: Գիւղատնտեսներից երևութապէս աւելի երիտասարդն ինձ յայտնեց, որ իր ուսուցիչ ընկերոջ հետ Ա. գիւղի գիւղատնտեսական և դպրոցական գործերի կարգաւորման համար նշանակուած պաշտօնեաներ են: Ուսուցիչն ինձ առաջարկեց իրենց հետ այդ գիւղը գնալ և իր հետ միասին պաշտօնավարել՝ միաժամանակ խոստանալով ամէն տեսակի բարոյական օժանդակութիւն ինձ չխնայել:

Ենթադրեցի, որ վերջապէս հանդիպել եմ մի հովանաւորի: Միւս կողմից էլ ինձ համար ամենապատշաճ առիթն էր ներկայացել գոնէ ժամանակաւորապէս մենակութեան, անձկութեան և անգործութեան մաշող մղձաւանջից ազատուելու:

Համաձայնուեցի և նրանց հետ մեկնեցի Ա. գիւղը: Երկու շաբաթից գիւղի դպրոցի նախապատրաստական աշխատանքները վերջացել էին, և ես՝ որպէս ուսուցչուհի, անցել էի գործի: Հետզհետէ մտավախութիւններիս մղձաւանջը՝ մեղմանում, և ջղերիս արտակարգ լարումը թուլանում էր: Կեանքի նկատմամբ ունեցած յոռետեսութիւնս հետզհետէ նւազում էր, և ատելի նահանջի հոգեմաշ տպաւորութիւնները նախկին ուժգնութեամբ հոգիս չէին ընկրճում:

Ինձ հետ ծանօթացած ուսուցիչն անցել էր գիւղի դպրոցի տեսչութեան պաշտօնին: Նա յամառօրէն ջանանում էր ինձ հետ բարեկամական և մտերմական կապեր հաստատել և իմ ուշադրութիւնն ու համակրութիւնը գրաւել:

Երկու ամսից յետոյ Այգեստան մեկնած երկու զինուորականները, մէկ ազգական բժիշկն ու մէկ գիւղատնտեսը վերադարձան մեզ մօտ: Վանի Վարիչ մարմնի կողմից նրանց տրուած էին իրենց մասնագիտութեան համապատասխան պաշտօններ: Երկու զինուորականներից մէկին, որն ալէքսանդրապոլցի էր և Միսակ Նուրիջանեան էր կոչւում, Բերկրիի և Թիմարի շրջանների գաղթականական կայանների պահպանութիւնն էր յանձնուած: Նա կիսակիրթ և չափազանց երևակայող մէկն էր: Բազմաթիւ առիթներով նա իրեն ներկայացրել էր որպէս փորձառու զինուորական և մանաւանդ Բուլղարացու մտերիմն ու սիրելին, ինչ որ շատ կասկածելի էր թւում: Նա ոչ միայն ձգտում էր զինուորական բռնակալ հրամանատարի հովերով տարուել, այլև աշխատում էր իր իսկ գործակից ընկերների վրայ իր երևակայական իշխանութիւնը տարածել:

Մեր դպրոցի տեսուչ-ուսուցիչը, որն արտամետցի էր և Արտաշէս Բագրատեան էր կոչւում, իր այդ զինուորական ընկերոջ նկատմամբ թաքուն ատելութիւն ունէր:

Նրանից դժգոհ էին նաև իր միւս ընկերները՝ շրջանի գիւղատնտեսն ու օգնական բժիշկը: Ինձ համար անհասկանալի պատճառներով նրանք իրենց հակակրութիւնն ու դժգոհութիւնը թաքցնում էին: Ենթադրում էի, որ նրանք իրենց ալէքսանդրապոլցի ընկերոջից հաշիւ էին քաշում և նոյնիսկ վախենում էին:

Մի օր տեսուչ Բագրատեանն ինձ ասաց.

– Օրիո՛րդ Անուշ, որպէս սրտացաւ բարեկամ, ստիպուած եմ յայտնելու, որ այս Միսակ կոչեցեալից չափազանց զգոյշ լինէք: Նա նմանում է նենգ աղուէսի, և ամէն կերպ աշխատում է ձեզ թակարդ գցելով՝

որսալ և լրբօրէն ձեզ տիրանալ: Ոչ մի գնով նրա շողոքորթ լեզուին և խարդախ ծրագիրներին չխաբուէք: Նա՝ իր լարած որոգայթներից և միամիտ ու անփորձ աղջիկների գլխին բերած անպատկառ լրբութիւններից մեզ շատ յաճախ մեծ պարծենկոտութեամբ պատմել է:

***

1917 թւի Զատկի տօների առթիւ մեր դպրոցը տասնօրեայ արձակուրդի մէջ էր: Իմ ուսուցչական պաշտօնավարութեան երկրորդ տարին էր: Ա. գիւղի դպրոցը գաւառի կարևորագոյն դպրոցն էր դարձել: Տարրական դպրոցի վեց բաժանմունքներն էլ կազմուելու վրայ էին: Շրջանի գիւղերից էլ մեր դպրոցում սովորելու համար աշակերտներ էին եկել: Դպրոցի ուսուցչական կազմը նախկին երկուսի փոխարէն 6 ուսուցիչներ ունէր:

Միսակ Նուրիջանեանը նոյն գաւառի միլիցիապետն էր դարձել: Զինուորական հագուստ էր հագնում և աջ կողքին կախած տասհարուածեան ատրճանակ էր կրում:

Զատկայ տօների առթիւ, իր ասութեամբ, մեզ մօտ հիւր էր եկել: Իջևանել էր մեր տեսչի տանը, որ դպրոցից և իմ ապրած տնից հեռու չէր: Ես ապրում էի գիւղապետի եղբօր մօտ՝ ինձ համար յատկացուած սենեակում: Տնատէրս կին և երկու երեխայ ունէր: Գիւղացի և ազնիւ մարդիկ էին նրանք: Իմ նկատմամբ շատ մեծ յարգանք ունէին: Նրանց երեխաներից մէկը՝ Զաւէն անունով, իմ աշակերտներից էր: Տասն տարեկան այդ մանչը ճրագի լոյսի շուրջ անընդհատ թևածող թիթեռնիկի նման համարեա ամբողջ օրը շուրջս թափառում էր և ինձ անհրաժեշտ կենսամթերքները գնելու և երբեմնակի պատուէրներս կատարելու առիթներից հաճոյք և բաւականութիւն էր զգում:

Մի երեկոյ մեր տեսուչը այս իմ աշակերտ Զաւէնի միջոցով ինձնից խնդրել էր կէս ժամով իրենց մօտ գնալ:

– Օրիո՛րդ Անուշ,– ասաց Զաւէնը,– տեսուչը ձեզ խնդրել է կէս ժամով իրենց մօտ գնալ... ապա խօսքն ընդհատելով և գլուխը ցած գցած, առանց ինձ նայելու՝ կմկմացնելով աւելացրեց.

– Ատրճանակը կողքից կախած այդ միլիցիապետն էլ նրա մօտն է...:

Այդ փոքրիկ խելօքը էլի ասելիք ունէր, բայց հակառակ իմ պնդումին, չուզեց, աւելի ճիշտ ամաչեց ասելու և նորից գլուխը ցած գցած՝ սենեակիցս դուրս վազեց...:

«Ատրճանակը կողքից կապած այդ միլիցիապետն էլ նրա մօտ է...»: Երեխայի բնազդական ենթադրութիւնը՝ ատրճանակ կրող այդ մարդուց չարիք էր նախատեսում:

Մտածեցի տեսչի հրաւէրը չընդունել և նրա մօտ չը գնալ, բայց ենթադրեցի, որ կարող է հակառակը պատահել, որ նրանք ինձ մօտ գան, իսկ ես նրանց հիւրասիրելու հնարաւորութիւն և մանաւանդ յարմարութիւն չունեմ: Սենեակումս իմ մահճակալից, մէկ փոքր սեղանից և մի նստարանից բացի ուրիշ որևէ յարմարութիւն չունէի:

Ցանկութեանս բոլորովին հակառակ՝ ստիպուեցի տեսչի մօտ գնալ: Երանի թէ գնացած չլինէի: Միլիցիապետ Նուրիջանեանն ինձ տեսնելուն պէս իրեն տիրապետելու անկարող եղաւ: Հարբած լինելու հետևանքով ինձ վրայ յարձակուեց: Քաղցած արուի մոլեգնութեամբ նա ինձ իր բազուկների մէջ օղակեց և երբ փորձում էր ինձ համբուրել, գերմարդկային դիմադրութեամբ նրա բազուկներից ճողոպրեցի, և սարսափահար, եկած ճանապարհովս յետ փախայ:

Յաջորդ առաւօտեան Նուրիջանեանը մի քանի տողերից բաղկացած գրութեամբ անցեալ գիշերուայ իր անպատշաճ վերաբերմունքի համար ներողութիւն էր խնդրել: Երկտողից եզրակացրի, որ նա անտաշ և լիրբ լինելուց բացի անգրագետ էլ է: Մեր տեսուչ Բագրատեանը յաջորդ օրն ինձ յայտնեց, որ Նուրիջանեանի հետ այդ գիշերուայ վայրագութեան պատճառով խիստ վիճաբանութեան է բռնուել և ծեծկըռտուքի խայտառակութիւնից հազիւհազ յաջողել է խուսափել:

– Իմ անյաջողութեան միակ պատճառն ու մեղաւորը դու՛ ես,– ասել էր նրան,– դու ինձ խանգարում և ծրագիրս փչացնում ես: Եթէ դու այդ վարժապետի չորացած ուղեղովդ մէջտեղ չընկնէիր, մինչև հիմի շատ հեշտութեամբ նրան, ինչպէս շատ ուրիշ աղջիկների, տիրացած և նպատակիս հասած կը լինէի:

– Չափազանց շատ սխալւած ես,– պատասխանել էր մեր տեսուչը:– Անուշը քո ենթադրած աղջիկներից չէ, և անկարելի է նրան նման խարդախ ու ստոր միջոցներով տիրանալ: Նա չափազանց ազնիւ ու առաքինի է և անպատկառութիւն է նրա վերաբերեալ նենգ ու ստոր մտադրութիւններ ունենալ:

Բայց այդ անպատկառ ու լիրբ մարդն այնքան հեշտութեամբ չէր ցանկանում իր ստոր մտադրութիւնից հրաժարուել և ինձնից ձեռք քաշել: Չորս օր յետոյ ինձ նորից մի երկտող էր գրել՝ հետևեալ խաբեբայ բովանդակութեամբ.

«Օրիո՛րդ Անուշ, դպրոցի վերաբացմանը դեռ մի քանի օրեր են մնում: Առիթից պէտք է օգտուել և մի հաճելի պտոյտ կազմակերպել: Տարուայ այս եղանակին Լիմ կղզին սքանչելի տեսարան ունի: Ամէն միջոց հայթայթել եմ 3-4 օրով այդ գեղատեսիլ և պատմական վայրը գնալ՝ վերադառնալու համար: Խնդրում եմ՝ չմերժել: Ձեր համաձայնութեան պարագային Բագրատեանն էլ մեզ կընկերակցի: Միշտ քեզ խորապէս յարգող՝ Նուրիջանեան»:

Նամակի շարադրութիւնից յայտնւում էր, որ ուրիշի ձեռքով գրւած և Նուրիջանեանի ձեռքով ստորագրւած էր: Արդէն այս արկածախնդիր պարոնի անգրագիտութեան մասին իր առաջին, իր իսկ ձեռքով գրւած նամակից գաղափար կազմել էի:

Նրա՝ այս նենգամիտ նամակի ցածի դատարկ մասում գրեցի. «Շատ եմ ցաւում, որ ի վիճակի չեմ ձեր առաջարկութեանը համաձայնելու: Հիւանդ եմ և բոլորովին անտրամադիր»:

Պատասխան մերժումս ստանալուց յետոյ Նուրիջանեանը փրփրել, կատաղել էր և գիւղից մեկնելուց առաջ Բագրատեանին յայտարարել էր.

– Միևնոյն է, ես իմ որոշումից հրաժարուողը չեմ: Ամէն միջոցի կը դիմեմ այդ գոռոզ աղջկայ անմիտ և անտեղի դիմադրութիւնը փշրելու և նպատակիս հասնելու համար...

Ինձ համար ստեղծուած էր անտանելի դրութիւն: Մշտական վախի և սարսափի մղձաւանջի տակ ճմլւում էի: Մտածեցի անմիջապէս Վան գնալ և անձամբ Բուլղարացուն ներկայանալով՝ ամէն ինչ նրան պատմել և նրանից իմ պաշտպանութեան համար օգնութիւն խնդրել:

Բագրատեանի հետ այդ առթիւ խորհրդակցեցի: Նա ինձ խորհուրդ տուեց սպասել, մինչև ինքը Բուլղարացուն կը գրի և որպէս կողմնակի ականատես՝ նրան մանրամասն կը բացատրի:

Նա ինձ վստահեցրեց, որ Բուլղարացին ազնիւ և վճռական մարդ է: Նա հաւանաբար այդ սրիկային իր պաշտօնից կը հեռացնի և առնւազն նրան խիստ նկատողութեան կենթարկի:

Համաձայնուեցի: Նա իր խոստումը կատարեց և բոլոր կատարուածի մասին մանրամասնօրէն գրեց: Իմ կողմից, առանց նրան յայտնելու, մի նամակ գրեցի Մարօին՝ Բուլղարացու կնոջը (որի հետ Ս.-ի միջոցով ծանօթացել էի) և նրանից խնդրեցի ինձ օգնել՝ ազատուելու այդ սրիկայի ձեռքից:

Բագրատեանի և իմ գրած նամակների պատասխանը և լինելիք հակազդեցութիւնը շատ ուշացան: Այդ պարագան թէ՛ ինձ և թէ՛ մանաւանդ Բագրատեանին շատ էր զարմացնում:

Միլիցիապետը շարունակում էր իր այցելութիւնները: Մի անգամ իր տրամադրութեան տակ եղած պահակ-զինուորների միջոցով ինձ գողանալ փորձեց: Բարեբախտաբար, ինձ օգնութեան հասան տնատէրս և իր տղան՝ իմ աշակերտը: Ինձ գողանալով՝ փախցնել փորձողները տեսնելով, որ խայտառակուելու են, ստիպւած եղան իրենց սատանայական ծրագրի գործադրումից հրաժարուել:

1917-ի դեկտեմբերի վերջերին՝ գիշերուայ ժամը 11-ին, անպատկառ միլիցիապետը բոլորովին հարբած վիճակում իր օգնական պահակների հետ միասին Բագրատեանի բնակարանն են թափւում և նրան այնքան գանակոծում, որ նա ջարդ ու փշուր եղած, ուշագնաց է լինում:

– Անպատկա՛ռ վարժապետ,– գոռգոռացել էր մոլեգնած և կատաղած Նուրիջանեանը,– դու այնքան ապերախտ ու սրիկայ ես, որ տարիների քո ընկերոջը մի քածի ես ծախում և նրա խաթրին լրտեսութիւն ես անում և Բուլղարացուն նամակներ ես գրում... Այստեղից հեռանալուց առաջ քեզ նման շան լակոտին և յետոյ քո այդ քածին շանսատակ կանեմ և ապա ինձ պաշտպանելու համար Վան, Բուլղարացու մօտ կը գնամ:

Ի՜նչ անսահմանօրէն դժբախտ աստղի տակ եմ ծնուել ես անբախտս: Ինձ խայտառակութիւնից և դժբախտութիւնից ազատելու և փրկելու համար այդ ազնիւ, սքանչելի նկարագրով փայլող երիտասարդ մտաւորականը՝ մեր դպրոցի ամենից սիրւած և յարգւած տեսուչը, վայրագօրէն զոհուեց...: Նա կեանքի կարօտը սրտին մնացած մեռաւ...: Մեռաւ ինձ փրկելու ազնիւ տենչով...:

ՄԱՐՕԻ ՆԱՄԱԿԸ

Այստեղ վերջանում էր դժբախտ Անուշի յուշերի սրտակեղեք նկարագրութիւնը: Նա երիտասարդ և բէմուրազ կեանքի տխուր վերջաւորութիւնը, դժբախտաբար, ինձ համար բոլորովին պարզ ու հասկանալի չէր: Մարօի հետևալ նամակը, որ ճմռթւած, ճխլտւած վիճակում նրա յուշատետրի արանքում գտել էի, ինձ բաւական շատ օգնեց կռահելու այդ նորից կանաչել և ծաղկել սկսող երիտասարդ կեանքի կսկծալի և սրտմաշ նախավերջը:

Նամակը թւագրւած էր 17 մարտ 1918 թւով:

«Սիրելի քո՛յր Անուշ,

Սրանից շուրջ երեք ամիս առաջ քո՝ ինձ գրած նամակին անմիջապէս պատասխանել եմ: Շատ եմ զարմանում, որ նամակիս պատասխանը չեմ ստացել: Կասկածում եմ, որ, այո՛, դեռ խառնիխուռն և չխաղաղւած վիճակում, մեր թղթատարական գործերն էլ բոլորովին կարգի չեն ընկել: Եթէ նամակս քեզ չի հասած, դրա համար շատ եմ ցաւում: Ինձ երկու պարագայ է հետաքրքրում: Նախ այն, որ այդ անամօթ միլիցիապետի չարիքից ազատե՞լ ես, թէ՞ ոչ: Ենթադրում եմ, որ ազատւած պէտք է լինես, քանի որ նրա հեռացման մասին Գրիգորը վստահեցրել է ինձ: Երկրորդը, որ ինձ շատ աւելի հետաքրքրում է, իմ եղբայրանման սիրելի Սիրաքի մասին է: Ես չցանկացայ քո Ա. գիւղում լինելու մասին նրան յայտնել, քանի որ քո ներկայ վիճակի մանրամասնութիւնն ինձ անծանօթ է մնացել: Եթէ դու ամուսնացած ես, կամ Սիրաքից զատ ուրիշ մէկը քեզ հետաքրքրում է, այդ պարագային չարժէ եղբօրս սրանից աւելի մտատանջել, քանի որ ես նրա զգացումներին և քո նկատմամբ ունեցած սիրոյ մասին կատարելապէս ծանօթ եմ:

Դժբախտաբար, ներկայ պայմաններում դժւարանում եմ քեզ այստեղ հրաւիրել, քանի որ նորից անհանգիստ վիճակի մասին շշուկներ են տարածւել: Գրիգորը ինձ այդ մասին ոչինչ ասել չի ցանկանում, բայց ինձ յայտնել է, որ այս քանի օրերում իմ միակ բալիկիս հետ Այգեստանը պէտք է թողնեմ: Առանց լուրջ և մօտալուտ վտանգի գոյութեանը՝ Գրիգորը երբեք չէր յօժարի մեր հեռացման և բաժանման անցանկալի մտքին:

Ամէն պարագային, յոյս ունեմ, որ գոնէ այս նամակը քեզ կը հասնի, որովհետև ձեզ մօտ եկող վստահելի անձնաւորութեան միջոցով եմ ուղարկում: Պայմանների նպաստաւոր լինելու մասին վստահութիւն ունենալուց յետոյ, եթէ ցանկանաս, կարող ես Այգեստան գալ և մերոնց գտնել: Համոզուած եմ, որ Սիրաք եղբայրս չափազանց երջանիկ կը լինի քեզ հանդիպելու համար: Քեզ անկեղծօրէն սիրող Մարօ»:

Այս նամակի ստացումից յետոյ Անուշի համար երկու պարագայ դասաւորուած պիտի լինէր: Առաջին՝ այն, որ նա վճռած պիտի լինէր Այգեստան գալ ինձ հանդիպելու համար և երկրորդ՝ այն, որ իր դպրոցի տեսչի ողբերգական վախճանից յետոյ ինքն էլ հետապնդման և ահաբեկման վտանգի սոսկումից որոշել էր փախուստ տալ:

Այսպէս թէ այնպէս, Անուշը Ճանիկ գիւղ հասնելիս հանդիպել էր գաղթի ճանապարհն ընկած բազմութեանը, և ինքն էլ այդ փախչող մարդկանց շարքումն էր ընկել:

Ամենաանհաւատալին և մանաւանդ ամենացաւալին ինձ համար այն հանգամանքն էր, որ չէի կարողանում մի եզրակացութեան յանգել: Ինչու՞, ի՞նչ պատճառով, Անուշն այդքան տանջուած և ֆիզիկապէս քայքայուած պիտի լինէր: Ճանիկից Կոթուր ճանապարհը, մի քանի օրում, թէկուզ ոտքով կտրած լինէր, նրան այդքան հիւծած չէր կարող լինել: Արդե՞օք այդ ճանապարհին նորից այդ սրիկայ միլիցիապետի հետապնդման և ահաբեկման էր ենթարկուել: Արդեօք այդ լիրբը վերջ ի վերջոյ կարողացե՞լ էր նրան առևանգել...: Ի՞նչ կարող էր պատահած լինել: Նրա յուշատետրում գոնէ մի բառ, մի տառ իսկ չկար, որ կարողանայի այդ դժբախտ, այդ առեղծուածային վերջաւորութիւնը ճշտել և պարզաբանել... Ո՞վ էր այդ Միսակ Նուրիջանեան կոչեցեալը, որ Անուշի նման անմեղ, սքանչելի և անմման աղջկայ արևափայլ կեանքի խաւարման գործում այդքան ոճրագործ և հրէշային անգթութեամբ դեր էր խաղացել...:

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՈՒԼՂԱՐԱՑՈՒ ՀԵՏ

1918 թի յուլիսի վերջին օրերն էին: Ծունկիս վէրքը սպիացել էր: Սկսել էի առանց անթացուպի օգնութեան քայլել: Մի քիչ կաղում էի: Ինձ մխիթարում էր միայն այն հանգամանքը, որ մեր նահանջի ճանապարհը շարունակելու պարագային, թէկուզ ոչ առանց նեղութեան, ի վիճակի կը լինէի քայլելու: Ապրում էինք անհանգիստ, սպասողական դրութիւն: Համոզուած էինք, որ մեր ոխակալ թշնամին մեզ հետապնդելու և շատ շուտով դուրս է քշելու Ուրմիայից՝ մեր ժամանակաւորապէս ապաստանած սքանչագեղ քաղաքից:

Արճակ գիւղից նահանջելոց յետոյ չէի կարողացել Բուլղարացուն միայնակ և անզբաղ գտնել մի քիչ զրուցելու համար: Ինձ համար միշտ հետաքրքրքիր և հաճելի էր եղել նրա հետ խօսակցելու պատեհութիւններ ճարել: Նրա հայրենասիրութեան և անշահախնդրութեան վերաբերեալ մեծ հաւատք ունէի: Ինձ հետաքրքրում էր նախ Մարօի՝ նրա անզուգական կնոջ և իմ մանկութեան պահապան-հրեշտակի մասին տեղեկանալ և ապա հետաքրքրքրուել Թիմարի շրջանային միլիցիապետ Միսակ Նուրիջանեանի մասին: Գիտեի, որ Բուլղարացին, իր սովորութեան համաձայն, կէսօրից յետոյ՝ ժամը 2-ից 4-ը հանգստանում է: Յուլիսի վերջին, մէկ օր՝ ժամը 4-ի մօտերը, գնացի նրան տեսնելու: Ինչպէս միշտ, այս անգամ էլ նա ինձ մեծ սիրալիրութեամբ ընդունեց:

– Սիրա՛ք, ա՜յ օղուլ, այդ ինչպէ՞ս է պատահած, որ այսքան երկար ժամանակ ինձ մօտ չես եկած,– հարցրեց և ապա անմիջապէս կաղալուս պատճառին անդրադառնալով՝ աւելացրեց.

– Ինչու՞ կը կաղաս: Ի՞նչ է պատահած քեզ...

– Ծունկիցս վիրաւորուած եմ, պարո՛ն Բուլղարացի:

– Քանի-քանի անգամ քեզ ասած եմ, որ այդ պարոնը կրճատես: Պարզապէս Գրիգոր անուանի՛ր ինձ: Բայց պատմիր տեսնենք՝ ինչպէ՞ս պատահեց, որ վիրաւորուեցիր:

– Սմկօի յարձակման ժամանակ զինուոր դարձայ:

– Ինչպէ՞ս թէ զինուոր դարձար: Չեմ յիշեր, որ զինուորութիւն ըրած ըլլաս:

– Ճիշտ է, մինչև Սմկօի յարձակման լուրը զինուորութեան մասին որևէ գաղափար չունէի: Երբ նրա յարձակման սպառնալիքի լուրը տարածուեց, ինքնակամ զինուոր դարձայ՝ յոյս ունենալով, որ մի քանի գնդակ արձակելով՝ իմ հայրենակիցներին պաշտպանած կը լինեմ:

– Տրամաբանօրէն իրաւացի ես եղած, բայց չափազանց ափսոս, որ մեր բոլոր ճիգերն ու զոհաբերութիւններն ի վերջոյ ապարդիւն անցան: Ռուսական բանակի կողմից ճակատները լքելը մեզ՝ հայերուս, մասնաւորաբար տաճկահայերու համար շատ աղէտալի եղաւ: Իսկ ի՞նչ է լինելու մեր կովկասահայ հատուածի համար, ոչինչ կարող եմ նախատեսել: Ցաւ ի սիրտ պիտի խոստովանեմ, որ մենք ճակատագրական սխալ մը գործեցինք: Մենք պէտք է ենթարկուած ըլլայինք մեր մեծ հայրենասէր Անդրանիկի և Երևանի ապահովութեան խորհուրդի թելադրանքներուն և մի քանի օր առաջ Վանէն նահանջած ըլլայինք:

Մեր նահանջի ուշացումը մեզ չափազանց վնասեց: Մեզ ստիպողաբար այս հեռու հորիզոնի տակ շպրտելով՝ մեր Կովկասի հայրենակիցներուն միանալու և անոնց հետ գործակցելու և ինքնապաշտպանուելու հնարաւորութիւնէն կատարելապէս զրկեց: Կայ նոյնպէս մի ուրիշ դժբախտութիւն, որն

ինչպէս ուրիշներուն, մանաւանդ ինձի ալ շատ կը մտահոգէ: Այդ մեզ միանալ չյաջողած և թիւրքի ճանկերու մէջ մնալու ստիպուած եօթը հազար վասպուրականցիներու անյոյս վիճակն է: Այս դժբախտներու տանջալից և չարաղէտ վերջաւորութեան մասին ո՞վ կարող է կասկած ունենալ:

Բուլղարացին ուզում էր խօսքը շարունակել, բայց չը կարողացաւ: Մի աննկարագրելի ցաւատանջ յուզմունք նրա կոկորդը սղմում էր: Առաջին անգամը լինելով՝ նկատեցի, որ այդ պողպատանման թրծուած մարդը ընկրկում և գունատւում է: Ինձ համար նրան ընկրկող տագնապալից վիշտը թաքուն չէր: Այգեստանում եղած ժամանակ՝ նախքան նահանջի պաշտօնական հրահանգը, մօտալուտ վտանգը նախատեսելով, Մարօին կարգադրել էր իր սրտահատոր միակ զաւակի հետ հեռանալ և ազատուել փոթորկաշունչ փորձանք–նահանջից:

Քրդերի կողմից Բերկրիի վրայ յարձակում էր կատարուել: Բերկրիի կամուրջը պաշտպանելու պարտականութիւնն ունեցող զինուորական ջոկատը դիմագրաւել չկարողանալով՝ մեկնել էր Իգդիր: Բերկրիի հետ Թիմարի շրջանն էլ անխուսափելի վտանգի էր ենթարկուել: Բուլղարացու կինն ու երեխան ընկել էին վտանգի գօտիում և որևէ ստոյգ տեղեկութիւն նրանց վիճակի մասին անհնարին էր դարձել:

Բուլղարացին ալեկոծ մտատանջութեան մէջ էր ընկղմուել և կարծես իմ ներկայութեան մասին բոլորովին մոռացել էր: Նրա խորաթափանց մտորումների թելը կտրել չցանկանալով՝ խիստ զգուշաւորութեամբ տեղիցս վեր կացայ: Երբ ուզում էի անխօս հեռանալ, նա սթափւեց և աջ ձեռքի ափը ճակատին տրորելով՝ թմրածութեան և մտորումների քնից արթնացաւ: Իր հերթին նա էլ, շտապ ոտքի կանգնելով, ասաց.

– Կը ներես ինձ, Սիրա՛ք, այս վերջերս երբեմն այսպիսի դրութեան, կուզենայի ըսել, այսպիսի թմրութեան կենթարկուեմ: Մարօի և Կորիւնիս համար շատ կը մտատանջուեմ: Երբեմն ինձ այնպէս կը թւի, որ անոնք թիւրքերու կամ քիւրդերու ոճրագործ ձեռքը գերի ընկած են...: Շատ անտանելի, անհանգիստ վիճակ կապրեմ: Ես որ երազ տեսնելու սովորութիւն ունեցած չեմ, գիշերները շատ յաճախ անքուն անց կը կացնեմ, իսկ սակաւ քնած ատենները մղձաւանջային երազներ կը տեսնեմ: Երբեմն այդ երազներու մէջ կինս ու երեխաս կը տեսնեմ, և ինձ այնպէս կը թւայ, որ անոնք աղաչանք-պաղատանքով ինձ օգնութեան կը կանչեն...:

– Բայց ձեր մտատանջութիւնն ինձ այնպէս է թւում, որ այնքան էլ իրաւացի չէ, քանի որ Մարօն և Կորիւնը նահանջից 3-4 օր առաջ մեկնած էին և նախքան կամուրջի գրաւումը Բերկրիից անպայման անցած պէտք է լինէին:

– Ճիշտ է: Սովորական պայմանների ընթացքին այսպէս պէտք էր ըլլար, բայց եկուր և տես, որ ես անոնց կարգադրած էի Բերկրի չհասած, ինձ սպասել: Ահա կատարուած սխալը: Ճանիկից և Արճակից բազմաթիւ փորձեր ըրի հեռախօսով Մարօի հետ խօսելու, բայց դժբախտաբար չեղաւ ու չեղաւ:

– Հէնց այդ պարագան ապացոյց է այն իրողութեան, որ նրանք Թիմարի և Բերկրիի շրջաններէն անցած և դէպի Իգդիր են մեկնած: Այնպէս որ, դուք իզուր ձեզ այդքան շատ մտատանջում էք:

– Երանի թէ այսպէս ըլլար: Բայց սա՝ անպէտք ու կասկածոտ դարձած սիրտս, գէշ ենթադրութիւններ կընէ: Ա՜խ, երանի թէ անոնց նախօրօք ճանապարհած չըլլայի: Եթէ պիտի մեռնէինք կամ սպանուէինք, աւելի ճի՞շտ չէր, որ բոլորս մէկանց այս դժոխքէն ազատուէինք: Ես միշտ ինքս ինձմէ կը հարցնեմ, որ մենք՝ մէկ բուռ հայերս, ինչո՞վ ենք մեղաւոր, որ այս անիծուած և անպատկառ թիւրքերը մեր օձիքէն ձեռք չեն վերցներ: Տե՛ս, մեզի շպրտած, քշած են մեր հարազատ հողէն, մեր դրախտանման հայրենիքէն, և դեռ այս հեռու հորիզոնի տակ չեն ձգեր գոնէ մի քանի օրով հանգստանալ և շունչ քաշել: Կարծես թէ այս աշխարհը, նրա օդն ու արևը, նրա ջուրն ու կանաչը, նրա ծառն ու ծաղիկը միայն և միայն այդ սրիկաներու համար գոյութիւն պէտք է ունենան, իսկ մեզ համար՝ նրանց բարբարոս սուրն ու հուրը...: Բայց միանգամայն հաւատացած եմ, որ մեր յօշոտուող ցեղի բողոքող արիւնը վերջ ի վերջոյ իր հեղեղի մէջ այդ անսիրտ վանդալներուն խեղդելու է...:

Նախքան Բուլղարացուց բաժանուելը՝ նրանից Թիմարի շրջանի միլիցիապետ Միսակ Նուրիջանեանի մասին հետաքրքրուեցի: Նա կատարելապէս տեղեակ էր այդ չարագործ մարդու արկածախնդրութեանը: Նա ինձ յայտնեց հետևեալը.

– Բոլորովին վստահելի մէկ մարդու միջոցով այդ Նուրիջանեանի սանձարձակ գործերու վերաբերեալ անհրաժեշտ քննութիւն կատարելէ վերջ՝ անոր իր պաշտօնատեղէն հեռացրի, Ոստան ուղարկեցի: Ա. գիւղի ուսուցչի թափած անմեղ արիւնն իր վրէժն առաւ: Ոստանի ամենավերջին ընդհարումներու ընթացքին այդ դժբախտ Նուրիջանեանը սպանուած է:

ԴԷՊԻ ՍԱՅԻՆ-ՂԱԼԷ ԵՒ ԲԻՋԱՐ

Ուրմիոյ բողոքական միսիոնարութեան գլխաւոր դոկտ. Շէյդը, որը միաժամանակ անգլիական կառավարութեան ներկայացուցչի հանգամանքն ունէր, մեր նահանջող բազմութեան գլխաւորներին անվերջ յուսադրում էր, որ Մարաղայից, Միանդոաբից, Սային-Ղալէից կամ Համադանից անգլիական զինուորական ուժերը մեզ օգնութեան կը գան և մեզ թիւրքերի և տեղական քիւրդերի յարձակումներից կը պաշտպանեն:

Բայց դոկտ. Շէյդի՝ այդ բարեհաւատ միսիոնարի խոստումները ձայն բարբառոյ յանապատի

մնացին: Նոյնիսկ մէկ հոգի անգլիացի, եթէ ոչ պաշտպանելու, գոնէ մեզ սրտապնդելու համար չեկաւ և չերևաց: Յուլիսի 31-ին ստիպուեցինք թողնել Ուրմիան՝ այդ գեղատեսիլ և կենսուրախ քաղաքն ու իր շրջանը, որ մեր սքանչագեղ Այգեստանի պատրանքն էր մեզ տալիս:

Նորից քրդական յարձակումներին ենթարկուելու տևական սարսափը մեզ հետապնդում էր: Կարգադրուեց գաղթող բազմութեանը զինուած մարդկանց օղակում առնել: Բայց արդէն 70 հազարի հասնող հայ և ասորի նահանջողների կարաւանն այնքան երկար ու ձիգ էր, որ այդպիսի օղակաւորման հնարաւորութիւն չէր տալիս:

Յարձակման և կոտորածի ենթարկուելու սարսափը նահանջող մարդկային բազմութիւններին խելացնորում է: Նրանց ուղեղից դատողութիւնն ու հաւասարակշռութիւնը հանում, խլում է: Նրանց վերածում է փախուստ տուող անզգայ և անբան ստուերների: Նրանց մէջ կարեկցութեան ամէն զգացում բթացնում և նոյնիսկ անհետացնում է: Նման պայմաններում մի՞թէ կարելի է փախուստ տուող այդ մարդկային զանգուածներին կարգ ու կանոնի ենթարկել:

Այդ երկարաձիգ կարաւանը պաշտպանելու պարտականութիւն ունեցող զինուած մարդիկն էլ խելացնոր դառնալուց շատ հեռու չէին: Նրանց ջղերն էլ, բնականաբար, դիմադրական կորովից զրկուած էին: Չէ՞ որ տարիների կռիւների ընթացքում նրանք էլ յոգնած, դաղրած և բէզարած էին:

Նահանջող գաղթականութիւնը երրորդ օրը իրար յետևից Սային-Ղալէ հասաւ: Յոգնատանջ և շնչասպառ եղած բազմութեան ազդարարուեց անմիջապէս թողնել Սային-Ղալէն և Բիջարի ուղղութեամբ ճանապարհը շարունակել: Պէտք էր շտապել, քանի որ Պարսկաստանի արեմտեան շրջանները գրաւող թիւրք բանակը ուժեղացնելու համար Մուսուլից նոր զօրամասեր էին բերելու:

Նորից շփոթ և իրարանցում, նորից խուճապ, լաց ու կոծ: Էլի մի անգամ ևս անէծք ու հայհոյանք: Նորից լեղապատառ ու խելակորոյս փախուստ:

Արդեօք այս անիծապարտ և դժոխային փախուստը վերջանալիք ունի՞, թէ՞ ոչ: Եթէ ունի, ե՞րբ պիտի դրա վերջակէտը լինի...:

***

Սային-Ղալէյում և Բիջարի ճանապարհին նահանջող գաղթականութիւնը մի քանի անգամ էլ ենթարկուեց քիւրդերի զինուած յարձակումներին: Հաւաստիացնում էին, որ այդ յարձակողների շարքերում քիւրդական տարազով ծպտուած թրքական զինուորականներ էլ կային: Այս վերջիններին յանձնարարուած էր լրտեսական աշխատանքներ կատարել և ստուգել նահանջող բազմութեան շարքերում եղած կռուողների և զինուած մարդկանց թիւը: Նրանց մասնաւորապէս յանձնարարուած էր այդ բազմահազար գաղթականութիւնը ղեկավարող և առաջնորդող զինուորական պարագլուխների ստուգումը և, եթէ հնարաւոր լինէր, տեղնուտեղը նրանց առևանգումն ու սպանումը: Լրտեսական և միաժամանակ ահաբեկչական աշխատանք տանող այդ ծպտուած թիւրք զինուորականները պարտականութիւն ունէին առաջին հերթին սպանել ասորի զինուած ուժերի հրամանատար Աղա Պետրոսին և ապա Բուլղարացուն, Կոստի Համբարձումեանին և Մելքոնեանին: Բարեբախտաբար, նրանց չյաջողուեց իրենց դիւային ծրագիրն իրագործել, բայց մի դժբախտ դասաւորութեան հետևանքով կարողացան Կ. Համբարձումեանին սպանել:

Այս դժբախտ պարագան հետևեալն էր: Արտաւազդ Թումանեանը (ինձ ասել էին, որ նա մեր հռչակաւոր բանաստեղծ Յ. Թումանեանի որդին էր) մի գթութեան քրոջ հետ կորել էր. Կոստին մի երկու զինուորների հետ ցանկացել էր նրանց անպայման գտնել: Թշնամին, որ անընդհատ նրանց հետապընդելիս էր եղել, առիթից օգտուելով, նրանց շրջապատել և կոտորել էր: Թումանեանին և սանիտարուհուն էլ անկարելի եղաւ վերագտնել: Նրանք էլ, անկասկած, սպանուել էին:

Մինչ Բիջար հասնելը՝ տարաբախտ և հայրենահալած գաղթականութեան կարաւանից շուրջ երկու հարիւր հոգի էլ կոտորուեցին: Կոտորածի այդ թիւը մեր գլխին կախած անսահման վտանգի համեմատութեամբ բարեբախտաբար քիչ էր:

Խղճի պարտականութիւնն ինձ թելադրում է մի անգամ ևս յայտնելու և յայտարարելու, որ հայրենի հողից 3-4 անգամ վայրագ բռնութեամբ և սպանուելու ու կոտորուելու սարսափի սպառնալիքով վտարուած հայ գաղթականութեան պահպանման և փրկութեան գործում Բուլղարացու, Շաղոյեանի, Մելքոնեանի և ասորի Պետրոսի նման մարդիկ, որոնք շռնդալից համբաւ և հռչակ շահելու մոլեգին ցանկութիւն չեն ունեցել, շատ աւելի ազգապահպանման և հայրենասիրական ծառայութիւն են կատարել, քան շատերը, որոնց անունները ոսկի տառերով են գրուել և դրուատել ու բարձրացուել են մինչև երկնային կամարները:

Փառք ու պատիւ այդ համեստ և ճշմարիտ ազգայիններին:

ՀՈՐՍ ՓՆՏՐՏՈՒՔԸ

Մեր ինքնապաշտպանութեան վերջին բոլոր կռիւներին էլ մասնակցել էի: Մի քիչ կաղում էի, բայց ոտքով քայլելուց առանձնապէս չէի նեղւում: Անուշի դժբախտ կեանքի չափազանց սրտակեղեք վերջաւորութիւնը շարունակում էր ինձ տանջել: Ոչ մի կերպ ինձ մխիթարել չէի կարողանում: Իմ ծայրայեղ եսականութեան համար միշտ ինձ դա-

տապարտում էի: Մահամերձ, հոգեվարքի մէջ լքել էի նրան: Ինչու՞, որովհետև տուածս որոշումը եսականօրէն չէի ցանկացել փոխել: Բայց այդ զինուոր դառնալս ի՞նչ օգուտ էր բերել իմ ազգակիցներին, որոնց պաշտպանելու յաւանականութիւնն էի ունեցել:

Եթէ Անուշին վերջին հոգեվարքի վճռական պայքարում մենակ թողած չլինէի, նրան որևէ կերպ օգնած, գուցէ և փրկած լինէի:

Անվերջ հարցապնդում և անհատնում ինքնաքննադատութիւն... Բայց արդէն չափազանց ուշացած և ապարդիւն...:

Եթէ մեր ինքնապաշտպանութեան կռիւները, դիմադրական պայքարը տասնեակ տարիներ էլ տևելիս լինէին, ինքնական յօժարութեամբ պիտի մասնակցէի այդ կռիւներին, որովհետև կեանքի արկածախնդրութիւն էի փնտրում, ուրիշ խօսքով, կեանքն ինձ համար իր արժէքը կորցրել էր:

Սային-Ղալէ-Բիջարի ինքնապաշտպանութեան կռիւներին մասնակցելիս խեղճ հօրս մենակ էի թողել: Ամաչում եմ խոստովանելու, որ նրան օգնելու և նրա կեանքի ու ապրուստի ապահովութեան համար շատ էլ չէի անհանգստանում: Որդիական տարօրինակ ապերախտութիւն...: Այդ ապերախտութիւնը, սակայն, ինքնին միանգամայն հասկանալի էր, քանի որ ինքս ինձ համար էլ չէի մտածում և չէի անհանգստանում: Այդ օրերում ողջ մնալը կամ մեռած լինելը կարծես ինձ համար միևնոյնը լինէր:

Հինգ օրից ի վեր հօրս կորցրել էի: Բիջար հասնելուց յետոյ գաղթականութիւնը թշնամու կրնկակոխ հետապնդումից և կոտորածի ենթարկուելու սարսափից ազատուել էր: Գոնէ այդպէս էր թւում այդ բազմահազար տարաբախտներին:

Բիջարում անգլիացիներ կային: Զօրք, թնդանօթ, օդանաւ և վերջապէս թշնամու յարձակումը դիմագրաւելու հնարաւորութիւններ ունէին: Նրանք սկսել էին գաղթականութեանը պարէնով օգնել: Յոգնաբեկ գաղթական բազմութիւնը շնչել սկսեց: Կենդանի մնալու յոյսը նրա երեսին շողալ սկսեց: Վերապրումի յոյսը, ցանկութիւնների և ձգտումների ամենասիրելին և ամենաթանկագինն է:

Մարդ արարածի համար ապրել կարողանալու յոյսի ապահովութիւնը նրա կեանքի գերագոյն երջանկութիւնն է: Ապրելու ձգտումն ու ցանկութիւնը մարդկային կեանքի անմրցակից և անպարտելի մագնիսն է: Ապրելու ձգտումի մագնիսն ուժգնօրէն և տևականօրէն իրեն է ձգում նոյնիսկ դժոխքի սեմին հասած, բայց դեռ իր վերջին շունչը քաշող մարդ անհատին:

Թշնամու սրից և հրից ազատուած լինելու գիտակցութիւնը գաղթական բազմութիւնների սրտում առկայծել սկսած էր: Բայց ու՞ր էր մնացել հայրս: Ինչպէ՞ս է, որ այս հինգ օրերի սպասումից յետոյ ես նրան գտնել չեմ կարողացել: Նրա՝ զոհուածների թւում լինելու ենթադրութեան միտքն անգամ ինձ սարսափեցնում էր:

Առաջին նահանջի տանջանքներից յետոյ նրան երկրորդ անգամ փորձանքների և չարչարանքների ենթարկողը, դժբախտաբար, ես եմ եղել: Եթէ հօրս վերադարձի համար նրան գրած չլինէի, նա վերադարձած և նորից այս դժոխային կրակն ընկած չէր լինի: Ի՞նչ պիտի անէի, ինչպէ՞ս պիտի կարողանայի չքմեղանալ, եթէ հօրս որևէ դժբախտութիւն պատահած լինէր:

ԻՄ ՁԻՆԱԹԱՓՈՒՄՆ ՈՒ ԳԵՐԵՎԱՐՈՒՄԸ

Հօրիցս բաժանուելու և նրան կորցրած լինելու հինգերորդ օրը լրանում էր: Անճարակութիւնից և յուսահատութիւնից խելացնորուելու վրայ էի: Մի տեսակ ատելութեան զգացում էր ծնուել իմ մէջ իմ իսկ անձի նկատմամբ: Ինձ քննադատում և վատաբանում էի՝ իմ եսական և ինքնագլուխ վերաբերմունքի համար: Անհեռատես և չնախատեսուած եսականութեանս պատճառով իմ անզուգական Անուշին զոհել էի, և ներկայիս հօրս, իմ հարազատ և սիրելի հօրս էի զոհաբերում: Նրան գտնելու, փրկելու համար պատրաստ էի ամէն ինչ անելու, և եթէ պէտք լինէր, նոյնիսկ անձս զոհելու:

Այդպիսի անձնազոհման անզուսպ թելադրանքով պիտի բացատրել իմ ձեռնարկած հետևեալ յանդուգն արկածախնդրութիւնը:

Հինգերորդ օրուայ կէսօրից յետոյ Բիջար ժամանող գաղթականութեան ուշացած մի քանի հայ և ասորի ընտանիքների հանդիպելու դժբախտութիւնը ունեցայ: Այդ ընտանիքներից մի տարիքոտ, ըստ երևոյթին վանեցի կին, իմ հարցումին, թէ արդեօք հօրս ճանաչու՞մ է, տեսա՞ծ է նրան թէ ոչ, այսպէս պատասխանեց.

– Վայն իկէ իմ գլխին: Էդ քո ասած տէրտրոջը՝ կարմրամիրուս տէր Յարութիւնը, շատ լաւ կը ճանչնամ: Էնոր էրկու-երեք օր էռաջ տեսած եմ: Խեղճ տէրտէրը հիւանդ, նւազած էր: Քու խմար ախ ու վախ կը քաշէր: Ինձմէ և ուրիշ շատ տեղերէ հարց ու փորձ կընէր: Կասէր տղէս, Սիրաք անունով տղէս տեսած չէ՞ք: Խեղճ խէր. տղէն ըստեղ վազած ի, ինքը հիւանդ տեղով ընկած, էնոր կը փնտրի: Հէյ, ապերախտ աշխարք, ի՞նչ սև օրի ենք խասի:

– Լա՛ւ, լա՛ւ մայրիկ: Կընդունեմ որ ես մեղաւոր եմ, բայց ինձ ասա, հիմի նա որտե՞ղ է մնացած:

– Ի՞նչ գիտնամ, որդի՛, ի՞նչ ըսեմ: Էն խեղճը խիւանդ էր: Կարող է մեզ պէս յետ է մնացած: Էն անխիղճ քրդերի գեղի մէջ տկար, խիւանդ գաղթականներ են մնացէ: Ո՞վ կիմանայ, կարող է խէրդ էլ էնտեղ մնացած էլնի:

Այլևս նւազագոյն ցանկութիւն չունեցայ այդ չարագուշակ պառաւից ուրիշ հարց ու փորձ անելու:

Նրա ասած գիւղից, որ կարծեմ Մարջան էր կոչւում, երկու օր առաջ էի անցել:

Մօտաւոր հաշւով 10-12 կիլոմետր Բիջարին չհասած հեռաւորութեան վրայ էր գտնւում: Որոշեցի այդ գիւղը վերադառնալ՝ հօրս փնտրելու և գտնելու համար: Երբ արդէն բաւական հեռացել էի չարագոյժ պառաւից, նա իր ձայնի ամբողջ ուժգնութեամբ յետևիցս կանչեց.

– Լսի՛ր, բալէ՛ս, եթէ կուզես խօրդ ճարելու էրթալ, էդ խրացանով մի՛ էրթա: Քրդերը քեզ կսպանեն:

– Էս ի՞նչ անիծած, չար-բերան պառաւի հանդիպելու դժբախտութիւն ունեցայ,– դժգոհելով փնթփնթացի ինքս իմ մէջ և մտածեցի՝ եթէ անզէն գնալու լինեմ, քրդերը շատ աւելի յանդգնութեամբ ինձ կսպանեն:

Մտորումների մէջ թաղուած՝ աճապարանօք քայլում էի, հնարաւորին չափ շուտ գիւղ հասնելու համար: Գիւղի հեռավորութեան վերաբերեալ իմ արած ենթադրութիւնը ճիշտ չէր: Տասը կիլոմետրից աւելի ճանապարհ էի կտրել, և դեռ գիւղը չէր երևում: Դժբախտաբար, գիշերուայ մութը սկսել էր տարածուել, ճանապարհը գրեթէ ամայի էր: Ամէն 10-15 րոպէից հազիւ մէկ-երկու ճամփորդների էի հանդիպում: Անցորդները տեղական տարազներով և հաւանաբար քրդեր էին: Եկած ճանապարհիս գաղթողների չհանդիպեցի:

Ամբողջ երկու ժամ շարունակ հնարաւոր արագութեամբ ճանապարհ էի կտրել: Արդէն յոգնել էի: Մանաւանդ ձախ ծունկս ցաւում և նեղացնում էր ինձ: Ուզեցի ճանապարհի եզրին նստելով՝ հանգըստանալ, բայց վախենում էի: Պառաւ կնոջ չարագուշակ կանչը դեռ ականջումս զնգում էր՝ էդ խրացանով մի՛ գնա...:

Ճգնում էի երթս չդանդաղեցնել: Մտածում էի եթէ անվտանգ կարողանամ գիւղը հասնել, գուցէ յաջողուի ուշացած գաղթականներից մի քանիսին ճարել և հօրս մասին տեղեկութիւններ հարցնել:

Վերջապէս անսահման հրճւանքով նկատեցի գիւղից տարածւող պլպլուն ճրագների լոյսը: Ինձ մխիթարեցի այն յոյսով, որ ամենաուշը մինչև կէս ժամ գիւղն եմ հասնելու:

Դժբախտաբար, այդ հրճւանքի զգացումը երկարատև չեղաւ: Կողքիցս սրընթաց արագութեամբ ձիաւորների մի խումբ անցաւ: Նրանք բարձրաձայն խօսակցում էին, իսկ մէկը քրդական լօ-լօ-ներով երգում էր: Նրանք կանգ առան և անմիջապէս յետ վերադառնալով և ինձ իսկոյն իրենց օղակաւորման մէջ առնելով՝ ձիերից ցած ցատկեցին:

Քիւրդերը հինգ հոգի էին: Նրանցից երկուսը՝ հրացանով, իսկ երեքը ատրճանակներով էին զինուած: Արիւնս երակներումս սառեց: Շունչ քաշելու ժամանակ իսկ չտուին: Նրանցից մէկը, ըստ երևոյթին գլխաւորը, կրակելու դիրքում դէմ ու դէմս կանգ առեց, իսկ մի ուրիշը, կայծակի արագութեամբ վրաս յարձակւելով, ինձ գետին շպրտեց և ուսիս եղած հրացանս խլեց: Մի քանի րոպէում, ինձ թոկերով իրենց ձիերից մէկի վրայ կապած, իրենց յետևից քաշ տալով, գիւղը տարան: Ես ուշագնաց էի եղել:

Սարսափից թմրել և բթացել էի: Գիւղին մօտենալիս նրանք գիւղամիջի սովորական ճանապարհով չանցան: Գիւղից դուրս ընկած մութ ճանապարհներով ներս մտան և իրենց ընկերներից մէկի կողմից լայն բացած դարբասով մի ընդարձակ բակ մտան:

Ինձ ձիու վրայ կապած թողնելով՝ նրանք մտան բակի խորքում երևացող սենեակները:

Ծայրայեղօրէն սոսկալի րոպէներն ինձ թւում էին տանջանքի ժամեր: Կէս ժամ առաջ հանդիպած դժբախտութիւնը կարծես տառապանքի ծանրութեամբ ինձ ճնշում էր: Գիտակցութիւնս ու դատողութիւնս թմրել էին: Կարծես բազկերակիս մէջ հաշիշի բազմաթիւ սրսկումներ էին արել: Ուղեղս իմ վիճակը ստուգելու կարողութիւնից հրաժարւել էր: Ասենք, այդ դրութեան մէջ վիճակիս և վախճանիս որոշման ամէն տեսակի ենթադրութիւնն էլ անհնարին էր:

***

Տարօրինակ է, մինչև երէկ, նոյնիսկ մինչև մի ժամ առաջ, կեանքն ինձ համար ամէն գրաւչութիւնից զրկւած էր: Բայց ներկայիս այդ կեանքը արժէքաւորւել, անգին և սիրելի էր դարձել: Սկսել էի անհունօրէն ափսոսալ կեանքիս կորուստը:

Անյաջողութեան, յուսալքման, տանջանքի, հոգեկան և մարմնական տառապանքի վայրկեաններին մարդս մահ է ցանկանում, նրան փնտրում է, Աստծուն և երկնային զօրութիւններին խնդրում, աղաչում և պաղատում է, որ այդ տառապալից և բազմատանջ կեանքից իրեն փրկեն և ազատեն, բայց հոգեվարքը հասնելուն պէս նա զղջում է և կեանքը շարունակելու համար այդ երկնային զօրութիւններից ողորմութիւն, գթութիւն է պաղատում:

Կեանքիս կորուստի ահարկու ահազանգը ինձ ցնցեց. սկսեցի կանչել, բղաւել, օգնութիւն խնդրել: Ինձ գերեվարող քիւրդերից մէկը մօտենալով՝ հայհոյալից և սպառնագին սաստեց, բայց յետոյ իմ ձեռները կապող չւանները բացել սկսեց: Բոլորովին ուժասպառ, գետին գլորուեցի: Քիւրդն ընկածս տեղից ինձ ոտքի կանգնեցրեց և ձախ բազուկիցս պինդ բռնած՝ ներս, սենեակներից մէկը տարաւ:

Առաջին իսկ ակնարկից իմացայ, որ քրդական մի ցեղապետի հետ գործ ունեմ: Սենեակի յատակը ծածկւած էր թանկարժէք գորգերով: Հինգ հոգի սենեակի վերնամասում՝ գորգերի վրայ, ծալապատիկ նստած և մետաքսաթել ու նախշուն գործած բարձերի թիկն էին տւած: Ցեղապետը ղայլան էր քաշում: Ինձ կարգադրեց նստել:

Երբ մտածում էի, թէ ինչպէ՞ս պիտի կարողանամ նրանց հետ խօսել, ցեղապետի կողքին նստածներից մէկը, որը նոյնպէս քրդական տարազով հագնուած էր, ինձ բոլորովին հասկանալի թիւրքերէնով հարցրեց.

– Երիտասա՛րդ, որտեղացի՞ ես և ինչու՞ հրացանով զինուած՝ մեր գիւղն ես եկել: Ո՞վ է քեզ այստեղ ուղարկել և ի՞նչ գործի համար: Եթէ ճիշտն ասելու լինես, քեզ կազատենք, հակառակ պարագային որպէս լրտես՝ կը գնդակահարենք:

Չնայած այն հանգամանքին, որ յանկարծուստ ինձ հետ պատահած արկածի հետևանքով թմրել և բթացել էի, բայց իսկոյն ևեթ զգաստանալով՝ կռահեցի, որ ծպտուած տարազով մի թիւրք զինուորական լրտեսի հետ գործ ունեմ և մտաւոր բոլոր կարողութիւններս կենտրոնացնելով, ջանացի ինչքան հնարաւոր է, ստել և խաբել:

— Ես Ուրմիայի շրջանի գիւղացի մի հայ եմ: Երբ Տաճկաստանից և Սալմաստից փախուստ տուող գաղթականութիւնն Ուրմիա եկաւ, մի քանի օրում մեր ունեցած ամբողջ ուտելիքի պաշարը թալանեց և ցրիւ տուեց: Ապրել կարողանալու համար ոչ մի հնարաւորութիւն մեզ համար չթողին:

Երբ նրանք ստիպուած եղան Ուրմիայից էլ հեռանալ, մեզ էլ ստիպեցին մեր գիւղը թողնել; Նրանք մեզ սարսափահար արին՝ ասելով՝ էս է, մէկ-երկու օրից տաճիկներն այստեղ են գալու և որովհետև հայերի հետ արեան թշնամի են, ձեզ բոլորիդ կոտորելու են: Մէկ կողմից ահաբեկուած, միւս կողմից առանց պաշարի և սոված մնացած, մենք էլ ստիպուեցինք թողնելու մեր երկիրը, մեր տունն ու այգիները: Բայց շատ շուտով չափազանց զղջացինք այդպէս վարուելու համար: Մեր ընտանիքը երեք հոգուց բաղկացած է՝ ես ու քոյրս և հայրս: Մայրս երկու տարի առաջ մահացաւ: Այո՛, մենք շատ-շատ զղջացինք: Կը նախընտրէինք սոված ու մերկ մեր գիւղը մնալ և տաճիկների գթութեան ապաւինել, քան թէ այս տանջանքներին ենթարկուելով՝ օտարութեան մէջ անտէր ու անօգնական մեռնել:

Ինձ հարցաքննող թիւրք լրտեսը քիւրդերի ցեղապետին համառօտ թարգմանեց իմ ասածների մի մասը, յետոյ նորից իր խօսքն ինձ ուղղելով՝ ասաց.

– Բայց, ճարպի՛ն հայ, դու ստում ես: Քո թիւրքերէն խօսակցութիւնը ցոյց է տալիս, որ դու ուրմեցի չես: Դու վանեցի ես: Ուրմիայի հայը թիւրքերէն քեզ պէս չի խօսում: Եթէ ուզում ես փրկուել, պէտք է ամէն ինչ ճիշտ և առանց թաքցնելու ասես:

– Ես թաքցնելու ոչինչ ունեմ: Ինչ վերաբերում է թիւրքերէն իմանալուն, պիտի յայտնեմ, որ չնայած գիւղացի, բայց մեր գիւղը, որ Ռահվա է կոչւում, Ուրմիա քաղաքի քթի տակն է, նրան համարեա կպած մի մասն է: Է՜հ, մինչև մէկուկէս ամիս առաջ մեր վիճակն էլ վատ չէր: Խաղողի մեծ այգի և պտղատու շատ ծառեր ունէինք: Հայրս կարողանում էր ինձ քաղաքի դպրոցն ուղարկել: Ես թիւրքերէն լեզուն միսիոնարների դպրոցումն եմ սովորել: Այդ դպրոցի գրեթէ բոլոր դասերը թիւրքերէնով են սովորեցնում, այնպէս որ իմ թիւրքերէն լաւ իմանալը զարմանալի չէ:

Ծպտուած թիւրք լրտեսը նորից ասածներս քիւրդերէնի թարգմանեց և այս անգամն էլ, առանց նրա խօսքն ու կարծիքը լսելու, շարունակեց աւելի կոպիտ տոնով.

– Քեզ ասում եմ, որ ստում ես: Դու վանեցի ֆեդայիներից ես, հետևաբար և մեր քիւրդերի ու նրանց բարեկամ թիւրքերի թշնամիներից ես: Դու և քեզ նմանները մեր բարեկամ թիւրքերին թէ՛ Վանում և թէ՛ Սալմաստում կոտորել էք: Պարսկաստանում, քրդական այս շրջանումն էլ, մեզ հանգիստ չէք թողնում: Հիմի էլ եկել էք ձեր ահաբեներին (թարգմ. բարեկամներ)՝ անգլիացիներին միանալու և նրանց հետ մեր քիւրդերին և նրանց հայրենակիցներին կոտորելու: Բայց մենք ձեզ հանգիստ թողնելու չենք, ձեզ կը հետապնդենք և մինչև բոլորիդ չկոտորենք, ձեռք քաշողը չենք: Անպայման գիտես արդէն, որ ձեր գլխաւորներից ենք սկսել: Ձեր Կոստիին և նրա մի քանի բարեկամներին այս աշխարհն ենք ուղարկել: Շուտով հերթը միւսներին է հասնելու, եթէ նոյնիսկ ձեր բարեկամ անգլիացիները ձեզ իրենց մայրաքաղաքը՝ Լոնդոն փախցնելու լինեն:

– Բայց աղա, այդ բոլոր ձեր ասածները ինձ և ինձ նմաններին չեն վերաբերում: Ես ու իմ նմանները հասարակ, խեղճ մարդիկ ենք: Մենք ոչ մէկի հետ թշնամութիւն չենք ունեցել և հարիւրաւոր տարիներով նրանց հետ ապրել ենք բարեկամաբար և եղբայրաբար:

– Նորից կրկնում եմ, դժբա՛խտ երիտասարդ, որ դու խաբում ես, դու այստեղ լրտեսութիւն անելու նպատակով ես մնացել:

Երբ ես ուզում էի նորից առարկել, թիւրք լրտեսը, խօսքս կտրելով և այս անգամ աւելի ջղայնացած և բղաւելով, ասաց.

– Եթէ ճիշտ ես խօսում և լրտեսութեան համար եկած չես, քո այդ հրացանն ինչի՞ պէտք էր: Ուրմեցիները հրացանի գործածութեան մասին նոյնիսկ գաղափար էլ չունեն, ուր մնաց դրանով զինուելը:

– Փախստական գաղթականութիւնը, որոնց հետ ես, հայրս ու քոյրս էլ փախչում էինք, Սային-Ղալէյի և Բիջարի ճանապարհին յարձակման ենթարկուեց: Գաղթականների հազարաւոր բազմութիւնը խուճապի և իրարանցման մատնուեց: Սարսափի կանչ, լաց ու շիվան բարձրացրեց: Կոտորածից ազատուելու համար հազարաւորներ իրար խառնուեցին: Ամէնքը փախչում էին: Այս սարսափելի խուճապի և իրարանցման մէջ հարազատներ՝ հայր, որդի, քոյր, եղբայր, մայր, զաւակ, մէկ խօսքով, բոլորն իրար կորցրին: Ես էլ իմ դժբախտ հօրս ու քրոջս կորցրի: Բիջար հասնելուց յետոյ քրոջս ճարեցի: Քոյրս անվերջ լացում, կոծում, գլուխն ու ծնկներն էր ծեծում և ինձ խնդրում, աղաչում և պա-

ղատում էր վերադառնալ և հօրս փնտրել ու գտնել...:

– Բայց այս բոլորն ի՞նչ կապ ունեն քո զինուած լինելու հետ,– ինձ ընդհատելով բղաւեց հարցաքննութեան ենթարկող թիւրք տարազափոխ եղած լրտեսը,– ի՞նչ է, ինձ յիմարի տեղ ես դրել և խղճիս հետ խաղա՞լ ես ուզում:

– Ձեր կարեկցութիւնը շահելու համար չէր ասածներս: Ուզում էի ձեզ բացատրել այն ամէնը, ինչ ինձ հետ կատարուել է: Եթէ կարծում էք աւելորդ ու անօգուտ է, ինչու՞ ուրեմն հարց ու փորձ էք անում...:

– Լաւ, շարունակի՛ր, միայն կարճ կապի՛ր: Զինուած լինելուդ պատճառը բացատրիր, թէև ինձ համար արդէն ամէն ինչ շատ պարզ ու հասկանալի է,– ասաց, ըստ երևոյթին, համբերութիւնից դուրս եկած թիւրք լրտեսը:

– Շատ լաւ, քանի որ ինձ հետ պատահած դժբախտութեան մանրամասնութիւնը ձեզ հետաքրքրիր չէ, շատ կարճ ու համառօտ կը յայտնեմ, որ հօրս գտնելու համար մի անգամ անցած այս անիծեալ ճանապարհից նորից վերադարձայ: Ձեզ հանդիպելուց մի քանի րոպէ առաջ ճանապարհի վրայ, ճիշտ ոտքերիս տակ, գտայ այս հրացանը, որով ինչպէս ասում էք, զինուած եմ:

Տաճիկ լրտեսը չափազանց ջղային և երկարաշունչ քրքիջ արձակելուց յետոյ ասաց.

– Ափսո՜ս, որ այս յարգելի ցեղապետի բնակարանումն ես: Նրանք, դարաւոր սովորութեան համաձայն, նոյնիսկ քեզ նման մարդասպան լրտեսին իրենց տներում չեն սպանում: Դու ո՛չ թէ գնդակահարելու, այլ այս ոտքերիս տակ տրորելով կտորկտոր լինելու արժանի ես: Յետոյ կը տեսնենք...:

Քիւրդ տանտիրոջ հետ կարճ խորհրդակցութիւն կատարելուց յետոյ, ինձ հարցաքննութեան սենեակից դուրս բերելով, իրար կողքի շարքով դասաւորուած սենեակներից ամենավերջինը տարան: Սենեակը փոքր էր և թեթև կահաւորուած: Գետնի վրայ գորգ էր փռուած և պատի կողքին՝ մի թախթ դրուած: Փայտեայ թախթի վրայ մի խալիչէ և մի բարձ կար: Հանդիպակաց երկու պատերի վերևի մասում՝ գրեթէ առաստաղին կպած, երկու փոքր լուսամուտներ կային: Ինքս ինձ մօտ ենթադրեցի, որ այս սենեակը քիւրդ ցեղապետի ցասմանը և պատժին ենթարկուած ինձ նման մարդկանց համար էր սարքած:

Ինձ այս սենեակն առաջնորդող տարիքոտ քիւրդը, կարեկցական թոող տոնով և քիւրդերէն լեզուով, որից ես ոչինչ կարող էի հասկանալ, բառեր արտասանեց և ձեռքով պատի կողքին դրուած թախտը ցոյց տուեց: Մի երկու րոպէ սպասելուց յետոյ իմանալով, որ իր խօսած լեզուն չեմ հասկանում, խորհրդաւոր կերպով գլուխը տարուբերելով՝ հեռացաւ՝ չմոռանալով սենեակի դուռն ինձ վրայ բանալիով կողպել:

Կէս ժամ չանցած, նոյն քիւրդը, փակած դուռը բացելով, ներս եկաւ և ինձ համար հաց, թանապուր և ջուր բերեց: Անմիջապէս յետոյ նա չմոռացաւ նաև մի միզման ներս բերելու: Այս անգամ էլ նա մի քանի բառեր ասաց, որից նոյնպէս ոչինչ հասկացայ: Դուրս գնալով՝ նորից դուռն երեսիս կողպեց:

***

Գերեվարութիւնից յետոյ անցել էր ամբողջ 30 ժամ: Այդ ժամանակամիջոցին միևնոյն սենեակում բանտարկուած էի: Բացի ինձ համար ջուր, հաց, մածուն և թանապուր բերող քրդից, այդ ամբողջ ժամանակ, ուրիշ որևէ մէկը սենեակս մուտք չգործեց: Վիճակս սոսկալի էր: Քիւրդի լեզուն չէի հասկանում, իրար հետ հաղորդակցում էինք ձեռքի ու գլխի նշաններով, բայց դրանից էլ իմ ճակատագրի վերաբերեալ ոչինչ կարող էի իմանալ:

Մի անգամ ձեռք ու գլխի նշաններով և թիւրքերէնին նման բառեր ասելով՝ փորձեցի քիւրդից թիւրք զինուորականի մասին որևէ բան իմանալ: Ըստ երևոյթին իմ նպատակն հասկանալով՝ քիւրդը դժգոհութեան արտայայտութիւններ արեց, որից էլի ոչինչ կարողացայ հասկանալ: Սակայն ինձ համար պարզուեց մի յուսալի պարագայ, և այդ այն էր, որ իմ բանտապահ քիւրդը համակրանքի որևէ զգացում այդ թիւրք լրտեսի նկատմամբ չէր տածում: Յետոյ մի անգամ էլ աղա, աղա, բէգ, բէգ բառեր արտասանելով ուզեցի քիւրդ ցեղապետի մասին հարցնել: Իմ պահակ քիւրդը, ձեռքը մի քանի անգամ վերից դէպի ցած բերելով, ինձ ուզեց հասկացնել, որ պէտք է սպասեմ և համբերեմ: Սպասելուց և համբերելուց բացի ի՞նչ կարող էի անել: Բայց այդ սպասումը չափազանց տագնապալի էր: Կեանքս՝ իմ ապրել ու չապրելը բախտախաղի էր դրուած: Իմ կեանքը քիւրդ պետի վճռից էր կախուած:

Մահուան սեմին կանգնած մարդու համար իր կեանքի վերջալոյսի ոսկեզօծ, գունագեղ, փայլփլող շողքերը անսահմանօրէն գերագնահատելի և անզուգական են: Նա, այդ մարդը, ապրել կարողանալու համար, յոյսի այդ շողքերը ագահօրէն գրկել, իր սրտին սեղմել է ուզում, և դողում, սարսափում է նրանց բաժանուելու մտքից ու վախից:

Հաւանական մահուան և անհետացման սեմին կանգնած՝ ներկայիս ես դողում և սարսափահար էի լինում սպանուելուց կամ խեղդամահ լինելուց: Բայց ինչու՞. չէ՞ որ ենթադրում էի, որ կեանքն այլևս արժէք չէր ներկայացնում ինձ համար... Գուցէ նրա համար, որ ափսոսում էի աննպատակ և զուր տեղը էշ նահատակ դառնալուս համար...

Նման մղձաւանջային ապրումները կրծում, մաշում էին ուղեղս, երբ կէս գիշերուայ մօտերքը սենեակիս փակած դռան կողպէքում բանալի շուռ եկաւ այն բացելու համար: Սարսափահար և շնչակապ սպասում էի, երբ պահակ քիւրդը, ներս գալով, ինձ հասկացրեց սենեակից դուրս ելնել: «Հաշիւս մաք-

րելու, ինձ գնդակահար կամ դաշունահար անելու են տանում»,– մտածեցի:

Զարմանքից ապուշ կտրեցի: Սենեակի դռանը երեք անձնաւորութիւններ ինձ սպասում էին: Նրանցից մէկին ճանաչեցի: Քիւրդերի պետն էր: Միւս երկուսը կանայք էին:

Քիւրդը ճանապարհին ինձ գերի վերցնող և ձեռքիցս զէնքս խլող խմբի պետն էր: Նա միաժամանակ այդ տանը և ըստ երևոյթին այդ գիւղի գլխաւորն ու աշիրէթապետն էր: Նա կարեկցաբար ձեռքը ուսիս դնելով, մի քանի խօսք ասաց և դժուարութեամբ ինձ հասկացրեց, որ կանանցից մէկն իր կինն է և միւսը աղջիկը:

– Կնոջս ու աղջկաս խաթրին քեզ բաշխում և ազատում եմ,– ասաց, և իր պահակին դառնալով՝ ինչ-որ յանձնարարութիւններ արեց, որից միայն Բիջար բառը հասկացայ:

Քրդական սովորութեան համաձայն՝ ձեռքս կրծքիս դրած և գլուխս ծռած, բոլոր երեքին էլ թիւրքերէնով շնորհակալ, շատ շնորհակալ եմ ասացի:

Բաժանման ժամանակ քիւրդ պետը բարի ճանապարհ մաղթեց, իսկ նրա աղջիկը սիրալիր և ժպտադէմ, ձեռքի շարժումների օգնութեամբ, պատերազմից յետոյ՝ այստեղ եկ բառերն արտասանեց:

Իմ պահակ քիւրդը, ձիան վրայ ինձ իր մէջքին նստեցնելով, պատուիրեց ցած չգլորուելու համար երկու ձեռքովս իր մէջքը գրկել: Նրան յանձնարարած էր ինձ մինչև Բիջար հասցնել: Նա ամենայն ազնուութեամբ և անթերի, եղած յանձնարարութիւնը կատարեց: Այս տարօրինակօրէն տագնապալից դէպքը ապացուցեց, որ քիւրդը վեհանձն ու ներողամիտ ժողովուրդ է և եթէ նրան գրգռութիւններով և ատելավառ զգացումներով չվարակեն, ոչ թէ հայի թշնամին, այլ նրա բարեկամն ու բախտակիցն է:

Թիւրք զինուորական տարազափոխուած լրտեսի արիւնոտ ճանկերից ինձ փրկողները, կասկած չունեմ, քիւրդ ցեղապետի կինն ու աղջիկն էին, որոնց ազնիւ վերաբերմունքը երբեք չեմ կարող մոռանալ:

ՀԱՄԱԴԱՆՈՒՄ

1918 թի օգոստոս ամսւայ առաջին կէսին, շուրջ 70 հազար հայ և ասորի գաղթականութիւնը հասել էր Համադան քաղաքը: Համադանում, առաջին անգամ լինելով, պարսկերէն լեզուով խօսակցութիւն լսեցի: Սկզբում ինձ թւում էր, որ այդ լեզուով կատարուող խօսակցութիւնը քիւրդերէնի մի տեսակն էր, բայց յետոյ, երբ մի քիչ ծանօթացայ լեզուի բառերին, իմացայ, որ սխալւել եմ:

Անգլիացիները Համադանին չհասած Բհար կոչուած գիւղաքաղաքում զինուած հայ և ասորի մարդկանց անխտիր, զինաթափ արին և յայտարարեցին, որ զէնք թաքցնողները կենթարկւեն խիստ մեծ պատասխանատուութեան: Զինուած անձինք բողոքեցին զինաթափութեան համար, բայց բողոքն անօգուտ անցաւ:

– Եթէ ձեր զինական օժանդակութեան կարիքն ունենանք, նախ և առաջ զինուորական կրթութիւն և կարգապահութիւն կը սովորեցնենք և ապա ձեզ մեր ցանկացած զէնքերով կը զինենք,– պատասխանեցին անգլիացիները:

Երկրորդ անգամ Բիջար հասնելուց յետոյ հօրս գտել էի: Զարմանալի զուգադիպութեամբ, հօրս պատմածի համաձայն, մօտաւորապէս միևնոյն ժամին նա հասել էր, իսկ ես առանց լրջօրէն կշռադատելու արարքիս վտանգաւորութիւնը, մեն-մենակ Բիջար էի մեկնել նրան փնտրելու և գտնելու համար: Մեր վերստին հանդիպումը շատ վշտալից եղաւ: Մեր երկուսիս էլ կրած տանջանքն ու յոգնածութիւնը ծայրայեղօրէն լարել էին մեր ջղերը, և մենք փոխանակ ուրախանալու և հրճւելու, լացում էինք: Լացում էինք մեր դժբախտութեան և ճակատագրի անգութ դասաւորման համար: Լացում էինք, որովհետև մեր հայրենակարօտութեան համար կամովին զոհել էինք մեր ընտանեկան խաղաղ համակեցութիւնը և առաջին նահանջի տառապանքներից հազիւ փրկւած մեր կեանքի անդորրութիւնը:

Մենք՝ հայր ու որդի, երդւեցինք այլևս երբեք և ոչ մի գնով մինչև որևէ մէկիս մահը իրարուց չբաժանւել:

Մենք մեր երդումն ամրօրէն և անխախտ պահեցինք, մինչև իմ ընտանեկարօտ և հայրենակարօտ դժբախտ հօրս մահւամբ կատարւած բաժանումը:

***

Անգլիացիները վճռել էին մեր մի քանի տասնեակ հազարաւոր գաղթականութիւնը Բաղդադ ուղարկել, իսկ այնտեղից որտեղ փոխադրելը մեզ միանգամայն անյայտ էր:

Մասիսի ստորոտներում սղմւած մեր այսպէս ասած կովկասահայութեան միանալու ցանկութիւնն այրում և մրրկում էր հայրենազուրկ և հայրենակարօտ վասպուրականցիներին: Իրենց դարաւոր հայրենիքից վայրագութեամբ դուրս շպրտւած հայերը բուռն ցանկութիւն ունէին իրենց հիւրասէր և գթառատ երևանցի հայրենակիցների մօտ վերադառնալու: Նրանք այրւում էին իրենց հայրենակիցների և հայրենի հողի կարօտի ծարաւով: Նրանք ձգտում էին իրենց ֆիզիկական և մտաւոր ամբողջ ուժերով միանալ այն հազարաւորներին, որոնք դեռ կառչած էին մնում իրենց հայրենի հողաշերտերին և վճռել էին արեան գնով պաշտպանել և պահել իրենց հայրենիքը:

Բայց մեր նոր բարեկամ-պաշտպանների ծրագիրը բոլորովին ուրիշ էր: Նրանք չէին ցանկանում

20-25 հազարի հասնող հայ և ասորի երիտասարդ կռուող և զէնքի ընդունակ մեր ուժերից զրկել:

Զարմանալու ոչինչ չկար: Մեր ազգային ճակատագիրն անկարող էր իրեն վիճակած դժբախտութեան ծիրից դուրս պրծնելու և այդ մեզ պարտադրուած դարաւոր գերութիւնից ազատելու և փրկելու: Մեծ պետութիւնների, ուժեղների դիւանագիտական պարտք ու պահանջի տեսարակում Հայ անունը գրուած չէր և նուազագոյն ցանկութիւն իսկ չկար այդ անունը ներառելու իրաւատէր պահանջատէրերի բաժին-սիւնակում:

***

Համադան հասնելուց յետոյ՝ երկրորդ օրուայ երեկոյեան, ինձ մօտ եկաւ Արմենակ Մաքսապետեանի եղբայրը՝ Վարդան Մաքսապետեանը և ինձ առաջարկեց անմիջապէս իր եղբօր հետ տեսակցել: Գնացի:

– Սիրա՛ք,– առանց այլևայլի և մտերմօրէն ասաց Մաքսապետեանը,– էգուց կամ ամենաուշը միւս օր առաւօտեան մեր բարեկամները (անգլիացիների մասին էր իր խօսքը) մեզ Բաղդադ են տանելու և այնտեղից էլ Միջագետքի անջուր և աւազուտ անապատները: Չնայած հայրենակիցներ ենք, բայց մի քանի անգամից աւելի քեզ չեմ հանդիպել և մօտիկից ճանաչելու առիթ չեմ ունեցել: Հօրդ հետ լաւ ծանօթ եմ և որպէս լաւ ու անշահախնդիր հոգևորականի՝ յարգում եմ: Համոզուած եմ, ինչպէս ես, նոյնպէս և նա, ի վիճակի չենք լինելու դիմանալ այդ մեզ չափազանց անհարազատ կլիմային: Վճռել եմ եղբօրս և ուրիշ մի քանի բարեկամների հետ այս գիշեր, նախքան լուսաբացը, թողնել այս քաղաքը և դէպի Սուլթանաբադ հեռանալ: Իսկ յետոյ, եթէ հնարաւոր լինի Թեհրան մեկնել: Եթէ ցանկանում էք, հօրդ հետ միասին, մեր քանի հոգինոց խմբին միացէք:

– Չափազանց շնորհակալ եմ,– պատասխանեցի,– ձեր սիրալիրութեան և բարեացակամութեան համար: Օգտակար և նպատակահարմար առաջարկ էք անում: Մինչև կէս ժամ՝ հօրս հետ խորհրդակցելուց յետոյ, անձամբ պատասխանը կը բերեմ: Ենթադրում եմ, հայրս, որ հազիւ իր ոտքերի վրայ քարշ է գալիս, ուրախութեամբ ձեր առաջարկը կընդունի:

Հօրս հետ խորհրդակցելուց յետոյ, Մաքսապետեանի առաջարկը միանգամայն նպատակայարմար գտանք: Վերադարձա, հօրս պատգամը Մաքսապետեանին հաղորդելու: Այդ պատգամը հետևեալն էր.

– Իմ կողմից անկեղծ շնորհակալութիւնս կը յայտնես պ. Մաքսապետեանին և կըսես, որ միշտ երախտապարտ պիտի մնամ իրեն այդ օգտակար առաջարկին համար: Եթէ ստիպուած ըլլայի այդ նկարագրուած անտանելի ճանապարհը կտրելու, վստահաբար գիտեմ, որ կէս ճանապարհը չանցած՝ պիտի մեռնէի:

ՄԱԼԱՅԷՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Նոյն օրը՝ կէս գիշերուանից երկու ժամ անց, Մաքսապետեան երկու եղբայրների և ուրիշ չորս հայրենակիցների հետ հայրս ու ես Համադանից հեռացանք: Մեր հեռացման որոշումը մինչև քաղաքից հեռանալը բոլորովին գաղտնի պահեցինք և մեկնումը կատարեցինք մեծ զգուշութեամբ: Գաղթականութիւնից անջատուած մեր փոքրիկ խումբը բաղկացած էր 8 հոգուց: Մեզ հետ կին չկար, բոլորս էլ տղամարդիկ էինք: Մտածում էինք, եթէ ուրիշները մեր հեռացման մասին տեղեկանան, կարող է պատահել գլխացաւանք ունենանք և նոյնիսկ մեր հեռացումը արգիլեն: Երբ արդէն 5-6 կիլոմետր Համադանից հեռացել էինք, սկսեցինք սրտապնդուել: Ճանապարհի անապահովութիւնից առանձնապէս անհանգիստ չէինք, նախ որ մեր ութ հոգինոց խմբից երկուսը բրաունիկ ատրճանակներով զինուած էին, և յետոյ տեղեկացել էինք, որ Պարսկաստանի այդ ժամանակների ամենաապահով շրջանը, մեր կտրել ծրագրած Համադան-Մալայէր-Սուլթանաբադ գիծն էր:

Յաջորդ օրը՝ կէսօրից յետոյ, մեր հետևակ խումբը, բոլորովին ապահով, բայց յոգնած ու տառապած, Մալայէրից փոքր հեռաւորութեան վրայ գտնուող մի կէս հայաբնակ գիւղ հասաւ: Այդ գիւղի անունը Սաֆայիէ էր:

Գիւղացիները տեղեակ էին Համադան հասած գաղթականութեան մասին: Մեզ առաջնորդեցին իրենց գիւղապետի տունը: Գիւղապետը՝ Սահակ Աւետեանը, մեր ութ հոգինոց գաղթական խմբին շատ մեծ սիրալիրութեամբ ընդունեց: Ամէնից առաջ մեզ հնարաւորութիւն ընծայեց իրենց տնից ոչ հեռու գտնուող ախոռին կից բաղնիքի նմանող մի տեղում տաք ջրով լողանալու: Չգիտեմ ուղեկիցներիս տպաւորութիւնը, բայց ես այդ օրուայ լոգանքը երբեք չեմ մոռանայ: Ինձ համար, որ մի ամսից աւելի ժամանակաշրջանում կեղտի ու փոշիների մէջ կորել էի, մի կատարեալ բարիք ու բախտաւորութիւն էր այդ տաք ջրի լոգանքը: Նոյնը նաև հօրս համար, որը լողանալուց յետոյ ջերմեռանդօրէն օրհնեց բարեսիրտ տանտիրոջը:

Գիւղապետ Սահակ աղան մեր գաղթական խմբին շատ մեծ սրտաբացութեամբ և առատաձեռնութեամբ երկու օր շարունակ հիւրասիրեց և քնելու ու հանգստանալու ամէն հնարաւորութիւն հայթայթեց: Երբ մենք նրա սիրալիր հոգատարութեան համար շնորհակալութեան խօսք էինք ասում, նա համեստօրէն նեղանում և ասում էր. «Բա ո՞ր օրուայ համար հայ ենք, որ այսպիսի տանջանքի ու նեղու-

թեան հանդիպած մեր հայ եղբայրներին չուզենանք օգնել: Դուք իմ ազիզ հիւրերն էք և իմ աչքի վրայ տեղ ունէք»:

Գիւղապետն իր՝ գիւղական համեմատաբար ընդարձակ տանը մեզ երկու սենեակ էր յատկացրել՝ ճաշելու, հանգստանալու և քնելու համար: Այդ երկու ցերեկ-գիշերուայ ընթացքում մեզ ընծայած հանգստութիւնն ու սնուցումն այնքան ուշադիր և կանոնաւոր էր, որ մենք կարծես մոռացել էինք մեր գաղթական վիճակի դառնութիւնն ու դժբախտութիւնը:

ԺԱՄԱՆՑ-ԹՂԹԱԽԱՂ

Կեանքումս ուշագրաւ և բացառիկ դէպքեր շատ եմ ունեցել: Դրանցից մէկն էլ հետևեալն է, որ երբևիցէ մոռանալ չեմ կարողացել:

Մեր ժամանումից յետոյ երկրորդ գիշերն էր: Որոշուած էր հետևեալ առաւօտեան կանուխ բարեսիրտ և հիւրասէր Սահակ աղայի տունը թողնել և մեր գաղթականի ճամփորդութիւնը շարունակել Սուլթանաբադ քաղաքի ուղղութեամբ: Հայրս անհանգիստ էր և թեթևակի ջերմ ունէր: Արմենակ Մաքսապետեանը նրան առաջարկեց իր հետ միասին միւս հարևան սենեակն անցնել, ըստ կարելւոյն շուտ քնելու և հանգստանալու համար:

– Տէ՛ր Բաբա,– մեզ ակնարկելով՝ ասաց հօրս,- ասոնք մեզմէ շատ աւելի երիտասարդ են: Եթէ մինչև առաւօտեան ալ արթուն մնալու ըլլան, անոնց համար նշանակութիւն չունի: Վաղն ալ, ամբողջ օրը, կրնան առանց տրտնջալու ճանապարհ կտրել, բայց ինձ ու քեզ համար գործը աւելի դժուար է: Մեզ հնարաւորին չափ շատ հանգստանալը կարևոր է:

– Աղէկ կըսես, պ. Մաքսապետեան, ես ալ հանգստանալու շատ պէտք ունեմ: Երթանք միւս սենեակը, մի քիչ խօսակցելոց յետոյ՝ կաշխատենք շուտ քնել:

Հայրս ու Մաքսապետեանը հարևան սենեակն անցան քնելու համար: Կէս ժամ անց նրանց հետևեցին մեր ուղեկիցներից երկու համեմատաբար տարիքոտ ուրիշներ: Մեր եղած սենեակում մնացինք ես, Մաքսապետեանի կրտսեր եղբայր Վարդանը և երկու ուրիշներ:

– Սիրաք,– ասաց Վարդանը,– այսքան շուտ քնելը միտք չունի: Եկէք մի ժամ զբաղուենք, յետոյ քնելու գնանք:

Այս ասելով՝ իր ծոցի գրպանից մի կապոց հանեց: Կապոցի վրայի թուղթը բացելով՝ գետնի վրայ տարածեց թղթախաղի կարտերը:

– Եկէ՛ք,– խօսքն ինձ և միւս երկուսին ուղղելով՝ աւելացրեց,– մէկ-երկու ժամ 21 խաղանք: Որպէսզի խաղը հետաքրքիր լինի, մի փոքր գումար էլ, օրինակի համար մէկ ղուրուշ տանողի համար կորոշենք: Ինչ էք կարծում այս խաղը պառկած տեղում անքուն մնալուց աւելի լաւ չէ՞:

Միւս երկուսը համաձայնուեցին, ես առարկեցի.

– Մինչև հիմի կեանքումս թղթախաղով չեմ զբաղուած և ցանկութիւն էլ չունեմ խաղալու: Բացի այդ՝ ձեր ասած 21 թղթախաղից գաղափար իսկ չունեմ:

Վարդանն սկսեց քահ-քահ ծիծաղել և ասաց.

– Ա՜յ ախպէր, սա մի մեծ դժուարութիւն և վարպետութիւն չունի: Երկու րոպէում կարող եմ քեզ սովորեցնել: Վերջապէս, մենք անվերջ գաղթական մնալու չենք, մարդկանց մօտ պիտի նստենք, հիւրասիրութիւնների մասնակցենք: Ամօթ է այս տեսակ անմեղ ժամանցների մասին գաղափար չունենալ:

– Բոլորովին զուր ես ծիծաղում, Վարդա՛ն: Քեզ ասում եմ, որ կեանքումս թղթախաղ արած չեմ և չեմ էլ ցանկանում նման խաղերը սովորել: Լսել և կարդացել եմ, որ այդ թղթախաղ կոչւող զբաղմունքն ամենավառ և ամենավտանգաւոր մոլութիւններից մէկն է և հազարաւորներ այդ մոլութեան ենթարկուած լինելու համար դժբախտանում և կործանւում են:

– Միանգամայն ճիշտ է ասածդ,– հին փաստաբանի փորձարկութեան դիմելով և ամէն ձևի խորամանկ ու սատանայական միջոցներով ինձ համոզելու ջանալով պատասխանեց Վարդանը:– Այս խաղի ղեկը մարդուս իր ձեռքն է: Եթէ զբաղմունքի համար խաղալ ուզենայ միայն հաճոյք է և բացառիկ բաւականութիւն կստանայ և վտանգ ունենալ չի կարող: Փորձի՛ր մի քանի րոպէ, եթէ չսիրեցիր, մի՛ շարունակիր: Բացի այդ, մենք շատ փոքր գումարով կը խաղանք: Մէկ խօսքով, բնաւ պարտադրել չեմ ցանկանում: Մենք երեքով կսկսենք, և դու կը նայես: Եթէ ուզեցիր, դու էլ կը մասնակցես:

Սատանայական փորձութեան մէջ էի ընկել: Չկարողացայ այլևս ինձ տիրապետել:

– Լաւ, տեսնենք ինչպէ՞ս է կատարւում այդ խաղը,– հարցրի:

– Շատ ուրախ եմ, որ համաձայնուեցիր: Այս խաղը 4 հոգիով շատ հետաքրքիր է:

Վարդանը 21 թղթախաղի սկզբունքը բացատրեց: Իսկապէս չափազանց հասարակ հաշիւ էր:

– Ուրեմն,– բացատրելով եզրակացրեց Վարդանը,– տուզն այս խաղում 11 է հաշւում, բայց երկու տուզը իրար հետ միասին՝ 21 է հաշւում, զինուորը 2, դաման 3, թագաւորը 4. մնացած կարտերը խաղացւում են իրենց վրայ նշանակուած թաւնշաններով: Սկզբունքը, այսինքն տանելու շանսը կայանում է նրանում, որ երկու խաղացողներից մէկը 21 թիւը կազմի, իսկ եթէ չի կարող, պիտի աշխատի ըստ կարելւոյն 21 թիւն մօտենալ: Հաւասար թիւը բերելուց բանքիէռն է շահում:

– Լաւ, հասկանալի է,– պատասխանեցի,– գրողը քեզ տանի, որ ինձ սատանայական փորձանքի և խաբկանքի ես ենթարկում:

Խաղն սկսուեց: Խաղի ընթացքին մի քանի անգամ շահեցի: Վարդանի համեմատութեամբ մենք՝

մնացեալ երեք խաղացողներս, ոչնչութիւն էինք: Կէս ժամ չանցած տաճկական մի մեջիդիէ, 20 դուրուշ տարուեցի: Վարդանը նկատեց, որ մենք՝ երեք խաղացողներս, տաքացել և մեր հակակշիռը ձեռքից տուել ենք: Խաղը մեծացրեց: Խաղով տարուել և ինքնազսպումն ու հակակշիռը ձեռքից տուել էի: Երկու ժամ չլրացած՝ մէկ ոսկի և մէկ մէջիդիէ ձեռքից տուել էի: Միւս երկուսն էլ իմ կորցրած գումարի կրկինից աւելի տարուել էին: Վարդանն իր մեծ եղբօրից՝ Արմենակից, ակնածում և նոյնիսկ վախենում էր: Նա կարող էր այդ գիշեր մեր գրպաններում եղած ամբողջ դրամը դատարկել, բայց հաւանական սկանդալից և մանաւանդ եղբօր ներկայութիւնից վախենալով, խաղը վերջացրեց: Նկատելով, որ ես շատ անհանգիստ եմ, ասաց.

– Սիրա՛ք, եթէ ուզենաս քեզնից տարածս դրամը կարող եմ վերադարձնել:

– Ո՛չ, դրա կարիքը չունեմ,– ջղայնացած պատասխանեցի և աւելացրի,– բարեգործութիւնդ քեզ համար պահի՛ր, բայց երբ շարունակենք իրար հետ ճամփորդել, սրանից յետոյ չփորձես ինձ նորից խաղի հրաւիրելու:

Այդ գիշերը մինչև առաւօտեան անհանգիստ ու ջղային էի: Քնել չէի կարողանում: Մեղադրում էի ինձ, խստօրէն քննադատում թղթախաղի հրապուրող խորամանկ ուղեկցիս՝ Վարդանին:

Այդ գիշերուայ թղթախաղի՝ ինձ վրայ թողած ծայրայեղօրէն վատ տպաւորութիւնը պատճառ եղաւ, որ ամբողջ 30 տարիների ընթացքում, խաղաթղթերի ձեռք չտամ: 1948 թւականից, շրջանից և բարեկամներից «յետ չը մնալու» միտումով, նորից սկսեցի «զբաղուելու համար» խաղալ:

Ի միջի այլոց, որպէս յուշերիս մի ծալք, պիտի յայտնեմ, որ այս թղթախաղերի ժամանցները, դժբախտաբար, շատ են տարածուել Թեհրանի հասարակութեան որոշ շրջաններում և մի տեսակ անվտարելի ու անխուսափելի չարիք են դարձել մարդկանց համար: Ոչ մէկը չի գովում, չի պաշտպանում այդ զբաղմունքի՝ թղթախաղի առաւելութիւնը, բայց մի տեսակ վարակման նման շատերն ենթակայ, նոյնիսկ երբեմն գերի են դարձել: «Է՜հ, ի՞նչ պիտի անենք, եթէ խաղալու չլինենք»,– ասում են ամենքը և յաճախ անկամ ու անզօր ենթակայ են լինում այդ հաշիշային մոլութեանը: Դժբախտաբար, ինքս էլ յաճախ անզօր եմ դառնում դիմադրելու այդ հրապուրող մոլութեան վարակման չարիքին:

ՄԱԼԱՅԵՐԻՑ ԴԷՊԻ ՍՈՒԼԹԱՆԱԲԱԴ

Յաջորդ առաւօտեան կանուխ, մեր ութ հոգինոց խմբից 6-ը մեկնեցին: Անցնող գիշերուայ ընթացքին հօրս անհանգստութիւնը՝ ուժեղացել, և ջերմը բարձրացել էր: Ես ու հայրս ստիպւած եղանք մեր ուղեկիցներից բաժանուել և մնալ մեր ազնւաբարոյ հիւրընկալի մօտ, որն իր հերթին հօրս յայտարարեց.

– Տէր հայր, մինչև չառողջանաս, չեմ թողնելու տնիցս հեռանաս: Իմ տունը հայ քրիստոնեայի տուն է: Ինձ բախտաւոր կզգամ, երբ ձեզ նման հիւր կունենամ: Աճապարելու պէտք չկայ, կը մնաս մինչև լաւ կը պնդանաս: Մարդ եմ ուղարկած Մալայէր, քեզ համար մէկ լաւ ջորի վարձելու:

– Աստուա՛ծ քեզ, ընտանիքդ, տունդ, տեղդ օրհնի, Սահա՛կ աղա,– պատասխանեց հայրս,– դու մեզ ամօթապարտ կը թողնես: Քու ազնւութիւնն ու հարազատ վերաբերմունքը մենք ոչ մի կերպ փոխարինելու ի վիճակի չենք:

– Շատ կը խնդրեմ, տէ՛ր հայր, որ այդ խօսքերով ինձ չամաչեցնես: Ես կատարում եմ մէկ հայ մարդու պարտականութիւնը: Իմ գիւղացիներն ի՞նչ կասեն, եթէ քեզ այս վիճակով թողնեմ, որ հեռանաս: Հաշւիր, որ տունն իմս չէ, այլ ձերն է:

Ամբողջ մի շաբաթ գիւղապետ Սահակ Աւետեանը հօրս ու ինձ պահեց, խնամեց, ինչպէս իր հարազատին պիտի պահէր ու պաշտպանէր: Ինչպէս հօրս խոստացել էր, մի հայ ջորեպան և մի լաւ ջորի էր վարձել մեզ մինչև Սուլթանաբադ հասցնելու համար: Մեր ներկայութեամբ ջորեպանին պատուիրեց շատ ուշադիր լինել և մանաւանդ ջորուն վազեցնելով՝ հօրս անհանգիստ չանել:

– Վա՜յ, թէ ականջիս հասնի և իմանամ,– ասաց ջորեպանին,– որ մեր տէր հօրը դժգոհ ես թողել. բուրդդ կը գզեմ: Այս մարդիկ մեր պատւական հիւրերն են, և մենք պարտաւոր ենք մեր ձեռքից եկածը չխնայել ասոնց հանգստութեան համար: Առանց այն էլ, էդ գազան տաճիկները անոնց չափից դուրս նեղացրել են ու տանջել...:

Բազմաթիւ անգամներ հայրս ու ես, այդ չափազանց ազնիւ մարդուց շնորհակալութիւն յայտնելով, հեռացանք:

38 տարիներից յետոյ բախտ ունեցայ Սահակ աղայի մեծ տղային՝ Խաչիկ Աւետեանին, իմ ջանքերով հիմնած ընկերութեան մէջ, որպէս այդ ընկերութեան գլխաւոր հաշւապահը, գործակից ունենալ: Այդ հանգամանքը հոգեկան բացառիկ բաւականութիւն է պատճառել ինձ, մանաւանդ որ Խաչիկի անխնայ օժանդակութեան շնորհիւ նրանից փոքր երկու եղբայրները Ամերիկայի Միացեալ Նահանգներում բժշկական համալսարանը մեծ յաջողութեամբ աւարտելուց յետոյ հայ ժողովրդին պատիւ բերող վիրաբոյժ և բժիշկ են դարձել:

ՄԱՀԱՍԵՐՋԻ ԱՆԿՈՂՆՈՒՄ

Սուլթանաբադ հասնելուց յետոյ հայրս գրեթէ ապաքինւել էր, բայց ես շատ ծանր հիւանդացայ: Ամիսների թափառաշրջիկ, փախստական և անհանգիստ կեանքը կատարելապէս քայքայել էր

առողջութիւնս: Այդ ֆիզիկական քայքայմանը միացեալ էր հոգեկան տառապանքների ճնշող և փշրտող ծանրութիւնը:

Օրերով և անընդհատ ջերմում էի: Յաճախ ջերմս այնքան էր բարձրանում, որ գիտակցութիւնս կորցրած՝ զառանցում էի: Սուլթանաբադի Եկեղեցասէր կանանց միութիւնը, մանաւանդ նրանցից երկու կանայք, բարեխիղճ հոգածութեամբ ինձ հսկում էին և ամէն կերպ աշխատում էին քայքայած առողջութիւնս վերականգնել: Քանի-քանի անգամներ բժիշկ հրաւիրեցին, զանազան դեղեր գործածել տուին, բայց միշտ անօգուտ: Թելի նման նիհարել էի: Հազիւ կարողանում էի անհրաժեշտ պարագաների համար մահճակալից ցած իջնել: Հայրս յուսահատ և անճար դրութեան մէջ էր: Իր յուսահատութեան լացը թաքցնելու համար եկեղեցի՝ աղօթքի գնալու պատրւակով օրական մի քանի անգամ և մի քանի րոպէներով բացակայում էր: Երկու շաբաթ ի վեր հիւանդ էի, և ամէն օր, առաջին օրից աւելի ուժաթափւում և վառւող ու հալւող մոմի նման սպառւում էի:

Հիւանդութեանս վերջին շրջանում՝ մէկ օր, ջերմս այնքան բարձրացել էր, որ ենթարկւել էի ինքնամոռաց վիճակի: Պառկածս տեղից անգիտակցօրէն բարձրանալով՝ ինձ հասցրել էի եկեղեցու բակի՝ ներքևից հոսող յորդառատ և սառնորակ աղբիւրին և նետւել էի նրա մէջ:

Բարեբախտաբար, մարմինս դէմ էր առել վազող ջրում գցած մի մեծ քարի: Հայրս, որ անդադար ինձ հետևում էր, իմ անակնկալ բացակայութիւնից շփոթ և լեղապատառ եղած, եկեղեցու բակի այս ու այն կողմը վազվզելով, անընդհատ անունս էր կանչում: Եկեղեցու ժամկոչն էլ հօրս հետ միասին այս կողմ ու այն կողմն էր վազվզում: Վերջինս ջրի առի բաց մուտքին մօտենալով՝ անունս բղաւել սկսեց: Դժւարութեամբ կարողացայ նրա կանչերին պատասխանել՝ այստեղ եմ, այստեղ եմ: Վերջապէս նրանք, ինձ առւում գտնելով, դուրս բերին: Դուրս գալուց կատարելապէս սառած էի և դողում էի:

Կատարւեց հրաշքը: Ըստ երևոյթին, ծայր աստիճան սառած լինելու պարագան յանկարծակի վիճակափոխման ենթարկեց ինձ: Ջերմս կանգ առաւ, և այլևս չջերմեցի: Մի շաբաթից յետոյ կարողացայ մահամերձի անկողնիցս ցած իջնել և կամաց-կամաց շրջագայել: Հայրս, արցունքոտ աչքերով, ինձ հետևալը պատմեց.

– Այն օրը և այն ժամին, երբ առի ջրի մէջ ընկած էիր, ես եկեղեցու խորանի մօտ կախւած Աստուածամօր պատկերի տակ փռւած, լաց ու ողբով, անոր և մեր բոլորի ամենակարող և բարեգութ Տիրոջը կը խնդրէի, կաղաչէի և կը պաղատէի, որ քեզ խնայի ու քո երիտասարդ կեանքը քեզ ու ինձ բաշխի...: Ողորմած Տէրը չմերժեց ինձ և պաղատագին աղօթքս ու աղաչանքս լսեց: Փառք քեզ, Տէր, յաղագս ամենայնի փառք քեզ...:

– Այո՛, սիրելի՛ հայր, առանց քո ջերմեռանդ աղօթքի հաւանաբար այսօր ես ապրելու և շնչելու բախտից զրկւած լինէի: Չեմ կասկածում, որ Ամենակարողը նախ քեզ և ապա ինձ գթացել է:

Մահւան անողորմ ճանկերից իմ ազատումը արտակարգ հրաշք պէտք է համարել:

ԴԷՊԻ ԹԵՀՐԱՆ

Ապաքինմանս շրջանը բաւական երկար տևեց: Սուլթանաբադի եկեղեցասէր կանանցից երկուսը, գուցէ հօրս քահանայ լինելու պատւին, իմ առողջութեան վերականգնման համար բոլոր հնարաւոր միջոցներն ի գործ դրին: Երեք շաբաթւայ ուշադիր և սիրալիր հիւրընկալութիւնից յետոյ մենք պատրաստեցինք Թեհրան մեկնելու: Այդ ժամանակներում Պարսկաստանում ճամփորդութիւնները կատարւում էին էշերով, ջորիներով, ձիերով և ֆուրգոններով: Թեհրան մեկնող ֆուրգոններից մէկում հօրս և ինձ համար երկու տեղի տոմսակ էր վերցւած:

Մեկնեցինք դէպի Թեհրան: Ֆուրգոնին չորս ձիեր էին լծւած: Կառապանը թաւրիզեցի թիւրք էր: Ճանապարհները շատ անկանոն և անհարթ էին: Ֆուրգոնի անվերջ ցնցումները մեզ խիստ անհանգստացնում էին: Չորս օրւայ ճամփորդութիւնից յետոյ Ղում քաղաքի գծով հասանք Թեհրանի արւարձան Հազրաթ Աբդոլ-Ազիմ: Այդտեղից Թեհրան ճանապարհին՝ աննկարագրելի ահ ու սարսափով հարիւրաւոր մեռելներ փոխադրող դագաղների հանդիպեցինք:

Ահ ու սոսկումի ենթարկւած՝ մտածում էինք՝ կոտորածների և արեան ճապաղից հրաշքով ազատւած, եկել հասել էինք մի անծանօթ քաղաք, որը ժանտախտի կամ խոլերայի ասպարէզ է դարձել: Զզջում և ափսոսում էինք, որ Սուլթանաբադից Թեհրան ենք եկել: Չափազանց անհանգիստ և վրդովւած՝ մենք մեզ հարցնում էինք. «Միթէ Սուլթանաբադի մեզ այնքան սիրալիր հիւրասիրող հայ համայնքը կարո՞ղ էր անտեղեակ լինել այս ահարկու խոլերայից: Ինչու՞ ուրեմն մեզ չնախազգուշացրին: Ինչու՞ թոյլ տուին, որ մենք՝ անչափ տանջւածներս ու մազապուրծ ազատւածներս, նորից գանք ընկնելու այս նորատիպ և սարսափելի դժոխքի մէջ»:

Մեր թուրք կառապանն էլ շատ էր զարմանում այս դասաւորութեան համար և չէր կարողանում այդ առթիւ որևէ բացատրութիւն տալ:

– Երկու շաբաթ առաջ,– ասաց նա,– ես Թեհրան եկայ և անմիջապէս վերադարձայ: Այն ժամանակ այս բազմաթիւ մեռելների դագաղներին հանդիպելու դժբախտութիւնը չունեցայ:

Ի՞նչ կարող էինք անել: Արդէն եկել և հասել էինք: Մի՞թէ մեր ճակատագրից փախչելու հնարաւորութիւն ունէինք: Երևի մեր բախտն այսպէս է տնօրինւած եղել: Սրից, կրակից, թշնամու հալա-

ծանքից, նրա վայրագ հետապնդումից և կոտորածից փախչել, ազատել և գալ ու ընկնել ստոյգ և անխուսափելի մահաւան երախը:

Սուլթանաբադի եկեղեցական վարչության անդամներից մէկը իր բարեկամներից Թեհրանում ապրող մի բանակային ծառայողի հասցէով նամակ էր տուել մեզ: Մեր բախտից, երբ Թեհրան հասանք, ուշ երեկոյ էր արդէն, և քաղաքին մեր անծանօթ հանգամանքով հնարաւորութիւն չունէինք նամակի հասցէատիրոջը գտնելու: Ստիպւած եղանք հարց ու փորձով գնալ եկեղեցի: Մեր ծուռ բախտի բերմամբ եկեղեցու քահանային ճարել չյաջողեցինք: Նա բացակայում էր: Դիպւածաբար եկեղեցու բակում հանդիպեցինք մէկ մարդու: Նրան մեր ինքնութիւնը յայտնեցինք: Մարդը, որ իրեն Սպահանի Չարմահալի շրջանից և Աբրահամ անունով ներկայացրեց, շատ մեծ սիրալիրութեամբ մեզ հրաւիրեց այդ գիշեր իջևանել իր տունը, որ եկեղեցու մօտերքումն էր, և մինչև յաջորդ առաւօտեան իր հիւրը լինել:

– Մենք՝ չարմահալցիներս էլ, ժամանակին գաղթական ենք եղել: Ճիշտ է, ձեզ նման չենք տանջւել և թշնամու սրից չենք փախել, բայց մենք էլ վատ օրեր շատ ենք տեսել: Մեր ազահ գիւղատէր-ահբաբների ձեռքին տարիներով գերիի նման ենք եղել: Ամբողջ տարին շան նման վազվզել, ստրուկի նման անդադար ու չարքաշ աշխատել ենք, մշակութիւն, հողագործութիւն, էլ ինչ իմանամ, անասնապահութիւն և այգեգործութիւն ենք արել և վերջն էլ մերկ ու սոված ենք մնացել: Ստիպւած, գիւղը թողած՝ եկել ենք քաղաք՝ աշխատելու և մի կերպ ապրել կարողանալու համար:

Մաս Գ

ԹԵՀՐԱՆՈՒՄ ԵՒ ԹԵՀՐԱՆՑԻ

Հօրս հետ միասին 1918 թւի վերջին օրերին, Թեհրան հասանք: Երբ ժամանակաւորապէս եկեղեցու բակում մեզ յատկացուած սենեակում տեղաւորուեցինք, մեզ պատմեցին, որ թեհրանաբնակ հայերը և նրանց հետ նաև պարսիկները առաջին մեծ պատերազմի ահռելի չարիքների հետևանքներից անմասն չեն մնացել: Թեհրանաբնակ հայերն էլ, թիւրք բանակի ժամանումից սարսափահար, իրենց ունեցած տնային իրեղէնները՝ գորգեր, պղնձեղէն, անկողին, կահ-կարասի, և նոյնիսկ կենսամթերքը չնչին արժէքներով ծախել են հրեաներին և իրենց կինն ու երեխաները վերցրած՝ փախել են դէպի հիւսիս՝ Գիլան ու Մազանդարան: Նրանք էլ, ինչպէս մենք, իրենց յոյսն ու պաշտպանուելու ակնկալութիւնը կապած են եղել Մեծ քեռուն: Նրանք ասել և միշտ կրկնել են.

– Օսմանցի թիւրքերը չեն համարձակուելու ռուս թաթին մօտենալու: Քեռին իր ծանր թաթերի հարուածներով նրանց փշուր-փշուր կանի և նրանց հօրն ու պապին կը լացեցնի:

Երբ անմիջական սպառնալիքը վերացած են հաշուել, թեհրանաբնակ հայերը նորից իրենց տուն ու օջախն են վերադարձել, բայց ափսոս, որ տարիների՝ իրենց քրտնաջան աշխատանքով հաւաքած և ունեցած թանկարժէք գորգերն ու տնային իրեղէնները, մանաւանդ կենսամթերքը՝ ալիւր, բրինձ, իւղ, պանիր և այլն, բոլորովին չնչին արժէքներով արդէն ծախած են եղել և ներկայի իրենց թափուր տներում սովամահութեան անխուսափելի վտանգին ենթարկուել:

Անիծեալ պատերազմն ամբողջ երկրում և Թեհրանում սով, կատարեալ սով էր առաջացրել: Այդ ժամանակների կառավարութեան անփութութեան հետևանքով ցորենն ու բրինձը, իւղն ու պանիրը, կաթն ու կարագը և ընդհանրապէս բոլոր կենսամթերքները չարաշահութեան և մթերումների ենթարկած էին եղել: Հարուստները, իշխանաւորները, գիւղատէրերը բոլոր պարենապահեստները ենթարկել էին չարաշահութեան, և հարիւր հազարաւոր մարդկանց կեանքի գնով այդ կենսամթերքի գները տասնապատկել և վերջում հարիւրապատկել էին: Երկրում և մանաւանդ Թեհրանում սովամահութեան ենթարկուածների թիւը տասնեակ հազարների էր հասել: Մեր՝ Թեհրան ժամանումին տեսած հարիւրաւոր մեռնողները ո՛չ խոլերայի և ո՛չ էլ ժանտախտի, այլ սովամահութեան ենթարկուած զոհերն էին:

***

1918 թւին՝ այսինքն մեր Թեհրան ժամանման տարին, Թեհրանի հայ ազգաբնակչութիւնը թւով շատ քիչ էր: Հազիւ 500 տուն կամ շուրջ 3000 շունչ հայերը ցրուած էին այդ ժամանակւայ Թեհրանի կենտրոնական թաղերում: Ասենք, այդ օրերի Թեհրանի բնակչութեան թիւն էլ 250 հազարից չէր անցնում:

Ամենաուշագրաւ պարագան, որը հէնց սկզբից իմ ուշադրութիւնը գրաւեց, երկրի գլխաւոր և հիմնական ժողովրդի՝ պարսիկ ազգի՝ հայ փոքրամասնութեան նկատմամբ ունեցած վեհանձն ու յարգալիր վերաբերմունքն էր: Հակառակ այն կոպիտ, անմարդավայել և ատելավառ վերաբերմունքին, որին մենք՝ հայերս, մի քանի դարերի ընթացքին մեր պապերի և նախապապերի հարազատ ժառանգութիւնը եղող հողամասերի վրայ ապրելիս ենթարկուել էինք տաճիկ ժողովրդի կողմից, այստեղ՝ Պարսկաստանում և մանաւանդ Թեհրանում, ոչ միայն գոյութիւն չունէր, այլև նոյնիսկ դրա ամենափոքր նմոյշն ու նշոյլն էլ չկար:

Հետագային, երբ ես բախտ ունեցայ պարսիկ իսկական ժողովուրդը ներկայացնող անհատների հետ գործակցելու, վերոյիշեալ իրողութիւնն ինձ համար հիմնովին և բացայայտօրէն հաստատուեց: Ես բազմաթիւ առիթներ ունեցայ հիանալու պարսիկ ժողովրդի գովելի առաւելութիւնների և մանաւանդ նրանց հարազատ, աննախանձ և ազնիւ վերաբերմունքի վրայ: Պատիւ և յարգանք այդ հնամեայ, վեհանձն ու եղբայրական ժողովրդին:

Միանգամայն ուրախալի և սրտապնդիչ է մանաւանդ այն հանգամանքը, որ պարսիկ ժողովուրդը դարերի ընթացքում իր կողքին ապրող հայ փոքրամասնութեան նկատմամբ ունեցած սիրալիր և եղբայրական վերաբերմունքը, հակառակ եղած յաճախակի գրգռութիւնների, բոլորովին չի փոխած և միշտ պահել է իր այդ աներեր վարքագիծն ու յարգալիր փոխյարաբերութիւնը: Մեր ազգային դրպրոցների վերաբերմամբ ի գործ դրուած ժամանակաւոր շեղումները թիւրիմացութեան հետևանք էին, և

ո՞վ գիտէ, գուցէ ուրիշների կողմից էին թելադրուած: Բարեբախտաբար, այդ թիւրիմացութիւնը շուտով և հիմնովին վերացուեց:

***

Ընթերցողի ներողամտութիւնն եմ խնդրում, եթէ ես ստիպուած եղայ մի փոքր շեղում կատարել յուշերիս նկարագրութիւնից և նախապատուութիւն տալ Պարսկաստանից ստացած ուժեղ տպաւորութիւններիս:

Մեր՝ Թեհրան ժամանման առաջին գիշերը չարմահալցի Աբրահամը, իր համեստօրէն, բայց ամենաանհրաժեշտ յարմարութիւններով կահաւորուած տնում, մեզ հիւրասիրեց ընթրիքով և առաւօտեան նախաճաշով: Չեմ մոռացել մանաւանդ նրա՝ մեզ համար հայթայթած գիշերուայ ընթրիքը, որ մեզ համար շատ հաճելի նորութիւն էր: Նա մեզ հիւրասիրեց պարսկական Լուլա-քեաբաբ կոչուած համեղ խորովածով և իր տանը պատրաստած ընտիր գինիով:

Միւս օրը՝ կէսօրից առաջ, մենք ցանկութիւն յայտնեցինք եկեղեցի գնալ: Մասնաւորապէս հայրս շատ էր աճապարում եկեղեցի գնալու և նրան ծառայող քահանայի հետ ծանօթանալու համար, բայց մեր հիւրընկալը յամառօրէն մերժեց մեզ առանց ճաշելու բաց թողնել:

– Տէ՛ր հայր, երէկ երեկոյեան ձեզ յայտնեցի, որ մէկ օր իմ հիւրն էք լինելու: Օրը դեռ չի լրացել: Ճաշից յետոյ ես ինքս ձեզ կը տանեմ տէր Խորէն քահանայի մօտ: Նա մեր երկրացին է, այսինքն ոչ շատ հեռու հարևաններ ենք: Նա փերիացի է: Մի շատ ազնիւ և լաւ մարդ է: Լաւ ապրող, ուրախ մարդ է: Կարծես տէրտէրի ֆարաջան նրան նեղ է գալիս: Կուզենամ ասել, որ նա շատ իզուր քահանայ է դարձել: Ասենք, նա իսկի էլ դրա կարիքը չունի: Փերիայի շրջանի հայ գիւղացիները նրան ստիպմամբ քահանայ են դարձրել: Ախր այդ գործի ի՞նչ կարիքն ունի այդ մարդը: Իր գիւղում սեփական մեծ հողաբաժին և կալւած ունի: Հարուստ մարդ է: Դժբախտաբար, երեխայ էլ չունի: Ինքն է ու իր կինը: Նորից կրկնում եմ, տէր Խորէնը շատ ազնիւ և աչքը կուշտ քահանայ է: Ուրիշների նման ծակաչք և ագահ չէ:

ԿԵԱՆՔԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հօրս հետ Դարվազա-Ղազվին թաղամասի եկեղեցին գնալով՝ ծանօթացանք տէր Խորէն քահանայ Կիրակոսեանի հետ: Նրա մասին իմ կարծիքը համառօտելու համար պիտի յայտնեմ, որ կեանքումս հանդիպած ամենաազնիւ և ամենավեհանձն անձնաւորութիւններից մէկն էր: Նա մեզ՝ հալածական և գաղթական հօրն ու որդուն, ընդունեց, պահեց և պաշտպանեց այնպէս, ինչպէս պիտի ընդունէր և վերաբերուէր իր հարազատ և սիրելի եղբօր և եղբօրորդու հետ:

Եկեղեցական վարչութեան կողմից մեր ժամանակաւոր բնակութեան համար ժամկոչի երկու սենեակներից մէկն էր յատկացուած, բայց տէր Խորէնը կտրականապէս մերժեց մեզ իր սենեակից դուրս թողնել: Ամբողջ մէկ ամիս ես ու հայրս իր սեղանի անբաժան ընկերներն էինք, և եթէ այնպէս դասաւորուէր, որ դիպուածաբար ճաշին կամ ընթրիքին մենք մի ուրիշի հիւրն էինք լինում, որը ինչքան յիշում եմ, երեք անգամից չանցաւ, շատ դժգոհ էր մնում: Մի խօսքով, տէր Խորէնը շատ բարեացակամ և բարեսիրտ մարդ էր:

Բայց ես ենթարկուել էի բարոյական մի ծանր ճնշման: Այդ ազնիւ հոգևորականի այդքան պարզ, անկեղծ և սիրալիր վերաբերմունքը տարօրինակօրէն անհանգստացնում էր ինձ: Մտածում և աշխատում էի, ինչքան հնարաւոր է շուտ ազատուել նրա առատաձեռն հիւրընկալութիւնից: Մտահոգում և մտատանջւում էի նրա համար, որ իմ վիճակը ծպտուած ձրիակեր մարդու էր նմանում:

Թեհրանի պայմաններին մի ամսւայ ընթացքում մի քիչ ծանօթացել էի: Ընդհանրապէս վերցրած անգործութիւն կար: Դժբախտութիւնը կայանում էր նրանում, որ երկրի լեզուին՝ պարսկերէնին բոլորովին անծանօթ էի: Անգլերէն էլ չգիտէի: Ամենաանտանելին այն էր, որ ես օտարական էի և տիրող պայմաններին անծանօթ: Իմ և հօրս ունեցածը, իրար վրայ հաշւած, եօթը տաճկական ոսկի դրամ էր: Դա մի դրամագլուխ կազմել չէր կարող: Առևտրից էլ գաղափար չունէի: Ծառայութեան մտնելու համար լեզու չգիտէի: Հայոց՝ այդ ժամանակների միակ 6 դասեան դպրոցումն էլ ինձ նման անծանօթ գաղթականի համար ուսուցչական պաշտօն էլ գոյութիւն ունենալ չէր կարող: Արհեստ չգիտէի: Մշակութիւն էլ անել չէի կարող:

Այդպիսի անտանելի դրութեան էի ենթարկուել, երբ մեր առաջին հիւրընկալը՝ չարմահալցի Աբրահամը, ինձ հետևեալն առաջարկեց.

– Սիրա՛ք, մեզ և ձեզ նման գաղթականներիս համար Թեհրանում միայն մի գործ կայ: Դա էլ գինեգործութիւնն է: Խաղող առնելու իսկ և իսկ ժամանակն է: Եթէ մի քիչ դրամ ունենալու լինես և ցանկանաս, ինձ հետ կընկերանաս: Խաղող կառնենք, գինի կը պատրաստենք: Ես գինու համար անհրաժեշտ կարասներն ունեմ արդէն: Սա մի լաւ առիթ է քեզ համար գործ սկսելու: Չէ՞ որ քանիցս ինձ գանգատուել ես անգործութեանդ համար և անգործ մնալ չես սիրում:

– Պր. Աբրահա՛մ, ես միջնակարգ կրթութիւն ունեմ: Եղել եմ ուսուցիչ կամ պաշտօնեայ: Թիֆլիզից հայրենիք վերադարձայ ժողովրդիս ծառայելու և հայրենակիցներիս օժանդակութեամբ հասարակական գործիչ դառնալու և ինձ համար մի դիրք ստեղ-

ծելու համար...: Այդ բոլորից յետոյ գամ գինեգո՞րծ դառնամ:

– Ախպէ՛րս, ես քեզ չեմ ստիպում և պարտադրում: Այդ քո գիտնալիքն է: Քանի որ անգործ ես, մտածեցի քեզ օգնած լինել: Այդ քո ասած գործերից այստեղ խաբարի (լուր) չկայ: Ինչու՞, եթէ փարթի ունենայիր և մանաւանդ անգլերէն իմանայիր, մի գուցէ Թեհրանի կամ ուրիշ քաղաքների անգլիական բանկի համար քեզ մի փոքր ռոճիկով ծառայութիւն տային: Է՜հ, բալամ, եթէ դուք բախտ ունենայիք, ինչի՞ համար ձեզ էն շէն ու բօլ վաթանից պիտի քշէին ու հեռացնէին: Ծառն իր արմատներով պինդ ու անսասան է: Եթէ նրան իր արմատներից խլեն, կը չորանայ:

– Լաւ, պր. Աբրահա՛մ, իրաւունք տուր մի երկու օր մտածեմ այս առթիւ և յետոյ որոշումս կը յայտնեմ:

– Խօսք չունեմ, միայն թէ շուտ պատասխանի՛ր, որովհետև, եթէ դու չհամաձայնուես, ստիպւած կը լինեմ մի ուրիշին գտնելու, քանի որ գործը սկսելու համար պէտք եղած դրամը չունեմ:

ՍԱՐԷ ՂԱԲՐԱՂԱՅՈՒՄ

Վճռել էի եկեղեցու բակից հեռանալ և անգործ չմնալու համար մի գործ անել: Երկար, շատ երկար մտածելուց և ներքին ուժեղ պայքարից յետոյ որոշեցի Աբրահամի առաջարկն ընդունել: Պիտի յայտնեմ, որ այս որոշումից յետոյ իմ կեանքն ուժգնօրէն ալեկոծող պայքարն սկսւեց: Յառաջադիմելու, միջակ մարդու մակարդակից վեր բարձրանալու ցանկութիւնն ու ձգտումն իմ ներաշխարհում միշտ առկայծուն ու հուրհրացող վիճակումն է եղել: Կեանքի պայքարի անմար բոցերում ձգտել եմ վազվզել միշտ դէպի լաւը, դէպի յառաջադիմութիւն: Բայց այդ կեանքի տնական վազքի մէջ հանդիպել եմ շատ մեծ նեղութիւնների և անյաջողութիւնների:

Ինձ հետ գինեգործութեան և նրա վաճառման գործում ընկերացող Աբրահամը յայտնեց.

– Մօտ չորս տարի է, ինչ ապրում եմ Թեհրանում և այս քաղաքի համարեա բոլոր թաղամասերը ճանաչում եմ: Գործը պիտի սկսել մի տեղում, որտեղ գինի և օղի ծախող խանութ կամ տուն գոյութիւն չունենայ: Այդպիսի մի թաղամաս ճանաչում եմ: Եթէ մի երկու-երեք սենեականոց տուն այդ թաղամասում կարողանանք ճարել, մեր յաջողութիւնն անկասկած է: Այդ թաղամասը Սարէ Ղաբրաղա է կոչւում և ուտող-խմող մսագործների՝ ոչխար, կով, եզ մորթողների կենտրոնն է: Բայց ստիպւած եմ նախօրօք քեզ յայտնելու, որ այդ մսագործները կիսավայրենի, վտանգաւոր և արեան սովոր մարդիկ են: Շատ է պատահել, որ այդ թաղամասում մարդկանց դաշունահար անելով՝ սպանել են: Ես որպէսզի հէնց սկզբից քեզ սուտ ասած չլինեմ, պիտի յայտնեմ, որ ես ինքս վախենում եմ այդտեղ բնակւելուց: Իմ կողմից քեզ օգնելու համար մի դոչաղ և ուժեղ երիտասարդ կը տամ: Նրան կը պատւիրեմ, որ քո գործերին բոլորովին չխառնւի: Իրաւունքը, առնտուրը քո ձեռքում կը լինի: Այդ երիտասարդը, որի անունը Միքայէլ է, քեզ մօտ կը լինի որպէս քո պահապանն ու պաշտպանը: Կարծեմ ամէն ինչ շատ պարզ և ճշմարիտ բացատրեցի: Հիմի հերթը քոնն է: Քո առաջարկն ասա՛:

– Շատ շնորհակալ եմ անկեղծութեանդ և ճշմարտախօսութեանդ համար,– պատասխանեցի Աբրահամին,– ինքս էլ արիւն տեսած մարդ եմ և դրանից եթէ վախենում եմ, բայց չեմ էլ սարսափում: Չնայած երիտասարդ՝ եկել եմ այն եզրակացութեան, որ մարդուս ճակատագիրն է որոշում նրա կեանքի տեղողութիւնն ու վախճանը: Ես մինչև հիմի երեք առիթով սպանւած պիտի լինէի, բայց տեսնում ես, որ դեռ ապրում եմ և քեզ հետ խօսակցում: Տարօրինակօրէն յամառ բնաւորութիւն ունեմ: Մի անգամ որոշում տալուց յետոյ չեմ կարողանում յետ կանգնել և զղջալ: Այդ բնաւորութիւնը չափազանց թանկ է նստում ինձ վրայ: Բայց ի՞նչ արած, մարդս անթերի լինել չի կարող: Ինչքան կարողացել եմ ինձ ճանաչել, եկել եմ այն եզրակացութեան, որ յամառ կամք ունենալու թերութեան տէր եմ: Այս անգամ էլ՝ քո բացատրութիւններից յետոյ, գուցէ յիմարութիւն կը լինի այդպիսի վտանգաւոր մարդկանց հետ գործ ունենալ, բայց կաշխատեմ շատ զգոյշ լինել:

Յաջորդ օրը Աբրահամի և Միքայէլի հետ գնացինք Սարէ Ղաբրաղա կոչւած թաղամասը՝ մեր գործին յատկացուելիք տունը տեսնելու: Այդ տան տեղը տեսնելուց յետոյ վախի մի սարսուռ զգացի, բայց այդ զգացումը դրսևորել չուզեցի: Թաղամասի կենտրոնում՝ լայն տարածութեան վրայ, փռւած էր մի ընդարձակ գերեզմանատուն: Ինձ ասացին, որ պարսիկների յայտնի կրօնապետներից մէկն էլ այդ գերեզմանատնից ոչ հեռու մզկիթումն է թաղւած: Դրա համար էլ այդ տեղը կոչւում էր Սարէ Ղաբրաղա, այսինքն՝ աղայի (այստեղ կրօնապետի իմաստով) գերեզմանի վերևի մասը: Իրապէս մեր վարձելիք գործատեղը գերեզմանատան արևելահարաւային մասում և նրանից 300 քայլ հեռաւորութեան վրայ էր գտնւում:

***

Մի շաբաթւայ ընթացքում գործը կարգի դրւեց: Ասենք առանձնապէս մի դժւարութիւն էլ չունէր նման հասարակ մի գործի կազմակերպութիւնը: Աբրահամը շիշերի մէջ լցւած, խցանւած և բերանը բանդրոլած (պետական տուրքի թուղթը փակցրած) գինի և օղի էր բերում ինձ, և ես էլ ծախում էի:

Հէնց սկզբից աշխատեցի ինձ մի տեսակ մենաշնորհեալ դիրքում պահել: Գառան մորթուց պատ-

ռաստուած փափախ էի դնում գլխիս և յաճախորդների հետ խօսում էի թիւրքերէն: Ասենք, եթէ ուզենայի էլ, պարսկերէն խօսել չէի կարող:

Մսագործներից մեծ մասը թրքախօս էին: Հետզհետէ նրանց մի տեսակ յարգալից վերաբերմունք պարտադրեցի: Միքայէլը, որն իրեն Աբդոլլահ էր վերանվանել, բոլոր յաճախորդներին իմացրել էր, որ ես պատերազմի դաշտից եկած ֆեդայի եմ: Յաճախորդներն ինձ կանչում էին ֆեդայի էֆէնդի անունով:

Մի երկու ամիս անց արդէն իմ դիրքը ամրացրած և ապահոված էի, բայց Աբրահամի կողմից ինձ տրուած երիտասարդը փչացած և անպատկառ դուրս եկաւ: Նա ինձնից գաղտնի օղի էր խմում և առանց իմ թոյլտուութեան՝ գիշերները դուրս էր ընկնում: Նա ինձ մօտ եկած մսագործ յաճախորդների հետ անբարոյական տներն էր գնում: Մի քանի անգամ նրան բոլորովին հարբած վիճակում, կէս գիշերին և կէս գիշերից անց մեր տունը հասցրին: Այս պարագան ինձ համար թէ՛ վարկաբեկիչ և թէ՛ վտանգաւոր էր: Աբրահամին տեղեկացրի և պահանջեցի անմիջապէս հեռացնել նրան:

– Ներկայիս այդ լրբացած և այլասերուած հարբեցողի օգնութեան կարիքը չունեմ,– ասացի Աբրահամին,– ըստ երևոյթին, նա իր գտած լկտի ընկերներից ձեռք քաշել չի կարող: Վռնդի՛ր նրան, մինչև մէկ ուրիշ յարմարը կը ճարենք:

Աբրահամը չկարողացաւ առարկել և ես այդ լրբացած օգնականի չարիքից միանգամայն ազատուեցի:

Միառժամանակ մօտաւորապէս երկու ամիս ես բոլորովին մէն-մենակ մնացի Սարէ Դաբրաղայի այդ խիստ վտանգաւոր և արկածալից թաղամասի իմ գործատեղում: Այդ միայնակութիւնն այդպէս շարունակել մեծ յիմարութիւն կը լինէր: Աբրահամին առաջարկեցի ինձ ուղարկել մի ուրիշ օգնական: Բաւական ուշացումից յետոյ վերջապէս մի ուրիշի՝ Դանիէլ անունով, ինձ մօտ ուղարկեց: Այս մարդը, բարեբախտաբար, հարբեցող չէր, բայց շատ թմրած և անճարակ էր: Իր արթուն վիճակումն էլ կարծես քնած լինէր:

Այսպէս շարունակեց մինչև մէկ տարի: Գործի շահից դժգոհելու իրաւունք չունէի: Ինձ ամենից շատ անհանգստացնող հանգամանքը իմ անօգնական լինելն էր: Դանիէլի գործակցութեան վրայ վստահութիւն չունէի: Չնայած մարմնեղ և յաղթանդամ, բայց ծոյլ և մանաւանդ վախկոտ էր: Որևէ լուրջ վտանգի պարագային համոզուած էի, որ ինձ օգտակար լինել չէր կարող, ուր մնաց պաշտպանէր:

Մի ուրիշ ջղայնացնող պարագայ էլ կար: Դա ինձ մօտից վռնդուած Միքայէլի, որին իր ընկերները Աբդոլլահ անունով էին մկրտել, չարիքն էր: Մեր թաղամասում կամ այլուր ճարած իր այլասերուած բարեկամների հետ միասին ամիսը մէկ-երկու անգամ միշտ հարբած վիճակում մեզ մօտ էր գալիս և ափեղցփեղ յիմարութիւններ և երբեմն էլ սպառնալիքներ էր շռայլում: Դժբախտութիւնը կայանում էր նրանում, որ միշտ 4-5 հոգու ընկերակցութեամբ էր գալիս: Գայթակղութեան, աղմուկ-աղաղակի տեղիք չտալու համար մի կերպ նրան ընկերացողներին համոզում էի, որ այդ անամօթին հեռացնեն: Տեսնելով, որ այդ սկանդալն ու ձանձրոյթը վերջանալիք չունեն, այդ մասին տեղեկացրի թաղապետական ոստիկանատանը, որը, բարեբախտաբար, համաձայնեց նրան հետապնդել: Վերջին անգամ ոստիկանը, Աբդոլլահ կոչուած իմ նախկին օգնականին գայթակղութեան յանցանքի մէջ բռնելով, ոստիկանատուն տարաւ: Նրանից յանձնառութիւն ստացան իր լրբութիւնները չկրկնել: Սպառնացին կրկնելու պարագային Թեհրանից աքսորել: Նրանից յետոյ Աբդոլլահի չարիքն իր հետ միասին անհետացաւ:

***

Երկրորդ տարին էր, ինչ խմիչքի վաճառման գործը շարունակում էի: Գործը բաւականաչափ շահաւէտ էր, բայց գործի բնոյթից դժգոհ էի: Աբրահամից խնդրեցի մի ուրիշ, աւելի ձեռնհաս օգնական գտնել: Ի վիճակի չեղաւ: Ինձ յայտնեց, որ ես կարող եմ ցանկացածս գործաւորին վարձել: Ազնուութիւն ունեցաւ յայտնելու նաև, որ որովհետև ինքն անձամբ գործին մասնակցել և օգտակար լինել չի կարող, իր յօժար կամքով ինձ հետ գործի ընկեր լինելուց հրաժարւում է:

Այդ պարտաճանաչ և ազնիւ մարդուն սրտագին շնորհակալութիւններս յայտնելուց յետոյ առաջարկեցի մի որոշուած փոխարժէքով, շարունակել գինու և օղու հայթայթումը: Համաձայնուեց և անխարդախ շարունակեց առաջարկածս գործակցութիւնը:

Քիչ վերև յայտնեցի, որ գործի բնոյթից դժգոհ էի:

Դժգոհելու իրաւունք էլ ունէի: Ես ընկել էի Թեհրանի՝ այդ ժամանակների բարոյական տեսակէտից ամենավատ թաղամասերից մէկը: Մարդիկ, որոնց հետ գործ ունենալու դժբախտութիւն ունէի, հասարակութեան ցած դասին էին պատկանում: Գրեթէ ամիսը մի անգամ գիշերով և երբեմն էլ ցերեկով մէկն ու մէկին դաշունահար անելով՝ սպանում էին: Այդ սպանութիւններից մեծ մասը կատարւում էր անբարոյութեան հողի վրայ: Ապրածս տնից 100-200 քայլի վրայ լրբաբարոյ մի խումբ գործի վրայ էր: Բաւական էր, որ նրանց ճանկը մի գեղեցկատեսիլ որս ընկնէր: Արեան գնով նրանք վճռում էին բռնաբարութեան ենթարկել այդ դժբախտին, որն այսպէս թէ այնպէս, պատահաբար թէ խաբեբայական միջոցներով, նրանց գազանաբարոյ ճանկն էր ընկել: Վայ դիմադրող դժբախտին: Դաշունահար եղած, հնամեայ գերեզմանափոսերից մէկում արնաշաղախ ընկած կը լինէր:

Շատ հեշտ է հասկանալ, որ նման պայմաններում ինձ համար հանգիստ խղճով և ապահով վիճակով ապրելը չափազանց դժուար էր:

Վերոյիշեալ վայրագութիւնները հոգեկան վիճակիս վրայ շատ ծանր անդրադարձումներ էին թողնում:

ԲԱԽՏԱՒՈՐ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Ահա նման դժուարին և անմխիթար պայմաններումն էր, որ բախտաւորութիւն ունեցայ հանդիպելու բոլորովին անծանօթ և պատահական մէկին: Այդ մարդը մի երիտասարդ էր՝ Սամուէլ Մարութեան, Բուրվարի շրջանի հայաբնակ գիւղերից, և մի տարի առաջ էր եկել: Նա Թեհրանում գործ ճարելու համար բաւական շատ էր թափառել: Մի քանի ամիս թեհրանաբնակ մի հարուստի մօտ տան ծառայութիւն էր արել, բայց արտակարգօրէն քմահաճ և գոռոզ տանտիրուհու վերաբերմունքը տանել չկարողանալով՝ թողել և հեռացել էր: Ատաղձագործութիւն սովորելու նպատակով արհեստի էր մտել, բայց ամիսներից յետոյ, վարձք ստանալ և իր գլուխը պահել չկարողանալով, այդ գործից էլ հրաժարուել էր:

Երբ զբաղուած էր մի ուրիշ գործ գտնելու փնտրտուքով, դիպուածաբար նրան յայտնել էին, որ ես աշխատաւորի կարիք ունեմ: Ինձ մօտ գալով՝ շատ պարզ ու համեստ ոճով ասաց.

– Պարո՛ն, ինձ ասել են, որ դուք գործաւորի կարիք ունէք: Եթէ կամենաք, ես պատրաստ եմ ձեզ ծառայելու:

Մի քանի րոպէ ինձ ներկայացող և այդքան անսեթևեթ ոճով ինձնից գործ ուզող երիտասարդին ոտքից մինչև գլուխը քննութեան ենթարկելով, հարցրի.

– Ո՞րտեղացի ես և ո՞վ է քեզ ինձ մօտ ուղարկել:

– Սուլթանաբադի շրջանի Բուրվարի գաւառիցն եմ, ինձ ձեզ մօտ ուղարկողին գուցէ չճանաչէք, բայց ձեր գործի մասին այդ մարդուն տեղեկացնողը տէր Խորէն քահանան է եղել: Նա է յանձնարարել մի վստահելի աշխատաւորի ձեզ մօտ ուղարկել:

Հէնց առաջին հանդիպումից Սամուէլն ինձ վրայ լաւ տպաւորութիւն թողեց: Նրան ասի.

– Շա՛տ լաւ, մնացէ՛ք: Մինչև մի քանի օր գործդ կը տեսնենք և յետոյ կը խօսենք պայմանների մասին:

Առաջին իսկ ամսում եկայ այն եզրակացութեան, որ դիպուածաբար ինձ հանդիպած երիտասարդը շատ լաւ կողմեր ունի: Լուրջ, աշխատասէր և մանաւանդ խիստ վստահելի մարդ է: Հէնց առաջին օրերում նրան պատուիրել էի յաճախորդների հետ սիրալիր վերաբերուել, բայց նրանց կողմից ցուցաբերուած ամէն անկարգութեան նկատմամբ լինել միանգամայն խիստ ու կտրուկ:

Աբբաս անունով մի մսագործ յաճախորդ ունէի: Ինձ ասել էին, որ լաւ գործ ու շահ ունի, բայց այլասերուած, երես առած, ինքնահաւան և ամբարտաւան մէկն էր: Մի քանի անգամ նրա հետ փոքր միջադէպեր ունեցել էի, բայց, բարեբախտաբար, մի քիչ ակնածում, գուցէ և վախենում էր ինձնից: Մի անգամ, երբ նրա հետ վիճաբանութեան բռնուեցի, չափազանց ջղայնացած բղաւեցի.

– Աբբա՛ս, քեզ կառավարել և զսպել աշխատի՛ր: Եթէ դաշունահարութեամբ ես պարծենում, ուրիշների մօտ պարծեցի՛ր: Ես պատերազմ և արիւն տեսած մարդ եմ: Քո դաշոյնի փոխարէն ատրճանակից արձակած գնդակը կը լինի: Այնպէս որ շատ զգո՛յշ եղիր և ինձ համար ցուցամոլութիւն մի՛ արա:

Իմ այս խիստ դիմագրաւումն ու սպառնալիքը նրան զգաստացրեց, կակղեցրեց և իր տասնեակ գործակիցների նման շողոքորթելով՝ պատասխանեց.

– Իրաւունք ունես, էֆէնդի՛, ես միշտ քո ծառան եմ: Երբեք ցանկութիւն չունեմ քո վերաբերեալ համարձակութիւն գործել: Իրաւունք ունես, էֆէնդի՛, իրաւունք ունես: Եթէ համարձակութիւն եմ արել, ների՛ր: Ես քո ծառայութեանը միշտ պատրաստ եմ:

Ուժն և ուժի սպառնալիքը քաղաքական կեանքում մեծ և զօրաւոր պետութիւնների կողմից իրենց ազդեցութիւնը կատարում են: Մարդկանց անհատական կեանքում և նրանց փոխյարաբերութիւններումն էլ իրենց անժխտելի դեր են ունենում:

Սամուէլի աշխատանքի անցնելու սկզբնական շրջանին հէնց այս միևնոյն Աբբասը, որը, նեղն ընկնելով, սկսել էր ինձ շողոքորթել, մի օր կէսօրից յետոյ, երբ ես հօրս այցելելու համար բացակայել էի, հարբել և Սամուէլին հայհոյել էր: Վերադարձիս Սամուէլն ինձ կատարուած դէպքը բոլոր մանրամասնութիւններով պատմեց:

– Գիտե՞ս, սիրելի՛ս,– ասացի Սամուէլին,– Աբբասի նման մարդկանց, եթէ ուզենանք երես տալ, գլխներիս պիտի բազմեն և մեզ իրենց գերին դարձնեն: Լաւ է մի անգամից նրան շատ լաւ դաս տանք:

– Իսկ ի՞նչ խորհուրդ ես տալիս,– հարցրեց Սամուէլը:

– Ահա թէ ինչ. նա սովորաբար, ամէն օր՝ գործից յետոյ, անմիջապէս այստեղ է վազում մի երկու-երեք բաժակ զահրումար անելու համար: Թող նրան ինչքան ուզում է, լկի: Նրա այստեղ գալուն՝ ես անմիջապէս միւս սենեակը կանցնեմ, որ նա իմ տանը լինելու մասին չիմանայ: Երբ նա կսկսի խմել, առանց նրա ուշադրութիւնը գրաւելու, կը գնաս և փոքրոցի դուռը կողպէքով կը փակես: Նա հաւանաբար նորից կսկսի իր ափեղցփեղ հայհոյանքը: Առանց այլ և այլի և առանց հնարաւորութիւն տալու, որ նա կարողանայ իրեն պաշտպանել, մի քանի ուժեղ ապտակ նրա երեսին կիջեցնես և հրելով գետին կը գլորես և նրա դաշոյնը կը խլես: Ապա կարգին, զորս դու պատուիրեցեր, նրան կը ծեծես և մի քանի քացի էլ ուսերին կը տաս: Միայն աշխատի՛ր ոչ մի տեղից նրան չարիւնոտես: Յետոյ կսպառնաս և կասես.

–Եթէ չես ցանկանայ շանսատակ լինել, վե՛ր կաց և այս տնից անհետացի՛ր:

Համոզուած եմ, որ նրա գոռոզութիւնը նրան թոյլ չի տալու այդ մասին ուրիշին յայտնելու, քանի որ

դա նրա համար մեծ խայտառակութիւն և անարգարկութիւն կը լինի:

Ես ուշադրութեամբ կատարած դէպքին կը հետեւեմ, և եթէ կարիք լինի, կը միջամտեմ: Անհոգ կաց, և մանաւանդ մի՛ վախեցիր: Երբ փառաւոր ծեծ կերցընելուց յետոյ նրան փողոց կը նետես, իրեն կասես.

– Զգո՛յշ կաց, որ մի ուրիշ անգամ չհայհոյես, այլապէս այս անգամ քեզ միւս աշխարհը կուղարկեմ:

Յաջորդ օրը գոռոզ և ինքնավստահ Աբբասը Սարէ Ղաբրաղայի ստահակների այդ գլխաւորը, իր չերազած փառաւոր դասն առած, իր խմորանման կակղած թիկունքովն ու մէջքովը և հազիւհազ քաշէքաշ քայլելով, խայտառակելու վախից սրմքած, սուս ու փուս մեր տնից դուրս կորաւ:

Սամուէլն իրեն յանձնարարուած պարտականութիւնն անթերի և անվախ կատարել էր: Նրան շնորհաւորեցի իր ճարպիկութեան և քաջութեան համար և ասացի.

– Սամուէ՛լ, քեզնից շնորհակալ եմ: Այդ սրիկային տուածդ դասը գովեստի է արժանի: Կատարելապէս վստահ եմ, որ սրանից յետոյ նա այլևս չի համարձակուի հայհոյելու: Նա իր շահած «ղոչաղութեան և հերոսութեան» համբաւը չկորցնելու մտավախութեամբ չի ցանկանայ իր ընկերներին տեղեկացնել իր անուշ արած ծեծի մասին և սրանից յետոյ ձեռք կը վերցնի իր սրիկայութիւնից:

Ենթադրութիւնս բոլորովին ճիշտ դուրս եկաւ: Աբբասն ամիսներով անհետացել էր: Ամիսների այդ բացակայութիւնից յետոյ, երբ նորից մեզ մօտ եկաւ, աղուհացով երդուեց, որ մեր անխարդախ և նուիրած բարեկամը կը լինի: Նա իրապէս իր վերաբերմունքը միանգամայն փոխեց, և ինչպէս երդուել էր, աշխատում էր ամէն առթիւ իրեն բարեկամ ցոյց տալ:

Սամուէլի գործակցութիւնից շատ գոհ էի: Նրա՝ ինձ մօտ գալուց երեք ամիս յետոյ վճռեցի մէկուկէս տարուայ ընթացքում կեանքիս վտանգման գնով շահածս գումարով, որը 800 թումանից աւելի չէր, Սարէ Ղաբրաղայի այդ վտանգաւոր շրջանից մի քիչ հեռու մի փոքրիկ տուն առնել: Որոշումս կատարեցի:

Առածս տունը Սարէ Ղաբրաղայի արկածալից կենտրոնից 500 քայլ հեռու էր և համեմատաբար ապահով փողոցում էր գտնւում: Ունեցածս 800 թումանը տունն ինձ ծախող մարդուն վճարելուց յետոյ երկու տարուայ ընթացքում վճարելու պայմանով 600 թուման էլ պարտական մնացի: Չմոռանամ յիշեցնելու, որ 1920 թւի մէկ թումաննոց դրամը ներկայի 20 թումանի հաւասարող արժէքն ունէր:

ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ ԵՒ ՎԵՐԱԶԱՐԹՆՈՂ ՁԳՏՈՒՄՆԵՐ

Հօրս ու իմ՝ Թեհրան ժամանելուց երկու տարի անցել էր, իսկ Սամուէլի՝ ինձ հետ գործակցելու եօթերորդ ամիսն էր լրանում: Այդ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կարողացայ ամէն կերպ ինձ հետ գործակցողին փորձել: Տեսայ և և համոզուեցի, որ այդ երիտասարդը գործի մարդ և մանաւանդ վստահելի է: Հետզհետէ ջանացի իմ երկու տարի առաջ ստիպողաբար ձեռնարկած գործից ինձ մեկուսացնել և գինեգործական ասպարէզը, այդ գործին վերաբերող հայթայթումները, գնումներն ու վաճառքը աստիճանաբար Սամուէլին յանձնել:

Այդ ժամանակներում եղած պայմաններում և մեր ունեցած միջավայրում, օդեվաճառութիւնը համարում էի ինձ չսազող և անհամապատասխան մի գործ: Մտածում և աշխատում էի մի կերպ ազատուել այդ զբաղմունքից:

1920 թւի օգոստոսի վերջին օրերն էին: Թեհրանի տարրական և միջնակարգ դպրոցների վերաբացման սեզոնն էր: Վանի վերջին նահանջի հետևանքով իմ ամբողջ յոյսերի ու ձգտումների խորտակման ընթացքում հայրենիքումս թողել էի ամէն ինչ և, այդ ամէն ինչի հետ միասին, Երամեան դրպրոցի իմ աւարտական և ուսուցչական փաստաթղթերը: Թեհրանում՝ ինձ համար այդ նոր միջավայրում, ես մի անյայտ, խեղճ ու ողորմելի գաղթական էի: Այդ անյայտ փոքրութիւնն ինձ նեղում և չափազանց անհանգստացնում էր: Մտածում էի յաճախ և ինքնամփոփ, որ դեռ շատ երիտասարդ եմ: Պէտք է, անպատճառ անհրաժէշտ է մի կերպ յառաջադիմութեան ասպարէզը նետուել:

1920 թւին Թեհրանում մատի վրայ համարուող մի քանի միջնակարգ դպրոցներ կային: Ամենից աւելի յայտնի էր պարսկական Դար-օլ-ֆօնուն-գիտութեանց դպրոցը: Շատ կը ցանկանայի այս դպրոցը մտնելով և ուսումս շարունակելով՝ այդ դպրոցի աւարտական վկայականը ձեռք բերել: Դժբախտաբար, պարսկերէն չգիտէի: Երկու տարուայ մշտատև ջղային վիճակն ու սկսածս յարատագնապ գործն ինձ բոլորովին հնարաւորութիւն չէին տալ պարսկերէն լեզուն սովորելու:

Դար-օլ-ֆօնունից յետոյ գալիս էին Ամերիկեան քօլէջն ու ֆրանսիական Ալիանս-ֆրանսէզ դպրոցը: Ամերիկեան այդ քօլէջին հետևելու հնարաւորութիւն էլ չունէի, քանի որ անգլերէն չգիտէի: Մնում էր միայն ֆրանսիական «Ալիանս-ֆրանսէզ»-ը:

Որոշեցի վերջին դպրոցի դասընթացքներին հետևել: Արձանագրուեցի և արդէն գիտցածներս նորից սովորել սկսեցի: Դասաւանդութիւնը մեծ մասամբ ֆրանսերէն լեզուով էր կատարւում. երկու տարում դպրոցի ամենավերջին 4 դասարաններն էլ աւարտեցի: Այդ ժամանակներում ֆրանսիական այդ դպրոցում որևէ ընդունակ աշակերտ իրաւունք ունէր տարուայ ընթացքում 2-3 քննութիւնների մասնակցելու և աւելի բարձր դասարան փոխադրուելու:

1922 թւի մայիսի վերջերին պաշտօնական աւարտական քննութեան ենթարկուեցի: Կրթական նախարարութեան և Թեհրանի ֆրանսիական դես-

պանատան ներկայացուցիչներն էլ մասնակցում էին քննիչ յանձնաժողովին: 100-ի չափ պարսիկներ և 70 հրեաներ քննութեան էին ենթարկուել: Այդ բոլորի մէջ քննութեան մասնակցող միակ հայն ես էի: Մեզ տրուած նիւթի շուրջ քննիչ յանձնաժողովի ներկայութեամբ 45 րոպէ տևողութեամբ ֆրանսերէնով գրած շարադրութեանս համար 19 և կէս թանշան ստանալով՝ քննութեան մասնակցողների մէջ առաջինը եղայ:

Ֆրանսիական դեսպանատունը մի գրութեամբ և մի նուէր գրքով ինձ գնահատեց. նոյն թի ամառային արձակուրդից յետոյ Ալիանս-ֆրանսէզ դպրոցի տեսուչ Սիլվէսթրի կողմից նոյն դպրոցում դասաւանդող ուսուցիչ նշանակուեցի: Յառաջադիմութեան ճանապարհին ինձ նման անյայտ և փախստական մի գաղթականի համար այդ պարագան շատ մեծ և ոգևորիչ յաղթանակ էր:

ՈՒՍՈՒՑԻՉ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Այսպէս, ուրեմն ինձ վիճակուեց նորից ուսուցիչ դառնալ: Վանի Երամեան դպրոցի ուսուցիչը մօտ վեց ու կէս տարի յետոյ Թեհրանի ֆրանսիական Ալիանս-ֆրանսէզ դպրոցի ուսուցիչ էր կարգում: Մարդկային կեանքի դասաւորութիւնները շատ տարօրինակ են: Բայց իրենց տնից ու տեղից և հայրենի ազիզ հողից զրկուած և հեռու հորիզոններ շպրտուած տաճկահայերի և մանաւանդ վանեցի ու վասպուրականցի հայերի կեանքի պայմանների փոփոխութիւնը շատ աւելի զարմանալի է:

Ինչ խօսք, որ հայ ժողովուրդը, չնայած իր բազմադարեան գոյութեանը, դեռ շարունակում է կենսունակ, ստեղծագործ, շինարար և ուժական մնալ: Տաճկահայերի և վասպուրականցիների մէջ խամրուող, անհետանալու սեմին հասած կեանքի՝ վերածնութեան ենթարկուելու ընդունակութիւնը և ուժականութիւնը զարմանալիօրէն բացառիկ է:

Մեր ազգային գոյութիւնն արիւնալից խողխողումների ու ջարդերի մէջ խեղդել ցանկացող ողորմելի տաճիկներն ու նրանցից շատ էլ չզանազանուող ամէն տեսակի մեր թշնամիները հաւատացած էին, որ մեր հայ ժողովրդի թրքահայ հատուածի դամբանականը կարդացել և նրան իր բոլոր ընդունակութիւններով և ստեղծագործող իմաստութեամբ թաղել են: Բայց նրանք չարաչար սխալուել էին:

Նրանք իրենց մարդասպան քաղաքականութեամբ պատճառ դարձան ամբողջ աշխարհի երկրամասերում ցրելու, սփռելու և տարածելու հայ մարդու հանճարի, ստեղծագործութեան կրակը, որն սկսեց աւելի թէժ և աւելի լուսավառ բոցեր արձակել: Փա՞ստ էք ուզում, համեցէք: Արիւնաթաթախ, հոգեվարքի ենթարկուած այդ տաճկահայ ժողովուրդը ներկայիս իր աշխատունակութեան վերաշինութեան և հանճարի անմար կրակը բոցավառում է Միջին Արևելքի, Եւրոպայի, Հարաւային և Հիւսիսային Ամերիկաների և վերջապէս Արևելքի երկրներում:

Մի՞թէ այս բոլորը հայ ժողովրդի շառաչուն ապտակը չէ՞...

***

Այո՛, ուսուցիչ էի դարձել և դպրոցի 3-րդ բաժանմունքում դասաւանդում էի: Չնայած այն հանգամանքին, որ երկու տարուց մի քիչ էլ աւելի Թեհրանումն էի ապրում, բայց դեռ հնարաւորութիւն չէի ունեցել պարսկերէն սովորելու: Ժամանակ և մանաւանդ հանգիստ վիճակ չէի ունեցել այդ լեզուն սովորելու: Իմ դասարանի աշակերտների լեզուի դասաւանդութիւնները ֆրանսերէնով էին, բայց յաճախ անհրաժեշտ էր նրանց իրենց մայրենի լեզուով բացատրել և հասկացնել: Երբեմն մատնուում էի անել վիճակի: Շատ յաճախ իրենք աշակերտներն ինձ օգնութեան էին հասնում և ճարում համապատասխան թարգմանելի բառը: «Այսպէս շարունակել չի կարելի»,– մտածեցի և վճռեցի իմ հերթին, ինչքան հնարաւոր է շուտ, պարսկերէն լեզուն սովորել: Իմ դասարանում երկու ընդունակ աշակերտ ունէի, որոնցից մէկը պարսիկ էր, միւսը՝ հրեայ: Նրանց առաջարկեցի դպրոցի պարապմունքներից յետոյ հերթով և օրընդմէջ ինձ պարսկերէն սովորեցնել: Սիրալիրութեամբ ընդունեցին: Մէկ օր առաջ հետևեալ օրուան դասերը համառօտելով՝ դժուար բառերն ու բացատրութիւնները գրում և իմ հերթին դասաւանդութեան համար նախապատրաստում էի: Ենթադրութիւնիցս աւելի արդիւնք էի ձեռք բերում:

Երեք ամսից յետոյ իմ բառապաշարը բաւականաչափ հարստացել էր: Տանը ժամերով պարապում էի: Շատ ուրախ էի, որ զգալի յառաջադիմութիւն եմ կատարում:

Վանում թիւրքերէն լեզուն սովորելիս մեր ուսուցիչը բացատրել էր մեզ, որ թէ՛ թիւրք և թէ՛ պարսիկ լեզուների բառապաշարի մեծ տոկոսն արաբերէնից է վերցուած: Այս պարագան ինձ համար պարզում և հաստատում էր:

Հետևաբար պարսկերէն սովորելու և մանաւանդ անթերի արտասանելու համար անհրաժեշտ էր քերականութեան ծանօթանալ, իսկ քերականութեան հիմքը արաբական արմատների ձևակերպման մէջ էր կայանում: Մեր դպրոցի վերակացու-հսկիչը Շէյխ Աբբաս անունով և արաբական ու պարսիկ ծագում ունեցող մի մարդ էր: Նա մասնաւոր վճարումով համաձայնուեց շաբաթական երեք դաս քերականութիւն և արաբական լեզուի ամենաանհրաժեշտ և ամենատարրական մասերն ինձ սովորեցնել:

Տևականօրէն և յամառութեամբ պարապում էի: Վեց ամսից յետոյ զգալի յառաջադիմութիւն ունէի: Շէյխ Աբբասը, որը մաչիդի մի խուցում էր ապրում և սովորելու համար ստիպուած էի նրա կիսալոյս

խուցն այցելել, գովում էր ջանասիրութիւնս և միշտ բարիք-ալլահ (կեցցես) էր ասում: Այդ ջատագովումն ես շողոքորթութեան էի վերագրում:

Դպրոցական տարեվերջին ի վիճակի էի բաւական հեշտութեամբ ամենօրեայ գործածութեան համար անհրաժեշտ հանդիսացող բառերը գրել և գրեթէ անթերի արտասանել: Պարսկերէն լեզուի հետ ծանօթ եղողները գիտեն, որ այդ լեզուի բառերը գրելիս արտասանելիս նման չեն: Տառերը գրուած բառերի հարազատ և ուղղակի հնչիւնն արտայայտելու կատարելութիւնը չունեն:

Նման դժուարութիւնները հարթելու համար անհրաժեշտ է նախ՝ աչքի վարժութիւնը և ապա արաբական «Ուազն» կոչւող ձևերի-ֆորմուլների ծանօթութիւնը: Արաբական լեզուի քերականութեան այդ ձևերի ծանօթութիւնը շատ է օգնում բառերի ուղիղ գրութեանն ու նրանց արտասանութեանը:

Պարսկերէն լեզուի սկզբնական ծանօթութիւնն ինձ օգնեց աւելի մտերմանալու աշակերտութեան հետ և հետևաբար ուժեղացնելու նրանց վրայ իմ կողմից գործադրուելիք բարոյական ազդեցութիւնը: Անժխտելի իրողութիւն է այն պարագան, որ մարդկանց հետ մտերմութեան առաջին միջոցն ու պայմանը նրանց հետ իրենց մայրենի լեզուով խօսակցելն է:

ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՔԱՀԱՆԱՅ

1922 թւի յունիսի սկզբին՝ Ալիանս-ֆրանսէզ դպրոցի տարեվերջի քննութիւններից յետոյ, ինձ յաջողուեց մի լիաթոք և հոգեպարար շունչ քաշել: Ամառային արձակուրդն սկսուել էր: Մի տարի Թեհրանի ֆրանսիական դպրոցում պաշտօնավարել էի: Այդ պաշտօնավարութիւնն ինձ համար իմ պայմաններում մի տեսակ պարծանք էր թւում: Այո՛, ես՝ մի գաղթական հայ երիտասարդ, ինձ բոլորովին օտար և անծանօթ մի երկրի մայրաքաղաքն էի ապաստանել և հազիւ երկու տարի բոլորած՝ այդ մայրաքաղաքի առաջնակարգ դպրոցներից մէկում յաջողել էի ուսուցչական պաշտօնի անցնել: Ինքնասիրութեան և հոգեկան բաւականութեան մի զգացում սիրտս ուռեցնում էր, պիտի խոստովանեմ, սակայն, իմ այդ ինքնասիրութիւնը շոյող պաշտօնը մի ամբողջ տարուայ ընթացքում ինձ ճիգ ու ջանքերի մշտական լարման վիճակում պահեց: Թէև դպրոցից ստացած ռոճիկս այնքան էլ բաւարար չէր, բայց այդ հանգամանքը շատ էլ ինձ չէր հետաքրքրում: Ինձ ոգևորող և ոգեշնչող պարագան գործիս բարոյական նշանակութիւնն էր:

Թեհրան հասնելուց յետոյ ինձնով շատ քչերն էին հետաքրքրուել: Ասենք, Թեհրանի հայերը ո՛չ առիթ և ո՛չ էլ կարիքն ունէին ինձնով հետաքրքրուելու: Միևնոյն պարագան էլ ինձ համար էր: Ես էլ ո՛չ առիթ և ո՛չ էլ կարիքն ունէի նրանցով հետաքրքրուելու: Ճշմարտութիւնը խոստովանելու համար պիտի յայտնեմ, որ նոյնիսկ խուսափում էի ծանօթութիւններ ստեղծելուց: Ուրիշ խօսքով, նուազագոյն ցանկութիւն չունէի, որ թեհրանցի հայերն ինձ որպէս մի գինեգործ ճանաչեն: Գուցէ տրամաբանում էի, որ հօրս դիրքի ու պաշտօնի համար մի գինեգործական զբաղմունքն աննպաստ և անյարիր է:

Տարօրինակ զուգադիպութեամբ իմ ուսուցչական պաշտօնին անցնելուց երկու ամիս յետոյ հայրս Թեհրանի թեմի, այսինքն՝ այն ժամանակւայ մայր եկեղեցու՝ Դարվազա-Ղազվինի եկեղեցու քահանայ նշանակուեց:

Ազնւահոգի տէր Խորէն Կիրակոսեան քահանան ամբողջ երկու տարի հօրս քահանայագործութեան համար ոգի ի բռին աշխատել էր: Նրա միջոցով հօրս յաջողուել էր Թեհրանի ընտրանի հասարակութեան և հասարակական մարմինների հետ լայն ծանօթութիւններ ձեռք բերել: Վերջին անգամ տէր Խորէնը հօրս ասել էր.

– Տէ՛ր Յարութիւն, չափազանց ուրախ եմ, որ իմ պաշտօնավայրը յանձնում են քեզ նման մի պատրաստուած և ազնիւ քահանայի: Դու միանգամայն արժանի ես ինձ փոխարինելու: Իմ պաշտօնավարութեան չորս տարին արդէն լրացել է: Փերիայի մեր գաւառում բազմաթիւ ազգականներ և ընտանիք ունեմ: Բացի այդ, մեր սեփական կալւածները, այգիները և տնտեսութիւնն իմ ներկայութեան կարիքն ունեն:

– Անչափ և անսահման երախտապարտ եմ քեզ, տէ՛ր Խորէն հայր,– պատասխանել էր հայրս,- առանց քո անխնայ աջակցութեան և եղբայրական զիջումների՝ ինձ անհնար էր այսպիսի լայն ծանօթութեան և համակրութեան արժանանալու: Իմ սրտագին շնորհակալութիւնն արտայայտելու համար բառեր չեմ գտներ: Մինչև մահս քու բարի և ազնիւ վերաբերմունքը մոռնալ չպիտի կարողանամ: Ափսոս, որ ոչ մի կերպ փոխարինելու ի վիճակի չեմ:

Թեհրանն այդ ժամանակ միայն երկու եկեղեցի ունէր: Կենտրոնական եկեղեցին Դարվազա-Ղազվինի եկեղեցին էր: Թեհրանի Եկեղեցական վարչութեան հաւանութեամբ և Սպահանի թեմի վաւերացմամբ՝ հայրս այդ եկեղեցու քահանայութեան պաշտօնին նշանակուեց: Տարիների ընթացքին նա իր այդ պաշտօնին մնաց: Իր մահից երեք տարի առաջ Սպահանի թեմի առաջարկութեամբ Էջմիածնի Մայր Աթոռի կողմից մասնաւոր կոնդակով, աւագ քահանայութեան պատւին էլ արժանացաւ: Ամէն տօնական օրերին ջերմեռանդ պատարագելուց յետոյ հայրս յաւուր պատշաճի քարոզում էր նաև: Նա եկեղեցասէր համայնքի կողմից մեծ յարգանք էր վայելում:

ԱԼԻՍՆ ՈՒ ԵՍ

1917-ին՝ Վան վերադառնալուց մի քանի ամիս յետոյ, Ալիսից նամակ էի ստացել և աճապարանօք

պատասխանել էի նրան: Դժբախտաբար, նամակիս պատասխանը չէի ստացել: Անուշի դժբախտ կորուստը իմ հոգեկան ապրումներին չափազանց ուժեղ և անդարմանելի հարուած էր հասցրել: Այդ անգութ հարուածի վէրքն անբուժելի էր մնացել: Հակառակ իմ ֆիզիկական անվերջ տառապանքների պատճառած յոգնածութեան՝ նրա անմեղ և օգնութիւն աղաչող կերպարանքը ուղեղիս բջիջներում խրուած մնացել էր: Զուր էի աշխատում մոռացութեան մատնել այդ հրեշտականման անմեղութիւնը պատկերացնող դէմքը: Իզո՜ւր և իզո՜ւր...

Ինձ սարսափահար էր անում այն միտքը, որ սրտումս բացուած անբուժելի վէրքի կողքին կարող է մի ուրիշ կրծող և մաշող վէրք էլ բացուել: Դա Ալիսի պատճառած շատ հաւանական վէրքն էր: Այդ երկրորդ հարուածից խուսափելու համար ի՞նչ պիտի անէի:

Չգիտեմ ինչու՞, ենթադրում էի, որ այդ երկրորդ հարուածի ուժգնութիւնն առաջինից աւելի թեթև պիտի լինի: Ինձ մխիթարում էի այն բացատրութեամբ, որ Ալիսի հետ կատարուած բաժանման անմիջական պատասխանատուն ես չեմ:

Հայրենաբաղձութեան կարօտն ու հայրենիքիս վերաշինման մասնակցութեան ցանկութիւնը, ինչպէս բազմաթիւ հայրենակիցների, այնպէս էլ ինձ համար անմերժելի և անխուսափելի մի պարտականութիւն է: Եթէ ես այդ նուիրական պարտականութեան կատարման համար ինձ կրակի մէջ եմ նետել, գիտակցութեամբ և նախամտածուած չեմ արել և մեղք չեմ գործել:

Ալիսի անխառն սէրը մերժելու և նրա՝ այդ նուիրական զգացումը ոտնակոխ անելու նպատակով չէ, որ վերադարձել էի հայրենիքս: Հանգստաւէտութիւն, դիրք և դրա հետ միասին Ալիսին զոհել էի հայրենիքիս վերաշինման գործին չնչին մասնակցութիւն բերելու ազնիւ ձգտումին:

Դպրոցական արձակուրդից մի շաբաթ յետոյ, երբ մի տարուայ լարուած աշխատանքի յոգնածութիւնը մի քիչ մեղմացել էր, անդրադարձայ մի քաղցր պարտականութեան կատարման անհրաժեշտութեան վրայ: Տարիներից յետոյ նորից մի նամակ գրել Ալիսին: Թէև այդ նամակը իր հասցէատիրոջն հասնելու հաւանականութիւնը շատ քիչ էր թւում, բայց ինքս ինձ ներշնչում և ոգևորում էի այդ շատ քիչ հաւանականութեան քաղցրութեամբ: Ահա այդ նամակի բովանդակութիւնը.

«Իմ անգի՛ն Ալիս,

Ամբողջ չորս տարիներ են անցնում այն օրերից, երբ քո աննման սրտի թելադրանքներով գրուած նամակդ ստանալուց յետոյ, իբր պատասխան, ես էլ մի նամակ քեզ գրեցի: Այդ նամակը գրել էի չորս տարի առաջ իմ սքանչագեղ հայրենիք Վան Այգեստանից: Այս նամակը գրում եմ մեր հայրենիքի բարեացակամ հարևան երկրի մայրաքաղաք Թեհրանից: Այս երկու քաղաքներն իրարմէ բաւական շատ հեռու են: Այս երկու քաղաքներում մեր ապրած պայմաններն ու միջավայրն էլ բաւական շատ տարբեր են: Բայց չորս տարիներ առաջ Այգեստանից գրած նախկին և ներկայիս այստեղ գրուող երկու նամակներն էլ ըստ էութեան միևնոյն բովանդակութիւնն ունեն:

Ինչպէս թանկագին մետաղն ու քարը, իսկական և բիւրեղանման սէրն էլ չի կարող աղաւաղուել ու ժանգոտուել: Մեր երկուսիս շուրջ մի տարուայ ծանօթութիւնն ու շփումը մագնիսական և անդիմադրելի ձգողութեամբ մեր սրտերն իրար էր միացրել: Մենք իրար հետ կապուել էինք մի այնպիսի բացառիկ սիրով, որը բիւրեղանման և աղամանդափայլ էր, և որը մեր սրտերը եդեմական զմայլելի բոյրով էր լցրել:

Սակայն, ինչպէս միշտ, մարդ անհատը չի կարող իր ցանկութեան համաձայն իր բախտի ու ճակատագրի դասաւորութիւնը տնօրինել, մենք էլ ուրիշ շատերի նման չկարողացանք մեր բախտը մեր ցանկութեան համաձայն հիմնաւորել:

Համոզուած եմ, որ այս վերջին կէտին համաձայն չես և անմիջապէս պիտի առարկես: Գուցէ և հաւանաբար ինձ էլ պիտի մեղադրես մեր միասնական բախտաւորութիւնը խանգարած լինելուս համար:

Բայց նորից ստիպուած եմ կրկնելու՝ այդ բախտաւորութեան խանգարման մեղաւորը ես չեմ եղել: Մեր բաժանումը, այսինքն՝ Թիֆլիսից իմ մեկնումը մի տեսակ պարտադրական բնոյթ ունէր: Միանգամայն համոզուած էի, որ Թիֆլիսն ինձ համար օտար և անհարազատ է և այդ օտար միջավայրում երբեք չեմ յաջողելու յառաջադիմել, ծրագրածս թռիչքը կատարել:

Վան՝ հայրենիքս վերադառնալով՝ ենթադրում էի, որ պիտի կարողանամ թէ՛ ինձ և թէ՛ հարազատ երկրիս արժանաւորապէս և լաւագոյնս ծառայել: Երիտասարդ էի և ուժերիս ու եռանդիս նկատմամբ հաւատաւոր ու լաւատես: Հարստանալու ծրագիր ու ցանկութիւն չունէի: Ցանկանում էի հասարակական, ժողովրդական ասպարէզում գործել և ստիպուած եմ խոստովանելու, որ ձգտում էի սովորական մարդ անհատի մակարդակից աւելի բարձր դիրք գրաւել:

Գիտակից մարդ-շարժակը տարբեր ուղղութիւններով է գործում: Մէկն ուզում է հարստանալ և այդ հարստութեամբ հրճւել կամ կեանքի իրական համարած հաճոյքները վայելել, միւսը ցանկանում և ձգտում է գիտնական, գեղարուեստագէտ, բանաստեղծ, գրող, երգահան, գիւտարար և այլն դառնալ: Ես ձգտում էի, ժողովրդական զանգուածներում աշխատելով, նրանց օժանդակութեամբ յառաջադիմել՝ ազգային գործիչ, պարլամենտի անդամ, թերթի խմբագիր, կուսակցապետ, նախարար և այլն դառնալ:

Յառաջադիմելու, բարձրանալու ձգտումը դատապարտելի չէ, այլ գնահատելի և ողջունելի: Դէպի լաւն ու բարձր ձգտումը մարդ անհատի թանկարժէք առաւելութիւններից է:

Մարդկային ապրումների շրջագծում յաճախ թելադրողն ու հրամայողը մարդուս սիրտն է: Բայց այդ զգայական գործօնի դէմ ու դիմացը մի ուրիշ, աւելի ուժեղը գոյութիւն ունի, որ յաճախ կարողանում է յաղթահարել սրտին՝ զգայական այդ օրգանին, և դա մարդուս ուղեղն ու նրանից իր թելադրութիւնները ստացող տրամաբանութիւնն և դատողութիւնն է:

Այո՛, իմ շատ սիրելի՛ Ալիս, չգիտեմ ինչպէս յարմար կը լինի արտայայտուել: Բարեբախտաբար թէ դժբախտաբար, երբ որոշել էի Թիֆլիսից հեռանալ, վերջին օրերում սրտիս և ուղեղիս միջև փոթորկալից մի պայքար ծայր տուեց: Սիրտս չէր յօժարում, չէր ուզում քեզնից հեռանալ, բաժանուել, բայց միտքս թելադրում, նոյնիսկ հրամայում էր համաձայնուել այդ բաժանմանը, քանի որ, ինչպէս բացատրեցի, Թիֆլիսում՝ այդ օտար միջավայրում, իմ ծրագրած յառաջադիմութեան հնարաւորութիւնները կատարելապէս բացակայում էին:

Սրտիս և ուղեղիս միջև սկսուած փոթորկալից պայքարը չափազանց շատ թանկ արժեց ինձ: Բեկուած սրտի անխնայ հարուածներին ֆիզիկականս տոկալ չկարողացաւ: Հիւանդացայ և օրերով անկողին ընկայ:

Մարմնի օրգանական հիւանդութիւնները շատ յաճախ դեղօրայքով բուժելի են, բայց սրտի և հոգու հիւանդութիւնները ճար ու դեղ չունեն: Նրանց բուժումը, եթէ չասենք անկարելի է, ապա չափազանց դժուար և յաճախ էլ անբուժելի և կործանարար է: Իմ այդ հոգեկան ցաւի բուժումը բացառիկ մի հրաշք էր: Հիւանդութեանս անկողնում ընկած ժամանակ քանիցս մտածեցի այդ մասին քեզ տեղեկացնել, բայց անբացատրելի հպարտութիւնս թոյլ չտուաւ այդ անել: Եւ յետոյ ամենից դժուարը ու նոյնիսկ անիրագործելին՝ նպատակադրուած ճանապարհից յետ վերադառնալը, ինձ համար ինքնասիրութեանս ոտնատակումն և խորտակումը կը լինէր:

Ալի՛ս, աննման Ալիս, ահա իմ ապրումների ու զգացումների համառօտագրութիւնը: Այդ ապրումներն ու զգացումները լրիւ արտայայտել կարողանալու համար գուցէ անհրաժէշտ լինէր տասնեակ երեսներից բաղկացած նամակ գրել, բայց կարծում եմ, այս համառօտ տողերիս ծալքերից կարող ես հանել մի եզրակացութիւն, որի դատաւորը, ինձ արդարացնելու կամ մեղադրելու գործում, անձամբ ինքդ կը լինես:

Այս բոլորից յետոյ մի սրտագին ցանկութիւն ունեմ, և դա քո կողմից այս նամակի ստացումն է: Չափազանց երջանիկ պիտի զգայի ինձ, եթէ նամակս քո չքնաղ ձեռքերի մատներով բացուէր և անհունօրէն բախտաւոր պիտի զգայի ինձ, եթէ կարողանայի նամակիս պատասխանը կարդալ: Քեզ սրտի խորքից անկեղծօրէն սիրող՝ Սիրաք»:

Բաբախուն սրտով նամակը փակեցի և հասցէագրեցի Ալիսի նախկին հասցէով:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՎԱԾ ԵՒ ԻՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ

Իմ ուսուցչական պաշտօնավարութեան առաջին տարւայ ընթացքում՝ 1921 թի փետրուարի 21-ին, Պարսկաստանի մայրաքաղաք Թեհրանում քաղաքական շատ մեծ դէպք կատարուեց: Այդ օրը՝ առաւօտեան ժամը 7-ին, ըստ սովորականի, Թեհրանի Թոփխանէ կոչուած հրապարակը հասայ՝ դպրոց գնալու համար:

Մեր դպրոցը հրապարակին կից հեռախօսակայանի փողոցի սկզբումն էր գտնուում: Հրապարակը լեփ-լեցուն էր անսովոր բազմութեամբ: Մարդիկ, իրար սեղմուած, խօսակցում և կարծիքներ էին յայտնում: Մի քանի թնդանօթներ, կրակ բացելու պատրաստ վիճակում և զինուորներով շրջապատուած, կանգ էին առել հրապարակի մէջտեղում: Շատ մեծ դժուարութեամբ յաջողեցի բազմութեան շարքերը ճեղքելով՝ ճանապարհ բացել և դպրոց հասնել: Պարսիկ պաշտօնակիցներիցս իմացայ, որ անցեալ գիշեր՝ կէս գիշերից մի ժամ անց, պետական հարուած էր տեղի ունեցել, և Թեհրանը զինուորական գրաւման էր ենթարկուել:

Մէկ ժամ անց բարձրաձայն բղաւոցներով Թեհրանի թերթերի արտաժամ հրատարակուած թերթիկներ ծախուել սկսեցին: Այդ թերթիկներից անցեալ գիշերուան ընթացքին կատարուած պետական հարուածի բնոյթը համառօտակի պարզուեց:

Սարդար Ռըզա խանը, 3000 հոգուց բաղկացած պարսիկ զինուած զօրամասի գլուխն անցած, թնդանօթներով և պատերազմական լրիւ սարքով, Թեհրանից մօտ 144 կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող Ղազուին քաղաքից ճանապարհուել և կէս գիշերից մէկ ժամ անց Թեհրան էր ժամանել: Իր հրամանատարութեան տակ գտնուող զօրամասով Ռըզա խանը կայծակային արագութեամբ գրաւել էր նախ գլխաւոր զօրանոցը և ապա միւս երկրորդական զօրակայանները, զինապահեստները, ոստիկանատունը, հեռագրատունը և միւս պետական հիմնարկութիւնները: Բոլոր այդ զինուորական գրաւումները չորս ժամւայ ընթացքում էին կատարուել, և առաւօտեան ժամը 5-ին ամէն ինչ վերջացել էր, և պետական հարուածը յաջողութեամբ գլուխ էր եկել:

Այդ ժամանակւայ Պարսկաստանը (իսկ ներկայիս Իրան) Ղաջար կոչուած թագաւորական տոհմի իշխանութեան էր ենթարկուած: Այդ տոհմի վերջին թագաւորը Մոհամմադ-Ալի էր կոչւում: Վերջինիս և նրա նախորդների օրօք Պարսկաստանը կատարեալ անկման և քայքայման շրջան էր ապրում: Կամայական և բռնապետական իշխանութիւն էր տիրապետում: Կենտրոնական իշխանութիւնն անզօր էր իրեն ենթարկելու երկրի բազմաթիւ նահանգները: Երկրի հիւսիսում, հարաւում, արևմուտքում և հիւսիս-արևելքում և համարեա ամենուրեք կազմուել էին ինքնագլուխ, թայֆայական, ցեղապետական իշ-

խանութիւններ, որոնք ըմբոստացել էին և երկրի կենտրոնական կառավարութեանը չէին ենթարկւում: Քաղաքացի և մանաւանդ գիւղացի բնակչութիւնն արիւն էր լացում այդ կամայական և ցեղապետական ինքնիշխանութիւնների անհաշիւ կեղեքումներից և վերջ չունեցող կողոպուտներից: Կեղեքւող և կողոպտւող բնակչութիւնը չէր համարձակւում գանգատւել և բողոքել: Համարձակութեան ամենափոքր ճիչը խեղդւում էր բողոքողի արեան մէջ:

Նախքան պետական հարւածը՝ երկրի զինւորական կազմակերպութիւնը ցարական կառավարութեան նշանակած զինւորական աստիճանաւորների ձեռքում էր գտնւում: Այդ զինւորականները իրենց ցանկութեան և նախասիրութեան համաձայն, կարգադրում էին բոլոր գործերը: Նրանք էին որոշում զինւորական բիւջէն, ռոճիկները ու բոլոր ծախսերը: Նոյնիսկ նրանք էին կատարում զինւորական նշանակումները, աստիճանի բարձրացումներն ու շնորհազրկումները:

Դիւանագիտական-քաղաքական ասպարեզում Պարսկաստանը գրեթէ արժէք չունէր: Պարսիկ դեսպանների և դեսպանատների ծառայողների նշանակումը կատարւում էր Թեհրանի այս կամ այն օտար դեսպանի ցուցմունքով և համաձայնութեամբ: Պետական դատարաններն իրաւասու չէին ռուս, անգլիացի և օտար քաղաքացիների գործերին վերաբերող լինելու և դատելու: Նոյնիսկ օտար ոճրագործներն ու մարդասպաններն իրենց պատկանած պետութեան՝ Թեհրանում ունեցած դեսպանատներումն էին դատւում:

Պարսկաստանի տնտեսական բազկերակն էլ անգլիացիների և ռուսների ձեռքումն էր: Կառավարութիւնը պետական բանկ չունէր: Երկրում շրջանառութեան մէջ գտնւող թղթադրամները պատկանում էին անգլիական բանկին: Պարսկաստանը բաժանւած էր ցարական և անգլիական ազդեցութեան գօտիների: Երկրի բոլոր հիւսիսային նահանգները՝ ցարական, իսկ հարաւային ամբողջ շրջանները անգլիական ազդեցութեան գօտիներումն էին:

Արդարութիւնն ու արդարադատութիւնը դատարկ և անիմաստ խօսքեր էին: Ազգաբնակչութիւնը կամայականութեան և բռնակալ արարքներում կենսաքամ էր լինում:

1890-ից սկսած՝ Ղաջար թագաւորների կամայական և բռնակալ իշխանութեան դէմ ժողովրդական խլրտումներ էին սկսել: Դժգոհութիւնները միջին խաւերից էին սկսւել: Այս խլրտումների կորիզն արհեստաւորներն ու առևտրականներն էին կազմում: Այս դժգոհումների շարժմանը մասնակցում էին նաև մի շարք մտաւորականներ և գաղափարական հոգևորականներ:

1905 թւի դեկտեմբերին այս խլրտումներն ուժեղացել և Մօզաֆէր-էդ-դին շահի, վարչապետ Էյնօդ-Դօվլէի դէմ էին ուղղւել: 1906 յուլիսին մի քանի հազար ցուցարարներ, օտար մի դեսպանատնում հաւաքւած, վարչապետի հրաժարումն ու սահմանադրական կարգերի հաստատումն էին պահանջել: 1906 թւի հոկտեմբեր 17-ին, Մօզաֆէր-էդ-դին շահը ստիպւած էր եղել սահմանադրական կարգերի հաստատմանը համաձայնւել և Իրանի սահմանադրական առաջին ժողովը գումարել:

Սահմանադրական կարգերի հաստատումից և առաջին Սահմանադրական ժողովի (Մէջլիս) բացումից անմիջապէս յետոյ Մօզաֆար-էդ-դին թագաւորը դեկտեմբերի 30-ին մահացաւ և նրան փոխարինեց իր որդին՝ Մոհամմադ-Ալի Շահը:

Այս վերջինի թագաւորութեան տևողութիւնն երկու տարուց աւելի չտևեց: Նա օտար մի պետութեան օժանդակութեամբ ջանաց հօր կողմից երկրին տրւած սահմանադրական կարգերը ջնջել և խորհրդարանը (Մէջլիս) փակել: Նա նոյնիսկ ձեռնարկեց նորաբաց սահմանադրական ժողովի շէնքը ռմբակոծման ենթարկելով՝ Մէջլիսի անդամներին ահաբեկել և ցրիւ տալ:

Պարսկաստանում սահմանադրական կարգերը հաստատելու անձնւէր պայքարում իրենց ինքնուրաց և անձնազոհ մասնակցութիւնը բերին հայ կամաւորները Եփրեմ խանի[31] և իր օգնականների գլխաւորութեամբ: Իրանի յառաջադէմ և գիտակից ժողովուրդը միշտ իրեն երախտապարտ է զգում Եփրեմ Խանի և նրա կամաւորների՝ ազատագրական պայքարին մասնակցութեան և կատարված զոհաբերութիւնների համար: Եփրեմ խանը՝ այդ ազնիւ և քաջարի յեղափոխականը, Իրանի ազատագական պայքարում իր կեանքը զոհաբերեց: Իրանի երախտագէտ և յառաջադէմ տարրերը շարունակում են գնահատել Եփրեմի այդ ազնիւ զոհողութիւնը և նրան նշանաւոր և առաջնակարգ քաջարի յեղափոխական նահատակների շարքերումն են դասում: Պարծանք քաջարի այդ հերոսին:

***

1921 թւի փետրուար 21-ի (3 էսֆանդ 1299 իրանական արեգակնային թւի) պետական հարւածը կազմակերպելուց յետոյ Ռըզա խանը դարձաւ Պարսկաստանի զինւորական բոլոր ուժերի ընդհանուր

31 **Եփրեմ խանը (Եփրեմ Դավթյան)** ծնվել է Հյուսիսային Արցախի (Գանձակի գավառ) Բարսում գյուղում: 1880-ական թվականների վերջերին անցել է Արևմտյան Հայաստան և միացել հայդուկային խմբերին: Սարգիս Կուկունյանի կազմակերպած արշավանքին (1890) մասնակցելու համար 1892 թ. դատապարտվել և աքսորվել է Սիբիր, որտեղից 4 տարի անց փախել է Իրան: 1899 թ. դասավանդել է Ղարադաղի Աղաղան գյուղում: 1905-1911 թթ. եղել է իրանական հեղափոխության կազմակերպիչներից և ղեկավարներից մեկը: 1909 թ. հուլիսի 10-ին՝ Թեհրանի առումից հետո, նշանակվել է իրանական ժամանակավոր կառավարության ղեկավար: Եփրեմ խանին շնորհվել է սարդարի (թարգմ. գերագույն հրամանատար) աստիճան: Զոհվել է 1912 թ. մայիսի 6-ին Սուրջիեի ճակատամարտում և ամփոփվել Թեհրանի Հայկազյան (այժմ՝ Դավթյան) դպրոցի բակում:

զօրահրամանատարը՝ Սարդարէ-Սէփահ տիտղոսով: Նա միաժամանակ Սէիդ-Զիա-էդ-դինի գլխաւորած դահլիճում պատերազմական նախարարի պաշտօնն ունէր: Իր աննկուն, յարատև և յամառ ջանքերով Սարդարէ-Սէփահը շուտով իր արժանի դիրքին և պատուին տիրացաւ: Ժողովրդական վերին և ազդեցիկ խաւերում և Մէջլիսում նրա կողմնակիցներն ու համակիրները հետզհետէ բազմացան: Տարին չլրացած՝ նա արդէն մեծ ժողովրդականութիւն էր վայելում և երկրի թիւ մէկ մարդն էր դարձել:

1925 թի 31 հոկտեմբերին, Իրանի Սահմանադրական ժողովը Ահմադ Շահ Ղաջարին թագաւորական տիտղոսից զրկեց և երկրի ժամանակաւոր կառավարութիւնը յանձնեց Սարդարէ-Սէփահին: 43 օր յետոյ՝ դեկտեմբեր 13-ին գումարուած հիմնադիր ժողովը Սարդարէ-Սէփահին Ռըզա Շահ Փահլաւի տիտղոսով թագաւոր ընտրեց և հիմնական օրէնքի 36, 37, 38 և 40 յօդուածները փոփոխութեան ենթարկեց: Այսպիսով, Ղաջարների թագաւորական տոհմի իշխանութեանը վերջ տրուեց, և թագաւորական իշխանութեան իրաւունքներն անցան Ռըզա Շահ Փահլաւիին և նրա սերնդին:

1299 (1920) թի 3 էսֆանդից մինչև 1320 (1941) թի 24 Շահրիվար ամիսը, այսինքն՝ շուրջ 20 տարուայ իր իշխանութեան ժամանակաշրջանին, Ռըզա Շահ Փահլաւին բազմաթիւ անգնահատելի ծառայութիւններ մատուցեց իր սիրած և պաշտած երկրին: Այդ մեծ մարդու կատարած գործերը չափազանց շատ են: Կաշխատենք թուել ամենակարևորները միայն:

Պետական հարուածից յետոյ նրա ամենաառաջին գործը (26-28-1921 թին) անգլիացիների հետ ունեցած (որը չէր էլ վաւերացուել) պայմանի բեկանումն էր: Այդ ժամանակ Ռուսաստանում իրենց տիրապետութիւնը հաստատած մեծամասնականները Իրանի հիւսիսային մասերում եղած ցարական զինուորական ուժերին պարտութեան էին մատնել և նրանց ցաք ու ցրիւ էին արել: Մեծամասնականներն իրենց դիրքն ու համակրութիւնը Պարսկաստանում ուժեղացնելու և անգլիացիների ուժեղ ազդեցութիւնը չէզոքացնելու նպատակով Սարդար-Սէփահի կազմած կառավարութեան հետ շատ կարևոր զիջումներով բարեկամական պայման կնքեցին: Այդ պայմանի հիման վրայ նրանք համաձայնուեցին հետևեալ կէտերը գործադրել.

1. Իրանն ազատել իրենց զօրքի գրաւումից և լիկվիդացիայի ենթարկել իրենց կողմից Էնզէլիում, Ռաշտում և Գիլանի զանազան մասերում հիւսիսային մեծամասնական հանրապետութիւնը:

2. Ճանաչել կապիտիւլասիոնի ջնջումը:

3. Հրաժարուել ցարական իշխանութեան Իրանից ունեցած պահանջներից և բոլոր մենաշնորհներից:

4. Նիւրել ցարական կառավարութեան Իրանում ունեցած կալուածները, նրանց Ուրմիոյ լճի վրայ ունեցած նաւակները, մինչև Թաւրիզ ձգուող երկաթուղագիծը, շինուած ճանապարհներն և այլն և այլն:

Այս պայմանագրում կար նաև այն կէտը, որի համաձայն՝ Իրանի կառավարութիւնը յանձնառու էր լինում մեծամասնականների կառավարութեան թշնամի ճանաչած բոլոր տարրերին՝ ռուս կամ օտար, արգիլել Պարսկաստանում որևէ կազմակերպութիւն կամ գործունէութիւն ունենալու:

1926 թի ապրիլ ամսին Ռըզա Շահի նախաձեռնութեամբ Իրանի, Թիւրքիայի և Իրաքի միջև կնքուեց բարեկամական և ապահովութեան եռեակ համաձայնութիւն: Այդ պայմանի համաձայն՝ երեք պետութիւններ յանձնառու էին լինում երեք երկրների միջև եղած սահմանագծային վէճերը լուծել և միացեալ ուժերով հսկել սահմանամերձ շրջանների ապահովութեանը:

1927 թի նոյեմբեր 22-ին սկսուեցին Իրանի հարաւից հիւսիս երկարող և Բանդար Շահփուրից սկսող ու Բանդար Շահում վերջացող երկաթուղագծի աշխատանքները: Միևնոյն թիւն յայտարարուեց, որ Իրանի հարաւում և անգլիացիների ազդեցութեան ներքև գտնուող Բահրէյն շէյխանիստ կղզեխումբը Իրանին է պատկանում և նրա անբաժանելի մասն է կազմում:

Ռըզա Շահի ամենամեծ գործերից մէկը կապիտիւլասիոն օրէնքի ջնջումն էր: 1928 թի մայիս 10-ին յայտարարուեց, որ երկրի վեհապետական իրաւունքները խախտող այս մենաշնորհը չեղեալ է համարուում և բոլոր օտարահպատակներն Իրանի հպատակ քաղաքացիների նման և հաւասար, իրենց գործած յանցանքների, ինչպէս նաև իրենց պարտք ու պահանջի հաշիւների համար դատուելու են Իրանի դատարաններում: Այս փրկարար և չափազանց կարևոր օրէնքի գործադրումը ռուսների, անգլիացիների և միւս պետութիւնների կողմից շուտով ճանաչուեց:

Երկրի դրութեան հիմնապէս տեղեակ և հեռատես թագաւորը, նախքան վերոյիշեալ օրէնքի կիրառումը, շուրջ երեք ամիս առաջ իրաւագէտ Դավարին լիազօրել էր, յառաջադէմ երկրներում կիրառման դրուած արդարադատութեան օրէնքների հիմունքներով և դատական նոր օրէնսդրութիւն մշակելով՝ Մէջլիսի վաւերացման յանձնել և նորակազմ դատարանում գործադրութեան դնել:

1928 թին հետևեալ երեք շատ կարևոր օրէնքներն էլ հաստատուեցին և վաւերացուեցին:

1. Մաքսային նոր օրէնքների մշակումն ու վաւերացումը.

2. Բարձրագոյն կրթութիւն և մասնագիտութիւն ձեռք բերելու նպատակով իրանցի ուսանողների առաքումը Եւրոպա և արտասահման.

3. Ազգային բանկի (Բանկ Մելլի) հիմնումը: Պետական բանկի մենաշնորհն էր լինելու երկրի թղթադրամների տպագրութիւնը և հրատարակումը: Թղթադրամների հիմքը լինելու էին ոսկեղէն ձոյլ մետաղը, թանկագին քարեղէնները և ոսկեդրամը:

Նոյն թին կնքուեց նաև հիւսիսային ձկնորսութեան պայմանագիրը ռուսների հետ: Այս համեմա-

տաբար շահաւէտ գործից մինչև այդ կառավարութիւնը որևէ օգուտ չէր կարողացել ունենալ:

Ռըզա Շահի ամենամեծ և ամենանշանաւոր գործերից մէկն էլ տարազի փոփոխութեան վերաբերող նրա կարգադրութիւնն էր: Ինչպէս քաղաքակիրթ երկրներում, Իրանում ապրող բոլոր տղամարդիկ ևս պիտի հագնէին միաձև: Կանայք էլ իրենց հագուստի վրայ կրող սև չադրաները պէտք է նետէին: 1929 թւին (1307 թւի դէյ ամսին), առաջին անգամը լինելով՝ թագաւորը թագուհու և երկու երիտասարդ իշխանուհիների հետ Թեհրանի կարևոր պողոտաներում շրջագայելով, ժողովրդին խրախուսեց իր տւած օրինակին հետևել:

1931 թւի յունուար և փետրուար ամիսներին երկու կարևոր որոշումներ հրատարակուեցին: Առաջին որոշման համաձայն՝ օտարահպատակներին արգիլւում էր Իրանում հողամասերը (երկրագործութեան և այլ նպատակների համար) գնել և սեփականատէր դառնալ: Երկրորդ օրէնքով՝ մինչ այդ անգլիացիների ձեռքում եղած և հնդո-եւրոպական ընկերութեան պատկանած հեռագրագծի հիմնարկը և ունեցւածքը Իրանի կառավարութեանն էր փոխանցւում:

1932 թւի յունուարին Իրանի և Թիւրքիայի կառավարութիւնները շատ վաղուց իրենց՝ Արարատի փէշերին ընկած սահմանաորոշման համար ունեցած վէճերը լուծարքի ենթարկեցին և վերջնական սահմանաբաժանում կատարեցին և սահմանային նոր պայման կնքեցին:

1932 թւի սկզբին հիմնուեցին երկու նոր գործարաններ, մէկը՝ շաքարի գործարան Քեահրիզաքում (Իրանում շաքարի արդիւնաբերութեան համար մինչ այդ որևէ գործարան գոյութիւն չունէր) և միւսը՝ մանագործարան (որը յետոյ կտորեղէնի արտադրութեան յայտնի գործարանի վերածուեց) Չալուսում:

1932 թւի նոյեմբերի վերջին Իրանի հարաւային նաւթի արդիւնաբերութեան պայմանագիրն Իրանի կողմից լուծարւած յայտարարուեց:

Իրանի հարաւային նաւթը 1901 թւին մենաշնորհ էր տրուել Դարսի անունով մի անձնաւորութեան (Նոր Զելանդիայի հպատակ): Այս մարդը ժամանակի կառավարութեան վճարել էր 20,000 անգլիական ոսկի: Ութ տարիների ընթացքում Դարսին նաւթի հանքերը յայտնաբերելու համար աշխատել և դրամ էր ծախսել, բայց չէր յաջողել արդիւնքի հասնել: 1908 թւին նաւթը յայտնաբերուել էր Մասչէդ-Սուլէյմանում: 1909 թւին նաւթի աղիւնաբերութեան իրաւունքը փոխանցւած էր Անգլօ-իրանեան ընկերութեան: Անգլիական կառավարութիւնն անձամբ 1914 թւի օգոստոսին իր հպատակների ունեցած նաւթի բաժնեթղթերից գնել և դարձել էր բաժնետէր: Նաւթի պայմանագրի լուծարքից յետոյ Իրանի և Անգլիոյ կառավարութեանց միջև տարւող բանակցութիւններն արդիւնքի չհասան: Իրանն իր բողոքը Ժնևի Ազգերի միութեան ժողովին տարաւ: Այս վերջինիս կողմից Անգլիայի և Իրանի կառավարութիւններին յանձնարարուեց նորից ուղղակի բանակցութիւններ վարելով՝ համաձայնութեան յանգել: Նաւթարդիւնաբերութեան պայմանագիրը նորոգուեց, և պայմանաժամը, որ վերջանալու էր 1961 թւին, 32 տարիով երկարաձգուեց: Ընկերութիւնը յանձնառու եղաւ նաւթարդիւնաբերութեան մակարդակի տարածքը հետզհետէ պակսեցնել և առաջին 15 տարուայ ընթացքում, իբր տուրք, Իրանին տարեկան 225,000, իսկ երկրորդ 15 տարուայ ընթացքում տարեկան 300,000 անգլիական ոսկի վճարել: Բացի այդ Նաւթային ընկերութիւնը յանձնառու էր եղել Իրանին տարեկան առնուազն 750,000 ոսկի, որպէս բաժնետիրական իրաւունք, վճարել:

1932 և 33 թւերին Թեհրանի արուարձան համարող Ռէյ քաղաքում ցեմենտի և կուդրոնի արդիւնաբերութեան գործարաններ հիմնուեցին, Թեհրանից դէպի հիւսիս տանող Չալուսի նոր ճանապարհը սարքուեց և կպրապատուեց: Ուսուցիչներ պատրաստելու նպատակով գիտութիւնների ճեմարան հիմնուեց:

Իրանի ծայրէ ծայր երկարող երկաթուղագծի արագընթաց աւարտման համար դանեմարքցի և շուեդացի ընկերութիւնների հետ պայմանագրեր կնքուեցին:

Ռըզա Շահի ամենահռչակաւոր գործերից մէկն էլ Թեհրանի մեծածաւալ և բազմաճիւղ համալսարանի հիմնադրութիւնն էր. 1935 թւին այդ լուսաւորութեան մեծ կենտրոնի հիմնարկէքը կատարուեց: Այդ համալսարանը 25 տարիների ընթացքում Իրանին բազմաթիւ բժիշկներ, ճարտարապետներ, փաստաբաններ, դեղագործներ, անասնաբոյժներ, ատամնաբոյժներ տուեց:

1935 թւին երեք նոր գործարաններ էլ հիմնուեցին, երկուսը՝ Շահիում և Վարամինում, շաքարի արդիւնաբերութեան, իսկ երրորդը՝ Չալուսում՝ մետաքսեղէն կտորների արդիւնաբերութեան համար:

Մի քանի ամիս յետոյ Աշրաֆում հիմնուեց չիթկտոր պատրաստելու մի գործարան: 1935 թւի մարտ 21-ին (Իրանեան 1314 թւի Ֆարվարդին 1-ին) ի լուր աշխարհի՝ յայտարարուեց, որ սրանից յետոյ Փէրս, Փէրշիա, Պարսկաստան և այլն անունները երկիրն անուանելու և ծանօթացնելու համար արգելւում են: Երկրի պաշտօնական անունը թէ՛ ներսում և թէ՛ դրսում լինելու է Իրան:

1936 թւին Իրանի Ֆարհանգստանը (գիտնականների ժողով-ակադեմիա) հիմնուեց. սրա առաջին աշխատանքն այն եղաւ, որ պարսկերէն լեզուն, ինչքան հնարաւոր է, շուտ ազատւի արաբական լեզուի բառերի լուծից և վերագտնի նախկին, արաբների տիրապետութիւնից առաջ գոյութիւն ունեցող լեզուի հարազատ և համապատասխան բառերն ու արտայայտութիւնները: Պէտք է խոստովանել, որ այդ ուղղութեամբ թափւած ճիգերը բաւական զգալի

արդիւնքի հասան: Դժբախտաբար, գիտութեան այդ կենտրոն-օջախում արաբական տառերի փոփոխութեան և լատինացման վերաբերեալ համաձայնութիւն չկայացաւ, և պարսկերէնի ուսուցումը մնաց իր նախկին դժուարըմբռնելի և խրթին սիստեմի վրայ:

1936 թւին (17 Դէյ 1314 արեգ. թւին), Դէյ 17-ը յայտարարուեց կանանց ազատագրման պաշտօնական տօն: Այդ տօնակատարութեան հիմքը երկրի կին տարրի ազատութեան և իրահաւասարութեան փաստաթուղթն է: Կանայք ամենաառաջին հերթին պարտականութիւն ունէին իրենց ստրկացումը բնորոշող ամէն տեսակի և գոյնի չադրաները և ծածկոցները դէն շպրտելու:

***

Ռըզա Շահ Փահլաւի՝ այդ մեծ մարդու կատարած բազմաթիւ և բազմատեսակ մեծ գործերը նկարագրելու համար հարիւրաւոր էջնոց գրքեր պէտք է գրել: Կաշխատեմ մի ամփոփումով եզրափակել յիշողութիւններիս այս մասը:

Ռըզա Շահը զինուորական ուժի հիմքը դրեց և իրանցի զինուորականների ղեկավարութեան ներքոյ Իրանի անկախ բանակը կազմակերպեց: Այդպիսով, կենտրոնական իշխանութիւնն ամբողջ երկրի տէրն ու տիրականը դարձրեց: Նահանգներում և երկրի հեռաւոր մարզերում ցեղապետների և աւազակապետների կամայական իշխանութիւններին վերջ տուեց: Ինքնագլուխ շրջանները պետութեան օրգաններին ենթարկեց:

Կապիտիւլասիոնի ջնջումից յետոյ օտարազգի բոլոր քաղաքացիները իրանեան արդարադատութեան ենթակայ էին: Նրանք Իրանում ապրելու և գործելու համար բնակութեան վկայականներ պիտի ունենային: Օտար պաշտօնական և անպաշտօն հիմնարկութիւնները Իրանի ներքին գործերում խառնուելու իրաւունք չունէին:

Երկրի պարծանքն ու պատիւը կազմող պետական բանկի և համալսարանի հսկայ շէնքերից բացի՝ թագաւորը ձեռնարկեց զառամած մայրաքաղաք եղող Թեհրանի վերակառուցմանը: Հին ու նեղլիկ, ծուռ ու մուռ փողոցները քարուքանդ անելով՝ նրանց փոխարինեցին լայն ու շքեղ պողոտաներ: Մարդկանց խրախուսեցին այդ պողոտաների կողքերին գեղեցկատեսիլ և լուսաւոր խանութներ և տներ սարքել: Վաճառականները, երկրի ապահով դրութիւնից քաջալերուած, լայն չափերի գործառութիւնների, արտածումների ու ներածումների ձեռնարկեցին: Այս վերջինների գործառնութիւններն ու փոխադրութիւնները դիւրացնելու նպատակով լայն և ուղղաձիգ խճուղիներ և կայրապատ ճանապարհներ սարքուեցին: Երկրի զանազան կողմերում և մանաւանդ հիւսիսային և ծովափնեայ շրջաններում հոյակապ և ամէն յարմարութիւններով օժտուած հիւրանոցներ կառուցուեցին: Երկրի պարծանքը հանդիսացող և հարաւ ու հիւսիսն իրար միացնող երկաթուղագիծը՝ իր բազմաթիւ թիւնելներով և հսկայական ու երկարաձիգ կամուրջներով և բոլոր անհրաժեշտ սարքաւորումներով, առանց օտարների փոխառութեան և օժանդակութեան՝ կատարելապէս կառուցուեց:

Գիւղատնտեսութեան տիպար ագարակներ, գիւղեր և տներ հիմնուեցին: Պետական փտած ու նեխուած հիմնարկութիւնները հիմնովին յեղաշրջման ենթարկուեցին: Անհաշիւ են այդ մեծ մարդու յեղաշրջական և շինարարական գործերը:

Իրանի ամբողջ ժողովուրդը՝ ամէն ցեղի և դաւանանքի պատկանողները, անխտրօրէն այդ մեծ մարդուն երախտապարտ են: Նա իր երկրի հարազատ զաւակն էր և մեծ հաւատքով ու նուիրուածութեամբ ծառայեց իր երկրի վերազարթման և վերակառուցման գործին: Այդ իսկ պատճառով նրա մահից յետոյ, երկրի խորհրդարանը նրան Ռըզա Շահ Քեաբիր մեծ թագաւորի տիտղոսին արժանացրեց:

ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՆՀՈՒՍԱԼԻՈՒԹԻՒՆԸ

Մեր պաշտելի հայրենի Վասպուրականից վտարուած էինք վայրագ թշնամու արիւնաթաթախ զէնքի ուժով: Տաճիկների հետ խաբէութեամբ և ստորաբար դաշնակցած քիւրդերի կոտորածի սարսափից ահաբեկուած՝ մեր ճանապարհը փոխած և Պարսկաստան ապաւինած էինք: Բազմահազար վասպուրականցի հայեր ստիպուած եղան անգլիացիների պաշտպանութեանն ապաւինել: Մատի վրայ համարուող մի քանի վանեցիներս այդ պաշտպանութիւնից յօժարակամ հրաժարուել և փախուստ էինք տուել՝ մեզ Պարսկաստանի հիւրընկալութեան յանձնելու համար: Այդ սոսկալի և ճգնաժամային օրերից տարիներ էին անցել: Երբեմն յուսալից, բայց յաճախ յուսաբեկ, մեր հայեացքները մեզնից շատ հեռու ապրող, մեր արևելահայ հայրենակիցների ճակատագրական ելքին էինք յառել: Տեղեկացել էինք, որ մեր դարաւոր թշնամիներն անօգնական և մենակ մնացած մեր հայրենակիցներին սեղմել էին իրենց սանձարձակ զէնքերի մահաշունչ օղակներում: Ի վերջոյ բարեհաճել էին, մերոնց նեղը դնելով, ճնշելով ու սպառնալով, Ալեքսանդրապոլի դժբախտ և աղետալից դաշինքը ստորագրել տալ: Թիւրքերը մեր անպաշտպան, լքած և ուժասպառ վիճակից օգտուելով, ո՛չ միայն մեզնից խլել էին մեր տասնեակ դարերի հայրենիքը, այլև կորզել ու կուլ էին տուել ցարական կառավարութեան ժամանակ նրանց տիրապետութեան ներքոյ եղած ընդարձակ շրջանները:

Հայաստանի Ազգային Հանրապետութեան տապալումից յետոյ էլ, հայ կոմունիստների իշխանու-

թիւնը իր հերթին, անկարող էր եղել յետ վերցնել մեզնից տմարդօրէն խլուած հողամասերը: Պիտի յիշել, որ Մոսկւայի կոմունիստական կենտրոնական իշխանութիւնն էլ, իր ներքին և արտաքին թշնամիների վախից, դժբախտաբար, բարեկամացել և դաշնակցել էր մեր դարաւոր թշնամու՝ թիւրքի հետ և չէր ցանկանում մի բուռ հայերի սիրոյն իր նոր դաշնակցի սիրտը կոտրել: Ամէն անգամ, երբ մեր հայրենասէր անձնուրացները բողոքում էին այս կոպիտ ու վայրագ անարդարութեան դէմ, նրանց պատասխանում էին չքմեղանքով:

Մեր փոքրիկ Հայաստանի դռները կոմունիստական իշխանութեան հաստատումից յետոյ տասնեակ տարիներով փակւած մնացին հայրենակարօտ հայերի երեսին: Տաճկահայաստանից ճողոպրած հարիւր հազարաւոր հայերին մերժեցին ընդունել նրանց յոյսի և ապաւէնի օրօրանը:

– Տեղ չունենք: Բնակարան չունենք: Հնարաւորութիւն չկայ նորեկներին պատսպարելու համար,– ասում էին հայրենիք վերադառնալու կարօտով այրւող հայ մարդկանց:

***

Հայրենաբաղձութիւնը մեզ էլ տանջում էր: Մանաւանդ հայրս անվերջ տանջւում էր իր հարազատների հեռաւորութիւնից: Նրանց կարօտը մաշում էր հօրս սիրտը:

– Կը վախնամ առանց իմ սիրելիները գոնէ մէկ անգամ ալ տեսնելու, այսպէս, նրանց կարօտով մեռնեմ,– ասում և յաճախ կրկնում էր հայրս:

Նա հայրենաբաղձութիւնից բխած տասնեակ բանաստեղծութիւններ էր գրել, որոնցից մեծ մասը ժամանակին հրատարակւել է տեղական և արտասահմանեան թերթերում, մանաւանդ «Հայաստանի Կոչնակ» պարբերաթերթում:

Ուսուցչական ասպարէզը մտնելուց յետոյ իմ քաշւած, մեկուսացած կեանքից դուրս էի եկել: Թեհրանի այդ ժամանակւայ հասարակութեան մտաւորական շրջանում բաւական լայն ծանօթութիւններ էի ձեռք բերել: Ինձ հրաւիրել և անդամագրել էին Թեհրանի Շրջանաւարտների միութեան մէջ: Այդ միութեանն անդամակցում էին գրաւէր և մտաւորական երիտասարդներ: Կային նաև երաժշտութեան, բանաստեղծութեան, երգի, նկարչութեան և այլ ասպարէզների սկսնակ սիրողներ: Ամէն շաբաթ մի անգամ տեղի էին ունենում գրական-գեղարւեստական հաւաքոյթներ: Լինում էին նաև դասախօսութիւններ: Ինքս էլ մի քանի անգամ դասախօսութիւններ կարդացի: Այդ Միութեան անդամակցութեանս համար շատ զոհ և ուրախ էի: Ինձ համակրում և գնահատում էին: Այդ Միութիւնից մինչև այժմս էլ պահում եմ քաղցր յուշեր: Այդ Միութեան վարիչներիցն էին ներկայի համակրելի բանաստեղծ Դեր (Մարգար Ղարաբէգեան) և Եկեղեցական վարչութեան յարգելի անդամ տիկ. Սաթենիկ Ասրեանը:

Այդ բոլորից յետոյ ես շատ ցաւում էի, որ ի վիճակի չէի և որևէ հնարաւորութիւն չունէի իմ նախկին ընկերների հետ գոնէ նամակագրութիւն ունենալու: Իմ մի քանի հարազատ և սիրելի ընկերների վիճակն ինձ շատ էր հետաքրքրում: Չափազանց մեծ ցանկութիւն ունէի մանաւանդ Հրանդից, Աղասուց, Վահանից և Ալիսից գոնէ մի տեղեկութիւն, մի երկտող գրութիւն ստանալու: Ոչ մէկից ո՛չ մէկ լուր: Կտրւած, բաժանւած, հեռու և անտեղեակ, ցաւալի և անյոյս վիճակ: Հեռու հարազատ հայրենիքից և հեռու սիրելի և պատւական ընկերներից...

ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐ

Ամէն յեղափոխութիւն արիւնալից է: Յեղափոխութիւնների յեղաշրջական ժամանակամիջոցին տեղի և անտեղի, արդար և անարդար զոհեր շատ են լինում: Ամենուրեք արիւն է թափւում: Այդ արիւնահեղութիւնների ընթացքում, դժբախտաբար, մարդկային խիղճն ու գիտակցութիւնը կոխկռտւում և ոտնատակ են լինում: Յաճախ էլ հին, անհատական հաշիւներ են մաքրւում: Բանականութիւնն իր տեղը զիջում է կրքի, ատելավառութեան և քինախնդրութեան: Մարդկային վայրագ, գազանային ձգտումները սանձարձակ կատաղութեամբ երևան են գալիս: Իրար հայրենակից, ազգակից մարդիկ վրէժխնդրութեան կրակով են այրւում, բոցավառւում: Յար և նման դժբախտութիւն էլ մեր դարաւոր թշնամուց և մեր «առիւծ» հարևաններից յափշտակման և կողոպուտի ենթարկւած ու նրանց կողմից մկրատւած և լաւագոյն պատառները խլւած Հայաստանում տեղի ունեցաւ:

Այդ թևերից, ոտքերից և ամէն կողմից կտրատւած մեր երկրում՝ խիստ փոքրացւած Հայաստանում, 1918 թւի մայիս 28-ին ազգային և անկախ պետութիւն հիմնւեց: Դժբախտաբար, նրան չյաջողւեց երկար գոյատևել: Համոզւած լինելով, որ հիւսիսի և հարաւի թշնամական հարւածներին երկար դիմադրաւել չպիտի կարողանայ, գերադասեց երկիրը յանձնել հայ մեծամասնականներին: Չէ՞ որ նրանք էլ հայեր էին և հազար անգամ աւելի գերադասելի, քան մեր դարաւոր թշնամի տաճիկները:

Բայց, դժբախտաբար, բոլորովին անսպասելին կատարւեց: Երկիրն ու պետութիւնը գրաւող հայ մեծամասնականների շարքում Աւիս Աթարբեկովի և Մուղդսու նման մարդակերպ խելացնորներ և արիւնածարաւներ յայտնւեցին, որոնք մեր հաւաքական ուժերի խորտակման և ոչնչացման պատճառը դարձան: Փոխանակ հայ ժողովրդի բոլոր մարտնչող ուժերն ի մի հաւաքելու և միացեալ ուժերով մեր յայտնի և ծպտւած թշնամիներին դիմադրաւելու և նրանց՝ մեր հայրենիքի բռնագրաւած

հողամասերից վռնդելու՝ դաշնակցական, հակայեղափոխական, իմպերիալիստների ծառայ և այլ անուններով մեր հայ զինուորականներին, մարտնչող ուժերին և մտաւորականներին ու յայտնի գրողներին բանտերը նետեցին, աքսորեցին և տասնեակ հարիւրներով նրանց կոտորեցին:

Ամբողջ կեանքումս ես դաշնակցական կամ նրանց համակիրը չեմ եղել: Ընդհակառակը, թէ՛ Վանում և թէ՛ Թեհրանում յաճախ պայքարողի դերումն եմ եղել, բայց չեմ կարող հաշտուել այն գաղափարին, որ մարդկանց, այն էլ մեր ժողովրդի և մեր ազգապահպանման համար տարիներով մարտընչողներին դաշնակցական լինելու մեղքով պէտք էր կամ կարելի էր կացնահարել և կոտորել...

Երբ արևմտահայ կամ արևելահայ ժողովրդի ազատագրութեան և փրկութեան համար Արմենականները, Հնչակեաններն ու Դաշնակցականները կռուում և արիւն էին թափում, մի՞թէ հայ մեծամասնականները կային:

Չեմ կարծում և չեմ կարող հաւատալ, որ, բացի Աւիսի և Մուղդուսու նման խելագարներից, նրանց բազմաթիւ բանիմաց և կրթուած կուսակիցները համաձայնուէին մարդկանց կոտորել, սպանել նրա համար, որ իրենց կուսակիցները չէին կամ իրենց նման չէին մտածում և դատում: Մի՞թէ գաղափարական պայքարում յաղթական եղողներն իրենց հակառակորդների հաշուեյարդարը նրանց կոտորելով և գնդակահարելով պիտի կատարէին: Ո՛չ, հազար անգամ ո՛չ:

Այս խելագար վայրագները իրենց կուսակիցների հմայքը ցեխոտող վիժուածքներ են եղել: Մի՞թէ Շահումեանը, Մյասնիկեանը, Խանջեանը և նմանները մեծամասնական չէին: Մի՞թէ նրանք կը համաձայնուէին նման գազանութիւնների կիրառմանը: Մի՞թէ նրանք կը համաձայնուէին ազգային ուժերի այդպիսի բարբարոս կոտորակմանն ու ոչնչացմանը: Մեր ազգային միասնականութեան կործանման պատասխանատու ոճրագործները սկզբից մինչև մեր օրերը եղել են նրանք, որոնք իրենց անհատական ստոր կրքերի յագեցման համար զոհել, խորտակել են իրենց թշնամի համարած, բայց իսկական և ազնիւ հայրենասէրներին:

Աւիսի և Մուղդուսու նման տգէտ և վայրենի հայասպաններն անտեղեակ էին հայ ժողովրդի ազատագրական պայքարին և ազգապահպան մարտընչողներին: Նրանք իրենց ազգի հարազատ զաւակների անձնուէր զոհաբերութեան մասին բոլորովին ոչինչ գիտէին: Այդ ողորմելի արարածները չգիտէին, որ հայ ժողովուրդը իրենց վայրագօրէն կողոպտուած ազատութիւնն ու անկախութիւնը վերադարձնելու ի խնդիր, հազարաւոր զոհեր է տուել:

Այդ տգէտ վիժածներն ի՞նչ կարող էին իմացած լինել Վասպուրականի, Սուրբ Բարդուղիմէոսի, Այգեստանի, Զէյթունի, Տարօնի, Սասնոյ և ուրիշ բազմաթիւ վայրերի հայ ազգի հերոսական զաւակների աննման քաջագործութիւններից և կամ Վասպուրականում, Պոլսում, Աղանայում և այլուր գնդակահարուած, խողխողուած և կախաղան բարձրացուած հազարաւոր ազգասէրների բնաջնջումից:

Տգէտ, ապուշ և խենթ էին նրանք, որովհետև հայ ազգի յեղափոխական հերոսներին յայտնաբերել և ճանաչել չգիտէին, որովհետև ոճրագործ ու դաւաճան էին, որովհետև հայ ժողովրդի ազատագրութեան դատին նուիրուած հայրենասէրներին խեղդում և գնդակահարում էին:

Բոլորովին տրամաբանական և արդարացի կը լինէր, եթէ իսկական և իրաւացի մաքրագործում կատարուեր, եթէ վերջին տարիների ընթացքում պատերազմի հետևանքով դասալիք եղած ստահակ և վատահամբաւ, կողոպուտով զբաղող տարրերին գնդակահարէին և մաքրագործէին:

Այո՛, յեղաշրջման ընթացքում կատարուած անտեղի ու անարդար գնդակահարումներն ու սպանութիւնները մեր ազգային միասնականութիւնը և հաւաքական կորովի ուժը խորտակեցին և անդարմանելի հարուած հասցրին մեր ժողովրդի համազգային դիմադրական կարողութեանը և կենսական ուժին:

Հայ ժողովուրդը այդ զզուելի ու վայրագ հայակերների անունները անջնջելի սև տառերով արձանագրել է իր ազգի դաւաճան և ստոր թշնամիների անանցանկում:

ՓԱԽՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

1921 թի գարնան օրերումն էինք: Կիրակի օր էր: Հօրս այցելութիւն տալու համար գնացել էի եկեղեցի: Արտաշէս Գարագաշը տարիներից ի վեր այդ եկեղեցու երգչախմբի խմբավարն էր: Պատարագի ծիսակատարութիւնն աւարտելուց յետոյ հօրս սենեակում ինձ հանդիպելու եկաւ: Սովորական «բարև և ինչպէս էք»-ից յետոյ ինձ ասաց.

– Պր. Սիրա՛ք, ձեր տաճկահայերից երկու հոգի գաղթական, անտէր ու անտիրական, շատ անմխիթար և հիւանդ վիճակում, մի քանի օր է, ինչ իմ ապրած տան բակում պառկած են: Այս քանի օրերում, իմ կարողութեան սահմանում, նրանց օգնել եմ, բայց նրանց համար անհրաժեշտ սնունդի և բժշկութեան հնարաւորութիւնները չունեմ:

– Լաւ, պր. Գարագա՛շ, մի՞թէ այդ մասին Բարեգործական միութեանը չէ՞ք յայտնել, որպէսզի նրանց օգնութեան հասնեն:

– Յայտնել եմ, բայց արդիւնք չի ունեցել, պատասխանել են, որ օգնութեան հնարաւորութիւն չունեն: Ասում են, որ վերջերս Բաքւից՝ Փահլաւի քաղաքի գծով և Հայաստանից՝ Թաւրիզի գծով բաւական շատ գաղթականներ եկել և այդ բոլորին խնամելու և կերակրելու հնարաւորութիւնը չունեն:

Անմիջապէս վերյիշեցի իմ և հօրս շատ մօտ անցեալը: Մտաբերեցի մեր գաղթական օրերի տա-

ռապանքները: Ինչքա՜ն շատ դժբախտ ժողովրդի զաւակներ ենք եղել մենք բոլորս: Ի՜նչ անբախտ աստղերի տակ ենք ծնուել մենք՝ հայերս: Մենք ինչո՞վ ենք մեղաւոր, որ այսպէս անվերջանալի տանջանքների և հալածանքների ենք ենթարկուել: Երէկ տաճիկները, այսօր Բաքուի թիւրքերը և այդ ամենից վերջ մեր հարազատ հայրենակիցները մեզ կոտորում կամ քաշում ու վռնդում են ամենուրեք և ամէն ուղղութեամբ: Մի՞թէ մեր դժբախտութիւնը սահման և վերջ չունի՞:

Մինչդեռ ես, այս մաշող, սիրտ կրծող մտորումների մէջ խորասուզուած, բոլորովին մոռացել էի խօսակցիս ներկայութիւնը, մեր սենեակի դուռը բացուեց և հայրս ներս եկաւ: Ինձ տեսնելով, արտակարգօրէն ուրախացաւ և բացականչեց.

– Սիրա՛ք, զաւա՛կս, ու՞ր ես մնացած: Ամբողջ երկու շաբաթ է, որ ինձ մօտ եկած չես: Շատ անհանգիստ էի: Մի՞թէ չես գիտեր, որ մեր բոլոր հարազատներէն հեռու ու զրկուած՝ մենակ քեզնով եմ մխիթարուած:

– Ներողութիւն, սիրելի՛ հայր, ես մեղաւոր եմ, բայց վերջերս շատ զբաղուած եմ եղել:

– Տէ՛ր հայր,– մեր խօսակցութեան մէջ ընկնելով ասաց պ. Արտաշէսը,– հէնց նոր պր. Սիրաքին պատմեցի երկու թշուառ գաղթականների մասին, որոնք հիւանդ և անճար երիտասարդներ են: Չգիտեմ, ինչպէ՞ս է պատահել, որ նրանք, բոլորովին դիպուածաբար, մի քանի օր առաջ ինձ մօտ են եկել: Դժբախտաբար, ինձ մօտ նրանց դարմանելու և կերակրելու հնարաւորութիւնը չունեմ:

– Պր. Գարագա՛շ,– կտրեցի նրա խօսքը, քանի որ ծանօթ էի նրա շատախօս բնաւորութեանը,– եթէ հօրս հետ ուրիշ գործերի մասին խօսելիք ունէք, ասէ՛ք: Ես կուզենայի ձեզնից խնդրել ինձ այդ երկու դժբախտների մօտ առաջնորդել: Ձեր տունը ճանաչելու պատեհութիւնը չեմ ունեցել:

– Եթէ տէր հօրը ուրիշ ասելիքներ էլ ունենալու լինեմ, այդ յետոյ էլ կարելի է,– ներքին մեծ հրճուանքով և քահ-քահ ծիծաղելով պատասխանեց Գարագաշը:

Հօրիցս ներողութիւն խնդրեցի՝ նրան խոստանալով յաջորդ երկու օրում նրան այցելելու: Գարագաշի հետ կառք նստեցինք՝ երկու գաղթականների մօտ գնալու համար:

***

Արտաշէս Գարագաշենց տունը Թեհրանի Չարրահը Ազիզ խան կոչուած քառուղուն կից՝ երկրորդական մի փողոցում էր: Ներս մտանք: Տան փոքրիկ բակի մի անկիւնում՝ երկու կտոր խսիրի վրայ փռուած խղճուկ և անմաքուր անկողնու մէջ, երկու հոգի, հալումաշ վիճակում, իրար կողքի պառկած էին: Արիւնը գլխիս խփեց: Հազիւ ինձ կարողացայ զսպել՝ արդէն ծերութեան սեմին հասած Արտաշէս Գարագաշին չհայհոյելու համար և բռնազբօսիկ համբերութեամբ ու թաքցրած ջղայնութեամբ հարցրի.

– Պր. Գարագաշ, մի՞թէ հնարաւոր չէր այս երկու դժբախտներին ձեր տրամադրութեան տակ եղած սենեակներից մէկի անկիւնը յատկացնել: Այս անբախտ երիտասարդները, եթէ յաջողել են խուսափել թշնամու սրից, այս հալումաշ վիճակում, ամենաթեթև ցրտին չդիմանալով, թոքատապի կենթարկուեն և անկասկած կը մեռնեն:

– Ասելը հեշտ է, պր. Սարիադեա՛ն, մի տեսակ արհամարհական քմծիծաղով ինձ պատասխանեց Գարագաշը:– Շնորհակալութեան փոխարէն ինձ մեղադրու՞մ էք: Լաւ թէ վատ, չորս օր է, սրանց ապաստան եմ տուել: Հիմի հերթը ձերն է: Նրանց տարէ՛ք և աւելի լաւ պայմաններում խնամեցէ՛ք:

– Այդ կէտում իրաւացի էք,– պատասխանեցի նրան,– առանց ձեր հրաւէրի էլ այդ մտադրութեամբ այստեղ եկայ: Սրանց իսկոյն ենթ բժշկական քննութեան ենթարկուելուց յետոյ իմ տունն եմ տանելու: Որևէ իրեղէն ունե՞ն, թէ՞ բոլորովին տկլոր են:

– Երկուսն էլ մէկական պայուսակից և մէկական հին ու քրքրուած ծածկոցից բացի ուրիշ որևէ իր չունեն,– պատասխանեց խօսակիցս:

Մեծ նեղութեամբ երկու՝ բոլորովին անծանօթ, հիւանդ և հիւծուած երիտասարդներին կառքի մէջ տեղաւորելով՝ նախ բժշկի մօտ և ապա տունս տարայ:

Կառքի մէջ, նախքան բժիշկ Համօ Օհանջանեանի (որը Հայաստանից Թեհրան գալով մի քանի ամիս մնաց) մօտ հասնելը հետաքրքրուեցի նրանց ինքնութեամբ:

– Ես,– ասաց, նրանցից մէկը,– Վանեան եմ կոչւում: Վանեցի եմ: Հայաստանի պետական յեղաշրջումից յետոյ փախուստ տալով՝ Թաւրիզ եկայ: Այնտեղ փախստական գաղթականների մեծ խռնում կար: Տեսնելով որ այնտեղ գործ ճարելու որևէ հնարաւորութիւն չկայ, որոշեցի Թեհրան գալ: Ղազվինում պատահաբար հանդիպեցի մեր այս ընկերոջը՝ Արամ Մազլումեանին, որը, իր հերթին Բաքուի խառնակութիւններից ճողոպրած, վճռել էր նոյնպէս Թեհրան ուղարկուել:

– Իսկ դուք, պր. Արա՛մ, ի՞նչ գործի էք,– հարցրի երկրորդից:

–Ես բուլղարահայ եմ: Վառնա քաղաքից, Հայաստանի անկախութեան մասին տեղեկանալով, նախ Բաքում եկայ: Թիֆլիսում տեղեկացայ Հայաստանում կատարուած վերջին դէպքերի մասին: Որոշեցի Բաքու գնալ և այնտեղից Պարսկաստան գալ: Դժբախտաբար, ինչպէս ասում են, ջրից դուրս չեկած, ջրհեղեղն ընկայ: Բախտի բերմամբ ինձ յաջողուեց փրկուել Բաքուի յեղաշրջումների խառնակութիւններից, ընդհարումներից և կոտորածներից: Փախստականների հետ նախ Էնզէլի և յետոյ Ղազ-

ւին եկայ: Այնտեղ հանդիպեցի մեր այս ընկերոջը, որ իր հերթին որոշել էր Թեհրան գալ: Երկուսս էլ տկլոր և բոլորովին անփող ենք: Միակ մխիթարական պարագան այն է, որ մենք երկուսս էլ նոյն գաղափարին և միևնոյն կուսակցութեան պատկանող մարդիկ ենք:

– Ենթադրում եմ, որ ուզում էք ասել, երկուսդ էլ դաշնակցական էք:

– Այո՛,– անմիջապէս պատասխանեց Վանեանը,– մենք երկուսս էլ դաշնակցական ենք:

Յետոյ մի քիչ շփոթահար աւելացրեց.

– Մի՞թէ դուք դաշնակցական չէք:

– Ի՞նչ նշանակութիւն ունի այդ պարագան, թէկուզ էլ ոչ: Ամենակարևորն այն է, որ դուք հայ և ինձ նման գաղթական-տարագիր էք,– պատասխանեցի նրանց:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՍՊԱՐԷԶՈՒՄ

1922 թի առաջին ամիսներից նորից նւիրւել էի հասարակական գործունէութեան: Ինձ համար կարծես վերսկսել էր 1914 թի իմ ծննդավայր Վանի հասարակական կեանքի շրջանը: Նորից սկսել էի մոռանալ իմ անհատական կեանքի և ապրումների մասին մտածել: Նորից մի արտակարգ ձգտում ունէի գրեթէ ամբողջ ազատ ժամերս նւիրելու իմ՝ օգտակար համարած հասարակական գործերի մասնակցութեանն ու դասաւորմանը:

Մէկ ու կէս տարւայ լարւած աշխատանքի շնորհիւ բաւականաչափ ծանօթացել էի պարսկերէն լեզւին և ֆրանսիական դպրոցի դասաւանդման ձևերին: Այդ պատճառով էլ կարիք չէի զգում արտադպրոցական նախապատրաստական աշխատանքի: Տնից և դպրոցից դուրս գալուց յետոյ բոլորովին մոռացութեան էի տալիս դրանց և եռանդագին մոլեգնութեամբ և ժամերով աշխատում էի հասարակական գործերս կազմակերպելու:

Այդ ժամանակներում Թեհրանում գործի վրայ եղող մշակութային և հասարակական մի քանի կազմակերպութիւնների և միութիւնների հետ շփում և կապեր էի ստեղծել:

Մեծ եռանդով գործակցում էի ինձ հետաքրքրող Թեհրանի շրջանաւարտների միութեան, Յառաջադիմականների միութեան և Հայաստանի օգնութեան կոմիտէին:

Շրջանաւարտից միութիւնը Մարգար Ղարաբէգեանի և Սաթենիկ Ասրեանի կողմից էր ղեկավարւում: Յառաջադիմականների միութեան պատւոյ նախագահութիւնը Յովսէփ Միրզայեանին էր յանձնրւած, բայց նրա անմիջական ղեկավարութիւնը ճարտարապետ Ալէք Գալստեանի միջոցով էր կատարւում: ՀՕԿի նախագահը բժ. Կարօ Մինասեանն էր:

Այդ շրջանում մի խումբ դաշնակցական երիտասարդներ գժտւելով հեռացել էին կուսակցութիւնից և կազմել Ձախ հոսանք կազմակերպութիւնը:

Յովսէփ Միրզայեանը՝ յայտնի պարսկագէտ և Օմար Խայամի հռչակաւոր և անմրցակից թարգմանիչը, իր մարդկային բացառիկ առաւելութիւններով և ծայրայեղ ազնւութեամբ ինձ հիացրել և մի տեսակ հմայել էր: Անսահման բաւականութիւն էի զգում նրա հետ ժամերով խօսակցելու և կեանքի նկատմամբ նրա ունեցած իմաստասիրական գաղափարներին և կարծիքներին հաղորդակից լինելու: Միրզայեանը շատ զոհաբերող և համեստ մարդ էր:

Ռըզա Շահի պետական հարւածից յետոյ վերածնւած Պարսկաստանի օրէնսդիր ժողովի (Մէջլիս) ընտրութիւնների նախապատրաստական շրջանն էր: Թեհրանի և հարաւային շրջանի հայութեան կողմից երեք թեկնածուներ կային՝ Յովսէփ Միրզայեան, դոքտ. Ալէք Աղայեան և Արամ Մովէլ:

Բոլորովին կարճ ժամանակամիջոցում Ձախ հոսանք կոչւած խումբը երկու մասի էր ճիւղաւորւել: Նրանցից մեծ մասը, մեզ հետ միանալով Յովսէփ Միրզայեանի, թեկնածութիւնն էր պաշտպանում, իսկ միւսը դոքտ. Ալէք Աղայեանի թեկնածութեան կողմնակից էր: Արամ Մովէլի թեկնածութիւնը դաշնակցականների կողմից էր պաշտպանւում:

Ընտրական յանձնախմբի նախագահը դոքտ. Յ. Ստեփանեանն էր, իսկ քարտուղարը ես էի: Երեք թեկնածուների կողմնակիցների միջև կատաղի պայքար էր սկսւել:

Թեհրանի ընտրութիւնների վերջին օրը դոքտ. Ա Աղայեանի թեկնածութիւնը պաշտպանող Ձախ հոսանք կոչւածների պարագլուխ Յակոբ Յովհաննիսեանը և իր ընկերները, մեր թեկնածուի անկասկած յաջողութեան մասին տեղեկանալով և մեր՝ Աբդոլ-Ազիմ թաղամասում եղած ընտրական յանձնախումբը պաշարելով, փորձեցին բռնութեամբ քւէատուփը ջարդել և ստացւած քւէները ոչնչացնել: Թաղամասի ընտրական յանձնախմբի նախագահութիւնն ինձ էր յանձնւած: Յակոբը և իր ընկերները, հաստագլուխ կոպալներով զինւած, յարձակւեցին ինձ վրայ: Բարեբախտաբար, իմ պաշտպանութեան համար նշանակւած հաւատարիմ ընկերս՝ Սամւէլ Մարութեանը, և երեք ուրիշները, ճիշտ ժամանակին հակայարձակման դիմելով և ծեծի մի լաւ դաս տալով նրանց, թաղամասի ոստիկանատանը յանձնեցին:

Ընտրութիւնները Թեհրանում մեր թեկնածուի օգտին վերջացան: Երկու և կէս ամսւայ երկարաշունչ ընտրական պայքարից յետոյ մեր թեկնածուն, հայ համայնքին պարծանք ու պատիւ բերող արժանաւոր և հեղինակաւոր Յովսէփ Միրզայեանը, քւէների ջախջախիչ մեծամասնութեամբ յաղթական եղաւ՝ ընտրւելով Իրանի Խորհրդարանի հայ պատգամաւոր:

Խորհրդարանական ընտրութիւնների յաջողութիւնից յետոյ հայ համայնքի միւս ներկայացուցչական մարմիններում մեր յաջողութիւնը գրեթէ ապահովուած էր: Կատարուած ընտրութիւններից յետոյ հասարակական բոլոր մարմիններում, մանաւանդ Համայնական վարչութեան և Հոգաբարձական մարմնում, մեր կողմնակիցները թելադրող և վճռահատող մեծամասնութիւն ունէին: Համայնական վարչութեան քարտուղարութիւնն ինձ էր յանձնուած:

ԳԱՂԹԱԿԱՆ ՀԻՒՐԵՐՍ

Առաջին հանդիպումիցս անմիջապէս յետոյ իմացել էի իմ երկու հիւրերի քաղաքական դաւանանքը: Պր. Վանեանն ու Արամ Մազլումեանը դաշնակցական էին և հետևաբար իմ գաղափարական հակառակորդները: Ուրախ եմ յայտարարելու, որ իմ կեանքում կուսակցական մոլեռանդութեան բոլորովին ենթակայ չեմ եղել և նոյնիսկ զգւանք եմ զգացել բոլոր նրանց նկատմամբ, ովքեր կուսակցական մոլեռանդութեան ատելութեամբ և քինախնդրութեամբ են կուրացել: Միշտ համոզուած եմ եղել, որ արժանիք և ազնուութիւն ունեցող որևէ անձնաւորութիւն, թէկուզ կուսակցական հակառակորդ, միշտ յարգելի է:

Չափազանց ցաւալի է այն երևոյթը, որ, դժբախտաբար, մեր հայերիս մօտ կուսակցական հակառակորդը ամենաանվայել որակումներով անւանարկւում և ստորացւում է: Կուսակցական կրքերը շատ անգամ այնքան շատ են բորբոքւում, որ երկու տարբեր կուսակցութիւնների պատկանողները իրար մատնիչ, դաւաճան, հայրենադաւ, ստոր, օտարների ծախւած և այլ բազմաթիւ վարկաբեկիչ տիտղոսներով են որակում և շատ-շատ հեռուներ գնում, որ մարդս, այդ վարկաբեկիչ տիտղոսները լսելով և կամ կարդալով, և՛ ամաչում, և՛ կարմրում է:

Մի՞թէ ուրիշ ազգերի մէջ տարբեր կուսակցութիւններ գոյութիւն չունեն: Կարո՞ղ էք թւել մի քաղաքակիրթ, կուլտուրական, մշակոյթով զարգացած ազգ, որի մէջ կուսակցական այնպիսի մոլեռանդ կուրութիւն և ատելավառ փոխյարաբերութիւն գոյութիւն ունենայ, ինչպիսին մեր մէջ կայ:

Վերցրէ՛ք արտասահմանում՝ այսպէս ասած Սփիւռքում, հրատարակւող և որևէ կուսակցութեան պատկանող հայերէն մի թերթ և աշխատեցէ՛ք, ջանացէ՛ք գտնել նրանցից մէկը, որն իր կուսակցական հակառակորդի նկատմամբ պատշաճ և առանց հայհոյանքի լեզու գործածած լինի: Շատ եմ ցաւում ասելու, որ պիտի դժուարանաք գտնել այդպիսին՝ անշուշտ բացառութիւնները յարգելով: Ազգամիջեան, ներքին այսպիսի ատելութիւն և թշնամութիւն սերմանելով և բորբոքելով՝ մինչև ու՞ր ենք հասնելու: Բոլորս էլ ազգային միութեան և ազգապահպանման ենք ձգտում, բայց մեր թշնամական և ատելախառն ընթացքով կործանելու վրայ ենք մեր ազգային գոյատևման հիմքերը:

Ազգասիրութեանս զգայնութեան «մեղքիս» համար ընթերցողիս ներողամտութիւնը խնդրելով՝ վերադառնում եմ իմ հիւրընկալած երկու տարագիրների համառօտ նկարագրութեանը: Նրանք կատարելապէս հիւծուած էին: Պէտք եղաւ նրանց ամբողջ երկու ամիս բժշկական խնամքի ենթարկել: Դոքտ. Համօ Օհանջանեանը և պրոֆ. Խաչիկեանն արտակարգ ազնուութիւն ունեցան այդ գործում ինձ օգնել և ձրի նրանց բժշկել: Միայն դեղօրայքի համար էի ստիպւած վճարել.

Մազլումեանը և Վանեանը ստոյգ մահից ազատուեցին: Նրանցից առաջինը 14, իսկ երկրորդը 17 ամիս ինձ մօտ մնաց: Առանց դրամի և անգործ էին: Բոլորովին անվճար բնակեցրի և հիւրասիրեցի իմ տանը:

Մազլումեանը չափազանց աշխատասէր և ընդունակ երիտասարդ էր: Թղթակցութեամբ, փոստային ճանապարհով ինժեներական դասընթացքի հետևեց: Վարդուհի Մազլումեանի հետ ամուսնանալուց յետոյ երկու տարի Եւրոպա գնաց և ճարտարապետական համալսարանը վերջացնելով՝ Թեհրան վերադարձաւ: Նախ Բանդար-Փահլաւու և ապա «Էթքա» իրանեան շինարարական ընկերութեան ինժեներներից և բաժնետէրերից մէկը դարձաւ: Նրա ամուսնութեան և առաջին աղջիկ զաւակի կնքահայրն եղայ: Ազնիւ և երախտագէտ մարդ էր և երբեք իմ արած լաւութիւնը չմոռացաւ:

Վանեանին երկար ժամանակ չէր յաջողւում գործ ճարել: Ի վերջոյ իմ միջամտութեամբ և պնդումով մի հիմնարկութեան մէջ պաշտօնի անցաւ: Նա իր ռոճիկի անբաւարարութեան համար միշտ դժգոհ էր: Նրա բախտից իր հօրեղբօր որդին չգիտեմ ինչպէ՞ս և ո՞րտեղից Թեհրան եկաւ: Անգործ էր, բայց աշխատանքի ընդունակ և պատրաստ: Նրանց՝ իմ հնարաւորութեան սահմաններում օգնեցի մի փոքր խանութ բացելու: Եղբօրորդին առևտրական բացառիկ ճարպիկութեան տէր էր: Մի կարճ ժամանակից եւրոպական մի ընկերութեան մօտ միջնորդի աշխատանք սկսեց: Շատ չանցած՝ իր դրութեան հետ միասին Վանեանի վիճակն էլ բարւոքւեց: Համաշխարհային երկրորդ պատերազմից առաջ նրանք շատ մեծ յաջողութեան հասան: Հարստացան: Վանեանը Մազլումեանի կատարեալ հակատիպը դուրս եկաւ: Իմ նկատմամբ բոլորովին վատ վերաբերմունք ունեցաւ: Երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդող երկու տարիներում, երբ նա ձեռք բերած յաջողութիւններից մեծամտացել, իսկ ես կատարեալ անյաջողութեան և ձախորդութան մէջ էի ընկել, ընկերոջս՝ Սամուէլ Մարութեանին՝ հէնց իրեն մահւան վտանգից փրկելու աշխատողին և խնամողին հանդիպելիս չարախնդրութեամբ հարցրել էր.

– Ինչպէ՞ս ես, մեր տղայ... Ձեր Սիրաքն ինչպէ՞ս է...: Ի՞նչ գործի է...:

– Պր. Վանեա՛ն,– իրաւացիօրէն վրդովուած՝ նրան պատասխանել էր Սամուէլը,– լաւ, շատ լաւ լսիր ինչ եմ ասում: Մարդս պէտք է քեզ նման շատ երախտամոռ և անխիղճ լինի, որ բոլորովին մոռացութեան տայ մէկին, որին իր կեանքն է պարտական: Այն ժամանակ, երբ դու հիւանդ ու անտէր ու անտիրական Գարագաշի բակումն էիր ընկած, այդ Սիրաքը, քու սիրելի Սիրաքը, քո հայրենակիցն ու բարեկամն էր: Երբ քեզ մահւանից փրկելու, ազատելու համար աշխատեց, նա քո Սիրաքն էր: Հիմա, երբ ձախորդութեան մէջ է ընկել, իմ ազնիւ և թանկագին բարեկամն է: Վնաս չունի: Ես քեզ նման երախտամոռ չեմ:

Եւ, իրապէս, իմ լաւ ընկեր և միշտ անկեղծ բարեկամ Սամուէլը, չնայած ոչ հայրենակից և ոչ էլ այնքան կրթուած, որչափ Վանեանը, միշտ երախտագէտ և ազնիւ էր գտնուել, որ Վանեանի անշնորհակալ արտայայտութիւնը տարիներով թաքցրել և միայն այն ժամանակն էր ինձ յայտնել, երբ ես արդէն ազատուել, դուրս էի եկել իմ նիւթական ձախորդ վիճակից:

Ամբողջ 32-33 երկար տարիների ընթացքի Վանեանը չուզեց, չցանկացաւ ինձնով հետաքրքրուել և գոնէ մի անգամ ինձ մօտ գալով, եթէ ոչ շնորհակալութեան մի խօսք, թէկուզ մի ձևական բարև ասելու և վիճակս հարցնելու: Նա հարստացել, մեծամտացել էր: Այդ բոլորից յետոյ չափազանց զարմանալին և անսպասելին այն էր, որ Թեհրանից արտասահման գնալու ժամանակ ինձ նամակ էր գրել և խնդրել էր օգնել իր զաւակին Եւրոպա ուսանելու համար ուղարկելու գործում: Մոռացութեան տալով նրա՝ տասնեակ տարիների ընթացքում իմ նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը, նորից չը զլացայ միջոցներ ձեռք առնել և յաջողեցնել նրա զաւակի բարձրագոյն ուսման համար Եւրոպա ճանապարհուելու գործը:

Ինչպէս յայտնեցի, Արամ Մազլումեանը Վանեանի կատարեալ հակապատկերն էր: Նա ինձ երբեք չմոռացաւ և իրեն միշտ երախտապարտ էր զգում: Նա արժանաւոր և ընդունակ երիտասարդ էր և իր ճիգ ու ջանքերով յաջողեց ճարտարապետական համալսարանն աւարտել և կարևոր դիրքի ու պաշտօնի հասնել:

ՏՊԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԼ

1922 թի յունիսի վերջերին Արամ Մազլումեանը, երբ դեռ նոր էր ամուսնացել և զբաղուած էր փոստային թղթակցութեամբ կատարած իր ինժեներական դասընթացքի ուսումով, ինձ մօտ եկաւ և ասաց.

– Սիրա՛ք, սիրելի՛ս, ես շատ եմ ցանկանում քո՝ ինձ արած լաւութիւնները մի կերպ փոխարինել: Կնոջս ազգական պր. Սիմեանն ինձ առաջակել է իր հետ միասին ընկերովի մի գործ սկսել: Իրեն պատասխանեցի, որ զբաղուած եմ իմ դասընթացքի գրաւոր աշխատանքներով և բաւականաչափ ժամանակ չունեմ իր առաջարկած գործն ընդունելու: Յետոյ գործի բնոյթից տեղեկանալով՝ իրեն յայտնեցի, թէ միայն մի պայմանով կը համաձայնեմ առաջարկածդ գործին ընկերանալու, և դա մեր երկուսից զատ, մի երրորդ անձնաւորութեան ընկերացումն է:

Մի փոքր շունչ առնելով՝ շարունակեց.

– Պր. Սիմեանին այս կարճ ժամանակամիջոցում ճանաչելու հնարաւորութիւն ունենալ չէի կարող: Կինս՝ Վարդուհին, նրա ընդունակութիւնն ու ճարպիկութիւնը շատ է գովում և պատրաստ է գործին անհրաժեշտ սկզբնական դրամագլխի իմ բաժինը տրամադրել: Գիտես, որ ես նորեկ մարդ եմ և պարսկերէն լեզուից էլ բոլորովին գլուխ հանել չեմ կարող: Բացի այդ՝ տեղական պայմաններին էլ անծանօթ եմ, եթէ դու համաձայնուես գործին ընկերանալ, չափազանց շնորհակալ և ուրախ կը լինեմ: Սիմեանն էլ քո վերաբերմամբ իր համաձայնութիւնն է տուել: Ինձ յայտնեց, որ քեզ հեռից հեռու ճանաչում է: Ի՞նչ կասես:

– Սիրելի՛ Արամ, քո բարեացակամութեան համար շնորհակալ եմ: Ասենք, որ այս ֆրանսիական դպրոցի՝ ինձ վճարած ռոճիկն էլ ռոճիկի նման չէ: Երկու տարի առաջ, երբ ես պաշտօնի անցայ, շատ գոհ և ուրախ էի: Այն ժամանակ ռոճիկից շատ աւելին ինձ հետաքրքրողը պաշտօնիս բարոյական կողմն էր: Ես այդ գործով հպարտանում էի. ինձ նման գաղթական, նորեկ և օտար մարդը մի՞թէ կարող էր դրանից աւելի շատ սպասելիք ունենալ: Ներկայիս, ինչպէս ասացի, պայմանները բոլորովին փոխուել են: Ես քիչ թէ շատ կարողացել եմ ինձ տեղիս համայնքում ճանաչեցնել: Ինքս էլ մտածում եմ ուրիշ մի աւելի յարմար գործ ճարել: Բայց...

– Էլ ի՞նչ բայց,– խօսքս կտրելով ասաց Արամը:– Գիտեմ՝ ինչի համար ես մտածում: Պիտի ասես գործի քո բաժնի համար անհրաժէշտ դրամը չունես: Նախ, որ ինչպէս պր. Սիմեանն է ասում, այդ գործը սկսելու համար շատ մեծ դրամագլխի կարիքը չկայ:

– Բայց ի՞նչ գործ է այդ, որ մեծ դրամագլխի կարիքը չունի,– հարցրի անհամբեր:

– Դա տպարանական մի գործ է: Նրա վարձակալը մի եւրոպացի է, որ ցանկանում է իր պայմանագիրը մի ոչ շատ մեծ գումարի փոխարէն ուրիշի փոխանցել: Նա որոշել է իր հայրենիքը վերադառնալ: Նրա և տպարանատիրոջ միջև կնքւած պայմանագիրը դեռ երեք տարի ժամանակամիջոց ունի: Տպարանատէրը յայտնել է, որ մեր վճարելիք գումարի մէկ երրորդն իր օգտին վերցնելով՝ համաձայն է լինելիք փոխանցումին: Ներկայիս վարձակալն այս փոխանցումի, ինչպէս նաև 3-4 երեսնոց օրաթերթերի տպագրութեան անհրաժեշտ պարսկերէն տառերի արժէքի համար վեց հազար թուման է պահանջում:

– Ուրեմն, այդ հաշուով, իմ բաժինը հաւասար ընկեր դառնալու համար երկու հազար է լինում: Այդպէս չէ՞:

– Այո՛, ճիշտ այդպէս է լինում,– ոգևորուած պատասխանեց Արամը:

– Շատ լաւ: Ես այդ գումարը հայթայթելու համար մեր Սամուէլի և հօրս հետ կը խօսեմ: Գուցէ ինձ յաջողուի այդ դրամը ճարել: Բայց ինձ համար դեռ պարզ չէ, թէ այդ տպարանում ի՞նչ գործեր են կատարւում:

– Սիմեանի ասութեամբ այդ տպարանը Փոստ-հեռագրատան վարչութեան հետ գրաւոր պայման ունի, և վերջինիս տպագրական բոլոր գործերն այդ տպարանում են կատարւում: Բացի այդ՝ ներկայիս Թեհրանում հրատարակւող վեց օրաթերթերից չորսն այդտեղ են տպագրւում:

***

Դժվարութեամբ ինձ յաջողուեց տպարանի վարձակալութեան համար երեք հոգուց բաղկացած ընկերութեան իմ անդամակցութեան բաժինը հայթայթել: Խմիչքների առևտուրի գործը լիովին յանձնել էի իմ հաւատարիմ ընկերոջը՝ Սամուէլին, և իրեն ասել էի.

– Սիրելի՛ Սամուէլ, ինձ այլևս խմիչքի առևտուրը չի հետաքրքրում: Բախտաւորութիւն ունեցայ բոլորովին պատահականօրէն քեզ պէս ազնիւ և ուղղամիտ գործակցի հանդիպելու: Գործը կառավարի՛ր, ինչպէս քեզ յարմար է: Մեր երկուսիս ապրուստի ծախսերը հոգալուց յետոյ շահած գումարից քո ցանկութեան համաձայն տան վարձքի կամ շահաբաժնի անունով ինձ ամսական մի գումար տո՛ւր: Մնացեալը քեզ հալալ: Եթէ կարողանաս, աշխատի՛ր մի քիչ դրամ խնայել և տան արժէքն էլ ինձ վճարել: Ինչպէս տեսնում ես, ուրիշ գործերով զբաղուած եմ և աշխատում եմ ինձ համար մի աւելի պատշաճ գործ ճարել:

– Չափազանց շնորհակալ եմ, եղբա՛յր Սիրաք,– ասել էր Սամուէլը: Նա վաղուց ի վեր ինձ եղբայր էր անւանում և այդ կոչման համար ես գոհ էի:– Դու ինձ հարազատից աւելի օգնել և պաշտպանել ես: Ամբողջ կեանքումս ինձ արած լաւութիւնդ չեմ մոռանալու և միշտ պատրաստ եմ ունեցածս քո տրամադրութեան տակ դնելու:

Սամուէլն իր հաւաքած և խնայած դրամից կարողացաւ ինձ մի հազար թուման տալ: Հայրս էլ հազիւ ի վիճակի եղաւ հինգ հարիւր թուման գոյացնել: Մնացեալ հինգ հարիւրը տիկ. Վ. Մազլումեանից փոխարինաբար ստացայ:

Օգոստոս ամսի վերջերին մեր տպագրական ընկերութիւնը կազմւել և գործի էր անցել: Սեպտեմբերի սկզբին իմ հրաժարականը յանձնեցի Ալիանս-ֆրանսէզ դպրոցի տեսուչ Սիլվէսթրին:

Խղճի պարտականութիւն եմ համարում այս առթիւ իմ խորին շնորհակալութեան խօսքը ասել այդ ֆրանսիացու հասցէին: Ենթադրում եմ, նա գուցէ ներկայիս մահացած լինի, որովհետև 1922 թւին այդ պատուական, սրտաբաց և բարեհամբոյր մարդը մօտ 45 տարեկան կը լինէր: Իմ ուսուցչական պաշտօնավարութեան առաջին տարին, երբ ես պարսկերէն լեզուից բոբիկ էի և այդ պատճառով էլ դասարանում աշակերտների հետ փոքրիկ միջադէպեր էի ունենում, մեր տեսուչը միշտ ինձ օգնութեան էր հասնում և ինձ քաջալերում էր չյուսահատւել և տոկալ:

Տպարանի գործը սկզբում մեծ դժուարութիւնների հանդիպեց: Գործի քանակն ու ենթադրական շահը վատ չէր, բայց մեզ հետ առաւելապէս գործ ունեցող փոստ-հեռագրատան վարչութիւնն իր ամսական վճարումները 45 օրից աւելի շուտ չէր կարող անել: Միւս կողմից էլ այդ օրերին մեր տպարանում տպագրւող և Թեհրանում կշիռ և սպառում ունեցող օրաթերթերը մէկ շաբաթից աւելի շուտ վճարել չէին համաձայնւում: Տպագրական ծախսերը, թուղթ, թանաք և բանւորների ու տպարանի վարձքը բաւական խոշոր գումար էին կազմում: Ստիպւած եղանք երեք ընկերներով մուրհակներ ստորագրել և ծանր տոկոսով հինգ հազար թուման էլ փոխարինաբար վերցնել:

Առաջին ամիսներին մեծ դժուարութիւններով կարողացանք գործը ծայրի հասցնել: Վեց ամսից յետոյ հազիւ կարողացանք տոկոսով վերցրած հինգ հազար թումանը վերադարձնել, բայց մեր աշխատանքի և նեղութեան համար ոչինչ էր մնում: Սիմեանի և ինձ համար ամսական 250 թուման ռոճիկ էր որոշւած: Երկուսս էլ օրական 12-14 ժամ աշխատում էինք: Մեզ չէր յաջողւում գոնէ նշանակւած ռոճիկը վերցնել: Թէ՛ Արամը և թէ՛ ես շատ դժգոհ էինք, բայց Սիմեանը միշտ ապագայ փայլուն խոստումներով էր մեզ կերակրում:

Ամբողջ ութ ամիս այս անմխիթար վիճակը շարունակւեց: Վերջին երկու ամիսների Սիմեանի ուղղամտութեան մասին սկսել էի կասկածել: Իմ այդ կասկածի վերաբերեալ Արամին վերապահութեամբ յայտնեցի և նրան խնդրեցի ստուգման համար ելք գտնել:

Արամն ինձ լիազօրեց հնարաւոր զգուշութեամբ ստուգումներ կատարել: Խնդիրը բաւական բարդ էր: Առանց փաստի որևէ վարկաբեկում կարող էր պատասխանատու հետևանքների յանգել: Անհրաժեշտ ստուգումներ կատարելու համար պէտք էր զգուշութիւն և սառնարիւն համբերութիւն:

ԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Տպագրական լայն հնարաւորութիւն ունենալով՝ մտածեցի մի շաբաթաթերթ հրատարակել: Շուրջս հաւաքւած «Յառաջադիմական»-ի բոլոր ազդեցիկ

անդամները վաղուց մի շաբաթաթերթ ունենալու անհրաժեշտութիւնը շեշտել էին: Յարմար առիթ և նպաստաւոր պայմաններ էին ինքնըստինքեան դասաւորուել: Ալէք Գալստեանի, Յարութիւն Պետրոսեանի, Հայկ Ղուկասեանի և մի քանի ուրիշների հետ խորհրդակցելուց յետոյ Յովսէփ Միրզայեանի նպաստաւոր համաձայնութիւնն էլ ստացանք: Նախ որոշեցինք թերթը հրատարակել «Աշխատանք» անունով, բայց յայտնուեց, որ այդ անունով թերթ գոյութիւն ունի կամ ունեցել է: Վերջը վճռուեց թերթը «Բանուոր» անունով հրատարակել: Որպէս պատասխանատու խմբագիր՝ ինձ նշանակեցին:

Ամենալուրջ և ամենադժուարին խնդիրը թերթի հրատարակութեան բիւջէի ապահովումն էր: Հրատարակուելիք թերթի շուրջ հաւաքուածների մէջ տնտեսապէս ապահովուածների թիւը երկուսից չէր անցնում: Շատ մեծ դժուարութեամբ հնարաւոր եղաւ թերթի 12 համարների մօտաւոր ծախսերը հայթայթել: «Ձախ հոսանք» կոչուածներից մի մասը, որոնք ընտրութիւնների ընթացքում մեզ հետ գործակցել էին, խոստացան նիւթապէս և մանաւանդ թերթի սպառման գործում օժանդակել. «Բանուոր» թերթը՝ որպէս շաբաթաթերթ, հրատարկուել սկսեց, բայց ութ ամիս չբոլորած խափանուեց: Բոլոր խոստումներն ու յանձնառութիւններն անկատար մնացին:

ՀՕԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

1922 թի կէսերին Թեհրանում կազմուել էր Հայաստանի օգնութեան կոմիտէ կամ ՀՕԿ անունով մի միութիւն: Այդ միութեան շուրջն էին հաւաքուել ժողովրդական զանազան խաւերին պատկանող մարդիկ, որոնց մեծ մասը գիտակից էր և յառաջադէմ տարր: Առանց քաղաքական աշխարհայեացք ունենալու՝ այդ կազմակերպութեան կամ աւելի ճիշտ միութեան անդամները հայրենիքի կողմնակիցներն ու բարեկամներն էին: Միութեան վարչութեան անդամները եօթը հոգի էին: Նախագահը բժիշկ Կարօ Մինասեանն էր: Վարչութեան միւս անդամները հետևեալներն էին՝ օր. Վիկտորիա Եսայեան, տիկ. Մարի Առաքելեան, Ռաֆայել Մովսիսեան, Սեդրակ Աւագեան, Հայկ Ղուկասեան և ես: Վարչութեան նպատակն էր պարսկահայ ժողովրդին տեղեակ պահել վերածնուող հայրենիքի վերաշինութեան և յառաջադիմութեան մասին: Յաճախ դասախօսութիւններ և երբեմն էլ երեկոյթներ էին կազմակերպւում: Գոյացած եկամուտներից շատ կարիքաւոր ընտանիքներ նպաստաւորւում էին:

ՀՕԿ-ի ամենագլխաւոր նպատակն էր միջոցներ ձեռք առնել, որպէսզի հնարաւորութիւն ստեղծի Իրանում եղած գիւղացի և քաղաքացի կարիքաւոր և ընչազուրկ հայերին Հայաստան փոխադրելու: Այդ ուղղութեամբ ՀՕԿ-ը տնական և անխոնջ աշխատանքներ կատարեց նպաստաւոր հող ստեղծելու: Այդ տնական ճիգ ու ջանքերի շնորհիւ էր, որ վերջ ի վերջոյ յաջողուեց շուրջ մի տասնեակ հազար կիսաքաղց և կիսամերկ հայերին հայրենիք փոխադրել:

Հայ ժողովուրդը իր կազմաւորման սկզբից և իր գոյութեան ամբողջ ընթացքին միշտ հայրենասէր է եղել: Նա իր հայրենիքի անկախութեան, ազատութեան և գոյատևման համար յարատևօրէն պատրաստ է եղել պայքարելու, պատերազմելու և իր արիւնը թափելու: Այդ ժողովրդին հետաքրքրողը և ոգևորողն ամենաառաջին հերթին իր հայրենի հողի պահպանումն ու պաշտպանութիւնն է եղել: Նա միշտ օգնական և թև ու թիկունք է հանդիսացել բոլոր նրանց, ովքեր իրենց երկրի և հայրենական օջախների պաշտպանութեան և անկախութեան համար անկեղծօրէն ջանացել, պայքարել և այդ ճանապարհին ու այդ նպատակին զոհուել են:

Այդ ջերմեռանդ և անսահմանօրէն նուիրուած հայրենասիրութիւնն է, որ հայ ժողովրդին ներշնչում է նուիրուել և կառչել բոլոր նրանց, ովքեր հայ երկրի, հայրենի հողի, նրա վերակառուցման, նրա ծաղկումի ու բարգաւաճման մասին են խօսում, նրա վերելքի և յաղթական նւաճումների մասին պատմում և նրա հայրենատենչ երգն են իրականացնում:

Դարերի ընթացքում տառապակոծ, անիրաւուած, բռնադատուած, գերուած, կողոպտուած և ստրկացուած այդ ժողովրդական տարրերին՝ բազմաչարչար գիւղացիներին և աշխատաւոր քաղաքացիներին, շատ էլ չի հետաքրքրում այն հանգամանքը, որ իր անչափ և անսահման սիրած երկրի ղեկավարները ճերմակ, կանաչ, կապույտ, կարմիր վերնազգեստ են կրում, նրանք ջերմեռանդօրէն հաւատացած են, որ այդ ամէն տեսակի հագուստներ կրող ղեկավարները հայեր, արիւնով, ոսկորով իսկական հայեր են: Նրանց՝ այդ ժողովրդական զանգուածներին քաշողն ու հրապուրողն ամենաառաջին հերթին միայն ու միայն, իրենց հարազատ հայրենիքն է, նրա հայրենի հողն ու ջուրն է, նրանց հայրենի քաղաքն ու գիւղն է, նրանց հարազատ լեզուն, դպրոցը, թատրոնը, երգն ու պարը և վերջապէս այն բոլորը՝ անշունչ կամ շնչաւոր, որ հայ տեսք, ձայն, բարբառ և շունչ ունեն:

Ահա այս էր գլխաւոր պատճառն այն անկեղծ զգացման և անչափ համակրանքին, որ պարսկահայ գիւղացին, բանուորն ու հասարակ դասակարգը սկզբից ի վեր ցուցաբերեցին վերածնուող և վերաշինուող հայրենիքի նկատմամբ:

ՀՕԿ-ը տարիների ընթացքին այդ հաւատաւոր համակրանքից անմասն չմնաց և իր նախապատրաստական օգտակար ձեռնարկութեամբ գաղթականութեան հայրենադարձի հիմքերը դրեց:

ՀԱՐՒԱԾԻՑ ՅԵՏՈՅ ԻՆՔՆԱՍՓՈՓՈՒՄ

Ալիսին գրածս երկու նամակներից ոչ մէկի պատասխանը ստանալ չկարողացայ: Անդրկովկա-

սեան երեք երկրներն էլ, 1919 թւականի վերջերից սկսած, մէկը միւսի յետևից խորհրդային իշխանութեան ծիրի մէջ անցան: Սկզբնական 2-3 տարիների ընթացքում փոստ-հեռագրական հաղորդակցութիւնը խանգարուեց: 1922-ի օգոստոսի վերջերին, մերոնցից՝ թէ՛ քրոջիցս և թէ՛ Կարապետ եղբօրիցս, նամակներ ստացանք: Այդ նամակները մեր ուղարկուած նամակների շատ ուշացած պատասխաններն էին: Անչափ էր իմ և մանաւանդ որդիակարօտ հօրս ուրախութիւնը: Ուրախութիւնից լացելով՝ ասում էր.

– Ո՞վ տէր Աստուած, պիտի գա՞յ այն օրը, երբ մենք բախտ կունենանք մեր հարազատները գրկելու և կարօտակէզ համբուրելու անոնց:

Երկու եղբայրներս և իմ միակ սիրելի քոյրս, երեքն էլ ամուսնացել էին: Դժբախտաբար միջնեկ եղբօրս՝ Արմէնի հիւանդութիւնն աւելի ուժեղացել էր: Քրոջս կարծիքով, թոքերի հիւանդութիւնը սկսել էր իր անբուժելի աւերը և սպառնում էր նրա ծաղիկ կեանքը խափանել:

Հօրս հետ միասին վճռեցինք մեր ունեցած դրամով 200 ռուբլի հիւանդ եղբօրս ուղարկել:

Բարեբախտաբար, մեր հայրենակիցներից մի հայ վաճառական, որ Թիֆլիզի հետ վաճառականական կապեր ունէր, համաձայնեց այդ գումարը մեր տուած հասցէով փոխադրել: Քառասուն օրից յետոյ մեզ յայտնուեց գումարի ստացումը, որի համար մենք չափազանց ուրախացանք:

Իմ վերջին նամակով գրել էի Արաքսուն և խնդրել էի տուածս հասցէով հետաքրքրուել Ալիսի մասին և ինձ գրել: Դժբախտաբար, Արաքսուն չէր յաջողուել Ալիսից որևէ տեղեկութիւն իմանալ:

Իմ սիրային բիւրեղանման ապրումները վերջնականապէս և թաւալգլոր խորտակուել էին: Արևափայլ խորանի վերջին սիւները յուսալքող ճարճատումով տապալուել էին: Սրտի ամայութեան և ունայնութեան սառեցնող քամին քշել, տարել և անհետացրել էր այն բոլորը, ինչ որ երիտասարդական անուրջ, սէր և եղեմական-երազային ապրում էր եղել ինձ համար:

Անրջային սիրով տոգորուած սիրտս ամայացել էր: Իմ կարօտակէզ ներաշխարհը՝ իրար յաջորդող երկու խորտակուած սէրերով, այրուել, մրրկուել և վշտակոծ ափսոսանքի քուլաներով անվերջ ծխում էր...

Ամբողջ ժամանակ՝ ցերեկ ու գիշեր, հոգեպէս տառապում և տանջւում էի: 1923 թւի սկզբից ուժեղ ցանկութիւն ունէի Ղարաքիլիսա-Թիֆլիս վերադառնալ: Այդ ուղղութեամբ շատ աշխատեցի, բայց անօգուտ: Ինչպէս հազարաւորների, ինձ էլ չը թոյլատրուեց հայրենիք վերադառնալ:

***

Հոգեկան վշտով ճխլտուած և հալածուած մարդը միշտ ինքնամոռացման և ինքնասփոփման ուղիներ է փնտրում: Ինչպէս շնչակոծ և շնչակտուր մարդը մաքուր օդ և թթուածին է փնտրում, վշտահար և յուսալքուած մարդն էլ ինքնամոռացման միջոց և հնարաւորութիւն է որոնում:

Տպարանում իմ կատարած աշխատանքը յատկապէս երկարաձգում էի, բայց այդ միօրինակ և տաղտկալի զբաղմունքը չէր կարող ինձ հոգեկան բաւարարութիւն տալ և ինքնամոռացութեան մղել:

«Բանուր» թերթի հրատարակութիւնը դադարելուց յետոյ տպարանական աշխատանքն էլ ձանձրալի, երբեմն նոյնիսկ անտանելի էր թւում: Այդ բոլորից յետոյ գործի անշահաւէտութիւնը և մանաւանդ գործակցիս հանդէպ ունեցած անվստահութիւնն ինձ յոգնեցնում, վշտացնում և ջղայնացնում էր:

Այդ օրերին տպարանի բանուորութիւնը, որոնց մեծամասնութիւնը հայեր էին, ինձ խնդրեցին իրենց կազմակերպած դասընթացքներում հայոց լեզու, պատմութիւն և գրականութիւն դասաւանդել: Համաձայնեցի: Ինձ համար շատ նպատակայարմար միջոց էր թէ՛ բանուորներին օգտակար լինելու և թէ՛ մի կերպ հետաքրքրական զբաղում ունենալու: Հետզհետէ այդ դասընթացների հետևողների թիւը շատացաւ: Ուրիշ տպարաններից և աշխատաւորներից էլ բանուորներ և աշխատաւորներ ինքնակամ և սիրայօժար նախկիններին միացան, և նրանց թիւը յիսունից անցաւ:

Անհրաժեշտ եղաւ այդ դասընթացքների համար աւելի յարմար և ընդարձակ տեղ փնտրել: Ինձ յաջողուեց Թեհրանի՝ այդ ժամանակւայ հոգաբարձութեան համաձայնութիւնը ստանալ դասընթացքների պարապմունքները հայոց դպրոցի սրահը տեղափոխելու համար: Դասաւանդութեան գործում ինձ օգնելու համար օր. Ղարաբէգեանն ու Ղազարն էլ իրենց սիրայօժար համաձայնութիւնը տուին:

Մի քանի ամսից յետոյ գրագիտութեան և պատմութեան դասընթացքներին հետևողները ձեռնարկեցին Բանուր-արհեստաւորների միութիւնը կազմակերպել: Ես ուրախ էի՝ ուժերիս թոյլատրած սահմանում նրանց օգնելու և ցուցմունքներ տալու:

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Շրջանաւարտների միութեան անդամներին, մանաւանդ Մ. Ղարաբէգեանին և Ս. Ասրեանին հանդիպելու համար դպրոց կամ հայոց ակումբն էի գնում: Այդ օրը հինգշաբթի գիշեր էր: Ենթադրում էի՝ նրանց անպատճառ ակումբում կը հանդիպեմ: Յաջորդ օրը ուրբաթ էր և հանգստեան օր: Այդ գիշերը ակումբում մի գեղարուեստական երեկոյ էր յայտարարուած: Ձեռնարկի ծրագիրը ըստ երևոյթին ճոխ էր: Ծրագրում նւագ, երգ ու պար էլ կար: Որոշեցի այդ գիշեր ակումբ գնալ և մի քանի ժամ հանգըստանալ:

Հայոց ակումբում այդ գիշեր սովորականից աւելի բազմութիւն կար: Ուզում էի Մարգարին կամ Սաթենիկին հանդիպելով՝ տեղեկանալ Շրջանաւարտների միութեան յառաջիկայ հերթական երեկոյթի տեղի մասին:

Նրանց փնտրելիս հանդիպեցի մի օրիորդի: Նրա անունը Հելէն էր: Նրան մի քանի օրեր առաջ բոլորովին պատահականօրէն հանդիպել և ծանօթացել էի իմ ծանօթներիցս մէկի տանը: Ակումբում այս հանդիպումն երկրորդ անգամն էր: Միջահասակ, երիտասարդ և փարթամ տեսք ունէր: Բարեւեցի և խօսակցութեան բռնուեցի: Ներկայիս չեմ կարող վերյիշել, թէ մեր երկուսիցս ո՞ր մէկը չէր ցանկանում միւսից հեշտութեամբ բաժանուել: Այդ գիշերը մեր խօսակցութիւնը շատ երկար տեւեց: Ակումբի ծառուղիներում իրար կողքի քայլում և երբեմն էլ այդ տեղում դրուած նստարանների վրայ նստելով՝ հանգստանում էինք: Տարօրինակ էր այդ բոլորը: Անսպասելի և շուտափոյթ մի տեսակ մտերմութիւն յառաջացաւ: Երբ երկուսս էլ շատախօսութիւնից յագեցած էինք, օրիորդը տուն վերադառնալու ցանկութիւն յայտնեց:

– Մայրս ինձ չի թոյլատրում գիշերուայ ժամը 7:30-ից յետոյ դրսում մնալ: Նրա միակ աղջիկն եմ, և ինձ համար շատ է անհանգստանում: Այսօր մի տեսակ բացառութիւն էր, որ, առանց մեծ կամ փոքր եղբօրս ընկերակցութեան, ինձ արտօնեց այստեղ գալ: Մեր բնակած տունն այստեղին բոլորովին մօտիկ է: Մայրս ինձ ասաց, որ մի ժամից յետոյ փոքր եղբօրս՝ Էլիկին, կուղարկի ինձ տուն տանելու համար և զարմանում եմ, որ ուշացել է:

– Օրիո՛րդ Հելէն, չեմ ենթադրում, որ նա ուշացած լինի: Նա կարծեմ այս տեղերն էր թափառում և ըստ երևոյթին մեզ, այսինքն աւելի շուտ քեզ էր հետևում:

– Իսկապէ՞ս, ինչպէ՞ս է եղել, որ ես նրան չեմ նկատել,– զարմանքի արտայայտութեամբ ասաց Հելէնը:

– Զարմանալու ոչինչ կայ, օրիո՛րդ, դուք խօսակցութեամբ տարուած էիք,– պատասխանեցի:– Այո՛, տարուած էիք խօսակցութեամբ... և մի գուցէ ինձնով:

– Այ թէ ինչե՞ր էք ասում: Դրան չէի սպասում:

– Նեղանալու ոչինչ կայ, օրիո՛րդ, ես կատակ արի: Եւ վերջապէս ձեր նման մի օրիորդ իրաւունք ունի մի երիտասարդի հետ ջերմ և ուշադիր խօսակցելու, և իր եղբօրը, որին անվերջ տեսնում է, մի երկու ժամով մոռանալու:

Առաջարկեցի նրան ուղեկցել մինչև իրենց տունը: Նա բոլորովին չառարկեց:

ԽԱՐԴԱԽ ԳՈՐԾԱԿԻՑ

Մեր երեք ընկերների վարձած տպարանի գործերի ընթացքը գոհացուցիչ չէր: Ամիսների ընթացքում հաշիւների վերաբերմամբ գաղտնաբար ստուգումներ էի կատարում: Ի վերջոյ ինձ համար ստուգօրէն պարզուեց, որ իմ և Արամի կողմից նշանակուած մեր գործի ընկերը՝ կառավարիչ՝ Սիմեանը, տպարանի հաշիւների մէջ կեղծիքներ էր կատարում:

Աղա-Ռըզա անունով մի թղթավաճառ մեր տպարանին հայթայթում էր անհրաժեշտ թուղթն ու թանաքը: Պարզուեց, որ շուկայի օրուայ արժէքների վրայ 15 տոկոս, մեր պր. կառավարչի օգտին աւելացնելով, մեզ թուղթ և թանաք էր ծախում:

Մեծ զգուշաւորութեամբ և գաղտնաբար փոստհեռագրատան ներկայացուած հաշուեցուցակները ստուգեցի: Պարզուեց, որ պր. կառավարիչը 25 տոկոս բարձր արժէքներով այդ հիմնարկութեանը, իսկ 25 տոկոս աւելի ցած արժէքներով մեզ հաշուեցուցակներ է ներկայացրել և նման կեղծիքներով ու խարդախութեամբ առիւծի բաժինը հանգստութեամբ և անբարեխղճօրէն գրպանել է: Կատարուած զեղծումների և խարդախութիւնների համար մեծ աղմուկ բարձրացրինք, Արամի տիկինն ու նրա մեծ քրոջ ամուսինը մէջտեղ ընկան և ամէն կերպ աշխատեցին գործն անուշի կապել:

– Մեր գերդաստանի համար,– ասացին միջամտողները,– ամօթ և խայտառակութիւն են նրա կատարած խարդախութիւնները: Խնդրում ենք մեր պատուին խնայել այդ զեղծումների հրապարակումը: Խնդիրը դատարան տանելով՝ ժամավաճառ պիտի լինէք և արիւն պղտորէք: Մենք նրան կստիպենք ձեզ հասանելիք մօտաւոր գումարները վճարել և այդպիսով խնդիրը փակել: Ձեր իրաւունքը ստանալուց յետոյ, եթէ ցանկանաք գործը շարունակել, աւելի ապահով միջոցներ ձեռք կառնենք:

Ճար չունէինք: Թէ՛ Արամը և թէ՛ ես ստիպած էինք մեզ հասանելիք գումարների կէսից մի քիչ աւելին ստանալով՝ զերծարար գործակցի վրայ թքել և նրա հետ կազմած ընկերութիւնից հեռանալ: Պարոն զերծարարը մեզ վճարուած գումարների համար փորձեց իրեն արդարացնել՝ յայտնելով, որ այդ գումարները գործի յաջողութեան համար «նւէրներ» են տրուած:

ՃԱՇԻ ՀՐԱՒԷՐ

1923 թի օգոստոս ամսումն էինք: Մի օր ինձ մօտ մի բաւական երիտասարդ կին եկաւ և յայտնեց.

– Պր. Սիրա՛ք, ինձ Հելէնի մայրը՝ տիկ. Նունիան է ուղարկել և խնդրել է, որ իրեն կողմից ձեզ ուրբաթ օրուայ ճաշին հրաւիրեմ: Նա շատ է ցանկանում, որ իր այդ հրաւէրը չմերժէք: Իրենց բարեկամներից էլ մի քանի հոգի, որոնց հաւանաբար ճանաչում էք, մասնակցելու են այդ օրուայ ճաշին: Հելէնի մայրն ու ընտանիքը շուրջ մի ամիս է, ինչ Դարուսի ամառանոցում են ապրում:

– Բայց, տիկի՛ն, ես Հելէնի ընտանիքի հետ առանձնապէս ծանօթութիւն չունեմ և դժուարանում եմ այդ հրաւէրին մասնակցելու խոստում տալ:

– Է՜հ, պր. Սարհադեա՛ն, ի՞նչ մասնաւոր ծանօթութեան մասին էք մտածում: Մի՞թէ մարդիկ հէնց առաջին օրւանից իրար հետ լաւ ծանօթութիւն և մտերմութիւն են ունենում: Բարեկամութիւնն ու մտերմութիւնը կրկնւող տեսակցութիւններից են առաջանում:

Նորից փորձեցի մերժել: Ինձ շատ տարօրինակ թւաց այդ կնոջ թախանձագին պնդումը: Յետոյ, բայց իհարկէ շատ ուշ, իմացայ դրա պատճառը: Այդ կինը ոգի ի բռին ցանկանում էր մի երիտասարդի ուշադրութիւնը իրեն գրաւել, իսկ այդ երիտասարդի ամբողջ ձգտումն ու իդէալը Հելէնն էր:

Հելէնի մայրը իր միակ աղջկայ այդ ինքնակոչ թեկնածուին բոլորովին չէր սիրում: Յետոյ իմացայ, որ Հելէնի մայրը ինձ հետ ունեցած առաջին հանդիպումից ի վեր իմ նկատմամբ ինձ համար միանգամայն անբացատրելի համակրութեամբ և լաւատեսութեամբ էր տոգորւել: Նա իր աղջկան ասել էր.

– Հելէ՛ն, աղջի՛կս, միակ երիտասարդը, որին քեզ համար արժանի եմ գտնում, Սիրաքն է: Ամէն կերպ աշխատի՛ր նրան գրաւել և քեզնով հետաքրքրել: Մինչև այժմ քեզնով հետաքրքրւողներից ոչ մէկին չեմ հաւանել:

Տւած խոստումս չդրժելու համար որոշւած ուրբաթ օրը գնացի տիկին Նունիայի հրաւիրած ճաշին: Դոքտ. Ալէք Աղայեանը, որի պարլամենտական ընտրութեան դէմ պայքարել էի, ճաշին հրաւիրւածների թւումն էր: Հելէնի մայրը նրա քեռին էր: Ներկաները, որոնց մէջ նաև դոքտ. Աղայեանը, ինձ համար անսպասելի և, եթէ ճիշտ խոստովանելու լինեմ, անհասկանալի ընդունելութիւն և յարգանք ցուցաբերեցին: Իմ անձիս շուրջ, ինձ համար բաւական տարօրինակ ուշադրութիւն և հոգածութիւն էի նկատում: Ճաշը խնամւած և հաճելի էր: Լաւ գինի էլ կար:

Բաժակաճառեր խօսւեցին և կենացներ խմւեցին: Ամենից ուշագրաւը դոքտ. Աղայեանի՝ իմ կենացը առաջարկած բաժակաճառն էր: Նա իմ «առաւելութիւնների» և ճիգ ու ջանքերի մասին ճառեց: Նրա բաժակաճառում իմ ինքնասիրութիւնը շոյող մասն այն էր, որ նա վեր հանեց իմ փախստականութեան վիճակից դուրս գալու և առանց ուրիշների օգնութեան, նոր կեանք ու ասպարէզ ստեղծելու իմ բացառիկ ջանքերը: Կարճ բաժակաճառով իմ կենաց խմողներին շնորհակալութիւններս յայտնեցի:

Ճաշն ու ժամանցը շատ հաճելի անցան: Հիւրերը երեկոյեան քաղաք վերադարձան: Հելէնի մայրը խնդրեց և ի վերջոյ ինձ ստիպեց, որ այդ գիշերը իրենց մօտ՝ Դարուսի ամառանոցը մնամ:

– Այստեղի օդն ու ջուրը սքանչելի են: Ստամոքսի անմարսողութիւն և անհանգստութիւններ ունէի, այս մէկ ամսում, կարծես բոլորովին անցան: Հիմա ինձ շատ լաւ եմ զգում: Մնացէ՛ք և գոնէ մի գիշեր այս ամառանոցի ջրից, հովից ու զովից օգտուէ՛ք: Աւելորդ անկողին և յարմարութիւն ունենք: Այդ մասին բոլորովին հանգիստ եղէք: Մեզ բոլորիս համար ձեր ներկայութիւնը շատ հաճելի է:

Չգիտեմ ուրիշների համար ինչպէս, բայց իմ և Հելէնի համար այդ օրւայ երեկոն շատ հաճելի անցաւ: Մինչև կէս գիշեր Դարուսի ծառաստաններում և աղբիւրների մօտերքում մաս էինք գալիս և մտերմօրէն խօսակցում էինք:

***

Յաջորդ օրը՝ ճաշից յետոյ, Հելէնն ինձ խնդրեց իր մօր համաձայնութիւնն առնել ինձ հետ Թեհրան գալու համար:

– Ուզում եմ մօրաքրոջս՝ Թագուհու մօտ գնալ և մի երկու օր նրա մօտ մնալ: Այստեղ ինձ համար ձանձրալի է անցնում:

Յետոյ ամաչելով և կմկմալով աւելացրեց.

– Մեր այս հարևան տիկնոջ և երիտասարդի երեսից էլ մի երկու օր կազատւեմ:

– Ովքե՞ր են այդ հարևան տիկինն ու երիտասարդը,– հարցրի հետաքրքրութիւնից մղւած:

– Տիկինն այս երիտասարդին իր ձեռքումն է պահում և նրա վերաբերեալ շատ մեծ խանդ ունի: Չգիտեմ ինչպէ՞ս է պատահել, որ երիտասարդն այդ կնոջ հաշիւ է տալիս, նոյնիսկ կարող եմ ասել, որ նրանից վախենում է:

– Բայց այդ տիկինը կարծես շատ աւելի տարիքոտ է քան երիտասարդը: Այդպես չէ՞, կամ գուցէ ես եմ սխալւում:

–Ո՛չ,– պատասխանեց Հելէնը,– չեմ կարծում սխալւած լինէք:

Մի քիչ յետոյ խորհրդաւոր տոնով և ժպտով աւելացրեց.

– Կարծեմ կինը դրամ ունի և դրանով երիտասարդին իր գերին է դարձրել:

Դարուսից մեկնելուց առաջ Հելէնի մօրն ասացի.

– Տիկի՛ն Նունիա, նախ և առաջ ձեր սիրալիր հիւրասիրութեան համար շնորհակալութիւնս եմ յայտնում և ապա կուզենայի խնդրել, եթէ թոյլ տաք, Հելէնին ինձ հետ Թեհրան տանեմ:

Յետոյ, առանց պատասխանի սպասելու, կատակելով և ծիծաղելով աւելացրի.

– Հելէնին կը տանեմ հօրս մօտ և կը ներկայացնեմ՝ որպէս իմ նշանած ու ապագայի հարսնացուն: Համաձա՞յն էք:

– Ո՛չ միայն համաձայն, այլ չափազանց երջանիկ կը լինեմ քեզ նման մի փեսայ ունենալու համար: Չգիտեմ ինչպէս պատահեց, որ մեր հանդիպման առաջին օրւանից իսկ ես քեզ որդուս նման սիրեցի: Գուցէ Հելէնը քեզ պատմած լինի, որ հազիւ մէկ տարի առաջ իմ անդրանիկ զաւակին՝ իմ դժբախտ Էմիլին, իր ջահէլ-ջիւան և ծաղիկ հասակում Ղասրէ-Շիրինում այս իմ չորացած ձեռնե-

ռովս թաղեցի: Այդ իմ դժբախտ որդու համալսարանական կրթութեան և մասնագիտութեան համար ամբողջ ունեցած հարստութիւնս ծախծխեցի: Նա, Ֆրանսիայում գիւղատնտեսական համալսարանն աւարտելով, այստեղ՝ մեզ մօտ վերադարձաւ: Նրա մասնագիտութեան համապատասխան գործ չգտնուեց: Մաքսային մասնաւոր քննիչի պաշտօնով Ղասրէ-Շիրին ուղարկեցին: Նրա պաշտօնավարութիւնը երկար չտևեց: Տիֆով հիւանդացաւ: Երանի թէ ոտքերս կոտրած լինէին, նրա մօտ գնացած չլինէի: Քիւրդերն ինձ խնդրեցին թողնել, որ իրենց խոտերով ու սեփական ճարերով նրան բժշկեն և մահից ազատեն: Ես, անբախտ և որդիական գուրգուրանքից կուրացածս, թոյլ չտուի նրանց՝ իմ զաւակին փրկել: Բժիշկների խնամքին յանձնեցի: Այդ անաստուածներին էլ տիֆով վարակած ջահէլ-ջիւան բալիս քինին սրսկեցին, սխալ դարմանում կատարեցին և նորաբողբոջ վարդ-զաւակիս սպանեցին:

Այս յայտնութիւններն անելիս խեղճ կինը լացում, մղկտում էր և իր ծնկներն ու գլուխը ծեծում: Սրտամրմուռ ափսոսանքով կարեկցում էի այդ դժբախտ կնոջը: Երբ մի քիչ հանգստացաւ, աշխատեցի մի կերպ, նրան սիրտ տալով, սփոփել:

– Տա՛ր, ուր ուզում ես տար աղջկանս,– արցունքն աչքերին ասաց նա:– Այսօրուանից դու իմ կորած անգին բալիս ես փոխարինելու:

Իր թանկագին որդու կորուստի վերայիշման այրող վիշտը մի քանի րոպէում նրան գունաթափ և դողահար էր արել: Դողդոջուն և արցունքոտ իր երկու ձեռքերով ճակատս իրեն մօտեցնելով՝ մի քանի անգամ տոչորագին և կարօտակէզ համբուրեց ինձ:

Գուցէ այդ րոպէներին նրան թւում էր, որ ի կորցրած սիրելի զաւակին նորից գտել և համբուրում է նրան:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔ

Ինչպէս Հելէնի մօրը խոստացել էի, նոյն օրը, կէսօրից յետոյ՝ Հելէնի հետ հօրս մօտ՝ եկեղեցի գնացինք: Երբ ես ամուսնութեանս թեկնածուին ներկայացրի հօրս, նա, յանկարծակիի եկած, մի քիչ զարմացաւ, բայց շատ ուրախացաւ, շնորհաւորեց մեզ և իր հայրական օրհնութիւնն էլ չխնայեց: Նա՝ որպէս թեմի քահանայ, իր ծխական ընտանիքներին համարեա բոլորին ճանաչում էր: Հելէնի ընտանիքին և նրա բազմաթիւ ազգականներին էլ ճանաչում էր: Նրա զարմանքն իրաւացի էր, քանի որ նախապէս մի քանի օրիորդների թեկնածութեան մասին բազմաթիւ անգամներ և ի միջի այլոց Հելէնի շատ մօտ ազգական մի օրիորդի մասին ինձ յայտնել և ընտրութեան ու ամուսնութեան առաջարկներ արել էր, բայց ես միշտ նրան պատասխանել էի, որ դեռ ժամանակ ունեմ այդ առթիւ մտածելու և որոշում կայացնելու համար:

1923 թի 17 օգոստոսին Հելէնի հետ իմ ամուսնութեան օրն էր նշանակուած: Ճաշից յետոյ՝ ժամը 3-ին, Դարուսում հրաւիրել էինք հարսանքաւորների 50-60 հոգու մի բազմութիւն: Հարսանիքի և ամուսնութեան այս ծիսակատարութիւնները տարօրինակօրէն շտապ կարգով կատարուեցին, և ես համարեա հնարաւորութիւն էլ չունեցայ իմ բարեկամ-ընկերներին հարսանեկան հրաւէրներ ուղարկելու: Հարսանիքին մասնակցողների շարքում կային հայրս, իմ լաւ ընկերս՝ Սամուէլը, և իմ բարեկամ Արամ Մազլումեանը: Մեր ամուսնութեան քաւորութեան համար դոքտ. Ալ. Աղայեանն իր թեկնածութիւնն էր դրել: Այդ սիրայօժար թեկնածութեանը մենք ուրախութեամբ համաձայնուեցինք:

Հարսանքաւորներն առաջարկեցին մեզ Վանագի Ս. Մինաս եկեղեցում ամուսնանալ: Հայրս ու քաւորս, ինչպէս և մենք ամուսնացողներս, այդ առաջարկն էլ սիրայօժարութեամբ ընդունեցինք: Մնում էր Դարուսից Վանագ գնալ ու վերադառնալու հարցը լուծել: Հարսանքաւոր բոլոր օրիորդներն ու տիկինները միաբերան աղաղակեցին.

– Էշեր վարձել, նրանց հեծնելով ու դհոլ-զուռնա ածելով, ճանապարհին տեղ-տեղ ցած իջնելով և պար գալով, քէֆ անելով, սազանդար նուագելով և նորից էշերին նստելով՝ Վանագ հասնել և պսակի կարգը կատարելուց յետոյ նոյն թափօրով և կարգով Դարուս վերադառնալ:

Այս առաջարկը դնող տիկիններն ու օրիորդները մեծամասնութիւն էին կազմում: Նրանց այդ առաջարկը պահանջող աղաղակների փոխուեց և ի վերջոյ ծափահարութիւններով և ուռաներով վաւերացուեց:

Էշաւորների կարաւանը Դարուսից Վանագ ճանապարհուեց: Արտակարգ ոգևորութեամբ, սազ ու պարով, դհոլ-զուռնայով, երգ ու կանչերով, 15 կիլոմետրանոց ճանապարհը կտրուեց և ժամը 6-ի մօտերքը Վանագ ժամանեց: Վանագի տէր Սահակ քահանան և հայրս պսակը կատարեցին: Միշտ հեզաբարոյ էշերի կռնակին նստած, հարսանքաւորները նոյն ուրախ և զարթ տրամադրութեամբ, երգ ու պարով և սազանդարով մեզ Դարուս վերադարձրին և մինչև առաւօտ արտակարգ ուրախութեամբ քէֆ անելուց յետոյ անհուն ափսոսանքով մեզնից բաժանուեցին: Հարսանիքի ամբողջ տևողութեանը բազմաթիւ բաժակաճառ խօսուեցին, և բարեմաղթութիւններ կատարուեցին:

ՆՈՐ ԳՈՐԾԻ ՎՐԱՅ

Ամուսնութիւնիցս երկու շաբաթ յետոյ իմ բարեկամ Մազլումեանն Եւրոպա գնաց՝ համալսարանի ճարտարապետական ճիւղի դասընթացը վերջացնելու և իր աւարտական վկայականը ստանալու համար:

Երկու տարուայ ընթացքին նա թղթակցութեամբ բաւական շատ յաջողութիւն էր ձեռք բերել և ենթադրում էր ամենաուշը մինչև երկու տարի ստանալ իր հետևած ճիւղի վկայականը:

Նրա մեկնելուց յետոյ Սիմեանն ինձ առաջարկեց տպարանի գործում նորից իր հետ ընկերանալ: Շատ էի ցանկանում անգործ չմնալու համար նորից ընկերանալ, բայց, քանի որ նրա ուղղամտութեան մասին վստահութիւնս խախտուել էր, մերժեցի:

Երկու ամիս յետոյ՝ ՀՕԿ-ի նախաձեռնելիք երեկոյթի նախապատրաստական փորձերի ընթացքին, հանդիպեցի երեկոյթի աշխատանքներին մասնակցող իմ բարեկամ-ընկերներիցս մէկին՝ Լևոն Թադէոսեանին: Երբ տեղեկացաւ իմ՝ անգործ լինելու մասին, ինձ հետևեալը առաջարկեց.

– Սիրա՛ք, դեսպանատանը գանձապահի պաշտօնեայի տեղը թափուր է մնացել: Այդ գործի վրայ եղած ծառայողը մի շաբաթ առաջ Ռուսաստան վերադարձաւ: Սնդուկի գործն էլ վզիս է ընկել: Առանց այն էլ ես ծանրաբեռնուած եմ: Մեր գլխաւոր հաշւապահը մի ռուս մարդ է: Շատ պատուական մարդ է, բայց որպէս պաշտօնեայ՝ առանձնապէս գովելի չէ: Վատութիւնը կայանում է նրանում, որ նա խմել շատ է սիրում, և նրա գործերի մեծ բաժինն էլ ստիպւած եմ ես կատարել: Ինձ յանձնարարուած է տեղացիներից մէկին ներկայացնել: Ինչպէս գիտես, վերջին 2-3 տարիների ընթացքում տեղացիներից երեք-չորս հոգի ընդունած են գործի: Անմիջապէս մի դիմում գրի՛ր: Յոյս ունեմ, որ դիմումդ չի մերժուելու, մանաւանդ որ դեսպանատանը ծառայող մեր հայերը՝ Աւագեանը, Առաքելեանը, Օրբելեանն ու Աղաբէգեանն էլ քեզ ճանաչում են, և եթէ անհրաժէշտ լինի, կարող են քեզ երաշխաւորել:

– Լաւ, կը փորձեմ,– պատասխանեցի բարեացակամ ընկերոջս՝ Լևոնին:

Դիմումս ընդունուեց, և 15 օր յետոյ դեսպանատան գանձապահի պաշտօնով գործի անցայ: Գործի կատարումը որևէ դժուարութիւն չունէր, միայն ռուսերէն լեզուի թերի ծանօթութիւնն ինձ նեղում էր:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԾԱՐԱԻՆ ՈՒ ՆԵՐԳԱՂԹԻ ՓՈՐՁԵՐԸ

1928 թիւն էր: Մայր հայրենիքից հասնող նորանոր լուրերը՝ նրա բարգաւաճման և վերելքի մասին, ինչպէս ուրիշ օտար երկրներում ցիր ու ցան եղած հայ ժողովրդին, այնպէս էլ այս երկրում եղած գիւղացի և քաղաքացի աշխատաւոր տարրերին արտակարգօրէն ոգևորում և հրապուրում էին: Իրանի հայ ազգաբնակչութեան ոչ բարեկեցիկ ապրուստ ունեցող մարդկանց ճնշող տոկոսը հետզհետէ աճող անդիմադրելի մոլեգնութեամբ ձգտում էր վերադառնալ մայր հայրենիք:

Բնականաբար, այդ անդիմադրելի ցանկութիւնը յաճախ իր արձագանքն էր գտնում Հայաստանի ներգաղթի յատուկ հիմնարկներում: Այդ ներգաղթի հիմնարկից կամ կոմիտէից խոստումներ էին տըրւում հայրենիքի դռները բացելու և հայրենակարօտ բազմութիւններին Հայաստանի գորովագութ ծոցում ընդունելու համար:

Ամէն օր հարիւրաւոր դիմումներ հասնում էին խորհրդային դեսպանատան հայկական գործերի վարիչին, որն իր հերթին ՀՕԿ-ի կազմակերպութեան վարչութեան հետ խորհրդակցութիւններ էր կատարում՝ խնդրին հնարաւոր ելք գտնելու համար:

Բազմաթիւ դիմումներից յետոյ որոշուեց մի նախապատրաստական քայլ վերցնել խնդրի հնարաւոր ստուգման և ուսումնասիրութեան համար:

1928 թւի ապրիլ ամսի սկզբին, պատշաճ յանձնարարականով, ինձ առաքելութիւն տրուեց մէկ ամսով գնալ նախ Հայաստան (Երևան) և ապա Թիֆլիս և ի վերջոյ անհրաժէշտ ու հնարաւոր պարագային՝ Մոսկւա՝ ներգաղթի հնարաւորութիւնն ստուգելու և այդ առթիւ անհրաժէշտ դիմումներ կատարելու նպատակով: Իմ այս առաքելութեան յաջողութեան համար այդ ժամանակւայ Խորհրդային հիւպատոս Պլատը՝ ծագումով լատվիացի, չափազանց սիրալիր և սրտացաւ օժանդակութիւն ընծայեց:

ԵՐԵՒԱՆՈՒՄ

Երևան հասնելուց յետոյ հիւրանոց իջևանեցի: Մի փոքր հանգստանալուց յետոյ հեռախօսով կապւեցի Այգեստանի իմ նախկին սիրելի ընկերներից Խէրանեանի հետ: Նա, անմիջապէս հիւրանոց հասնելով, ինձ ստիպեց իմ երկու թեթև պայուսակներիս հետ իրենց տունը տեղափոխւել: Մեր երկուսի հանդիպումը շատ սրտառուչ էր: Գրկախառնուել էինք և ափսոսում էինք իրարից բաժանուել: Առաջին հերթին նա սկսեց.

– Այս ի՜նչ անսպասելի հրաշք է, որ կատարւում է: Մեր բաժանումից յետոյ ամբողջ 13 տարիներ են անցնում, և մենք, այնքան շատ հարազատ ընկերներս, այսքան երկար ժամանակ իրարուց կտրուած և անտեղեակ ենք մնացել: Այդ ինչպէ՞ս է, որ գոնէ մի նամակ էլ չես գրել և ողջ ու առողջ լինելուդ համար մի լուր չես հաղորդել:

– Սիրելի՛ Վահան, նախ որ հասցէդ չունէի, և յետոյ կրկնակի նահանջներից մեր կրած հարւածներն այնքան ուժեղ են եղել, որ նոր և հազիւհազ ենք կարողացել սթափւել: Այդ մասին խօսելիքներ շատ ունեմ: Խնդրում եմ պատմել քո և ձերոնց մասին: Ծնողներդ և քոյրդ ինչպէ՞ս են: Ամուսնացե՞լ ես, թէ՞ ոչ: Մեր միւս ընկերները ի՞նչ են անում: Նրանցից ովքեր կան այստեղ...

– Սպասի՛ր մի քիչ: Հարցերովդ ինձ կարգին ոմբակոծեցիր: Գնանք մեզ մօտ: Ճանապարհին և տանը կը պատմեմ այն ամէնը, ինչ քեզ կը հետաքրքրի:

Աբովյան (նախկին՝ Աստաֆյան) փողոցը Երևանում (լուս. 1920 թ.)

Մի պայուսակ և մի փոքր ճամպրուկ ունէի: Ծանր չէին: Ձեռներս վերցրած՝ փողոց իջանք և կառք նստելով՝ հասանք Վահանի տունը:

Ընկերոջս տունը Աբովեան պողոտայի վրայ էր: Չորս սենեակներից բաղկացած մի հանգստաւէտ և լուսառատ բնակարան էր: Սենեակների կահաւորումից եզրակացրի, որ ընկերոջս ապրուստի պայմանները գոհացուցիչ պիտի լինէին:

– Ամուսնացել եմ,– ասաց Վահանը,– մի տղայ և մի աղջիկ ունեմ: Մայրս ու քոյրս ողջ և առողջ են: Դժբախտաբար, հայրս մահացել է: Թէ՛ ես և թէ՛ կինս Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատումն ենք աշխատում: Աշխատակցում եմ Երևանի թերթերին և մանաւանդ «Խորհրդային Հայաստան» օրաթերթին: Վիճակիցս էլ գոհ եմ:

Չափազանց հետաքրքրութեամբ կլանում էի ընկերոջս՝ ինձ հաղորդած նորութիւնները, բայց ինձ արտակարգօրէն հետաքրքրող խնդրի մասին նա ոչինչ չասաց: Երբ նա հազիւհազ ինձ տուած նորութիւնները հաղորդելուց յետոյ մի երկվայրկեան ուզում էր շունչ առնել, հարցրի.

– Իսկ ի՞նչ վիճակի է մեր նախկին սիրելի ընկեր Աղասին:

– Խանջեանի մասին է հարցումդ: Նրան էլ պիտի հասնէի: Բոլորովին իրաւացի ես նրա մասին շուտափոյթ տեղեկութիւն ուզելուդ համար: Հետևաբար խնդրում եմ համբերութեամբ լսել:

Վանում Աղասին մեր ուսանողական միութեան ժրաջան և պարտաճանաչ ընկերներից էր: Բայց գոնէ ես, խոստովանում եմ, չէի ենթադրում, որ նա ի վիճակի պիտի լինէր իր ժրաջանութիւնն ու ընդունակութիւնն այս աստիճանի արագընթաց կարգով զարգացնել և իրենց հասցնել այսօրուայ բացառիկ դիրքին: Լսած կը լինես, անշուշտ, որ նա ներկայիս կուսակցութեան առաջին քարտուղարն է: Իսկ նման աստիճանի և պատուի հասնելը չափազանց քչերին է յաջողւում. ի դէպ, անմիջապէս պիտի ասեմ, որ նա տքնաջան աշխատող և արտակարգօրէն ընդունակ է: Նա երկու համալսարան է աւարտել և կուսակցական տեսաբան է: Լենինը նրան սիրում էր և չափազանց գնահատում: Անհրաժեշտ եմ համարում յայտնել նաև ամենակարևորը: Բազմակողմանի զարգացման և այսօրուայ իր դիրքին ու աստիճանին հասած՝ նա նոյն համեստ և պարկեշտ Աղասին է մնացել: Իրեն չի կորցրել: Հպարտ և անմատչելի չէ: Խիստ բազմազբաղ և անխոնջ աշխատող է: Եթէ հնարաւորութիւն ունենայ, ոչ մէկին չի մերժի իր աշխատասենեակումն ընդունելու և նրա գանգատն ու ցաւն անձամբ լսելու: Նրա առաւելութիւնների մասին երկար, շատ երկար կարելի է խօսել, բայց որպէսզի կարողանամ համառօտել, պիտի յայտնաբերեմ նրա նկարագրի ամենաէական մասը՝ չնայած իր պաշտօնին և կուսակցական առաջնակարգ և պատասխա-

նատու դիրքին, նա հայ է մնացել, իսկական հայասէր և հայրենասէր հայ...

Վահանն այստեղ կանգ առաւ: Ըստ երևոյթին, նա ցանկանում էր Խանջեանի մասին ուրիշ յայտնութիւններ էլ անել, բայց կարծես տատանւում էր: Ի վերջոյ վճռեց յայտնել նաև այն, որի համար մտահոգ էր:

– Սիրելի՛ Սիրա՛ք, ճանապարհին ինձ յայտնեցիր, որ քեզ այստեղ՝ Երևան, և նրանից յետոյ Թիֆլիս ու Մոսկւա բերող ամենագլխաւոր պատճառը ներգաղթի հարցն է: Հետևաբար այն, ինչ ուզում եմ ասել, քեզ չափազանց պիտի հետաքրքրի, որովհետև անմիջականօրէն քո առաքելութեան խնդրին է կապւած: Աղասին՝ որպէս իսկական և ճշմարիտ հայ և հայրենասէր, չափազանց ցաւում է այն անարդարութեան համար, որ կատարւել է հայ ժողովրդի հաշւին: Նա դժգոհ, շատ դժգոհ է ներկայ Հայաստանի անճիշտ ու անարդար սահմանագծումի և սահմանաորոշման համար: Նա անիրաւացի և անգութ է համարում մեր հայաբնակ, փախստական և անբաժանելի հողամասերի անջատումը, անիրաւացի ու անարդար կտրատումը: Նա իր հայրենի երկրի՝ Հայաստանի անանջատելի և անբաժան մասն է հաշւում Ախլցխան, Ախլքալաքը, Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և բոլոր այն հողամասերը, որոնք մեր ներկայ հայրենիքի տրամաբանական ու բնական սահմաններում պիտի լինէին: Դրա համար էլ նա Մոսկւա և Լենինգրադ է գնացել՝ խօսելու, բացատրելու և պահանջելու կատարւած կոպիտ և անարդար սխալմունքի սրբագրումը:

– Ուրեմն Աղասին Երևանում չէ՞,– յանկարծակիի եկած և վշտահար՝ հարցրի ես:

– Ո՛չ, 15 օր է, ինչ նա մեկնել է՝ իրեն շարունակ անհանգստացնող և չարչրկող հարցը լուծելու և ցանկալի արդիւնքին հասնելու համար:

– Հայաստան, բազմամարդ Հայաստան, ընդարձակւած և շնչելի Հայաստանն է նրա ձգտումն ու բոլորանուէր ճիգն ու ջանքը: Նրա հայրենասէր սիրտը տանջւում է, երբ ամէն կողմից լսում է հայրենակարօտ ազգակիցների ճիչն ու ճւոցը. «Հայրենիք վերադառնալ ենք ուզում: Մեր հայրենիքի դռները բացէ՛ք: Մեզ մեր հայրենիքի գիրկն ընդունէ՛ք: Մենք մեր հայրենի հողի վրայ ենք ցանկանում ապրել, աշխատել ու մեռնել...»:

– Ներողութիւն եմ խնդրում, վաղեմի և ազնի՛ւ ընկերս,– ասացի Վահանին,– եթէ ես ինձ թոյլ եմ տալիս մի քիչ զարմանալու յայտնութիւններիդ վրայ: Ճիշտ է, որ ես երկար տարիներ առաջ մեր կրտսեր ու եռանդուն ընկերոջը՝ Աղասի Խանջեանին, ճանաչել եմ որպէս գործի և պարտականութեան նւիրւած չափազանց ազնւասիրտ մի հայի: Զարմանքիս պատճառը կայանում է մի հիմնական խնդրում: Չէ՞ որ այդ մեր նախկին ընկերը՝ Աղասին, ամբողջ 12-13 տարիների ընթացքում եփւել և թրծւել է ձեր ներ-

Աղասի Խանջյան

կայ կուսակցութեան՝ կոմունիստական կուսակցութեան քուրայում: Այդ քուրայում թրծւած կուսակցականները համայնավարական, համաշխարհային, համաքաղաքացիական և այլ ընդհանրական սկզբունքներով են դաստիարակւած: Նրանց համար հիմնականում, բոլոր ազգութիւններին պատկանող մարդիկ՝ հայ, վրացի, ազերբէյջանցի, ուկրաինացի, բելոռուս, ղազախստանցի, թուրքման, թաթար և բազմաթիւ և բազմազան ազգութիւններից ծնւած և հասակ նետած մարդ-անհատները, մէկ հայրենիք պիտի ունենան: Ուզում եմ ասել, որ համայնավար երկրներում և համայնավար վարչակարգի տակ ապրող բոլոր ազգութիւնները մէկ ընդհանուր հայրենիք պիտի ունենան: Նման պայմաններում Խանջեանի նման մի յայտնի համայնավար-կուսակցական, որը արժանացել է մի ամբողջ ժողովրդի՝ հայ երկրում ապրող ազգաբնակչութեան առաջնորդ-ղեկավարի դիրքին, կարո՞ղ է և ի վիճակի՞ է քո ասութեամբ, շեշտւած, նւիրւած հայրենասէր լինել:

– Առաջադրածդ հարցը կատարելապէս հասկանալի և տեղին է,– աճապարեց ինձ պատասխանել իմ նախկին մտերիմ ընկերը,– խնդրում եմ նորից ինձ լսելու սիրալիրութիւնն ունենաս: Համայնավարական կարգերն երբեք չեն ժխտում իրենց իրաւակարգի ծիրում ապրող ազգութիւնների ինքնորոշման իրաւունքները: Ընդհակառակը, նրանք բոլորը համայնավարական դրութեան ապահովու-

թեան և ամրապնդման հիմքերն և վերջնական յաղթանակը տարբեր ազգութիւնների մտաւոր, կուլտուրական, ընկերա-հասարակական և տնտեսական ընդունակութիւնների ազատ և անկաշկանդ զարգացման և յառաջադիմութեան ու բարգաւաճման մէջն են փնտրում: Այս ընտանիքում ապրող ազգերը հիմնականում բոլորն էլ ֆիզիկապէս և կուլտուրապէս պէտք է առողջ և իրահաւասար լինեն, նրանցից որևէ մէկը չպէտք է առանձնաշնորհեալ լինի և միւսին զրկանքի ու շահագործման ենթարկի: Հետևաբար, բոլորովին զարմանալի չէ, եթէ մեր բոլորիս սիրելի և յարգելի ընկեր՝ Աղասին, ցանկանում է այդ ընտանիքի անդամներից մէկի, այս պարագայում հայ ժողովրդի համար ապահովել իրաւական և անհրաժեշտ իրաւահաւասարութիւնը: Աղասին հայ ժողովրդից անիրաւացիօրէն կողոպտուած իրաւունքների և նրա արդարացի պահանջների պաշտպան-իրաւաբանն է: Նա հայ ազգի հարազատ և արժանի զաւակն է: Նա իր ծնող ժողովրդի պարծանքն է: Նա անգնահատելի հայասէր և հայրենասէր է:

***

Նոյն երեկոյեան Վահանն ինձ ծանօթացրեց իր տիկնոջ հետ: Ընթրիքի սեղանի շուրջ հաւաքւել էր նրանց ամբողջ ընտանիքը: Վահանի մայրն ու քոյրն ինձ դիմաւորեցին աննկարագրելի հրճւանքով: Տարիներից յետոյ Վահանի մօր հանդիպումն ինձ հետ նրա հին վշտերը նորոգեցին: Լաց եղաւ: Չէ՞ որ նրա անդրանիկ աղջիկը՝ իմ եղբօրակին դժբախտ Հայկանուշը՝ մեր առաջին աղէտալի նահանջի զոհերիցն էր եղել: Ես ու իր տղան աշխատեցինք նրան մխիթարել և մի կերպ խաղաղեցնել նրա բորբոքած հին վշտերը:

– Մայրիկ,– ասացի նրան,– քեզնից շատ աւելի դժբախտները կան: Պատերազմը մեր վասպուրականցիներիս համար մի ահռելի չարիք եղաւ:

Սրտակեղեք և վշտահար մտապատկերումով դժբախտ Անուշին ու նրա հօրն ու մօրը վերյիշելով՝ շարունակեցի.

– Կասկած չունեմ, որ մեր փողոցից ոչ հեռու ապրող կոզակ Սահակ աղային յիշելիս կը լինես: Նահանջի ժամանակ նրա ամբողջ ընտանիքը զոհւեց: Նրանց շէն տունն էլ իրենց հետ հողին հաւասարւեց: Բոլորը գնացին, անհետացան... Փա՛ռք տուր, որ մէկի փոխարէն ներկայիս երեքն ունես, այս սիրուն, անուշիկ թոռներիդ իրենց մօր հետ միասին ունես:

Վահանի կինը՝ երիտասարդ, փարթամ և ներկայանալի տեսք ունէր. համալսարանաւարտ էր, ընդհանուր զարգացմամբ օժտուած և հաճելի խօսակից: Ընթրիքի սեղանն էլ ճոխ էր: Հայաստանի «Արարատ տրեստի» հռչակաւոր գինին սեղանը զարդարում էր: Իրիկնապահի ժամանակը շատ հաճելի և արագ անցաւ: Նրանց բոլորի հարցասիրութեանն աշխատեցի ըստ կարելւոյն բաւարարութիւն տալ:

***

Բախտի բերմամբ յաջորդ օրը կիրակի էր: Ընկերս ու նրա կինը խոստացան փոխնիփոխ ինձ ընկերակցել Երևանի, մեր մայր հայրենիքի արագընթաց թափով վերաշինւող և ընդարձակւող մայրաքաղաքի տեսարժան վայրերը ցոյց տալու համար:

Առաջին նահանջի ժամանակամիջոցին ես Երևանը տեսնելու պատեհութիւնը չէի ունեցել: Ընկերս ինձ հետևեալ տեղեկութիւնները հաղորդեց.

– Մեր հայրենիքի մայրաքաղաքը լինելու փառք ու պատւին ունեցող այս քաղաքը մինչև 1920 թիւը ծուռ ու մուռ և փոշոտ ու կեղտոտ փողոցներից և մի շարք անշուք տներից բաղկացած փոքր քաղաք էր: Անցնող 7-8 տարիների ընթացքում հնամեայ և անշուք քաղաքն իր տեսքը հիմնովին փոխել է: Այս նոր և լայն պողոտաները, նրանց եզերքում բարձրացած տներն ու շէնքերը, հրապարակ-պարտէզները, ծառուղիներն ու ջրառատ գեղեցիկ աւազանները, հիմնարկներն ու արձանները, բոլորը նորակառոյց են: Եթէ նոր պատերազմ դիմագրաւելու դժբախտութիւնը չունենանք, մեր այս նորաստեղծ մայրաքաղաքը մինչև 10 տարի միանգամայն անճանաչելի կը լինի: Բազմաթիւ ճարտարապետներ և շինարարական մասնագէտներ զբաղուած են հարիւրաւոր ծրագրուած յատակագծերի, հիմնարկների, հասարակական վայրերի պատրաստութեամբ և գեղազարդմամբ: Մեր Երևանը Կովկասի քաղաքների նորահարսը կը դառնայ: Ժողովրդական մշակոյթի, գեղարուեստների և արուեստի տները՝ թատրոնի, օպերայի, կինոյի, երգ ու պարի, բալետի, մատենադարան-թանգարանների նորակերտ ու հոյակապ շէնքերն ու պալատները մեր նորաստեղծ և օրէցօր ծաւալւող մայրաքաղաքը գեղազարդելու են: Մեր էլեկտրակայանները իրենց լուսաւորութեան հեղեղով մեր սիրելի Երևանն ու նրա լայնածաւալ շրջակայքը փառահեղ և արևանման լոյսերով են ողողելու: Հայ ժողովրդի ազատամարտի հռչակաւոր ախոյեան Աբովեանի անունով կոչւող այս գեղեցիկ պողոտան, որի երկայնքով ներկայիս քայլում ենք, մինչև մեծ հայրենասէրի ծննդավայրը Քանաքեռն է երկարաձգւելու: Նա լայնանիստ և հսկայածաւալ արձանը շուտով այս պողոտայի կրծքին է բազմելու:

Մունջ և անխօս, անյագ ծարաւով կլանում էի ընկերոջս նկարագրութեան ամէն մի բառը և յափշտակւում էի նրա ոգևորութեան թափով:

Ամբողջ երեք ժամ Վահանի հետ ոտքով ման էինք գալիս: Փոխադրական միջոցներից գրեթէ չօգտւեցինք: Ինձ չափազանց հետաքրքիր էր նորաստեղծ մայրաքաղաքի ամէն մի անկիւնն այցելել և տեսնել: Դրա համար էլ անհրաժեշտ էր ոտքով քայլել:

Կէսօրուան մօտերքը Վահանն ինձ ասաց.

– Ենթադրում եմ, յոգնած պիտի լինես: Տուն վերադառնանք: Ճաշելուց յետոյ մի փոքր կը հանգըստանաս և ժամը 4-ին, այս անգամ կնոջս հետ, պտոյտի դուրս կը գաք: Դիպուածաբար այսօր, այդ ժամին Գրողների միութեան հաւաքոյթը պիտի կայանայ: Եթէ հնարաւոր լինի 7-ից առաջ այստեղ լինել, քեզ կը ծանօթացնեմ մեր գրական հանճարների հետ: Վարպետը, Չարենցը, Դէմիրճեանը և ուրիշ բազմաթիւ հին ու նոր գրողները այնտեղ կը լինեն: Ժամը 8-ին, 8 1/2-ին այնտեղից կամացուկ կը ծլկենք և Պետական թատրոնը կը գնանք:

Մեր նախկին դերասանների կողքին աւելացել են նոր և ընդունակ երիտասարդներ: Թատերական անսամբլը մեր փառքերից մէկն է: Նրանք սքանչելի յաջողութեամբ կատարում են թատերական դժուարին կտորներ: Նրանց դերասանական ընդունակութիւնն ու տաղանդը նոյնիսկ օտար ականատես-այցելուներին հիացմունք են պատճառել: Ամբողջ մի ամիս է, ինչ Շէքսպիրի «Համլետ»-ն է բեմադրւում: Չնայած դրան՝ դարձեալ մեծ դժուարութեամբ է տոմսակ ճարւում: Այսօր առաւօտեան թատրոնում աշխատող ընկերներիցս մէկին հեռախօսեցի և խնդրեցի մեզ համար երեք տոմսակ պահել: Սկզբում դժուարացաւ խօսք տալ, բայց երբ յայտնեցի, որ արտասահմանից ժամանած հիւր ունեմ, չկարողացաւ մերժել:

1918 թւին Երևանի ազգաբնակչութեան համրանքը 25 հազարից չէր անցնում: Այդ թիւը ներկայումս տասնապատկւել և տարէցտարի անվերջ աւելանում է: Բնակչութեան անգրագիտութեան դէմ խիստ մեծ պայքար է սկսւել: Ժողովրդի կրթական մակարդակն անհամեմատաբար բարձրացել է, նա ինքն է հետաքրքրւում իր մտաւոր պահանջը բաւարարելու համար: Նրա համար թատրոնը, համերգը, օպերան, բալէտը, պար ու երգը և կինոն հացի չափ անհրաժէշտ մի պահանջ են դարձել:

***

Վերածնւող հայրենիքի մայրաքաղաքում իմ կրած տպաւորութիւններն ինձ անսահմանօրէն ոգևորում էին: Կեանքը ամենուրեք եռում էր: Ամէնքը ձգտում էին յառաջխաղացման ընդհանուր երթից յետ չմնալ: Ամէն մէկը տոգորւում էր մի աշխատանքով, մի ձգտումով: Այդ ճիգ ու ջանքերի նպատակը հայրենիքի վերակերտումն ու վերածաղկումն էր:

Գրողների ակումբում և Պետական թատրոնում ստացած տպաւորութիւններս ինձ համար բոլորովին անսպասելի էին: Ամենից ազդուն և տպաւորիչը մշակութային այդ օջախներում տիրապետող հայկական ոգու անխառն հարազատութիւնն էր: Հայ հարազատ խօսքը ու սքանչելի լեզուն կատարեալ և բացարձակ տիրապետում էին ամենուրեք:

Վահանը այդ օրւայ (երկուշաբթի) ժամը 12 1/2-ին Ս. Տէր-Գաբրիէլեանին հանդիպելու և խորհրդակցելու համար ժամանակ էր վերցրել:

Տրամադրելի չորս ու կէս ժամ ազատ ժամանակ ունէի: Թէ՛ ընկերս և թէ՛ նրա տիկինը ստիպւած էին այդ ժամերին իրենց պաշտօնավայրում լինելու: Տնից դուրս գալով՝ որոշեցի Երևանի զանազան մասերում շրջագայել: Ընկերոջս բնակած տան համարը մտքումս պահել էի: Շփոթւելու պարագային կարող էի հարցնել և գտնել: Առաւօտեան ժամը ութից յետոյ երթևեկողների թիւը քչացել էր: Անցեալ օրւայ և մանաւանդ գիշերւայ խռնումը չկար: Այդ պարագան ինքնին հասկանալի էր: Պետական և վարչական ծառայողները, գործարանների և աշխատավայրերի բանւորները, դպրոցականներն և ուսանողները, վերջապէս ամէն տեսակի աշխատանքի մարդիկ մի ժամ առաջ գնացել էին իրենց հիմնարկութիւններն ու գործատեղին:

Տասնեակ տարիներից յետոյ հրճւանք էի զգում ամենուրեք լսելու հայ լեզուի քաղցրանուշ հնչող խօսակցութիւնները: Ամէն տեղ հայ և հայերէն խօսակցութիւն: Իմ՝ չորս ժամւայ պտոյտների ամբողջ տևողութեանը հազիւ մի քանի անգամ ռուսերէն խօսակցութիւն լսեցի:

Քաղաքի կարգ ու կանոնին և երթևեկութեան հսկող կարգապահ ուժերը բոլորը հայեր էին: Երբ ինձ անհրաժեշտ եղաւ Երևանի շուկայի ուղղութիւնն և տեղն իմանալ, մօտեցայ կարգապահ միլիցիոներին և նրանից խնդրեցի ինձ օգնել: Նա շատ սիրալիրութեամբ և մաքուր, գրական հայերէնով ինձ անհրաժէշտ տեղեկութիւնները տւեց, և ես, առանց դժուարութեան, տրւած ցուցմունքի համաձայն, գտայ թէ՛ հաւաքական և թէ՛ սովետական տնտեսութիւնների խանութ-կենտրոններն և թէ ազատ շուկան:

Ինձ համար միանգամայն անսպասելի էր ազատ շուկայում գտնւող ամէն տեսակ ապրանքների և մանաւանդ կենսամթերքների ճոխութիւնն ու առատութիւնը. ամառւայ վերջաւորութեան այդ ժամանակաշրջանում, մանաւանդ ամէն տեսակի պտուղներ՝ տանձ, խնձոր, դեղձ և խաղող, առատօրէն յորդում էին:

Ախորժակի անզուսպ գրգռում զգացի: Մէկական կիլօ տանձ, խնձոր և խաղող գնեցի: Թեհրանի շուկայի արժէքների հետ համեմատելով՝ եզրակացրի, որ մի քիչ էլ աւելի էժան էին:

Երեք կիլօ պտուղով ծանրաբեռնւելուց յետոյ գնումներիս համար զղջացի, քանի որ ստիպւած էի քաղաքի շրջագայութիւնս կարճել: Թէև շատ անուշ և ցանկալի էր հայրենիքիս այդ քաղցրահամ պտուղները ձեռքերումս և սրտիս վրայ կրել, բայց ստիպւած էի դրանք ընկերոջս բնակարանը հասցրնել:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՀԱԿ ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ ՀԵՏ

Ուղիղ ժամը 12 1/2-ին ընկերոջս հետ միասին Սահակ Տէր-Գաբրիէլեանի[32] գրասենեակումն էինք: Վահանն ինձ ծանօթացրեց նրա հետ և բացատրեց մեր տեսակցութեան նպատակը: Ս. Տէր-Գաբրիէլեանն այդ ժամանակներում Հայաստանի օգնութեան կոմիտէի կենտրոնական վարչութեան և ներգաղթի հիմնարկի ընդհանուր վարիչն էր: Նա սիրուած և ժողովրդականութիւն վայելող մի անձնաւորութիւն էր:

– Ընկե՛ր Տէր-Գաբրիէլեան,– սկսեց Վահանը,– Սիրաք Սարիաղեանը Վանի՝ մեր հին և յարգած անդրանիկ ընկերներիցն է: Մենք բոլոր վանեցի ընկերներս, որոնց թում և մեր ներկայ վետերան ընկեր Աղասի Խանջեանը, նրան շատ պարտական ենք: Մեր կուսակցական՝ սոցիալ-դեմոկրատական առաջին ուսումն ու զարգացումը մեծ մասամբ նրա ղեկավարութեան ներքո ենք ստացել: Նա մեր հարևան երկրի Իրանի մայրաքաղաք Թեհրանից եկել է այստեղ, մեր պետական և կուսակցական շրջանակներից խնդրելու, որ աշխատեն արագացնելու ներգաղթի գործը: Նրա յայտնութեան համաձայն՝ Իրանում տասնեակ հազարաւոր գիւղացի և աշխատաւոր տարրեր մեծ անհամբերութեամբ սպասում են ներգաղթելու արտօնեութեան և օր առաջ իրենց չափազանց սիրելի հայրենիքը գալու: Նա իր առաքելութեան վերաբերեալ բոլոր անհրաժէշտ փաստաթղթերն ունի:

– Չափազանց ուրախ եմ,– պատասխանեց Ս. Տ.-Գաբրիէլեանը,– ձեր վաղեմի և յարգած ընկերոջ հետ ծանօթանալու համար: Ձեր ներկայացրած խնդիրն ինձ համար նորութիւն չէ: Նրանց գրաւոր բազմաթիւ դիմումներն էլ մինչև հիմի ստացել ենք: Ներգաղթի հարցը ներկայիս շատ մեծ կարևորութիւն է ստացել: Մանաւանդ վերջին երկու տարիների ընթացքին բազմաթիւ արտասահմանեան երկրներից մեզ անվերջ դիմումներ են կատարում: Մասնաւորապէս Տաճկահայաստանի նահանգներից և քաղաքներից մազապուրծ ազատուած հայութիւնը խիստ մեծ ցանկութիւն ունի հայրենիք վերադառնալու: Ներգաղթի գործը կազմակերպելու ուղղութեամբ շատ ուժեղ աշխատանք է տարւում: Մեր առաջին քարտուղար Խանջեանը և ուրիշ ազդեցիկ ընկերներ այդ ուղղութեամբ ոգի ի բռին և անխնայ աշխատում են: Խանջեանի գլխաւոր մտասևեռումներից մէկը ներգաղթի հարցի լուծումն է:

– Աղասին յայտնի տեսաբան է և լայն ծանօթութիւններով օժտուած մի գործիչ, բայց այդ բոլորը նրան չեն խանգարել անկեղծ հայասէր լինելու: Այս անգամ Մոսկւա մեկնելուց առաջ, ներգաղթի անհրաժէշտ և հնարաւոր միջոցների վերաբերեալ բաւական երկար խորհրդակցութիւն ունեցանք:

Այստեղ Ս. Տ.-Գաբրիէլեանն իր խօսքի թելը կտրեց: Անհամբերութեամբ սպասում էի ինձ համար անչափ հետաքրքրական նրա խօսակցութեան շարունակութիւնը լսելու:

Մինչ այդ նա սիրալիրութեամբ մեզ հիւրասիրեց Հայաստանի բուրումնալից վարդերից պատրաստուած սառն օշարակով: Իր խօսքերի շարունակութիւնը չափելու և ձևելու ճիգով նա ասաց.

– Աղասին՝ այս մեծ գործիչը, որ միաժամանակ անուրանալիօրէն մեծ հայրենասէր է, ձգտում է սրբագրելու մեր երկրի տարածանքը և անարդար սխալները: Նա ոգի ի բռին աշխատում է Հայաստանին վերադարձնել նրանից խլուած հողամասերը:

Մի րոպէ Ս. Տ.-Գաբրիէլեանն ընդհատեց իր խօսակցութիւնը, բայց յետոյ կարծես մի տարօրինակ ինքնամոռացութեամբ և հոգու խորքից պայթող դժգոհութեամբ շարունակեց.

– Մեր երկրի հողային տարածանքի կողոպտման առաջին հարուածը մեզ տրուեց մեր դարաւոր թշնամի թիւրքերի կողմից, որոնք բռնութեամբ սպառնալիքների ճնշման տակ ստիպեցին ստորագրել հայ և թիւրք հաշտութեան դաշինքը: Այդ դժբախտ դաշինքով թիւրքերը մեզնից յափշտակեցին, այսպէս ասած, Ռուսահայաստանի բարգաւաճ և արգաւանդ հողամասերը: Այդ աւազակային յափշտակման հետևեց մի ուրիշ «բարեկամական և եղբայրական» յափշտակում, մեր պատմական բնագաւառներից բոլորովին անտրամաբանօրէն խլեցին Ղարաբաղի, Ախլքալաքի և Ախլցխայի «առիւծի» պատառները և ենթարկեցին հարևան հանրապետութիւնների ինքնավար «հովանաւորութիւնների»: Իսկ մեր փոքրացած Հայաստանի բնական ծիրում Նախիջևանն էլ՝ «ինքնավար» կոչումով, Ադրբէյջանի հովանաւորութեանը ենթարկեցին:

Սահակ Տ.-Գաբրիէլեանի՝ այդ անկեղծ հայրենասէրի վիրաւորուած սրտի խորքերից ժայթքող դժգոհութեան արտայայտութիւնները այդ օրերին հազարաւոր հայրենասէրների սրտերն էին փոթորկում: Խորապէս ազդուած էի անկեղծութեան ալիքներով փրփրացող այդ դժգոհութիւնից: Երբ նա մի

---

32 **Սահակ Տեր-Գաբրիելյանը** ծնվել է 1886 թ. Շուշիում (այժմ՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն): 1902 թ. անդամագրվել է Կոմունիստական կուսակցությանը: 1904 թ. Բաքվի բանվորների կազմակերպած համընդհանուր գործադուլի կազմակերպիչներից մեկն էր: Ռուսական հեղափոխության տարիներին՝ 1905-1907 թթ., Ս. Տեր-Գաբրիելյանը համագործակցել է Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և բոլշևիկ այլ առաջնորդների հետ: 1918 թ. հանդիպել է Լենինին, որպեսզի կարգավորի Բաքվից Խորհրդային Ռուսաստան նավթի մատակարարման հարցը: 1918 թ. հունիսին Բաքվի Ժողկոմի խորհուրդը նրան նշանակել է հակահեղափոխական տարրերի դեմ պայքարի նպատակով ստեղծված հատուկ հանձնախմբի նախագահ: 1920 թ. վերջին նշանակվել է Ռուսաստանում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ: 1928-1935 թթ. ՀԽՍՀ Ժողկոմի խորհրդի նախագահն էր՝ միաժամանակ զբաղեցնելով նաև Անդրֆեդերացիայի Ժողկոմի խորհրդի փոխնախագահի պաշտոնը: 1937 թ. Ս. Տեր-Գաբրիելյանը զոհ է գնացել ստալինյան բռնարարքներին:

քիչ խաղաղած կերպարանք ստացաւ, սրտապնդուած հարցրի նրան.

– Իսկ ի՞նչ էք կարծում: Խանջեանի և ձեզ նման հայրենասէրների ճիգերը մի դրական, ցանկալի արդիւնքի հասնել կարո՞ղ են, թէ՞ ոչ:

– Դրա պատասխան տալը դժւար է: Շատ ճիգ ու ջանք, ուժերի լարում և մանաւանդ քաղաքագիտական համբերութիւն է պէտք: Լենինը Խանջեանի նկատմամբ մեծ համակրանք և վստահութիւն ունէր: Եթէ այդ նպաստաւոր վերաբերմունքն ուրիշների ազդեցութեամբ թունաւորման չենթարկւի, անկասկած, Աղասին կը յաջողի նպատակադրուած արդիւնքի հասնելու:

– Մեր հայրենիքից դուրս գտնուող մի կարգ մարդիկ իրենց սրտացաւ և անկեղծ հայրենասէրներ, իսկ մեզ հլու և անկամ օտարամոլներ են հաշւում: Այդպիսիների կարծիքը անտեղի է: Մեր դժբախտութիւնը կայանում է նրանում, որ մենք պատերազմից յետոյ տակն ու վրայ և մանաւանդ ցանուցրիւ եղած հողամասի ժառանգորդներն ենք: Քաղաքական ներկայ պայմանները մեզնից բռնութեամբ յափշտակուած հողամասերը յետ պահանջելու և նորից մեր երկրին կցելու տեսակէտից միանգամայն աննպաստ են: Քաղաքական մրցակցութիւնները թիւրքերին գեղեցկատեսիլ հիւրի-փերի են սարքել և մեզ թոյլ չեն տալիս՝ մեզնից նրա յափշտակած թանկագին աղամանդները, մեր շէն ու արգաւանդ քաղաքներն ու աւանները նրանից յետ վերցնելու: Ինչ վերաբերում է Խորհրդային Միութեան սահմաններում կատարուած անարդար զրկումներին, կասկած չկայ, որ շուտ թէ ուշ այդ խնդիրը վերաքննութեան պիտի ենթարկւի, և մենք պիտի յաջողենք տիրանալու մեր միանգամայն արդարացի իրաւունքին. մեր ժողովուրդը արժանի է դրան: Եթէ նոյնիսկ Խանջեանը և նրա նման ուրիշ հայրենասէրները չյաջողեն, անկասկած կը հասնի մի օր, երբ հայ ժողովուրդն ի վիճակի կը լինի իր ոտնակոխ արուած արդարացի իրաւունքը վերականգնելու: Ամէն պարագայում, ձեր և ձեզ նման հազարաւոր մարդկանց կողմից պահանջուած ներգաղթը լինելու է: Հայ երկիրը բոլոր հայ մարդկանց հայրենիքն է և ամէն հայ լիակատար իրաւունք ունի իր հայրենիքը վերադառնալու: Ներգաղթի նախապատրաստական աշխատանքները սկսւել են: Համոզուած եմ, որ հայրենակարօտ բազմութիւնները շուտով բախտ կունենան վերադառնալու և վերաբնակւելու իրենց՝ այնքան շատ սիրելի հարազատ երկրում:

***

Ներգաղթի գլխաւոր յանձնախմբի նախագահ Ս. Տէր-Գաբրիէլեանի հետ մեր խօսակցութիւնն երկու ժամից աւելի տևեց: Նրան հետևեալ պարագաները բացատրեցի.

– Ռըզա Շահի իշխանութեամբ գլուխ գալուց յետոյ Պարսկաստանի տնտեսական դրութիւնը հետզհետէ բարւոքւում է: Չնայած թագաւորի գիշեր ցերեկւայ չափազանց գնահատելի ջանքերին, դարերի ընթացքին յետ մնացած մի երկրում հրաշք չը պիտի սպասել: Գիւղացիութիւնը, հակառակ իր ջանասիրութեանն և աշխատունակութեանը, տընտեսական դժւարութիւններ ունի գիւղատիրոջ կողմից պահանջուած տուրքերի պատճառով, գիւղացին միշտ և անվերջ իր գիւղատիրոջը պարտական է: Բացի այդ՝ աղքատ գիւղացին հնարաւորութիւն չունի իր երեխաներին դպրոց ուղարկելու և նրանց անհրաժէշտ կրթութիւնը տալու:

Բանւոր-աշխատաւորների համար էլ դրութիւնը նոյնն է դեռևս: Գործարանային կեանքը սահմանափակ է, եթէ այդ ուղղութեամբ լուրջ և հետևողական աշխատանքի ձեռնարկւած է: Շինարարական աշխատանքներ էլ սկսել են, բայց բոլորին գործ հայթայթելու հնարաւորութիւնը պակսում է:

Ահա սրանք են հիմնական այն պատճառները, որոնք հայ աշխատաւոր և գիւղացի տարրերին ստիպում են ներգաղթել իրենց հայրենիքը, որի վերածնման և ծաղկման լուրերը նրանց չափազանց ոգևորել է: Նրանց համար ամենաէականը իրենց երեխաների ապագան է. ներգաղթի ծարաւով այրւող մարդիկ իրենց զաւակների համար դպրոցը, գրագիտութիւն և յուսալից ապագայ են ցանկանում:

Ս. Տէր-Գաբրիէլեանն իմ տւած բացատրութիւնները տրամաբանական համարեց, ինձ յանձնարարեց ամէն կերպ աշխատել Խանջեանին հանդիպելու և իմ առաքելութեան վերաբերեալ բացատրութիւններ տալով՝ նրա օժանդակութիւնը խնդրելու:

Երբ ուզում էինք նրանից բաժանւել, ինձ ասաց.

– Առանց մեծ ակնկալիքով և յոյսերով ներշնչւելու՝ իզուր չէր լինի, եթէ կարողանայիք բացի Խանջեանից, խօսակցել Թիֆլիսի և մանաւանդ Ազգութիւնների կոմիսար Ստալինի հետ: Մի քիչ յետոյ նա աւելացրեց.

– Նորից կրկնում եմ, չցանկանալով ձեզ հիասթափ անել, ինքս էլ այդ առթիւ շատ ակնկալիք չունեմ:

Սահակ Տէր-Գաբրիէլեանից բաժանւելուց յետոյ՝ Վահանին ասացի.

– Այս մարդը շատ անկեղծ և ազնիւ թւաց ինձ: Նա բոլորովին չցանկացաւ ներգաղթի խնդիրն ու հնարաւորութիւնները վարագուրել:

– Բոլորովին ճիշտ գնահատեցիր Սահակին: Նա սրտաբաց և ճշմարտախօս է: Մերոնք նրան շատ են վստահում: Ներգաղթի գործում նրա մշակած ծրագիրները միշտ գնահատւում են:

– Ներողութիւն, սիրելի՛ Վահան, լաւ չկարողացայ հասկանալ: Ի՞նչ է նշանակում մերոնք-ձերոնքը: Մի՞թէ Տէր-Գաբրիէլեանը ձերոնցից, այսինքն կուսակցակա՞ն չէ:

– Նա դեռևս կուսակցական չէ, բայց կուսակցական թեկնածու է: Ենթադրում եմ, մօտ ապագային

նրան կուսակցական շարքերում կընդունեն: Ինչպէս յայտնեցի, մանաւանդ Աղասին, նրա մասին շատ մեծ վստահութիւն և հաւատք ունի:

Այդ օրը մենք մեր կամքից անկախ, պատճառ էինք եղել մէկ ժամով ուշացնելու ընկերոջս ընտանիքի ճաշը, որ սովորաբար ժամը երկուսին էր լինում: Ինձ խօստացան կէսօրից վերջ ինձ ընկերակցելու և Երևանի մերձակայ շրջանները ցոյց տալու, իսկ գիշերուան՝ օպերա տանելու: Այդ գիշերուան ցուցադրուելու էր Չուխաջեանի յօրինած «Արշակ Բ» օպերան:

ՎԵՐՋԻՆ ՕՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Իմ Երևան ժամանման չորրորդ և վերջին օրն էր: Յաջորդ օրուան երկաթուղային գնացքով պիտի մեկնէի Ղարաքիլիսէ, որը վերանուանել էին Կիրովական: Վերջին օրուայ կէսօրից առաջ Քլարան՝ Վահանի կինը, արտակարգ սիրալիրութեամբ ինձ իր հետ քաշ տուեց Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատին ենթարկուած հիմնարկները և մանաւանդ պետական համալսարանի զանազան ֆակուլտէտները պտտելու: Ուրախութիւնից և ծայրայեղ հրճւանքից սիրտս ուռչում էր: Ինքս ինձ մօտ զարմանում էի և հիանում մեր փոքրիկ հայրենիքի այս մեծ մայրաքաղաքի հսկայաքայլ յառաջադիմութեան և շնչակտուր վազքի համար: Ուրեմն, իսկապէս որ մենք ընդունակ և հանճարեղ ժողովուրդ ենք: Մեր ժողովրդի մտաւոր, հոգեկան և մշակութային ընդունակութիւններն ու ստեղծագործական և շինարարական հանճարը, մասնաւորապէս վերջին դարերի ընթացքին, ենթարկուած են եղել ամլութեան և հնարաւորութիւն չեն ունեցել ծլելու, հասակ քաշելու, ծաղկելու և իրենց սքանչելի բոյրը տարածելու:

Ներկայիս, երբ մեր ազգի ուղեղն ու հանճարը չափազանց կարճ ժամանակամիջոցում՝ ութ տարուայ ընթացքում, խաղաղ և անվրդով պայմաններում ի վիճակի է եղել այսքան հսկայական յառաջադիմութիւն կատարելու, ինչե՜ր պիտի կարողանան իրագործել օրինակ 30-40 տարիների խաղաղ մթնոլորտում:

Մեր ազգային դժբախտութիւնն այն է եղել, որ մեր աշխատունակութեան, ստեղծագործութեան և հանճարի արտայայտութիւնները կղզիացած, անջատ-անջատ վիճակում են ծաղկել և անզօրավիգ մնալով, օտար հորիզոնների տակ թառամել և անհետք ու անյիշատակ կորել են:

Ինչու՞, ուրեմն անշնորհակալ լինել և չմիանալ մեր վարպետ բանաստեղծին՝ նրա հետ միասնաբար բացականչելու. «Երնէկ ունենամ հազար ու մի կեանք, հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ, միայն մի կեանքը թող ինձի պահեմ, այն էլ քո փառքի գովքը երգելու»:

Կէսօրից յետոյ Վահանի և նրա քրոջ՝ Գոհարիկի հետ միասին պտոյտի դուրս եկանք: Զրնգան և կաթնահամ Հրազդանի ափերով յառաջացանք: Տեղ-տեղ Հրազդանը վազում, փրփրում և մռմռում էր: Կարծես այդ առատայորդ գետակը դժգոհում և բողոքում էր իր մայր երկրին հասած կողոպուտի դէմ: Կարծես փրփրալիս նա թքում էր անարգ թշնամու երեսին, որն անպատկառ բռնութեամբ մեր հայրենի հողի վեհապանծ խորհրդանշանը՝ Մասիսը, խլել էր իրենից և իր հայորդիներից:

Դեռ ժամանակ ունէինք: Իմ ուղեկիցներից խնդրեցի ինձ Քանաքեռ առաջնորդել: Ինձ հրապուրում, քաշում է աննման և մեծ հայրենասէր Խաչատուր Աբովեանի տնակը տեսնելու բուռն փափագը: Ինչպէ՞ս չայցելէի այդ արտակարգ հայի խրճիթը: Այդ խրճիթում ծնուած և հասակ նետած ժողովրդանուէր, մեծ հայրենասէր և անվախ մարդը համարձակուել էր փշրել դարերի ստրկութեան երկաթաթել կապանքն և իր ժողովրդի մի հսկայական հատուածի բերանն ու լեզուն բաց անել: Նա համարձակուել էր բողոքել կոպիտ և անխիղճ բռնութեամբ իր հարիւր հազարաւոր հայրենակիցներին պարտադրուած անիրաւութիւնների և զրկանքների դէմ:

Աբովեանի խրճիթը մտնելիս ինձ թւաց՝ մօտենում եմ մի սրբազան խորանի: Ես, որ վաղուց աղօթքը մտահան էի արել, նրա անուան յաւիտենականութեան համար աղօթքի մրմունջներ արձակեցի և նրա պատկերի առաջ ծունկի եկայ:

– Մեզ քննադատում են,– ասաց ընկերս,– նրա համար, որ մենք որպէս թէ լաւ հայրենասէրներ չենք: Մենք մեր ազգային ազատագրութեան համար մարտնչողներին, մեր ժողովրդի ազգապահպանման ուղիով գրական-մշակութային, գեղարուեստական, երաժշտական և այլ աշխատանքներ կատարողներին, սրբերի փոխարէն, պաշտում և նրանցով պարծենում ենք: Տեսնու՞մ ես այս մեծ հայրենասէրի խրճիթը պաշտպանելու համար պահակներ են տրուած:

Ո՞վ կը համարձակուի այս նուիրական խրճիթից մի չնչին իր, նոյնիսկ մի ասեղ վերցնելու:

ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Չորեքշաբթի առաւօտեան երկաթուղային գնացքով մեկնեցի դէպի Կիրովական (նախկին Ղարաքիլիսէ): Իրար վրայ վերցրած՝ լրիւ չորս օր Երևանում, իմ շատ սիրելի ընկերոջ տանը մնացի: Վերջին գիշերը Վահանն ու իր կինն ինձ Երգի ու պարի անսամբլի շքեղատեսիլ և ընդարձակ սրահն առաջնորդեցին: Խմբի կատարած բոլոր երգ ու պարերը հոգեկան անչափ բաւականութիւն պատճառեցին ինձ: Հայ հարազատ գեղարուեստը նրանց բերնից և չափածոյ շարժ ու ձևերից կարծես ճառագայթում էր: Սօլօ և քառաձայն երգերն և հայկական նազանքով կատարուած պարերը հայ մարդու սրտին հոգեթով թրթռումներ էին տալիս: Ամբողջ երեք ժամ, աթոռիս գամուած, յափշտակուած և դիւթ-

ւած, նրանց հոգեվառ երգերն էի լսում և նրանց օրօր ու շօրօրով զմայլւում էի:

Ընկերոջս և իր ընտանիքի հետ մեր բաժանումը չափազանց սրտառուչ էր: Կարծես չորս օրւայ ընթացքում չորս ամիսներ իրար հետ ապրել և մտերմացել էինք: Չափազանց շատ ափսոսում էի, որ այդքան շուտ իմ սքանչագեղ հայրենիքի սիրելի և կենսախինդ մայրաքաղաքը թողնում և նրա հետ միասին իմ ազնիւ ընկերոջն ու նրա անզուգական ընտանիքին հրաժեշտ եմ տալիս:

Ափսոսում էի, որ ընկերոջս և նրա ընտանիքի՝ ինձ ցոյց տւած անչափ սիրալիրութեան և թանկարժէք աջակցութեան փոխարէն ոչ մի կերպ հատուցում անելու ի վիճակի չէի: Խնդրանքով և համարեա ստիպումով կարողացայ նրանց մի փոքր յիշատակ թողնել ինձ հետ վերցրած Քազրունու գործարանի թեթև, բայց գեղեցիկ զոյգ ծածկոցներից մէկը նրանց տալով:

Հակառակ պատերազմի օրերին եղած խճողումներին՝ գնացքի առաջին և երկրորդ կարգի վագոններում ազատ տեղեր կային: Երկրորդ կարգի տոմսակ ունէի: Ինձնից զատ՝ միայն ուրիշ երկու մարդիկ կային խցիկում: Նրանցից մէկը հայ էր, Թիֆլիս էր գնում, իսկ միւսը ռուս էր: Նա Մոսկւա էր վերադառնում: Վերջինս, իր պատկանած ժողովրդին յատուկ պարզութեամբ և սիրալիրութեամբ, ինձ հետ անմիջապէս բարեկամացաւ և ամբողջ ճանապարհին իր կատակներով և խօսակցութեամբ զբաղեցրեց ինձ:

***

Նոյն օրւայ կէսօրից յետոյ Կիրովական հասայ: Սիրտս ուժգնօրէն բաբախել սկսեց: Գիտէի, որ Կարապետ եղբայրս իր ընտանիքով ինձ դիմաւորելու համար կայարանումն է լինելու: Երևանից իմ ժամանման մասին հեռագրւած էր:

Գնացքը կանգ առաւ: Վագոնից հազիւ դուրս եկած՝ մեծ եղբայրս, անունս կանչելով, դէպի ինձ վազ տւեց: Մինչ գրկախառն համբուրւում էինք, երկու վարդանման փայլող գեղեցկութեամբ երեխաներ նկատեցի, որոնք, շուրջ բոլորս թռչկոտելով և ծափ տալով, աղաղակում էին.

– Մեր ձիածէն, Սիրաք ձիածէն է:

Յետոյ իրենց հօր բաճկոնից ու մօր փէշերից քաշքշելով՝ նրանցից հարցնում էին՝ պապա՛, մամա՛, սա մեր ձիածէն, մեր հօրեղբայրն է չէ՞: Եղբօրս կինն էլ իր հերթին, չափազանց ուրախ ու հրճւած, կրկնում էր.

– Այո՛, բալի՛կս, սա ձեր ձիածէն՝ ձեր հօրեղբայրն է:

Ես գրկեցի և անկուշտ համբուրեցի եղբօրս՝ վարդի թարմութեամբ և կակաչի կարմրութեամբ փայլատակող երեխաներին, որոնցից մէկը 7 տարեկան աղջիկ, իսկ միւսը 5 տարեկան մանչ երեխայ էր:

Միասին նստեցինք եղբօրս նախօրօք պատ-ւիրած կառքը, և քառորդ ժամից հասանք եղբօրս բնակարանը: Մեր ընտանեկան ուրախութիւնը կարծես կառապանին և նրա զոյգ ձիերին վարակել էր: Կառքին լծւած ձիերը քառատրոփ և մէկ շունչով վազ տւին, մինչև մեզ տուն հասցրին: Եղբայրս կառապանին վճարեց և ըստ երևոյթին լաւ էլ նւէր տւեց, քանի որ նա, շատ մեծ գոհունակութեամբ մեզնից բաժանւելով և իր կառքը սրընթացօրէն վազեցնելով, մի քանի անգամ գլուխը դէպի մեզ դարձնելով, աղմկալից բղաւեց.

– Ախպէ՛ր Կարապէտ, շէն մնա՛ս, տունդ միշտ շէն լինի: Միշտ եղբօրդ նման խէր-բարաքեաթով հիւրեր ունենաս: Աստւած քեզ, ընտանիքիդ ու երեխաներիդ էլ սաղջանութիւն տայ:

Ինձ մօտ զարմանում էի այս քաղաքի մարդկանց ուրախ-զւարթ բնաւորութեան վրայ և անմիջապէս վերյիշեցի տարիներ առաջ իմ հանդիպած սայլապանի ազնւութիւնն ու սրտաբաց առատաձեռնութիւնը:

Եղբօրս տունը և նրա կից պարտէզը գտնւում էին քաղաքի կենտրոնական փողոցներից մէկի վրայ: Տունը միայարկանի, կոկիկ ու գեղեցիկ էր, իսկ պարտէզը՝ բաւական մեծ, պտղատու ծառերով և թարմ ծաղիկներով ու կանաչութեամբ գեղեցկացած: Երբ պատրաստւում էի եղբօրս հարցնելու, որ նրան ինչպէս էր յաջողւել այս սիրուն տանն ու պարտէզին տիրանալու, եղբայրս աննկարագրելի ուրախութեամբ բացականչեց.

– Եղբա՛յր ջան, կարծես չես ուզում հաւատալ, որ այս տունն ու գեղեցիկ և ծառազարդ պարտէզը մերը լինի: Այո՛, ի՞նչ որ տեսնում ես, բարեբախտաբար, մերն է, իսկ եթէ ճշմարիտ խօսելու լինեմ, քոնն ու հօրս է, քանի որ գնել եմ ձեր՝ ինձ ուղարկած դրամով: Եթէ քո և հօրս կրկնակի, եռակի յանձնարարութիւնները և կնոջս պնդումները չլինէին, միգուցէ ես այս տունն ու պարտէզն առած չլինէի: Դու լաւ գիտես բնաւորութիւնս. փողը չի սիրում իմ ձեռում մնալ: Ասենք փողն ի՞նչ մեղաւոր է. մեղաւորն ես եմ, որ երբ փող եմ ունենում, անմիջապէս ծախսում եմ: Է՜հ, ի՞նչ արած, ամէն մարդ մի բնաւորութիւն ունի, ես էլ , դէ, էսպէս, սիրում եմ ծախսել, լաւ ապրել, քէֆ անել...

Նրա ուրախ և զւարթ տրամադրութիւնը յանկարծ անհետացաւ: Մի խորը տխրութիւն և նկատելի տանջալից վերյիշում նրա դէմքը մթագնեց: Յանկարծակիի եկած՝ նրանից հարցրի.

– Ի՞նչ պատահեց քեզ հետ, Կարապե՛տ:

– Ոչինչ, հէնց էնպէս: Երբեմն ինձ հետ այսպէս պատահում է: Ծայր աստիճան ուրախ և զւարթ տրամադրութեան պահերին երբեմն յանկարծակի տխրութեան եմ ենթարկւում: Բարեբախտաբար այս վշտի ու տխրութեան նոպաներն երկար չեն տևում:

Ինձ չկարողացայ համոզել նրա տւած բացատրութեան ճշմարտութեան վերաբերեալ և անհամարձակ կասկածանքով հարցրի.

– Չլինի՞ թէ Արմէն եղբօրս մի դժբախտութիւն է պատահել: Մի՛ թաքցնի, ճիշտն ասա՛, Արմէնն ի՞նչ վիճակում է:

Չհամարձակուեցի այլևս եղբօրիցս հարցնելու Արմէնի ողջ կամ մահացած լինելու պարագան: Եղբայրս նորից մեծ ճիգ գործ դրեց իմ հարցումին կտրական պատասխան չտալու և չցանկացաւ իրականութիւնն ինձ ասել: Գուցէ մեղքացաւ և դեռ նոր ժամանած՝ չուզեց ինձ վիշտ ու կսկիծ պատճառել:

***

Ամբողջ մի շաբաթ մնացի Կիրովականում՝ եղբօրս ու իր ընտանիքի մօտ: Շրջապատուած էի անկեղծութեան և սիրալիրութեան ծայր աստիճան զեղումով: Իմ հանգստաւէտութիւնն և ուրախ տրամադրութիւնը կարծես նրանց երջանկութեան աղբիւրն էր կազմում: Մանաւանդ եղբօրս կինը՝ Անահիտը և նրա սքանչագեղ աղջիկը՝ Հասմիկը սիրատոչոր թիթեռնիկների նման անվերջ շուրջս էին թևածում: Նոյնիսկ քնածս ժամանակներումն էլ նրանք ինձ հսկում էին: Երբեմն ստիպւում էի գանգատուել նրանց այդ ծայրայեղ ուշադրութեան և հոգածութեան համար: Հասմիկն անվերջ վզովս էր ընկնում, իր քնքուշ թաթիկներով երեսս ու մազերս շոյում և ջերմագին համբուրում էր ինձ: Ամէն օր 3-4 ժամ նրանք ինձ ընկերակցում էին քաղաքի և շրջակայքի հովասուն, ջրառատ և ծառազարդ վայրերում հոգեպարար պտոյտներով անցկացնելու:

Նախկին Ղարաքիլիսա, իսկ ներկայի Կիրովականն անչափ փոխուել և գեղեցկացել էր: Պողոտաներ, նոր և գեղեցիկ շէնքեր, դպրոցներ, նոր զբօսավայրեր, աշխատավայրեր նախկին գիւղա-քաղաքը կերպարանափոխել և վերածել էին հոյակապ և եռուն մի քաղաքի: Տասնմէկ տարիներ առաջ իմ թողած Ղարաքիլիսէն ինձ անճանաչելի էր դարձել:

Ինչպէս տարիներ առաջ, ներկայիս էլ այս քաղաքի օդի, ջրի և հմայիչ բնութեան սիրահարն էի: Գուցէ նրա համար, որ այս ուրախ և հոգեպարար քաղաքը իր օդով, ջրով և կենսարար բնութեամբ մեծ նմանութիւն ունէր իմ ծննդավայր Այգեստանի հետ: Երբ մարդս կորցնում է իր գորովագութ և պաշտելի մօրը, իր զգւանքների և հարազատ զեղումների ենթական իր հարազատ քրոջն է դարձնում: Չկայ պաշտելի մայրը, բայց կայ, գոյութիւն ունի նրա հարազատ շունչը, նրա աղջիկը, իր կորցրած մօր գթառատ աղջիկը՝ բազմաթիւ նմանութիւններով նրա նմուշը...:

Ճիշտ և ճիշտ նոյն ապրումն ու միևնոյն զգացումը ինձ տոգորել և տիրապետել էր: Չկայ իմ սիրասուն, սքանչագեղ Այգեստանը, դժբախտութիւնն եմ ունեցել նրան կորցնելու, բայց ուրախ եմ, հրճւում եմ նրա համար, որ իմ կորցրած Այգեստանի փոքրիկ, բայց գեղատեսիլ և զմայլելի նմանակն ունեմ:

Այդ հարազատ նմուշը՝ այս Կիրովական կոչուածը, ինձ վերածնում է, նոր շունչ, նոր աւիւն և նոր յոյս է տալիս և ինձ յուսալից ու լուսաւոր նոր ապագայ է խոստանում:

***

Եղբայրս իրենց տնից ոչ հեռու՝ քաղաքի կենտրոնական պողոտաներից մէկի վրայ, մի խանութ էր պահում: Խանութի դրամագլուխը մեծ լինել չէր կարող, որովհետև եղբայրս բնաւորութեամբ խիստ առատաձեռն և ծախսող էր: Իր խանութում, բացի մի երկու քսակ բրինձից, մի քանի թիթեղ պանիրից, իւղից, մի քիչ թարմ կարագից, ինչպէս նաև թարմ կանաչից և պտուղից, ուրիշ ոչինչ կար: Այդ մի շաբաթուայ ընթացքում, երբ նրա հիւրն էի՝ սեղանը միշտ ճոխ, և գինին էլ անպակաս էր: Քաղաքում լաւ ծանօթութիւն ունէր և բոլորից սիրուած էր, չը նայած այն հանգամանքին, որ կուսակցական չէր և շատ հեռու էր այդպիսին լինելուց: Մեկնելուցս առաջ՝ նախավերջին գիշերը, մօտ քսան հոգու հրաւիրել էր ընթրիքի և բաւական ճոխ սեղան էր սարքել: Ընթրիքը շատ ուրախ անցաւ: Անվերջ գինի խմեցին և բաժակաճառ խօսեցին:

Հրաւիրեալներից մէկի բաժակաճառը բաւական երկար տևեց: Նա ի միջի այլոց ասաց. «Խօսքս վերջացնելուց առաջ սեղանակիցներից խնդրում եմ մի անգամ էլ իրենց բաժակները լցնել մեր ազիզ Հայաստանի անուշահամ և պատուական գինով և խմել մեր թանկագին հիւրընկալի, մեր սիրելի Կա-ղապետի, նրա կնոջ ու սիրասուն զոյգ բալիկների կենացը: Մեր ամէնքիս կողմից սիրուած Կարապետը, թէև կուսակցական չէ, բայց նա մեր բոլորիս կողմից որպէս ազնիւ և ուղղամիտ հայրենակից՝ յարգուած և գնահատուած է: Կարապետի նման անկուսակցական մարդուն մենք միշտ մեր բարեկամը և մինչև իսկ եղբայրն ենք համարում և նրան ամէն տեսակի օժանդակութիւն չենք խնայում: Կեցցէ՛ մեր Կարապետը, կեցցե՛ն նրա կինն ու թանկագին եղբայրը, կեցցէ՛ նրա ընտանիքը»:

Վերջում հիւրերից մէկը յատկապէս իմ կենացը խմեց և իմ գործին ու նպատակին յաջողութիւն մաղթեց:

Յաջորդ օրը, երբ եղբօրս՝ իր շռայլութեան և անհաշիւ ծախսերի համար քննադատում էի, նա ինձ ասաց.

– Սիրելի՛ եղբայր, իմ շռայլութեան համար անհանգիստ մի՛ եղիր: Խանութիս վիճակը տեսել ես: Դրամագլխիս աւելացման մասին չեմ էլ մտածում: Ամէն կերպ աշխատում եմ այդ փոքրիկ դրա-մագլուխը չպակսեցնել: Երէկ գիշեր քո տեսած մարդիկ իմ խանութի մշտական յաճախորդներն և ինձ շահեցնողներն են: Ինձ շատ անհրաժէշտ է նրանց բարեկամութիւնն ու սիրաշահումը:

ԵՂԲՕՐՍ ՄԱՀԳՈՅԺԸ

Որոշել էի յաջորդ առաւօտեան՝ ժամը 7-ին, Թիֆլիս մեկնող գնացքով մերոնց հրաժեշտ տալ: Մի լրիւ շաբաթ եղբօրս ու նրա ընտանիքի մօտ հիւր էի եղել: Այս եօթը օրերն անցել էին այնքան հաճելի, որ ինձ թւում էր, թէ միայն մի օր առաջ եմ հարազատներիս տեսել:

Վերջին օրւայ ընթրիքը գիշերւայ ժամը 9 1/2-ին վերջացրինք: Յաջորդ առաւօտեան բաժանման պարագան թէ՛ մերոնց և թէ՛ ինձ համար խիստ անցանկալի էր: Վերջին ընթրիքը, անցնող օրերի ճաշ ու ընթրիքների նման ծիծաղկոտ, քրքջալից և աղմկալի լինելու փոխարէն, ճնշող տպաւորութեամբ և ակամայ սակաւախօսութեամբ անցաւ: Մեզնից ամէն մէկը, իր մտքերով ու խոհերով տարուած և բաժանման ափսոսանքով վշտացած, կարծես սեղանից հեռու և բացակայ էր:

Մանաւանդ ես տխուր և չարագուշակ մտորումներով էի կլանուած: Ինձ ուղղուած խօսքերին և հարցումներին կարճառօտ պատասխաններ էի տալիս: Մտովին Թիֆլիս՝ եղբօրս մօտ էի: Գիտէի, գրեթէ համոզուած էի, որ տարիների ընթացքին թոքերի թուլութեամբ հիւանդ միջնեկ եղբայրս՝ Արմէնը, մահացած կը լինի:

Ընթրիքը հազիւ վերջացրած՝ եղբօրս աղջիկը Հասմիկը, իր՝ այդ օրերի սովորութեան համաձայն, ինձ մօտ գալով, ծնկներիս նստեց և ինձ մի քանի անգամ համբուրեց, յետոյ հարցրեց.

– Հօրեղբա՛յր, ինչու՞ այսքան շուտ մեզնից հեռանալ ես ուզում: Ինչու՞ մի քանի օր էլ մեզ մօտ մնալ չես ցանկանում...

Դեռ իր նորաբաց ծաղիկ կեանքի եօթը գարունը չլրացած՝ այդ երեխայի ուշիմութեան և զգայնութեան վրայ զարմացել և հիացել էի: Խելօքութեամբ և մտային ուժեղ զարգացմամբ նա կարծես իր տարիքի կրկնակին ունեցած լինէր մի կատարեալ պատանի օրիորդի պէս:

Հասմիկին ուժգնօրէն կրծքիս սեղմելով՝ մի քանի անգամ պինդ, պինդ նրա վարդագոյն փայլող այտերն ու ճակատը համբուրեցի և ասացի.

– Հասմի՛կ ջան, իմ փոքրիկ, բայց շատ խելո՛ք Հասմիկ, եթէ կարողանայի, ձեզ մօտ, քեզ մօտ շատ օրեր կը մնայի, բայց, ափսոս, որ չեմ կարողանում: Ուրիշ գործեր ունեմ, որ պէտք է վերջացնեմ: Եթէ շուտ վերջացրի, նորից քեզ մօտ կը գամ: Էգուց առաւօտեան Թիֆլիս՝ քո միւս հօրեղբօր՝ Արմէնի մօտ պիտի գնամ:

Հազիւ այս վերջին նախադասութիւն արտասանած՝ նկատեցի, որ Անահիտի աչքերում արցունքի կաթիլներ էին խտացել, իսկ եղբօրս աչքերից արդէն գլորւում էին այդ աղէտագոյժ արցունքի կաթիլները: Ինձ հակակշռել և զսպել չկարողանալով՝ բղաւեցի.

– Ինչու՞ համար էիք այս քանի օրերում ինձնից թաքցնում դժբախտ եղբօրս՝ Արմէնի մահացած լինելու աղէտալի լուրը: Ի՞նչ կարիք կար դրան, քանի որ վերջ ի վերջոյ պիտի իմանայի:

– Սիրա՛ք, իմ անգի՛ն եղբայր,– պատասխանեց եղբայրս, իր աջ ձեռքի ափով իրար յետևից գլորւող արցունքի կաթիլները սրբելով,– որովհետև այդ դժբախտ լուրի հաղորդումով միանգամայն խանգարած և անհետացրած կը լինէի քո՝ այս քանի օրերի երջանիկ ժամերի ապրումն ու տարիներից յետոյ մեզ հանդիպած լինելու ուրախութիւնն ու հրճւանքը: Քեզ ցանկացայ խնայել քո ժամանումից անմիջապէս յետոյ այդ դժբախտ լուրի հարւածը հասցնել: Չգիտեմ, եթէ դա յանցանք ես համարում, խնդրում եմ, ինձ ներես...

Ընթրիքի սեղանից անմիջապէս վեր կենալով՝ աճապարեցի պարտէզը գնալ և առանձնութեան մէջ ողբալ դեռ շատ երիտասարդ և անմուրազ եղբօրս մահը:

Մի քանի րոպէից պարտէզն եկան Անահիտն ու Հասմիկը՝ ինձ իրենց հոգեթով խօսքերով և հարազատ գուրգուրանքներով մխիթարելու համար: Նրանց հետևեց նաև եղբայրս: Իսկապէս, ինչքա՜ն ողբերգութիւն է մարդկային կեանքը: Բարեբախտաբար, այս սրտամաշ ողբերգութեան մոռացութեան վարագոյրը ցած քաշելու համար սիրող, փայլփլող, մխիթարող հարազատ սիրելիները կսկծահար և վշտակոծ մարդուն միշտ օգնութեան են հասնում: Այդ պարագայում էլ ինձ հասած ծանր վիշտը սփոփելու համար նորից իմ հարազատ սիրելիները շտապեցին:

Կէսգիշերւայ մօտ էր արդէն: Անահիտին և փոքրիկ հրեշտակատիպ Հասմիկին ջերմագին համբուրելով՝ խնդրեցի նրանց գնալ և հանգստանալ: Եղբօրս հետ Արմէնի մահւան և ապա մեր ընտանեկան ուրիշ խնդիրների մասին մի ժամ ևս խօսակցեցինք:

Այդ գիշերը չափազանց խռովայոյզ անցաւ ինձ համար: Հազիւ մի երկու ժամ քնել կարողացայ: Խառնիխուռն և ճնշող երազներ տեսայ: Յաջորդ առաւօտեան գունաթափ դէմքով և ուռած կոպերով, ծայրայեղօրէն յոգնաբեկ վեր կացայ: Անցնող գիշերւայ տխուր և տանջալից տպաւորութիւնները շարունակում էին ինձ ճնշել:

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաւօտեան գնացքով Թիֆլիս մեկնեցի: Եղբօրիցս և նրա ընտանիքից մեր բաժանումը շատ սրտառուչ էր: Հասմիկն ու փոքրիկ Արմիկը հագուստիս փէշերից կախուած, ինձնից բաժանուել չէին ուզում: Երկու սիրասուն փոքրիկներին անյագօրէն համբուրելով՝ խոստացայ նորից իրենց մօտ վե-րադառնալ:

Երբ երկրորդ կարգի տոմսակիս համապատասխան գնացքի խցիկում իմ տեղը գրաւեցի, աշխատեցի ինձ ամոքել եղբօրս մահւան անգութ հարւածի կոշմարային տխրութիւնից: Ջանացի ճամփոր-

դութեանս 12 օրերի անցուդարձերի վերյիշումով մտորումներիս ուղղութիւնը փոխել: Սկսեցի մտածել ճամփորդութեանս իսկական նպատակի յաջողութեան ենթադրելի հաւանականութեան մասին:

Մեր յարուցած ներգաղթի խնդրի նման Երևանը նպաստաւոր և նոյնիսկ համակրական վերաբերմունք ունի: Ի՞նչ կարծիքի և վերաբերմունքի եմ հանդիպելու Թիֆլիսում և մանաւանդ Մոսկայում: Ներգաղթելու ցանկութեամբ տագնապող հազարաւոր հայերի խնդիրքը կը լսի՞ և ուշադրութեան կարժանանա՞յ արդեօք: Ինչքան շատ մօտենում էի Թիֆլիսին, այնքան աւելի շատ այս հարցականը շեշտւում էր: Հայկական մի հատուածի կողմից առաջադրուած ներգաղթի խնդիրը բնական, իրաւացի և օրինաւոր մի պահանջ էր, բայց համոզուած էի, որ այդ պահանջի իրագործումն այնքան էլ հեշտ չէր: Թիֆլիսի և Մոսկայի նպաստաւոր կարծիքն ու հաւանութիւնը միանգամայն անհրաժէշտ էր:

Թիֆլիս ժամանելուս յաջորդ օրն իսկ Ազգութիւնների ժողկոմատի վարչութեան դիմեցի: Հետևեալ օրուայ առաւօտեան ժամը 7 1/2-ին ըն-դունելութեան ժամ որոշեցին: Գոհ էի, որ ստիպւած չէի երկար սպասելու: Շուրջ երկու տարի Թիֆլիսում ապրել և աշխատել էի: Ինձ չափազանց հետաքրքիր էր, առիթից օգտուելով, ինչքան կարելի էր շատ շրջել Թիֆլիսի զանազան պողոտաներում և հասարակաց վայրերում՝ վրացական մայրաքաղաքի յառաջադիմութիւնները տեսնելու համար:

ՓՆՏՐՏՈՒՔ ԱԼԻՍԻ ՀԱՄԱՐ

Որոշեցի առաջին հերթին Սօլօլակ գնալ և Ալիսին փնտրել: Երբ մօտեցայ նրանց ապրած նախկին շէնքի մուտքին, կանգ առայ: Սիրտս սկսել էր ուժգնօրէն բաբախել: Թւում էր՝ ապրումների այդ չափազանց զգայուն մսագնդիկը՝ իր խոռոչից պոկուել և դուրս պրծնել էր ուզում: Բաւական երկար տևեց այդ ծայրայեղօրէն տագնապալից սպասումը: Սրտիս ուժգին բաբախումը շարունակւում էր: Ստիպւեցի այդ բազմամարդ պողոտայի մի անկիւնում նստել և մի քանի րոպէ սպասել իմ արագօրէն թրթռացող սիրտը հանգստացնելու համար: Բաւական երկար տևեց այդ սպասումը, մինչև որ վերջապէս շնչառութիւնս կանոնաւորւեց: Վեր կենալով՝ մօտեցայ մուտքին: Ներս մտայ: Ի՜նչ անսպասելի և տարօրինակ դասաւորում:

Տասն երկար տարիներ առաջ տեսածս զանգեզուրցի թիւրք միևնոյն դռնապանն էր իր խուցի առաջ նստողը: Նրանից հարցրի Ալիսի և նրա հօր ու մօր մասին: Նա անմիջապէս չպատասխանեց և իր ամբողջ ուշադրութիւնը լարած՝ ակնապիշ ինձ զննեց: Ինձ թւաց, որ նա խլացել է և տւածս հարցումը չի լսում: Նորից կրկնեցի հարցումս, այս անգամ աւելի բարձր ձայնով.

– Պ. Բարսեղովն ու նրա աղջիկը՝ Ալիսը, նորից այս բնակարանու՞մն են ապրում:

Դռնապանը, որն ենթադրում էի՝ խլացել է, տխրութեան շեշտով գլուխը տարուբերելով և հառաչալից բացականչելով, ասաց.

– Ո՛չ, դժբախտաբար, ո՛չ...:

Եղբօրս մահագոյժից յետոյ ինձ թւաց երկրորդ և աւելի սարսռեցուցիչ մի մահագոյժ լսեցի: Հազիւ կարողացայ ինձ հակակշռել ցած չգլորուելու համար: Դռնապանի արտասանած առաջին «ո՛չ»ը սովորական էր, բայց երկրորդը սոսկալի թւաց ինձ: Մինչ ես ջանանում էի ինձ տիրապետելով, ուրիշ լրացուցիչ բացատրութիւն խնդրել, դռնապանն աւելի շեշտւած տխրութեամբ իր պատասխանը լրացրեց.

– Նրանք այս տնից և այս քաղաքից գնացին, հեռացան:

– Ու՞ր գնացին: Չէ՞ք կարող ասել՝ ուր գնացին:

– Բարսեղովն ինձ որևէ խօսք չուզեց ասել: «Մնաք բարով»-ի ժամանակ նրա աղջիկը՝ այդ սքանչելի և բարեսիրտ Ալիսը, արցունքն աչքերին, ինձ ճակատիցս համբուրելով, ասաց, որ Պոլիս են գնում:

– Պոլի՞ս, Պոլի՞ս, թիւրքերի նախկին մայրաքաղաքը,– ինքս ինձ մեքենայաբար կրկնում էի այդ բառերը: Յետոյ նորից մեծ ճիգ ի գործ դնելով՝ հարցրի դռնապանից.

– Իսկ կարո՞ղ էք յիշել, ե՞րբ, ո՞ր տարին նրանք գնացին:

– Լաւ եմ յիշում, պարո՛ն, շատ լաւ եմ յիշում: Ինձ համար կարծես իմ հարազատ ընտանիքի կորուստը լինէր նրանց հեռացումը: Չես կարող իմանալ, պարո՛ն, ինչքա՜ն լաւ և բարի մարդիկ էին նրանք: Բոլոր երեքն էլ շա՜տ, շա՜տ բարի մարդիկ էին: Նրանց՝ այդ ազնիւ մարդկանց շնորհիւ էր, որ կարողացայ իմ երեք երեխաներին կերցնել, հագցնել և դպրոց ուղարկել: Ա՜խ, ինչ պատւական, ինչ բարեսիրտ էր մանաւանդ նրանց աղջիկ Ալիսը: Երանի, հազար երանի կը լինէր ինձ համար, եթէ նրա փոխարէն իմ զաւակը գնացած, հեռացած լինէր: Այդ աղջիկն իմ հարազատ զաւակից աւելի հարազատ և գթառատ էր ինձ համար:

– Ներեցէ՛ք, բայց դուք մոռացաք ինձ ասել, թէ քանի՞ տարի է, որ նրանք հեռացել են:

– Ուղիղ ութ ու կէս տարի է, ինչ նրանք հեռացել են: Նրանց գնալուց յետոյ այս տան նոր կենողների խէրն ու բարաքաթն էլ կտրւել է: Միշտ մտածել եմ թողնել էս բէխէր գործը, բայց վախեցել եմ՝ ուրիշ գործ ճարել չկարողանամ:

Յետոյ իր ձայնն իջեցնելով՝ շատ կամաց, հազիւ լսելի ձայնով աւելացրեց.

-Ա՜խ, այս վրացիները: Նրանք իրենցից զատ ուրիշներին մարդ չեն հաշւում, ուր մնաց նրանց գործ տալը:

Մի քիչ յետոյ, իր չորս կողմը զննելով և ինձ սղմւելով, ականջիս ասաց.

– Նրանք՝ այս վրացիները, պատճառ եղան, որ Բարսեղովը ստիպուած եղաւ հեռանալ այստեղից: Իշխանութեան գլուխ գալուց յետոյ նրանք Բարսեղովի օգնական վրացուն նրա տեղը, նրա պաշտօնին դրին, իսկ Բարսեղովին՝ նրա օգնականը դարձնել ուզեցին: Նա վիրաւորուած և սրտնեղած որոշեց հեռանալ այս քաղաքից:

Դռնապանի յայտնութիւններն ինձ համար շատ վշտալի էին: Աննկարագրելի մի կսկիծ անգթօրէն ծակոտում էր: Լացել, առատօրէն արցունք թափել էի ուզում այրուող, կիզուող սիրտս հովացնելու, հանգստացնելու համար: Այդ վայրկեանին խիստ մեծ ցանկութիւն ունէի գնալ մարդկանց ներկայութիւնից հեռու մի տեղ, մի անկիւն ճարել և հոգիս ճմլող, ճխլտող արցունքի հեղեղը դուրս թափել: Երբ մնաք բարովի համար ձեռքս դռնապանին պարզեցի, նա, ձեռքս իր երկու ձեռներում պինդ պահած, հարցրեց.

– Ներողութիւն, պարո՛ն, կարծէս թէ ձեզ մտաբերելու վրայ եմ: Դէ, իհարկէ, բոլորովին զարմանալի չէ. նախ, որ ես արդէն սկսել եմ ծերանալ և յետոյ արդէն 10 տարիներից աւելի են անցել այն օրերից...

Անհամբերութեամբ ծերուկի խօսքը կտրելով՝ հարցրի.

– Ի՞նչ էք կամենում ասել:

– Ներողութիւն, շատ ներողութիւն, պարո՛ն, ես տեսնում եմ, որ իմ տուած տեղեկութիւններով ձեզ չափազանց շատ անհանգստացրի: Ասացէ՛ք, խնդրեմ, դուք այն պարոնը չէ՞ք, որ սրանից 10-11 տարի առաջ՝ համարեա ամէն օր, Ալիսի մօտ էիք գալիս նրան ֆրանսերէն դասեր տալու համար: Չեմ սխալւում, չէ՞:

– Բոլորովին չէք սխալւում: Ձեր յիշողութիւնը շատ գովելի է: Բայց այդ պարագան ինչի՞ պէտք է: Այդ երջանիկ օրերը վաղու՜ց, շա՜տ վաղուց անցել են արդէն...

– Ճիշտ է, այդ երջանիկ օրերը վաղուց են անցել, բայց երջանիկ յիշատակներ կան, որոնց մոռացումն անհնարին է:

Դռնապանն իր այդ վերյուշով իմ արտակարգ ջանքերով զսպած արցունքը աչքերիցս դուրս ժայթքելու պատճառ դարձաւ: Աշխատեցի դեռ իր երկու ձեռներում պինդ պահած աջ ձեռքս ազատել և փախչել այդ տնից, բայց նա յամառեց ձեռքս պահել և ասաց.

– Իր մեկնումի վերջին վայրկեանին Ալիսն ինձ մի նամակ տուեց ձեզ յանձնելու համար: Նա համոզուած էր, որ դուք 6 ամսից, ամենաուշը մէկ տարուց այստեղ կը գաք իրեն փնտրելու համար: Խեղճ աղջիկը չէր կարող ենթադրել, որ դուք տասը տարիներից յետոյ կը գաք, այն էլ ոչ թէ նրան փնտրելու և գտնելու, այլ պարզապէս նրա մասին հետաքրքրուելու և տեղեկութիւններ ստանալու համար:

Յետոյ կարեկցութեամբ աւելացրեց.

– Ափսո՜ս, շատ ափսոս Ալիսը՝ այդ հոգի աղջիկը:

– Իսկ ի՞նչ արիք այդ նամակը,- հարցրի անյոյս, բայց տագնապալից:

– Նա ինձ պատուիրեց, եթէ մինչև մի տարի գալու չլինէք, նրա՝ ինձ յանձնած նամակը պատռեմ և այրեմ:

– Ուրեմն այդպէս... և դուք նրա պատուէրը կատարե՞լ էք,– անճար յուսահատութեամբ մրմնջացի ես:

Դռնապանը դժուարացաւ անմիջապէս մի խօսք ասելու: Համոզուած էի, որ նա նամակը պահած չէր կարող լինել: Գրպանումս պատրաստ մի քանի թղթադրամ ծերուկի ձեռքում խոթելով՝ անմխիթար և լքուած ճանապարհ ընկայ: Երբ մի երկու տասնեակ քայլ հեռացել էի, դռնապանը, յետևիցս վազ տալով, ձայնեց.

– Պարո՛ն, ես չեմ յիշում, որ Ալիսի նամակը պատռած և ոչնչացրած լինեմ, բայց չեմ էլ յիշում՝ ինչ տեղ եմ թաքցրել այդ: Վաղը՝ այս ժամերին, եթէ ցանկանում էք, եկէ՛ք, գուցէ ինձ յաջողուի գտնել նամակը և ձեզ յանձնել:

– Չափազանց շնորհակալ կը լինեմ: Եթէ գտնէք և ինձ յանձնէք այդ նամակը, ձեզ մի լաւ նուէր կը տամ դրա համար:

***

Յուսաբեկ և ծայրայեղօրէն յոգնած էի: Դիմեցի իմ իջևանած հիւրանոցը, որ Սօլօլակ փողոցից հեռու չէր: Վշտահար և յուսահատ վերյիշեցի, որ իրար յետևից դժբախտութիւն եմ ունեցել կորցնելու իմ մանկութեան և երիտասարդութեան բոլոր սիրելի և անգին դէմքերը: Երևանում Վահանի, նրա ընտանիքի և նրանց ծանօթ բոլոր անձնաւորութիւնների միջոցով փորձեցի իմ մանկութեան օրերի պահապան հրեշտակը հանդիսացող և ինձ իր հարազատ եղբօր նման սիրող Մարօին՝ Բուլղարացու կնոջը, գտնել կամ նրա մասին մի տեղեկութիւն ձեռք բերել, բայց իզուր անցան իմ բոլոր փնտրտուքները: Նա չկար ու չկար, և ոչ ոք էլ նրա մասին չկարողացաւ թէկուզ ամենափոքր մի տեղեկութիւն հաղորդել ինձ:

Իմ չափազանց պաշտելի Անուշը հանելուկային և ծայրայեղօրէն դժբախտ վերջաւորութիւն ունեցաւ: Ալիսը, ինձ տարիներով սպասելով, անյոյս ու սրտակէզ հեռացաւ և անհետացաւ: Ինձ հետ երիտասարդութեան շրջանին գործակցող ընտիր և անձնուէր ընկերներից միայն մէկին յաջողեցի հանդիպել: Հրանտ Դարբինեանը՝ այդ սրտահատոր և ազնիւ ընկերը, Վահանի ասութեամբ, իր հօր ու ընտանիքի հետ բախտ որոնելու համար մեկնել էր Բրազիլիա:

Սիրոյ և մտերմութեան ընդհանուր և սրտամաշ ամայութիւն, միայնութիւն: Սրտի և հոգու յուսալքում ու դատարկութիւն:

Օ՜հ, ինչքա՜ն մաշող, այրող են այս բոլորը:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԵՏ

Խռովայոյզ և տանջահար գիշեր անցկացրի: Չափազանց անհամբեր և շտապ երկու սպասումներ ինձ տագնապեցնում էին: Գործի յաջողութեանս սպասումը և արևափայլ մի սիրոյ վերջին նուագը լսելու անդիմադրելի ցանկութիւնը, իրար խառնած, հերթի առաջնորդութիւնն իրարից խլում էին: Դժուարանում էի որոշել առաջնութեան հերթը:

«Ստանձնած պարտականութեան կատարումը անյետաձգելի է: Կեանքումս միշտ ընդհանուրի պարտականութեան կատարումը գերադասել եմ անձնական ապրումներից ու ձգտումներից: Որդեգրածս սկզբունքը պիտի ջանամ պահել»,– եզրակացրի և ինձ նախապատրաստեցի առաւօտեան ժամը 7 1/2-ի տեսակցութեանը: Որոշած ժամին հասայ Թիֆլիսի, եթէ յիշողութեանս մէջ չեմ սխալւում, Ստալինեան վերանուանած լայն ու շքեղ պողոտաներից մէկի վրայ գտնուող ժողկոմի պալատը:

Նոյն շէնքումն էին կոմկուսի քարտուղարութեան գրասենեակները: Շէնքը խիստ հսկողութեան տակ էր: Հեռախօսի միջոցով ինձ համար ներս մտնելու իրաւունք ստացուեց: Վերելակով բարձրացայ չորրորդ յարկը: Ինձ առաջնորդեցին Ազգերի Կոմիսարիատի ներկայացուցչութեան գլխաւոր քարտուղար Իւրաշվիլիի մօտ:

Ընդարձակ, լուսաւոր մի սենեակի վերի մասում դրուած շատ մեծ գրասեղանի յետնում նստած մարդը, որը մէն-մենակ էր այդ շքեղօրէն կահաւորուած սենեակում, իր բազկաթոռից բարձրանալով, մի քանի քայլ առաջացաւ ինձ դիմաւորելու համար: Նա բարձրահասակ, լայն թիկունքով և գեղեցկադէմ մի երիտասարդ էր: Ինձ ընդունեց ժպտալից քաղաքավարութեամբ և հրաւիրեց նստելու իր կողքին դրուած աթոռին: Առանց մի րոպէ իսկ կորցնելու՝ նա սկսեց ռուսերէն լեզուով խօսել իմ գործի մասին:

– Դուք քաղաքացի Սարհադեա՞ն էք, այնպէս չէ՞: Ձեր առաքելութեան մասին սրանից 6 օր առաջ Սահակ Տէր-Գաբրիէլեանը Երևանից հեռախօսով ինձ հետ խօսակցել և ինձ խնդրել է ձեզ ամէն հնարաւոր աջակցութիւն ցոյց տալ: Ես ձեզ աւելի շուտ էի սպասում: Ինչպէ՞ս է պատահել, որ այսքան ուշացաք:

– Կիրովականում ուշացայ: Տասը տարուց ի վեր եղբօրս չէի տեսել: Ես տաճկահայ եմ, վանեցի: Առաջին նահանջից յետոյ նորից Վան վերադարձայ: Մերոնցից մենակ եղբայրս է Կիրովականում: Ամուսնացած է և երկու երեխայ ունի:

– Հասկանալի է: Միանգամայն իրաւացի էք: Իսկ ձեր ընտանիքի միւս անդամները...

– Քոյրս ներկայիս Կիրովաբադում (նախկին Գանջէ), իսկ հայրս Թեհրանումն է:

– Ներողութիւն եմ խնդրում, եթէ ինձ թոյլ եմ տալիս մի քիչ աւելի հետաքրքրուելու ձեր անձնականի մասին: Պարզապէս հետաքրքրութեան համար է այդ: Եթէ հնարաւոր է, յայտնէք՝ ինչպէ՞ս է պատահել, որ դուք և ձեր հայրը Թեհրան էք ընկել:

– Վերջին նահանջի ժամանակ քիւրդերը մեր ճանապարհը փակեցին, և մենք հնարաւորութիւն չունեցանք նորից Հայաստան վերադառնալու: Բազմաթիւ վանեցիներ, հայեր և ասորիներ ստիպուած եղան Պարսկաստան ապաւինելու: Մի շարք արիւնալից կռիւներից յետոյ այդ հայերին և ասորիներին յաջողուեց ազատուել թիւրքերի և քիւրդերի կոտորածներից: Մեր կրած տանջանքների պատմութիւնը շատ երկար է: Կարծում եմ, տեղեկացած կը լինէք, որ այդ տասնեակ հազարաւոր գաղթականներն անգլիացիների կողմից Միջագետք տարուեցին: Հազարաւորներ, դիմանալ չկարողանալով այդ սոսկալի տաքին, արևակէզ անապատների աւազուտներում մահացան: Իսկ Թիւրքիայի հայաբնակ նահանգներում բռնի գաղթի ճամփին, աքսորավայրերում մէկ միլիոնից աւելի հայեր կոտորուեցին: Մէկ խօսքով, համաշխարհային պատերազմը մեզ՝ հայերիս գերեզմանը դարձաւ:

– Հայերի գլխին պայթած այդ արիւնալից եղեռնին անտեղեակ չեմ: Հայերին սիրում և յարգում եմ: Մանկութիւնիցս ի վեր հայ ընկերներով և բարեկամներով եմ շրջապատուած եղել: Հայաստանի ներկայի առաջին քարտուղար Աղասի Խանջեանի հետ համալսարանում եղել ենք մտերիմ ընկերներ: Ես նրան սիրում և մանաւանդ յարգում եմ: Նա ընտիր ղեկավար է, բայց նաև հայասէր է և հայրենասէր: Մեր ազգայնամոլ վրացիները նրան չեն սիրում: Նրան ազգայնամոլ են հաշուում, բայց նա անթերի և պատուական մարդ, մանաւանդ ազնիւ և նուիրուած ղեկաւար է: Մեր կուսակցական գլխաւորները նրա նկատմամբ հաւատք ու վստահութիւն ունեն:

Ազգութիւնների կոմիսարիատի Թիֆլիսի ներկայացուցիչ-քարտուղարը լռեց: Ինձ թւաց, որ նա ցանկանում է խօսակցութեան հերթը ինձ տալ: Բայց ես պատեհ չհամարեցի այդ առթիւ որևէ կարծիք յայտնելու: Ընդհանրապէս որոշել էի վերապահ լինել և քաղաքական ու կուսակցական խնդիրներին բոլորովին չխառնուել: Տեսնելով, որ շարունակում եմ լռել, նա շարունակեց.

– Հիմի անցնենք ձեզ հետաքրքրող հարցին: Ներգաղթի խնդիրը ներկայիս ընդհանուր չափանիշով քննութեան է ենթարկուած: Կարելի է ասել, որ ներկայիս նա իր առանձին և ազգային բնոյթը կորցրել է: Մեր խորհրդային ամբողջ երկրները իրենց են քաշում ամէն ազգի պատկանող հարիւրհազարաւոր բազմութիւններ: Միայն հայերը չեն, որ ներգաղթել են ցանկանում: Ռուսներ, բելոռուսներ, ուկրաինացիներ, ազրբէջանցիներ, վրացիներ և բազմաթիւ ուրիշ ազգութիւնների պատկանող բազմաթիւ մարդիկ ներգաղթի պահանջ են դրել:

Ազգութիւնների կոմիսարը՝ մեր յարգելի մեծ ընկեր Ստալինը, ոգի ի բռին աշխատում է այդ հարցը հիմնօրէն ուսումնասիրել և դրա համար շտապ,

բայց նպատակայարմար ելք գտնել: Հայկական ներգաղթի նպաստաւոր լուծման խնդրում նրա բարեացակամութիւնը մեծ դեր է խաղալու: Այդ խնդրի իրականացման համար ընկ. Աղասու դերն էլ շատ նշանակալից է: Նա կարող է, ընդունակ է ընկ. Ստալինի հետ խորհրդակցել և նրա հաւանութիւնը ապահովել: Եթէ կարողանաք Աղասուն բացատրել գործի կարևորութիւնն ու անյետաձգելիութիւնը և նրա համաձայնութիւնն ու օժանդակութիւնը ապահովել, խնդրի կարևոր մասը լուծուած պիտի համարել: Աղասու հետ Մոսկւա գնալու ժամանակ մի կարճատև հանդիպում ունեցանք: Նախքան ձեր ժամանումը նա արդէն մտածում էր օրէցօր շեշտուող ներգաղթի անհրաժեշտութեան մասին:

– Իսկ դուք, պարո՛ն, ներողութիւն, քաղաքացի՛ Իւրաշվիլի, ձեր կողմից կարո՞ղ էք որևէ օժանդակութիւն բերել իմ խնդրած գործի յաջողութեան համար:

Իւրաշվիլին անմիջապէս չպատասխանեց հարցիս: Երևութապէս նա մտածմունքի ենթարկուեց: Աջ ձեռքի մատներով իր ճակտին թափուած մազերը յետ տալով և շեշտակի իմ աչքերին նայելով՝ ասաց.

– Այդ մասին ներկայիս ոչինչ չեմ կարող ասել: Ինչպէ՞ս յայտնեցի, հայերի նկատմամբ մեծ համակրութիւն ունեմ և սրտանց ցանկանում եմ որևէ օժանդակութիւն արած լինել: Կը փորձեմ իմ հնարաւորը: Էգուց՝ ճիշտ այս միևնոյն ժամին, ինձ մօտ եկէք:

Իմ հերթին սրանից աւելին ասել և անել չէի կարող: Քարտուղարին շնորհակալութիւն յայտնելով՝ ցտեսութիւն ասացի և նրա սենեակից դուրս եկայ:

ԱԼԻՍԻ ՆԱՄԱԿԸ

Փողոց դուրս գալով՝ մտադրուեցի անմիջապէս Սօլօլակի պողոտան գնալ՝ ծերուկ դռնապանին հանդիպելու համար: Ճապարում էի մի վայրկեան առաջ հասնել: Հնիհև դռնապանի մօտ եկայ: Ծերունին, ինձ տեսնելով, բացականչեց.

– Ճարեցի, պարո՛ն, բախտի բերմամբ ճարեցի: Իսկական հրաշք է այս: Վախենում էի, որ կինս ու երեխաներս իմ փոքր սնդուկը բացակայութեանս ժամանակ քրքրելով, գտած և վերցրած կամ պատռած կը լինեն նրա նամակը:

Այս ասելով՝ նա ինձ յանձնեց դեղնած և ճմռթուած մի նամակ: Գունաթափուեցի: Սրտիս տրոփիւնը ծերուկին անհանգստացրեց: Ձեռներս տարօրինակօրէն դողդողում էին: Նամակի վրայի հասցէն իմ անունով էր: Ալիսի գրութիւնը ճանաչեցի: Դռնապանին խոստացածս նուէրը տալով՝ նամակը ուշադրութեամբ ծոցիս գրպանը դրի և հեռացայ: Մոռացել էի դռնապանին շնորհակալութիւն յայտնել և մնաք բարով ասել: Մի քանի քայլ յետ գալով՝ կանչեցի.

– Շա՜տ, չափազանց շնորհակալ եմ, բարեկամ: Այս նամակը մի անթառամ և թանկագին յիշատակ կը լինի ինձ համար: Մնաք բարով:

Հիւրանոց հասնելով՝ անկողնու վրայ փռուեցի: Չնայած կառքով էի եկել, բայց կարծես մի քանի կիլոմետր ճանապարհը ոտքով էի կտրել: Չափազանց յոգնել էի: Ջանացի գերագրգռուած ջղերս հանգստացնել և ինձ տիրապետել: Ինքս էլ չէի կարող բացատրել, թէ ի՞նչ է պատահել: Չէի կարող հասկանալ, ամբողջ տասը տարիների բաժանումից յետոյ մի անշունչ նամակ ինչու համար ինձ այդքան շատ պիտի յուզէր: Բաց արի նամակը և սկսեցի կարդալ:

«Իմ անզուգակա՛ն Սիրաք, անհնար է նկարագրել այն հոգեկան վիճակը, որում այս քանի տողերը գրելիս ապրում եմ: Անհուն կարօտով այրուելով՝ ամէն օր, ամէն ժամ անհամբեր սպասում էի վերադարձիդ: Միշտ փորձում էի ինձ համոզել, որ դու արդէն ինձ մոռացել ես, բայց իմ այդ փորձի դէմ սիրտս կատաղօրէն բողոքում էր: Նա՝ այդ սիրտը, բղաւելով ինձ ասում էր.

– Իզուր մի՛ փորձիր ինքնախաբէութեամբ զբաղուել: Այն չափով, որ դու ես նրան սիրում, գուցէ և աւելի նա է քեզ սիրում: Սրտի, սիրոյ այդ պայքարում ես յաճախ ֆիզիկապէս ընկրկում էի: Յաճախ հիւանդանում էի: Մի անգամ էլ գրեթէ գերեզմանի եզրից վերադարձայ: Ծնողներս և բարեկամներս իմ կորուստի լաց ու շիւանն էին սկսել արդէն: Ինքս էլ չգիտեմ՝ ինչպէս և ինչ հրաշքով չմեռայ և շարունակեցի ապրել: Երբեմն ինձ մխիթարում էի, որ իմ բախտն ու ճակատագիրը իմ մահուան չեն համաձայնուել միայն այն պատճառով, որ վճռել են ինձ պահել քո վերադարձի և քեզ համար:

Սրտի և սիրոյ այս պայքարը դեռ շարունակւում է: Տարօրինակն այն է, որ այդ սպասման հաւատքը դեռ կանգուն է, դեռ մնացել է անխորտակելի: Ինձ թւում է, որ գալիս ես, ճանապարհին ես, կը հասնես: Ահա այսօր կգաս, էգուց կամ հիմա, մէկ ժամից կը հասնես: Չգիտեմ, չեմ կարող հասկանալ, ինչու՞, ի՞նչ պատճառով եմ շարունակում քեզ այսքան խենթօրէն սիրել և չեմ կարող ինձ բացատրել՝ այսքան երկար սպասումներից յետոյ ինչու՞ համար դեռ շարունակում եմ անխախտ և անվերջ և նոյն հաւատքով ու նոյն ջերմեռանդութեամբ սիրել քեզ... Ալիս»:

Յ. Գ.- Անհունօրէն ցաւում եմ, որ ես, հօրս և մօրս միակ զաւակը լինելով, ստիպւած եմ համաձայնուել նրանց հետ միասին թողնելու Թիֆլիսը՝ իմ քեզ հետ ունեցած երջանիկ հանդիպման այս վայրը, այս քաղաքը: Հայրս չկարողանալով համաձայնուել իրեն տրուած վիրաւորանքին՝ իր պաշտօնի ցածրացումին, որոշեց մեզ հետ միասին մեկնել Պոլիս՝ հօրեղբօրս մօտ: Մեր նոր հասցէն կը լինի՝ Ղալաթա, N 57, Իսթանբուլ, Բարսեղեան»:

***

Ալիսի նամակի իւրաքանչիւր բառը կարծես պողպատեայ մուրճի մի հարուած էր հասցնում սրտիս: Լացել, երեխայի նման հեկեկալ սկսեցի: Գիտէի, որ Ալիսը՝ այդ սքանչելի աղջիկը, սիրում էր ինձ, բայց երբէք չէի կարող ենթադրել, որ նրա սէրն այդքան ուժեղ, այդքան հաստատուն և այդքան տևական էր: Ալիսի՝ իմ նկատմամբ տածած զգացումը սիրուց աւելի բարձր, աւելի նուիրական ապրում էր եղել: Մի աներեր, հաւատաւոր նուիրում և ինքնազոհութիւն: Խեղճ աղջիկը իր անձն ու էութիւնը, իր ամբողջ զգացումներն ու ապրումները այդ սիրոյ մէջ էր խտացրել և երդւեալ հաւատացեալի նման այդ սիրով տոգորուել ու տանջւել էր:

Իրեն գրածս նամակի մասին Ալիսը ոչ մի յիշատակութիւն չէր արել: Հաւանաբար նա այդ նամակը չէր ստացել: Նա սպասել, անվերջ և յամառ սպասել էր ինձ: Կարծես իր երջանկութեան և անուրջի արևին սպասելիս լինէր: Բայց ինչո՞վ, ի՞նչ պատճառով մեղաւոր և պատասխանատու էի ես:

Վերջին նահանջին բազմահազար նահանջողներիս ապաւէնն ու նպատակասլեռումը Կովկասն էր: Առանց կատարեալ տեղեկութիւն ունենալու Ալիսի այդ անսասան, անխափան և հաւատաւոր սիրոյ մասին՝ անկասկած, Թիֆլիս պիտի վերադառնայի, նորից նրան պիտի հանդիպէի և նորից իմանայի, համոզուէի նրա այդ աներեր և հաւատաւոր նուիրումի մասին:

Դժբախտաբար, ճակատագրի անգութ դասաւորութեամբ հեռուները շպրտուեցի, և այլ երկրներում, կեանքի օրհասական և դաժան պայքարի մէջ մխրճուեցի: Այդ ապերջանիկ և ապաբախտ պայմաններում ես ստիպւել էի հրաժարուել ամէն ինչից, մինչև իսկ երջանիկ սպասումներից և կենսախինդ ձգտումներից:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Համաձայն նշանակած ժամադրութեան՝ յաջորդ օրը՝ առաւօտեան ժամը 7 1/2-ին, քարտուղար Իւրաշվիլիի մօտ գնացի: Նա ինձ ընդունեց առաջին օրուայ սիրալիրութեամբ և նորից առանց ժամանակ կորցնելու՝ սկսեց.

– Ձեր մեկնելուց երկու ժամ յետոյ ես հեռախօսային կապի մէջ մտայ ընկ. Ստալինի հետ: Նա ներկայիս գտնւում է Սոչիում: Տասնօրեայ արձակուրդով այնտեղ է եկել հանգստանալու նպատակով: Նա ինձ յայտնեց, որ ներգաղթի հարցը, ինչպէս ինքս էլ երէկ ձեզ ասացի, ներկայիս ընդհանուր առումով քննութեան է ենթարկւում: Նա նոյնիսկ ասաց, որ հաւանաբար, առաջին հերթին հայերի ներգաղթի խնդիրն ուսումնասիրութեան ենթարկւի, բայց աւելացրեց նաև, որ այդ ուսունասիրութիւնն այնքան էլ շուտ չի վերջանալու: Հաւանաբար երկու-երեք տարուց աւելի շուտ հնարաւոր չի լինի դրա իրականացումը: Խորհրդային Միութեան հսկայական տարածանքի վրայ հայերի համար շատ աշխատանք գոյութիւն ունի, բայց նա համոզուած է, որ ներգաղթող հայերը ցանկութիւն ունեն անպայման իրենց երկրում՝ Հայաստանում տեղաւորուել և այնտեղ էլ աշխատել ու ապրել:

Այստեղ Իւրաշվիլին, իր խօսքն ընդհատելով, կարծես ուզեց իր յայտնութիւնների՝ ինձ վրայ թողած տպաւորութիւնը որոշել, թէև նա ինքն էլ շատ լաւ էր հասկանում, որ 2-3 տարուայ խոստումը ոչ միայն ինձ, այլև մանաւանդ ներգաղթել ցանկացող գիւղացի և աշխատաւոր բազմութիւններին ոչ մի կերպ ոգևորել չէր կարող: Այդպիսի խոստումը խուսափողական և ապառիկ էր:

Ես շփոթած և անբաւական էի ապագայում իրականանալիք այդպիսի խոստումից և դժւարութեամբ դժգոհութիւնս զսպել կարողանալով՝ ասացի.

– Գաղթելու աճապարող հազարաւոր հայերի համար այդ երկու-երեք տարիների ժամկէտը չափազանց երկար և աննպաստ է. նրանք համոզուած են, որ իրաւունք ունեն օր առաջ իրենց հարազատ հայրենիքը վերադառնալու:

Իմ արտայայտած վերջին նախադասութիւնը, մանաւանդ «Համոզուած էին, որ իրաւունք ունեն» բառերը ջղագրգռութեան ենթարկեցին «հայասէր» վրացի քարտուղարին: Նա այլևս չկարողացաւ իր ներքին հակակրութիւնը հակակշռի ենթարկել և բացականչեց.

– Ասացէ՛ք, խնդրեմ, իսկ այդ հայերն իրաւունք ունէի՞ն Հայաստանում հաստատուած մեր խորհրդային կարգերը տապալելու և նորից իրենց օտարամերժ ու ազգայնամոլ իշխանութիւնը վերահաստատելու համար զէնք վերցնել և մեր դէմ կռուելով՝ մերոնց կոտորել: Այդ ձեր ասած հայերը՝ իրենց դաշնակ գլխաւորների ղեկավարութեամբ, չբաւականացան մեր, այս պարագայում ձեր երկրի տերիտորիայի կէսը Ալեքսանդրապոլի դաշինքով թիւրքերին նուիրելու, ցանկանում էին, փետրուար 18-ի ըմբոստութեամբ մնացեալն էլ մերոնցից խլելով՝ նորից նրանց պարգևել:

– Ներողութիւն, քաղաքացի՛ Իւրաշվիլի, ես այստեղ չեմ եկել ձեզ հետ վիճաբանութեան բռնւելու համար: Եկել եմ իսկական հայրենատենչ հայերի ներգաղթի համար ձեր և ձեր լիդերների օժանդակութիւնը խնդրելու: Ես ինձ իրաւացի և կարող չեմ համարում քաղաքական բնոյթ կրող հարցերի մէջ մխրճւելու: Միայն, եթէ նորից վշտանալու չլինէք, ստիպւած եմ յայտնելու, որ այդ ձեր դաշնակ կոչւածները, վստահաբար, Ալեքսանդրապօլի՝ անկասկած անխղճօրէն և բռնութեամբ պարտադրուած դաշինքը ստորագրել չէին յօժարի, եթէ թիւրքերի և ձեր զինակից բանակների խեղդիչ ճնշման ենթարկւած չլինէին: Ինչ վերաբերում է ձեր ակնարկած

փետրուարեան ապստամբութեանը, նրանք երբեք չէին փորձի այդ քայլն առնելու, եթէ սկզբից ի վեր նրանց տասնեակ հարիւրներով, առանց հարցաքննութեան և դատարանի, չբանտարկէին և չկոտորէին: Ամէն մարդու համար կեանքը թանկ է: Ամէն մէկը աշխատում է զուր և անտեղի չմեռնել: Կեանքի պաշտպանութիւնը նոյնիսկ բոլոր կենդանիների և ամէն տեսակ շնչաւոր արարածների համար բնական և բնազդական է: Հետևաբար զարմանալու ոչինչ կայ, եթէ մարդիկ, մի այլ գաղափարի և տեսակէտի պատկանող մարդիկ, որոնք կոտորելու և գնդակահարելու էին տարւում, ըմբոստանային և իրենց գոյութիւնը փրկելու ձգտէին:

– Բայց, քաղաքացի՛ Սարիաղեան, դուք մոռանում էք, որ ամէն յեղափոխութիւն և վարչակարգի յեղաշրջում չի կարող առանց արիւնահեղութեան իրականանալ: Ճերմակ բանակայինները և նրանց հետ համերաշխօրէն և միասնաբար գործող հազարաւոր իմպերիալիստներն ու նրանց հլու կամակատարները, որոնց թւումն էին նաև մու-սավաթականները, վրացի ազգայնամոլները և ձեր դաշնակները, նպատակադրել էին մեզ կոտորել, բնաջնջել և հողին հաւասարեցնել: Ինչպէ՞ս ուրեմն մենք կարող էինք նրանց նկատմամբ ջենտլմէն և ներողամիտ լինել: Մեր վարչակարգը ամրապնդելու համար մենք ստիպւած էինք մեր հակառակորդներին՝ մեր արեան ծարաւի թշնամիներին կոտորել և նրանց ամէն տեսակի թշնամական ելոյթն ու արարքները խեղդել և ոչնչացնել:

– Բայց չէ՞ որ այդ ձեր նախատինքի և ատելութեան արժանացած մարդիկ՝ այդ դաշնակցականները, առանց դիմադրութեան և արիւնահեղութեան յօժարեցին դեկտեմբեր 2-ին ձերոնց՝ այսինքն հայ համայնավարներին յանձնել իրենց ձեռքում գտնւող երկրի իշխանութիւնը: Նրանք նոյնիսկ ձեր տրամադրութեան ներքոյ դրին իրենց բոլոր զինւորական ուժերը, պահեստները և զինւորական հրամանատարներին: Ուրեմն ի՞նչ կարիք կար հետագային նրանց նկատմամբ վրէժխնդիր լինել և նրանց անխնայ ջարդին ձեռնարկել:

– Ո՛չ, հազար անգամ ոչ,– այս անգամ աւելի զայրացած բացականչեց Իւրաշվիլին,– նրանք մեզ անկեղծօրէն չը մօտեցան և իշխանութիւնը յանձնելուց յետոյ էլ շարունակեցին իրենց էնտրիգներն ու դաւադրութիւնները: Նրանք ափսոսում էին քարուքանդ և կտոր-կտոր եղած երկիրը յանձնած լինելու համար և մշտական ու անմիջական յարաբերութեան մէջ էին մեր թշնամիների՝ այսինքն տասնեակ տարիների իրենց բարեկամ իմպերիալիստների հետ:

Տեսնելով, որ բոլորովին անօգուտ և աւելորդ է մեր «բարեկամ» վրացու հետ շարունակել սկսած վիճաբանութիւնը, ջանացի խնդիրն անուշի կապել: Բաժանւելուց առաջ փորձեցի նրանից մի փոքր օժանդակութեան խոստում առնել: Նրան հարցրի.

– Այս բոլորից յետոյ կարո՞ղ եմ յոյս ունենալ, որ ինչպէս սկզբում խոստացաք, ձեր կարողութեան սահմաններում իմ առաջադրած խնդրին օժանդակելու էք: Դուք՝ որպէս հայ ժողովրդի բարեկամ, բարի եղէք չմերժելու հազարաւոր հայրենակարօտ գիւղացիների և աշխատաւորների ներգաղթին օգտակար լինել: Ներգաղթի վերաբերմամբ ձեր նպաստաւոր միջնորդութիւնը կարող է մեծ նշանակութիւն ունենալ: Ներգաղթել ուզող հայերը միայն մի ցանկութիւն ունեն՝ աշխատել իրենց գոյապրուստն ապահովելու, իրենց զաւակներին դպրոց ուղարկելու և իրենց ընտանիքի առողջական վիճակը փրկելու: Ներգաղթել տենչացող ժողովուրդը սիրայօժար և ինքնակամ ցանկանում է նիւթել իր հայրենիքի վերաշինման և բարգաւաճման հոյակապ գործին: Նա երբեք չի յօժարելու իր քաղաքացիական կեցւածքով ամենափոքր արգելք լինելու իր հայրենիքի երջանիկ ապագայի կերտման մեր գործին:

Իւրաշվիլին նորից սիրալիր և ժպտադէմ ասաց. (ինձ համար այս անգամն էլ նրա անկեղծութեան բնոյթն ու աստիճանը որոշելը դժւար էր).

– Վստա՜հ եղէք, որ իմ իրաւունքի և կարողութեան սահմաններում կաշխատեմ օժանդակել գործին: Կրկնում եմ, Խանջեանն իմ լաւ ընկերն ու բարեկամն է: Խորապէս համոզւած եմ, որ նրան չափազանց շատ շահագրգռում է իր հայրենակիցների ներգաղթի հարցը: Իմ ընկերական պարտքն եմ համարում նրան այս գործում օգնելու:

Պատրաստւում էի քաղաքավարական շնորհակալութիւնս յայտնել և ցտեսութիւն ասելով՝ նրանից բաժանւել: Սենեակի դռանը հասած վայրկեանին նա ինձ խնդրեց նորից յետ գալ և նստել բազկաթոռիս:

– Ներեցէ՛ք, եթէ մի քանի րոպէ ես ձեզ ուշացնում եմ: Ինձ շատ է հետաքրքրում իմանալ ձեր տեղեկութիւնները հայերի հետ միաժամանակ Պարսկաստան գաղթեցւած վրացիների մասին: Շահ-Աբաս թագաւորը 17-րդ դարի սկզբում հայերի հետ միասին մեծ թւով վրացիներ տարաւ Պարսկաստան: Նրանք ի՞նչ են անում: Գուցէ նրանք էլ հայերի նման ցանկութիւն ունեն նորից իրենց երկիրը՝ Վրաստան ներգաղթել... Այդ մասին ի՞նչ կարող էք ասել...

– Այդ ձեր ակնարկած վրացիները այլևս վրացի չեն: Նրանք իրենց փոքրամասնութեան բնոյթից վաղուց դուրս գալով՝ ձուլւել են տեղացիների մէջ: Ներկայիս բոլորովին դժւար և գրեթէ անկարելի է նրանց ինքնութիւնը որոշել: Այնպէս որ նրանք վրացի ազգութեան համար կորած և անհետացած տարրեր են:

Իւրաշվիլին այդ մասին ոչինչ չհարցրեց: Նրա դէմքին շեշտւած տխրութիւն նկատեցի: Մի փոքր լռութիւնից յետոյ, որպէս հրաժեշտի խօսք և յանձնարարութիւն, ասաց.

– Խանջեանը՝ ձեր մեծ հայրենասէր հայը, այդ ձեր խնդրած ներգաղթի հարցի բարեյաջող լուծման խնդրում կարևոր և մեծ դեր կարող է խաղալ: Մեր վետերան ընկերները, մանաւանդ Լենինն ու Ստալինը, նրան յարգում և սիրում են: Նրա խօսքն ու խնդիրքը մեծ արժէք են ներկայացնում: Մի՛ մոռացէք նրա հետ տեսակցելու և նրան ներկայացնելու խնդիրը:

***

Հիմնարկութիւնից դուրս գալուց յետոյ սկսեցի մտովին անդրադառնալ այդ վրացի կարևոր պաշտօնատարի հետ ունեցած իմ երկու տեսակցութիւնների և մեր երկուսի միջև տեղի ունեցած խօսակցութեան և վիճաբանութեան մասին: Գիտէի, որ այդ մարդը՝ որպէս խորհրդային իշխանութեան ծիրում եղած ազգութիւնների բարձրագոյն օրգանի գործադիր մարմնի մի ներկայացուցիչ, այն էլ Թիֆլիսի ներկայացուցիչ, բաւական կարևորութիւն էր ունենալու: Նրա կածիքը, նրա նպաստաւոր կամ անբարեհաճ դիրքաւորումը մեր ներգաղթի խնդրի նկատմամբ կարևոր նշանակութիւն կարող էր ունենալ: Այդ ժամանակներում ես դեռ բաւական երիտասարդ էի և, որպէս այդպիսին, աւելի քիչ յոռետես էի մարդկանց արտայայտած խօսքի և կարծիքի անկեղծութեան վերաբերմամբ:

Իւրաշվիլին երևութապէս իրեն հայերին բարեկամ էր ցոյց տալիս: Մանաւանդ Խանջեանի նկատմամբ համակրութիւն և յարգանք էր ցուցաբերում: Գործի յաջողութեան համար օժանդակութիւն էր խոստանում, բայց... այդ բայցը շատ կարևոր էր: Նա չկարողացաւ թաքցնել իր հակակրութիւնը մեր ժողովրդի հանդէպ:

Ճիշտ է, նրա հակակրութեան և ատելութեան թիրախը դաշնակցականներ էին, բայց նա չկարողացաւ իրեն զսպել այդ հակակրութեան զգացումը տարածելու բոլոր հայերի նկատմամբ:

Իմ ուղեղում փորագրուած մնացին նրա ամբաստանութեան հետևեալ խօսքերը. «Նրանք՝ այդ հայերը, իրենց դաշնակների ղեկավարութեամբ մեր խորհրդային կարգերը տապալելու համար զէնք վերցրին, մերոնցից իրենց երկրի մնացած կէսն էլ խլելով՝ թիւրքերին պարգևելու համար...»:

Իմ միակ և վերջին յոյսը մնում էր իմ նախկին ընկերը՝ Աղասի Խանջեանը: Ամբողջ 12 տարիների ընթացքին նրան չէի հանդիպել: Նամակագրութիւն էլ չէի ունեցել: Իմ տեսած երեք կարևոր անձնաւորութիւնները նրա հայրենասիրութեան մասին մեծ գովեստով էին արտայայտուել: Նա ներկայիս քաղաքական կարևոր դէմք էր դարձել և սիրուած ու յարգուած էր խորհրդային առաջնորդների կողմից: Պահե՞լ էր արդեօք իր պատանեկութեան համեստութիւնն ու ազնուութիւնը: Կը ցանկանա՞ր կամ ի վիճակի կը լինէ՞ր իր նախկին ընկերոջ խնդրանքը կատարելու: Շատ մօտ ապագան այդ բոլորը ցոյց կը տար: Վճռեցի Մոսկւա գնալ և նրան տեսնել:

Երևանում Ս. Տէր-Գաբրիէլեանն ինձ յայտնել էր, որ Ազգութիւնների գործադիր մարմնի Բաքուի ներկայացուցիչը հայ էր՝ Ապրէսեան ազգանունով: Նրան Թեհրանից էի ճանաչում: Երկու տարի առաջ խորհրդային կառավարութեան հիւպատոսն էր Իրանում. պատուական մարդ էր և լաւ հայ: Օգտակար համարեցի Մոսկւա գնալուց առաջ նրան Բաքւում հանդիպել և ներգաղթի խնդրի մասին նրա հետ խօսել: Թեհրան եղած ժամանակ նա հանգամանօրէն տեղեկացել էր խնդրին և ներգաղթի ցանկութեամբ տոչորուող հայերի զգացումներին կատարելապէս ծանօթ էր:

ԲԱՔՎՈՒՄ

Բաքու հասնելուց և հիւրանոց իջևանելուց յետոյ փորձեցի հեռախօսով կապուել Ապրէսեանի հետ: Դժբախտաբար, ինձ չյաջողուեց նրան իր պաշտօնատեղիում գտնել: Ինձ յայտնեցին, որ էգուցայ ժամը 7-ից աւելի շուտ նրան հանդիպելը հնարաւոր չէր: Հաշուեցի, որ այդ օրն իմ ճամփորդութեան 17-րդ օրն էր: Մտածեցի հէնց այդ գիշերուայ գնացքով Կիրովաբադ՝ նախկին Գեանջա մեկնել քրոջս՝ Արաքսուն տեսնելու և մի քանի օր նրա և նրա ընտանիքի մօտ ապրելու երջանկութիւնն ու հրճւանքն ունենալու: Երկար մտմտուքից և ձև ու չափից յետոյ միտքս փոխեցի: Երանի, հազար երանի կը լինէր, եթէ այդ ձև ու չափը արած չլինէի և քրոջս մօտ գնալու որոշումս փոխած չլինէի: Տարօրինակ և մինչև իսկ ինձ համար անբացատրելի բնաւորութեան տէր մարդ եմ եղել: Միշտ իմ անհատական ապրումները բաւականութիւնն ու մինչև իսկ երջանկութիւնը զոհել եմ ընդհանուր, հաւաքական և հասարակական բնոյթ ունեցող գործերին:

Այսպէս ուրեմն, որոշեցի իմ չափազանց սիրելի քրոջս այցելութիւնը Մոսկւայից վերադարձիս յետաձգել: Աւելի լաւ է, մտածեցի, իմ ստանձնած պարտականութիւնը կատարելուց յետոյ հանգիստ սրտով քրոջս մօտ գնամ: Ենթադրում էի, որ ամենաուշը մինչև 5-6 օր ինձ կը յաջողուի Աղասուն հանդիպել, նրա հետ մէկից աւելի անգամներ խօսակցել իմ առաքելութեան մասին և մնացեալ 6-7 օրը քրոջս մօտ լինել: Իմ ճամփորդութեան ժամկէտը 13 օրից լրանալու էր, և հետևաբար կատարեալ հանգստութեամբ հնարաւոր կը լինէր թէ՛ ընդհանուր և թէ՛ անհատական սիրելի պարտաւորութիւններս կատարել:

Յաջորդ օրը՝ առաւօտեան ժամը 7-ին, Ապրէսեանի մօտ գնացի: Նա առանց սպասեցնելու անմիջապէս ինձ ընդունեց իր աշխատասենեակը: Առաջին իսկ հայեացքից նկատեցի, որ նրա գրասենեակը Իւրաշվիլու Բիւրօի շքեղութիւնից շատ հեռու էր: Ապրէսեանի այս ոչ ընդարձակ սենեակը շատ

սովորական կահաւորում ունէր: Իւրաշվելու գրասենեակի շքեղ գրասեղանը, բազկաթոռները, ջահերն ու մուգ վարդագոյն վարագոյրներն այստեղ գոյութիւն չունէին:

Ներս մտնելուն պէս Ապրէսեանը, շատ զարմացած և բացառիկ սիրալիրութեամբ ինձ ընդունելով, բացականչեց.

– Սիրա՞ք, այս ի՞նչ հրաշքով այստեղ ընկար: Բոլորովին չէի կարող ենթադրել, որ մեր կողմերը գալու կը լինես: Պատմիր, տեսնենք, ի՞նչ քամի է քեզ այստեղ գլորել...:

– Ձեր խիստ ցանկալի տեսութեան կարօտը,– պատասխանեցի նրան՝ ինքս էլ շատ ուրախացած:

– Այդ մասին չեմ կասկածում, բայց իսկական պատճառը բացատրիր:

Մանրամասն պատմեցի առաքելութեանս մասին: Նկարագրեցի նաև իմ հանդիպումներն ու տեղի ունեցած խօսակցութիւնները, ինչպէս նաև ինձ տուած բերանացի խոստումները: Ապրէսեանը համբերութեամբ և ուշադրութեամբ ինձ լսելուց յետոյ ասաց.

– Այո՛, իմ՝ Թեհրանում եղած ժամանակամիջոցում յարուցած խնդրի հետ լիովին ծանօթացայ: Պարսկահայ չքաւոր տարրերի բուռն ցանկութեանն էլ տեղեակ եմ: Ներգաղթի խնդրի նպաստաւոր լուծման ամենաառաջին պայմանը Ազգութիւնների գերագոյն մարմնի սկզբունքային համաձայնութիւնը պիտի հաշուել: Նրանից յետոյ Հայաստանի բնակարանային շինարարութեան տագնապի մեղմացումն է: Ներգաղթել ցանկացողների ճնշող տոկոսը չքաւոր, աղքատ գիւղացիներ և բանւորներ են, դժբախտաբար, նրանք նիւթական ամէն տեսակի միջոցներից զրկուած վիճակում պիտի մտնեն Հայաստան: Իսկ այդ ամենից յետոյ ամենամեծ ցաւը Հայաստանի հողային տարածանքի անբաւականութիւնն է: Մեր մայր երկրից զանազան առիթներով և պատճառներով հսկայական հողամասեր են անջատուած: Խանջեան Աղասին այդ առթիւ շատ մտահոգ է և ամէն կերպ աշխատում է սրբագրել կատարուած կոպիտ սխալները: Իսկ թէ նրան կը յաջողուի՞ այդ անել, յայտնի չէ: Նման հարցերի կարգաւորումը մի շարք լուրջ դժուարութիւնների հետ է կապուած: Հայաստանի սահմանների վերաքննութիւնն ու սրբագրումը բռնկման պատրաստ վառօդի հետ խաղալ է նշանակում: Փոխյարաբերութիւնների ամենափոքր լարուածութիւնը չափազանց վտանգաւոր կը լինի, և հաւանաբար, ի վերջոյ հայերի վնասին կը վերջանայ...

Նա իր խօսակցութեան թելը կտրեց: Նրա դէմքին նկատուող անհանգստութիւնից եզրակացրի, որ նրա ներքին, հայի հոգին իր ծնող ազգի վզից կախուած հսկայ և ժայռանման պողպատեայ ծանրութիւնից կքում և տանջւում է: Նա իր փորձառու և հեռատես քաղաքագէտի ոճով եզրափակեց.

– Ներկայ պայմաններում Խանջեանի նման պատասխանատու դիրքի հասած հայ մարդկանց համար անսահման համբերութիւնը և ծայրայեղ զգուշաւորութիւնը չափազանց անհրաժեշտ է: Ամենափոքր սայթաքումը ամէն ինչ կը փչացնի և յօնքը սարքելու փոխարէն աչքն էլ կը կուրացնի:

Մի փոքր շունչ քաշելուց յետոյ՝ աւելացրեց.

– Աղասին գնացել է Մոսկւա, հաւանաբար Լենինգրադ էլ կը գնայ: Անհրաժէշտ է նրան տեսնել: Իմ կարծիքով, միմիայն նա ի վիճակի կը լինի ձեր ցանկացած ներգաղթի խնդիրը կարգաւորելու:

ՄՈՍԿԻԱՅՈՒՄ

Նախկին ռուսական կայսրութեան և ներկայի չափազանց շատ ընդարձակ Խորհրդային երկրների Միութեան հոչակաւոր մայրաքաղաքում՝ Մոսկւայում եմ: Առաջին ագամն է, որ ոտք եմ դրել այդ շատ մեծ և ծաւալուն քաղաքը: Դժբախտաբար, մինչ այդ եւրոպական և ամերիկեան մայրաքաղաքներում և մեծ քաղաքներում չեմ եղել, որպէսզի կարողանամ նրանց համեմատել այս մէկի հետ: Երեք օրերի ընթացքում իմ տեսնել յաջողած այս քաղաքի զանազան մասերը՝ իրենց լայնանիստ և հեռուները ձգող թաղամասերով, ինձ համար չափազանց զարմանալի նորութիւններ են: Քաղաքի գլխաւոր պողոտաները, թաղամասերը, մերձակայ շրջանները, մանաւանդ շէնքերն ու հիմնարկները, հրապարակները, զբօսավայրերը, արձանները, համալսարանները, թանգարանները, թատրոնները, օպերաները և հասարակական պարտէզներն ու վայրերն ինձ ցոյց տուող բարեացակամ առաջնորդս ինձ յայտնեց որ Մոսկւան լրիւ տեսնել կարողանալու համար առնուազն մի ամիս պիտի շրջագայել:

Թեհրանի դեսպանատանը ծառայող պաշտօնեաներից մէկը՝ Պենկայտիս անունով, ազնիւ սիրալիրութեամբ ինձ գրաւոր մի յանձնարարական էր տուել, որով ինձ հնարաւոր եղաւ Մոսկւայում գտնուած օրերիս օգտուել նրա տրամադրութեան ներքոյ գտնուող բնակարանից: Ինձ համար դա մեծ բարիք եղաւ նախ այն պատճառով, որ 8-9 օր ինձ հնարաւոր եղաւ անվճար օգտուել նրա բնակարանից և երկրորդ ու ամենակարևորը, նրա համար, որ Պենկայտիսի մեծ քոյրը, բացառիկ ազնուութեամբ և անօրինակ սիրալիրութեամբ օրական մի քանի ժամ ինձ հետ շրջագայելով, ծանօթացրեց մեծ և ընդարձակ մայրաքաղաքի հետ: Իրար յետևից արագընթացօրէն անցնող այդ օրերը կեանքիս անմոռանալի օրերիցն են:

Ներկայիս ճշտօրէն չեմ կարող յիշել այն Պենկայտիս կոչուած եղբօրն ու քրոջը, թէ բալթեան որ երկրից էին և ազգային ինչ ծագում ունէին, բայց ի վիճակի եմ յայտնելու, որ նրանք երկուսն էլ, որպէս մարդ, անսահմանօրէն ազնիւ և սիրալիր էին: Վստահօրէն կարող եմ ասել, որ նրանք մարդկային ցեղի բացառիկ ազնաբարո ջէնտլմէններիցն էին: Սրտի անհուն զեղումով միշտ վերյիշում եմ նրանց:

***

Իմ Մոսկվա ժամանումից երկու օր առաջ Աղասին Լենինգրադ էր մեկնել: Այդ պարագան ինձ չափազանց անհանգստացրեց: Նրա գործերի բնոյթի և նպատակի մասին Լենինգրադում որևէ տեղեկութիւն ստանալ չէի կարող: Ենթադրում էի, որ նման տեղեկութիւնները խորհրդային երկրներում ընդհանրապէս գաղտնիքների թումն էին և իմ կողմից այդ առթիւ կատարելիք ամէն փորձ իզուր և ապարդիւն պիտի անցնէր:

Ազգերի գերագոյն խորհրդի գործադիր մարմնի պալատում ինձ դժուարութեամբ յաջողուեց նրա վերադարձի մօտաւոր թականը ստուգել: Մխիթարականն այն էր, որ ինձ վստահեցրին, թէ մինչև մի շաբաթ Խանջեանն իր վերադարձին գոնէ մէկ-երկու օրով մնալու է այդ պալատում:

Սպասումի չափազանց անհանգիստ և ջղային վիճակ էր ստեղծել ինձ համար: Անելիքս որոշել դժուարանում էի: Իմ ունեցած դրամական միջոցների մնացորդն ինձ թոյլ չէր տալիս չնախատեսած ծախսեր անելու: Բոլորովին վստահ էլ չէի, որ եթէ ուզենամ Լենինգրադ գնալ, այնտեղ հասնելուց անմիջապէս յետոյ կը յաջողեմ Աղասուն հանդիպել:

Շատ դժուար և անելանելի դրութիւն էր ստեղծել ինձ համար: Ինքս ինձ լաւ էի ճանաչում: Փող չունենալուց ուրիշից փոխարինաբար դրամ ուզել և պարտք վերցնելն ինձ համար տաժանակիր աշխատանք կատարելուց շատ աւելի դժուար էր թում: Երկար ու բարակ մտածելուց և հնարաւոր միջոցներն ստուգելուց յետոյ ստիպուեցի որոշել Մոսկվա մնալ և սպասել Աղասու վերադարձին:

Պարտաւորուած սպասումի այդ որոշումը հաճելի չէր, բայց, դժբախտաբար, ուրիշ ելք չունէի: Եթէ ուզենայի երես պնդացնել և չկարմրել, գուցէ հնարաւոր լինէր Պենկայտիսի քրոջից փոխարինաբար մի գումար վերցնել կամ թէկուզ երբ Աղասուն հանդիպէի, նրանից խնդրէի, բայց այդ բոլոր հնարաւորութիւններն ինձ համար, իմ նկարագրի համար անհնարին էին թում:

ԱՂԱՍԻ ԽԱՆՋԵԱՆԻ ՄՕՏ

Ինձ յայտնուած ժամանակին, այսինքն՝ մի շաբաթւայ գլխին, Աղասին Մոսկվա վերադարձաւ: Ես նոյն օրը տեղեկացայ նրա ժամանման մասին: Ենթադրելով, որ նա կարող է յոգնած կամ նոյն գիշերուայ համար ժամադրուած լինել, հեռախօսով և անձամբ յաջորդ օրուայ ժամը 11-ի համար (կէսօրից առաջ) տեսակցութեան ժամանակ վերցրի:

Ճիշտ որոշուած ժամին Խանջեանի հետ մեր հանդիպումը տեղի ունեցաւ: Արտաքին գործերի ժողկոմատին կից Ազգերի գործերի գործադիր մարմնի հիմնարկութեան բիւրոյում տեղի ունեցաւ այդ տեսակցութիւնը: Սենեակից ներս մտնելուն պէս Աղասին, նստած տեղից բարձրանալով, արագաքայլ մօտեցաւ և ինձ իր գիրկը սեղմեց: Մի քանի ջերմ համբոյրներ փոխանակեցինք:

– Սիրելի՛ Սիրաք, ինձ համար միանգամայն անսպասելի էր այս անակնկալ և ուրախառիթ հանդիպումը,– ասաց Աղասին:– Ի՞նչ հրաշքով 13 տարիներից յետոյ ինձ մտաբերել ես և ի՞նչ աւելի մեծ հրաշքով եկել ես Մոսկվա:

– Աղասի՛, իմ շատ սիրելի և յարգելի՛ Աղասի,– պատասխանեցի նախկին, բայց ըստ երևոյթին հաւատարիմ մնացած ընկերոջս,– իմ ամենամեծ ցանկութիւններից մէկը քեզ նման ազնիւ և յարգելի ընկերոջը գոնէ մի անգամ ևս հանդիպելն էր: Անչափ ուրախ եմ, որ այդ իմ ցանկութիւնը կատարուեց:

– Այդ մասին ոչ մի կասկած ունեմ: Երկար տարիներից ի վեր կորցրած փոքր Աղասուդ նորից հանդիպելը բնականաբար քեզ շատ պիտի հետաքրքրէր: Դու համարեա չես փոխուել: Իսկ իմ մասին քո տպաւորութիւնը գուշակել չեմ կարող:

– Հասակ ես քաշել: Հասունացել ես: Իսկ ամենաէականն այն է, որ խելքիդ և բացառիկ ընդունակութիւններիդ շնորհիւ մեծ, շատ մեծ և յարգելի մարդ ես դարձել: Ինձ համար պարծանք ու պատիւ է, որ իմ նախկին ընկերը, ըստ քո ասութեան փոքրիկ Աղասին, արժանի է եղել մեր սիրելի հայրենիքի թիւ մէկ մարդը դառնալու և գրաւելու քաղաքական և հասարակական ամենաառաջին տեղը: Սրտիս խորքից հրճուելով՝ քեզ շնորհաւորում եմ այդ բացառիկ յաջողութեան առթիւ: Պատիւ ու պարծանք նախ ընտանիքիդ և ապա քո ծննդավայր Այգեստանին:

– Շնորհակալ եմ անկեղծ զգացումներիդ համար, բայց թերևս տակ շատ մեծ ձմերուկներ ես դնում: Հիմի պատմի՛ր քո և մանաւանդ այն մասին, թէ ինչպէ՞ս է պատահել, որ եկել ես այստեղ և ինձ հանդիպելու համար, ինչպէս ինձ յայտնեցին, մի ամբողջ շաբաթ անհամբեր սպասել ես: Ինչու՞ ինձ տեսնելու համար Երևան չմնացիր: Ի դէպ, հետաքրքիր է իմանալ, ի՞նչ տեղ ես իջևանել:

– Եթէ համբերութիւն և մանաւանդ ժամանակ ունենաս, ամէն ինչ կը պատմեմ:

– Շատ եմ խնդրում: Իմ նախկին երէց ընկերոջը լսելու թէ՛ համբերութիւն և թէ՛ ժամանակն ունեմ:

Ամէն ինչ մանրամասն պատմեցի Աղասուն: Նա լարուած ուշադրութեամբ լսում էր ինձ:

Երբ խօսքս վերջացրի և առաքելութեանս բուն նպատակը բացատրեցի, հարցրեց.

– Իսկ ներգաղթել ցանկացող պարսկահայերի թիւն ինչքա՞ն կը լինի:

-Ճշգրիտ թիւն ասել չեմ կարող: Ամէն պարագայում ենթադրում եմ, որ այդ թիւն առնուազն տասը հազար շունչից պակաս չի լինելու:

– Տասն հազար... փոքր թիւ չէ այդ: Նախքան մեր այս հանդիպումը՝ Թեհրանից, ՀՕԿ-ի կողմից ուղարկուած դիմումները կարդացել և խնդրի մասին համառօտ տեղեկացել եմ: Որպէս անկեղծ ընկեր և

բարեկամ՝ պիտի յայտնեմ, որ առայժմ մի քանի դժուարութիւնների առաջ ենք կանգնած: Դրանցից ամենակարևորը բնակարանային և տեղաւորման ու պատրաստման դժուարութիւնն է: Ընդհանուր պայմանների դասաւորումն ու համաձայնեցումը նախկինից պակաս կարևորութիւն չունի: Կան նաև ուրիշ կարգի խնդիրներ, որոնց լուծումը մեծ անհրաժեշտութիւն է ներկայացնում: Կարող եմ անկեղծօրէն քեզ վստահեցնել՝ իմ ջանքերի խոշորագոյն տոկոսը տրամադրել եմ այդ խնդիրների լուծման և գոյութիւն ունեցող դժուարութիւնների վերացման: Սրանից յետոյ էլ ոգի ի բռին աշխատելու եմ իմ երկրի բարգաւաճման և այդ երկիր վերադարձի կարօտն ունեցող հայրենակիցների՝ իրենց հարազատ հայրենիքում վերաբնակեցնելու ծրագիրն իրականացնելու համար:

– Սիրելի և յարգելի՛ ընկեր,– պատասխանեցի Աղասուն,– չափազանց ուրախ և խրախուսած եմ՝ լսելով անկեղծ արտայայտութիւններդ: Ուրիշներից իմացած էի քո հարազատ ժողովրդի հանդէպ տածած հոգածութեան և հայրենիքիդ վերաշինման համար թափած ջանքերիդ մասին: Ներկայիս անհուն հրճւանքով բախտաւորութիւն ունեմ այդ բոլորը լսելու ուղղակի քեզնից, քո աւետաբեր և ներշնչող լեզուից: Եթէ քեզ յաջողուի իրագործել իմ՝ այսինքն քո նախկին ընկերոջ խնդիրքը, բարի և անմեռ յիշատակ պիտի թողնես բոլոր հայերի սրտում:

Ամբողջ մէկուկէս ժամ տևող արտակարգօրէն մտերմական խօսակցութիւններից յետոյ բաժանուեցի իմ շատ ազնիւ և համեստ ընկերոջից՝ նրան խոստանալով ժամը 2-ին հանդիպել Ունիվերսալում՝ միասին ճաշելու համար:

Ճաշից յետոյ նա ինձնից խօսք առաւ երեկոյեան՝ ժամը 8 1/2-ին, նորից իրեն հանդիպելու Մոսկայի հռչակաւոր Մեծ Թատրոնը գնալու համար:

Ճիշտն ասած, Աղասու իմ նկատմամբ տածած սիրալիրութիւնը և երախտագիտական, համեստ վերաբերմունքն ինձ համար մեծ անակնկալ էր: Մտածում էի, որ վաղեմի ընկերս, իր այդ օրերի հռչակաւոր դիրքին հասած, հազիւ թէ ցանկանայ ինձ հետ մի քանի չոր ու պաշտօնական նախադասութիւններ փոխանակելու: Սիրտս հպարտութիւնից ուռչում էր, երբ նրա՝ այդ չափազանց մտերմական և հարազատ վերաբերմունքի մասին էի խորհում: Այդ բոլորից յետոյ պիտի յայտնեմ, որ նա դարձել էր չափազանց եփուած ու կոփուած քաղաքագէտ և իր բոլոր նախադասութիւններն ու արտայայտութիւնները, նոյնիսկ բառերն արտասանելիս մի տեսակ հոգատար և մտածուած հակակշռի էր ենթարկում: Ինձ համար այնքան էլ զարմանալի չէր թւում այդ, քանի որ գիտէի՝ Աղասին ընկերային, հասարակական, քաղաքական և կուսակցական շատ կարևոր դիրք ու պատասխանատու պաշտօն ունի: Անխուսափելի և անհրաժէշտ էր նրա ուշադիր շրջահայեցութիւնը:

Բայց և այնպէս, հակառակ իր շրջահայեաց զգուշաւորութեանը, Աղասին չկարողացաւ գոնէ ինձնից թաքցնել իր մի տեսակ անհամակրութիւնը վրացի ծայրայեղ ազգայնամոլների նկատմամբ: Ճաշի ժամանակ մենք երկուսով առանձին, մի սեղանի շուրջ նստել էինք իրար դէմ առ դէմ: Երբ Իւրաշվիլու հետ իմ ունեցած երկու տեսակցութիւնների և խօսակցութիւնների մասին պատմեցի, նա ինձ ասաց.

– Մօտաւորապէս ճիշտ գաղափար ես կազմել: Դժբախտաբար, այդ ակնարկածդ շովինիզմը նրանց՝ այդ վրացիներին վարակել է: Նրանք իրենց առանձնաշնորհեալ և շատ կուլտուրական մի ազգ են հաշւում և չեն սիրում ուրիշներին նոյնիսկ իրենց հաւասար համարել: Նրանք Ստալինին իրենցն են համարում և նրան իրենց ազգային հանճարը բնորոշող խորհրդանիշն են հաշւում ու նրանով անսահմանօրէն պարծենում են:

–Ինձ թւում է,– առիթից օգտուելով՝ աշխատեցի նրա կարծիքը ինձ շահագրգռող խնդրի մասին իմանալ,– այդ վրացիները Ստալինի դիրքը շահագործել են Հայաստանի տարածանքի անբնական և անարդար սահմանորոշման մէջ: Ի՞նչ ես մտածում, այդ մասին:

– Շատ ներողամիտ կը լինես, սիրելի՛ս, որ այդ առթիւ կարծիք յայտնել չեմ կարող: Այդ հարցի պատասխանը, թւում է ինձ, ոչ շատ հեռու ապագան է տալու[33]: Այսքան միայն կարող եմ ասել, որ Հայաստանի անարդար սահմանագծումի մասին ինքս էլ անհանգիստ եմ և իմ ուժերիս թոյլատրած միջոցներով աշխատելու եմ սրբագրել կատարուած անտեղի սխալները:

***

Իմ վաղեմի ընկեր Խանջեանից անհուն ափսոսանքով բաժանուեցի: Թատրոնից դուրս գալիս նա ինձ իր մեքենայով իմ ժամանակաւոր բնակարանը հասցրեց: Երկար և ջերմագին ողջագուրուելուց յետոյ ինձ ասաց.

– Սիրելի և ինձ համար միշտ յարգելի՛ ընկեր, վստահ եղի՛ր, որ ամէն հնարաւոր և գործադրելի միջոցների կը դիմեմ ձեր և ընդհանրապէս արտասահմանի հայրենաբաղձ հայերի ներգաղթի

33 Գազանաբարոյ ստորութեամբ սպանված և յօշոտուած, բայց բոլոր հայերիս համար անմահ մնացած սիրելի և աննման Աղասի, երանի թէ այդ անիծեալ հանճարը միայն և միայն նրանց, ազգայնամոլութեամբ կուրացած այդ վրացիներին պատկանած լիներ: Այդ պարագայում նա հնարաւորութիւն չէր ունենալու իր այդ բացարձակ բռնակալ և սանձարձակ դիրքին տիրանալու և այդ դիրքից բարբարոսաբար օգտուելով իր ոճրագործ ու դաւաճան բերիաներով կոտորել տալ քեզ ու մեր ժողովրդի հազարաւոր տաղանդաւոր մտավորականներին, գրողներին և ընտրանի ու հայրենասէր տարրերին (ծանոթ. հեղինակի): Ա. Խանջյանի մասին տե՛ս նաև սույն գրքի N 17 ծանոթությունը (էջ 28):

համար: Ես ջերմեռանդ կուսակցական եմ, բայց երբեք չեմ մոռացել, որ հայ եմ և պարտաւոր եմ իմ ազգին և հայրենիքին ծառայել: Հայ ժողովրդի յառաջադիմութեամբ, բարգաւաճմամբ և երջանկութեամբ մտածում եմ սատարել խորհրդային ազգերի ընտանիքի ընդհանուր բարօրութեանը և վերելքին: Ոչ ոք իրաւունք ունի ինձ մեղադրելու ազգայնամոլութեան մէջ, քանի որ, իմ կարծիքով, ինչպէս յայտնեցի, մեր պետութեան ազգերի մեծ ընտանիքի բարգաւաճումն ու երջանկութիւնը իրականանում է միայն ու միայն այդ ընտանիքի անդամ-ազգերի բարեկեցութեան, երջանկութեան և ֆիզիկական ու կուլտուրական կենցաղի ապահովութեան միջոցով: Իսկ մեր հայ ժողովրդի վերածնման, բարգաւաճման և վերելքի նախապայմանը սրա ֆիզիկական գոյութեան կատարեալ ապահովութիւնն է: Օտար հորիզոնների տակ հայ ազգի շինարար ընդունակութիւնները, նրա մտաւոր կարողութիւնները, նրա ստեղծագործական հանճարը օտարների օվկիանոսում խեղդւում և անյիշատակ անհետանում են:

– Սիրելի՛ Աղասի, ինձ համար հնարաւոր չէ բառեր և խօսքեր գտնել անկեղծ ու անսահման շնորհակալութիւնները յայտնելու: Պարծենում եմ մանաւանդ այն իրողութեամբ, որ 13 տարիներից յետոյ հոգով և սրտով ազնիւ, համեստ և առաքինի ես մնացել: Ինձ և հարիւր հազարաւոր հայերի համար պարծանք ու պատիւ է Աղասի Խանջեանի նման հայ ունենալ, մի հայ, որն իր գրաւած դիրքի գագաթնակէտին հասնելուց յետոյ իրեն չի կորցրել և իր ազգի հարազատ զաւակն է մնացել:

ՎԵՐԱԴԱՐՁ

Յաջորդ առաւօտեան ճեպընթաց գնացքով Մոսկւայից մեկնեցի:

Գնացքի խցիկ բաժանմունքում նստած՝ ազատ և հանգիստ ժամանակ ունէի իմ 28-օրեայ ճամփորդական տպաւորութիւններս և կատարած տեսակցութիւններս ու այցելութիւններս վերյիշելու և վերլուծման ենթարկելու:

Ընկերներիս, եղբօրս ու նրա ընտանիքի հետ ունեցած տեսակցութիւններից ու նրանց հետ անցկացրած ժամերից ու ժամանակից երջանիկ յի-շողութիւններ և ապրումներ ունէի: Մանաւանդ իմ անմման չափազանց յարգելի նախկին ընկերոջ՝ Խանջեանի հետ անցկացրած 8-9 ժամերն ուժգնօրէն տպաւորիչ էին:

Անհուն հպարտանքով սիրտս լեցւում էր՝ վերյիշելով ընկերոջս համեստութիւնը, անկեղծութիւնն ու հարազատութիւնը: Մասնաւորապէս պարծենում էի այն պատճառով, որ այդ առաջնակարգ դիրքին հասած գործիչն իր հարազատ ժողովրդի և հայրենիքի անդաւաճան զաւակն էր մնացել և նրա բարգաւաճման ու վերելքի համար անխնայ և անդադար աշխատում ու ճգնում էր:

Միակ հանգամանքը, որն ինձ շատ անհանգստացնում էր, դա ինձ տրուած ժամանակի անբաւականութիւնն էր: Իմ ճամփորդութեան արտօնութիւնը 30 օրւայ համար էր: 29-րդ օրը Բաքու կը հասնէի: Մի օրւայ ընթացքում Բաքւից Գեանջա (Կիրովաբադ վերանուանուած) քաղաքը հասնելու, իմ անչափ սիրելի քրոջը՝ Արաքսուն տեսնելու և վերադառնալու համար բոլորովին անհնար էր: Աղասուն տեսնելու նպատակով 6 օր ստիպւել էի սպասել: Այդ վեց օրերի ժամանակի կորուստը թանկ էր արժել և ինձ զրկել էր իմ հարազատ և անչափ սիրելի քրոջն այցելելու և իմ տարիների այրող կարօտն առնելու բաւականութիւնից:

Մոսկւայում մտածեցի վիզայիս երկարաձգման համար Աղասու միջնորդութիւնը խնդրել, բայց ինձ մօտ ենթադրեցի, որ այդ մետասներորդ ժամւայ միջնորդութիւնը կարող է ուշացած լինել: Անտարակոյս, այդ ուշացած միջնորդութիւնը չէր կարող ապարդիւն լինել, բայց ես հրաժարւեցի օգտւել ընկերոջս ազդեցութիւնից իմ անհատական գործի համար:

Բաքու հասնելուն պէս Ապրէսեանի մօտ գնացի: Երբ մտածում էի նրա օգնութիւնը խնդրել մեկնումիս ժամկետի վրայ մի քանի օր ևս աւելացնելու համար, նա Թեհրանից ստացած մի հեռագրական կարգադրութիւն ինձ ցոյց տւեց: Հեռագիրը Մոսկւայից Ապրէսեանի հասցէով վերադարձուած էր: Բոլոր յոյսերս խորտակւեցին: Կարծես սառցաջրի շատրւան գլխիս և մարմնիս բացւեց: Հեռագրով կարգադրւած էր անմիջապէս Թեհրան մեկնել: Մեկնումիս ժամկէտի յետաձգումն անկարելի էր դարձել: Ստիպւած էի ենթարկւել եղած կարգադրութեանը: Քրոջս այցելելու և նրանից բաժանման տարիների կարօտն առնելու ամէն սպասումն ու յոյսերս ջուրն ընկան: Եղած կարգադրութեան մօտաւոր պատճառն իմանալը Թեհրան հասնելուց յետոյ միայն կարելի եղաւ:

ԹԵՀՐԱՆՈՒՄ

Բաքւից Իրան վերադառնալու համար շոգենաւ նստեցի: Բանդար-Փահլաւիում՝ իրանեան հողի վրայ ոտք դնելիս արտակարգ ուրախութեան զգացումն ունեցայ: Մի ամսւայ բացակայութիւնից յետոյ վերադառնում էի այն երկիրը, որը ինձ և ինձ նման հայրենազուրկների համար մի սիրելի հայրենիք էր դարձել: Իրանի ժողովուրդն ու կառավարութիւնը մեզ նման անհայրենիք մնացած և անխիղճ թիւրքերի կողմից մեր սքանչելի բնագաւառից՝ Վասպուրականից վտարւած հայերիս ազնւօրէն և վեհանձնաբար բնակութիւն հաստատելու և տուն ու տեղ դնելու իրաւունք էին տւել և թիւրքերի նման խտրական և խորթ աչքով մեզ վրայ չէին նայել:

Իրանի պետական կառոյցը և բնակչութեան այդ հարազատ վերաբերմունքը մեզ ընդմիշտ շնորհա-

կալ և երախտապարտ են դարձրել: Ամենակարևոր պարագան, որն երբևիցէ մոռանալ չի կարելի, դա այս երկրի պետութեան կարեկից և հարազատ վերաբերմունքն է:

Մի՞թէ մենք՝ հայերս, կարող ենք որևէ պարագայում և պայմանում անշնորհակալ և երախտամոռ լինել այդ ազնիւ և մեծահոգի վերաբերմունքից:

Բանդար-Փահլաւի հասնելուց անմիջապէս յետոյ աճապարեցի ինձ Թեհրան հասցնել: Իմ միակ զաւակին՝ Լևոնին, որին իրեն հնարած անունով Էդիկ էինք կանչում (այդ օրերում երկու տարեկան էր), չափազանց կարօտել էի: Ցանկանում էի ժամ առաջ նրան գրկումս առնելով՝ անյագօրէն համբուրել: Մի ամսւայ այդ փոքր ժամանակամիջոցի հեռացումը տարօրինակ և անհասկանալի կարօտ էր պատճառել: Գուցէ նրա համար, որ այդ ճամփորդութիւնն իմ առաջին կամաւոր բացակայութիւնն էր իմ երեխայից, ընտանիքից, հօրից ու բարեկամներից:

***

Թեհրանում իմ ընկերներն ու բարեկամներն ինձ շատ մեծ խանդավառութեամբ ընդունեցին: ՀՕԿ-ի վարչութեան և նրան մօտ կանգնած անձնաւորութիւններին ջանացի մանրամասն զեկուցում տալ Երևանում, Թիֆլիսում, Բաքւում և Մոսկւայում իմ ունեցած տեսակցութիւնների և խօսակցութիւնների մասին:

ՀՕԿ-ի վարչութեան կողմից կազմակերպւած իմ զեկուցում-դասախօսութեանը մեծ բազմութիւն էր ներկայ: Նրանց շահագրգռող ամենակարևոր խնդրի առթիւ յայտնեցի, որ մեր իշխանութեան գլխին եղած մարդիկ և մանաւանդ Հայաստանի թիւ մէկ մարդը՝ Աղասի Խանջեանը, մեծ ցանկութիւն ունեն ամենաառաջին հնարաւորութեանը իրենց գրկում ընդունելու հայրենակարօտ և ներգաղթել ցանկացող բազմութիւններին:

Իմ այս յայտնութիւնը բացառիկ ոգևորութեամբ և ծափերի տարափով ողջունւեց: Ինձ դիմող բազմաթիւ մարդկանց յայտնեցի և խնդրեցի սառնարիւն և համբերատար լինել և մանաւանդ զգուշանալ ամէն տեսակ հաւանական գրգռութիւն առաջացնող ձեռնարկից և արտայայտութիւններից: Շատ պարզ ու բացորոշ ամենքին յայտնեցի շարունակել իրենց աշխատանքն ու զբաղմունքը մինչև այն օրը, երբ Հայաստանի կառավարութեան կողմից պաշտօնական ներկայացուցիչներ կը գան և ներգաղթի գործը կը կազմակերպեն:

Ամենաուրախալի պարագան այն էր, որ իրանեան պատկան իշխանութիւնները Հայաստան ներգաղթել ցանկացող հայերին անհրաժեշտ թոյլտուութիւն տալուն արդէն համաձայնւել էին:

Իրանահայ բոլոր տարրերը ներգաղթի խնդրի մօտաւոր լուծման առթիւ շատ գոհ և ուրախ էին: Հայրս էլ շատ ոգևորւած էր, բայց, դժբախտաբար, անգութ մահը նրան իր մուրազի ու երազի հետ միասին թաղեց:

ՆԵՐԳԱՂԹԻ ԱՐԳԵԼՔԸ

Երբ ներգաղթի խնդրի լուծումը մի քանի տարիներով յետաձգւեց և ուշացաւ, ես ի վիճակի եղայ դրա պատճառները մօտաւորապէս կռահելու: Այդ առթիւ ինձ ոչ ոք բացորոշ յայտնութիւն չարեց, բայց ես, որ այդ խնդրով դիմումներ և խօսակցութիւններ էի կատարել, կարողացայ մօտաւոր եզրակացութիւն հանել: Ինչպէ՞ս և ի՞նչ հիմունքով կարողացայ այդ անել, կաշխատեմ շատ հակիրճ բացատրել:

Ինձ հետ ներգաղթի խնդրի առթիւ խօսակցութիւններ ունեցող բոլոր անձնաւորութիւնները հազիւ զգացնել տալու եղանակով ինձ բացատրեցին այդ գործի հետ կապւած զանազան դժւարութիւնները: Խորհրդային երկրների ազգերի գերագոյն կազմակերպութեան գործադիր մարմնի գլխին այդ ժամանակ Ստալինն էր բազմել: Նրան ազգութիւնների կոմիսար անունով էին ճանաչում: Չնայած այն հանգամանքին, որ այդ թւականներին Լենինը դեռ ապրում էր և Խորհրդային Միութեան թիւ մէկ անձնաւորութիւնն էր, բայց Ստալինը սկսել էր արդէն իր բռնակալ շաքի ներքև առնել բոլորին և նոյնիսկ, ծայրայեղ զգուշաւորութեամբ, Միութեան առաջնորդ Լենինին:

Ազգութիւնների կոմիսարութեան Թիֆլիսի ներկայացուցիչն ինձ յայտնեց, որ ներգաղթի խնդիրը համախորհրդային չափանիշով ուսումնասիրւում է: Նա նոյնիսկ ինձ ասաց, որ հեռախօսել է Ստալինին, և վերջինս էլ նոյն պարագան հաստատել է: Աղասին էլ իր հերթին, թէև ոչ շատ բացորոշ, բայց քաղաքագէտի իր հանգամանքով Ստալինի հեղինակութեան կարևորութիւնը հաստատել էր: Արդ, այս բոլորից յետոյ ինձ համար դժւար չէ հանել իմ հետևեալ հաւանական եզրակացութիւնը:

Մեր «բարեկամ» վրացի հեղինակութիւնները նւազագոյն ցանկութիւն չունէին Հայաստանի ազգաբնակչութեան թիւը բազմապատկւած տեսնելու: Նրանք խուլ ու մունջ մրցակցութեան պայքար էին մղում հայ ժողովրդի թւական աճի և Հայաստանի սահմանների սրբագրութեան և ընդարձակման դէմ:

Իմ՝ այս հանած հաւանական եզրակացութիւնը հաստատւում է նաև հետևեալ իրողութեամբ:

Իմ՝ Թեհրան վերադարձից երկու օր յետոյ ինձ իր մօտ կանչեց այդ ժամանակւայ խորհրդային հիւպատոս Պլատը, որի օժանդակութեան և ծայրայեղ սիրալիրութեան մասին արդէն պատմել եմ: Երբ նրա աշխատասենեակը մտայ, նա կատակի և ուրախութեան անկեղծ շեշտով բացականչեց.

– Կեցցե՛ս, Սարհադեա՛ն:

Յետոյ իր կնոջը, որը Ասյա անունով մի հայ կին էր, խնդրեց մի քանի րոպէով մեզ մենակ թողնել և աւելացրեց.

– Իսկապէս կեցցես: Երևում է շատ հետևողական և դրական գործ ես կատարել:

Ապա մի քիչ սպասելով և ցանկանալով պատշաճ մօտեցում ունենալ՝ հարցրեց.

– Վերադարձիդ համար ուղարկած հեռագրի մասին քեզ յայտնեցի՞ն, թէ՞ ոչ:

– Դժբախտաբար, այո՛: Այդ հեռագիրն ինձ մեծ տհաճութիւն պատճառեց:

Պլատը յանկարծակիի եկած, տագնապալից եղանակով հարցրեց.

– Բայց ինչու՞:

– Այդ հեռագիրը պատճառ եղաւ, որ ես չկարողանամ 12 տարիներից ի վեր չտեսած քրոջս այցելել և գոնէ մի երկու օր նրա մօտ լինել:

– Չեմ հասկանում այդ բոլորը: Մի ամսւայ ընթացքում մի՞թէ քեզ հնարաւոր չէր երկու-երեք օր քրոջդ տեսութեանը յատկացնել:

– Պատմութիւնը բաւական երկար է: Այո՛, դժբախտաբար, չկարողացայ այդ անել: Մոսկւայում Խանջեանին հանդիպելու համար շատ օրեր կորցրի:

Պլատը նկատելի տխրութեամբ ասաց.

– Շա՜տ, շա՜տ եմ ցաւում դրա համար:

Նա նորից լռեց: Կարծես մի լուրջ խնդիր նրան նեղում էր: Վերջապէս ասաց.

– Իմ՝ քեզ տւած շրջաբերական-յանձնարարական գրութիւնը պահե՞լ ես, թէ՞ ոչ:

– Այո՛, շատ մեծ խնամքով եմ պահել: Իմ առաքելութեան ընթացքին ինձ ներկայացնող ձեր այդ շրջաբերական-յանձնարարականը մեծ օժանդակութիւն և օգտակարութիւն ունեցաւ:

Իսկապէս Պլատի տւած ինձ ներկայացնող այդ գրութիւնը շատ մեծ և անգնահատելի ծառայութիւն արեց: Առանց այդ գրութեանը՝ գուցէ եղածս տեղերում ինձ ճանապարհ էլ չտային և չուզենային ինձնից նոյնիսկ մի խօսք լսել:

Խնամքով ծոցիս գրպանում՝ դրամապանակում պահած գրութիւնը հանելով և Պլատին վերադարձնելով՝ ասացի.

– Համեցէ՛ք, վերցրէ՛ք ձեր գրութիւնը: Ձեր ազնըւութիւնից և սիրալիրութիւնից անհունապէս շնորհակալ եմ:

Պլատը զանգահարեց: Ներս եկող ծառայողին պատւիրեց մեզ համար երկու սուրճ բերել: Նա շարունակեց իր խօսքը.

– Ըստ երևոյթին, քո միջոցով զանազան տեղերում կատարւած դիմումները մի փոքր վաղաժամ են եղել: Թւում է՝ նաև որոշ շրջաններում էլ խնդրի այդպիսի «վաղաժամ յարուցումը» մի քիչ էլ անբաւականութիւն, եթէ չասենք դժգոհութիւն է առաջացրել: Բայց ոչինչ: Խնդրի գոհացուցիչ լուծումը կարող է մի քիչ ուշանալ, բայց ձեր սկսած գործը իր ճանապարհը բացել է արդէն:

Նորից ջերմեռանդ շնորհակալութիւն յայտնելով՝ պատրաստւում էի հեռանալ, նա ասաց.

– Կնոջս միջոցով ծանօթացել եմ հայ ժողովրդի անբախտ և տանջալից անցեալի հետ: Սրտանց կարեկցում և միաժամանակ գնահատում եմ այդ աշխատասէր և շինարար ժողովրդին և, եթէ կարողանամ որևէ ձևով օգտակար լինել նրան, վստահ եղէ՛ք, որ այդ ուղղութեամբ ոչ մի ջանք չեմ խնայելու:

Հիւպատոսի՝ մասնաւոր զգուշաւորութեամբ արած արտայայտութիւնը՝ «ինձ թւում է՝ նաև որոշ շրջաններում խնդրի այսպիսի վաղաժամ յարուցումը մի փոքր էլ դժգոհութիւն է առաջացրել», ինձ վերջնականապէս այն եզրակացութեան բերաւ, որ Ազգութիւնների գերագոյն խորհրդի նախագահ Ստալինին իմ առաքելութիւնը և յարուցած ներգաղթի խնդրի «վաղաժամութիւնը» խիստ դժգոհութիւն էր պատճառել: Իմ անյապաղ վերադարձի համար եղած հեռագրական կարգադրութեան իսկական պատճառն էլ այդ «վրէժխնդրութիւնն» էր եղել:

ԲԱՆԿԱՅԻՆ ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Խորհրդային Միութեան երկրներից վերադառնալուց մի ամիս յետոյ ինձ առաջարկւեց Շիրազ գնալ: Այդ քաղաքում «Ռուս-Իրան» բանկի մասնաճիւղ էր հիմնւելու: Ինձ առաջարկւած պաշտօնն ու ռոճիկը գոհացուցիչ էին: Չհամաձայնւելու պատճառ չունէի: Մտածեցի՝ վատ չէր լինի, եթէ երկու-երեք տարի էլ Իրանի հռչակաւոր վարդերի քաղաքում լինեմ: Ամբողջ տասն տարիներից ի վեր Թեհրանում եղած ժամանակ ինձ յաջողւել էր միայն Ղազվին, Ռաշտ, Փահլաւի տեսնել: Շիրազն իր սքանչելի գեղեցկութեամբ Իրանի անմման թագուհին է: Նա Պարսկաստանի երկու հռչակաւոր բանաստեղծներին շունչ ու կեանք է տւել և նրանց բանաստեղծական բացառիկ հանճար է ներշնչել: Շիրազը Սաադիի և Հաֆէզի ծննդավայրը լինելու պարծանքն ունի:

Խղճի թելադրութեան պարտականութեամբ պիտի յայտնեմ, որ իմ այս նոր պաշտօնի նշանակումն էլ վերևից եղած կարգադրութեան հետևանք էր: Օտարատեաց, եսամոլ Ստալինն ու նրա ազգայնամոլ և ինքնահաւան ազգակիցները ամէն կերպ աշխատում էին հայ անունը կրող և նրա փախստական գոյութիւնը ներկայացնող «անցանկալի» անհատներին չէզոքացնել և, եթէ կարելի լինէր, պապանձեցնել ու շնչախեղդ անել:

Մի հայի միջոցով և նրա բերանով հայ մարդկանց ներգաղթելու ցանկութիւնը բազմաթիւ անգամներից յետոյ մի անգամ ևս արտայայտւել և պահանջւել էր: Այդ պահանջը «համարձակութիւն և հայամոլութիւն» էր համարւել: Անհրաժեշտ էր ինձ նման «համարձակ և հայամոլ» մարդկանց թէկուզ արտասահմանում լռեցնել և ցիրուցան անել: Մանաւանդ անհրաժէշտ էր նրանց՝ իրենց թէկուզ տեխ-

նիկական, չոր և անկարևոր պաշտօններից հեռացնել: Ինձ հետ միաժամանակ և մի ամիս յետոյ՝ ուրիշ երեք հայեր էլ շատ ճարպիկ և քաղաքավարի ձևերով հեռացուեցին: Հեռացողներից իմ շատ յարգելի գործակից Լևոն Թադէոսեանը՝ «Մելլի-բանկ»-ում հաշւապահի կարևոր պաշտօն ստացաւ և մի քանի ժամանակ այդ բանկի ճիւղերից մէկի կառավարիչը դարձաւ: Իլլուշա Թովմասեանը օդանաւային մի ընկերութեան մէջ գլխաւոր հաշւապահի պաշտօն ստացաւ: Մի քանի ամիս յետոյ հայկական գործերի վարիչի պաշտօնն ունեցող Ս. Առաքելեանն էլ մեկուսացման և ապա հեռացման ենթարկուեց:

***

Ամենափոքր ցանկութիւնը չունեմ չափազանցութիւնների դիմելու: Իրաւունք էլ չունեմ պնդելու, որ այդ ժամանակւայ խորհրդային վաճառականական լիազօր ներկայացուցիչ հայազգի Պրանզիոնիի յետս կոչումը կապւած էր վերոյիշեալ հայատեաց ընդհանուր քաղաքականութեան և ուղղութեան հետ: Բայց կատարւած իրողութիւն էր, որ այդ օրերում իր պաշտօնն անթերի կատարած, բայց պաշտօնավարութեան սովորական ժամանակաշրջանը չլրացրած այդ հայ պաշտօնատարին յետ կանչեցին:

Յարգանքի արժանի մարդ էր Պրանզիոնին: Մանկութեան հասակում իր գիւղի հօտաղն էր եղել, յեղափոխութեան ժամանակ գործարանային բանւոր: Կուսակցութեան շարքերն էր մտել: Իր աշխատունակութեան և բացառիկ ընդունակութեան շնորհիւ գործարանային բանւորների ներկայացուցիչ էր ընտրւել: Դրանից յետոյ համալսարան մտնելով՝ փայլուն յաջողութեամբ մեքենագիտական-ինժենեռական ֆակուլտէտն աւարտել և պետական պատասխանատու դիրքերի էր հասել:

Ամենից հետաքրքիրն այն էր, որ մանկութեան հասակում ծնողներից զրկւած՝ իր մօրաքրոջ մօտ էր մեծացել: Ծաղկի ծանր տեսակի հիւանդութիւնը նրան հասցրել էր մահւան սեմին, բայց բախտի բերմամբ խղճացել էր նրան գերեզմանը գլորելու: Ծաղկի հետքերը նրա դէմքը լիովին փչացրել էին: Շատ ազնիւ և համեստ մարդ էր և երջանիկ էր դարաբաղցի մի կրթւած հայ կին ունենալու համար:

Նրա և իր կնոջ մեկնման առիթից օգտւելով, նրանց խնդրեցի կնոջս իրենց հետ մինչև Բաքու տանել և այնտեղից գնացքով Գեանջա՝ քրոջս մօտ ուղարկել: Արաքսուն այցելած և տեսած չլինելը սրտիս ցաւ էր եղել: Մտածում էի գոնէ կնոջս միջոցով քրոջս պատճառած վիշտը մի քիչ ամոքել: Պրանզիոնին և կինը, որոնք մեկնելուց առաջ շուրջ մի ամիս Զարգեանդէի մեր վարձած ամառանոցային տանն էին, սիրալիրութեամբ խնդիրս ընդունեցին և կնոջս ու փոքրիկ Լևոնիս իրենց հետ մինչև Բաքու առաջնորդեցին:

Ինձ անհանգստացնող հանգամանքն այն էր, որ կինս ռուսերէն լեզուին անծանօթ էր:

ՇԻՐԱԶՈՒՄ

1928 թւի սեպտեմբերի սկզբի օրերին երկու ուրիշների հետ Շիրազ մեկնեցինք՝ այնտեղ «Ռուս-Իրան» բանկի բաժանմունքը հիմնելու համար: Ինձ ընկերակցողներից մէկը՝ բաժանմունքի կառավարչի, իսկ միւսը՝ գլխաւոր հաշւապահի պաշտօնն ունէր: Ինձ յանձնւած պարտականութիւնը թարգմանչի և գանձապահի պաշտօնն էր: Բաժանմունքի վարիչը Ռուսաստանից եկած հրեայ, իսկ գլխաւոր հաշւապահը թեհրանցի Արսէն Ֆրէնդեան անունով մի հայ էր:

Չափազանց ուրախ էի որ գործակցելու էի նրանց: Շուրջ երեք տարի Շիրազում՝ պաշտօնավարութեանս ժամանակամիջոցում, մենք Ա. Ֆրէնդեանի հետ չափազանց մտերիմ բարեկամներ էինք և մեր ընտանիքներով միևնոյն բնակարանում շատ հաշտ ու սիրալիր ապրում էինք:

Շիրազը բարեխառն կլիմայ ունի: Ցմեռւայ ցուրտը չի զգացւում: Փարթամ և մշտադալար բուսականութեամբ, ծաղիկներով, գոյնզգոյն գեղեցիկ վարդերով, երկնասլաց չինարիներով և մանաւանդ պտղատու ծառերով պճնւած է: Իմ տեսած Ուրմիայից յետոյ Շիրազը՝ իր բնական գեղեցկութիւններով, բուսական ճոխութեամբ և մշտափայլ, կենսատու արևով և հոգեպարար օդով ու ջրերով, կարելի է Իրանի գեղեցիկ քաղաքների թագուհին հաշւել:

Շիրազի բնակչութիւնը կարծես ծնւել է իր ծննդավայրի բնութեան բարիքները լրիւ և անյագօրէն ըմբոշխնելու համար: Ծայրայեղօրէն ուրախ և հաճոյասէր է: Իմ՝ Շիրազում եղած օրերին, երեկոյեան թւում էր, թէ ամբողջ քաղաքն իր բնակչութիւնից պարպւում է: Իրար յետևից շարան-շարան և հազարաւորներով թափւում էին փողոցները՝ շրջակայ այգիները, դաշտերը և դէս ու դէն, զանազան վայրեր գնալու համար: Անծանօթ նորեկի համար թւում էր, որ շիրազցիներն ամէն օր հարսանիք և խնջոյք են կատարում:

Գինարբուքն ու սիրային զեղումները գեղեցիկ բնութեան ընդարձակ և զմայլելի ծոցում բազմաթիւ և բազմազան էին: Կարճ ասած, մարդիկ Շիրազում ապրում էին կեանքը լիակատար և լիասիրտ վայելելու համար: Նոյնիսկ իրենց ապրուստը հազիւ ծայրը ծայրին հասցնողներն այդ ընդհանուր վայելքից զրկւելու չէին յօժարում: Ինչքան յիշում եմ, մուրացիկներ էլ չկային կամ շատ քիչ էին:

Շուրջ երեք տարի Շիրազում անցկացրած ժամանակաշրջանից չափազանց գոհ մնացի: Բանկի կառավարչի և գլխաւոր հաշւապահի բարեկամական և նոյնիսկ յարգալից վերաբերմունքից միանգամայն բաւարար էի: Կառավարիչը, առանց իմ ըն-

կերութեանը, պաշտօնական և կիսապաշտօն այցելութիւնների չէր գնում: Երեխայ չունէր, բայց փարթամ և գեղեցիկ արտաքինով կին ունէր, որն իմ նկատմամբ սիրալիր ու յարգալից էր:

Միակ դժգոհութիւնս կայանում էր Թեհրանից և իմ սիրած մտաւորական և ընկերական շրջանակներից հեռու և կտրուած լինելու դասաւորութիւնից: Հօրիցս՝ Իրանում ունեցած միակ սրտակից հարազատից, հեռացած և բաժանուած լինելու պարագան էլ ինձ շատ էր սրտնեղում:

Շիրազում 32 ամիս շարունակ մնալուց յետոյ միապաղաղ կեանքից չափազանց յոգնել էի: Երկու ամսւայ ժամանակով արձակուրդ վերցրի և Թեհրան վերադարձայ: Նախքան Շիրազից մեկնելս՝ երկու ամիս առաջ, կնոջս ու երեխայիս գերմանական «Իւնկերս» ընկերութեան օդանաւով ուղարկել էի Թեհրան: Դժբախտաբար, Իսֆահան չհասած՝ օդանաւը, խիստ մեծ փոթորկի հանդիպելով, պարտադրուած վայրէջք էր կատարել և քարքարուտների մէջ էր ընկել: Կինս ու երեխաս սոսկալի վտանգից հրաշքով ազատուել էին:

Թեհրան գալուց մի ամիս յետոյ Շիրազի բանկում ծառայելու պաշտօնիցս հրաժարուեցի: Երբ գրաւոր հրաժարականս Շիրազ ուղարկելու համար Թեհրանի հիւպատոսին յանձնեցի, վերջինս ուշադրութեամբ կարդալուց և դժգոհութեան առիթ չունենալս իմանալուց յետոյ՝ հրաժարական-գրութիւնս ինձ վերադարձնելով՝ ասաց.

– Ձեր ծառայութիւնից Շիրազի մեր բանկի կառավարիչը շատ գոհ է: Որոշուած է ձեր ռոճիկի վրայ 50 տոկոսի յաւելում կատարել: Մինչև մի շաբաթ ձեզ ժամանակ եմ տալիս, նորից անդրադառնալու ձեր որոշման վերաքննութեանը: Եթէ վերջնականապէս վճռեցիք Շիրազ չվերադառնալ, մի շաբաթ յետոյ ինձ կը յանձնէք այդ հրաժարականը: Ինքս անհատապէս ձեզ խորհուրդ չեմ տալիս ձեր որոշումը գործադրելու:

ՎԵՐԱԲՆԱԿՈՒՄ ԹԵՀՐԱՆՈՒՄ. ԲԵՌՆԱՏԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՄ

Մի շաբաթ յետոյ գրեթէ ափսոսանքով նորից Շիրազի «Ռուս-Իրան» բանկի ծառայութեան հրաժարականս ներկայացրի, ափսոսանքով, որովհետև գնահատում էի Շիրազում շուրջս հաւաքած սրտակից մտերիմ բարեկամներիս և մանաւանդ Արսէն Ֆրէնդեանին և բաժանմունքի ազնաբարոյ կառավարչին: Մանաւանդ այս երկու մարդկանց հետ ունեցած գործակցութիւնից կատարելապէս գոհ էի և մի տեսակ բարոյական կապւածութիւն էի զգում նրանց նկատմամբ:

1931-ի յունիսից սկսած՝ նորից վերաբնակուեցի Թեհրանում: Այս վերաբնակման առաջին պատճառը նախ իմ սիրելի և միակ զաւակի Լևոնի՝ հայոց դպրոցի նախակրթարանն ուղարկելը և ապա հօրիցս նորից չհեռանալն էր: Կային նաև ուրիշ պատճառներ: Մենք սպասում էինք մեր երկրորդ երեխային, որը մի քանի ամսից ծնուելու էր, և վերջապէս թէ՛ կինս և թէ՛ ես մեծ ցանկութիւն ունէինք նորից Թեհրանում վերաբնակուելու:

Ցաւ ի սիրտ պիտի յայտնեմ, որ այս անգամւայ Թեհրանի վերաբնակումն ինձ վրայ շատ և շատ թանկ նստեց: Գործի մի շարք անյաջողութիւնների հանդիպեցի, որոնք թէ՛ նիւթապէս և թէ՛ հոգեպէս ինձ քայքայեցին: Շիրազ մեկնելուցս առաջ յիմարութիւն էի ունեցել իմ ազգականի՝ «ոսկի պալատներ» կառուցելու խոստումներին հաւատալու և տարիների ընթացքում իմ խնայած գումարները նրան յանձնելու: Բարեկամս մեքենավար էր և ծառայում էր ինչ-որ իտալական մի ընկերութեան մէջ: Մի քանի անգամ Շիրազ մեկնելուցս առաջ ինձ մօտ գալով՝ իր շռայլ խոստումներով վերջապէս յաջողեց ինձ համոզել բեռնատար երկու մեքենաներ գնելու համար: Կրկնում եմ, յիմարացայ նրա շռայլած խոստումներին, երևակայական հաշիւներին և գոյանալիք օգուտին հաւատք ընծայելուս համար:

Շիրազից վերադարձին նրանից պահանջեցի իրեն յանձնուած գումարը և ինձ խոստացած շահաբաժինը: Մէջտեղում ոչինչ կար: Գնուած և ներկայիս հնացած և մաշուած երկու գերմանական «Բէնզ» գործարանի բեռնատար մեքենաներ էին մնացել միայն: Այդ երկու բեռնատարներն ամբողջ երեք ու կէս տարի անդադար գործածուել, միալար վազել էին, և գոյացուած ու ձեռք բերուած գումարների մի մասը մեքենաների պարտքի մնացորդի հաշւին վճարուել, իսկ մնացեալը՝ իհարկէ երեք-չորս անգամ աւելին, իմ ազգականիս և իր փոքր եղբօր միջոցով անհաշիւ և անփութօրէն մսխուել էին: Մի շարք անախորժ և ապարդիւն խօսք ու վիճաբանութիւններից յետոյ ստիպուեցի երկու հնացած բեռնատար մեքենաները իմ փոխարինաբար տուած գումարների փոխարէն ինքս վերցնել:

Երանի թէ այդ չարաղէտ երկու բեռնատարները բոլորովին նւիրած լինէի իմ «սրտացաւ և հաւատարիմ» բարեկամներին կամ հէնց իրենց կանգնած տեղում՝ ավտոտնակում բէնզինով այրած լինէի: Դա կատարեալ բախտաւորութիւն կը լինէր ինձ համար:

Բայց, դժբախտաբար, ես նւազագոյն գաղափար և հասկացողութիւն չունէի ընդհանրապէս մեքենաներից և մասնաւորապէս ինձ յանձնուած երկու բեռնատարների իսկական վիճակից:

Երկու մեքենավարներ վարձեցի և ձեռնարկեցի այդ յոգնաբէկ և կիսացրիւ բեռնատարների նորոգութեան գործին: Այդ անիծապարտ մեքենաների անհրաժէշտ մասերն էլ չէին ճարւում: Ստիպուեցի գերմանական վաճառականական մի ներկայացուցչի միջոցով և օդանաւով այդ մեքենաներից մէկի կարևոր մի մասը Գերմանիայից բերել տալ: Այդ

շատ անհրաժեշտ նորոգութիւններն իմ տնտեսած գումարների կէսից աւելին գրպանիցս թոցրին: Բեռնատարները գործել սկսեցին: Ինքս էլ մեքենավարներից մէկն ու մէկի կողքին նստած՝ երթևեկի և բեռների փոխադրութեան գործին էի հետևում:

Ամբողջ երկու տարի և ութ ամիս, բառի իսկական իմաստով, տաժանակիր, դժոխային աշխատանք կատարեցի: Ոչ մի ջանք ու ճիգ չխնայեցի գործը մի կերպ դասաւորելու համար, բայց բեռնատարներն արդէն իրենց գործն ինձնից առաջ արել էին, և անհնարին եղաւ նրանց վրայ իմ ծախսած գումարների գոնէ մի չնչին տոկոսը վերադարձնել: Այդ երկու բեռնատարներն իրենց այդ վիճակում կարծես երկու անբարոյական կանանց էին նմանում, որոնք ոչինչ տալու փոխարէն անյագօրէն պահանջում և գրպաններս մինչև վերջին սև փողը դատարկում էին: Երկուս ու կէս տարուց աւելի շղթայակապ տաժանակրի նման ստիպողաբար կեանք, եռանդ և հոգի էի մաշեցնում և փրկութեան ոչ մի միջոց ու ճանապարհ չէի կարողանում գտնել:

Այնպէս էր դասաւորուել, որ մեքենավարների ռոճիկն էլ ժամանակին վճարել չէի կարողանում: Ինձ, ընտանիքիս ու երեխաներիս անհրաժեշտ կարիքների ապահովումից զրկում էի, որպէսզի այդ չարաղէտ մեքենաների անվերջ նորոգութիւնները կատարել և մեքենավարների ռոճիկը վճարել կարողանայի:

Մի անգամ այնպէս պատահեց, որ մեքենավարներից մէկը, գիշերանց բեռնատարի մի անիւն իր ռեզինով վերցնելով, անհետացաւ: Գողացած անիւի արժէքը այդ «պատուաւոր» վարորդի ինձնից ունեցած պահանջի 4-5 անգամն էր, բայց ի՞նչ կարող էի անել, ո՞րտեղից կարէլի էր նրան ճարել, ու՞մ կարող էի գանգատուել: «Բարեխիղճ», ուզում եմ ասել անպարկեշտ մարդու հոչակ հանած վարորդներ էլ կային: Ինձնից զատ՝ ուրիշ շատերն էլ դժբախտութիւն էին ունեցել այդպիսիներին հանդիպելու: Ճար չկար: Ստիպած էի գարաժի տիրոջ օգնութեանը դիմելու: Այս դէպքը Եազդում պատահեց: Եազդեցի գարաժատէրը բարեացակամ և ազնիւ մի մարդ էր: Համաձայնուեց ստորագրութեանս փոխարէն մի լրիւ անիւ տալ ինձ: Այս անգամ մեքենաւար չունէի: Ստիպուեցի ղէկի յետևը նստել և մեքենան վարել: Բոլոր ֆիզիկական և հոգեկան բազմաթիւ տանջանքների փոխարէն մեքենայից և մոթորից ու մեքենավարութիւնից մի քիչ գաղափար և փորձառութիւն էի ձեռք բերել:

Մեքենայի բեռը Քերման պիտի հասցնէի: Թէ՛ ֆիզիկական և թէ՛ հոգեպէս յոգնած և ջարդուած էի: Ճանապարհը հարթ և ուղիղ էր: Ծայրայեղ յոգնածութիւնն ու յուսահատութիւնը ինձ մրափի մատնեցին: Արթնացայ միայն այն ժամանակ, երբ մեծ աղմուկ և ցնցում զգացի: Ճանապարհից դուրս եկած և ոչ շատ խոր փոսի մէջ էր գլորուել: Կարծեցի մի տեղս ջարդուած պիտի լինի: Բարեբախտաբար, հրաշքով ազատուել էի: Մենակ էի, օգնական չունէի: Ստիպուած եղայ մինչև յաջորդ առաւօտ սպասելու: Բախտի բերմամբ լուսաբացին իմ երկրորդ բեռնատարը հասաւ: Մեքենավարի, նրա օգնականի և ճանապարհից անցնող գիւղացիների օգնութեամբ շուռ եկած բեռնատարս իր անիւների վրայ կանգնեցրին և միւս բեռնատարի օգնութեամբ ճանապարհի վրայ հանեցին: Բացառիկ բախտաւորութիւն էր, որ մեքենայի շրջուելուց անմիջապէս յետոյ նրա շարժակը դադարել էր աշխատելուց և մարելով՝ հրդեհի բռնուելու վտանգից փրկուել էր: Մեքենան աշխատել սկսեց, բայց տեղից չշարժուեց: Պարզուեց, որ գրիբոքսում բոլբերինգները (թարգմ. առանցքակալ) կոտրուել էին: Պէտք եղաւ մեքենան իր կանգնած տեղում թողնելով՝ Եազդ վերադառնալ և մեծ դժուարութեամբ կոտրուած բոլբերինգների ճիշտ նմանը ճարել:

«Մեքենատիրոջ» երկուսուկէս տարիների դժոխային վիճակումս նման աղէտների և դժբախտութիւնների յաճախ հանդիպեցի: Յուսահատութիւնս իր ծայր աստիճանին էր հասել: Մի օր Բանդար-Փահլաւիի ծովափում լողանում էի: Հոգով, մտքով և ամբողջ ֆիզիկականով տանջուած վիճակում էի: Մի րոպէ մտածեցի ինձ ալիքների ընթացքին յանձնել և նրանց հետ միասին ծովափից հեռանալով՝ այդ ալիքներում խեղդուել և վերջ տալ իմ անփառունակ և անյոյս դարձած կեանքին, բայց բարեբախտաբար, երկու երեխաներիս՝ Լևոնին և Մէդիկին, մտաբերեցի և աղէտաբեր որոշումիցս յետ կացայ:

Ներկայիս, երբ գրում եմ այս ցաւատանջ և հոգեմաշ տողերը և վերապրում եմ այդ սոսկալիօրէն չարաղէտ վերյիշումով, արցունքիս կաթիլներն առատօրէն յորդում են աչքերիցս և յուշերիս գրութեան այս տողերը թրջում են... Օ՜հ, ինչքա՜ն աղէտալի և վշտալից են այդ դժբախտ օրերի ցաւատանջ վերյիշումները...

Մարդիկ յաճախ զարմանում են և նոյնիսկ քննադատում և այպանում են այնպիսիներին, որոնք, ծայրայեղ յուսահատութեան հասած, ինքնասպանութեամբ վերջ են տալիս իրենց անմխիթար, անյոյս և տանջակոծ կեանքին: Ես բոլորովին զարմանալի և քննադատելի չեմ գտնում նման դժբախտ իրողութիւնները: Մարդկային ջղերը երկաթաթել լինելուց հեռու են: Նոյնիսկ երկաթաթելերը շատ ուժեղ պրկումից կտրւում և փշրւում են:

Չեմ կարող անգիտանալ և ուրանալ ինձ մէջ գոյութիւն ունեցող աշխատասիրութիւնն ու դիմադրական կորովը: Ցանկացել եմ սկսած գործս ըստ կարելւոյն կիսատ չթողնել: Գուցէ և այդ նկարագրի պատճառով էր, որ ես ինձ երկու և կէս տարիների այդ ահռելի և տաժանակիր աշխատանքին ենթարկեցի: Ցանկանում էի այդ անիծեալ գործը մի համեմատական յաջող ելքի հասցնել, բայց անկարելի եղաւ այդ...

Երբ ես յամառօրէն իմ և, դժբախտաբար, հօրս ունեցած վերջին փողերը դրել էի այն անյագօրէն կլանող ապերախտ գործի վրայ և նոյնիսկ ստիպւել

էի ծախել և տանս վերջին գորգերն ու արժէքաւոր իրերը և որևէ տեղից էլ օգնութիւն ստանալու յոյսը կորցրել էի, ստիպւեցի սկսածս և ինձ կատարելապէս սնանկութեան հասցրած գործը կանգնեցնել և որպէս թէ լուծարքի ենթարկել: Բեռնատարներից մէկը ծախեցի մի երկաթագործի, իսկ միւսը՝ իմ մեքենավարին: Այս տողերիս ընթերցողներին պատուվս երդւում եմ, եթէ նրանք այդ չարաղէտ մեքենաների հաշւին մէկ ռիալ ստացել են, ես էլ ստացել եմ:

ՀՕՐՍ ՄԱՀԸ

1933 թւի նոյեմբերի երկրորդ կէսին հայրս հիւանդացաւ նախ լուծմունքով և ապա թոքատապով: Նրա հիւանդութիւնը 10-12 օրւայ ընթացքում լուրջ կերպարանք ստացաւ: Թեհրանի՝ այդ ժամանակւայ մի քանի հայ բժիշկները մեծ հոգատարութեամբ խնամեցին և հնարաւոր բոլոր միջոցները ձեռք առան նրան մահւան երախից փրկելու համար, բայց, դժբախտաբար, չյաջողեցին: Այս ժամանակ փրկարար փենիսիլինը դեռ գոյութիւն չունէր և թոքատապը մարդկութեան ոխերիմ թշնամի և դժւարաբուժելի և վտանգաւոր հիւանդութիւններից մէկն էր հաշււում:

Մահւանից շուրջ չորս տարի առաջ՝ Թեհրանի Կանանց եկեղեցասիրաց վարչութեան առաջարկով հայրս քահանաներին տրւած վերամուսնութեան իրաւունքի հիման վրայ և իրեն խնամելու նպատակով ամուսնացել էր այրի Սիրանոյշ Ղազարեանի հետ: Վերջինիս ամուսինը, որ նոյն եկեղեցու տիրացուն էր, տարիներ առաջ մահացել էր: Այրի մնացած կինն իր երկու անչափահաս երեխաների հետ մնացել էր անօգնական, այդ իսկ պատճառով էլ Կանանց եկեղեցասիրաց վարչութիւնը բարւոք և նպատակայարմար էր համարել նրա՝ հօրս հետ ամուսնանալը: Յիշեալ Սիրանոյշը բոլոր հնարաւոր միջոցներին դիմել էր հօրս խնամելու և նրան սպառնացող մահացու վտանգից փրկելու համար: Հիւանդութեան երկրորդ շաբաթւանից ես համարեա միշտ հօրս մահճակալի մօտն էի: Հիւանդութեան վերջին երկու օրերին երևութական և խաբուսիկ բարելաւում նկատւեց: Լուծմունքն ու հազը մի քիչ պակասեցին: Յետոյ մեզ համար պարզւեց, որ այդ խաբուսիկ թեթևացումը նրա օրգանիզմի ընդհանուր ուժասպառման հետևանքով էր առաջացել: Դրամի անյետաձգելի կարիք կար: Թեհրանից 144 կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնւող Ղազւին քաղաքի մի գարաժատիրոջից 200 թուման մի պահանջ ունէի: Որոշեցի պահանջս ստանալու համար Ղազւին մեկնել: Այնտեղ գնալու և անմիջապէս վերադառնալու համար ամենաշատը տրամադրելու էի 24 ժամ: Գնացի և մեծ դժւարութեամբ հազիւ յաջողեցի պահանջիս կէսը ստանալով՝ անմիջապէս վերադառնալ:

Երբ ուզում էի Դարւազա-Ղազւինի եկեղեցու բակի՝ 15 տարիներից ի վեր ապրած և այնտեղ էլ հիւանդ պառկած հօրս սենեակը մտնել, մարդկանց անսովոր բազմութիւն նկատեցի: Հաւաքւած բազմութեան մեծամասնութիւնը կանայք էին, որոնք անաղմուկ լացում էին:

Ամէն ինչ պարզ էր արդէն: Հայրս՝ այդ ազնիւ մարդն ու հոգևորականը, իր վերջին շունչը փչել էր: Աղեկտուր լացով վրան ընկայ և խելացնոր թափով նրա անշնչացած դէմքը համբուրել սկսեցի: Ինձ շրջապատող մարդիկ շատ մեծ դժւարութեամբ կարողացան անշնչացած հարազատիցս ինձ բաժանել:

Պարզւեց, որ իմ ժամանումից մի ժամ առաջ է մահացել դժբախտ հայրս և իր հոգեվարքի պայքարում տանջալից սպասումով քանիցս ինձ է կանչել.

– Սիրա՜ք... հապա ու՞ր է իմ Սիրաքը: Նա այստեղ պէտք է լինի: Կանչէ՛ք անոր: Կուզենամ վերջին անգամ, գոնէ մէկ անգամ ալ անոր համբուրել... Ա՜խ, ինչու՞ համար այսպէս բէմուրազ, հարազատներէս հեռու պէտք է մեռնէի...

***

Հօրս թաղումն արտակարգ հանդիսաւորութեամբ կատարւեց: Խուռներամ մի մեծ բազմութիւն՝ Թեհրանի ամէն խաւերից և դասակարգերից, եկել էր իր յարգանքի վերջին տուրքը տալու իր սիրած հոգևոր հովւին: Հասարակական և կուլտուրական բոլոր կազմակերպութիւնների ներկայացուցիչներն էլ իրենց մասնակցութիւնն էին բերել: Ինը հոգի դամբանական խօսեցին և դրւատեցին Յարութիւն աւագ քահանայ Սարհադեանի բարեմասնութիւններն ու քահանայական անշահախնդիր պարտաճանաչութիւնն ու կարեկից վերաբերմունքը: Ինքս ինձի կարողանում էի մխիթարել այդ ժողովրդական անխառն և երախտագէտ զգացումների արտայայտութիւններով միայն:

Հայրս Թեհրան ապրած 15 տարիների ժամանակամիջոցից 12 տարի շարունակ պաշտօնավարել էր որպէս Թեհրանի հոգևոր հովիւ: Այդ ժամանակներում Դարվազա-Ղազվինի եկեղեցին Թեհրանի լուսաւորչական հայութեան կենտրոնատեղին էր: Բոլոր տօնական օրերին հայրս քարոզում էր: Իր մահւանից մի քանի տարի առաջ Իսֆահանի Կրօնական խորհրդի միջնորդութեամբ Էջմիածնի Մայր Աթոռից աւագ քահանայութեան կոնդակ ստացաւ, որը մինչև հիմի պահում եմ: Քահանայ լինելուց բացի գրող-բանաստեղծ էր: Նրա՝ մի քանի տասնեակ բանաստեղծութիւնները Թեհրանի և արտասահմանի թերթերում տպագրւած են: Մանաւանդ «Հայաստանի կոչնակ» պարբերաթերթը տպագրել է նրա՝ մի քանի տասնեակ բանաստեղծութիւնները: Այդ բանաստեղծութիւններից մեծ մասը հայրենական սիրով և կարօտով էր տոգորւած:

ԳՈՐԾԻ ՓՆՏՐՏՈՒՔԸ

Բեռնատար մեքենաներն օգտագործելու չափազանց անյաջող և անիծեալ գործը ամբողջ 32 ամիսների ընթացքում և շարունակ ինձ թէ՛ նիւթապէս, թէ՛ հոգեպէս և մանաւանդ առողջութեամբ կատարելապէս քայքայել էր: Դրա վրայ աւելացել էր հօրս վաղաժամ և չափազանց ցաւալի մահը: Յաճախ ինձ մեղադրում էի, որ իմ չնախամտածած ձեռնարկով և իմ կրած անվերջ անյաջողութիւններով հօրս հոգեկան և նոյնիսկ ֆիզիկական յոգնածութիւն եմ պատճառել և դրանով նրա ցաւալի վախճանն արագացրել: Իմ այս ենթադրութիւնը, որն այնքան էլ անբնական չի թւում, ինձ ճնշում և միտքս ու հոգիս ջլատում էր:

Հոգեկան, ֆիզիկական և մանաւանդ նիւթական միաժամանակ քայքայումը չուշացաւ ինձ էլ անկողին գցել: Ծայրայեղ յոգնածութիւն էի զգում: Գործ դրած բոլոր ջանքերս մի կերպ ինձ ոյժ և կորով ներշնչելու նպատակով միանգամայն ապարդիւն անցան: Այնքան շատ ուժասպառ էի եղել, որ անկողնուց մեծ նեղութեամբ կարողանում էի ցած գալ:

Ահա մի այսպիսի անմխիթար և յուսաբէկ վիճակում ես ու կինս սպասում էինք մեր երրորդ երեխայի աշխարհ գալուն: Գործերիս անյաջողութեան շրջանում՝ այսինքն 1931-ի օգոստոսի 12-ին, մենք արդէն ունեցել էինք մեր երկրորդ երեխային՝ Մէդիկ անունով աղջկան: Աննկարագրելիօրէն անմխիթար պայմանների շարունակութեան ընթացքին շուտով պիտի դիմաւորէինք մեր երրորդ երեխային: Հօրս մահուանից 34 օր յետոյ՝ նոր տարուան գիշերամուտին, մեր անսփոփ անբախտութեան մէջ բախտ ունեցանք դիմաւորելու մեր նորածին մանչ երեխային, որին մկրտելիս հօրս անունը յաւերժացնելու նպատակով Յարութիւն անուանակոչեցինք: Այսպիսով, մեր ընտանիքի թիւը չորսից հինգի բարձրացաւ՝ հայր ու մայր, երկու մանչ երեխայ և մի աղջիկ: Չնայած ամէն ինչով տխուր և անմխիթար էի, բայց ինձ ներշնչում էի ուրախ լինելու հօրս բացը լեցնելու եկող նորածնունդ մանչիս ներկայութեամբ:

***

Ինձ պարտքատէր բարեկամս ներքնապէս տանջւում էր իր անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով ինձ պատճառած վնասի և անբախտութեան համար: Նա որևէ հնարաւորութիւն չունէր նիւթապէս փոխարինելու ինձ հասած նիւթական վնասները, որոնք 25 հազար թումանից անցնում էին, իսկ այդպիսի գումարն այդ տարիներում բաւական շատ արժէք էր ներկայացանում: Բայց նա կարողացաւ առիթ ճարել ինձ բարոյական մի օժանդակութիւն անելու:

Ինչպէս սրանից առաջ թւեցինք, հանգուցեալ Շահնշահը՝ Մեծն Ռըզա Շահ Փահլաւին, առանց օտարների նիւթական օժանդակութեանը մի շատ մեծ գործ էր ձեռնարկել: Դա Իրանի հարաւային Բանդար Շահփուր կոչւած կէտից (Պարսից ծոցի վրայ նոր կառուցած նաւահանգիստ) սկիզբ առնող և Բանդար Շահում (Կասպից ծովի վրայ նորաստեղծ նաւահանգիստ) վերջացող և ամբողջ Իրանը կտրող երկաթուղագծի կառուցման ձեռնարկն էր:

Այս հսկայական և բազմածախս գործի տեսական, տնտեսական և տեխնիկական վերահսկողութիւնը յանձնւել էր դանեմարքեան «Քամսաքս» ընկերութեան: Այդ ընկերութեան ներկայացուցիչն ու կառավարիչը Իրանում Բլաք անունով մի ճարտարապետ էր: Իմ բարեկամը Բլաքի անձնական մեքենավարն էր դարձել և նրա կողմից սիրած ու գնահատւած էր: Նա իմ մասին Բլաքի հետ խօսել էր: Վերջինս խոստացել էր մօտ ապագայում ինձ մի յարմար գործ յանձնել: Մինչ այդ ես պարսկերէն «Էթէլաաթ» (թարգմ. «Տեղեկութիւն» օրաթերթում կարդացել և տեղեկացել էի, որ «Քամսաքս» ընկերութեան կողմից կարգադրւած էր երկաթուղագծի շինութեան համար աշխատող բանւորների առողջական և բժշկական կարիքների ապահովման համար առողջապահական մի կազմակերպութիւն հիմնել: Այս վերջին հիմնարկի գլխաւորին հրահանգւած էր կառուցւող երկաթուղագծի երկայնքին շինւելիք առողջապահական կայանների և հիւանդանոցների համար անհրաժեշտ բժիշկներ, օգնական-բժիշկներ, հիւանդապահներ, դեղագործներ, վիրաբոյժներ և վերջապէս հաշւապահներ, ըստ կարելւոյն, միմիայն իրանցիներից ընտրել:

Հարաւի երկաթուղագծային առողջապահական կազմի համար պէտք էին երեք հաշւապահներ: Սրանք, հաշւապահութիւնից բացի, իմանալու էին պարսկերէն ու ֆրանսերէն և քննութեան ու մրցութեան պիտի ենթարկւէին: Յայտարարւած մրցութեանը մասնակցեցի: Մասնակցողների թիւը պահանջւած թւից հինգ անգամ աւելի էր: Քննութեան ենթարկւած թեկնածուներից երեքն ընդունւեցին: Մէկը ես էի: Այս հանգամանքը չափազանց ուրախացրեց ինձ: Գործի ծայրայեղ կարիքն ունէի և, բարեբախտաբար, առանց կողմնակի միջնորդութեան և պաշտպանութեան, օրինական ճանապարհով յաջողել էի:

ԴԷՊԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՏԵՂԻՆ

1934 թւի փետրուար ամսի վերջերն էր: Ինձ տեղեկացրել էին, որ մարտի 1-ին նոր գործատեղիս պիտի մեկնեմ: Դժբախտաբար, հիւանդութիւնս ուժեղացել էր: Ոտքերս այնքան ցաւում էին, որ մահճակալից ցած իջնել և ոտքերիս յենւել չէի կարողանում: Ոտքերիս յենւելիս կարծես հազարաւոր ասեղներով ծակծկւում էին: Ինձ համար անտանելի վիճակ էր ստեղծել: Թւում էր՝ ենթարկւել էի չափա-

զանց սուր տեսակի ռեմատիզմի: Ոտքերից զատ՝ թևերս էլ էին ցաւում: Ինձ բոլորովին հասկանալի էր այդ: Վերջին 32 ամիսների ընթացքում իմ անցկացրած ծայրայեղօրէն չարքաշ պայմանների հետևանքն էր:

Անպիտան գործի վրայ անխնայ մսխել էի իմ ֆիզիկական կորովը: Միշտ խոնաւ և ցեխոտ գարաժներում, թաց, անձրևոտ ու ձիւնածածկ ճանապարհներում, ամէն հանգստաւէտութիւնից զուրկ թէյատներում միանգամայն քայքայել էի առողջութիւնս:

Ճար չկար: Թէկուզ հիւանդ, թէկուզ մաշուած ու քայքայուած վիճակում, ստիպուած էի մեկնել գործատեղիս: Բարեբախտաբար, դէպի հարաւ՝ Սալեհաբադ մեկնող մի վանէթ (թարգմ. փոքր ավտոբուս) ինձ վերցնելու եկաւ: Վանէթը թեթևակի բեռցուած էր, իսկ առաջամասում՝ մեքենավարի կողքին, մի ազատ տեղ կար: Ինձ գրկելով՝ մեքենայի մօտ տարան և մեծ նեղութեամբ նրա մէջ տեղաւորեցին: Այդ անտանելի օրերը երբեք մոռանալ չեմ կարող: Բացի երկու ամսական փոքր երեխայից՝ ընտանիքիս երեք անդամները չկարողացան իրենց արցունքը զսպել: Ամենից շատ իմ մեծ երեխաս՝ Լևոնիկս էր լացում:

Նրանց փայփայեցի, մխիթարական խօսքեր ասացի: Ի վերջոյ ինքս էլ լացել սկսեցի, բայց ինձ իսկոյն զսպելով՝ մերոնց բազմիցս համբուրեցի և մեքենավարին, որ հայ էր, խնդրեցի մեկնել: Ինձ ճանապարհելու հաւաքուել էին մի քանի բարեկամներս, որոնց թւում՝ իմ հին ընկերն ու բարեկամը՝ Սամուէլն ու իր կինը: Մեր բաժանումը շատ ազդեցիկ և տխրալից էր:

ԳԵԱՐՄԱԲԴԱՐ-ՂԱԼԷ-ՇԷՅԽՈՒՄ

Մէկուկէս օր ճանապարհին էինք: Կէս օր էլ մնացինք Սալէհաբադում: Երրորդ օրւայ առաւօտեան մեկնեցինք դէպի Գեարմաբդար: Հարաւային երկաթուղագծի առաջին նորաշէն հիւանդանոցը Գեարմաբդարում էր գտնւում: Առաւօտեան 11-ին հասել էի այդտեղ:

Սալէհաբադից սկսած՝ օդը տաքացել էր: Իսկ այս Գեարմաբդար կոչւող գիւղում կարծես կատարեալ ամառ լինէր: Սա մի շատ բախտաւոր հանգամանք եղաւ ինձ համար: Ոտքերս անդամալուծող ծակծկոցն անցել էր: Առանց տանջւելու՝ ոտքերս շարժում և նոյնիսկ ազատօրէն յենւում էի նրանց վրայ: Կարծես ինձ հետ հրաշք պատահած լինէր:

Երբ պաշտօնավարութեանս փաստաթուղթը հիւանդանոցի բժշկին ցոյց տի, նա դժուարացաւ կարդալ: Փաստաթուղթը գրուած էր պարսկերէն և ֆրանսերէն լեզուներով: Բժիշկը, կարմրկտելով և բերանացի, թերի պարսկերէնով ներողութիւն խնդրեց և ասաց.

– Ես Նաւթային ընկերութեան բժիշկներիցն եմ եղել և, անգլերէնից բացի ուրիշ լեզուով կարդալ չգիտեմ: Խնդրում եմ ցա՛ծ իջէք, յետոյ կը կարդանք:

Բայց մի երկվայրկեան չանցած՝ աւելացրեց.

– Խնդրում եմ ինքներդ կարդացէ՛ք, իհարկէ պարսկերէն մասը:

Կարդացի. «Պր. Ս. Սարհադեանը Քամսաքսի առողջապահական բաժնի վարիչ մարմնի կողմից հարաւային երկաթուղագծի Գեարմաբդար և Ղալէ-Շէյխ հիւանդանոցների հաշւապահ է նշանակւել: Մանրամասնութիւնը փոստով»:

Բժիշկը կասկածոտ և անհամարձակ պարսկերէնով հարցրեց ինձ.

– Սարհադեան ազգանունը հայի՞ անուն է: Դուք հա՞յ էք:

Նրան պատասխանեցի.

– Այո՛, ի՞նչ կայ զարմանալու:

Նա ուրախութիւնից գրեթէ բղաւեց և ասաց.

– Դէ հէր օրհնած, մի քիչ շուտ ասած լինէիր: Էլ ինչի՞ մեզ էսքան չարչրկեցիր: Չէ՞ որ ես էլ հայ եմ: Էն էլ ջուղայեցի հայ:

Յետոյ աննկարագրելի ուրախութեամբ իր կնոջը կանչեց.

– Հրանո՛ւշ, արի՛, վազ տո՛ւր: Մեզ համար հայ հաշւապահ են ուղարկել:

Դոքտ. Ջոհաննէսի (այդպէս էր բժշկի ազգանունը. ընդհանրապէս իսֆահանցի հայերն աշխատում են իրենց անունները կրճատել և եւրոպականի նմանեցնել) կինն իր հերթին աճապարեց ինձ դիմաւորելու: Բարձրահասակ, բարեկազմ և վայելուչ դէմքով մի երիտասարդ կին էր: Նա ուրախ և ժպտադէմ ասաց.

– Ինչ լաւ է եղել, որ մի հայի հետ ենք գործ ունենալու:

Յետոյ սիրալիրութեամբ աւելացրեց.

– Դէ՛, հրամեցէ՛ք, ներս գնանք: Ճանապարհին շատ յոգնած կը լինէք: Տեսնում էք, դեռ մարտ ամսւայ սկզբումն ենք, և արդէն արևն ամէն կողմ վառում է: Վա՜յ մեզի, հիմի որ այսքան շոգ ու կրակ է, մի երկու ամսից ի՞նչ ենք անելու: Ամենադժուարն այն է, որ մենք փոքր երեխայ էլ ունենք: Նրա համար շատ դժուար կը լինի:

Առանց ժամանակ կորցնելու՝ կատակով պատասխանեցի.

– Էլ ու՞ր էք վախենում, տիկի՛ն, ձեր երեխայի հայրը դոքտոր է:

– Այդ ճիշտ է, բայց մեր դոքտորն արևահարութեան և սոսկալի տաքի դէմ դժուար թէ կարողանայ կռուել:

Ներս մտանք: Հիւանդանոցը նորաշէն և մաքուր ու կոկիկ մի յարկանի շէնք էր և լայն միջանցքով բաժանուած էր երկու մասի: Աջ թևի վրայ գտնւող մասը 4 միջակ սենեակներից և մէկ համեմատաբար մեծ սրահից էր բաղկացած: Միւս մասը յատկացուած էր հիւանդանոցի բժշկի բնակութեան համար և բաղկացած էր 3 սենեակներից, մի խոհանոցից և մի

լուացարանից՝ իր յարմարութիւններով: Մի քանի մետր հեռաւորութեան վրայ երկու սենեակներ կային: Բժիշկն ասաց, որ այդ երկու սենեակները յատկացուած են հաշւապահի գրասենեակին և բնակութեանը:

Կէսօրից մէկ ժամ անց տիկինը մեզ ճաշի հրաւիրեց: Իմ ժամանելու մասին տեղեկութիւն չունէին, բայց ճաշը բաւարար էր: Զարմացայ՝ սեղանի վրայ կանաչեղէն տեսնելով: Իմ հարցին, թէ այս չոր ու ցամաք տեղում այս կանաչեղէնն ինչպէ՞ս են հայթայթում, բժիշկը, բարձրաձայն ծիծաղելով, պատասխանեց.

– Սալեհաբաղը շատ հեռու չէ: Հիւանդանոցի ամբուլանսն օրընդմէջ այնտեղ է գնում և հի-ւանդների ու մեզ համար անհրաժէշտ մթերքները բերում է:

***

Մի քանի օր անց Թեհրանի առողջապահական մասի կենտրոնական հիմնարկի վարիչ դոքտ. Թորֆէի կողմից ստացայ պարսկերէն կարճառօտ մի նամակ: Թեհրանից մեկնելուց առաջ այդ մարդուն չէի հանդիպել: Թւում էր՝ այդ պարագան նրան դժգոհութիւն էր պատճառել: Ըստ երևոյթին, ընդունուած կարգն այդպէս էր եղել, բայց ես մեղաւոր չէի գտնում ինձ. նախ այն պատճառով, որ սա առաջին անգամն էր, ինչ ես իրանեան հիմնարկութեան մէջ անցել էի ծառայութեան, և ամենագլխաւորն այն էր, որ, եթէ նոյնիսկ այդ պարագան իմացած լինէի, ոտքերիս ցաւի և հիւանդ վիճակիս բերմամբ չէի կարող հետաքրքրուել, իմանալ և այցելել կառավարիչ բժշկին: Միաժամանակ ինձ ուղարկուած էին նաև հիւանդանոցների հաշւապահութեան ֆրանսերէն լեզուով խմբագրուած ֆորմուլները: Նամակի վերջում թելադրուած էր շաբաթւայ 3-4 օրը Գեարմաբդարում և մնացեալ օրերը Ղալէ-Շէյխում լինել: Նամակին անմիջապէս պատասխանեցի և բացատրելով մեկնելուցս առաջ լրջօրէն հիւանդ լինելուս պարագան՝ իմ թերացման համար խնդրեցի ներողամիտ լինել:

Գեարմաբդարում երկու օր մնացի: Բժշկի և կնոջ կողմից ինձ ցոյց տրուած սիրալիր վերաբերմունքից և հիւրասիրութիւնից անկեղծօրէն շնորհակալութիւն յայտնելով՝ մեկնեցի Ղալէ-Շէյխի հիւանդանոցը: Այդտեղ ժամանելով՝ հանդիպեցի մի իրանցի երիտասարդի, որն ինձնից առաջ հիւանդանոցի հաշւապահն էր եղել: Ինձ տեսնելով՝ ուրախացաւ և յայտնեց, որ անհամբերութեամբ ինձ սպասելիս էր եղել: Նա ասաց.

– Մի շաբաթ առաջ հրաժարականս Թեհրան եմ ուղարկել: Այս գործն ինձ չի բաւարարում: Տեղիս վրայ աշխատող մի շինարարական ընկերութեան մօտ լաւ պայմաններով վարձել եմ արդէն:

Յետոյ խորհրդաւոր շեշտով աւելացրեց.

– Այս հիւանդանոցների գործից հացի փոխարէն զահրումար էլ դուրս չի գալիս: Հօ խենթ չեմ, Թեհրանը թողած, այս անապատում և այս դժոխք-կրակի մէջ մի կտոր հաց ու պանրի ռոճիկով աշխատեմ:

Ղալէ-Շէյխի հիւանդանոցի շինութիւնն էլ Գեարմաբդարի նման էր: Բժիշկը հնդիկ էր և նոր համալսարանաւարտ մի երիտասարդ: Կինն էլ մի երիտասարդ և համակրելի հնդկուհի էր: Երկուսն էլ շատ ուրախացան՝ իմանալով, որ հայ եմ: Հնդկաստանում մեծացած ժամանակ նրանք հայերից լաւ և յարգալից տպաւորութիւն էին ստացել: Նախկին հաշւապահի մեկնելուց յետոյ ինձ դժգոհութիւն յայտնեցին նրա վերաբերմունքի և կեցւածքի մասին:

Թևերիս և մանաւանդ ոտքերիս անտանելի ցաւն ու ծակծկոցները միանգամայն անհետացել էին: Կարծես երբեք այդ անիծեալ հիւանդութեան ենթարկուած չէի եղել: Հարաւի տաք արևն ու նրա բարերար ազդեցութիւնը ինձ փրկել էին:

Աշխատանքս շատ թեթև էր: Հանգստանալու շատ ժամանակ և հնարաւորութիւն ունէի:

Ինձ թւում էր՝ հանգստեան արձակուրդի եկած լինեմ: Բեռնատար մեքենաներիս հետ անցկացրած 32 ամիսների տանջալից կեանքիս լոկ վերյիշումն իսկ ինձ սրտխառնուք էր պատճառում: Երբեմն, երազներումս, վերապրում էի այդ կոշմարային ճգնաժամի օրերը և տագնապալից ու խեղդիչ քնից քրտնաթոր վեր էի թռչում: Զարթնելուց յետոյ հրճւում էի, որ այդ տանջալից վերապրումը երազներիս շարքն է անցել:

Թեհրանից մի քանի հատոր գրքեր և բառարաններ էի բերել: Ազատ ժամանակներս նւիրում էի ընթերցանութեան և օտար լեզուների բառապաշարի ծանօթութեան ճոխացմանը: Այնպէս էի դասաւորել, որ շաբաթւայ չորս օրերը Ղալէ-Շէյխում լինեմ: Գեարմաբդարում տաքը գրեթէ խեղդիչ էր: Ջերմաստիճանը շւաքում յաճախ 43-ից անցնում էր: Օդը Ղալէ-Շէյխում աւելի տանելի էր: Մանաւանդ գիշերները բաւական զով էր լինում: Հնդիկ բժիշկը շատ ուրախանում էր, երբ իր մօտ էի լինում: Ճատրակ շատ էր սիրում և մեծ բաւականութիւն էր զգում, երբ ես համաձայնւում էի այդ խաղի միջոցով նրան մտային մարզանքի և մրցութեան հրաւիրելու:

ԹԱՆԳԷ-ԴՕՈՒՄ

Շուրջ վեց ամիս օրերն այսպէս խաղաղ ու հանգիստ անցնում էին: Ջղերիս արտակարգ լարումն հետզհետէ մեղմանում էր, և իմ՝ սովորական մարդու ֆիզիկական և մտային հանգստութիւնը վերագրտնում էի:

Միակ անհանգստութիւնս ընտանիքիս և երեխաներիս բացակայութիւնն էր: Երեխաներիս չափազանց շատ կարօտում էի: Ամուսնութիւնիցս յետոյ սա առաջին անգամն էր, ինչ երկարատև բացակայում էի տնից և երեխաներից հեռու ու զրկուած էի մնում: Քամսաքսի թղթատարական փոստով

շաբաթը մի անգամ նամակային հաղորդակցութեան մէջ էի ընտանիքիս հետ: Երեխաներիս առողջական վիճակն ինձ չափազանց անհանգստացնում էր: Բարեբախտութիւնը կայանում էր նրանում, որ գրեթէ ամիսը մի անգամ առիթ էի ունենում հանդիպելու աներորդուս՝ Էդուարդին, որ Քամսաքսի նախագահ և գլխաւոր ճարտարապետ Բլաքին կառուցող երկաթուղագծի վերահասութեան համար իր ձեռքում եղած մարդատարով հարաւ էր բերում: Էդուարդը մերոնց մասին ինձ մանրամասն տեղեկութիւններ էր տալիս:

Քամսաքսի մեր առողջապահական մասի գլխաւոր վարիչը՝ դոքտոր Թորֆէն, այդ անցնող վեց ամսւայ ընթացքում երեք անգամ հիւանդանոցների վերահասութեան համար՝ այցելութեան էր եկել: Առաջին երկու անգամները նրա վերաբերմունքն իմ նկատմամբ սառն և անհամակրական էր, բայց վերջին անգամ բոլորովին փոխուած ու համակրական էր:

Նա Իրանի վերածնուող շրջանի բժշկական առաջին խմբին էր պատկանում և բժշկապետ Լօղման-Դօվլէի սիրելի աշակերտներից էր: Դոքտ. Թորֆէն երկաթուղագծի հիւանդանոցների տուած վերահասութեան իր երրորդ այցելութեան ժամանակ ինձ յայտնեց.

– Պր. Սարհադեա՛ն, մեր Կենտրոնական վարչութեանը ենթարկուած հաշւապահական բաժնի վարիչը՝ Համիդ Թեհրանչին, ձեր ներկայացրած հաշիւների ամսական տեղեկագրերից գրաւոր գոհունակութիւն է յայտնել: Որոշել եմ Թեհրան վերադառնալուց յետոյ ձեզ նշանակել երկաթուղագծի առողջապահական բաժնի՝ հարաւում մեր ունցած բոլոր հիւանդանոցների գլխաւոր հաշւապահը: Ձեր ռոճիկի վրայ կարևոր յաւելում տրւելու է: Բիշէի հաշւապահ Ղարավին էլ ձեզ է ենթարկւելու: Նկատի առնելով ճանապարհների դժւարութիւնն ու հեռաւորութիւնը՝ առայժմ ամիսը մի անգամ էք նրա հաշիւներին վերահասու լինելու:

– Յարգելի՛ վարիչ, չափազանց շնորհակալ եմ ձեր վստահութեան և սիրալիրութեան համար,– պատասխանեցի շոյած ինքնասիրութեան հրճւանքով,– բայց, Ղարավուց բացի, մեր բաժնում երկու ուրիշ հաշւապահներ էլ կան: Ի՞նչ էք որոշել նրանց համար:

– Ձեր նոր նշանակման հրամանագրի հետ միաժամանակ նրանց պաշտօնավարութեան լրանալու մասին գրաւոր կարգադրութիւնն էլ կուղարկւի: Իհարկէ, դա մեզ հետ կապ ունեցող խնդիր է:

Առարկել չէի կարող, քանի որ դոքտ. Թորֆէն քաղաքավարի ձևով ինձ արդէն հասկացրել էր, որ այդ խնդիրն ինձ չի վերաբերում: Ներքնապէս դժգոհ էի, որ իմ գնահատած ծառայութիւնն երկու ուրիշ հաշւապահների կրճատման պատճառ է դառնում: Ի՞նչ կարող էի անել: Թանգէ-Դօի հաշւապահ Մոխթարին, որի հետ բարեկամացել էի, շատ խղճում էի, քանի որ նրա նիւթական անմխիթար պայմաններին տեղեկացել էի: Ճար չկար, եղած կարգադրութեանը ստիպւած էի ենթարկւել:

Մի քանի օրից յետոյ Քամսաքսի թղթատարական փոստը ինձ յանձնեց իմ նոր նշանակման գրաւոր կարգադրութիւնը: Յաջորդ օրը փոխադրւեցի իմ նոր պաշտօնատեղին՝ Թանգէ-Դօ:

Դոքտ. Ջոհաննէսն ու իր կինը, ինչպէս նաև Ղալե-Շէյխի հնդիկ բժիշկն ու իր կինը իմ նոր նշանակման և պաշտօնավարութեան համար սրտանց ուրախացել էին:

***

Թանգէ-Դօի հիւանդանոցը կառուցող հարաւային երկաթուղագծի կենտրոնական հիւանդանոցն էր: Նրա շէնքը բաւական ընդարձակ էր և օժտւած էր ամէն տեսակի յարմարութիւններով: Հիւանդներին յատկացւած վեց մեծ սենեակներից բացի՝ բժիշկների, հիւանդապահների, դեղագործի, հաշւապահի, լւացարարի, խոհարարի և այլ ծառայողների բնակութեան համար սենեակներ կային: Մի ուրիշ առանձին շէնք էլ՝ իր բոլոր յարմարութիւններով, յատկացւած էր գլխաւոր բժշկի և նրա ընտանիքի բնակութեան:

21 կիլօմետր հեռաւորութեան վրայ և լեռնային մի բարձրաւանդակի վրայ, որ Նուժիան էր կոչւում և Փափի անունով լոռ ցեղախմբի ամառանոցային վայրն էր, շինւած էր մի ուրիշ, համեմատաբար մեծ հիւանդանոց: Այս հիւանդանոցը ենթարկւած էր Թանգէ-Դօին և, ի միջի այլոց, պարփակում էր վիրաբուժական մի մեծ սրահ՝ օժտւած հնարաւոր միջոցներով և գործիքներով:

Ճանապարհները շինելու և մանաւանդ թունէլները փորելու ծանր աշխատանքներում վիրաւորւած բանւորներին վերոյիշեալ հիւանդանոցում ենթարկում էին վիրաբուժական գործողութիւնների: Ջերմով, դեզենտերիայով և ուրիշ լուրջ հիւանդութիւններով վարակւած ծանր հիւանդներին էլ փոխադրում էին այնտեղ:

Լեռնագագաթի բարձաւանդակի վրայ շինւած այդ հիւանդանոցը իր սքանչելի և զովասուն օդով և կլիմայով ծանրօրէն վիրաւորւած և զանազան հիւանդութիւններով հիւծւած բանւորների համար կատարեալ բարիք էր: Կարելի է ասել, որ այդ անտանելիօրէն կիզիչ հարաւում լեռնագագաթին թառած այդ հիւանդանոցը մի տեսակ առողջարան, ապաքինման բացառիկ բուժավայր էր:

Ամբողջ 27 ամիսներ Թանգէ-Դօի հիւանդանոցում ապրեցի: Հարաւային երկաթուղագծի վեց հիւանդանոցների տնտեսական մասի վերահսկողութիւնն ու հաշիւների վերանայումն ու կարգաւորումն իմ պարտականութիւնն էր:

Ինձ շրջապատող 50-ից աւելի բժիշկները, օգնական բժիշկները, վիրաբոյժը, դեղագործը, հիւան-

դապահների մեքենավարներ և ուրիշ ծառայողներ մի մասնաւոր և յարգալից վերաբերմունք ունէին իմ նկատմամբ: Ամէն կերպ աշխատում էի փոխադարձել նրանց վստահութիւնն ու ազնիւ վերաբերմունքը՝ նրանց հնարաւոր օժանդակութիւն ցոյց տալով: Թեհրանի առողջապահական կենտրոնական վարչութիւնն էլ իմ կատարած աշխատանքից գոհ էր:

Թանգէ-Դօի գլխաւոր բժիշկը մի փաքեստանցի էր: Նրան դոքտ. Խան էին կոչում: Ըստ երևոյթին, այդ նրա վերադրուած անունն էր: Մինչև վերջ էլ թէ՛ ես և թէ՛ հիւանդանոցներում մեր աշխատողները չկարողացանք նրա իսկական ազգանունն իմանալ: Նախապէս նա ծառայել էր հարաւային Անգլո-իրանեան նաւթի ընկերութեան մէջ:

Թանգէ-Դօից մինչև Թանգէ-Սէ երկաթուղագծի կառուցման գործը «Էդկա» կոչուած իրանեան մի ընկերութեան յանձնուած էր: Այդ շինարարական ընկերութեան գլխաւոր ինժեները Շաղաղի անունով մէկն էր, իսկ նրա գլխաւոր օգնականն իմ բարեկամ Արամ Մազլումեանն էր:

Ամէն անգամ, երբ Արամը վերահսկողութեան համար գալիս էր գծի վրայ՝ Թանգէ-Դօ, կա՛մ նա և կա՛մ ես իրար տեսնելու և խօսակցելու էինք գնում: Նա յաջողել էր Եւրոպայում իր մասնագիտութեան ճիւղն աւարտել և Թեհրան վերադառնալով՝ կարևոր դիրք գրաւել: «Էդկա» կոչուած կառուցողական ընկերութեան մէջ մտնելուց առաջ եղել էր Բանդար Փահլաւու նաւահանգստի գլխաւոր ինժեները և մի քանի տարի վարել էր այդ պաշտօնը:

1936-ի վերջերում, երբ պատրաստւում էի Թանգէ-Դօից մեր հարաւային առողջապահական գծի վերջին և գլխաւոր կենտրոնը՝ Բիշէ անցնել, անսահման ափսոսանքով և վշտով նրա վաղաժամ և դժբախտ մահուան գոյժը լսեցի:

Մազլումեանի ականջում գոյացած մի բշտիկ պայթել էր, որի հետևանքով գործողութեան էր ենթարկւել, սակայն վիրաբոյժի անփոյթ վերաբերմունքի պատճառով արեան վարակում էր ստացել և մահացել: Ամենացաւալին այն էր, որ նա տարիների տանջանքներից և չարքաշութիւններից յետոյ, երբ դեռ նոր էր սկսել իր և ընտանիքի համար հանգստաւէտ կեանք ստեղծել, այդպէս վաղաժամ կնքեց իր մահկանացուն:

ԲԻՇԷՈՒՄ

1937 թւի սկզբում Թանգէ-Դօի և Նուժիան ամառանոցային մեր հիւանդանոցները փակւել էին, և առողջապահական մասի անձնակազմի գլխաւոր բժիշկները և նրանց օգնականներից ու հիւանդապահներից մի մասը փոխադրւել էին Բիշէի հիւանդանոցը: Ես էլ փոխադրուեցի Բիշէ: Մինչ այդ Բիշէում գտնուող հաշւապահը հեռացւել էր:

Երկաթուղագծի կառուցման աշխատանքները, նախապէս կազմուած ծրագրի համաձայն, մինչև 1938-ի մարտ 21-ը (իրանեան նոր տարուան) պիտի վերջանային, բայց մի կարգ լրացուցիչ աշխատանքների պատճառով մի քանի ամիս երկարաձգւեց: Բիշէի հիւանդանոցը՝ իբրև երկաթուղագծային կառուցման վերջին և կենտրոնական հիւանդանոց, մինչև աշխատանքների լրացումը պիտի գոյատևէր:

Հիւանդանոցների թւում բժշկական դարմանումի և վիրաբուժական գործողութիւնների գծով Բիշէի հիւանդանոցը ամենալաւ կազմակերպւած հիւանդանոցն էր: Դա ինքնին հասկանալի էր, քանի որ փակւած հիւանդանոցների լաւագոյն անձնակազմն ու բոլոր վիրաբուժական միջոցներն այնտեղ էին կենտրոնացուած:

Հիւանդանոցի գլխաւոր բժիշկը դոքտ. Նազէրին, իսկ վիրաբոյժը դոքտոր Բահէրն էին: Երկուսն էլ իրենց մասնագիտութիւնների մէջ յայտնի էին: Բիշէից դէպի հիւսիս մնացել էին երկու ուրիշ հիւանդանոցներ:

***

Բիշէն (անտառակ է նշանակում) իր անուան կատարելապէս համապատասխանում էր: Իրանի հարաւային կիզիչ երկրամասի իսկական օազիսն էր: Բարձրասլաց չինարի և վայրի հացի ու բալուդի ծառերն իրար կողքի աճած: Հոսուն ջրեր և կուսական անվերջ կանաչութիւն: Հազարաւոր ամէն տեսակի թռչնակներ, որոնց թւում ճնճղուկներ, սարեակներ և սոխակներ, վխտում էին: Ամառային տօթը կարծես չէի համարձակւում այնտեղ մուտք գործել: Օդը միշտ զով և հոգեպարար էր:

Ամբողջ երեք տարի զրկւած էի ընտանիքիս և երեխաներիս ներկայութիւնից: Մինչև Բիշէ փոխադրուելս նրանց ինձ մօտ բերելն անխղճութիւն էի համարում: Գեարմաբդարի, Ղալէ-Շէյխի, Թանգէ-Դօի և Թանգէ-Սէի ամառային ջերմաստիճանը 42-44-ից անցնում էր: Մեր երկաթեայ մահճակալներին ձեռք տալ չէինք համարձակւում, որովհետև այրում էին: Ցմռան եղանակին նրանց ինձ մօտ փոխադրելը յարմար էր, բայց այդ պարագային դպրոցական երկու երեխաներիս իրենց դպրոցական պարապմունքից պիտի զրկէի:

Իմ գործակիցներից նրանք, որոնց ընտանիքն ու երեխաներն իրենց կողքին էին, իմ կամաւոր զրկման համար յաճախ ինձ քննադատում և նոյնիսկ մեղադրում էին: Բայց ես մտածում էի, որ աւելի լաւ է ինձ, քան թէ երեխաներիս զրկանքի ենթարկեմ: Բոլորովին ցանկութիւն չունէի իմ հանգստութեան և բաւականութեան պատճառով երեխաներիս իրենց դպրոցից և ուսումից զրկել:

1937 թւի ամառային արձակուրդին՝ մօտ 3 ամիս, ընտանիքս ու երեք երեխաներս ինձ մօտ՝ Բիշէ եկան: Այդ ժամանակամիջոցում նրանք ինձ մօտ ապրելու բոլոր հնարաւորութիւններն ունէին:

Երկաթուղագծի կառուցման բոլոր կենտրոնավայրերում, որոնց շարքին էր նաև Բիշէն, ինժեներները, տեխնիկական ծառայողները, կառուցողական ընկերութիւնների գրասենեակային պաշտօնեաները և վերջապէս շինարարական բանւորները մի լրիւ համայնք էին կազմում: Նրանց կենտրոնացած վայրերում կենսամթերք և ապրուստի ամենաանհրաժէշտ միջոցներ հայթայթող և վաճառող խանութպաններ էին հաւաքւում:

Երբ ամբողջ երեք տարիների բացակայութիւնից յետոյ մերոնց դիմաւորելու բախտաւորութիւն ունեցայ, իմ ուրախութեանս սահման չկար: Մեծ երեխաս՝ Լևոնը (որին յաճախ Էդիկ էինք կանչում), աղջիկս՝ Մէդիկը, մեծացել և հասակ էին քաշել: Երկու ամսական թողած Յարութիկս 3 ու կէս տարեկան էր: Կինս էլ, իր անցկացրած նեղ օրերից և նրանց հետ կապւած սրտմաշուկից ազատւած և հանգստացած, թարմացել և կենսուրախ էր դարձել: Բոլոր երեք երեխաներիս հերթով կրծքիս սեղմում էի և անկշտում համբուրում էի:

Բախտս այդպէս էր դասաւորւել: Բեռնատար մեքենաների՝ ինձ պատճառած տանջանքներից յետոյ ստիպւած էի ինձ կամաւոր պանդխտութեան և ընտանեկան զրկանքի ենթարկելու: Երջանիկ էի, որ վերջապէս ինձ յաջողւել էր չարքաշ և յամառ աշխատանքիս շնորհիւ նորից ոտքի կանգնել և ինձ համար նորից դիրք ստեղծել:

Բիշէում 30 մետր երկարութեամբ և 12 մետր լայնութեամբ ջրի մի մեծ աւազան էր սարքւած: Ամէն օր երկու անգամ երեխաներիս տանում էի լողի: Մեծ տղայիս և աղջկանս մի շաբաթւայ ընթացքում լողալ սովորեցրի: Փոքր Յարութիս էլ ձախ թևից ամուր բռնած՝ աջ թևով լող տալու վարժութիւն էի անել տալիս: Լողի մարզանքից նրանք մեծ բաւականութիւն էին ստանում: Աւազանից դուրս գալուց յետոյ հսկում էի, որ նրանք իրենց մարմինները կարգին չորացնելուց վերջ աւազի վրայ՝ արևի մեղմ շողքի ներքև, պառկէին և հանգստանային: Ազատ ժամերիս նրանց տանում էի մերձակայ գեղատեսիլ և ջրառատ վայրերը տեսնելու և կուսական բնութեան թարմութիւնը ընմբոշխնելու:

Օրերն արագասլաց թռչում էին: Բիշէում, երեխաներիս և ընտանիքիս հետ անցկացրած հարիւր և մէկ օրերը կեանքիս անմոռանալի և ամենաերջանիկ շրջանն է եղել: Մերոնց՝ Բիշէում եղած ժամանակ, բարեբախտաբար, դոքտ. Նազէրիի, դոքտ. Լէվասանիի և դոքտ. Նաջմ-Աբադիի կինն ու երեխաներն էլ այնտեղ էին: Չորսիս ընտանիքները համարեա ամէն օր՝ երեկոները, հաւաքւում, զրուցում, կատակում և ուրախ ու զւարթ ժամանակ էին անց կացնում: Մանաւանդ Նաջմ-Աբադին իր առանձնայատուկ կատակներով և զւարճախօսութեամբ մեզ միշտ ուրախ տրամադրութեան մէջ էր պահում և անվերջ ծիծաղելու առիթներ ստեղծում:

Շատ մեծ ափսոսանքով մերոնց Թեհրան ուղարկեցի: Գործակիցներս շատ աշխատեցին ինձ համոզել, որ նրանց մինչև մեր գործերի աւարտումը մօտս պահեմ: Ինձ չափազանց հաճելի էր այդպես վարւել, բայց գիտէի, որ դա իմ կողմից եսասիրութիւն կը լինի, քանի որ համոզւած էի՝ մինչև մեր գործերի լրիւ վերջացումը մի ամբողջ տարի կը տևի, և ես իմ երեխաներին ուսումից զրկելու պատճառ պիտի դառնայի:

Դժբախտաբար, Թեհրանում հարազատ և սրտացաւ մէկին չունէի, որին կարողանայի երեխաներիս յանձնել և կնոջս ինձ մօտ պահել: Ընդհանրապէս ճիշտ ու տրամաբանական չեմ համարել այն հանգամանքը, որ, երբ երեխաներն իրենց հարազատ մայրն ու հայրն ունեն, կարելի է կամ նպատակայարմար է նրանց ուրիշի խնամքին ու խնամակալութեանը յանձնել:

ԼՈՌԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շրջանը, ուր ես ամբողջ չորս տարիներ ապրեցի, և որի կրծքի վրայով անցնելու էր իրանեան նորակառոյց երկաթուղին, կոչւում էր Լոռեստան:

Սալեհաբադ-Գեարմաբդարից սկսած մինչև Դօրուդ այդ հսկայածաւալ երկրամասը լոռերի զանազան ցեղախմբերի բնակավայրն է:

Ինչպէս Իրանի զանազան նահանգային ընդարձակ շրջանները, այնպէս էլ Լոռեստանը, Ռըզա Շահից առաջ ինքնագլուխ շրջան էր: Լոռերը, բացի իրենց ցեղապետներից, ուրիշին ճանաչելու և ենթարկւելու գաղափար իսկ չունէին:

Նրանք չարքաշ աշխատանքից խորշում էին: Մեծ մասամբ զբաղւում էին անասնապահութեամբ: Հին ժամանակներում նրանց հիմնական գործը աւազակութիւնն էր: Նրանք իրենց ամբողջ ճիգն ու ջանքը կենտրոնացրել էին կողոպուտի և թալանի վրայ: Անապահով և վտանգաւոր շրջան էր Լոռեստանը: Կողոպտելու իրենց նպատակին հասնելու համար նրանք պատրաստ էին սպանելու և մորթելու ամենափոքր դիմադրութիւն ցոյց տւող հակառակորդին: Նրանց համար մարդկանց սպանելը նոյնչափ հեշտ էր, որչափ մի հաւի ճիտն ոլորելով՝ նրան մորթելը: Բուրուջերդ-Խորրամաբադ-Սալեհաբադ նախկին ճանապարհը լոռերի կողոպուտների և սպանութիւնների պատճառով անւանում էին Ղաթլը-գահ կամ սպանդանոց: Բեռնատարների մեքենավարները չկողոպտւելու համար ստիպւած էին խմբովին և ժանդարմների ուղեկցութեամբ և պաշտպանութեամբ այդ ճանապարհը կտրել: Բոլոր այդ զգուշաւորութիւններն էլ շատ անգամ անցնում էին անօգուտ: Լոռերն իրենց «նւիրական» սովորութիւնից ձեռք վերցնողը չէին: Նրանք ամենայն ճարպկութեամբ և արագաշարժութեամբ իրենց «ասպետական» ելոյթները՝ թալանն ու մաքրազարդումը, կատարում էին: Մեծն Ռըզա Շահը, ինչպէս ամբողջ

Իրանի զանազան շրջանների, այնպէս էլ Լոռեստանի այս վարկաբեկիչ ինքնագլխութեան, ինքնիշխանութեան և մանաւանդ աւազակութիւններին կտրականապէս վերջ տուեց:

Նա Լոռեստանի խաղաղեցման գործը սպարապետ Ահմադիին և նրա հայազգի գնդապետ Գիգոյին յանձնեց, որոնք ի վերջոյ յաջողեցին նրանց ենթարկել պետական իշխանութեան և Լոռեստանը կարգի բերելով՝ կատարելապէս խաղաղեցնել:

***

Ինչպէս վերևում յիշատակեցի, լոռերը անասնապահութիւնից և խաշնարածութիւնից դուրս ուրիշ գործ չէին սիրում: Նոյնիսկ իրենց ուտելու հացը հայթայթելու համար ծուլանում էին երկրագործութեամբ զբաղուելու: Ցորենի կամ գարի հացի փոխարէն վայրի բալութը (թարգմ. կաղին) խաշում կամ խորովում և ուտում էին:

Ինձ և ինձ նմաններին չափազանց շատ էին զարմացնում նրանց տնային և տոհմական բժշկութիւնները: Նորագոյն բժշկութեան, բժշկի, հիւանդանոցի մասին հաւատք չունէին: Նեղութիւն և դժուար աշխատանք չէին սիրում: Երկաթուղագծի կառուցման համար աշխատող բանտրների թում չնչին տոկոս էին կազմում: Եթէ նրանցից մէկն ու մէկը հիւանդանար կամ արկածի ենթարկուելով՝ վիրաւորուէր և հիւանդանոց փոխադրուէր, հէնց նոյն օրը կամ մէկ-երկու օրից նրա ազգակիցները, հիւանդանոցի գլխաւորին դիմելով, խնդրում էին հիւանդին յանձնել իրենց:

Ինքնայատուկ, զարմանալի և մեզ համար բոլորովին անհասկանալի բժշկութեան ձևեր և միջոցներ ունէին և իրենց հիւանդներին յաճախ կարողանում էին այդ զարմանալի, անհասկանալի միջոցներով առողջացնել: Երկու շատ զարմանալի բժշկութիւնների անհաւատալի արդիւնքը մոռանալ չեմ կարող: Նուժիանի ամառանոցային լեռնային հիւանդանոցում պառկած էր արկածի ենթարկուած մի լոռ: Նրա ոտքի վէրքը վերածուել էր փտախտի: Որոշուած էր յաջորդ օրը նրա ընտանիքի գրաւոր համաձայնութիւնը ստանալուց յետոյ հիւանդի աջ ոտքը զիստից կտրել:

Նրա ազգականները չհամաձայնեցին հիւանդի վիրաբուժական գործողութեանը և պատկան թուղթը մերժեցին ստորագրել: Պահանջեցին իրենց հիւանդին յանձնել: Այդ առթիւ ապագային չգանգատուելու փաստաթուղթն էլ ստորագրեցին և փախուստի ենթարկուած ծանր հիւանդին փոխնիփոխ շալակելով՝ տարան: Երկու շաբաթ հազիւ լրացած՝ վարակման ենթարկուած լոռը, բոլորովին առողջացած, իր ոտքով հիւանդանոց եկաւ և անվրէժխնդիր տոնով յայտնեց.

– Բախտի հանդիպեցի, որ մերոնք չհամաձայնեցին ոտքս կտրելուն, թէ չէ սատանան գիտէ՝ մի ոտանի կը դառնայի՞, թէ՞ երկուսից էլ կը զրկուէի:

Եղած մանրազնին քննութիւնից պարզուեց, որ հիւանդի ոտքը փաթաթել էին նոր մորթած ոչխարի տաք և արիւնալի մսի և մորթի մէջ և ուրիշ նախնական, պապենական իրենց գիտութիւնով մարդուն կատարելապէս բժշկել էին:

Մի ուրիշ, նոյնպէս չափազանց զարմանալի բժշկութիւն էլ Բիշէում կատարուեց: Լոռերից մէկը, ցած գլորուող ժայռի կտորներին հանդիպելով, դժբախտութիւնն էր ունեցել երկու ոտքով և աջ բազուկով ջարդ ու փշուր լինելու: Մինչ հիւանդանոցի վիրաբոյժը նրա բազմաթիւ տեղերից կոտրտուած ոտքերի և ձեռքի վիրակապութեան համար շւարել էր, արկածի ենթարկուած լոռի ազգականները հիւանդանոց եկան և նորից իրենց հիւանդին շալակելով՝ տարան:

Երեք շաբաթից յետոյ այդ ջարդ ու փշուր եղած մարդը թեթև կաղալով հիւանդանոց եկաւ: Վիրաբոյժի հետ մենք էլ այս տարօրինակ և հրաշքի նմանող բժշկութիւնից ապշած էինք մնացել:

ՆՈՐԻՑ ԹԵՀՐԱՆՈՒՄ

1938 թի սեպտեմբերի սկզբին նորից Թեհրան վերադարձայ: Ուղիղ քսան տարի առաջ էր, երբ ես հանգուցեալ հօրս հետ գաղթական և անտուն ու անտէր վիճակում այն օրերին ինձ անծանօթ այս մայրաքաղաքն էի ոտք դրել: Ինձ յուզող յուշերս՝ արագընթաց և իրարայաջորդ, ուղեղս էին խուժում:

Երկաթուղագծի կառուցման հիմնական աշխատանքները վերջացած լինելով՝ մեր առողջապահական մասի գործն էլ վերջացրել և հաշիւները փակել ու գույքը յանձնել էինք:

Երկաթուղու մարդատար գնացքով Թեհրան եկայ: Կառաշարը նոր վերջացրած ճանապարհով մինչև Դօրուդ բազմաթիւ թունելներով անցաւ: Իսկ Դօրուդից Թեհրան հարթ ճանապարհով արագընթաց սուրում էր:

Իմ վերաբնակուած հայրենիքի՝ վերածնող Իրանի մեծ առաջնորդի՝ հանճարեղ Ռըզա Շահի նախաձեռնած և բացառիկ արագութեամբ և միմիայն իր երկրի ֆինանսական միջոցներով վերջացրած մեծ գործը՝ երկաթուղագծի կառուցումը, սիրտս ուրախութեամբ և հրճւանքով էր լցնում: Հրճւում էի նաև այն պատճառով, որ ենթադրում էի, թէ այդ կառուցման գործում ինքս էլ, գուցէ մի հարիւր միլիոներորդ չափով, մասնակցութիւն եմ ունեցել:

Երկաթուղային գնացքի իմ գեղեցիկ և արդիական խցիկում ինքնամփոփ և հանգիստ մտածում և հրճւում էի, որ բախտ եմ ունեցել մեր դարաւոր հայատեաց տաճիկ իշխանութիւնից մազապուրծ ազատուած լինելով՝ վերաբնակուել մի երկրում, որտեղ մեզնից ոչ միայն չեն խորշում, այլև նոյնիսկ սիրալիրութեամբ մեր մտային և բարոյական օժանդակութիւնից և գործակցութիւնից անվերապահ օգտւում են: Մեզ ոչ միայն ոչ մի կերպ չեն ջլատում

և խեղդում, այլև ամէն հնարաւորութիւն տալիս են մտային և շինարարական ուժերը դրսևորելու և ազատօրէն արդիւնաւորելու:

Անսահման հիացմունքով աշխատում էի հաշուել Ռըզա Շահի՝ այդ բնածին տաղանդով փայլող մեծ մարդու վերածնող Իրանի համար ծրագրած և իրագործած բազմաթիւ մեծ ձեռնարկները: Նա իր բացառիկ հանճարով և մանաւանդ պողպատեայ վճռականութեամբ միջնադարեան ֆէօդալիզմի ճանկերում խեղդամահ եղած երկրից ստեղծել էր մի ուրիշ, նոր, բոլորովին անճանաչելի երկիր: Նրա ձեռնարկած և իրագործած ուրիշ գործերի կարևորութիւնը երկաթուղու կառուցումից պակաս չէր:

Երբ Թեհրանի երկաթուղային կայարանը հասայ, նրա գեղեցկութեան և արդիականութեան վրայ սքանչացայ: Կառք վարձելով՝ Թեհրանում մերոնց բնակած տան հասցէն տուի: Հինգ տարուան ընթացքում՝ իմ բացակայութեան ժամանակամիջոցին, Թեհրանը բոլորովին փոխուած էր: Նախկին ծուռ ու մուռ և նեղլիկ փողոցները միանգամայն անհետացել և նրանց փոխարէն կառուցուել էին լայն և ուղղահայեաց պողոտաներ: Պողոտաները և փողոցները բազմաթիւ գեղեցիկ խանութներով և տներով եզերուած էին: Ինձ այնպէս թւաց, որ մոգական մի գաւազան մեծ յեղաշրջում էր կատարել:

Առաւօտեան ժամը 6-ին մեր տունը հասայ: Մերոնք իմ վերադարձի մասին թէև տեղեկութիւն ունէին, բայց այդ օրն ինձ չէին սպասում:

Թէ՛ իմ և թէ՛ ընտանիքիս ու երեխաներիս ուրախութիւնն անկարագրելի էր: Մեր գրկախառնումներն ու փոխադարձ համբոյրները վերջ չունէին:

Մեծ երեխաս՝ Լևոնը, 12 տարեկան էր և հայկական դպրոցի իր վեցդասեան ուսումն աւարտել էր արդէն:

***

Թեհրան հասնելուս երկրորդ օրը ներկայացայ երկաթուղագծի կառուցման առողջապահական մասի ընդհանուր վարչութեան գլխաւոր բժիշկ դոքտոր Թորֆէին, որն իմ ծառայութեան վերջին երեք տարիներում ինձ հետ լաւ բարեկամացել էր: Երբ իր սենեակը մտայ, նա ժպտալից գոհունակութեամբ ինձ դիմաւորեց և ձեռքս սեղմելով՝ ասաց.

– Պր. Սարհադեա՛ն, ձեր պաշտօնավարութիւնից շատ գոհ եմ մնացել: Եթէ ցանկանաք, ձեզ հիւսիսային երկաթուղագծի առողջական մասի երկու գլխաւոր կենտրոններից մէկն ու մէկը կուղարկեմ: Հիւսիսում առնւազն դեռ երկու տարուայ անելիք ունենք: Թեհրանի մեր այս կենտրոնական վարչութեան մէջ էլ գլխաւոր հաշւապահի օգնականի պաշտօնը ձեզ կարող եմ տալ, բայց նկատի պիտի ունենաք, որ տեղումս ռոճիկը համեմատաբար քիչ է:

– Յարգելի՛ դոքտոր, չափազանց շնորհակալ եմ ձեր՝ իմ նկատմամբ տածած սիրալիրութեան և բարեկամութեան համար,– պատասխանեցի հիմնարկութեան վարիչ դոքտ. Թորֆէին,– բայց ձեր թոյլտուութեամբ, խնդրում եմ, ինձ իմ պաշտօնից ազատել: Եթէ կարելի է, բարի եղէ՛ք կարգադրելու, որ ինձ իմ հինգ տարիների պաշտօնավարութեան անհրաժեշտ վկայականը տրուի:

– Անկասկած ձեզ պէտք եղած վկայականը կը տրուի, բայց հետաքրքիր է իմանալ՝ ինչու՞ չէք ցանկանում ձեր պաշտօնավարութիւնը շարունակել:

– Ճիշտն ասած, ամբողջ հինգ տարիների յարատև բացակայութիւնը կնոջիցս ու երեխաներիցս ինձ բաւական շատ յոգնեցրել է: Մտածում եմ, եթէ հնարաւոր լինի, մի անկախ գործով զբաղուել: Միանգամայն համոզուած եմ, որ սրանից յետոյ էլ ձեր բարեկամական և բարոյական օժանդակութիւնից ինձ զրկելու չէք:

– Այդ մասին կարող էք միանգամայն վստահ լինել: Եթէ որևէ պարագայում կարողանամ որևէ կերպով ձեզ օգտակար լինել, երբեք չեմ խնայելու:

Դոքտ. Թորֆէն ինձ խոստացաւ անհրաժէշտ վկայականը տալ և հինգ տարուայ պաշտօնավարութեանս համար էլ հինգ ամսուայ ռոճիկի վճարումը յաջողեցնել:

Չափազանց գոհ մնալով դոքտորի անկեղծ վերաբերմունքից և խոստացած օժանդակութիւնից՝ շնորհակալութիւն յայտնեցի և անցայ հիմնարկութեան գլխաւոր հաշւապահի՝ Համիդ Թեհրանչու գրասենեակը: Սա էլ իր հերթին իմ կայացրած որոշումիս համար ցաւ յայտնեց և նոյնիսկ խոստացաւ սրանից յետոյ էլ մեր բարեկամական յարաբերութիւնները պահել:

Լիովին հնարաւորութիւն ունէի գոնէ երկու-երեք ամիս հանգստանալու և ապագայ անելիքիս համար մտածելու:

Պարտք եմ համարում մի անգամ էլ կրկնելու, որ իմ ծառայութեան ամբողջ հինգ տարիների ընթացքին ամենափոքր առիթ չունեցայ իմ գործակիցներիցս վշտանալու: Բացի դոքտ. Բահէր վիրաբոյժից, որ սքանչելի բնաւորութեամբ մի հրեայ էր, և երեք հոգի բժիշկներից, որոնք հայեր էին, բոլոր մնացեալ բժշկական, վիրաբուժական, դեղագործական և հիւանդապահական կազմը՝ թւով մօտ 50 հոգի, պարսիկներ էին:

Ստիպւած եմ խոստովանելու, որ նախքան պարսիկ ժողովրդի՝ այս կրթւած դասակարգի հետ գործ ունենալը, չէի ենթադրում, որ նրանք այսքան կիրթ, բարեացակամ, յարգալիր և մանաւանդ անանխանձ պիտի լինէին: Յաճախ մտածում եմ, որ երանի չէ՞ր լինի, որ այս դրական յատկութիւններով մենք՝ հայերս էլ օժտւած լինէինք և մանաւանդ մեր ունեցած ակնբախ թերութիւնից՝ նախանձից, այսքան չտառապէինք:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Մի շաբաթ յետոյ երկաթուղագծային առողջապահական գլխաւոր հիմնարկութիւնից թէ՛ պաշտօնավարութեանս պատշաճ վկայականը և թէ՛ հինգ ամիսների արձակուրդիս վճարը լիովին ստացայ:

Տրամադրութիւնս բաւական լաւ էր: Հինգ տարիների ընթացքում Թեհրանից բացակայելու պատճառով ընկերներիցս, բարեկամներիցս զրկուած էի մնացել: Որոշեցինք բարեկամական շրջանում մի հաւաքոյթ սարքել: Հաւաքոյթին 45-ի մօտ ընկերներ և մտերիմ բարեկամներ մասնակցեցին, և մի կարգին քէֆ սարքեցինք:

Ընթրիքն ու գինարբուքը շատ հաճելի անցաւ: Քէֆին սազանդար էլ կար: Բազմաթիւ ճառեր և բաժակաճառեր խօսուեցին: Թէ՛ մեր հիւրերը և թէ՛ մենք շատ ուրախ տրամադրութեամբ բաժանուեցինք: Հաւաքոյթը մասնաւորապէս ինձ համար շատ հաճելի անցաւ:

1939 թուի մայիսն էր: Եւրոպան պատերազմի նախօրեակի սարսափելի փոթորիկն էր ապրում: Խելացնոր Հիթլերը իրար յետևից Աւստրիան և Չեխոսլովակիան կուլ էր տուել արդէն և սպառնում էր ամբողջ Եւրոպային:

Իրանի հարաւի ու հիւսիսի ծայրամասերն իրար կապող երկաթուղագիծը Պարսից ծոցի վրայ նոր շինուած նաւահանգստից՝ Բանդար-Շահփուրից, սկսում և հասնում էր Կասպից ծովի հարաւում գտնուող Բանդար-Շահ նաւահանգիստը: Երկաթուղագիծն օժտուած էր տեխնիկական վերջին կատարելութեան հասած շոգեկաթսաներով և բեռնատար վագոններով:

Սակայն այս միակ փոխադրական ճանապարհը անբաւական էր: Անհրաժէշտ էր Սուլթանաբադ-Ղոմ-Թեհրան քաղաքներից դէպի Զահեդան՝ Հնդկաստանի (ներկայ Փաքեստան) արևմտեան սահմանը տանող կանոնաւոր խճուղիներ ունենալ: Այդ ճանապարհների բացառիկ անհրաժէշտութիւնը կարևոր էր: Պատերազմի պարագային ամէն կերպ պէտք էր նախ և առաջ Իրանի հարաւային մասում՝ Խուզեստանում, և Պարսից ծոցի մօտերքում գտնուող նաւթառատ շրջաններն ապահովել և ապա տնական յարաբերութիւն և հաղորդակցութիւն պահպանել Իրան-Հնդկաստան ճանապարհով:

Մեծ թափով ձեռնարկուեց Ղոմ-Սպահան-Եազդ-Քերման-Միլ-Նադէրի-Բամ-Զահեդան ճանապարհի վրայ ընկնող խճուղիների նորոգութեան և նոր խճուղիների շինութեան գործը:

Այդ նպատակի իրագործման համար ֆինանսական լայն միջոցներ տրամադրուեցին: Այդ ճանապարհների արագընթաց պատրաստութեան համար խոշոր գումարներ յորդել սկսեցին: Մի քանի կապալառու ընկերութիւններ յանձնառու եղան շտապ արագութեամբ նպատակադրուած ճանապարհները նորոգել կամ նորը սարքել:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բիշէում եղած ժամանակ ծանօթացել էի կապալառու-շինարարական գործերի մի թեքնիսիէնի (տեխնիկ) հետ: Այդ մարդը 35-ի շուրջ տարիք ունէր, կիսագրագէտ եուգոսլաւցի էր:

Նա կոչւում էր Լուկա Կաղիէվիչ: Տարիներից ի վեր որմնադրութեան գործով Իրան էր եկել և կէս հայ, կէս ասորի ծագումով մի աղջկայ հետ ամուսնացել ու երկու երեխայ ունէր: Ասպարէզ գտնելով՝ հետզհետէ յառաջադիմել և շինարարական գործերում դարձել էր ճարտարապետի տեխնիկ-օգնական:

Թեհրան վերադառնալուց յետոյ Լուկան յաճախ ինձ մօտ, և երբեմն էլ ես նրա մօտ գնում գալիս էինք: Նա ինձ առաջարկեց շինարարական մի ընկերութիւն կազմել:

– Շինարարական բազմաթիւ գործեր սկսել և սկսելու վրայ են,– ասաց նա:– Առիթը ձեռքից չպէտք է տալ: Գիտես, որ տեխնիկական-շինարարական գործեր կատարելու մասնագէտ եմ: Անմիջապէս մի քանի հոգուց բաղկացած ընկերութիւն պիտի կազմել և գործի ձեռնարկել: Եթէ մեզ՝ որպէս կապալառու-շինարարական ընկերութիւն, չյաջողուի ուղղակի և անմիջական գործ վերցնել, շատ հեշտութեամբ որպէս երկրորդ աստիճանի կապալառու դառնալ և համեմատաբար լաւ շահել կարող ենք: Մինչ այդ ընկերութեան կազմութիւնը մենք երկուսով ի վիճակի կը լինենք մի փոքր գործ լրացնելու: Գիտեմ, որ պարսկերէնին լաւ տիրապետում ես և ներկայիս մարդկանց հետ լաւ ծանօթութիւններ ունես:

– Լաւ, ի՞նչ է այդ փոքր գործը, քանի՞ ամիս է տևելու, և շահելու ի՞նչ երաշխիք ունես,– հարցրի նրանից:

– Այս գործը ամենաուշը մինչև 5 ամիս կարող ենք վերջացնել և մեծ հաւանականութեամբ 30-35 հազար թուման շահել: Դա Թեհրանից 20-22 կիլոմետրի վրայ գտնուող Լաշքարակ կոչւող գետի ձախ ափին կառուցելիք երկու մետրանոց բարձրութեամբ և շուրջ 200 մետր երկարութեամբ բետոնէ պատի շինութիւնն է:

– Լաւ, իսկ ումի՞ց այդ գործը պիտի վերցնել:

– Թեհրանի Ճանապարհների վարչութիւնից:

Դիմեցինք վերոյիշեալ վարչութեանը: Բարեբախտաբար, կարողացանք գործը յաջողեցնել: Չերնիցկիյ անունով պարսկահպատակ դարձած մի գաղթական ռուս այդ վարչութեան ինժեներական մասի գլխաւորը և Նիկիտ Օրբելեանը այս վերջինիս օգնական ճարտարապետն էր: Այս երկուսն էլ մեզ բաւական շատ բարոյական օժանդակութիւն ցոյց տուին և մենք հինգ ամսից աւելի շուտ ծրագրուած քար-ցեմենտէ պատը սարքելով՝ յանձնեցինք:

Դժբախտաբար, մեզնից որպէս երաշխիք պահուած ամբողջ գործի արժողութեան եօթը տոկոսի

(շուրջ տասն հազար թուման) ստացումը դժուարացաւ: Այդ բոլորից յետոյ մեզ՝ երկուսիս մօտ քսան հազար թումանի շահ մնաց, որից մենք շատ գոհ էինք:

***

Այս սկզբնական գործի յաջողութիւնը մեզ քաջալերեց՝ աւելի մեծ գործի նախաձեռնելու: Մեր ծրագրած շինարարական ընկերութիւնը կազմեցինք և պատկան պաշտօնական հիմնարկութեան միջոցով վաւերացրինք: Ընկերութեան մասնակցում էին մեր երկուսիցս զատ երկու ուրիշներ ևս, մէկը՝ Վ. Եսայեան, իսկ միւսը Էլիաս անունով մի ասորի:

Մեր կազմած այս ընկերութիւնը մասնակցեց անգլիացիների նախաձեռնութեամբ և նրանց ֆինանսական միջոցներով կառուցելիք Միլ-Նադէրի-Բամ ճանապարհի աճուրդին, բայց, որովհետև նախ՝ վկայած ճարտարապետ և ապա գործին անհրաժէշտ դրամագլուխը չունէինք, չկարողացանք յաջողել:

Վերոյիշեալ ճանապարհի աճուրդը Այվազ-զադէ անունով մի ասորի կարողացաւ շահել և նրա կառուցման մօտ 35 տոկոսը մեր ընկերութեան յանձնեց:

Աճուրդի տրուած գործի արժէքը սկզբում որոշուած էր մէկ միլիոն 200 հազար թուման, բայց յետոյ այդ միևնոյն գործը բարձրացաւ 12 միլիոնի:

Մեր չորս հոգինոց ընկերութիւնը բաժնետիրական էր, որից 40 տոկոսն ինձ էր յատկացուած, մնացեալ 60 տոկոսը 3 ընկերների մէջ հաւասարապէս բաժանուած էր: Որոշուած մէկ միլիոն ռիալ դրամագլխի 60 տոկոսը կանխիկ, իսկ մնացեալը ըստ պահանջին վճարելի էր:

Մեր ընկերութեան, այսպէս ասած, որպէս երկրորդ ձեռք վերցրած գործի՝ ճանապարհի շինութեան կենտրոնավայրը Քերմանն էր: Պայմանագրի համաձայն՝ ես նշանակուած էի ընկերութեան կենտրոն-գործավայրի լիազօր ներկայացուցիչը: Իմ միջոցով պիտի կատարուէին բոլոր ծախսերն ու վճարումները: Մեր կատարուելիք գործերի ամսական վիճակագրական գումարների վճարումն էլ ինձ էր լինելու: Մեր գործի իսկական կենտրոնը Քերմանից 54 կիլոմետր և Միլ-Նադերուն չհասած մի գիւղումն էր: Քարահանքի պատճառով այդտեղ էր ընտրուած իբր կենտրոն:

Քարահանքը հսկայ քարաժայռերի մօտ էր գտնուում: Դինամիտով քարաժայռերը պայթեցուում և հանուած քարերը ճանապարհի շինութեան համար բեռնատար մեքենաներով փոխադրուում էին:

Մեր ընկերութեան ստանձնած գործը մեր ունեցած միջոցների համեմատութեամբ անհամեմատօրէն մեծ էր: Շատ մեծ դժուարութեամբ մեզ յաջողուեց Թեհրանում 18 բեռնատարներ գնել: Դրանց արժէքը մեր գործի մէջ դրած դրամագլխի կրկինն էր: Մի կերպ յաջողեցրինք դրանց մէկ երրորդ արժէքի կանխիկ վճարումը: Մնացեալ գումարի համար հետագայում վճարուելիք մուրհակներ ստորագրեցինք:

Պէտք էր նոյնպէս մեծ քանակութեամբ բահեր, բրիչներ, փոխադրական փոքր երկաթասայլեր և գործին անհրաժեշտ ուրիշ միջոցներ հայթայթել:

Սկզբից իսկ դրամական մեծ նեղութեան ենթարկուեցինք: Դժուարութեան պատճառներից մէկն էլ այն էր, որ մեր եուգոսլաւ ընկերը՝ Լուկան, որպէս տեխնիկ-մասնագէտ, առանց մի ռիալ փող մտցնելու, քսան տոկոսով անվճար ընկեր էր դարձել:

ԻՐԱՆԻ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԳՐԱՒՈՒՄԸ

1941 թի յունիս 22-ի լուսաբացին հիթլերեան բանակները, յարձակուելով Խորհրդային Միութեան սահմանների վրայ, որ Ֆինլանդիայից մինչև Ռումանիա էր երկարում, կայծակնային թափով սկսեցին յառաջանալ և իրար յետևից գրաւել Խորհրդային Միութեան քաղաքները, աւաններն ու գիւղերը: Այդ կատաղի գրոհին մասնակցում էին 20 զրահապատ և 160 զօրաբաժիններ: Մի քանի օրից յետոյ այդ յարձակման միացան նաև ֆինլանդական, հունգարական, ռումանական և իտալական զինուորական միաւորներ:

Հիթլերը միանգամայն համոզուած էր, որ ամենաուշը մինչև 2-3 շաբաթ ռուսական բանակների դիմադրութիւնը կը փշրէր և Մոսկաւն կը գրաւէր: Այս տարօրինակօրէն սխալ ենթադրութիւնը բաժանում էին նաև աշխարհի շատ խոշոր թով քաղաքագէտները:

Հիթլերը շփացած էր եւրոպական երկրների և մանաւանդ պատերազմական դիմադրական հռչակ ունեցող Ֆրանսիայի 15-20 օրերի մէջ կրած պարտութեան յաջողութիւններից: Նա պատմական խոշոր սխալ գործեց՝ հսկայական Ռուսաստանում ապրող ազգութիւնների ինքնասիրութիւնը վիրաւորելով և նրանց այդ ազգային զգացումներն արհամարհելով: Փոխանակ ամէն կերպ այդ ազգութիւններին սիրաշահելու՝ իր մասնաւոր ատելութեան թոյնը նրանց գլխին թափեց: Նա յիմարութիւն ունեցաւ իր զօրաբանակներին կարգադրելու, որ նրանք իրենց գրաւած երկրամասում ապրող ռուս, ուկրայինն և զանազան ազգութիւններին պատկանող բնակչութիւնն անխնայ և վայրագաբար կոտորեն և ոչնչացնեն: Այդ խելացնոր վայրագութիւնը պատճառ դարձաւ, որ միլիոնաւոր ռուս, բելոռուս, ուկրայնացի, բալթիկեան ազգերի և ուրիշ ժողովուրդների պատկանող մարդիկ միահամուռ և միահոգի միանան և երդուեն դիմադրել ու մինչև իրենց արեան վերջին կաթիլը զոհեն հիթլերեան խելացնոր և վայրագ բռնակալութիւնն ու վանդալիզմը տապալելու համար:

Հիթլերն իր հաշիւների մէջ չարաչար սխալուած էր՝ կարծելով, որ Ռուսաստանում ապրող ազգու-

թիւնները հայրենասիրութիւնից և մարդկային ինքնապաշտպանութեան զգացումից ու դատողական ընդունակութիւններից զուրկ են:

***

Հիթլերը համոզուած էր, որ Խորհրդային Միութեան վրայ յարձակուելուց յետոյ իրեն կը յաջողուէր Անգլիայի հետ ժամանակաւոր անջատ հաշտութիւն կնքել և նրան իր Բրիտանական կայսրութեան կղզիներում չէզոքացնելով՝ ամբողջ Եւրոպային, Ռուսաստանին և նրան ենթակայ ծովածաւալ երկրներին տիրել:

Բայց Հիթլերը չարաչար սխալուած էր իր հաշիներում: Ռուսաստանի վրայ կատարած մոլեգին և կայծակնային յարձակումից հազիւ 20 օր անց՝ յուլիս 12-ին, Անգլիան և Ռուսաստանը փոխադարձ օգնութեան դաշինք կնքեցին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբնաւորութիւնը խիստ շատ համառօտ նկարագրեցինք, որպէսզի կարողանանք Իրանին վիճակուած նրա անդրադարձումն ու հետևանքները ճշտել:

Անգլօ-ռուսական յուլիս 12-ի փոխադարձ օգնութեան դաշինքի կնքումից գրեթէ անմիջապէս յետոյ այս երկու պետութիւնների կողմից Իրանին վերջնագրեր ներկայացուեցին: Նրանց միակ և կարևոր պատրուակը գերման-հիթլերական լրտեսական կազմակերպութեան գոյութիւնն էր Իրանում:

Երկու պետութիւնների վերջնագրերից դեռ 48 ժամ չանցած հիւսիսից՝ ռուսական և հարաւից՝ անգլիական զինուորական ուժերը 1941 թւի 25 օգոստոսին մուտք գործեցին Իրան:

Իրանի ամբողջ ազգաբնակչութիւնը այս զինուորական գրաւումից դժգոհ էր:

Համաշխարհային պատերազմն սկսելուց դեռ տարիներ առաջ Իրանն իրեն չէզոք պետութիւն էր յայտարարել: Գերման լրտեսական կազմակերպութեան գործունէութիւնն էլ պարզապէս մի պատրուակ էր: Երկու դաշնակից դարձած պետութիւնների կողմից Իրանի գրաւումն էլ նրանց զինուրական ծրագիրների գործադրումն էր հետապնդում:

Դաշնակիցների համար Ռուսաստանին զինուրական և տնտեսական ամէն տեսակի օգնութիւն հասցնելու ամենակարճ և ամենաապահով ճանապարհը Իրանն էր:

Գերման ֆաշիստների կատաղի և փոքորկանման գրոհներին հակահարուած տալու և նրանց պարտութեան մատնելու համար անգլիացիներն ու նրա դաշնակիցները ստիպուած էին Ռուսաստանին զինական արդիական բոլոր միջոցներով և պարենապաշարով օգնել և նրա դիմադրական կարողութիւնը բազմապատկել:

Իրանի համար այս զինուրական գրաւման հետևանքով պատճառած ամենամեծ դժբախտութիւնը նրա հայրենասէր և վերստեղծող առաջնորդի՝ Մեծն Ռըզա Շահի մեկուսացումն եղաւ: Նա իր անդրանիկ որդուն՝ թագաժառանգ Մոհամմադ Ռըզա Փահլաւիին, յանձնեց թագաւորական իշխանութիւնը և Իրանից հեռացաւ:

Իր հայրենիքի բազմաթիւ և բազմազան բարեկարգչական և անգնահատելի ծառայութիւններ մատուցած և իր պաշտած երկիրը վերակերտման և յառաջադիմութեան պատուաբեր ճանապարհին առաջնորդած Մեծ մարդը 1320 թւի 25 Շահրիվարին (17 սեպտ. 1941 թ.) իր թագաւորական իշխանութիւնն իր թագաժառանգ որդուն յանձնելուց յետոյ սրտի անհուն կսկիծով և անսահման ափսոսանքով 5 Մեհրին (28.9.41) իր սիրելի հայրենիքն և ամէն ինչ թողնելով՝ հեռացաւ:

Թագաւորական իշխանութեան վերոյիշեալ յանձնումից մէկ շաբաթ առաջ՝ 10 սեպտ. 1941 թւին, այդ օրերի խելօք և հեռատես վարչապետը՝ Ֆօրուղին, քաղաքական վտանգաւոր և խիստ ծանր դրութիւնը լաւապէս ըմբռնած և գնահատած, իր քաղաքականութեան հակառակորդների բարձրացրած բողոքներին և դժգոհութիւններին ուշադրութիւն չդարձնելով, արտակարգ ուշիմութեամբ և բացառիկ ճկունութեամբ Իրանի խորհրդարանին (Մէջլիս) հետևեալ համաձայնագիրը վաւերացնել տուեց.

1. Իրանեան զինուրական ուժերը Անգլօ-ռուսական զինուրական ուժերի կողմից հիւսիսային, արևմտեան և հարաւային շրջանների գրաւմանը արգելք չեն հանդիսանալու:

2. Իրանեան իշխանութիւնների միջոցով բոլոր գերմանահպատակները ձերբակալուելով՝ ռուս-անգլիական դիւանագիտական ներկայացուցիչներին յանձնելու են:

3. Իրանեան երկաթուղին և ճանապարհները Ռուսաստան ուղարկուելիք ռազմամթերքների փոխադրութեան յատկացուելու են:

4. Իրանը յանձնառու է լինում չէզոքութեան քաղաքականութիւնը և Անգլօ-ռուս շահերի անվտանգութիւնը պահպանել:

5. Անգլօ-ռուս իշխանութիւնները խոստանում և յանձնառու են լինում Իրանի իրաւունքները նաւթի վերաբերեալ ճանաչել, նրան տնտեսական դիւրութիւններ ընծայել և պատերազմի աւարտումից յետոյ իրենց զինուրական ուժերը Իրանից հեռացնել:

Իրանի հայրենասէր և հեռատես վարչապետ Ֆօրուղին վերոյիշեալ դաշնագրի առաջին 4 կէտերի զիջումները գիտակցաբար ստիպուած էր անելու, որպէսզի իր հայրենիքի հողային ամբողջականութեան և անձեռնմխելիութեան 5-րդ յօդուածը ռուսներին և անգլիացիներին ընդունել և ստորագրել տար: Ֆօրուղին իր՝ այս խելօք քաղաքականութեամբ իր հայրենիքի փրկութեան համար շատ մեծ ծառայութիւն մատուցեց:

Վերոյիշեալ պատմական խոշոր դէպքից ուղիղ 2 տարի 2 ամիս և 2 օր յետոյ երիտասարդ, ուշիմ և

քաղաքագէտ թագաւորի՝ Մոհամմադ Ռըզա Շահի անդուլ ջանքերի շնորհիւ Թեհրանում համաժողովի եկած դաշնակից պետութիւնների ղեկավարների (Ռուզվելտ, Չըրչիլ, Ստալին) կողմից և Թեհրանի կոնֆերանսի անունից Իրանի ամբողջականութեան և անձեռնմխելիութեան վերաբերեալ հետևեալ յայտարարութիւնը հրատարակեց.

1. Իրանի տերիտորիալ ամբողջականութիւնն ու անկախութիւնը յարգւում և ճանաչւում է կոնֆերանսը կազմող 3 պետութիւնների կողմից:

2. Կոնֆերանսը դէպի Խորհրդային Միութիւն զինամթերքներ ուղարկելու համար Իրանի կողմից դաշնակիցների տրամադրութեան ներքև դրուած երկաթուղագծի և ճանապարհների օգտագործման առթիւ շնորհակալութիւն և գնահատութիւն է յայտնում:

3. Դաշնակիցները յանձնառու են լինում պատերազմից յետոյ իրենց զինուորական ուժերն ամբողջ Իրանից հեռացնելու:

4. Դաշնակիցները նաև յանձնառու են լինում պատերազմի ժամանակ իրենց գրաւման հետևանքով Իրանին հասցրած տնտեսական վնասները հատուցանելու:

Վերոյիշեալ պատմական թւականից 88 օր յետոյ՝ 1944 թւի 27 փետրուարին (Արեգակնային թւի 6.12.1322-ին) Իրանի Խորհրդարանի 14-րդ շրջանը բացւեց: Մի քանի ամսից Վեհապետի թելադրութեամբ և մի խումբ հայրենասէր պատգամաւորների ջանքերով Խորհրդարանում մի շատ կարևոր օրէնք վաւերացւեց: Այս օրէնքը հետևեալն էր.

«Իրանի զանազան շրջաններում գտնւող բոլոր նաւթահանքերն ու նաւթառատ հողաշերտերը մենաշնորհի անունով և ձևով օտար որևէ պետութեան յանձնելը և նոյնիսկ նման մենաշնորհների շուրջ խորհրդակցութիւն կատարելը բացարձակապէս արգելւում է»:

Այս վաւերացւած օրէնքի համաձայն՝ Իրանի հարաւում եղած նաւթահանքերն ու նրանց հետ առնչութիւն ունեցող ամբողջ տեխնիկական, տնտեսական, վարչական և այլ հիմնարկութիւնները անգլիական նաւթային ընկերութեան մենաշնորհից ազատեցին և ապա ազգայնացուեցին: Միաժամանակ Խորհ. Միութեան արտաքին գործերի օգնական Քավթարիձէի առաքելութիւնը ձախողւեց, և Իրանի հիւսիսային մասի՝ Սեմնանի նաւթի նախկին պայմանագիրը բեկանւեց:

Համաշխարհային քաղաքական այս խառնիխուռն ժամանակաշրջանում նոր Իրանը կերտող մեծ հայրենասէր Ռըզա Շահը 1323 (1944) թւի 4 Մորդադին հարաւային Աֆրիկայի Յոհանէսբուրգ քաղաքում իր մահկանացուն կնքեց: Նրա դին Կահիրէ փոխադրելով՝ յանձնւեց եգիպտական պետութեան՝ որպէս աւանդ: Մի քանի ժամանակ յետոյ, երբ պատերազմի փոթորկով ալեկոծւող աշխարհը խաղաղւեց, Իրանի Խորհրդարանի կողմից «Մեծ Թագաւորի» տիտղոսին արժանացած մեծ հայրենասէրի դին Թեհրան փոխադրւեց և ամփոփւեց իրեն արժանավայել հոյակապ պանթէոնում:

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՍԻՐԵԼԻ ԻՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Պարծանքով պիտի յայտարարարեմ, որ Համաշխարհային երկրորդ պատերազմի տևողութեան ամբողջ ընթացքին մի քանի հարիւր տարիներից ի վեր Իրանում հաստատւած, ինչպէս նաև պատերազմից առաջ և նրա տևողութեան շրջանին Իրան ապաստանած հայերը իրենց նոր հայրենիքում լիակատար ազատութիւն և քաղաքացիական իրաւահաւասարութիւն վայելեցին:

Թէ՛ նախկին Վեհապետ Մեծն Ռըզա Շահի և թէ՛ ներկայ երիտասարդ և իմաստուն Մոհամմադ Ռըզա Շահի ղեկավարութեան ներքոյ հայ փոքրամասնութիւնը իր եղբայրակից պարսիկ ժողովրդի մեծամասնութեան հետ համեմատաբար քաղաքացիական, ընկերային, տնտեսական, մշակութային, կրթական և այլ իրաւունքներից առանց որևէ սահմանափակումի և խտրութեան օգտւել է:

Երկրորդ պատերազմի արկածալից և դաժան օրերին իրանեան պետական և ապահովութեան իշխանութիւններից ամէն տեսակի քաղաքական ու քաղաքացիական հիմնարկութիւններից ոչ մէկը նոյնիսկ տարբեր վերաբերմունք չունեցաւ հայ փոքրամասնութեան մասին:

Ճիշտ է, եղան մի քանի երիտասարդ, անփորձ և անհեռատես հայեր, որոնք խաբեցին և հրապուրեցին Իրանում օտարների հաշւին գործող մի նորակազմ կուսակցութեան քարոզչութիւններից և խոստումներից, բայց դրանք որպէս հայ փոքրամասնութիւն չնկատեցին, այլ իրաւացիօրէն դատեցին, զատեցին և դատեցին՝ որպէս վերոյիշեալ կազմակերպութեան անդամներ:

Իրանահայութիւնը համարեա ամբողջութեամբ օրինապահ, հաւատարիմ և նւիրւած մնաց Իրանի պետական շահերի պաշտպանութեան ընդհանուր ուղեգծին ու քաղաքականութեանը:

Ես ու ինձ նման բազմահազար հայեր, որոնք առաջին պատերազմի օրերին տաճիկ իշխանութիւնների հայահալած ահռելի քաղաքականութեան թունալից, սպանիչ պտուղները ճաշակել ենք և մէկ միլիոնից աւելի հայրենակիցների սպանդից ճողոպրել ենք, մի՞թէ կարող ենք մեր երախտագիտական զգացումը մեր սրտերում պահել և բարձրաձայն չկանչել.

– Կեցցէ՜ Իրանի մեր եղբայրական ժողովուրդը: Կեցցե՜ն նրա իմաստուն և մարդասէր Վեհապետն ու նրա պետական և վարչական իշխանութիւնները:

ՄԻԼ-ՆԱԴԷՐԻՈՒՄ

Քերման և Բամի ճանապարհի միջև ընկած 32-35 կիլոմետրանոց արահետը մայրուղու վերածելու աշխատանքը յանձնուած էր մեր կազմած չորս հոգինոց ընկերութեանը:

Այվազ-զադէ անունով մի ասորի իր երկու ուրիշ ազգակիցների հետ Քերման-Բամ երկարող ամբողջ ճանապարհը կապալով էր վերցրել և այդ մասի շինութիւնը յանձնել էր մեզ:

Մեր նորակազմ ընկերութեան անդամներից երկուսը՝ Էլիասն և Լուկան, գործը սկսելու համար մեկնել էին Քերման և այնտեղից էլ Միլ-Նադէրի մերձակայ գործավայրը: Ես մնացել էի մի քանի ուրիշ բեռնատարներ էլ առնելու և նախապէս գնուած բեռնատարները գործատեղին ուղարկելու և նրանց հաշիւները կարգաւորելու համար: Ինձ յաջողուել էր արդէն 17 բեռնատարներ գործավայրն ուղարկել: Ուզում էի առնուազն երեք ուրիշներ էլ առնել և ուղարկել, երբ իմ գործակից Էլիասից հետևեալ հեռագիրն ստացայ.

«Անմիջապէս գործատեղին ե՛կ: Գործերը վատ են գնում»:

Տարիներ աշխատել և չարչարուել էի և առաջին անգամ ինձ «ժառանգութիւն» թողնուած երկու բեռնատարների գործի վրայ վնասուել և ամբողջ ունեցածս կորցնելով՝ «մաքրուել» էի: Այս նոր գործի վրայ էլ առանց առաջ և յետ նայելու և անվախօրէն ամբողջ վեց տարիների մեծ նեղութեամբ խնայած, գրեթէ լրիւ ունեցածս էի դրել: Հասկանալի է ուրեմն ստացածս հեռագրի՝ մի ամբողջ հոգեկան և մտային վիճակի վրայ թողած յուսալքիչ ազդեցութիւնը:

Ի՞նչ կարող էի անել: Անմիջապէս գործատեղին մեկնեցի:

Մեր ստանձնած գործի համար քարեր էին պէտք: Քարերը ճանապարհի շինութեան հիմքն էին կազմելու: Քարահանքը պահանջած քանակութեամբ քարեր յանձնելու ի վիճակի չէր: Հաշուեցի, 64 հոգի մեքենավար և օգնական, քարաշար և բանուոր ունէինք: Դրանց օրական ռոճիկն այդ ժամանակներում մօտ հազար թուման էր: Եթէ մինչև 10-15 օր չկարողանայի գործը կարգի բերել, այդ 64 հոգին իրենց վարձքի պահանջի փոխարէն, ինձ կտորկտոր էին անելու: Ամենաբախտաւոր պարագային գիշերանց փախուստ պիտի տայի: Իսկ Թեհրանից ու՞ր կարող էի փախչել: Իմ և երկու ընկերներիս գործում դրած դրամագլուխն ի՞նչ էր լինելու:

Էլիասի հետ միասին մեր գործավայրից Քերման եկանք: Այվազ-զադէի մօտ գնացինք և մեր դրութեան լրջութիւնը նրան բացատրեցինք: Նա խելօք և փորձած մարդ էր: Ամէն կերպ աշխատեց մեր վրդովմունքը մեղմել: Նա առհաշիւ մեզ մի գումար տուեց և խոստացաւ իր գրասենեակային կազմն ու հաշուապահութիւնն երկու օրուայ ընթացքում Քերմանից քարահանքի մօտիկ գտնուող գիւղը փոխադրել: Նա աւելացրեց.

– Պարոնա՛յք, միանգամայն միամիտ եղէ՛ք: Ձեր գործը ձախողելուց ես ձեզնից շատ աւելի տուժելու եմ: Քանի որ դուք իմ ամենամեծ կապալառուն էք, ստիպած եմ ամէն կերպ ձեր աշխատանքի հնարաւորութիւններն ապահովել: Նորից եմ կրկնում, համոզուած եղէք, որ մինչև 3-4 օր ձեզ անհրաժեշտ քարի քանակութիւնը կը յանձնուի: Այսօր անգլիացի կապիտանը, որ մեր գործի անմիջական հսկողութեան պարտականութիւնն ունի, մեզ անհրաժէշտ քանակութեամբ դինամիտը յանձնեց: Ինքս էլ անձամբ քարահանքի գործերին վերահասու կը լինեմ:

Մի քիչ սրտապնդուած՝ ընկերոջս հետ վերադարձանք մեր գործատեղին:

Այվազ-զադէն իր տուած խոստումն իսկապէս կատարեց: Իմ ժամանման չորրորդ օրը գործի անցանք: Քարահանքը սկսեց մեր պահանջած քարի քանակութեան երեք չորրորդը յանձնել: Այդ քանակով էլ ուրախ էի, քանի որ նախքան քարաշարը, ճանապարհը պէտք էր հարթել և քարաշարից յետոյ նախ խոշոր և ապա մանր քարերի արանքն ու վրան ծածկել:

Միակ դժբախտութիւնը, որ մնացել էր, մեր «մասնագէտ-տեխնիկ» համարուած Լուկայի անսահման թուլամորթութիւնն ու ծուլութիւնն էր: Նա գործի շահին մէկ հինգերորդին, առանց մի սև փող դրամագլուխ դնելու, ընկերակցել էր և կարծես չէր էլ մտածում անհանգստանալ գործի արագ կատարման և աւարտման համար:

Ճար չունէի: Կռիւ-դալմաղալ սարքելուց խորշում էի: Վճռեցի նրան իր ծուլակամ ցանկութիւնը թողնելով՝ մի կերպ չէզոքացնել նրա երևակայական և ինքնահաւան անհրաժեշտութիւնը: Էլիասին խնդրեցի մեքենաների արագ բեռնաւորման և քարի փոխադրութեան գործերին հսկել: Պիտի խոստովանեմ, որ այս ասորի գործակիցս միւս եուգոսլաւ «մասնագէտ»-ից բոլորովին տարբեր էր: Նա իրապէս ջանում էր գործին հնարաւորին չափ շատ օժանդակել: Ինքս էլ յանձնառու եղայ ճանապարհի շինութեան վրայ աշխատող քարաշար վարպետների և միւս բանուորների գործերին հսկել:

Գործի արագընթացութեան և յաջողութեան համար մեծ ճիգ էի գործ դնում: 24 ժամայ ընթացքում հազիւ կարողանում էի 4-5 ժամ քնել: Միայն անքնութիւնն էր ինձ տանջում: Լուկան տեսնելով, որ առանց իր օգնութեան էլ գործը կարգին գնում է, ջղայնանում և ինքն իրեն հայհոյում էր: Էլիասի միջոցով փորձեցի նրան համոզել, որ Թեհրան վերադառնայ: Մտածում էի նրա անցանկալի ներկայութիւնից միանգամայն ազատուել: Իմ՝ նրա հետ ունեցած փոխյարաբերութիւնը բարեկամական լինելուց շատ հեռացել էր: Էլիասի հետ նրան խոստացանք, թէկուզ Թեհրան էլ վերադառնալու լինի, իրեն հասնելիք բաժինը վճարել: Սկզբում համաձայնուեց,

բայց յետոյ յետ կանգնեց: Պարզ է, որ մեզ վստահել չէր ուզում:

Էլիասի միջոցով Այվազ-զադէից խնդրեցի նրա համար մեր բաժնից կամ ուրիշ տեղում առանձին գործ յատկացնել: Գործի բնոյթին ծանօթանալուց յետոյ մերժել էր և յայտնել, որ այդպիսի մարդուն վստահել չի կարող:

Ճար չունէի: Վճռեցի նրա յիմար վերաբերմունքը կուլ տալ և մի կերպ, մինչև որոշուած գործի վերջաւորութիւնը քաշ տալ:

18 ամսից մեզ յանձնուած գործը յաջողութեամբ վերջացրինք: Գործի ընթացքում մի քանի անգամ Այվազ-զադէի և նրա ճարտարապետի հետ, որ նոյնպէս ասորի էր, գլխացաւանքներ և վիճաբանութիւններ ունեցանք: Վիճաբանութիւններից ամենակարևորը գործի մետրաչափի արժէքի վրայ էր: Այվազ-զադէն սկզբում գործը վերցրել էր մէկ միլիոն երկու հարիւր հազար թումանով:

Այդ միևնոյն գործը՝ ճանապարհի հողաշինութիւնը, քարաշինութեան էր փոխուած: Անգլիացիները, որոնք պատերազմի ժամանակ տարօրինակօրէն և արտակարգօրէն առատաձեռն էին, ուղիղ տասն անգամ աւելի արժէքաւորեցին և իհարկէ վճարեցին:

Այվազ-զադէն սկզբում շատ յամառեց մեզ վճարուելիք արժէքը չաւելացնել, բայց գործի վերջաւորութիւնից առաջ գնահատելով կատարուած գործի անթերութիւնը՝ չցանկացաւ մեզ դժգոհ թողնել և վճարեց գրեթէ այն գումարը, որ մենք պահանջում էինք:

Մօտ երկու տարի տևող այդ գործից, թէև ջղերի և ճիգերի կատարեալ լարումով վերջացրած, մենք բաւական լաւ շահեցինք:

Ամբողջ այդ երկու տարուայ ընթացքում նորից իմ ընտանիքից ու երեխաներից զրկուած մնացի և չփորձեցի, աւելի ճիշտ, ժամանակ և հնարաւորութիւն չունեցայ նրանց այցելելու համար Թեհրան գնալ:

Թեհրան վերադառնալուց յետոյ իմ մէջ որոշում տուի, որ ապագայում աշխատեմ խուսափել այդպիսի երկարատև բացակայութիւններից: Գործի ընկերս՝ Էլիասը, որից միանգամայն գոհ էի մնացել, մի քանի անգամ փորձեց նորից միասին նոր գործեր ձեռնարկել, բայց ես չուզեցի համաձայնուել:

ՕՏԱՐ ԶԻՆՈՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԸ

1945 թի մայիսին Համաշխարհային երկրորդ պատերազմը փաստօրէն վերջացել էր: Գերմանիան առանց պայմանի յանձնուել էր: Նրանից յետոյ Իրանում մի շարք շատ կարևոր դէպքեր տեղի ունեցան, որոնց յիշատակումը իրենց ընծայած կարևորութեան տեսակէտից անհրաժէշտ է:

Իրանեան թի Մորդաղ 12-ին Փոքսդամում, Թրումանի, Չըրչիլի և Ստալինի մասնակցութեամբ տեղի ունեցած համաժողովում վճռուեց Իրանից հեռացնել զինուորական գրաւման օտարազգի զօրամասերը: Դժբախտաբար այդ զօրամասերի հեռացումը բաւական շատ ձգուեց:

Վերոյիշեալ համաժողովից 3 օր յետոյ ամերիկացիները, իրենց առաջին ատոմական ռումբը ճապոնական Հերոշիմա քաղաքի վրայ պայթեցնելով, այդ դժբախտ քաղաքը քարուքանդ և տակն ու վրայ արին:

Այս աննախընթաց դժբախտութիւնից 5 օր յետոյ Ճապոնիան իր հերթին, առանց պայմանի, անձնատուր եղաւ: Այսպիսով համաշխարհային պատերազմը Փոքսդամի համաժողովից միայն ութ օր յետոյ բոլորովին վերջացել էր, և Իրանն իրաւունք ունէր պահանջելու, որ օտար զինուորական ուժերն անմիջապէս դատարկեն իր ամբողջ երկրամասը:

Համաշխարհային երկրորդ պատերազմի կատարեալ վերջաւորութիւնից մի ամիս յետոյ իրանեան կառավարութիւնը Անգլիային, Խորհրդային Միութեան և Ամերիկային յուշագրեր ուղարկեց և նրանցից պահանջեց յարգել իրենց թէ՛ Թեհրանի և թէ՛ Փոքսդամի համաժողովների որոշումները, վեց ամսուայ ընթացքում Իրանը լրիւ պարպել և երկաթուղային փոխադրութիւնների հաշիւներն ու զինուորական գրաւման հետևանքով երկրին հասած վնասները հատուցանել:

Մի ամիս յետոյ կառավարութեան վերոյիշեալ պահանջն օրինականացնելու և այդ պահանջին նեցուկ հանդիսանալու նպատակով Իրանի խորհրդարանը հետևեալ բանաձևը քուէարկեց.

«Իրանի Մէջլիսի նոր ընտրութիւնները մինչև դաշնակից ուժերի երկրից հեռացումը տեղի չեն ունենալու»: Բանաձևը միաձայնութեամբ վաւերացուեց:

Կառավարութեան՝ երեք դաշնակից մեծ պետութիւններին իրենց զինուորական ուժերի դատարկման պահանջով ներկայացրած յուշագրերից մօտ երեք ամիս անց իրանեան Աղերբայջանում «Դեմոկրատ» անունով մի կուսակցութիւն կազմուեց: Այս կուսակցութեան կենտրոնը Թաւրիզն էր ընտրուած, և ղեկավարում էր Փիշավէրի անունով մի անձնաւորութեան միջոցով: Դեմոկրատ կուսակցութիւնը իրանեան Ատրպատականն ինքնավար յայտարարեց և իր ցանկութեան համաձայն՝ ինքնավար կառավարութիւն և նոյնիսկ խորհրդարան ընտրեց:

Բազմաթիւ փորձեր կատարուեցին այս իշխանութիւնը Թեհրանի կենտրոնական կառավարութեան ենթարկելու նպատակով, բայց բոլորն էլ ձախողուեցին: Թաւրիզից այդ իշխանութեան կողմից պատգամաւորներ Թեհրան եկան և պահանջեցին, որ կենտրոնական կառավարութիւնն իրենց պաշտօնապէս ճանաչի: Վեհապետն ու նախարարական

խորհուրդը կտրականապէս մերժեցին նրանց այդ պահանջը: Վեհապետը խիզախօրէն յայտարարեց. «Աւելի շուտ ձեռքս կը կտրեմ քան թէ կը համաձայնեմ իմ երկրի հարազատ և ընդարձակ ու բարգաւաճ նահանգը իմ հայրենիքից կտրել և անջատել...»:

Եւ Վեհապետի կարգադրութեամբ այդ ինքնաբոյս և ինքնագլուխ իշխանութիւնը տապալելու և ձեռնարկողներին ձերբակալելու ու պատժելու որոշումով զինուորական ուժեր և զինական անհրաժէշտ միջոցներ ուղարկուեցին: Բայց ռուսական զինուորական հրամանատարութիւնը, Ատրպատական ուղարկուած պետական զօրքի և զինամթերքի առաջ Ղազվին քաղաքին չը հասած, Շարիֆաբադ գիւղում կտրեց և նրանց յառաջխաղացման արգելք եղաւ:

Երկրի ներքին գործերի մէջ կատարած այս անտեղի միջամտութիւնը իրանեան կառավարութեան ստիպեց Լոնդոնում գումարուած Միացեալ Ազգերի Ժողովին, որն իր ամենաառաջին նիստն էր գումարել, բողոք ներկայացնել և խորհրդային իշխանութեան կողմից երկիրը չպարպելու համար գանգատուել:

Միացեալ Ազգերի Ժողովին ներկայացուած բողոքից մի ամիս անց՝ 20 փետրուար 1946 թւին, նոր ընտրուած վարչապետ Ղաւամ-Սալթանէի գլխաւորութեամբ քաղաքական և վաճառականական ծրագրով մի ներկայացուցչական մարմին խորհրդային իշխանութիւնների հետ բանակցելու համար Թեհրանից Մոսկւա մեկնեց:

Ուղիղ մի ամիս յետոյ վարչապետ Ղաւամ-Սալթանէն իր գլխաւորած ներկայացուցչական կազմի հետ միասին Թեհրան վերադարձաւ:

Բանակցութիւնների արդիւնքը նպաստաւոր էր: Խորհրդային կառավարութիւնը Ղաւամ-Սալթանէին խոստացել էր ամենաուշը մինչև երեք ամիս իր զինուորական ուժերն ու զինուորական վարչակազմը և զինամթերքը Իրանից հեռացնել:

1946 թւի մարտ 2-ին, այսինքն՝ Ղաւամ-Սալթանէի Մոսկւա մեկնելուց 12 օր յետոյ, անգլիացիներն իրենց ունեցած զինուորական ուժերը մինչև ամենավերջին զինուորը հեռացրին և այդպիսով Իրանի զինուորական գրաւմանը վերջ տւին:

Ռուսական կառավարութեան Ղաւամ-Սալթանէին տւած հաւաստիացումներին վստահել չցանկանալով՝ Ալան՝ Իրանի այդ ժամանակների լիազօր դեսպանը, առաջին անգամ Իրանի Լոնդոնում յարուցած բողոքը Նիւ-Եորքում գումարուած Միացեալ Ազգերի Ժողովում նորոգեց և ՄԱԿ-ից պահանջեց կարգադրել խորհրդային զինուորական ուժերի հեռացումն իր երկրից:

Բարեբախտաբար, խորհրդային կառավարութիւնը Ղաւամ-Սալթանէին տւած իր խոստումը ճիշտ ժամանակին, այսինքն՝ երեք ամիս յետոյ կատարեց: 1325 (1946) թւի Խորդադ 1-ին Իրանի խորհրդային դեսպանը իր պետութեան պատկանած զինուորական ամէն տեսակի ուժերը Իրանից հեռացած լինելու պարագան պաշտօնապէս յայտարարեց:

Իրանի ամբողջ ազգաբնակչութիւնը՝ առանց ցեղի ու դաւանանքի խտրութեան, բախտն ու երջանկութիւնն ունեցաւ իր հայրենիքի ազատագրման և անկախութեան կատարած փաստով հրճւելու: Նա այնուհետ ձգտում էր վիրահատելու և դէն շպրտելու իր մարմնի վրայ գոյացած վերջին թունաւոր պալարը:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Իրանը գրաւող ռուսական ուժերի և բոլոր տեսակի զինուորական կարգ ու սարքի հեռացումից և պարպումից յետոյ Ատրպատականում գործի գլուխ եկած «Դեմոկրատ» կոչւած կուսակցութիւնը յամառում էր իր հիմնած «ինքնավար իշխանութիւնը» պահպանել: Նրանք իրենց կամայական իշխանութեան ենթարկել էին ամբողջ Արևելեան և Արևմտեան Ատրպատականը և հասել էին մինչև Մարաղա, Զանջան և նրանց շրջանները: Այս դեմոկրատներին յաջողուել էր նոյնիսկ Իրանի քրդաբնակ մի ընդարձակ հողամասի վրայ Ղազի Մոհամմադի գլխաւորութեամբ մի ինքնավար «քրդական հանրապետութիւն» հիմնել:

Այս երկու ինքնաբոյս իշխանութիւնները իրար հետ սերտ գործակցութեան մէջ էին և ձգտում էին կատարելապէս անկախ դառնալով՝ իրենց տիրապետած հողամասերը, որոնք Իրանի բերքառատ և բարգաւաճ շրջաններն էին, կենտրոնական իշխանութիւնից և տիրապետութիւնից վերջնականապէս անջատել:

Կասկած չկար, որ նրանց՝ այդ անջատողական և հայրենուրաց ծրագիրը յաջողութիւն ունենալ չէր կարող: Այդ ըմբոստ իշխանութիւններն իրենց կարճատև տիրակալութեան ներքև գտնուած ազգաբնակչութիւններին ծայրայեղօրէն դժգոհ էին թողած: Մանաւանդ դեմոկրատների իշխանութիւնը տեղական ժողովրդի համար միանգամայն օտար և անհարազատ էր և իր կամայական և բռնի արարքներով հարիւր հազարաւորների ատելութիւնն ու վրէժխնդրութիւնը չափազանց գրգռել էր:

Այս պարագան կենտրոնական կառավարութեան և մանաւանդ Վեհապետի համար բացայայտ էր: Երբ դեռ ժամանակի կառավարութիւնը տատանւում էր կտրուկ միջոցների դիմելու, խիզախ հայրենասէր թագաւորը չվարանեց վճռական և կտրուկ քայլերի դիմելու: Նա բանակին հրահանգ տւեց անմիջապէս Թաւրիզ մեկնել և այնտեղ դեմոկրատների հաստատած հայրենադաւութեան բոյնը քարուքանդ անելով՝ նրանց անհարազատ իշխանութիւնը ցրիւ տալ:

Բանակի արագընթաց յառաջխաղացմանը տեղական բնակչութիւնը, որը դեմոկրատների կարճա-

տև, բայց ծայրայեղօրէն կամայական և բռնակալ իշխանութիւնից անսահմանօրէն դժգոհ էր մնացել, անձնուրացօրէն օժանդակեց և իր հայրենի բանակին թև ու թիկունք հանդիսացաւ: Յարձակւող բանակին համընթաց և ուս ուսի ոտքի կանգնեց նաև ինքը՝ ազգաբնակչութիւնը:

Իրանեան 1325 (1946) թի 21 Ազարին՝ պետական բանակի Թաւրիզ քաղաքի վրայ սկսւող յարձակման երրորդ օրը՝ 23 Ազարին, ամէն ինչ արդէն վերջացած էր, և Իրանի անգնահատելիօրէն թանկագին գոհարը հանդիսացող ամբողջ Ատրպատականը՝ իր բոլոր քաղաքներով, աւաններով և շրջապատով, դեմոկրատների բռնակալ տիրապետութիւնից ազատագրուել էր: Իրանի ամբողջ ժողովուրդը, մանաւանդ Ատրպատականի բնակչութիւնը, այս ազատագրութիւնը սրտաբուխ խրախճանքներով տօնեց և Ազար 21-ը իր ազգային ամենամեծ տօներից մէկը թւարկեց:

Իրենց տիրակալութեամբ յոխորտացող դեմոկրատներն իրենց կաշին փրկելու համար գլխապատառ ճողոպրել և ժողովրդական վրէժխնդրութիւնից ազատուել կարողանալու յոյսով երկրի սահմաններից դուրս փախուստ էին տուել:

21 Ազարից 108 օր յետոյ՝ 10 Ֆարվարդին 1326 (1947) թւին, «Ինքնավար Քորդիստան»-ը կազմող երեք պարագլուխները՝ Ղազի Մոհամմադը իր եղբօր՝ Սադր-Ղազիի և Սէյֆ-Ղազիի հետ Մահաբադում, զինուորական դաշտային դատարանի կողմից դատւելով, գնդակահարման ենթարկւեցին:

Իրանի ծատման ծրագիրն ու վտանգը լուծարքի էր ենթարկւել:

ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔԵՐ ՄԻՆՉԵՒ 28 ՄՈՐԴԱԴ

Երկիրը զինուորական գրաւման ենթարկած դաշնակից ուժերի վերջնական հեռացումից, այսինքն՝ իրանեան 1325 (1946) թի 3-րդ ամսի սկզբից մինչև 1332 (1953) թի 28 Մորդադ ամիսը, 7 տարուայ և 3 ամսւայ ընթացքում մի շարք շատ կարևոր դէպքեր տեղի ունեցան, որոնք խորապէս տպաւորւել են բոլոր իրանցիների և նրանց շարքում իմ մտքում, և որոնց վերյիշումը անօգուտ չի կարելի համարել:

Կատարւած բոլոր այս դէպքերի նպատակները երկրի մայրաքաղաք Թեհրանում և զանազան կարևոր քաղաքներում և շրջաններում ամէն տեսակի խռովութիւններ սարքելն էր: Այս խռովութիւնների մեծագոյն մասի հեղինակները «Թուդէ» կոչւող կազմակերպութեան պատկանող մարդիկ էին և օտարների հանդէպ համակրութիւն և հակում էին ցոյց տալիս:

1325 (1946) թի Մեհր ամսի 2-ին Ղաշղայի կոչւած ցեղախումբը, կենտրոնական կառավարութեան դէմ ըմբոստանալով, երկրի կարևորագոյն նահանգներից մէկում՝ Ֆարսում, անկախութիւն յայտարարեց: Այս ցեղախումբն իր գլխաւոր ղեկավարի՝ Նասէր Ղաշղայիի ցուցմունքով և ղեկավարութեամբ պետական զօրքի դէմ կռւի բռնւեց և տասն օրւայ ընթացքում Բուշեր քաղաքն ու նրա մաքսատունը, ինչպէս նաև Քազրուն քաղաքը գրաւեց: Բարեբախտաբար, այս ըմբոստութիւնն երկար չը տևեց և 15 օրից լուծարքի ենթարկւեց:

1326 (1947) թի Թիր (թարգմ. մայիս-հունիս) ամսի 25-ին երկրի օրէնսդրական ժողովի 15-րդ շրջանը բացւեց, և դրանից 5 օր յետոյ Թեհրանի ջրաբաշխ խողովակների աշխատանքն սկսւեց:

Նոյն տարուայ Մեհր ամսի 29-ին երկրի վարչապետ Ղաւամ-Սալթանէի՝ Խորհրդային լիազօր դեսպանի հետ Իրան-Խորհրդային նաւթային խառն ընկերութեան կազմութեան համար եղած համաձայնութիւնը Իրանի 15-րդ Մէջլիսի կողմից բեկանւեց:

Այդ համաձայնութեան բեկանումից յետոյ վարչապետ Ղաւամ-Սալթանէն, Մէջլիսի կողմից վստահութեան քւէ ստանալ չկարողանալով, հրաժարւեց: Նրան յաջորդեց Հաքիմիի մինիստրական խորհուրդը, որ նոյնպէս 5 ամիս և 12 օրից յետոյ հրաժարւեց: Վերջինիս փոխարինող Հաժիրի վարչապետութեան դէմ Մէջլիսի հրապարակում մեծ ցոյցեր և ընդհարումներ կատարւեցին, որոնք կարգապահ ուժերի միջամտութեամբ վերջացան:

Հաժիրի կառավարութիւնը նոյնպէս չկարողացաւ յարատևել և Մէջլիսի կողմից վստահութեան քւէ ստանալ չյաջողելով՝ հրաժարւեց: Մի շաբաթ յետոյ Մոհամմադ Սաէդի վարչապետութեամբ նոր կառավարութիւն կազմւեց:

1327 թի 15 Բահմանին Թեհրանի համալսարանի հիմնարկէքի տարեդարձի առթիւ Վեհապետն այդ տօնակատարութեան ներկայացաւ: Դժբախտաբար, երկրի խռովութեան և խառնակութեան ձգտող ու ներկայ իրաւակարգի թշնամի և դաւադիր տարրերի կողմից կազմակերպւած մի մահափորձի ենթարկւելով՝ գլխից և ուսից վիրաւորւեց: Մահափորձն ձեռնարկող անձնաւորութեանը՝ Նասէր Ֆախր-Արայիին, տեղն ու տեղը սպանեցին, որպէսզի դաւադրութեան գաղտնիքները և նրա կազմակերպողները չդրսևորւեն: Յաջորդ օրը Թեհրանում զինուորական դրութիւն հաստատւեց, և կառավարութեան կողմից «Թուդէ» կուսակցութիւնը ապօրինի և լուծւած յայտարարւեց:

Երկուս ու կէս ամիս յետոյ՝ 1328 (1949) թի Օրդիբեհեշտ 1-ին հիմնադիր ժողով գումարւեց, և թագաւորական իրաւասութիւններին վերաբերող 44-րդ և 48-րդ յօդւածները վերաքննութեան ենթարկւեցին: Այդ յօդւածների հիման վրայ երկու օրէնսդրական մարմինների՝ Խորհրդարանի և Ծերակոյտի կողմից տրւած որոշումները թագաւորի վաւերացման ենթարկւելու էին:

ԱՆԳԼՕ-ԻՐԱՆԵԱՆ ՆԱՒԹԻ ԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՒ ՆՈՐ ԴԷՊՔԵՐ

Համաշխարհային երկրորդ պատերազմի՝ Իրանին թողած ժառանգութիւնները քաղաքական արտաքին և ներքին կեանքում բաւական շատ բացասական արդիւնքներ տուին:

Երկրի կարգ ու կանոնը, հանգստութիւնը, ինչպէս նաև տնտեսական կայուն վիճակը խանգարելու, նոյնիսկ կործանելու նպատակով բազմաթիւ փորձեր և դէպքեր կատարուեցին:

Կենտրոնական կառավարութեան ուժը և թագաւորական իրաւունքներն ու ազդեցութիւնը թուլացնելու և չէզոքացնելու ուղղութեամբ փորձեր և գործեր կատարուեցին:

Մասնաւորապէս չորս ու կէս տարուայ ընթացքում (իրանեան 15 Բահման 1327 (1948) թւից մինչև 28 Մորդադ 1332 (1953) արեգ. թիւը) համարեա ամէն շաբաթ, նոյնիսկ ամէն օր անկարգութիւններ, խլրտումներ, ընդհարումներ, ըմբոստութիւններ, կռիւ և սպանութիւններ և ամէն տեսակի վայրիվերումներ կատարուեցին: Իրանի արտաքին քաղաքական վիճակը, երկրի ներքին ապահովութիւնը, ազգաբնակչութեան անդորրութիւնը և վերջապէս քաղաքական, պետական, հաւաքական և նոյնիսկ անհատական կեանքում ամէն ինչ փորձանքի, խափանման ու կործանման արկածախնդրութեան հասցրին:

Իրանում գոյութիւն ունեցող «Թուդէ» կոչուած կազմակերպութիւնն ապօրինի յայտարարուելուց յետոյ շատ մեծ եռանդով ու թափով իր ընդյատակեայ գործունէութիւնը շարունակում և բոլոր խռովայոյզ վայրիվերումների և դէպքերի մէջ իր թելադրող և ղեկավարող բաժինն ունէր:

1329 (1950) թւի Մեհր 15-ին Իրանի ծերակուտական ժողովն իր բացումը կատարեց: Հինգ օր յետոյ Անգլօ-իրանեան հարաւային նաւթի քաշքշուկն սկսուեց, և այդ առթիւ Խորհրդարանի կողմից օրուայ կառավարութիւնը հարցապնդման ենթարկուեց: Այդ քաշքշուկն սկսուելուց գրեթէ անմիջապէս յետոյ՝ Աբան 12-ին, Իրան-Խորհրդային առևտրական պայմանագիրը ստորագրուեց:

Նաւթի քաշքշուկի ամենաառաջին և ամենացաւալի զոհը զինուորական սպարապետ և ժամանակի վարչապետ հեռատես և գործունեայ Ռազմարան եղաւ:

1329 (1950) թւի Էսֆանդ 3-ին Մէջլիսում մի խումբ պատգամաւորների կողմից, որոնց առաջնորդը դոքտ. Մուսադդէղն էր, Անգլօ-իրանեան նաւթի ազգայնացման առաջարկը տրուեց: Ռազմարան այդ ժամանակւայ պայմաններում նաւթի ազգայնացումն անգործնական և անօգուտ էր համարում: Մի քանի օրից յետոյ՝ Էսֆանդ 16-ին, վարչապետ Ռազմարան Խալիլ Թահմասէբի անունով մի արկածախնդրի արձակած գնդակներով Մասչէդ-Շահում սպանուեց:

Այս սպանութիւնը նոր խլրտումների պատճառ դարձաւ: Խուզեստանի նաւթային բանուորները գործադուլ յայտարարեցին, որից յետոյ զինուորական դրութիւն յայտարարուեց: Այդ օրերին սպանուեց նաև դոքտ. Զանգեանէն՝ համալսարանի իրաւաբանական ֆակիւլտէի վարիչը:

Ալայի 50-օրեայ վարչապետութիւնից յետոյ՝ 1330 (1951) թւի Օրդիբեհեշտ 7-ին, Մէջլիսի կողմից վարչապետ ընտրուեց նոյն Մէջլիսի անդամ դոքտ. Մոսադդեղը, որ Խորհրդարանում նաւթի ազգայնացումը պահանջող պատգամաւորների գլխաւորն էր:

***

Մոսադդեղի վարչապետութեան յաջորդ օրն իսկ Մէջլիսի կողմից քւէարկուեց և վաւերացուեց նաւթի ազգայնացման օրէնքը: Երկու օր յետոյ՝ Օրդիբեհեշտ 10-ին, այս օրէնքը վաւերացուեց նաև Ծերակոյտի (Սենատ) կողմից: Թագաւորն էլ այդ օրէնքը հաստատեց: Նաւթի ժամանակաւոր վարիչ մարմին ընտրուեց և նաւթի հիմնարկութիւններն ազգայնացնելու և նախկին ընկերութիւնից ստանալու համար Աբադան ուղարկուեց: Ժամանակաւոր վարիչ մարմնի գլխաւորը Մաքին էր:

Անգլիական կառավարութիւնը իր քաղաքացիների անվտանգութեան անուն տակ պատերազմական նաւեր Պարսից ծոցն ու Աբադան ուղարկեց, իսկ 25 օր յետոյ նաւթի պայմանագրի միակողմանի բեկանման համար Լահէի Միջազգային դատարանին իր գանգատը յանձնեց: Անգլիական կառավարութիւնը բողոքել էր նրա համար, որ Իրանի կառավարութիւնը հաշտարար դատարանի և երկուստեք բանակցութիւնների միջոցով խնդիրը լուծելու՝ իրենց բերած առաջարկը մերժել էր:

Նաւթի ազգայնացման դէպքերը պատճառ դարձան, որ խռովարար և խափանարար տարրերը, առիթից օգտուելով, իրենց կործանարար գործունէութիւնն ամենուրեք և ամէն ուղղութեամբ ուժեղացնեն: Ամէն տեղ խափանարարութիւնը, խառնակութիւնը, ընդհարումներն և սպանութիւնները դարձել էին սովորական իրողութիւն:

1330 (1951) թւի Ազար 14-ին Թեհրանում ուժեղ խառնակութիւններ տեղի ունեցան: Համալսարանի ուսանողները, դպրոցական աշակերտները մէկ կողմից և զանազան կուսակցութիւնների և հոսանքների պատկանող բազմութիւնները միւս կողմից, իրար գլխի թափելով, տեղի տուին բազմաթիւ սպանութիւնների: Մի քանի թերթերի տպարանները խորտակուեցին, կողոպտուեցին և այրուեցին: Զինուորական ուժերի ազդու միջամտութեամբ հազիւ կարելի եղաւ վերջ տալ այդ բոլորին:

Երկու ամիս անց նոյն դէպքերը Զաբօլի գաւառական կենտրոնում կրկնուեցին: Բազմաթիւ սպանութիւններ կատարուեցին: Սպանուեց նաև գաւառապետը:

Բոլոր այս խառնակութիւններից յետոյ «Թուդէ» կուսակցութեան ընդյատակեայ գործունէութեան կենտրոնն ու նրանց օրգան «Մարդոմ» թերթի խմբագրատունը յայտնաբերուեց:

Նաւթի խնդրի կարգաւորման համար անգլիացիների առաջարկներն ու բանակցութիւններն ապարդիւն մնացին: Այս իսկ պատճառով նրանք բողոքեցին Միացեալ Ազգերի Ժողովին: Դոքտ. Մոսադդեղը, մի պատգամաւորութեան գլուխն անցած, Նիւ-Եորք՝ Ազգերի Ժողովին ներկայացաւ և իր ճառերով ու փաստարկութիւններով Իրանի իրաւացիութիւնը պաշտպանել ջանաց: Միացեալ Ազգերի Ժողովը յարուցած հարցի վերջնական քննութիւնն ու վճիռը յետաձգեց և որոշեց սպասել Լահէի Միջազգային դատարանի վճիռն իմանալու:

Իրան-անգլիական փոխյարաբերութիւններն աւելի վատացան: 1330 (1951) թի նախավերջի ամսին Մոսադդեղի կառավարութիւնը կարգադրեց անգլիացիների՝ Իրանում ունեցած բոլոր հիւպատոսարանները փակել:

1331 (1952) թի երկրորդ ամսւայ կէսին Իրանի խորհրդարանի 17-րդ նստաշրջանն իր գործունէութիւնը սկսեց:

Այդ տարւայ երրորդ ամսւայ կէսին դոքտ. Մոսադդեղը, մի ներկայացուցչական մարմնի գլուխ անցած, մեկնեց Լահէ Իրանի նաւթի խնդրի պաշտպանութիւնն ապահովելու նպատակով: Նա խիստ բողոք յարուցեց իտալական 900 թոննոց նաւթատար նաւը անգլիացիների կողմից Ադէնում կալանքի տակ առնելու համար: Լահէի Միջազգային դատարանի կողմից յանձնարարուեց մի անգամ ևս փորձել երկկողմանի բանակցութիւններով նաւթի՝ անլուծելի դարձած խնդիրը կարգադրել և համաձայնութեան յանգել:

ԴՈՔՏ. ՄՈՍԱԴԴԵՂԻ ԼԻԱԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Լահէից իր վերադարձին՝ Թիր 25-ին, դոքտ. Մոսադդեղը երկրի Խորհրդարանից վեցամսեայ կատարեալ լիազօրութեան իրաւունք պահանջեց: Գործերի ընթացքի բարւոքման և նոր օրէնքների մշակման իրաւունքով նրա պահանջած լիազօրութիւնը խորհրդարանի կողմից մերժուեց: Նա վարչապետութիւնից հրաժարուեց: Նրան փոխարինեց Ղաւամ-Սալթանէն:

Ղաւամ-Սալթանէի՝ չորս օրւայ վարչապետութեան ժամանակ անսահման և աննկարագրելի խառնակութիւններ և արիւնահեղութիւններ տեղի ունեցան: Այս խիստ տխուր դէպքերը Թեհրանից Իրանի բազմաթիւ նահանգային կենտրոնները ծաւալուեցին: «Ազգային ճակատ» կազմակերպութիւնը և Մոսադդեղի կողմնակիցներն ու մանաւանդ թուգէականները Մոսադդեղի վարչապետութեան վերադարձը պահանջեցին: Խորհրդարանը տեղի տուեց: Իր հրաժարումից յետոյ՝ 5-րդ օրը, Մոսադդեղը նորից վարչապետ նշանակուեց: Այս անգամ նա, բացի վարչապետութեան պաշտօնից, զինուորական նախարարի պաշտօնն էլ իր ձեռքում պահեց:

Այդ օրերին Լահէի Միջազգային դատարանը Անգլօ-իրանեան նաւթի ընկերութեան վերահասութեան վերաբերեալ իր վճիռն արձակեց: Դատարանն իրեն իրաւասու չէր համարում նաւթի խնդրին միջամտելու: Այսպիսով, անգլիացիները չկարողացան իրենց անկասկած իրաւացիութիւնը հաստատել:

Դոքտ. Մոսադդեղը վարչապետութեան և զինուորական նախարարութեան գործերի ղեկավարութիւնն իր ձեռքն առնելուց անմիջապէս յետոյ 17-րդ Խորհրդարանից վեցամսեայ լիազօրութիւն պահանջեց: Խորհրդարանը այս անգամ ստիպուեց նրան այդ լիազօրութեան իրաւունքը տալ: Այդ լիազօրութեան համաձայն՝ Մոսադդեղը կարող էր իր ուզած օրէնքները մշակել և վեց ամսւայ ընթացքում փորձնական գործադրութեան դնելուց յետոյ Խորհրդարանի վաւերացման ենթարկել:

Երկու ամսից յետոյ Մոսադդեղի կառավարութիւնն իր դիւանագիտական կապերը անգլիական կառավարութեան հետ խզեց: Երկու պետութիւնների լիազօր դեսպանները յետ կանչուեցին: Այս կապերի խզումից անմիջապէս յետոյ Մոսադդէղը մերժեց նաև Չըրչիլի և Թրումանի կողմից արւած առաջարկը՝ նաւթի խնդրում միջամտելու առթիւ:

Մոսադդէղը, Խորհրդարանին ճնշման ներքև դնելով, նրան ստիպեց լուծարքի ենթարկել Ծերակոյտը:

***

Դոքտ. Մոսադդէղը վեցամսեայ իր լիազօրութեան ժամանակի լրացումից առաջ՝ 1331 (1952) թի Դէյ ամսին, Խորհրդարանից մէկ տարւայ տևողութեամբ նոր լիազօրութիւն պահանջեց և ի գործ դնելով՝ ճնշումով յաջողեց իր պահանջած այդ նոր լիազօրութիւնն էլ Խորհրդարանից ստանալ:

Մոսադդէղը անգլիական պետութեան հետ Իրանի կառավարութեան դիւանագիտական յարաբերութիւնները խզելուց յետոյ 25 տարիներից ի վեր ռուսների մենաշնորհում եղած հիւսիսային ձկնորսարանի պայմանն էլ չեղեալ յայտարարեց և «Շիլաթ»-ի ամբողջ հիմնարկը ազգայնացրեց:

Մէկ տարւայ նոր լիազօրութիւնն ևս ստանալուց յետոյ դոքտ. Մոսադդէղը իրեն շրջապատող որոշ կասկածելի և խառնակիչ մարդկանց թելադրութեամբ և խորհուրդներով ջանաց Վեհապետի իրաւասութիւններին միջամուխ լինելով՝ այդ իրաւունքները կրճատել և նրա դիրքն ու ազդեցութիւնը, ըստ կարելւոյն, չէզոքացնել:

Հեռատես և հայրենասէր թագաւորը, իր՝ անչափ սիրած երկրի՝ այդ օրերի խռովայոյզ և տագնապալից վիճակն աւելի չծանրացնելու և վտանգելու

մտահոգութեամբ 1331-ի (1952) տարեվերջի ամսւայ Էսֆանդի 9-ին վճռեց ժամանակաւորապէս երկրից հեռանալ:

Թեհրանի գիտակից և հայրենասէր բազմութիւնները, քաղաքական այդ չափազանց վտանգաւոր և արկածալից շրջանում, Վեհապետի հեռացումն ու երկրից բացակայութիւնը իրենց հայրենիքի անկախութեան կործանումը համարեցին: Բազմահազար մարդիկ, թագաւորի պալատի շրջապատում հաւաքուելով, նրան խնդրեցին իր որոշումը վերաքննութեան ենթարկել և երկիրն արկածախնդիրների քմահաճոյքներին և նպատակներին չը յանձնել: Վեհապետը զիջեց և նրանց խնդիրը յարգելով՝ հեռանալու մտադրութիւնից հրաժարուեց:

Բազմահազար ժողովրդի թագաւորասիրական այս ցոյցերն և նրանց հետևանքով թագաւորի՝ իր ժողովրդի մօտ մնալու որոշումը Մոսադդեղին և մանաւանդ նրան շրջապատող արկածախնդիրներին հաճելի և նպաստաւոր չթւաց:

Մի շաբաթւայ ընթացքում մայրաքաղաքի ականաւոր և ազդեցիկ անձնաւորութիւններից 170 հոգի խռովարարութեան, պետական դաւադրութեան և թշնամական արարքների պատրւակով ձերբակալուեցին: Սրանց շարքումն էր նաև զօրահրամանատար և ապագայ վարչապետ Ֆազլօլլահ Զահեդին:

Այս իրադարձութիւնները մի շարք խիստ վտանգաւոր և չափազանց արկածալի դէպքերի պատճառ դարձան: 1331 (1952) թւի տարեվերջի 15 օրերի և 132 տարւայ սկզբնական 151 օրերի ընթացքում բազմաթիւ և բազմատեսակ ընդհարումներ, բախումներ, կռիւներ և սպանութիւններ տեղի ունեցան: Իրանը կանգնած էր իր անկախութեան և հողային ամբողջականութեան սպառնացող չափազանց չարաղէտ գահավիժման անդունդի եզրին:

Մոսադդեղը իր բացարձակ իշխանութիւնն ամրապնդելու նպատակով իր կողմնակիցներին, որոնք «Ազգային ճակատ» կազմակերպութեան և միաժամանակ Խորհրդարանի անդամներ էին, կարգադրեց Խորհրդարանից հրաժարուել: Սրանք հրաժարուեցին, և Խորհրդարանը, օրէնքի պահանջած մեծամասնութիւնից զրկուելով, ի վիճակի չեղաւ իր նիստերը գումարել և աշխատանքը շարունակել: Թիր ամսին, շատ մարդիկ, որոնց մեծ մասը դպրոցական երիտասարդներ էին, ցոյցերի ընթացքին սպանուեցին: Այս առթիւ բազմաթիւ և ծաւալուն ցոյցեր տեղի ունեցան:

ՕԳՈՍՏՈՍ 19 (ՄՈՐԴԱԴ 28)

1332 թւի 25 Մորդադին Մոսադդեղը մի նախապատրաստուած հանրաքուէից յետոյ Խորհրդարանի 17-րդ նստաշրջանը լուծուած յայտարարեց և խոստացաւ ընտրական օրէնքների վերամշակումից յետոյ Խորհրդարանի 18-րդ շրջանի ընտրութիւնները կատարել տալ:

Հէնց միևնոյն օրը Վեհապետը իր արքայական իրաւունքների հիման վրայ Մոսադդեղին պաշտօնանկ անելու հրամանը ստորագրեց: Պաշտօնանկ արուած Մոսադդեղի փոխարէն զօրահրամանատար Ֆազլօլլահ Զահեդին վարչապետ էր նշանակուած:

Մոսադդեղն իր պաշտօնանկութեան հրամանը հաղորդելու պարտականութիւնը ունեցող վաշտապետ Նասէրին բանտարկել տուեց: Նրա հետ միասին բանտարկուեցին նաև բանակի մի շարք սպաներ, որոնք Վեհապետին հաւատարիմ մնալու մեղքն ունէին:

Դոքտ. Մոսադդեղը վաշտապետ Նասէրիին և բանակի սպաներին պետական հարուած կազմակերպելու մեղադրանքով բանտարկել տուած էր: Ահա այստեղից սկսւեց օգոստոս 19-ը (28 Մորդադը):

Ժողովրդի եղբայրասպան արիւնահեղութեան ականատես լինելու դժբախտութիւնից և ողբերգութիւնից խուսափելու համար Վեհապետը թագուհու ընկերակցութեամբ իր անձնական օդանաւով Բաղդադ և այնտեղից էլ Իտալիա մեկնեց: Զահեդին իր ընդյատակեայ գործունէութեան վրայ էր:

Իրենց հայրենիքը վերջնական կործանումից փրկելու համար 28 Մորդադին՝ արևածագին, Թեհրանի ազգաբնակչութեան հայրենասէր տարրերը բազմամարդ համախմբումներով մայրաքաղաքի փողոցները թափուեցին և «Մենք և մեր Վեհապետին ենք ուզում», «Կեցցէ՛ Մոհամմադ Ռըզա Շահ Փահլաւին», «Կեցցէ՛ մեր սիրելի և հայրենասէր թագաւորը», «Թո՛ղ կորչի Մոսադդեղը», «Անկցի Մոսադդեղի կառավարութիւնը», «Թո՛ղ կորչեն հայրենավաճառ դաւաճանները» և այլ բազմաթիւ նշանախօսքերով հեղեղեցին Թեհրանի կենտրոնական պողոտաներն ու փողոցները: Նրանց շուտով միացան ժողովրդական նոր բազմութիւններ: Նրանց չուշացան միանալ նաև զինուորականներ և քաղաքի կարգապահ ոստիկանները: Առաջին հերթին մայրաքաղաքի ռադիոկայանը գրաւուեց: Նրանից յետոյ զինուորական մթերանոցները, զէնքերը, թնդանօթները և տանկերը գրաւուեցին:

Դիմադրական ընդհանուր ապստամբութիւնը սկսուել էր: Մոսադդեղին և նրա կառավարութիւնը տապալելու աներեր և վճռական որոշում ունեցող տասնեակ հազարաւորների բազմութիւնը Մոսադդեղի տան և նրա տանը հաստատուած մոսադդեղական կառավարութեան կազմի վրայ յարձակուեց:

Ըմբոստացողներին հոգով ու սրտով միացած զինուորական մասնագէտները, տանկերի և թնդանօթների վրայ իրենց տեղը գրաւելով, սկսեցին դժոխային կրակի տակ առնել Մոսադդեղի տունն ու կառավարութիւնը: Օրը դեռ չմթնած՝ Մոսադդեղն ու իր արկածախնդիր նախարարներն ու զինուորական գործակիցները, փախուստ տալով, թաքնուեցին:

Վեհապետի նշանակած նոր վարչապետ Զահեդին պաշտօնապէս իր գործին էր անցել: Երբ դեռ

Մոսադդեղի տան և նրա կառավարութեան կենտրոնավայրի ռմբակոծումը նոր էր սկսել, Զահեդին ռադիոկայանից Մոսադդեղի կառավարութեան անկումը և իր վարչապետութեան գործունէութեան սկսումը յայտարարեց:

Յաջորդ օրը Իրանի հայրենասէր Վեհապետը երջանկութիւնն ունեցաւ տեղեկանալու իր ժողովրդի անձնուիրութեան և հայրենասիրութեան մասին: Նա որոշում կայացրեց անմիջապէս վերադառնալու իր՝ անսահմանօրէն շատ սիրած երկիրը, իր հարազատ և հաւատարիմ ժողովրդի մօտ:

ԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԴՈՐՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

28 Մորդադի ժողովրդական բազմութիւնների փայլուն յաղթանակից երկու օր յետոյ Վեհապետը վերադարձել, երկրի վիճակը կայունացել և անդորրութիւնը վերականգնել էր: Մոսադդեղը պարտուելով փախուստ էր տուել: Նրան շրջապատող խառնակիչ և հայրենադաւ տարրերը, որոնք, 3-4 օր առաջ մայրաքաղաքի գլխաւոր հրապարակներում շքեղօրէն բարձրացուած մեծն Ռըզա շահի և Մոհամմադ Ռըզա շահի արձանները փշրելով, տապալել էին, նոյնպէս փախել և թաքնուել էին: Մի ամիս յետոյ՝ Մեհր մէկին, Թուդէ կուսակցութեան թաքստոցները յայտնաբերուեցին: Նրանց թաքցրած զէնքերն ու ձեռնառումբերը գտնուեցին: Յայտնաբերուեց նաև նրանց՝ գաղտնօրէն հրատարակւող թերթի և գրքերի հրատարակութեան կենտրոնը:

Փախուստ տուած և թաքստոցներում կուչ եկած մոսադդեղականների մեծ մասը գտնուեց և ձերբակալուեց: Դոքտ. Մոսադդեղին և իր սպայակոյտի պետ Ռիահին զինուորական ատեանի կողմից դատավարութեան ենթարկուեցին: Մոսադդեղի դատավարութիւնը բաւական շատ երկար տևեց: Նրան կատարեալ հնարաւորութիւն տրուեց երկարաշունչ փաստարկութեամբ և ճառերով իրեն պաշտպանելու: Դատարանը նրա բոլոր պաշտպանողական փաստերն ու ճառերը լսելուց յետոյ նրան 3 տարուայ բանտարկութեան ենթարկեց: 1333 (1954) թի Մեհր ամսին զինուորական դատարանը Մոսադդեղի երեք օգնական գործակիցներին, որոնք փախել և թաքնուել էին, դատի ենթարկելով՝ նրանցից դոքտ. Ֆաթէմիին (Մոսադդեղի արտաքին գործերի նախարարը) մահապատժի, իսկ միւս երկուսին՝ դոքտ. Շայեգանին և ճարտարապետ Ռազավիին, ցմահ բանտարկութեան դատապարտեց:

Նոյն օրերին Թուդէ կուսակցութեան պատկանող և երկրապահ զինուորական շարքերից բաղկացած զինուորական մի գաղտնի կազմակերպութիւն յայտնաբերուեց: Զինուորական դատարանը նրանցից ինը հոգու համար գնդակահարման մահապատիժ որոշեց, որ և անմիջապէս գործադրուեց: Մնացածների համար ցմահ բանտարկութեան և զանազան տևողութեամբ բանտարկութեան վճիռ տուեց:

28 Մորդադից ուղիղ 11 ամիս յետոյ՝ երկար և տքնաջան բանակցութիւններից յետոյ, իրանեան հարաւային նաւթի (նախկին Անգլ. և Իրանեան նաւթային ընկերութեան պատկանող նաւթարդիւնաբերութեան) պայմանագրի ստորագրումը վերջացաւ: Անգլիական, ամերիկեան և Եւրոպայի հիւսիսարևմտեան երկրներին պատկանող նաւթային մեծ ու յայտնի ընկերութիւններից նաւթային մի խոշոր միավորում (Քոնսորսիում) էր կազմուել: Նաւթի պայմանագիրը կնքած էր նաւթարդիւնաբերութիւնից գոյացած զուտ շահի կէս առ կէսի սկզբունքի հիման վրայ: Իրանեան կառավարութիւնը, ճշգրտօրէն որոշուած տուրքերից զատ, նաւթարդիւնաբերութիւնից գոյանալիք զուտ շահաբաժնի կէսը պիտի ստանար: Այս երկարատև բանակցութիւնները վարող իրանեան ներկայացուցչութեան նախագահը ճկուն և մարզուած տնտեսագէտ դոքտ. Ամինին էր:

Երկրում ծայր տուած խռովութիւնների և վայրիվերումների հիմնական և մայր չարիքը՝ նաւթի պատճառած չարիքը, վերջացել և չքացել էր:

ԱՆԱՐԻՒՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ՝ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Իրանի հայրենասէր Վեհապետը 28 Մորդադի դէպքերից և ժողովրդական լայն խաւերի յաղթանակից յետոյ համոզուեց, որ Իրանի անկախութեան և անձեռնմխելիութեան կողմնակից ու հայրենասէր ազգաբնակչութեան ճնշող մեծամանութիւնն իր թև ու թիկունքն ու անկեղծ պաշտպանն է: Այդ անխախտ համոզման վրայ յենուած՝ սկսեց իր սիրած հայրենիքի արտաքին և մանաւանդ ներքին գործերն աւելի անմիջական և խիստ հակակշռի ենթարկել:

Օգտուելով երկրի հիմնական օրէնքի՝ իրեն տուած թագաւորական իրաւունքներից, մի շարք կարևոր և անյետաձգելի բարեփոխութիւնների ձեռնարկեց: Այդ բարեփոխութիւններից երեք ամենակարևորները հետևեալներն են.

1. Երկրի ներքին անդորրութեան ապահովումը:
2. Պայքար նեխածութեան և կաշառակերութեան դէմ:
3. Հողային բարեկարգումը:

1332 թ. (1953) 28 Մորդադից մինչև ներկայ տարին՝ 1341 թ. (1962), ուրիշ խօսքով, ամբողջ ինը տարիների ընթացքում երկրի առաջին անձնաւորութիւնը՝ Ն. Կ. Մ. Մոհամմադ Ռըզա Շահ Փահլաւին ծայրայեղ ճիգ ու ջանք դրեց իրագործելու վերոյիշեալ երեք չափազանց անհրաժէշտ բարեկարգումները:

Շատ մեծ պարծանքով պիտի հաստատել այն չափազանց մխիթարական պարագան, որ անցնող

այս ինը տարիների ընթացքում նպատակադրուած առաջին խնդիրը կատարելապէս իրականացած է: Ամբողջ երկրի ժողովուրդը բախտ է ունեցել հաստատուած խաղաղութեան և անդորրութեան թանկագին բարիքը վայելելու: Այլևս ոչ ոք չի անհանգստանում, որ Մոսադդեղի իշխանութեան օրերի նման գիշերով կամ նոյնիսկ ցերեկով ինքը, իր երեխաներն ու ընտանիքը, արկածախնդիր և խառնակիչ մարդկանց կողմից փողոցում, շուկայում, գործավայրում, դաշտում, անտառում, ճանապարհներին և ամէն տեղ յարձակման, գանակոծման և սպանութեան են ենթարկուելու:

Երկրորդ և երրորդ բարեկարգումների գործադրումը շատ աւելի հետևողական, անխոնջ ու անհահանջ ճիգ ու ջանք էր պահանջում: Այդ բարդման արտակարգօրէն տենչացող Վեհապետը հնարաւոր բոլոր միջոցները գործադրել և եռանդագին թափով շարունակում է հետապնդել բոլոր լրացուցիչ միջոցները՝ խիստ ցանկալի նպատակին հասնելու համար:

Անցնող ինը տարիների ընթացքին Վեհապետի աչալուրջ և տևական ղեկավարութեան ներքոյ մի քանի նախարարական խորհուրդներ կազմել և իրար յաջորդել են՝ նպատակադրուած վերոյիշեալ ծրագիրն իրականացնելու համար: Սպարապետ Զահեդիին յաջորդեց դոքտ. Էղբալը, սրան յաջորդեց Շարիֆ Էմանին և այս վերջինին՝ դոքտ. Ամինին:

Շուրջ մի տարուայ վարչապետութեան ժամանակամիջոցին դոքտ. Ամինին նպատակադրուած բարեփոխութիւններն ուժգնօրէն կենսագործել սկսեց: Նրա վարչապետութեան ժամանակաշրջանն իրաւացիօրէն անարիւն յեղաշրջում յորջորջուեց: Նա նեխածութեան և կաշառակերութեան դէմ աննախընթաց ուժեղ պայքար սկսեց: Քաղաքական, զինուորական, նախարարական, նահանգապետական և զանազան բարձր դիրքեր ունեցող անձնաւորութիւններին կաշառակերութեան և դիրքի ու պաշտօնի չարաչար օգտագործման ամբաստանութեամբ ձերբակալել տալով հարցաքննութիւնների և դատավարութեան ենթարկեց:

Դոքտ. Ամինին տարիներից ի վեր ցանկացած հողային բարենորոգումը սկսեց: Նրա նշանակած գիւղատնտեսական նախարարը՝ դոքտ. Արսանջանին, եռանդագին գործադրութեան դրեց կալուածատիրական իրաւունքների սահմանափակումը: Ոչ մի գիւղատէր իրաւունք չպիտի ունենար մէկից աւելի գիւղ՝ որպէս սեփականութիւն, ունենալու: Ամէն գիւղատէր իր մէկից աւելի գիւղերը, վաւերացուած օրէնքի համաձայն, արդարացի և օրուայ որոշուած արժէքով և 10-15 տարուայ ընթացքում գանձելի մասնավճարներով պարտաւոր էր ծախել այն գիւղացի-հողագործներին, որոնք նախապէս այդ հողերը մշակել և արգասաւորել էին:

Հողային կալուածատիրական օրէնքի վաւերացումից և գործադրութիւնից առաջ Վեհապետն իր սեփականութիւն կազմող գիւղերը՝ օրինական ձևակերպումներով և վաւերական կալուածագրերով, այդ հողերի վրայ հողագործութեամբ զբաղող գիւղացիութեան մէջ բաժանել էր արդէն: Այդ բաժանման ամենախոշոր մասն արդէն իրագործուել է: Մնացած գիւղական կալուածների բաժանումը շարունակւում է և հաւանաբար շուտով վերջանալու է:

Մասնաւոր գիւղատէրերի կալուածների բաժանումն էլ խիստ արագ թափով շարունակւում է, և անկասկած, մինչև երկու տարի, գուցէ և աւելի շուտ, վերջանալու է:

Պետութեան պատկանած «խալըսէ» կոչւող գիւղերն ու հողերն էլ համարեա ամբողջովին, սրանից մէկ-երկու տարի առաջ բաժանուած և ծախուած են արդէն:

Գիւղական-կալուածատիրական այս սահմանափակումն ու բարեկարգումը երկրի գիւղացի ազգաբնակչութեան համար բացառիկ բարիք է: Այդպիսով, բազմահազար գիւղացի ընտանիքներ դառնում են մանր սեփականատէրեր և համոզուած լինելով, որ սրանից յետոյ, իրենց արիւն-քրտինքով ձեռք բերած ցորենը, գարին, ճակնդեղը, բրինձը և ամէն տեսակի կաթնատու կենդանիներն ու բերք ու բարիքը միայն և միայն իրենց է մնալու և իրենց բարեկեցիկ ապրուստին է ծառայելու, ոչ մի ճիգ ու ջանք չեն խնայելու արդիւնաբերութիւնը զարգացնելու և ձեռք բերելիք հասոյթը բազմապատկելու:

Հողային բաժանման զուգընթաց՝ պետութեան մասնակցութեամբ և օժանդակութեամբ գիւղերում իրենց գիւղացիների կողմից հիմնադրուել են կոպերատիւներ (համագործակցական միութիւններ) և նրանց ընձեռած օգնութեամբ ժամանակին սերմացու և հողագործութեան անհրաժեշտ գործիքներ են ձեռք բերուելու: Շուտով գիւղացիների մասնավճարներով և պետութեան օգնութեամբ հիմնուելու է նաև գիւղացիական փոխառութեան մի բանկ:

Հողային սեփականութեան վիճակի այս կերպ անարիւն յեղաշրջումը չափազանց մեծ յաղթանակ է Իրանի հասարակական և հաւաքական կեանքում: Անժխտելի, անուրանալի, իրական և փաստացի հոյակապ մի գործ, որ դասակարգային խտրականութեան, ջոկողութեան, տնտեսական վիճակի ծայրայեղ տարբերութեան, ատելութեան և թշնամանքի չարիքը մեծ չափով մեղմացնում և հետզհետէ վերացնում է:

Անհրաժէշտ է յիշատակել նաև այն պարագան, որ 20 տարիներից ի վեր շատ կարևոր աշխատանք է տարւում Իրանի գործարանների արդիւնաբերութեան մէջ գործող բանւորների աշխատանքի բարելաւման ասպարէզում: Բանւորների աշխատանքի ժամերի ութ ժամեայ տևողութիւնը, վարձատրութիւնը, յաւելեալ աշխատանքի և հանգստեան ու արձակուրդի վճարումները, հեռացման պարագայում օրինական վճարումները, ապահովագրութիւնը և բոլոր իրաւունքների սահմանումները ճշգրտօրէն ո-

ոոշած և օրինականացած են: Կարելի է ասել, որ Իրանի նորաստեղծ և նորակազմ ճարտարուեստական և արդիւնաբերական գործարաններում աշխատող բանւորների իրաւունքների ճշգրտումն այնքան կատարեալ է, որ նոյնիսկ շատ առաջադէմ և ճարտարուեստական ճոխ ու հարուստ երկրներին գերազանցում է:

ԻՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Իրանում կատարուած բարենորոգչական և յեղաշրջական գործերը, ինչպէս նաև երկրի ներքին ապահովութեան անժխտելի փաստը և մանաւանդ Վեհապետի յարատև և անխնայ ճիգ ու ջանքերն իր հայրենիքի յառաջադիմութեան, բարգաւաճման նպատակով և վերջապէս գիւղացի և բանւոր դասակարգի վիճակի բարւոքումը, սրանք բոլորը հիմնական և հաստատուն տուեալներն են Իրանի դիրքը միջազգային չափանիշով ամրապնդելու և նրա դիրքի արժէքաւորման ու վարկի բարձրացման տեսակէտից:

Իրանը 28 Մորդաղից յետոյ և մանաւանդ վերջին չորս-հինգ տարիների ընթացքին, միջազգային քաղաքական կեանքում իր արժանաւոր տեղն է գրաւել և շարունակում է իր քաղաքական դիրքի ու վարկի ուժեղացման ճանապարհով յառաջանալ:

Վեհապետի կատարած ճամփորդութիւնները Եւրոպայի և Ասիայի զանազան երկրներում և Միացեալ Նահանգներում ու Անգլիայում, նրա՝ զանազան պետութիւնների ղեկավարներին տուած այցելութիւնները, նրա խօսացած բովանդակալից և ազդեցիկ ճառերը ու մամուլի տեսակցութիւն-ասուլիսների ընթացքում տուած բացատրութիւններն՝ իր երկրի լայն ծանօթացման և քաղաքական ու միջազգային վարկի բարձրացման ուղղութեամբ, եղել են չափազանց օգտակար և գերագնահատելի:

Նախքան Մեծն Ռըզա Շահի թագաւորութիւնը՝ անյայտութեան և մոռացութեան մէջ թաղած այս երկիրը ներկայիս իրաւացիօրէն կարող է պարծենալ իր արագընթաց յառաջադիմութիւններով, տնտեսական վիճակի բարւոքումով, նորածին, բայց արագընթաց գործարանային և ճարտարուեստական արդիւնաբերութեամբ, միլիոնաւոր գիւղացիների դրութիւնը բարւոքելու համար մղած պայքարով ու նրանց անհաւատալի յաղթանակով և վերջապէս ամբողջ երկրի ազգաբնակչութեան վերածնող կեանքի բազմաթիւ նւաճումներով և բարգաւաճումով:

Պատռուած են բոլոր նւաստացուցիչ պայմանագրերը և խորտակուած ստրկացնող կապանքները: Իրանը ներկայիս յաղթանակօրէն և վճռական քայլում է կատարեալ անկախութեան ճանապարհով և քաղաքական ու դիւանագիտական ասպարեզում իր պատուաւոր և պատկառելի տեղն է գրաւում:

Իր քաղաքագէտ և հեռատես առաջնորդի ջանքերով Իրանը միջազգային տնտեսական և առևտրական կեանքումն էլ յաջողել է իր նախանձելի տեղը գրաւել: Նաւթի, բազմաթիւ հանքերի, ձկնորսութեան և բնական զանազան բարիքների ճոխութեամբ պարգևատրուած այս երկիրը կարողացել է իր համար տնտեսական բացառիկ դիրք գրաւել և բազմաթիւ պետութիւններին և օտար ընկերութիւններին լայնօրէն շահագրգռել իր հետ առևտրական, վաճառականական կապեր հաստատելու և պայմանագրեր կնքելու տեսակէտից:

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ ԵՒ ՄԱՆԱՒԱՆԴ ԻՐԱՆԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Է ՊԷՏՔ

Իրանը հազարաւոր տարիների ընթացքում իր փառապանծ նւաճումների և յաղթանակների հռչակաւոր ժամանակների՝ Աքեմենեան, Արշակունեաց, Սաֆավեան, տիտանների՝ Կիւրոս Մեծի, Դարեհ Մեծի, Շահ Աբաս Մեծի և Ռըզա Շահ Մեծի անցեալ յաղթապանծ և երջանիկ օրերի կողքին, ականատես է եղել նաև բազմաթիւ ցեղախմբերի յարձակումների, արաբական տիրապետութեան, համաշխարհային երկու պատերազմների պատճառած և բազմաթիւ ուրիշ առիթների ապերջանիկ օրերին: 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում մանաւանդ հիւսիսից և հարաւից սղմուած և նոյնիսկ ճխլուած է եղել հսկայ պետութիւնների յարատև մրցակցութիւնների և ճնշումների արանքում:

Շատ յաճախ այս երկրի քաղաքական անկախութիւնն ու հողային ամբողջականութիւնը ենթարկուել են մահացու վտանգի: Նրա յառաջադիմութեան և բարգաւաճման ուղղութեամբ կատարուած ձեռնարկները վայրագօրէն ոտնակոխուել և տրորուել են օտար ուժեղ պետութիւնների կրունկների ներքև, բայց նա մնացել է և շարունակում է յաղթականօրէն գոյատևել:

Իրանը Համաշխարհային երկրորդ պատերազմի արկածալից և ծայրայեղօրէն ծանր ու ճակատագրական տագնապները բացառիկ ճիգ ու ջանքերով կարողացաւ իրենից հեռացնել և իր հողային ամբողջականութեանը սպառնացող սոսկալի ճգնաժամից փրկել:

Ինչ խօսք, որ ներկայումս էլ համաշխարհային քաղաքական վիճակն ու դասաւորութիւնն այնպիսի մի ձևի է հասել, որ երկրագնդիս երեսին գոյութիւն ունեցող բոլոր երկրները՝ իրենց պետական կազմով և հասարակական ընդհանուր դրոյթով, կախուած և կառչած են մնում մանաւանդ երկու հսկաների՝ Միացեալ Նահանգների և Խորհրդային Միութեան միջազգային, աւելի շուտ երկկողմանի փոխյարաբերական վիճակից: Ինչպէս աշխարհում ապրող բոլոր ազգութիւնների և պետութիւնների, այնպէս էլ Իրանի կառավարութեան և ժողովրդի համար ներկայիս խաղաղութիւն և անդորրութիւն է պէտք:

Իրանն իր յեղաշրջական և բարեփոխողական ձեռնարկների իրագործման համար ամենից աւելի խաղաղութեան կարիքն ունի:

Երկրագնդի վրայ ապրող և շնչող համայն մարդկութեան, նրա 99,9 տոկոսի համար խաղաղութիւն է պէտք: Նրանք՝ համայն մարդկային այդ բազմութիւնները, հարիւր միլիոնաւոր մարդիկ ամէն տեղ, լիաթոք ու միաբերան աղաղակում և կանչում են.

«Մեզ խաղաղութիւն է պէտք: Կորչի՛ պատերազմը: Կորչե՛ն այդ դժոխային և նզովեալ պատերազմը հրահրողները...»:

Դժբախտաբար, մանաւանդ վերջին տարիներում այդ անսահմանօրէն աղէտալի և կործանարար պատերազմի ատելի կոշմարը Դամոկլեան թունալից սրի նման ամբողջ մարդկութեան գլխին շարունակ մնացել է կախուած:

Բազմաթիւ և ապարդիւն համաժողովներ, տեսակցութիւններ, խորհրդածութիւններ, ծրագիրներ, առաջարկներ և բանակցութիւններ կատարուել են, բայց, դժբախտաբար, ոչ մի դրական արդիւնքի չեն հասել: Մարդկային բազմամիլիոն թշուառ զանգուածներ պատերազմի ամենօրեայ սարսափելի հաւանականութիւնից մնում են ահաբեկուած:

Քէշմիրներ, Վիետնամներ, Լաոսներ, Կօնգօներ, Եմէններ, Չին-հնդկական սահմաններ և մանաւանդ Բեռլիններ և Քուբաներ են ստեղծում ամէն օր և համայն մարդկութեան աղաչ-պաղատանքով հրաւիրած և նրա փէշերին կառչելու տենչացող խաղաղութեան հրեշտակին դիւահար արած փախցընում են:

Ի՜նչ ահռելի դժբախտութիւն և աղետ ամբողջ մարդկութեան գլխին պիտի պայթէր, եթէ Խորհրդային Միութեան վարչապետ Խրուշչևը յամառէր իր որոշման գործադրութեան մէջ և հոկտեմբերի 25-ի առաւօտեան մէկուկէսին, համաշխարհային պատերազմի հրդեհումից հրաժարուելով և աշխարհի խաղաղութիւնը փրկելու մտահոգութեամբ, չհրահանգէր Քուբա մեկնած և նրա համար զինամթերք և գուցէ հիւլէական հրթիռներ փոխադրող ռազմանաւերի վերադարձը: Հոկտեմբերի 29-ի գիշերուան Խրուշչևը համաշխարհային խաղաղութիւնը փրկելու վճռականութեամբ ռուսական մասնագէտներին հրահանգեց հաւաքել նաև Քուբային յանձնուած հրթիռային բոլոր կազմածները և հետ ուղարկել:

Եթէ Խորհրդային Միութեան վարչապետը դժբախտաբար յամառէր իր որոշման գործադրութեան մէջ, հոկտեմբերի 25-ից սկսած՝ մի քանի օրերում, ամբողջ աշխարհը հիւլէական մարդակուլ պատերազմի կործանարար երախում այրուած, խանձուած և աւերակուած պիտի լինէր...

***

Միացեալ Ազգերի Կազմակերպութեան (ՄԱԿ) 17-րդ տարեդարձի առթիւ հոկտեմբեր 24-ին Թեհրանում հանդիսութիւններ տեղի ունեցան:

ՄԱԿ-ի յատուկ դրօշակը սկաուտների միջոցով Խորհրդարանի Բհարստան և 24 Էսֆանդի հրապարակներում պարզուեց: 17-րդ տարեդարձի առթիւ յատուկ նամակադրոշմ հրապարակուեց: Կէսօրից յետոյ Ֆարհանգի սրահում մասնաւոր հաւաքոյթ և արարողութիւն տեղի ունեցաւ: Պալատական նախարար Ալայի միջոցով Վեհապետի շնորհաւորական պատգամը հաղորդուեց: Վարչապետների, կրթական նախարարի և ՄԱԿ-ի Իրանի կազմակերպութեան նախագահ դոքտ. Դաֆթարի կողմից ճառախօսութիւններ եղան: Ամենքն էլ գովեցին ՄԱԿ-ի խաղաղարար ճիգ ու ջանքերն ու զոհաբերութիւնները: ՄԱԿ-ի դիրքի և ազդեցութեան ուժեղացման համար ջերմ ցանկութիւններ յայտնեցին:

Վեհապետի պատգամի մէջ հաղորդուեց նաև հետևեալը.

«Յոյս ունենք, որ պետութիւնների միջև ծագած հակամարտութիւնները շուտով կը վերանան, և ՄԱԿ-ին հնարաւորութիւն կը տրուի խաղաղութեան, տնտեսական զարգացման, հանրային և մշակութային յառաջադիմութեան համար աւելի դրական քայլեր առնելու»:

Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը տարիներից ի վեր Իրանում բազմաթիւ կողմնակիցներ և առանձին կազմակերպութիւն ունի և խաղաղութեան գոյատևման օգտին դրական աշխատանքներ և քարոզչութիւններ է կատարում:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս տարուան երեք ամիսների ընթացքին՝ յունիսի 15-ից մինչև սեպտ. 15-ը, արձակուրդով մեզ մօտ՝ Թեհրան եկան արտասահմանում իրենց բարձրագոյն ուսումը վերջացրած և այնտեղում էլ գործի անցած չորս երիտասարդներ և մեր հայրենակիցներից և հին բարեկամներից մէկը՝ Աղասի Մովսիսեանը: Այս վերջինը միայն, իր կրթութիւնը տասնեակ տարիներ առաջ Ֆրանսիայում վերջացրած և յետոյ Թեհրան վերաբնակուած, արհեստով ու առևտրով իր համար ապահով դիրք ստեղծած և վերջապէս 8-9 տարի սրանից առաջ Արժանթինի Բուէնոս-Այրէս մայրաքաղաքը գաղթած և նորից իր կօշիկի առևտրով զբաղուած, խելք-գլուխ անձնաւորութիւն է:

Արտասահմանից Թեհրան, իրենց հարազատներին այցելելու նպատակով և արձակուրդով եկած երիտասարդներից մէկն էլ իմ երկրորդ մանչ զաւակը՝ Յարութիւնն էր, որը 9 երկար տարիներից ի վեր մեկնել էր Միացեալ Նահանգներ և 6 տարուայ ընթացքում իր էլեքտրո-ինժեներական բարձրագոյն ուսումը համալսարանում վերջացնելուց յետոյ երեք տարիներից ի վեր ամերիկեան մի շատ մեծ ընկերութեան մօտ գործի էր անցել: Իր երկու ընկերներից մէկը՝ Էդիկ Գասպարեանն էլ, ճիշտ միևնոյն ժամանակ նրա հետ միատեղ մեկնել և նորից նրա հետ միասին, իր ծնողներին այցելութեան էր եկել:

Տղայիս միւս ընկերը՝ Ժօրա Մամիկոնեան, նոյնպէս նրա դասընկերներից, Թեհրանից Գերմանիա մեկնել և այնտեղ բժշկական համալսարանն աւարտել և նոյնպէս 3 տարիներից ի վեր Արևմտեան Գերմանիայում բժշկութեամբ զբաղուած է: Տղայիս կրտսեր ընկերը՝ Հրաչ Մանուկեանը, մեր խնամի Տիգրան Մանուկեանի մեծ տղան է: Հրաչը՝ յառաջիկայ ամռան վերջում Բրուքսէլի երաժշտական համալսարանի վերջին դասընթացքն աւարտելու և այդ գեղարուեստական ճիւղի գերակատար ուսման նպատակով Ամերիկա մեկնելու է: Նրանց ժամանման առթիւ կազմակերպուած հիւրասիրութիւններին ամէն անգամ մասնակցում էին 40-50 ազգական-բարեկամներ: Սրանց շարքում ամէն գործի, մասնագիտութեան, մտածելակերպի ու աշխարհայեացքի տէր մարդիկ էին լինում: Ինչ խօսք, որ համարեա բոլորի ուշադրութեան կենտրոնը արտասահմանից եկած մեր սիրելի հիւրերն էին:

Չեմ կասկածում, որ ինչպէս մեզ, այնպէս էլ գրքիս ընթերցողների համար հետաքրքիր կը լինի նրանց հետ մեր ունեցած խօսակցութիւններից և խորհրդածութիւններից մէկը, որի բովանդակութիւնը ջանացել եմ յիշողութեանս յանձնել:

Մեծ սեղանի շուրջ հաւաքուածներից մէկը Աղասի Մովսիսեանից հարցրեց.

– Ի՞նչ են ձեր տպաւորութիւնները ձեր վերապրած նոր երկրից և նրա մայրաքաղաքից:

– Ձեր ինձ տուած հարցը,– պատասխանեց մեր վաղեմի բարեկամ և հայրենակից Մովսիսեանը,– մէկից աւելի պատասխան ունի: Կաշխատեմ ձեզ հետաքրքրող խնդիրներին պատասխանել: Եթէ Արժանթինում քաղաքական վայրիվերումները և իշխանութիւնը ձեռքից խլելու անպատեհութիւնները չլինէին, Արժանթինը Հիւսիսային Միացեալ Նահանգներից յետոյ հաւանաբար Ամերիկեան աշխարհամասի ամենաբարգաւաճ և հարուստ արդիւնաբերական, ապահով և դեմոկրատիկ երկիրը լինէր: Դժբախտաբար, ներքին և մանաւանդ արտաքին շահախնդրութիւնների բախման հետևանքով երկիրը կատարեալ խաղաղութեան, անդորրութեան և կայունութեան բարիքները վայելելուց զրկուած է: Ինչ վերաբերում է հայ գաղութին, պիտի յայտնեմ, որ, դժբախտաբար, հայ գաղութի ճշգրիտ մարդահամարի մասին անտեղեակ եմ: Մօտաւորապէս 20-25 հազարի հայ գաղութ Արժանթինում և մասնաւորապէս Բուէնոս-Այրէսում կարող է լինել: Ցաւ ի սիրտ, հայ համայնքները զրկուած են սեփական-ազգային դպրոցներ ունենալու բարիքից: Երկու ճակատներ գոյութիւն ունեն, որոնք իրենց հրատարակած թերթերով իրար դէմ խստօրէն պայքարում են: Բարեբախտաբար, վերջերս Աբաղեան ազգանունով մի թեմակալ արքեպիսկոպոս ժամանեց, որն իր հաշտարար քաղաքականութեամբ կարողացաւ կրօնաեկեղեցական հողի վրայ տարուած պայքարը մեղմել և համագործակցութիւն ստեղծել: Եթէ մեր ազգապահպանման համար միացեալ, համերաշխ և բարեացակամ ճիգեր ի գործ չդրուեն, համոզուած եմ, որ 40-45 տարիներից յետոյ, Արժանթինում եղած հայերի գոյութեան մասին պատմութեան գրքերի էջերում միայն հնարաւոր կը լինի կարդալ:

– Դժբախտաբար, ճիշտ միևնոյն պատմութիւնն էլ,– շարունակեց տղաս,– մեզ մօտ՝ Քալիֆորնիայումն է կատարւում: Հայերը, մանաւանդ տաճկահայերը, ժամանակին օգտուելով իրենց ընծայած ազատութեան և ապահովութեան բարիքներից, Ֆրեզնոյում հսկայական ձեռնարկներ են սկսել: Ֆրեզնոյում բազմամիլիոնատէր հայեր մեծ ագարակներ, այգիներ, գործարաններ, պտղաբուծական, կաթնատընտեսական և կենդանաբուծական ձեռնարկներ ունեն: Խիստ բարւոք վիճակում են ապրում նաև Լոս Անջելեսի, Ս. Ֆրանչիսկոյի և Քալիֆորնիայի այլ մասերում բնակւող հայ ընտանիքները: Դժբախտաբար, հայապահպանման համար մտածողները չափազանց քիչ են: Ամէն կուսակցութիւնն իր հետևորդներով իր համար առանձին եկեղեցի, քահանայ և առաջնորդ ունի: Կան նաև այդ վիճակից յուսահատուած հայրենակիցներ, որոնք մեկուսացած կեանք են վարում: Յայտնի չէ, թէ Քրիստոսին, Ս. Գրիգոր Լուսաւորչին ինչպէս են բաժան-բաժան անելու:

Յարութիւնի այս վերջին կատակի վրայ նրա շուրջբոլոր հաւաքուածներս լիաթոք և աղմկալից ծիծաղել սկսեցինք և ապա խնդրեցինք շարունակել իր հետաքրքրաշարժ նկարագրութիւնը:

– Չափազանց ցաւալի է նաև այն պարագան, որ մենք մեր ծնողների անխնայ զոհաբերութեան և մեր երկարատև ու յամառ աշխատանքի շնորհիւ մարդ-մասնագէտ դառնալուց յետոյ հնարաւորութիւն չունենք, եթէ ոչ մեր նախահայրերի մայր երկրին, գոնէ մեր ծննդավայր սիրելի Իրանին օգտակար դառնալու: Ինձ և ինձ նման այս ընկերներս՝ կողքիս նստած այս էդիկը, Ժօրան և Հրաչը, ինչու՞ հնարաւորութիւն չպիտի ունենային իրենց սրտին աւելի մօտիկ և հարազատ այս երկրին օգտակար լինել և ստիպւած իրենց ուսումը, գիտութիւնը, մասնագիտութիւնը, ջանքն ու աշխատանքն օտար երկրների օգտին ու շահին ծառայեցնել: Ի՞նչ էք կարծում ցաւալի և անմխիթարական չէ՞ այս պարագան:

– Դրանից աւելի, շատ աւելի և ցաւալի պարագայ կայ, և դա այն է,– ընդմիջեցի ես,– սիրելի՛ զաւակս և դուք, իմ շատ սիրելի և յարգելի՛ բարեկամներս, դուք բոլորդ էլ ներկայիս, որպէս հայ և հայ անուան ի պատիւ, ձեր ջանքն ու կորովը, ձեր աշխատանքն ու մասնագիտութիւնը օտարների ծառայութեան և նրանց երկրի օգտակարութեանն ի սպաս էք դնում: Այդ օտարները ձեզ ներկայիս հայ անունով են ճանաչում և գուցէ և որպէս հայ՝ գնահատում են, բայց ձեր զաւակներն արդէն այդ անունից՝ հայ անուան պատուից ու պարծանքից զրկուած կը լինեն, քանի որ օտարութեան մէջ ուծանալու են և հայ ժողովրդի ու ազգի համար կորած և անհետացած են լինելու:

ՎԵՐՋԱԲԱՆ

Գրքիս այս երկրորդ հատորը վերջացնելուց առաջ անհրաժեշտ եմ համարում եզրափակիչ մի քանի խօսք էլ գրելու:

Յոյս ունեմ, որ գրքիս երկու հատորները կարդալու սիրալիրութիւն ունեցողներն ի վիճակի են եղել գնահատելու այն կատարեալ անկողմնակալութիւնը, որին ձգտել եմ իմ գտնուած վայրերում դէպքերն ու իրադարձութիւնները հարազատօրէն նկարագրելիս:

Ինձ թւում է, որ յարգելի ընթերցողները կեանքի ասպարէզում իմ նկարագրած մաքառումներից, տանջանքներից և վայրիվերումներից կարող կը լինեն իրենց համար օգտակար եզրակացութիւններ հանել և մանաւանդ արժէքաւորել այս եզրափակիչ վերջաբանում արտայայտուած կարծիքներիս և մտորումներիս անկեղծութիւնը:

Պր. Ս. Վրացեանը ճշմարիտ հայ, անկեղծ և նուիրուած հայրենասէր և հետևաբար շատ յարգելի մարդ է ինձ և գուցէ ինձ նման շատ շատերի համար:

Նա իր վերջին յօդուածներից մէկում, ի միջի այլոց, հետևեալ տողերն է գրում.

«Հայաստանն է խօսում». ամէն երեկոյ բաց եմ անում իմ ձեռքի ռադիոն և հարևան կայանների ժխորի մէջ անհամբեր փնտրում եմ իմ սրտին մտերիմ ձայնը՝ «Երևանն է խօսում»...

Հայհոյում են, ի՞նչ փոյթ: Հոն հայերեն են հայհոյում: Հայաստանի մայրաքաղաքից են հայհոյում (տե՛ս «Ալիք» օրաթերթ, թիւ 7306):

Հաւանաբար պր. Ս. Վրացեանը համոզուած է, որ Երևանը թերևս ստիպուած է հայհոյելու: Նա մեծահոգի է: Նա Երևանի այդ հարկադրուած հայհոյանքից բոլորվին չի սրտնեղում:

Այս պարագայում ստիպուած եմ հարցնելու պր. Վրացեանի յարգելի գաղափարակիցներին, երբ որ հեռատես և քաղաքագէտ ու փորձութիւնների բովից անցած մի ղեկավար հանդուրժում է Երևանի հայհոյանքներին, ինչու՞ նրանք իրենց հերթին գոնէ առժամանակ չեն հանդուրժում լսելու Երևանի հայհոյանքները:

Եթէ նրանք էլ պր. Վրացեանի նոյն համբերատարութիւնն ունենային իրենց հանդէպ եղած հայհոյանքների նկատմամբ, հաւատացնում եմ, հանդուրժողական այդ կեցվածքը կը լինէր ազնիւ և յարգելի:

Սիւրիայից և Լիբանանից վերջերս Երևան մեկնած ուսուցիչների և մտաւորականների շարքում անկասկած դաշնակցականներ կամ նրանց համակիրներ կային: Հարցրէ՛ք նրանցից և խնդրէ՛ք, որ նրանք, ձեռքը իրենց խղճին դրած, ճշմարիտը յայտնեն, թէ արդեօ՞ք Երևանում գործի գլուխ եղած մարդիկ, նոյնիսկ նրանց քաղաքական աշխարհայեացքին հակառակորդ կուսակցութեան պատկանողները, հայե՞ր են, հայրենասէրնե՞ր են և ինչպիսի՞ հայրենասէրներ են:

***

Անհրաժէշտ է թւում գիրքս փակելուց առաջ մի քանի յիշեցումներ անել:

Քանի որ Հայաստանից ստացած իմ անձնական տպաւորութիւններն անցեալին են պատկանում, նախապատուութիւնը տալիս եմ Մայր հայրենիք վերջերս այցելած յարգելի անձնաւորութիւնների՝ անառարկելի և համառօտուած եզրակացութիւններին:

Գրագէտ Կ. Փոլատեանը, Ս. Վրացեանի հետ կատարած իր երկարատև զրոյցի վերջում խօսքը իր խօսակցին ուղղելով, հետևեալ ձևով է եզրակացնում.

– Ներեցէ՛ք, որ ձեզ ընդմիջեմ, սիրելի՛ պր. Վրացեան: Կը յիշեմ, որ տարիներ առաջ, չեմ գիտեր, ու՞ր գրած էք, թէ՝ «Այդ երկրին մէջ ապրողը չի կրնար հայրենասէր չըլլալ»:

Կ. Փոլատեանն իր կողմից և իր կարծիքը հետևեալ նախադասութիւններով լրացնում է.

– Կը կրկնեմ նաև այսօր: Ես հաւատացած եմ, որ իրենց հայրենիքը չսիրող հայեր չկան գրեթէ:

Պէտք է համոզենք, պէտք է հաւատանք այս ճշմարտութեանը: Թշնամիներ չտեսանք մեր դէմ, այլ տարբեր մտածող եղբայրներ, նոյն հօրենական ժառանգութեան նախանձախնդիր հարազատներ: Հարազատներ պատմութեամբ, արիւնով, մշակոյթով, տառապանքով ու յոյսով իրարու կապած նոյն ընտանիքի անդամներ:

Հայրենիքն ու Սփիւռքը իրար պէտք է լրացնեն տնտեսապէս, մշակութային գետնի վրայ, քաղաքական մարզի մէջ: Իւրաքանչիւր հատուած, հետևելով իրեն պարտադրուած ուղղութեան, բայց ներքնապէս, հոգեպէս ամուր կառչած մէկ նպատակի՝ հայութեան»: («Ալիք» օրաթերթ, թիւ 6876-10-4-61):

Հայր Վ. Յովհաննիսեանի «Ինչպէս տեսայ Հայաստանը», որ վերջերս «Ալիք» օրաթերթի մատե-

նաշարի կողմից առանձին գրքով հրատարակուեց, Մայր երկրից նրա ստացած տպաւորութիւնների ճշգրիտ և բացառիկ շարադրուած ամփոփումն է: Ամէն հայի համար շատ անհրաժէշտ է ունենալ և ուշադրութեամբ կարդալ այդ հարազատ տպաւորութիւններով բովանդակալից գիրքը:

Հայր Վ. Յովհաննիսեանը իր հոգևորականի հանգամանքով քաղաքական հարցերի վերլուծման խնդիրներում չափազանց զուսպ և զգոյշ է: Բայց նա անկարող է եղել թաքցնել իր՝ հայի վիրաւորուած սրտի և ազգասիրութեան այն զգացումները, որոնք ես տասնեակ տարիներ առաջ վրացիների՝ հայերի հանդէպ ունեցած անհարազատ և ապերախտ վերաբերմունքի հետևանքով կրել եմ և որից մի քանի նմոյշներ գրքիս առաջին և այս երկրորդ հատորում նկարագրել եմ արդէն:

Հայր Վ. Յովհաննիսեանը, խորին վրդովմունքով նկարագրելով վրացիների ապերախտ վերաբերմունքը Թիֆլիսում ներկայիս ապրող 200,000 հայերի, ինչպէս նաև Ախլցխայի և Ախլքալաքի («Այստեղ ճրագով փնտրես, վրացի չես գտներ,– ասում է նա») հայ ազգաբնակչութեան նկատմամբ, ինչպէս նաև Խօջեվանքի եկեղեցու քարուքանդումը և հայ մտաւորական տիտանների՝ Ռաֆֆիի, Յ. Թումանեանի, Սունդուկեանի գերեզմանների փշոտ և լքած պարսպապատումը, հռչակաւոր հայ զօրավարների, Լօրիս Մելիքովի, Արշակ Տէր-Ղուկասեանի, Բէյբութեանի և ուրիշ նշանաւոր դէմքերի աճիւնների պղծումն ու անհետացումը, եզրափակում է.

«Այժմ հայ-վրացական յարաբերութիւնները աւելի լարուած են, քան ցարերու շրջանին. հայը վրացին չի սիրեր, վրացին հայը չի սիրեր. մինչ դարերով իրարու հետ զինակցած ու պայքարած են աշխարհակալներու դէմ, և Վրաստանն իր գոյութիւնն ու երկարատև թագաւորութիւնը հայ բանակներուն կը պարտի: Մենք եղած ենք իրենց վահանը և թերևս ապագան նոյնպէս իրար շղթայէ այդ երկու ազգերուն ճակատագիրը» («Ալիք» օրաթերթ, թիւ 7156-28-3-62):

Անկողմնակալ և միանգամայն վստահելի մի յարգելի ականատեսի վերոյիշեալ վկայութիւնից յետոյ, թւում է, իրաւացի կը լինենք հարցնելու Հայաստանի ներկայ ղեկավարութիւնը օտարամոլութեան և անհայրենասիրութեան մէջ մեղադրող մեր հայրենակիցներին. արդեօք իրաւացի՞ են նրանք իրենց արած մեղադրանքներիի մէջ, թէ՞ ոչ: Եթէ այո՛, ապա ինչու՞ նրանք՝ այդ մեր հայրենիքի ղեկավարներն ու պետական մարդիկ, օտարամոլութիւնից դրդուած, վրացի իշխանաւորների հետ սիրաբանութիւն չեն սարքում և նրանց սիրաշահելու համար վարդի փնջեր չեն ուղարկում և նրանց իրենց գլխին «չեն բազմեցնում»:

Ես հաւատացած եմ, որ Հայաստանում՝ մեր Մայր երկրում ապրող բոլոր հայերը սրտի ու հոգու խորքից հայեր և լաւ հայրենասէրներ են:

Մենք ինչպէ՞ս կարող ենք լսել, կարդալ և տեղեկանալ Հայաստանում ոչ թէ խօսքով, այլ կենդանի գործով իրագործուող հայրենասիրական ձեռնարկները, ելոյթները և ցուցաբերումները՝ ազգապահպանման, մշակոյթի, գրականութեան, գեղարուեստի, մարզանքի և ուրիշ ասպարեզում և մոռանալ ու անտեսել այդ բոլորը: Ինչպէ՞ս կարող ենք չգնահատել Ս. Մեսրոպ Մաշտոցի 1600-ամեակի առթիւ Մայր հայրենիքի գովելի նախաձեռնութիւնը, որով գովեցին և նուիրական բարձրութեան հասցրին մեր աննման լեզուի տառերի հոյապանծ և վեհափառ գիւտարարին բազմաձաւալ մամուլով:

***

Խնդրոյ առարկայ է, թէ Հայաստանը անկախ չէ և ենթակայական դրութեան մէջ է: Ինչու՞ զարմանալ և այդ իրողութեան համար, քանի որ պարագաների դասաւորումով մեր Մայր հայրենիքը միջազգային, քաղաքական, դիւանագիտական և զինուորական-պաշտպանողական խնդիրներում ի վիճակի չէ, չի կարող ներկայ պայմաններում անկախ դիրք ու դեր ունենալ:

Մեզ բոլորիս յայտնի է, որ Միացեալ Նահանգներում ժողովրդաւարութեան կատարեալ սիստեմ գոյութիւն ունի: 51-52 նահանգները, բացի արտաքին քաղաքականութեան, դիւանագիտութեան, պատերազմական և մի քանի համերկրային բնոյթ կրող խնդիրներից, իրենց ներքին, նահանգային գործերում կատարեալ ազատութիւն են վայելում: Մարդ-անհատի գործունէութեան, համահայկական-հաւաքական ձեռնարկների, տնտեսական և մշակութային գործերի լիակատար ազատութիւն գոյութիւն ունի: Այդ բոլորից յետոյ մի՞թէ հանրապետութեան նախագահը՝ Քենեդին, մի սեամորթի՝ Ջէմս Մէրիդիսի՝ Միսիսիփիի նահանգային համալսարանում ընդունել տալու համար հազարաւոր զինուած ոստիկաններով և զինական սարքաւորումներով համալսարանը պաշարելու և իր կամքն ու որոշումը գործադրելու չձեռնարկեց:

Ի՞նչ պիտի անէինք մենք՝ Սփիւռքում ապրող հայերս, եթէ մի նման դէպքի համար Մոսկուայի կողմից Երևանի հանդէպ այդպիսի միջամտութիւն և միջոցառում գործադրուէր: Անկասկած, մենք բոլորս մեր կոկորդները պիտի պատռէինք, ճչալով, աղմկելով և բողոքելով այդպիսի բռնութեան և կամայականութեան դէմ:

Աշխարհի ներկայ պայմանների դասաւորութեան մէջ նոյնիսկ բոլորովին անկախ համարուող երկրների և պետութիւնների համար, դժբախտաբար, կատարեալ անկախութիւն գոյութիւն չունի: Մինչև իսկ ամենամեծ և հսկայ պետութիւնների համար իրենց անկախութիւնը որոշող սահման և սահմանափակում ունի: Պետութիւններից և ոչ մէկը չի կարող, չի յանդգնում, ինչպէս Խորհրդային Միու-

թեան թիւ մէկ մարդը՝ Խրուշչևը չկարողացաւ, իր ցանկացած ձևով, իր նպատակներն ու ցանկութիւններն իրականացնել: Խիստ ձևած, չափւած և զգուշաւոր հաշիւների ենթարկւած փոխյարաբերութիւնների և փոխզիջումների դրութիւն է տիրապետում ամբողջ ներկայ աշխարհում:

Մեզ՝ բոլոր հայերիս համար մնում է մի խելօք և հեռատես քաղաքականութիւն և միակ մի ելք: Համոզւած լինելով, որ արտասահմանեան շատ երկրներում, նոյնիսկ մեծ թւով հայերով խտացւած որոշ վայրերում, հայ դպրոցի և հայ լեզւի ուսուցման բացակայութեան հետևանքով ուշ թէ շուտ լուծարքի ենթարկւելու, հալւելու և անհետանալու ենք, պիտի ջանանք մեղմել մեր ներազգային և միջկուսակցական հակամարտութիւններն ու կռիւ-քաշքշուկները:

Եթէ ի վիճակի եղանք մեղմել մեր հակամարտութիւնների թափը, կարող կը լինենք անցնելու երկրորդ փրկարար գործին: Միահամուռ և միաբան յետ պահանջել մեզնից անտեղի և ապօրինի ձեռով և անուններով խլւած հողամասերը և նրանց նորից կցել մեր փոքրացած հայրենիքին:

Երրորդ և ամենակարևորը՝ միասնական և ամբողջ ուժերով ջանալ մեր թական խտութիւնը հնարաւոր և կարելի միջոցներով շատացնել նախ Մայր երկրում և ապա գուրգուրել ու պահպանել այդ թական խտութիւնը Իրանում, Լիբանանում, Սիւրիայում, Իրաքում և մերձարևելեան մի քանի երկրներում, ուր մեր մշակութային և ազգապահպանման դրութիւնն այնպէս է դասաւորւած, որ ձուլման պարագաներ չկան:

Մէկ խօսքով, մենք ամէն կերպ պիտի ջանանք իրագործելու մեր նահատակ և հռչակաւոր բանաստեղծ Չարենցի՝ մեզ որպէս նւիրական ժառանգութիւն թողած գերագնահատելի և աղամանդակերտ պատգամը.

«Հա՛յ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ոյժի մէջ է»:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաղեան, թեմակալ արքեպիս-կոպոս 288
Աբբաս, մսագործ 215, 216
Աբդուլ Համիդ, սուլթան 29, 30, 32, 64
Աբովեան Խաչատուր 244
Աբրահամ, չարմահալցի 210, 212, 213, 214
Աթարբեկով Աւիս 225, 226
Ալա 278, 281, 287
Ալմաստ 90
Աղա Պետրոս, ասորիների զորահրամանատար 182, 183, 188, 200
Աճէմեան Գաբրիէլ 45
Աճէմեան Հ. 32 (ծնթ.), 33, 34 (ծնթ.)
Ահմադ Շահ Ղաջար 222
Ահմադի 271
Աղայեան Ալէք 228, 235, 236
Աղա-Ռըզա 234
Աղաբէգեան 237
Այվազ-զադէ 274, 277, 278
Ամին 285
Անահիտ, եղբոր՝ Կարապետի երկրորդ կինը 246, 247
Անիկ, Գոտակչյան Եղիսաբեթի քույրը 28 (ծնթ.)
Անուշ 81, 82, 88-89, 104, 129, 130, 142, 146, 158, 159, 162, 179, 180, 183, 174, 185, 186, 193-198, 201, 219, 240, 249
Աշխէն 105
Աշոտ 100
Ապրէսեան 254, 255, 258
Առաքելեան 237
Առաքելեան Մարի 232
Առաքելեան Ս. 261
Ասյա, հյուպատոս Պլատի կինը 259
Ասո 38, 59, 73, 74, 82
Ասրեան Սաթենիկ 225, 228, 233, 234
Աւագեան 237
Ավագյան Հ. 28 (ծնթ.)
Աւագեան Սեղրակ 232
Աւետիանով 166
Աւետեան Խաչիկ, գյուղապետ Սահակ Ավետեանի որդին 208
Աւետեան Սահակ, գյուղապետ 206, 207, 208
Աւետիսեան Մկրտիչ 28 (ծնթ.), 30, 34, 82
Աւէտ, սայլապան 121, 144, 145, 146
Արամ Մովէլ 228
Արաքսի, քույրը 11, 15, 17, 19, 22, 24, 25, 36, 42, 50, 57, 58, 80, 87-89, 91, 93-94, 107-111, 118, 119, 145, 146, 152, 167, 168, 170, 233, 258, 261
Արմենակ (Արմեն), միջնակ եղբայրը 15, 113, 119, 122, 139, 143, 146, 167, 168, 169, 170, 233, 246, 247
Արմիկ, եղբոր՝ Կարապետի որդին 247
Արսանջան 285
Արտաշէս Գարագաշ 226, 227

Բ

Բագրատեան Արտաշէս 195, 196, 197
Բահէր 269, 272
Բաղդասարեան Տիգրան 171
Բարսեղյան, տպարանի տեր 28 (ծնթ.)
Բարսեղյան (Բարսեղով) 9, 128, 131, 132, 136, 140, 248, 249
Բարսեղեան Ալիս 137-143, 167, 168, 169, 170, 218, 219, 220, 225, 232, 233, 248, 249, 251, 252
Բէգլարեան Կար. 43
Բէյբութեան 290
Բլաք 265, 268
Բրուտեան Աբր. 32, 35 (ծնթ.), 38, 59, 73-76, 82
Բրուտեան Միհրդատ 59, 73, 74
Բուլղարացի Գրիգոր (Կոզյան Գրիգոր) 8, 35, 38, 39, 41, 42, 44, 45, 48, 60, 61, 78, 80, 82, 84, 86, 138, 152, 153, 156-158, 162-164, 168, 171, 172, 174, 178, 180, 197-200
Բուռնութեան Նազարէթ 40
Բոռոզանջեան Ա. 45

Գ

Գաբրիէլ աղա, եղբոր՝ Կարապետի աներեղբայրը 168
Գաբօ 82
Գալիկեան Հր. 39, 44, 45
Գալստեան Ալէք 228, 232
Գասպարեան Էդիկ 287, 288
Գասպարեան Մ. 171, 177
Գափամաջեան Սէթ 40, 45, 137
Գէորգ, քահանա 40 , 41
Գէվօ 76
Գիգո 271
Գիւլիզար 29
Գոհարիկ, Վահան Խերանյանի քույրը 244
Գրիգոր Զոհրապ 37
Գուգուշվիլի 135
Գօտակչեան Եղիշէ 28, 34
Գօտակչեան Եղիսաբէթ 28, 29

Դ

Դանիէլ, Աղթամար վանքի

վանահայր 51
Դարբինեան Հրանդ 8, 36, 38, 59, 60, 73-76, 84, 99-101, 148, 149, 150-155, 158, 159, 161, 162, 164, 165, 167, 225, 249
Դարեհ Մեծ 286
Դաֆթար 287
Դերզեան Յակոբ 50, 82
Դէմիրճեան 241
Դիէրցի Դաւо 31, 32
Դև (Մարգար Ղարաբէգեան) 147, 225, 228, 233, 234

Ե

Եզնիկ վարդապետ, Վանի առաջնորդ 40, 51
Եղիազարեան Շիրին 34
Եղիշե 17
Եկարեան Արմենակ 40, 44, 82
Եսայեան Վիկտորիա 232, 274
Երամյան Համբարձում 26, 27, 28 (ծնթ.), 32, 33
Եփրեմ Խան (Դավթյան Եփրեմ) 221

Զ

Զահեղի 285
Զանգեանէ 281
Զաւէն 196
Զաւրեան, բժիշկ 166
Զինոեան Խաչիկ 45

Է

Էդուարդ, աներորդի 268
Էլիաս 274, 277, 278
Էղբալ 285
Էմիլ, Հելենի եղբայրը 235
Էյն-օդ-Դօվլէ, Իրանի վարչապետ 221
Էնվէր 37, 39, 47, 63, 64, 138

Ը

Ըշըր, ամերիկացի բժիշկ 46

Թ

Թագուհի, Հելենի մորաքույրը 235
Թադէոսեան Լևոն 237, 261
Թալէաթ 37, 39, 47, 63, 64, 138
Թամարա 124
Թահսի բեյ 32 (ծնթ.)
Թեհրանչի Համիդ 268, 272
Թէրզիբաշեան Աւետիս 138, 152, 154-156, 173
Թէրլէմեզեան Տաճատ 31-32, 34
Թէրլէմէզեան Փանոս 44, 67, 76, 78, 82, 84
Թովմասեան Իլլուշա 261
Թորֆէ 268, 272
Թրուման 278, 282
Թուքունջեան 40
Թումանեան Արտաւազդ, Հովհ. Թումանյանի որդին 158, 200
Թումանեան Յ. 200, 290

Ժ

Ժամկոչյան 28 (ծնթ.)
Ժամհարեան Ռուբէն 171

Ի

Իւրաշվիլի 250-254
Իշխան (Միքայելյան) 28 (ծնթ.),
Իշխան 38, 59, 84
Իսկուհի 17, 18, 21, 23, 25

Լ

Լենին 238, 243, 254, 259
Լէվասանի 270
Լօման-Դօվլէ 268

Խ

Խալիլ Թահմասէբի 281
Խալիլ փաշա 71
Խան, բժիշկ 269
Խանջեան Աղասի 8, 13, 34, 36, 38, 39, 45, 59, 60, 73, 75, 84-86, 101, 102-104, 225, 226, 238, 239, 240, 242, 243, 244, 250, 251, 253-260
Խանջեան Ղևոնդ 45
Խաչիկ 45
Խաչիկեան 229
Խաչիկենց Գէորգ 89
Խէրանեան Ն. 59
Խէրանեան Վահան 36, 38, 59, 60, 84, 225, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 249
Խորէնեան Ազատ 45
Խրիմյան Հայրիկ 13, 29, 30 (ծնթ.), 34, 154 (ծնթ.), 160, 161
Խրուշչև 287, 291

Կ

Կաղիէվիչ Լուկա 273, 274, 277
Կալճեան 59
Կարապետ, մեծ եղբայրը 15, 20, 50, 58, 80, 87, 91-93, 100, 116, 167, 168, 170, 233, 245, 246
Կարо 76, 90
Կարо, սայլապան 175, 179, 180, 183
Կեմցեան Մելքոն (Տեր-Մարուգյան, ծածկանունը՝ Ազատ Ոստանիկ) 34, 35 (ծնթ.)
Կերենսկի 146, 165, 166
Կիրակոս 92
Կիրակոսեան Խորեն, քահանա 212, 218
Կիւրոս Մեծ 286
Կոմիտաս 37
Կոսոյեան Հայկակ 51
Կորիւն, Գրիգոր Բուլղարացու և Մարոյի որդին 152, 162, 199
Կոնկեց Վահէ 33
Կուլողլյան Հ. (Դիվանա-Բահ-լյուլ) 28 (ծնթ.), 34, 43, 45, 48, 53, 60, 64, 78, 82
Կուլողլեան Օհաննէս աղա, մորեղբայրը 98, 99
Սարգիս Կուկունյան 221

Հ

Հաժիր 280
Հակոբյան Ն. 28 (ծնթ.)
Համաս (Կաղ Համաս) 54
Համբարձումեան Կոստի 155, 156, 200, 203
Համիդ փաշա 28
Հայկանուշ, մեծ եղբոր կինը 15, 20, 50, 58, 80, 87, 91-94, 108, 240
Հասմիկ, եղբոր՝ Կարապետի դուստրը 246, 247
Հաքիմի 280
Հաֆէզ 260

Հելէն, Սիրաք Սարհադյանի կինը 234, 235, 236
Հիթլեր 274, 275
Հովիւեան Շաւարշ 45
Հովնանյան 28 (ծնթ.)
Հուսիկ, քահանա 14

Ղ
Ղազար 233
Ղազարեան Սիրանոյշ 264
Ղազի Մոհամմադ 280
Ղաւամ-Սալթանէ, վարչապետ 279, 280, 282
Ղարաբէգեան 233
Ղարավի 268
Ղարիբջանեան Մարգար 45
Ղուկասեան Հայկ 232
Ղևոնդ երեց 41

Մ
Մազլումեան Արամ 227, 229, 230, 231, 234, 236, 269
Մազլումեան Վարդուհի, Արամ Մազլումյանի կինը 229, 230, 231
Մամիկոնեան Ժօրա 288
Մանուկյան Արամ 32 (ծնթ.), 44, 78-80, 84, 85, 156 (ծնթ.)
Մանուկյան Հմայակ 28 (ծնթ.)
Մանուկեան Հրաչ 288
Մանուկեան Տիգրան 288
Մարինա, Գոտակչյան Եղիսաբեթի քույրը 28 (ծնթ.)
Մարկոս 38
Մարշիմոն, ասորիների հոգևոր առաջնորդը 182
Մարտիկ 30, 34, 35 (ծնթ.), 82
Մարութեան Սամուել 215, 216, 228, 229, 230, 231, 236
Մարօ (Մարիամ) 11, 12, 16, 18, 21, 22, 25, 33, 35, 36, 41, 42, 43, 48, 50, 80, 87, 91, 92, 152, 153, 154, 157, 158, 162-164, 168, 172, 197-199
Մաքին 281
Մաքսապետյան Արմենակ 28 (ծնթ.), 156-157, 206, 207, 208
Մաքսապետեան Վարդան 206, 207, 208
Մելիքով Լօրիս 290
Մելքոնեան Համբարձում 171, 177, 178, 188-193, 200
Մեհմետ բեյ 32 (ծնթ.)
Մէբիղիս Ջէմս 290
Միհրան, մորաքրոջ որդին 22-25, 49
Միհրան 38
Մինասեան Կարօ 228, 232
Մինասեան Միքայէլ 44, 45, 60
Միրզայեան Յովսէփ 228, 232
Միքայէլ (Աբդոլահ) 213, 214
Մխիթարեան Օննիկ 45, 60
Մկրեան Մամբրէ 45, 60
Մկրօ 66, 75
Մյասնիկեան 226
Մոխթարի 268
Մոհամմադ-Ալի շահ 220, 221
Մոհամմադ Ռըզա-Փահլաւի 275, 276, 284
Մոհամմադ Սաէդ 280
Մոսադդեղ 281-285
Մովսիսեան Աղասի 287, 288
Մովսիսեան Ռաֆայել 232
Մուղդուսի 225, 226
Մուսա-Բէկ 29
Մուրադով 131, 132, 135- 137
Մօզաֆէր-էդ-դին շահ 221
Մօզեան Պետրոս 45

Յ
Յովհաննիսեան Յակոբ 228
Յովհաննիսեան Վ. 289, 290
Յուսիկ, քահանա 46

Ն
Նազարբէգեան, զորավար 163
Նազէրի 269, 270
Նալբանդեան Մարտիրոս 32-34
Նախշունեան Եղիա 52, 82
Նաջմ-Աբադի 270
Նասէրի 283
Նասէր Ֆախր-Արայ 280
Նասէր Ղաշղայի 280
Նիկոլայ Բ, ցար 29 (ծնթ.)
Նիկօլայեվ, ռուսական բանակի զորահրամանատար 78, 79
Նունիա, Հելենի մայրը 234, 235
Նուրիջանեան Միսակ 195-199

Շ
Շահ Աբաս Մեծ 286
Շահումեան 226
Շաղաղի 269
Շաղոյեան Լևոն 34, 35 (ծնթ.), 44, 82-84, 86, 101, 138, 154, 156, 164, 171, 177, 200
Շայեգան 284
Շատաւորեան Ռուբէն 45
Շատիկենց Զարուհի 35
Շարիֆ Էման 285
Շաքիր 44
Շեքսպիր 241
Շէյդ, դոկտոր 199
Շէյխ Աբբաս, Ալիանս-ֆրանսէզ դպրոցի վերակացու-հսկիչ 217

Ո
Ոսկի, Մարոյի մայրը 36, 50, 87

Չ
Չարենց 241, 291
Չերնիցկիյ 273
Չըրչիլ 276, 278, 282
Չէնգիզ խան 29
Չուխաջեան 244

Պ
Պանիրլեան Գր. 45
Պենկայտիս 255, 256
Պետօ 30, 82
Պետրոս աղա, Վարագավանքի վերջին վերակացուն 159-162
Պետրոսեան Յարութիւն 232
Պլատ, հիւպատոս 237, 259, 260
Պողոս Նուբար փաշա 154 (ծնթ.)
Պրանզիոնի 261
Պուճիքեան Յովհաննէս 57, 78

Ջ
Ջեմալ 37, 47, 138
Ջնդէտ բեյ 32, 38-40, 46, 47, 51, 52, 54, 59, 63-67, 71-72, 75, 138
Ջոհաննէս, բժիշկ 266, 268

Ռ
Ռազավի 284
Ռազմարա 281
Ռըզա Շահ Փահլաւի (Սարդա-րէ-Սէփահ) 220, 221, 222, 223, 224, 228, 243, 265, 270, 272, 275, 283, 284, 286
Ռիահ 284
Ռուզվելտ 276

Ս
Սաադի 260
Սաղր-Ղազի 280
Սահակ աղա (Կազակ Սահակ) 81, 82, 88, 104, 130, 158, 159, 184
Սան-Ֆանի (Խոսրով Չիթունի) 45, 80
Սարգիս աղա 46
Սարգիս, դերձակ 139
Սարհադեան Լևոն (Էդիկ), որդին 147, 259, 261, 262, 263, 266, 270, 272
Սարհադեան (Յարութիւնեան) Մէդիկ, դուստրը 147, 263, 265, 270
Սարհադեան Յարութիւն, որդին 147, 270, 287
Սարհադեան Յարութիւն, հայրը 10, 107, 201, 218, 264
Սարհադյան Սիրաք, գրեթե բոլոր էջերում
Սեդրակենց (Սեդրակեան) Մկրտիչ 189, 190, 192, 193
Սէյֆ-Ղազի 280
Սերոբ 76
Սէիդ-Զիա-էդ-դին 222
Սըրմա խանում, Մարշիմոնի քույրը 182
Սիամանթո 37
Սիլիկեան 173, 178
Սիլվէսթր, Ալիանս-ֆրանսէզ դպրոցի տեսուչ 217, 231
Սիմեան 230, 231, 234, 237
Սմկո, քուրդ ավազակապետ 167, 177, 178, 180-182, 198
Սոլախեան Արտ. 38, 59, 73, 74
Սօլախեան Յասմիկ 59, 74, 84
Ստալին 34 (ծնթ.), 243, 250, 251, 252, 254, 257, 259, 260, 276, 278
Ստեփանեան Յ. 228
Սրվանձտյանց Գ. 29 (ծնթ.)
Սունդուկեան 290
Սևօ 66

Վ
Վանեան 227, 229, 230
Վարդան զօրավար 41
Վարդգէս 54
Վարպետ (Ավետիք Իսահակյան) 241
Վիլյամ, կայսր 30
Վրացեան 289

Տ
Տանթէեան Կարապետ 48, 55, 82
Տէր-Գաբրիէլեան Սահակ 241, 242, 243, 250, 254
Տէր-Ղուկասեան Արշակ 290
Տէր-Թովմասեան, բժիշկ 156

Ր
Ռաֆֆի 290

Փ
Փախչոյեան Մարգար 57, 78
Փարամազ 35 (ծնթ.)
Փափազյան Դավիթ 28, 44, 45, 79, 101
Փիշավէրի 278
Փոխարեան Արմենակ 33, 45
Փօլատեան Կ. 289
Փորթագուլեան Մ. 28 (ծնթ.), 29, 30 (ծնթ.), 34 (ծնթ.)

Ք
Քավքարիձէ 276
Քենեդի 290
Քլարա, Վահան Խերանյանի կինը՝244
Քոչարեան Աննա 168
Քօթոր Պողոս 38

Օ
Օզանյան Անդրանիկ 78, 154 (ծնթ.), 163, 171-173, 188
Օհաննես աղա, մորեղբայրը 23
Օհանջանեան Համօ 227, 229
Օրբելեան 237
Օրբելեան Նիկիտ 273

Ֆ
Ֆազլօլլահ Զահեդ 283, 284
Ֆաթէմի 284
Ֆրէնդեան Արսէն 261, 262
Ֆօրուղ, վարչապետ 275

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաղան 281
Աբաղա 165, 195
Աբաղայի դաշտավայր 164
Աբովյան (նախկին՝ Աստաֆյան) 238
Աղանա 39, 47, 65, 151, 226
Աղրբեջան (Ադերբայջան) 34 (ծնթ.), 242, 278
Ազգային-Կենտրոնական վարժարան 34 (ծնթ.), 35 (ծնթ.), 44 (ծնթ.),
Ալաշկերտ 165, 194
Ալեքսանդրիա 26 (ծնթ.)
Ալեքսանդրապոլ 34 (ծնթ.), 116-117, 252
Ալիանս-ֆրանսէզ դպրոց (Թեհրան) 216-218, 231
Ալիւր 177
Ախալքալաք 239, 242, 290
Ախլցխա 239, 242, 290
Ակռփի 52
Աղաղան 221
Աղթամարի վանք 36, 51, 140, 161-162
Աղջկանց մասնավոր դպրոց (Վան) 28 (ծնթ.)
Ամերիկա 32 (ծնթ.), 103, 208, 278, 286-288, 290
Ամերիկեան քոլէջ (Թեհրան) 216
Այգեստան, թաղամաս 13, 14, 19, 26, 28, 29, 30, 32, 35 (ծնթ.), 39, 40, 43, 44 (ծնթ.), 45, 46, 48, 49, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 62, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 75, 76, 77, 78, 79, 84, 86, 88, 90, 92, 100, 118, 121, 144, 146, 150-152, 155, 157-159, 161, 165-166, 168, 174, 177, 182, 184, 193, 195, 197-200, 219, 226, 237, 246
Անգլիա 64, 103, 223, 275, 278, 286
Աշրաֆ 223
Առնիս 171
Ասիա 286
Աւստրիա 273
Ատրպատական 188, 278-280
Արարատ 223
Արարատեան դաշտ 113
Արարք 55
Արարքի (Արարուց) հրապարակ 52
Արարքի ծխական դպրոց 48, 55
Արդահան 37
Արդվին 37
Արժանթին 287, 288
Արճակ գավառ 34 (ծնթ.), 37, 94, 148, 150, 155-156, 166, 176-177, 198-199
Արճէշ 171
Արցախ 34 (ծնթ.)
Արտամետ 156
Արևելեան Ատրպատական 279
Արևելյան Հայաստան 44 (ծնթ.), 172
Արևելք 217
Արևմտյան Ատրպատական 182, 279
Արևմտեան Գերմանիա 288
Արևմտեան Հայաստան 30 (ծնթ.), 124, 221
Արևմտեան Տաճկահայաստան տե՛ս Արևմտեան Հայաստան
Աֆրիկա 276

Բ

Բազի-Դաղի 30, 151
Բաթում 227
Բաղդադ 205-206, 283
Բաղեշ (Բիթլիս) 34 (ծնթ.), 72
Բամ 273, 274, 277
Բանդար-Շահ 222, 265, 273
Բանդար-Շահփուր 222, 265 273
Բանդար-Փահլաւի 258-259, 269
Բանդի-Մահուր, գետ 95
Բաշկալէ 37
Բայազէտ-Աղ 99
Բարսում 221
Բաքու 79, 122, 172, 226-227, 242, 254, 258-259, 261
Բելգիա 156 (ծնթ.)
Բերկրի 148, 150, 155, 164, 166, 171, 175, 177, 186, 190, 194-195, 199
Բերկրի-Ղալէ 92-96, 98, 188
Բիջար 200-203, 205
Բիշէ 268, 269, 270, 271, 273
Բհար 205
Բհարստան, հրապարակ 287
Բոստոն 51 (ծնթ.)
Բրազիլիա 249
Բրուքսէլ 288
Բուէնոս-Այրէս 287, 288
Բուլղարիա 156 (ծնթ.)
Բուշեր, քաղաք 280
Բուրվար 215
Բուրուջերդ 270

Գ

Գանձակ 146, 254, 258, 261
Գանձակ գվռ. 221
Գարահիսար 30
Գարահիսարի լեռներ 151
Գեանջա տե՛ս Գանձակ
Գեարդաբադ 193
Գեարմաբդար 266, 267, 269, 270
Գերմանիա 44 (ծնթ.), 278, 288
Գէօլու 166
Գիլան 222
Գիւլիզարդ 118-120, 139, 144-145-146, 159, 165, 168
Գյավաշ 35 (ծնթ.), 37, 83, 167

Գողգոթա 114, 165
Գործոթ 94
Գևորգյան ճեմարան 51 (ծնթ.)

Դ
Դարդանէլ 52, 53, 54, 55
Դարաբէգ 176
Դարւազա-Ղազլին 212, 218, 264
Դար-օլ-ֆօնուն դպրոց (Թեհրան) 216
Դարուս 235-236
Դիլիման 182-183, 188, 191-192
Դօրուդ 270, 271

Ե
Եազդ 263, 273
Եգիպտոս 26 (ծնթ.), 28
Եւրոպա 217, 236, 273, 275, 284, 286
Երամյան դպրոց (Վան) 26, 28, 29, 32, 33, 34 (ծնթ.), 59 (ծնթ.), 79, 104, 131, 154, 216
Երզնկա 129
Երևան 34 (ծնթ.), 35 (ծնթ.), 44 (ծնթ.), 51 (ծնթ.), 79, 113, 143, 152, 154-155, 162, 166-168, 171-173, 178, 188, 190, 198, 237-241, 244-245, 249-250, 254, 259, 289, 290
Երևանի թեմական դպրոց 79

Զ
Զաբօլի 281
Զախո 35 (ծնթ.)
Զահեդան 273
Զանջան 279
Զարգեանդէ 261
Զէյթուն 226
Զեյվա (այժմ՝ Դավիթբեկ) 79
Զըմփ-զըմփ մաղարէի դիրք 68
Զիլանի ձոր 94, 167

Է
Էնզէլի 222, 227
Էջմիածին 34 (ծնթ.), 108-109, 111-118, 121, 146, 148, 150, 154, 162, 164, 173, 190, 218
Էսֆանդի հրապարակ 287
Էրզրում 129, 138

Թ
Թանգէ-Դօ 267-269
Թանգէ-Սէ 269
Թավրիզ 44 (ծնթ.), 178, 183, 222, 226-227, 278, 279, 280
Թափարէզ 99
Թեհրան 206, 208-221, 223-229, 231-232, 235, 242, 250, 254-256, 258-259, 260, 262, 264, 267, 268, 270-274, 276-281, 283, 287, 288
Թիմար 30, 37, 148, 156, 174-175, 177, 195, 198-199
Թիւրքիա 138, 222-223, 250
Թիֆլիս 30, 44 (ծնթ.), 79, 113, 117-122, 123-130, 132, 135, 137-142, 144, 146, 149, 152-153, 155, 159, 162, 164, 166, 168-169, 212, 219-220, 227, 233, 237, 239, 243, 245, 247-248, 250-252, 254, 259, 290
Թոփխանէ հրապարակ 220
Թօփրաք-Կալէի զօրանոց 62, 68

Ժ
Ժառանգաւորաց դպրոց (Վան, Վարագավանք) 29, 34 (ծնթ.)
Ժնև 30 (ծնթ.)

Ի
Իգդիր 86, 95, 100-101, 103-105, 108-109, 113, 115-116, 118, 148, 150, 152, 155, 162, 166, 171, 173, 176, 188, 190, 194, 199
Իզմիր 156 (ծնթ.)
Իսթանբուլ 251
Իսֆահան 262, 264
Իտալիա 283
Իրան 30, 32 (ծնթ.), 34 (ծնթ.), 35 (ծնթ.), 44 (ծնթ.), 51 (ծնթ.), 124, 146, 156 (ծնթ.), 178, 182, 188, 192, 200, 203, 206, 209, 212, 220-224, 227-228, 237, 242-243, 250, 253, 258, 260, 262, 265, 268, 270-276, 278-282, 284-287, 291
Իրաք 35 (ծնթ.), 222, 291

Լ
Լահէ 281, 282
Լաշքարակ, գետ 273
Լենինգրադ (Պետերբուրգ) 34 (ծնթ.), 44 (ծնթ.), 239, 256
Լեռնային Ղարաբաղ 239, 242 (ծնթ.)
Լիբանան 289, 291
Լոնդոն 203, 279
Լոռեստան 270, 271
Լոս Անջելես 288

Խ
Խաչ փողոց 52, 66, 166, 168
Խաչաբակ. Արարուց Մայր եկեղեցու գերեզմանոց 35
Խարականց 35 (ծնթ.)
Խառակոնիս 34 (ծնթ.), 92, 93
Խերան, փողոց Այգեստանում 13
Խոյ 148, 155, 156, 163, 166, 177-178, 182, 188
Խոսրովա 182
Խորհրդային Միութիւն 252, 259, 260, 274-276, 278, 286, 287, 290-291
Խորրամաբադ 270
Խուզեստան 273
Խօջեվանք (Խօջիվանք) 127, 136-137, 290
Խօշաբ 167

Ծ
Ծաղկանց լեռներ 94
Ծիծանց 44 (ծնթ.)

Կ
Կախէթ 133
Կահիրէ 276
Կապան 79, 156 (ծնթ.)
Կասպից ծով 265, 273
Կարին 35 (ծնթ.), 171-173
Կարկառ 83
Կարճկան 30, 37
Կարս 37, 79, 165
Կենտրոնական միջնակարգ դպրոց 29, 79
Կիլիկիա 53
Կիրովական (Ղարաքիլիսա) 244-246, 250

Կլոր-Դարից 48
Կոթուր (Կոտոլ) 94, 166, 171, 177-179, 198
Կոթուրի լեռներ 177, 181
Կոթուրի ձոր 180, 182
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս) 30 (ծնթ.), 32, 35 (ծնթ.), 44 (ծնթ.), 151, 154 (ծնթ.), 251
Կովկաս 32 (ծնթ.), 37, 44 (ծնթ.), 145, 154, 172, 178, 226, 240
Կուր գետ 123

Հ

Հազբաթ Աբդոլ-Ազիմ, Թեհրանի արվարձաններից 209
Հաճի-Բէքիրի զօրանոց 68
Համադան 199, 205-206
Հայաստան 30, 32 (ծնթ.), 34 (ծնթ.), 79, 224-228, 232, 237, 239-240, 242, 250, 252, 255, 257, 259, 289, 290
Հայկազյան (այժմ՝ Դավթյան, Թեհրանում) դպրոց 221
Հայոց-Ձոր 35 (ծնթ.), 37, 59, 82, 156
Հանկուսների դպրոց 34 (ծնթ.)
Հավլաբար թաղամաս 122-123, 126-127
Հավրեզք 35 (ծնթ.)
Հարավային Ամերիկա 34 (ծնթ.), 217
Հաֆթվան 182, 184, 188, 191
Հերոշիմա 278
Հիսուսյան դպրոց 34 (ծնթ.), 154
Հիսուսյան-Շուշանիկյան վարժարան 51 (ծնթ.)
Հիրճ 82
Հյուսիսային Ամերիկա (Հիւսիսային Միացեալ Նահանգներ) 44 (ծնթ.), 217, 288
Հյուսիսային Արցախ 221
Հյուսիսային Կովկաս 122
Հնդկաստան (ներկայ Փաքեստան) 273
Հովնանյան դպրոց 44 (ծնթ.)
Հրազդան գետ 244

Ղ

Ղազին 220, 227-228, 260, 264, 279
Ղալաթա 251
Ղալասար 182, 191-192
Ղալէ-Շէյխ 266-269
Ղամարլու 113
Ղասրէ-Շիրին 235, 236
Ղարադաղ 221
Ղարաքիլիսէ 117-119, 121-122, 128, 139, 143-146, 162, 165, 190, 233, 244, 146
Ղըզըլղիզէ 99, 172
Ղօմ, քաղաք 273

Ճ

Ճանիկ 90, 92, 148, 166, 174-176, 198-199
Ճապոնիա 278

Մ

Մալայէր 206, 208
Մահաբադ 280
Մասչէդ-Շահ 281
Մասչէդ-Սուլէյման 223
Մարաղա 199, 279
Մարջան 202
Մեծ Քեանդրիչ 168
Մեյդան թաղամաս 123
Միանդոաբ 199
Միլ 273, 274, 277
Միջագետք 32 (ծնթ.), 206, 250
Միջերկրական ծով 159 (ծնթ.)
Միջին Արևելք 217
Միսիսիպի 290
Մյունխեն 44 (ծնթ.)
Մոխրի քեահրիզ, աղբյուր 13, 14, 168
Մոկս 30, 37, 83, 167
Մոսկվա 34 (ծնթ.), 225, 237, 239, 242, 245, 248, 254-259, 274, 279, 290
Մուշ 30, 34 (ծնթ.), 151
Մուսա լեռ 151
Մուսուլ 200

Յ

Յանկույսներ, թաղամաս Այգեստանում 13, 26, 76, 146, 165, 167, 168, 184
Յանկոյսների Դարի գլխի դիրք 54
Յոհանէսբուրգ 276

Ն

Նաղերի 273, 274, 277
Նախիջևան 34 (ծնթ.), 239, 242
Ներսիսյան դպրոց 44 (ծնթ.)
Նիւ-Եորք 279, 282
Նորաշէն թաղ 38, 55-56, 64, 151
Նորատունկներ 89, 91
Նոր Զելանդիա 223
Նուժիան 268, 269, 271

Շ

Շաբին-Գարահիսար 151
Շահ-Բանդէր 52, 54, 60
Շահի 223
Շամիրամ, գետ 157
Շան-փողոց 50, 58
Շատախ 30, 38, 44 (ծնթ.), 47, 63, 65, 66, 83, 86, 156, 167
Շարիֆաբադ, գիւղ 279
Շիրազ 260-262
Շուշանց 78
Շուշի 156 (ծնթ.), 242 (ծնթ.),

Ո

Ոստան 156, 171, 177, 188, 199

Չ

Չալուս 223
Չեխոսլովակիա 273

Պ

Պարսից ծոց 265, 273, 281
Պարսկաստան տե՛ս Իրան
Պոլսի պետական համալսարան 33
«Պողոսյան» դպրոց 26 (ծնթ.)
Պոչիկ-Ահմադի դիրք 62, 63
Պորտ-Սաիդ 26 (ծնթ.)

Ջ

Ջուլֆա 116, 146, 148, 155, 163, 182, 188

Ռ

Ռահվա 193, 203
Ռաշտ 222, 260
Ռումանիա 274

Ռուսաստան 15, 103, 122, 124, 145, 171, 222, 237, 242, 261, 274, 275

Ս

Սալեհաբաղ 266, 270
Սալմաստ 44 (ծնթ.) 156 (ծնթ.), 163, 171, 177-178, 182, 188, 192, 203
Սահակ-Բէյ դիրք 52
Սային-Ղալէ 156, 199-201, 203
Սասուն 151, 226
Սարայ 37, 155-156, 176-177
Սարէ Ղաբրաղա թաղամաս 213-214, 216
Սարդարաբաղ 113
Սարիղամիշ 37, 165
Սավալի 166 171
Սաֆայիէ 206
Սբ. Բարդուղիմէոսի վանք 30, 82, 151, 226
Սբ. Էջմիածնի վանք 109-110, 114-116, 218, 264
Ս. Թարգմանչաց եկեղեցի (Վան) 82
Սբ. Յակոբ եկեղեցի (Վան) 14, 76, 80, 106, 165, 167-168
Ս. Ֆրանչիսկո 288
Սեմնան 276
Սըղգա գյուղ 89, 90
Սըղգա պողոտա 77, 88, 90, 150
Սիբիր 221
Սիփան 167
Սիւրիա 289, 291
Սորբոնի համալսարան 59 (ծնթ.),
Սոչի 252
Սոֆի քեահրիզ, աղբյուր 13
Սպահան 218, 273
Սվերդլովի անվ. համալսարան 34 (ծնթ.)
Սուլթանաբաղ 206, 208-210, 215, 273
Սև քռա 52
Սօլօլակ 126, 142, 248-249, 251
Սօուկ-Սու , գյուղ 166

Վ

Վան 13, 26, 28, 30, 32, 34, 35 (ծնթ.), 36, 37, 38, 41, 44 (ծնթ.), 47, 51, 54, 55, 59 (ծնթ.), 63, 64, 65, 66, 68, 69, 70, 71, 72, 73, 77, 78, 79, 81, 83, 84, 86, 88, 101, 121, 124, 130-131, 137-139, 141-142, 145-146, 148-152, 154, 156, 157, 159 (ծնթ.), 162, 164-165-168, 172-173, 184, 195, 198, 216-219, 226, 228, 238, 250
Վանագ 236
Վանագի Ս. Մինաս եկեղեցի 236
Վանայ ծով 170
Վանի բերդ 74-75
Վառնա 227
Վասպուրական 15, 29, 30, 31, 32, 34 (ծնթ.), 35 (ծնթ.), 36, 37, 38, 39, 52, 57, 59 (ծնթ.), 71, 77, 79, 83, 86, 89, 90, 92, 93, 94, 102-103, 122, 124, 136, 138, 145, 148-149, 153-158, 163, 165-167, 171-173, 176-177, 194, 224, 226, 258
Վարամին 223
Վարագ լեռ 69
Վարագա վանք 30, 34 (ծնթ.), 36, 138-140, 159, 161, 162
Վարժապետանոց դպրոց 28, 79
Վարին Պասետկա 35 (ծնթ.)
Վենետիկ 26 (ծնթ.), 34 (ծնթ.)
Վերին Պասետկա 35 (ծնթ.)
Վրաստան 149, 290

Տ

Տաճկահայաստան 138, 225
Տաճկաստան 37, 203
Տարօն 226
Տիրամօր վանք 94
Տփղիս տե՛ս Թիֆլիս

Ու

Ուրմիա 188, 192-193, 198, 200, 203
Ուրմիա լիճ 222
Ուրֆա 151, 182

Փ

Փահլաւի 226, 260
Փայաջուկ 182, 191-192
Փարիզ 44 (ծնթ.), 154 (ծնթ.),
Փեսանդաշտ 30, 65, 66, 83, 86
Փերիա 212, 218
Փէրս տե՛ս Իրան
Փէրշիա տե՛ս Իրան
Փոքսդամ 278
Փոքր-Քեանդրչի պողոտա 157, 168

Քէ

Քազրուն, քաղաք 280
Քալիֆորնիա 288
Քաղաքամէջ 13, 32, 39, 51, 65-70, 72, 73, 75-78, 92, 100, 155-156
Քանաքեռ 240, 244
Քեահրիզաք 223
Քերման 263, 273, 274, 277
Քեօհնա-Շահրի 183
Քուբա 287
Քօռ Խէչոյենց դիրք 58

Օ

Օսմանեան Կայսրութիւն 32, 40, 47, 64
Օրգոֆ 101

Ֆ

Ֆարս 280
Ֆինլանդիա 274
Ֆրանսիա 64, 236, 274, 287
Ֆրեզնո 288

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԵՎ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՍԱՆԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա-Դօ, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, Երեւան, 1912:

Ա-Դօ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին, Երեւան, 1917:

Աւետեան Մ., Հայ ազատագրական յիսնամեայ (1870-1920) Յուշամատեան եւ զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954:

Գուրգեն Մահարի, Այրվող այգեստաններ:

Երամյան Համբարձում, Հուշարձան Վասպուրականի, հ. Ա-Բ, Ալեքսանդրիա , 1929:

Զարյան Նաիրի, Երկրորդ կյանք, ԵԺ, հ. 4, Երևան, 1985:

Խերանյան Մկրտիչ, Երկար-երկար մի ճանապարհ, Երևան, 1983:

Կոսոյեան Հայկ, Վան-Քաղաքամիջի ապրիլեան կռիւները, Երևան, 1992:

Կոսոյեան Հայկակ, Չորս անձնազոհ պատանիները, Պէյրութ, 1949:

Մխիթարեան Օննիկ, Վանի ինքնապաշտպանութիւնը.– «Հայրենիք», №1-3, 8-12, 1924 և № 4-7, 1925:

Սերինե, Նյութեր ապագա վեպի համար.–«Նորք», № 4, 1991:

Սոլախյան Արտաշես, Բանտային հուշեր, Երևան, 2002:

Սոլախյան Կալիփսե, Թեժ մարտերը Վանի Քաղաքամիջում, Երևան, 2000:

Վասպուրական, հրատարակութիւն Վասպուրականի հայրենակցական միութեան (Թաւրիզ), Վենետիկ, 1930:

Վասպուրականը եւ իր տարագիր զաւակները, հրատարակութիւն Համա-Վասպուրականի հայրենակցական միութեան, Պոսթրն, 1942:

Վարդանյան Ե., Վասպուրականի նահանջ բյուրոցը, Բոստոն, 1920:

Տէր-Մկրտիչեան Երուանդ, Գանձեր Վասպուրականի, հ. 1, Պոսթոն, 1967:

Նշումների համար

Նշումների համար

Նշումների համար

ԿԵԱՆՔԻՍ ՅՈՒՇԵՐԻՑ

Սիրաք Սարհադեան

MY MEMOIRS

SIRAK SARHADIAN

МОИ МЕМУАРЫ

СИРАК САРАДЯН

RAA ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

ՆԱԽԱԲԱՆ, ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՐՏԵԶՆԵՐ **ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
ԽՄԲԱԳԻՐ, ՍՐԲԱԳՐԻՉ **ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂ **ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**
ՑԱՆԿԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ **ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ,**
ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ **16 ՕԳՈՍՏՈՍ, 2007**
ՏՊԱՔԱՆԱԿ **1000**
ՏՊԱԳՐՎԱԾ Է **«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2007